


ՀՐԱՏԱՐԱԿԿԱԾ Է ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՈՎ

ՆԿԻՐԿՈՒՄ Է
ԶՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 85-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ
ԵՎ
ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

Д Ж О Н К И Р А К О С Я Н

ИЗБРАННОЕ

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУГЮН" НАН РА
2014

1233034 977.925

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԸՆՏՐԱՆԻ

199848



ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԳ. 941(479.25)
Գ.ՄԴ. 63.3 (2Հ)
Կ 530

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Կազմող, խմբագիր և առաջաբանի հեղինակ՝
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Կիրակոսյան Ջ.

Կ 530 Ընտրանի. Ջ. Կիրակոսյան.-- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2014.-- 730 էջ:


Հայ ականավոր պետական և քաղաքական գործիչ, պատմաբան, հրապարակախոս Ջոն Սահակի Կիրակոսյանի (1929-1985) ծննդյան 85-ամյակին և Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված ժողովածուն ներառում է նրա հեղինակած գիտական և հրապարակախոսական հոդվածները, գրախոսականները, ելույթները, նամակները, հարցազրույցները և այլ նյութեր, որոնց մի մասը տպագրվում է առաջին անգամ: Գրքում զետեղված երկերի միջոցով ընթերցողին է ներկայացվում Ջոն Կիրակոսյանի ոչ միայն գիտական, քաղաքական և հրապարակախոսական գործունեությունը, այլև պատկերացում է տրվում հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման համար կարևոր մի ժամանակաշրջանի մասին:

Նախատեսվում է պատմաբանների, թուրքագետների, քաղաքագետների, դիվանագետների, ուսանողների, ինչպես նաև ընթերցող լայն հանրության համար:

ՀՏԳ. 941(479.25)
Գ.ՄԴ. 63.3 (2Հ)

ISBN 978-5-8080-1074-1

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2014



ՋՈՆ ՍԱՀԱԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ջոն Կիրակոսյանը ծնվել է 1929 թ. մայիսի 6-ին Երևանում Սահակ Կիրակոսյանի¹ և Անահիտ Խաչատրյանի² ընտանիքում: Սովորել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան դպրոցում, 1951 թ. սովորել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը՝ ստանալով միջազգայնագետ-պատմաբանի մասնագիտություն: 1951-1954 թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի (Մոսկվա) Սերժավոր ու Միջին Արևելքի բաժնի ասպիրանտուրայում: 1955-1962 թթ. աշխատել է ՀԿԿ ԿԿ «*Լենինյան ուղիով*» (Երևան) հանդեսի պրոպագանդայի և տեսության բաժնի վարիչ, 1962-1966թթ.³ ՀԿԿ ԿԿ պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչի տեղակալ, 1964-1966 թթ. միաժամանակ վարելով բաժնի մամուլի, ռադիոյի ու հեռուստատեսության սեկտորը: Եղել է ՀԿԿ ԿԿ արդյունաբերության և շինարարության ղեկավարման բյուրոյի անդամ: 1966 թ. նշանակվել է ՀԽՍՀ ՆԽ հեռուստատեսության ու ռադիոհաղորդումների պետական կոմիտեի նախագահ: 1969-1975 թթ. աշխատել է ՀԿԿ ԿԿ գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ: 1975 թ. հուլիսից մինչև կյանքի վերջը ՀԽՍՀ արտգործնախարարն էր: Ջոն Կիրակոսյանը ՀԿԿ ԿԿ անդամ էր (1966-1985), ՀԽՍՀ 7-11-րդ գումարումների Գ-Խ պատգամավոր (1967-1985):

1954 թ. Ջոն Կիրակոսյանը պաշտպանել է քեկնամուտական ատենախոսություն՝ «Անգլիական ինտերվենցիան Իրանում (1918-1921 թթ.)» թեմայով, 1957 թ. լույս է տեսել նրա առաջին գիրքը՝ «Հնդիկ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսական էջը»⁴: 1965 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ.» թեմայով: Այն հիմք է հանդիսացել համանուն մենագրության⁵ համար, որն ունեցավ երեք հրատարակություն (1965,

¹ Սահակ Ղուկասի Կիրակոսյան (Բանվոր Սահակ) (1895-1970) - լրագրող, գրականագետ, բան. գիտ. քեկնամու, ծնվել է Ալաշկերտի գավառի Երիցու գյուղում, 1914 թ. ընտանիքով գաղթել է Թիֆլիս, բանվորություն է արել Ջարդաբլայի կաշեգործարանում, Բյուռոլյանների տեքստիլ ֆաբրիկայում, տեղափոխվել է Երևան, սովորել է ԵՊՀ իրավաբանագիտական ֆակուլտետում, Մոսկվայի Կարմիր պրոֆեսորայի գրականության և արվեստի ինստիտուտում, աշխատել է «Մովսեսական Հայաստան» (Ե.) թերթում, Կուսիրատում, Հայպետիրատում, Ռադիոկոմիտեում, դասախոսել է Երևանի ուսումնական հաստատություններում:

² Անահիտ Պետրոսի Խաչատրյան (1902-1941) - ծնվել է Ալաշկերտի գավառի Երիցու գյուղում, ունեցել է չորս զավակ՝ Ջեմման (ծնվ. 1926), Նորան (1927-1978), Ջոնը և Իվետան (1936-1997):

³ Կիրակոսյան Ջ. Հնդիկ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսական էջը (1857 թ. հակաանգլիական ապստամբության 100-ամյակի առթիվ), Ե., Հայպետիրատ, 80 էջ:

⁴ Կիրակոսյան Ջ. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Ե., Հայաստան, 1965, 510 էջ:

1967՝ հայերեն¹, 1971՝ ռուսերեն²): 1972 թ. հրատարակվեց «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» ժողովածուն³, որի կազմողներից մեկը, առաջարանի հեղինակը և խմբագիրն էր Ջոն Կիրակոսյանը: 1978 և 1980 թթ. հրատարակվել է «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» երկխոսոր աշխատությունը: Հատորներից առաջինը, որը լույս տեսավ նաև ռուսերեն (1981), ընդգրկում էր 19-րդ դարի 70-ական, իսկ երկրորդը՝ 80-ական թթ. վերաբերող պատմական շրջանը⁴: Դրանց հետևեց «Երիտրուրբերը պատմության դատաստանի առաջ» երկխոսոր մենագրությունը (1982, 1983)⁵: Ռուսաց լեզվով գիրքը լույս է տեսել 1986 և 1989 թթ. (Երևան)⁶, բուլղարերեն՝ 1988 թ. (Բուլղարիա)⁷, անգլերեն՝ 1992 թ. (ԱՄՆ)⁸: «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» և «Երիտրուրբերը պատմության դատաստանի առաջ» աշխատությունների համար Ջոն Կիրակոսյանը 1985 թ. հետմահու արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի: 1986 թ. լուսաց լեզվով լույս է տեսել նրա «Ալեքսեյ Ջիվլեկովը և նրա պատմա-իրապարակախոսական ժառանգությունը» գիրքը, որը վերահրատարակվեց 2007 թ.⁹: Ջոն Կիրակոսյանի գրչին են պատկանում բազմաթիվ գիտական և հրապարակախոսական հոդվածներ և բրոշյուրներ՝ նվիրված միջազգային քաղաքականության, հայ ժողովրդի քաղաքական պատմության, Հայկական հարցի դիվանագիտական

¹ Կիրակոսյան Ջ. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914-1916 թթ.), 2-րդ լրացված հրատարակություն, Ե., Հայաստան, 1967, 557 էջ:

² Киракосян Дж. Западная Армения в годы первой мировой войны, Е.: Изд-во Ереванского университета, 1971, 476 с.

³ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923 թթ.) / Խմբ.: Ջ.Ս.Կիրակոսյան, Ե.: Հայաստան, 1972, 848 էջ:

⁴ Կիրակոսյան Ջ. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 70-ական թթ.), Ե.: Հայաստան, 1978, 362 էջ, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դարի 80-ական թթ.), Ե., Հայաստան, 1980, 454 էջ:

⁵ Կիրակոսյան Ջ. Երիտրուրբերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ, 1914), Ե.: Հայաստան, 1982, 357 էջ, Երիտրուրբերը պատմության դատաստանի առաջ (1915 թ. մինչև մեր օրերը), Ե., Հայաստան, 1983, 462 էջ:

⁶ Киракосян Дж. Младотурки перед судом истории, Е.: Абастан, 1986, 478 с.; Младотурки перед судом истории, 2-ое доп. издание, Е.: Абастан, 1989, 494 с.

⁷ Киракосян Дж. Младотурците пред съда на историята, София: Партизлат, 1989, 494 с.

⁸ Kirakosyan J. The Armenian Genocide: The Young Turks before the Judgment of History, Madison, Connecticut: Sphinx Press, Inc, 1992, 277 p.

⁹ Киракосян Дж. А.К.Джигелегов и его историко-публицистическое наследие, Е.: Изд-во АН Арм.ССР, 1986, 87 с.; Алексей Джигелегов и его историко-публицистическое наследие, 2-ое доп. издание, Е.: НАН РА, Институт истории, 2007, 262 с.

պատմության, Եղեռնի միջազգային ճանաչման, պատմական անցյալի կեղծարարության քննադատության խնդիրներին:

Ջոն Կիրակոսյանն ունի պրոֆեսորի (1966) գիտական կոչում, գլխավորում էր ԵՊՀ արտասահմանյան արևերի երկրների պատմության ամբիոնը: Նա եղել է Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր գիտական խմբագրության, Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահության, Արտասահմանյան երկրների հետ քարեկամության և մշակութային կապերի հայկական քննկերության նախագահության, ԽՍՀՄ Ժողովրդականության միության անդամ, ԽՍՀՄ-ԳԴՀ քարեկամության քննկերության հայկական բաժանմունքի նախագահ:

Ջոն Կիրակոսյանի անունը կապված է Հայաստանի սպորտի, մասնավորապես հայկական վոլեյբոլի պատմության հետ: 1946-1952 թթ. ՀԽՍՀ «Նարոկ» և տղամարդկանց հավաքական բիմերի կազմում նա մասնակցել է ԽՍՀՄ վոլեյբոլի առաջնություններին, գավաթի խաղարկություններին, ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիտայաներին:

Ջոն Կիրակոսյանը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով (1971), մեդալներով, ՀԽՍՀ ԳԽ նախագահության պատվոգրերով (1962, 1979), Ֆրիտոյժ Նանսեն հիմնադրամի «Ֆրիտոյժ Նանսեն» ոսկե հուշանշանով (հետմահու, 2006):

Ջոն Կիրակոսյանը վախճանվել է 1985 թ. հունիսի 20-ին Մոսկվայում, քաղված է Երևանի քաղաքային գերեզմանոցի պանթեոնում:

Ջոն Կիրակոսյանի կինը՝ Լիա Արամի Ղազախեցյանը (1933-2003), մասնագիտությամբ կենսաբան էր, աշխատել է ՀԽՍՀ գիտատեխնիկական ինֆորմացիայի ինստիտուտում, որդին՝ Արման Կիրակոսյանը (ծնվ. 1956) ներկայումս ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան է Ավստրիայում, ՀՀ մշտական ներկայացուցիչը ԵԱՀԿ-ում և Վիեննայում տեղակայված ՄԱԿ-ի կազմակերպություններում, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է, ունի մեկ որդի: Դուստրը՝ Նոնա Կիրակոսյանը (ծնվ. 1958), կենսաբանական գիտությունների թեկնածու է, աշխատում է ՀՀ ԿԲ-ում, ունի երկու որդի:

Ջոն Կիրակոսյանի անունն են կրում Երևանի հ. 20 հանրակրթական դպրոցը (1999), ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի լսարաններից մեկը, նրա անվան կրթաթոշակ է սահմանված նույն ֆակուլտետի գերազանցիկ ուսանողների համար, Երևանում հուշատախտակ է փակցված Մոսկովյան 31 տան պատիմ (1999), որտեղ 1969 թ.-ից ապրել է Ջոն Կիրակոսյանը (հեղինակ՝ ճարտարապետ Էմիլ Ղազախեցյան), 2010 թ. նույն շենքում քացվել է նրա աշխատասենյակ-գրադարանը, սահմանված է Հայաստանի Հանրապետության ԱԳՆ «Ջոն Կիրակոսյանի անվան» մեդալ (2009):

ԱՌԱՋԱԲԱՆ

Ընթերցողին ներկայացվող ժողովածուն նվիրված է հայ ականավոր պետական և քաղաքական գործիչ, պատմաբան, հրապարակախոս Ջոն Սահակի Կիրակոսյանի ծննդյան 85-ամյակին և 2009 թ. հրատարակված «Ջոն Կիրակոսյան. Անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում» գրքի¹ շարունակությունն է: Առաջին գրքի առաջաբանում մենք խոստացել էինք ընթերցողին առանձին հատորով ներկայացնել Ջոն Կիրակոսյանի քիչ հայտնի ընտիր երկերը: Եթե առաջին հատորը ներառում էր նրա կյանքին ու գործունեությանը վերաբերող ժամանակակիցների տպագիր և ձեռագիր բազմաթիվ նյութեր և փաստաթղթեր՝ գրախոսականներ նրա հրապարակումների մասին, նամակներ, հեռագրեր, հատվածներ հուշապատումներից ու օրագրերից, պատմվածքներ, էսսեներ, հուշեր, քանաստեղծություններ, ապա սույն ժողովածուի համար ընտրված են նրա հեղինակած գիտական և հրապարակախոսական հոդվածները, գրախոսականները, էլյուզիաները, նամակները, հարցազրույցները, Հայաստանի դեկլարությանը ներկայացված տեղեկանքները, առաջարկները և այլ նյութեր, որոնց մի մասը տպագրվում է առաջին անգամ: Անտիպ փաստաթղթերը հիմնականում վերցված են Ջոն Կիրակոսյանի անձնական արխիվից (ՋԿԱԱ): Գրքում զետեղված նյութերի միջոցով մենք փորձել ենք ընթերցողին ներկայացնել ոչ միայն Ջոն Կիրակոսյանի գիտական, հրապարակախոսական և քաղաքական գործունեությունը, այլև պատկերացում տալ հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման համար հետաքրքիր և կարևոր մի ժամանակաշրջանի մասին:

Ջոն Կիրակոսյանն իր գիտական գործունեությունը սկսել է ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի Մերձավոր և Միջին Արևելքի բաժնի ասպիրանտուրայում սովորելիս, 1954 թ. պաշտպանել է «Անգլիական ինտերվենցիան Իրանում (1918-1921թթ.)» թեկնածուական ատենախոսությունը: 1955-1962 թթ., աշխատելով ՀԿԿ ԿԿ «Լենինյան ուղիով» հանդեսի խմբագրությունում, նա հեղինակել է «Հնդիկ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսական էջը (1857 թ. հակամանգոլական ապստամբության 100-ամյակի

¹ Ջոն Կիրակոսյան. Անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում / Խմբ. Ա.Ջ.Կիրակոսյան, Ե., «Տիգրան Մեծ», 2009, 679 էջ:

առփիվ» գիրքը, 60-ից ավելի հրապարակախոսական հոդվածներ, որոնք վերաբերում են ԽՍՀՄ արտաքին քաղաքականության, գաղութատիրության, Արևելքի և Աֆրիկայի ժողովուրդների անկախության համար ձեռնարկ անցնող ազատագրական պայքարի, Խորհրդային Հայաստանում գաղափարախոսական բնագավառում տարվող աշխատանքի հարցերին: Այդ շրջանին բնորոշ աշխատանքներից ենթկա ժողովածուի համար ընտրվել է «Ալյոպես էլ սպասելի էր» (1958) հոդվածը, որը նվիրված է Բաղդադի պակտի Անկարայի նստաշրջանին, բորք-ամերիկյան հարաբերություններին և ԱՄՆ-ի քաղաքականությանը Սերժավոր Արևելքում:

1963 թ. սկսած՝ Ջոն Կիրակոսյանը նվիրվում է Հայոց ցեղասպանության և Հայկական հարցի խնդիրների քաղաքական լուսարանմանն ու գիտական ուսումնասիրությանը: 1965 թ. լույս է տեսնում Ջոն Կիրակոսյանի «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» աշխատությունը, որը դարձավ նրա դոկտորական ատենախոսությունը: Թևս հրապարակում արդեն հայտնվել էին ցեղասպանության շրջանին վերաբերող գիտական մի շարք աշխատություններ, Ջոն Կիրակոսյանի գիրքը իր նորովի մոտեցումներով, գիտականությամբ և հրապարակախոսական ոգով մեծ արձագանք գտավ Հայաստանում և Սփյուռքում: Այս գրքում տեղ են գտել Ջոն Կիրակոսյանի այդ շրջանի ոչ միայն գիտական և հրապարակախոսական հոդվածները, այլև Հայոց ցեղասպանության 50-ամյակը նշելու անհրաժեշտության մասին նրա տեղեկանքը ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Յակով Չարոբյանին, ինչպես նաև Մատթոք Աղայանի և Հովհաննես Ինճիկյանի հետ ստորագրված և ՀԿԿ ԿԿ նախագահությանը ուղղված «Արևմտյան Հայաստանում հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի առփիվ միջոցառումների անցկացման մասին» նամակի հայերեն և ռուսերեն տարբերակները:

ՀԽՍՀ հեռուստատեսության ու ռադիոհաղորդումների պետական կոմիտեի նախագահի պաշտոնում (1966-1969) Ջոն Կիրակոսյանը հաճախ հանդես էր գալիս բնագավառի խնդիրները լուսարանող հոդվածներով և հարցազրույցներով: Այդ շարքում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում «Շտեռն»-ին (Հաննովեր) և «Գրական թերթ»-ին (Երևան) տրված հարցազրույցները, Մոսկվայի «Ռադիո և հեռուստատեսություն» պարբերականում տպագրված հոդվածը:

Ջոն Կիրակոսյանը նախածեռնում և ՀԿԿ ԿԿ ինֆորմացիայի և արտաքին կապերի բաժնի վարիչի տեղակալ, պատմաբան Ռուբեն Սահակյանի հետ միասին սկսում է Հայաստանին վերաբերող դիվանագիտական փաստաթղթերն ի մի բերելու և բարգմանելու հսկայածավալ աշխատանքը: Նրա խմբագրությամբ 1972 թ. լույս տեսած «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում

(1828-1923 թթ.)» ժողովածուն առ այսօր էլ չի կորցրել իր քաղաքական և պատմագիտական նշանակությունը: Գրքի գիտական առաջաբանում նա նորովի է լուսաբանում, մեկնաբանում և գնահատում հայ ժողովրդի քաղաքական պատմությունը, Հայկական հարցի դիվանագիտական պատմության կարևոր այդ ժամանակաշրջանը՝ միաժամանակ փորձելով դուրս չգալ գործող գաղափարախոսության բույսատրեղի շրջանակներից: Այդ փաստաթղթերի հիման վրա գրված վերլուծական աշխատանքներից են «Սան-Ռեմոյի կոնֆերանսը և Հայաստանը», «Քն-դ՝Օրսնի կոնֆերանսը» հոդվածները և «Հայաստանը 1917-1921 թթ., քաղաքական և դիվանագիտական պատմության համառոտ ուրվագիծ» աշխատանքային օգտագործման համար տեղեկանքը:

Խրուշչովյան «ազատականացման» տարիներին հաջորդած քրեմլյան «զնացման» շրջանը քարացած մտածելակերպ և մտահորիզոն ունեցող որոշ կուսակցական աշխատողների և գիտնականների կրկին հնարավորություն էր ընճենոել վերակենդանանալու և կերպարանափոխվելու, անցնելու վերին կուսակցական ասյաններին և անվտանգության մարմիններին մեղադրանքներ և գրապատանքներ ուղղելու գործելակերպին: Թեև Ջոն Կիրակոսյանը բավականին քարծր դիրք էր զբաղեցնում այդ ժամանակվա կուսակցական վերնախավում, կուսակցական ղեկավարությունը բացասաբար ընդունեց «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» գրքի հրատարակումը և, հիմնվելով ազգայնամոլության և «բուրժուական օբյեկտիվիզմի» մեջ իր իսկ կողմից հրապարակ նետված մեղադրանքների վրա, սանձագերեց գրապատչական մամակների հոսք իշխանական վերին ասյաններ: Հիմնական նամակներից մեկն էլ ստորագրվեց նույնիսկ ՀԿԿ ԿԿ գաղափարախոսության գծով քարտուղարի կողմից¹:

Ջոն Կիրակոսյանը չսպասեց ԽՄԿԿ ԿԿ «դատավճռին», պատրաստեց և Մոսկվա ուղարկեց բացատրական տեղեկանք ժողովածուի, առաջաբանի և իր դեմ ուղղված գրապատանքի մասին: ԽՄԿԿ ԿԿ համապատասխան քաժիններում գրքի վերաբերյալ տեղի ունեցած քննարկումների արդյունքում այդպես էլ ազգայնամոլության նշույլ անգամ չգտան աշխատության մեջ: Այդ տեղեկանքը նույնպես ընդգրկված է ժողովածուի մեջ:

Ստանճնելով ՀԽՍՀ արտգործնախարարի պաշտոնը՝ Ջոն Կիրակոսյանը շարունակեց իր գիտական և մանկավարժական բեղուն գործունեությունը՝ միաժամանակ փորձելով բացարձակապես նոր որակ և ոճ հաղորդել նախարարության աշխատանքներին: ՀԽՍՀ արտգործնախարարության գործունեությունը կրում էր ավելի ճնական, քան քաղաքական բնույթ, քանի որ

¹ Տե՛ս Ջոն Կիրակոսյան. Անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում, էջ 135-144:

ԽՍՀՄ արտաքին քաղաքականությանը վերաբերող որոշումներն ընդունվում է իրականացվում էին Մոսկվայում, և այն սահմանափակվում էր հիմնականում արարողակարգային և հյուպատոսական հարցերով: Ջոն Կիրակոսյանը փորձեց ակտիվացնել մալաբարության քաղաքական-տեղեկատվական գործառույթը՝ միաձուլելով այն քաղաքական հայագիտության քննազավառում իր գիտահրապարակախոսական գործունեության հետ: Նա համոզված էր, որ ԽՍՀՄ հանրապետությունները, տվյալ պարագայում՝ Հայաստանը, կենդով պատմական առանձնահատկություններից և Սփյուռքի առկայության հանգամանքից, երկրի ընդհանուր քաղաքականության շրջանակներում պետք է իրականացնի շատ ավելի ինքնուրույն գիծ:

1978, 1980 թթ. Ջոն Կիրակոսյանը հրատարակեց «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» երկհատոր աշխատությունը, որը նվիրված էր եվրոպական տերությունների քաղաքականությանը Հայկական հարցում, ազգային գաղափարախոսության զարգացման և 1870-1880-ական թթ. հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության լուսնոլորտին: Ներկա ժողովածուի մաս են կազմել այդ շրջանում Ջոն Կիրակոսյանի հեղինակած 1878 թ. Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի վերլուծությանը, տերությունների դիվանագիտական պայքարին, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի քաղաքականությանը, Արևելյան հարցի պատմությանը, հայ ժողովրդի ոռոսական կողմնորոշմանը, Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնելու 150-ամյակին վերաբերող մի շարք հոդվածներ:

1978 թ. Ջոն Կիրակոսյանը ԽՍՀՄ պատվիրակության կազմում մասնակցեց ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 33-րդ նստաշրջանի աշխատանքներին, ելույթներ ունեցավ չորրորդ կոմիտեում՝ «Գաղութային տարածքներում և Աֆրիկայի հարավում օտարերկրյա տնտեսական շրջանների գործունեության մասին» հարցի շուրջ: Գաղութային տարածքներում և Աֆրիկայի հարավում օտարերկրյա տնտեսական ու մյուս շրջանների գործունեության վերաբերյալ Ջոն Կիրակոսյանի «Ռասիստների հանցակիցները» ելույթը տպագրվել է «Մովեստական Հայաստան» պաշտոնաթերթում և ընդգրկված է ժողովածուում:

1982, 1983 թթ. հրատարակված «Երիտրոպրերը պատմության դատաստանի առաջ» երկհատոր աշխատությունից բացի, իր կյանքի վերջին տարիներին Ջոն Կիրակոսյանը հեղինակեց նախադեպը չունեցող մի շարք քաղաքագիտական բնույթի հոդվածներ, որոնք Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի միջոցով ուղարկվեցին և արտատպվեցին նաև սփյուռքահայ մամուլում, այդ թվում՝ օտարալեզու: Ներկա ժողովածուի համար ընտրվել են հետևյալ հոդվածները՝ «Սփյուռքահայության պատմական իրավունքը», «Պատմության թուրքական կեղծարարների ռադիոստեղծ»,

«Հայերի վերաբնակեցումը», «Պատմության փաստերը à la turc», «Կեղծարարությունը շարունակվում է», «Նացիոնալիզմի ագրեսիվ դոկտրինան», «Պատմությունը և ագրեսիվ դոկտրինան երեկ և այսօր», «Դուր ստում եր. պրոֆեսոր», «Թուրքիայի էկոնոմիկան», «Անկարեի և մրագնի պատմության ճշմարտությունը», «Օսմանյան կայսրության հայերի 1915-1916 թթ. ողբերգությունը արևմտյան պատմագրության լուսի ներքո»: Նշված հոդվածները ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարի կողմից բարձրագույն խնդիրները դուրս էին բերում միջազգային հարաբերությունների ոլորտ, դառնում բուն քննարկումների առարկա ոչ միայն սփյուռքահայ մամուլի էջերում, այլև արևմտյան մայրաքաղաքներում, մասնավորապես՝ Անկարայում:

Իր գրքերով և հոդվածներով, որոնք բացի պատմագիտական նշանակությունից, ունեին նաև հրապարակախոսական և գաղափարախոսական բնույթ, Ջոն Կիրակոսյանը նպատակադրվել էր քաղաքական գիտելիք հաղորդելու միջոցով ինքնուրույն մտածելակերպ սերմանել հասարակության հնարավորինս լայն զանգվածներին: Պատմագիտություն, հրապարակախոսություն և դիվանագիտություն ներառող իր գործունեությունը Ջոն Կիրակոսյանը քնդրոշում էր որպես «քաղաքական հայագիտություն», նոր քնագավառ, որը ոչ միայն պետք է քաղաքական տեղեկատվությամբ ապահովեր Հայաստանի ղեկավարությանը, գիտական և հասարակայնության լայն շրջաններին, այլև պարունակեր Սփյուռքին, Խորհրդային Միության այլ համրապետություններին և արտասահմանյան երկրներին ուղղված Հայաստանին և հայկական խնդիրներին վերաբերող քարոզչություն: Այդ քնագավառում տարվող աշխատանքի կարևորությանն են նվիրված Ջոն Կիրակոսյանի կույքը ՀԽՍՀ Գ.Ա. 1983 թ. տարեկան ժողովում, արտասահմանյան երկրներ կատարած ուղևորությունների հաշվետվությունները, Խորհրդային Հայաստանի ղեկավարությունից մուղղված իր նամակներն ու տեղեկանքները:

Իր գործունեության մեջ Ջոն Կիրակոսյանը զգալի տեղ էր հատկացնում Սփյուռքի հետ հարաբերություններին և համագործակցությանը: Նա իրավամբ համարում էր, որ տարբեր երկրներում ապրող և գործող մեր հայրենակիցներն ու սփյուռքահայ կառույցները մեծ հնարավորություններ ունեն հաջողությամբ իրականացնելու համատեղ մշակված քաղաքական ուղեգիծ՝ մասնավորապես սփյուռքահայությանը մշտապես արթուն պահելու և նրա ուժերը պատմության խեղաթյուրման քաղաքականության դեմ պայքարում օգտագործելու նպատակով: Նա մեծ նշանակություն էր տալիս Սփյուռքի հետ համարդված իրականացվող հակաքարոզչությանը, այսինքն՝ Թուրքիայի պատմաբանների, քաղաքական գործիչների կողմից հայ ժողովրդի պատմության կեղծարարության դեմ պայքարին: Ջոն Կիրակոսյանի համոզմամբ այդ աշխատանքը պետք է տարվեր պետական մակարդակով, այդ թվում՝

ՀԽՍՀ արտգործնախարարության միջոցով՝ «արևմտյան իմպերիալիզմի», ներառյալ Թուրքիայի հակասազգային քաղաքականության, ՆԱՏՕ-ի դեմ ուղղված խորհրդային գաղափարախոսության շրջանակներում: Այս իմաստով մեծ հետաքրքրություն են ներկայացնում սփյուռքահայ համայնքների առջև նրա տնեցած կույրքները, ռադիոուղերժներն ու հարցազրույցները:

Ձոն Կիրակոսյանի գիտական գործունեության կարևորագույն մասն են կազմել կենսագրական բնույթի նյութերը (տե՛ս Աշոտ Հովհաննիսյանի, Համագասպ Հարությունյանի, Ալեքսեյ Ջիվեկովի, Նիկողայոս Ադունցի կյանքի ու գործունեության մասին հոդվածները), ինչպես նաև նրա հեղինակած գրախոսականները: Նա ուշադրությամբ հետևում էր քաղաքական հայագիտության և բուրբազիտության բնագավառում Հայաստանում, Խորհրդային Միությունում, ԱՄՆ-ում, Եվրոպայում և այլուր հրատարակվող պատմագիտական և քաղաքագիտական նորույրների, ամմիջապես արձագանքում էր և հանդես գալիս գրախոսություններով մամուլում կամ գիտական հանդեսներում: Հատորում ներկայացված են շուրջ 20 գրախոսականներ, այդ թվում՝ Հայաստանի, Խորհրդային Միության, սփյուռքահայ և բուրբ հեղինակների, պատմաբանների, բուրբագետների, գրողների աշխատությունների, գրքերի և ժողովածուների մասին:

Ձոն Կիրակոսյանի գիտական և գիտահրապարակախոսական երկերն առ այսօր էլ չեն կորցրել իրենց այժմնակա նշանակությունը: Նրա գործունեության մեջ առանցքային էին հայ ժողովրդի՝ պատմությունից դասեր քաղելու, ազգային խնդիրների շուրջ համախմբվելու ու միասնականություն հանդես բերելու, ազգային արժեքները գնահատելու ու պահպանելու սկզբունքները, այսինքն՝ այն, ինչն այդքան անհրաժեշտ է մեզ նաև այսօր: Լուսարանելով 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի պատմության բարդ և դժվարին շրջանը՝ նա հայ ժողովրդի հետ կատարվածի համար ոչ միայն մեղադրում էր Արդու Համիդ II-ին, երիտթուրքերին և բեմալականներին իրենց որդեգրած հայաջինջ ծրագրերի համար և քննադատում մեծ տերությունների քաղաքականությունը Հայկական հարցում, այլև շեշտում արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի թույլ լինելու, միասնականության և քնդհանուր կենտրոնի բացակայության, միջկուսակցական անիմաստ պայքարի բացասական հանգամանքները, կամավորական շարժումը սկսելուց առաջ լուրջ և կշռադատված մտնեցում հանդես բերելու, 1918-1920 թթ. ընթացքում իրատեսական և հավասարակշռված արտաքին քաղաքականություն որդեգրելու, Սփյուռքի հետ արևմտահայության պայքարին և Հայոց ցեղասպանության ճանաչմանը վերաբերող միասնական ծրագիր մշակելու, պատմության խեղաթյուրումների դեմ համադրված աշխատանք իրականացնելու անհրաժեշտությունը:

Ընթերցողին մատչելի դարձնելու նպատակով գրքում զետեղված երկերը ներկայացված են ժամանակագրական կարգով, բնագրի տեսքով՝ հայերեն և ռուսերեն, իսկ արևմտահայերենով հրատարակված նյութերը՝ ժամանակակից ուղղագրությամբ: Միակ բարգձմանությունը՝ գերմաներենից կատարված, «Շտեռն» պարբերականին Ջոն Կիրակոսյանի տված հարցազրույցն է: Յուրաքանչյուր հոդված, գրախոսական, ելույթ, հարցազրույց, նամակ օժտված են օգտագործված աղբյուրի մասին համապատասխան ծանոթագրություններով և կենսագրական տվյալներով:

ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ¹

¹ Արման Կիրակոսյան (ծնվ. 1956) – Ջոն Կիրակոսյանի որդին, պատմաբան, դիվանագետ, պատմ. գիտ. դ-ր, պրոֆ., 1981-1990 թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտ. գիտական ինֆորմացիայի կենտրոնում, ՀԿԿ ԿԿ-ում, ՀԽՍՀ ԳԱ սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնում, եղել է ՀՀ արտգործնախարարի առաջին տեղակալ (1991-1994), պաշտոնակատար (1992-1993), ՀՀ դեսպան Հունաստանում (1994-1999), ԱՄՆ-ում (1999-2005), արտգործնախարարի տեղակալ (2005-2011), 2011-ից՝ ՀՀ դեսպան Ավստրիայում, ԵԱՀԿ-ում և Վիեննայում տեղակայված ՄԱԿ-ի կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցիչ, դասավանդում է ԵՊՀ-ի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, հիմնական աշխատությունները՝ «Великобритания и Армянский вопрос (90-е гг. 19-го в.)», «Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (1830-ական թթ, 1914 թ.)», «The Armenian Massacres, 1894-1896. US Media Testimony», «Ավանդվելիք Հայկական հարցի և Եղեռնի միջազգային ճանաչման պատմության», «Armenia-US: Current Realities and Vision for Future», «The Armenian Massacres, 1894-1896. British Media Testimony», «Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг.»:

ՀՈԴՎԱԾՆԵՐ,
ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ,
ԵԼՈՒՅԹՆԵՐ, ՆԱՍԱԿՆԵՐ,
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

ԱՅԳՊԵՍ ԷԼ ՍՊԱՍԵԼԻ ԷՐ¹

Ստրատեգիա և նավթ՝ ահա այն գլխավոր մոտիվները, որոնք բնորոշում են ամերիկա-անգլիական իմպերիալիստների գաղութային, ագրեսիվ քաղաքականությունը Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում:

Տարբեր ճանապարհներով ու միջոցներով՝ սկսած Բաղդադի պակտից², Էյզենհաուերի լուկաթինայից³, տնտեսական ճնշումից ու կառավարական բռնի հեղաշրջումներից մինչև այդ երկրները գործ ուղարկելը, նրանք ուզում են իրենց ենթարկել արաբական երկրները, իրենց շահատենչ ագրեսիվ նպատակներով օգտագործել նրանց բնական հարստություններն ու տարածքը: Իմպերիալիստների գլխավոր ջանքերն ուղղված են այն բանին, որպեսզի Մերձավոր և Միջին Արևելքի երկրներին կապելով տարբեր դաշինքներով և ռազմական բյուկներով, խախտեն նրանց միասնությունը, մեկուսացնեն, քաժանեն և ստրկացնեն նրանց առանձին-առանձին: Այդ երկրների մասնատվածությունը գաղութարարների փրկությունն է: Նրանց միասնությունը՝ գաղութարարների պարտությունը:


Ամերիկյան և անգլիական իմպերիալիստները դիմեցին ագրեսիայի, փորձեցին մեկուսացնել Եգիպտոսը և Սիրիան՝ արաբական ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման առաջավոր ուժերին, քայք պարտություն կրեցին: Իմպերիալիստների ոտնձգություններն անհաջողության կհասնվեն առավել ևս այժմ, երբ Եգիպտոսը և Սիրիան արդեն միավորվել են մեկ միասնական՝ Արաբական Միացյալ Ռեսպուբլիկայի⁴ մեջ, որի նպատակն է ամրապնդել արաբների միասնությունը՝ ընդդեմ իմպերիալիզմի:

¹ Կիրակոսյան Ջ. Աղյախ Էլ սպասելի էր // «Լեհինյան ուղիով» (Ե.), 1958, N 2, էջ 63-69:

² Բաղդադի պակտ կամ Կենտրոնական պայմանագրի կազմակերպություն (CENTO) - 1955-1979 թթ. Մերձավոր և Միջին Արևելքում գործող, հակախորհրդային ուղղվածություն ունեցող երկրների ռազմաքաղաքական խմբավորում, որի նախաձեռնողներն էին Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ը և Թուրքիան: Կազմակերպության անդամներ էին նաև Իրանը և Պակիստանը: ԱՄՆ-ը պաշտոնապես կազմակերպության անդամ չէր - Ա.Կ.:

³ Էյզենհաուերի դոկտրինա - առաջին անգամ հնչել է ԱՄՆ-ի 34-րդ պրեզիդենտ (1953-1961) Դուայթ Էյզենհաուերի (1890-1969) կողմից 1957 թ. հունվարի 5-ին ԱՄՆ-ի Կոնգրեսին ներկայացված տարեկան ուղերձում, համաձայն որի յուրաքանչյուր երկիր կարող է տնտեսական կամ ռազմական օգնություն հայցել ԱՄՆ-ից, եթե ագրեսիայի է ենթարկվել համայնավարական ճամբարի որևէ պետության կողմից - Ա.Կ.:

⁴ Արաբական Միացյալ Հանրապետություն - Սիրիայի և Եգիպտոսի միացյալ պետական միավորում, որը ստեղծվեց 1958 թ.: Թեև 1961 թ. Սիրիան դուրս եկավ միավորումից, Եգիպտոսը Արաբական Միացյալ Հանրապետություն էր կոչվում մինչև 1971 թ - Ա.Կ.:



A 11
199841

Սիրիայի արտաքին գործերի մինիստր Սալախ Էդ-Դին Բիթարը¹ վերջերս հայտարարեց, որ արաբական պետությունների և ԱՄՆ-ի նորմալ հարաբերությունների վերականգնումը հնարավոր չէ այնքան ժամանակ, քանի ղեկավարողները չեն փոխել իրենց քաղաքականությունը, որը հիմնված է եռյակ համաձայնության (նկատի ունի 1950 թ. ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի դեկլարացիան, որտեղ Մերձավոր և Միջին Արևելքում խաղաղությունը պահպանելու պատրվակի տակ նրանք իրենց հավակնությունները հռչակեցին այդ շրջանում իրենց տիրապետությունն ապահովելու վերաբերյալ), Բաղդադի պակտի և Էյզենհաուերի դոկտրինայի վրա, որոնք ժողովուրդների ներքին գործերին միջամտելու արտահայտություն են:

Սակայն ամերիկա-անգլիական գաղութարարները չեն դադարեցնում իրենց մեքենայությունները: Գաղութային լծից ազատագրված ժողովուրդներին քաղաքականապես և տնտեսապես ստրկացնելու նպատակով նրանք դիմում են, այսպես կոչված, «օգնության» քաղաքականությանը, որը տրվում է այն երկրներին, որոնք համաձայնվում են կատարել իմպերիալիստների պահանջները:

ԱՄՆ-ի կառավարությունը զգալի չափով ավելացրեց ռազմական «օգնությունը» Իրանին և Պակիստանին միայն այն քանից հետո, երբ նրանք միացան Բաղդադի պակտին: Այդ «օգնության» մեջ է մտնում ամերիկյան ռազմական խորհրդատուներ ուղարկելը այդ երկրներ: Միայն Թուրքիայում ամերիկյան ռազմական միսիան հաշվվում է 1500 մարդ: ԱՄՆ-ի քանակի ռազմական «խորհրդատուների» խմբեր կան Պակիստանում (250 մարդ) և Իրանում (450 մարդ): Սպառազինությունների համար բացահայտորեն տրամադրվող «օգնության» ոչ ավելի, քան 10-20 տոկոսն են կազմում, այսպես կոչված, «տնտեսական զարգացմանը» հատկացվող ասիզնացիաները: Բայց դրանք նույնպես ոչ այլ ինչ են, եթե ոչ ռազմական նավահանգիստների, ստրատեգիական ճանապարհների և այլ «ոչ ռազմական» օբյեկտների շինարարության համար տրամադրվող հատկացումներ: Ըստ բնորոշ է *«Էքսպլասթե Հաֆտեզի»* իրանական շաբաթաթերթի խոստովանությունը: Ըստ այդ թերթի՝ Իրանը մոր տարում (այն սկսվում է մարտի 22-ից) պետական բյուջեում 10 մլրդ դիալ դեֆիցիտ կունենա: Թերթը եզրակացնում է, որ դա ռազմական մեծ ծախսերի (8 մլրդ դիալ) հետևանք է, և եթե Իրանը Բաղդադի պակտի անդամ չլիներ, սպա նրա էկոնոմիկան այդպիսի ծանր դրության մեջ չէր ընկնի:

Նամաօրինակ «օգնությունը» շատ շահութաբեր ձեռնարկում է, առաջին հերթին, ամերիկյան նավթային մոնոպոլիստների համար, որոնք վիթխարի շահույթներ են ստանում այդ շրջանի բնակչությանը և բնական հարստությունները շահագործելուց: Հայտնի է, որ Էյզենհաուերի դոկտրինայով ԱՄՆ-ի կառավարությունն արաբական պետություններին 200 մլն դոլար է խոստացել 1958-1959 թթ. ընթացքում: Սակայն միայն ամերիկյան «ԱՐԱՄԿՈ» ընկերու-

¹ Սալախ Էդ-Դին Բիթար (1912-1980) - Սիրիայի արտգործնախարար (1956-1958, 1963, 1966), վարչապետ (1963, 1964, 1966) - Ա.Կ.:

բյուրը, որը գործում է հիմնականում Սատոյան Արաբիայում, 1955 թ. 581,2 մլն դոլար շահույթ էր ստացել:

Սակայն որքան էլ տարօրինակ է, դեռևս կան կառավարություններ, որոնք գալթակողվում են ամերիկյան «օգնության» փշրանքներով և դրանով իսկ սպառնալիքի տակ են դնում իրենց երկրների ազգային անկախությունը և սովկերնությունը:

Թե ուր է տանում այդ «օգնությունը», և ինչպիսին են նրա նպատակները, շատ լավ երևում է Թուրքիայի օրինակով: Հայտնի է, որ արդեն տասը տարի է, ինչ Թուրքիան ամերիկյան իմպերիալիստների հատուկ խնամակալության տակ է գտնվում: «Ֆորչուն» հանդեսը նույնիսկ Թուրքիան համարում է ամերիկյան «օգնության» «փորձադաշտ»: Սակայն Թուրքիային ցույց տրվող ԱՄՆ-ի ամբողջ «օգնությունը» ուղղված է սոսկ նրա ռազմականացմանը: 1947-1956 թթ. Թուրքիայի ռազմական ծախսերը ավելի քան մեկ ու կես անգամ գերազանցել են ԱՄՆ-ի «օգնությանը» ստացված ընդհանուր գումարը: Թուրքական էկոնոմիկան ուժասպառ է լինում ռազմականացման ծանր բեռի տակ: Ռազմական ծախսերը կազմում են երկրի բյուջեի 40 տոկոսը: Թուրքիայի արտաքին պարտքը հսկայական գումարի է հասնում՝ 400 մլն ֆունտ ստեռլինգ: ԱՄՆ-ից կախվածություն, տնտեսության միլիտարիզացիա, ինֆլյացիա, հարկերի աճ, ժողովրդի աղքատության ուժեղացում՝ ահա թե ինչ է «անցերը» ամերիկյան «օգնությունը» իր «փորձադաշտում»:

Սակայն բուրբակյան կառավարող շրջանները շարունակում են իրենց հակաժողովրդական և ավանտյուրիստական քաղաքականությունը: Թուրքիայի կառավարությունը, ի տարբերություն ՆԱՏՕ-ի մասնակից մի շարք ուրիշ երկրների կառավարությունների, ՆԱՏՕ-ի խորհրդի դեկտեմբերյան սեկայում գրավելով առանձնապես ագրեսիվ դիրք և կոչելով սպառազինությունների մրցավազքի հետագա ուժեղացման, Թուրքիային անհավաղ միջուկային ու հրթիռային զենք մատակարարելու, ցույց տվեց, որ ինքը մտալիք է այսուհետև նույնպես վարել այնպիսի քաղաքականություն, որը առաջին հերթին լուրջ վտանգ է ստեղծում հենց իր՝ Թուրքիայի համար:

Ի՞նչն է քնորոշ բուրբակյան ագրեսիվ, ավանտյուրիստական շրջանների մեծան վարքագծին:

Քաղաքատնտեսությունից հայտնի է, որ կապիտալիզմի պայմաններում ամենաանսպասելի բաները կարող են ապրանքի վերածվել: Ազգային սուվերենություն, քաղաքական ու տնտեսական անկախություն – ինչ ասես, որ վաճառքի չեն հանում մեր Ժամանակներում որոշ պետությունների շահատենչ գործիչները: Նրանց «ապրանքը» գովաբանում և բժքկահարում են թե՛ քաղաքական գործիչները, թե՛ ծախված մամուլը: Սակայն այդ ի՞նչ է դրված վաճառասեղանին: Դա Սովետական Միությանը ամենամոտիկ մեր տարածքն է, իրար առաջ կտրելով բացատրում են նրանք: Ամերիկացիները պետք է վերջապես հասկանան, գրում է «Ջումհուրիեթ» թերթում ոմն Ջոշար, որ «Սովետներից ամենաուժեղ հարվածը կհասցվի Թուրքիայի տարածքը, քանի որ այդ

հարվածը կարելի է հասցնել փոքր ռադիոսի գործողության հորիզոնով, որոնցից ներկայումս ունի ազատ աշխարհը: Հաշվի առնելով այդ ամենը, բնական կլինի ավելացնել ԱՄՆ-ի օգնությունը Թուրքիային մինչև այնպիսի չափերի, որոնք նրան հնարավորություն տալին շարունակելու կատարել իր պարտականությունները»:

Բայց միայն իրենց տարածքը չէ, որ վաճառքի են հանել Թուրքիայի կառավարողները: Վաճառվում է նաև էժան միս, պարզ է՝ բնդանորային, մարդկային: Օրերս ԱՄՆ-ում բուրբ դեսպան Ուրգույուն Նյու Յորքում կազմակերպված մի նախաճաշի ժամանակ հայտարարեց, որ բուրբական մեկ զինվորի վրա ամեն տարի ծախսվում է 136 դոլար, իսկ ամերիկյան մի զինվաճառողի վրա՝ 5500 դոլար: Ուրեմն, եզրակացրել է դեսպանը, անհրաժեշտ է, որ ամերիկյան կառավարությունը ավելի լավ նախ այդքան էժան բնդանորի միս մատակարարող ԱՄՆ-ի հավատարիմ դաշնակից Թուրքիային և նրան օգնություն ցույց տա մյուս երկրների համեմատությամբ «ավելի բարձր ցուցակով»:

Իսկ բուրբական հետադիմական մամուլը բոլոր դեպքերում անմիջապես խեղաբյուրում է միջազգային լարվածության մեղմացման նպատակին ուղղված սովետական կառավարության յուրաքանչյուր կոնստրուկտիվ առաջարկություն: «Ուլուս» թերթի տեսաբան Շ.Էսմերը առանց ամաչելու սևով սպիտակի վրա գրում է. «...Խրուշչովը՝ հայտարարել է, որ մի գեղեցիկ օր նա կոչնչացնի Թուրքիան», թեև քաջ հայտնի է, որ սովետական կառավարության ուղերձները ոչ թե սպառնալիք, այլ միայն սովետա-բուրբական հարաբերությունները բարելավելու առաջարկություններ են պարունակում:

Այս փաստերը ցույց են տալիս, որ գաղութային տերությունների քաղաքականությունը մոլի պաշտպաններ ունի հանձինս բուրբական ղեկավար շրջանների:

Սակայն վերջին ժամանակվա իրադարձությունները խոսում են այն մասին, թե որքան աճել են հակամերիկյան տրամադրությունները Արևելքում: Նոյնիսկ այնպիսի երկրներում, ինչպիսիք են՝ Իրաքը, Լիբանանը և Հորդանանը, որոնց կառավարող շրջանները այս կամ այն չափով կախման մեջ են Վաշինգտոնից և Լոնդոնից, ուժեղացել է հակամերիկյան աստիճանավորը: Այդ երկրների բազմաթիվ աչքի ընկնող քաղաքական գործիչներ մամուլում հրապարակայնորեն հանդես են գալիս ընդդեմ Մերձավոր և Միջին Արևելքում ամերիկյան ներկայիս քաղաքականության: Եմենը մերժեց 1 մլն դոլար ամերիկյան օգնությունը, որովհետև դրա դիմաց ամերիկյան իմպերիալիստները ցանկանում էին հրքիռային զենքի սարքեր տեղադրել Եմենի լեռներում:

¹ Նիկիտա Խրուշչով (1894-1971) - ԽՍՀՄ կուսակցական և պետական գործիչ, Ուկրաինայի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար (1938-1947), ԽՄԿԿ Մոսկվայի մարզկոմի առաջին քարտուղար (1949-1953), ԽՄԿԿ ԿԿ առաջին քարտուղար (1953-1964), միաժամանակ ԽՍՀՄ ՆԽՆՍ նախագահ (1958-1964) - Ա.Կ.:

Այս տեսակետից բոլորովին էլ պատահական չէ այն հանգամանքը, որ վերջին շրջանում ամերիկյան բաղաբազկետները դադարել են թմրկահարել էլեգենհատների դոկտրինան, որը հռչակվեց այնքան մեծ աղմկարարությամբ: Գաղութարարության այդ դոկտրինան չհասավ իր նպատակին, ծախողվեց. նա չկարողացավ ուժերի հարաբերակցությունը Մերձավոր Արևելքում փոխել հզուտ ամերիկյան իմպերիալիզմի: Դրա մեջ է արմատացած այն բանի պատճառներից մեկը, որ վաշինգտոնյան քուրմերը սկսեցին շուտուտուտ տալ քրքրել Բաղդադի պակտի դիակը: Այդ նրանք հրավիրեցին այդ պակտի հերթական սեսիան, որը տեղի ունեցավ այս տարվա հունվարի 27-30-ը Անկարայում: Սեսիայի նախաձեռնողները՝ ամերիկյան ղեկավար շրջանները, ամեն ինչ արեցին այն նախօրոք թմրկահարելու համար: Դալլեսն¹ ինքը ուղղորվեց Անկարա, որպեսզի Բաղդադի պակտի սեսիային հատուկ նշանակություն տար և ճնշում գործ դներ պակտի մասնակից պետությունների վրա:

Լայն կամայանիա տարվեց պակտի ներսում առաջացած ճեղքվածքները փակելու, այն ռազմական տեսակետից ամրապնդելու և նրա մեջ նոր անդամներ՝ Լիբանանին և Հորդանանին մերգրավելու ուղղությամբ: Ամերիկյան պետական քարտուղարն այդ նպատակով բանակցություններ վարեց Թեհրանում՝ փորձելով Իրանի և Իրաքի կառավարություններին համոզել ընդունելու ամերիկյան պահանջներն այդ երկրներում միջուկային ու հրքիռային զենքի քազաներ ստեղծելու մասին: Իսկ սեսիային նախորդած ռազմական հանձնաժողովի նիստերում, որտեղ փաստորեն նախագահում էր ամերիկյան բանակի շտաբի պետ, զեներալ Թեյլորը, պետք է առաջարկություններ մշակվեին պակտի մասնակիցների ռազմական պատրաստությունների և ՆԱՏՕ-ի հետ նրանց գործողությունների սերտ կոորդինացիայի շուրջ:

Անկարայի սեսիային մասնակցեցին ԱՄՆ-ի, Անգլիայի, Թուրքիայի, Իրաքի, Իրանի և Պակիստանի ներկայացուցիչները: Համաձայն արևմտյան վարկածի՝ ամերիկյան պատվիրակությունը՝ Դալլեսի ղեկավարությամբ, սեսիային ներկա էր որպես դիտորդ: Իրականում Դալլեսն ինքն էր ղեկավարում և ուղղություն տալիս սեսիայի աշխատանքին: Դա պատահական չէ: Ընդհիվ Մերձավոր Արևելքում իր տնտեսական և ռազմաքաղաքական գերազանցությամբ, ներկայումս այդ շրջանում իմպերիալիստական ուժերի ռազմաքաղաքական դաշինքի ղեկավարը ամերիկյան իմպերիալիզմն է, և փաստորեն ԱՄՆ-ն է գլխավորում Բաղդադի բլոկը: Բավական է ասել, որ Թուրքիային, Իրանին և Պակիստանին տրվող ռազմական և տնտեսության «օգնություն» հիմնական մասը կատարում է ոչ թե Անգլիան, այլ ԱՄՆ-ը: Անգլիական հատկացումները երկու անգամով պակաս են ամերիկյանից: Այնուհետև, Բաղդադի պակտի հիմնական հենարանը հանդիսացող Թուրքիայում ԱՄՆ-ի տնտեսական և ստրատեգիական դիրքերը շատ ավելի ուժեղ են, քան Անգլիայինը:

¹ Ջոն Ֆոտտեր Դալլես (1888-1959) - ԱՄՆ պետքարտուղար (1953-1959) - Ա.Կ.:

Բաղդադի պակտի Անկարայի սեսիայի հիմնական նպատակն այն էր, որ պակտի անդամ պետություններին ստիպի համաձայնել իրենց տարածքներում ամերիկյան միջուկային և հրթիռային զենքի բազաներ ստեղծել: Ընդ որում այդ նպատակին հասնելու համար փորձեր արվեցին սպեկուլյացիա անել այդ երկրների տնտեսական դժվարությունների շուրջ: Նրանց գայթակղում էին այն բանով, թե ամերիկյան հրթիռների առկայությունը իր հնարավորություն կտա կրճատելու իրենց երկրների զինված ուժերը, իսկ ազատված միջոցներն օտազործելու էկոնոմիկայի զարգացման նպատակով: Բայց այդ փաստարկը, որն ամբողջովին կեղծ է և մտացածին, պահանջվող էֆեկտը չունեցավ: Համենայն դեպս Անկարայի սեսիայի գումարման նախաձեռնողները համարձակություն չունեցան իրենց հրապարակած կոմյունիկեում հիշատակել Բաղդադի պակտի մասնակից բոլոր պետությունների տարածքներում ամերիկյան հրթիռային զենքի բազաներ ստեղծելու մասին:

Ամերիկյան իմպերիալիզմի ներկայացուցիչ Դալլեսը նորից փորձեց սեսիայի մասնակիցներին ահաբեկել «կոմունիստական վտանգով». նա հանդես եկավ հակասովետական ամենազգրելի գրպարտություններով: Դալլեսից հետ չմնաց Թուրքիայի պրեմիեր մինիստր Ադնան Մենդերեսը¹, որի ելույթը ամբողջապես հակասում է խաղաղության և անվտանգության ձգտման մասին այն հավաստիացումներին, որ պարունակում էր նրա պատասխանը սովետական կառավարության ուղերձին:

Սակայն, դատելով բազմաթիվ թերթերի հաղորդագրություններից, Իրաքի, Իրանի և Պակիստանի ներկայացուցիչներն ակնարկեցին, որ ոչ մի ռեալ «կոմունիստական վտանգ» գոյություն չունի իրենց երկրների համար: Դա պատասխան չէ: Իրադարձությունների զարգացումը Մերձավոր և Միջին Արևելքում այդ շրջանի երկրներին ցույց է տվել, թե որտեղից է գալիս ռեալ վտանգը: Եզիպտոսը հարձակման ենթարկվեց ոչ թե կոմունիզմի կողմից, այլ Բաղդադի պակտի անդամ Անգլիայի և նրա դաշնակիցների՝ Ֆրանսիայի և Իսրայելի կողմից: Արաբական մյուս երկրների՝ Եմենի և Օմանի դեմ զարեսիվ պատերազմ է մղում Բաղդադի պակտի մույն անդամը՝ Անգլիան: Միրիային սպառնում էր Թուրքիան, որին զրգոում ու քաջալերում էին ամերիկյան իմպերիալիստները: Այս փաստերից հետո, պարզ է, որ ոչ ոք չի հավատա «կոմունիստական վտանգի» մասին մտացածին խոսակցություններին: Միայն կոյր մարդը կարող է չտեսնել, թե ով է իսկապես սպառնում Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ազատությանն ու անկախությանը:

Այժմ ավելի, քան երբևէ, դատարկահունչ են Դալլեսի այն հավաստիացումները, թե Բաղդադի պակտը ռեզիոնալ կազմակերպություն է: Այսօր այլևս քչերն են կասկածում, որ այդ բոլոր ստեղծվել է որպես ռազմական կազմակերպություն, որը ազրեսիվ և զավթողական նպատակներ է հետապնդում:

¹ Ադնան Մենդերես (1899-1961) - Թուրքիայի վարչապետ (1950-1960), արտգործ-նախարար (1955) - Ա.Կ.:

Պետք չէ աշխարհագրության մեծ մասնագետ լինել՝ հասկանալու համար, քե որտեղ է գտնվում Բաղդադի պակտի անդամ Անգլիան: Եթե Մեծ Բրիտանիան համարենք Մերձավոր Արևելքի մեջ մտնող երկիր, ապա նույնպիսի հաջողությամբ, օրինակ, կարելի է պահանջել, որ Պակիստանն էլ տեղ ունենա Եվրոպական խորհրդում: Բաղդադի պակտը այնքանով է «պաշտպանական», որքանով որ «ռեզիոնալ» է: Ո՞ւմ դեմ է ուղղված այն. «դեպի հյուսիս», – առանց քաբցնելու հայտարարել է Անգլիայի արտաքին գործերի մինիստր Սելվին Լոյդը¹: «Լատոլի հոտ է գալիս Բաղդադի պակտի Անկարայի սեսիայի որոշումներից», – գրում է լիբանանյան «Տելեգրաֆ» թերթը:

Եթե Դալլեսը Անկարայի սեսիա էր եկել Բաղդադի պակտը ԱՄՆ-ի ռազմական պլաններին համապատասխան ավելի հուսալի գեներ և ՆԱՏՕ-ի կույր հավելված դարձնելու մտադրությամբ, ապա Բաղդադի պակտի անդամ ասիական երկրները սպասում էին, որ Միացյալ Նահանգները հոգ կտանեն իրենց տնտեսական զարգացման մասին: Եզիպտոսի և Սիրիայի օրինակը, որոնք առանց քաղաքական կամ որևիցե այլ պայմանի անշահախնդիր տնտեսական և տեխնիկական օգնություն են ստանում Սովետական Միությունից, չի կարող խոր ազդեցություն չունենալ և իր վրա չբեռնել Ասիայի և Աֆրիկայի մնացած երկրների հասարակայնության ուշադրությունը: Այդ օրինակով նրանք տեսնում են, քե ինչպես են պրակտիկայում կենսագործվում Բանդուգում ձևակերպված խաղաղ գոյակցության և համագործակցության սկզբունքները, որոնք հիմնված են հավասարության և փոխադարձ օգուտի վրա:

Սեսիայի քաջման նախօրյակին թուրքական «Ալլիս» հանդեսը գրում էր. պատվիրակների մտքում միայն մի բան կա՝ «փող, փող և փող», իսկ Դալլեսը այդ ժամանակ միայն մի բան էր մտածում, «հրքիռային բազաներ, հրքիռային բազաներ և հրքիռային բազաներ»: Ինչպե՞ս դրանք համատեղել: Դալլեսը ստիպված էր տնտեսական օգնություն խոստանալ: Բայց այդ օգնության մասին կարելի է ասել լեռը երկնեց, քայց մուկ ծնեց: Սեսիայում հավանություն տրվեց Բաղդադի պակտի երկրների տարածքում տնտեսական զարգացման 7 նախագծերի, որոնք փաստորեն ենթարկված են ամերիկյան ստրատեգիական նպատակներին և գլխավորապես կոմունիկացիաների շինարարություն են նախատեսում: Այդ աշխատանքների արժեքը հավասար է 350 մլն դոլարի: Ինչպես հաղորդել է «Ատշիեյտեղ Պրես» գործակալությունը, ամերիկյան ներդրումը կազմելու է ընդամենը 13 մլն դոլար, իսկ Անգլիայինը՝ 5 մլն դոլար: Մնացած մասը, ակնհայտ է, որ պետք է կատարվի այն երկրների

¹ Չոն Սելվին Բրուկ Լոյդ (1904-1978) - քրիտանացի պետական գործիչ, պալատական կուսակցության անդամ, Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարար (1955), արտգործնախարար (1955-1960), Խորհրդարանի Համայնքների պալատի խոսնակ (1971-1976) – Ա.Կ.:

հաշվին, որոնց տարածքի վրա կկատուվեն կոմունիկացիոն միջոցները: Այս տեղից պարզ է դառնում, թե ով է ում օգնում:

Անկարայի սեսիայում Դալլեսի արած այն հայտարարությունը, թե ԱՄՆ-ը Բաղդադի պակտի մասնակից երկրներին որպես «նվեր» 10 մլն կտրամադրի, «եթե ԱՄՆ-ի կոնգրեսը համաձայնի դրան», առաջ է բերել հուսախաբություն, որը չեն թարցնում նույնիսկ պրոամերիկյան թերթերը:

Թուրքական «Ջումհուրիեթ» թերթը, որը Անկարայի սեսիայի նախօրյակին պնդում էր, թե ամերիկյան «օգնության» միայն նշանակալի ավելացումը կարող է փրկել Բաղդադի պակտը, ստիպված է խոստովանել, որ սեսիայում չհաջողվեց այդպիսի «օգնություն» ստանալ: «Մուրա» թերթը կրկնեց այն հանրահայտ ճշմարտությունը, որ «ԱՄՆ-ը միայն այն ժամանակ է օգնություն ցույց տալիս, երբ նա համոզված է, որ դա օգտավետ կլինի իր համար»: Որոշ մեկնաբաններ դառը հեզմանքով նկատում են, որ Բաղդադի պակտը իր ստեղծողների «ժույսեթը արդարացնում» է մի տեսակետից, որ պակտի անդամները հավասար իրավունքներից չեն օգտվում: Այս տեսակետից բուրդովին էլ զարմանալի չէ, որ Անկարայի սեսիան ուժեղացրեց հակասությունները պակտի ներսում: Բացի անզր-ամերիկյան հակասություններից և, մի կողմից, Անգլիայի և ԱՄՆ-ի ու, մյուս կողմից, ասիական երկրների միջև եղած հակասություններից, կան նաև այլ կարգի տարածայնություններ: Անգլիայի և Թուրքիայի միջև՝ Կիպրոսի հարցի շուրջը, Անգլիայի և Իրանի միջև՝ Բահրեյան կղզիների պատկանելության հարցի շուրջը: Իրաքը տարածայնում է Թուրքիայի, Անգլիայի և ԱՄՆ-ի հետ՝ Իսրայելի նկատմամբ նրանց դիրքի կապակցությամբ: Թուրքական ընդդիմադիր թերթերը հատկապես նշում են թուրք-իրաքյան հակասությունները Բաղդադի պակտում և առանձնապես այն համագամանքը, որ Իրաքը Անկարայի սեսիա չուղարկեց իր պրեմիեր մինիստրին, ինչպես դա արեցին Բաղդադի պակտի մյուս անդամները:

Անդրադառնալով Անկարայի սեսիայի արդյունքների՝ ֆրանսիական «Կրուա» թերթը հեզմանքով հայտարարել է, որ «Բաղդադի պակտի միակ հաջողությունը սոսկ այն է, որ նա դեռ գոյություն ունի»:

Իրոք, դա այդպես է: Ինքնուրույն զարգացման ուղիով ընթացող երկրների առաջընթացը չի կարելի կասեցնել գաղութակալական որևէ բրկի կամ դոկտրինայի միջոցով: Ժողովուրդները, այդ թվում՝ Բաղդադի պակտի մեջ մտնող ասիական պետությունների ժողովուրդները, պահանջում են մեղմացնել միջազգային լարվածությունը, նրանք խաղաղ գոյակցություն են ցանկանում, որը, ինչպես ցույց է տալիս Եգիպտոսի, Սիրիայի, Հնդկաստանի, Բիրմայի և ուրիշ շատ պետությունների օրինակը, նրանց համար տնտեսական ազատ զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման հեռանկարներ է բաց անում:

Խաղաղության և ժողովուրդների համագործակցության գաղափարները, որոնց իրականացման համար հաստատակամորեն պայքարում են Սովետական Միությունը և խաղաղասեր մյուս պետությունները, զուճում են

Արևելքի ժողովուրդների հավանությունն ու պաշտպանությունը: Այդպիսի քաղաքականության օգտին արտահայտվեց նաև Ասիայի և Աֆրիկայի երկրների՝ Կահիրեի համերաշխության կոնֆերանսը, որը վճռականորեն դատապարտեց Մերձավոր և Միջին Արևելքում արևմտյան տերությունների կողմից տարվող ռազմական բոկներ ստեղծելու և դրանք ընդլայնելու խնդիրալիստական քաղաքականությունը: Կոնֆերանսը արդարացիորեն ընդգծեց, որ ինչպես Բաղդադի պակտը, այնպես էլ Էյզենհաուեր-Դալլեսի դոկտրինան հակասում են արարական երկրների անկախության շահերին, ոտնձգություն են նրանց սովերենության հանդեպ, սպառնալիքի տակ են դնում նրանց անվտանգությունը:

Ահա թե ինչու Անկարայի սեփան իսկապես հիշեցնում է քմբկահարված ամերիկյան հրքիռները, որոնք հրաժարվում են ծրագրված ուղղությամբ ստրալուց: Անկարայում Դալլեսին չհաջողվեց հասնել այն բանին, ինչին ձգտում էին ԱՄՆ-ի որոշակի շրջանները: Այդպես էլ սպասելի էր: Նա, ով ուզում է կանգնեցնել պատմական պրոցեսը, ինքը կզգճվի նրա առաջընթացով:

ԿԱՐԵՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ¹

ՀՍՍՌ- գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս է տեսել Ե.Ղ.Սարգսյանի² «Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունն Անդրկովկասում Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին»³ ծավալուն աշխատությունը: Ուսումնասիրության շրջանակներն ընդգրկում են պատմական իրադարձությունների հարուստ, բայց միաժամանակ բարդ ժամանակաշրջան: Այնչափ է, որ երկարամյա քրտնաջան աշխատանքի և պրպտումների շնորհիվ միայն կարող էր ստեղծվել գրախոսվող աշխատությունը: Հեղինակը մեծ աշխատանք է կատարել, ուսումնասիրել է Մոսկվայի, Լենինգրադի, Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի պետական, պարտիայի արխիվներում պահվող բազմաթիվ փաստաթղթեր ու նյութեր, օգտագործել սովետական, արևմտակարգական և թուրքական հեղինակների բազմաթիվ գործեր, պաշտոնական փաստաթղթեր, քերթեր և ամսագրեր: Աշխատության կարևոր արժանիքներից մեկն այն է, որ այնտեղ լայնորեն օգտագործված են թուրքական հեղինակների գործերը, բացահայտված է այն սև դերը, որ կատարում են թուրքական հեղինակները պատմական դեպքերն անամոթաբար նենգափոխելու, թուրքական կառավարողների նվաճողական, ժողովրդասպան քաղաքականությունն արդարացնելու ուղղությամբ:

Պետք է ասել, որ մեր պատմագրության մեջ տակավին քիչ բան է արված այս հարցում: Մինչդեռ թուրքական աղբյուրների ուսումնասիրությունը, թուրք պատմաբանների կեղծարարության բացահայտումն ու գիտականորեն հիմնավորված մերկացումը, պատմաբաններ, որոնք այսօր հանդես են գալիս թուրք ջարդարարների ոճրագործություններն արդարացնողների դերում, խիստ կարևոր և անհրաժեշտ խնդիր է: Այս տեսակետից ողջունելի ուսումնասիրություն է կատարել ընկ. Ե. Սարգսյանը, որի մենագրությունը վերջին տարիներս մեզ մոտ ստեղծված թուրքագիտական աշխատությունների շարքում լավագույններից մեկն է:

¹ Կիրակոսյան Ջ. Կարևոր ուսումնասիրություն // «Լենինյան ուղիով» (Ե.), 1963, N 2, էջ 99-104: Տպագրվում է կրճատումներով:

² Երվանդ Սարգսյան (1913-2011) - թուրքագետ, պատմ. գիտ. դ-ր, պրոֆ., աշխատել է ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտում, հիմնական աշխատությունները՝ «Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918 թթ.», «Հայերի ֆիզիկական ոչնչացման ծրագրի իրագործումը երիտթուրքերի կողմից 1915-1916 թթ.»։ «Օսմանյան կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում և տեղությունները XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբին» - Ա.Կ.:

³ Саркисян Е.К. Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны, Е.: Изд-во АН Арм. ССР, 1962, 495 с.

Որոշ հեղինակներ (այդ բվում՝ նաև տվետական առանձին պատմաբաններ), իրենց գործերում հանգամանորեն վերլուծելով ցարիզմի նվաճողական քաղաքականությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, միաժամանակ անհրաժեշտ խորությամբ չէին բացահայտում երիտասարդ բուրքերի հետադիմական, պանրոքիստական ու նվաճողական քաղաքականությունը: Որոշ աշխատություններում Թուրքիան միակողմանիորեն ներկայացվել է միայն որպես կիսագաղութային, իմպերիալիզմի կողմից ճնշված երկիր, ցույց չի տրվել, որ օսմանյան պետությունը ժանդարմի դեր էր կատարում կայսրության փոքր ժողովուրդների նկատմամբ, որ նա, ենթարկվելով արևմտյան գաղութարարների տնտեսական ու քաղաքական էքսպանսիային, միաժամանակ հարստահարող և գաղութացնող էր արաբների, հայերի, քրդերի, սլավոնական և այլ ժողովուրդների համար, ուներ զավթողական որոշակի ծրագրեր Անդրկովկասի նկատմամբ, որոնք գործնականում ցայտուն կերպով դրսևորվեցին Առաջին համաշխարհային պատերազմի վերջին փուլում: Երբ Առաջին համաշխարհային պատերազմի առաջին շրջանում (1914-1917) Օսմանյան կայսրության ռազմական մեքենան Արևելյան Անատոլիայում ռուսական բանակի հարվածների տակ ստիպված եղավ հիմնականում պաշտպանողական մարտեր մղել, նահանջել, ապա այդ չի նշանակում, որ երիտասարդ բուրքերի կառավարող շրջանները էքսպանսիայի չէին ձգտում: Ընդհակառակը, «Մենք, - հայտարարում էին երիտասարդ բուրքերի պարագլուխները, - պետք է նոր նվաճումների ու կոմպենսացիաների ձգտենք Արևելքում, Արարատի կողմում» (էջ 98): Ե.Սարգսյանին հաջողվել է փաստացի հարուստ նյութի հիման վրա բացահայտել նրանց հետադիմական ներքին քաղաքականությունը, հերքել բուրք պատմաբանների մի շարք կեղծիքներ, վեր հանել Անդրկովկասի նկատմամբ Էնվերի¹, Ջեմալի², Թալեա-

¹ Էնվեր-փաշա (1881-1922) – բուրք պետական և ռազմական գործիչ, «Միություն և առաջադիմություն» կուսակցության ԿԿ անդամ, 1908 թ. երիտուրբական հեղաշրջման կազմակերպիչներից և իրականացնողներից, 1913-ից՝ ռազմական նախարար, գլխավոր սպայակույտի պետ, երիտուրբական «եռապետության» անդամ, հայերի ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից, փախել է Գերմանիա, 1919-ին Կ.Պոլսի ռազմական ատյանի կողմից հետևյալ կարգով մահվան է դատապարտվել իբրև պատերազմի հանցագործ և հայերի տեղահանման ու ջարդերի կազմակերպիչ, Միջին Ասիայում ղեկավարել է բասմալների գործողությունները, սպանվել է խորհրդային զորքերի հետ բախման ժամանակ - Ա.Վ.:

² Ահմեդ Ջեմալ-փաշա (1872-1922) – բուրք պետական գործիչ, «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխներից, երիտուրբական «եռապետության» անդամ, ծովային նախարար, Սիրիայում գործող 4-րդ բանակի իրաժանատար (1914-1918), գործուն մասնակցություն է ունեցել հայերի զանգվածային տեղահանությանն ու կոտորածին, ճնշել է Ուրֆայի հայերի ինքնապաշտպանությունը, արաբների ազգային-ազատագրական շարժումները, 1919-ին Կ.Պոլսի ռազմական ատյանի կողմից հետևյալ կարգով մահվան է դատապարտ-

քի¹ և նրանց բեմական հետևորդների զավթողական ծրագրերը, ցույց է տվել նրանց կատարած ոճրագործությունները:

Գրախոսվող գիրքը բաղկացած է ներածությունից, վեց գլուխներից և վերջաբանից: Տրված են մտև օգտագործված աղբյուրների և գրականության, աշխարհագրական և հատուկ անունների ցանկեր:

Առաջին գլխում՝ «Օսմանյան կայսրությունը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին», ցույց է տրված օսմանյան պետության կիսազաղութային վիճակը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, ինպես լիախոսական տերությունների գաղութային քաղաքականությունն ու տնտեսական դիրքերը Թուրքիայում, նրանց հետապնդած նպատակները: Հեղինակին հաջողվել է բազմաթիվ նոր նյութերով նկարագրել ազգային փոքրամասնություններին և առանձնապես հայ ժողովրդի արևմտյան հատվածի ծանր վիճակը օսմանյան կառավարողների տիրապետության տակ, կառավարողներ, որոնք պլանավորված կերպով, պարբերաբար հայերի մասսայական ջարդեր էին կազմակերպում: Հեղինակը այդ բանը հաստատող քաղվածքներ է բերում բուրբական կառավարողների, պետական գործիչների ասույթներից, որոնք հենց հերքում են թուրքական պատմաբանների այդ պնդումները, քն իր «թուրքերը երբեք մի ամբողջ ազգի նկատմամբ բռնություն չեն գործադրել» (Լջ 33):

Հեղինակը նշում է արևմտահայերի ազգային-ազատագրական ելույթները Սասունում, Էրզրումում, Տրապիզոնում, Բիթլիսում, Վանում և Անատոլիայի արևելյան մյուս վիլայեթներում: ...Առաջին գլխում վերլուծված է երիտասարդ թուրքերի կատարած հեղաշրջման (1908-1909 թթ.) էությունը, նրանց ստեղծած իշխանության ներքին քաղաքականությունը, նշված է, որ երիտթուրքերի հեղափոխությունը չլուծեց բուրժուադեմոկրատական հեղափոխության և ոչ մի խնդիր:

Հեղինակը կոնկրետ օրինակներով ցույց է տալիս երիտթուրքերի շովինիստական քաղաքականությունն ազգային փոքրամասնությունների նկատմամբ, որ նրանք շարունակում էին արդուլիամիլյան պանիսլամիզմի և պան-

վել իրրև պատերազմի հանցագործ և հայերի տեղահանման ու ջարդերի կազմակերպիչ, սպանվել է Թիֆլիսում հայ վիժառուների կողմից - Ա.Կ.:

¹ Մինձեղ Թալեաթ-փաշա (1874-1921) – թուրք պետական գործիչ, «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխներից, երիտթուրքական «եռապետության» անդամ, 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո ընտրվել է Մեջլիսի պատգամավոր, եղել է ներքին գործերի, փոստի և հեռագրատան նախարար, 1913 թ. պետական հեղաշրջման գլխավոր կազմակերպիչներից, դարձյալ ներքին գործերի նախարար և կուսակցության ԿԿ նախագահ, հայերի զանգվածային տեղահանության և կոտորածների գլխավոր կազմակերպիչներից, փախել է Գերմանիա, 1919-ին Կ.Պոլսի ռազմական ատյանի կողմից հետևյալ կարգով մահվան է դատապարտվել իրրև պատերազմի հանցագործ և հայերի տեղահանման ու ջարդերի կազմակերպիչ, սպանվել է Բեռլինում Սողոմոն Թեևիլյանի կողմից - Ա.Կ.:

բուրբիզի կուրսը, հայտարարում, որ երկրում բացի օսմանցիներից այլ ազգեր չկան: 1909 թ. գարնանը Ալանայի և Կիլիկիայի այլ շրջանների հայկական խաղաղ բնակչության կոտորածի օրինակով ցույց է տրվում, որ երիտրոսերերը Արդու Համիդի՝ հայաչինջ քաղաքակնության հարազատ շարունակողները հանդիսացան: Այնուհետև հեղինակն անդրադառնում է քրդերի, արաբների ազատագրական ելույթներին, քննարկում Արևմտյան Հայաստանում ռեժիմները իրականացնելու ցարական կառավարության քաղաքականությունը, արևմտանվտույզական պետությունների և Ռուսաստանի հակա-սուրյուններն այդ հարցում և այլն:

Երկրորդ գլխում՝ «Երիտրոսերական գործակալությունը Անդրկովկասում պատերազմի նախօրյակին», ցույց է տրվում, թե ինչպես երիտրոսերը պանիսլամիզմի և պանբուրբիզմի պրոպագանդայի, գործակալներ ուղարկելու միջոցով ձգտում էին իրենց կողմը գրավել Անդրկովկասի մահմեդականներին, կրոնական, Ֆանատիկ կրթեր բորբոքելու միջոցով խարխել ցարիզմի դիրքերը և դյուրացնել իրենց նվաճողական պլանների իրագործումն Անդրկովկասում:

Աշխատության երրորդ գլխը՝ «Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելը», նվիրված է պատերազմի նախօրյակին ղիվանագիտական պայքարին, գերմանական իմպերիալիզմի մերձավորարևելյան քաղաքականության, պատերազմի նախապատրաստման հարցերին: Այստեղ հեղինակի շոշափած գլխավոր հարցն այն է, որ ոչ թե Ռուսաստանն իր քաղաքականությանը Թուրքիային ստիպեց Գերմանիայի հետ դաշինք կնքել և պատերազմի մեջ մտնել նրա կազմում ընդդեմ Ռուսաստանի և Անտանտայի մյուս պետությունների, այլ նման դիրքորոշումը արդյունք էր երիտրոսերների հետապնդած նվաճողական քաղաքականության: Այդ թեզը հիմնավորելու համար հեղինակը շատ արդարացի կերպով քննադատում է թուրք հեղինակների տեսակետները, որոնք Թուրքիային դուրս են բերում խաղաղության աղավնի, չեզոք քաղաքականության կողմնակից, ինչպես նաև՝ արևմտանվտույզական մի շարք պատմաբանների գործերը, որտեղ այն միտքն է անցկացվում, թե իբր Ռուսաստանն իր քաղաքականությանը ստիպեց Թուրքիային պատերազմի մեջ մտնել Գերմանիայի կողմում:

... Սենք արդեն վերը նշեցինք, որ ցարիզմի նվաճողական քաղաքականության մասին տվե՛տական պատմագրության մեջ ավելի շատ է խոսվել, քան Թուրքիայի: Սակայն տվյալ դեպքում Թուրքիայի ազդեցիվ նպա-

¹ Արդու Համիդ II (1842-1918) – Օսմանյան կայսրության սուլթան (1876-1909), 1876 թ. հուլիսի էլ օսմանյան սահմանադրությունը, սակայն 1878-ին արձակել է խորհրդարանը, հաստատել դաժան վարչակարգ («զուլում»), դաժանորեն ճնշել բուլղարների, մակեդոնացիների, արաբների, հայերի ազատագրական շարժումները, 1894-1896 թթ. կազմակերպել է հայ բնակչության համատարած ջարդ, որի համար ստացել է «կարմիր սուլթան» մականունը, 1908-ի երիտրոսերական հեղաշրջումից հետո վերականգնել է սահմանադրությունը, սակայն 1909-ի հեղաշրջման անհաջող փորձից հետո գահընկեց է արվել և արտրվել - Ա.Կ.:

տակները բացահայտելու համար ամենևին հարկ չկա անտեսելու նաև այն հանգամանքը, որ ցարական Ռուսաստանը «կոփում էր... Հայաստանի համար և Կոստանդնուպոլսի համար» (Վ.Ի.Լենին¹), որ ցարիզմը նույնիսկ պաշտոնապես պատերազմի նպատակ հռչակել էր Թուրքիայում ապող քրիստոնյաների ազատագրումը: Օսմանյան կայսրության մասնատմանն էին ձգտում նաև Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և արևմտաեվրոպական այլ տերություններ, որոնց միջև առկա էին խոր հակասություններ, և նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր ավելի յուղալի պատառ բռցնել: Գերմանական իմպերիալիզմն իր նպատակներին Մերձավոր ու Միջին Արևելքում ուզում էր հասնել այլ միջոցներով, հենվելով Թուրքիայի վրա, վերացնելով այն «խոչընդոտները», տվյալ դեպքում, օրինակ, հայերին, որոնք առիթ էին ծառայում Թուրքիայի ներքին գործերին մեծ տերությունների միջամտությունների և, հետևաբար, այնտեղ իրենց դիրքերն ամրապնդելու համար: Գերմանիայի հետապնդած նպատակները պարզ երևում են իր ժամանակին պրոպագանդիստական լայն գործունեություն ծավալած «Գերմանա-ասիական ընկերության» գործիչներից մեկի՝ Պաուլ Ռորբախի² խոսքերից, որ մեջ է բերել Ե.Սարգսյանը. «...Գերմանական քաղաքականությունն ամենից առաջ պետք է ձգտի նրան, որպեսզի Թուրքիան մնա անկախ պետություն և հակազդի սուլթանական կայսրության մասնատման և թուրքական որևէ տերիտորիա վավերելու այլ տերությունների ոտնձգություններին» (էջ 137): Այնուհետև նույն Ռորբախը թուրքական կառավարողներին խորհուրդ էր տալիս աստիճանաբար ոչնչացնել հայերին Թուրքահայաստանում: Գերմանական շահերը, նրա կարծիքով, այստեղ նույնպես համընկնում էին թուրքականին երկու պատճառով. առաջին՝ Գերմանիայի համար կարևոր էր թուրքական տիրապետության ամրապնդումը Արևմտյան Հայաստանում, իսկ երկրորդ՝ հայերի ծանր դրությունն ստիպում է նրանց վերաբնակվել Միջագետքում, որտեղ նրանք, ըստ գերմանական իմպերիալիստների, «ծնունդից» տարր կհանդիսանային գերմանական տնտեսական էքսպանսիան իրականացնելու դեպքում (էջ 139):

Գերմանիայի հետ երիտթուրքերի դաշինքը ոչ թե պատահական գործոնների կամ Անտանտայի պետությունների դիվանագիտական սխալների արդյունք էր, այլ գերմանական գաղութարարների էքսպանսիոնիստական, բայց համեմատաբար քողարկված ու երեսպաշտ քաղաքականության հաղթանակ, որին ապավինելով երիտթուրքերը ո՛չ միայն ձգտում էին պահպանել

¹ Վլադիմիր Լենին (Ույաևով) (1870-1924) – 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխության կազմակերպիչ, խորհրդային պետության իմենադիր և դեկավար - Ա.Կ.:

² Պաուլ Ռորբախ (1869-1956) – գերմանական քաղաքագետ և հասարակական գործիչ, Գերմանա-հայկական ընկերության նախագահի տեղակալ, նախագահ, աշխատությունները նվիրված են Մերձավոր Արևելքում Գերմանիայի քաղաքականությանը - Ա.Կ.:

Օսմանյան կայսրության անձնեմխելությունը, այլև իրականացնել սեփական տարածողական, պանիսլամական պլանները:

Գլխում ցույց է տրված գերմանական միլիտարիզմի էքսպանսիան Թուրքիայում, նկարագրված են 1914 թ. օգոստոսի 2-ի գերմանա-թուրքական դաշնակցային գաղտնի պայմանագրի կնքման մանրամասները, Լիման ֆոն Սանդերսի միսիայի¹ գործունեությունը Թուրքիայում, բացահայտված են նրա իրականացրած ռազմական ռեֆորմների էությունը, Ռուսաստանի հետ չեզոքության հարցի շուրջ Էնվերի նախածնունդ բանակցությունների նենգ դիտավորությունները, «Գեբեն» և «Բերսալաո» ռազմանավերի ֆիլիտիվ գնման նպատակները և այլն:

Չորրորդ՝ «Կովկասյան ճակատը 1914-1917 թթ.» գլխում հեղինակը փաստացի նյութերի հիման վրա հիմնավորում է, որ երիտթուրքերը պատերազմի հենց սկզբից թե՛ պրոպագանդայի միջոցով և թե՛ գործնական քայլերով ձգտում էին իրագործել իրենց հեռու գնացող զավթողական պլանները Կովկասի, Մյոջին Ասիայի, Պովոլժիեի, Ղրիմի, ինչպես նաև Հյուսիսային Աֆրիկայի, Աֆղանստանի և այլ երկրների նկատմամբ: Էնվերը հայտարարում էր, որ Գերմանիայի օժանդակությամբ թուրքերը կնվաճեն Մակեդոնիան, Կովկասը ու Եգիպտոսը և կկարողանան «Միություն և առաջադիմություն» կուսակցության «իշխանությունը աշխարհի ամենահզոր կայսրության վերածել» (էջ 176): Այս բանը ապացուցող բազմաթիվ վկայություններ ու փաստեր են բերված հեղինակի կողմից: Այստեղ գերազանցապես նկարագրվում են պատերազմական գործողությունների ընթացքը, ռուսական բանակի տարած հաղթանակները, իսկ դրանց հետ կապված քաղաքական հարցերը լուսարանվում են ավելի պակաս հանգամանորեն:

Պորթլեմեների արժարժման քաղաքական ասպեկտի թուլությամբ հավանարար պետք է բացատրել այն, որ օրինակ՝ 1917 թ. կեսերից ռուսական կովկասյան բանակի ամհաջողությունները մեկնաբանելիս հեղինակը նշում է միայն բանակում տիրած ինքնահոսի, թափափվածության, զորահրամանատարների անպատասխանատվության, վատ մատակարարման, զինամթերքի

¹ Գեներալ Լիման Օստո ֆոն Սանդերսի գլխավորած զինվորական առաքելությունը Թուրքիա էր ուղարկվել Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ թուրքական բանակը վերակառուցելու, ճարտական և ճարտավարական կարողությունները բարձրացնելու նպատակով: Սանդերսը նշանակվել էր Ձինվորական գեներալյն խորհրդի անդամ և ռազմական դպրոցների տեսուչ, իսկ առաքելության մյուս անդամները ստանձնել էին հրամանատարական ու շտաբային կարևոր պաշտոններ: Սանդերսին և առաքելության մյուս անդամներին հայտնի էին երիտթուրքերի մտադրությունները հայ բնակչության տեղահանության մասին: Սանդերսը մույնիսկ հայտարարել էր, որ հայերի տեղահանության հրամանը թելադրված էր «ռազմական և քաղաքական անհրաժեշտության»։ Նա մասնակցել էր Մոդոնոն Թեխիլյանի դատավարությանը, վտրժում էր Ժխտել գերմանական հրամանատարության հանցավոր մեղսակցությունը հայ բնակչության ջարդերին - Ա.Կ.:

և հանդերձանքի պակասի մասին (էջ 221), միաժամանակ չհիշատակելով, որ հեղափոխական գաղափարները համակել էին զինվորների հոռի զանգվածներին, որ ժամանակավոր կառավարության կողմից շարունակվող իմպերիալիստական պատերազմի քաղաքականությունը սնանկացել էր: Այստեղ ցանկալի կլիներ վկայակոչել ոչ միայն դասալքության, այլև զինվորների հեղափոխվելու մասին փաստերը:

Դժբախտաբար, հեղինակը գրեթե չի քննարկում պատերազմին հայերի ունեցած մասնակցության, թուրքահայերի բախտը տնօրինողների դերը ստանճնած բուրժուական կուսակցությունների հետապնդած նպատակների, նրանց գործելակերպի, նրանց ու ցարիզմի առնչությունների հարցերը: Պատերազմական գործողությունները զուտ ռազմական առումով քննարկելը չի ընդգրկում պատերազմական անցուղարձն իր ամբողջությամբ, պատասխան չի տալիս շատ կնճռոտ հարցերի: Մի շարք առիթներով հիշատակվում են կամավորական խմբերը, բայց ընթերցողը չի գտնում նրանց ստեղծման նպատակների, նրանց խաղացած դերի գնահատականը: Իսկ սրանց հարցեր են, որոնք չի կարելի շրջանցել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ստանյան պետության ժողովրդասպան քաղաքականությունը, արևմտահայերի ողբերգությունն ուսումնասիրելիս:

Այդ ողբերգության, թուրքահայերի զանգվածային եղեռնի մանրամասնությունների մասին հարուստ նյութեր են օգտագործված հինգերորդ՝ «Օսմանյան կայսրության ներքին դրությունը պատերազմի տարիներին» գլխում: Հեղինակին հաջողվել է ցույց տալ, որ երիտթուրքերի կլիկը տակավին պատերազմի սկզբին որոշել էր ոչնչացնել Թուրքիայում բնակվող բոլոր հայերին: Այդ նպատակով հրավիրված գաղտնի խորհրդակցությունում երիտթուրքական կուսակցության կոմիտեի քարտուղար դոկտոր Նազիմը¹ պահանջում էր չբավարարվել մասնակի կտտրածով, ինչպես դա տեղի ունեցավ 1909 թ. Ադանայում և այլ շրջաններում, այլ ոչնչացնել ամբողջ հայ ժողովրդին, որպեսզի ոչ մի հայ չլման թուրքական հողում, և մտազգլի նրա անունը (էջ 231-232): Հայ ժողովրդի ոչնչացման մասին խորհրդակցության որոշման հիման վրա 1915 թ. ապրիլի 15-ին տեղական իշխանություններին այն գործնականում իրագործելու ցուցում տրվեց: Վերջինս ստորագրել էին ներքին գործերի մինիստր Թալեաթը, ռազմական մինիստր Էնվերը և դոկտոր Նազիմը: Այնու-

¹ Նազիմ-բեյ Սելանիկլի (1870-1926) – «Միություն և առաջադիմություն» կուսակցության գաղափարախոս և գլխավոր քարտուղար, մասնակցել է պանթուրքիզմի և կայսրության ոչ թուրք ժողովուրդներին վերացնելու անհրաժեշտության գաղափարների մշակմանը, պատերազմում Թուրքիայի պարսությունից հետո փախել է Գերմանիա, 1919-ին Կ.Պոլսի ռազմական առյուծի կողմից հեռակա կարգով մահվան է դատապարտվել իբրև պատերազմի հանցագործ և հայերի տեղահանման ու քարդերի կազմակերպիչ, 1923-ին վերադարձել է Թուրքիա, հարել Մուստաֆա Բենալի հակառակորդներին, մասնակցել նրա դեմ դավադրությանը, որի համար կախաղան է հանվել - Ա.Կ.:

ինտն հեղինակը տալիս է հայ խաղաղ բնակչության տեղահանման և կոտորածի հանցամանքները Կիլիկիայում և Կոստանդնուպոլսում, Էրզրումում ու Վանում, Բիթլիսում ու Սիվակում և այլուր:

Գրքի 253-261-րդ էջերում փաստեր են բերված այն մասին, որ թուրք և թուրք աշխատավորները մեղսակից էին կառավարության հայաջինջ գործողություններին, առանձին դեպքերում հակադրվում էին նրան, հանդես գալիս իրենց դարավոր հարևանների՝ հայերի պաշտպանությանը: Փաստեր են բերված նաև հայերի նկատմամբ արարների բարեկամական վերաբերմունքի մասին, երկրի էկոնոմիկայի, առաջին հերթին գյուղատնտեսության քայքայման, տնտեսական դժվարությունների, թուրք աշխատավորության ծանր վիճակի, արարների պայթյալի, Հոկտեմբերյան ռեյուցիայի գաղավարների տարածման, նրանց ազդեցության ուժեղացման և այլ հարցերի մասին:

Հեղինակին հաջողվել է համոզիչ փաստերով քացահայտել գերմանական իմպերիալիստների սև դերը հայկական ջարդերի գործում: Ցույց է տրված նաև Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի կառավարությունների թողտվության, նրանց «թղթախն բողոքների» անուժ լինելը կոտորածները կանխելու հարցում:

Սակայն մեր կարծիքով հեղինակի նպատակին չի համընկնում արևմտյան մի շարք գործիչների՝ հայկական կոտորածների վերաբերյալ ասույթների վկայակոչումը այն դեպքում, երբ գրքում հանգամանալի վերլուծված չէ իմպերիալիստական Եվրոպայի ու ցարիզմի այդ իրողությանը վերաբերող քաղաքական կուրսը:

Այս գլխում, այնուհետև, կան մեջբերումներ և հարցադրումներ, որոնց վրա ուզում ենք կանգ առնել: 259-րդ էջում կարդում ենք. «Երիտթուրքերը տարածում էին սուտ լուրեր, թե իբր հայերը Ռուսաստանի հետ գաղտնի համաձայնություն էին կնքել, ըստ որի ռուսները պարտավորվել էին օգնել հայերին գավթելու Արևմտյան Հայաստանը և Քուրդիստանը»: 268-րդ էջում. «Հայերի նկատմամբ ձեռնարկված դաժան ռեպրեսիաները արդարացնելու նպատակով թուրքական կառավարությունը մոգոնեց նոր սուտ այն մասին, որ «հայկական անկարգությունները» ճնշելիս գտնվել են ռեյուցիոն դրոշակներ, ռուսեր, ռուսական զենք և փաստաթղթեր, որոնք իբր թե ապացուցում էին, թե շարժումը խրախուսվում էր Թիֆլիսում, Փարիզում և Լոնդոնում գտնվող կոմիտեների և Անտանտայի երկրների կառավարությունների կողմից»: Այնուհետև 289-րդ էջում կարդում ենք, որ թուրք պատմաբան Թևֆիկ Բիլեքլիօղլուն և ամերիկյան պատմաբան Ֆիշերն այն կարծիքին են, որ «Կասնում և Էրզրումում բնակվող հայերը 1915 թ. հատկապես զենք վերցրին, որպեսզի օգնեին ռուսական զորքերին»: Ճիշտ է, որ հեղինակը, քացահայտելով թուրք պատմաբանների կեղծիքներն ու հերյուրամքները, ցույց է տալիս, որ Արևմտյան Հայաստանում ընդհանուր ապստամբություն չի եղել, բացի ինքնապաշտպանությունից: Հասկանալի է, որ թուրքական պաշտոնական շրջանակներն ամեն կերպ չափազանցում էին հայերի ապստամբական տրամա-

դրությունները՝ արդարացնելու համար իրենց չարագործությունները: Բայց հեղինակը մի շարք ձևակերպումներով, որոնցից մի քանիսը մենք մեջբերեցինք վերևում, փաստորեն անտեսում է ռուսական բանակի հետ հայկական ջոկատների ունեցած կապը, Արևմտյան Հայաստանում ազգային-ազատագրական շարժման առկայությունը, որի մասին նա հիշատակում է գրքի տարբեր մասերում, քայց չի բննարկում հարցն ըստ էության: Կարո՞ղ ենք ասել, որ հայերը կապեր չունեին ռուսական բանակի հետ, կամ Թիֆլիսում հաստատված Հայ ազգային խորհուրդը¹, Դաշնակցության արևելյան բյուրոն մի՞թե կապ չէին պահպանում փոխարքայի հետ, ղեկավարում Թուրքիայի տարածքում գործող կամավորական զնդերին: Որ հայերի մասսայական ապստամբություն չեղավ Թուրքահայաստանում, դա փաստ է: Բայց որ հայերի ինքնապաշտպանությունն էլ չկազմակերպվեց այդ գործը ստանձնած կազմակերպությունների կողմից, դա ես ամփոստելի է:

Սակայն թուրք հեղինակների նենգամիտ մարզանքները հայերի ապստամբելու, քե չապստամբելու մասին չեն կարող մեղմել թուրք ջարդարարների նկատմամբ պատմության արդարացի դատավճիռը: Թուրք հեղինակների «փաստարկները» միայն զազրույթ են հարուցում, վկայում այն մասին, որ նրանք այժմ էլ հանդես են գալիս մի ամբողջ ժողովրդի գենոցիդն արդարացնողների դերում, թուրք մարդասպանների ոճրագործությունները պատճառաբանելով Թուրքիայում գործունեություն ծավալելու մասին ավելի շատ աղմուկ հանած, քայց գործնականում իմպերիալիստական Անտանտայի հետ հույսերը կապած և ոչ քե բուն թուրքահայ աշխատավոր ժողովրդի ձգտումների ու ռեալ պայմանների վրա իրենց գործելակերպը խարսխած հայ բուրժուազգայնական կուսակցությունների կարճատես քաղաքականությամբ: Օրիսասական ժամին պարզվեց, որ զինվելու մասին տարիների խոսակցությունները սոսկ խոսակցություններ էլ մնացել էին, որ գործնականում քնաջնջումից հայ աշխատավոր զանգվածներին պաշտպանելու գործը իրականում բարձիթողի վիճակում էր, նրանց ավանտյուրիստական գործելակերպի մասին շատ ապացույցներ կարելի էր բերել, որոնք սակայն տեղ չեն գտել գրախոսվող աշխատության մեջ:

Գրքի վերջին՝ վեցերորդ գլուխը նվիրված է Անդրկովկասում 1918 թ. Օսմանյան կայսրության ագրեսիայի և երիտթուրքական զավթիչների դեմ

¹ Հայոց ազգային խորհուրդը (ՀԱԽ) կամ Արևելահայ ազգային խորհուրդը ստեղծվել է Թիֆլիսում 1917-ի սեպտեմբերի 23-ից-հոկտեմբերի 13-ը կայացած Հայ ազգային խորհրդակցության ժամանակ: ՀԱԽ-ը կազմված էր 15 անդամներից, որոնց թվում 6 դաշնակցական, 2 սոցիալիստ-հեղափոխական, 1 հնչակյան, 1 մեմելիկ, 2 ներկայացուցիչ հայ ժողովրդական կուսակցությունից և 3 անկուսակցական: ՀԱԽ-ը մեծ դեր է կատարել հայ ժողովրդի գոյապահպանման, թուրքական սպառնալիքի դեմ ազգային-ազատագրական շարժման կազմակերպման ու հայ ժողովրդի համախմբման գործում, այն դադարեց գործել 1918 թ. հուլիսի 20-ին ՀՀ խորհրդարանի ստեղծումով - Ա.Կ.:

անդրկովկասյան ժողովուրդների պայքարի հարցերին: Այստեղ քննարկված են Հոկտեմբերյան ռեյուցիայից հետո Անդրկովկասում ստեղծված իրադրության, հաճուն սովետական իշխանության բուշկիկյան կազմակերպումների մղած պայքարի հանգուցային հարցերը, նշված է «Թուրքահայաստանի մասին» գրքի տի մեծ նշանակությունը: «Թուրքահայաստանի մասին» դեկրետով, - դեռևս է. Մարգարյանը, - սովետական կառավարությունը ձգտում էր կանխել նրա զավթումը բուրքական ագրեսորների կողմից: Բայց այդ դեկրետի կենսագործմանը խանգարեց Անդրկովկասյան կոմիսարիատի¹ և նրան ներարկված Կովկասյան բանակի հակառույտյոցիոն հրամանատարության դավաճանական, սեպարատիստական քաղաքականությունը» (էջ 324-325): Հեղինակը ցույց է տվել Անդրկովկասի բուրժուական կուսակցությունների, մասնավորապես վրացական մենշևիկների, աղբյջամական մուսավաթականների, հայկական դաշնակների վարած դավաճանական քաղաքականությունը, Անդրկովկասյան կոմիսարիատի, ապա Սեյմի² հակառույտյոցիոն, հակասովետական գործունեությունը, ազգային գործասեր ստեղծելու ձախողված քայլերը, ռազմաճակատը պահելու անկարողությունը, ինչը հանգեցրեց կապիտուլյացիայի բուրքական զավթիչների առջև և վերջիններիս համար հնարավորություն ստեղծեց ոտնահարելու Բրեստ-Լիտվսկի զինադադարի համաձայնագիրը, օկուպացնելու Հայաստանի տարածքները, ներխուժելու Անդրկովկասի խորքը:

Հեղինակը մի շարք նոր տվյալների հիման վրա հատկապես ընդգծում է Տրապիզոնի և Բարսումի բանակցությունների ժամանակ բուրքական զավթիչների հետապնդած մեծ նպատակները, ցույց է տալիս, թե ինչպես նրանք դրժեցին բոլոր համաձայնագրերը և 1918 թ. փետրվարին հարձակման անցան ամբողջ Կովկասյան ճակատով: Այն, ինչ որ չէր հաջողվել բուրքական իմպերիալիստներին իրագործել 1914-1915 թթ., նրանք փորձեցին իրականացնել 1918 թ.: Անդրկովկասում բուրքական ինտերվենցիայից հատկապես տուժեց հայ բնակչությունը, որի նկատմամբ բուրքական օկուպանտները

¹ Անդրկովկասյան կոմիսարիատ – պետական իշխանության մարմին Անդրկովկասում, կազմավորվել է 1917 թ. նոյեմբերին Անդրկովկասի առաջատար ազգային կուսակցությունների ներկայացուցիչների՝ Թիֆլիսում կայացած խորհրդակցությունում, Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության Անդրկովկասի երկրամասային մարմնի՝ Անդրկովկասյան հատուկ կոմիտեի փոխարեն, վերաբեկվել է 1918 թ. փետրվարին Թիֆլիսում ստեղծված նոր մարմնի՝ Անդրկովկասյան սեյմի կողմից - Ա.Կ.:

² Անդրկովկասյան սեյմ – պետական իշխանության մարմին Անդրկովկասում, կազմավորվել է 1918 թ. փետրվարի 10-ին Թիֆլիսում, քաղաքական լուրջ ճգնաժամի պայմաններում: Սեյմի մեջ մտան Սահմանադիր ժողովի՝ Անդրկովկասից ընտրված պատգամավորները. 36 վրաց մենշևիկ, 30 մուսավաթական, 27 դաշնակցական, 19 էսեռ, 14 ալլ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ, բուշկիկները հրաժարվեցին մասնակցել սեյմին: Սեյմը ցրվեց 1918 թ. մայիսի 26-ին - Ա.Կ.:

գործադրեցին ջարդերի միևնույն քաղաքականությունը: Գլխում ցույց են տրված գերմանա-թուրքական հակամարտությունները Անդրկովկասում տիրապետության հասնելու համար, անդրկովկասյան ժողովուրդների զինված պայքարը թուրքական ինտերվենտների դեմ:

Բոլոր դրական կողմերով հանդերձ, այս գլխում բազմաթիվ հաստատվածներ գտնվում են: Օրինակ, հեղինակը նշում է Մարդարասպատի հերոսամարտի մասին, բայց չի ընդգծում նրա խոշոր քաղաքական նշանակությունը, նրա ինքնաբերական, ժողովրդական բնույթը (տե՛ս էջ 398-399, 402-404): Էրզրումի անկման մասին խոսելիս (էջ 349) նշվում է միայն թուրքական զորքի գերազանցության փաստը, առանց ընդգծելու, որ բացի բանակի հակառակույցից՝ հրամանատարության, Անդրկովկասի կառավարության խաղացած կապիտուլյանտական դիրքից, այդ գործում փաստորեն դավաճանական գիծ վարեցին հայկական բուրժուազգայնական կուսակցությունները:

Մինչդեռ դաշնակ պարագլուխները հետագայում իրենց իշխողություններում և այլ գործերում ձգտում են չբժեղ ձևանալ և ամեն ինչի մեղքը բարդել այլոց վրա, իրենց արդարացնելու համար օբյեկտիվ պատճառներ վնասել ամեն ինչում, բայց լռել իրենց ապիկարության ու դավաճանական գործելակերպի մասին: Այդպես է վարվել նաև Ա. Խատիսովը¹, որից հեղինակը ցիտում է այն միտքը, թե հայկական ազգային գորամասերի կազմակերպումը հանդիպում էր մեծ դժվարությունների, գլխավորապես այն պատճառով, որ հայերը չափազանց դժկամությամբ էին բանակ գնում (ընդգծումը մերն է - Ջ.Կ., էջ 333): Նման հարցադրումը գրպարտություն է հայ ժողովրդի հասցեին: Որ հայ ժողովուրդը հերոսաբար կռվել է իր ինքնապաշտպանության համար, ընդդեմ թուրքական զավթիչների, դա փաստ է: Բայց որ նա երես էր թեքել հայ բուրժուական կուսակցություններից, որոնք վարկաբեկվել էին, դա նույնպես փաստ է: Ուրեմն բանն այն չէ, որ հայերը բանակից և կռվից հրաժարվում էին, այլ հրաժարվում էին իրենց կործանման դատապարտող ղեկավարներից:

Գրքի «Վերջաբանը» մեծագրության ամփոփման հետ միասին նվիրված է 1920-1921 թթ. Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքական հարցերին, սովետա-թուրքական հարաբերությունների, քեմալական շարժման նկատմամբ Սովետական Ռուսաստանի դիրքի, թուրք ժողովրդի հակաիմպերիալիստական պայքարի, քեմալիզմի երկակի, հակասական բնույթի, Անդրկովկասի և, մասնավորապես, Հայաստանի նկատմամբ երիտթուրքերից ժա-

¹ Ալեքսանդր Խատիսյան (1876-1945) – քաղաքական գործիչ, ՀՀԴ կուսակցության անդամ, 1909-1917 թթ.՝ Կովկասյան քաղաքների միության նախագահ, միաժամանակ Թիֆլիսի քաղաքագլուխ (1910-1917), Հայոց ազգային բյուրոյի նախագահ (1915-1917), 1917-ին՝ Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ, 1918-ին՝ Անդրկովկասյան սեյմում Ֆինանսների նախարար, 1918-1919 թթ.՝ ՀՀ արտգործնախարար, 1919-1920 թթ.՝ վարչապետ, ստորագրել է 1920 թ. Ալեքսանդրապոլի պայմանագիրը, ապրել է Փարիզում, գրել է «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը» (1930) հոշագրությունը - Ա.Կ.:

ունգամ նվաճողական պլանների, Քյազըմ Կարաբեքիրի¹ բանակի կառավարման նոր շարագործությունների լուսարանմանը:

«Восстание история»-ի 8-րդ հատորում «Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը» գլխի վերաբերյալ հեղինակի դիտողությունը հանգում է նրան, որ 1920 թ. Անդրկովկասի նկատմամբ թուրքիայի շովինիստական, իմպերիալիստական քաղաքականությունն այդպիսով էր ոչ թե Քենավի² հակառակորդների գործունեության, այլ ամբողջ բնավիզմի, բուրբական մացիոնալիստների զավթողական ձգտումների (էջ 438): «...Քենավի կողմից գլխավորված բուրժուա-կալվաճատիրական կառավարությունը, - գրում է հեղինակը, - մի կողմից, ընդդեմ ինտերվենտների, օգնության համար դիմելով Սովետական կառավարությանը, մյուս կողմից՝ շարունակում էր երիտթուրքերի էրապանսիոնիստական քաղաքականությունը և պատրաստվում էր զավթել Հայաստանը, Վրաստանը, Արբեջանը և Հյուսիսային Կովկասը» (էջ 429):

Հեղինակն այնուհետև փաստեր է բերում 1921 թ. փետրվարյան ավանտյուրայի դաշնակ ղեկավարների և, մասնավորապես, Ս.Վրացյանի³, վրա-

¹ Քյազըմ Կարաբեքիր-փաշա (1882-1948) – բուրբ ռազմական գործիչ, գեներալ, 1918-1919 թթ. եղել է 1-ին, 2-րդ, 15-րդ Կովկասյան բանակային կորպուսների հրամանատար, մասնակցել էրզնկայի, էրզրումի և Կարսի գրավմանը, հետագայում՝ Արևելյան ռազմաճակատի զորքերի հրամանատար, 1920-ի սեպտեմբերին ներխուժել է Հայաստան, գլխավորել է բուրբական պատվիրակությունները Ալեքսանդրապոլի (1920) և Կարսի (1921) կոնֆերանսներում - Ա.Կ.:

² Մուստաֆա Քենավ (Արաբյուրք) (1881-1938) – բուրբ պետական, քաղաքական և ռազմական գործիչ, ազգայնական շարժման ղեկավար (1918-1923), ԹՀ առաջին նախագահ (վերընտրվել է 1927-ին, 1931-ին, 1935-ին), Ժողովրդահանրապետական կուսակցության հիմնադիր, իրականացրել է հայկական տարածքների զավթման, հայ բնակչության բռնի տեղահանման, ազգային փոքրամասնությունների բուրբացման քաղաքականություն, եղել է Խորհրդային Ռուսաստանի հետ մերձեցման կողմնակից, օգտագործել է այդ երկրի հետ բարեկամական հարաբերությունները Անտանտայի և ոչ բուրբ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների դեմ իր պայքարում - Ա.Կ.:

³ Միժն Վրացյան (Գոռզյան, Գոռզիմյան) (1882-1969) – քաղաքական և պետական գործիչ, ՀՀԳ կուսակցության անդամ, խմբագրել է «Հատաջ» (Կարին), «Հայրենիք» (Ռուսոն), «Հորիզոն» (ԹՀ) թերթերը, գրադպիլ է հայկական կամավորական զեղրի կազմակերպման գործով, Հայոց ազգային խորհրդի, Անդրկովկասյան սեյմի անդամ, 1918-ին որպես Անդրկովկասի պատվիրակության անդամ մասնակցել է Բարսումի բանակցություններին, Հարավային Ռուսաստանի կամավորական բանակում ՀՀ դիվանագիտական ատարկության ղեկավար, 1919-ին ընտրվել է ՀՀ Խորհրդարանի պատգամավոր, գյուղատնտեսության և աշխատանքի նախարար, վարչապետ (1920), 1921-ի Փետրվարյան ապստամբության մասնակից, Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ, ապրել է Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Լիբանանում, Նշան Փալանճյան ճնճարանի (Բեյրութ) տնօրեն, հիմնական աշխատությունները՝ «Հայաստանի Հանրապետություն», «Կյանքի ուղիներով», «Հին րդերն նոր պատմության համար» - Ա.Կ.:

ցական մենչեիկների՝ քեմալականների հետ ունեցած կապերի, նրանց հակա-սովետական քաղաքականության, 1921 թ. մարտի 16-ի սովետա-թուրքական պայմանագրի և քեմալականների կողմից վերջինիս ուխտադրուժ խախտման վերաբերյալ, ինչպես նաև տալիս է 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում կնքված պայմանագրի մանրամասները:

Վերջում նշենք, որ աշխատության առանձին մասեր ծանրաբեռնված են անհարկի մեջբերումներով: Որոշ տեղերում հեղինակը հրապուրվել է շատ փաստեր արձանագրելով՝ առանց անհրաժեշտ վերլուծությունների և համոզիչ եզրակացությունների: Գիրքը գերծ չէ նաև որոշ կրկնություններից, խմբագրական կարգի մասնակի թերություններից:

Սակայն այս ամենը չեն նսնացնում մենագրության արժանիքները: Ե.Ղ.Սարգսյանի ուսումնասիրությունը արժեքավոր ներդրում է սովետահայ արևելագիտության մեջ:

СПРАВКА¹
Тов. Заровяну Я.Н.²

Каждый год в апреле месяце зарубежные армяне с осовой торжественностью отмечают годовщину великой трагедии – резни армян в Турции в 1915 году. Повсеместно в зарубежных армянских колониях организуются траурные торжественные собрания, митинги, на которых не только отмечается память жертв этой трагедии, но и речь часто заходит о прошлой и настоящей жизни армянского народа, о его будущем. В эти дни зарубежные армянские газеты публикуют множество статей и материалов, в которых излагаются подробности резни, публикуются также документы, разоблачающие злодеяния реакционных властей султанской Турции – истребление западных армян. На этих же собраниях отмечаются экономические, культурные завоевания трудящихся Советской Армении, перспективы дальнейших судеб зарубежных армян.

Годовщину великой резни армян отмечают партии и группы, представляющие различные политические течения – коммунисты, гнчакисты, рамкавары, прогрессивные союзы, дашнаки и их газеты. Коммунисты и подавляющее большинство зарубежных армянских прогрессивных организаций проводят в основном ту линию, что разбросанные по всему миру трудящиеся армяне не имеют в будущем другой реальной возможности существования, чем объединение со своей настоящей и единственной родиной – с Советской Арменией, присоединив к ней армянские области, находящиеся под чужим владением (особенно Турции). Партия Дашнакцутюн и ее газеты всячески пытаются использовать данный вопрос в целях создания антикоммунистических настроений среди зарубежных армян, они твердят, что будто бы к этому великому национальному делу индифферентно относятся правительства Советского Союза и нашей республики, и что такая нейтральность мешает осуществлению чаяний зарубежных армян.

Историей резни западных армян, вопросом армянских земель занимались и отдельные иностранные политические деятели. Еще в дни Второй мировой войны и сразу же после войны в вопросе о возвращении армянских земель

¹ ՁԿԱԱ, Ձոն Կիրակոսյանի տեղեկանքը ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Յակով Չարոբյանին՝ Հայոց ցեղասպանության 50-ամյակը նշելու կարևորության մասին, 1963 թ, մերենագիր:

² Յակով Չարոբյան (1908-1980) - կուսակցական, պետական գործիչ, 1953-1958-ին՝ ՀԿԿ ԿԿ երկրորդ քարտուղար, 1958-1960-ին՝ ՀԽՍՀ ՆԽ նախագահի առաջին տեղակալ, 1960-1966-ին՝ ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար, 1966-1980-ին՝ ԽՍՀՄ Էլեկտրատեխնիկական արդյունաբերության նախարարի տեղակալ, ԽՍՀՄ (1954-1966), ՀԽՍՀ (1951-1967) ԳԽ պատգամավոր - Ա.Կ.:

своему законному владельцу – армянскому народу, проявил инициативу известный английский политический деятель, настоятель Кентерберийского собора Хьюлетт Джонсон¹.

Эти вопросы снова были поставлены перед мировым общественным мнением в последние годы, когда польский писатель и журналист Богдан Гембарский² напечатал статью под заглавием «Письмо турецкому другу». Эта статья нашла широкий отклик во многих странах и особенно горячо была принята зарубежными армянами. Однако, по-видимому, чувствуя, что в нынешних международных условиях не так уж легко разрешить вопрос о возвращении армянских земель армянскому народу тот же Б.Гембарский написал приложение к своему письму под заглавием «Дать, что ты должен дать» (газета «Еритасард Адастан» («Երիտասարդ Հայաստան») от 21 мая 1963 г.), в котором польский писатель на пути решения вопроса о возвращении армянских земель считает особенно необходимым широко отметить во всемирном масштабе 50-летие трагедии 1915 г., которое исполнится в 1965 году. Он считает это своей программой-минимумом.

Б.Гембарский в частности отмечает, что «1965 год должен стать юбилейной датой гибели не только армян, но и тех турок, которые пожертвовали своей жизнью для защиты гинувшего народа и одновременно для защиты своей национальной чести, хотя сами они еще полностью не осознавали героичность и все величие своих действий». Гембарский особо подчеркивает, что необходимо отметить и память этих убитых турок. Он пишет: «Более чем достойны простого упоминания те неграмотные простые турецкие крестьяне Анатолии, которые были убиты за то, что посмели дать кружку воды приговоренным к казни

¹ Հյուլէթ Ջոնսոն (1874-1966) – քրիստոնացի կրօնական և հասարակական գործիչ, աստվածաբանության դ-ր, Ջենտլերբերիի մայր տաճարի ավագ քահանա, երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հանդես էր գալիս Եվրոպայում երկրորդ ճակատի բացման օգտին, ԽՍՀՄ-ի համար օգնության հիմնադրամի գործուն մասնակից, 1948-ից՝ Անգլո-խորհրդային ընկերության նախագահ, 1950-ից՝ Խաղաղության համաշխարհային խորհրդի անդամ, «Ժողովուրդների միջև խաղաղության ամրապնդման» միջազգային լեռնիյան մրցանակի դափնեկիր (1951) - Ա.Կ.:

² Բոգդան (Ալեքսանդր) Հեմբարսկի (1905-1978) – լեհ հասարակական գործիչ, հրապարակախոս, արևելագետ, գրող, քարգմանիչ, եղել է 1944-ի Վարշավայի հակաֆաշիստական ապստամբության կազմակերպիչներից, ընկել համակենտրոնացման ճամբար, 1935-ից դասախոսություններ է կարդացել հայկական մշակույթի և հայ հին ու նոր գրականության մասին, 1956-ին եղել է Հայաստանում, 1961-ից գրադվել է Հայկական հարցով, գրել ցեղասպանության, հայ ժողովրդի հետագա ճակատագրի, Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայերի իրավունքների վերականգնման անհրաժեշտության մասին հոդվածներ, նրա գործունեության դեմ բողոքել է Թուրքիան, նրան արգելվել է լեհական մամուլում հանդես գալ Հայկական հարցի մասին հրապարակումներով, գրել է Մեծ եղեռնին նվիրված «Մոլորտորի» վիպակը, քարգմանել և հրատարակել է հայ գրողների երկերը - Ա.Կ.:

христианам, которые были расстреляны за то, что приняли армян у себя». Затем автор продолжает: «...Это должен быть годом почитания наших мученическую смерть армян, ...убитых или доведенных до сумасшествия, начиная с великого Комитаса, ...тех неродившихся шести миллионов сыновей и дочерей одного из самых талантливых народов мира, которые, очень возможно, не ушли бы от жизни без оставления следа. Это должен быть годом почитания отторгнутых и поруганных людьми, для которых единственной основой права на владение Арменией является позорный факт истребления всех жителей этой страны.

Наконец, это должен быть годом предостережения для христиан, магометан и нерелигиозных овец, которые должны в будущем избегать человекоубийства, ибо эта дорога ведет ...вечному позору народа, допустившего такое злодеяние.

И мы горячо желаем, чтобы этот год стал годом полного восстановления нашей чести в глазах всего человечества».

В конце своего письма Б.Гемварский намекает туркам о необходимости возвращения армянских земель армянскому народу. Он пишет: «...В современный период возмещения прежних обид ваш народ должен сделать определенный выбор между истинным величием и ...оправданием геноцида, совершенного в прежние годы, геноцида, который не принес вам ни славы, ни богатства и тем более ни уважения других народов. В настоящее время разбросанные по всему миру 2,5 млн армян более 50-ти лет безуспешно взирают на те земли, которые вами искусственно превращены в безлюдные места. Эти земли были их родиной еще тогда, когда на свете не существовали ни англичане, ни французы, поляки и даже римляне, которые оставили миру следующую поговорку: «Дать, что ты должен дать».

Последовательно развивая свою инициативу, польский писатель обратился к видным мыслителям ряда европейских стран («католического мира», как отмечает сам Гемварский) с предложением совместно обратиться к ЮНЕСКО по вопросу об организации в 1965 г. 50-летия великой трагедии. Подписи иезуитских политических деятелей под это обращение «очень важны», - говорил Б.Гемварский во время своей беседы с сотрудником издающегося в Бейруте коммунистического еженедельника «Арач Гракан» («Հոսիւթ գրիւցիւթ») А.Тертеряном, - ибо те усилия, которые мы прилагаем для достижения этих целей, является делом исключительно иностранцев-интеллигентов и не охватывают армян. Пусть армяне знают, что есть на свете чужеземцы, которые выражают свое глубокое соболезнование пострадавшему армянскому народу и которые желают показать, что еще водружает человеческое правосудие».

В апреле этого года издающаяся в США прогрессивная (коммунистическая) газета «Лаввер» («Liberator») напечатала сообщение о том, что ряд армянских общин в Америке обратился по вопросу о годовщине резни к генеральному

секретарю ООН У Тану¹ с просьбой рассмотреть в ООН «Армянский вопрос». Много обращений по этому поводу было направлено У Тану и от других зарубежных армянских колоний.

Для осуществления своей программы-минимума – организации 50-летней годовщины массовой резни в международном масштабе Б.Гембарский обратился и к другим выдающимся государственным и политическим деятелям, прося их содействия, чтобы поставить этот вопрос в ООН. Он «для защиты прав армян в частности обратился к председателю Совета Министров СССР тов. Н.С.Хрущеву и премьер-министру Индии Джавахарлалу Неру², с просьбой об их практическом содействии» (газета «Зартонк» от 30 августа 1963 г.). Последний уже дал свой положительный ответ, написав Гембарскому, что «...согласен с ним, и в связи с 50-летием армянской резни, в 1965 г. лично предложит этот вопрос ООН и защитит его» (там же, с. 2). В этой же статье газета рамкаваров отмечает, что это осуществимо только в случае единства всех армянских политических партий и течений, особенно подчеркивая, что «свободная рамкаварская партия верит в вечную Армению и ... всегда будет придерживаться идеи родины и защищать ту здравую точку зрения, что только правительство Армении (речь идет о Советской Армении) может предстать в качестве полноправного хозяина наших земель и обратиться по этому поводу к международным организациям». Газета одновременно высказывает мысль о том, что «будет глупостью безразлично сидеть и ждать всей нашей, что великие державы вспомнят о нас, исправят беззакония к нашему народу. История народов показывает, что национальные права не даются, а берутся в упорной, длительной и непосредственной борьбе».

Письмо Б.Гембарского к тов. Н.С.Хрущеву и Дж.Неру, положительный ответ последнего вызвали оживленный обмен мнениями в широких кругах зарубежных армян. В последние месяцы многие армянские газеты различных направлений сосредоточили свое внимание на внешней политике Советского Союза в Армянском вопросе, начиная с 1918 г. до наших дней. Положительный ответ Неру Гембарскому и молчание руководителей Советского правительства интерпретируются в этих газетах в разных аспектах. Касаясь заявления тов. Н.С.Хрущева летом этого года во время встречи с делегацией Национального собрания Турции о том, что Советский Союз не имеет никаких территориальных претензий к Турции еженедельник «Спюрк» («Միջուր») (24 августа 1963 г.) пишет: «Когда тов. Хрущев в качестве представителя всех советских республик делает такое серьезное заявление, то это юридически неправильно,

¹ Մանաս Թիրայ Միքիու Ու Թան (1909-1974) - բիրնացի դիվանագետ, ԱՄԿ-ի գլխավոր քարտուղար (1962-1971) – Ա.Կ.:

² Ջավահարլալ (Պանդիտ) Ներու (1889-1964) – հնդիկ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի և Ազգային կոնգրեսի առաջնորդ, Հնդկաստանի առաջին վարչապետ, Ժիաժիանակ արտգործնախարար (1947-1964) – Ա.Կ.:

...затем мы квалифицируем это незаконное заявление как произвольное и бесчеловечное».

Общественное мнение зарубежных армян в настоящее время занято вопросами, ставшими материалом для ожесточенной дискуссии в печати между коммунистами, гичаками и рамкаварами с одной стороны и дашнаками – с другой. В сентябре этого года газета «*Арарат*» («*Циуриш*», ՅՅրրրր) напечатала направленную против дашнаков серию статей под заглавием «Так некажутся исторические факты», в которых она критикует антисоветские измышления известного дашнака Р. Дарьянина¹. Последний, ссылаясь на заявление А. Вышинского² в ООН в 1947 году, писал, что «в случае отторжения армянских земель от Турции, они будут присоединены не к Советской Армении, а к Грузии». Отвечая Дарьянину «*Арарат*» пишет: «Дарьянины знают, почему они сочиняют столь чудовищную рожи. Они это делают для того, чтобы завтра оправдать отрицательную позицию в вопросе о присоединении армянских земель к матери – Армении. Они хотят обосновать турецкую и западную клевету о «красной агрессии», а цель этого – похоронить вопрос об армянских землях». Затем газета продолжает: «Когда говорят, что Советский Союз не имеет территориальных претензий к Турции, то это еще не означает отрицание правосовестности армянского народа на западноармянские земли. Насколько непримлема эта оговорка для нас – для армян, все же она понятна. Мы за эту позицию считаем ответственными тех, кто всякий раз осуждает эту страну, когда она выдвигает предложение о справедливом решении вопроса об армянских землях».

Следует сказать, что тот факт, что в Советской Армении не отмечается головошница резни армян, всякий раз служит дашнакским шефам поводом для антисоветских наскоков. Они каждый раз развязывают ираждевную кампанию как против прогрессивных организаций зарубежных армян, так и против правительства Советской Армении и СССР.

Вопреки этой кампании прогрессивные круги зарубежных армянских колоний вопрос об освобождении армянских земель связывают с Советским Союзом. «Мы придерживаемся мнения, что всякая попытка придать вопросу об армянских землях международный резонанс, предпринимается ли она Неру, Гембаркскими или зарубежными армянами, должна получить полную и мощную

¹ Ռորեն Գարրինյան (Արտաշես Չիլիկարյան) (1883-1968) – հասարակական-քաղաքական գործիչ, ՀՀԳ կուսակցության անդամ, Գեորգևա-հայկական ընկերության հիմնադիրներից, խմբագրել է Բարվի «Արև» քերթը և «Գործ» ամսագիրը, 1917-ից՝ ՀԱԽ-ի քարտուղար, ՀՀ արդարադատության նախարար (1920), ապրել է ԱՄՆ-ում, խմբագրել է «Հայրենիք» (Բոստոն) օրաթերթը և ամսագիրը - Ա.Կ.:

² Անդրեյ Վիշինսկի (1883-1954) – խորհրդային պետական գործիչ, իրավաբան, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, Մոսկվայի ռեկտոր (1925-1928), ԽՍՀՄ դատախազ (1935-1939), արտգործնախարար (1949-1953), ԱՄՆ-ում ԽՍՀՄ մշտական ներկայացուցիչ (1953-1954) - Ա.Կ.:

поддержку Советского Союза. Эта великая страна, которая на международной арене смело защищает право туземцев Центральной Африки на национальное самоопределение, безусловно, не может быть безразличной к справедливому протесту и требованию народа, находящегося в рядах передовых борцов швилизации». Так писала гичакская газета «*Арарат*» (8 сентября 1963 г.).

Помимо связи с матерью-родиной, зарубежные армяне единственной возможностью решения своих будущих судеб логически видят в единении с Советским Союзом, с Советской Арменией. В этой связи свои надежды на окончательное и справедливое решение вопроса об армянских землях зарубежные армяне опять же связывают с нашей страной.

«Будущее предстает перед нами в горячих надеждах на желаемую окончательную победу, на расширение матери-родины за счет принадлежащих ей земель и увеличение его народа.

Государственные руководители Армении безусловно думают об этом. Следует, чтобы разумные руководящие деятели зарубежных армян держали в центре внимания этот вопрос и в удобный момент представили вниманию Организации Объединенных Наций во имя справедливости и наших жертв. Каждый истинный армянин, отмечая их бессмертную память, должен эту почетную обязанность сделать своей целью.

Через два года исполнится полвека этих черных страниц всемирной истории, которые никак нельзя забыть. Об этих ужасных событиях следует напомнить всему человечеству и в особенности защитникам малых наций.

Когда мы вспоминаем о печальных днях прошлого и воздаем должное немеркнувшей памяти наших мучеников, наши сердца еще раз должны быть наполнены любовью и чувством верности к нашей Армении – к единственному источнику наших надежд, света и веры», - вот вывод органа прогрессивных сил американских армян газеты «*Лавер*» (Статья «Никогда нельзя забыть» от 25 апреля 1963 г.), который как-будто приводит к общему знаменателю стремления и чаяния всех зарубежных армян.

Киракосян Дж.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՄԻ ԿԵՆՏԿՈՒՄԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԶԱՆԳԱԾԱՅԻՆ
ԲՆԱԶՆՁՄԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ¹**

Օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի քազմադարյան պայքարում Հայաստանում օտար լուծ, ախարեկություն և բռնակալության փառչակարգ հաստատում սուլթանական Թուրքիայի և շահական Պարսկաստանի դեմ մղած ազատագրական շարժումը հաստիկ տեղ է գրադնցնում: Անհավասար պայքարում իր գոյությունը պաշտպանելով՝ հայ ժողովուրդը երբեք բուրբական յանկլարների և պարսկական սատրապների լծի հետ չհաշտվեց՝ համառոտեմ փրկության ուղիներ փնտրելով:

Արդեն 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին Հայաստանում պարսկական լծի տապալման համար հնարավորություն ստեղծվեց: Ռուսաստանին Արևելյան Հայաստանի միացմամբ երկրի այդ մասի բնակչությունը իր ճակատագիրը կապեց պատանության դժվարին ժամանակաշրջանում նրան օգնության և կյան ռուս մեծ ժողովրդի ճակատագրի հետ: Սակայն Հայաստանի տարածքի մեծ մասը, բացառապես բնակեցված բնիկ հայերով, շարունակեց մնալ Թուրքիայի լծի տակ:

Հայաստանի վերամիավորումը, բուրբական լծի տապալումը դեռ անցյալ դարի կեսերին հայկական իրականության առավել հրատապ հարցերը դարձան: Հայկական հարցը դառնում է միջազգային քաղաքականության առարկա:

Առավել առաջադիմական գործիչները, ինչպես խաչատուր Աբովյանը², Հայաստանի ճակատագիրը Ռուսաստանի, իսկ մյուսները՝ արևմտյան տե-

¹ Աղայան Ծ.Պ., Ինճիկյան Հ.Գ., Կիրակոսյան Ջ.Ս. Արևմտյան Հայաստանում հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի կապակցությամբ միջոցառումների անցկացման մասին, 1964 թ., 16 հունիսի // Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբագրությամբ Ավագ Հարությունյանի), Ե., ՀԱԱ, 2005, էջ 30-36:

Անշուշտ, այս ծրագրային փաստաթղթի հիմնական մասամեռնողը ու հեղինակը Ջոն Կիրակոսյանն է: Այն հիմք է ծառայել ԽՍՀՄ ԿԿ-ին ուղարկված ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղար Յա. Ջարդոյանի նամակի համար: Այս փաստաթուղթը գրեթե նույնությամբ (ստանձին ռճական և ոչ էական ձևափոխություններով) նույն հեղինակները ՀԿԿ ԿԿ-ին հասցեագրել են մաս 1964 թ. սեպտեմբերի 17-ին, որի վրա կա Յա. Ջարդոյանի հետևյալ մակագրությունը. «Հույժ գաղտնի: Ընկ. Խ.Սաչխայանին: Խնդրում եմ քազմացնել և բաժանել Կենտկոմի Նախագահության անդամներին և անդամության բեկնածուներին: 18.09.1964 թ.»: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 73, ք. 105-109:

² Խաչատուր Աբովյան (1809-1848) – Հայ մեծ գրող, լուսավորիչ, հայ նոր գրականության հիմնադիր, ստեղծագործության գլոխգործոցը՝ «Ակեր Հայաստանի» – Ա.Կ.:

րությունների հետ էին կապում: Հեղափոխական-դեմոկրատ Սիրայել Նաբանդյանը¹ Հայաստանի ազատագրումը ռուսական հեղափոխության հաղթանակի հետ էր կապում:

Սոցիալ-դեմոկրատական շարժման և բոլշևիզմի առաջացմամբ բոլոր ճնշված ժողովուրդների ազատագրությունը, այդ թվում և հայ ժողովրդի, ավելի հստակ ծրագիր ստացավ:

Հայ բոլշևիկները, Վ.Լենինի ցուցումներով ղեկավարվելով, սոցիալական և ազգային լծից հայ և մյուս ժողովուրդների ազատագրության նոր, ամենից իրական ուղին պրոլետարական հեղափոխության, ազգերի ինքնորոշման մասին կուսակցության ռազմավարական ծրագրի իրականացման մեջ էին տեսնում՝ ռուսական ցարիզմի և բուրժուական բռնատիրության տապալման ճանապարհով:

Հայկական բուրժուական կուսակցությունների, մասնավորապես Գաշնակցություն կուսակցության, կողմից ղեկավարված մյուս գիծը հարեց ցարիզմի ու արևմտյան կայսերապաշտական տերությունների քաղաքականությանը:

Քաղաքական ուժերի հենց այսպիսի դասավորությամբ սկսվեց առաջին կայսերապաշտական պատերազմը: Վ.Լենինի գլխավորությամբ բոլշևիկները դեմ հանդես եկան թալանչիական կայսերապաշտական պատերազմին՝ նվաճողական պատերազմը քաղաքացիականի վերափոխելու նշանաբան տալով, կոչ արեցին սվիները ուղղել սեփական բուրժուազիայի, կայսերապաշտության դեմ, բարեկամության ձեռք մեկնել բոլոր ազգությունների աշխատավորներին և բարձրացնել հանուն սոցիալիզմի պայքարի դրոշը:

Հայկական բուրժուազիան և նրա կուսակցությունները ձգտում էին Անտանտի օգնությամբ Հայկական հարցի լուծմանը հասնել: Նրանք կարծում էին, որ կայսերապաշտների օգնությամբ իրենց կիսջողովի թուրքիայի լծից հայկական փլյայեքները ազատագրել և բուրժուական պետություն ստեղծել: Այդպիսի խոստում, Կովկասյան ռազմաճակատում հայկական կամավորական ջոկատների օգնությունը ստանալու նպատակով, նրանց տվել էին ցարական աստրապները (Վորոնցով-Գաշկով² և ուրիշներ): Դրա հետ մեկտեղ, ցարական իշխանության որոշ ներկայացուցիչներ կառավարությանը խորհուրդ տվեցին բոլոր ուժերով հայկական ազատագրական շարժմանն ընդդիմանալ: Ոչ հեռատես ողջնակ քաղաքագետները, ինչպես միշտ, կրկին խաբվեցին, քանզի այդ ժամանակ Անտանտի տերությունների միջև գաղտնի պայմա-

¹ Սիրայել Նաբանդյան (1829-1866) – հրապարակախոս, բանաստեղծ, հեղափոխական-դեմոկրատ, հայ քննադատական ռեալիզմի հիմնադիր - Ա.Կ.:

² Իլյարդոն Վորոնցով-Գաշկով (1837-1916) – ռուս պետական գործիչ, գեներալ-լեյտենանտ, կոմս, 1905-1915 թթ.՝ Կովկասի փոխարքա, Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին բանակցել է Հայ ազգային բյուրոյի հետ և ձեռնամուխ եղել ռուսական բանակի կազմում հայկական կամավորական զնդերի կազմակերպմանը՝ թուրքիայի դեմ պատերազմելու նպատակով - Ա.Կ.:

նագրեր կնքվեցին, համաձայն որոնց Սերժավոր Արենյը, այդ բվում և Արևմտյան Հայաստանը, Գերմանիայի և Թուրքիայի պարտությունից հետո պետք է Անտանտի պետությունների միջև բաժանվին: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մեծ տերությունների քաղաքականության հակաժողովրդական կայսերապաշտական էությունը ցույց տվող այդ պայմանագրերի տեսքերը հրատարակվեցին:

Սակայն, նույն ժամանակ, դարերով բուրքական բռնապետների լծի տակ տանջվող ազատասեր հայ ժողովուրդը մեծ ցանկությամբ ձգտում էր օգտվել ռուսական բանակի մոտեցումից (ի դեմս ռուսական զինվորների՝ հայերը միշտ իրենց անշահախնդիր բարեկամին են տեսել) և ազատագրության հասնել: Սակայն, կայսերապաշտական տերությունները, իրենց «Բաժանիր և տիրիր» ազատ նշանաբանին հավատարիմ, հայ ժողովրդին համձնեցին բուրքական բարբարոսների հոշոտմանը (1915):

Օսմանյան կայսրությունում հայերի ֆիզիկական բնաջնջման ճանապարհով Հայկական հարցի «լուծման» ծրագրերը դեռ 19-րդ դարի 90-ական թթ. Արդուլ Համիդ սուլթանի կողմից առաջ քաշվեցին: Այդ պլաններն իրականացնելով՝ մի քանի տարվա ընթացքում Արևմտյան Հայաստանում հազարավոր բնակավայրեր հրի ու սրի մատնվեցին, ինչի արդյունքում գոհվեցին հարյուր հազարավոր հայեր:

Հայերի բնաջնջման քաղաքականությունն առավել լայն ծավալներով երիտթուրքերը շարունակեցին: Նրանց ծրագիրը սուլթանական Թուրքիայի տիրապետող շրջանակների համաթուրանական նվաճողական ձգտումներից էր բխում: Նրանք ձգտում էին խլել Կովկասը և Ռուսաստանի այլ տարածքներ: Այդ ծրագրերի իրականացման ճանապարհին, երիտթուրքերի հայտարարությամբ, ավանդականորեն ռուսական կողմնորոշման հետևող հայ ժողովուրդն էր կանգնած:

Սկսած 1915 թ. գարնանից, ռազմական դրությունից օգտվելով, բուրքական կառավարությունն ամփոփականորեն ձեռնարկեց հայերի հանցավոր ցեղասպանության քաղաքականության իրականացումը:

Անգեն բնակչությունն ամխոճորեն ոչնչացվում էր: Բնաջնջվեցին շուրջ մեկ ու կես միլիոն հայեր, այդքան էլ փրկվեցին փախուստով և սփռվեցին ամբողջ աշխարհում: Հայկական շրջաններն ամայացան: Մարդկության պատմության մեջ ամնախոճորաց հանցագործություն կատարվեց: Ներքին գործերի նախարար Թալեթ-փաշայի ցինիկ հայտարարության համաձայն՝ երեք ամսում երիտթուրքերն արեցին այն, ինչ նրեխում տարիների ընթացքում սուլթան Արդուլ Համիդը չկարողացավ կատարել: Թուրքական բարբարոսները, արևմտյան կայսերապաշտները Հայկական հարցը ողջ ժողովրդի ոչնչացմամբ «լուծեցին»: Այդ բոլոր սարսափները մարդկանց հիշողության մեջ դեռ վառ են:

Այդ նոր ժամանակների պատմության մեջ ազգային հարցի լուծման եղանակի մարդակերական ցեղասպանության քաղաքականության առաջին

դրսերումն էր: Պատահական չէ, որ իրականացնելով հրեաների, սլավոնների և Արևելյան Եվրոպայի ուրիշ ժողովուրդների սարկացման և բնաջնջման քաղաքականությունը՝ Ա.Հիտլերը¹ 1939 թ.՝ օգոստոսին ասաց, որ պատմությունը չի դատապարտի իրենց դրա համար, քանզի «Ռուրիքիայում հայերի կոտորածը մեր ժամանակ ոչ որ չի հիշում»²:

Մարդկության պատմության մեջ աննախադեպ ցեղասպանության քաղաքականությունն ամբողջ աշխարհում գայրույր առաջացրեց: Առաջադեմ հասարակայնության լավագույն ներկայացուցիչներն այդ շարագործությունների դեմ իրենց բողոքի ձայնը բարձրացրին: Նրանց բվում հատկապես համարձակ հնչեց գերմանական ժողովրդի ականավոր գավակ Կարլ Լիբկեխտի³ ձայնը, ով 1916 թ. հունվարին Ռայխստագում իր ելույթում գայրույրով դատապարտեց երիտրորքերի բարբարոս քաղաքականությունը և նրանց հովանավորներին՝ ի դեմս գերմանական կայսերապաշտության:

Հայերի բնաջնջման բուրբական կառավարող շրջանների ծրագրած հանցավոր քաղաքականության գայրալից դատապարտմամբ հանդես եկան նաև Սերգեյ Կիրովը⁴, Մաքսիմ Գորկին⁵, Վալերի Բրյուսովը⁶, Անատոլ Ֆրան-

¹ Ադոլֆ Հիտլեր (1889-1945) - գերմանական նացիոնալ-սոցիալիզմի հիմնադիրներից, նացիոնալ-սոցիալիստական բանվորական կուսակցության առաջնորդ, Գերմանիայի կանցլեր (1933-1945), ֆյուրեր (1934-1945) - Ա.Կ.:

² Ադոլֆ Հիտլերը 1939 թ. օգոստոսի 22-ին Օրերգացրուրգում հրամանատարական կազմին ուղղված Լեհաստանի հարցին նվիրված ելույթում ասել է. «Լեքցիվերջո, ո՞վ է այսօր հիշում հայերի ցեղասպանությունը»: Ըստ՝ *The New York Times*, 1942, October 18:

³ Կարլ Լիբկեխտ (1871-1919) - գերմանական և միջազգային բանվորական շարժման գործիչ, Գերմանիայի կոմկուսի հիմնադիրներից, II Ինտերնացիոնալի անդամ, բազմիցս համոզել է եկել բուրբական կառավարության և նրա հովանավոր Գերմանիայի հակահայկական քաղաքականության դեմ, պաշտպանել հայ ժողովրդի շահերը, 1916-ին գերմանական Ռայխստագում հարցապնդում է արել հայերի կոտորածների վերաբերյալ, պահանջել արդարացի հատուցում - Ա.Կ.:

⁴ Սերգեյ Կիրով (Կոստրիկով) (1886-1934) - խորհրդային հեղափոխական և քաղաքական գործիչ, Ռուսաստանյան կոմկուսի ԿԿ Կովկասյան բյուրոյի անդամ, Վրաստանում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ, 1921-1925 թթ.՝ Ադրբեջանի կոմկուսի ԿԿ առաջին քարտուղար, 1926-1934 թթ.՝ Ռուսաստանյան կոմկուսի Լենինգրադյան մարզկոմի և քաղկոմի առաջին քարտուղար, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հանդես է եկել արևմտահայության տեղահանությունը և կոտորածները դատապարտող հոդվածներով - Ա.Կ.:

⁵ Մաքսիմ Գորկի (Ալեքսեյ Պեշկով) (1868-1936) - ռուս գրող, հասարակական գործիչ, հայ ժողովրդի պատմության և մշակույթի խոր և բազմակողմանի գիտակ, բազմիցս անդրադարձել է հայ ժողովրդի ճակատագրին, հանդես եկել նրա շահերի պաշտպանությանը - Ա.Կ.:

⁶ Վալերի Բրյուսով (1873-1924) - ռուս գրող, գրականագետ, բարձմանիչ, պատմաբան, ուսումնասիրել է հայոց լեզուն, Հայաստանի պատմությունն ու մշակույթը, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, բացի Հայաստանին նվիր-

սր¹, Ռոմեն Ռոլլանը² և ուրիշներ:

Ռուսաստանում արդյունարական հեղափոխության հաղթանակով հարյուր հազարավոր հայ գաղթականներ և որբացած երեխաներ իրենց փրկությունը Հոկտեմբերի մեծ դրոշի ներքո գտան:

Հայ ժողովրդի պատմության այդ ողբերգական պահին միայն խորհրդային Ռուսաստանը նրա իսկական բարեկամն ու փրկիչը դարձավ: Նա միջազգային ասպարեզում հայ ժողովրդի շահերի պաշտպանությանը հանդես եկավ: 1917 թ. դեկտեմբերին հրապարակվեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետը: Վ.Լենինի և նրա համախոհների՝ Ս.Շահումյանի³, Ս.Օրջոնիկիձեի⁴, Գ.Չիչերինի⁵ և շատերի, աշխատավոր ժողովրդի շահերին համապատասխան Հայկական հարցի լուծման մեջ հսկայական շահագրգռվածությունը ցույց տվող բազմաթիվ ուրիշ փաստաթղթեր կան: Կոմունիստական կուսակցության քաղաքականությունը հայ ժողովրդին հնարավորություն տվեց քարձրանալ մոխրից, ոտքի կանգնել, սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման ուղի մտնել:

ԽՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում հայ ժողովուրդը գի-

ված գեղարվեստական ստեղծագործություններից, գրել է մի շարք հայագիտական գործեր՝ «Արարատյան բազավորություններ», «Էմիլ Վերիտանը Հայաստանի մասին», «Հայ ժողովրդի պատմական ճակատագրի տարեգրություն» - Ա.Կ.:

¹ Անատոլ Ֆրանս (1844-1924) - ֆրանսիացի գրող, ակադեմիկոս, Նոբելյան մրցանակի դափնեկիր (1921), հանդես է եկել ճշմարիտ ժողովուրդների, մասնավորապես արևմտահայության իրավունքների պաշտպանությանը, սուլթան Աբդուլ Համիդի և երիտթուրքերի հակահայկական քաղաքականության դեմ, նախաձեռնել է բազմաթիվ հայանպաստ հասարակական միջոցառումներ, հանգանակություն է կազմակերպել հայ որբերի համար, «Պրո Լյոմենիս» (Փ.) ամսագրի խմբագրություն անդամ - Ա.Կ.:

² Ռոմեն Ռոլլան (1866-1944) - ֆրանսիացի գրող, հասարակական գործիչ, երաժշտագետ, Նոբելյան մրցանակի դափնեկիր (1915), հայտնի է իր հակապատերազմական դիրքորոշմամբ, հանդես է եկել օսմանյան իշխանությունների հակահայկական քաղաքականության դեմ - Ա.Կ.:

³ Ստեփան Շահումյան (1878-1918) - քաղաքական գործիչ, քաղաքագետ, հրապարակախոս, Կովկասում բուլշևիկյան շարժման ղեկավարներից, Կովկասի հարցերով խորհրդային Ռուսաստանի Ժողովուրդների համձանժողովի անդամ (1917), 1918-ից՝ Բարվի ժողովուրդների նախագահ, Բարվի կոմունայի արտագործվածխար - Ա.Կ.:

⁴ Գրիգորի (Մերգո) Օրջոնիկիձե (1886-1937) - խորհրդային պետական և քաղաքական գործիչ, կոմկուսի Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի առաջին քարտուղար (1922-1926), ԽՍՀՄ քանդորագյուղացիական տեսչության ժողկոմ (1926-1930), ծանր արդյունաբերության ժողկոմ (1932-1937) - Ա.Կ.:

⁵ Գեորգի Չիչերին (1872-1936) - խորհրդային պետական գործիչ, դիվանագետ, 1918-1930 թթ.՝ խորհրդային Ռուսաստանի (1923-ից՝ ԽՍՀՄ-ի) արտագործող կոմ, ստորագրել է 1918 թ. Բրեստի պայմանագիրը, գլխավորել է խորհրդային պատվիրակությունը խորհրդա-թուրքական և խորհրդա-հայկական բանակցություններում - Ա.Կ.:

տության, տնտեսության և մշակույթի բոլոր բնագավառներում հսկայական հաջողությունների հասավ: Հենց այդ պատճառով արտասահմանում հայ առաջադեմ հասարակայնությունն իր ապագան խորհրդային Հայաստանում է տեսնում: Հազար և հազարավոր հայեր ձգտում են խորհրդային Հայաստան վերադառնալ:

Դրա հետ մեկտեղ, իրենց հայրենիքից արտաքսված հայերը 1915 թ. ողբերգությունը շեն կարող մոռանալ և ամեն տարի ապրիլին, ցեղասպանության քաղաքականությունը դատապարտելով, այդ տարեթիվը նշում են: 1965 թ. ապրիլին լրանում է ողբերգական իրադարձության՝ հայերի զանգվածային կոտորածի 50 տարին:

Արտասահմանում հայերը պատրաստվում են այդ տարեթիվը լայնորեն նշել:

Նախապատրաստական աշխատանքների ծավալի մասին է վկայում սփյուռքահայ առաջադիմական թերթերի էջերում այդ հարցին նվիրված հոդվածների և նյութերի օրեցօր աճող քանակը: Սփյուռքահայերի տարբեր հասարակական, մշակութային և ուրիշ կազմակերպություններ իրենց գործունեությունը նկատելիորեն աշխուժացրել են: Անցկացվում են մրցույթներ, կատարվում են փորձեր 50-ամյակի նախապատրաստման հատուկ մարմիններ ստեղծելու, Հայկական հարցի պատմության հետ համաշխարհային հասարակայնությանը ծանոթացնելու համար օտար լեզուներով գրականության հրատարակման, ինչպես նաև սփյուռքահայերի ազգային համագումարի նախապատրաստման համար: Պատրաստվում են ուղերձներ ՄԱԿ-ին:

Հակահեղափոխական, ազգայնական Դաշնակցություն կուսակցությունը ամեն կերպ փորձում է այդ հարցը հակախորհրդային տրամադրությունների թորթորման նպատակով օգտագործել: Որպես իմնական փաստարկ օգտագործելով այն փաստը, որ խորհրդային Հայաստանում, որտեղ ապրում են Արևմտյան Հայաստանից հարյուր հազարավոր հայ գաղթականներ, որոնց հիշողության մեջ դեռ վառ են 1915 թ. ողբերգական իրադարձությունները, ոչ մի ձևով չի նշվում հայերի զանգվածային կոտորածի տարեթիվը, դաշնակները պնդում են այն մասին, իբր մեր երկրում թուրքական դահլիճների ձեռքից ամենդ զոհված մեր հարյուր հազարավոր հայրենակիցների հիշատակին անտարբեր են վերաբերվում, և դրանով հանդերձ ցեղասպանության քաղաքականությունն առարկայաբար արդարացվում է: Մեզ թվում է, որ հայերի զանգվածային կոտորածների 50-ամյակի լուծյան մատենելը քաղաքականապես ձեռնառու չի լինի:

Կայսերապաշտների և համաթուրանականների քաղաքականության մերկացման նպատակով, ինչպես նաև արտասահմանում բնակվող և աշխույժ խաղաղության ու ժողովրդավարության համար պայքարող հայ աշխատավորների վրա մեր կապերի ու ազդեցության ուժեղացման համար, նպատակահարմար ենք գտնում այդ տարեթվի 50-ամյակի առթիվ կազմակերպել հետևյալ միջոցառումները:

1. 1965 թ. ապրիլին ԽՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի, ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի և Երևանի պետական համալսարանի հետ համատեղ գիտական նստաշրջան անցկացնել¹:

2. Հրատարակել հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականությունը մերկացնող փաստաթղթերի նյութերի հավաքածու²:

3. Մամուլում և ռադիոյով այդ տարեթվին նվիրված հոդվածներ և նյութեր հրատարակել: Կազմակերպել կենտրոնական մամուլում հոդվածների հրատարակում³:

4. Հանձնարարել Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեին և Մշակութային կապերի հայկական ընկերությանը արտասահմանյան մամուլին ուղարկելու համար հոդվածներ և նյութեր պատրաստել:

5. Հանձնարարել Մշակույթի նախարարությանը, Հայաստանի նկարիչների և ժուռնալիստների միություններին պատրաստել ցուցահանդես «Կերածընված հայ ժողովուրդը խորհրդային ժողովուրդների եղբայրական ընտանիքում» թեմայով⁴:

6. Նպատակահարմար գտնել Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման 44-րդ տարեդարձին նվիրված զեկույցում նշել հայերի կոտորածների 50-ամյակի քաղաքական նշանակությունը⁵:

7. Հանձնարարել մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղին, ԳԱ պատմության ինստիտուտին, Արևելագիտության սեկտորին ու «Գիտելիք» ընկերությանը ՀԿԿ Կենտկոմի հաստատմանը ներկայացնել զեկույցումների և դասախոսությունների թեմաներ, որակյալ զեկույցողների և դասախոսների ցուցակ⁶:

8. Բնակչության միջոցների հաշվին կառուցել Առաջին համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի զոհերի հուշարձան: Հուշարձանը պետք է խորհրդանշի հայ ժողովրդի վերածնունդը⁷:

¹ Այդ գիտական նստաշրջանն անցկացվեց 1965 թ. ապրիլի 20-ին:

² Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու (պրոֆ. Մ.Գ.Ներսիսյանի խմբագրությամբ), Ե, 1966, 1982 (ռուսերեն), 1991 (հայերեն):

³ Ներսիսյան Մ., Ուշակով Ն. Գեներալը ամենաճանր հանցագործությունն է մարդկության հանդեպ // «Պրակթա» (Մ.), 1965, 25 ապրիլի: Հայերեն թարգմանությունը տե՛ս «Սովետական Հայաստան» (Ե.), 1965, 25 ապրիլի:

⁴ Նման միջոցառում կազմակերպվել է:

⁵ Նման նշում եղել է:

⁶ Նման հանձնարարություն տրվել է:

⁷ Ծիծեռնակաբերդի քլրի վրա 1967 թ. նոյեմբերի 29-ին բացվել է 1915 թ. Հայոց ցեղասպանության նահատակների հուշահամալիրը:

9. Հանրապետության կիներմատոգրաֆիայի կոմիտեին հանձնարարել 1965 թ. գարնանը թողարկել «Վերածնված ժողովուրդ» վավերագրական շարժանկարը¹:

10. 1965 թ. գարնանը սփյուռքահայ խոշոր գաղութներում խորհրդային շարժանկարների փառատոներ կազմակերպել: Այդ շրջանում Հայաստանի ձեռքբերումների քարոզչության համար գիտության, գրականության ու արվեստի աշխատողների ներկայացուցիչներից պատվիրակություններ ուղարկել արտասահման:

11. ԽՍՀՄ եղբայրական հանրապետությունների և սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների մասնակցությամբ 1965թ. մայիսի սկզբին Երևանում «Գարնան և վերածննդի տոն» անցկացնել²:

Մ.Ի հայկական մասնաճյուղի տնօրեն

Աղայան Մ.Պ.³

ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորի վարիչ

Ինճիկյան Հ.Գ.⁴

ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսության բաժնի վարիչի տեղակալ
Կիրակոսյան Ջ.Ս.

16 հուլիսի 1964 թ.

ք. Երևան

ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 54, թթ. 66-73

Թարգմանություն ռուսերենից:

¹ 1965 թ. «Երևան» կինոստուդիան նկարահանել է 19 թույլերով «Նամակները պատմում են» վավերագրական շարժանկարը (րեժիսորներ՝ Մ. Սաղարքյան, Շ. Տատուրյան) հայրենադարձների՝ հարագատներին գրած նամակների հիման վրա: Տե՛ս Հայկական կինո: Լիակատար կատալոգ, 1924-1999, Ե, 2000:

² Ապրիլի 24-ի նախօրեին մի բանի օր շարունակ Երևանում տեղի էին ունենում Ուկրաինայի, Վրաստանի, Ադրբեջանի մայրաքաղաքների օրեր:

³ Տատուր Աղայան (1912-1982) - պատմ. գիտ. դ-ր, պրոֆ., ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, 1961-1968-ին՝ ԽՍՀՄ ԿԿ առընթեր Մ.Ի հայկական մասնաճյուղի տնօրեն, 1968-1977-ին՝ ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր, հիմնական աշխատությունները՝ «Մեծ Հոկտեմբերը և Հայաստանի աշխատավորների պայքարը տվտակալ իշխանության հաղթանակի համար», «Արշավիր Մելիքյան», «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը», «Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը», «Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում» - Ա.Կ.:

⁴ Հովհաննես Ինճիկյան (1913-1990) - պատմ. գիտ. դ-ր, պրոֆ., ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորի վարիչ (1958-1971), Արևելագիտության ինստիտուտի տնօրեն (1971-1984), հիմնական աշխատությունները՝ «Բողոս Կոմեյանց», «Օսմանյան կայսրության անկումը», «Սոցիալական հոգեբանությունը և ցեղասպանությունը», «Օսմանյան կայսրության բուրժուազիան» - Ա.Կ.:

О МЕРОПРИЯТИЯХ В СВЯЗИ С 50-ЛЕТИЕМ МАССОВОГО ИСТРЕБЛЕНИЯ АРМЯН¹

50 лет назад, во время Первой мировой империалистической войны двух-миллионное армянское население Западной Армении подверглось варварской депортации и истреблению. Впервые в истории нового времени в самых крупных масштабах, на практике, турецкими шовинистами применялась человеконенавистническая политика геноцида.

Планы «решения» Армянского вопроса путем физического истребления армян в Османской империи вынашивались еще в 90-х гг. 19-го века султаном Абул-Гамидом. Осуществляя эти планы, за несколько лет было предано огню и мечу тысячи населенных пунктов в Западной Армении, в результате чего погибли сотни тысяч армян.

Политику истребления армян в более широких масштабах продолжили младотурки. Их план вытекал из пантюркских захватнических устремлений господствующих кругов султанской Турции. Они стремились отторгнуть Кавказ и другие территории России. На пути осуществления этих планов, по заявлению младотурков, стоял армянский народ, традиционно придерживавшийся русско-ориентации.

Начиная с весны 1915 г., воспользовавшись военным положением, турецкое правительство непосредственно приступило к практическому осуществлению политики чудовищного геноцида армян. Было истреблено около полутора миллиона армян, столько же спаслось бегством и рассеялось по всему миру. Армянские районы были опустошены. Свершилось неслыханное в истории человечества преступление. По циничному заявлению министра внутренних дел Талаата-пашы за три месяца младотурки сделали то, чего не смог сделать султан Абул-Гамид за тридцать лет. Турецкие варвары, западные империалисты Армянский вопрос «разрешили» уничтожением целого народа. Все эти ужасы еще живы в памяти людей.

Это было первым в истории нового времени проявлением политики каннибальского геноцида, как метода решения национального вопроса. (Не случайно, что осуществляя политику поравощения и истребления евреев, славян и других народов Восточной Европы, Гитлер в августе 1939 г. говорил, что история не осудит их за это, ведь «в наше время никто не вспоминает истребление армян в Турции»).

Беспрецедентная в истории человечества политика геноцида вызвала возмущение во всем мире. Лучшие представители прогрессивной общественности

¹ ՉԿԱԱ, Աղայան Ծ.Պ., Ինճիլյան Հ.Գ., Կիրակոսյան Ջ.Ս. Հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի կապակցությամբ միջոցառումների անցկացման մասին, 1964, 17 սեպտեմբերի, ռուսերեն, մերենագիր:

подняли голос протеста против этих злодеяний. Среди них особенно мужественно прозвучал голос выдающегося сына немецкого народа Карла Либкнехта, который в своем выступлении в рейхстаге в январе 1916 г. гневно осудил варварскую политику младотурок и их покровителей в лице германского империализма.

С гневным осуждением чудовишной политики турецких правящих кругов в истреблении армян выступили также Сергей Киров, Максим Горький, Валерий Брюсов, Анатолий Франс, Ромен Роллан и другие.

С поведой пролетарской революции в России сотни тысяч армян-беженцев и осиротевших детей нашли свое спасение под великим знаменем Октября.

В этот трагический момент истории армянского народа только Советская Россия стала его истинным другом и спасителем. Она выступила в защиту интересов армянского народа на международной арене. В декабре 1917 г. был издан декрет «О Турецкой Армении». Имется много других документов, показывающих огромную заинтересованность В.Ленина и его соратников – С.Шаумяна, С.Орджоникидзе, Г.Чичерина и многих других в решении Армянского вопроса в интересах трудового народа. Политика Коммунистической партии дала возможность армянскому народу подняться из пепелища, встать на ноги, вступить на путь построения социализма и коммунизма.

Армянский народ в братской семье народов СССР достиг огромных успехов во всех областях развития науки, экономики и культуры. Именно поэтому армянская прогрессивная общественность за рубежом связывает свое будущее с Советской Арменией. Тысячи и тысячи армян стремятся вернуться в Советскую Армению.

Вместе с тем изгнанные из своей родины армяне не могут забыть трагедию 1915 г. и ежегодно в апреле отмечают эту дату, осуждая политику геноцида. В апреле 1965 г. исполняется 50 лет трагического события массовой резни армян.

Армяне за рубежом готовятся широко отметить эту дату.

О масштабах подготовительных работ свидетельствует увеличивающееся с каждым днем количество статей и материалов на страницах зарубежных армянских прогрессивных газет, посвященных этому вопросу. Заметно активизировали свою деятельность различные общественные, культурные и другие организации зарубежных армян. Проводятся конкурсы, делаются попытки создать специальные комитеты по подготовке к 50-летию, выпуску литературы на иностранных языках для ознакомления мировой общественности с историей Армянского вопроса, а также подготовке национального съезда зарубежных армян. Готовятся обращения в ООН. Контрреволюционная, националистическая партия Дашнакцутюн всячески пытается использовать этот вопрос в целях разжигания антисоветских настроений. Используя в качестве основного аргумента тот факт, что в Советской Армении, где проживают сотни тысяч армян, выходя-

цев из Западной Армении, в памяти которых еще живы трагические события 1915 г., ни в какой форме не отмечается годовщина массовой резни армян, лашаки твердят о том, будто в нашей стране безразлично относятся к памяти сотен тысяч наших соотечественников, безвинно павших от рук турецких палачей и, тем самым, объективно оправдывается политика геноцида.

Нам кажется, что умалчивание 50-летия массовой резни армян будет политически невыгодным.

С целью разовлачения политики империалистов и пантюркистов, а также для усиления наших контактов и влияния над армянскими трудящимися, проживающими за рубежом и активно борющимися за мир и демократию, считаем целесообразным в связи с 50-летием этой даты организовать следующие мероприятия:

1. Провести в апреле 1965 г. совместную научную сессию отделения общественных наук АН Армянской ССР и Ереванского государственного университета.
2. Издать сборник документов и материалов, разовлачающих политику истребления армянского народа.
3. В печати и по радио опубликовать статьи и материалы, посвященные данной дате.
4. Поручить Армянскому комитету по культурным связям с соотечественниками и АОКС-у подготовить статьи и материалы для отправки в зарубежную прессу.
5. Министерству культуры, союзам художников и журналистов Армении подготовить выставки по теме «Возрожденный армянский народ в братской семье советских народов».
6. Считать целесообразным в докладе, посвященном 44-ой годовщине установления советской власти в Армении, дать политическую оценку 50-летию резни армян.
7. Поручить Армянскому филиалу ИМЛ, Институту истории и сектору востоковедения АН Арм. ССР и обществу «Знание» представить на утверждение ЦК темы докладов и лекций, список квалифицированных докладчиков и лекторов.
8. На средства населения соорудить памятник жертвам армянского народа в Первой мировой войне. Памятник должен символизировать возрождение армянского народа.
9. Комитету кинематографии республики выпустить весной 1965 г. документальный фильм «Возрожденный народ».
10. Весной 1965 г. организовать в крупных зарубежных армянских колониях фестивали советских кинофильмов. В этот период послать за рубеж делегации из представителей работников науки, литературы и искусства для пропаганды достижений Советской Армении.

11. В начале мая 1965 г. в г. Ереване провести «Праздник весны и возрождения» с участием представителей братских республик Советского Союза и прогрессивных зарубежных армянских организаций.

Агаян Ц.П. – директор Армянского филиала ИМЛ

(подпись)

Инджикян О.Г. – зав. сектором востоковедения АН Арм. ССР

(подпись)

Киракосян Дж.С. – зам. зав. идеологическим отделом ЦК КП Армении

(подпись)

17 сентября 1964 г.

г. Ереван

ԸՆԴԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ, ՀԱՆՈՒՆ ԽԱՂԱԴՈՒԹՅԱՆ¹

Դարեր շարունակ աշխատանքի մարդիկ երազել են ապրել հաշտ ու խաղաղ, առանց պատերազմի ու ավերածությունների: Բայց միայն երազել են՝ ի վիճակի չլինելով երազանքը վերածել իրականության, վերջ դնել այլու-նահեղություններին և փոխել պատմության ընթացքը: Հնարավոր չէ բժարել այն բոլոր մեծ ու փոքր պատերազմները, որոնց արհավիրքները կրել է մարդկությունը: Գլխունակաները «Էլեկտրոնային ուղեղի» միջոցով հաշվել են, որ միայն վերջին 5.560 տարվա ընթացքում տեղի են ունեցել 14 500-ից ավելի մեծ ու փոքր պատերազմներ, որոնց զոհ է զնացել 3.640 մլն մարդ, այսինքն՝ շատ ավելի, քան այժմ մեր երկրագնդի բնակչությունն է:

Որքան առաջ է ընթացել մարդկային հասարակությունը, այնքան ավերիչ են դարձել պատերազմները: Իսկ կապիտալիզմն ավելի ահավոր ու կործանարար պատերազմների բերեց մարդկությանը՝ ժողովուրդներին պատճառելով անլուր գրկանքներ ու տառապանքներ: Նրա պատմության մեջ շատ են մռայլ, արյունոտ էջերը: Այդ էջերից է Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը:

Հիսուն տարի առաջ՝ 1914 թ. օգոստոսի 1-ին (հուլիսի 19-ին), կազերա-կան Գերմանիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, օգոստոսի 3-ին՝ Յրանսիային, իսկ օգոստոսի 4-ին Մեծ Բրիտանիան՝ Գերմանիային: Կարճ ժամանակի ընթացքում պատերազմի մեջ ներթաշվեցին բազմաթիվ երկրներ ու ժողովուրդներ: Սկսվեց Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը: Նրան սկզբում մասնակցում էր ութ պետություն՝ 732 մլն բնակչությամբ (գաղութների հետ միասին), իսկ վերջում դրանց բիլը հասավ 33-ի՝ 1.5 մլրդ բնակչությամբ: Պատերազմն ընդգրկեց Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի մի հսկայական տարածք՝ 4 մլն քառակուսի կիլոմետր տարածություն, ամբողջ երկրագնդի բնակչության 75 տոկոսը:

Առաջին համաշխարհային պատերազմը ծագեց կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի հետևանքով: Դա իմպերիալիզմի ստադիայում կապիտալիզմի անհավասարաչափ զարգացման, «սանձարձակ իմպերիալիզմի» (Վ.Լենին) հակասությունների ծնունդ էր, երկար տարիների ընթացքում կայացած Ավստրո-Գերմանական և Անտանտայի խմբավորումների իմպերիալիստական քաղաքականության շարունակությունն էր, մի քաղաքականություն, որը «իմպերիալիստական դարաշրջանի հարաբերությունների ամբողջակա-նությունից է առաջացել ու նրանով է սնվում» (Լենին **Վ.Ի.** Ընտիր երկեր, հ. 1, էջ 888):

Աշխարհի վերաբաժանման, նոր շուկաների ու գաղութների ձգտող իմպերիալիստական բուրժուազիան փորձում էր ժողովուրդներին հավատացնել,

¹ Կիրակոսյան Ջ. Ընդդեմ պատերազմի, հանուն խաղաղության // «Սովետական Հայաստան» (Ե.), 1964, 1 օգոստոսի:

քն իրր պատերազմը մղվում է հանուն ազգի, կրոնի փրկության, բուրժուական հայրենիքի պաշտպանության կոչ էր անում, փարիսեցիաբար հանդուժում, քն դա վերջին պատերազմն է: Բայց դա բացարձակ խաբեություն էր:

Բնութագրելով Առաջին համաշխարհային պատերազմում իմպերիալիստական տերությունների հետապնդած նպատակները՝ Վ.Լ.Ենինը 1914 թ. աշնանը գրում էր. «Երկրների գրավում և օտար ազգերի նվաճում, մրցակից ազգի քայքայում, նրա հարստությունների թալանում, Ռուսաստանի, Գերմանիայի և այլ երկրների ներքին քաղաքական ճգնաժամերից աշխատավոր մասսաների ուշադրության հեռացում, բանվորներին իրարից բաժանում ու ազգայնականությամբ հիմարացում և նրանց ավանգարդի ոչնչացում» պրոլետարիատի ռևոլյուցիոն շարժումը բուլացնելու նպատակով - այս է արդի պատերազմի միակ իսկական բովանդակությունը, նշանակությունն ու իմաստը» (նույն տեղում, էջ 749):

Հակառակ օպորտունիզմի, շովինիզմի գիրկն ընկած արևմտավրոպական սոցիալ-դեմոկրատիայի, բոլշևիկները, Վ.Լ.Ենինի գլխավորությամբ, հանդես եկան թալանչիական իմպերիալիստական պատերազմի դեմ անխնա մերկացնելով սուտը, սովետություններն ու «հայրենասիրական» ֆրագները, որ տիրող դասակարգերը, կալվածատերերն ու բուրժուազիան տարածում էին ի պաշտպանություն պատերազմի: Վ.Լ.Ենինը, բոլշևիկները զավթողական պատերազմը քաղաքացիականի վերածելու լոգունգ տվեցին, կոչ արեցին սվիններն ուղղել սեփական բուրժուազիայի, տիրապետող դասակարգի, իմպերիալիզմի դեմ, բարեկամության ձեռք մեկնել բոլոր ազգերի աշխատավորներին և պայքարի դրոշ բարձրացնել հանուն սոցիալիզմի: Պատերազմը փառաբանող իմպերիալիզմի սպասարկուների ընդհանուր խմբերգին հակառակ հնչեց սոցիալիզմի, ժողովուրդների շահերի համար պայքարող մարտիկների առնական ձայնը: Միայն սոցիալիզմի հաղթանակով վերջ կտրվեր պատերազմին, որն այնքան արհավիրքներ պատճառեց ժողովուրդներին:

Հիրավի, Առաջին համաշխարհային պատերազմն իր կործանարար բնույթով ամնախաղեպ էր մարդկության պատմության մեջ: Պատերազմական գործողությունների գոտում, քե նրանից հեռու ժողովուրդներն անլուր գրկանքների ենթարկվեցին, ամհաշիվ գոհեր տվեցին: Պատերազմը գերազանցեց նախընթաց 125 տարիներին տեղի ունեցած բոլոր պատերազմների պատճառած մարդկային զոհերի թիվը և նյութական կորուստները: Նրա ընթացքում զորահավաքի ենթարկված 74 մլն-ից սպանվեցին և վերքերից մահացան 10 մլն, իսկ խեղանդամ դարձան 20 մլն մարդ: Մոտ 10 մլն մարդ էլ մեռավ սովից ու համաճարակներից: Պատերազմող կողմերի ռազմական ծախսերի գումարին այն ժամանակվա գներով կազմեց 260 մլրդ դոլար: Ոտքի տակ տրվեցին ու ոչնչացվեցին մեծ քանակությամբ նյութական արժեքներ, համամարդկային կուլտուրայի քացառիկ կորոզներ:

Պատերազմի տարիներին առանձնապես դաժան փորձության ենթարկվեց հայ ժողովուրդը: Չնայած այն բանին, որ նա գուրկ էր պետականություն-

նից և, քնականարար, չէր կարող հանդես գալ որպես պատերազմող կողմ, իր երկրի աշխարհագրական դիրքի, պատմական ու քաղաքական մի շարք հանգամանքների հետևանքով հանդիսացավ ինպերիալիստական գիշատիչների սանձազերծած համաշխարհային սպանոցից առավել տուժողը: Թուրքական ինպերիալիզմը, որ պատերազմի միջոցով ուզում էր լուծել իր տարածողական պլանները՝ գալիքի ամբողջ Անդրկովկասը, հասնել Վրդայի ավերել և Աբրայ, հայ ժողովրդին համարում էր իր ճանապարհին էական խոչընդոտը:

Հայկական բուրժուազիան և նրա պարտիսանները Հայկական հարցի լուծումը կապում էին պատերազմում Անտանտայի հաղթանակի հետ: Նրանք կարծում էին, որ փարիսեցիաբար փոքր ազգերի ազատագրության կեղծ նշանաբանով հանդես եկող, հայ ժողովրդին «փոքրիկ դաշնակից» անվանող ինպերիալիստական տերությունների դիվանագետները կստեղծեն հայկական պետություն:

Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո հրապարակված ինպերիալիստական տերությունների միջև կնքված գաղտնի պայմանագրերով, ինչպես ամբողջ Մերձավոր Արևելքը, այնպես և Արևմտյան Հայաստանը բաժանվել էին Անտանտայի երկրների միջև: Իսկ արևմտահայությունը բողոքել էր թուրքական արյունարբու շուլիմիստների բզկամանը: Թուրքական իքթիսադական կառավարությունը, կայզերական Գերմանիայի հավանությամբ ու գործնական մասնակցությամբ, Անտանտայի ղեկավարների բողոքությամբ 1915 թ. գարնանը, օգտագործելով պատերազմական վիճակը, ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի քնաջնջման՝ սուլթան Աբդուլ Համիդից ժառանգած ծրագրի իրականացմանը: Աշխարհը վերաբաժանելու նպատակով պատերազմ հրահրած, ժողովուրդների միջև ատելություն ու բշտամանք սերմանած ինպերիալիստական տերությունների կառավարող շրջանները ոչ միայն չխոչընդոտեցին ժողովրդասպան այդ պլանի իրագործումը, այլև իրենց քաղաքականությամբ նպաստեցին դրան: Պատերազմի տարիներին տեղահանվեց և կոտորվեց արևմտահայության մեծ մասը: Թուրքիայում հայկական շրջաններն ամայացան. ոչնչացվեցին հազարամյակների կուլտուրական արժեքները: Դա նոր ժամանակների պատմության մեջ կանխալական գեոցոգիի՝ մասսայական ժողովրդասպանության քաղաքականության սկիզբն էր, որն ավելի լայն մասշտաբներով ու տեխնիկական տեսակետից ավելի կատարելագործված մեթոդներով էր կիրառող համաշխարհային պատերազմի տարիներին կիրառեցին գերմանական ֆաշիստները հրեաների, սլավոնների և այլ ժողովուրդների նկատմամբ:

Առաջին համաշխարհային ինպերիալիստական պատերազմը չարդարացրեց նրա կազմակերպիչների հույսերը: Ընդհակառակը, այն ստեղծեց այնպիսի անընդգրկելի ճգնաժամ, որը ցնցեց կապիտալիզմի ամբողջ սիստեմը, նրա թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական և թե՛ գաղափարական ասպարեզներում: «Պատերազմի բողոքած տասնյակ-միլիոնավոր դիակներն ու հաշմանդամները, պատերազմ, որ մղվում էր նրա համար, թե արդյոք ֆինանսական

ավագակների անգլիակա Դն. քն³ գերմանական խումբը պետք է ավելի ավարտաճանա», - գրել է Վ.Լենինը, - բացեցին «բուրժուազիայի կողմից ձեռնված, տրորված, խաբված, հիմարացած միլիոնավոր ու տասնյակ միլիոնավոր մարդկանց աչքերը» (նույն տեղում, էջ 777):

Պատերազմի ստեղծած համաշխարհային քայքայման հողի վրա խորացավ համաշխարհային ռեյուցիոն ճգնաժամը:

Վ.Լենինը 1917 թ. հոկտեմբերի 26-ին (նոյեմբերի 8-ին) Մեծ հուլետների հենց հաջորդ օրը, հռչակեց Խաղաղության դեկրետը կոչ անելով վերջ դնել պատերազմին, ամբողջ մարդկությանը ցույց տալով իմպերիալիստական սպանդից դուրս գալու ելքը: Կոմունիստները խաղաղության համար մղվող պայքարը համարեցին իրենց առաջնահերթ խնդիրը, գործնականում ցույց տալով, որ սոցիալիզմը, աշխատանքը և խաղաղությունն անբաժանելի են:

Իր գոյության հենց սկզբից աշխարհում առաջին սոցիալիստական պետությունը կանգնեց միլիտարիզմի դեմ, գիմաթափման համար մղվող պայքարի առաջին դիրքերում: Արդեն մոտ կես դար է, ինչ սովետական պետությունն իրականացնում է ակտիվ պայքարի քաղաքականություն ընդդեմ պատերազմի վտանգի, հանուն խաղաղության:

Բայց քանի դեռ Սովետական Միությունը միակ սոցիալիստական երկիրն էր, իսկ իմպերիալիզմի տիրապետությունն ընդգրկում էր երկրագնդի տերիտորիայի մեծ մասը՝ իր ձեռքում պահելով միջազգային հարաբերությունների դեկը, նրա ազդեցությունը միջազգային հարաբերությունների ասպարեզում, աշխարհում խաղաղության և պատերազմի ուժերի փոխհարաբերությունների վրա բնականաբար սահմանափակ էր: Այդպիսի պայմաններում միջազգային իմպերիալիզմի, նրա մարտական ջոկատ գերմանական Ֆաշիզմի սանձազերծած Երկրորդ համաշխարհային պատերազմը մարդկությանը պատճառեց նոր աղետներ, խլեց 75 մլն մարդկային կյանքեր:

Համաշխարհային սոցիալիստական սիստեմի ստեղծումով միջազգային ասպարեզում տնտեսական ու քաղաքական ուժերի տեղաբաշխման մեջ հոգուտ սոցիալիզմի տեղի ունեցան արժատական փոփոխություններ: Իմպերիալիզմի տիրապետության ոլորտի խիստ կրճատման և, ընդհակառակը, սոցիալիզմի ուժերի աճի, նրա քաղաքական ու տնտեսական դիրքերի ամրակմամբ, գաղութային ու կախյալ երկրների ժողովուրդների հուժկու ազգային-ազատագրական պայքարի հաջողությունների հետևանքով միանգամայն նոր պայմաններ ստեղծվեցին պատերազմի ու խաղաղության պայքարները ժողովրդական մասսաների շահերին համապատասխան լուծելու համար:

Վերջին տարիներին Սովետական Միության խաղաղասիրական հետևողական քաղաքականության շնորհիվ միջուկային զենքի փորձարկումների սահմանափակման, միջազգային ասպարեզում վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու հաջողություններն արժանանում են աշխարհի առաջադեմ ուժերի հավանությանը, գտնում նրանց պաշտպանությունը: Խաղաղություն: Կորչի պատերազմը: Ընդհանուր և լրիվ գիմաթափում: Տարբեր սո-

ցիալական սխտեմների խաղաղ գոյակցություն: Ահա մեր դարաշրջանի հրամայական պահանջը:

Սովետական Միության կոմունիստական պարտիան, սովետական կառավարությունը ջանք չեն խնայում, որպեսզի արդի միջազգային հարաբերություններում հաղթանակի տարրեր սօցիալական կարգ ունեցող պետությունների խաղաղ գոյակցության՝ մեր դարաշրջանի օրյեկտիվ անհրաժեշտության սկզբունքը: Այն համապատասխանում է բոլոր ժողովուրդների շահերին, նրանց մոբիլիզացնում է պատերազմի հրծիպների դեմ ակտիվ գործողությունների, նպաստավոր պայմաններ է ստեղծում կապիտալիստական երկրներում դասակարգային պայքարի, դեմոկրատական ու ազգային-ազատագրական ռեյոլյուցիաների համար: Համաշխարհային կոմունիստական շարժումը մերժում է չինական պատակտիչների ավանտյուրիստական կուրսը, որը չի նպաստում նոր համաշխարհային պատերազմը կանխելուն, ՍՄԿԴ-ն և մյուս մարքս-լենինյան պարտիաները պարզ հայտարարում են, որ համաշխարհային ֆերմամիջուկային պատերազմի սանձազերծման ոչ մի արդարացում չի կարող լինել:

Աշխարհի ժողովուրդները, որոնք տեսել ու լավ են հիշում անցյալ պատերազմների աղետները, այսօր, գլխակցելով ժամանակակից զենքի կործանարար ուժը, չեն ուզում տեսնել նոր սարսափներ ու գոհեր: Նրանք ձգտում են խաղաղ կյանքի ու առաջադիմության, վճռականապես համղես են գալիս ընդդեմ պատերազմի, համուն խաղաղության:

ԱՐԵՎԱՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՆՐ ՎԻՃԱԿԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԵՆԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ՝

Պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրությունը միևնույն բանտն էր այնտեղ ապրող ժողովուրդների համար, ինչպես սուլթան Աբդուլ Համիդի տիրապետության ժամանակ: Կայսրության կազմի մեջ բացի թուրքիայից մտնում էին Արևմտյան Հայաստանը, Սիրիան, Արևելյան Թրակիան, Իրաքը, Արաբիան, Պաղեստինը, ինչպես նաև անվանապես՝ Լիբանանը և Եգիպտոսը, որտեղ փաստորեն հաստատվել և տեր ու տնօրինություն էին անում անգլիական և ֆրանսիական կապիտալիստները: Ամբողջ կայսրության բնակչության ընդհանուր թվի միայն երրորդ մասն էին կազմում թուրքերը: Թուրքական պետականությունը բռնակալական միջոցներով շարունակում էր իր տիրապետությունն իրականացնել սլավոնների ու արաբների, հայերի ու քրդերի և այլ ժողովուրդների վրա:

Հսկա պետության մեջ իր իշխանությունն էր հաստատել «Իթթիհադ վեթերաքքի» («Միություն և առաջադիմություն») կուսակցության պարագլուխներ Էնվերի, Թալեաթի, Ջեմալի և այլոց հակաժողովրդական, ռեակցիոն կլիկը: Այս կուսակցությունն արտահայտում էր վեր բարձրացող թուրքական ազգային առևտրական բուրժուազիայի, լիբերալ կալվածատերերի, բանակի սպայության ու թուրքական ազգային-բուրժուական մտավորականության շահերը: Գլխավորելով 1905-1907 թթ. ռուսական առաջին ռևոլյուցիայի ազդեցության տակ սկսված շարժումը, 1908 թ. հեղաշրջումով գահընկեց անելով երեսուն տարի թագավորած արյունոտ սուլթան Աբդուլ Համիդին և 1876 թ. թուրքական սահմանադրությունը վերականգնելու ուղղությամբ մի շարք կիսատ-պատտ քայլերից ու խոստումներից հետո, այս կուսակցության վերնախավն իր դիկտատուրան հաստատեց երկրում:

Վերնախավային հեղաշրջում կատարելով՝ երիտասարդ թուրքերը փաստորեն իրենց գործն ավարտված համարեցին: Նրանք չլուծեցին հեղափոխության առաջադրած և ոչ մի սոցիալական խնդիր, խոչընդոտեցին նրա վերաճումը բուրժուադեմոկրատականի՝ սարսափելով ժողովրդական մասսաների ակտիվությունից ու ինքնուրույն պահանջներից: «Եթե օրինակի համար վերցնենք 20-րդ դարի ռևոլյուցիաները, - գրել է Վ.Լենինը, - ապա հարկ կլինի, իհարկե, պորտուգալական ու թուրքական ռևոլյուցիաներն էլ բուրժուական համարել: Բայց նրանցից ոչ մեկը, ոչ էլ մյուսը «ժողովրդական» չեն, որովհետև ժողովրդի մասսան, նրա վիթխարի մեծամասնությունը ակտիվ, ինքնու-

¹ Էփրակոսյան Ջ.Ս. Արևմտահայության ծանր վիճակը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, «Պատմա-բանասիրական հանդես», Ե., 1965, N 1, էջ 51-68:

րույն, իր սեփական տնտեսական ու քաղաքական պահանջներով նկատելի կերպով համոզեա չի եկել այդ ռեյուցիաներից և ոչ մեկի մեջ»¹:

Երիտասարդ բուրքերի իշխանությունը հենց սկզբից լիակատար կախման մեջ մնաց օտարերկրյա կապիտալից: Իրենց առաջին քայլերին արտաքինապետ հակախմբերիալիստական ձև տված երիտբուրքերը շատ շուտով անցան հին ռեժիմի դիրքերին, իմպերիալիստական այս կամ այն խմբավորմանը հարկում, նրանց հովանավորությունից օգտվելուն:

Ագրարային ոլորտում ոչ մի փոփոխություն տեղի չունեցավ: Ծահագործման տիպիկ ֆեոդալական, բուրքական ձևերը շարունակվում էին: Հարկային քաղաքականության հին ասիական սկզբունքը՝ ժողովրդից խլել որքան հնարավոր է շատ, իսկ դրա դիմաց շտալ, պահպանվում էր իր ամբողջ այլանդակությամբ:

Արևմտահայ անվանի գրող Երվանդ Օտյանը² շատ դիպուկ է բնորոշել երիտբուրքերի իշխանությունը: «Նոսր, ամեն քան խոսքով եղավ, գործով՝ ուշիմ», - գրել է նա: «...Գյուղացին, ինչպես համիդյան բռնակալության օրով, այսօր սահմանադրական ռեժիմին մեջ ալ պիտի մեռնի անոթութենն», «ոչ մեկ փոփոխություն նշած է այդ «զուլումի» երկրին համար, հոս ուրախություննեբրու, հրճվանքներու, խորտիկներու ու համադամներու առատության մեջ ոչ մեկը միտքեն կանցընե, ոչ մեկը քե՛ ինչ կընե անդին գավառը»³:

Արդյու Համիդի կառավարման շրջանի տիրապետող վերնախավի, կալվածատերերի, բեկերի, պետական մեծաթիվ բյուրոկրատիայի, զինվորականության, կոմպրադորական բուրժուազիայի մակարոյժ կյանքը ոչնչով չէր փոխվել: Տնտեսական, քաղաքական, կրոնական հողի վրա հալածանքները շարունակվում էին: «Իմպերիալիզմի դեմ պայքարելու փոխարեն իբրիհադականները կանգնեցին իրենց սեփական ժողովրդի դեմ պայքարելու ուղու վրա»⁴: Սկսվեց տեռորի նոր շրջան: Համիդի 50-հազարանոց գաղտնի ոստիկանների ու լրտեսների ոհմակը Թալեաթի ու Ջեմալի գլխավորությամբ շատ ավելի կատարելագործեց քաղաքական պրոպագանդաների և հալածանքների իր փորձը: Կախաղանը նորից դարձավ քաղաքական հակառակորդների հետ հարաբերություն ունենալու միակ միջոցը⁵:

¹ Լենին Վ.Ի. Երկեր, հ. 25, էջ 537:

² Երվանդ Օտյան (1869-1926) – գրող-երգիծարան, հրապարակախոս, ծաղիկ է Կոստանդնուպոլսում տիրող բարքերը, իշխանությունների կողմից համարվել է «անբարեխոյս», 1915-ին արտաքվել է Դեյր Էզ-Չոր, ապրել է Ռումինիայում, Լիբանանում, Եգիպտոսում, հրատարակել է երգիծական պարբերականներ, հիմնական աշխատությունները՝ «Ղնկեր Փանջումի», «Ապտյուլ Համիդ և Շերրը Հոյմ», «Մալիհա հանըմ կամ բանակը բռնավորին դեմ», «Նոր հարյուստներ», «Կավե ուրտներ կամ մեր ազգային ճիւղները», «Հայ Տիասրբան» - Ա.Կ.:

³ Օտյան Ե. Երկերի ժողովածու, հ. 4, էջ 678-679:

⁴ Новичев А. Очерки экономики Турции до мировой войны, М.-Л.-д, 1937, с. 40.

⁵ «Պայքար» (Թ.), 1917, N 6, 12 փետրվարի:

Երիտասարդ բուրքերի իշխանության օրոք չափազանց սրվեց ազգային հարցը: Թուրքական նոր կառավարությունը ազգային հարցում շարունակեց Համիդի գործը: Կայսրության ոչ բուրք ժողովուրդների և, մասնավորապես, արևմտահայության սոցիալական և ազգային անտանելի գոյափճակը ավելի վատացավ: Երիտասարդ բուրքերը համառորեն բացասում էին ազգային հարցի գոյությունն իսկ Թուրքիայում, ձգտում էին այն տեսնել և մեկնաբանել մեծապետական ոգով¹, փորձում էին անտեսել այն իրողությունը, որ դարերի ընթացքում բուրք բռնակալների կողմից կայսրության փոքր ազգերի նկատմամբ վարած բիրտ ճնշման, ազգային ամեն ինչ ոտնահարելու, կոխկրտելու քաղաքականությունը մերկապարսնոց սրի վրա հենվող ճնշողի, տիրապետողի և ճնշվողի, արհամարիվողի փոխհարաբերություններից, ազգամիջյան խոր ներհակություններից բացի ուրիշ ոչինչ չէր ստեղծել:

Նրանք հենց սկզբից փորձում էին հաշվի չառնել այն հանգամանքը, որ «Թուրքիայում ազգային փոքրամասնությունների ամենաբնորոշ գիծն այն էր, որ բացառությամբ Անատոլիայի, տիրապետող ազգը, այսինքն՝ բուրք-օսմանները, ոչ մի տեղ բնակչության գերակշռող տարրը չէին հանդիսանում: Ե՛վ Հայաստանում, և՛ Միջագետքում, և՛ Բուլղարիայում բուրքերը ներկայացված էին լոկ պաշտոնյաների և զինվորների խմբով, որոնք ամբողջապես օտար էին այդ երկրների բուն բնակչությանը: Դեռ ավելին, բժվով փոքրամասնություն կազմելով, օսմանները կուլտուրապես զգալի չափով զիջում էին և՛ արաբներին, և՛ հայերին»²:

Թուրքական բռնակալական ռեժիմը խոր անդունդ էր ստեղծել տիրապետող ազգի շահագործող վերնախավի և ճնշված, արյունաքամ եղած, տարրական իրավունքներից զրկված, նորմալ զարգացման և բարգավաճման հնարավորությունը կորցրած, թուրքական յաթաղանի պարբերական հարվածներին ենթարկված մյուս ժողովուրդների միջև: Այդ ռեժիմը խափանում էր ճնշված ժողովուրդների հետագա առաջընթաց զարգացումը թուրքական պետության շրջանակներում:

Թուրք աշխատավորը, առաջին հերթին՝ աղքատության, խավարի ու ամենաբիրտ շահագործման ճիրաններում գալարվող հողագուրկ գյուղացին՝ բեկի կամ հարկահավաքի անլուր կեղեքումներին ենթարկված բուրք կամ քուրդ մարաբան անշուշտ կարող էր խաղաղ հարևան լինել այլազգի իր սոցիալական եղբայրների հետ: Սակայն դարերի ընթացքում երկրի աշխարհիկ ու կրոնական տեղերը Ղուրանի ու նրա սպասավորների միջոցով մահմեդական զանգվածին ներշնչել էին, որ քրիստոնյան «ընտրյալ չէ» մարգարեից, այլ «զյավուր է», արժանի ոտնահարության ու ոչնչացման:

¹ Гавидуллин Х. Младотурецкая революция, М, 1936, с. 107.

² Гурко-Кряжин В. И. История революции в Турции, М, 1923, с. 46.

Վ.Մարքս¹ իր «Ազգությունները Թուրքիայում» հոդվածում գրել է, որ մահմեդական ֆանատիզմով վարակված թուրքական «խաժանուժը» արգելակում էր Թուրքիային կանգնելու առաջադիմության ուղու վրա, որ նա «խանդավախությանը պաշտպանում էր իր երևակայական գերազանցությունը և իր տրադիցիոն արտոնությունը՝ անպատիժ կերպով էր սցեսներ կատարելով բրիտանացիների նկատմամբ»²: Ինչպես նկատում էր Արշ.Ջուրաբյանը³, «...թուրքական ֆեոդալիզմը տարբերվում էր եվրոպականից գլխավորապես նրանով, որ Թուրքիայում հասարակության շերտավորումն անցնում էր ոչ միայն սեփականատիրական հարաբերությունների, այլև ազգային ու դավանական մակարդակում»⁴: Հենց թուրքական ֆեոդալիզմն էր, որ իր բիրտ շահագործումն ու կեղեքումն իրականացնում էր թուրքական զանգվածի սոցիալական դժգոհությունն ազգային անհաշտության ուլին մղելով: «Թուրք կամ տաճիկ մասսան երբեք և ոչ մի դեպքում չի եղել, որ ինքնաբերաբար որևէ մասսայական հարձակում գործած լինի իր հարևան ռաջա ժողովրդի վրա: Այդ միշտ և հանապազ թելադրվել է վերևից, բարձրից, սուլթանների և իր պնակալեզ արքանյակների՝ փաշաների և շեյխերի կողմից, և տաճիկ մասսաները տարաբախտաբար, գրեթե միշտ էլ ենթարկվել են այդ արյունախում պրոլոկատորներին՝ շնորհիվ իրենց ծայրաստիճան տզիտության»⁵:

Երիտասարդ թուրքերը նույնպես շարունակեցին ճնշված ժողովուրդների նկատմամբ այն քաղաքականությունը, որ երեսուն տարի շարունակ վարում էր սուլթան Աբդուլ Համիդը: Ինչպես նկատում է սովետական գիտնական Ա.Դ.Նովիչևը⁶, «ազգային հարցում նրանք իրենց դրսևորեցին որպես ամենակտի շովինիստներ, գերազանցելով դրանում նույնիսկ Աբդուլ Համիդին»⁷:

¹ **Կարլ Մարքս** (1818-1883) – գերմանացի փիլիսոփա, սոցիոլոգ, տնտեսագետ, լրագրող, հասարակական գործիչ, փիլիսոփայության մեջ՝ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի, տնտեսագիտության մեջ՝ հավելյալ արժեքի և քաղաքականության մեջ՝ դասակարգային պայքարի տեսությունները հիմք հանդիսացան մարքսիզմի գաղափարախոսության, համայնակարական և ընկերվարական շարժման համար - Ա.Վ.:

² Маркс К. и Энгельс Ф. Сочинения. Изд. I, т. 9, с. 374.

³ **Արշակ Ջուրաբյան (Ջուրաբով)** (1873-1920) - Անդրկովկասում հեղափոխական շարժման մասնակից, սոցիալ-դեմոկրատ, հրապարակախոս, «Հոսանք» (Թ.) թերթի խմբագիր, II Պետական դումայի պատգամավոր (1907), Պետրոգրադյան խորհրդի գործկոմի անդամ - Ա.Վ.:

⁴ «Պայքար» (Թ.), 1917, N 3 (56):

⁵ «Կարմիր դրոշակ» (Մ.), 1919, N 13, 10 օգոստոսի:

⁶ **Արմեն Նովիչև** (1902-1987) - խորհրդային թուրքագետ, պատմաբան, տնտեսագետ, պատմ. դ-ր, պրոֆ., հիմնական աշխատությունները՝ «Թուրքիայի տնտեսությունը համաշխարհային պատերազմի շրջանում», «Թուրքիայի քանվոր դասակարգի պատմությունը», «Թուրքիայի գյուղատնտեսությունը նորագույն շրջանում», «Թուրքիայի պատմությունը» - Ա.Վ.:

⁷ Новичев А. Указ. соч., с. 38.

Նախ, երիտասարդ բուրքերը նախկինի նման փորձում էին անտեսել Արևելյան Անատոլիայի (Արևմտյան Հայաստանի) յոթ վիլայեթների՝ Վանի, Բիթլիսի (Բաղեշի), Խարպուտի (Խարբերդի կամ Մամուրեթ Ուլ-Ազիզի), Էրզրումի (Կարինի), Սվազի (Սեբաստիայի), Դիարբեքրի (Տիգրանակերտի), Տրապիզոնի՝ 1.198 հազար, Կիլիկիայի՝ 205 հազար, Ասիական Թուրքիայի այլ մասերի՝ 440 հազար, Կ.Պոլսի ու Եվրոպական Թուրքիայի՝ 183 հազար հայ բնակչության ազգային գոյությունը, փորձում էին ոտնահարել նրա ամենատարրական իրավունքները՝ Մեծ Հայքը՝ հայ ժողովրդի բնօրրանը, սուկ աշխարհագրական հասկացություն չէր, այլ նրա հայրենիքն իր որոշակի սահմաններով։ Ինչպես գրել է Վահան Տերյանը², հայերն իրենց հարազատ երկրում՝ Հայաստանում տակավին 17-րդ դարում կազմում էին ամբողջ բնակչության 98 տոկոսը։³ Մինչև 19-րդ դարի կեսը Արևմտյան Հայաստանում հայերն ունեին բացարձակ մեծամասնություն։ Սակայն երկարամյա հալածանքները, բռնի կրոնափոխությունը, կանխամտածված քաղաքներ, տեղահանությունն ու արտագաղթը ժամանակի ընթացքում փոխում էին այդ հարաբերակցությունը։ Թուրքական բռնակալները որդեգրել էին «Հայը մեծամասնություն չունի» նշանաբանը և գործնականում ամեն ինչ անում էին դրան հասնելու համար։ 1878 թ. Բեռլինի կոնգրեսից սկսած՝ Թուրքիան նվազեցված էր ցույց տալիս հայերի բիվը։ Անհրաժեշտ էր ի չիք դարձնել Հայաստանի ինքնավարության կամ այնտեղ բարենորոգումներ իրականացնելու հիմքերը։

Միատարր մահմեդական բնակչություն ստեղծելու, այս կամ այն նահանգում նրա թվական գերազանցությունը ցույց տալու նպատակով սկսեցին երկիրը արհեստական վարչական բաժանումների ենթարկել, վերացնել հայկական նահանգների մասին հասկացությունը։ Այս միջոցառումները բզկտում էին հայ ժողովրդի ուժերը, խոչընդոտում նրա նորմալ աճն ու զարգացումը։

Առաջին համաշխարհային պատերազմին նախորդած 50 տարիների ընթացքում համիդյան և երիտուրքական ռեժիմների օրոք հայ ժողովրդի բիվը պակասել էր կիսով չափ։ Հարյուրավոր հայկական գյուղեր, որոնց նկարագրությունը կա հայ և օտար հեղինակների գրվածքներում, անհետացան, բուրք կառավարությունը նրանց տեղում բնակեցրել էր թուրքերի, քրդերի և Բալկաններից ու Կովկասից գաղթած մահմեդականների։ Մյուս կողմից, կյանքի անապահովությունը, թշվառությունը, արդարության բացարձակ չզո-

¹ ՀՍՄԹ. ՊԿՊԱ (ՀԱԱ), Ջաղովածքների ֆոնդ., գ. 2, ք. 311-347, տե՛ս նաև՝ *Вандалъ А. Армяне и турецкие реформы*, СПб., 1908, с. 6:

² Վահան Տերյան (Տեր-Գրիգորյան) (1885-1920) – բանաստեղծ, քաղաքական գործիչ, 1917-ից՝ բոլշևիկյան կուսակցության անդամ, ընտրվել է Համառոտաստանյան կենտրոնականի անդամ, Խորհրդային Ռուսաստանի ազգությունների գործերի կոմիտարիատի հայկական գործերի բաժնի վարիչ, «Թուրքահայաստանի մասին» ղեկնրեսի նախագծի հեղինակ, որպես խորհրդային պատվիրակության հայկական գործերի խորհրդական մասնակցել է Բրեստ-Լիտվսկի հաշտության բանակցություններին - Ա.Կ.:

³ Տերյան Վ. Երկրի ժողովածու, հ. 1, Կ.Պոլիս, 1924, էջ 394:

յությունը, բռնապետությունն ու հալածանքը ստիպել էին բազմաթիվ հայերի գաղթել Ռուսաստան, Բալկանյան երկրներ ու Ամերիկա:

Այնուամենայնիվ, չնայած բուրբ բռնակալների բոլոր ճիգերին ու մերքե-նայություններին, հայ ժողովրդի գլխավոր մասը համար տոկունությամբ մնացել էր իր հայրենի հողին կործան. նա մինչև պատերազմի սկիզբը կազմում էր հայ ժողովրդի ամենակաշեղոր հատվածը՝ իր բովով, տարածքի և տնտեսական կապերի ընդհանրությամբ, մշակույթի օջախներով ու պատմական կոթողներով:

Թուրքական կառավարությունը միշտ միտումնավոր կերպով կեղծում էր վիճակագրությունը՝ հաստատելու համար, թե հայերը միայն աննշան փոքրամասնություն էին կազմում:

Օրինակ, բուրքական կառավարությունը Վանի վիլայեթի հայերի թիվը պատերազմից առաջ ցույց էր տալիս 80 000: Մինչդեռ 1915 թ. միայն Ռուսաստանում սպաստանած Վանի վիլայեթի հայերի թիվը 150 հազարից ավելի էր: Վանի վիլայեթի բնակչության 53 տոկոսը հայեր էին¹:

Թուրքական կառավարությունը երբեք ցույց չէր տալիս ազգությունների ճշգրիտ թիվը, այլ նրանց խմբավորում էր ըստ կրոնի:

Բեռլինի դաշնագրից հետո, որ իբրև պետք է երաշխավորեր «հայերի կյանքի ու ինչքի ապահովությունը», Հայաստանի ազգագրական պատկերն արմատապես փոխվեց բռնությամբ ու կոտորածով: Բաղդատեղով հայոց պատրիարքարանի 1882 և 1912 թթ. կազմած վիճակագրությունները, մենք տեսնում ենք, որ 1882 թ. Թուրքիայում հայերի թիվը 2.600.000 էր, որից 1.680.000-ը արևելյան վեց վիլայեթներում²: 1914 թ. այդ թիվն արդեն նվազել էր մինչև 2.100.000-ի: Նույնիսկ Թուրքիայի պայմաններում բնակամոն աճի դեպքում 30 տարվա ժամանակամիջոցում հայերի թիվը պետք է ավելանար առնվազն 500.000 նոր ծնունդով: Դրանից հետևում է, որ այդ 30 տարվա միջոցին բուրքական սուլթանի կողմից կոտորված հայերի թիվն իրականության մեջ կազմում էր մեկ միլիոն մարդ:

Երիտասարդ թուրքերը սուլթան Աբդուլ Համիդից ստացած երկրի ազգաբնակչության ժառանգության հետ վարվում էին նույն սկզբունքով: Նրանք փորձում էին անտեսել այն իրողությունը, որ պատերազմի մախթոյակին Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Խարբեռլի, Սվազի և Դիարբեքիթի վիլայեթներում թուրքերի թիվը բնակչության միայն 25,24 տոկոսն էր կազմում, իսկ հայերինը՝ 38,9 տոկոսը, որ «թվով ուրեմն հայերը այս շրջաններում... ամեն ցեղից գերակշռող են»³:

Բոլշևիկյան «Պրավդա»-ն գրել է, որ երիտթուրքերի «ժխսանությունը

¹ «Մշակ» (Թ), 1914, N 266, 25 նոյեմբերի:

² ՀՍՄՌ. ՊԿՊԱ (ՀԱԱ), Քաղվածքների ֆոնդ, գ. 3, p. 311-347:

³ Լեխիմու Յ. Հայկական հարց // Հոփոզն (Թ), 1913, N 139, 26 հունիսի, տե՛ս նաև՝ Der Christliche Orient, 1913, Mai-Juni.

խարսխվում է բացառապես կոպիտ ֆիզիկական ուժի վրա: Թուրքական չքավորությունը և Թուրքիային ենթարկված ժողովուրդները շահագործվում և ոչնչացվում էին նախկինի նման, քեև գոյություն ուներ «պառլամենտ»: Նոր ռեժիմի գազանությունները, կաշառքը, կաշառակերությունը համարյա ոչնչով չէին տարբերվում «կարմիր սուլթանի» ժամանակների նման երևույթներից»¹:

1909 թ. Ադանայում 25-30 հազար հայերի կոտորածի մեղքը փորձեցին բարդել հին ռեժիմի պաշտոնյաների վրա: Այս ուղղությամբ նրանց սյրուպագանդան շատ ջանաց: Բայց ապացուցվեց հակառակը: Հարցը ուսումնասիրելու համար Ադանա ուղարկված քննիչներից մեկը՝ Հակոբ-Է.Ֆենոյի Պապիկյանը, որը թրքասերի համարում ուներ, այնուամենայնիվ իր եզրակացության մեջ գրել էր, որ «Միություն և առաջադիմություն» «կոմիտեի անդամներն ու պարագլուխներն Ադանայում օգնել են կազմակերպելու և իրագործելու հարձակումը հայ համայնքի վրա»²: Նույն թերթը ապացուցված էր համարում երիտթուրքերի «մեղակցությունը այն ավագակների հետ, որոնք բռնություններ են գործում անպաշտպան հայ բնակչության վրա»:

Ոչ որ արդեն չէր տարակուսում, որ ոչ թուրք ժողովուրդների դեմ գործադրվող միջոցառումները խրախուսվում և կազմակերպվում էին երիտասարդ թուրքերի ղեկավարության կողմից:

Բուլղարական սոցիալ-դեմոկրատները՝ «տեսնյակները», 1910 թ. օգոստոսի 10-ին սերբական սոցիալ-դեմոկրատների հետ համատեղ դիմեցին II Ինտերնացիոնալի Կոպենհագենի կոնգրեսին մի հուշագրով, որտեղ բացահայտում և դատապարտում էին երիտասարդ թուրքերի բարբարոսական քաղաքականությունը քրիստոնեական բնակչության նկատմամբ: Նրանք պահանջում էին, որ սոցիալիստական կուսակցությունների կոնգրեսը հանդես գա թուրքական կանխադրության դեմ և մերկացնի երիտթուրքական ռեժիմը: Բուլղարիայի բանվորները իրենց միտինգներում բողոքի բանաձևեր էին ընդունում ընդդեմ այդ ռեժիմի³:

Երգումուն ռուսական գլխավոր հյուպատոս Շտրիտտերը 1910 թ. սեպտեմբերի 29-ին Կ.Պոլսի ռուսական դեսպանությանը հղած իր մի գրության մեջ շատ դիպուկ կերպով բնորոշել է իրավիճակը: «Չնայած սահմանադրությանը, - գրում է նա, - որ մտցված է երկու տարի առաջ, և թուրքերի ու հայերի քաղաքական իրավունքների կարծեցյալ հավասարությանը, վերջիններս թուրքերի հետ ընդհարումների ժամանակ միշտ մեղավոր են դուրս գալիս և պատժվում ամենայն խստությամբ հին սկզբունքով՝ հայ է, նշանակում է մեղավոր է»⁴: Արևմտյան Հայաստանում տնտեսական ճնշումը որպես կանոն ուժեղացել էր ընդգծված ազգային սկզբունքով: Այնտեղ տերն ու տնօրենը նա

¹ «Правда» (М.), 1912, N 93.

² «Новое время» (СПб), 1913, N 13359.

³ История дипломатии, Т. 3, М., 1963, с. 734-735.

⁴ Турецкая политика истреления армян (1820-1922). Документы и материалы, Составитель - проф. М.Нерсесян (машинистка).

էր, ով գեներ ուներ: Իսկ գեներ ունեին մահմեդական Ֆեռդալը, ավագակախմբերի գործաւորը: Կ.Պոլսում ռուսական դեսպան Գիրսը¹ ավելի ուշ՝ 1912 թ. նոյեմբերի 26-ին, արտաքին գործերի մինիստրությանը հղած իր գրության մեջ նշում էր, որ 1894-1896 թթ. հայկական ջարդերից հետո հայերի վիճակը «բոլորովին չէր փոխվել դեպի լավը», որ «ագրարային հարցը օրավուր սրվում է», հայերի հողերը զավթում են, իսկ իշխանությունները չեն խոչընդոտում, այլ հովանավորում են օրինազանցներին: Դեսպանը հյուպատոսների վկայությունների հիման վրա հիշատակում էր հայերի նկատմամբ կատարվող ավագակայությունների, կողոպուտների, առևանգումների, բռնի մահմեդականացման մասին և նշում, որ սանձարձակությունների համար մեղավորները երբեք պատասխանատվության չէին կանչվում²: Հիրավի, հայերի անձը, նրանց սեփականությունը բուրբակյան իշխանությունների, քրդական քեկերի ոսնձգությունների ամենահարմար օբյեկտ էին: Սովորական բան էին հարկը երկու անգամ գանձելը, ստացական չտալը, ունեցվածքի անպատիժ բռնագրավումը, սպանությունը:

Միայն 1913 թ. ոչ լրիվ տվյալներով բուրբ կալվածատերերը և քուրդ քեկերը հայերից 30 հազար գյուղացիական հողամաս էին խլել: Թուրքական իշխանությունները հայերից խլված հողերը բաժանում էին՝ հենվելով ամենառեակցիոն ուժերի վրա, խորացնում ազգային և կրոնական հակամարտությունը, խոչընդոտում տարբեր ազգությունների պատկանող աշխատավորների բարեկամության ամրապնդումը: Ինչպես նշում է Լեոն³. «Շրիտաստարդ քուրդերը շտապեցին ցույց տալ, որ քյուրդ կալվածատերերն իրենց համար մուլքան բանկ էին, որքան և հին ռեժիմի համար»⁴:

1912 թ. վերջին և 1913 թ. առաջին ամիսներին պատրիարք Արշարունից 176 բազրիր՝ գեկուցագիր էր ներկայացրել կառավարությանը: Բայց այդ բոլոր դիմումները մնում էին «ձայն բարբառո անապատի»: «1896 թ. կոտորածից հետո հայերից խլված հողերը նրանց չվերադարձվեցին, - գրում է Մանդելշտամը⁵, - իսկ հայկական պատրիարքարանի բոլոր բողոքները անհետևանք

¹ Միխայիլ Գիրս (1856-1932) – ռուս դիվանագետ, դեսպան Օսմանյան կայսրությունում (1911-1914), Իտալիայում (1915-1917) - Ա.Կ.:

² ՀՍՍՌ. ՊԿՊԱ (ՀԱԱ), Ջաղվածքների ֆոնդ, գ. 33, ք. 87-89:

³ Լեո (Առաքել Բարախանյան) (1860-1932) – պատմաբան, հրապարակախոս, գրող, պրոֆ., ՀԽՍՀ Գիտության և արվեստի ինստիտուտի իսկական անդամ, աշխատությունները նվիրված են Հայկական հարցի, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմությանը՝ «Հայոց հարցը», «Հայոց հարցի վավերագրերը», «Հայոց պատմություն», «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» - Ա.Կ.:

⁴ Լեո. Անցյալից, Թ, 1925, էջ 240:

⁵ Անդրեյ Մանդելշտամ (1869-1939) – ռուս դիվանագետ, իրավաբան, պատմաբան, Պետրոգրադի համալսարանի միջազգային իրավունքի պրոֆ., Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպանության առաջին քարգման (1898-1915), գործում մասնակցություն է

էին մնում»¹:

Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Մ. Գիլբրե 1912 թ. հունիսի 16-ին հաղորդում էր Պետերբուրգ՝ արտաքին գործերի մինիստրին. «Դրություներ Հայաստանում իսկապես այնքան է ցավալի, որքան հին ռեժիմի օրոք էր: Հայկական թերթերի բոլոր հոդվածները և պատրիարքարանի դիմումները Դռանը մնում են անհետևանք: Ամվտանգության բացակայությունը ինչպես անձի, այնպես և ունեցվածքի նկատմամբ, մշտական սպանությունները, կողոպուտները և բռնությունները քրդերի կողմից, կառավարման անարդարությունը և ուրուշ ռեֆորմների անհրաժեշտությունը ամբողջապես ճնշում են հայերին»²: «Ամբողջ 1912 թ. ամառվա ընթացքում հայ բնակչության նկատմամբ կողոպուտի, բռնությունների, սպանությունների, իշխանությունների անարդարացի դիրքի մասին բողոքները չէին դադարում»³:

Հակահայկական գործողություններն առանձնապես սաստկացել էին Վանի, Բաղեշի, Մշո, Սղեռի և այլ շրջաններում, որտեղ դրանք արտահայտվում էին ինչպես քաղաքական, այնպես և տնտեսական կյանքում: «Հայերը կջարդվին, հայերը կկողոպտվին, հայ կնիկները կառնանգվին, հայերուն հողերը կհափշտակվին», - գրում էր Երվանդ Օտյանը 1913 թ.⁴:

Անցնում էին օրերը, բայց բողոքները, թղթակցությունները, հավարի կոչերը, օգնություն աղերսող աղեկտուր աղաղակները չէին դադարում, իսկ վիճակը չէր փոխվում: Համիդը չկար, «բայց համիդական հայաջինջ քաղաքականությունը հավատարմաբար շարունակվում էր»⁵:

Ահա թե ինչպես էր նկարագրում Տարոնում տիրող վիճակը Ներսես եպիսկոպոս Խորախանյանը 1912 թ. հոկտեմբերի 13-ին Մուշից Էջմիածին՝ կաթողիկոսին ուղղված մի գրության մեջ, որը մենք բերում ենք քաղվածաբար.

«Մեր գավառի ցանկերու մեջ նույնպես կարևոր տեղ մը կրոնն տասանորդի կապալառուներու (մինլթեզիմ) ի հործ դրած բռնությունները, որոնք պատրվակներով հայ և քյուրդ գյուղացին կկեղեքեն և կկողոպտեն, շարքաներով կալերը երեսի վրա կծգեն, մաքրված ցորենը չեն չափեր, ավելորդ հարկ պահանջելով մինչև որ գոհացում ստանան, իրենց բաժինը գլուխ գլուխ, այսինքն չափը դիզված, առանց փայտ զարմելու կառնեն, գիշերով ցորենի շեղջերու կմիջը գաղտնի ավրել տալով՝ առավոտյան տուգանք կպահանջեն: Դատախազն ալ դատավորն ալ իրենք ըլլալով, ո՞վ կարող է դիմադրել, եթե

ունեցել հայկական բարենորոգումների ծրագրերի նախապատրաստման աշխատանքներին, հիմնական աշխատությունները՝ «Օսմանյան կայսրության ճակատագիրը», «Ազգերի լիզան և Հայկական հարցը տերությունների առաջ» - Ա. Կ.:

¹ Мандельштам А. Н. Малотурецкая лержава. М, 1915, с. 20.

² ՀՍՍՌ. ՊԿՊԱ (ՀԱԱ), Քաղվածքների ֆոնդ, գ. 33, բ. 84:

³ Նույն տեղում, ֆ. 57, ց. 2, գ. 666, թթ. 13, 14, 22, 23:

⁴ Օտյան Ե. Երկերի ժողովածու, հ. 4, էջ 655:

⁵ ՀՍՍՌ. ՊԿՊԱ (ՀԱԱ), ֆ. 57, ց. 2, գ. 666, բ. 44:

երբեք գտնվին ոմանք, որ համարձակին կառավարությանը դիմել, ոչ միայն ապարդյուն ետ կդառնան, այլ ավելի ծանր վնասներու կենթարկվեն:

Թուրքական ոստիկան զինվորները (ժանդարմ), որոնց պաշտոնը գլխավորապես զավառի ապահովության հսկելն է, չարագործները հալածելով և ձերբակալելով, սակայն իրենք ավագակներեն ոչ նվազ չարիք մըն են գյուղացի ժողովրդյան, զորս կծեծեն, կխտշտանգեն, կկեղեքեն, որոնցմն ձրի կստանան իրենց և ձիերու կերակուրը, ասոնք սովորական գործորնին է, մանավանդ, երբ հայ զինվորները ժողովելու կերբան ու զանոնք պատրաստ չեն գտներ, կրակ ու բոց կդառնան անոր ազգականներու գլխի: Ասոնց բարբարոսական և օրինագանց վարմունքի դեմ քանիցս հեռագրներով բողոք բարձրացրած են...., բայց քննիչներու բոլոր ջանքն եղավ ճշմարտությունը ծածկել և ոստիկան զինվորները արդարացնել ու անոնք իրենց պետերու և կառավարության այդ գաղտնի պաշտպանութենն քաջալերված կշարունակեն իրենց բռնությունները անօգնական ժողովրդյան հանդեպ:

Իսկ սպանություններու ու ալան քալանի մասին ավելորդ կհամարեն մանրամասն նկարագրություններով ձանձրացնել Չերղ վեհափառությանը: Ի տեղեկություն կենրվակեն այս մեկ տարվան մեջ պատահած սպանություններու և անհաշակություններու ցանկը, անկայն ըստ իմ խոնարհ կարծյաց խորին ուշադրության արժանի և նկատելի կետը ոչ թե այդ դեպքերն են, որոնց մասին թուրք պաշտոնյայի ստորագրություններեն մինչև բարձրագույնները միշտ ջանադիր եղած են իբր իբրև մասնավոր դեպքեր ցույց տալ, այլ այն վնասակար և հայակեր ուղղությունը, սև ատելության ոգին ու թունավոր զգացումը, որ ընդհանուր է ոչ միայն թուրք պաշտոնեից, այլ նաև անոր հարուստ ու զարգացյալ դասակարգին, շատ ցանցառ բացառությամբ, հայերու զանգատներու նկատմամբ, անոնց բոլոր խոսքերը, խոստումները կեղծ են, կխաբեն թե՛ հայտնի, թե՛ գաղտնի և կխաբեն առանց ամաչելու, թերևս մտքովնեն կծիծաղեն դյուրահավատներու վրա ալ: Անոնց տգեղությունը սոսկալի մոլեռանդ են և աչքերինն տնկած հայու ունեցածին, իսլամ չեղողի մը վրա արև անգամ չեն ուզեր, որ դալի, իսկ կրթվածները կամ ժեռն թուրքերը սոսկալի ազգայնամուլ են և ավելի վտանգավոր»¹:

Անտարակույս, Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներն էլ ենթարկված էին ֆեոդալական ճնշման և շահագործման: Բայց, ինչպես նշում է Ա.Նովիչևը, «հատկապես ծանր էր հայ գյուղացիների դրությունը, որոնք իրենց անպաշտպան և ազգային ճնշման հետևանքով, հանդիսանում էին շահագործման ամենահարմար օբյեկտը: Դրան ավելացրած նաև այն, որ բոլոր քեկերը հայերին կողդպտելու համար ոչ միայն չէին պատժվում կենտրոնական սուլթանական կառավարության կողմից, այլև դեռ ամեն կերպ խրախուսվում էին, քանի որ նա ձգտում էր դրանով իր կողմը քաշել հաճախակի ապստամբող Քուրդիստանի քեյերին»²:

¹ Նույն տեղում, ք. 45-50:

² НОВИЧЕВ А.Д. Указ. соч., с. 62.

Մի այլ ռուս հեղինակ՝ Լ.Օչերովսկին նույնպես ընդգծում էր, որ «Թուրքիայի տարածքի վրա բնակվող բոլոր ժողովուրդներից հայերն ամենից շատ էին ծառայում Թուրքիայի կողմից որպես շահագործման, բռնության, ցարդի և գալյացուցիչ դաժանության օբյեկտ»¹:

Համընդհանուր դժգոհությունը երիտրուրբերի ներքին քաղաքականությունից՝ թե՛ սոցիալական և թե՛ ազգային մարզերում բնականաբար ուժեղացավ Թուրքիայի արտաքին քաղաքական դժվարություններին զուգընթաց: Բալկանյան առաջին պատերազմում (1912-1913 թթ.) Թուրքիան պարտվեց 4-5 դար շարունակ բուրբակյան յաթաղանից տրորված ու կծկված բալկանյան ժողովուրդների հարվածներից: Թուրք զինվորը վերադառնում էր պատերազմի դաշտից, որտեղ երեկվա «ռայան» հաղթանակ էր տարել: Թուրքական պրոպագանդան չարաշահում էր մահմեդական Ֆանատիզմը, նրան հաղորդում ավելի սամճարձակ բնավորություն: Ջարդ ու փշուր եղած բուրբակյան գորամասերը վերադառնում էին Անատոլիա՝ իրենց ետևից քերելով տեղահանված մահմեդական գաղթականության զանգված: Ընչազուրկ և քաղցած ամբոխը իր դժբախտության մեղավոր պետք է տեսներ ոչ թուրք ժողովուրդներին՝ ահա պաշտոնական քաղաքականության հետապնդած նպատակը: Այս ամենը ավելի էին խորացնում ազգամիջյան ներհակությունները:

Արևմտահայ ժողովուրդը բուրբակյան կայսրության մյուս ճնշված ժողովուրդների հետ մեկտեղ օրավոր իր դժգոհությունը էր արտահայտում երիտբուրբակյան ռեժիմից, որը ոչ մի սոցիալական առաջադիմական քայլ չանելով շարունակում և ավելի էր կատարելագործում բուրբ ազգի բացառիկության շոփնիստական գաղափարախոսության վրա խարսխված իր հակաժողովրդական քաղաքականությունը:

Երիտասարդ բուրբերի իշխանությունը շարունակում էր միջնադարյան քիթո մեթոդներով իրականացնել իր տիրապետությունը հին և հարուստ մշակույթ ունեցող ժողովուրդների վրա: Հայ ժողովրդի լայն խավերը հանգում են այն եզրակացության, որ այդ նոր ռեժիմի պայմաններում հայերը դատապարտված են աստիճանական չքացման, որ հայ մարդու կյանքի, գույքի, պատվի ապահովության խնդիրը չի կարող լուծվել բուրբակյան պետականության շրջանակներում:

1913 թ. հուլիսին՝ բալկանյան երկրորդ պատերազմի ժամանակ, բուրբակյան բանակի գորավար Սամի-բեյն անխնա ջարդ էր կազմակերպել բուլղարների թողած Ռ-ոդոստո, Մալգարա և Միրիոֆիտո քաղաքների հայերի և մյուս քրիստոնյաների նկատմամբ: Ոչ թե վերացական դատողությունները, այլ դեպքերի ընթացքը համոզում էր հայ մարդկանց, որ ոչ մի լավ բան այլևս բուրբակյան կառավարողներից հնարավոր չէ սպասել: Շատերը բռնում էին հայրենի հողից ու տնից հեռանալու ճանապարհը: Ա. Մանդելշտամն ապացուցում է, որ երիտբուրբակյան կառավարության միջոցառումներն ուղղված

¹ Очерковский Л. Трагедия армян-беженцев, Пятигорск, 1915, с. 21.

էին քրիստոնեյաների մասաշակեան արտագաղթ առաջացնելու, տեղահանված քրիստոնեյաների հողերը բուրբ օսմաննետով բնակեցնելու նպատակին¹։

Կյանքի ծանր պայմանները, քաղաքական տնտրմ ու հետապնդումներն ավելի ուժեղացրին Արդու Համիդի օրոք մեծ չափերի հասած հայերի արտագաղթը (նկատենք, որ 1890-ական թթ. շարդերից հետո ԱՄՆ, Եգիպտոս, Բալկաններ էին գաղթել մոտ 200 հազար մարդ)²։

Եթև 1903-1907 թթ. միայն ԱՄՆ էր գաղթել 9 000 հայ, ապա 1908-1913 թթ. այդ բիվն անցավ 28 հազարից³։ Միայն 1913 թ. գարնանը Խարբերդից ԱՄՆ գաղթեցին 1300 հայեր։ Արտագաղթը կատարվում էր աշխարհի շատ երկրներ։ Հատկապես մասաշակեան էր հայ աշխատավորների արտագաղթը Կովկաս, իսկ այնտեղից՝ Ռուսաստանի ամենատարբեր շրջանները։

Շատ շատերը օգնություն էին ակնկալում դրսից, մտածում քաղկանյան ժողովրդների օրինակով ազատագրվել բուրքալեան լծից, հույսեր էին կապում Եվրոպայի և Ռուսաստանի պաշտպանության ու հովանավորության հետ։ Բալկանյան պատերազմների շրջանում ավելի արմատավորվեցին հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման հիմքերը։ Այդ կողմնորոշումը դարձավ արեմտահայության կողմից օսմանյան լծի բորախման շոշափելի հույսը։ Սրան նպաստում էր նաև ռուսական պետականության որդեգրած պաշտոնական քաղաքականությունը։ «...Ռուսաստանը ոչ միայն կարող է, այլև պարտավոր է իր վրա վերցնել դժբախտ հայ ժողովրդի ազատության փառավոր միախան», - հռչակում էր կատավարող շրջաններին մոտ կանգնած «Նովոյն վրեյա» թերթը⁴։

Գրիգոր Չոհրապը⁵ 1913 թ. հունվարին անդրադառնալով հայ ժողովրդի արեմտյան հատվածի ճակատագրում Ռուսաստանի ունենալիք դերին, նշում էր. «Սեր գլխավոր հենարանը Հայկական հարցում՝ Ռուսաստանն է, հարևանության իրավունքով և շահագրգռվածության աստիճանով»⁶։ Նա այն կարծիքին էր, որ ցարիզմի ճնշումից չպետք է վախենալ և այդ պատճառով խուսափել Ռուսաստանի ազդեցությունից։ Իր այս միտքը հիմնավորելով, Չոհրապան ասում էր, թև հայերը «...չէին գրկվի ռուսական քաղաքական իշխանու-

¹ Мандельштам А.Н. Указ. соч, с. 33-34.

² Hacobian A. Armenia and the War, London, 1917, p. 170.

³ «Հորիզոն» (թ.), 1913, N 149:

⁴ «Новое время» (СПб), 1913, 2 апреля.

⁵ Գրիգոր Չոհրապ (1861-1915) - գրող, հրապարակախոս, փաստարան-իրավագետ, հասարակական-քաղաքական գործիչ, 1895-1896 թթ. ստանձնել է Օսմանյան կայսրության հայ քաղաքական ամբաստանյալների պաշտպանությունը, ընտրվել է ԱԺ և օսմանյան Մեջլիսի պատգամավոր (1908-1915), հանդես է եկել իբրիհադական կառավարության կողմից հայերի հանդեպ կիրառվող համիդյան մերողների դեմ, 1912-1914 թթ. Հայկական հարցի վերաբերյալ բանակցություններ է վարել մեծ տերությունների դեսպանությունների հետ, 1915-ին ձերբակալվել է, սպանվել է արտքի ճանապարհին - Ա.Կ.:

⁶ ՀՄՄՌ. ՊԿՊԱ (ՀԱԱ), ֆ. 57, ց. 2, գ. 685, p. 15-16:

բյան պայմաններում զարգանալու հնարավորությունից, մանավանդ որ Ռուսաստանը երիտասարդ երկիր է, ապագա ունեցող պետություն, և այն ճնշումը, որի մասին այդքան շատ են խոսում, միշտ չէ որ տիրապետելու է Ռուսաստանում»¹:

1912 թ. նոյեմբերի 26-ին Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Մ.Գլխըր հաղորդում էր արտաքին գործերի մինիստրին, որ Թուրքիայում ամենուր ուժեղանում է հայ մասսաների ձգտումը դեպի Ռուսաստան, որ այդ համակրանքը թափանցել է նաև թուրքահայ բուրժուազիայի և մտավորականության մեջ: Դեսպանը հայտնում էր, որ ռուսական հյուպատոսները Վանում, Բայազետում, Բիթլիսում, Էրզրումում և Տրապիզոնում միահամուռ հաստատում էին անխտիր բոլոր հայերի համակրանքը Ռուսաստանի նկատմամբ: Օրինակ, Վանի փոխհյուպատոսը հաղորդել էր, թե «...ներկայումս բոլոր հայերը Ռուսաստանի կողմում են, անկեղծորեն ցանկանում են մեր գործերին կամ ռեֆորմներ՝ Ռուսաստանի հսկողությամբ»: Բայազետի փոխհյուպատոսը հայտնում էր, որ «...հայերն առանց կուսակցությունների տարբերության, շատ թշնամաբար են վերաբերվում այժմ Թուրքիային և շատ են ցանկանում Ռուսաստանի պրոտեկտորատ»: Գիլսին այցելած Ձոհրապը և Մարտիկյանը հայտարարել էին, որ հայ ժողովուրդը ուրիշ ոչ մի ելք չէր տեսնում, բացի Ռուսաստանին դիմելուց, որ նրան կփրկեր սարսափելի դրությունից² (նետագայում՝ 1916 թ. օգոստոսին, Ձոհրապի սպանությունից հետո, ռուս դիվանագետ Ներատովը³ նշում էր, որ «...հանգուցյալը աչքի էր ընկնում Ռուսաստանին իր նվիրվածությամբ»: Նա դիմում էր Հռոմում ռուսական դեսպանին Կոստանդուպոլսում գտնվող չեզոք պետությունների դեսպանների միջոցով հոգ տանել Ձոհրապի այրու և քույրերի մասին, որոնք մնացել էին այնտեղ⁴):

Հայ ժողովուրդը բալկանյան ժողովուրդների նման ձգտում էր ազատվել օսմանյան տիրապետությունից: Լիբիան, ապա Ալբանիան, իսկ հետո Մակեդոնիան կորցնելուց հետո կատաղած թուրքական շովինիստները ձգտում էին բոլոր միջոցներով կանխել արևելյան մահանգների կորուստը, պահպանել թուրքական հանրաբանոցը: Դա պետք է կատարվեր հայ ժողովրդի արևմտյան հատվածի ազգային և ֆիզիկական գոյության հաշվին: «Նրանք գիտակցում էին, - գրում էր Պետերբուրգի «Նովոյե վրեյա» թերթը, - որ Հայաստանի թուրքացման միջոցով Թուրքիան կշարունակի իր քիչ թե շատ պատշաճ գոյությունը, հակառակ դեպքում թուրքերի փոքրասիական տիրապե-

¹ Նույն տեղում, ք. 18:

² Նույն տեղում, Քաղվածքների ֆոնդ, գ. 33, ք. 87-89:

³ Անատոլի Ներատով (1863-1938) - ռուս դիվանագետ, Ռուսաստանի արտգործնախարարի օգնական (1910-1916, 1917), նախարարի պաշտոնակատար (1916), ԱԳՆ գործերի կառավարիչ (1917) - Ա.Կ.:

⁴ Նույն տեղում, գ. 45, ք. 11-12:

տորյունները կկործանվեն նույն ձևով, ինչը պատահեց Բալկանյան թերակղզում իրենց տիրույթների հետ»¹:

Երիտասարդ բուրքերի իշխանությունը ձգտում էր կայսրությունում ապահովել բուրքական փոքրամասնության բռնակալական պետականության գերիշխանությունը մնացած ժողովուրդների վրա:

Իբրիհադի շարքերում 1908 թ. հաշվում էր 75 հազար անղամ, իսկ 1909թ. արդեն 100 հազար անղամ²: Ահա այս բազմանղամ կազմակերպությունը որդեգրեց բուրքական շուվհիզմի գաղափարները և սկսեց դրանք տարածել և արմատավորել բուրք ազգաբնակչության մեջ: Եղբայրության մասին լուգունգին փոխարինելու էր գալիս եղբայրասպանության գործելակերպը: Պամիսլամիզմը՝ «լասների, կալվածատերերի, մուլաների և այլնի դիրքերի ամրապնդման» (Վ.Լեևին) նպատակ հետապնդող կրոնաքաղաքական այդ գաղափարախոսությունը, այլևս չէր բավարարում երիտորբերին: Չէ՞ որ արարները և կայսրության մյուս մահմեդականները ձգտում էին ազատագրվել բուրքական լծից: Արարների հետ մերձենալու փորձեր անելով՝ երիտորբերը ուզում էին պետության մեջ ստեղծել իսլամական մի գործը բոլի և այդպիսով ամրապնդել իրենց տիրապետությունը: Բայց այդ ճիգերը վերջաճում էին անհաջողությամբ, քանի որ իսլամը ի վիճակի չէր խանգարել բուրքական կայսրության դեմ ուղղված արաբական ազատագրական շարժմանը: Այն արդեն անկարող էր ապահովել բուրքական պետության միասնությունը: Առաջ քաշվեց և գործողության մեջ դրվեց «Թուրքիան՝ թուրքերի համար» գաղափարը, այսինքն՝ այն քաղաքականությունը, ըստ որի հայերն իր իսկական քաղաքացի էին հռչակվում միայն նրանք, ովքեր բուրք էին, կամ թուրք կղառնային, կմոռանային սեփական լեզուն, կծուլվեին թուրքերի հետ:

Երիտորբական պրոպագանդան թուրքերին ամենաբարձր ռասա էր հռչակում, նրանց համարում ամենաընդունակ և ամենաբազ ժողովուրդ, որը ստեղծվել է միայն տիրապետելու համար: Պամթուրքիստներն ստեղծություն էին սերմանում մյուս ժողովուրդների նկատմամբ, այդ ուղին միակն էին հարում թուրքերի գերիշխանությունը պահպանելու համար: Պամիսլամիզմի-պանթուրքիզմի գաղափարախոսներ Թեքինալիի³, Ջիա Գյոբալիի⁴,

¹ «Новое время» (СПб), 1913, 31 мая.

² Гавидулли Х. Указ. соч., с. 106.

³ Մյունիա Թեքինալի (Մեհզ Քոնեն) (1883-1961) – բուրք գրող, փիլիսոփա, պանթուրքիզմի և թուրքական ազգայնականության գաղափարախոս, ծագումով՝ հրեա, հիմնական աշխատությունները՝ «Թուրան», «Թուրքական և պանթուրքական իդեալները», «Քեմալիզմ» – Ա.Կ.:

⁴ Ջիա Գյոբալի (Մեհմեդ Ջիա) (1876-1924) – բուրք քաղաքական գործիչ, գրող, բանաստեղծ, պանթուրքիզմի և պանթուրանիզմի գաղափարախոս, վեր է դասել ազգային արժեքները կրոնականներից, համարել է, որ մահմեդականությունը վաղուց սպառել է իրեն և արգելակում է բուրք հասարակության առաջընթացը, նրա գաղափարները տեսական հիմք են հանդիսացել երիտորբերի հակահայկական

Ջելալ Նուրիի¹, Յուսուֆ Աբչուրայի², Ահմեդ Աղանի³ և այլոց գաղափարները ամենամարդատյաց ռասիզմի, բուրբ ազգի քացատիկության և մյուս ժողովուրդների նկատմամբ բշնամական ստեղծության ոգով էին դաստիարակում բուրբ երիտասարդությանը:

Երիտթուրքերի⁴ Մադոնիկի համագումարի (1911) ընդունած որոշումներում զարգացվեցին և կոնկրետ բնույթ ընդունեցին բուրբական մարտաշունչ շովինիզմի այդ գաղափարները: Այնտեղ ուղղակի ասված էր Թուրքիան «խսկական մահմեդական երկիր» դարձնելու, մահմեդական տարրի գերիշխանությունը նույնիսկ այն շրջաններում ապահովելու մասին, որտեղ նրանք փոքրամասնություն էին կազմում: Մահմեդականությունը համապարփակ էր դառնալու, մյուս կրոններն ազդեցությունը վերանալու էր, ոչ բուրբ ազգությունները գրկվելու էին կազմակերպվելու, քաղաքական կուսակցություններ ստեղծելու իրավունքից՝ ահա համագումարի հարցադրումները: Միաժամանակ երիտթուրքերի պարագլուխները պահանջում էին թողր ջանքերը գործադրել ոչ բուրբերին անշարժ գույքից, հատկապես հողային ունեցվածքից գրկելու, ֆինանսապես սնանկացնելու և նրանց հաշվին բուրբական տարրը զորացնելու համար⁵: Համագումարում հավանություն ստացած բանաձևի համաձայն, մերժվում էր բացի բուրբերենից որևէ այլ լեզվի պաշտոնապես ճանաչումը: Թուրքերեն լեզուն պետք է տիրապետեր և ձուլման ենթարկեր մյուս ազգություններին: Անտեսելով ազգությունը երկրում՝ բանաձևում նրանք ար-

քաղաքականության համար, եղել է Թալեբա-փաշայի տեղակալը, 1919-ին Կ.Պոլսի ռազմական ատյանի կողմից դատապարտվել է իբրև պատերազմի հանցագործ և հայերի տեղահանման ու ջարդերի կազմակերպիչ, արտրվել է Մալթա - Ա.Կ.:

¹ Ջելալ Նուրի (1877-1909) – բուրբ քաղաքական գործիչ, օսմանիզմի, պանթուրքիզմի և պամիլայանիզմի գաղափարախոս, 1908-ին ընտրվել է Մեջլիսի անդամ, հիմնական աշխատությունները՝ «Վալամի միություն», «Օսմանյան կայսրության անկման պատմություն», «Պատմություն ապագայի մասին» - Ա.Կ.:

² Յուսուֆ Աբչուրա (Աբչուրասողու) (1879-1935) – բուրբ պատմաբան, ազգայնականության և համաբուրբականության գաղափարախոս, 1911-ին ստեղծել է «Թուրք յուրդու» կազմակերպությունը և ամսագիրը, մասնակցել է բեմախալկան շարժմանը, Թուրքիայի պատմության ուսումնասիրության ընկերության անդամ - Ա.Կ.:

³ Ահմեդ-բեկ Աղան (Աղասողու) (1868-1939) - աղբբջանցի և բուրբ քաղաքական գործիչ, լրագրող, պանթուրքիզմի գաղափարախոս, Բարձրի «Հայաթ», «Դըշադ», «Թերաքքի» թերթերի խմբագիր, 1909-ից՝ երիտթուրքական շարժման գործուն մասնակից, 1915-ից՝ Ռուսաստանի բյուրբ-բարբար մահմեդականների իրավունքների պաշտպանության կոմիտեի անդամ, 1918-ից՝ Կովկասյան իսլամական քանակի հրամանատար Նուրի-փաշայի խորհրդական, Ալթյրբջանի Մեջլիսի անդամ, ձերբակալվել է Ստամբուլում և արտրվել Մալթա, 1921-ից՝ Անկարայի կառավարության պաշտոնաթբբի խմբագիր, Թուրքիայի Մեծ ազգային ժողովի պատգամավոր Կարսից - Ա.Կ.:

⁴ *Новое время* (СПб.), 1913, 28 мая.

համարիանքով հիշատակվում էին որպես «չնչին մեծություն»¹: Մամուլի էջերում կառավարությանը կոչ էր արվում ոչ բուրբ ժողովուրդներին ստիպել խոսակ միայն բուրբերեն²: Այդ համագումարում արդեն որոշվել էր աշխարհագրական բարտեզից ջնջել Հայաստան անվանումը³:

Այսպիսով, միտելով ազգային հարցի առկայությունը, անտեսելով, որ բուրբ ժողովրդի ազգային գիտակցության բարձրանալուն գուզընթաց, բարձրանում էր նաև մյուս ժողովուրդների ազգային գիտակցությունը, երիտարքերը գործնական հողի վրա էին դնում կայսրության ոչ բուրբ ազգություններին ակտիվ ծուլման ենթարկելու հարցը: Պետական օրգանները, բուրբական մամուլը, գիմնորական իշխանությունները իրենց գործունեությունը կառուցում էին ելնելով այդ շովինիստական պահանջից: Օրվա հրատապ հարց էր դարձել պետական հիմնարկներից բրիտանյաներին հեռացնելու և նրանց բուրբերով փոխարինելու խնդիրը⁴: Ռազմական ուսումնարանի սովորողների համար կազմված մի շրջաբերականում ուղղակի ընդգծվում էր բուրբերին ռասայական «առավելությունների» հպարտությամբ դաստիարակելու անհրաժեշտությունը⁵: «Բողոքն այժմ օսմանյան քաղաքացիներ են, - հայտարարում էին նրանք, - և դրա համար անհրաժեշտություն չկա առանձին ազգությունների համար հատուկ հիմնարկներ հիմնել՝ հիմնարկները պետք է լինեն միասնական և պետական», այսինքն՝ գուտ բուրբական⁶: Սելան-գաղե Ռիֆաթը⁷ նշում է, որ երիտարքերի դեկավարները ձգտում էին բուրբական տարրը տիրապետող դարձնել մյուսների նկատմամբ, նրանց բացառիկ դիրք վերապահել և մյուսներից վերացնելով կամ բնաջնջելով գուտ բուրբական պետություն ստեղծել⁸:

Իրբիհաղական աչքի ընկնող գործիչ դոկտոր Նազիմը Աղանայի կոտորածի մախոթյակին ասում էր. «Պետությունը պետք է տարամերժորեն բուրբ լինի. օտար տարրերի գոյությունը պատրվակ է, եվրոպական միջամտության.

¹ Toynbee A. Turkey: A Past and a Future. New York, 1917, p. 26.

² Ibid, p. 28-30:

³ «Լրաբեր» (Ն.3.), 1963, 27 ապրիլի:

⁴ Macler G. La nation Arménienne; son passé; ses malheur. Paris, 1923, p. 49.

⁵ Toynbee A. Op. cit., p. 20.

⁶ Голобородько И.И. Турция. М, 1912, с. 288.

⁷ Սելան-գաղե Ռիֆաթ (1872-1950) – բուրբ լրագրող, ծագումով՝ բուրբ, մասնակցել է «Միություն և առաջադիմություն» երիտարքական կուսակցության գաղտնի ժողովներին և քաջատեսչակ էր կուսակցության գործունեությանը, գրել է «Օսմանյան հեղափոխության մութ ծայրերը» (1929) աշխատությունը, որը բացահայտում է երիտարքերի կառավարության՝ արևմտահայերին տեղահանելու և կոտորածներ կազմակերպելու պատճառներն ու կանխամտածված բնույթը - Ա.Կ.:

⁸ Սելան-գաղե Ռիֆաթ. Օսմանյան հեղափոխության մութ ծայրերը, Բեյրութ, 1938, էջ 170:

պետք է բռնի փրկացնել նրանց»¹: Նա գտնում էր, որ պետք է զուգակցել համիլաճությունից զատկապարը համաթուրանակաճությունից հետո, որը պետք է դառնար իրենց գործունեության հիմնաքարը, ոգին և խանդավառել նրանց գործնական տեսակետից²:

Թուրքերի «գերագանցության», նրանց իշխող դիրքի պրոպագանդան օրավուր լայն չափեր էր ընդունում: Մարտաշունչ պանթուրքիզմի տեսարան Յուսուֆ Արչուրան 1911 թ. Կոստանդնուպոլսում իր հիմնած «Թուրք Յուրդու» («Թուրքական տուն») ամսագրում սիստեմատիկորեն առաջ էր տանում այն միտքը, որ Օսմանյան կայսրությանը վտանգ է սպառնում և որ տարբեր ազգերի համերաշխության քարոզով, հնացած կրոնական հասկացություններով հնարավոր չէ փրկել այն: Միակ միջոցը նա համարում էր թուրքերի անվերապահ տիրապետությունը կայսրության մյուս ժողովուրդների նկատմամբ: «Թուրքը, - ասում էր նա, - տիրապետող և հրամայող ցեղ է, ստեղծվել է իշխելու համար»³: Թուրքիզմի մի այլ ջերմեռանդ պրոպագանդիստ՝ Ջիա Գյուլ Ալփը իր բանաստեղծությունների մեջ ատելություն էր քարոզում մյուս ժողովուրդների նկատմամբ, բշնամանք սերմանում ժողովուրդների միջև: Նա հայտարարում էր. «Նրանց, որ չեն թուրքին հետ՝ ինձնից անեծք բարձրածայն»⁴: Փաստորեն սրան էր պատկանում պատերազմի ժամանակ արևմտահայության բնաջնջման քաղաքականության «տեսական» հիմնավորումը⁵:

Գործնական քայլեր էին արվում մահմեդական կրոնը պանթուրքիզմի պրոպագանդայի հետ զուգակցելու, կրոնին ազգային՝ բուրքական ոգի ներարկելու ուղղությամբ: Թարգմանվեց և «Իսլամ Մեծմուսը» հանդեսում առաջին անգամ թուրքերեն հրատարակվեց Ղուրանը, մի բան, որը մինչև այդ խստորեն արգելված էր և մեծ մեղք էր համարվում: Յուրաքանչյուր միջոցառում իրականացնելիս թուրքական շովինիստները մահմեդական զանգվածի մոտ իրենց դիրքերը ամրապնդելու համար դիմում էին կրոնին, հիմնավորում իրենց քայլերը Ղուրանով, սիրաշահում մահմեդական հոգևորականությանը:

Առանձնապես թունդ ազգայնական պրոպագանդա էր մղում 1912 թ. Կ.Պոլսում ստեղծված բուրքական ուսանողական «Թուրք օջախի» («Թուրքական ընտանիք») ընկերությունը, որը կարճ ժամանակում վարսում մասնաճյուղեր՝ ազգային ակումբներ ստեղծեց Անատոլիայի տարբեր մասերում, ինչպես նաև Կովկասում և Թուրքմենստանում: Կ.Պոլսում այս կազմակերպության միջոցառումներին որպես կանոն ներկա էին լինում թուրքական կառավարության անդամները: Կազմակերպության անդամ կարող էին լինել միայն թուրքերը: Սրանց հավաքույթների, միջոցառումների, դասախոսու-

¹ Ջարևանդ. Միացյալ անկախ Թուրանիա կամ ինչ կծրագրեն թուրքերը, 1926, էջ 53:

² «Արարատ» (Բեյրութ), 1963, 8 սեպտեմբերի:

³ Ջարևանդ. նշվ. աշխ., էջ 70, 71, 75:

⁴ Նույն տեղում, էջ 95:

⁵ Атамян С. Армянская овшина. М., 1956, с. 48.

բյուզնդների գլխավոր բովանդակությունը բուրբ ազգի բացատրություն, նրա տիրապետության և գերիշխանության ռասիստական բարոզն էր: Նման գործունեություն էր ծավալել նաև «Թուրքական ուժ» կոչվող կազմակերպությունը, որի խորհրդանիշը սպիտակ գայլն էր¹:

Այս կազմակերպությունների գործունեության, իրքիհաղական կառավարության կողմից իրականացվող քաղաքական գծի շնորհիվ «զարմանալիորեն կարճ ժամանակվա մեջ ամբողջ մտավորականությունը հավատացյալ, համոզված, կատաղած պանթուրքիստ էր դարձնել»²:

Իրքիհաղի պարագլուխներից դուկտոր Նազիմը հայտարարում էր, թե «...սուլթանները մեղապարտ բուլոբյամբ բույլ տվին, որ իրեն գրաված երկրներում բնիկ տարրերը ապրեն, զարգանան, փոխանակ բրբացման քաղաքականությամբ նրանց ձուլելու, լուծելու բուրբ ազնվական ժողովրդի մեջ»³: Նշելով Բալկաններում իրենց պարտությունները՝ նա գտնում էր, որ դրանից հետո ուշադրությունը պետք է դարձնել Անատոլիայի վրա, որից արևելք անասիման հնարավորություններ կան բուրբական պետության զարգացման և ընդարձակման համար: «Մի՛ մոռացե՛ք, - ասում էր նա, որ մեր նախահայրերը Թուրանից են եկել, և այսօր Անդրկովկասի, ինչպես և Կասպից ծովից դեպի արևելք ընդարձակ հողամասերի վրա բուրբ ցեղերն ապրում են գրեթե միատարր, ավա՛ղ, մեր դարավոր բշնամի Ռուսաստանի լծի տակ: Մեր քաղաքական հորիզոնը քաջ է մնում այդ ուղղությամբ միայն, և մենք պետք է իրականացնենք բուրբ ցեղի միությունը Միջերկրականից մինչև Արալի ծովը: Իրենց ծագումին և պատմական կոչումին գիտակից բուրբ մտավորական և քաղաքական գործիչներն այս հեռանկարով միայն կկարողանան առաջնորդվել և դրանով խանդավախել նաև ժողովուրդը և երիտասարդությանը, որ իրար հաջորդող պարտություններից և ձախողումներից կարծես մատնված է հուսալքումի»⁴:

Այս տեսակի զարգացմանը մեծապես նպաստում էր արևմտաեվրոպական և, մասնավորապես, գերմանական ինպերիալիզմը, որը հակառուսական դիրքերից էր մոտենում Թուրքիայում կատարվող անցույթարձին:

1915 թ. Գերմանիայում հրապարակած իր գրքում բուրբական շովինիզմի գաղափարախոսներից Թեքինալիը տվել է իրքիհաղականների հետապնդած նպատակների, գործելակերպի սպառնիչ պատկերը⁵: Այն է՝ տարածքային նոր զավթումներ կատարել Արևելքում, համախմբել աշխարհի տարբեր երկրներում բնակվող բուրբական ցեղերին (իր հաշվումներով 60-ից 70 մլն մարդ), «ազատագրել» նրանց օտարերկրյա տիրապետությունից, նրանց միավորել բուրբական մեկ պետության մեջ, ճզմել մյուս ազգերի դիմադրու-

¹ Toynbee A. Op. cit, p. 38.

² Ջարլանդ, նշվ. աշխ., էջ 105-106:

³ «Արաբատ» (Քեյնոթ), 1963, N 6542:

⁴ Նույն տեղում:

⁵ Tekin Alp. The Turkish and Pan-Turkish Ideals. Weimar, 1915.

բյուռն իրենց պլանների իրագործման ճանապարհին: Եվ ինչպիսի ֆանտաստիկ մաշտաբներ, հյուսիսում՝ Վոլգայից ու Կամայից մինչև Եվրոպական Ռուսաստան, արևելքում՝ մինչև Ալթայ, Մոնղոլիա ու Պարսկաստան, արևմուտքում՝ մինչև Հյուսիսային Աֆրիկա, Թուրքիա և Մարոկկո: Պանբուրիստները գաղտնի գործակալներ էին ուղարկում այդ երկրները, աշխույժ պրոպագանդա մղում թուրքական ռասայի միավորման համար¹, ձգտում այդ երկրներին ժողովուրդներին ենթարկել Ստամբուլի իշխանությանը²:

Նման նկրտումների, ֆանտաստիկ պլանների առկայության դեպքում քնականաբար լուրջ խոչընդոտ էին համարվում հայկական ազատագրական շարժումը, Ռուսաստանի ու Եվրոպայի մյուս պետությունների օգնությամբ հայկական ինքնավարության կամ անկախ պետության ստեղծման գաղափարը՝ թուրքական նվաճողական ծրագրի տեսակետից: Նույն Նազիմը հայտարարում էր, թե իրենց «բաղաբական ծրագրի իրականացման նախապայմանը հայկական հարցի արմատական լուծումն է... Պատկերացրեք մի պահ արևելյան նահանգներում հայկական մի պետության կազմվելը, նման մի պետություն տապանաբարն է թուրանական ծրագրին»³:

Թուրքական մամուլի օրգանները՝ «Թասֆիրը-էֆշար», «Թանին», «Փեյլան», «Թերջիմեն», «Շենո թուրք», հայիղում ու վատաբանում էին հայերին, հայտարարում, թե չկա և չի լինելու Հայաստան:

Գործողության ուղեցույց էր դառնում «Ռվ մեզ դեմ է, պետք է կոտորենք» սկզբունքը: Ուրեմն մեկնակետը պարզ էր. հայկական շարժումը համարվում էր գլխավոր խոչընդոտ համաթուրանական պլանների իրականացման ճանապարհին, և թուրքական կառավարության հարվածներն ուղղվելու էին հայ ժողովրդի միանգամայն արդարացի ձգտման դեմ: Բավկանյան պատերազմներից հետո հայ բնակչության դանդաղ հարստահարության, կողոպուտի, սպանությունների, բռնի կրոնափոխության, առևանգումների ավանդական քաղաքականությանը փոխարինելու էր գալիս մեծ չափերի հասնող տեռորը ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական ու մշակութային ասպարեզներում:

Յուրաքանչյուր հակահայկական որոշում, միջոցառում խիստ կերպով գաղտնի էր պահվում: Ոչ ոք չի կարող ժխտել, որ երիտթուրքական կառավարողները տարիներ շարունակ իրականացնում էին թուրք բնակչությանը լքորեն զինելու և ընդհակառակը, հայերի և մյուս ժողովուրդների դիմադրողականությունը խաթելությանը մի սատանություններով, բռնի ուժով սկարացնելու քաղաքականություն: Հարցը միայն ժամանակի մեջ էր: Պատեհ առիթ էր պետք, որպեսզի կենտրոնի ազդանշանով սկսվեր հաշվեհարդարը թուրք նրանց նկատմամբ, ովքեր հարում էին ապակենտրոնացման որևէ գաղափարի: 1912-1914 թթ. հայկական բարենորոգումների դիվանագիտական քննարկման ամ-

¹ Магдальштам А.Н. Указ. соч., с. 35.

² Тоунбеа А. Ор. cit., p. 29-41.

³ «Արարատ» (Բեյրութ), 1963, N 6542 (254):

բողջ ընթացքում բուրբական մամուլի էջերը լի էին սպառնալիքներով հայ հասարակական գործիչների, ռուս պետական գործիչների և ընդհանրապես ռուս ժողովրդի և հայերի հասցեին:

1913 թ. վերջին Էրզրումից ռուսական գլխավոր հյուպատոս Ադամովը հաղորդում էր, որ այնտեղ իրքիհարականները արդեն իրենց ժողովներում քննարկում էին հայերին կոտորելու հարցերը: Մուլաների պահանջով մահմեդականներն սկսել էին սպիտակ չալմաներ կրել: «Հատ լուրերի, - հաղորդում է հյուպատոսը, ամեն ինչ պատրաստ էր կոտորած սկսելու, և սպասում էին միայն ազդանշանի՝ մայրաքաղաքից»¹: Ավելի ուշ նույն Ադամովը հաղորդում էր, որ հակահայ տրամադրությունները գրգռում էր Կ.Պոլսից Էրզրում ժամանած իրքիհարական գործիչ Հիլմի-բեյը, իսկ զինավաթություններ էր կազմակերպում զերմանական հյուպատոս Անդերսը²:

Իրքիհարական գործակալները քրդական ապստամբական առկայծումները հաղթահարելու, հայ-քրդական ընդհարումներ առաջացնելու նպատակով նույնիսկ հայերին զենք էին առաջարկում³: Ամենուրեք կառավարությունը հակահայկական պրովոկացիաներ էր պատրաստել:

Կ.Պոլսում, Արևելյան Անատոլիայի և Կիլիկիայի քաղաքներում երիտասարդ բուրքերի կազմակերպած զինված խուժանի խմբերը անցնում էին հայկական բաղամասերով, ֆանատիկ, սպառնալից կոչեր անում կամ այդ ոգով գրառումներ կատարում տների, եկեղեցիների, դպրոցների դռներին ու պատերին: Երիտասարդ բուրքերի օրգան «Թասֆիրը-է-ֆրյար» թերթը մոլեռանդ ատելությամբ տոգորված հակահայկական նյութեր էր տպագրում: Իր համարներից մեկում նա գրում էր, թե «հայկական խնդիրը պիտի վերանա, և այլևս անոր հետ զբաղվելու բնավ պետք պիտի չտեսնվի»⁴:

Թուրքական շովինիզմը դառնում էր չհանդուրժող, այլամերժ և հարձակողական: «Պետք է քնաջնջել հայերը կայսրության մեջ, - հայտարարում էր նույն մարդակեր Նազիմը, հայ ժողովրդի գեներոլի տեսաբանը: - Այս առաջարկը կարող է թվալ անխիղճ, անմարդկային, դժվարին, բայց հարցը խղճին խնդիր չէ, ոչ էլ մարդկային զգացմունքների խնդիր: Հարցը միայն քաղաքական է, Թուրքիայի շահերի և ապագայի հետ սերտորեն կապված խնդիր»: Նա պահանջում էր համաձայնվել «հայերի ամբողջական և արմատական քնաջնջման ծրագրին, ապահովելով մեր զարգացման ու զորացման ուղին»⁵:

¹ Сборник дипломатических документов, П.-л., 1915. Реформы в Армении. 26 ноября, 1912, 10 мая, 1914, с. 133.

² Там же, с. 144:

³ «Մշակ» (Թ), 1914, N 8, տե՛ս նաև՝ Ակնունի Մ. Միլիոն մը հայերու ջարդի պատմությունը, Կ.Պոլիս, 1920, էջ 151-155:

⁴ «Հորիզոն» (Թ), 1913, N 252:

⁵ «Արարատ» (Թեյրուր), 1963, N 6543 (255):

Կանիբրակական այսպիսի ամբողջ հարցադրումները ցույց են տալիս, որ դեռ մինչև 1914 թ. երիտթուրքերի որդեգրած հայաջինջ գործակերպը բարձրացված էր պետական քաղաքականության աստիճանի և միայն առիթ էր պետք, որ նա դառնար համապարփակ, ընդգրկելի ամբողջ արևմտահայությունը:

Լենինյան «Պրավդա»-ն, անդրադառնալով երիտթուրքերի հայահաված քաղաքականությանը, ընդգծում էր նրա ռեակցիոն էությունը, դատապարտում հայերին թուրքացնելու շովինիստական նկրտումները, որոնք ավելի կոպիտ և մշտական բնույթ էին ընդունել, քան Արդուլ Համիդի թագավորության օրոք էր: «Պրավդա»-ն գրում էր, որ պրոլետարիատն իր թողոքն է արտահայտում Թուրքիայում կատարվող կազմափոխումների դեմ¹:

Նորվեգացի մեծ դեմոկրատ Ֆրիտյոֆ Նանսենը², որ քաջածանոթ էր հայ ժողովրդի պատմական բախտին, թուրքահայերի արյունոտ ճակատագրին, հաստատում է, որ երիտթուրքերի պարագլուխները դեռևս մինչև Առաջին համաշխարհային պատերազմը որոշել էին հայերից արմատախլի անել³: Ֆրանսիացի Վիկտոր Բերարը⁴, որ նույնպես Հայաստանին նվիրված մի շարք աշխատությունների հեղինակ է և իր գործերում, հրապարակախոսական հոդվածներում հանգամանորեն անդրադարձել է երիտթուրքերի վարած ներքին քաղաքականության հարցերին, տակավին 1912 թ. նշում էր, «քե՛ս առաջիկա զարմանք թուրքերը կոտորած պիտի ընեն Հայաստանի մեջ»⁵:

Բազմաթիվ այլ իրազեկ հեղինակներ հաստատում են, որ հայերին մասսայաբար կոտորելը Իթքիիաղի կողմից պատերազմից շատ առաջ մշակված ծրագրի արդյունք էր, որ մարմին առավ բալկանյան առաջին պատերազմի և ապա հայկական բարենորոգումների հարցի հասունացման շրջանում: 1914 թ. սեպտեմբերի 5-ին գրած իր մի նամակում Սիամանթոն⁶ արդեն կանխագգում

¹ «Правда» (М.), 1912, 27 июня; «Путь Правды», 1914, 1 февраля.

² Ֆրիտյոֆ Նանսեն (1861-1930) – նորվեգացի գիտնական, բևեռախույզ, օվկիանոսագետ, հումանիստ, հասարակական գործիչ, Առաջին համաշխարհային պատերազմից հետո որպես Ազգերի լիգայի գերագույն կոմիսար գրադվել է ռազմագերիներին հայրենիք վերադարձնելու և գաղթականների խնդիրներով, դատապարտել է երիտթուրքերի կազմակերպած հայերի ցեղասպանությունը, մեծ օգնություն է ցուցաբերել հայ գաղթականներին տրամադրելով նրանց «Նանսենյան անձնագրեր», գրադվել է հայ գաղթականներին Խորհրդային Հայաստան հայրենադարձելու հարցով, գլխավորել հայրենադարձության հանձնաժողովը (1925-1929), 1925-ին այցելել է Հայաստան, ստացել է Նորելյան մրցանակ (1922), աշխատությունները՝ «Հայաստանում», «Հայաստանը և Մերձավոր Արևելքը», «Մարված ժողովուրդը» - Ա.Կ.:

³ Nansen F. Armenia and the Near East. London. 1928, p. 297.

⁴ Վիկտոր Բերար (1864-1931) – ֆրանսիացի քաղաքական գործիչ, գիտնական, գրող, հումագետ, թարգմանիչ, 1920-1931 թթ. Ֆրանսիայի սենատի անդամ - Ա.Կ.:

⁵ Մերոքյան Մ. Հայկական հարցը և ամերիկուրեր, Բոստոն, 1937, էջ 132:

⁶ Սիամանթո (Ատոմ Յարճանյան) (1878-1915) – բանաստեղծ, եղևնի գոծ, «Դյուզլուքներն», «Հայրդիներ», «Հոգևվարքի և հույսի ջահեր», «Կարմիր լուրեր

էր հայ ժողովրդին սպառնացող աղետը. «Ամեն բան արդեն կը մոլտան, - գրում էր նա, - պիտի կոտորեն»¹: Եվ նա չէր սխալվում: Պատերազմի հետևանքով ստեղծված իրավիճակը սանձազերծեց բուրբակաճ ջարդարարների: Կայզերական Գերմանիայի աջակցությամբ, իմպերիալիստական մյուս տերությունների թողտվությամբ Էնվեր-Թալեաթ-Ջեմալ ռեակցիոն կլիկը պատմության մեջ աննախադեպ ոճրագործությամբ իրականացրեց արևմտահայության տեղահանման և բնաջնջման կանխարական ծրագիրը:

բարեկամնա», «Հայրենի հրավեր» բանաստեղծական ժողովածուների հեղինակ - Ա.Կ.:

¹ «Արև» (Կահիրե), 1963, N 13493:

ԳԵՆՈՑԻԴԸ ԾԱՆՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒՅՑՈՒՆ Է¹

Ժողովուրդներին ստրկացնելու, միմյանց հակադրելու ու թշնամացնելու, նրանց միասնությունը ջլատելու նպատակով բռնակալ տիրապետողները, գաղութարարները միշտ ջանացել են սոցիալական և ազգային անհավասարությունը հիմնավորել բիոլոգիական բնույթի պատճառներով, մարդկային խմբերի ռասայական առանձնահատկություններով: Ռ-սախիզմի ծայրահեղ արտահայտությունը գենոցիդն է (հունարեն՝ ցեղ և լատիներեն՝ սպանել բառերից)՝ ցեղասպանություն:

Մարդկային ռասաների «անհավասարության» մասին 19-րդ դարի կեսերին ֆրանսիացի սոցիոլոգ Ա.Գոբինոյի² ստեղծած ռեակցիոն տեսությունը, ապա սոցիալ-դարվինիզմը՝ «անտրոպոսոցիոլոգիան», գերմանական ֆաշիզմը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին իր նվաճած երկրներում գործնականում կիրառեց հրեշտային սադիզմով:

Համաշխարհային հասարակայնության, ֆաշիզմի դեմ պայքարած առաջադիմական ուժերի ճնշման տակ Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեան 1948 թ. դեկտեմբերի 9-ին հաստատեց «Գենոցիդի հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու» մասին կոնվենցիան: Սովետական Միության Գերագույն սովետի նախագահության վավերացրած այդ փաստաթուղթը դատապարտում է լրիվ կամ մասնակիորեն այս կամ այն ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբերը ոչնչացնելու նպատակով կատարվող հետևյալ գործողությունները. ա/ այդպիսի խմբի սպանությունը. բ/ այդպիսի խմբի անդամների մարմնական ծանր վնասվածքներ կամ մտավոր խանգարումներ պատճառելը. գ/ որևէ խմբի համար կանխական կերպով կյանքի այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք նպատակ ունեն նրա լրիվ կամ մասնակի ոչնչացումը. դ/ միջոցառումներ, որոնք նպատակ ունեն կանխել երեխաների ծնունդն այդպիսի խմբում. ե/ մարդկային մեկ խմբից բռնի կերպով երեխաների հանձնումը մյուսին և այլն: Կոնվենցիայի 3-րդ հոդվածում ասված է, որ պատժվում են հետևյալ արարքները. գենոցիդը, գենոցիդ կատարելու համար կազմակերպված դավադրությունը, գենոցիդի օգտին ուղղակի և հրապարակային ելույթները, գենոցիդի մասնակցելը և այլն (տե՛ս Веломости Верховного Совета. – 1954. – No. 12):

Թեև գենոցիդի քաղաքականությունն ավելի մասսայական կիրառություն և տարածում ստացավ իմպերիալիզմի դարաշրջանում, բազմաթիվ ժողովուրդների գաղութացմանը, ֆաշիստական մարդատյաց տեսության ծագմանն ու պրակտիկային գուզընթաց, սակայն նրա արմատները ձգվում են դա-

¹ Կիրակոսյան Ջ.Ս. Գենոցիդը ծանրագույն հանցագործություն է // «Գրական քերթ» (Ե. 1965, 23 ապրիլի, նույնը՝ «Արարյաս» (Բեյրութ), 18, 19 մայիս):

² Ժոզեֆ Արթուր դե Գոբինո (1816-1882) – ֆրանսիացի գրող, սոցիոլոգ, ռասայական տեսության հեղինակ - Ա.Կ.:

րերի խորքը: Մարդկության պատմությանը հայտնի են բազմաթիվ ժողովուրդների, ազգային փոքրամասնությունների, էթնիկական և կրոնական խմբերի բռնի ասիմիլացիայի, տեղահանությունների, ուղղակի բնաջնջման փաստեր, որ կիրառում էին ֆեոդալական բռնակալները, ստրկավաճառության միջոցով կապիտալի մավտակգրեական կուտակում իրականացնող եվրոպական կապիտալիստները, Ասիայի ու Աֆրիկայի ժողովուրդներին գաղութացնող ինգլիսախոսները:

Օսմանյան կայսրության պատմությունը վառ կերպով վկայում է, որ այդ պետության բռնակալ կառավարողները դարերի ընթացքում իրենց ներքին և արտաքին նվաճողական քաղաքականությունը մշտապես խարսխում էին ռասայական և կրոնական խտրականության հիմքերի վրա: Տասնյակ ժողովուրդների ճնշելու և հպատակեցնելու, նրանց ազգային ինքնությունը ոչնչացնելու, ազգային-ազատագրական պայքարը հրով ու սրով արմատախիլ անելու թուրքական սուլթանների գլխավոր և մշտական զենքը յարադամի միջոցով իրականացվող ռասիզմն էր, բուրք ազգի քացառիկության, իշխող և տիրապետող լինելու մասին քարոզմ ու դրանից բխող գործնական քաղաքականությունը: Հույների, արաբացիների, արաբների, հայերի, բուլղարների, սերբերի, մակեդոնացիների, կիպրացիների, քրդերի և բազմաթիվ այլ ժողովուրդների նկատմամբ իրականացված ազգային մշակութային ճնշումը, բռնի տեղահանությունները, կրոնափոխությունները, պարբերական կոտորածները ոչ այլ ինչ էին, եթե ոչ զենոցիդ:

Թուրքական բռնակալ սուլթանների, ռազմա-ֆեոդալների բյուրոկրատիայի տրադիցիոն այդ գործելակերպը առավել սուսկայի ձևով դրսևորվեց 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած և իր գագաթնակետին հասավ երիտասարդ թուրքերի ռեակցիոն դիկտատուրայի շրջանում, երբ մեծապետական շովինիզմը, պանթուրքիզմը պաշտոնապես հռչակվեցին որպես պետական քաղաքականություն:

1913 թ. մայիսի 22-ին «Նուլույե վրեմյա» քերթը գրում էր. «Հայերի նկատմամբ կատարվող դաժանությունները, անկասկած, խրախուսվում կամ նույնիսկ կազմակերպվում են Կ.Պոլսի երիտասարդ թուրքերի կողմից, այսինքն՝ կենտրոնական կառավարության կողմից»: Լեւինյան «Պրավդա»-ն, անդրադառնալով երիտթուրքերի հայահալած քաղաքականությանը, ընդգծում էր նրա ռեակցիոն էությունը, դատապարտում հայերին թուրքացնելու շովինիստական նկրտումները, որոնք ավելի կոպիտ և մշտական բնույթ էին ընդունել, քան Արդուլ Համիդի բազավորության օրոք էր: «Պրավդա»-ն գրում էր, որ պրոլետարիատն իր բողոքն է արտահայտում Թուրքիայում կատարվող գազանությունների դեմ (տե՛ս *Правда*. – 1912. – 27 июня; *Путь правды*. – 1914. – 1 февраля):

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի արևմտյան հատվածը կանիքալական դաժանությամբ տեղահանվեց, հոշոտվեց կամ քաղցամահ եղավ անասատային վայրերում: Ինչպես միշտ, զենոցի-

դի քաղաքականությունը մեծ մասշտաբներով գործնական հիմքերի վրա է դրվում պատերազմների ժամանակ: Թուրքական ջարդարարները փորձում էին իրենց վանդալիզմը «պատճառաբանել» պատերազմական անհրաժեշտությամբ: Սակայն պատմական փաստերն անհերքելիորեն ապացուցում են, որ արևմտահայության դեմ իրականացված գեոցիդի քաղաքականությունը բխում էր ամբողջ հայ ժողովրդին ոչնչացնելու նախօրոք մշակված պանթուրքիստական մարդատյաց ծրագրից:

Կյանքում ռասիստական գաղափարախոսության կիրառման ծայրահեղ ձևի՝ գեոցիդի իրականացումը հայ ժողովրդի նկատմամբ կատարվեց իր ամբողջ զարհուրելիությամբ, իր բոլոր կործանարար տարրերի գործադրմամբ: Տղամարդկանց առանձնացում կանանցից, երեխաների խլում ծնողներից և մասսայաբար ոչնչացում, զագանային սպանություններ, կախաղան, խոշտանգումներ, այրում խարույկի վրա, կանանց բռնաբարություններ, երեխաների պղծում, ստիպողական ամուսնություններ, բռնի կրոնափոխություններ և այլն. ահա երիտթուրքական կառավարող կլիկի կիրառած միջոցները:

Համաշխարհային պատմության մեջ 1915 թ. Մեծ եղեռնը կարելի է համեմատել Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին գերմանական Ֆաշիզմի կազմակերպած միլիոնավոր անգնե, խաղաղ մարդկանց ոչնչացման, Մայդանեկի, Օսլենցիմի, Բուխենվալդի, Մաուսբաուզենի և մահվան այլ ճամբարներում կատարված ավելի մեծ մասշտաբի զանգվածային սպանությունների հետ: Թեև Հիտլերի կողմից իրականացված գեոցիդի քաղաքականության «գիտական» մեթոդների, դիակիզարանների և այլ հարմարանքների, զանգվածային սպանություններ իրագործելու նպատակով գերմանաֆաշիստների ստեղծած դժոխային սիստեմի համեմատությամբ հայկական կոտորածները պրիմիտիվ ձևերով էին իրականացվում (այն ժամանակ չկային զազի խցիկներ, տեխնիկական կատարելագործված միջոցներ), այնուամենայնիվ, հայկական եղեռնը պարունակում էր այն տարրերը, որոնք հետագայում այնքան կատարելագործեցին գերմանական նացիստները: Արիական ռասայի մասին զազանային հարցադրման կիրառողները ձգտում էին ոչ միայն նոր տերիտորիաներ գավթել, ժողովուրդների ստրկացնել, այլև «ավերել» մարդկանցից մաքրել «կենսական տարածությունը»: «Եթե մենք ուզում ենք ստեղծել մեր մեծ գերմանական կայսրությունը, - հայտարարում էր Հիտլերը, - մենք պետք է դուրս մղենք և քնաջնջենք սլավոնական ժողովուրդներին՝ ռուսներին, ուկրաինացիներին, չեխերին, բուլղարներին, լեհերին, սլովակներին, բելոռուսներին»: Պատահական չէ, որ ի հիմնավորումն իր հրեշավոր պահանջի, նա հիշեցնում էր 1915 թ. արևմտահայության քնաջնջումը: «Այժմ մեր ժամանակներում, - ասում էր Հիտլերը, - այլևս ո՞վ է հիշում Թուրքիայում հայերի քնաջնջման մասին»: Արևմտահայության քնաջնջման գործի կազմակերպիչների, նրանց իմպերիալիստական հովանավորողների անպատիժ մնալը, այդ ջարդարարության հեղինակների, նրանց գործելակերպի ու մեթոդների

հետևողական, նպատակալաց դատապարտման բացակայությունը ավելի ասանձարձակ էին դարձնում մարդատյաց ֆաշիզմի պարագլխին:

Այս օրերին, երբ աշխարհի առաջադեմ մարդկությունը պատրաստվում է հանդիսավոր կերպով նշելու հիտլերյան Գերմանիայի դեմ տարած փրկարար հաղթանակի 20 տարին, պատաշաճը մատուցելու տասնյակ միլիոնավոր զոհերի հիշատակին, արևմտագերմանական ռևանշիստները փորձում են կամայականորեն դադարեցնել ֆաշիստական ռազմական հանցագործների հետապնդումները, ներում չնորհել նրանց: Չնայած նրան, որ միջազգային իրավունքն ընդհանրապես չի ընդունում վաղեմության ինստիտուտը, նրանք ուզում են ոտնահարել այդ իրավունքը, վկայակոչում են 1871 թ. գերմանական քրեական կոդեքսը և վաղեմության անցնելու պատրվակի տակ ձգտում են ներում չնորհել հազարավոր դաշիճներին: Ֆաշիստական չարագործությունների միջազգային բնույթն ասպացուցված և արձանագրված է Նյուրնբերգի միջազգային զինվորական դատարանի կողմից, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1946 թ. միաձայն ընդունված բանաձևով: Ժողովուրդների հիշողության մեջ տակավին բարձր են ֆաշիստական չարագործությունները, և արևմտագերմանական ռևանշիստների նկրտումներն առաջացնում են ազնիվ մարդկանց անհուն գայրույթը: Միլիոնավոր անմեղ մարդկանց ոչնչացրած հանցագործներին փրկելու փորձերը ամենայն խստությամբ դատապարտում են Սովետական Միության բոլոր ժողովուրդները: Արտահայտելով մեր երկրի աշխատավորների ցանկությունը՝ ՍՍՍՄ Գերագույն սովետի նախագահությունը օրեր հատուկ հրամանագիր ընդունեց պատերազմի հանցագործների մասին: Այնտեղ ասված է. «Խաղաղության ու մարդկայության դեմ խիստ, ծանր չարագործությունների և պատերազմական հանցագործությունների համար մեղավոր նացիստ ռճրագործները ենթակա են դատի և պատժի, անկախ նրանից, թե որքան ժամանակ է անցել հանցագործությունները կատարելուց հետո»:

Հիտլերյան հորդանների հարձակման ծանրությունն իրենց ուներ Վրաստանը սովետական մարդիկ չեն կարող մոռանալ ֆաշիզմի չարագործությունները. 20 միլիոն սպանված և տանջամահ արված իրենց հարազատներին, 1700 ոչնչացված քաղաքները, 70 հազարից ավելի հրդեհված և կործանված գյուղերը: Չէ՞ որ միայն Բելոռուսիայում գերմանական նացիստները 2,2 մլն խաղաղ բնակչություն և ռազմագերիներ են ոչնչացրել, 300 հազար մարդու բռնություններով տաժմանակիր աշխատանքի քշել Գերմանիա: Մեր Միության բոլոր ժողովուրդների զավակների հետ սովետական բանակի շարքերում նացիստական հորդանների դեմ մարտնչած հայ մարտիկները, հիտլերյան համակենտրոնացման ճամբարների դժոխքն ապրած հայ մարդիկ այսօր իրենց ձայնն են բարձրացնում և հայտարարում՝ մենք չենք մոռանա այդ ամենը, մենք չենք ների նացիստական բարբարոսներից: Այսօր զանգվածային սպանություններից փրկված հայ մարդիկ, անմեղ զոհերի շատավիղները, Սովետական Հայաստանում թե Սփյուռքում, արդար գայրույթով են հիշում բուրբակաճ կառավարողների ու նրանց իմպերիալիստական հովանավորողների ժողովուր-

դասպան չարագործությունը: Այսօր նրանք իրենց ձայնն են միացնում համաշխարհային առաջադեմ հասարակության հուժկու բողոքին՝ ֆաշիստական մարդակերներին արդարացնելու փորձեր կատարողների դեմ, պահանջում են՝ ոչ մի ներում մարդասպաններին:

Սովետական Միությունը, աշխարհի բոլոր սոցիալիստական, առաջադիմական ուժերը հետևողականորեն պայքարում են գեներցիոյի քաղաքականության յուրաքանչյուր արտահայտության՝ հականերական ռասիզմի, ապարտեյդի և այլ մարդատյաց երևույթների դեմ: Նրանք դատապարտում են միջազգային իմպերիալիզմի ժողովրդասպան դավերը Կիպրոսում, Կոնգոյում, Վիետնամում և այլուր, հանդես գալիս ճնշված ժողովուրդների իրավունքների պաշտպանությամբ, պահանջում են վերջ դնել իմպերիալիստական դավադրություններին: «Ֆաշիստական բարբարոսության դեմ մղված պայքարում զոհվածների հիշատակը, – Վարչավայում տեղի ունեցած լեհ-սովետական բարեկամության միտինգում հայտարարեց ընկ. Լ.Բրեժնևը¹, – մեզ կոչ է անում ամրապնդել այդքան թանկ գնով ձեռք բերված խաղաղությունը»: Սոցիալիստական մեր մեծ հայրենիքը, ժողովուրդների միջև բարեկամություն և համագործակցություն հաստատելու իր լենինյան քաղաքականությամբ, վայելում է միջազգային իմպերիալիզմի դեմ մաքառող ժողովուրդների անսահման սերն ու համակրանքը:

¹ Լենինի Բրեժնև (1906-1982) – ԽՍՀՄ քաղաքական և պետական գործիչ, 1964-1966 թթ.՝ ԽՄԿԿ ԿԿ առաջին քարտուղար, 1966-1982 թթ.՝ գլխավոր քարտուղար, 1960-1964, 1977-1982 թթ.՝ ԽՍՀՄ ԳԽ նախագահ - Ա.Կ.:

ԱՌՀԱԿԻՐՔԻՑ՝ ԿԵՐԱԾՆՈՒՆՂ՝

Սոցիալական և ազգային պատերազմի համար պայքարի ծանր ու դժվար ուղի է անցել հայ ժողովուրդը: Նրա մինչև սովետական ժամանակաշրջանի պատմությունը լի է ողբերգական էջերով: Միայն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղույցից, կոմունիստների լեհմանցից պարտիան հայ ժողովրդին փրկեցին համազգային աղետից:

Սովետական իշխանության հաստատումով դրվեցին հայ ժողովրդի բովանդակ կյանքի վերածնության հիմքերը: Հայ ժողովուրդն ընթացավ իր վերքերն ապարիմելու, նոր կյանքի, սոցիալիզմի կառուցման ուղիով: Կարճ ժամանակում փոխվեց երկրի տնտեսության պատկերը: Հայաստանը դարձավ առաջավոր արդյունաբերության և գյուղատնտեսության, համատարած գրագիտության, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական, զարգացած կուլտուրայի երկիր: Սովետական իշխանության տարիներին հայ ժողովուրդը կառուցեց ու ստեղծեց այնքան, որքան չէր ստեղծել իր բազմադարյան պատմության ընթացքում:

* * *

Հիսուն տարի առաջ աշխարհը ցնցվեց Օսմանյան կայսրության կառավարող կլիկի կատարած ահավոր ոճրագործությունից: 1915 թ. երիտթուրքական կառավարությունը կազմակերպեց արևմտահայության զանգվածային սեղանահանումն ու բնաջնջումը: Դա մարդկության պատմության մեջ աննախադեպ ոճրագործություն էր:

Դարեր շարունակ բուրբական սուլթաններն իրենց ներքին քաղաքականությունը խարսխում էին ռասայական և կրոնական սանձարձակ խտրականության վրա, միջնադարյան ֆեոդալական նորմաներով կառավարվող օսմանյան պետականության հարվածներն ուղղում ճնշված ժողովուրդների՝ սլավոնների, հայերի, հույների, արաբների և այլ ազգերի արդարացի ազատագրական պայքարը ճնշելու նպատակին:

«Արյունոտ» սուլթանի տիտղոսն ստացած Աբդուլ Համիդը անցյալ դարի 90-ական թթ. հարյուր հազարավոր հայերի կոտորեց: 1908 թ. իշխանության գլուխ անցած երիտթուրքական «Ժրթիխադ»՝ շուլիմիստական գաղափարներ և գործելակերպ որդեգրած պարտիան ճնշված ժողովուրդների նկատմամբ ավելի սանձարձակ և դժամ քաղաքականություն վարեց: Պատմական փաստերը հաստատում են, որ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը երիտթուրքական կլիկն արդեն մշակել էր արևմտահայության բնաջնջման ծրագիրը: Իսկ իմպերիալիստական պատերազմն այն պատեհ առիթն էր, որ

¹ Գալոյան Գ., Կիրակոսյան Ջ. Արիավիրից՝ վերածնունդ // «Սովետական Հայաստան» (Ե.), 1965, 24 ապրիլի:

պետք է ձեռքազատեր ժողովրդասպան պլանն իրականացնելու համար: Չէ՞ որ գեներալի (ցեղասպանության) բաղադրականությունը մեծ մասշտաբներով գործնական հիմքի վրա է դրվում պատերազմների ժամանակ:

Էնվեր-Թալեաթ-Ջեմալ-Նազիմ երիտթուրքական կլիկը, գերմանական միլիտարիստների աջակցությամբ, պատերազմի հենց սկզբից ձեռնամուխ եղավ արևմտահայության մասսայական տեղահանության և բնաջնջման ոճ-րապարտ ծրագրի իրականացմանը: Այդ մասին թուրքական կառավարության արձակած գաղտնի հրամաններից մեկում ուղղակի ասված էր, որ «Իթքի-հաղը» «որոշել է ամբողջովին ոչնչացնել Թուրքիայում բնակվող հայությանը»: Այդ նպատակով ստեղծված երիտթուրքական գործադիր հանձնաժողովի պլանով զինաթափվեց, թիկունքային աշխատանքների ուղարկվեց, ապա ոչնչացվեց օսմանյան բանակում ծառայող տասնյակ հազարավոր հայ երիտասարդությունը: 1915 թ. ապրիլի 24-ից սկսած՝ կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսից տարագրվեցին, ապա աքսորի ճանապարհին խումբ-խումբ ոչնչացվեցին հայ անվանի մտավորականները՝ գրողներ, բժիշկներ, իրավաբաններ, արվեստագետներ, որոնք մեծ ծառայություն էին մատուցել ոչ միայն հայկական, այլև թուրքական մշակույթի զարգացման գործին: Հայ ժողովուրդը կորցրեց այնպիսի ակամավոր դեմքեր, ինչպիսիք էին Գրիգոր Զոհրապը, Սիամանթոն, Դանիել Վարուժանը¹, Կոմիտասը² և շատ ուրիշներ: Երկրի առանձին վայրերում հայ ժողովրդի մղած ինքնապաշտպանական խիզախ գոյամարտերը, դիմադրության փոքրաթիվ օջախներն անկարող էին կանխել այն ողբերգությունը, որին ենթարկվեց արևմտահայությունը: 1919 թ. աշնանը դաշնակների և «Իթքիհաղի» միջև կնքված «ուխտը», որով «օսմանյան նվիրական հայրենիքի» գաղափարներն էին սրբագործվում, զգալի չափով թուլացրեց հայ ժողովրդի դիմադրական ոգին: 1915-1916 թթ. ընթացքում ամենայն վանդալությամբ ոչնչացվեց մեկ ու կես միլիոն մարդ: Արևմտյան Հայաստանի հայաշատ նահանգներն ամայացան: Հարյուր հազարավոր մարդիկ դարձան անօթևան թափառականներ, հանգրվան գտան ռուսական հողում, ցրվեցին աշխարհի տարբեր մասերում:

Արևմտահայության զանգվածային կոտորածների կազմակերպիչն ու հրահրողներն էին երիտթուրքական կառավարությունը, թուրքական ռեակցիոն դասակարգերը: «Թուրք կամ տաճիկ մասսան երբեք և ոչ մի դեպքում չի եղել, որ ինքնաբերաբար որևէ մասսայական հարձակում գործած լինի իր հարևան ռայա ժողովրդի վրա: Այդ միշտ հանապազ թելադրվել է վերևից,

¹ Դանիել Վարուժան (Չալոզբայրյան) (1884-1915) – բանաստեղծ, գրական-հասարակական գործիչ, Մեծ եղեռնի զոհ, հիմնական ստեղծագործությունների ժողովածուները՝ «Սարսուռներ», «Ճեղին սիրտը», «Հեթանոս երգեր», «Հացին երգը» - Ա. Կ.:

² Կոմիտաս (Մողոմոն Մողոմոնյան) (1869-1935) – ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրը, երգահան, երաժիշտ-բանահավաթ, ստեաբան, խմբավար, մանկավարժ - Ա. Կ.:

քարծրից, սուլբանների և նրանց պնակալեզ արքանյակների՝ վաշաների և շեյխերի կողմից, և տաճրի մասսաները, տարաքախտաբար, ենթարկվել են այդ արյուն քամող պրովոկատորներին...», - գրել է բուլշևիկյան «Կարմիր դրոշակ» (Մոսկվա) թերթը (1919, 10 օգոստոսի. , N 13):

Այն, ինչ կատարվեց արևմտահայության հետ Առաջին համաշխարհային պատերազմի դժնդակ տարիներին, նոր ժամանակների պատմության մեջ ամենամաստայական գեներոլոլի քաղաքականության սկիզբն էր, որն ավելի մեծ մասշտաբներով և ավելի կատարելագործված մեթոդներով Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կրկնեցին գերմանական ֆաշիստները հրեաների, սլավոնական և այլ ժողովուրդների նկատմամբ:

Հիրավի, համաշխարհային պատմության մեջ 1915 թ. Մեծ եղեռնը կարելի է համեմատել Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին գերմանական ֆաշիստների կողմից կատարված ավելի մեծ մասշտաբի զանգվածային սպանությունների՝ 12 միլիոն մարդկանց զագանային ոչնչացման հետ:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Անտանտի կառավարող շրջանները, բուրժուական գործիչները, բացի փարիսեցիական ճառերից ու երկդիմի, նենգ քաղաքականությունից, ոչինչ չձեռնարկեցին թուրքական ոճրագործների ձեռքը բռնելու, արևմտահայությունը կործանումից փրկելու ուղղությամբ: Եվ դա հասկանալի է, քաղաքական պատերազմ սանձազերծելու, նոր երկրներ գավթելու, գաղութներ նվաճելու, ժողովուրդներին ստրկացնելու տենդով բռնված իմպերիալիստական մեծ տերությունների կառավարողներին հնարավորություն էր ընձեռնվում դիվանագիտական գաղտնի սակարկության առարկա դարձնելու այն տարածքը, որի տերը՝ արևմտահայությունը, տեղահանվել կամ ոչնչացվել էր: Նոր խաբեության զոհ դարձած հայկական բուրժուական այն ոչ հեռտես քաղաքականագետները, որոնք ակնկալություններ ունեին իմպերիալիստական Արևմուտքից, նրա հետ էին կապում թուրքական լծից հայ ժողովրդի ազատագրման հույսերը:

Արևմտյան իմպերիալիզմն իր սանձազերծած զավթողական պատերազմով, Հայկական հարցում վարած ավանդական աղետարեք քաղաքականությամբ մեծապես նպաստեց արևմտահայության գեներոլոլին: «Բրիտանական կառավարության քաղաքականությունը, - հետագայում խոստովանել է Լլոյդ Ջորջը¹, - ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-1897 և 1909 թթ. արսափելի սպանդներին և 1915 թ. ամենաստակալի կոտորածին»:

Այն ժամանակվա թուրքական հանցավոր կառավարողների ոճրագոր-

¹ Դեյվիդ Լլոյդ Ջորջ (1863-1945) - բրիտանացի պետական և քաղաքական գործիչ, դիվանագետ, լիբերալ կուսակցության ղեկավար, 1890-1945 թթ.՝ Խորհրդարանի Համայնքների պալատի անդամ, 1905-1908 թթ.՝ առևտրի նախարար, 1908-1915 թթ.՝ ֆինանսների նախարար, 1916 թ.՝ ոսգմական նախարար, 1916-1922 թթ.՝ վարչապետ - Ա.Կ.:

ծուրքյան ու նրանց իմպերիալիստական հովանավորողների հետևողական դատապարտմամբ հանդես եկան համաշխարհային սոցիալիստական ու բանվորական շարժման ականավոր գործիչները, պատերազմի դեմ պայքարող, ժողովուրդների միջև բարեկամության և խաղաղության հաստատմանը նվիրված մարտիկները, առաջադեմ հասարակայնությունը:

1916 թ. հուլիսի 4-ին հակապատերազմական պրոպագանդայի և գործունեության ամբաստանությանը բանտ նետված գերմանական պրոլետարիատի առաջնորդ Կարլ Լիբկեռնցտը դատարանին հղած իր նամակում քարքարի վրա չէր բողոքում պատերազմում Գերմանիայի հետևապնդած «ազատագրական միսիայի» մասին խաբեությունից, դատապարտում դաշինքը Թուրքիայի հետ, որն «իր ձեռքերը բարախել է հայերի արյան մեջ և այս պատերազմի ժամանակ անսահմանորեն ավելացրել է իր մեղքը, ամենաղածան կոտորած սարքերով դժբախտ հայ ժողովրդի նկատմամբ»:

Թուրքական ջարդարարական քաղաքականությանը հանդես եկավ Բուլղարիայի սոցիալ-դեմոկրատական (տեսնչակների) պարտիան, որը պայքարում էր միլիտարիզմի և պատերազմի դեմ, պահպանել էր իր հավատարմությունը պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներին: Իրենց 21-րդ համագումարում բուլղարական սոցիալիստները բողոքի հատուկ բանաձև ընդունեցին «հայ ժողովրդին թուրքական բարբարոսական օլիգարխիայի կողմից ոչնչացնելու դեմ»:

Բուլշևիկները, ռուս առաջադեմ, դեմոկրատ գործիչները հանդես էին գալիս մահվան դատապարտված արևմտահայության բեկորները փրկելու պահանջով, անարգանքի սյունին էին գամում թուրքական ջարդարարների և նրանց իմպերիալիստական հովանավորողներին: Հյուսիսային Կովկասում լույս տեսած «Թերեր» թերթի էջերում 1916 թ. սկզբին հրապարակված իր հողվածաշարում ականավոր բուլշևիկ Ս.Կիրովը բողոքի խորխտ ձայն բարձրացրեց ի պաշտպանություն հայ «ռառապայալ ժողովրդի»:

Հայ բուլշևիկները, որ ի սկզբանե դեմ էին եվրոպական դիվանագիտությանն ապավինելուն, ցարիզմի միջոցով թուրքահայ դատը լուծելու դաշնակցական մտայնությանն ու գործելակերպին, դատապարտելով իմպերիալիստական պատերազմը՝ որպես զավթողական, հակաժողովրդական պատերազմ, մերկացնում էին իմպերիալիստական կառավարությունների կողմից կոորդ ազգերին ազատագրելու մասին պատերազմի ժամանակ հռչակված լուսնալուսնի ողջ խաբեությունը: Ժողովրդական մասսաներին դատախարակելով իմպերիալիստական պատերազմի և նրա կազմակերպիչների դեմ ռևոլյուցիոն պայքար մղելու ոգով, բուլշևիկները նրանց զգուշացնում էին այն վտանգից, որ հայ ժողովրդի արևմտյան հատվածը, թուրք բարբարոս կառավարության տիրապետության անկ գտնվելով, ամեն վայրկյան կարող էր զոհ դառնալ թուրքական յարադանին: Սակայն, ինչպես նշում է Ս.Շահունյանը. «Մեր «ազգասերները», ընդհակառակը, կարծես դիտմամբ ամեն ջանք գործ էին դնում...

հող պատրաստելու՝ սուլյանի ու Նիկոլայ Ռոմանովի¹ դժոխային ծրագրերը իրականացնելու համար» (Երկեր, հ. 2, էջ 408):

Վ.Լ.Լենինը, բոլշևիկյան պարտիան դատապարտում էին Գուչկով-Միլյուկովի² բուրժուական կառավարության՝ ինպերիալիստական պատերազմը շարունակելու քաղաքականությունը, նրա գործելակերպը, որը ոչ մի նպատակ չունի ինչ-որ քայլ կատարելու Հայաստանի ինքնորոշման, հայ ժողովրդի կենսական շահերը հարգելու ուղղությամբ: Հայ ժողովրդի մեծ քարեկամ Վ.Լ.Լենինը լիակատար ազատության պահանջ էր դնում «ամբողջ Հայաստանի նկատմամբ» (Երկեր, հ. 26, էջ 58):

1917 թ. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռեյուցիան եզրափակեց մարդկության «նախապատմությունը» և դրեց նրա նոր, իսկական պատմության սկիզբը: Ռուսաստանում պրոլետարիատի հայրանակն ազդարարեց աշխարհում առաջին սոցիալիստական պետության, նոր քաղաքակրթության ծնունդը: Հանճարեղ Լենինի գլխավորած սովետական կառավարության առաջին իսկ քայլը՝ հաշտության մասին դեկրետը, ժողովուրդներին էլք ցույց տվեց ինպերիալիստական պատերազմի սպանդանոցից: Պատերազմի դեմ, սոցիալիստական ռեյուցիայի հայրանակի համար իր պայքարը բոլշևիկյան պարտիան խարսխում էր «ազատություն բոլոր ժողովուրդներին, բոլոր ազգությունների բանվորների ու գյուղացիների եղբայրական միության» սկզբունքի վրա:

Մինչդեռ երիտորրբական կլիկը ջարդել էր արևմտահայերին, ավերել նրանց շենքերը, գրկել նրանց սեփական հողից ու ջրից, ինպերիալիստական դիվանագետները խոսքով հայանպաստ փարիսեցիություն էին անում, իսկ գործով զաղոբային նոր զավթումներ իրականացնում, ապա Սովետական Ռուսաստանի կառավարությունը՝ Վ.Լ.Լենինի ստորագրած «Թուրքահայաստանի մասին» դեկրետով հռչակեց, որ պաշտպանում է Արևմտյան Հայաս-

¹ Նիկոլայ II (1868-1918) — Ռուսաստանի 14-րդ և վերջին կայսրը (1894-1917) - Ա.Կ.:

² Պետրոգրադյան բանվորական և զինվորական պատգամավորների խորհրդի հետ բանակցությունների արդյունքում 1917 թ. մարտի 2-ին Ռուսաստանի Պետական դուման ստեղծեց Ժամանակավոր կառավարություն, որի կազմի մեջ էին արտգործնախարար Պավել Միլյուկովը (1859-1943) և ռազմական նախարար Ալեքսանդր Գուչկովը (1860-1935): Ապրիլի 18-ին Միլյուկովը հայտագիր ներկայացրեց Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին առ այն, որ Ռուսաստանը շարունակելու է պատերազմը մինչև իր հաղթական ավարտը, ինչն առաջացրեց համատարած ցույցեր կառավարության դեմ՝ պատերազմի դադարեցման և Միլյուկովի ու Գուչկովի հրաժարականի պահանջով: Մայիսի 5-ին նրանք դուրս եկան կառավարության կազմից, Ժամանակավոր կառավարության և Պետրոգրադյան խորհրդի միջև համաձայնության արդյունքում ստեղծվեց կոալիցիոն կառավարություն - Ա.Կ.:

տանի «ազատ ինքնորոշման իրավունքը»: Սովետական կառավարությունը պահանջում էր ապահովել թուրքահայերի վերադարձն իրենց հայրենի հողերը: Վ.Լ.Նեմին ասում էր. «Հանցագործ է այն կառավարությունը, որը զինադադար չի ուզում...» (Երկեր, հ. 26, էջ 305): Իսկ թուրքական կառավարողները զինադադար չէին ուզում, նրանք ձգտում էին նոր գավրումների, նոր արյունահեղության: Սովետական պետության դեմ միջազգային իմպերիալիզմի հրահրած ինտերվենցիայի առաջին իրականացնողներից մեկը համոխացավ երիտթուրքական կառավարությունը:

Անդրկովկասի հակառուսոյցիոն պարտիաները՝ մենշևիկները, մուսավաթականները, դաշնակները, դավաճանելով աշխատավորների շահերին, երկրամասն անջատեցին Ռուսաստանից և հեշտացրին թուրքական ու մյուս իմպերիալիստական ինտերվենցիան: «Դաշնակցությունը փոխանակ հեղափոխական Ռուսաստանի հետ դաշն կապելու, - գրել է Վահան Տերյանը, - դաշն կապեց հակահեղափոխական և արյունաբոլոր բեգերի ու դավաճան մենշևիկների հետ... Արյունաբոլոր իմպերիալիստ Տաճկաստանն էլ հենց այդ էր ուզում: Երբ նա տեսավ, որ Կովկասը կտրվեց Ռուսաստանից, իսկույն նեք զորքը շարժեց առաջ և գրավեց Կովկասի հայաբնակ երկրները»: Նա գտնում էր, որ «...միայն Ռուսաստանի բանվորական ու գյուղացիական խորհուրդների իշխանության կարմիր զնդերն են, որ կարող կլինեն ազատություն ավետել արյունամեղեկ երկրին» («Կոմունիստ» (Մոսկվա), 1918, 22 հունիսի):

Ելնելով Անդրկովկասի ժողովուրդների շահերից, երկրամասը օտարերկրյա զավթիչների ներխուժումից պաշտպանելու ձգտումով տոգորված, Սովետական Ռուսաստանի կառավարությունը անդուլ աշխատում էր, անշահախնդիր օգնություն ցույց տալիս երկրամասի աշխատավորներին՝ օտարերկրյա ինտերվենտների և ներքին հակառուսոյցիայի դեմ ազգային ու սոցիալիստական ազատագրման համար նրանց մղած պայքարում:

1918 թ. հունվարին նյութական ծանր պայմանների մեջ գտնվող Սովետական Ռուսաստանը 6 միլիոն ռուբլի տրամադրեց Ռուսաստանում և Հյուսիսային Կովկասում ապաստանած հայ գաղթականներին՝ օգնություն կազմակերպելու համար: Երբ թուրքական զավթիչները ներխուժեցին Հայաստան, միակ կառավարությունը, որ վճռակամորեն բողոքեց թուրքական վայրագությունների դեմ, Սովետական Ռուսաստանի կառավարությունն էր:

1918-1920 թթ. Դաշնակցության տիրապետության օրոք Հայաստանում, Սարգիս Կասյանի¹ խոսքերով ասած, «գոյությունը դարձել էր անեծք, կյանքը՝

¹ Սարգիս Կասյան (Տեր-Կասպարյան) (1876-1937) – քաղաքական և պետական գործիչ, հրապարակախոս, Հնչակյան կուսակցության անդամ (1903-1904), 1905-ից սոցիալ-դեմոկրատ, խմբագրել է «Բանվորի ձայնը» (Բաքու), «Կայծ», «Նոր խոսք» (Թ.) թերթերը, Հայաստանը խորհրդային հռչակած Հեղկոմի նախագահ, համրես է եկել գաղափարի հակառակորդների նկատմամբ բռնության միջոցներ գործադրելու դեմ, բռնադատվել է, հետմահու արդարացվել - Ա.Կ.:

ղծիսը»։ Հայաստանը վերածվել էր սովի ու բշվառության, որբերի ու համաճարակների, արցունքի ու արյան երկրի։

Հայ ժողովրդին փրկություն բերեց ռեյուցիոն հյուսիսը՝ մեծ Լենինի գլխավորած բանվորագյուղացիական Սովետական Ռուսաստանը, որի օգնությամբ նա տապալեց դաշնակցական կառավարությունը և 1920 թ. նոյեմբերի 29-ին հաստատեց սովետական կարգեր։ Վ.Լ.Լենինը առաջինը ողջունեց «հմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Հայաստանին», քաղաքական ու տնտեսական անշահախնդիր օգնություն կազմակերպեց անդունդի եզրին կանգնած մեր ժողովրդին։

Սովետական իշխանության տարիներին, կոմունիստական պարտիայի քաղաքականության շնորհիվ, իսկական վերածնունդ ապրեց հայ ժողովուրդը։ Իր բազմադարյան պատմության ընթացքում առաջին անգամ, խաղաղ կյանքի պայմաններում, եղբայրական ժողովուրդների սոցիալիստական մեծ ընտանիքում նա շնչեց լիարթք, դրսևորեց իր բոլոր ունակությունները հոգևոր և նյութական արժեքների ստեղծման ասպարեզում։ Հայաստանը դարձավ սոցիալիստական առաջավոր ռեպուբլիկա։

Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը 1913 թ. համեմատությամբ աճել է 95 անգամ, իսկ 1919 թ. համեմատությամբ՝ 235 անգամ։ Մեր ռեպուբլիկայի արդյունաբերական արտադրանքի բազմաթիվ տեսակներ այժմ արտահանվում են աշխարհի 62 երկրներ։

Արդյունաբերության զարգացման հետ մեկտեղ աճում և սովարանում են բանվոր դասակարգի շարքերը, ավելանում է մասնագետների թիվը։ Ստեղծվել է ազգային տեխնիկական ինտելիգենցիայի, արտադրության հմուտ ու տաղանդավոր հրամանատարների մի մեծ բաճակ։ Ներկայումս քարճրագույն և միջակարգ կրթությամբ մասնագետների թիվը հասնում է մոտ 96 հազարի։ Ռեպուբլիկայի մայրաքաղաք Երևանն այսօր դարձել է երկրի արդյունաբերության, գիտության և կուլտուրայի խոշորագույն օջախներից մեկը։ Ժամանակակից քաղաքներ են դարձել Լենինականն ու Կիրովականը, Ալավերդին ու Ղափանը, Հայաստանի քարտեզի վրա երևան են եկել նոր քաղաքներ ու ավաններ։

Սովետական կարգերը մեծագույն հեղաշրջում առաջ բերեցին նաև գյուղերում։ Գյուղի կոլեկտիվացումը, արտադրական պրոցեսների մեքենայացումը, հողամշակման մեջ ագրոտեխնիկայի ու քիմիական գիտության կիրառումը հիմնովին կերպարանափոխել են գյուղատնտեսությունը։ Սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման համար նոր, պայծառ հեռանկարներ են բաց անում ՍՄԿՊ Կենտկոմի մարտյան պլենումի որոշումները, որոնք մեծ գոհունակությամբ ընդունվեցին Հայաստանի աշխատավորների կողմից։

Սովետական Հայաստանում փարքամորեն ծաղկում են ազգային կուլտուրան, գիտությունը, արվեստն ու գրականությունը։ Նախասովետական Հայաստանը չունեիր ոչ մի գիտահետազոտական հիմնարկ, իսկ այժմ այդ հիմնարկների թիվը հասնում է 85-ի, որտեղ աշխատում են 6 500 գիտնական-

ներ, այդ թվում՝ 58 ակադեմիկոսներ, գիտության ավելի քան 200 դոկտորներ և 1817 թեկնածուներ: Մեր ռեսպուբլիկայի գիտնականների շատ աշխատանքներ լայնորեն հայտնի են համաշխարհային գիտական շրջաններին:

Բարձր զարգացման է հասել ժողովրդական կրթությունը: Հայաստանում այժմ գործում են 1247 ութամյա և լրիվ միջնակարգ դպրոցներ՝ ավելի քան 450 հազար աշակերտներով, 42 միջնակարգ մասնագիտական ուսումնարաններ և 11 բարձրագույն ուսումնական հաստատություններ: Ռեսպուբլիկայում 10 հազար բնակչին ընկնող ուսանողների թիվը 1963-1964 ուսումնական տարում կազմում էր 141 մարդ, իսկ Ավստրիայում՝ 47, Անգլիայում՝ 44, Գերմանական Ֆեդերատիվ Ռեսպուբլիկայում՝ 40, Թուրքիայում՝ 25, Իրանում՝ 11:

Մեր ռեսպուբլիկան պատված է քատրոնների, ակումբ-գրադարանների, կուլտուրայի պալատների ու տների, կինոթատրոնների խիտ ցանցով:

Արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտուրայի անընդհատ զարգացումը պայմանավորեցին բնակչության նյութական բարեկեցության ու կուլտուրական մակարդակի անշեղ բարձրացումը: Դրա լավագույն վկայությունը Սովետական Հայաստանի բնակչության արագ աճն է: 1920 թ. Հայաստանի բնակչությունը 770 հազար մարդ էր, իսկ այժմ՝ մոտ 2 մլն 200 հազար:

Սովետական Հայաստանն այսօր դարձել է սփյուռքահայ աշխատավորության փարոսը: Դարեր ի վեր հայ ժողովրդի համար կործանարար արտագաղթը վերածվել է թուրքական ջարդարարների մեղքով աշխարհի տարբեր երկրներում սփռված հայ տարագիրների ներգաղթի՝ դեպի իրենց մայր հայրենիքը՝ Սովետական Հայաստան: Սովետական իշխանության տարիներին հայրենիք են դարձել մոտ 200 հազար մարդ: «Օտար երկիրներում տակ ապրող հայրենիքի կարտոջ քաշող պանդուխտ հայուն հառաչանքն ու իղձն է եղել հայրենիք ունենալը: Դարավոր այդ իղձն իրագործված է ազատագրված նոր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի փառահեղ իրականությամբ... Ուրքան քախտավոր է սփյուռքի հայությունը, որ արժանացած է հայրենիքի կամչին» («Լրաբեր» (Մ.Յ.), 1962, 27 սեպտեմբերի): Այսպիսին է սփյուռքահայ աշխատավորների դիրքորոշումը:

Ժողովրդական տնտեսության, գիտության ու կուլտուրայի զարգացման, աշխատավորության կենսամակարդակի հարաճուն բարձրացման գործում հայ ժողովրդի ձեռք բերած հիրավի սովետական հաջողություններն ամենից առաջ սովետական կարգերի արդյունք են, սովետական բոլոր ժողովուրդների եղբայրական բարեկամության ու սոցիալիստական համագործակցության արգասիքը:

Արդարև, ամենաթանկ նվաճումը բարեկամությունն է, հավերժ և անխախտ բարեկամությունը, որ կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ սովետական իշխանության տարիներին հաստատվել է մեր երկրի բոլոր ժողովուրդների միջև: Հայաստանում հայերի հետ միասին ու ուսի տված, եղբայրաբար, համերաշխ ապրում և աշխատում

են ռուսները և աղբրեջանցիները, վրացիներն ու ուկրաինացիները, բելոռուսներն ու քրդերը: Անդրկովկասի սովետական բոլոր ժողովուրդների բարեկամությունը ներկայումս ստացել է նոր որակ, նոր բովանդակություն, դարձել է իսկական եղբայրություն: Հայ ժողովուրդը երախտապարտ է ռուս ժողովրդին՝ իր անշահախնդիր բարեկամին և ավագ եղբորը:

Սովետական Հայաստանի աշխատավորները մեր երկրի մյուս ժողովուրդների հետ միասին ակտիվորեն պաշտպանում են սովետական կառավարության լենինյան արտաքին քաղաքականությունը: Սովետական Միությունը սոցիալիստական մյուս երկրների հետ միասին հետևողականորեն պայքարում է խաղաղության համար, միջազգային լարվածության թուլացման և սպառազինությունների մրցակազմի դադարեցման համար: Սոցիալիզմի լազերը, աշխարհի բոլոր կոմունիստական ուժերը հանդես են գալիս ճնշված ժողովուրդների իրավունքների պաշտպանությամբ, հակահարված են տալիս միջազգային իմպերիալիզմի ավանտյուրիստական դավադրություններին: Սովետական Միությունը բազմակողմանի օգնություն է ցույց տալիս վիետնամական ժողովրդին՝ ամերիկյան իմպերիալիզմի դեմ նրա արդարացի և հերոսական պայքարում:

Սովետական Հայաստանի աշխատավորները մեր երկրի մյուս ժողովուրդների հետ միասին պաշտպանում են կոմունիստական պարտիայի և սովետական կառավարության լենինյան արտաքին խաղաղասիրական քաղաքականությունը, բոլոր երկրների և պետությունների ու ամենից առաջ հարևան երկրների հետ հաշտ ու խաղաղ ապրելու քաղաքականությունը:

Հայ ժողովուրդը, մոխիրներից հառնելով, սովետական իշխանության 45 տարիների ընթացքում վիթխարի նվաճումներ է ձեռք բերել, կերտել իր երջանիկ կյանքը: Ել ավելի մեծ խնդիրներ են կանգնած նրա առջև ներկայումս: Սովետական Միության եղբայրական ժողովուրդների համերաշխ ընտանիքում Հայաստանի աշխատավորները ջանք չեն խնայում մեր հայրենիքն ավելի շեն ու ծաղկուն դարձնելու, կոմունիզմի կառուցման հոյակապ ծրագիրը իրականացնելու համար:

ԱՐԵՎՍԱՆՀԱՅՈՒԹՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԱՈՍԱԿԻՆ ՀԱՄԱՆԵՆԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ՝¹

Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության քառուղիներում գոյատևման, սոցիալական ու ազգային ազատագրության համար մարտառումների դաժան ուղի է անցել, օրհասական պահեր է ապրել: Նա առանձնապես ծանր փորձության ենթարկվեց հիսուն տարի առաջ՝ իմպերիալիստների սանձազերծած Առաջին համաշխարհային պատերազմի դժնդակ տարիներին:

Հիսուն երկար ու ծիգ տարիներն անկարող են եղել մոռացության տալու այն ողբերգությունը, որ ապրեց հայ ժողովրդի արևմտյան հատվածը 1915 թ.: Եվ այսօր զանգվածային ոճիրից վերապրող հայ մարդիկ, երեկվա որբերը, նրանց զավակներն ու որբերը, Սովետական Հայաստանում թե Սփյուռքում արդար գայրույթով են հիշում թուրքական ռեակցիոն կառավարողների ու նրանց իմպերիալիստական հովանավորողների ժողովրդասպան չարագործությունները:

Դարեր շարունակ թուրքական սուլթաններն իրենց ներքին քաղաքականությունը խարսխում էին ռասայական և կրոնական սանձարձակ խտրականության վրա, միջնադարյան, ֆեոդալական նորմաներով կառավարվող օսմանյան պետականության հարվածներն ուղղում ճնշված ժողովուրդների՝ հայերի, արաբների, սլավոնների արդարացի ազատագրական պայքարը ճնշելու նպատակին: Իրենց ռեակցիոն, բռնակալական տիրակալությունը պահպանելու գլխավոր և մշտական զենքը նրանք տեսնում էին յաթաղանի միջոցով իրականացվող ռասիզմի, գործնականում թուրք ազգի քացառիկության քարոզը իրականացնելու մեջ: Երեսուն տարի կառավարած և «արյունոտ» սուլթանի տիտղոսն ստացած Աբդուլ Համիդը հարյուր հազարավոր հայերի խողխողեց:

1908 թ. Թուրքիայում կատարված հեղաշրջումից հետո իշխանության գլուխ անցած երիտթուրքական «Ժրթիհադ»՝ շուլիմիստական գաղափարներ և գործելակերպ որդեգրած պարտիան երկրում և ոչ մի էական վերափոխություն չիրականացրեց: Սուլթան Աբդուլ Համիդի ժամանակվա համեմատությամբ աշխատավորության դրությունը ոչնչով չբարելավվեց: Ազրաբային ու լոռաում շահագործման ֆեոդալական, թուրքական ձեռքը շարունակվում էին: Առանձնապես սրվել էր ազգային հարցը: Արտաքին քաղաքական պարտություններ կրելով Աֆրիկայում, Բալկաններում և ներքին կյանքում մերձենալով հետադիմական ուժերի հետ, երիտթուրքական շուլիմիստները ձգտում էին պահպանել թուրքական բռնակալական կայսրությունը: Նրանք իրենց կատարությունն ուղղեցին Օսմանյան կայսրության ո՛չ թուրք ժողովուրդների, մաս-

¹ Կիրակոսյան Ջ. Արևմտյան ողբերգությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին // «Լենինյան ուղիով» (Ե.), 1965, N 4, էջ 41-54, «Լրաբեր» (Ե.Յ.), 1965, 25, 29 մայիսի, 5 հունիսի:

նավորապես հայ ժողովրդի դեմ: Ռդեզերելով «Թուրքիան՝ բուրքերի համար» նշանաբանը՝ նրանք պետական քաղաքականության աստիճանի բարձրացրին պանիսլամիզմի, պանբուրքիզմի գաղափարախոսության պրոպագանդան և պրակտիկան:

Արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարը հաղթահարելու, նրանց ազգային և կուլտուրական ինքնությունն անտեսելու և ոտնահարելու, պանբուրքիզմի կենսագործման ճանապարհին հայ ժողովրդի դիմադրությունը հրով ու սրով վերացնելու քաղաքականությունը դրվեց գործնական հիմքի վրա: Պատմական փաստերը հաստատում են, որ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը երիտրուրբական կլիկն արդեն մշակել էր արևմտահայության բնաջնջման կանխբալական ծրագիրը: Այդ թովհուղակությամբ հատուկ որոշում էր ընդունվել տակավին 1911 թ. Սալոնիկում կայացած իրենց համագումարում:

Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմն այն պատեհ առիթն էր, որ պետք է ձեռքբերվեր ժողովրդասպան պլանն իրականացնելու և, միաժամանակ, այդ գործողությունը պատերազմական իրավիճակով պատճառարանելու համար: Չէ՞ որ զենոցիդի (բառացի՝ ցեղասպանություն) քաղաքականությունը մեծ մասշտաբներով գործնական հիմքի վրա է դրվում պատերազմների ժամանակ: Թուրքական իմպերիալիստները Գերմանիային փարվելով ձգտում էին իրագործել իրենց էքսպանսիոնիստական, պանբուրքիստական ֆանտաստիկ պլանները՝ զավթել Անդրկովկասը, հասնել Վոլգայի ափերը և Միջին Ասիա:

Համաշխարհային ասպարեզում տնտեսական, ռազմական և քաղաքական տեսակետից ելակետային դիրքեր նվաճած իմպերիալիստական մեծ տերությունների համեմատությամբ, թուրքական իմպերիալիզմը լրար էր, որոշիչ դեր չէր կարող խաղալ միջազգային կյանքում: Բայց այն ռազմատենչ ձգտումներն ու գործելակերպը, որ դրսևորում էր այդ իմպերիալիզմը, մահացու վտանգ էին հարևան երկրների և, մասնավորապես, հայ ժողովրդի համար: «Մեր մասնակցությունը համաշխարհային պատերազմին արդարացվում է մեր ազգային իղեալով», – պատերազմի մեջ մտնելու օրը հայտարարեցին երիտրուրբական կառավարողները: Նրանք հայտարարում էին, որ ձգտելու են հաստատել «կայսրության բնական սահմանները, որոնք իրենց մեջ կանգնեն և կմիավորեն մեր ռասայի բոլոր ճյուղերը»: Այս նպատակին հասնելու ճանապարհին թուրքական մարտաշունչ շովինիզմն առաջին հերթին ծրագրել էր ոչնչացնել հայերին, կայսրությունը վերակազմել միայն զուտ «համաբուրբական հիմքի վրա»:

Արևմտահայության կեսից ավելին ապրում էր Արևելյան Անատոլիայի վեց մահանգներում: Մեծ Հայքի իր բնօրրանում, կորճած իր պապենական հողին, մահու և կենաց կռիվ մղելով իր տարրական իրավունքների, սոցիալական և ազգային ազատության համար, նա իր հայացքը միշտ հատում էր դեպի հյուսիս՝ իր ավանդական հովանավոր Ռուսաստանին: Պատերազմը Թուր-

քիայի դեմ նրան ներկայանում էր որպես փրկություն, բուրբական ջարդաբարքների դարավոր լուծը թորափելու մի միջոց:

Ռեալ իրականությունը, ազատագրական պայքարի կոնկրետ պայմանները հաշվի չառնելով, ռուսահայ բուրժուազիան, նրա կուսակցությունները, սրանց հետևից ընթացող հայ հասարակական ուժերը կարծում էին, թե հասել է պատմական պահը, որպեսզի ամբողջ հայ ժողովուրդը մեկընդմիջա ընտրություն կատարեր արյունոտ թուրքական ֆեոդալական բռնակալության և ցարական Ռուսաստանի՝ ճիշտ է, նույնպես բռնապետության, բայց և միաժամանակ Թուրքիայի համեմատությամբ զարգացման ավելի բարձր մակարդակի վրա գտնվող, պատմական փորձով դարավոր հովանավորի միջև: Անտեսվում էր այն հանգամանքը, որ «պատերազմը մղում են թուր մեծ տերությունները՝ աշխարհը կողոպտելու, բաժանելու համար, շուկաների համար, ժողովուրդներին ստրկացնելու համար», որ «Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի հաղթանակը» նույնպես «հերձամահ կանի Հայաստանին»¹:

«Այսօրվա ահավոր կռիվ սկզբից իսկ մեզ բոլորիս համար պարզ է այն, գուցե և դառը, սակայն ակներև հանգամանքը, - 1914 թ. հոկտեմբերին գրել է Վահան Տերյանը, - որ մեր առջև դրված է ոչ միայն մեր ազգային կուլտուրական ապագայի հարցը, այլև հայ ժողովրդի սոսկ ֆիզիկական գոյության խնդիրը»²:

Թուրքական դժնի իրականությանը ըաջաժամոթ մարդիկ կամխագզում էին, թե ինչպիսի անելանելի վիճակ կստեղծվի արևմտահայության համար պատերազմական գործողությունների, հակահայկական շովինիստական թշնամության գրգռման հետևանքով: Հիրավի, պատերազմը մի պատեն առիթ էր, որպեսզի էնվեր-Թալեսթ-Ջեմալ երիտթուրքական կլիկը ձեռնամուխ լիներ արևմտահայության զանգվածային տեղահանության և բնաջնջման ոճրապարտ ծրագրի իրականացմանը: Այդ մասին թուրքական կառավարության արձակած գաղտնի հրամաններից մեկում ուղղակի ասված էր, որ Իթթիհադը «որոշել է ամբողջովին ոչնչացնել Թուրքիայում բնակվող հայությանը: Այս հրամանի ու որոշման հակառակորդները պետական պաշտոնական կազմում չեն կարող մնալ: Կին, երեխա, ծերունի նկատի չառնելով, խզել խայրին ականջ չդնելով, ոչնչացման միջոցները որքան էլ զարհուրելի լինեն, նրանց գոյությանը վերջ պետք է տալ»: Բազմաթիվ այլ հրամաններում թուրքական արյունկլգակ կառավարողները տեղական իշխանություններից պահանջում էին անխնայ ոչնչացնել հայ մանուկներին ու կանանց, երիտասարդներին ու ծերերին: Այդ նպատակով ստեղծված երիտթուրքական գործադիր հանձնաժողովի պլանով մախ զինաթափվեց, քիկունքային աշխատանքների ուղարկվեց, ապա մորթոտվեց օսմանյան բանակում ծառայող 50-60 հազարի հասնող հայ երիտասարդությունը: 1915 թ. ապրիլի 24-ից սկսած՝ կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսից տարագրվեցին, ապա աքսորի ճանապարհին

¹ Լենին Վ.Ի. Երկեր, հ. 21, էջ 560-562:

² «Աշակ» (Թ.), 1914, 2 հոկտեմբերի:

խումբ-խումբ ոչնչացվեցին հայ անվանի մտավորականները՝ գրողները, բժիշկները, իրավաբանները, արվեստագետները, որոնք մեծ ծառայություն էին մատուցել ոչ միայն հայկական, այլև բուրբակյան մշակույթի զարգացման գործին: Հայ ժողովուրդը կորցրեց այնպիսի ականավոր դեմքեր, որպիսիք են՝ Գրիգոր Զոհրապը, Միամանրոն, Գանինի Վարուժանը, Կոմիտասը, Ռուբեն Սևակը՝ և շատ ուրիշ բանբարավոր գործիչներ:

Այնուհետև ամբողջ 1915 և հետո 1916 թթ. ընթացքում ամենայն վանդալությամբ տեղահանվեց, Միջագետքի անապատները արտորվեց ու բնաջնջվեց արևմտասիայության մեծ մասը: Արևմտյան Հայաստանը լիապես և ընդմիջտ կլանելու, հայ ժողովրդի ազգային ընդհանրությունը ոչնչացնելու, նրա ազատագրական միանգամայն արդարացի ձգտումները խեղդելու վաղորդ մշակված ծրագիրն իրականացնելու ճանապարհին բուրբակյան ջարդարարները գործադրեցին ճիզվիտական մեթոդներ, եղեռնական եղանակներ, երկխաներին խեղդեցին գետերում, մայրերին այրեցին խարույկների վրա, ավերեցին ու ոչնչացրին պատմական կոթողները, կուլտուրայի մեծագույն արժեքները: Արևմտյան Հայաստանի հայաշատ մահանգներն ամայացան: Հարյուր հազարավոր մարդիկ դարձան անօթեան քափառականներ, հանգրվան գտան ռուսական հողում, օտար երկնակամարների տակ:

Արդեն 1915 թ. օգոստոսի 31-ին Թալեաթը ցինիկորեն հայտարարում էր, թե Հայկական հարց այլևս գոյություն չունի, թե իրենք այդ հարցը «լուծեցին» երեք ամսում, ինչը չէր կարողացել անել Արդուլ Համիդը երեսուն տարում: Թալեաթին լրացնում էր մյուս արեախումը՝ Էնվերը, պահանջելով մահի ճիւղաններից մազապուրծ և կենդանի մնացած հայերին ցրել կայսրության տարբեր մասերում, նրանց ձուլել բուրբերի հետ: Թուրքական «Թանհին» թերթը 1915 թ. աշնանը կառավարությանը կոչ էր անում «ոչնչացնել կամ բռնի կերպով մահմեդականացնել հայ կանանց Թուրքիայում»:

Այո՛, ամենուրեք՝ Խուսուսում թե Մանազկերտում, Բուլանխում թե Խլաթում. «...կոտորածներու զլուխ կանգնած էր իսկ կառավարությունը»²: Հայաստանի արխիվներում պահպանվում են բազմաթիվ ականատեսների վկայություններ իրենց հայրենի գյուղերում և քաղաքներում բուրբակյան իշխանությունների կատարած գաղտնի վայրագությունների մասին: Առանձին նկարագրություններ այնպիսի փաստեր են վկայակոչում, որ մարդկային բանականությունն ու խիղճը անուժ են մույնիսկ ընկալելու այն ամենը, որ հայ ժողովրդի հետ կատարում էին բուրբակյան ճիզվածքները: 1915 թ. սեպտեմբերի 21-ին տրված իր հրամանում մարդասպան Թալեաթը Հալեպի մահանգապետից պահանջում էր հայ երեխաների որբանոց չբացել, «զզացմունքներին ան-

¹ Ռուբեն Սևակ (Չիլինկիրյան) (1885-1915) – բանաստեղծ, արձակագիր, բժիշկ, Մեծ եղեռնի զոհ, հիմնական բանաստեղծությունների ժողովածուները՝ «Կարմիր գիրքը», «Արջին հայերը» – Ա. 4.:

² ՀՍՄՌ. ԴԿՊԱ (ՀԱԱ), ֆ. 57, գ. 692, ք. 19:

սալով»՝ նրանց կերակրելու և կյանքը երկարածգելու վրա ժամանակ չվատնել: Իսկ հոկտեմբերի 3-ին հրամայում էր հայերին սպանողներին չպատժել և նրանց շարագործությունները ցինիկորեն որակում էր որպես «հայրենասիրական սուրբ պարտականություն»:

Պատերազմի նախօրյակին, ինչպես հայտնի է, արևմտահայ ժողովրդի ինքնապաշտպանությունը բարձրորդի վիճակում էր. չկար զենք, զինամթերք, կռվելու միահամուռ ոգի, բացակայում էր կազմակերպվածությունը: Իրեն ազատագրական պայքարի ակտիվ մասնակցի փետուրներով զարդարող Դաշնակցությունը երիտասարդ թուրքերի հետ համագործակցելու իր արկաժանխնդրական ու վնասակար գործելակերպով, 1908 թ. մինչև պատերազմի սկիզբը դավաճանական հարված էր հասցրել այդ պայքարի գործին: Թուրքական կառավարությանը փարվելու հետ մեկտեղ, այդ կուսակցությունը դաշն էր կապել Անտանտայի, ցարիզմի հետ, դարձել վերջինիս կամակատարը Կովկասում: Պատերազմի նախօրյակին խոսքով ընդունում էին, որ «տաճակական մացիոնալիզմը դեռ ոչ մի բարիք չի կատարել իր հայրենիքի համար, բայց նա շատ բան կարող է անել Տաճկաստանը կործանելու համար: Օր առաջ պատրաստվենք, որպեսզի այդ կործանման անմիջական զոհը մենք չլինենք»:¹ Բայց գործով հայկական բուրժուական կուսակցությունները ոչ միայն ոչինչ չարեցին այդ վտանգին դիմագրավելու համար, այլև իրենց վարած քաղաքականությամբ նպաստեցին արևմտահայության ողբերգության սաստկացմանը: Նրանք բացի աղմկարարությունից, բազմաթիվ ու բազմազան թերթերի էջերում իրարամերժ, անպատասխանատու, սնասպարծ հայտարարություններից կամ հեզության քարոզներից, ոչինչ էլին արել ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ: Դա մի դժնի շրջան էր, երբ ավելի ակնառու, քան երբեք, դրսևորվեց Դաշնակցության բռնած կուրսի իրոք հակաժողովրդակյան ու ավանտյուրիստական բնույթը: Եվ եթե հայ ժողովուրդը ինքնագոհ խիզախությամբ ինքնապաշտպանական արի մարտեր մղեց բշնամու գերագանց ուժերի դեմ՝ Վանում և Շապին-Գարահիսարում, Մուսա լեռան վրա և Ուրֆայում, ապա դա ապրելու ու գոյատևելու համար նրա անհաղթելի ոգու ճիգն էր:

Հերոսական դիմադրության այդ փորձարթիվ օջախները, սակայն, անկարող էին կանխել այն ողբերգությունը, որին ենթարկվեց ամբողջ արևմտահայությունը: Թուրքական կառավարողների մարդակերական գործելակերպը նոր ժամանակների պատմության մեջ ամենամասսայական բիրտգիսական գեճոցիդի քաղաքականության սկիզբն էր, որն ավելի լայն մասշտաբներով ու տեխնիկական տեսակետից ավելի կատարելագործված մեթոդներով կիրառեցին գերմանական ֆաշիստները հրեաների, սլավոնական և այլ ժողովուրդների նկատմամբ: 1939 թ. օգոստոսին Օբերգալցբուրգում կայացած ֆաշիստական վերնախավի մի խորհրդակցությունում, երբ Հիտլերը պահանջում էր

¹ «Հորիզոն» (Թ), 1913, 7 դեկտեմբերի:

«դուրս մղել և բնաջնջել ռուսներին, ուկրաինացիներին, չեխերին, բուլղարներին, լեհերին, բերուսներին», նա ներկաներին ցինիկորեն հիշեցնում էր Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ բուրբակյան ջարդարարների կողմից հայ ժողովրդի նկատմամբ կիրառված մեթոդները և քացականչում. «Այժմ, մեր ժամանակներում, այլևս ո՞վ է հիշում Թուրքիայում հայերի բնաջնջման մասին»:

Հիրավի, համաշխարհային պատմության մեջ 1915 թ. Մեծ եղեռնը կարելի է համեմատել Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին գերմանական Ֆաշիստների կողմից կազմակերպված միլիոնավոր խաղաղ մարդկանց ոչնչացման, Մայդանեկի, Օսվենցիմի, Մաուսհաուզենի և մահվան այլ ճամբարներում կատարված ավելի մեծ մասշտաբի մասսայական մարդասպանությունների հետ:

. Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի ավագ դաշնակից կայգերական Գերմանիան, որը էքսպանսիոնիստական հեռու գնացող նպատակներ էր հետապնդում Մերձավոր և Միջին Արևելքում, ռազմական թե կազմակերպչական տեսակետից հովանավորեց և օժանդակեց երիտթուրքական մարդասպաններին արևմտահայության բնաջնջման գործում:

Անտանտայի կառավարող շրջանները, բուրժուական գործիչները, բացի փարիսեցիական ճառերից ու երկդիմի նենգ քաղաքականությունից, «ոչինչ չձեռնարկեցին թուրքական ռճրագործների ձեռքը բռնելու, արևմտահայությունը կործանումից փրկելու ուղղությամբ: Շատ բնական է, որ թալանչիական պատերազմ սանձազերծած, նոր երկրներ գավթելու, գաղութներ նվաճելու, ժողովուրդներին ստրկացնելու տենդով բռնված Անգլիան և Ֆրանսիան, ԱՄՆ-ը ու ցարական Ռուսաստանն անմիջապես դիվանագիտական գաղտնի սակարկության առարկա դարձրին այն տարածքը, որի տերը՝ արևմտահայությունը, ոչնչացվել էր:

Արևմտահայության համար ստեղծված դժոխային կացության ամենակրիտիկական պահին արևմտյան իմպերիալիստներն ամենակտիվ փարիսեցիությամբ հայամպաստ հայտարարություններ էին անում, իսկ գործնականում դիվանագիտության պատմության մեջ «Սայքս-Պիկոյի» համաձայնագիր անվանումն ստացած բանակցություններով իրականացնում իրենց զավթողական, գաղութատիրական պլանները Մերձավոր Արևելքում: Եվ ինչպես Ա.Լենինն է նկատել. «Եթե գերմանական ավագակները ռեկորդ են խփել իրենց ռազմական դատաստանների գազանության տեսակետից, ապա անգլիական ավագակները ռեկորդ են խփել ոչ միայն կողոպտված գաղութների բանակությամբ, այլև իրենց մոդկալի կեղծավորության նրբությամբ»¹:

¹ Լենին Ա.Ի. Ընտիր երկեր, հ. 3, էջ 21:

1916 թ. հունվարին միջպարտիական զգվտոցի ժամանակ ԱՄՆ-ի մախկին պրեզիդենտ Թ.Ռուզվելտը¹ մեղադրանք էր չարտում Վիլսոնի² գլխավորած կառավարությանը՝ հայտարարելով, թե քանի որ ԱՄՆ-ը «չփորձեց հանդես գալ այդ գազանությունների (հայկական կոտորածների) դեմ», ապա պետք է բաժանի «կատարված հանցագործության գլխավոր պատասխանատվությունը»: Պատահական չէ, որ Կ.Պոլսից մեկնող ամերիկյան դեսպան Մորգենթաուի³ ճանապարհող պրոյունկվակ Թալեսթը շնորհակալություն էր հայտնում նրան «արդարամտության» համար:

Նոր խաբեության զոհ դարձան հայկական քաղաքական-հասարակական այն շրջանները, այն միամիտ քաղաքագետները, որոնք ակնկալություններ ունեին իմպերիալիստական Արևմուտքից, նրա հետ էին կապում իրենց ժողովրդի ազատագրման, սեփական պետականություն ստեղծելու հույսը, կարծում էին, թե «Եվրոպան, որ անասուններին հովանավորելու հնարավորություններ ունի, մի՞թե կարող է թողնել, որ միլիոնավոր մարդիկ յարազանի զոհ դառնան»⁴: Իմպերիալիստական տերությունները սառը ջուր ցրին այդպիսի տղայամիտ մարդկանց ակնկալությունների վրա:

Արևմտյան իմպերիալիզմն իր սամճագերձած զավթողական պատերազմով, Հայկական հարցում վարած ավանդական աղետաբեր քաղաքականությամբ նպաստեց արևմտահայության զենոցիդին, որը գործնականում քուրքական շովինիստներն իրականացրին գերմանական միլիտարիստների հետ ձեռք ձեռքի տված: «...Կրկին քաղաքակիրթ ազգերի աչքի առաջ կոտորվեց, մորթվեց հայ ժողովուրդը անմտն չ ու անպաշտպան ...»,- արժանագրում էր դեռևս երեկ եվրոպական իմպերիալիստական տերությունների գովքն անող

¹ Թեոդոր Ռուզվելտ (1858-1919) - ԱՄՆ-ի 26-րդ պրեզիդենտ (1901-1909), համերապետական, Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր (1906) - Ա.Կ.:

² Թոմաս Վուդրո Վիլսոն (1856-1924) - ԱՄՆ-ի 28-րդ պրեզիդենտ (1913-1921), դեմոկրատ, փիլիսոփայության դոկտոր, «Տասնչորս կետեր» խաղաղության ծրագրի հեղինակ, անկախ հայկական պետության ստեղծման, Հայաստանի մանրատը ստանձնելու կողմնակից, Ազգերի լիգայի հանձնարարությանը հանձն առավ 1920 թ. Սերի հաշտության պայմանագրով ստեղծվող հայկական պետության սահմանները որոշողի դերը - Ա.Կ.:

³ Հենրի Մորգենթաու (1856-1946) - ամերիկացի դիվանագետ, իրավաբան, 1913-1916 թթ.՝ ԱՄՆ-ի դեսպան Օսմանյան կայսրությունում, պատերազմի ընթացքում ներկայացնում էր նաև Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իտալիայի և Բելգիայի շահերը, Մերձավոր Արևելյան օգնության ամերիկյան կոմիտեի (Ամեքլոմ) փոխնախագահ, փորձում էր կամխել հայերի արտաքսումն ու կոտորածը, նրա «Հայկական ջարդերի առթիվ» (1918), «Ինչո՞ւ պետք է կործանել Օսմանյան կայսրությունը» (1918), «Հայաստանը կանչում է» (1918), «Հայերի կոտորածները 1915-ին» (1922) հոդվածները, «Հայաստանի ողբերգությունը» (1918), «Քոստոբոյի պարտիքները. 1913-1916» (1918), «Դեսպան Մորգենթաուի հուշերը» (1919) գրքերը կարևոր վկայություններ են պարունակում Մեծ եղեռնի մասին - Ա.Կ.:

⁴ «Հորիզոն» (Թ), 1913, 18 մայիսի :

«Մշակը»: ԵՆԻՐՐԻ խոստովանում էր, որ «ծավաղողական, իմպերիալիստական ձգտումները կկոխեն կանցնեն հավատարմության, նահատակության և արդարության վրայն: Դիվանագիտությունը խիղճ չունի...» (1916, 24 սեպտեմբերի): «Քրիստոնական կառավարության քաղաքականությունը, - հետագայում գրկ է Լոյոյ Ջոյթը, - ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-1897 և 1909 թթ. սարսափելի սպանդներին և 1915 թ. ամենատակալի կոտորածին»: Պատմությունը կրկին ու կրկին հաստատեց այն ճշմարտությունը, որ միջազգային իմպերիալիզմը Հայկական հարցը միշտ որպես խրտվիլակ է օգտագործել Թուրքիային վախեցնելու, նրան ստիպելու անել այն, ինչը համապատասխանում էր եվրոպական մեծ տերությունների շահերին: Սակայն նման գործելակերպի ամենացայտուն դրսևորման պահին անգամ որքան երեսպաշտություն և քսամենի կեղծավորություն կար եվրոպական դիվանագետների ճատերում, որքան կեղծիք կար նրանց հաճոյացող բուրժուական լրագրողների ու գրչակների ստեղծած թղթի սաքերում:

«Կայ հայերին, - գրկ է հայ ժողովրդի բարեկամ, նորվեգացի դեմոկրատ Ֆրիտյոֆ Նանսենը, - որ նրանք երբևիցե ներքաշվել են եվրոպական քաղաքականության մեջ: Շատ ավելի լավ կլինեք նրանց համար, եթե Հայաստանի անունը երբեք չարտասանվեր որևէ եվրոպական դիվանագետի կողմից»¹:

Թուրքական հանցավոր կառավարողների ոճրագործությունն ու նրանց իմպերիալիստական հովանավորողների հետևողական դատապարտմամբ հանդես եկան համաշխարհային սոցիալիստական, բանվորական շարժման ականավոր գործիչները, պատերազմի դեմ, ժողովուրդների միջև քարեկամության և խաղաղության հաստատման պայքարին նվիրված մարտիկները:

Հանդես գալով գերմանական միլիտարիզմի հետևողական դատապարտմամբ՝ գերմանական պրոլետարիատի առաջնորդ, համաշխարհային սոցիալիստական շարժման ականավոր գործիչ Կարլ Լիբկեռնխտն անարգանքի սյունին գամեց թուրքական քարղարարներին և նրանց գերմանական հովանավորողներին: Հայ ժողովրդի դեմ սարքված արյունոտ դավադրության կապակցությամբ նրա հարցապնդումները գերմանական Ռայխստագում 1916 թ. սկզբին պատռում էին թուրքական դահիճների գերմանական հովանավորողների դիմակը:

1916 թ. հուլիսի 4-ին հակապատերազմական պրոպագանդայի և գործունեության ամբաստանությամբ բանտ նետված Կարլ Լիբկեռնխտը դատարանին հղած իր նամակում քարը քարի վրա չէր բողոքում պատերազմում Գերմանիայի հետապնդած «սզատագրական միսիայի» մասին գերմանական իմպերիալիստների խաբեությունից, դատապարտում էր նրանց դաշինքը Թուրքիայի հետ, որն «իր ձեռքերը քաթախել է հայերի արյան մեջ և այս պատե-

¹ Nansen F. Op. cit, p. 328.

րագմի ժամանակ անսահմանորեն ավելացրել իր մեղքը, ամենադաժան կոտորած սարքելով դժբախտ հայ ժողովրդի նկատմամբ»:¹

Թուրքական ջարդարարական քաղաքականության դատապարտմամբ հանդես եկավ Բուլղարիայի բանվորական սոցիալ-դեմոկրատական (տեսնյակների) պարտիան, որը պայքարում էր միլիտարիզմի դեմ, հանուն պրոլետարական ինտերնացիոնալիզմի վեհ սկզբունքների: Իրենց 21-րդ համագումարում քուլդարական սոցիալիստները բողոքի հատուկ բանաձև ընդունեցին «հայ ժողովրդին թուրքական բարբարոսական օլիգարխիայի կողմից ոչնչացնելու դեմ»:

Ելույթ ունենալով կոմունիստական ինտերնացիոնալի երրորդ կոնգրեսում (1921 թ.)՝ Բուլղարիայի կոմունիստական կուսակցության հիմնադիրներից և համաշխարհային բանվորական ու կոմունիստական շարժման ակամավոր գործիչներից մեկը՝ Վ.Կոլարովն² ասում էր, որ «հայ ժողովուրդն ունի ամենաողբերգական պատմությունը: Այդ պատմության ամբողջ ընթացքում նա առանձին ազգերի միջև թշնամության առարկա է հանդիսացել, մի թշնամություն, որ համառորեն պաշտպանում էր թուրքական հին կարգի բարբարոսական բռնակալությունը: Այդ ժողովուրդը զուր կերպով բազմիցս դիմում էր, այսպես կոչված, քաղաքակրթված պետությունների մարդկային զգացումներին: Այդ կոչերին հետևում էին լոկ մոր արյունահեղություններ: Վերջին անգամ, եվրոպական պատերազմի ժամանակ, հայ ժողովուրդն ուզում էր Անտանտայի տերություններից ցույց տրված օգնության միջոցով ազատություն և ապրելու իրավունք նվաճել, բայց նրան խաբեցին իր սպասումների մեջ: Նա նորից ֆանատիզմի զոհ դարձավ: Բայց այդ արյունահեղությունից հետո հայ ժողովուրդն իր հայացքն ուղղեց Ռուսաստանին և հետևեց նրա պրոլետարիատի օրինակին»:

Ֆրանսիական ակամավոր դեմոկրատ, գրող Անատոլ Ֆրանսը «ահռելի ոճրագործություն» էր որակում հայ ժողովրդի բնաջնջման թուրքական քաղաքականությունը, որը «կրկնվել էր բազմիցս և որ ավելի բուր մեկ միլիոն ժողովրդի կորստյան պատճառ դարձավ»: Բազմաթիվ առաջադիմական գործիչներ թուրքական ոճրագործության օրերին իրենց նվիրեցին արևմտահայության ծանր վիճակը համաշխարհային հասարակայնությանը ներկայացնելու գործին, հանդես եկան թուրքական ջարդարարության, իմպերիալիստական պատերազմի կազմակերպիչների դատապարտմամբ: Ռուս առաջադեմ, դեմոկրատ գործիչները համոզեցին էլիս գալիս մահվան դատապարտված արևմտահայության բեկորները փրկելու պահանջով, ամաբզանքի սյունին էին գամում թուրք ջարդարարներին ու նրանց իմպերիալիստական հովանավորներին: Այս գործում առանձնապես մեծ են Վալերի Բրյուսովի գործադրած ջանքերը

¹ Ливкинехт К. Мой процесс по документам, II-д, 1918, с. 54.

² Վասիլ Կոլարով (1877-1950) - քուլդարացի քաղաքական գործիչ, ակադեմիկոս, կոմկուսի ղեկավար, Բուլղարիայի վարչապետ (1949-1950), ԱՄՆ նախագահ (1945-1947) – Ա.Կ.:

ու ծառայությունները: Վ.Բրյուսովը «Էմիլ Վերհարնը¹ Հայաստանի մասին» հոդվածում ցույց էր տալիս մեծ բեղիկացու հումանիզմը, նրա համակրանքը հայ ժողովրդի նկատմամբ: Բրյուսովը գրում էր, որ «...Գերմանիայի բելադաներով և տաճիկների ձեռքով կատարված հայկական կոտորածների սարսուռն է զգում ընթերցողը բանաստեղծի...» գործերը կարդալիս:

Հայ ժողովրդի պաշտպանության կոչեր էին անում սոցիալիստ Էդգար Լոնգեն², ֆրանսիացի անվանի հայագետներ Մեյնե³, Մակլերը⁴, գերմանացի Մարկվարտը⁵, շվեյցարացի Լեոպոլդ Ֆավրը⁶, որը հրապարակել էր 1915-1916 թթ. արևմտահայ աղետի փաստաթղթերի երեք պրակ, որտեղ ցույց էր տրվել, որ «նի ընդհանուր և միաձև պլան, թխած մի կենտրոնական կամքից, ուղղել է այդ կոտորածները»:

Թուրքիայի դժոխքից փրկված, ռուսական հողում ապաստանած և տիրող կարգերի անտարբերությանն արժանացած արևմտահայ գաղթականության իսկական բարեկամները նրանց աշխատավոր եղբայրներն էին, Ռուսաստանի և Անդրկովկասի բազմազգ բանվոր դասակարգը՝ իր ինտերնացիոնալիստական անկաշառ վերաբերմունքով: Հայ գաղթականության օգտին կատարվող հանգանակություններին իրենց ակտիվ մասնակցությունն էին քերտում առաջին հերթին աշխատանքի մարդիկ:

Ի հենձնի ցարկոմի գաղութային քաղաքականության, հայ ժողովրդի տառապանքների նկատմամբ անտարբեր դիրք բռնած կառավարության դիրքին, ռուս հրապարակախոս, դոկտոր Լ.Օշերովսկին անարգանքի պլումին էր գաճում թուրքական վաճառիքներին և հայ այրի կանանց, կրեխաներին օգնելու ու պատսպարելու կոչ էր անում ռուս հասարակայնությանը: Նա գրում էր.

¹ Էմիլ Վերհարն (1855-1916) - բելգիացի բանաստեղծ-սիմվոլիստ - Ա.Ա.:

² Էդգար Լոնգե (1879-1950) - ֆրանսիացի բժիշկ, հասարակական գործիչ, Ֆրանսիայի սոցիալիստական, այնուհետև կոմունիստական կուսակցության անդամ, Գիժաղության շարժման մասնակից - Ա.Ա.:

³ Անտուան Մեյնե (1866-1936) - 20-րդ դարի ակաճավոր ֆրանսիացի լեզվաբան, հնդեվրոպական լեզուների մասնագետ, հայագետ, հայագետ, 1902-ից հայերեն է դասավանդել Փարիզի Արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցում, հրատարակել է «*Ռեկյու դեզ էսյուդ արմենիեն*» ամսագիրը - Ա.Ա.:

⁴ Ֆրեդերիկ Մակլեր (1869-1938) - ֆրանսիացի գիտնական, հայագետ, 1911-1937 թթ. հայերեն է դասավանդել Փարիզի Արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցում, հրատարակել է «*Ռեկյու դեզ էսյուդ արմենիեն*» ամսագիրը, Հայաստանի պատմությանը, աշխարհագրությանը, բանասիրությանը, արվեստին նվիրված ավելի քան 100 աշխատությանը, հեղինակ - Ա.Ա.:

⁵ Յոզեֆ Մարկվարտ (1864-1930) - գերմանացի գիտնական-արևելագետ, հայագետ, հանդես է եկել հայ ժողովրդի պաշտպանությանը, մեղադրել է կոտորուբերին հայերի զանգվածային ջարդ կազմակերպելու համար - Ա.Ա.:

⁶ Լեոպոլդ Ֆավր (1846-1922) - շվեյցարացի հասարակական գործիչ, 1896-ից հայերի իրավունքների պաշտպանության օգտին շարժման ակտիվ մասնակից, 1918-ից՝ Հայերի օգնության կոմիտեների կոնֆեդերացիայի նախագահ, 1920-ից՝ Միջազգային հայասիրական լիգայի պատվո նախագահ - Ա.Ա.:

«Մենք չենք կարող անտարբեր մնալ այդպիսի սարսավելի վշտի, այն մարդկանց նկատմամբ, որոնք դատապարտված են սովամահության և փրկության համար են աղոթում»: «Ներկայումս մեր առջև բացվում է մեծ և ազնիվ նպատակ՝ օգնել հայ փախստականներին: Մենք չենք կարող հանգստանալ մինչև այն ժամանակ, քանի դեռ այդ կարևորագույն և հրամայական խնդիրը չլուծվի»:

Հյուսիսային Կովկասում լույս տեսնող «Թերեք» քերթի էջերում 1916 թ. սկզբին հրատարակված իր հողվածաշարում ակնամարտ բոլշևիկ Ս.Կիրովը բողոքի խրոխտ ձայն բարձրացրեց ի պաշտպանություն «տառապյալ ժողովրդի»:

«Միտոս կսկծում է, արյունոտվում, երբ կարդում եմ այն հազարավոր փախստականների մասին, այն խեղճ ու տառապյալ, անլուր տանջվող ու արյունոտ ժողովրդի, բռնաբարված կանանց ու մորթված երեխաների մասին», - աքսորից գրում էր բոլշևիկ Սուրեն Սպանդարյանը¹:

Հիրավի, հայ բոլշևիկները, որ ի սկզբանե դեմ էին եվրոպական դիվանագիտությանն ապավինելուն, ցարիզմի միջոցով բուրքահայ դատը լուծելու մտայնությանն ու գործելակերպին, դատապարտելով իմպերիալիստական պատերազմը որպես զավթողական, հակաժողովրդական պատերազմ, տերությունների երկու խմբերի հակամարտ շահերի բախման, տնտեսական և քաղաքական սուր մրցակցության արդյունք, նշում էին նրա ողջ կործանարար բնույթը մաս առ մաստավոր հայ ժողովրդի համար: Նրանք ցույց էին տալիս իմպերիալիստական կառավարությունների կողմից փոքր ազգերին ազատագրելու մասին պատերազմի ժամանակ հռչակված լոզունգի ողջ խաբեությունը: Հայ բոլշևիկյան մամուլը, ժողովրդական մասսաներին դաստիարակելով իմպերիալիստական պատերազմի և նրա կազմակերպիչների դեմ ռեյուցյոն պայքար մղելու անհրաժեշտության ոգով, նրանց զգուշացնում էին այն վտանգից, որին ենթարկում են նրան դաշնակցական պարագլուխները պատերազմին մասնակցելու, կամավորական խմբեր ստեղծելու իրենց արկածախնդրությամբ ու քաղաքական մտքի սնանկությամբ: Գլխավոր միտքը, որ շեշտվում էր նրանց կողմից, դա այն էր, որ հայ ժողովրդի արեմտյան հատվածը, բուրք բարբարոս կառավարության տիրապետության տակ գտնվելով, ամեն վայրկյան կարող էր զոհ դառնալ բուրքական ավանդական յարադանին: Սակայն, ինչպես նշում է Ս.Շահումյանը. «Մեր «ազգասերները», ընդհակառակը, կարծես դիտմամբ ամեն ջանք գործ էին դնում... հող պատրաստելու համար»:

Վերլուծելով հայ ժողովրդի համար ստեղծված դժոխսային կացությունը՝ Ս.Սպանդարյանը ցույց էր տալիս այն դառը պտտղները, որ տվել էին իմպերիալիստական պատերազմը, ցարիզմի ու նրա հետ միասին գործակցած հայկական բուրժուական «քաղաքագետների» քաղաքականությունը: Նա գրում

¹ Սուրեն Սպանդարյան (1882-1916) – հեղափոխական գործիչ, համայնավար, գրաբնագետ և հրատարակախոս - Ա.Կ.:

Լր. «Այո. «ազատություն», քայքայ առանց հայերի. այո, «ազատություն», որը դառնում է Պորիչկիչների¹ և Սիլյուկովների գավրոմբ»: Նա դատապարտում էր հայ ազգային ջոջերին, պահանջում էր հարվածել նրանց «վզին» և արևմտահայության բեկորները «ազատել», «պահպանել» վերջնական կործանումից:

Վ.Լ.Ենինը, բուլշևիկյան պարտիան դատապարտում էին Գուչկով-Սիլյուկովի բուրժուական կառավարության՝ իմպերիալիստական պատերազմը շարունակելու քաղաքականությունը, նրա գործելակերպը Արևմտյան Հայաստանում, մի գործելակերպ, որը ոչ մի նպատակ չուներ ինչ-որ քայլ կատարելու Հայաստանի ինքնորոշման, հայ ժողովրդի կենսական շահերը հարգելու ուղղությամբ: Հայ ժողովրդի մեծ բարեկամ Վ.Լ.Ենինը լիակատար ազատության պահանջ էր դնում «ամբողջ Հայաստանի նկատմամբ»:

Հանդես գալով 1917 թ. հունիսին տեղի ունեցած սովետների առաջին համագումարում՝ բուլշևիկների պարտիայի և աշխատավորության առաջնորդ Վ.Լ.Ենինը պահանջում էր հրաժարվել նման գործելակերպից, հրաժարվել անբախտնիստական պատերազմ մղելուց, Հայաստանը խեղդելուց: Նա պարտիայի անունից ազդարարում էր հայ ժողովրդի նկատմամբ այդ պահին իրագործվելիք ծրագիրը: Դիմելով ժամանակավոր կառավարության ղեկավարներին՝ նա ասում էր, այն բանակը, որ «այժմ պահվում է Հայաստանում և աներ-սիաներ է կատարում, որը դուք հանդուրժում եք, քարոզելով մյուս ժողովուրդներին հաշտություն առանց անբախտների, թեև ձեր ձեռքին է ուժը և իշխանությունը, եթե այդ բանակն անցնեք այդ ծրագրին, եթե նա Հայաստանը դարձնեք անկախ հայկական ռեսպուբլիկա, և այն դրանը, որ մեզնից վերջնում են Անգլիայի և Ֆրանսիայի ֆինանսիստները, տար նրան, ապա այդ լավ կլինեք»: «Ապացույցեցեք, որ դուք ազատագրում եք հայկական ռեսպուբլիկան, համաձայնության մեջ եք մտնում բանվորների և գյուղացիների դեպուտատների սովետների հետ յուրաքանչյուր երկրում, - շարունակում էր Լենինը, - որ դուք ազատ ռեսպուբլիկայի կողմնակից եք, այն ժամանակ ռուսական ռեյույոցիայի արտաքին քաղաքականությունը կդառնա խորք ռեյույոցիոն, իրոք դեմոկրատական»:

Իմպերիալիստական պատերազմի դեմ, սոցիալիստական ռեյույոցիայի հաղթանակի համար մղած իր պայքարը բուլշևիկյան կուսակցությունը խարսխում էր «ազատություն բոլոր ժողովուրդներին, բոլոր ազգությունների բանվորների ու գյուղացիների եղբայրական միություն» լենինյան սկզբունքի վրա: Հոկտեմբերյան ռեյույոցիան հռչակեց «մարդու ամեն մի շահագործման ոչնչացումը մարդու կողմից, հասարակության դասակարգերի բաժանման լիա-

¹ Վլադիմիր Պորիչկիչ (1870-1920) – ռուս ծայրահեղ աջ քաղաքական գործիչ, միապետական, սևհայրերական - Ա.Կ.:

կատար վերացումը, շահագործողների դիմադրության անխնա ճնշումը, հասարակության սոցիալիստական կազմակերպության հաստատումը...»¹:

Ակտիվորեն պաշտպանելով ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարը՝ Վ.Լենինը, բոլշևիկների պարտիան ձգտում էին սերտ բարեկամություն հաստատել Ռուսաստանի բանվոր դասակարգի և ճնշված ու գաղութացված երկրների աշխատավորության միջև: Սովետական կառավարության կողմից 1917 թ. նոյեմբերի 3-ին հրապարակված «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների ղեկավարացիայում» հռչակվում էին Ռուսաստանի ժողովուրդների իրավահավասարությունն ու սովերենությունը, ազատ ինքնորոշման իրավունքը: Ազգային և ազգային-կրոնական բոլոր ու ամեն տեսակի արտոնություններն ու սահմանափակումները վերացվում էին: Սովետական կառավարությունն ազդարարում էր, որ ազատ զարգացում է ապահովելու Ռուսաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների և էթնիկական խմբերի համար: Դրանք այն սկզբունքներն էին, որոնց կենսագործունով միայն հայ ժողովուրդը կստանար իր իսկական սոցիալական և ազգային ազատությունը, կփրկեր իր ֆիզիկական գոյությունը, ապրելու հնարավորություն կստեղծեր թշվառության ու վերջնական կործանման եզրին հասցված իր քեկորների համար:

Սովետական կառավարության ընդունած առաջին որոշումներից էր «Թուրքահայաստանի մասին» ղեկրետը: Ի հակադրություն թուրքական մարդասպանների հայաջինջ քաղաքականության, իմպերիալիստական տերությունների զավթողական պլանների, «Թուրքահայաստանի մասին» ժողովրդական կոմիսարների սովետի ղեկրետով սովետական իշխանությունը պաշտոնապես հայտարարեց, որ պաշտպանում է Արևմտյան Հայաստանի «ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն»: Սովետական կառավարությունը պահանջում էր ապահովել տարբեր երկրներում ցրված կամ թուրքական իշխանությունների կողմից բռնի կերպով Օսմանյան կայսրության խորքերն արտրված հայերի անարգել վերադարձն իրենց հայրենի հողերը:

Մինչդեռ երիտթուրքական կլիկը ջարդել էր արևմտահայերին, ավերել նրանց շենքերը, զրկել նրանց սեփական հողից ու ջրից, իմպերիալիստական դիվանագետները խոսքով հայանապաստ փաթիսեցիություն էին անում, իսկ գործով գաղութային նոր զավթումներ իրականացնում, ապա սոցիալիստական առաջին պետությունը հռչակում էր, որ ճանաչում է հայ ժողովրդի ինքնորոշման անկապտելի իրավունքները և գործնականում միջոցառումներ մշակում այդ իրավունքներն իրականացնելու համար:

Վ.Լենինն ասում էր. «Հանցագործ է այն կառավարությունը, որը զինադադար չի ուզում...»²: Իսկ թուրքական կառավարողները զինադադար չէին ուզում, նրանք ձգտում էին նոր զավթումների, նոր արյունահեղության:

¹ Լենին Վ.Ի. Ընտիր երկեր, հ. 2, էջ 608:

² Նույն տեղում, էջ 541:

1918 թ. բուրբական ինտերվենցիան ոչ միայն տապալեց Արևմտյան Հայաստանի ինքնորոշման մասին սովետական կառավարության դեկրետի կենսագործումը, այլև մահացու սպառնալիք ստեղծեց հեղափոխության հաղթանակի և Անդրկովկասի ժողովուրդների ֆիզիկական գոյության համար: «Այն միտքը, որ հեղափոխությունը կարող է Կովկասից անցնել այդ սովալյուկ երկիրը (Թուրքիա), - 1918 թ. մարտի սկզբին գրում էր Ս.Կասյանը, - տակացնում է նրանց: Սուկացնում է նրանց նաև այն, որ խորհուրդների իշխանությունը Կովկասում կարող է տերիտորիական վնաս հասցնել նրանց գիշատիչ իշխանությանը և ավազակային շահագործությանը, պնդելով և պաշտպանելով ժողովրդական կոմիսարների դեկրետը Տաճկական Հայաստանի ինքնորոշման վերաբերյալ»¹: Ս.Կասյանը ցույց է տալիս, որ բուրբական իմպերիալիստների «անգուսպ ցանկությունն է՝ հաջողությամբ պակաված տեսնել քեզական գերիշխանությունը Անդրկովկասում», որ նրանք «ժող ու կրակի, սուր ու բրի տալով» Հայաստանը, ձգտում են «փկուրեցից հարձակվել սոցիալիստական Ռուսաստանի վրա», իմպերիալիստական մյուս զավթիչների հետ միասին «երկարժե օղակ կազմելով՝ խեղդել սոցիալիստական իշխանությունը»: «Թույլ տալ, որ այդ ընթացիքը ամենալայն կերպով իրագործվի, - շարունակում է Ս.Կասյանը, - նշանակում է ոչ միայն ինքնասպանություն գործել, այլև դավաճանել սոցիալիզմին»: Նա բոլշևիկների, բոլոր հեղափոխական ուժերի «արբազան պարտականությունն էր» համարում «ամենահամառ կերպով պաշտպանել սոցիալիստական Ռուսաստանի փկուրեքը»²:

Անդրկովկասյան կոմիսարիատը, ապա Սեյմը իրենց հակասովետական քաղաքականությամբ, երկրամասի ազգությունների միջև երկպառակությունները խորացնելու գործելակերպով ջլատեցին աշխատավորության ուժերը, անուժ գտնվեցին բուրբական հարձակումը կանխելու, երկրամասի պաշտպանությունը կազմակերպելու գործում: Թե՛ Տրապիզոնի և քե՛ Բաթումի բանակցությունների ժամանակ նրանք խաղալիքի վերածվեցին բուրբական իմպերիալիստների ձեռքում, որոնք այսօր դրժում էին այն, ընդունել էին երեկ, լկտի կերպով ոտնահարում էին միջազգային իրավունքի ամենատարրական նորմերը: Անդրկովկասի ինքնակոչ տնօրենները ոչ միայն անօրինական կերպով շճանաչեցին սովետական կառավարության կողմից նշանակված Կովկասի գործերի արտակարգ կոմիսար Ս.Շահումյանի լիազորությունները, պայքար սանձազերծեցին նրա դեմ, այլև խոչընդոտեցին նրա գործողությունները «Թուրքահայաստանի մասին» դեկրետն իրագործելու ուղղությամբ, խանգարեցին բոլշևիկյան կազմակերպություններին երկրամասը պաշտպանելու բուրբական և մյուս իմպերիալիստների ինտերվենցիային:

Իսկ բուրբական վայրենաբարո իմպերիալիզմը «ոչ քե հետզհետե էր քամում նվաճած, բռնագրաված երկրի հյուրը, կարիլ-կարիլ ծծում ժողովրդի

¹ Կասյան Մ. Սեր տակտիկան // «Բանվոր» (Թ.), 1918, N 5, 6, մարտ:

² Նույն տեղում:

արյունը և որոշ չափով օգնում երկրի տնտեսությունը պահպանելուն, ո՛չ, տանկական իմպերիալիզմը բալանի ու ավերածության, ջարդի և կոտորածի է մատնում երկիրը հենց առաջին մոմենտից: Հայաստանի հողը ոռոգվում է արյունով, դաշտերն ու ձորերը ծածկվում դիակներով... Երկիրն ամբողջապես ավերվում, բալանվում է և ծայր աղքատության մատնվում...» (Մ.Կասյան):

1918-1920 թթ. հայ ժողովրդի ողբերգական դրությունն ավելի խորացավ բուրբակյան ասպատակությունների, դաշնակցական կառավարության վառած հակաժողովրդական, Սովետական Ռուսաստանից նրան կտրելու և ինպերիալիստական տերությունների քելադրանքին ենթարկվելու քաղաքականության հետևանքով:

Երկրամասն անջատելով հեղափոխական Ռուսաստանից, պայքարելով սովետական իշխանության դեմ, հայկական ջոջերը օրեցօր գլորվում էին բուրբակյան կառավարողների գիրկը, ձեռք մեկնում իրենց ժողովրդի դահիճներին:

1918 թ. նոյեմբերի 4-ին Ա.Խատիսովն անամոքաբար ասում էր, թե «մենք և բուրբերը այժմ մեկս մեկու կարիքն ունենք», «այժմ պետք է բավ հարաբերություններ պահպանել բուրբերի հետ»¹: 1918 թ. նոյեմբերի 9-ին Ա.Ախարոնյանը Կ.Պոլսում շնորհակալություն էր հայտնում սուլթանին այն բանի համար, որ նա էր հղացել «անկախ Հայաստանի» գաղափարը²: Նրանք հայտարարում էին, թե բուրբերի ցանկությունից «Հայկական հարցը լուծելու» գործում ավելի շատ բան են սպասում³: Թուրքական իմպերիալիստները ձգտում էին Անդրկովկասի «անկախ» հանրապետությունները հակադրել Սովետական Ռուսաստանին, նրանց դարձնել Թուրքիայի վասալը, անմիջական սահման չունենալ Ռուսաստանի հետ և Թուրքիան հեռու պահել Հոկտեմբերյան հեղափոխության գաղափարների ազդեցությունից: Իսկ դաշնակցական «Ազատ Հայաստանը» շուտով իր մի խմբագրականում սեղով սպիտակի վրա գրում էր. «Իրերի պատմական բերումով Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական ազատության իրական պաշտպանը կարող է դառնալ միայն Տաճկաստանը...»⁴:

Դաշնակցության տիրապետության օրոք Հայաստանն ամբողջապես մեկուսացված էր: Երկրի ներսում դրությունը հուսահատական էր: Հայաստանի փոքր տարածքի բնակչության կեսից ավելին կազմում էին գաղթականները՝ անտուն, մերկ ու քաղցած:

Հայ ժողովրդի համար ստեղծվել էր մի վիճակ, որի բնորոշումն այնքան պատկերավոր կերպով տվել է Մարգիս Կասյանը: «Երկրագնդի վրա բերես ոչ մի տեղ ժողովուրդն այնպիսի ողբալի, այնպիսի օրհասական և տսկալի օրեր չի ապրում, ինչպիսին ապրում է ժողովուրդը Հայաստանի տերիտորիայի

¹ ԱՄՌՆ. ՊԿՊԱ (ՀԱԱ), ֆ. 222, գ. 12, ք. 192-193:

² Նույն տեղում, ք. 199:

³ Նույն տեղում, ք. 190:

⁴ Տե՛ս «Ժողովրդի մայրը» (Կ. Պոլիս), 1921, 27 հունիսի:

վրա, - գրում է նա: - Կյանքի բոլոր ասպարեզներն էլ արտաշնչում են դառն ու լեղոտ օդ և բունավորում ամբողջ երկիրը, սպանելով նրա կենսունակ ուժերը, խեղդելով նրա ձգտումներն ու կամքը: Մի հսկայական մուրճ տխրություն և մռայլություն, տանջանքի և մրմունջի կնիք է զամլ այդ դժբախտ երկրի արյունահեղ ճակատին: Շնչավոր էակները թե անշունչ իրերը, մեռել լեռներն ու անտառապատ սարերը, թե գանգերով լեցուն ձորերն ու արյունով ողողված դաշտերը, ամայի դարձած գյուղերն ու ավերված քաղաքները, դաշտերում ու բարձրավանդակներում ապրող շունտր գյուղացիները, թե քաղաքների ծուցերում ու ավերակներում գոյությունը քարշ տվող քաղքենիները, տեղական բնիկ՝ խեղճացած ու բշվառության մատնված ազգաբնակչությունը, թե բալանված ու սովալյուկ, լքված ու վայրենացած գաղթականությունը, բոլորն էլ վշտալից հայացքը արճնաբատ երկնակամարին հառած՝ օգնություն են հայցում, ելք են որոնում: Հայաստանում գոյությունը դարձել է անձեք, կյանքը՝ դժոխք»¹:

Իսկ այդ օրերին անգլիական պահպանողական «*Դեյլի Սեյլ*» թերթը չարախնդում էր, հայտարարելով, եթե Ամերիկայի Միացյալ Նահանգները մտադիր չեն հանձն առնել Հայաստանի մանդատը, ապա «որքան էլ սոսկալի փնի ալյոպիաի հեռանկարը՝ հայերը պիտի բնաջնջվեն»:

Չարաչար սխալվում էին պարոնայք իմպերիալիստները: Հայ ժողովրդի փրկությունը ոչ թե նրանց կամքից էր կախված, այլ ռեալություն հյուսիսից՝ մեծ Լենինի գլխավորած բանվորագյուղացիական Սովետական Ռուսաստանից, որի օգնությամբ նա տապալեց դաշնակցական կառավարությունը և 1920 թ. նոյեմբերի 29-ին հաստատեց սովետական կարգը:

թական բլրկն ուղղակի թուրք գավթիչներին Անդրկովկաս հրավիրելու դիրք էր
բռնել: Վրաց մենշևիկներին հետաքրքրում էր առաջին հերթին Վրաստանի
«անկախությունը», երկրի ներսում հեղափոխությունը խեղդելը: Իսկ սեյն կոչ-
ված խառնարանում, անդրկովկասյան կառավարության կառավարության գլխավոր օղակնե-
րում նրանք էին տնօրինում, նրանց էր վերապահված առաջին ջութակի դերը:

Օղիշելիծեն⁴ Կովկասյան բանակի հրամանատար էր նշանակված
1917 թ. հոկտեմբերին: Նրա վարած ռազմաքաղաքական կուրսը ոչ այլ ինչ էր,
քան քացահայտ դավաճանություն Անդրկովկասի և, մասնավորապես, հայ

¹ Հայրենիք (Բոստոն), 1955, N 10, էջ 30:

² Շահումյան Ստ. Երկեր, հ. 3, էջ 224:

³ Նույն տեղում, էջ 229:

⁴ Իլյա Օղիշելիծեն (1865-1921) - վրացի ռազմական գործիչ, գեներալ, Ռուսաստանի
Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար (1917-1918), ՎԳՀ բանակի գլխա-
վոր հրամանատար (1920) - Ա.Կ.:

ժողովրդի շահերին: Վեհիք-փաշային¹ հղած մի նամակում նա նշում էր իր քառասունութունը թուրքիայի հետ, հիշեցնելով, որ իր քույրը թուրք բժիշկ Սահմուդ-քեյի կինն էր Կ. Պոլսում: Երբ թուրքական բանակը հարձակման անցավ Երզնկայի ճակատում, Օղիշելիձեն էր, որ պահանջեց չպայքեցնել Էրզրումի զինապահեստները և դրանք հանձնել թուրքական հրամանատարությանը: Նրա խորթ որդին ծառայում էր թուրքական բանակում²: Չխենկելի³ նույնպես մտտ էր կանգնած պրոթուրքական խմբին (Մաղալով, Վեշապելի, Կենեսելիձեն, Մուրզուլաձեն), որոնք պատերազմի տարիներին հանդես էին գալիս թուրքիայի և Գերմանիայի օժանդակությամբ Վրաստանի անկախության օգտին⁴: Չափազանց քնորոշ է Ն.Ժորդանիայի⁵ հայտարարությունը. «Հայերի ճակատագիրը կանխորոշված է. նրանք իբրև մի քար կախված են մեր վզից և մեզ էլ իրենց հետ տանում են դեպի ծովի հատակը. անհրաժեշտ է ազատվել նրանցից»⁶:

«Մինչդեռ դավաճան Չխենկելի և ընկերները երևակայում են, թե իրենք փրկեցին Վրաստանը, - մատնանշում էր Ս.Շահումյանը, - ամբողջ մնացյալ Անդրկովկասի համար մնում է հետևյալը. կամ ամբողջ Հայաստանի միացումը թուրքիային, մնացած մասն ինքնավար Ադրբեջան հայտարարելով, կամ Էնվեր-փաշայի ծրագիրը, ըստ որի թուրքիան օկուպացիայի է ենթարկելու ամբողջ Անդրկովկասը»⁷:

Չափազանց հեղինդուկ էր հայկական բուրժուական քաղաքական շրջանների ընթացքը, զուրկ որևէ նպատակասլացությունից, վաղվա օրը տեսնելու ունակությունից: «Դաշնակցությունը փոխանակ Ռուսաստանի հետ դաշն կապելու, - գրել է Վ.Տերյանը, - դաշն կապեց հակահեղափոխական և արյունարբու բեգերի ու դավաճան մենշևիկների հետ... Ահա թե ինչպես հայ աշխատավոր ժողովրդի տունը քանդեցին ժողովրդին քարեկամ ձևացող դաշ-

¹ Մեհմեդ Վեհիք-փաշա (1877-1940) – թուրք ռազմական գործիչ, զեներալ, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում թուրքական Հյուսիսային խմբի, այնուհետև՝ Կովկասյան ճակատի հրամանատար, 1918-ի հունվարին հարձակում է սկսել Կովկասյան ռազմաճակատում, կազմակերպել է հայկական կոտորածներ Արևելյան Հայաստանում - Ա. Կ.:

² ՀՍՍՀ ՊԿՊԱ (ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 155, ք. 41-42, 43:

³ Ակակի Չխենկելի (1874-1959) – վրացի քաղաքական և պետական գործիչ, իրավաբան, մենշևիկ, Ռուսաստանի 4-րդ Պետական դումայի պատգամավոր, 1918-ից՝ ԱԴԻՀ կառավարության նախագահ, ՎԴՀ արտգործնախարար (1918) - Ա. Կ.:

⁴ Ղարաջյան Գ., նշվ. աշխ., էջ 37:

⁵ Նոյ Ժորդանիա (1869-1953) – վրացի քաղաքական և պետական գործիչ, մենշևիկ, ՎԴՀ վարչապետ (1918-1921) - Ա. Կ.:

⁶ Երզնկյան Ար. Աշխատավորության դատարանին, էջ 48:

⁷ Շահումյան Մտ. Երկեր, հ. 3, էջ 221:

մակցականները՝ միանալով բոլոր մուսավարական բեգերի և դավաճան մեհնչիկների հետ»¹:

Քաղաքական ու տնտեսական այն մեկուսացած, անկանելի վիճակում, որ ստեղծվել էր հայ ժողովրդի համար, նրա ամուլից խտտողները չըմբռնեցին, որ հեղափոխական Ռուսաստանն էր ժողովրդի միակ փրկությունը, նրա հետ էին կապված ոչ միայն հայ աշխատավորների սոցիալական ազատագրությունն ու առաջադիմությունը, այլև նրանց փրկության, գոյատևման երաշխիքը: Լինել հեղափոխական Ռուսաստանի հետ, ընթանալ միևնույն շարքում նրա պրոլետարիատի հետ, - հայ բուլշևիկների այս հավատո հանգանակն իր հիմքում ուներ ոչ միայն դասակարգային համատեղ պայքարի կենսական անհրաժեշտությունը, բոլոր ազգերի աշխատավորների ինտերնացիոնալ միասնությունը, որ առանց Ռուսաստանի օգնության մա փրկություն չուներ:

Սակայն Դաշնակցություն կուսակցության պարագլուխները, Հայոց Ազգային խորհրդի շուրջը խմբված մյուս գործիչներն ընթացան մեր ժողովրդի համար ամենավնասակար ուղիով: Նրանց միջև նույնպես միասնություն չկար: Պետական մտածելակերպի քաջակայություն, անկազմակերպվածություն, դիվանագիտական ճկունություն քանեցնելու անկարողություն, ահա թե ինչն էր բնորոշ նրանց գործելակերպին մասնավորապես 1918 թ. ամբողջ առաջին կեսում: Տրապիզոնի և Բաթումի կոնֆերանսներում նրանք ընկան լրիվ մեկուսացման մեջ: Էրզրումի և Կարսի անկման տխուր փաստը հետևանք էր ոչ միայն զինվորական անկազմակերպվածության, այնտեղ գտնված ուժերի հակոտնյա ձգտումների, Գեգեշկորու² և Օղիշկիժեի վարած պարտվողական գործելակերպի, այլև բուն հայկական ղեկավար մարմինների դրսևորած անճարակության, միացյալ գործողությունների քաջակայության: Այսպես օրինակ, դաշնակների պարագլուխներից մեկը՝ Տիգրան Բեկզադյանը³, 1918 թ. մարտին հեռագրում էր Ալեքսանդրասյուլ տեղական կոմիտեին՝ «Այս րոպեին⁴ գործամասերի ղեմ արգելքներ հարուցելու մասին»:

¹ Տեքյան Վ. Նամակներ հայ գյուղացիներին և բանվորներին // «Կոմունիստ» (Մ.), 1918, N 1:

² Եվզենի Գեգեշկորի (1881-1954) - վրացի քաղաքական և պետական գործիչ, Ռուսաստանի 3-րդ Պետական դումայի պատգամավոր, վրացական մեհնչիկների սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարներից, Արդյուկկայայան կոմիտեի արխիատի նախագահ, 1918-ից ՎԴՀ արտգործնախարար, արդարադատության նախարար (1921) - Ա.Կ.:

³ Տիգրան Բեկզադյան - քաղաքական գործիչ, դիվանագետ, ՀՀԴ կուսակցության անդամ, ՀԱԽ-ի անդամ, ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ադրբեջանում (1919) և Վրաստանում (1920) - Ա.Կ.:

⁴ Անդրանիկ (Անդրանիկ Օզանյան) (1865-1927) - ազգային-ազատագրական շարժման գործիչ, ազգային հերոս, զորավար, 1890-ականներից՝ հայրուկային շարժման, Առաքելոց վանքի (1901) և Աղթամարի (1904) կոիվների, բուլղարական շարժման կազմում Բալկանյան պատերազմների մասնակից, հրատարակել է բանակի կազմում Բալկանյան պատերազմների մասնակից, հրատարակել է «Մարտական հրահանգներ» (Ժնն) կանոնագիրը (1906), «Հայաստան» (Թ.)

մեկնում է սիբիրական վաշտը, բաղկացած տանկահայ զերիներից՝ ուս սպաների գլխավորությամբ: Վաշտը կարգապահ գործառնախ տպավորություն է բողոնում: Այդ էշեղնում են գտնվում մահ 800 հոգի տանկահայեր՝ Անդրանիկի հետ միասին: Ինքնապաշտպանության խորհրդի ասելով, Անդրանիկը ինքն է կազմակերպել այդ գորսխումբը: Ազգային խորհուրդը, դեմ լինելով նրան ճակատ ուղարկելուն, ինչո՞ւ ոչ մի միջոց ձեռք չի առել նրա մեկնումը խափանելու համար: Տեղեկացնելով Չեզ այդ մասին, ազգային խորհուրդը կարծում է, որ Դուք կարող եք Անդրանիկին այնպիսի խնդիր առաջադրել որևէ հեռավոր շրջանում, որ գործունեությունը վատ ազդեցություն չանի Չեք գործառնախի վրա: Սիբիրական վաշտը ցանկալի է բողոնել Չեք գորսխումբում: Անհրաժեշտ է, որ Չեք ցուցմունքները Անդրանիկը ստանա Ալեքսանդրապոլի հենց կայարանում»¹:

Կարսի նահանգի գաղթականները 1918 թ. մայիսի 5-ին Ալեքսանդրապոլից գրում էին դեկավար մարմինների, կուսակցական դեկավարների անկարողության, անգործության, անկազմակերպվածության մասին. «Մեզ խաբեցին և ծայր աստիճան թշվառության հասցրին»²:

1918 թ. մայիսի սկզբին Հայոց Ազգային խորհրդի նիստերից մեկում մի հռետոր այսպես էր խոսում. «Գիմվորական գործի գլուխ անցել են «հին բյուրոկրատ, հասարակական ջիղ չունեցող գիմվորականներ..., որոնք գործը վարում են դանդաղկոտությամբ..., մի թուղթ օրերով պտտվում է մի բաժնից մյուսը..., զենքերը ծախում են... Դասալքությունը բուն է դրել գիմվորական վարչի (զենքերալ Կորգանով³ – Ջ.Կ.) բաժնիներում. այնտեղ հարուստի զավակներ են աշխատում պատերազմից խուսափելով...: Հարուստների տղաները պրոտեկցիայի շնորհիվ ետ են կանչվում պահեստի գեղերից գրագրի անվան տակ»⁴: Տակավին այն ժամանակ նշվում էր, որ «հինքը կորպուսի հրամանատար Նազարբեկովը⁵ միանգամայն անհարմար է այդ բարձր և պատասխա-

բերքը (1917-1918), Կովկասյան ճակատում հայ կամավորների 1-ին ջոկատի հրամանատար, 1918-ից՝ հայկական բանակային կորպուսի երկրապահ դիվիզիայի հրամանատար, օգնություն է ցուցաբերել հայ փախստականներին, 1919-ից ասպետ է Ֆրանսիայում, Անգլիայում, ԱՄՆ-ում – Ա.Կ.:

¹ ՎՍՍՀ ՊԿՊԱ (Վրաստանի ազգային արիսիվ, Վրաստանի կենտրոնական պատմական արխիվ), ֆ. 1082, ց. 5, գ. 183, թ. 6:

² ՎՍՍՀ ՊԿՊԱ (ՀԱԱ), ֆ. 57, ց. 2, գ. 797, թ. 2:

³ Գավրիիլ Կորգանով (1880-1954) - ռուսական բանակի զենքերալ, զենքերալ-մայոր (1907), ՀՀ ռազմական նախարարության գլխավոր շտաբի սպա – Ա.Կ.:

⁴ Հայոց Ազգային խորհրդի արձանագրությունները, ք. 195-198:

⁵ Թովմաս Նազարբեկով (Նազարբեկյան) (1855-1931) – ռազմական գործիչ, ռուսական բանակի զենքերալ-մայոր (1915), ռուսական 2-րդ կովկասյան հրաձգային դիվիզիայի հրամանատար, 1916-ից՝ Վան-Կոսի ուղղությամբ գործող գործիչի խմբավորման, 1917-ից՝ Հայկական առանձին բանակային կորպուսի հրամանատար, նրա ընդհանուր հրամանատարությամբ հայկական զորքերն ու կամավորները 1918-ի մայիսին Ղարաբիխայի, Բաշ Ապարանի և Մարդարապատի ճակատամարտերում կանգնեցրին թուրքական զորքի առաջխաղացումը – Ա.Կ.:

մատու պաշտոնի համար. հուսահատ, գործի հաջողության չհավատացող և պանիկայի՝ ենթակա մարդուն բողնել այդ պաշտոնում՝ հանցագործություն է»¹:

Մինչդեռ Անդրկովկասի սեյմը ինչ-որ հույսեր էր կապում Տրապիզոնում խաղաղության հասնելու հետ, հրապարակվեց Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը: Թուրքական դիվանագիտությունն ու զինվորական հրամանատարությունն օգտագործում էին բոլոր միջոցները՝ ամեն զնով Անդրկովկասի տնօրեններին կատարված փաստի առաջ կանգնեցնելու համար:

Տրապիզոնի բանակցությունները մի անգամ ևս հաստատեցին թուրքական բաղադրականության ողջ նողկալիությունը²: Երեսպաշտություն, շողոքոթություն դիվանագիտության բնագավառում, ուխտադրություն, արյունաքրու դաժանություն ռազմական ասպարեզում՝ ահա թուրքական գործելակերպի ընդհանուր պատկերը: Թուրքական ներկայացուցիչները հավաստիացումներ էին տալիս, թե հարգելու էին Բրեստում որոշված սահմանները, կեղծավոր բաժակաճառեր էին ասում, շատախոսում բարեկամություն հաստատելու մասին: Վարագույրի ետևում տեղի էր ունենում թուրքական գործամասերի վերախմբավորում: Իսկ թուրքական «Թամին» պաշտոնաթերթը «Կովկասյան հարցը» հողվածում ցինիկորեն փորձում էր ապացուցել, որ Թուրքիայի կողմից Բրեստի պայմանագրի խախտում տեղի ունեցավ այն ռեալ պայմանների հետևանքով, որոնք «սպառնում էին Թուրքիայի շահերին» և այն վտանգի պատճառով, որը Թուրքիայի համար ստեղծել էր «անարխիան Կովկասում»³:

Ապրիլի 22-ին Անդրկովկասի հակասովետական, քուրժուա-ազգայնական կոալիցիան թուրքական ճնշման տակ երկրամասը հռչակեց անկախ, համաձայնեց ընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանները: Սակայն թուրքական գլխատիչը, չնայած զինադադարին, ապրիլի 25-ին առանց կովի տիրելով Կարսին, նոր, շատ ավելի վտանգավոր, երկրամասի ժողովուրդների, հեղափոխական ուժերի համար մահասարսուտ թռիչքի էր պատրաստվում: Դրան սպասելու համար շատ ժամանակ չպահանջվեց: Շուտով (մայիսի 11-ին) Բաթումում թուրքական և անդրկովկասյան պատվիրակությունների միջև ծայր առած բանակցությունների ժամանակ պարզվեց մի կողմից՝ թուրքական կառավարության՝ Անդրկովկասը ստրկացնելու ծրագիրը, մյուս կողմից՝ նորից անդրկովկասյան քուրժուաազգայնական կառավարող շրջանների խայտառակ պարտվողական վարքագիծը:

¹ Նոյն տեղում, ք. 199:

² Տրապիզոնի կոնֆերանսի մանրամասները տես ՀՍՍՀ ՊԿՊԱ (ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 9, քք. 179-181:

³ *Кавказское слово* (Т.), 1918, N 160.

Անդրկովկասի կառավարությունը հրամայեց գործին մարել տարածքը մինչև Արփաշայ: Ալեքսանդրապոլի աջափնյա ֆորտերը պետք է պայքեցվեին¹: Չնայած զինադադարին՝ բուրբակյան գործերը շարունակում էին ռազմական գործողությունները: Ապրիլի 15-ին բուրբերը գրավեցին Օրգովը՝ շարունակելով հարձակումը Իզդիլի ուղղությամբ: Նույն օրը Կարսի շրջանի բուրբերը հայտարարեցին, թե ռուսահպատակությունից հրաժարվում են և իրենց պատերազմի մեջ են հայտարարում հայերի դեմ: 1918 թ. ապրիլի 29-ին պայքեցվեցին Ալեքսանդրապոլի աջափնյա ֆորտերը, և գործերն անցան ձախ ափը: Մայիսի 6-ին հայկական կորպուսի հրամանատար զեներալ Նազարբեկովը հաղորդում էր քանակի հրամանատարին, որ բուրբերը առիթ էին փնտրում զինադադարը խախտելու համար: Նա խնդրում էր հաղորդել բուրբակյան հրամանատարությանը բուրբերի կողմից Ալալարալարի ուղղությամբ սահմանը խախտելու, Ալեքսանդրապոլի մոտակա գյուղերում բնակչությանը կողոպտելու, սպանությունների փաստերի մասին:² Երբ Վեհիքին և Խալիլ-փաշային³ Բաթումում հարց տրվեց, թե ինչու է շարունակվում հարձակումը, Վեհիք-փաշան ցինիկորեն պատասխանեց. «Վա մի միջոց է մեր պայմաններն ընդունել տալու համար»⁴:

Իսկ Ազգային խորհրդի մայիսի 8-ի նիստում Ռուբեն Տեր-Մինասյանն⁵ ասում էր. «Հիմա գորքը չգիտի, թե ինչու է կռվելու, լոզունգ չունի, դրա համար էլ լքվում է, քայքայվում... Պատերա՞զմ է, թե՞ հաշտություն, հայտնի չէ. պետք է պարզել մեր նպատակը, որ գործն էլ իմանա»⁶:

* * *

Մայիսի 15-ին բուրբակյան հրամանատարությունը անընթեռնելի մի վերջնագիր ներկայացրեց Ալեքսանդրապոլի ամրոցի պարետին: Թուրք

¹ ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ (ՀԱԱ), ֆ. 4047/1 (1457), գ. 194, ք. 14-15:

² Նույն տեղում:

³ Խալիլ-փաշա Քուր (1882-1957) – բուրբ ռազմական գործիչ, զեներալ, Էնվեր-փաշայի հորեղբայրը, «Թեշքիլար-ը մահստես»-ի ղեկավար, 1916-1918 թթ.՝ 6-րդ բանակի հրամանատար, 1918-ի մայիսին նրա գործերը գավառել են Ալեքսանդրապոլը, այնուհետև Ատրպատականով արշավել և սեպտեմբերին գրավել Բաթում, կոտորել շուրջ 30 հազար հայ, 1920-ի մարտին հրդեհել են Շուշի քաղաքը - Ա.Կ.:

⁴ Հայոց Ազգային խորհրդի արձանագրությունները, ք. 236:

⁵ Ռուբեն (Մինաս Տեր-Մինասյան) (1882-1951) – քաղաքական և պետական գործիչ, ազգային-ազատագրական շարժման մասնակից, 1915-ի Մասունի ինքնապաշտպանության ղեկավարներից, 1917-1918 թթ.՝ ՀԱԽ-ի անդամ, գրավել է արևմտահայ գաղթականների տեղավորմամբ, ՀՀ զինվորական նախարար, ասորել է Եգիպտոսում, Պաղեստինում, Լիբանանում, Ֆրանսիայում, «Հայ հեղափոխականի մը հիշատակները» բազմահատոր գրքի հեղինակ - Ա.Կ.:

⁶ Նույն տեղում, ք. 199:

սպան անհասպտղ պատասխան էր պահանջում: Մինչև պարետը կգար մտակա բուրբակիան պահակակետը՝ բուրբր քարզմանն է տալու (այդտեղ պահանջվում էր հանձնել Ալեքսանդրապոլը, Ալեքսանդրապոլ-Տուլչա երկաթուղագիծը, գորքերը 20 կմ հեռու քաշել Ալեքսանդրապոլից)՝ բուրբակիան գործառնաբն անցան ասեմանը, իսկ նրանց հրետանին տեղատարափ կրակ քացեց¹: Նույն օրը՝ գիշերը, Ալեքսանդրապոլը գրավված էր: Թուրքիան արդեն խախտեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որի անունից ճառում էին նրա ներկայացուցիչները Տրապիզոնի խորհրդածողովում: Թուրքական գորքերը Ալեքսանդրապոլի վրայով խուժեցին, մի կողմից՝ արևելք՝ դեպի Արարատյան դաշտ, Երևան, մյուս կողմից՝ դեպի հյուսիս-արևմուտք, Փամբակ, Լոռի, դեպի Թիֆլիս: Իսկ Թիֆլիսում Ազգային խորհրդի ղեկավարները, մայիսի 16-ին ամփոփելով իրենց նիստը, Ա.Ախարոնյանի² թերանով արձանագրում էին. «Ընդունել առանց վարանմունքների ավստրո-գերմանա-բուրբակիան օրինեստացիան...: Երկաթուղու օկուպացիան հանձնել Գերմանիային, հայկական շրջանները ենթարկել Գերմանիայի օկուպացիային, թեկուզ Անդրկովկասից անջատվելով»³:

Անորոշություն, խուճապ էր տիրում ամենուրեք: Թուրքական հրամանատարությունը պահանջում էր Սուրմալում, Շարուրը, Նախիջևանը, Երևանի, Էջմիածնի ու Ալեքսանդրապոլի գավառների մեծ մասը: Հայկական հրամանատարությունը անգոր էր գտնվել բուրբակիան նոր հարձակումը կանխելու, պաշտպանություն կազմակերպելու գործում: Սկսվեց ազգաբնակչության նոր տեղահանություն: Ազգային խորհրդի տվյալներով գաղթականների թիվը մայիսի 19-ին հասնում էր մոտ 475 հազարի, որից արևմտահայեր՝ 280 հազարից ոչ պակաս, Կարսի, Ալեքսանդրապոլի և այլ շրջաններից՝ 135 հազար և մոտ 25 հազար Արդիլին և Բարումի կողմերից: Եթե քսանց ավելացնենք Սուրմալուի, Էջմիածնի գավառների տեղահան եղած ազգաբնակչությունը, ապա գաղթականների թիվը հասնում էր 700-800 հազարի: Այս թիվն օրեցօր ավելանում էր: Դրությունը սոսկալի էր դառնում, և տեղ չկար նրանց տեղավորելու, սարերում ցուրտ էր, հաց չկար, ճանապարհ, մահանցի հեռանկար չկար:

¹ ՀՍՍՀ ՊԿՊԱ (ՀԱԱ), ֆ. 121, ց. 1, գ. 37, ք. 49-56:

² Ավետիս Ախարոնյան (1866-1948) – քաղաքական գործիչ, գրող, ՀՀԳ կուսակցության անդամ, 1907-1909 թթ.՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տնօրեն, 1909-ին քանտարկվել է «Դաշնակցության գործով», 1917-ից՝ ՀԱՍԻ-ի նախագահ, 1919-ից՝ ՀՀ խորհրդարանի անդամ, ապա՝ նախագահ, ՀՀ պատվիրակության ղեկավար Փարսիզի հաշտության կոմիտեանում, ստորագրել է Սերի հաշտության պայմանագիրը, մասնակցել Լոռոցի (1921) և Լոզանի (1922-1923) կոմիտեաններին, ապրել է Ֆրանսիայում, հիմնական աշխատությունները՝ «Ազատության ճանապարհին», «Սարդարապատից մինչև Սեր և Լոզան» - Ա.Ա.:

³ Հայոց Ազգային խորհրդի արձանագրությունները, ք. 212:

Ազգային խորհրդի նիստում բժիշկ Բաբայանն¹ ասում էր. «Թողնել իրեն ժողովրդին, որտեղ կարող է դիմադրել, դիմադրի, որտեղ չի կարող, թող գաղթի»: Նիկոլ Աղբալյանը² շարունակում էր. «Ով կազատվի, թող ազատվի»³: Այնտեղ արդեն խոսում էին այն մասին, որ «իրամանատարությունը հեռու լինելով ռազմական վայրերից, սխալ ղեկավարությամբ նպաստեց ռազմական գործողությունների անհաջողությանը»:

Փաստաթղթերից տեղեկանում ենք, թե ինչ էր նշանակում բուրբակյան օկուպացիան հայ բնակչության համար: Ախալքալարի բնակիչների մեծ մասը բողոչ էր հայրենի օջախը և ապաստանել մասամբ հարևան Բարտրիանիի անտառներում, մասամբ էլ մոտակա Ծալկայի լեռներում: «Գավառից իր ժամանակին անկարող եղան դուրս գալ Թաղչա, Խորենիա և այլ գյուղերի մոտ երկու հազար բնակիչները, որոնց բոլորին տաճիկները ջարդեցին»⁴: Ախալքալար քաղաքում նույն բանը կատարվեց:

Ալեքսանդրապոլի մասին, երբ այն բուրբակյան հրոսակների ձեռքին էր, փաստաթղթերից մեկում սպվում էր. «Իսպառ արգելվեց քրիստոնյաների մուտքը քաղաք և գավառ: Ու այդ օրերից քաղաքում սկսվում է կազմակերպված թալան... Բաց են անում խանութներն ու տները... Օրը ցերեկով դուրս են բերում ապրանքը և սայլերով ու ֆուրգոններով կրում... Պետական գույքը համարյա ամբողջովին տարված է, տարել են իմիջիայլոց փոստ-հեռագրատան, գանձարանի, երկաթուղու կայարանի, ղեկայի գույքը, տարված են նույնիսկ հեռագրաթելերը»⁵: Նույն աղբյուրը հաղորդում է, որ քաղաքի տղամարդկանց զանգվածաբար բռնում և ուղարկում էին Էրզրում: «Տարել են տեղական բնակիչներին և Կարսի, Սարիղամիշի և ուրիշ շրջանների փախստականներից: Հաղաքային վարչության կազմած ցուցակում կա դրանցից միայն 3000-ի ամուրը... Շատերին գազանային սուկայի տանջանքներով սպանել են գերության վայրերում ու աշխատանքների ժամանակ»: Գերությունից փախած մի զինվոր վկայում էր, որ հայ գերիներից շատերին քար են կրել տվել ու հենց այդ քարերով էլ սպանել: Եզիդի գերիներին կենդանի թաղել են իրենց իսկ փո-

¹ Արտաշես Բաբայան (1886-1959) - բժիշկ, քաղաքական գործիչ, ՀՀԴ կուսակցության անդամ, ՀԱՍ-ի անդամ, ՀՀ հանրային խնամակալության և աշխատանքի, սպա՝ հանրային խնամակալության և վերաշինության նախարար (1919-1920), ապրել է Իրանում - Ա.Կ.:

² Նիկոլ Աղբալյան (1875-1947) - հասարակական-քաղաքական գործիչ, գրականագետ, ՀՀԴ կուսակցության անդամ, Ազգային բյուրոյի և կամավորական գնդերի կարգադրիչ մարմնի անդամ, գրադվել է հայ գաղթականների տեղափոխման հարցերով, ՀՀ խորհրդարանի անդամ, լուսավորության նախարար (1919-1920), Բելյուրի Նշան Փալանճյան ճեմարանի տնօրեն, հիմնական աշխատությունը՝ «Պատմություն հայոց գրականության» (1947) - Ա.Կ.:

³ Նույն տեղում, ք. 218:

⁴ ՀՍԱՀ ՊԿՊԱ (ՀԱԱ), ֆ. 222, ց. 1, գ. 13, ք. 186:

⁵ Նույն տեղում, ֆ. 68/200, ց. 1, գ. 126, ք. 85-95:

քամ գերեզմաններում:¹ Հայ և ռուս գերի զինվորներին, սպաներին ոչնչացնում էին: Չամախչի գյուղի մոտ սպանեցին բազմաթիվ սպաների, որոնց անվտանգությամբ գերի ընկնելուց առաջ իբր քն երաշխավորել էին թուրքերը: Գնդապետ Վլադիմիրովին և 32 սպաների, շատ զինվորներ, մոտ 600 երեխաների Սամահին կայարանից ուղարկում են Մադալսու և բոլորին կոտորում²:

Ղարաքիլիսայում նույնիսկ Բաթումի հաշտության պայմանագրի կնքումից հետո էլ կոտորածի գոն դարձան 2000 տղամարդ, կին և երեխա³: Կողոպտվեց համարյա ամեն ինչ: Ընդհանուր առմամբ մայիսյան դեպքերի ժամանակ Ղարաքիլիսայում և շրջակայքում զոհվեց 7000 մարդ⁴:

1918 թ. մայիսի 16-ին փախստականների արտակարգ գործադիր հանձնաժողովը Դիլիջանից կաթողիկոսին ուղարկած հայտարարության մեջ տեղեկացնում էր, որ հայկական կորպուսի շտաբը ոչ մի տեղեկություն չունեք թուրքերի առաջխաղացման սահմանի վերաբերյալ և լուրերի վրա հենված են՝ քաղցում էր, որ թուրքերը մտել են ոչ միայն Ղարաքիլիսա, այլև Վարդանշու գյուղը: «Երբ գնե՞նրալի մոտ մեր առաջարկներն էինք անում, - ասված է փաստաթղթում, - հայտնեցին, որ դուրսը հավարված բազմաթիվ զինվորներ պահանջում են կազմակերպել իրենց և ուղարկել քչմամու դեմ...: Բոլորը պատրաստակամությամբ էին հայտնում իրենց զենքերով, գյուղացիք մի քանի օրվա իրենց պաշարով գնալ կռվելու»: «Հայկական հետախուզություն համարյա քն գոյություն չունի, - հայտնում էր հանձնաժողովը: - Շտաբը, հավատարիմ իր վարանոտ ընթացքին, փոխանակ ընդդիմության մասին մտածելու և ընդդիմարված գործին օգնության հասնելու, սայլեր լծած դեպի Ելենովկա է ընթանում»⁵:

Գեներալ Նազարբեկովն ամեն ինչ վերջացած էր համարում⁶: Մայիսի 16-ին նա հաղորդում էր Ալեքսանդրապոլի ջոկատի անհուսալի դրության մասին: Մայիսի 17-ին նա համաձայնեց Շեքի-փաշայի⁷ պահանջին՝ քացելու Ալեքսանդրապոլ-Ջուլֆա ճանապարհը: Մայիսի 18-ին նա Ղարաքիլիսայից հեռագրում էր Թիֆլիս՝ ազգային խորհրդին, համապատասխան ցուցում ստանալու, խուճապահար հաղորդելով, որ գորքը «մասսայորեն փախչում է», որ «ճակատում համարյա գորք չի մնացել. գնդերում մնացել են 100-ական հոգի»: Ինքը մտադիր է «եղած գորքն էլ ցրել, կամ թուրքերի գալուն պես անձնատուր լինել»⁸: Գեներալը կազմալուծվելու, կամ թուրքերի գալուն սպասելու և նրանց ողորմածությանը հանձնվելու դիրքից էր մտտենում, չգիտեր «մեզ հաշ-

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում, ֆ. 200, գ. 39, ք. 1-3:

³ Մ.Ի Հայկական ֆիլիալի արխիվ (ՀԱԱ), ֆ. 4047/1 (1457), գ. 251, ք. 107:

⁴ Նույն տեղում, գ. 319, ք. 1:

⁵ ՀՍՍՀ ՊԿՊԱ (ՀԱԱ), ֆ. 57, ց. 2, գ. 797, ք. 9-10:

⁶ Մ.Ի Հայկական ֆիլիալի արխիվ (ՀԱԱ), ֆ. 4047/1 (1457), գ. 194, ք. 22:

⁷ Յաղուք Շեքի-փաշա (1876-1939) – թուրք ռազմական գործիչ, գեներալ, 36-րդ կովկասյան դիվիզիայի հրամանատար - Ա.Կ.:

⁸ Հայոց Ազգային խորհրդի արձանագրությունները, ք. 213:

վել թուրքերի հետ պատերազմի¹, քն² զինադադարի վիճակում»³: Բանը հանգուցում էր պարզապես դիմադրությունը դադարեցնելուն: Այդ էին պահանջում թուրք միլիտարիստները. Քաբուսի կոնֆերանսում Խալիլը շտապում էր ազդարարել, որ «ժայերը պայտված են և պետք է ենթարկվեն»⁴: Ստեղծված դրությունից այլ ելք չէին գտնում Թիֆլիսում մտած Ազգային խորհրդի պարագլուխները: Այդ խորհուրդը Նազարբեկովի հաղորդագրությունների, Քաբուսի իր պատվիրակներ Քաջագնունո⁵ ու Խատիսովի տեղեկությունների հիման վրա, առանց բուն երկրում ստեղծված կացությանը իրագել լինելու, առանց իր ընդունելիք որոշման մահաբեր հետևանքները կշռադատելու, եզրակացնում էր, որ դիմադրությունն այլևս անիմաստ է, անհնարին:

Ազգային խորհրդի մայիսի 25-ի նիստում, այսինքն՝ նույնիսկ Երևանի մատույցներում հայկական դիմադրության առաջին հաջողություններից հետո Ադրայանն ասում էր. «Պետք է հայտարարենք, որ պարտված ենք և կրեք դրա բոլոր հետևանքները», «գորքը ցրել և ընդունել Թուրքիայի պահանջները»⁶:

Երևանի Ազգային խորհուրդը Թիֆլիսի Ազգային խորհրդից կարգադրություն է ստանում՝ առանց դիմադրության քաղաքը թուրքերին հանձնելու մասին: Այստեղ էլ Դաշնակցության ներկայացուցիչներն էին պաշտոնապես գլուխ կանգնած: Քաղաքային դումայում դաշնակցական թաշյանը մինևույն տեսակետն էր պաշտպանում՝ քաղաքն առանց դիմադրության հանձնել թշնամուն: Քաղաքի պարետ, դերասան Շահխաթունի⁵ այդ ու հացով թուրքերին պետք է դիմավորեր քաղաքի մատույցներում: Երևանի թուրք բանագնացն ուղարկվել էր Շեքի-փաշայի մոտ, այդ որոշման մասին նրան իրագել պահելու:

Սակայն ժողովրդի մեջ տարեբայնորեն տիրապետող էր դառնում թշնամուն հակահարված տալու տրամադրությունը: Մայիսի 18-ին, 19-ին, երբ

¹ ՄԽ Հայկական ֆիլիալի արխիվ (ՀԱԱ), ֆ. 4047/1 (1457), գ. 175, ք. 57-58:

² ՀՍՍՀ ՊԿՊԱ (ՀԱԱ), ֆ. 68/900, գ. 23, ք. 112:

³ **Հովհաննես Քաջագնունի (Իգիթխանյան) (1868-1938)** – քաղաքական գործիչ, ճարտարապետ, ՀՀԴ կուսակցության անդամ, 1905-1906 թթ. հայ-քարաքական ընդհարումների ժամանակ մասնակցել է «Խաղաղաբար հանձնաժողովի» աշխատանքներին, դեմ էր կամավորական շարժմանը, 1917-1918 թթ.՝ ՀԱԽ-ի անդամ, Անդրկովկասյան սեյմում՝ ՀՀԴ ներկայացուցիչ, ստորագրել է Քաբուսի պայմանագիրը, 1918-1919 թթ.՝ ՀՀ վարչապետ, 1923-ին հրատարակել է «Հ.Յ.Դաշնակցությունն անելիք չունի այլևս» գրքույկը և վերադարձել Խորհրդային Հայաստան, 1937-ին անհիմն բռնադատվել է, մահացել է բանտում - Ա.Կ.:

⁴ Հայոց ազգային խորհրդի արձանագրությունները, ք. 223:

⁵ **Արշավիր Շահխաթունի (1885-1957)** – դերասան, խաղացել է Թիֆլիսի հայոց դրամատիկական ընկերության, ապա՝ Բարվի մշակութային միության քառերանդաններում, պատերազմի ժամանակ ծառայել է ռուսական բանակում, մինչև 1920-ի վերջերը՝ Երևանի զինվորական պարետ, սպորտ է Փարիզում, նկարահանվել ֆրանսիական կինոֆիլմերում, նկարահանել է «Անդրանիկ» ֆիլմը - Ա.Կ.:

արդեն պարզ էր դարձել քաղաքային դումայի որոշումը, երբ արդեն գծագրվում էր քուրբական օկուպացիայի դժնի պատկերը, քաղաքի կենտրոնական մասում երկու օր շարունակ չէր դադարում բողոքի միտինգը պարտվողական դիրքորոշման դեմ: Սա հաշվի չառնել արդեն հնարավոր չէր: Անա այդպիսին էր կացությունը: «Այլևս դանակը ոսկորին էր հասած. մեր ժողովրդի առողջ և անխալակական բնագոյն զգաց մոտալուտ սարսափելի աղետը, նա այլևս բավ համարեց Բարոմում ու Թիֆլիսում մատողներու խաղը-խայտառակությունները և ծառացավ իր բշնամիին դեմ այն թուպին, երբ անկա հարմար առիթը համարած էր հայությանն մահացու հարված տալու, գայն իր սիրտն գարնելու»¹:

«Երևանի ամբողջ հայ ժողովուրդը վճռել է դիմադրել, - ասվում էր արդեն Երևանի Ազգային խորհրդի 1918 թ. մայիսի 21-ի կոչում: - Դիմում ենք բոլոր հայ-սպաններից, որպեսզի նրանք զան և կամավորական խմբերի գլուխ անցած ընդառաջեն բշնամուն»²:

Երևանի Ազգային խորհրդի մի այլ կոչում (1918 թ. մայիսի 23) ասված էր. «Տաճիկները գրավել են Ղարաբախիսեն: Կորպուսի շտաբը փոխադրվել է Դիլիջան: Նույնիսկ Դիլիջանից ահագին գաղթականություն է սկսվել դեպի Նոր Բայազետի գավառը:

Այստայից հայտնում են, որ այդ շրջանում կուտակվել է հարյուրիցավառանգ գաղթականություն, որը խելակորույս, տված, ծարավ թափառում է սարերում: Նրանց դրությունը սոսկալի է: Նույնիսկ շատ տեղեր գաղթականների մեջ արյունահեղ դեպքեր են տեղի ունենում: Հենց այս թուպին հացի մեծ պակաս է զգացվում:

Պարզ է, որ գաղթելու տեղ չկա, և գաղթը միանգամայն կորստաբեր է:

Իմացե՛ք և հետևյալը: Երբ որ տաճիկները որևէ տեղ տիրապետում են, այնտեղից ժողովրդին նրանք այլևս թույլ չեն տալիս վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը:

Ուրեմն երկու չարիքից փոքրագույնն այն է, որ ժողովուրդը չգաղթի և մնա իր տեղերում»³:

Գեներալ Սիլիկովը⁴ նույնպես խուճապի մեջ էր: Մայիսի 20-ին նա հայտնում էր Երևանյան ջոկատի ողբերգական դրության մասին, գալիս այն

¹ «Աշխատանք» (Ե.), 1918, 19 մայիսի:

² ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ (ՀԱԱ), ֆ. 4047 (1457), ց. 1, գ. 206:

³ Նույն տեղում:

⁴ Մովսես Սիլիկով (Սիլիկյան) (1862-1937) – ռազմական գործիչ, ռուսական բանակի գեներալ-մայոր (1917), Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ եղել է գնդի, ապա՝ վանի զորախմբի հրամանատար, Էրզրում քաղաքի պարետ, 1918-ից՝ 1-ին հայկական հրաձգային դիվիզիայի, Երևանյան զորախմբի հրամանատար, քուրբական հարձակման ժամանակ ստանձնել է կանոնավոր զորամասերի և աշխարհագրոպայինների ընդհանուր հրամանատարությունը, Սարդարապատի և Բաշ Ապարանի ճակատամարտերում ջախջախիչ հարված է հասցրել

եզրակացության, որ «գորքերի հետագա դեկավարումը անհնարին է դառնում»: Նա գտնում էր, որ իրադրությունը պահանջում է անհապաղ խաղաղություն կնքել: Նա նույնիսկ պառլամենտյոններ է ուղարկում թուրքերի մոտ՝ հայտնելու, որ Անդրկովկասյան կառավարությունն իրեն զինադադարի մեջ է համարում թուրքերի հետ: Սակայն նրանք վերադարձան ձեռնունայն, բանգի թուրքերը պահանջում էին մեկ ժամվա ընթացքում վայր դնել զենքերը¹: Մայիսի 21-ին կորպուսի հրամանատարը հաղորդում էր Շերի-փաշային, որ ինքը կառավարության կողմից լիազորված է համաձայնության գալ թուրքական հրամանատարության հետ Ալեքսանդրապոլից դեպի Ջուլֆա թուրքական գորքերը տեղափոխելու համար: Միաժամանակ նա բանակի հրամանատարին և Ազգային խորհրդին հայտնում էր, որ իրեն զարմացնում է, թե ինչու են իր վրա բանակցություններ վարելու պարտականություն դրել այն ժամանակ, երբ թուրքերը չեն ցանկանում խոսել²: Թեև մայիսի 21-ին ժամը 17-ին Սարղարապատի մոտ սկսվել էին մարտերը, Սարղարապատի ջոկատը նահանջել էր Քերպալա և Հայկական Չեյվա գիծը, նա նորից բանակի հրամանատարին և ազգային խորհրդին զեկուցում էր գորքի քայքայված լինելու, սննդամթերքի, սպառագինության մասին և պահանջում էր հաշտություն կնքել: Մայիսի 23-ին նորից զինադադար կնքելու հարց էր դնում³:

Մայիսի 26-ի նիստում Թիֆլիսի Ազգային խորհուրդը որոշեց բանակի ցրումը թողնել Նազարբեկովի հայեցողությանը⁴: Ահա թե ինչու Սարղարապատի հաղթանակը նրանք «անսպասելի» համարեցին:

Ինչ խոսք, որ ժողովրդին վաղուց օտարացած գեներալներն ու մյուս «մեծերը» հասու չէին այն բեկմանը, այն հիքրավի շրջադարձային փոփոխություններին, որ կարճ ժամանակում տեղի էին ունենում մարդկանց գիտակցության մեջ: Նրանք ոչ միայն անգոր էին մտածելու թշնամու դեմ ուժերը համախմբելու համար, այլև ի վիճակի չէին նկատելու ժողովրդի տրամադրության փոփոխությունը, դիմադրելու, թշնամուն հակահարված տալու նրա պատրաստականությունը⁵: Չորսամասերից երեկ հեռացած, ցրված գեներալները այսօր վերադառնում էին շարք, համարում կազմալուծված զորաջոկատները:

Իսկ դաշնակցական «քաղաքագետները» փրկությունը տեսնում էին այն բանում, որ շատ որոշ Գերմանիային ասենք. «Մենք խոնարհվում ենք Չեր առաջ, ընդունում ենք Չեր հովանավորությունը և գործելու ենք ձեզ հետ»⁶: Նրանք որտեղի⁶ց իմանային, որ Երևանի մատույցներում՝ Սարղարապատում

թուրքական գորքերին, կանցրել նրանց հարձակումը, 1920-ից՝ հայկական գորքերի հրամանատար Կարս-Ալեքսանդրապոլ ճակատում, 1937-ին անհիմն բռնադատվել է - Ա.Կ.:

¹ Նույն տեղում, գ. 194, ք. 24:

² Նույն տեղում, ք. 25:

³ Նույն տեղում, ք. 4047/1 (1457), գ. 194, ք. 25-26:

⁴ Հայոց Ազգային խորհրդի արձանագրությունները, ք. 229:

⁵ Մ.Լ. Հայկական ֆիլիալի արխիվ (ՀԱԱ), ք. 4047/1 (1457), գ. 232, ք. 1:

ու Բաշ Ապարանում, Ղարաքիլիսայի մոտ հայ շարքային մարդիկ՝ քաղցած ու մերկ, վատ զինված՝ օրհասական, բայց և հերոսական կռիվ էին տալու օսմանյան հրոսակներին: Նրանց ներկայացուցիչները Բաթումից խորհուրդ էին տալիս «ռազմական դիմադրություն ցույց չտալ թուրքերին»,¹ իսկ Թիֆլիսում ծվարած Հայոց Ազգային խորհուրդը, ժողովուրդից ու սեփական երկրից կտրված, մտածում էր միայն թուրքերի գոբը շարժելու մասին, ամեն կերպ ընդառաջում էր՝ նրանց «չզայրացնելու» համար: Ահա թե ինչու պարտվողական տեսակետը գործի վերածելու նպատակով Երևանի Ազգային խորհրդին Թիֆլիսից ցուցում էր տրվում կամակորոտություն հանդես չբերել և դիմադրությունը դադարեցնել: Այս էր պահանջում Դաշնակցության Արևելյան բյուրոն, որի ցուցումը ստորագրել էր ոչ անհայտ Համո Օհանջանյանը:

Իսկ ի՞նչ էր նշանակում դա, եթե ոչ Հայաստանի վերջնական կործանում, հայ ժողովուրդի բեկորների խսպառ քնաջնջում թուրքական հրոսակների կողմից: Անդրկովկաս ներխուժած թուրքական զորքը արդեն ձեռնամուխ էր եղել այդ բանին: Մայիսի 19-ին թուրքերը հասել էին Մալիտայի լեռները: Ալանատեսը պատմում է, որ մայիսի 19-ից 20-ը Համամլուից մինչև Համզալիման, փոքր տարածության վրա, ձորում հավաքվել էին տասնյակ հազարավոր փախստականներ: Նրանց քարավանը «ոչ դադար ուներ, ոչ էլ ծայր», իսկ «փշմամին կրնկակոխ հետևում էր խուճապի մատնված, բռնությունից տուժած բազմահազար գաղթականությանը»²: Մայիսի 21-ին թուրքերը գրավեցին Համամլուն:

Մայիսի 22-ին Սարդարապատի մոտ հայկական զորամասերը, հին և նոր հայրուկների խմբերը և նրանց հետ միացած աշխարհագրայինները առաջին վճռական հակահարվածը տվին թուրքական կանոնավոր բանակին՝ մույն օրը՝ երեկոյան, վերագրավելով Սարդարապատ գյուղն ու կայարանը:

Առաջին իսկ կռիվներում առանձնապես աչքի ընկավ 5-րդ հայկական հրաձգային՝ Մահապարտների գունդը, որի հրամանատարն էր գնդապետ Պավել Փիրումյանը³։ Սարդարապատի հերոսամարտի հիրավի ոգեշնչող ու ղեկավար՝ Սուրմալուի ռազմաճակատի հրամանատար, գնդապետ Դանիել-Բեկ-Փիրումյանի⁴ հորեղբոր որդին: Այս գունդը որպես գումարտակ կազմա-

¹ ՀՍՍՀ ՊԿՊԱ (ՀԱԱ), ֆ. 68/200, գ. 23, ք. 112:

² Մ.Ղ. Ղարաքիլիսայի հերոսամարտը, Թ, 1920, էջ 5-6:

³ Պողոս (Պավել) Փիրումյան (Փիրումով) րեկ Կարամանի (1856-1921) – ռազմական գործիչ, ռուսական բանակի գնդապետ, 1916-ից՝ հայկական 5-րդ հրաձգային գնդի հրամանատար, մասնակցել է Վանի, Մուշի համար մղված մարտերին, Սարդարապատի ճակատամարտում եղել է 5-րդ (Գարարադյան) գնդի հրամանատար - Ա.Կ.:

⁴ Դանիել Բեկ-Փիրումյան (Փիրումով) (1861-1921) – ռազմական գործիչ, ռուսական բանակի գնդապետ, 1914-ից կռվել է Կովկասյան ռազմաճակատում, եղել է գումարտակի, գնդի հրամանատար, մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին՝ որպես Սարդարապատի զորաջոկատի ընդհանուր հրամանատար - Ա.Կ.:

վորվել էր տակավին 1916 թ. մայիսին Մարանդում (Պարսկաստան), սկստիվ մասնակցություն ունեցել Վաճի շրջանի կռիվներին, Հայոց ձորի և Ռստանի շրջանի գրավմանը և 1917 թ. հուլիսին վերակազմվել 5-րդ կովկասյան հրաձգային գնդի: Նրա կորիզը դարաբաղիցներ էին: Հերոսամարտի մախոթի այն կանգնած էր Արաբի ափին՝ Մարգարա և Ղուրղուտլի գյուղերում: Թշնամու վրա առաջին հրետանային կրակ քացողը կապիտան Խորեն Իգիթ-խանյանի մարտկոցն էր, որը ցաք ու ցրիվ արեց Վերին ու Ներքին Կուլիբեկլու գյուղերը մտած և Ղամշլու կիսակայարանի շրջանը հասած թուրքական աս-քյարներին:

Սարդարապատի հերոսամարտի առաջին գծում էին գնդապետ Դուռ-խանյանի 6-րդ գունդը, գնդապետներ Սիլինի և Պերեկրյուտկովի զորամասերը, կապիտաններ Սակիյարիի, Կլիշի, Աբանեսյանի մարտկոցները, Թուրցիկ Հովսեփի, Մուրադի, Մակեդոնի հեծյալ ջոկատները, Քոչույի, Գրիգորի, Ռաշոյի և այլոց հետևակ խմբերը: Կովի դաշտում էին քաղաքական տարբեր հոսանքների ու կուսակցությունների պատկանող մարդիկ, եկեղեցականներ ու մտավորականներ, բանվորներ, արհեստավորներ ու հողագործներ, երիտասարդներ ու ծերեր, կանայք ու պատանիներ: Կովի դաշտում էին Ղուկաս Ղուկասյանը¹ ու Բատիկ Բատիկյանը², Ակսել Բակունցը³ ու Գրիգոր Ղափանցյանը⁴, Հովհաննես Բաղրամյանը⁵ ու Հատիկ Ազիզյանը, Արամ Կոստանյանն ու Լիպարիտ Աբարբեկյանը և շատ ուրիշներ:

¹ Ղուկաս Ղուկասյան (1899-1920) - բուլշևիկ-հեղափոխական, 1919-ին մասնակցել է «Սպարտակ» երիտասարդական կազմակերպության հիմնադրմանը, մասնակցել է Մայիսյան ապստամբությանը - Ա.Կ.:

² Բատիկ Բատիկյան (1892-1920) - բուլշևիկ-հեղափոխական, ՌՍԳԲԿ անդամ, հեղափոխական գործունեություն է ծավալել Նոր Բայազետում, 1919-ին ստեղծել է երիտասարդական միություն, գնդակահարվել է Մայիսյան ապստամբությունից հետո - Ա.Կ.:

³ Ակսել Բակունց (Ալեքսանդր Թևոսյան) (1899-1937) - գրող, բանասեր, բարգմանիչ, կինոդրամատուրգ, 1918-ին կամավորական խմբերի կազմում մասնակցել է ազատագրական պայքարին (Էրզրում, Կարս, Սարդարապատ), 1924-1926 թթ.՝ Ջանգեզուր գավառի գլխավոր գյուղատնտես, անհիմն բռնադատվել է և գնդակահարվել: «Մթնածոր», «Սև ցելերի սերմնացանը», «Աճճերը», «Շորայրության ընկուզենիները» գրական ժողովածուների, «Սև քի տակ», «Տրագեդիա Արագածի վրա», «Ջանգեզուր» կինոնկարների սցենարների, «Խաչատուր Աբովյանի «Աճ-հայտ քացակայունը» ուսումնասիրության հեղինակ - Ա.Կ.:

⁴ Գրիգոր Ղափանցյան (1886-1957) - լեզվաբան, բան. գիտ. դ-ր, պրոֆ., ՀԽՍՀ ԳԱ անդամ, գիտության վաստակավոր գործիչ, 1950-1956 թթ.՝ ԳԱ Լեզվի ինստիտուտի տնօրեն, հիմնական աշխատությունները՝ «Լեզվական ընդհանուր տարրեր ուրարտական և խեթական լեզուների միջև», «Հին Հայաստանի տեղադրման պատմա-լեզվաբանական նշանակությունը», «Խեթական ատոլածները հայերի մոտ», «Արա Գեղեցիկի պաշտամունքը», «Հայաստան-հայերի բնօրրան» - Ա.Կ.:

⁵ Հովհաննես (Իվան) Բաղրամյան (1897-1982) - ԽՍՀՄ մարշալ, կրկնակի հերոս, 1918-ին մասնակցել է Քերմանշահի, Սարիղամիշի, Կարսի շրջաններում թուր-

Մայիսի 24-ին գեներալ Սիլվիովը հայտնում էր, որ օրվա ընթացքում հայկական զորամասերը հետապնդում էին երկաթուղու երկայնքով և Արագածի փեշերին նահանջող թշնամուն: Թշնամու զորամասերը Սարդարապատի և Արարսի շրջանից մեծ խմբերով հեռանում էին հյուսիսարևմտյան ուղղությամբ¹:

Թուրքական զորամասերը բռնեցին նահանջի ճանապարհը՝ մայիսի 22-ից 26-ը նոր հարվածներ ստանալով անձնուրացությամբ ու խիզախությամբ համակված հայ մարտիկներից:

Մայիսի 24-25-ին Ղարաբիխայի, Բաշ Ապարանի և Սարդարապատի ուղղություններով հարձակման անցած բուրբական զորամասերը այլևս անկարող էին հաջողության հասնել:

Մայիսի 28-ին տակավին շարունակվում էին արյունալի կռիվները: Մայիսի 29-ին բուրբական զորամասերը թողեցին Ներքին Թալինը և Ղառա-Ռուռու կայարանը, անկառն փախուստի դիմեցին դեպի Համամյու և Ալեքսանդրապոլ: Բայց միաժամանակ նրանք, զինադադարի բանագնացներ ուղարկելով, ազդարարեցին, իբր թե, Բաթումում կնքված հաշտության մասին: Սա խաբեություն էր, քանի որ այդպիսի պայմանագիր կնքվեց միայն հունիսի 4-ին:

Ղարաբիխայի, Սարդարապատի և Բաշ Ապարանի հերոսամարտերը փրկեցին հայոց երկիրը վերջնական գրավումից և ժողովրդին՝ վերջնական բնաջնջումից: «Համուն հայ ժողովրդի գոյատևության ու ազատության, հերոսաբար դիմադրելով թուրք ջարդարարներին, - գրում է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, - Սարդարապատի մարտիկները փաստորեն պատերազմում էին այն ուժերի դեմ, որոնք պատրաստվում էին հայ ժողովրդի կրծքավանդակի վրայով նետվել Անդրկովկաս՝ նպատակ ունենալով արյան մեջ խեղդել Բաքվի կոմունան, տիրանալով նաև Բաքվի նավթին, որի կարիքն օղի ու ջրի պես զգում էր թուրք-գերմանական կոալիցիան»²:

րական զորքի դեմ մղված կռիվներին, որպես 1-ին հատուկ հեծելազորային գնդի դասակի հրամանատար՝ Սարդարապատի ճակատամարտին, եղել է Հայկական հրաձգային դիվիզիայի գնդապետային Լևակյորոնի, ապա՝ հեծելազորի հրամանատար (1923-1931), 5-րդ հեծյալ դիվիզիայի շտաբի պետ, Հայրենական մեծ պատերազմի ժամանակ՝ հարավարևմտյան ուղղության օպերատիվ շտաբի պետ, 16-րդ բանակի, 1-ին մերձբալթյան ռազմաճակատի, 3-րդ բելոռուսական ռազմաճակատի հրամանատար, 1945-ից՝ ԽՍՀՄ պաշտպանության փոխնախարար, 1959-ից՝ հրամանատար, 1954-ից՝ ԽՍՀՄ պաշտպանության ռազմազնային օկրուգի ՋՈՒ քիկուրնի պետ, ԽՍՀՄ, ՀԽՍՀ, Լատվիական ԽՍՀ զերագույն խորհուրդների պատգամավոր, ռազմագիտական և հուշագրական քնույթի աշխատությունների հեղինակ - Ա.Կ.:

¹ Մ.Ի Հայկական ֆիլիալի արխիվ (ՀԱԱ), ֆ. 4047/1 (1457), գ. 194, ք. 25-26:

² Թուրքյան Հ. Սարդարապատի հերոսամարտը, էջ 7:

Չկարողանալով կոտրել հայ ժողովրդի դիմադրությունը՝ Թուրքիան գերադասեց ճանաչել Հայաստանի «անկախությունը», զինադադար կնքել և ամբողջ ուժն ուղղել Բաքվի դեմ:

Տրապիզոնում քուրթական պատվիրակությունը լսել անգամ չէր ուզում հայերի մասին, և պատվիրակության նախագահն իր բացման խոսքում հայ անունն անգամ չտվեց և հայտարարեց՝ ուր հասնի քուրթ զինվորը, այնտեղ էլ հայ չի կարող գոյություն ունենալ¹: Թիֆլիսում Գերմանիայի ներկայացուցիչը Հայոց Ազգային խորհրդի նախագահին փաստաթղթեր էր ցույց տվել, որոնք հաստատում էին, որ քուրթերը վճռել էին հայերին բնաջնջել նաև Կովկասում: Թուրք ղեկավարների տրամադրությունը սոսկալի բշմամական էր հայերի հանդեպ մինչև մայիսի վերջին օրերը, և հանկարծ հեղաշրջում է կատարվում նրանց տրամադրության մեջ:

Կ. Պոլսում 1918 թ. հունիսին Թուրքիայում Գերմանիայի դեսպան Բերն-սդորֆը զարմանք էր հայտնել, թե «Թուրքիան, որ ուր օր առաջ լսել անգամ չէր ուզում Հայաստան ստեղծելու մասին (մանավանդ Էնվեր և Թալեթ-փաշաները), հանկարծ համաձայնություն տվեց...»:² Այս բոլորը կարծես թե պետք է հասկանալի լիներ անգամ ոչ քաղաքագետներին: Բայց դաշնակցական ղեկավարները միայն շոյվեցին, երբ մայիսի 27-ին Խալիլն ու Վեհիբը իրենց մոտ հրավիրեցին Քաջագունուն ու Խատիսովին և բարեկամական տոնով խոսեցին: Խալիլը հաճոյախոսում է հայերի հասցեին, Խատիսովին խնդրում հաղորդել Հայոց ազգային խորհրդին, թե քուրթերը դեմ չեն Կովկասի սահմաններում «Հայաստան կազմելուն»: Իսկ Վեհիբն ավելացնում է. «Հայ գործը հիանալի է կռվել... Ըստ Շևքի-փաշայի տեղեկության՝ նա մնաց կռիվ չի տեսել տանկական ոչ մեկ զորաճակատում, չնայած մեր ուժերին (10 հազար կանոնավոր զորք, չհաշված կամավոր հրոսակներին, իսկ հայերը՝ 7000) ու տեխնիկական առավելություններին, կռիվը 4 օր տևեց: Այդ կռիվը զանազան խորհրդածությունների նյութ է դառնում, - որ Կովկասում դուր բռնելու եք Բուլղարիայի տեղը»³: Նա առաջարկում է հայերի հետ պայմանագիր կնքել:

Վեհիբը լռում էր քուրթական զորքի պարտության ու փախուստի մասին: Իսկ հայ «դիվանագետները» չէին զարմանում, թե ինչ փոփոխություն է դա. չէ՞ որ մինչ այդ քուրթերը կտրականապես պահանջում էին ազատել Ալեքսանդրապոլ-Ջուլֆա գիծը, դադարեցնել դիմադրությունը, բանի որ, նրանց կարծիքով, դա անօգուտ էր:

Մարտի դաշտում հաղթանակել էր հայ զինվորը, իսկ Բաթումում պարտվում էին Խատիսով-Քաջագունի «դիվանագետները»:

Սարդարապատը զգաստացրեց Խալիլ-Վեհիբին, իսկ հայկական պատվիրակությունը Բաթումում շարունակում էր հին ընթացքը՝ անհրազեկ բուն երկրի իրադարձություններին, անզիտակ մարտի դաշտում տարած հաղթա-

¹ ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ (ՀԱԱ), ֆ. 4047/1 (1457), գ. 241, ք. 1:

² Նույն տեղում, գ. 260, ք. 2:

³ Նույն տեղում, գ. 1, գ. 241, ք. 2:

նակից: Թուրքական հորդանները հեշտությամբ անցան Երզնկայից մինչև Ալեքսանդրապոլ, առանց ճիզերի տիրեցին Էրզրում և Կարս քերդաքաղաքներին, և Վեհիքը մեծամտորեն հայտարարում էր, թե «ուզամ լուպեին կարող է հանդիսավոր մարշով անցնել մինչև Ջուլֆա»: Բայց Սարդարապատի հերոսական դիմադրությունը «հարզանք» էր ներշնչել նրան հայերի հանդեպ: Վեհիքի շողորորոտյունները բնավ չէին հանում օրակարգից թուրքական հայաջինջ քաղաքականության իրագործումը, այն միայն հետաձգվում էր հայկական ինքնապաշտպանության շնորհիվ: Իսկ դաշնակցական պարագլուխները դառնում էին «ռեալիստ», այսինքն՝ ոչ ավելի, ոչ պակաս բուրքոֆիլ: Շուտով Ահարոնյանը Կ.Պոլսում թերթերից մեկի թղթակցին ասում էր, թե Կ.Պոլիս ժամանած հայկական պատվիրակության խնդիրների մեջ ամենևին չի մտնում թուրքահայերի հարցը, իսկ կովկասահայերի հարցը կարող է լուծվել միայն Թուրքիայի բարյացակամ վերաբերմունքի դեպքում: Նա արդեն հայտարարում էր, թե «եվրոպական տերությունների բարեկամությունը և հովանավորությունը մեզ շատ բանկ նստեցին, նրանցից այժմ մենք որևէ օգուտ սպասել չենք կարող»: Նա հույս էր տաժում, որ առաջիկա բանակցությունների ժամանակ թուրքական կառավարությունը իրենց նկատմամբ «կգործեր ներդամտորեն-բարյացակամորեն»¹:

Բաբումի պայմանագրով (1918 թ. հունիսի 4) դաշնակցականները պարտավորվեցին հայկական զորամասերը դուրս բերել Բաքվից, դադարեցնել կռիվը Թուրքիայի դեմ նաև այնտեղ:

Բաբումի դաշնագրով Թուրքիան առաջինը ճանաչեց Հայաստանի «անկախությունը»: Ինչպիսի պարադոքս: Դա ոչ թե ծրագրված քայլ էր, կանխամտածված արևմտահայության դահիճների կողմից, այլ հետևանք քաղաքական, ռազմական, դիվանագիտական այն կացության, որ ստեղծվեց Թուրքիայի համար Սարդարապատի և Ղարաբիլիսայի շրջաններում հայ ժողովրդի ցույց տված աննախընթաց դիմադրության, ապրելու համար նրա մղած կենաց-մահու պայքարի շնորհիվ:

Սարդարապատի ճակատամարտը համաժողովրդական մի կռիվ էր հանուն պատվի, ապրելու և գոյատևելու: Այդ հերոսամարտը մեր ժողովրդի ազգային-ազատագրական բազմադարյան պայքարի ամենակախյուն էջերից մեկն է, որն անցնջելի է նրա պատմությունից:

¹ ՀՍՍՀ ՊԿՊԱ (ՀԱԱ), ֆ. 200/1, գ. 7, ք. 239:

ԵՐԵՎԱՆԻ ՉԱՅՆԸ¹

Ռադիոյի օրվա կապակցությամբ «Գրական քերթ»-ի աշխատակիցը ե-ղավ Հայկական ՄՍՀ Միմիստրների սովետի ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեի նախագահ ընկ. Ջոն Կիրակոսյանի մոտ և նրա հետ հարցազրույց ունեցավ:

Ի՞նչ կցանկանայիք պատմել մեր ընթերցողներին Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության այսօրվա վիճակի մասին:

Հայաստանում ռադիոն գործում է 1926 թվականից: Այն ժամանակ ռադիոկայանն ուներ չնչին հզորություն: Բոլորիս հայտնի է, թե անցած 42 տարիների ընթացքում ինչպիսի փոփոխություններ տեղի ունեցան մեր ժողովրդի հոգևոր ու մշակութային կյանքում: Այժմ Երևանն ունի հզոր ռադիոկայաններ: Երևանի ռադիոն մի քանի ծրագրերով օրական 30 ժամից ավելի հաղորդումներ է սփռում հանրապետության աշխատավորության և նրա սահմաններից դուրս ապրող հայության համար: Հեշտ է ասել՝ օրական 30 ժամ հաղորդում. չէ՞ որ դա անընդմեջ է, ամեն օր, տարբեր հակումների, մտավոր տարբեր կարողությունների, տարբեր ճաշակի ռադիոստանի համար: Նույնը կարելի է ասել նաև ամենօրյա մեր հեռուստատեսային հաղորդումների մասին: Մեր մեծ կոլեկտիվի առջև դրված է մշտական, հրամայական խնդիր՝ լինել ճկուն, շրջահայաց, արձագանքել օրվա հրատապ հարցերին, կազմակերպել բազմազան ու հետաքրքիր հաղորդումներ, բարելավել դրանց որակը: Ռադիոյի և հեռուստատեսության խմբագրությունները ձգտում են ուժեղացնել հաղորդումների ներգործությունը, ձեռքազատվել վերամբարձ ոճից, վերացական հայտարարությունների փոխարեն վերլուծական մոտեցում ցուցաբերել կյանքի քաղցնազան երևույթների նկատմամբ:

Ռադիոն և հեռուստատեսությունը մշտական ուշադրություն են պահանջում, երբեմն քմահաճ ռադիոստալդ կամ հեռուստադիտողը, ցանկացած պահի սեղմելով ընդունիչի կոճակը, հանդիպում է այնպիսի հաղորդման, որն այդ պահին, հավանաբար, չի համապատասխանում իր տրամադրությանը և անջատում է այն: Ցավոք, դեռևս շատերը չգիտեն, որ նույն ժամին տարբեր ավիզներով միանգամայն տարբեր հաղորդումներ են լինում: Ինչ խոսք, երբեմն տրվում են անհաջող հաղորդումներ, որոնք իրավացիորեն առաջացնում են ունկնդիրների և դիտողների դժգոհությունը: Այժմ մեր կոլեկտիվի յուրաքանչյուր օղակ հոգ է տանում, որ հաղորդումներում արտացոլվի իրական կյանքն իր հաջողություններով և սովորտու կողմերով, որ հաշվի առնվեն աշխատավորության բոլոր խավերի ցանկություններն ու պահանջները: Մենք հոգ ենք տանում՝ միջազգային կյանքին, երիտասարդությանը, արդյունաբերության, շինարարության հարցերին նվիրված հաղորդումները բազմազան ու հետաքր-

¹ Երևանի ձայնը // «Գրական քերթ» (Ե.), 1968, 9 մայիսի:

քիբ դարձնելու համար: Սեր կարծիքով բավականաչափ աշխուժացել են երաժշտական հաղորդումները: Մասնավորապես պետք է նշել սիմֆոնիկ նոր նվագախմբի գովելի գործունեությունը:

Սեր խմբագրությունները ջանք չեն խնայում կատարելագործելու գաղափարական աշխատանքի հզոր միջոցը՝ ռադիոն և հեռուստատեսությունը: Այդ է պահանջում կուսակցության Կենտկոմի արգիլյան պլենումի որոշումը:

Ինչպիսի՞ կապերի մեջ է Հայաստանի ռադիոն Միության տարբեր համարակետությունների, ինչպես նաև սոցիալիստական երկրների ռադիոհեռուստատեսության հետ:

Վերջին տարիներս առանձնապես աշխուժացել է կոմիտեի գործունեությունը միութենական հանրապետությունների և սոցիալիստական երկրների ռադիոյի և հեռուստատեսության հետ կապերն ընդլայնելու ուղղությամբ: Այդ կապերն իրականացվում են ոչ միայն մեծ ծավալի հասնող ռադիոյի և հեռուստատեսային ծրագրերի փոխանակությամբ, այլև ռադիո-հեռուստատեսային փառատոների ուղղակի տրանսլացիայով: Սեր ժողովրդի կյանքի զանազան հարցերին նվիրված ռադիո-հեռուստատեսային հաղորդումներ են լսել ու դիտել Վարշավայում ու Պրագայում, Բեռլինում ու Մոսկվայում: Անցած տարի կոմիտեն պարբերաբար կազմակերպել է միութենական հանրապետությունների ռադիո-հեռուստատեսային օրեր: Այդ օրերին Հայաստանի աշխատավորները ծանոթացան եղբայրական ժողովուրդների աշխատանքային առօրյային, մշակույթին, սոցիալական բնագավառում ձեռք բերած նվաճումներին: Առաջիկայում նույնպիսի օրեր էլի կկազմակերպվեն: Մեծ հոկտեմբերի 50-ամյակի տոնակատարության օրերին Մոսկվայում, ինչպես նաև հանրապետությունների մայրաքաղաքներում ու քաղաքներում հաջողությամբ ընդունվեցին մեր հեռուստատեսային ծրագրերը: Դրա վկայությունը հեռուստատեսային ստուդիայի նկարահանած ֆիլմերի ստացած մրցանակներն են, քարձր գնահատականի խոսքեր պարունակող այն հազարավոր մամակները, որ մենք ստացանք մեր հաղորդումները լսած ու դիտած մարդկանցից: Այս տարվա աշնանը Մոսկվայի ռադիո-փառատոնի միջոցով Սովետական Միության ժողովուրդներին կներկայացնենք հայ ժողովրդի դարավոր ու հավերժ երիտասարդ մշակույթը՝ արվեստը, գրականությունը, երաժշտությունը: Ինչպես հայտնի է, շուտով Հունգարիայում կկայանա հայ արվեստի և գրականության շարք: Բազմաթիվ ու բազմաձև միջոցառումներին կմասնակցի նաև մեր կոմիտեն իր գրական-երաժշտական հաղորդումներով, մեր ժողովրդի մասին պատմող մի շարք հեռուստատեսային կինոնկարներով:

Ինչպե՞ս են մասնակցում սովետահայ գրողները ռադիոյի գրական-դրամատիկական հաղորդումների խմբագրության աշխատանքին: Ի՞նչ ակնկալիքներ ունենք նրանցից:

Ինչ խոսք, ռադիոյի և հեռուստատեսության գրական-դրամատիկական հաղորդումներին ակտիվորեն մասնակցում են սովետահայ գրողները, որոնք այնքան սիրված են մեր ժողովրդի կողմից: Սեր կյանքի յուրաքանչյուր

կարևոր երևույթ գտնվում է գրողի ուշադրության կենտրոնում: Ռադիոն և հեռուստատեսությունը այն միջոցներն են, որոնցով նա անմիջական շփման մեջ է մտնում հազարավոր մարդկանց հետ: Գրողները միշտ ցանկալի հյուրեր են մեզ մոտ: Բացի գիտական-հասարակական հրատապ խնդիրներ շոշափող մրանց ելույթներից, բազմաթիվ հաղորդումներ են մվիրվում հայ դասական և ժամանակակից գրականության ներկայացուցիչներին: Հպարտությամբ կարող ենք ասել, որ սովետահայ գրականության առաջին պրոպագանդիստը ռադիոն և հեռուստատեսությունն են՝ իրենց ընդգրկած լսարանով, ներգործունությամբ, հաղորդումների քանակով: Սակայն ցանկալի է, որ ավելի ամրապնդվի գրողների միության և մեր կոմիտեի համագործակցությունը: Սովետահայ թաթերագիրների ստեղծագործությունները դեռևս հազվագյուտ են հեռուստատեսային ծրագրերում: Ուզում ենք հուսալ, որ առաջիկայում հեռուստատեսային պլեսների շարքում արժանի տեղ կգրավեն մեր թաթերագիրների արժեքավոր ստեղծագործությունները:

Ի՞նչ կասեիք սփյուռքահայության համար տրվող հաղորդումների մասին:

Արտասահմանի համար տրվող հաղորդումների քանակով Երևանի ռադիոն Մոսկվայի ռադիոյից հետո Միության մեջ երկրորդն է: Օրական վեց ու կես ժամ տրվում են հայերեն, ռուսերեն, արաբերեն, բրդերեն, անգլերեն, ֆրանսերեն հաղորդումներ, որոնք խիստ մասսայական են, սրտամտու ու հարազատ սփյուռքահայ յուրաքանչյուր մարդու: Այս բանի վառ վկայությունը նորից հազարավոր նամակներն են, որ կոմիտեն ստանում է Մերձավոր և Միջին Արևելքի, Եվրոպայի և Ամերիկայի երկրներում ապրող մեր հայրենակիցներից: Բազմաթիվ ու բազմաթեղ են արտասահմանի հայերի համար տրվող հաղորդումների խմբագրության կապերը սփյուռքահայության հետ: Անենօրյա հաղորդումները՝ երաժշտական, թե տեքստային, նպատակային ռադիոհանդեսները, կենդանի ելույթները ջերմ արձագանք են գտնում մեր ունկնդիրների կողմից: Տարեցտարի հզորանում են մեր ռադիոկայանները, ավելի ներգործուն է դառնում «Երևանն է խոսում» ձայնը:

Ե՞րբ շահագործման կհամձմձվի հեռուստատեսային ստուդիայի նոր շենքը: Ի՞նչ առավելություններ կունենա այն:

Պետական պլանով նախատեսված է այս տարվա վերջին շահագործման համձմձել հայկական հեռուստատեսության նոր ստուդիան: Ուզում ենք հուսալ, որ շինարարական 3-րդ տրեստի կոլեկտիվը ոչ մի ջանք չի խնայի այդ պատվավոր խնդիրը ժամանակին իրականացնելու համար: Այդ նոր շենքում մենք կունենանք անհամեմատելի լավ պայմաններ, երեք ստուդիա, կինոարտադրության հարմարություններ, նոր տեխնիկայով հագեցած, հարմարավետ պայմաններ ժուռնալիստների, ռեժիսորների, մկաբիչների, օպերատորների, ինժեներների, տեխնիկների համար:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԵՐՈՎ¹

Երիտասարդ պատմաբան, արևելագետ Ռուբեն Սահակյանի² սույն աշխատությունը³ նվիրված է նորագույն պատմության մի շարք կարևոր, հայ ժողովրդի մոտիկ անցյալի՝ տակավին չլուսարանված խնդիրների պարզաբանմանը: Այս անգամ ևս Ռ.Սահակյանը փորձում է հասու լինել իրադարձությունների, պատմական անցքերի, որոնք, ցավոք, սովետահայ պատմագրության կողմից չեն արժանացել ուշադրության, քե՛ս դրանք զբաղեցրել են մարդկանց մտքերը, հետաքրքրասիրությունը:

Խոսքը վերաբերում է ամենից առաջ բեմադրված շարժման առաջին քայլերին, դրա սոցիալական և քաղաքական էությանը: Հեղինակը համոզիչ կերպով վերլուծում է թուրքական մացիոնալիստական շարժման ղեկավարների՝ հայության նկատմամբ վարած ռեակցիոն կուրսը, ինչպես և արևմտյան տերությունների հանդեպ բռնած նրանց դիրքի, վարած հարաբերությունների, հայ ժողովրդի ողբերգության վերջին գործողության մեջ նրանց ու ֆրանսիական իմպերիալիստների խաղացած նողկալի դերի խիստ ուշագրավ իրողությունները:

Ռ.Սահակյանը համոզիչ փաստերով բացահայտում է հայ ժողովրդի նկատմամբ իմպերիալիստական քաղաքականության, ինչպես և Քենալ Աթաթուրքի վարած քաղաքականության դաժանությունը: Հեղինակին հաջողվել է ցույց տալ թուրքական ազգային-ազատագրական շարժման երկակիության, Անտանտայի, նրա մասնակից տերությունների քաղաքականության հակասությունների, թուրք-ֆրանսիական հարաբերությունների, Սերժավոր Արևելյան, մասնավորապես հայ ժողովրդի նկատմամբ, իմպերիալիզմի դիրքորոշման և բազմաթիվ հարակից խնդիրների բարդ հանգույցը: Հեղինակն ուսումնասիրել է ֆրանսիական, թուրքական, անգլիական բազմաթիվ աղբյուրներ, արխիվային նյութեր՝ վեր հանելով դրանց ակներև հակասությունները, սխալները, տարակարծությունները:

¹ Կիրակոսյան Ջ.Ս. Պատմության փաստերով // «Լեռնիյան ուղիով» (Ե.), 1971, N 10, էջ 108-111:

² Ռուբեն Սահակյան (1929-1998) – պատմաբան, թուրքագետ, դիվանագետ, պատմ. գիտ. դ-ր, աշխատել է ՀԿԿ ԿԿ-ում, ՀԽՍՀ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում, Ֆրանսիայում՝ ԽՍՀՄ դեսպանությունում, հիմնական աշխատությունները՝ «Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագիտության մեջ», «Սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսարանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ», «Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ.», «Ցեղասպանության պատմությունից» – Ա.Կ.:

³ Սահակյան Ռ.Գ. Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ, Ե.: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1970:

Գրախոսվող աշխատության անատարկելի առավելություններից գլխավորը օտարերկրյա, հիմնականում ֆրանսիական և բուրբակյան աղբյուրների, ուսումնասիրությունների հանգամանալի օգտագործումն է: Ընդ որում, հեղինակը յուրաքանչյուր աշխատության նկատմամբ դրսևորում է կոնկրետ մոտեցում, փորձում բննադատորեն բացահայտել բուրժուական հեղինակների անընդունելի տեսակետները, նրանց սուբյեկտիվ եզրահանգումները, բուրբակյան հեղինակների խեղաբյուրումները:

Ռ.Սահակյանը հանգամանորեն անդրադառնում է ժամանակակից տվետական բուրբակետներ Ա.Ֆ.Սիլլերի, Ա.Մ.Շամստտոյինովի, Դ.Ն.Ֆիլիպենկոյի, Ա.Դ.Ժելտյակովի, Ն.Յ.Էֆենդիևայի և այլոց՝ բննարկվող բեմային վերաբերող կարծիքներին, հարցադրումներին: Նշելով նրանց աշխատությունների դրական կողմերը՝ հեղինակը միաժամանակ ցույց է տալիս տեղ գտած բյուր եզրակացությունները, միակողմանի մոտեցումը: Դրանք գլխավորապես հանգում են բեմալական շարժման ղեկավարների մեծապետական, շովինիստական քաղաքականության անտեսմանը, ոչ բուրբ ժողովուրդների, մասնավորապես հայության նկատմամբ եղած բշմամական ակցիաների ուրացմանը:

Օրինակ, Ա.Մ.Շամստտոյինովը, անտեսելով Կիլիկիայի հայության հետ բուրբակյան նացիոնալիստների կատարած չարագործությունները, միակողմանիորեն ընդգծում է, թե «ուչնացվեցին հարյուրավոր բուրբակյան գյուղեր և գնդակահարվեցին Թուրքիայի անկախության հազարավոր մարտիկներ» (էջ 12):

Ն.Ջ.Էֆենդիևան, խոսելով «Ազգային ուխտի» (1920 թ. հունվարի 28) մասին, միայն գովասանքներ է շռայլում, փորձում է առաջադիմական հռչակել բեմալականների պայքարը՝ ուղղված օսմանյան պետության ամբողջականությունն ամեն գնով պահպանելու նպատակին: Էֆենդիևան անտեսում է այն կարևոր հանգամանքը, որ «Ազգային ուխտը» պահանջում էր փրկել ինչպես բռնակալ սուլթանի իշխանությունը, այնպես և մահմեդական ռեակցիոն խալիֆարը:

Այստեղ ակնհայտ է մի հանգամանք, որի վրա չի կարելի չհրավիրել ընթերցողի ուշադրությունը:

Տարիներ շարունակ քազմաբիվ հեղինակներ, գրելով իր անկախության համար ընդդեմ ինպերիալիզմի խարդավանքների բուրբ ժողովրդի մղած արդարացի պայքարի օրինակաճության մասին, մյուս կողմից շրջանցել են բեմալիզմի սոցիալ-քաղաքական գլխավոր գծերի բննարկումը փորձելով աչք փակել այն ճշմարտության առջև, որ Օսմանյան նախկին կայսրության ճնշված ժողովուրդների պայքարը հանդիպեց բեմալիզմի դաժան դիմադրությանը, որ բեմալիզմը խոչընդոտեց արևմտահայության միավորումը իր պայպեական հողի վրա, աղղուլիամիդյան, երիտթուրքական արյունկզակ մեթոդներով ջարդուվիշուր արեց Կիլիկիայում և այլուր 1918 թ. հետո հավաքված հայության բեկորները:

Բանն այն է, որ Խրանսիական իմպերիալիզմի դեմ գրող մարքսիստ պատմաբանը չպետք է անտեսի բուրբական պետականության հակաժողովրդական էությունը, ոչ բուրբ ժողովուրդների նկատմամբ նրա կործանարար կեցվածքի ողջ դատապարտելիությունը:

Հեղինակը ճիշտ է նկատում, որ քեմալականների ընդունած առաջին իսկ փաստաթղթերում բացառվում, մերժվում էին Օսմանյան կայսրության ոչ բուրբ ժողովուրդների անկախության ու ազգային ինքնորոշման իրավունքը, օսմանյան դարավոր լծից ազատագրվելու նրանց արդարացի, բուն ձգտումը:

Գրքում վերլուծված են էրզրումի ու Սրվազի՝ 1919 թ. հուլիս-սեպտեմբերին կայացած համաժողովների ընդունած փաստաթղթերը: «Արևելյան Անատոլիայի» իրավունքների պաշտպանության ընկերության կողմից 1919 թ. հուլիսի 23-ից մինչև օգոստոսի 7-ը տեղի ունեցած էրզրումի համաժողովի ընդունած որոշումների հիմնական կետերն ունեն հակահայկական ուղղվածություն: Հեղինակն առաջին անգամ հայերեն հրատարակ է հանում այդ կոնգրեսի ընդունած քաղաքական որոշումների բովանդակությունը: Հենց առաջին կետում նշվում էր բուրբական մացիոնալիստների վճռակետությունը Անատոլիայի արևելյան վիլայեթները (Արևմտյան Հայաստանը) Օսմանյան կայսրության կազմում պահելու խնդրում: Այստեղ «ժայկական համայնքի ստեղծումը» կանխելը հռչակվում է բուրբերի սրբազան գործը:

Հեղինակը հիշատակում է, որ Վ.Լ.Ենիքը մի շարք առիթներով անդրահարձել է Թուրքիայի անկախության պայքարի հայրերին, տվել է այդ պայքարը գլխավորած ուժերի բնութագիրը:

«...Թուրքիայում իշխանության գլուխ են կանգնած կաղետները, օկուպալիստները, մացիոնալիստները, որոնք պատրաստ են մեզ ծախել Անտանտին»: Վ.Լ.Ենիքի այս բնորոշումն առաջին անգամ հրատարակվել է 1963 թ.: Այն վերաբերում է 1920 թ. դեկտեմբերին և կարևոր է ո՛չ միայն քեմալականների դատակարգային էությունն ըմբռնելու տեսակետից: Այստեղ քաջահայտվում են Անտանտի իմպերիալիստների հետ գործարքի մեջ մտնելու քեմալականների այն հակումները, որոնք դրսևորվեցին ինչպես այդ տարիներին Անգլիայի և Ֆրանսիայի հետ հակասովետական գործարքի մեջ մտնելու մի շարք փորձերում, այնպես էլ հետագայում, երբ Թուրքիան մերձեցավ ու դաշնակցեց արևմտյան իմպերիալիստական տերությունների հետ՝ ընդդեմ Սովետական Միության:

Առաջին գլխում հեղինակը համառոտակի վերլուծում է Առաջին համաշխարհային պատերազմից հետո Թուրքիայում ստեղծված իրադրությունը: Այստեղ ընթերցողը ծանոթանում է Օսմանյան կայսրության նկատմամբ միջազգային դիվանագիտության վարած քաղաքականության մանրամասններին, միջիմպերիալիստական հակասություններին, միջազգային խորհրդածրվածքների ընդունած որոշումներին: Անտանտի տերությունները, տակավին պատերազմի տարիներին, մի շարք համաձայնագրերով կանխորոշել էին Օս-

մանյան կայսրության ապագա ճակատագիրը, այն է՝ Օսմանյան կայսրությունը բաժան-բաժան անել միմյանց միջև: Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների հակաբուրքական, ազգային-ազատագրական շարժումն օգտագործվում էր կայսրությունը մասնատելու և, միաժամանակ, այդ ժողովուրդների բախտը իմպերիալիստական տերությունների շահերին համապատասխան տնօրինելու նպատակով: Ռ.Սահակյանը, քննադատելով Անտանտի գաղութատիրական նկրտումները, Մերձավոր Արևելքում նրա հետպայմանադրական նպատակները, արդարացի հռչակելով բուրք ժողովրդի պայքարը իմպերիալիզմի դեմ, միաժամանակ չի գնում տրոբլամ ճանապարհով, ընդհանուր օլսանմաներ չի հղում քեմալական շարժման հասցեին: Նա հանգամանորեն անդրադառնում է Թուրքիայի ազգային պատերազմի ծրագրերին, որ մշակվել և հաստատվել էին Էրզրումի և Սըվազի՝ 1919 թ. հուլիս-սեպտեմբերին կայացած համագումարներում: Շատ քչերն են ուշադրության առել այն հանգամանքը, որ վերոհիշյալ համագումարների ընդունած որոշումներում ամենաառաջնակարգ նշանակությունը տրվում էր հակահայկականությանը, Փոքր Ասիայի արևելյան վիլայեթներում հայերի իրավունքները մերժելուն, դրանց անջատումը Թուրքիայից կանխելուն: Քեմալական շարժումը տակավին իր խանձարություն հռչակում էր. «... Մեր հիմնական նպատակն է պահպանել սուլթանությունն ու խալիֆաթը» (էջ 44): Թուրքական ազգային շարժման ղեկավարները հենց սկզբից պարզորոշ հայտարարում էին, որ իրենց նպատակն է պահպանել Թուրքիայի ամբողջականությունը, այսինքն՝ պահպանել երկու տասնյակ ժողովուրդների համար բանտ հանդիսացող, փտած Օսմանյան կայսրությունը: Էրզրումի համաժողովի ընդունած Մանիֆեստը պահանջում էր ամեն գնով Թուրքիայի կազմում պահպանել Արևմտյան Հայաստանը, եղեռնից վերապրած հայ ժողովրդին գրելով վերամիավորվելու, իր պետականությունն ստեղծելու հնարավորությունից, խեղաթյուրելով պատմական եղելությունները՝ խոստում էր «մահմեդականներին քնաջնջելու հայկական քաղաքականության» մասին: Քեմալն այդ օրերին սուլթանին հասցեագրած հեռագրում գրում էր. «Ազգային շարժումը ծայր առավ նվիրական հայրենիքն ու ազգը մասնատելու վտանգից փրկելու և հույների ու հայերի մտադրություններին չգոհարելու նպատակով» (էջ 50):

1919 թ. սեպտեմբերի 4-11-ը Սըվազում կայացած համագումարում, որ հրավիրել էր «Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության ընկերությունը», բուրքական մացիոնալիզմն արդեն հանդես էր գալիս ընդհանրապես Օսմանյան կայսրության ողջ տարածքի անձեռնմխելության ու միասնականության նշանաբանով:

Սըվազում ընդունված որոշումներում քացառվում էր Թուրքիայում քնակվող այլազգիների ինքնորոշման իրավունքը, խեղաթյուրվում էին փաստերը, փորձ էր արվում հաստատել Թուրքիայի «անվիճելի» իրավունքը այն տարածքների նկատմամբ, որոնք Օսմանյան կայսրության փլուզման պայմաններում պետք է անցնեին սուլթանական բռնապետության դարավոր լուծը

բութափել ցանկացող ժողովուրդներին: Սակայն Քենալը նորից սուլթանին հեռագրում էր, թե անհնար է «մեր վիլայեթների հողերի գեթ մեկ թիզը հաճճնել Հայաստանին կամ որևէ այլ պետության» (էջ 52):

Այնուհետև քննարկված է օսմանյան պառլամենտի կողմից 1920 թ. հունվարի 28-ին հռչակված «Ազգային ուխտի» էությունը: Ինչպես նշված համաժողովներում ընդունված փաստաթղթերից, այնպես էլ «Ազգային ուխտի» հիմնական կետերից մեկը հնարավոր բոլոր միջոցներով անկախ Հայաստանի ստեղծումը և, այսպիսով, միասնական մի պետության մեջ հայ ժողովրդի միավորում խափանելն էր: Քենալականներն ինքնուրույն և անկախ պետական գոյություն էին պահանջում բացառապես թուրք կամ թուրքալեզու ժողովուրդների համար և վճռականորեն հանդես էին գալիս արաբների, հույների, քրդերի, հայերի ինքնորոշման դեմ:

Քենալականները հիմնվում էին Էնվերի անցկացրած «ժանրաբվի» վրա և փորձում հաստատել իրենց իրավունքը Բաթումի, Կարսի և Արդահանի նահանգների վրա. մի բան, որ 1918 թ. սեպտեմբերի 20-ին նուստայով մերկացրել էր Սովետական Ռուսաստանի կառավարությունը:

Հեղինակը փաստեր է հիշատակում ապացուցելու, որ Էրզրումի և Սըզվազի համաժողովների և «Ազգային ուխտը» հռչակված օսմանյան պառլամենտի պատգամավորների ճնշող մասը նախկին իթքիհադական գործիչներ էին, բարձրաստիճան պաշտոնյաներ, խոշոր հողատեր ավատատերեր, մահմեդական բարձր հոգևորականության ներկայացուցիչներ և այլն, որոնք թեև երբևէ էին «չվերակենդանացնել «Միասնության և առաջադիմության» կուսակցությունը», սակայն իրենց գործելակերպով մի շարք հանգուցային հարցերում (բանվորական, ազգային և այլն) հավատարիմ մնացին իթքիհադականների քաղաքական գծին և նոր ձևերով շարունակեցին նրանց քաղաքականությունը: Իթքիհադականները խմբովին գնում էին միանալու Քենալին, որը «խելացիորեն» օգտագործեց նրանց կազմակերպությունները:

Հետաքրքրությամբ է կարդացվում գրքի երկրորդ գլուխը՝ «Թուրք-ֆրանսիական հարաբերությունները 1919-1921 թթ.»։ Հեղինակը շրջանառության մեջ է որել ֆրանսիական բազմաթիվ նոր վկայություններ, աղբյուրներ, որոնք հաստատում են պատերազմից հետո ֆրանսիական ընդգծված թուրքասիրական քաղաքականությունը, որը խարսխված էր Թուրքիայում Ֆրանսիայի տնտեսական, ֆինանսական և քաղաքական շահերի վրա:

Գրքում ցույց է տրվում Թուրքիայի նկատմամբ Ֆրանսիայի դիրքորոշման տարբերությունը անգլիական քաղաքականությունից, վերհանվում են այն նրբերանգները, որոնցով օժտված էր Անտանտի տերությունների քաղաքականությունը Թուրքիայի խնդրում, ինչը մեկ անգամ չէ, որ անտեսվել է պատմագիտության մեջ:

Ֆրանսիայի պրեմիեր-մինիստր Արիստիդ Բրիանը¹ Ազգային ժողովի ամբիոնից կոչ էր անում վերադառնալ ֆրանս-բուրբական բարեկամությանը: «Ֆրանսիան մահճեղական տերություն է, և նա պետք է վերականգնի իր հին ավանդական քաղաքականությունը Թուրքիայի հանդեպ: Այս նույն Բրիանն էր, որ հայ ազգային գործիչների կողմից քանիցս հորջորջվել էր մեծազույն հայասեր: Ֆրանսիական պետական գործիչները, հասնելով Սիրիայի վրա իրենց տիրապետության հաստատման, արդեն խոստում էին «Օսմանյան կայսրության տերիտորիալ անձեռնմխելիության պահպանման մասին»: Նրանցից մեկն ասում էր. «Թուրքիայի մասնատումը հավասարագոր է Արձափոր Արևելքում ֆրանսիական ազդեցության ոչնչացման» (Լջ 68):

Ֆրանսիական դիվանագիտությունը 1919 թ. վերջին առաջին լուրջ փորձն արեց իր «բուրբական գործերը» կարգավորելու Անգլիայից անջատ, համաձայնության գալով Սըվազում ստեղծված ներկայացուցչական կոմիտեի հետ: Ֆրանսիական դիվանագետ Շորժ-Պիկոն² 1919 թ. դեկտեմբերին ուղերվեց Սըվազ և ամնիջական շփման մեջ մտավ Մուստաֆա Քեմալի հետ:

Հեղինակը հանգամանորեն քննարկում է Սերի պայմանագրի Լուրյունը, նրա առանձին հողվածների հետապնդած նպատակները: Նա փաստեր է բերում, ըստ որոնց՝ ֆրանսիական դիվանագիտությունը պատրաստ էր որոշ մասնավորություններում հեռանալ այդ պայմանագրից, միայն թե թուրքերը չմերժեմային Ռուսաստանին, միայն թե «աշխարհում միակ բանակը» (թուրքականը) հանդես գար թուշեիկների դեմ: Այդ էր պատճառը, որ 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Լոնդոնում կայացած կոնֆերանսում 1921 թ. հունվարին Փարիզում գումարված Անտանտի Գերագույն խորհրդի նիստում Ֆրանսիան վերստին հանդես էր գալիս Սերի պայմանագիրը փոփոխելու պահանջով: Օգտագործելով Ֆրանսիայի այդ դիրքը, անգլո-ֆրանսիական հակասությունները, Անկարայի ղեկավար շրջանները հասան այն բանին, որ 1921 թ. հոկտեմբերի 20-ին կնքվեց ֆրանս-բուրբական պայմանագիրը: Ֆրանսիական ինպերիալիստները մոռացան «փոքրիկ դաշնակիցներ» հռչակված հայերին և փառեցին քեմալական Թուրքիային:

Այդ քաղաքականության դառնադետ հետևանքներն են քննարկված հեղինակի գրքի երրորդ գլխում՝ «Իրադարձությունները Կիլիկիայում 1919-1921 թթ.»։ Մարաշ, Հաճըն, Այնթապ, Ուրֆա՝ ահա այն վայրերը, որտեղ տեղի ունեցած անցուղաբժըր, հայերի դիմադրական շարժումը, քեմալականների ջարդա-

¹ Արիստիդ Բրիան (1862-1932) – ֆրանսիացի քաղաքական գործիչ, սոցիալիստ, Ֆրանսիայի վարչապետ (1909-1911, 1913, 1915-1917, 1921-1922, 1925-1926, 1929), միաժամանակ՝ ներքին գործերի, ապա՝ արտգործնախարար, Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր (1926) - Ա.Կ.:

² Ֆրանտուա Շորժ-Պիկո (1870-1951) – ֆրանսիացի դիվանագետ, Բելյուրում Ֆրանսիայի հյուպատոս, քրիտանացի դիվանագետ Մարկ Սալյսի հետ 1916-ին ստորագրել է Մայրս-Պիկոյի համաձայնագիրը տերությունների միջև Օսմանյան կայսրության տարածքների բաժանման մասին - Ա.Կ.:

րարական գործողությունները, ֆրանսիական գաղութարարների խարդավանքների բացահայտումը կազմում են այս գլխի բովանդակությունը:

Ֆրանսիայի ինպերիալիստական շրջանների և Մերձավոր Արևելքում նրանց ծրագրերն իրականացնող զինվորականության խարդախ, հայերի համար աղետաբեր քաղաքականությունը մի կողմից և կլիկիսահայության քախտը տնօրինած գործիչների անհեռատես քայլերը՝ մյուս կողմից, հնարավորություն բնձնեցին Անկարայի դեկավար շրջաններին՝ շարունակելու երկիրը հայերից մաքրելու բուրբական ավանդական քաղաքականությունը: Մարաշից հետո սրի քաշելով Հաճնի վեց հազար հայությանը, որը 7-ամյա խիզախ դիմադրությունից հետո բնաջնջվեց բեմալական բանակի կողմից:

Հեղինակը շարադրում է Ուրֆայի, Այնթապի հայության հետ տեղի ունեցածը, քննարկում նրանց բռնագաղթի հանգամանքները և եզրակացնում. «Քննալականների գլխավորած պայքարը Կիլիկիայում, որքան որ արդարացի էր երկրամասը գրաված ֆրանսիական օկուպացիոն զորքերի դեմ, նույնքան անարդարացի, ազգայնամոլ ու ջարդարարական էր քրիստոնյա, հիմնականում հայ ազգաբնակչության նկատմամբ... Այսպիսով, առաջին անգամ Կիլիկիայում դրսևորվեց բեմալական շարժման հակասական բնույթը՝ այդ շարժման հակաինպերիալիստական և ազգայնամոլ, ջարդարարական կողմերով» (էջ 227):

Գրքի շորթորդ՝ «1921 թ. Անկարայի պայմանագիրը» գլխում հեղինակը քննարկում է 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում ստորագրված ֆրանս-բուրբական պայմանագրի էությունը, նրա նշանակությունը Թուրքիայի համար միջազգային քաղաքականության ոլորտում:

Առանձին անճշտությունները, լեզվական սայթաքումները չեն նսնճանում գրքի արժանիքները: Իհարկե, գիրքն ավելի կշահեր, եթե հեղինակը Կիլիկիայում ծավալված իրադարձությունները, միջազգային դիվանագիտության գործողությունները քննարկելիս կարողանար կապել դրանք այդ ժամանակահատվածում Անդրկովկասում, բուն Հայաստանում, Երևանում տեղի ունեցած իրադարձությունների հետ: Այսպիսի մոտեցումը կօգներ ընթերցողին՝ ավելի համապարփակ պատկերացում կազմելու 1919-1921 թթ. հայոց հարցի և առընչվող խնդիրների մասին:

ԹՈՒՐԲԱԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՌՁ ՌԻՍՈՒՄԱՍԻՈՒԹՅՈՒՆ¹

Թուրքիայի պատմության, թուրք ժողովրդի ծագման և զարգացման հարցերը միշտ էլ մեծ հետաքրքրություն են ներկայացրել մեզ համար: Դա պայմանավորված է պատմական քաղաքիվ հանգամանքներով, որոնք բացառում են ամտարբերությունը այդ խնդիրների նկատմամբ: Թուրքական պետականության հովանավորությամբ վերջին տասնամյակների ընթացքում թուրք պատմաբաններն ու բանասերները ճիգ ու ջանք չեն խնայել ծուռ հայելու մեջ ներկայացնելու պատմությունը, խճողելու, աղավաղելու ոչ միայն թուրք ժողովրդի ծագման ու զարգացման, այլև հարևան և ճնշված ժողովուրդների հետ թուրքերի ունեցած առնչությունների հարցերը:

Դ.Ե.Երեմենի² վերջերս լույս տեսած աշխատությունը² սովետական թուրքագիտության վաղուց ակնկալված լուրջ խոսքն է թուրք ժողովրդի ծագման ու զարգացման, նրա անցած ուղու, այնուհետև թուրքական ազգի կազմավորման վերաբերյալ: Հենց սկզբից մշենք, որ իր առջև դրված բարդ խնդիրները հեղինակը լուծել է հաջողությամբ: Աշխատությունն ըստ էության քննարկվող խնդրի շուրջ առկա աղբյուրների, ստեղծված հարուստ գիտական գրականության քննական տեսություն է: Ավելին, այն ընդհանրացնող, բազմաթիվ խնդիրներում պարզություն մտցնող, շատ ու շատ խճողված հարցերի պատասխան տվող լուրջ ուսումնասիրություն է: Հեղինակը գոսպ է ու խստապահման իր ձևակերպումների, գնահատականների նկատմամբ: Գիտական քարեխղճությունը միահյուսված է գրքի էջերում օբյեկտիվության, այս կամ այն խնդիրը քաղմակողմանիորեն պարզաբանելու ձգտման հետ:

Ջննաբար օգտագործելով համաշխարհային թուրքագիտության ողջ ժառանգությունը՝ հեղինակին հաջողվել է տալ թուրքերի անցած դարավոր ուղու ազգագրական, պատմագիտական քաղմակողմանի և համապարփակ պատկերը:

Արդեն աղբյուրների և գրականության տեսության մեջ հեղինակը ցույց է տալիս թուրքական պատմագիտության հակագիտական նկրտումները՝ թուրքերին Փոքր Ասիայի արքրիզեմներ հռչակելու անսրող ձգտումը: Նա անհրաժեշտ չի համարել լայնորեն օգտագործել հնէաբանական տվյալներ, քանի որ դրանք կարող են հիմք ծառայել ոչ թե թուրքերի, այլ ավելի հին փոքրասիական ժողովուրդների՝ հեթիթների, փոյուզազիների, հույների, հայերի և ուրիշ ժողովուրդների ծագումը քննելու համար:

¹ Կիրակոսյան Ջ. Թուրքագիտական լուրջ ուսումնասիրություն // «Սովետական գրականություն» (Ե.), 1972, N 10, էջ 128-131; Նույնը՝ «Աշխարհ» (Փ.), 1973, 27 հոկտեմբերի:

² Еремеев Д.Е. Этногенез турок: Происхождение и основные этапы этнической истории, М.: Наука, 1971, 272 с.

Իրավացի է հեղինակը՝ գրելով, թե իզուր է սպասել բուրբ գիտնականներից բուրբ ժողովրդի, ազգի կազմավորման խնդրի մշակում, քանի որ դա կարող են անել մարքսիստական դիրքերում կանգնած գիտնականները (էջ 41): Սակայն տեղին կլինեն ավելացնել նաև, որ պատմության նման միակողմանի մեկնաբանումը, այդպիսի չափերով քացահայտ աղավաղումներն ու կեղծիքը բուրբական պատմագրության բնորոշ գիծն են:

Ժամանակակից բուրբական պատմագիտության ծագումնաբանական չիմնավորված կոնցեպցիաները, զարգացված հիպոթեզների շարժիչ հեղինակը համարում է քաղաքական մոտիվները, որոնց զարկ տվեցին քենալականները 20-րդ դարի 20-ական թթ. (էջ 20-21): Քենալ Աբաթուրքը բուրբ պատմաբաններին կոչ էր անում ժամանակակից բուրբ նախնիներին որոնել և գտնել Փոքր Ասիայի հնագույն բնակիչների, օրինակ՝ հեթիթների մոտ: Թուրք պատմաբաններն ավելի հեռուն գնացին, բուրբերի՝ որպես էթնիկական ընդհանրության արմատները որոնելով Անատոլիայում՝ սկսած նույնիսկ քարե դարի շրջանից: Երևմենը քննադատաբար վեր է հանում բուրբ հեղինակների աղավաղումները, հակազիտական մարզանքները, որոնց գլխավոր շարժիչը նացիոնալ-շովինիզմն է, բուրբերի բացառիկության, մյուս ժողովուրդների նկատմամբ առավելություն ունենալու վնասակար քարոզը: Նրանցից ոմանք բուրբեր են հռչակել Փոքր Ասիայի բոլոր հնագույն ժողովուրդներին, շրջանառության մեջ դրել ոչնչով չիմնավորված «հեթիթական բուրբեր» կամ «թուրք-հեթիթներ» բնորոշումը, քարքաջում են ամբողջ աշխարհում բուրբերի կատարած «քաղաքակրթիչ» դերի մասին:

Անդրատառնալով բուրբ հեղինակների հակազիտական պնդումներին, ծիծաղելի հնարանքներին՝ հեղինակը երբեմն խիստ ներողամիտ դիրք է բռնում՝ առաջնությունը տալով գիտական տակտին: Հեղինակը ցույց է տալիս, որ բուրբ ժողովուրդը, ինչպես և համարյա բոլոր ժողովուրդները, չի ծագել ինչ-որ մեկ նախնիից, ինչ-որ մեկ, օրինակ՝ բուրբական ժողովրդից կամ ցեղից, այլ որ մեկ նախնիից, ինչ-որ մեկ, օրինակ՝ բուրբական բաղադրյալներից: Այդ բաղադրյալ-կազմավորվել է բազմաթիվ էթնիկական ժողովրդից կամ ցեղից, այն մասն ավելի պակաս չափով պեշենեզները, դիչաղները, ուզերը և այլք, որոնք Անատոլիա ներքոնցիցին հիմնականում 11-13-րդ դարերում:

Մյուս բաղադրյալը տեղացի փոքրասիացիներն էին (հույներ, հայեր, քրդեր, լազեր, վրացիներ) և ավելի ուշ՝ բալկանյան սլավոնները:

Թուրք թռչվորները, անցնելով նստակյաց կյանքի և շփման մեջ մտնելով տեղացի նստակյաց բնակչության հետ, ասիմիլացրին նրա մի մասը լեզվի տեսակետից, բայց այնքան մեծ չափով ընդօրինակեցին տեղացիների տնտեսական և կուլտուրայի արժեքները, որ իրենք ասիմիլացվեցին տեղական ստրայան և կուլտուրայի արժեքները, որ իրենք ասիմիլացվեցին տեղական ստրայան և կուլտուրայի արժեքները, որ իրենք ասիմիլացվեցին տեղական ստրայան և կուլտուրայի արժեքները: Հեղինակը հիշաբնակչության կողմից տնտեսակուլտուրական տեսակետից: Հեղինակը հիշաբնակչության կողմից տնտեսակուլտուրական տեսակետից: Հեղինակը հիշատակում է Կ.Մարքսի միտքը քարքաթոսների վերաբերյալ. վերջիններս նվաճողներ էին, բայց նվաճվեցին իրենց հպատակեցրած ժողովուրդների ավելի քարձր քաղաքակրթության կողմից (էջ 250): Սակայն տիրապետող դարձավ

թուրքական լեզուն, թեև իր վրա կրեց տեղական լեզուների շատ ուժեղ ազդեցությունը: Դա տեղի ունեցավ 12-14-րդ դարերում, այնուհետև ավելի ուշ՝ 15-16-րդ դարերում, երբ թուրքերը կազմում էին Անատոլիայի ամենամեծաթիվ և քաղաքականապես տիրապետող ընդհանրությունը: Իհարկե, թուրքական ցեղերի նստակյաց երկրագործության անցնելու պրոցեսը երկարեց, ինչը և խոչընդոտեց նրանց զարգացումը այդ ժողովուրդների սոցիալ-տնտեսական և էթնիկական զարգացման համար:

Տարբեր աղբյուրների, տվյալների վերլուծության միջոցով հեղինակը գալիս է այն հետևության, որ 11-րդ դարում Անատոլիա վերաբնակեցված թուրքական ժողովուրդների (դրանց հիմնական զանգվածը կազմում էին օգուզական և թուրքմենական ցեղերը) թիվը հասնում է մոտավորապես 500-700 հազարի, իսկ 12-րդ դարում և 13-րդ դարի սկզբին նրանց թիվը հազվի մեկ միլիոնի էր մոտենում (էջ 91): Գրքում տրվում է թուրքական տարբեր ցեղերի նկարագիրը, քննարկվում են նրանց փոխադարձ առնչությունները, փոխազդեցությունները և էթնիկական միացությունները Փոքր Ասիայի տեղացիների հետ: 11-13-րդ դարերում թուրքական ցեղերը փոքրամասնություն էին Փոքր Ասիայում (էջ 101-102): Տակավի՛ն չկար միասնական լեզու: Պաշտոնական (պետական) և գրավոր գրական լեզուն՝ արաբերենը: Չկար միասնական էթնոնիմ: «Փոքր Ասիայում 11-րդ դարի վերջին, 12-րդ դարի սկզբին, - գրում է հեղինակը, - միասնական թուրքական ժողովրդի կազմավորում տեղի չունեցավ (եթե կազմավորվեք, ապա այն կարելի կլինեք կոչել հին թուրքական)»: Այնուհետև հեղինակը բացատրում է այդ պրոցեսի նախադրյալները, պայմանները, Անատոլիայի էթնիկական պատմության և ֆեոդալական մասնատվածության առանձնահատկությունները:

15-16-րդ դարերում (և ավելի ուշ) դեռևս չկար միասնական էթնոնիմ, միասնական ինքնանվանում: Իրենց թուրքեր էին կոչում միայն թուրք գյուղացիները:

Ֆեոդալական վերնախավի մոտ նույնիսկ, որի մի մասը իսլամ ընդունած ոչ թուրքեր էին, զարգացած չէր թուրքական ժողովրդին պատկանելու զգացումը:

Առաջնայինը օսմանյան պետության գլխավորին՝ սուլթան-խալիֆին նվիրվածության զգացումն էր (էջ 159): Թուրքերենը չէր կազմավորվել որպես միասնական ամբողջություն: Բարբառները խիստ տարբերվում էին միմյանցից: Հասարակ ժողովուրդը պաշտոնական լեզուն չէր հասկանում:

Համագամանորեն է վերլուծված իսլամի դերը թուրքերի տիրապետության հաստատման պրոցեսում: Ուժացումը տեղի էր ունենում մահմեդականացմանը զուգընթաց: Ոչ մահմեդականները շատ ավելի պակաս իրավունքներից էին օգտվում օսմանյան ռազմաֆեոդալական մահմեդական թեոկրատական միատնտեսության պայմաններում: Նրանք ենթակա էին կողոպուտի, ճնշման ու կոտորածի, համարվում էին անհավատներ՝ գյավուրներ, երկրորդ տեսակի մարդիկ, որոնք ըստ էության օրենքից դուրս էին գտնվում: Չնայած այս ամենին՝

թուրք-օսմանների կուլտուրական մակարդակը զգալի չափով ավելի ցածր էր, քան նրանց ենթակա Փոքր Ասիայի և Բալկանների ենթակա ժողովուրդներինը (էջ 150): Թուրքերը մարդկային կյանքի բոլոր բնագավառներում ընդօրինակում էին, իրացնում ավելի հին քաղաքակրթված ժողովուրդների նյութական և կուլտուրական ժառանգությունը: Նույնիսկ կիսալուսինը, որ հետագայում դարձավ Իսլամի խորհրդանիշը, օսմաններն ընդօրինակել են բյուզանդացիներից: Այդ էնթեման Կ.Պոլսի գերբն էր մինչև թուրքական նվաճումը (էջ 156):

Գրքում քացահայտված են 17-18-րդ դարերում Թուրքիայի զարգացման առանձնահատկությունները, քոչվորական ցեղերի բնորոշ գծերը, թուրքերի հետ նրանց էթնիկական առնչությունները:

Հետաքրքրությամբ են կարդացվում 19-րդ դարի Օսմանյան կայսրության ներքին պոլոցաններին նվիրված էջերը: Ընդհանուր առմամբ ճիշտ եզրակացությունների, ձևակերպումների հետ մեկտեղ որոշ հարցերի պատասխաններ կարող են լրացուցիչ ճշգրտումների: Խոսքը մասնավորապես վերաբերում է թուրքական պետականության կրնկի տակ հայ ժողովրդի իրավիճակի, նրա պայքարի և գոյատևման խնդիրներին: Բացառությամբ Անատոլիայի և Արևելյան Թրակիայի, - գրում է հեղինակը, - ամբողջ նվաճված տերիտորիայում թուրքերը շարունակում էին մնալ որպես օկուպանտներ (էջ 162): Խոսատուի հայրենի մեջ ներառում է նաև Հայաստանը: Նախ՝ Հայաստանում նույնպես թուրքերը միշտ էլ գտնվեցին ռազմական օկուպանտների դերում: Եվ հետո՝ հեղինակը տուրք է տալիս Անատոլիայի շրջանակները արհեստականորեն ընդլայնող, Հայաստանի, Քրդստանի աշխարհագրական և քաղաքական տեսլականությանը գոհ դարձած արևմտահայության հաշվին դեպի արևելք թուրքական տարածումը տեղի ունեցավ միայն Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Ժամանակակից միջազգային հարաբերությունների առումով պատմության մոդեռնացումը, պատմականության ամենամեծ ճշմարտությունը պարզելուն չեն նպաստում: Ընդունելով թուրքերի տնտեսական-կուլտուրական մակարդակի ցածր լինելը ազգային փոքրամասնությունների համեմատությամբ, հեղինակը դա քացատրում է «օբյեկտիվ պատմական գործոններով» (էջ 166): Բայց որո՞նք են այդ գործոնները:

Այդ հարցի պատասխանը գրքում չենք գտնում: Հեղինակը գրում է, որ թուրքերը ստեղծել են «քոչվորական անասնապահության շատ զարգացած ձև» (էջ 166): Եթե քոչվորական է անասնապահությունը, ապա այն զարգացած պիտակին չի բռնում: Նույնիսկ ծի պայտելու արհեստը օտար էր թուրքերին, ինչը հիշատակում է ինքը՝ հեղինակը (էջ 179):

Օսմանյան կայսրությունում պետության ռազմական բնույթը, ազգային հավաքականության խնդրում նվաճողների տնտեսական շահագրգռվածության քացակայությունը, բնակչության էթնիկական և կրոնական խայտաբղե-

տությունը խոչընդոտում էին բուրբերի ազգ դառնալը: Հեղինակը ճիշտ է նկատում, որ բազմազգ կայսրության փլուզումը սկսվել է շատ ավելի վաղ, նախքան բուրբերի ազգ դառնալը: Ահա թե ինչու բուրբական տիրապետությունը այլ ժողովուրդների վրա, որոնցից շատերը զարգանում էին բուրբերից արագ, դարձավ ռեակցիոն մնացուկ (էջ 163):

«Թուրքիայում արտադրողական ուժերի և սոցիալական հարաբերությունների զարգացումը, - գրում է հեղինակը, - 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբում հանգեցրեց կապիտալիստական հարաբերությունների, ինչպես նաև ընդհանուր կուլտուրական մակարդակի առավելագույն աճի ճնշված ազգային փոքրամասնությունների, քայքայող բուրբերի մոտ» (էջ 195):

20-րդ դարի սկզբին բուրբերի 90 տոկոսն անգրագետ էր, մինչդեռ այդ տոկոսը հույների մոտ 50 էր, իսկ հայերի մոտ՝ 33 (էջ 181): Կրթությունն օտար էր մանավանդ կանանց շրջանում: Մահմեդական դպրոցները սխոլաստիկայի և խավարամոլության կենտրոններ էին: Հեղինակը ցույց է տալիս, որ առաջվա կուլտուրան և նրա նյութատեխնիկական ապահովումն ավելի արագ էին զարգանում հույների, հայերի, հրեաների, սլավոնների մոտ (էջ 180): Մտավորականության գերակշռող մասը նույնպես ոչ բուրբեր էին: Ռուսներ կանոն ինժեներ, բժիշկ, փաստաբան էին հույները, հայերը, հրեաները: Պրուլետարիատը հիմնականում նույնպես կազմված էր ոչ բուրբերից (էջ 194):

Տեղին է հեղինակի նկատմամբ այն մասին, որ թեև առևտուրը գտնվում էր հույների և հայերի ձեռքում, չպետք է եզրակացնել, որ նրանց գրադուները միայն առևտուրն էր: Արևմտյան Անատոլիայի հույների և Արևելյան Անատոլիայի հայերի մեծամասնությունը գյուղացիներ էին, հաճախ ամենաաղքատ գյուղացիներ, որոնց շահագործում էին ինչպես մահմեդական ֆեոդալները, այնպես էլ սեփական կուլակները, վաշխառուներն ու առևտրականները:

Թուրքերի կազմավորումը որպես բուրբական ազգ, ըստ հեղինակի, տեղի ունեցավ քննադական հեղափոխության շրջանում, երբ ավարտվեց ազգային համախմբման պրոցեսը (էջ 210): Նախկին «մահմեդական» կամ «օսմանցի» անվանումներին փոխարինեց «բուրբեր» էթնոնիմը: Մտադրություն կար նույնիսկ կիրառության մեջ դնել «անատոլիացի» անվանումը՝ վերջնականապես վերացնելու համար «բուրբ» և «բյուրբ» էթնոնիմների պատճառով մշտապես առկա շփոթը:

Հետաքրքիր տվյալներ է բերում հեղինակը 1933-ից 1965 թթ. բուրբ զարգացման պրոցեսի վերաբերյալ:

Ազգային փոքրամասնությունների նկատմամբ բուրբական կառավարող շրջանները շարունակեցին բուրբացման քաղաքականությունը: Քաղաքացիության մասին օրենքը բուրբեր է համարում նույնիսկ ոչ բուրբ ծնողներից երկրում ծնված բոլոր անձանց: Ազգային փոքրամասնությունների համար փակ են պետական ծառայության, սպայական կորպուսի, արտաքին առևտրով և որոշ արհեստներով զբաղվելու դռները: Նրանց համար սահմանափակված են նաև տեղաշարժերը երկրում: Հեղինակը փաստեր է բերում

հայերի թվի, նրանց քաղաքական և քաղաքացիական իրավակրթության, նրանց բիվը կեղծելու, նույն ավանդական-թուրքական բարքերի վերաբերյալ (էջ 214-215): Չնայած վերջին տասնամյակների ընթացքում ազգային կազմի փոփոխություններին, թուրքական բնակչության տեղաշարժերին և վերաբնակեցումներին (20-30-ական թթ. թուրքերը զգալի չափով վերաբնակեցվեցին հայերի, հույների և ասորիների բնակավայրերում)¹ ազգային փոքրամասնություններն այսօր էլ կազմում են երկրի բնակչության 20 տոկոսը և զբաղեցնում տարածքի համարյա մեկ քառորդը: Գտնելով, որ Թուրքիայի այսօրվա ազգային պրոցեսներում գերակշռում է թուրքերի կողմից ազգային փոքրամասնությունների ասիմիլացման պրոցեսը, հեղինակը միաժամանակ հանգում է միակողմանի հետևություն: Նրա կարծիքով, «ասիմիլացիոն պրոցեսները արագացնում են էկոնոմիկայի և սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացումը» (էջ 217): Ուրեմն, երեք միլիոն քրդերին կապիտալիստական արտադրահարաբերությունների մեջ ներքաշելու համար անհրաժեշտությո՞ւն է նրանց թրքացումը: Անկասկած, սխալ հարցադրում և սխալ մոտեցում է այսօրինակ մտածելակերպը:

Մասամբ ճիշտ է հեղինակը՝ գրելով, թե բնավականները թուրքական մացիոնայիզմը մաքրեցին պանթուրքական և պանիսլամական մտավածքներից (էջ 209): Բայց այստեղ չափազանցությունը չէր համապատասխանի պատմականությանը, որովհետև թուրքական մացիոնայիզմը իր մեջ մշտապես բովանդակում է այդ տարրերը, որոնք որոշակի միջավայրում, պայմաններում դրսևորվում են ավելի կամ պակաս չափով: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, նույն՝ ժողովրդահանրապետական կուսակցության տիրապետության տարիներին պանթուրքիզմն արտահայտվեց իր թողոր նրանզներով: Ներկայումս նույնպես թուրքական քաղաքական միտքը գերծ չէ սանձարձակ, մարտաշունչ ազգայնականությունից:

Դ.Երեմեևի ուսումնասիրությունը ուշագրավ երևույթ է, լուրջ ներդրում սովետական թուրքագիտության մեջ: Հույժ կարևոր է նրա թարգմանումն ու հրատարակումը հայերեն¹:

¹ Թուրքագետ Դմիտրի Երեմեևի գիրքը թարգմանել է Հակոբ Մարտիրոսյանը, այն հրատարակել էր «Հայաստան» հրատարակչությունը 1975 թ. (Երեմեև Դ.Ե. Թուրքերի ծագումը (Ծագումը և էթնիկական պատմության էտապները), Ե.: Թուրքերի ծագումը (Ծագումը և էթնիկական պատմության էտապները), Ե.: Հայաստան, 1975, 356 էջ) - Ա.Կ.:

ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ. ԾԱԳՈՒՄԸ, ԸՆԹԱՑՔԸ¹

Մտակվայի «Նաուկա» հրատարակչության արևելյան գրականության գլխավոր խմբագրությունը վերջերս լույս ընծայեց Յու.Ա.Պետրոսյանի² «Երիտթուրքական շարժում» մենագրությունը³:

Գրքի տպագրանակը ընդամենը 2300 օրինակ է: Բայց ամենևին չենք տարակուսում, որ նրա էջերում արժարժված հարցերը հետաքրքրում են և չեն կարող չհետաքրքրել շատ ավելի մեծ թվով ընթերցողների, մասնավորապես ընթերցողներին, երիտասարդությանը: Խոսքը վերաբերում է թուրքական իրականության մեջ մոտ հարյուր տարի առաջ ծնված մի քաղաքական շարժման, որին աղերսվեց արևմտահայության պատմության ճակատագիրը, որը միայն ու միայն արյան ու չարիքի, ավերածության հետքեր թողեց մեր ժողովրդի պատմության մեջ, մաս վնասակար համոզիսանալով իր իսկ՝ թուրք ժողովրդի սոցիալ-տնտեսական, քաղաքական զարգացման ճանապարհին:

Ովքե՞ր էին երիտասարդ թուրքերը: Ի՞նչ հողի վրա առաջացավ նրանց շարժումը: Որո՞նք էին նրանց հետապնդած նպատակները, հավատամքը, ի՞նչ գաղափարներ էին նրանք փայփայում, ո՞րն էր նրանց սոցիալական հետադարձը, վերջապես ինչպիսի՞ ընթացք ունեցավ, ինչի՞ հասավ այդ շարժումը: Ահա այն հարցերը, խնդիրները, որոնց ուսումնասիրմանն ու լուսաբանմանն է նվիրել իր աշխատությունը ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի տնօրեն, թուրքագետ Յու.Պետրոսյանը:

Երիտթուրքական շարժման ծագման ու զարգացման հարցերին, նրա սոցիալ-քաղաքական էությանը քիչ չեն անդրադարձել սովետական արևելագետները (Ալիմով, Վալույսկի, Հասանովա, Միլլեր, Նովիչև և ուրիշներ): Սակայն գոհունակությամբ պետք է նշել, որ ներկա ուսումնասիրությունն իր ընդգրկված ժամանակագրական շրջանակներով (19-րդ դարի կեսերից մինչև 1908 թ. բուրժուական հեղափոխությունը), քննարկված խնդիրների, օգտագործված աղբյուրների և գրականության առումով առավել համապարփակն է:

¹ Կիրակոսյան Ջ. Երիտթուրքական շարժում. ծագումը, ընթացքը // «Գարուն» (Ե.), 1972, N 3, էջ 88-92:

² Յուրի Պետրոսյան (ծնվ. 1930) – պատմաբան-թուրքագետ, պատմ. գիտ. դ-ր, պրոֆ., 1963-1996 թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքի, 1991-ից՝ ՌԴ ԳԱ Ս.Պետերբուրգի մասնաճյուղի տնօրեն, աշխատությունները վերաբերում են XIX դ. և XX դ. սկզբին Օսմանյան կայսրությունում կատարված բարեփոխումների պատմությանը, «մեր օսմանների» շարժման և երիտթուրքերի գաղափարախոսության հարցերին - Ա.Կ.:

³ Петросян Ю.А. Млалотурецкое движение (вторая половина XIX века), М.: Наука, 1971, 326 с.

Հնդինակին հաջողվել է տալ Օսմանյան կայսրության պատմության 19-րդ դարի 60-70-ական թթ. մինչև 20-րդ դարի սկիզբը ժամանակահատվածի քաղաքական պատմության պատկերը: Նրան հաջողվել է շեշտել իր հետաքրքրության առարկան՝ երիտրոպրական շարժման էությունը, նրա հետազոտված նպատակները, պայքարի ձևերն ու մեթոդները: Սա էլ կազմում է գրքի առանցքը: Այս տեսակետից էլ այն հետաքրքրական է մեզ համար:

«Երիտրոպրեք» տերմինը եվրոպական պատմագրության և հրապարակախոսության կողմից սխալ է օգտագործվել 19-րդ դարի 60-70-ական թվականներից, բուրժուական սահմանադրականների գործունեության հետ կապված: Սահմանադրականներն իրենք իրենց որպես կանոն անվանում էին «նոր օսմաններ»: Սա պատահականություն չէր, քանի որ մինչև 1908 թ. բուրժուական հեղափոխությունը բուրքական գաղտնի խմբերի, այնուհետև «Իքրիհաղ վե բերաքի» («Միություն և առաջադիմություն») կազմակերպության անդամները համոզեա էին գալիս «սահմակայերական», «օսմանյան» հայրենասիրության նշանաբանով: 1908 թ. հեղափոխությունից հետո, երբ բուրքական բուրժուակախի գաղափարախոսության մեջ առաջին պլանի վրա դրվեցին մեղ, բուրքական ազգայնական գաղափարները և կոնցեպցիաները, «երիտրոպրեք» տերմինն իր ֆրանսերեն ձևով սկսեց օգտագործվել մաս բուրքերեմում:

19-րդ դարի կեսերին Օսմանյան կայսրությունը պալարվում էր ներքին և արտաքին հակասություններից: Թուրքական փոսած պետականությունն արդեն վաղուց ապացույցել էր իր արտաաքույժ բնույթը, բազմաթիվ ճնշված ժողովուրդների, երկրների վրա իր իշխանությունը պահպանելու անկարողությունը: Այդ հսկայական կայսրությունը, որը «կարկատված», «իվանդ մարդ» անվանումն էր ստացել, գտնվում էր կործանման, փլուզման եզրին: Եվրոպական տերությունները ձգտում էին յուրովի օգտագործել սուլթանների տիրապետության դեմ ճնշվածների ազատագրական շարժումները, մաքսիմում օգուտ քաղել բուրքական ժառանգությունից: Եվրոպական հսկողությունը բուրքական առևտրի, ֆինանսների, երկրի քաղաքական և տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում ալվելի ու ալվելի էր ուժեղանում: Օսմանյան կայսրությունը վերածվում էր կիսագաղութի: Սուլթանները ճկունորեն խաղում էին եվրոպական տերությունների ներհակությունների վրա, փորձում բուլացնել ներքին ու արտաքին հարվածները: Ծավալվող ազգային-ազատագրական շարժման դեմ նրանք կիրառում էին ալանդական յաթաղանի քաղաքականությունը:

Թուրքական ազգային, քաղաքական կյանքի ասպարեզ իջած «նոր օսմանները» կայսրության ամբողջության անվերապահ պահպանումը համարում էին իրենց ծրագրի կարևորագույն կետերից մեկը: Սա նշանակում էր, որ բուրքական սուլթանների իշխանության տակ հեծող ժողովուրդները Հայաստանից մինչև Բալկաններ, Հյուսիսային Աֆրիկայից մինչև Արաքական բետակղզի պետք է շարունակեին մաս կազմել Օսմանյան բոնապարտական կայսրության: «Նոր օսմանները» սուլթանին քննադատում էին, նրա դեմ ծառս լինում՝ նրան մեղադրելով անվճռականության, Եվրոպայի դեմ վատ պայքա-

րելու մեջ: Նրանք գտնում էին, որ կայսրությանը սպառնացող վտանգը պետք է կանխել: Բայց ի՞նչ ճանապարհով: Համենայն դեպս, նրանք չէին ընթանում բռնապետության դեմ ոտքի ելած ճնշված ժողովուրդների հետ համաբայլ: Նրանք, ընդհակառակը, վճռակամորեն համոզես էին գալիս սուլթանի լծից ազատագրվելու համար կայսրության ճնշված ժողովուրդների փորձերի դեմ, համոզես էին գալիս այդ պայքարում եվրոպական տերություններից օգնություն ակնկալող նրանց ձգտումների դեմ (էջ 126): Նրանք, մասնավորապես, դեմ էին Չեռնոգորիային անկախություն շնորհելուն, իսկ զենքը ձեռքներին ազատության համար կռվի ելած չեռնոգորցիներին նոր օսմանների գաղափարախոսներն ուղղակի «ավազակներ» էին անվանում: Մուլթանը նրանց կողմից քննադատական հարձակումների էր ենթարկվում Մոլդավիային, Վալախիային և Սերբիային եվրոպական տերությունների ճնշման տակ անկախություն շնորհելու համար:

Նրանց գաղափարախոսներ Նամիկ Քեմալ¹ և Ալի Սուավին 1867 թ. վճռական բողոք էին հայտնում Սերբիայից թուրքական կայսերները դուրս բերելու կապակցությամբ, հիշատակում էին այդ «զիջումների» վարակիչ դերը Օսմանյան կայսրության մյուս ոչ մահմեդական ժողովուրդների, առանձնապես բուլղարների ընդոստության կտրիվացման գործում:

Կապիտալիստական արտադրահարաբերությունների սաղմերն Օսմանյան կայսրության ընդերքում շատ ավելի արագ ծիլեր էին տվել ոչ թուրք ժողովուրդների մեջ, առաջին հերթին Բալկաններում: Վերջիններիս ազգային-ազատագրական պայքարն իր հիմքում առաջադիմական էր ոչ միայն ազգային անկախության ձգտման, այլև սոցիալական իմաստով: Համոզես գալով ընդդեմ այդ պայքարի՝ «նոր օսմանները» իրենց փայփայած առանց այն էլ չափավոր բարեփոխումները վերածում էին առարկայազուրկ կիսատպոստության, քանի որ բարեփոխումներում առավել շահագրգռված, առավել հետևողական ուժերը գտնվում էին, համենայն դեպս, ոչ թուրքական սոցիալ-քաղաքական միջավայրում:

Ինչպես նկատում է Յու.Պետրոսյանը, «նոր օսմանների» պարագլուխներն ու գաղափարախոսները ոչ միայն ժխտում էին կայսրության ոչ թուրք ժողովուրդների անկախ զարգացման իրավունքը, այլև փորձում էին տեսականորեն հիմնավորել ազգային-ազատագրական շարժումների պատմական նպատակահարմարությունը (էջ 126): Այս նպատակով իսկ նրանք բանաձևեցին պանօսմանիզմի վարդապետությունը, որը 19-րդ դարի 60-70-ական թթ. ձևավորվեց որպես երիտասարդ թուրքական լիբերալ-սահմանադրական շարժման կարևորագույն գաղափարական-քաղաքական կոնցեպցիա: Վերջինիս հիմնական բովանդակությունը, իմաստը հանգում էր «ընդհանուր հայ-

¹ Նամիկ Քեմալ (1840-1888) – թուրք բանաստեղծ, գրող, լրագրող, Թանգիմաթի շրջանի նոր գրականության հիմնադիր, «նոր օսմանների» շարժման հիմնադիրներից և դեկավարներից - Ա.Կ.:

րենիքի»¹։ Օսմանյան կայսրության մեջ բոլոր ժողովուրդների հավասարության ու միասնության վերացական, ոչնչով չերաշխավորված գաղափարին։ Սուլթանի իշխանությունը համարելով անձեռնմխելի, նրանք բավարարվում էին լոկ այն սահմանափակելու հարցադրումով, սահմանադրական միապետություն երազելով։

Անտեսելով բուրբական նվաճողների դաժան ասիմիլատորական գործունեության հանրահայտ պատմական փաստերը «նոր օսմանները» ապացուցում էին, որ կայսրության բոլոր ոչ բուրբ ժողովուրդները ենթարկվել են ոչ այնքան սրին, որքան բուրբական սուլթանների արդարադատությանը, որոնք իրր երբեք ոչ մի ճնշում չեն գործադրել նվաճված ժողովուրդների նկատմամբ։ Այսպիսի սին գաղափարներ, նշում է հեղինակը, հատկապես զարգացնում էր բուրբական սահմանադրության հայր հորջորջված Միդհատ-փաշա¹ 1878 թ. Փարիզում լույս ընձայած իր «Թուրքիան, նրա անցյալը և ապագան» գրքում (էջ 127)։

Յու. Պետրոսյանը անում է միանգամայն ճիշտ եզրակացություն. ազգային հարցի «լուծմանը առաջին բուրբական սահմանադրականները մոտենում էին բացահայտ հետադիմական մեծապետական դիրքերից։ Նրանց պարագլուխները պահանջում էին պահպանել բուրբական տիրապետությունը Բալկանների, սլավոնների, հույների, հայերի, արաբների, քրդերի և կայսրության մյուս ժողովուրդների վրա։

«Նոր օսմանները» բացահայտ բշնամարա էին տրամադրված այդ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների և ձգտումների նկատմամբ» (էջ 125-126)։

Ալի Սուալին գտնում էր, որ «այսօր Օսմանյան կայսրությունում բնակվող բոլոր ժողովուրդները կազմում են մի ազգ՝ օսմանների ազգը» (էջ 128)։ Քարոզելով միասնության գաղափարը՝ «նոր օսմանները», սակայն, նկատի ունենին պահպանել բուրբերի տիրապետող դիրքը նաև ապագա՝ բարեփոխված օսմանյան պետության մեջ։ Նամիկ Քեմալը, որ վտարանդի էր, փախած սուլթանի ճանկերից, այնուամենայնիվ մեծապետական, վերամբարձ տոնով հայտարարում էր. «Մենք ասում ենք, սակայն, որ եթե քրիստոնյաները մեզնից իշխանություն պահանջեն, ապա, քնակամարաբ, նրանք իրավունք չեն ունենա բողոքելու այն բանի համար, որ մենք նրանց չենք մտցնելու կառավարության մեջ» (էջ 129)։ Նամիկ Քեմալն ավելի հեռու էր գնում՝ փորձելով նույնիսկ տեսականորեն հիմնավորել բուրբերի իրավունքը տիրապետող դիրք ունենալու կայսրությունում։

¹ Ահմեդ Շեֆիկ Միդհատ-փաշա (1822-1884) – օսմանցի պետական գործիչ, Օսմանյան կայսրությունում սահմանադրական բարեփոխումների կողմնակից, մեծ վեզիր (1860-1861, 1872), Դանուբյան, Սիրիայի, Իզմիրի վիլայեթների նահանգապետ - Ա.Կ.:

Հեղինակը բերում է մի շարք փաստեր, թե որքան խորն էին բուրքերի կարծեցյալ բացառիկության մասին գաղափարները գրող և բանաստեղծ, Մոստեսքյոյի¹ «Օրենքների ոգին» թարգմանած, բուրքական նոր գրականություն ստեղծողներից մեկը, լուսավորիչ հռչակված Նամիկ Հեմալի գրվածքներում: Նրա մյուս գործընկեր համախոսը՝ Ալի Մուավվին, պնդում էր, թե բուրքը ամենաբարձր և հին ռասան է իր պատմական, քաղաքական, ռազմական և կուլտուրական դերով, իսկ բուրքերենը՝ աշխարհի ամենահարուստ և կատարյալ լեզուն: Հենց այս «ճոր օսմաններն» էին, որ Թուրքիայի քաղաքական հողի մեջ գցեցին բուրքական սանձարձակ մացիոնալիզմի այն սերմերը, որոնք հետագայում դարձան պանթուրքիզմի ռեակցիոն վարդապետության հիմքը:

Հետաքրքրական է, որ «ճոր օսմաններին» ղեկավարները, շատախոսելով կայսրության փրկության, իշխանության և պահպանության մասին, կողմնորոշվում էին դեպի Անգլիան, որը հանդես էր գալիս «ստատուս բժոյի» քաղաքականության ջերմեռանդ պաշտպանի դիրքերից: Իրականում, պատմական փաստերին իրազեկ յուրաքանչյուր ոք գիտե, որ այդ քաղաքականության իմաստը, ըստ Ֆ.Էնգելսի², քրիստոնյա հայատակներին ճնշման հաղթածացման էր անգլիական կապիտալիստների վախով, որ բալկանյան ժողովուրդները, ինչպես նաև հայ ժողովուրդը բուրքական լուծը կթորափնին ռուսների օգնությամբ, ցարական Ռուսաստանի շահերին համապատասխան: «Նոր օսմանների» անգլիական կողմնորոշումը շարունակվեց դեռ երկար ժամանակ, թեև խորանանկ Ալբիոնը իրեն հատուկ խարկանքներով Օսմանյան կայսրությունից մերթոյիկ կերպով տարածքային պատառներ էր խլում, տնտեսական ու ֆինանսական նոր դիրքեր նվաճում:

Չորրորդ՝ «Օսմանյան կայսրության վերածումը կիսագաղութի և արդու-համիդյան ռեժիմը» գլխում հեղինակը ցույց է տալիս ֆրանսիական և անգլիական, այնուհետև նաև գերմանական կապիտալի ներխուժումը Օսմանյան կայսրություն, նրանց հսկողության հաստատումը երկրի ֆինանսների, բանկերի, առևտրի, երկաթուղիների կառուցման և տնտեսական կյանքի մյուս ելակետային դիրքերի վրա: Մի կողմից՝ օսմանյան պետությունը դարձավ իմպերիալիստական տերությունների «տնտեսական տերիտորիա», մյուս կողմից՝ այնտեղ հաստատվեց Աբդուլ-Համիդի ժայրահեղ ֆեոդալական միահեծան բռնապետությունը, որը պատմագիտական գրականության մեջ հայտնի է որպես «ուլումի» ժամանակաշրջան:

Իհարկե, Յու.Պետրոսյանը բուրքական տնտեսության հետամնացության պատճառները նույնպես փորձում է միակողմանիորեն փնտրել օտա-

¹ Շարլ-Լուի դե Մեկոնդա Մոստեսքյո (1689-1775) – ֆրանսիացի գրող, իրավագետ, փիլիսոփա – Ա.Կ.

² Ֆրիդրիխ Էնգելս (1820-1895) - գերմանացի փիլիսոփա, գիտական կոմունիզմի հիմնադիրներից, համակրանքով է վերաբերվել հայ ժողովրդին, հետաքրքրվել նրա պատմական անցյալով, բուրքական բռնակալության և ցարական ինքնակալության դեմ նրա մղած ազգային-ազատագրական պայքարով – Ա.Կ.:

բերկրյա կապիտալի խաղացած դերի մեջ: Սա այն ոչ պատմական մոտեցման կրկնությունն է, որ կարելի է հանդիպել նաև Թուրքիայի պատմությանը գրադրված այլ հեղինակների գործերում:

Հարկ չկա այստեղ կանգ առնելու Օսմանյան կայսրության հետամնացության սոցիալ-քաղաքական, նաև ազգային՝ բուրբական բնույթի հետամնացության բուն պատճառների վրա: Իրողությունն այն էր, որ իրենց դարավոր տիրապետության ընթացքում բուրբական տիրակալներն ավելի քանդեցին, քան շինեցին, ավելի վայելում էին, քան վերարտադրում:

Պատմական ճշմարտություն է, որ մինչև եվրոպական տնտեսական ներխուժումը սուլթանների պետությունն արդեն գտնվում էր տնտեսական անկման, քայքայման պրոցեսում: Բուն պատճառը բուրբականության մեջ փնտրելը, այն բուրբականի մեջ, օրինակ, որի տակ Վ.Լ.Էնինը հասկանում էր գյուղատնտեսությունը վարելու ամենահետամնաց, ամենավայրենի ձևը, ինչ խոսք, որ կհամապատասխաներ ռեալականությանը, պատմականությանը:

19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության ներքին քաղաքական դրությունը բնութագրվում էր ֆեոդալական-սուլթանական ծայրահեղ բռնապետական ռեժիմի հաստատումով, սոցիալական և ազգային պայքարների, ներհակությունների հետագա սրումով, երկրի քաղաքական և հասարակական կյանքում ֆեոդալական-կղերական ռեակցիայի տիրապետությանը:

Սուլթանի հպատակների կյանքի և ունեցվածքի իրական երաշխիքների քացարձակ քացակայությունը, վարչական անկաշկանդ կամայականությունը, պետական ապարատում խոր արմատներ ձգած հրեշավոր կոռուպցիան՝ արդուլիսմիդյան ռեժիմի քոլոր այս գծերը Օսմանյան կայսրությունը դարձրել էին իրավագրկության և կամայականության երկիր, միջնադարյան խավարի երկիր:

Պետության կառավարման բոլոր քելերը կենտրոնացված էին սուլթանի և պալատական վերնախավի ձեռքերում: Սուլթանը շրջապատված էր մահմեդական ռեակցիոն հոգևորականներով, արաբ, չերքեզ, քուրդ ֆեոդալներով, որոնք և Աբդուլ Համիդի անձնական հենարաններն էին: Նրա մահաբեր իշխանության խորհրդամիջը տխրահռչակ «Յըլդըզ» պալատն էր: Այստեղ էին ընդունվում սուլթանական որոշումները, այստեղ էր լրտեսության, սպանությունների կենտրոնատեղին: Սրելով ազգային և կրոնական հակամարտությունը՝ Համիդը շեղում էր ժողովրդական զանգվածների ուշադրությունը սոցիալական, դասակարգային պայքարից: Նրա գաղափարական-քաղաքական վարդապետությունը պանիսլամիզմն էր: Ընդ որում, ընդգծվում և պրոպագանդվում էին պանիսլամիզմի այն դրսևորումները, որոնք ապահովելու, ամրապնդելու էին սուլթանի՝ որպես խալիֆի իշխանությունը ոչ միայն Օսմանյան կայսրության մահմեդական հպատակների, այլև ամբողջ աշխարհի մահմեդականների վրա:

Հեղինակը բնորոշ փաստերով բնութագրում է սուրբան Աբղով Համիլի կառավարման մեթոդները, գույումի շրջանում բուրբական վերնախավի էությունը: Օրինակ, 1898 թ. բուրբական կառավարության անդամներից և ոչ մեկը բարձրագույն կրթություն չունեին: Կառավարական պաշտոնյաների մեծամասնությունը տգետ էր կամ ուղղակի անգրագետ: Հեղինակը նկատում է. «Առանց չափազանցելու կարելի է ասել, որ գույումի տարիներից պետական պաշտոնյայի կրթվածությունը նրա բաղաբական անբարեխուսության նշան էր համարվում» (էջ 156):

Հինգերորդ՝ «Երիտթուրքական կազմակերպությունները և նրանց գործունեությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին» գլխում հեղինակը ցույց է տվել երիտթուրքական ցանցի տարածումը Օսմանյան կայսրության տարբեր մասերում, մասնավորապես Բալկաններում: Երիտթուրքական բջիջները ստեղծվում էին ռազմական ուսումնարաններում, կայագործների սպայության շրջանում: Հեղինակը վերլուծում է խմբերի աշխատանքի մեթոդների, գաղափարական հայացքների տարբերությունը, անլեզու աշխատանքի ձևերը: Այս շրջանի գործիչների հայացքներն ու հավատամքը բացահայտելիս նա բազմաթիվ փաստերով ապացուցում է «Միություն և առաջադիմություն» կազմակերպության ակնառու գործիչների (Իբրահիմ Տեմո, Մահմուդ Ռեշիդ, Ահմեդ Ռիզա, Մուրադ-բեյ և շատ ուրիշներ) հայացքների օրգանական կապը, միասնությունը «նոր օսմանների» ծրագրերին՝ երկրի հասարակական և քաղաքական կյանքի վերափոխման գլխավոր հարցերում: Սուլթանի իշխանության լիբերալ բնեմղատությունից այն կողմ սրանք չէին անցնում, չունեին կայսրության ապագա վերակառուցման թիչ թե շատ մշակված պոզիտիվ ծրագիր:

Այստեղ մենք նորից անհրաժեշտ ենք համարում կանգ առնել ճշված ազգերի հակասութանական, ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ երիտասարդ թուրքերի բռնած դիրքի, նրանց հայացքների բնութագրման վրա:

Մասնավորապես, բնորոշ է անցյալ դարի 90-ական թթ. հայ ժողովրդի դեմ սկսված զանգվածային կոտորածների նկատմամբ երիտթուրքական պարագլուխների դիրքորոշումը: 1896 թ. Կ.Պոլսում օստոմանյան բանկի վրա դաշնակցական խմբի կատարած հարձակման առիթով նրանց հրապարակած բռնցիկ-դիմումում (վեղ որում, առաջին անգամ այս փաստաթղթի տակ էր հիշատակվում «Միություն և առաջադիմություն» անվանումը) ցավ էր հայտնվում, որ հայերը ձեռք են բարձրացրել Բ.Ղոռան վրա, կոչ էր արվում միասնաբար պայքարել սուլթանի իշխանության դեմ: Կարծես թե որևէ մեկը խանգարում էր նրանց երկրպայի մայրաքաղաքներում բերթերի էջերի գրավոր մարզանքներից բուն թուրքիայում գործի անցնելուն:

Յու.Պետրոսյանն այն միտքն է արտահայտում, որ 1894-1895 թթ. հայկական կոտորածը «զգալի դեր խաղաց բուրբական մտավորականության գաղափարական զարթոնքի մեջ» (էջ 172):

Այս պահին էլ մեծ բովոլ երիտօրրբական գործիչներն ձերբակալվեցին, իսկ մի մասին հաջողվեց փրկվել փախուստով: 1895 թ. Փարիզում Ամենդ Ռի-վան հրատարակեց «Մեշվերեր» («Ըննարկում») քերթի առաջին համարը: 1895 թ. դեկտեմբերի 3-ին նրա էջերում տպագրված «Միություն և առաջադի-մություն» օսմանյան կոմիտեի ծրագրում շարադրված էին երիտօրրբերի լի-բերալ, ռեֆորմիստական հայացքները: «Մենք ձգտում ենք, - կարդում ենք այնտեղ, - աշխատել ոչ թե կատարող դինաստիայի տնայալման համար, որի գոյությունը մենք անհրաժեշտ ենք համարում կարգուկանոնը պահպանե-լու, այլ առաջադիմության տարածման, խաղաղ ճանապարհով նրա հաղթա-նակի համար»: «Մենք բարեփոխումներ ենք ուզում, բայց ոչ այս կամ այն ան-հանգի համար» (էջ 174): Այստեղ բացահայտ է ելրուպական օժանդակուր-յամբ հայերի կամ ուրիշ ճնշված ազգերի ազատագրական շարժման դեմ երիտօրրբերի ընդդիմությունը: Ավելի ուշ՝ 1897 թ. օգոստոսի 15-ին նույն քեր-թում տպագրված «Երիտասարդ Թուրքիայի Ծրագրում» Ամենդ Ռիվան ու նրա համախոհները ուղղակի հայտարարում էին. «մեր հողերի միասնություն և անբաժանելիություն»: «Ովքեր ձգտում են պետությունից անջատել մեր հո-ղերի մի մասը, հայրենիքի բշնամիներ են»: «Միասնություն, կայսրության ան-բողջականություն և անբաժանելիություն, գահի վրա օսմանի դինաստիայի պահպանում» (էջ 180-181): Հիմնական դժգոհությունը, մտահուզությունը հան-գում էր Օսմանյան կայսրությունը փլուզումից փրկելու Համիդի անկարողու-բյանը:

Երիտօրրբերի ջանքերն ուղղված էին ժողովուրդների բանաղ կիսատ-պոստ բարեփոխություններով կանգուն պահելու, բոլոր ճնշված ժողովուրդ-ներից այդ սպանիչ, մահաբեր վանդակում դատապարտելու նպատակին: Երիտօրրբական պարագլուխներից Միզանչի Մուրադ-բեյը (պատմաբան, լրագրող, ծագումով դաղստանցի դարգին) իր խմբագրած «Միզան» («Կշեղք») քերթում Հայկական հարցում բացորոշ համերաշխում էր սուլթան Աբդուլ Հա-միդի հետ (էջ 181):

19-րդ դարի ամբողջ ընթացքում բուրբերը քրիստոնյա ազգություններից հետ էին մնում ոչ միայն սոցիալ-տնտեսական և կուլտուրական մակարդակի, այլև ազգային ինքնագիտակցության, ինքնաճանաչման, ազգային գաղա-փարների զարգացման առումով (տե՛ս **Ермеев. Д.Е. Этногенез тюрк. М. - 1971. - с. 187**): Երիտօրրբերը դեռ չէին բարձրացել ճնշված ազգերի առաջա-դիմական ուժերի բնական պահանջները ըմբռնելու մակարդակին: Սրան նրանք ի սկզբանե հակարարում էին իրենց այլամերձ կեցեցվածքը: Նրանք ի վի-ճակի չէին ընկալելու «ազգությունների բնական ձգտումը»՝ պոկվելու Օսման-յան կայսրության ամբողջությունից և անկախ գոյությամբ «քնազղաբար որո-շելու սոցիալական ավելի բարձր զարգացման ուղի» (տե՛ս **Լյուբսեմբուրգ Ռ. շելու սոցիալական ավելի բարձր զարգացման ուղի»**) (տե՛ս **Լյուբսեմբուրգ Ռ. Ազգային պայքարը Թուրքիայում և սոցիալ-դեմոկրատիան // «Բանքեր երևանի համալսարանի»** (Ե.), 1971, N 2, էջ 141-142):

ժխտելով ազգային-ազատագրական շարժման ինքնաբերական բնույթը, Մուրադ-բեյը ամեն ինչ վերագրում էր դիվանագիտությանը, հայերի ցանկությունը՝ բորփին սուլթանական լուծը, նա համարում էր «վիրավորական մահ-մեղականների հպարտության համար» (Լջ 182): Երիտթուրքական գաղափարախոսները ոչ միայն փորձում էին ապացուցել անկախության համար ոչ բուրք ժողովուրդների պայքարի աննպատակահարմարությունը, այլև ժխտում էին այդ բանն անելու նրանց իրավունքը: Եվ ամեն անգամ հիշեցվում էր հայերի կոտորածը:

Գրքի էջերում ապացուցվում է այն պատմական ճշմարտությունը, որ կայսրության տնտեսական հետամնացության, կիսազաղութային դրության խնդիրները քննարկելիս երիտասարդ բուրքերի պարագլուխները հանդես էին բերում լրիվ անտեղյակությամբ: «Կարողալով նրանց գործերը, - գրում է հեղինակը, - կարելի է կարծել, թե այլ սուլթանի դեպքում Օսմանյան կայսրությունը չէր լինի տնտեսական և քաղաքական այդպիսի կախյալ վիճակում իմպերիալիստական տերություններից: Օսմանյան կայսրության կիսազաղութային դրության պրոբլեմները քննարկելիս երիտթուրքերի անտարակուսելի կուրությունը նրանց՝ որպես բուրքական ազգային բուրժուազիայի տնտեսական ու քաղաքական շահերի արտահայտիչների սոցիալական բուլտության և քաղաքական տեսության հետևանք էր» (Լջ 273):

Երիտթուրքերը երբեք ազրարային հարց լուծելու խնդիր չդրեցին: Նրանց համար օտար էին դասակարգային պայքար, դասակարգեր հասկացությունները և երկրում «ընդհանուր կարգ» հաստատելու տակ չէին քննարկում և ոչ մի արժանատի և սոցիալ-տնտեսական խնդիր, չէին ճշում, թե այն որ դասակարգերի, որ խավերի շահերին է համապատասխանելու: Նրանք մնում էին չափավոր լիբերալ-բուրժուական ռեֆորմիզմի դիրքերում: Սրան զուգընթաց, երիտասարդ բուրքերն առանձնապես մեր դարակազմին սկսեցին ավելի տարվել պանթյուրքիստական ռեակցիոն գաղափարներով, «Արդիատիկի ավերից մինչև Չինաստանի սահմաններն ընդգրկող կայսրություն ստեղծելու» ցնդարամուրթունքներով (Լջ 276):

Հեղինակն անդրադառնում է 20-րդ դարի սկզբին երիտթուրքական շարժման մեջ առաջացած երկու հոսանքներին, նրանց հարցադրումների տարբերությանը: Մեկը Ահմեդ Ռիզայի հետևորդներն էին, մյուսը՝ Սապահեդդինի¹: Մինչդեռ առաջինը ակնկալվող հեղափոխության հաջողության դեպ-

¹ **Սապահեդդին** (1877-1948) – բուրք հասարակական-քաղաքական գործիչ, երիտթուրքական շարժման հիմնադիրներից և դեկադարներից, պաշտպանել է օտարերկրյա, մասնավորապես Մեծ Բրիտանիայի միջամտության անհրաժեշտության գաղափարը, կողմնակից էր ոչ բուրք ազգերին լայն ինքնուրույնություն շնորհելուն, ընդհուպ իրավահավասար պետական կազմավորումների ստեղծումը, նրա ջանքերով հնարավոր է դարձել երիտթուրքերի ժամանակավոր դաշինքը ոչ բուրք ժողովուրդների քաղաքական կազմակերպությունների հետ, անհաջող փորձեր է կատարել դավադրություն կազմակերպելու սուլթան Աբդուլ Համիդի դեմ,

րում օսմանյան կենտրոնացած պետության կողմնակից էր, եվրոպական պետությունների որևէ միջամտության, մասնակցության հակառակորդ, ապա Սապահեղդիյի խումբը (նա 1902 թ. Փարիզում տեղի ունեցած կոնգրեսում մեծամասնություն նվաճեց), համեմայն դեպս, խոսքով համդեռ էր գալիս կայսրության ապակենտրոնացման, ճնշված ազգերի ավտոնոմ իրավունքները հաշվի առնելու, հարգելու դիրքերից:

1907 թ. դեկտեմբերին Փարիզում հրավիրված հակասուլթանական կազմակերպությունների համաժողովում նույն տարակարծությունները շարունակվեցին: Այստեղ ավելի բացորոշ դարձան Ահմեդ Ռիզայի և նրա համախոհների խոսելի դիրքորոշումը, ճնշված ազգերի իրավունքները չհարգելու նրանց մտադրությունը: Հեղինակը հիշատակում է պատմական այն ճշմարտությունը, որ կոնգրեսը հրավիրելու նախաձեռնությունը պատկանում էր «հայկական բուրժուա-ազգային կազմակերպություններին» (էջ 243), որոնց ձգտումն էր ապահովել բռնակալական արդուլիամիլյան ռեժիմի դեմ համատեղ գործողություններ: Հատկանշական է, որ այդ կազմակերպությունների ներկայացուցիչները համաձայնություն տվին գլխավոր «կայսրության անբաժանելիության և անկախության մասին» հարցին: Այն լինելու էր սահմանադրական միապետություն: Հետաքրքրական է նաև, որ կայսրությունը վերափոխելու երիտրուրբական գլխավոր տեսարանը համաժողովից պահանջում էր «ճանաչել սուլթանատի և խալիֆատի իրավունքները»: Այն բանից հետո, երբ հայ պատվիրակները բողոքեցին, թե կոնգրես չեն եկել պաշտպանելու այդ իրավունքները, Ահմեդ Ռիզան ի նշան դժգոհության հրաժարվեց կոնգրեսի փոխնախագահի պաշտոնից (էջ 247):

«Սուլթանատի և խալիֆատի» իրավունքները պաշտպանելու դիրքերից հանդես եկող, քաղաքական այդպիսի հայացքներ ունեցող մարդկանց գլխավորած հեղափոխությունն էլ պետք է լիներ վերնախավային, անարյուն, կիսատ-պոստ: Ինչպես Լեհինն է նշել, այն ժողովրդական հեղափոխություն չէր, կիսահաղթանակ էր, իսկ հետագա զարգացման մեջ պարտություն կրեց՝ անձեռնմխելի բողոքելով ֆեոդալական կարգի հիմքերը (էջ 315):

Գրքի վերջին՝ 8-րդ գլուխը նվիրված է հենց այդ խնդիրների լուսարանությանը: Այստեղ մենք կարդում ենք, որ տակավին նոր իշխանության գլուխ անցած երիտրուրբերը 1908 թ. հուլիս-օգոստոսին նշեցին Թուրքիայի բանվոր դասակարգի առաջին ելույթները (էջ 308), իսկ 1909 թ. կազմակերպեցին Ադամայի 30 հազար հայերի կտորածը: Սա սկիզբն էր: Իսկ 1915 թ. ոճրագործությունը հայտնի է բոլորին:

Յու. Պետրոսյանի աշխատությունը լուրջ ուսումնասիրություն է: Այնտեղ արժարժված հարցերը սերտորեն առնչվում են արևմտահայության նոր պատ-

1908-ի հեղաշրջումից հետո, երբ իշխանությունն անցել է երիտրուրբերի ազգայնական քեի ներկայացուցիչներին, փախել է Եվրոպա, ապրել Եվեյնարիայում - Ա.Կ.:

մության հանգուցային պորբենների ճիշտ լուսաբանմամբ: Այս տեսակետից գրախոսվող գիրքն անթերի չէ: Աղբյուրների քննական տեսությանը նվիրված ներածությունից պարզ է դառնում, որ տարբեր լեզուներով հեղինակի օգտագործած գրականության ու աղբյուրների շարքում չկան հայկական աղբյուրները, մասնով և ուսումնասիրությունները: Հայտնի է, որ Ստամբուլում տպագրական գործը հայերը հիմնել են 1565 թ. (հրեաներից հետո – 1494 թ.), իսկ թուրքերը միայն 1729 թ.: 1851 թ. Ստամբուլում լույս տեսավ առաջին հայկական ամսագիրը՝ «Քանասեր» անունով: Գրախոսվող գրքի խմբագիր Ժելտյակովի տվյալներով 1850 թ. Ստամբուլում լույս էին տեսնում 2 թուրքերեն, մեկ հայերեն թերթ, Իզմիրում՝ մեկ հայերեն թերթ, իսկ թուրքերեն պարբերական չկար, 1876 թ. Ստամբուլի 13 թուրքերեն թերթերի կողքին լույս էին տեսնում 9 անուն հայերեն թերթեր (տե՛ս Желтяков А.Д. История турецкого книгопечатания и периодики // Тюркологический сборник. – М. – 1970. – с. 254):

Ահա այս, այնուհետև դարավերջի բազմախարուստ արևմտահայ մամուլի, այլ աղբյուրների օգտագործումը, ինչ խոսք, որ ավելի կոյուրացներ բազմաթիվ պորբենների ավելի հանգամանալի պարզաբանումը:

Գիրքը կշահեր, եթե հեղինակը երիտթուրքերի և ճնշված ժողովուրդների ազատագրական շարժումների ղեկավար կազմակերպությունների, մասնավորապես հայկական կուսակցությունների փոխհարաբերությունների, նրանց ծրագրերի և տակտիկայի հարցերի քննարկումը, համադրումը, համեմատությունը համարեր իր ուսումնասիրության թեմայի շատ կարևոր, քաղկացուցիչ մասը: Այս բանը արված չէ: Այնուհետև հեղինակը վերջապես է դնում 1908 թ., այսինքն՝ երիտթուրքերի իշխանության գլուխ անցնելուց հետո նրանց վարած պետական քաղաքականության, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կատարած մեծագույն ոճրագործությանը չի անդրադառնում մույնիսկ եզրափակման մեջ: Սա նույնպես գրքի թերի կողմնից է: Վերջին հաշվով երիտթուրքերը կառավարող կուսակցություն դառնալով էր, որ խոսքից անցան գործի՝ բացահայտելով իրենց սոցիալ-քաղաքական գործունեության ողորմելիությունը, իրենց մարդատյաց, ժողովրդասպան գործելակերպի նողկալի մերկությունը:

Անկախ այս բերություններից, Յու.Պետրոսյանի աշխատությունն օգտակար է բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են Օսմանյան կայսրության մոտիկ անցյալի քաղաքական պատմությամբ:

ՍԱՆ ՌԵՄՈՅԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ¹

1919 թ. Փարիզի խաղաղության կոնֆերանսը չէր կարող և չլուծեց Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի ավարտի հետ կապված բազմաթիվ հարցեր: Վերսալի, Սեն Շերմենի, Տրիանոնի և մի շարք այլ պայմանագրերի կնքումից հետո էլ քիչ չէին քաց մնացած խնդիրները: Տակավին բաշխված չէին պարտված տերությունների գաղութները և օկուպացված տարածքները (այդ բվում՝ Օսմանյան կայսրության), չկար խաղաղության պայմանագիր թուրքիայի հետ, որտեղ արդեն սկիզբ էր առել և ծավալվում էր քեմալական շարժումը: Անտանտի երկրների միջև խորացած հակասությունները նոր պրոբլեմներ էին առաջադրել և՛ Եվրոպայում, և՛ Ասիայում:

Այսպիսի իրավիճակում 1920 թ. ապրիլի 18-ից 26-ը Սան Ռեմոյի (Իտալիա) Դևաշան վիլլայում գումարվեց Անտանտի տերությունների Գերագույն խորհրդի նիստ, որին մասնակցում էին Լւոյդ Ջորջը, Քերզոնը² (Անգլիա), Միլերանը³, Բերտելոն⁴ (Ֆրանսիա), Նիտտին⁵, Սցիալոյան (Իտալիա), Մացուլին (Ճապոնիա): ԱՄՆ-ի ներկայացուցիչը կոնֆերանսին մասնակցում էր որպես դիտորդ: Հայաստանին վերաբերող հարցերի քննարկման նիստերին հրավիրվում էին Հայաստանի Հանրապետության խորհրդարանի նախագահ Ալեախ Ահարոնյանը և ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուրարը⁶:

¹ Կիրակոսյան Ջ., Սահակյան Ռ. Սան-Ռեմոյի կոնֆերանսը և Հայաստանը // *Բանբեր Հայաստանի արխիվների* (Ե.), 1972, N 3, էջ 19-24: Կից՝ Սան Ռեմոյի կոնֆերանսի փաստաթղթերը, էջ 24-66:

² Ջորջ Նարանիել Քերզոն (1859-1925) - քրիստանացի պետական գործիչ, դիվանագետ, պահպանողական, 1898-1905 թթ.՝ Հնդկաստանի փոխարքա, 1901-ից՝ Լորդերի պալատի անդամ, 1919-1924 թթ.՝ արտգործնախարար, ակտիվ դեր է խաղացել հետպատերազմյան Փարիզի, Լոնդոնի, Լոզանի միջազգային կոնֆերանսներում - Ա.Կ.:

³ Ալեքսանդր Միլերան (1859-1943) - ֆրանսիացի քաղաքական գործիչ, սոցիալիստ, առևտրի նախարար (1899-1902), ռազմական նախարար (1914-1915), վարչապետ (1920), Ֆրանսիայի նախագահ (1920-1924) - Ա.Կ.:

⁴ Ամրի Բերտելո (1861-1931) - ֆրանսիացի ռազմական գործիչ, զենքերա, Բալկաններում և Ռուսաստանի հարավում դաշնակիցների զորքերի գլխավոր հրամանատար, Սեյն (1919-1922) և Ստրասբուրգի (1923-1926) ռազմական նահանգապետ, քարձրագույն ռազմական խորհրդի անդամ (1920-1926) - Ա.Կ.:

⁵ Ֆրանչեսկո Մավերիո Նիտտի (1868-1953) - իտալացի քաղաքական գործիչ, գյուղատնտեսության, առևտրի և արդյունաբերության նախարար (1911-1914), ֆինանսների նախարար (1917-1919), վարչապետ (1919-1920) - Ա.Կ.:

⁶ Պողոս Նուրար (Նուրարյան) (1851-1930) - հասարակական-քաղաքական գործիչ, ղեկավար պաշտոններ է զբաղեցրել Եգիպտոսի տրանսպորտի գերատեսչու-

Ման Ռենդլի կոնֆերանսում քննարկված խնդիրների շարքում (Հունաստանին, Բելգիային վերաբերող հարցեր, պարտված Գերմանիայի ռազմական ռեպարացիաներ, մերձարևելյան մարզ, դաշնակիցների դիրքորոշումը Մովետական Ռուսաստանի նկատմամբ և այլն) մեզ հետաքրքրող Օսմանյան կայսրության հետ հաշտության պայմանագրի նախագծի և դրան օրգանապես շաղկապված Հայաստանի հարցն է:

Ստորև հրատարակվող նյութերը Ման Ռենդլի կոնֆերանսում Հայաստանին վերաբերող խնդիրների քննարկման արձանագրություններն են (քրիտանական պատվիրակության քարտուղարի նոթագրությունները), որ ամփոփված են «Documents on British Foreign Policy» (DBFP) անգլիական արտաքին քաղաքականության փաստաթղթերի բազմահատոր հրատարակության 8-րդ հատորում: Ժամանակին դրանք մասամբ օգտագործել է Լլոյդ Ջորջը իր մեմուարներում: Շասնյակ տարիներ անց միայն մենք հնարավորություն ունենք ծանոթանալու «Foreign Office»-ի այդ փաստաթղթերին, որոնց հայերեն տպագրությունը, մեր կարծիքով, կարևոր է, քանի որ դրանք բացահայտում են Հայկական հարցում Անտանտի տերությունների քաղաքականության էությունը, նրանց հետապնդած նպատակները:

1920 թ. հունվարի 28-ին Կ.Պոլսում թուրքական պառլամենտի ընդունած «Թուրքական ազգային ուխտը» բանաձևեց 1919 թ. հուլիս-սեպտեմբերին Էրզրումի և Մրվազի համաժողովների ծրագրային հարցադրումները, քեմալական ազգայնական պայքարի նպատակներն ու ծրագրային դրույթները: Անկրախ էր քեմալական շարժման երկակիությունը. անկախության համար, ինպեղիակիզմի դեմ պայքարի արդարացի բնույթը և թուրքական կայսրության ամբողջականությունը փրկելու, ճնշված ժողովուրդների իրավունքները դաժանությամբ ռոնահարելու, մահմեդական հետադիմական խալիֆաթը, սուլթանի իշխանությունը պահպանելու ձգտումը: Էրզրումի համաժողովի ընդունած ռոշման հենց առաջին կետում նշվում էր թուրք մացիոնալիստների վճռականությունը Անատոլիայի վեց վիլայեթները (Արևմտյան Հայաստան) Օսմանյան կայսրության կազմում պահելու հարցում: Այստեղ «ժայկական համայնքի ստեղծումը» կանխելը հռչակվում էր թուրքերի սրբազան գործը: Առանձնահատուկ շեշտվում էր հակահայկականությունը, փորձ էր արվում հաստատել Թուրքիայի «անվիճելի» իրավունքը այն տարածքների նկատմամբ, որոնք Օսմանյան կայսրության փլուզման պայմաններում պետք է անցնեին սուլթանական բռնապետության դարավոր լուծը թոթափել ցանկացող ժողովուրդներին: Այդ օրերին Քեմալն անհնարին էր համարում գեթ մի թիզ հող հանձնել Հայաստանին կամ որևէ այլ պետության: Քեմալականներն իրենցուրույն և անկախ պետական գոյություն էին պահանջում թուրք կամ թուրքալեզու ժողովուրդների համար և վճռականորեն համոզես էին գալիս արաբների, հույների,

բրդերի, հայերի ինքնորոշման դեմ: Մուստաֆա Քեմալն ասում էր. «Մենք կապրենք կամ կկործանվենք Ազգային ուխտի հետ միասին»:

Արդևն 1919 թ. կեսերից Անատոլիայի վրա իր հսկողությունը հաստատած Մուստաֆա Քեմալից որևէ բան ստանալ, զինված ուժի միջոցով, Հայաստանի Հանրապետությունն ի վիճակի չէր: Դիվանագիտական ուղին, որևէ ուղղակի կոնտակտի հաստատումը նրանց միջև երբեք չէր քննարկվում: Միակ ուղին դաշնակցական գործիչները շարունակում էին որոնել տասնամյակների ընթացքում հայ ժողովրդին ոչինչ չտված Անգլիայի ու Ֆրանսիայի, ԱՄՆ-ի ու Իտալիայի կառավարությունների մոտ, վերսալյան դիվանագիտության ֆորումներում նրանց կայացրած որոշումներում: Անտանտի տերություններն իրենց ընդունած որոշումները Սան Ռեմոյում անկարող էին պարտադրել Թուրքիային ոչ միայն այն պատճառով, որ երկրում, բացի Կ.Պոլսից ու առափնյա մի շարք շրջաններից, իրականության տնօրենը սուլթանը չէր, այլ Անտանտի դեմ պայքարի դրոշ պարզած Քեմալը, այլ այն պարզ պատճառով, որ միջինալեռիալիստական հակասությունները Եվրոպայում և Մերձավոր Արևելքում արդեն բացառում էին համատեղ գործողությունների հնարավորությունը Թուրքիայի նկատմամբ:

Սան Ռեմոյի կոնֆերանսում ավելի ցայտուն դրսևորվեցին միջինալեռիալիստական զրոքալ հակասությունները: Մերձավոր Արևելքում մեկը մյուսին խաբելու, միմյանցից առաջ անցնելու մոլուցքը օտարացնում էր երեկվա դաշնակիցներին: Այս բանն ավելի բնորոշ էր Թուրքիայի հետ կնքվելիք խաղաղության պայմանները մշակելիս: Ամբողջ 1920 թ. իրադարձությունները եկան հաստատելու այս ճշմարտությունը: Սան Ռեմոյում գլխավոր կոիվը նավթի համար էր: ԱՄՆ-ի կառավարողները դժգոհ էին Մոսկվի նավթից զրկվելու համար: Անգլիան և Ֆրանսիան տակավին 1919 թ. ապրիլին «Բեռնմեծ-Լոնգո» համաձայնագրով միմյանց միջև բաժանել էին այդ նավթը, իսկ այժմ Սան Ռեմոյում ձևակերպեցին այն «միջազգային իրավունքով»: Այստեղ թեև մշակվեցին Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագիծը, մերձավորարևելյան երկրների վրա իմպերիալիստական մանդատների սխտեմը, բայց պայքարը ծավալվեց ավելի մեծ ուժգնությամբ:

Շուտով ֆրանսիական գործերի քիվը Մերձավոր Արևելքում հասավ 80 հազարի: Ֆրանսիան իր հարվածներն ուղղեց գաղութատիրության դեմ պայքարող արաբների դեմ: Այստեղ ֆրանսիական կառավարողները չէին տրամադրում ուժերի պակասությունից, ինչը նրանք անում էին ամեն անգամ, երբ քննարկվում էր Հայաստանի Հանրապետությանը զինված ուժով օգնելու հարցը: Ֆրանսիական բանակը Լիբանանում ցրում էր արաբական ազգային ֆոնդ: Միրիայում իր հսկողությունը տարածում Դամասկոսի և Հալեպի վրա՝ կախաղան բարձրացնելով արաբ հայրենասերներին: Նույն բանն անգլիացիներն անում էին Պաղեստինում և Իրաքում:

Այս իսկ տեսակետից արևմտյան դիվանագիտության ակցիաները Հայաստանի նկատմամբ մասնավոր բան չէին. այն պետք է տեսնել ու մեկնաբա-

նել Սովետական Ռուսաստանի դեմ ընդհանուր իմպերիալիստական քաղաքականության և Մերձավոր Արևելքում նվաճողական պլանների լույսով: Հայաստանի հարցը երբեք լուրջ խնդիր չէր արևմտյան դիվանագիտության համար, և վերջինս չէր ղեկավարվում հայասիրական, ֆիլանտրոպիական մղումներով: Փոփոխված իրադրության մեջ, պատմական նոր պայմաններում արևմտյան դիվանագիտությունը խաղում էր նույն դերը, ծառայում էր կապիտալիստական մեծ գիշատիչների նվաճողական պլաններին: Տվյալ դեպքում Հայաստանը նրանց հետաքրքրում էր. ա/ հակասովետական պլանների իրականացման առումով, բ/ մերձավորարևելյան քարտեզը իմպերիալիստական տերությունների ռազմաքաղաքական, տնտեսական շահերին համապատասխան վերածնելու առումով: Ընդ որում այս խնդիրները իրականացնելու համար մանր դրամի դեր պետք է կատարեին Հումաստանն՝ Արևմուտքում, իսկ Հայաստանը՝ Արևելքում: Այս միջոցով պետք է ճնշում գործադրվեր Թուրքիայի վրա՝ համաձայնվելու Անտանտի «ժաշտության» պայմաններին:

Անգլիական դիվանագիտության այս փաստաթղթերը նոր լույս են սփռում Մերձավոր Արևելքում իմպերիալիստական տերությունների քաղաքականության որոշ մանրամասների, Հայաստանի հարցում նրանց բռնած երկդիմի, մեծամասամբ վերացական դիրքորոշման վրա: Լլոյդ Ջորջի և Քերզոնի, Կլեմանտոյի¹ և Միլերանի, ամերիկյան պետական գործիչների խոսքի ու գործի միջև տարբերությունը ակնբախ է դառնում, երբ ծանոթանում ենք Մերձավոր Արևելքի տարբեր մասերում Անտանտի տերությունների գաղութային ռեժիմը հաստատելու մանրամասներին, զորքերի տեղաշարժերին, դիվանագիտական խարդավանքներին: Ակնբախ է դառնում նաև, որ հայ ազգայնական գործիչները մեկ անգամ ևս ապացուցեցին իրենց ռոմանտիզմը, քաղաքականության մեջ անօգնական լինելը՝ հույսը կապելով իմպերիալիստական Եվրոպայի և Ամերիկայի այն ուժերի հետ, որոնք և ոչ մի գործնական մտադրություն չունեին ինչ-որ շափով հոգալու թուրք-հայկական հարաբերությունները կարգավորելու, Հայաստանը թուրքական զավթողական ծրագրերից զերծ պահելու մասին: Նրանց հետաքրքրում էր հակասովետիզմը: Այս նպատակի համար նրանք պատրաստ էին հենվելու և՛ դաշնակների, և՛ քեմալականների վրա: Նրանց հետաքրքրում էր Մերձավոր Արևելքի քնական հարստությունների կողոպուտը: Քերզոնը չէր տարակուսում, որ ֆիլանտրոպիան չի հաղթանակի «նպատակահարմարության հետ մրցապայքարում»: Հիրավի, մարդասիրական դիրքերից տարիներ շարունակ փարիսեցիական ճառեր սասմ արևմտյան գործիչները ելակետ ունեին հաշիվը, հաշվենկատությունը, շահը, այլ ոչ թե հայ ժողովրդի կենսական պահանջների բավարարումը:

¹ Ժորժ Բենեթան (1841-1929) – ֆրանսիացի քաղաքական և պետական գործիչ, Ֆրանսիայի ակադեմիայի անդամ, ժախ արժատականների կուսակցության ղեկավար, 1906-1909, 1917-1920 թթ.՝ վարչապետ, Փարիզի հաշտության կոնֆերանսի նախագահ - Ա.Կ.:

Գերագույն խորհրդում խաղաղության կոնֆերանսի նախագահ Կլեմանտոն, ամփոփելով նիստը, եզրակացնում էր. «Ֆրանսիան ոչինչ չի կարող անել, ներկայումս Ամերիկան ևս ոչինչ չի կարող անել: Մնում է տեսնել որպես արդյունք հայերը կճանա՞ն»:

Այո, հայերը նրանց հետաքրքրում էին իրենց շահերին առաջնությունը տալու շրջանակներում:

Սան Ռեմոյի կոնֆերանսի հենց առաջին օրը Միլերանը հրաժարվում էր որևէ դրական բան ասել Հայաստանին վարկ բաց բողոքելու կամ փոխառություն երաշխավորելու մասին: Ռազմական օգնության մասին ոչ մի խոստում չէր տալիս: Գաղութային քաղաքականության շահը պահանջում էր, և Ֆրանսիայի կառավարողներն իրենց ռազմական ուժը, ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել էին Սիրիայում ու Լիբանանում:

Լլոյդ Ջորջն ապրիլի 20-ի նիստում ուղղակի հայտարարում էր. եթե հայերը «ի վիճակի չեն պաշտպանել իրենց սեփական սահմանները, ապա ինքը կարծում է, որ աշխարհում նրանց ժողովրդից ոչ մի օգուտ չկա և դաշնակից կառավարություններից ոչ մեկը պատրաստ չի լինելու օգնելու նրանց թեկուզ մեկ գումարտակով»: Ահա սա էր իմպերիալիստական քաղաքագետների բարոյականությունը: Առանց մի գումարտակ տալու՝ արևմտյան դիվանագիտությունը Սևրի սեղանի վրա էր դնելու Սան Ռեմոյի նախագիծը՝ նախապես իմասնալու, որ այն գործնականում դատապարտված է ձայնողման:

Քերզոնը մտահոգված էր ամբողջ Արևելքում քրիստոնական զաղորմների և կախյալ երկրների մի անընդմեջ, ամբողջական սխտեմ ստեղծելու խնդրով: Սա էր նրա հավատո հանգամակը, սրան էին ենթարկվելու բոլոր մնացած խնդիրները: Դրա համար նա հիշեցնում էր, թե ցամկալի է սեպ խորել Թուրքիայի մահմեդականների և Հեռավոր Արևելքի մահմեդականների միջև քրիստոնյա հասարակության ձևով, որը լինելու է նոր հայկական պետությունը: «Հույս կար, որ Ամերիկան կվերցնի Հայաստանի մանդատը, բայց այս հույսը, զերխատարար, պատրանք դուրս եկավ», - ասում էր նա: Իսկ այն, ռեալ օգնություն կազմակերպելու միջոցներ նա չէր տեսնում:

Կլեմանտոն ուղղակի ասում էր. «Ֆրանսիան չի կարող դրան ծախսել Հայաստանում»: Ռազմական հանճաժողովի նախագահ, մարշալ Ֆոշը հաստատում էր նրա ասածը, թե ինքը ոչ մի հնարավորություն չի տեսնում, որ դաշնակիցները օգնություն ուղարկեն Հայաստանին: Նա գտնում էր, որ դաշնակիցները չեն կարող «պաշտպանել փոքրամասնություններին Թուրքիայում առանց ռազմական ուժերի ճնշող ցուցադրման»: Իսկ ռազմական ուժը նրանք ցուցադրում էին Սիրիայում, Հյուսիսային Աֆրիկայում, բայց ոչ Հայաստանում:

Սան Ռեմոյում հիշատակվում էր այն կողմը, որ «ներկայումս Էրզրումը քուրք ազգայնականների կենտրոնն է: Որևէ մեկը պետք է թուրքերին դուրս բշի այնտեղից»: Լլոյդ Ջորջը կրկնում էր, թե «դաշնակից տերություններն ի վիճակի չեն ուժերը ուղարկելու հայերին օգնության»: Եթե Էրզրումը զիջվի

հայերին, միակ պատասխանը, որ կտան թուրքերը, կլինի հայերին կոտորելը: Այս դեպքում ի՞նչ պետք է անեն դաշնակից տերությունները: Նրանք շարունակելու են մեկը մյուսի հետևից կոմիներաններ գումարել, ջուր ծնծել և ասել, որ իրենք այն արեցին, որպեսզի քաջալերեն «մեծ հույսը»: Միակ «մեծ հույսը», որ ինքը տեսնում է, հայկական կոտորածներն են: Նա շարունակում է. «Կոմիներանների իրական վտանգն այն է, որ իրենք պատրաստ են պատրանքների աշխարհում և չեն տեսնում փաստերը: Կոմիներանները հակված են մտածելու, թե երբ մշակել են բանաձևեր և ընդունել հողվածներ, արդեն լուծել են դժվարությունները»:

Եթե սեղանի շուրջը մտած վեց ներկայացուցիչները կարգադրեն մախազձային կոմիտեներին Էրզրումը հռչակել հայկական, այն Բերտոլդի կարծիքով, դա կտա՞ Էրզրումը Հայաստանին: Էրզրումը պետք է վերցվի գեներալի ուժով և վերցնելիս էլ արյուն պետք է հեղվի:

«...Հավատո՞ւմ է մա, որ հայերը, որոնք չկարողացան պաշտպանվել կոտորվելուց, դեռ մի բան էլ կշարժվեն դեպի բջճամական երկիր և կգրավեն մի ամրոց, որը ռուսական բանակներին է դիմարդել: Եթե կոմիներանը հռչակեր պայմանագրում, որ Էրզրումը պատկանում է Հայաստանին, գործարքը կմնար գործարք թղթի վրա, առանց կենսագործվելու հույսի...»:

Պատասխանելով Հայաստանի Հանրապետության պատվիրակների պնդմանը, թե առանց Էրզրումի հայերը չեն կարող գոյություն ունենալ, Լլոյդ Ջորջն ասում էր. «Եթե Հայաստանը չի կարող գոյություն ունենալ առանց Էրզրումի, հայերը չեն կարող գոյություն ունենալ առհասարակ: Տերությունները չեն կարող վերցնել այն և հանձնել նրանց, իսկ նրանք էլ իրենք չեն կարող վերցնել»:

Այս այն Լլոյդ Ջորջն էր, որ 1917 թ. գարնանը Գլազգոյում արտասանած իր ճառում պահանջում էր «ազատագրել» Միջագետքը և Հայաստանը թուրքական լծից և նրանց բախտը հանձնել «ավելի արդարացի կառավարման»:

Իսկ այժմ այլ բան էր անում:

Իսկ Դաշնակցության «դիվանագետներ»ը: Նրանք շարունակում էին հավատալ և դեկավարվել Արևմտաքի վերացական ու սին հայտարարություններով, խոստումներով, արևմտյան «դաշնակիցների» ոչ մի լավ բան չխոստացող քաղաքականությանը և ոչ թե Մերձավոր Արևելքում, Անդրկովկասում ստեղծված ռեալ կացությանը:

Սան Ռեմոյում ու Սերում, այնուհետև Փարիզի և Լոնդոնի կոմիներաններում Լլոյդ Ջորջը և Կելեմանտն, արևմտյան դիվանագիտության մյուս մեծերը ընդհանուր, վերացական դատողություններից այն կողմ չէին անցնում, Ահարոնյանին և Պողոս Նուբար-փաշային ռազմական թե այլ օգնություն չէին խոստանում: Այնուամենայնիվ, վերջիններս շարունակեցին իրենց քանիցս չարդարացրած ընթացքը, իրենց անմիտ ակնկալությունները Լոնդոնից ու Փարիզից:

Սովետական արտաքին քաղաքականության կոնստրուկտիվ քայլերը հայ-բուրբական հարաբերությունների կարգավորման բնագավառում հանդիպում էին բուրբ նացիոնալիստների հակահայկական մեթոդական կեցվածքին: Անտարակուսելի է, որ Հայաստանի Հանրապետության այն ժամանակվա կառավարության քիչ բե շատ բնական դիրքորոշումը, Անտանտի ձեռքի խաղալիքի դերից ռեալիստական քաղաքականության անցնելու, Սովետական Ռուսաստանի վրա հենվելու դեպքում անհնար չէր բուրբ նացիոնալիստների սանձարձակության չափավորումը: Սակայն դաշնակցական սլարազլուխներն ընտրեցին քաղաքականության վատթարագույն, ազգակործան տարրերակը:

АЛИЕВ Г.З. ТУРЦИЯ В ПЕРИОД ПРАВЛЕНИЯ МЛАДОТУРОК (1908-1918 гг.)¹

Рецензируемая монография посвящена исследованию десятилетней истории правления младотурок – с 1908 по 1918 гг..

В первой главе рассматриваются социально-экономические предпосылки революции 1908-1909 гг. в Турции, делается попытка объяснить причины экономической отсталости Османской империи, рисуется страшная картина внутренней жизни Османской империи при деспотическом режиме султана Абдул-Гамида II. Автор считает, что «помимо социально-экономических и внешнеполитических факторов в распаде Османской империи значительную роль сыграли и реакционная внутренняя политика правительства Абдул Гамида II» (с. 28).

Приводится много фактов, данных, показывающих, что режим «зулюм» стал главным источником бедствий многомиллионных народных масс. Разлагался государственный аппарат. Внутренний грабеж стал двигательной пружиной феодально-теократического режима Гамида. Казнокрадство, взяточничество, другие злоупотребления приобрели право гражданства во всей внутренней жизни империи. Официальной идеологией «эпохи зулюм» был панисламизм самого реакционного толка. Правосудие в Турции было пустой фикцией. Власть Гамида как по своей форме, так и по внутреннему духу представляла собой воплощение реакции и насилия.

В главе рассмотрены вопросы возникновения буржуазно-революционного движения, образования партии «Единение и прогресс» («Иттихад ве теракки»), членов которой называли «иттихадистами» или «младотурками». Автор замечает, что им с самого начала присущи были непоследовательность, беспринципность, что они часто меняли свое политическое направление. Так, испугавшись усиления армянского движения в 1894 г., младотурецкий комитет выпустил манифест, призывавший уже не к свержению деспотизма с его государственными институтами, а к либеральным реформам (с. 57). В целом младотурецкое движение отражало интересы зарождающейся турецкой национальной буржуазии и либеральных кругов помещичьего класса. Младотурки, как указывает автор, стремились объединить все недовольные существующим режимом элементы независимо от их политической окраски. Пестрый социальный состав, идейный разброд, отсутствие четкой политической платформы и тактической линии – все это ослабляло и без того немощное младотурецкое общество «Иттихад ве теракки», лишаю его поддержки широких народных масс. «Младотурецкое движение, - отмечает автор, - не пользовалось поддержкой и прог-

¹ Киракосян Дж.С., Симонян А.П. Г.З. Алиев. Турция в период правления младотурок (1908-1918 гг.) // Вестник общественных наук АН Арм. ССР (Е.), 1973, N 6. - с. 107-111.

рессивной общественности Европы, которая не верила в жизнеспособность и силу этого движения и видела единственный выход для Турции в проведении реформ под непосредственным контролем великих держав» (с. 330).

В книге приведены факты преемственной связи между младотурками и кемалистами. Автор показывает, что инициатива создания Османского общества свободы принадлежит не Талаату, а Мустафе Кемалю (с. 84-86), который вообще играл видную роль в младотурецком движении. Впоследствии многие младотурки «составили довольно значительную часть сторонников Мустафы Кемалья» (с. 286). Среди них был также министр иностранных дел Кемаль Бекир Самп-бей¹, известный своей прозападной, антисоветской деятельностью. При младотурецком режиме он был губернатором Багдада (с. 280). В этом отношении заслуживает внимания замечание автора о том, что изучение истории Турецкой республики невозможно без анализа тех социально-экономических и политических факторов, на базе которых возникло современное турецкое государство, а большинство этих факторов сложилось накануне и в период правления младотурок (с. 5).

Вторая глава посвящена рассмотрению вопросов революции 1908-1909 гг. и прихода к власти младотурок.

Половинчатый, поверхностный характер революции автор объясняет ее социально-экономическими и политическими предпосылками, соотношением классовых сил и «самой природой турецкой буржуазии». К сожалению, эта «природа» так и не раскрыта на страницах книги. Следует отметить, что младотурецкая конституция сохраняла за султаном такие значительные права, как право назначения великого везира, шейх-уль-ислама, роспуска палаты депутатов. Султан оставался главнокомандующим вооруженными силами, имел право объявлять войну и заключать мир. «Совпадение по ряду вопросов интересов султанского двора и турецких буржуазных националистов, - пишет автор, - обусловленное недостаточной зрелостью капиталистических отношений в стране и другими факторами, лишь отсрочило крушение Османской империи» (с. 119).

Автор подробно останавливается на контрреволюционном мятеже 31 марта (13 апреля) 1909 г. и его подавлении, рассматривает ход второго этапа революции. Он отмечает, что ограниченность младотурецкой революции проявилась в том, что она была направлена по существу только против султанского самодержавия. Младотурецкая верхушка в конечном итоге капитулировала пе-

¹ Բեքիր Սամփ-բեյ (1865-1933) – բուրժուարական գործիչ, դիվանագետ, եղև է Բաղդադի, Վանի, Տրապիզոնի նահանգապետ, 1919-ին հարև է քննալսական շարժմանը. 1920-1921 թթ.՝ Անկարայի կառավարության արտգործնախարար, զվաճարել է բուրժուական պատվիրակությունը Ալեքսանդրապոլի հայ-բուրժուական բանակցություններում, բուրժուական պատվիրակության կազմում մասնակցել է Մոսկվայի բանակցություններին - Ա.Կ.:

ред феодально-клерикальными группировками, компрадорами и империалистами.

В третьей главе рассматриваются основные аспекты внутренней политики младотурок до 1914 г. Военная реформа, некоторые другие мероприятия младотурок по укреплению своей власти носили узкий, ограниченный характер. Аграрная политика младотурок не была направлена против устоев феодализма, она защищала интересы крупных помещиков. Младотурки и не собирались наделить земель безземельных и малоземельных крестьян. Еще в 1908 г. В. Ленин отмечал, что политика младотурок «враждебна начинающейся пролетарской борьбе в империи оттоманов» (Соч., Т. 17, с. 223). Пролетариат в Османской империи страдал не столько от капитализма, сколько от недостатка развития капитализма. Автор рассматривает вопросы отношения младотурок к рабочему движению, характеризует первые шаги рабочего, социалистического движения.

Специальный раздел посвящен реакционной сущности национальной политики младотурок. Нельзя не согласиться с общими оценками, характеристиками, данными автором младотурецкой политике. Младотурецкая буржуазия, читаем в книге, «стремилась с одной стороны, сохранить и пропагандировать идеи «османизма», чтобы разоружить народы, ведущие борьбу за свой национальный суверенитет, а с другой – разрабатывать идеологию пантюркизма – оголтелого шовинизма и расизма, чтобы подготовить «свой» турецкий народ к продолжению захватнической политики султанов» (с. 180). Младотурки не только не признавали национального равенства, но все более склонялись к политике ассимиляции национальных меньшинств. В работе в общих чертах рассмотрено национально-освободительное движение арабов, курдов, армян, албанцев и других народов империи. Г.З.Алиев правильно замечает, что самым трудным звеном в национальной политике младотурок в 1908-1914 гг. был Армянский вопрос и что «реакционная великодержавная доктрина – пантюркизм, ставшая официальной идеологией после после революции 1908-1909 гг., шла в противовес справедливым требованиям армянских трудящихся о полном равноправии всех граждан империи, о предоставлении Турецкой Армении автономных прав» (с. 197). Он заключает, что младотурки, являясь представителями эксплуататорских классов, были заинтересованы в сохранении Османской империи и возможности эксплуатации итурецких народов. Это и определило основное направление их великодержавного шовинизма.

Последние главы книги охватывают период Первой мировой войны. Война ускорила кризис младотурецкого режима. Турция оказалась на пороге экономического краха. Военное поражение Турции означало и полное банкротство младотурок. Антинародная и экспансионистская политика младотурок потерпела фиаско.

Тема книги Г.З.Алиева не нова. Хотя она и впервые подвергается монографическому исследованию, все же достаточно широко разработана в русской,

советской и зарубежной исторической науке. Автору удалось собрать и систематизировать материал, дать общую картину младотурецкого режима. Однако избежать повторов он не сумел. Оперирование работами турецких авторов ничего существенного не добавляет к объективно-научному изучению действительности Османской империи в период младотурецкого правления. Наряду с удачным критическим анализом государственной деятельности младотурок, в общем правильной характеристикой их антинародной, авантюристической политики, в книге имеются недостатки, порой однобокие утверждения. Судя по библиографии, автор пользовался богатыми архивными материалами, исторической литературой. Но он не всегда критически подходит к используемой литературе. Необоснованное доверие проявляет автор, например, к мемуарам Талата или Джемала, других турецких авторов, искажающих исторические факты.

Г.Алиев зачастую ограничивается лишь выдержками из различных источников, не выражая своего отношения к ним. Такой подход не может не снижать ценность работы. К чему, например, приводить слова Явуза Авадана о том, что при султানে Абдул Гамиде II «земля и ее обработка усилила только одно сословие; налоговая система была далека от справедливости» (с. 13), если не будет сказано, что вопрос о справедливости или несправедливости налоговой системы в империи был обусловлен социально-политическим строем, а не личностью того или иного султана. Ничего общего с темой не имеют письма принца Савахеддина английскому министру иностранных дел Эдуарду Грей¹, в которых по существу оправдывается панисламизм (с. 41-42). Никакой ценности не представляет мнение лорда Гладстона² об Абдул Гамиде II (с. 35), так как оно зависело от хода межпартийной борьбы в британском парламенте и отражало интересы британских колонизаторов. Автор обильно цитирует царских дипломатов, принимая на веру все их высказывания и забывая, что они оценивали события с точки зрения своего класса.

Непонятно, какую цель преследует автор, повторяя туркофила Вамберг³ (в библиографии Арминнус В., с. 383) и приписывая характеру султана Абдул -

¹ Էդուարդ Գրեյ (1862-1933) - բրիտանացի պետական գործիչ, դիվանագետ, 1885-ից՝ պառլամենտի անդամ լիբերալ կուսակցությունից, 1905-1916 թթ.՝ արտգործնախարար. Անտանտի կազմակերպիչներից - Ա.Կ.:

² Ռիչարդ Յուարթ Գլադստոն (1809-1898) - բրիտանացի պետական գործիչ, 1868-ից՝ լիբերալների պարագլուխը, 1868-1874, 1880-1885, 1886, 1892-1894 թթ.՝ վարչապետ, Մեծ Բրիտանիայում հայանպաստ հանրային կարծիքի ստեղծման և Անգլո-հայկական ընկերակցության նախաձեռնողներից - Ա.Կ.:

³ Արմին Վամբերգի (1832-1913) - հունգարացի արևելագետ, ճանապարհորդ, արևելյան լեզուների դասախոս Բուդապեշտի համալսարանում (1865-1905), հունգարերենի բուրբակյան ժազան հոգման կողմնակից, օգտագործելով իր կապերը Օսմանյան կայսրության ղեկավար շքանների հետ՝ 1900-1901 թթ. փորձել է կազմակերպել սուլթան Աբդուլ Համիդի հանդիպումը սինիստական շարժման ղեկավար Թեոդոր Հերցլի հետ - Ա.Կ.:

Гамиды II – этого палача и деспота – черты «мягкости», «приветливости», «уравновешенности», даже «благородства» и «смелости» (с. 29). Уж не очень ли грешит автор против исторической правды и объективности, наделив Абул-Гамиду «природной пронциательностью» и «необычайной гибкостью ума» (с. 30)? Автор в османском государственном аппарате ищет «честных и смелых чиновников», которые, по его мнению, в стране «бесспорно» были (с. 46). Он считает, что были и «честные» губернаторы (с. 44), проявляя снисходительность по отношению к султану, который, оказывается, «был бесенен что-то предпринять» против казнокрадства, взяточничества (с. 46). Автор «видным полководцем» называет Осман-пашу¹ (с. 31), не забывает «о многолетних военных заслугах» (с. 232) генералов, огнем и нечем подавлявших освободительную борьбу славян, албанцев, арабов, армян и др.

Исторически неверно всю нетурецкую буржуазию считать агентурой иностранного капитала. Автор впадает в преувеличение, утверждая, что в Османской империи существовал «цветущий внутренний рынок» (с. 15).

В книге упоминаются факты, свидетельствующие о попытках объединения усилий младотурок и политических организаций нетурецких народов для совместной борьбы против гамидовского деспотизма. Однако автор дальше констатаций не идет, не анализирует соотношение сил, суть противоречий между младотурками и национально-освободительным движением нетурецких народов. Анализ идеологических воззрений, концепций младотурецких главарей остался вне поля зрения автора. Правда, он оговаривается, что «подробное изложение вопросов, связанных с идеологией буржуазного национализма в Турции» «стоит вне рамок» работы (с. 347), но от этого и проиграла монография.

Автор ссылается на мысль В.Ленина о том, что «под самоопределением – наций разумеется государственное отделение их от чуженациональных коллективов, разумеется образование самостоятельного национального государства» (Соч. Т. 25, с. 259). Но когда он рассматривает позицию младотурок по данному вопросу, то констатирует лишь, что они «дали понять армянским комитетам (что за комитеты? – Дж.К., А.С.), что их мечты (?) о создании в Малой Азии самостоятельного армянского государства не могут быть осуществлены...» (с. 94), и не высказывает своей четкой точки зрения. Автор, как правило, избегает термина «Западная Армения». Правда, он говорит о «депортации» и уничтожении армянского населения, однако, не дает политической оценки этому чудовищному преступлению младотурок. Он умалчивает о том, уже давно известном в советской исторической литературе факте, что решение об уничтожении армян-

¹ Նուրի-Գազի Օսման-փաշա (1832-1900) – բուրք ռազմական գործիչ, մարշալ, 1853-1856 թթ. Ղրիմի, 1877-1878 թթ. ռուս-բուրքական, 1897 թ. հույն-բուրքական պատերազմների մասնակից, գործող բանակի զվեսակոր հրամանատար, դաժամությունք ճնշել է Օսմանյան կայսրության ոչ բուրք ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները – Ա.Կ.:

кого народа в империи главари младотурецкой партии приняли задолго до начала войны. Почему-то «не заслужили» внимания автора работа «Геноцид армян в Османской империи» (под редакцией академика М.Нерсисяна¹, Ереван, 1966), книги Тойниг², Гиббонса³, Брайса⁴ и других. А факты, содержащиеся в использованной автором книге младотурецкого деятеля Мевлан-заде Рифата⁵, также остались вне поля его зрения.

В книге нет четкого анализа национального состава Османской империи в период правления младотурок. И заявления автора о национальном гнете, национально-освободительной борьбе во многом носят абстрактный характер. Нельзя согласиться с автором, когда он все нетурецкие народы империи считает «национальными меньшинствами». А арабы? Ведь турки не составляли ав-

¹ Սլարոնի Ներսիսյան (1910-1999) – պատմաբան, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, 1950-1962 թթ.՝ ԳԱ փոխնախագահ, 1966-1977 թթ.՝ ԵՊՀ ռեկտոր, ԳԱ «Պատմա-քաղաքական հանդեսի» (Ե.) խմբագիր, հիմնական աշխատությունները՝ «Գեկարքիստները Հայաստանում», «Ռուս-հայկական հարաբերությունների պատմությունից», «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը բուրբակյան բռնապետության դեմ 1850-1870 թթ.», «Հայերի ցեղապանությունը Օսմանյան կայսրությունում» - Ա.Կ.:

² Անդոլդ Ջոզեֆ Թոյնի (1889-1975) - անգլիացի պատմաբան, սոցիոլոգ, Լոնդոնի համալսարանի պրոֆեսոր (1919-1955), Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և քրեանցից հետո առանձին աշխատությունները («Հայկական սարսափները. մի ազգի բնաջնջումը», «Թուրքերի այրումուշտ բռնակալությունը») և քաղաքիկ հրապարակային ելույթներ և նվիրել արևմտահայերի ողբերգությանն ու երիտրուրական կառավարության ազգայնամոլ քաղաքականությանը, համոզես է եկել Հայաստանի անկախության պաշտպանությանը Ա.Կ.:

³ Հերբերտ Ադամ Գիբբոնս (1880-1934) - ամերիկացի միջազգայնագետ, իրավաբան, փիլիսոփայության դ-ր, եղել է «Նյու Յորք Հերալդ» և ելրուպական մի շարք թերթերի թրակիցը Օսմանյան կայսրությունում, 1916-ին հրատարակել է «Նոր պատմության ամենաս էջը: Իրադարձությունները Հայաստանում 1915 թ.: Փաստեր և պատասխանատվություն» գիրքը, բացահայտել է հայերի տեղահանության և կոտորածների իրական նպատակները - Ա.Կ.:

⁴ Ջեյմս Բրայս (1838-1922) - բրիտանացի պետական գործիչ, իրավաբան, պատմաբան, լիբերալ, արտգործնախարարի տեղակալ (1886), առևտրի նախարար (1894-1895), Իռլանդիայի գործերով քարտուղար (1905-1906), ԱՄՆ-ում Սեմ Բրիտանիայի դեսպան (1907-1913), 1876 թ. հիմնել է Անգլո-հայկական ընկերությունը, «Անդրեովկանս ու Արարատը» գրքի հեղինակ և «Հայերի վիճակը Օսմանյան կայսրությունում 1915-1916 թթ.» (Կապույտ գիրք) փաստաթղթերի ժողովածուի կազմող - Ա.Կ.:

⁵ Մակլան-գալոն Ռիֆատ (1872-1950) – քուր լրագրող, ծագումով քուրդ, ժամանկել է «Միություն և առաջադիմություն» կուսակցության գաղտնի ժողովներին, 1929-ին հրատարակել է «Թուրքական հեղափոխության ներքին ծայրերը» աշխատությունը, որը լիովին բացահայտում է երիտրուրական կառավարության՝ արևմտահայերին տեղահանելու և կոտորածների կազմակերպելու պատճառներն ու կանխամտածված բնույթը - Ա.Կ.:

солотного большинства в империи. Вот этот спецификом османского национального конгломерата со всеми политическими и национальными проблемами недостаточно глубоко раскрыт на страницах книги.

В книге нет четкого ответа на вопрос: был ли в интересах прогресса развал Османской империи – этого бастиона реакции, средневековья, отсталости, тюрьмы народов?

В работе имеются нечеткие формулировки и утверждения. Так, автор считает интеллигенцию передовой частью буржуазии, приписывая ей воисте несвойственные функции. «Причины поражения конституционного движения во главе с Мидхат-пашой, - пишет он, - нужно искать главным образом в слабости и неорганизованности турецкой буржуазии и, в первую очередь, ее передовой части – интеллигенции, которая действовала весьма нерешительно, не опираясь на широкие слои народных масс, не могла поднять эти массы против феодално-клерикальной реакции» (с. 39, подч. нами – Дж.К., А.С.). В другом месте автор заявляет о том, что младотурки развернули организационную и пропагандистскую работу также в соседнем с Турцией Закавказье (с. 87). Для подтверждения этой мысли он ссылается на организацию партии «Дифан» («Партия национальной защиты») в Азербайджане, говорит о ее «крупных комитетах» в ряде городов, о том, что в городах Закавказья наряду с русской революционной литературой появилось много (?) брошюр на французском (?) и турецком языках (с. 88). В Закавказье, в отличие от Турции, тогда уже действовали социал-демократические организации, борющиеся за революционное объединение трудящихся. Восхваляя «Дифан», называя распространенную этой организацией литературу «революционной» (с. 89), автор обязан был показать, в чем ее заслуги перед народом, чем она помогла революционному воспитанию масс.

Действия младотурок в Закавказье преследовали лишь антирусские, пантюркистские цели.

Показывая влияние Великой Октябрьской революции на страны Востока, автор останавливается на первых внешнеполитических актах Советского государства, стремится вскрыть их роль в решении социальных и национальных проблем. Однако он почему-то обходит молчанием подписанный В. Лениным Декрет «О Турецкой Армении», имеющий прямое отношение к некоторым важным вопросам, непосредственно относящимся к теме. Интервенция турецких захватчиков в Закавказье в 1918 г. в книге представлена почти как легкая прогулка. Между тем народы Закавказья в трудных условиях господства буржуазно-националистических партий вели упорную борьбу против турецких интервентов. Главной страницей в историю этой борьбы вошла Сардарпатская битва, о которой даже нет упоминания в монографии.

Слишком много места отведено в книге верхушечным интригам, заговорам, беспринципным взаимоотношениям младотурецких главарей, второстепен-

ным, третьестепенным лицам, не заслуживающим такого внимания (см. с. 233-234, 272-273, 290-292, 299-302). В книге есть элементы нодернизации, отхода от историчности. Частые упоминания фраз – «широкие народные массы» (с. 69), которые «не сомневались» (с. 306), «начали все более ясно понимать» (с. 307), боролись «за хлеб и мир» против империализма, «сокращение штатов» (с. 19), «единый фронт» (с. 65, 93), «организационно-пропагандистская работа» (с. 84) и т.д., не подходят турецкой действительности того времени.

В одном случае автор утверждает, что из Восточной Анатолии было эвакуировано во внутренние районы почти 1 млн. мусульман (с. 243), в другом – он берет под сомнение даже цифру 600 тыс. эвакуированных (с. 355). Автор пишет и Хамид и Гамид (с. 345). Не Казанчунли (с. 359), а Качазунли, не Норадингия, а Норатунгия¹, не К.Малумян (с. 93), а Х.Малумян². В одном месте Норатунгия представитель интонациональной компрадорской буржуазии (с. 218), в другом – приверженец младотурок (с. 204). Наконец, об одном курьезе, нашедшем место в книге. Автор приводит рассказ о том, что «турецкая цензура иногда ухитрялась находить скрытый смысл в алгебраических или химических формулах. Так, формулу « $AH=O$ » цензура подозревала как желание автора сказать, что Аьдул Гамид равен нулю и представляет из себя ничтожество» (с. 55). Все правильно, кроме формулы, ибо такой формулы вообще нет. Сказанное относится к формуле воды (H_2O), которую действительно порою произносили как «Гамид второй – нуль», и которая поэтому вычеркивалась цензурой.

¹ Գարրիիկ Նորատունկյան (1852-1936) – քաղաքական գործիչ, դիվանագետ, 1875-ից աշխատել է Օսմանյան կայսրության ԱԳՆ-ում, 1883-ից՝ Բարձր դռան իրավագետ-խորհրդական, 1908-ից՝ առևտրի, ապա՝ հանրօգուտ աշխատանքների, 1912-1913 թթ.՝ արտգործնախարար, դեմ է եղել Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը եվրոպական դիվանագիտության հարց դարձնելուն, Պողոս Նուրաբից հետո գլխավորել է Հայոց ազգային պատվիրակությունը Լոզանի կոնֆերանսում, հրատարակել է «Օսմանյան կայսրության միջազգային վավերագրերի հավաքածու» գիրքը - Ա.Կ.:

² Խաչատուր Մալումյան (Է.Ակնունի) (1863-1915) – հրապարակախոս, քարգմանիչ, հասարակական-քաղաքական գործիչ, ՀՀԴ կուսակցության անդամ, 1899-ից աշխատել է «Դրոշակ»-ի (ԺՄՆ) խմբագրությունում, 1910-ին ԱՄՆ-ում հիմնադրել է ՀՕՄ-ի կանանց բարեգործական կազմակերպությունը, հիմնական գործերը՝ «Մտրի մշակը», «Կովկասյան վերբեր» - Ա.Կ.:

ԲԵ-ՂՕՐԱՅԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ (1922 թ., ՄԱՐՏ)¹

1922 թ. մարտին Փարիզում, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրությունում՝ «Բե-ղՕրսեում» Անտանտի տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի արտաքին գործերի մինիստրները նորից քննարկում էին Թուրքիայի հետ հաշտության պայմանագիր կնքելու խնդիրները: Ֆրանսիան ներկայացնում էին Պուանկարեն², Դե Պերետտի դե լա Ռոկլան և Բարժետոնը, Անգլիան՝ Քերզոնը, Վանսիտաթը, Ֆորբս Ադամը, Իտալիան՝ Շանցերը³, Վիսկոնտի-Վինոստան, Գուարիլիան:

Անտանտի ներկայացուցիչների այս հանդիպման արձանագրությունները, որոնք հրապարակվեցին 1970 թ. Անգլիայում⁴, լրացուցիչ պատկերացում են տալիս Առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ Լոզանի կոնֆերանսի նախօրյակին, Անտանտի տերությունների իմպերիալիստական ակտյանության, Մերձավոր Արևելքում նրանց ներհակությունների, Թուրքիայի և հայ ժողովրդի նկատմամբ նրանց դիրքորոշման մասին: Այդ արձանագրությունների՝ Թուրքիային, Հայաստանին վերաբերող հիմնական մասերը քարգանձաբար հրապարակվեցին վերջերս⁵:

Արդ, ինչպիսի՞ն էր իմպերիալիստական տերությունների դիվանագիտության դիրքորոշումը թուրքական հարցում Մուղրոսի զինադադարից (1918 թ. հոկտեմբերի 30) երեք և կես տարի հետո, ի՞նչ նպատակներ էին հետապնդում Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան Մերձավոր Արևելքում: Արձանագրությունները մեզ օգնում են ավելի հանգամանորեն պարզելու այս խնդիրները:

1918 թ. հոկտեմբերի 30-ին պարտված Օսմանյան կայսրությունն ընդունեց Անտանտի թվադրած Մուղրոսի զինադադարի պայմանները: Սակայն Անտանտի տերությունների և Թուրքիայի միջև հաշտության պայմանագրի կնքումը չիրագործվեց մինչև 1923 թ.: Փարիզի խաղաղության կոնֆերանսի

¹ Կիրակոսյան Ջ.Ս. Բե-ղՕրսեի կոնֆերանսը (1922 թ., մարտ) // ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (Ե.), 1974, N 3, էջ 10-21:

² Ռայմոն Պուանկարե (1860-1934) – ֆրանսիացի պետական և քաղաքական գործիչ, դիվանագետ, 1893, 1895 թթ.՝ լուսավորության նախարար, 1894-1895, 1906 թթ.՝ ֆինանսների նախարար, 1912-1913 թթ.՝ վարչապետ, 1913-1920 թթ.՝ Ֆրանսիայի նախագահ, 1922-1924 թթ.՝ վարչապետ և արտգործնախարար, 1926-1929 թթ.՝ վարչապետ, ֆինանսների նախարար - Ա.Կ.:

³ Կարլո Շանցեր (1865-1953) – իտալացի քաղաքական գործիչ, Իտալիայի խորհրդարանի անդամ (1900-1919), փոստի և հեռագրատան նախարար (1906-1909), ֆինանսների նախարար (1919-1920), արտգործնախարար (1922) - Ա.Կ.:

⁴ Documents on British Foreign Policy, 1919-1939, First Series, Vol XVII, London, 1970.

⁵ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923) /Պրոֆ. Ջ.Ս.Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե, 1972:

միաստեղը, այնուհետև Սան Ռեմոյի, Լոնդոնի կոնֆերանսները բեև ավարտվեցին Սևրի պայմանագրի ստորագրումով (1920 թ. օգոստոսի 10), քայք վերջինս մնում էր մեռյալ տառ: Ի՞նչն է պատճառը: Օսմանյան կայսրությունը դատապարտված էր: Անտանտի տերությունները փորձում էին իրենց շահերին համապատասխան վերածնել նրա հսկայական տարածքները: Միջազգային, Սի-րիան, Լիբանանը, Արաբիան, Եվրոպական Թուրքիան, Հայաստանը, նեղուցները ակցնում էին Անգլիայի և Ֆրանսիայի, Իտալիայի և Հունաստանի տնօրինությանը: ԱՄՆ-ը նույնպես ձգտում էր քաղաքական և տնտեսական ազդեցության ոլորտներ ձեռք բերել: Այստեղ բախվում էին ոչ միայն իմպերիալիստական տերությունների և ճնշված ու ազատագրության ձգտող ժողովուրդների շահերը, այլև խիստ սրվել էին միջիմպերիալիստական ներակոչությունները: Թուրքիայում սկիզբ էր առել ազգային-ազատագրական շարժում, որի գլուխ անցած թուրքական բուրժուազիան ձգտում էր ոչ միայն երկիրը փրկել օտարերկրյա տիրապետությունից, այլև փորձում էր հաշվի չառնել մյուս ազգությունների շահերը, նրանց ենթարկել թուրքական պետականությունը պահպանելու շահերին: Դրա վկայությունը թուրքական «Ազգային ուխտան» էր, որը պաշտոնական հիմքի վրա էր դրվել տակավին 1920 թ. հունվարին¹:

Օսմանյան կայսրության ժառանգությունը յուրովի տնօրինելու իմպերիալիստական տերությունների քաղաքականությունը հանդիպեց լուրջ խոչընդոտների: Արևելքի նկատմամբ Սովետական Ռուսաստանի հռչակած նոր սկզբունքները լայն արձագանք էին գտել Չինաստանի ու Հնդկաստանի, Պարսկաստանի և Թուրքիայի ժողովուրդների գիտակից զանգվածների մոտ: Սովետական Ռուսաստանի դեմ Անտանտի սանձազերծած դաժան կռիվը օրգանապես միախուսվում էր Արևելքում հակազաղութային պայքարը խեղդելու իմպերիալիստական պլանների հետ: Հենվելով հեղափոխական Ռուսաստանի հզոր հակաօկուպերիալիստական պայքարի վրա, քեմալական շարժումը բռնեց օտարերկրյա տերությունների թելադրանքին չենթարկվելու, նրանց կողմից պարտադրված Սևրի պայմանագրի պահանջները մերժելու ուղին:

Սակայն Մուստաֆա Քեմալը և նրա համախոհները վարում էին երկդիմի քաղաքականություն, խուսաճաճում թուրք ժողովրդի շահերի նկատմամբ արդարացի դիրք բռնած Սովետական Ռուսաստանի և իմպերիալիստական Արևմուտքի միջև: Քեմալական Թուրքիայի հետ դիվանագիտական առաջին իսկ կոնտակտներից սկսած՝ Սովետական Ռուսաստանի կառավարությունը արտաքին քաղաքականության իր բոլոր գործողություններով սատար էր կանգնում հայ ժողովրդին: Միջազգային ամենաբարդ իրադրության պայմաններում, երբ սոցիալիզմի առաջին պետությունը կենսա-մահու կռիվ էր մղում իր լինելիության համար, երբ Դաշնակցություն կուսակցության դեկավարները Հայաստանի Հանրապետության գոյատևման, միջազգային ճանաչման, տա-

¹ Նույն տեղում, էջ 606-607:

րածքային հարցերը լուծելու գործն ամբողջապես կապում էին Անտանտի տերությունների հետ, Վ.Լ.Ենիքի գլխավորած սովետական կառավարությունը հետևողական համբերատարությամբ ձգտում էր ներագրել Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունների վրա, օպտիմալ եզրեր գտնել երկու երկրների միջև վիճելի սահմանային և մյուս հարցերը լուծելու: Ասում ենք օպտիմալ, որովհետև քեմալական շարժման առաջին իսկ քայլերը թուրքական ազգայնական վերնախավը մղում էր հակահայկական հունով, հայ ժողովրդի արդարացի իրավունքները ոտնահարելու ուղիով: 1920 թ. մայիս-հուլիսին սովետա-թուրքական բանակցությունների ժամանակ թուրքական պատվիրակությունը (ղեկավար՝ Բեքիր Սամի) մեր-ժողովական դիրք բռնեց սովետական արդարացի առաջարկների նկատմամբ: Բեքիր Սամին Հայաստանի հետ «թուրքական սահմանագիծը շտկելու մասին Չիչերինի հետ ունեցած իր գրույցներն օգտագործեց այն բանի համար, որ պետք է Անգորա վերադառնալուն պես փորձի ազգային Թուրքիային սաղորդ Մովետական Ռուսաստանի դեմ»¹: Դաշնակցական կառավարությունը, շարունակելով հայ ժողովրդի շահերը գոհարեթել արևմտյան դիվանագիտության խարդավանքներին, հեշտացրեց քեմալական Թուրքիայի հակահայկական գործողությունները: «Այն ժամանակ, երբ Մոսկվայում սկսեց պարզ դառնալ կոմպրոմիսային ազգազրակայն սահմանագիծ հաստատելու փորձերի անհուսալիությունը, թուրքական կառավարությունը որոշեց սրով կտրել գորոյան հանգույցը»²: Քեմալական Թուրքիայի բանակը հարձակվեց հայկական հանրապետության վրա, որը, լրված Անտանտի կողմից, չարաչար պարտություն կրեց, բշնամուն հանձնելով հայկական տարածքները: Հայաստանի Հանրապետությունը հակատվետական պլաններում օգտագործելուց հետո Անտանտը այժմ փորձում էր նույն նպատակին ծառայեցնել Թուրքիային, առաջացնել սովետա-թուրքական ընդհարում: Վ.Լ.Ենիքը 1920 թ. հոկտեմբերի 29-ին Բաքու հղած հեռագրում բացահայտում էր Հայաստանի վրա թուրքական հարձակման նպատակները, որ Անտանտը ուզում է խլել Բաքումը, ապա Բաքուն³: Չիչերինը նկատում էր, որ Թուրքիայի կառավարողների մեջ կային ազդեցիկ ուժեր, որոնք անում էին ամեն բան՝ խարդավանքով ու վնասակար դիվանագիտական գործողություններով վնասելու Մովետական Ռուսաստանի գործողություններին: Այդ օրերին անդրադառնալով քեմալական շարժման սոցիալ-քաղաքական էությունը, նրա պարագլուխների դիվանագիտական զիզ-գազներին, Արևմուտքի հետ մերձենալու նրանց հակումներին, Վ.Լ.Ենիքը մշտն էր, որ «թուրքական հարձակումը մեր դեմ էր ուղղված: Անտանտը մեզ համար էր փոս փորում, և ինքն էլ ընկավ այնտեղ, որովհետև մենք ձեռք բերեցինք Մովետական Հայաստանը:

¹ Նույն տեղում, էջ 482:

² Նույն տեղում:

³ Լենին Վ.Ի. Երկեր, հ. 33, էջ 453:

Թուրքիան ղեկավարում են կաղեւնները, օկտյաբրիստները, ազգայնականները, որոնք պատրաստ են մեզ վաճառելու Ամտանտին...»¹:

Սովետական պատմարան, պրոֆեսոր Ն.Լ.Ռուբինշտեյնը նկատում է, որ «Թուրքիայի համար Սովետական Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերությունների ամրապնդումից բխող բաղադրական օգուտն ու առավելությունները չէին վերացրել սովետական տերիտորիաների նկատմամբ քեմալական կառավարության գաժրողական հավակնությունները»²:

Այն պահին, երբ Մոսկվայում տեղի էին ունենում սովետա-թուրքական բանակցությունները (1921 թ. մարտ), Լոնդոնում քեմալականները մասնակցում էին Ամտանտի հրավիրած կոնֆերանսին (1921 թ. փետրվար-մարտ), որտեղ քննարկվում էին հույն-թուրքական պատերազմի, Սերի պայմանագրի վերանայման հարցերը: Կոնֆերանսում Իտալիայի պատվիրակները համոզեցեցին Սերի պայմանագրի վերանայման դիրքերից, ֆրանսիացի Բրիանը նույնպես համոզեց նկավ պայմանագիրը մասնակիորեն վերանայելու պահանջով: Ֆրանսիական պատվիրակությունը խարդավանքներ սարքելով Անգլիայի դեմ, միաժամանակ ջանում էր քեմալականներին հեռացնել Սովետական Ռուսաստանից³:

Անգլիական դիվանագետները նույնպես փորձում էին համաձայնության գալ քեմալական Թուրքիայի հետ, կանխել սովետա-թուրքական պայմանագրի ստորագրումը Մոսկվայում, պահպանել իրենց գաղութային դիրքերը Սեբրավոր Արևելքում:

Կոնֆերանսում Լլոյդ Ջորջը, քացի պաշտոնական բանակցություններից, գաղտնի գրույցներ էր վարում Մոսկվայից ժամանած Բեքիր Սամին հետ: Անգլիական պրեմիերը քեմալական Թուրքիայի ներկայացուցչին առաջարկեց զինված ուժերը շուտ տալ Սովետական Ռուսաստանի դեմ, զավթել Անդրկովկասը, Բաբուն: Ընդ որում, այս պայմանագրով Լլոյդ Ջորջը խոստանում էր խաղաղություն և համաձայնություն Թուրքիայի հետ: Այս գրույցի բոլոր մանրամասները, որ արձանագրվել էին գաղտնապես Լլոյդ Ջորջի կարգադրությամբ, դարձան հանրության սեփականություն, սփռվեցին մամուլի էջերում: Բեքիր Սամին խայտառակված էր իր երկդիմությամբ, քանի որ հավանություն էր տվել Լլոյդ Ջորջի առաջարկին: Նա Լլոյդ Ջորջին անվանեց «կեղտոտ մարդ»⁴:

² Լևոն Կարախան (1889-1937) – պետական գործիչ, դիվանագետ, խորհրդային պատվիրակության քարտուղար Բրեստ-Լիտովսկի բանակցությունների ժամանակ, 1918-ից՝ ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ, մասնակցել է ռուս-թուրքական և ՀՀ հետ բանակցություններին, 1921-ի Մոսկվայի պայմանագրի մշակմանը, ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Լեհաստանում (1921), Չինաստանում (1923-1926), 1927-1934 թթ.՝ ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ, 1934-1937 թթ.՝ ԽՍՀՄ դեսպան Թուրքիայում - Ա.Կ.:

³ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ուղյուցիան և Սովետական իշխանության հարթանակը Հայաստանում, էջ 211-212:

⁴ ՄԼԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ (ՀԱԱ), ֆ. 4047/1 (1457), գ. 251, ք. 22:

1918 թ. հունիսի 4-ին Բաքումում կնքված «Պաշտպանության և բարեկամության» պայմանագիրը ստրկացուցիչ դիկտատ էր: Երիտրուրքական կառավարությունը բացի, Կարսի և Արդահանի մարզերից, Հայաստանից զավթում էր Սուրմալուի, Շարուրի, Նախիջևանի գավառները, Էջմիածնի և Ալեքսանդրապոլի շրջանների մեծ մասը՝ Ալեքսանդրապոլ-Ձուլֆա երկաթգծով: Այդ պայմանագրով Հայաստանից և Վրաստանից Օսմանյան կայսրության զավթած տարածքը կազմում էր 38 հազար ք.կմ, 1250 հազար բնակչությամբ, շահված մեծարիվ գաղթականությունը: Գրավված շրջանների բնակչության 80 տոկոսից ավելին վրացիներ և հայեր էին: Այս կորուստը 15 հազար ք.կմ-ով և 650 հազար բնակչությամբ ավելի էր այն տարածքից, որտեղ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով պետք է հանրաքվե անցկացվեր¹:

Բաքումի ստրկացուցիչ գործարքով, որը դաշնակցական կառավարության ստորագրած առաջին միջազգային բնույթի պաշտոնական փաստաթուղթն էր, Հայաստանի տարածքը կազմելու էր 9 հազար ք.կմ տարածություն, մոտավոր քվերով, ոչ ավելի 325 հազար բնակչությամբ: Հայաստանի Հանրապետության կազմի մեջ մտան Նոր Բայազետի գավառը (առանց Բասարգեչարի հարավարևելյան մասի), Երևանի գավառի 3/5-ը, Էջմիածնի 1/4-ը, 230 հազար հայով, 80 հազար մահմեդականով (որից 5 հազարը քուրդ), 5000 եզդիով, 6000 այլ ազգությունների ներկայացուցիչներ՝ ընդամենը 321 հազար մարդ: Հայկական հանրապետությունը իր մեջ առնում էր Կովկասի ողջ հայության (1 825 հազար) 1/9 մասը²:

Ընդ որում, Բաքումում երիտրուրքական կառավարության ներկայացուցիչները հատկապես պնդում էին Ղարաբաղը, որի բնակչության 94 տոկոսը հայեր էին, և դաշտային Գանձակի հայկական շրջանները Ադրբեջանին հանձնելու վրա: Նախիջևանը նրանք ցանկանում էին ուղղակի կցել Թուրքիային: Սա պանթուրիզմի անսրող դրսևորում էր: Ընդլվելով Թուրքիայի և նրա հետ Բաքումում գործարքի մեջ մտած հայկական հակահեղափոխական ուժերի դեմ՝ Անդրանիկը 1918 թ. հուլիսի 14-ի իր հ. 1 հրամանում Նախիջևանը հռչակում էր Սովետական Ռուսաստանի անբաժանելի մասը՝ այդ առթիվ հիշատակելով նաև Բրեստ-Լիտովսկի պայմանագրով քուրքական կառավարության ստանձնած պարտավորությունը³:

Գերմանացի դիվանագետ, կոմս Բերնհորֆը նույնիսկ կատակել էր. «Թուրքիան հայերին միայն բողել է Սևանա լիճը, որում նրանք կարող են լողանալ, բայց տեղ չունեն դուրս գալու և չորանալու համար»⁴:

¹ Завриев Д.С. К новейшей истории северо-восточных вилайетов Турции, 1947, с. 69-71.

² Պայմանագրի տեքստը տես՝ Հայաստանը միջազգային դիվանագիտության... էջ 531-537:

³ ԱԽ-ի հայկական ֆիլիալի արխիվ (ՀԱԱ), ֆ. 4047 (1457), ց. 1, գ. 194, ք. 64:

⁴ Նույն տեղում, ֆ. 2914, գ. 503, ք. 16:

Մինչև 1918 թ. հոկտեմբերի 30-ը՝ Թուրքիայի պարտությունը և Մուղրոսի գինադադարը (Անտանտի և Թուրքիայի միջև) Հայաստանի Հանրապետությունը գտնվում էր երիտթուրքական կառավարողների գերիշխանության տակ: Դաշնակցական կառավարության դիվանագիտական պատվիրակությունները ամիսներով մուրում էին Կ.Պոլսում, Բեռլինում, Վիեննայում, հուսալով, թե թուրքական զիջատիչ նվաճողները պետք է ճանաչեն իրենց: Տխրահռչակ Համո Օհանջանյանը Բեռլինում գերմանական պրոտեկտորատ էր խնդրում, Վիեննայում համաձայնություն տալիս հայկական պետության գահին ավստրիական Էրցհերցոգին կարգելու մասին¹: Գերմանական կառավարողները հայտարարում էին, որ չեն կարող ճնշում գործադրել Թուրքիայի վրա, «լրջորեն» խորհուրդ էին տալիս օգնության համար դիմել չեզոք Իսպանիային: Կայզերական մինիստրը հաղորդում էր, որ Գերմանիան չի կարող ճանաչել Հայաստանի անկախությունը, ոչ դե յուրե, ոչ էլ դե ֆակտո: Կ.Պոլսում մյուս դաշնակ «դիվանագետները»՝ Խատիսովն ու Ահարոնյանը, շարքաներով սպասում էին Թալեաթի ու Էնվերի ուշադրությանն արժանանալուն, քավարարվում են, գոհանում, որ մեծ մարդասպան Թալեաթը մի քանի հայերեն խոսք էր արտասանել կամ ասել, թե «գիտի հայերին որպես իրենց խոսքի ասպետների և հավատում է նրանց»: Եվ այս ամենը այն օրերին (1918 թ. օգոստոս-սեպտեմբեր), երբ նույն երիտթուրքական պարագլուխները հրաման էին արձակել Բաքվում կոտորելու տասնյակ հազարավոր հայերի, օկուպացված, ստրկացած Հայաստանից կողոպտելու և Թուրքիա տանելու գույքն ու մթերքը, ամբողջ հարստությունը:

Միայն Սովետական Ռուսաստանի կառավարությունն էր օգնության ձեռք մեկնում հայ ժողովրդին, ելք ցույց տալիս նրա համար ստեղծված անլուսնելի վիճակից:

Թուրքիայի արտաքին գործերի մինիստրությանը 1918 թ. սեպտեմբերի 20-ին հղած իր նոտայում Սովետական Ռուսաստանի արտգործոժողկոմ Չիչերինը, քացահայտելով թուրքական իշխանությունների կողմից Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերում կիրառված բռնություններն ու կողոպուտները, ճշելով, որ խախտված է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որ թուրքական կանոնավոր գործերը, դաշինք կապած ավագակային քանդաների հետ, գրավում են սովետական հանրապետության տարածքը, քաղաքներն ու գյուղերը ենթարկում են ավերման ու կողոպուտի, քրիստոնյա բնակչությանը, չքացանելով կանանց ու երեխաներին, զնդակոծում են կամ ենթարկում ամեն տեսակի բռնությունների, չեղյալ հայտարարեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը:²

¹ ՄԼԻ-ի վրացական ֆիլիալի արխիվ (Վրաստանի նախագահի արխիվ), ֆ. 2914, գ. 503, ք. 14:

² Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 439-441:

1918 թ. սեպտեմբերի 26-ին Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչ Իոֆֆեն¹ Բեռլինում Թալեաթից պահանջում էր «անհապաղ ետ քաշվել մինչև Բրեստով հաստատված սահմանները, այլապես սպառնում էր խզել դիվանագիտական և խաղաղ հարաբերությունները: Երբ Թալեաթը ստիպված համաձայնվում է, պայմանով, որ Հայաստանի երկարողիների վրա թուրքական հսկողություն լինի, Իոֆֆեն կարող կերպով մերժում է դա՝ հայտարարելով, որ քանի դեռ «թեկուզ թուրքական մի զինվոր կա ռուսական տերիտորիայում», Բրեստի պայմանագիրը խախտված կհամարվի: Երբ Թալեաթը շնակահորեն (ցինիկորեն) հիշատակում է Հայաստանի «անկախության» մասին (ո՞վ է խոսում), սովետական ներկայացուցիչը նորից պնդում է, որ այդ մասին խոսք լինել չի կարող, քանի դեռ «թուրքական ջոկատները և վարչությունը չեն մաքրել ապօրինաբար գրավված տերիտորիաները»²: Իոֆֆեն 1918 թ. հոկտեմբերին հայտարարում էր «մայական պատվիրակությանը» (դաշնակ՝ Հ.Օհանջանյան, մենչևիկ-ինտերնացիոնալիստ՝ Ա.Ջուրաբով)։ «Ամենաբնական է, որ դուք հիմա մեզ հետ միասին դուրս գաք Տաճկաստանի դեմ, հայտարարեք, որ դուք Ռուսաստանի հետ եք և նրա հետ միասին դնում եք այս և այս պահանջները»³։ Սի քան, որ երբեք չարին Դաշնակցության դեկավարները՝ թուրքական պետականության հարձակողական հատվածներին ենթարկելով կղզիացած հայ ժողովրդին: Նույն ժամանակ Իոֆֆեն այդ մարդկանց ասում էր, որ ժողովրդական կոմիսարների Սովետը չի կարող ճանաչել Հայաստանի կառավարությունը, քանի դեռ վերջինս իր հերթին չի ճանաչել սովետական իշխանությունը՝ որպես Ռուսաստանի օրինական կառավարություն⁴:

Մինչև 1918 թ. դեկտեմբեր թուրքական զորքերը շարունակում էին մնալ Հայաստանի Հանրապետության տարածքում, որի տնօրեններին այդպես էլ չհաջողվեց ճշտել իրենց երկրի վերջնական սահմաններն ու պետական հարաբերությունները սուլթանական Թուրքիայի հետ: Արխիվային փաստաթղթերից հայտնի են այն չարագործությունները, կողոպուտը, զանգվածային սպանությունները, որ թուրքերը կազմակերպեցին հայ ժողովրդի նկատմամբ այդ ամիսներին:

Համաշխարհային պատերազմում պարտված Թուրքիան զորքերը հանց Ռուսաստանից (ներառյալ Կարսից և Արդահանից), քայց ոչ ավելին: 1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուլդոսի զինադադարով (հողված 24) սուլթանական Թուրքիան Անտանտի առջև պարտավորվել էր՝ «Հայկական վիլայեթ-

¹ Ադոլֆ Իոֆֆեն (1883-1927) – խորհրդային կուսակցական և պետական գործիչ, դիվանագետ, խորհրդային պատվիրակության նախագահ Բրեստ-Լիտովսկի բանակցությունների ժամանակ, ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Գերմանիայում, Ավստրիայում, դեսպան Չինաստանում և Ճապոնիայում - Ա.Ա.:

² ԱԽ-ի հայկական ֆիլիալի արխիվ (ՀԱԱ), ֆ. 4047/1 (1457), գ. 251, ք. 67:

³ Նույն տեղում, ֆ. 4047/1, գ. 251, ք. 84-85:

⁴ ԱԽ-ի վրացական ֆիլիալի արխիվ (Վրաստանի նախագահի արխիվ), ֆ. 2914, գ. 503:

ներից (որևէ) մեկում անկարգություններ ծագելու դեպքում դաշնակիցները իրենց վերապահում են նրա մի մասը գրավելու իրավունքը»¹: Առաջինը անգլիական զորքերը տեղ հասան Անդրկովկաս, և նրանք էլ փորձեցին Կարսի մարզի վրա հաստատել իրենց գերիշխանությունը: Անգլիացիները նույնիսկ հռչակեցին «Կարսի մահմեդական հանրապետություն», որը մի քանի շաբաթվա կյանք ունեցավ: Կարսի ամրոցից անգլիացիները կողոպտեցին և դուրս տարան ռուսական բանակի հարուստ գույքը՝ քանդելով նույնիսկ ստացիոնար բնդանոթները, և միայն 1919 թ. մարտին-ապրիլին այն զիջեցին Հայաստանի Հանրապետությանը: Այդ պահին Հայաստանի տարածքը կազմում էր 47 հազար ք.մ:

Թե ինչ էր իրենից ներկայացնում 1919-1920 թթ. Հայաստանը, այդ մասին գիտեն բոլորը: Դա մի դժոխք էր քաոսի կատարյալ իմաստով. սով, անարխիա, սպանություններ, անտուն-անտեր գաղթականություն, տնտեսական կյանքի չգոյություն, ավանդական կապերի (հատկապես Ռուսաստանի հետ) քացակալություն, քաղաքական տեռոր, կոմունիստների հետապնդումներ, ազգամիջյան բախումներ, պատերազմական բախումներ մենչևիկյան Վրաստանի և մուսավաթական Ադրբեջանի հետ վիճելի տարածքների շուրջը և այլն: Բավարարվենք ականատեսի նկարագրածը վերհիշելով. «Երկրագնդի վրա թերևս ոչ մի տեղ ժողովուրդն այնպիսի ողբալի, այնպիսի օրհասական և սոսկալի օրեր չի ապրում, ինչպիսին ապրում է ժողովուրդը Հայաստանի տերիտորիայի վրա: Կյանքի բոլոր ասպարեզներն էլ արտաշնչում են դառն ու լեզոտ օդ և բունավորում ամբողջ երկիրը՝ սպանելով նրա կենսունակ ուժերը, խեղդելով նրա ձգտումներն ու կամքը: Մի հսկայական մուրճ տխրության և մռայլության, տանջանքի և մրմունջի կնիք է գամել այդ դժբախտ երկրի արյունամերկ ճակատին: Ծնչավոր էակները, թե՛ անշունչ իրերը, մերկ լեռներն ու անտառապատ սարերը, թե՛ զանգերով լեցուն ձորերն ու արյունով ողողված դաշտերը, ամայի դարձած գյուղերն ու ավերված քաղաքները, դաշտերում ու քարձրավանդակներում ապրող չունևոր գյուղացիները, թե՛ քաղաքների խուցերում ու ավերակներում գոյությունը քարշ տվող քաղբենիները, տեղական բնիկ՝ խեղճացած ու թշվառության մատնված ազգաբնակչությունը, թե՛ քալանված ու սովալլուկ, լրված ու վայրենացած գաղթականությունը - բոլորն էլ, վշտալից հայացքը արճնապատ երկնականարին հառած, օգնություն էին հայցում, ելք են որոնում: Հայաստանում գոյությունը դարձել է անձեք, կյանքը՝ դժոխք»²:

Չկար, հեռու էր Ռուսաստանը, բռնկված քաղաքացիական պատերազմով, շրջափակված իմպերիալիստական Անտանտի ինտերվենցիայի կրակի օղակով:

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 539:

² Անեմյան (Կասյան) Ս. Ուր է ելքը, 1919, էջ 3:

1919 թ. զարմանը սկսվեց Անտանտի առաջին արշավանքը (Կուչակ¹, Դենիկին, Լեհաստան, Յուդենիչ²): Այս շրջանում Ռուսաստանը կրիտիկական պահ էր ապրում (կտրված էր հացի շրջաններից՝ Ուկրաինա, Սիբիր, Հյուսիսային Կովկաս, և վառելիքից՝ Դոնեցկի ավազան, Գրոզնի, Բաքու): հարկադրված էր վեց ճակատի վրա կռվելու:

1919 թ. աշմանը սկսվեց Անտանտի երկրորդ արշավանքը (Դենիկին, պանական Լեհաստան, Յուդենիչ): Ծանրության կենտրոնը գտնվում էր հարավում: Դենիկինը Հյուսիսային Կովկասից հասավ մինչև Տուլա:

Անդրկովկասում տնօրինում էին Անտանտի իմպերիալիստները: Հակահեղափոխությունը Հայաստանից հեռացրեց սովետական իշխանության ազատարար, փրկարար ձեռքը, և հայ ժողովուրդը նորից գահավիժում էր անդունդը:

* * *

Ռուսահայ բուրժուազիան, նրա քաղաքական կազմակերպությունները Մեծ հոկտեմբերի առաջին իսկ օրերից դասակարգային հողի վրա դիրք բռնեցին համառուսաստանյան ազնվականների, կապիտալիստների, բեգերի կողքին՝ խումբ կազմելով ընդդեմ սովետական իշխանության: Նրանք իրենց դասակարգային շահերի պաշտպանությունը որոնում էին Ճապոնիայի և ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի օգնության մեջ:

Արևմտյան տերությունների ղեկավարները փարիսեցիաբար Առաջին համաշխարհային պատերազմի նպատակներից մեկը հռչակել էին հայերի ազատագրումը բուրքական լծից: Վոլդրո Վիլսոնն ասում էր. «Հայերը կստանան այն, ինչ նրանց պարտք է պատմությունը»: 1918 թ. վերջին Իտալիայի պառլամենտը 195 դեպուտատների առաջարկությամբ հաստիք բանաձև էր ընդունել բուրժուական բռնապետության ճիրաններից հայ ժողովրդի ազատագրության գործը պաշտպանելու մասին: Նույն ոգով էին արտահայտվել անգլիական պետական գործիչները՝ Լյուդ Ջորջն ու Քերզոնը, Կլեմանսոն և Բրիանը: Բայց միայն խոսքով, հրապարակավ, իսկ գործով, գաղտնի համաձայնագրերով նրանք հետապնդում էին իրենց պետությունների իմպերիալիստական ծրագրերն իրականացնելու նպատակ:

Թուրքական տիրապետությունից Հայաստանն ազատագրելու պաշտպանությամբ հանդես էին գալիս Եվրոպայի և Ամերիկայի դեմոկրատական

¹ Ալեքսանդր Կուչակ (1874-1920) – ռուս քաղաքական գործիչ, գիտնական-օվկիանոսագետ, Ռուսաստանյան կայսերական նավատորմի փոխծովակալ (1916), Սիբիրյան նավատորմի ծովակալ (1918), Սպիտակ շարժման ղեկավար, Ռուսաստանի գերագույն տիրակալ (1918-1920) – Ա.Կ.:

² Նիկոլայ Յուդենիչ (1862-1933) – ռուս ռազմական գործիչ, գեներալ, քաղաքացիական պատերազմի ժամանակ հյուսիսարևմտյան ճակատում խորհրդային իշխանության դեմ գործող ռազմական ուժերի հրամանատար – Ա.Կ.:

հասարակական լայն շրջանները (Անատոլ Ֆրանս, Անտուան Մեյն, Բերտրան Ռասսել¹, Մարկվարտ, Կարլ Լիբկեներստ և շատ ուրիշներ):

1919-1920 թթ. կառավարության քաղաքական-դիվանագիտական ամբողջ գործունեությունը նպատակամղված էր Անտանտի տերությունների օգնության վրա հենվելուն, նրանց միջոցով «միացյալ, անկախ Հայաստան» ստեղծելուն: Դրանով իսկ ոտնահարվում էր հայ ժողովրդի համար ավանդական բախտորոշ ռուսական կողմնորոշումը:

Հայկական երկու պատվիրակություններ էին ուղարկված Փարիզ՝ խաղաղության կոնֆերանսին (1919 թ. հունվար – 1919 թ. հունիս): Մեկը գլխավորում էր Պողոս Նուբար-փաշան, որը դեռևս 1912 թ. կաթողիկոսի կողմից պաշտոնական հանձնարարությամբ առաքելություն ուներ եվրոպական պետությունների մոտ պաշտպանելու Հայոց դատը: Մյուսը գլխավորում էր Ավ.Ահարոնյանը, որպես Հայկական Հանրապետության, այսինքն՝ Ռուսահայաստանի լիազոր ներկայացուցիչ: Սրանցից ոչ մեկը կոնֆերանսին մասնակցելու իրավունք չտեսցավ, որովհետև Հայաստանը՝ Անտանտի այդ «փոքրիկ դաշնակիցը» (ինչպես նրան անվանում էին) պատերազմող կողմ չճանաչվեց: Իմիջիայլոց նշենք, որ սրանք երբեք միասնաբար հանդես չեկան, համաձայնեցված ծրագիր առաջ չքաշեցին, ավելի շատ կովեցին ու վիճեցին, ընկած մաս ծիծաղաշարժ իրավիճակների մեջ, չկարողանալով համատեղել արևմտահայության և արևելահայության շահերը: Նրանց գործողությունները իրարամերձ էին: Պողոս Նուբարը չէր ճանաչում Երևանի կառավարությունը՝ իբրև ամբողջ հայության ղեկավար, դաշնակներն էլ չէին ճանաչում նրա լիազորությունները:

Թուրքական հարցը Փարիզի կոնֆերանսում քննարկվում էր որպես «ռուսական հարցի» հետ սերտորեն առնչվող խնդիր և լուծվում էր իմպերիալիստական տերությունների հակասովետական ինտերվենցիայի ընթացքին համապատասխան: Կոնֆերանսում խոր հակամարտություն կար ինչպես հաղթողների և պարտվողների միջև, այնպես էլ հաղթողների միջև (անգլոֆրանսիական, անգլո-ամերիկյան այտոյանություն): Պայքարը մղվում էր աշխարհը վերաբաժանելու, նոր երկրների, ժողովուրդների ստրկացումը դիվանագիտորեն ձևակերպելու շուրջ, որի հիմքը դրվել էր տակավին 1916 թ. կնքված Մայրս-Պիկոյի գաղտնի պայմանագրով, որը կնքվել էր Անգլիայի և Ֆրանսիայի միջև (պայմանագրին հարեց մահ ցարական Ռուսաստանը)՝ Օսմանյան կայսրությունը բաժանելու վերաբերյալ:

Տալով Վերսալի հաշտության պայմանագրի գնահատականը՝ Վ.Լ.Նեմինը ասում էր. «Դա չլսված, քաղաքիական հաշտություն էր, որը տասնյակ միլիոն

¹ Բերտրան Աբբուր Ռիլյան Ռասսել (1872-1970) - անգլիացի մաթեմատիկոս, փիլիսոփա, հասարակական գործիչ, հակաֆաշիստական և հակառազմական շարժումների կազմակերպիչ, գրականության Նոբելյան մրցանակի դափնեկիր (1950) - Ա.Կ.:

մարդկանց, այդ թվում ամենաքաղաքակիրք մարդկանց դնում է ստրուկների վիճակի մեջ»¹:

Վերսալի հաշտության պայմանագրի նպատակն էր ամրապնդել կապիտալիստական աշխարհի վերաբաժանումը հաղթող պետությունների օգտին, ինչպես նաև ստեղծել երկրների միջև հարաբերությունների այնպիսի համակարգ, որն ուղղված լիներ հեղափոխական Ռուսաստանը խեղդելու, հակազդության շարժումները ճնշելու նպատակին:

Թեև 1919 թ. հունվարի 30-ին Անտանտի տերությունները հայտարարեցին, որ թուրքական կայսրությունը պաշտոնապես դադարում է գոյություն ունենալուց, սակայն թուրքական հարցը և դրա հետ սերտորեն կապված հայ ժողովրդին վերաբերող խնդիրները դարձան երկար ու բարակ քննարկումների առարկա:

Անտանտի երկրների ղեկավարները՝ Լյուդ Ջորջը և Կլեմանսոն, Վուդրո Վիլսոնը և Սոննհինոն², ձգտում էին մեկը մյուսից առաջ անցնել Օսմանյան կայսրության ժառանգությունը բաժան-բաժան անելիս: Անգլիան գրավել էր Բաղդադի և Մոսուլի վիլայեթները (այժմյան Իրաքը), Պաղեստինը, այժմյան Հորդանանը, պայքարում էր դրանք իր ձեռքում պահելու, Կ.Պոլսի և նեղուցների վրա իր հսկողությունը հաստատելու համար: Ֆրանսիան գրավել էր Լիբանանը և Սիրիայի մի մասը, Կիլիկիան և աշխատում էր այդ գավառները ձևակերպել կոնֆերանսում: ԱՄՆ-ը հավակնում էր Կ. Պոլսին, նեղուցներին և Հայաստանին, փորձում էր ստանալ դրանց մանդատը: Ըստ ԱՄՆ պետքարտուղարության պատրաստած քարտեզի՝ Թուրքիան բաժանվում էր երեք մասի. 1/ Բուն Թուրքիա, 2/ Կ.Պոլսի և նեղուցներ, 3/ Հայաստան: Եղավ մի պահ, երբ Վիլսոնը հարց էր դնում իրեն հանձնել ամբողջ Թուրքիայի մանդատը. Հուլիանստանը, Իտալիան հավակնում էին ամբողջ արևմտյան Անատոլիայի առափնյա տարածքներին: Անհրաժեշտ չէ հանգամանորեն քննարկել այս խնդիրների բոլոր ասպեկտները: Մեզ այստեղ հետաքրքրողը Հայաստանի հարցն է:

1919 թ. մայիսին, ձգտելով փաստի առաջ կանգնեցնել Փարիզի կոնֆերանսի մասնակիցներին, ներգործել նրանց վրա, Երևանում Հայաստանի Հանրապետության առաջին տարեդարձի օրը Հայաստանը հռչակվեց «Միացյալ և անկախ»: Այսինքն՝ դաշնակցական կառավարությունը հրապարակեց իր պահանջները Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի նկատմամբ: Կոնֆերանսում Պողոս Նուբարը և Ավետիս Ահարոնյանը հանդես եկան արևմտահայկական վեց վիլայեթների (Էրզրում, Տրապիզոն, Վան, Բիթլիս, Սվազ, Տիգրանակերտ) և Կիլիկիայի պահանջով:

¹ Լենին Վ.Ի. Երկեր, հ. 31, էջ 402-403:

² Միդնեյ Սոննհինոն (1847-1922) – իտալացի պետական գործիչ, Իտալիայի վարչապետ (1906, 1909-1910), արտգործնախարար (1914-1919) - Ա.Կ.:

Սակայն Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի կնքումը ձգձգվեց (մինչև 1923 թ. Լոզանի կոնֆերանսը): Սա պայմանավորված էր միջինասիական հակաստեղծությունների և մրցակցությամբ, հակասովետական ինտերվենցիայի առկայությամբ, Թուրքիայում սկիզբ առած ազգային-ազատագրական շարժմամբ:

Օսմանյան կայսրության ժառանգությունը յուրովի տնօրինելու իմպերիալիստական տերությունների քաղաքականությունը հանդիպեց լուրջ խոչընդոտների: Արևելքի նկատմամբ Սովետական Ռուսաստանի հռչակած նոր սկզբունքները լայն արձագանք գտան Չինաստանում և Հնդկաստանում, Պարսկաստանում և Թուրքիայում: Սովետական Ռուսաստանի դեմ Անտանտի սանձազերծած դաժան կռիվը օրգանապես միահյուսվում էր հակազաղութային պայքարը խնդրելու իմպերիալիստական պլանների հետ: Հեմվելով հեղափոխական Ռուսաստանի հզոր հակաիմպերիալիստական պայքարի վրա, քեմալական շարժումը բռնեց Անտանտի թելադրանքին չհնթարկվելու, նրա կողմից պարտադրված պահանջները մերժելու ուղին:

1920 թ. հունվարի 28-ին Կ.Պոլսում թուրքական պառլամենտի ընդունած «Թուրքիայի ազգային ուխտը» բանաձևեց 1919 թ. հուլիս-սեպտեմբերին Էրզրումի և Սըվլազի քեմալական շարժման համաժողովների ծրագրային հարցադրումները, ազգայնական պայքարի նպատակներն ու ծրագրային դրույթները¹: Ակնբախ էր քեմալական շարժման երկակիությունը. անկախության համար, իմպերիալիզմի դեմ պայքարի արդարացի բնույթը և թուրքական կայսրության ամբողջականությունը փրկելու, ճնշված ժողովուրդների իրավունքները դաժանությամբ ոտնահարելու, մահմեդական ռեակցիոն խալիֆայթը, սուլթանի իշխանությունը պահպանելու ձգտումը: Մուստաֆա Քեմալն այդ օրերին Կ.Պոլիս՝ սուլթանին հղած մի հեռագրում շատ բացորոշ էր արտահայտվում. «Ազգային շարժումը ծայր առավ նվիրական հայրենիքն ու ազգը մասնատելու վտանգից փրկելու և հույների ու հայերի մտադրություններին չզոհաբերելու նպատակով»: Քեմալականները, հենվելով Էնվերի սարքած «համբարվեի» վրա, փորձում էին հաստատել իրենց իրավունքը նաև Բաթումի, Կարսի և Արդահանի նահանգների վրա, մի բան, որ 1918 թ. սեպտեմբերի 20-ի նոտայով մերկացրել էր սովետական կառավարությունը:

Էրզրումի համաժողովի ընդունած որոշման հենց առաջին կետում նշվում էր թուրք մացիոնալիստների վճռակամությունը հայկական մարզերը կայսրության կազմում պահելու հարցում: Այստեղ «հայկական համայնքի» ստեղծումը կանխելը հռչակվում էր թուրքերի սրբազան գործը: Առանձնահատուկ շեշտվում էր հակահայկականությունը, փորձ էր արվում հաստատել Թուրքիայի «անվիճելի» իրավունքը այն տարածքների նկատմամբ, որոնք Օսմանյան կայսրության փլուզման պայմաններում պետք է անցնեին սուլթանական բռնապետության դարավոր լուծը թորավիչ ցանկացող ժողովուրդին-

¹ Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 606-607:

րին: Այդ օրերին Քեմալն անհնարին էր համարում գեր մի թիզ հող հանձնել Հայաստանին կամ որևէ այլ պետության: Քեմալականներն ինքնուրույն և անկախ պետական գոյություն էին պահանջում բուրբ կամ բուրբալեզու ժողովուրդների համար և վճռականորեն հանդես էին գալիս արաբների, հույների, քրդերի, հայերի ինքնորոշման դեմ: Մուստաֆա Քեմալն ասում էր. «Մենք կապրենք կամ կկործանվենք ազգային ուխտի հետ միասին»:

Սուլթանական կառավարության գլուխ կանգնած Թևֆիկ-փաշան (1918 թ. նոյեմբերից մինչև 1919 թ. մարտը)՝ Արդուլ Համիդի նախկին արտաքին գործերի մինիստրը, 1919 թ. փետրվարի 12-ին Անտանտի դաշնակիցներին ներկայացրած հուշագրում մերժում էր հայերի իրավունքները. «Վահանդակա՞ն» տարածք էր համարում այն հողերը, որոնց վրա հայերն ուզում էին ստեղծել իրենց պետականությունը¹:

Արդեն 1919 թ. կեսերից Անատոլիայի վրա իր հսկողությունը հաստատած Մուստաֆա Քեմալից որևէ բան ստանալ զինված ուժի միջոցով Հայաստանի Հանրապետությունն ի վիճակի չէր: Դիվանագիտական ուղին, որևէ ուղղակի կոնտակտի հաստատումը նրանց միջև երբևէ չէր քննարկվում: Միակ ուղին դաշնակցական գործիչները շարունակում էին որոնել տասնամյակների ընթացքում հայ ժողովրդին ոչինչ չտված Անգլիայի ու Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և Իտալիայի կառավարությունների մոտ, վերստյան դիվանագիտության ֆորումներում, նրանց կայացրած որոշումներում:

Այդպիսի իրավիճակում 1920 թ. ապրիլի 18-ից 26-ը Սան Ռեմոյի (Իտալիա) Դեաշան վիլլայում գումարվեց Անտանտի տերությունների Գեռագույն խորհրդի նիստ, որին մասնակցում էին Լլոյդ Ջորջը, Քերզոնը (Անգլիա), Միլյեբանը, Բերտելոն (Ֆրանսիա), Նիտտին, Սցիալոյան (Իտալիա), Մացոլին (Ճապոնիա): ԱՄՆ-ի ներկայացուցիչը կոնֆերանսին մասնակցում էր որպես դիտորդ: Հայաստանին վերաբերող հարցերի քննարկման նիստերին հրավիրվում էին Հայաստանի Հանրապետության խորհրդարանի նախագահ Ավետիս Ահարոնյանը և ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուրարը:

Այստեղ քննարկվեցին Թուրքիայի հետ խստադրյան պայմանագրի կնքման, տարածքային հարցեր, այդ թվում՝ Հայաստանին վերաբերող մանրամասները:

Դա 1920 թ. ապրիլն էր, երբ հաղթական կարմիր բանակը, ազատագրելով Հյուսիսային Կովկասը, մոտենում էր Անդրկովկասի սահմաններին: Իմպերիալիստական շրջանները ձգտում էին կանխել սովետական իշխանության հաստատումը Անդրկովկասում: Հայաստանի, Ադրբեջանի և Կրաստանի «անկախությունը» ընդգծելու Անտանտի դիրքորոշումը այս փաստով էր պատճառաբանվում: Իսկ այդ դիրքորոշումը հանգեց այն բանին, որ Հայաստանին խոստացան և պայմանագրի նախագծի մեջ մտցրին արևմտահայկա-

¹ Вступительная статья проф. Ю.В.Ключникова // Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, М., 1927, с. XIV-XV.

կան վիլայերները, թեև սահմանների վերջնական ճշգրտումը համեմատարկեց արեզիդենտ Վիլսոնին: Վերջինս միայն 1920 թ. դեկտեմբերին հրապարակեց իր եզրակացությունը, ըստ որի ամբողջ Հայաստանի տարածքը կազմելու էր մոտ 130 հազար ք.կմ: Այս տարածքի գերակշիռ մասը գտնվում էր բուրբակյան բանակի ձեռքում, և այն վերստանալու համար ուժ էր հարկավոր: Թեև 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուղրոսի զինադադարի 5-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվել էր ցրել բանակը և միայն աննշան ուժեր ունենալ ներքին կարգ ու կանոնի պահպանման համար, սակայն նա ոչ միայն անտեսում էր իր պարտավորությունը, այլև բաճակը վերակազմավորելով, ձգտում էր նոր տարածքների գավթման Անդրկովկասում:

Սան Ռեմոյում գլխավոր կոիվը նավթի համար էր: ԱՄՆ-ի կառավարողները դժգոհ էին Մոսուլի նավթից գրկվելու համար: Անգլիան և Ֆրանսիան տակավին 1919 թ. ապրիլին «Բերանժե-Լոնգ» համաձայնագրով միմյանց միջև բաժանել էին այդ նավթը, իսկ այժմ Սան Ռեմոյում ձևակերպեցին այն «միջազգային իրավունքով»: Այստեղ թեև հրապարակվեց Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի նախագծի, մերձավորարևելյան երկրների վրա ինպերիալիստական մանդատների համակարգը, բայց պայքարը ծավալվեց ավելի մեծ ուժգնությամբ:

Շուտով ֆրանսիական զորքերի փվղ Մերձավոր Արևելյում հասավ 60 հազարի: Ֆրանսիան իր հարվածներն ուղղեց գաղութատիրության դեմ պայքարող արաբների դեմ: Այստեղ ֆրանսիական կառավարողները չէին տրտմջում ուժերի պակասությունից, ինչը նրանք անում էին ամեն անգամ, երբ քննարկվում էր Հայաստանի Հանրապետությանը զինված ուժով օգնելու հարցը: Ֆրանսիական բանակը Լիբանանում ցրում էր արաբական ազգային ֆորումները: Սիրիայում իր հսկողությունը տարածում Դամասկոսի և Հալեպի վրա՝ կախաղան բարձրացնելով հազարավոր արաբ հայրենասերների: Նույն բանն անգլիացիներն անում էին Պաղեստինում և Իրաքում:

Այս իսկ տեսակետից արևմտյան դիվանագիտության քայլերը Հայաստանի նկատմամբ մասնավոր բան չէին. այն պետք է տեսնել և մեկնաբանել Մովսեսական Ռուսաստանի դեմ ընդհանուր ինպերիալիստական քաղաքականության և Մերձավոր Արևելյում նվաճողական պլանների լույսի տակ: Հայաստանի հարցը երբեք լուկալ խնդիր չէր արևմտյան դիվանագիտության համար, և վերջինս չէր դեկավարվում հայասիրական, ֆիլանտրոպիական մղումներով: Տվյալ դեպքում Հայաստանը նրանց հետաքրքրում էր. ա/ հակասովետական պլանների իրականացման, բ/ մերձարևելյան քարտեզը ինպերիալիստական տերությունների ռազմաքաղաքական, տնտեսական շահերին համապատասխան վերածնելու առումով: Ընդ որում այդ խնդիրներն իրականացնելու համար մանր դրամի դեր պետք է կատարեին Հունաստանը Արևմուտքում, իսկ Հայաստանը՝ Արևելքում: Այս միջոցով պետք է ճնշում գործադրվեր Թուրքիայի վրա՝ համաձայնվելու Անտանտի «խաղաղության» պայմաններին:

Լոյդ Ջորջի և Քերզոնի, Կլեմանտյի և Միլյերանի, ամերիկյան պետա-

կան գործիչների խոսքի ու գործի տարբերությունն ակնբայն է դառնում, երբ ծանոթանում ենք Մերձավոր Արևելքի տարբեր մասերում Անտանտի տերությունների գաղութային ռեժիմը հաստատելու մանրամասներին, գործերի տեղաշարժերին, դիվանագիտական փաստաթղթերին: Ակնբայն է դառնում նաև, որ հայկական ազգայնականները մեկ անգամ ևս ապացուցեցին իրենց ռոմանտիզմը, քաղաքականության մեջ անօգնական լինելը՝ հույսը կապելով իմպերիալիստական Եվրոպայի և Ամերիկայի այն ուժերի հետ, որոնք և ոչ մի գործնական մտադրություն չունեին ինչ-որ չափով հոգալու թուրք-հայկական հարաբերությունները կարգավորելու, Հայաստանը թուրքական տարածողական ծրագրերից զերծ պահելու մասին:

Գերագույն խորհրդում 1920 թ. ապրիլին նախագահ Կլեմանսոն, ամփոփելով նիստը, եզրակացնում էր. «Ֆրանսիան ոչինչ չի կարող անել, ներկայումս Ամերիկան ևս ոչինչ չի կարող անել: Մնում է տեսնել որպես արդյունք այս ամենի, արդյոք հայերը կ'մնան»:

Լլոյդ Ջորջն ապրիլի 20-ի նիստում ուղղակի հայտարարում էր. եթե հայերը «ի վիճակի չեն պաշտպանել իրենց սեփական սահմանները, ապա ինքը կարծում է, որ աշխարհում մեծան մի ժողովրդից ոչ մի օգուտ չկա, և դաշնակից կառավարություններից ոչ մեկը պատրաստ չի լինի օգնելու նրանց թեկուզ մեկ գումարտակով»: Ահա սա էր իմպերիալիստական քաղաքագետների բարոյականությունը: Առանց մի գումարտակ տալու՝ արևմտյան դիվանագիտությունը Սերի սեղանի վրա էր դնելու Սան Ռեմոյի նախագիծը՝ նախապես իմանալով, որ այն գործնականում դատապարտված է ձայնողման:

Քերզոնը մտահոգված էր ամբողջ Արևելքում քրիստոնական գաղութների և կախյալ երկրների մի անընդմեջ, ամբողջական համակարգ ստեղծելու խնդրով: Սա էր նրա հավատո հանգանակը, սրան էին ենթարկվելու բոլոր մնացած խնդիրները: Դրա համար նա հիշեցնում էր, թե «ցանկալի է սեպ խրել Թուրքիայի մահմեդականների և Հեռավոր Արևելքի մահմեդականների միջև քրիստոնյա հասարակության ձևով, որը լինելու է նոր հայկական պետությունը»:

Կլեմանսոն ուղղակի ասում էր. «Ֆրանսիան չի կարող դրան ծախսել Հայաստանում»: Ռազմական հանձնաժողովի նախագահ, մարշալ Ֆոշը հաստատում էր նրա ասածը, թե «ինքը ոչ մի հնարավորություն չի տեսնում դաշնակիցների օգնությունն ուղարկելու Հայաստանին»: Նա գտնում էր, որ դաշնակիցները չեն կարող «պաշտպանել փոքրամասնություններին Թուրքիայում առանց ռազմական ուժերի ճնշող ցուցադրման»: Իսկ ռազմական ուժը նրանք ցուցադրում էին Սիրիայում, Հյուսիսային Աֆրիկայում, քայց ոչ Հայաստանում:

Սան Ռեմոյում հիշատակվում էր այն կողմը, որ «ներկայումս Էրզրումը թուրք ազգայնականների կենտրոնն է: Որևէ մեկը պետք է թուրքերին դուրս բշի այնտեղից»: Լլոյդ Ջորջը կրկնում էր, թե «դաշնակից պետություններն ի վիճակի չեն ուժեր ուղարկելու հայերին օգնության»: Նա ասում էր, որ Սիաց-

յալ Նահանգները գորք չեն ուղարկի: «Եթե Էրզրումը զիջվի հայերին, միակ պատասխանը, որ կտան թուրքերը, կլինի հայերին կոտորելը: Այս դեպքում ի՞նչ պետք է անեն դաշնակից պետությունները: Նրանք շարունակելու՞ են մեկը մյուսի հետևից կոնֆերանսներ գումարել, ջուր ծեծել և սասել, որ իրենք այն արեցին, որպեսզի բաջալերեն «մեծ հույսը»: Մյակ «մեծ հույսը», որ ինքը տեսնում է, հայկական կոտորածներն են»: Նա շարունակում է. «Եթե սեղանի շուրջ նստած վեց ներկայացուցիչները կարգադրեն նախագծային կոմիտեներին Էրզրումը հռչակել հայկական, պրն Բերտելոյի կարծիքով դա կտա՞՞ Էրզրումը Հայաստանին: Էրզրումը պետք է վերցվի զենքի ուժով, և վերցնելիս էլ արյուն պետք է հեղվի:

...Հավատու՞մ է նա, որ հայերը, որոնք չկարողացան պաշտպանվել կոտորվելուց, դեռ մի բան էլ կշարժվեն դեպի թշնամական երկիր և կզբաղվեն մի ամբողջ, որը ռուսական բանակներին է դիմադրել: Եթե կոնֆերանսը հռչակեր պայմանագրում, որ Էրզրումը պատկանում է Հայաստանին, գործարքը կմնար գործարք թղթի վրա, առանց կենսագործվելու հույսի...»:

Պատասխանելով Հայաստանի Հանրապետության պատվիրակների պնդմանը, թե առանց Էրզրումի հայերը չեն կարող գոյություն ունենալ, Լյոյո Ջորջն ասում էր. «Եթե Հայաստանը չի կարող գոյություն ունենալ առանց Էրզրումի, հայերը չեն կարող գոյություն ունենալ առհասարակ: Տերությունները չեն կարող վերցնել այն և հանձնել նրանց, իսկ նրանք էլ իրենք չեն կարող վերցնել»:

Սա այն Լյոյո Ջորջն էր, որ 1917 թ. գարնանը Գլխագոյում արտասանած իր ճառում պահանջում էր «ազատագրել» Միջագետքը և Հայաստանը թուրքական լծից և նրանց բախտը հանձնել «ավելի արդարացի կառավարման»¹:

Իսկ այժմ այլ բան էր անում:

1920 թ. մայիսի 11-ին Փարիզում Կ.Պոլսի սուլթանական կառավարության պատվիրակ Թևֆիկ-փաշային հանձնվեց խաղաղության պայմանագրի դաշնակիցների նախագիծը, և պատասխանի համար տրվեց մեկ ամիս ժամանակ:

1920 թ. հուլիսի 22-ին սուլթանի նախագահությամբ հավաքված «մեծ դիվանը» որոշեց ստորագրել խաղաղության պայմանագիրը, որը նշանակում էր Օսմանյան կայսրության վերջնական փլուզում: Վերջապես 1920 թ. օգոստոսի 10-ին Սևրում կնքվեց խաղաղության պայմանագիր, մեկ կողմից, Բրիտանական կայսրության, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի և մի շարք այլ պետությունների և, մյուս կողմից, Թուրքիայի միջև: Պայմանագրի տակ գրված էր նաև «Հայկական հանրապետության պատվիրակության» նախագահ Ա.Ա. հարոնյանի ստորագրությունը: Պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող գլխավոր հոդվածներում ասված էր.

¹ Васюков В. Внешняя политика Временного правительства, М, 1966, с. 163.

«Հողված 33. Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ բանն արդեն արել են դաշնակից տերությունները, որպես ազատ և անկախ պետություն»:

«Հողված 89. Թուրքիան և Հայաստանը, ինչպես և բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանադրվող բողոքն Անե-րիկայի Սիսցայա Նահանգների որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և այն քոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին և՛ դեպի ծով ելք տալու, և՛ հիշյալ սահմանագծին հարող օսմանյան քոլոր տերիտորիաների ապառազմականացման վերաբերյալ»¹:

Սերի պայմանագիրը ազդարարեց, որ Ֆրանսիան Կիլիկիան «գիջում է» Թուրքիային: Կիլիկիայի հայությունը բողոքվում էր բախտի բժսահաճույքին, բուրբական մատնաշունչ նացիոնալիզմին դեմ հանդիման:

Սակայն Սերի պայմանագրի տակ ստորագրեցին սուլթանի ներկայացուցիչները, որոնք փաստորեն չէին ներկայացնում Թուրքիան: Կ.Պոլսում սուլթանը 1920 թ. մարտի 16-ից դաշնակից օկուպացիոն բանակի գերին էր, իսկ Անտառոլիայում (Անկարա կենտրոնով) ռեալ իշխանությունը Անտանտին հակադրված Մուստաֆա Քեմալի ձեռքում էր: Այնուամենայնիվ, Կ.Պոլսի կաշռավարությունը նույնպես չէր շտապում այն ռատիֆիկացնել: Պայմանագիրը այդպես էլ չվավերացվեց: ԱՄՆ-ի ներկայացուցիչները ոչ միայն հրաժարվեցին ստորագրել Սերի պայմանագիրը, այլև չսահմանակցեցին նրա վերջնական մշակմանը Սամ Ռեմոյում, որտեղ համդես էին գալիս դիտորդների դերում: Ֆրանսիական կառավարությունն առաջինը բոյկոտեց Սերի պայմանագրի կատարումը՝ դժգոհ լինելով անգլիական դաշնակցի ավելի մեծ ավարառությունից: Ֆրանսիական դիվանագետները գաղտնի կապերի մեջ մտան Քեմալի հետ, բռնեցին գիջումների ուղին, միայն թե «աշխարհում միակ ուժեղ բանակը» (թուրքականը) համդես գար բոլշևիկների դեմ:

Այդ էր պատճառը, որ 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Լոնդոնում կայացած կոնֆերանսում, 1921 թ. հունվարին Փարիզում գումարված Անտանտի Գերագույն խորհրդի նիստում Ֆրանսիան համդես էր գալիս Սերի պայմանագիրը փոփոխելու պահանջով: Մինչև 1922-1923 թթ. Լոզանի կոնֆերանսը Ֆրանսիան, Անգլիան, Իտալիան նահանջեցին Սերի դրույթների պաշտպանության դիրքերից: 1921 թ. մարտին Լոնդոնի կոնֆերանսի արձանագրություններում «Հայկական անկախ պետություն» արտահայտությունը փոխարինվեց Թուրքիայի տարածքի վրա «ժայռց ազգային օջախ» ստեղծելու անորոշ հարցադրումով, որը նույնպես ջնջվեց Լոզանի կոնֆերանսում Անտանտի պետությունների նույն դիվանագետների ձեռքով:

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության... էջ 672-680:

1920 թ. գարնանը՝ Դեմիկիմի ջախջախումից հետո, Հյուսիսային Կովկասում վերականգնվեց սովետական իշխանությունը: Դեռևս 1920 թ. ապրիլին Գ.Օրջոնիկիձեն Հայաստանի կառավարության ներկայացուցիչներին պարզորոշ բացատրում էր, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը բարյացակամորեն է վերաբերվում Հայկական հարցին և պատրաստ է բանակցություններ սկսելու Հայաստանի Հանրապետության հետ: Մայիսի 17-ին Գ.Չիչերինը հեռագրում էր Երևան. «Սովետական կառավարությունը սույնով ձեզ հայտնում է իր համաձայնությունը Հայաստանի կառավարության հետ պայմանագիր կնքելու երկու ժողովուրդների միջև բարեկամական և ամուր հարաբերություններ հաստատելու նպատակով»¹:

1920 թ. ապրիլի 28-ին սովետական հռչակվեց Ադրբեջանը, 11-րդ կարմիր բանակն ընդիուպ մտնեցավ Հայաստանի սահմաններին: Փաստերը հաստատում են, որ այդ պահին քեմալական թուրքիան ծրագրել էր ներխուժել Հայաստան, այդ նպատակով ձեռնարկել բոլոր նախապատրաստական միջոցները:

Քեմալականները Հայաստանի Հանրապետության դեմ զինված հարձակման նախապատրաստվում էին դեռևս 1919 թ. աշնանը: Նրանց նպատակն էր նախ գրավել Կարսի ու Արդահանի շրջանները, այնուհետև, Հայաստանն իրենց ենթարկելով, միանալ մուսավաթականներին: Սա պանթուրքական ծրագրի իրականացման նախնական փուլն էր, որին հաջորդելու էին տարածողական հետագա քայլերը: Նրանց հանգիստ չէր տալիս 1918 թ. երիտթուրքական բռնադատիչների՝ Անդրկովկաս կատարած արշավանքի անհաջողությունը: Առժամանակ այս մտադրությունը լայն գործնականություն չստացավ, թեև 1919 թ. արդեն Բաքվում մուսավաթական պարագլուխների հետ ձեռք ձեռքի տված գործում էին նախկին երիտթուրքական գործիչները, այժմ՝ Քեմալին ընկերացած Խալիլ և Նուրի-փաշաները: Մրանք ստեղծել էին «թուրքական շտաբ» կոչվող կազմակերպությունը, հեղափոխական ֆրազներին ծխածածկույթի տակ համագործակցության առաջարկներ էին անում կոմունիստական կուսակցության Անդրերկրյան²: Նրանց նույնիսկ հաջողվեց գործի անցնել Դաղստանում: Սակայն, սպիտակների պարտիզանական կուլի կազմակերպման անվան տակ Նուրի-փաշան այստեղ հակասովետական, պանթուրքական գործունեություն ծավալեց: Դաղստանի բոլշևիկյան ընդհատակյա կենտրոնը նրան ստիպեց հեռանալ: Այնուամենայնիվ, նա շարունակեց իր պանթուրքական ակտիվությունը Ադրբեջանի տարբեր շրջաններում:

¹ Ալիխանյան Ս.Տ. Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Ե, 1964, էջ 97:

² Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 478:

Քենալականները կարծում էին, թե քանի որ Ադրբեջանը սովետական դարձավ և հարեց Ռուսաստանին, ապա իրենք էլ պետք է նվաճեին Հայաստանը:

1920 թ. գարնանը, երբ Դաղստանում էր գտնվում 11-րդ կարմիր բանակը, Խալիլ-փաշան Ս.Կիրովին առաջարկում էր համատեղ ուժերով գրավել Հայաստանի Հանրապետությունը: Ս.Կիրովը վճռական հակահարված է տալիս սանձարձակ պանթուրքիստին¹:

Խալիլ-փաշայի առաջարկը քենալական Թուրքիայի ղեկավարության քաղաքական գծի դրսևորումն էր: Մուստաֆա Քենալը չի քաքցրել, որ 1920 թ. սկզբին արևելյան ճակատի բուրբակյան գործառնները պատրաստության մեջ էին դրվել ընդդեմ Հայաստանի:²

1920 թ. մայիսին Հայաստանը բռնված էր հակադաշնակցական ապստամբությամբ: Հայ աշխատավորները կոմունիստների գլխավորությամբ ոտքի էին ելել՝ տապալելու ասեղի իշխանությունը: Սակայն Սովետական Ռուսաստանի միջազգային դրությունը նորից բարդ էր, և նա չկարողացավ զինված օգնություն ցույց տալ Հայաստանի հեղափոխական ուժերին և արդեն մայիսին սովետական իշխանություն հաստատել այնտեղ: Ապստամբությունը պարտվեց: Դաշնակ մատուցելուները դաժան հաշվեհարդար տեսան հայ ժողովրդի լավագույն զավակներին հետ:

Բանն այն է, որ 1920 թ. ապրիլի վերջին պանական Լեհաստանը ներխուժեց Սովետական Ուկրաինա և մայիսի 6-ին գրավեց Կիևը: Ապրիլի վերջին անգլիական նավատորմը գնդակոծեց մեր երկրի սևծովյան նավահանգիստները: Ապրիլի 25-ին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Քերզոլը հեռագրով սպառնում էր սովետական կառավարությանը՝ պատերազմ սկսել ՌՍՖՍՀ-ի դեմ, եթե չդադարեցվեին ռազմական գործողությունները Կովկասում և Վրանգելի³ դեմ:

Վ.Լենինը համաձայնվում էր Չիչերինի կարծիքի հետ Կովկասում ռազմական գործողությունների դադարեցման հարցում⁴: Մայիսի 5-ին և 6-ին Կենտկոմի քաղաքական քննարկում է Անդրկովկասի դրության և Քերզոնի նուտային պատասխան տալու հարցը⁵: Որոշվում է Կովկասից զինվորական մասեր տեղափոխել Արևմտյան ռազմաճակատ: Գ.Օրջոնիկիձեն կարգադրություն է ստանում Վ.Լենինից կարմիր բանակի գորամասերը հետ քաշել Վրաս-

¹ ՀՍՍՀ ՊԿՊԱ (ՀԱԱ), ֆ. 200, գ. 769, ք. 256:

² Кемаль М. Путь новой Турции, т. 3, с. 313.

³ Պյոտր Վրանգել (1878-1928) – ռուս ռազմական գործիչ, 1918-1920 թթ. Ֆաղաքացիական պատերազմի ժամանակ Մալխոսկ շարժման ղեկավարներից, Գրիմում և Լեհաստանում ռուսական բանակի հրամանատար, 1920-1921 թթ.՝ Ռուսաստանի գերագույն տիրակալ – Ա.Կ.:

⁴ Ленин В.И. ПСС, т. 51, с. 191.

⁵ Նույն տեղում, հ. 41, էջ 619-621:

տանից, ձեռնպահ մնալ հարձակումից¹: Ռ-Կ/բ/Կ Կենտկոմը մայիսի 25-ի որոշմամբ դիրեկտիվ տվեց ռուսական զորամասեր շնորհակալորդ, զորքի օգնությամբ սովետականացման փորձեր չկատարել, բոլոր միջոցներով Նախիջևանը պաշտպանել Թուրքիայի և Անտանտի ազդեցությունից:

1920 թ. մայիսի վերջին հակասովետական խռովություն բռնկվեց Գյանջայում, այնուհետև Ղարաբաղում (Շուշի), որի գլուխ կանգնած էր Նուրի-փաշան: 1920 թ. հունիսի 2-ին Լենինը հեռագրում էր Կրեմենշուրգ՝ Ստալինին², որ Արևմտյան ճակատում դրությունը վատացել է, որ Ստալինի պահանջած դիվիզիաները պետք է այնտեղ ուղարկել, իսկ Կովկասյան ճակատից այլևս զինված ուժեր չհանել, քանի որ այնտեղ ապստամբություններ են և չափազանց տագնապալի վիճակ³:

Լենինի առաջարկով 1920 թ. հունիսի 22-ին Կենտկոմի քաղաքականություն որոշում ընդունեց «Կովկասում քաղաքականության մասին» և հանձնարարեց արտաքին գործերի ժողովմատին դրա հիման վրա հրահանգ պատրաստել Կավքյուրդյի, Վրաստանում, Հայաստանում և Թուրքիայում Ռ-ՍՖՍՀ պատասխանատու զինվորական աշխատողների և լիազոր ներկայացուցիչների համար: Այս հրահանգը հաստատվեց Կենտկոմի քաղաքական կոլեկտիվի հուլիսի 7-ին: Այնտեղ ասված էր, որ «Ռ-ՍՖՍՀ-ը պետք է խաղաղ և քարիդրացիական հարաբերություններ պահպանի Վրաստանի և Հայաստանի բուրժուական պետությունների հետ»⁴:

Հունիսի 30-ին Ռ-Կ/բ/Կ Կենտկոմի քաղաքական քննարկեց 11-րդ կարմիր բանակի առաջխաղացումը դեպի Հայաստան դադարեցնելու հարցը և հանձնարարեց Չիչերինին հրահանգ սալ այն մասին, որպեսզի կովկասյան ընկերները խուսափեին թուրքական հարձակման համար առիթներ տալուց:

Պաճական Լեհաստանի դեմ կարմիր բանակի հակահարձակման ժամանակ (1920 թ. հուլիս) Անգլիան Սովետական Ռուսաստանին նորից սպառնալից նոտաներ էր հղում, իսկ ավելի ուշ (օգոստոսին) Անդրկովկասին սպառնում էր Իրանի հյուսիսից:

Ահա այսպիսի պայմաններում 1920 թ. հունիսին Մոսկվայում բանակցություններ սկսվեցին Սովետական Ռուսաստանի կառավարության և Հա-

¹ Նույն տեղում, հ. 51, էջ 191:

² Իոսիֆ Ստալին (1879-1953) – ԽՍՀՄ պետական և քաղաքական գործիչ, 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխության կազմակերպիչներից, 1917-1922 թթ.՝ ՌՍՖՍՀ ազգությունների գործերով, պետական հսկողության ժողկոմ, 1922-ից՝ կոմկուսի գլխավոր քարտուղար, 1941-ից՝ ԽՍՀՄ Ժողկոմխորհի, 1946-ից՝ ՆԽ-ի նախագահ, 1941-1947 թթ.՝ Պաշտպանության պետական կոմիտեի նախագահ, զինված ուժերի զերագույն հրամանատար, մարշալ, զենեթալիսիմուս - Ա.Կ.:

³ Նույն տեղում, հ. 51, էջ 205:

⁴ Хармандарян С.В. В.И. Ленин и становление Закавказской федерации, Е, 1969, с. 43.

յաստանի Հանրապետության պատվիրակության (Լևոն Շանթ¹, Լևոն Ջարախյան, Համբարձում Տերտերյան և այլք) միջև:

Նույն ժամանակ Մոսկվայում բանակցություններ էին տեղի ունենում Սովետական Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի պատվիրակությունների միջև:

Թուրքիայում ծավալվող ազգային-ազատագրական շարժումը Անտանտի դեմ ուղղելու, քեմալականների ուշադրությունը Հայաստանից հեռացնելու նպատակով Ռ-Ս-ՖՍՀ կառավարությունը ձգտում էր կարմիր բանակի զորամասերը մտցնել հայ-թուրքական սահմանը՝ կանխելու համար թուրքական հարձակումը Հայաստանի վրա:

Այս խնդրի քարեհաջող լուծման դեպքում Անտանտը կզրկվեր Հայաստանը հակասովետական հենարան դարձնելու, հայ-թուրքական ախոյանությունը Սովետական Ռուսաստանի դեմ օգտագործելու հնարավորությունից:

Փաստերը վկայում են, որ Սովետական Ռուսաստանը մշակել էր կոնկրետ ծրագիր՝ լուծելու համար հայ-թուրքական տարածքային վեճերը, կազմվել էր հատուկ քարտեզ, որով նախատեսվում էր Հայաստանին միացնել արևմտահայկական տարածքներ, ելք պետք է տրվեր դեպի Սև ծով:

«Չիչերին կխոստանա հայերուն գոհացում տալ Թրքահայաստանի որոշ հողամասերը միացնելով Հայաստանին և ապահովելով ելք մը դեպի Սև ծովը», - պատմում է հայկական պատվիրակության անդամներից մեկը²: Նախիջևանը և Չանգեզուրը նկատվում էին անվերապահ հայկական հողամասեր, իսկ Կարաբաղի հարցը վճռվելու էր հանրաքվեով: Չիչերինը և Կարախանը Սովետական Ռուսաստանի կառավարության անունից համաձայնվում էին Հայաստանին հանձնել երկրի տարբեր մասերում սփռված հայկական մշակույթի արժեքները, հայ գաղթականներն իրավունք էին ստանում իրենց շարժական գույքով փոխադրվել հայրենիք: Ռուսաստանը Հայաստանին անվճար տրամադրելու էր մի քանի տասնյակ շոգեքարշեր և վագոններ, մեծ քանակությամբ նավք, երկու տեքստիլ ֆաբրիկա, երկրագործական գործիքներ, հացահատիկ, երկու և կես միլիոն ոսկի ռուբլի փող և այլն: Պատվիրակ Համբարձում Տերտերյանը Լ.Կարախանի առանձնասենյակում քարտեզի

¹ Լևոն Շանթ (1869-1951) - գրող, մանկավարժ, հասարակական գործիչ, ՀՀ խորհրդարանի անդամ (ՀՀԴ), գլխավորել է Խորհրդային Ռուսաստանի հետ բանակցություններ վարելու համար Մոսկվա ուղարկված պատվիրակությունը, 1921-ից ապրել է Իրանում, Ֆրանսիայում, Եգիպտոսում, Լիբանանում, «Լեռան աղջիկը» պոեմի, «Երազ օրեր», «Լերծին», «Դարձը», «Կինը» վիպակների, «Հին աստվածները», «Կայրը», «Եսին մարդը», «Ուրիշի համար», «Օշին պայլ» դրամաների, «Հոգիները ծարավի» վեպի հեղինակ - Ա. 4.:

² Տե՛ս Նոր սերունդը՝ քաղաքային մոխրագ, Ա. Հայաստանի պատմական վերջին անկյունադարձը 1920-ին, Բեյրութ, 1961, էջ 26:

վրա նշմարում է, որ Անդրկովկասի երեք հանրապետություններից ամենամեծը Հայաստանն էր¹:

Սակայն պարզվեց, որ դաշնակցական կառավարությունը հայկական պատվիրակությանը չէր օտոնել համապատասխան լիազորություններով և որ դեզորել էր քաշքշուկի անպատասխանատու գործելակերպ: Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Տ.Բեզգադյանը հուլիսի 6-ին իր կառավարությանը խորհուրդ էր տալիս հասարակական կարծիքը հեռու պահել Մոսկվայի բանակցությունների մանրամասներից: Նա գրում էր. «Սներ ժամանակ կվատակենք, մինչև կստանանք Անգլիայից եկած ռազմամթերքը և այն ժամանակ կարող կլինենք դիմադրել նույնիսկ ռուս զորքերին...»²:

Ակնհայտ էր, որ Արևմտյան Հայաստանի տարածքային հարցերի լուծումը Հայաստանի կառավարությունն ուզում էր իրականացնել Անտանտի միջոցով: 1920 թ. ապրիլին Սան Ռեմոյում պատրաստվել էր Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի նախագիծը, որը ստորագրվեց Սևրում 1920 թ. օգոստոսի 10-ին: Իսկ Անդրկովկասում, մասնավորապես Ադրբեջանի հետ կապված տարածքային խնդիրները լուծելու, Սովետական Ռուսաստանից տնտեսական օգնություն ստանալու, քաղաքականապես ճանաչվելու հարցերում կառավարությունն ակնկալություններ ուներ Մոսկվայում: Բանակցությունները Մոսկվայում շարունակվեցին երկու ամիս: Հայաստանի Հանրապետության կառավարողները ձգտում էին ժամանակ շահել, մինչև կնքվեր Սևրի պայմանագիրը, կստացվեք անգլիական ռազմամթերքը: Այս միջոցով դաշնակցական պետական և կուսակցական որոշ շրջաններ համոզված էին, որ ոչ միայն կդիմագրավեն քեմալական ուժերին, այլև կգրավեն էրզրումը: Անգլիական և ֆրանսիական կառավարությունները, նրանց ներկայացուցիչները Թիֆլիսում և Երևանում անում էին ամեն ինչ՝ ներգործելու կառավարության վրա, ձախողելու սովետա-հայկական հարաբերությունների կարգավորումը և պայմանագրի կնքումը:

Հայտնի է ֆրանսիական կառավարության գաղտնի կարգադրությունը Երևանի իր ներկայացուցչին՝ ամեն գնով հասնելու այդ բանին:

Հուլիսի 19-ին Չիչերինը նշում էր, որ բանակցությունները մնում են մեռյալ կետում, որ դրանք անհույս են: Նույն օրը Հայաստանի Հանրապետության կառավարությանը հղած հեռագրում ՌԱՖՍՀ արտգործնախարարը նորից պարզում էր հայ ժողովրդի նկատմամբ սովետական քաղաքականության իմաստը:

«Այն բարեկամական հարաբերությունները, որ սովետական կառավարությունը փորձում է հաստատել Փոքր Ասիայի բուրքական ազգային կառավարության հետ, նա, իմիջիայնոց, օգտագործում է, որպեսզի հայ ժողովրդի համար հնարավորություն ապահովի իր զարգացման համար բավականաչափ տեքստիլիս ձեռք բերելու Փոքր Ասիայում և, վերջապես, դուրս գալու

¹ Նույն տեղում, էջ 34-35:

² ՀՍՍՀ ՊԿՊԱ (ՀԱԱ), ֆ. 68/200, ց. 1, գ. 769 ա, ք. 93:

հարևան մուսուլմանական բնակչության հետ ունեցած մշտական ճակատագրական բշնամանքից»,- հայտարարում էր Չիչերինը:

«Բացառապես սովետական կառավարության խաղաղասիրական ձգտումների ազդեցության տակ բուրբ նացիոնալիստները դադարեցրին իրենց իսկ սկսած գորակոչը, որը նպատակ ուներ նոր հարված հասցնել հայ ժողովրդին, և պատրաստակամություն հայտնեցին խաղաղ ելք գտնել ու հաստատուն բարիորդական հարաբերություններ հաստատել մուսուլմանական և հայ բնակչության միջև»: Այնուհետև Չիչերինը հավաստիացնում էր, որ «հայ ժողովուրդը կարող է հույս դնել» Սովետական Ռուսաստանի «մշտական բարեկամական վերաբերմունքի», «նրա ուժերի ասհմաններում օգնության վրա՝ հայ ժողովրդին սպառնացող նոր արյունալի աղետները կանխելու համար»:¹

Մոսկվայում բանակցությունները հայկական պատվիրակության հետ րնդիաստվեցին: Որոշվեց դրանք շարունակել Երևանում, ուր Վ.Լենինի և Լ.Կարախանի կողմից տրված լիազորագիր-մանդատով ուղարկվում էր սովետական լիազոր ներկայացուցիչ Բորիս Վասիլիչ Լեգրանը²: Չիչերինի առաջարկով Լեգրանը և Սահակ Տեր-Գաբրիելյանը³ Մոսկվայում հանդիպում են ունենում հայկական պատվիրակության հետ, նորից ընդգծում սովետական կառավարության դիրքորոշումը: Սակայն, ինչպես վերհիշում է պատվիրակ Վ.Տերտերյանը, Երևանի կառավարությունը լուս էր, ոչ մի հրահանգ չէր տալիս հետագա անելիքի մասին: Հուլիսին Լեգրանը մեկնում է Երևան, իսկ Լևոն Շանթն իր պատվիրակությամբ շարունակում է մնալ Մոսկվայում անորոշ ամսաթվով, թե մինչ այդ պետք է լսի Մոսկվայից վերադարձող պատվիրակության հաշվետվությունը (այն տեղ հասավ սեպտեմբերի 14-ին) և հետո միայն՝ ձեռնամուխ լինել բանակցությունները շարունակելու Երևանում⁴: Սա քացա-ծեռնամուխ լինել բանակցությունները շարունակելու Երևանում⁴: Սա քացա-

¹ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռոլյուցիան և Սովետական իշխանության հարթանակը Հայաստանում, էջ 352-353:

² Բորիս Լեգրան (1884-1936) – խորհրդային դիվանագետ, 1920-1922 թթ.՝ ՌՍԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ ՀՀ-ում, ապա՝ ՀԽՍՀ-ում, 1921-ից՝ միաժամանակ ԱՍՍՀ-ում և ՎՍՍՀ-ում, 1922-ից՝ ՌՍԽՖՍՀ ներկայացուցիչ Թուրքեստանի Ինքնավար խՍՀ-ում, 1926-ից՝ Խարքինում խՍՀՎ գլխավոր հյուպատոս, 1930-1934 թթ.՝ Պետական երմիտաժի տնօրեն - Ա.Կ.:

³ Սահակ Տեր-Գաբրիելյան (1886-1937) – քաղաքական և պետական գործիչ, Բարձրի կոմունայի (1918) ժամանակ՝ նավթի բաշխման ու վաճառքի կոմիտեի արտակարգ հանձնաժողովի նախագահ, 1920-ից դեկավարել է Հայաստանի բոլարտակարգ հանձնաժողովի նախագահ, ՀԿ(բ)Կ ԿԿ-ն, Հայաստանի հեղինոմի անդամ, 1921-21-ից՝ ՀԽՍՀ լիազոր ներկայացուցիչ ՌՍԽՖՍՀ-ում, 1923-1928 թթ.՝ ԱՍԽՍՀ-ում, 1928-1935 թթ.՝ ՀԽՍՀ Ժողովուրդի նախագահ - Ա.Կ.:

⁴ Լեգրանի միսիան // «Բանբեր Հայաստանի արխիվներ» (Ե.) – 1967, Հ. 3, էջ 42:

ճանությոն հայ ժողովրդի նկատմամբ: 1920 թ. հուլիսի 20-ին Թիֆլիսից Լեզրանը հեռագրում էր Հայաստանի արտաքին գործերի մինիստրին, պահանջում էր բանակցությունների վերսկսումը չկապել Մոսկվայից Շանքի պատվիրակության վերադարձի հետ, որ «Սովետական Ռուսաստանի բարեկամական և խաղաղ մտադրությունները չեն հանդիպում Հայաստանի կառավարության այն արձագանքին, որը դառնար սկսված հաշտության բանակցությունների շուտափույթ և հաջող ավարտման գրավականը»¹:

Նույն միջոցին Թիֆլիսում ՌՍՖՍՀ վիագոր ներկայացուցիչ Ա.Կիրովը փորձում էր ներագրել մենչևիկյան Վրաստանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Տ.Բեզգադյանի վրա, նրան բացատրել դրության բարդությունը, բանակցությունները շարունակելու անհրաժեշտությունը:

Երբ 1920 թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում, մի կողմից, Լեզրանի և, մյուս կողմից, Հայաստանի կառավարության ներկայացուցիչներ Ջամալյանի² և Բարալյանի միջև զինադադարի համաձայնագիր կնքվեց Ղարաբաղում և Ջանգեզուրում կարմիր բանակի զորամասերի և հայկական զորամասերի միջև զինված բախումները դադարեցնելու մասին, շատ ավելի ակնհայտ դարձավ, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը իսկական խաղաղ էր անգլո-ֆրանսիական իմպերիալիստների ներկայացուցիչների ձեռքին (Մարտել³, Կորբել⁴, Ստոքս⁵, Լյուկ⁶ և ուրիշներ)⁷: Սրանք բոլոր միջոցներով ձգտում էին խորացնել կոմիչիկտը, արգելակել հարաբերությունների կարգավորումը Հայաստանի Հանրապետության և Սովետական Ռուսաստանի միջև, ռազմական և տնտեսական օգնություն էին խոստանում:

¹ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռեյուցիան և Սովետական իշխանության հարթանակը Հայաստանում, էջ 360-361:

² Արշակ Ջամալյան (1882-1940) – հասարակական և քաղաքական գործիչ, ՀՀԿ կուսակցության անդամ, հայ կամավորական ջոկատների կազմակերպիչներից, 1917-ից՝ ՀԱԽ-ի անդամ, մասնակցել է Երզնկայի զինադադարի կնքմանը, Անդրկովկասյան սեյմի անդամ, ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Թիֆլիսում (1918), 1919-ից՝ ՀՀ խորհրդարանի անդամ, 1920-ից՝ հաղորդակցության ճանապարհների նախարար, 1921-ին մասնակցել է բուլեղիկների և դաշնակցականների բանակցություններին Ռիգայում, այսինչ է Փարիզում, «Դաշնակցության տեսությունը» աշխատության հեղինակ - Ա.Կ.:

³ Դե Մարտել – կոմս, Անդրկովկասում Ֆրանսիայի կոմիսար - Ա.Կ.:

⁴ Կորբել – փոխգնդապետ, Անդրկովկասում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար (1920) - Ա.Կ.:

⁵ Ստոքս – փոխգնդապետ, Անդրկովկասում Բրիտանիայի գլխավոր կոմիսար (1920) - Ա.Կ.:

⁶ Լյուկ – Անդրկովկասում Բրիտանիայի գլխավոր կոմիսարի տեղակալ (1920) - Ա.Կ.:

⁷ Լեզրանի միսիան..., էջ 42:

* * *

Մոսկվայում բանակցությունները թուրքական պատվիրակության հետ նույնպես ընդհատվեցին: Սովետա-թուրքական հարաբերությունների նորմալացման ձգձգումը, պայմանագրի կնքման հետաձգումը (մինչև 1921 թ. մարտի 16-ը) որոշակիորեն պայմանավորված էր հայ-թուրքական բարդ փոխհարաբերություններով, թուրքական կողմի ցանկությամբ՝ տարածքային ոչ մի զիջում չանել Հայաստանի Հանրապետությանը: Քեմալական թուրքիայի պատվիրակության ղեկավար, արտաքին գործերի մինիստր Բեքիր Սամին 1920 թ. հուլիսի 14-ին, պատասխանելով Հայաստանի հետ սահմանները որոշելու մասին Չիչերինի առաջարկներին, պնդում էր Բրեստ-Լիտովսկի պայմանագրի վրա, որը չեղյալ էր հայտարարված սովետական կառավարության կողմից 1918 թ. սեպտեմբերի 20-ին և Բաքումի (1918 թ. հունիսի 4-ի) կոմկենցիայի գործադրման վրա¹, որով Հայաստանին թողնվել էր 9 հազար ք.կմ տարածություն: Թուրքական կողմն ամբողջապես ոտնահարում էր հայ ժողովրդի կենսական շահերը, ի հակադրություն Սովետական Ռուսաստանի, որը ձգտում էր պաշտպանել Հայաստանը թուրքական զավթողական հարվածներից:

Մոսկվայի բանակցությունների ժամանակ, չհամաձայնվելով հայկական տարածքների հարցում սովետական հարցադրումներին, Բեքիր Սամինի պատվիրակությունը առանց պայմանագիր կնքելու վերադարձավ Անկարա: Այնուամենայնիվ, պայմանագրի նախագիծը Անկարայում ստացվեց սեպտեմբերի 18-ին: Նախագծում բաց մնացած թուրք-հայկական տարածքային և մյուս վիճելի հարցերը կարգավորելու նպատակով Մոսկվայից Անկարա էր մեկնելու սովետական առաքելություն: Սակայն օգոստոսի 10-ին ստորագրվել էր Սևրի պայմանագիրը (Հայաստանին վերաբերող համապատասխան կետերով), և Հայաստանի կառավարությունը լրիվ փարվեց Անտանտին:

Մինչ այդ դաշնակցական կառավարության և քեմալական կառավարության միջև հուլիս-օգոստոս ամիսներին կատարված նegotiationsի փոխանակությունը նույնպես հայ-թուրքական փոխհարաբերությունների մեջ պարզություն չնտրեց, քանի որ Անկարայի տնօրենները ոչ մի նտադրություն չունեին հարգելու հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

«...Իսկ մենք որոշեցինք, - հայտարարում էր Մուստաֆա Քեմալը, - որ Կարսի, Սարիղամիշի, Օլթիի և Արդահանի վրա հարձակվելը ևս հարցի լուծում է՝ դիվանագիտական ճանապարհով: Այդպես էլ մենք վարվեցինք, չնայած այն բանին, որ Մոսկվայից արդեն մեկնել էր սովետական միսիա՝ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանային հարցերի որոշման գործում միջնորդելու համար, բայց պատվիրակությունն արդեն ուշացել էր»²:

Սովետների 8-րդ համագումարին Ռ-ՍՖՍՀ արտաքին գործերի ժողովը-

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության... էջ 449:

² «Կոմունիստ» (Բաքու), հ. 143, 1920:

ղական կոմիսարիատի 1919-1920 թթ. տարեկան հաշվետվության մեջ ասված էր, որ տակավին 1920 թ. մայիսին-հունիսին թուրքական կառավարությունն արդեն հայտարարել էր զորակոչ արևելյան ռազմաճակատում, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստրատեգիական կետեր գրավելու համար, բայց ընկ. Չիչերինի նամակը (խոսքը 1920 թ. հունիսի 3-ի Թուրքիայի Ազգային մեծ ժողովին հղված նամակի մասին է) ստանալուց հետո հետաձգվել է այդ ծրագրի իրականացումը¹: Կարելի է բազմաթիվ այլ վկայություններ և փաստեր բերել, որոնք ցույց են տալիս սովետական կառավարության մտահոգությունը հայ ժողովրդի ապահովության, անվտանգության նկատմամբ, թուրքական հարձակողական, տարածողական քաղաքականությունից նրան գերծ պահելու հարցում:

Տեղին ենք կամարում մեջբերել արտգործընդունատի տարեկան հաշվետվության մեր կարծիքով կարևոր մի հատված՝ չվերաշարադրելու համար նրա բովանդակությունը. «Մոսկվա ժամանած պատվիրակությունը կազմված էր Բեքիր Սամիից և դեպուտատ Յուսուֆ Քեմալից, ընդ որում նրանց հետ միասին ժամանել էր թուրք կոմունիստ դ-ր Ֆուադ Սարիքը: Այդ առաջին մոսկովյան կոնֆերանսը մշակեց ռուս-թուրքական պայմանագրի հիմունքները, ընդ որում թուրքական պատվիրակությունը, աշնանը վերադառնալով Անկարա, իր հետ վերցրեց նախագիծ՝ իր կառավարությանը զեկուցելու համար: Այն ժամանակ լիակատար համաձայնության հասնելու համար գլխավոր դժվարությունը Արևելյան Թուրքիայի սահմանների որոշումն էր: Բանակցություններ վարելով, մեկ կողմից, թուրքական պատվիրակության և, մյուս կողմից, հայկական դաշնակցական կառավարության պատվիրակության հետ, որը գլխավորում էր բանաստեղծ Լևոն Շանթը (մայիս-հուլիս), սովետական կառավարությունը իրերի բերումով ստիպված էր միջոցներ որոնել՝ երկու կառավարությունների տերիտորիալ պահանջախնդրությունները համաձայնեցնելու համար: Այդ խնդիրը ըստ էության անիրագործելի էր: Այն ժամանակ դաշնակցական կառավարությունն արդեն հրաժարվել էր Անտանտի կողմից առաջ քաշվող Մեծ Հայաստանի պլանից, ըստ որի Հայաստանն ընդգրկելու էր Փոքր Ասիայի կեսը և պետք է դեպի ծով ելք ստանար բուն Սիրիայի մոտ: Մակայն դաշնակցական կառավարության տերիտորիալ պահանջախնդրությունները դեռևս բավականին զգալի էին. ընդգրկում էին Էրզրումը, Լազիստանը՝ Տրապիզոնով հանդերձ, և մի քանի թուրքական վիլայեթներ: Դեռևս Խալիլ-փաշայի հետ բանակցություններ վարելիս սովետական կառավարություն առաջ էր քաշում ազգագրական սահմանագծի սկզբունքը, սահմանագիծ, որը հիմնված էր լինելու մինչև մեծ պատերազմը գոյություն ունեցող ազգային փոխարարությունների վրա, և առաջարկում էր կատարել փոխադարձ վերաբնակեցում՝ երկու կողմերում համատարբ ազգագրական տերիտորիա ստեղծելու համար: Սկզբունքորեն այդ բանն ընդունում էր նաև դաշ-

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 480:

նակցականների պատվիրակությունը, բայց երբ փորձ արվեց կոնկրետացնել այդ սկզբունքը, պարզվեց, որ դաշնակցականների պահանջախնդրությունները դեռևս անշարժ մեծ են, որ անհնար է նրանց հետ Հայաստանի սահմանների հարցը լուծել ընդունելի կերպով: Առն Շանքի պատվիրակությունը մեկնեց, չհասնելով արդյունքի: Բերիլ Սամիի պատվիրակության հետ բանակցելիս սովետական կառավարությունը առաջ էր քաշում հին բուրքական սահմանագծի ռեկտիֆիկացիայի (ուղղորդման) մի այնպիսի սկզբունք, որի դեպքում մուսուլմանական գերակշիռ բնակչությամբ հողերը, մեկ կողմից, կանցնեին Թուրքիային, իսկ այն հողերը, որտեղ մինչև 1914 թ. եղել է հայկական մեծամասնություն, կանցնեին Հայաստանին: Բայց տվյալ դեպքում ևս հաջողություն չունեցան ազգագրական խնդրին կոմպրոմիսային լուծում տալու փորձերը: Ավելին, ինքը՝ Բերիլ Սամին, որն իր հայացքներով խիստ տարբերվում էր նորոգ Թուրքիայի նոր կառավարող խավից և պատկանում է, հին բուրքական իշխող վերնախավին, դրանից հետո բուրքական սահմանագիծը շտկելու մասին ընկ. Չիլեբիհի հետ ունեցած իր գեկույցներն օգտագործեց այն բանի համար, որպեսզի Անգորա վերադառնալուն պես փորձի ազգային Թուրքիային ստորել Սովետական Ռուսաստանի դեմ:

Այն ժամանակ, երբ Մոսկվայում սկսեց պարզ դառնալ կոմպրոմիսային ազգագրական սահմանագիծ հաստատելու փորձերի անհուսալիությունը, բուրքական կառավարությունը որոշեց սրով կարել գորոյան հանգույցը¹:

Իսկ Մ.Ջեմալի և նրա համախոհների համար դաշնակցական կառավարության բռնած դիրքը իսկական գյուտ էր, համապատասխանում էր իրենց ծրագրերին: Նրանք գիտեին, որ Անտանոլ գործնական ոչինչ չի անի Հայաստանը իրենց մագիլներից ազատելու համար, իսկ դաշնակ ղեկավարները չէին լսում Մոսկվայի խորհուրդները: Ջեմալը շտապում էր, նա գիտեր, որ հայբուրքական բանակցությունները որոշված էր շարունակել տեղում՝ Անդրկովկասում, և սովետական միջնորդ պատվիրակությունն արդեն մեկնել էր Մոսկվայից, և ժամ առաջ որոշեց նենգությամբ իրագործել իր պլանը: 1920 թ. սեպտեմբերի 23-ին բուրքական բանակը անցավ հարձակման: Դաշնակցական «քաղաքագետները» լավատեսորեն կարծում էին, որ Անգլիան, Ֆրանսիան, «Գաղարկագետները» լավատեսորեն կարծում էին, որ Անգլիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, Իտալիան անմիջապես ասպարեզ էին իջնելու իրենց կողմում՝ հարվածելու Թուրքիային հանուն Սևրի պայմանագրի իրագործման: Ջուր հույսեր:

Սեպտեմբերի 25-ին Ավետիս Ահարոնյանը դիմեց Ազգերի լիգայի խորհրդին Հայաստանի Հանրապետությանը Լիգայի անդամ ընդունելու, Սևրի դաշնագիրը հարգելու նպատակով Թուրքիայի նկատմամբ սանկցիաներ կիրառելու խնդրանքով: Եվ ի՞նչ պատասխան: Ազգերի լիգայի խորհուրդը անտարբերությամբ արձանագրում էր, թե Սևրի պայմանագիրը տակավին ուժի մեջ չէ, իսկ Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարություններն Ազ-

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 480-482:

գերի լիզայի իրենց ներկայացուցիչներին հեռագրում էին քվե չտալ Հայաստանին՝ այդ կազմակերպության անդամ դառնալու համար: Քվեարկությանը մասնակցած 29 պետությունների ներկայացուցիչներից 21-ը դեմ արտահայտվեցին Հայաստանը Լիզայի մեջ ընդունելուն, և միայն 8-ը (Կանադա, Պերու, Պորտուգալիա, Ռումինիա, Սալվադոր, Շվեյցարիա, Ուրուգվայ, Վենեսուելա) կողմ քվեարկեցին:

Հայ-թուրքական պատերազմն ընթանում էր հայ ժողովրդին նորանոր աղետներ պատճառելով: Դաշնակցական բանակը մեկը մյուսի հետևից բողեց Կարսը, Ալեքսանդրապոլը: Թուրքական սուրը սպառնում էր կոտորել, ոչնչացնել մնացյալը, եթե Հայաստանում չհատրանակեր տվետական իշխանությունը, եթե կարմիր բանակը օգնության չհասներ մեր բազմաշարշար ժողովրդին:

Այդ օրերին դաշնակցական կառավարության եվրոպական «դաշնակիցները» դիտորդների դերում էին:

Թուրքերն ամեն ինչ անում էին Սերի պայմանագիրը տապալելու համար: Նրանք ճկունորեն խաղում էին միջիմպերիալիստական հակասությունների վրա, մերձեցել էին Ֆրանսիային, հաջողությամբ առաջ էին մղում պատերազմը Հայաստանի դեմ: 1920 թ. դեկտեմբերին Ֆրանսիայի պրեմիեր մինիստր Լեյզը հրապարակավ արտահայտվեց Սերի պայմանագրի միջոցով Թուրքիայի հետ խաղաղություն հաստատելու ամենարինության մասին:

Վիլսոնը, մոռացության տալով իր խոստումները, Մերձավոր Արևելքում գերագույն կոմիսար կարգված ծովակալ Բրիստոլին¹ հրահանգում էր պայքարի դրոշ պարզած Քեմալ-փաշային հավաստիացնել, որ Ամերիկան երաշխավորում է Թուրքիայի սահմանների անձեռնմխելիությունը, բացի արաբաբնակ հողերից²:

1920 թ. հուլիսին նույն Բրիստոլը Կ.Պոլսում Ա.Խատիսյանին խորհուրդ էր տալիս Վիլսոնի խոստումների նկատմամբ «պատրաստվել» չտասնել, չափավորել պահանջները՝ դրանք հասցնելով նվազագույնի, «մերձեցման ուղիներ» փնտրել թուրքերի հետ, այլապես հայերին «վսպասի ծանր ապագա»: 1920 թ. հոկտեմբերի սկզբին, երբ Խատիսյանը Հայաստանի վրա քեմալական Թուրքիայի հարձակման առիթով Կ.Պոլսում նորից այցելում է Բրիստոլին, խնդրում նրան միջնորդի դեր ստանձնել Հայաստանի և Թուրքիայի միջև, վերջինս բավարարվում էր ամառվա իր ասածը հիշեցնելով, ավելացնելով միայն թե «հիմա արդեն ուշ է»:

Միջազգային բարդ իրադրության պայմաններում հայ ժողովրդի շահերի պաշտպանությամբ հանդես էր գալիս միայն Մովսեսական Ռուսաստանի կառավարությունը: Չկա արևմտյան դիվանագիտության պաշտոնական և ոչ

¹ Մարկ Լամբերտ Բրիստոլ (1868-1939) - ԱՄՆ ծովակալ, 1919-1927 թթ.՝ ԱՄՆ գերագույն կոմիսար Թուրքիայում, 1930-1932 թթ.՝ ռազմածովային ուժերի հրամանատար - Ա.Կ.:

² Кемаль М. Путь новой Турции, М, 1929, т. 3, с. 395.

մի նուտա, ոչ մի հայտարարություն, որը դատապարտեր, սպառնար թուրքական կողմին՝ դադարեցնելու հայաստան քաղաքականությունը Կիլիկիայում, թե Արևելյան Հայաստանում:

Ոչ մի գործնական օգնություն չստանալով Անտանտի տերություններից՝ դաշնակ կառավարողները ուշացած էին գլխի ընկնելու, որ «Եվրոպան կամ չի ուզում, կամ չի կարող մեզ օգնել, և մենք պետք է մեր գլխի ճարը տեսնենք»¹:

Հայաստանի դեմ 1920 թ. գարնանից սկսված քեմալական Թուրքիայի անգիջում, մարտաշունչ կեցվածքը պայմանավորված էր հենց անգլո-ֆրանսիական դիվանագիտության խորամանկ խաղերով: Կերջին հաշվով հակասովետական ինտերվենցիայի կազմակերպիչների համար միևնույն էր, թե Սովետական Ռուսաստանի դեմ՝ Հայաստան²ը, թե՞ Թուրքիան ավելի շատ անախորժ պրոբլեմներ կհարուցի: Հայ-թուրքական բախման ժամանակ Սովետական Ռուսաստանի հայանպաստ ժողովրդապաշտպան դիրքորոշումը, նրանց կարծիքով, պետք է հասցնեի սովետա-թուրքական կոնֆլիկտի Անդրկովկասում: Սա էր գլխավոր նպատակը: Արևմուտքի քաղաքականության հեղինակներն ավելի ընդհուպ զբաղվեցին խնդիրը սրելով, երբ Հայաստանը մխրճվեց պատերազմի հորձանուտը, և Անտանտի քաղաքագետների տեսակետով շատ ավելի ռեալ դարձավ սովետա-թուրքական բախումը: Մեկ ձեռքով՝ երկու ձեռքով: Թուրքիան կռվում էր երկու ճակատում. Արևմուտքում թուլանում էր հօգուտ Անտանտի, Արևելքում դժվարություններ էր հարուցում, բախվում Սովետական Ռուսաստանի հետ՝ նորից հօգուտ Անտանտի: Սա նրանց սխեման: Իսկ հայ ժողովուրդը, կհարցնի նոր սերունդը: Նա միայն արժանանում էր Արևմուտքի ֆիլանտրոպների պլատոնական սիրուն, իսկ գործնականում լոկ արհամարհանքի:

Մուստաֆա Քեմալն ինքն է խոստովանել, որ հայ-թուրքական պատերազմում նախահարձակը Թուրքիան էր: Հիշեցնելով նախորդ ամիսների անցուդարձը՝ 1920 թ. նոյեմբերին նա Ազգային մեծ ժողովում հայտարարում էր, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի համաձայն՝ իրենք պետք է գրավեին Կարսը և մյուս շրջանները, որ դեռ հուլիսին որոշել են ռազմական գործողություններ սկսել Հայաստանի դեմ: Այնուամենայնիվ թուրքական կողմը փորձում է շոշափել Մոսկվայի դիրքը, ճնշում գործադրել նրա վրա, պատվիրակություն է ուղարկում Մոսկվա: Սա նույնպես ավարտվում է Սովետական Ռուսաստանի վճռական պահանջով՝ Հայաստանի հետ վիճելի խնդիրները լուծել միայն դիվանագիտական միջոցներով, բանակցություններ սկսելով, հիմքում դնելով մինչ այդ մշակված նախագիծը և ապահովելով Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչների մասնակցությունը:

Սովետական Ռուսաստանի կառավարությունը համբերությամբ և հետևողականությամբ պաշտպանում էր հայ ժողովրդի կենսական շահերը, փորձում էր կանխել քեմալական Թուրքիայի ագրեսիան: Իսկ դաշնակցական

¹ Լեզրանի միսիան..., էջ 60:

կառավարությունը շարունակում էր իր անհեռատես և ժողովրդի համար կործանարար ընթացքը՝ հայացքը հատած դեպի Անտանոյը, խաղալիք դարձած անգլո-ֆրանս-ամերիկյան դիվանագետների սուտ խոստումներին, ինչը և հասցրեց նոր աղետի: Հայ ժողովուրդը նորից դարձավ բյուրքական ավանդական հակահայկական քաղաքականության գոհը:

* * *

1920 թ. սեպտեմբերի 14-ին Մուստաֆա Քեմալը գրում էր Ալի Ֆուադ Ջեբեսոյին¹. «Հայերի հետ սկսել բարենպաստ պատերազմ այն հաշվով, որպեսզի Ադրբեջանը միացվի Թուրքիային»: Այս նամակը իր հուշերում մեջ է բերում Ջեբեսոյը: Անտանոյը, բյուրքերին հրահրելով Հայաստանի դեմ, Բաքուն գրավելուն, շատ լավ գիտեր, որ Մովսեսական Ռուսաստանը ամեն գնով պետք է պաշտպաներ Բաքուն: Արևելքում համաքուստական ծրագիրն իրականացնելու համար Քեմալը ձգտում էր օգտվել Անտանոյի օժանդակությունից, իսկ Արևմտյան Անատոլիան հույներին, նույն Անտանոյի ուժերից ազատագրելու համար, փորձում էր օգտվել Մովսեսական Ռուսաստանի օգնությունից: Թուրքական ավանդական խորամանկ դիվանագիտությունը գործի էր կոչված:

1920 թ. հոկտեմբերի 9-ին Վ.Լ.Ենիինը նշում էր. «Լերջերս բյուրքերն սկսեցին հարձակումը Հայաստանի վրա՝ նպատակ ունենալով զավթել Բաքունը, իսկ հետո, գուցե նաև Բաքունը»²:

Այսպիսով, Վ.Լ.Ենիինը գտնում էր, որ քեմալական Թուրքիան էր հարձակվել, որ նա ուզում էր գրավել Բաքունը և Բաքուն: Իսկ այս նպատակով նա չէր կարող զենք տալ քեմալական կառավարությանը: Իրապես 1920 թ. օգոստոսի 24-ի մասնավոր համաձայնությամբ ՌՍՖՍՀ կառավարությունը ռազմական օգնություն էր ցույց տալու Անատոլիայի արևմուտքում Անտանոյի ինտերվենցիայի, հունական քանակի հարձակման դեմ կռվելու նպատակով, սակայն զենքի առաջին քանակությունը նոր էր տեղ հասել, երբ Թուրքիան հարձակվեց Հայաստանի վրա: Այդ պահից սկսած՝ մատակարարումը դադարեցվեց, և այն շարունակելը սովետական կառավարության կողմից պայմանավորվում էր Հայաստանի դեմ թշնամական գործողությունները դադարեցնելով, սովետական միջնորդությունը ընդունելով: Դաշնակցական պրոպագանդան, մասնույժ աղմուկ հանեցին, թե իբր Հայաստանը գործ ուներ սովետա-բյուրքական միացյալ ճակատի հետ, և դրանով իսկ քայքայեցին բանակը, հարվածե-

¹ Ալի Ֆուադ Ջեբեսոյ (1883-1968) – բյուրք պետական, ռազմական գործիչ, դիվանագետ, քեմալական շարժման մասնակից, 1919-ից՝ Թուրքիայի ազգային ուժերի գլխավոր հրամանատար, Ազգային մեծ ժողովի պատգամալոր, Արևմտյան ռազմաճակատի հրամանատար, 1920-ից՝ Խորհրդային Ռուսաստանում Թուրքիայի դեսպան, «Մոսկովյան հիշողություններ. 1920-1925» գրքի հեղինակ - Ա.Կ.:

² Ленин В.И. ПСС, т. 41, с. 339-340.

ցին նրա մարտունակությանը: Սա տրամաբանական էր, որովհետև հայ ժողովրդի գավակները Սովետական Ռուսաստանի մեջ տեսնում էին իրենց փրկարարին: Եթե դաշնակցական կառավարությունը Անտանտից օգնություն ակնկալելով փորձում էր հակասովետական աղմուկ բարձրացնել, դրանով իսկ իրենից վանում էր ժողովրդի պաշտպանությունը, որի համակրանքն ամբողջապես Սովետական Ռուսաստանի կողմն էր: «Չխոսողիվամ այդ ազիտացիան ճակատագրական դեր կատարեց հայ-թուրքական սկսված պատերազմի ընթացքում դաշնակցականների կրած պարտության մեջ, բշմամուն դիմադրելու նպատակով հայ ժողովրդին պայքարի կոչող կուսակցությունը դրանով բայքայում էր սեփական բանակը և թուլացնում նրա դիմադրական կարողությունը: Մեծ չափով դա էլ հենց պատճառ դարձավ հայ-թուրքական պատերազմում Կարսի և Ալեքսանդրապոլի անկմանը», - գրել է դեպքերի ականատես Աշոտ Հովհաննիսյանը¹:

1920 թ. հոկտեմբերի 5-ին Օրջոնիկիձեն հեռագրում էր Լենինին և Չիչերինին, որտեղ, նշելով թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Հայաստանի տարածքը, անհրաժեշտ էր համարում առաջարկել Հայաստանի կառավարությանը թույլատրել կարմիր բանակի մուտքը Հայաստան՝ թուրքական բանակի առաջն առնելու համար: Դաշնակները մերժում են այս առաջարկությունը:

1920 թ. հոկտեմբերի 14-ին քաղաքային, Լենինը հավանություն տվեցին Չիչերինի առաջարկներին՝ 1/ Հայաստանում սովետական իշխանություն - հաստատելու համար վճռական գործողությունների դիմելու, 2/ թուրքերի հետագա առաջխաղացումը կանգնեցնելու և 3/ Հայաստանի նոր, սովետական կառավարությանը պաշտպանելու մասին²:

1920 թ. հոկտեմբերի 28-ին ՌՍՖՍՀ-ի և Հայաստանի Հանրապետության հաշտության պատվիրակությունների միջև եզրագլխակիչ որոշում կայացվեց, ըստ որի ՌՍՖՍՀ-ի և Ադրբեջանի ՍՍՀ կառավարությունները ճանաչում էին «վիճարկելի մարզերի - Նախիջևանի և Զանգեզուրի գավառների տերիտորիաների նկատմամբ Հայաստանի Հանրապետության անասան իրավունքը»: ՌՍՖՍՀ-ը, ուշադրության առնելով Հայաստանի աշխատավոր ժողովրդի աղետալի դրությունը, որպես անվերադարձ փոխատվություն տալիս էր ուկրով երկու և կես միլիոն ռուբլի: Այնուհետև փաստաթղթում նշված էր, որ «Հայաստանի Հանրապետությունը, ելնելով թուրքական Հայաստանի մարզերում վիճարկելի տերիտորիալ հարցերը թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության հետ բարեկամաբար լուծելու դիտավորություններից, պատրաստ է այդ հարցերի լուծման գործում ընդունել ՌՍՖՍՀ-ի կառավարության օժանդակությունն այն բանից հետո, երբ՝

¹ «Լենինյան ուղիով» (Ե.), 1970, հ. 11, էջ 39:

² Ленин В.И. ПСС, т. 41, с. 717.

1/ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունն իր գործերը հեն կրաչի մինչև 1914 թ. ռուս-թուրքական մականյին սահմանագիծը,

2/ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը կիրառարվի Բրեստ-Լիտովսկի պայմանագրից և Բարումի կոնվենցիայից,

3/ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունն անվերապահորեն ճանաչում է Հայաստանի Հանրապետության անկախությունն այն սահմաններում, որոնք որոշված են Ռ-ՍՖՍՀ-ի և Հայաստանի Հանրապետության միջև կնքված հաշտության պայմանագրով»¹:

Վերոհիշյալ արձանագրության ստորագրման պահին քեմալական կառավար գործերը Հայաստանի Հանրապետության դեմ հարձակման էին անցել ամբողջ ճակատով: Հոկտեմբերի 30-ին ընկավ Կարսը: Ընդունված որոշման մեջ այնպիսի պայմաններ էին առաջ քաշվել, որոնց ապահովումը անհնարին էր իրականացնել կարճ ժամկետում:

Փաստերը վկայում են, որ դաշնակ կամավոր վարիչների կողմից այս համաձայնագրի կնքումը թելադրված էր Անգլիայի ներկայացուցիչ Ստորսի ներշնչմամբ: Լոնդոնի կարծիքով մեծան պայմաններն անխուսափելիորեն հասցնելու էին սովետա-թուրքական բախման: Պատահական չէր, որ Վ.Լենինը (1920 թ. նոյեմբերի 21-ին) անհանգստանում էր. «Հնարավոր է, որ հանգամանքներն ուղղակի մեր վզին պատերազմ փաթաթեն կամ անուղղակի կերպով հասցնեն դրան»:² Սովետական կառավարությունը փորձում էր ակտիվ միջամտությամբ փակել հանգույցը:

Նոյեմբերի 23-ին Անդրկովկաս ուղարկված Ստալինը վերադարձավ Մոսկվա և նոյեմբերի 27-ին Կենտկոմի քաղաքային լսեց նրա զեկուցումը Կովկասի դրության մասին: Քաղաքային որոշման մեջ, որի մասնագիծը կազմել էր Վ.Լենինը, ասված էր. «Վրաստանի, Հայաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի նկատմամբ վարել մարսիմալ հաշտվողական քաղաքականություն, այսինքն՝ ամենից ավելի նպատակաուղղված այն բանին, որպեսզի խուսափել պատերազմից»³:

1920 թ. նոյեմբերի 11-ին Ալեքսանդրապոլը թուրքական զորքերի գրավումից հետո (նոյեմբերի 7-ին) Ռ-ՍՖՍՀ կառավարությունը նոտա հղեց Թուրքիայի և Հայաստանի կառավարություններին՝ իր պատրաստակամությունը հայտնելով միջնորդի դեր ստանձնելու թուրք-հայկական պատերազմը դադարեցնելու մասին: Բայց ինչպես թուրքական, այնպես էլ դաշնակցական ղեկավար շրջանները իմպերիալիստների թելադրանքով առանձին բանակցություններ սկսեցին Ալեքսանդրապոլում, որն ավարտվեց դեկտեմբերի 2-ի խայտառակ պայմանագրի ստորագրումով: Իրավական տեսակետից այդ պայմանագիրը ոչ մի ուժ չպետք է ունենար, քանի որ 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանը հռչակվել էր սովետական և ուներ իր կառավարությունը: Բայց դաշ-

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտություն... էջ 457-458:

² Լենին Վ.Ի. Երկեր, հ. 31, էջ 520:

³ Ленин В.И. ПСС, т. 42, с. 47.

նակների այս նոր դավաճանությունը չափազանց ծանր նստեց մեր ժողովրդի վրա:

Անգլիան խորհուրդ էր տվել գերադասել պայմանագիր կնքել Թուրքիայի, քան Սովետական Ռուսաստանի հետ:

Պատահական չէր նաև, որ 1920 թ. նոյեմբերին Դաշնակցություն կուսակցությունը մամուլի իր օրգաններում սկսեց թմրկահարել թուրքական կողմնորոշման «փրկարար» դերը հայ ժողովրդի համար: «Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական ազատության իրական պաշտպանն էր» հռչակվում Տաճկաստանը:

Այդ ժամանակ իմպերիալիստական ագրեսիվ շրջաններում հասունանում էր այն մտայնությունը, որ պետք է ճանաչել Քեմալին, նրան զիջումներ անել, և նա կարմիրներին դուրս կքշի Բաքվից:

Վ.Լենինը հոկտեմբերի 29-ին գրում էր Ստալինին (որն այն ժամանակ ուղարկված էր Կուվկաս), որ անկասկած Վրաստանը Բաքումը կհանձնի Անտանտին, իսկ Անտանտը կհարձակվի Բաքվի վրա: Նա գրում էր, որ «...Թուրքական հարձակումն ուղղված էր մեր դեմ: Անտանտը մեզ համար փոս էր փորում, և ինքն ընկավ նրա մեջ, որովհետև մենք ստացանք Սովետական Հաստանը:

Թուրքիայում իշխանության գլուխ կանգնած են կադետները, օկտյաբրիստները, որոնք պատրաստ են մեզ ծախել Անտանտին»¹:

1920 թ. նոյեմբերի 29-ին Ստալինը Մոսկվայից Բաքու՝ Օրջոնիկիձեին հղած հեռագիր-իրահանգում կարմիր բանակի զորամասերը Հայաստան մտցնելու մասին գրում էր. «Շտապել պետք չէ, հարկավոր է համալրման սպասել: ...Ամենայն հավանականությամբ թուրքերը Հայաստանում գործում են Անտանտի գիտությամբ, դրա համար էլ նրանց չի կարելի վստահել»²: Դեկտեմբերի 3-ին Ստալինը նորից Օրջոնիկիձեին հեռագրում էր գորքը գոշոշրեն մտցնելու, պատերազմի ափի շտաբու, Հայաստանին նյութական օգնություն ցույց տալու մասին:

Սյ շարք ուսումնասիրողների կարծիքով այդ դանդաղկոտությունը ճակատագրական դեր խաղաց Ալեքսանդրապոլում դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը թուրք-հայկական պայմանագրի կնքման գործում, մի պայմանագիր, որով Հայաստանի տարածքը կազմելու էր 13 հազար ք.կմ (Երևանի և Սևանի շրջանները), և Հայաստանի վրա ըստ էության հաստատվում էր թուրքական պրոտեկտորատ: Հայաստանի բանակն ունենալու էր 1500 զինվոր, 24 գնդացի և 8 թնդանոթ:

Հայաստանի տարածքի զգալի մասը (Կարսի մարզը, Մուրմալուի գավառը, Իգդիրը, Ալեքսանդրապոլը), այդ թվում Թիֆլիս-Երևան երկաթուղու մեկ

¹ Նոյն տեղում, էջ 125:

² Хармагдарян С.В. Ук. соч, с. 49.

երրորդից ավելին օկուպացրին քեմալական զորքերը¹:

Մենշևիկյան Վրաստանն էլ իր հերթին, չբավարարվելով Լուվա չեզոք գոտիով, որ թուրքական հարձակման հետ կապված, դաշնակցական կառավարության գիտությանը մտցրել էր իր զորքերը, Հայաստանում տվետական իշխանություն հաստատվելուց հետո զավթեց Ջալալօղլին (Ստեփանավան), Լորուտը, Աբքանը (ընդամենը 12 գյուղ), Շահալին (ռազմաստրատեգիական խոշոր կամրջով): Մենշևիկների ձեռքն անցավ Հայաստանի հյուսիսային երկարագիծը՝ 65 կմ երկարությամբ: Չանգեզուրը դեռ գտնվում էր դաշնակցների ձեռքին, որը շուտով վերածվեց հակասովետական խռովության կենտրոնի:

1920 թ. դեկտեմբերի 3-ին Չիչերինը Թուրքիայում ՌՍՖՍՀ ներկայացուցիչ Միլիվանու համար դիրեկտիվ-հրահանգի հարցով դիմեց քաղաքությունին: Միլիվանուն համձեռնարարվում էր սանձահարել քեմալական Թուրքիային և չափավորել նրա պահանջները Հայաստանի նկատմամբ, կանխել նրա հարձակումը մենշևիկյան Վրաստանի վրա: Կարելի էր նորից բուրքերին օգնություն խոստանալ, եթե նրանք հեռանային Հայաստանից: Չիչերինը դնում էր նաև Կարսի հարցը՝ շեշտելով նրա ստրատեգիական նշանակությունը, նշելով, որ Թուրքիայի հետագա կողմնորոշումը կարող է մեծ հարցականի տակ լինել:

Նա գտնում էր, որ թուրքերի հետ այնպիսի պայմանագիր պետք է կնքվի, որ նա չխանգարի ՌՍՖՍՀ-ի և Անգլիայի միջև համաձայնություն կնքելուն, որ պետք է երաշխավորվի Հայաստանի անկախությունը, որ պետք է ձգտել ապահովել անկախություն Թուրքահայաստանի մի մասի համար, բայց ոչ ուխտամատուցով, որպեսզի դա չխանգարի թուրքերի հետ բարեկամական հարաբերություններին: Իսկ վերջապես պահանջվում էր, որ ՌՍՖՍՀ-ը մասնակցեր հայ-թուրքական սահմանները որոշող խառը հանձնաժողովին²:

Այս փաստերը վկայությունն էին այն ճշմարտության, թե միջազգային ամենաբարդ իրադրության պայմաններում Լենինն ինչպիսի ուշադրությամբ էր հետևում հայ ժողովրդի իրավունքները պաշտպանելու գործին՝ կանխելու համար քեմալական Թուրքիայի հետտղական հակահայկական հետագա չարագործությունները:

1920 թ. դեկտեմբերի 13-ին Կրեմլում Վ.Լենինը Սահակ Տեր-Գաբրիելյանին և Ասբանազ Մռավյանին³ հավաստիացնում էր, որ Հայաստանի և Թուրքիայի միջև վիճելի հարցերը «կլուծենք»: Թեև Ռուսաստանը դժվարին դրության մեջ է, ասում էր նա, բայց Սովետական Հայաստանին «ամեն կերպ

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 683-687:

² Хармагларян С.В. Ук. соч. с. 51.

³ Ասբանազ Մռավյան (1885-1929) – ավետական և կուսակցական գործիչ, հրապարակախոս, ՌՍԴԲԿ անդամ, խմբագրել է «Բանվորի կոլով» և «Բանվոր» (Թ.) պերիոդը, 1919-1920 թթ.՝ ՌԿ(Բ)Կ Հայաստանի կոմիտեի (Արմենկոմ) անդամ, Հայաստանի հեղկոմի անդամ, 1921-1923 թթ.՝ Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողկոմ, ստորագրել է Կարսի պայմանագիրը, 1923-1929 թթ.՝ ՀԽՍՀ լուսժողկոմ - Ա.Կ.:

կօզմենք»։ Վ.Լ.Ենիքը Մոսկվայում Վրաստանի մենչևիկյան կառավարության դիվանագիտական ներկայացուցիչ Գերասիմ Մախարաձեից պահանջում է վերացնել Հայաստանի շրջափակումը։ Ընդդիմ այդ միջամտության՝ 1920-1921 թթ. ծանր ծնունդը Հայաստանի աշխատավորությունը սովետական կառավարությունից ստացավ կենսամթերք, վառելիք և դեղորայք։

1920 թ. դեկտեմբերի 15-ի իր նոտայով Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը լիտիորեն հայտարարում էր Չիչերինին, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը «ոչ թե բռնի հաշտություն է, այլ հաշտություն, որը հիմնված է ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վրա, և մենք ցանկացել ենք աներսիայի ենթարկել սոսկ թուրքական բնակչություն ունեցող տերիտորիաները...»։

Այնուհետև նա նույն տոնով շարունակում էր. «Մեզ լուրեր են հասնում, որ Հայաստանում վարչակարգը փոխվելու հետևանքով (այսինքն՝ սովետական կարգեր հաստատվելու – Ջ.Կ.), մի բան, որը, ամենայն հավանականությամբ, կլինի ժամանակավոր (որովհետև փետրվարյան ավանտյուրան նաև քեմալականների ձեռքի գործն էր – Ջ.Կ.), դուք կցանկանաք վերանայել հիշյալ պայմանագիրը և Հայաստանին վերադարձնել թուրքական բնակչությամբ տերիտորիաները, որի համար այդ որոշումը կդառնա մոտ ապագայում բնաջնջվելու նախերգանք»¹։

Թուրքերի կողմից օկուպացված Ալեքսանդրապոլի և հայկական մյուս շրջաններում թուրքերի կատարած բռնությունների մասին Սովետական Հայաստանի արտգործնախարար Ա.Բեկզադյանի² 1921 թ. հունվարի 8-ի նոտային Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Բեքիր Սամին 1921 թ. փետրվարի 5-ին պատասխանեց մի վերամբարձ նոտայով հայերին մեղադրելով ամեն ինչի մեջ, իսկ Ալեքսանդրապոլի պայմանագրի մասին հայտարարեց, որ այն «մարմնավորում է իր մեջ ոչ թե բռնություն, այլ արդարություն, և որ նրա կատարումն անհրաժեշտ է Կովկասում կայուն խաղաղություն հաստատելու համար»³։

Այդպիսով, քեմալական Թուրքիան կապի մեջ էր դաշնակների հետ, բաժանում էր նրանց հակասովետական դիրքորոշումը, քանի որ դեկտեմբերի 13-ին արդեն մատնացույց էր անում նախապատրաստվող դավադրությունը։

1921 թ. հունվարի 12-ին Չիչերինը գրում էր Ստալինին, որ թուրքերը դաշնակների հետ բանակցություններ են վարում և կարող են նորից իշխանության գլուխ անցնել։ Հիրավի, 1920 թ. աշնանից Անտանտի շրջանները, ինչպես նաև թուրքական գործակալները որոշակի աշխատանք էին տանում Թուրքիայի պրոտեկտորատի տակ կովկասյան հանրապետությունների բուր-

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 476:

² Ալեքսանդր Բեկզադյան (1879-1939) – կուսակցական և պետական գործիչ, ՌՍԴԲԿ անդամ, Հայաստանի հեղկոմի անդամ, Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի առաջին ժողկոմ – Ա.Կ.:

³ Նույն տեղում, էջ 489:

ժուական ֆեդերացիա կազմելու օգտին: 1920 թ. դեկտեմբերին Թիֆլիսում Մուստաֆա Քեմալի զինակից, դիվանագետ Բեքիր Սամի-բեյը, շփման մեջ մտնելով դաշնակ գործիչների հետ, շողորորբում էր, թե նոր Թուրքիան ուզում է շտկել հայերի նկատմամբ նախկին սխալները, «մողուս վիվենդի» է փնտրում նրանց հետ, պատրաստ է իբր Հայաստանին զիջելու Կարսը, Վանը, Ալաշկերտը, միայն թե նա միավորվի մնացյալ Կովկասի հետ՝ անկախ Ռուսաստանից: Սա պատահական չէր: Նույն ժամանակ Քերզոնը, Լլոյդ Ջորջը քեմալական Թուրքիայի մասնակցությամբ կոնֆերանս էին հրավիրում Լոնդոնում՝ օգտագործելու համար Ալեքսանդրապոլի և հայկական մյուս հողերի համար հատուցացող սովետա-թուրքական կոնֆլիկտը և կանխելու հարաբերությունների նորմալացումը Սովետական Ռուսաստանի, մի կողմից, և Թուրքիայի միջև, մյուս կողմից: Ավելի ուշ Լլոյդ Ջորջը նույն Բեքիր Սամիին առաջարկում էր թուրքական զինված ուժերը շուտ տալ Սովետական Ռուսաստանի դեմ, զավթել Անդրկովկասը, Բաքուն: Իսկ քեմալական դիվանագետը համաձայնվում էր դրան¹: Քեմալական Թուրքիան մերժեց սովետական կառավարության առաջարկությունը միջնորդի դեր ստանձնելու թուրք-հայկական հարաբերությունների կարգավորման հարցում: Չիչերինը 1921 թ. հունվարի 13-ին թուրքական արտաքին գործերի մինիստրի պաշտոնակատար Ամեդո Մուխթարին գրում էր այդ առթիվ ապրամ «խոր հիասթափության զգացումի մասին»²:

1921 թ. փետրվարի 23-ին Թուրքիան, օգտվելով Վրաստանի և Ռ-ՄԲՄՀ-ի միջև դիվանագիտական հարաբերությունների խզումից, վերջնագիր հղեց Վրաստանին Բաթումի մարզը, Արդվինի և Արդահանի օկրուգները ազատելու մասին: Մենչևիկները, գաղտնի գործարքի մեջ մտնելով թուրքերի հետ, նրանց հանձնեցին նաև Ախալքալաքը և Ախալցխան: Մարտի 11-ին թուրքական զորքերը մտան Բաթում, և Բաթումի մարզը մարտի 17-ին հռչակվեց Թուրքիայի բաղկացուցիչ մաս:

Մոսկվայում թուրքական պատվիրակությունը ձգձգում էր սովետա-թուրքական կոնֆերանսի բացումը (այն բացվեց 1921 թ. փետրվարի 26-ին և ավարտվեց մարտի 16-ին), մինչև թուրքական զորքերը գրավեցին այդ տարածքները:

Երբ 1921 թ. մարտի 2-ին Գ.Չիչերինը բողոքում էր Մոսկվայում քեմալական Թուրքիայի դեսպանին թուրքական զորքերի կողմից Արդահանի և Արդվինի գրավման դեմ, ապա վերջինս պատասխանում էր, որ «դա պետք է պարզապես դիտել որպես երեք սահմանամերձ սանջակների վերաբերյալ մեր Ազգային ուխտի խիստ քնական հետևանքը» և այնուհետև լկտի ցինիկությամբ ավելացնում, թե «այս օլուպացիան ձեռք է բերում մենչևիկյան կառավարության դեմ և իրենց ազատագրման համար պայքարող վրաց բանվորներից թուր-

¹ Рубинштейн Н.Л. Ближний и Средний Восток после Первой мировой войны. Лозаннская конференция, М, 1952, с. 21.

² Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 484:

քական բանակի կողմից ցույց տրվող նյութական օգնության նշանակություն»¹:

Քննալական թուրքիան, օգտվելով Դաշնակցության փետրվարյան արկածախնդրությունից (1921 թ. փետրվար), առաջ տարավ իր հակահայկական քաղաքականությունը: Այն պահին, երբ Մոսկվա ժամանած Սովետական Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ա.Բեկզադյանը բանակցում էր արտագործողկոմ Չիչերինի հետ, նրա առանձնասենյակում, սովետա-թուրքական առաջիկա բանակցությունների ժամանակ Սովետական Հայաստանին վերաբերող խնդիրների շուրջ, ռադիոգիրք հաղորդեց Սիմոն Վրացյանի գլխավորած «փրկության կոմիտեի» ստեղծման մասին խայտառակ բորը: Թուրքական կողմը, պատճառաբանելով Դաշնակցության կողմից երևանում իշխանությունը վերականգնելու փաստը, այն հանգամանքը, որ վերջինիս հետ ունեն կնքված 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագիրը, պահանջեց, Սովետական Հայաստանի ներկայացուցիչը չմասնակցի այն կոմիտեանի աշխատանքին, որի օրակարգի զգալի մասը հենց Հայաստանին էր վերաբերում:

Սովետական Հայաստանի ներկայացուցիչները մասնակցություն չունեցան 1921 թ. մարտի 16-ի սովետա-թուրքական պայմանագրի կնքմանը: Թեև Մոսկվայի պայմանագրով Ալեքսանդրապոլի թալանչիական պայմանագիրը չեղյալ հայտարարվեց, բայց հայ-թուրքական պատերազմի ժամանակ Հայաստանի տարածքները (Կարս, Սուրմալու, Արդահան) մնացին Թուրքիայի կազմում: Արվաշայը դարձավ սահմանագիծ: Պայմանագրի մեջ հատուկ հոդված մտցվեց, ըստ որի Նախիջևանի մարզը պետք է ինքնավար տարածք կազմեր Ադրբեջանի խնամակալության ներքո²: Այս քայլը ցույց էր տալիս, որ Թուրքիան չէր հրաժարվել պանթուրքական ծրագրից: Մանավանդ հետագայում Թուրքիան հսկայական տարածք զիջեց Պարսկաստանին՝ դրա փոխարեն ստանալով Նախիջևանի հետ անմիջական սահման ունենալու հնարավորություն:

Մոսկվայի պայմանագրի կնքումից հետո էլ քննալական Թուրքիան շարունակում էր իր ագրեսիվ քաղաքականությունը Անդրկովկասի նկատմամբ: Միայն 1921 թ. ապրիլի 22-ին՝ Սովետական Ռուսաստանի և Սովետական Հայաստանի բազմիցս արած զգուշացումներից հետո, թուրքական զորքերը դուրս բերվեցին Ալեքսանդրապոլից:

Քննալական Թուրքիան շարունակում էր կառչել Ալեքսանդրապոլի պայմանագրից, որը չէր էլ ռատիֆիկացվել: Չիչերինը Կարաբեքիրի վարչազիծը համարում էր խուլիգանական (1921 թ. ապրիլի 8-ին), Թուրքիայի դեսպանի ուշադրությունն էր հրավիրում Ազգային մեծ ժողովի կառավարության ռազմական մինիստր Քեմալ Ֆեզլի-փաշայի այն հայտարարության վրա, որն

¹ Նույն տեղում, էջ 492-493:

² Նույն տեղում, էջ 501:

ասել էր, քե՛ս «Արևելյան ռազմաճակատի թուրքական բանակը, մնալով Կովկասում, պետք է այնտեղ կատարի հավասարակշռության տարրի դեր»։ Չիչերինը թուրքիայի և Սովետական Հայաստանի միջև պատերազմը համարում էր պատերազմ թուրքիայի և Սովետական Ռուսաստանի միջև¹։ Նույն օրը Չիչերինը Օրջոնիկիձե՛նիս հանձնարարում էր Կարաբեքիր-փաշայից պահանջել անհապաղ ազատել Ալեքսանդրապոլը։ Մուստաֆա Քեմալի կառավարությունը ձգձգում էր Մոսկվայի պայմանագրի ռատիֆիկացիան (այն վավերացվեց միայն 1921 թ. հուլիսի 31-ին)² լարված վիճակում պահելով սովետաթուրքական սահմանը։

1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում ՌՍՖՍՀ-ի մասնակցությամբ պայմանագիր կնքվեց, մի կողմից, ՀՍՍՀ, ԱՍՍՀ, ՎՍՍՀ և, մյուս կողմից, Թուրքիայի միջև։ Այս պայմանագիրը կրկնում էր Մոսկվայի պայմանագրի դրույքները։

* * *

Թուրքական նվաճողական քաղաքականության, Անտանտի դիվանագիտական խարդավանքների, հակասովետական գործողությունների հետևանքով հայ ժողովրդի տարածքային խնդիրները մնացին չլուծված։ 1914-1918 թթ. պատերազմի տարիներին երիտթուրքերի հայասպան գործելակերպի, 1920 թ. աշնանը և 1921 թ. գարնանը քեմալականների հակահայկական ջարդարարական գործողությունների հետևանքով հայ ժողովուրդը սպրեց իր դարավոր պատմության մեծագույն ողբերգությունը։ Պատերազմի տարիներին բնաջնջվեց և ցիրուցան արվեց մոտ 2 միլիոն մարդ, իսկ 1920 թ. աշնանը քեմալական Թուրքիան մեր ժողովրդից խլեց 200 հազար գոհ³։

Այսօր Սովետական Միության սահմաններից դուրս ապրող աշխատավոր սփյուռքահայության փաստը թուրքական մարտաշունչ, հակահայկական մացիոնալիստական գործելակերպի վկայությունն է։ Սփյուռքահայ աշխատավոր մարդկանց զանգվածները երազում են հայրենիք վերադառնալու, իրենց հայրենի Սովետական Հայաստանի հետ միավորվելու մասին։ Հայրենադարձության քաղաքականությունը, որ ՍՍՀՄ կառավարությունն իրականացնում է հանուն մեր ժողովրդի շահերի, տվել է իր դրական արդյունքները։

Սովետական իշխանությունը կործանումից փրկեց հայ ժողովրդին, նրան դուրս քերեց սոցիալիստական վերածննդի փրկարար ավիզ։ Ընդդիմ կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության անշեղ կիրառման, ռուս մեծ ժողովրդի մշտական օգնության, հայ ժողովուրդը ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում ապրում է իր տնտեսական և մշակութային վերընթացի ոսկե դարը։

¹ Նույն տեղում, էջ 508։

² Историческая энциклопедия, М, 1961, т. 1, с. 754.

Սակայն, ժամանակը ժողովրդի հիշողությունից չի ջնջել պատմության արյունոտ էջերը, նրա անարդարությունները: Արտասահմանում գործող հայկական բուրժուանացիոնալիստական կազմակերպություններն իրենց հակասովետական գործունեության մեջ հատկապես շեշտը դնում են տարածքային խնդիրների վրա, պրովոկացիոն սպեկուլյացիաներով բորբոքում անցյալի դառնությունները, հրահրում ավանտյուրիստական մտայնություն և գործելակերպ: Իրենց իսկ կատարած չարագործությունները նրանք ուզում են վերագրել ուրիշներին՝ հանդես գալով անպատասխանատու փաստաբանների դերում:

Անհարկի գաղտնապահությունը, մեր՝ սովետական քաղաքականության դիրքերից պարզորոշ ճշմարտացի խոսք ասելուց խուսափելը, երբեմն սկզբունքային դիրքերից պրոֆեսիոնալ մակարդակով, համապատասխան բացատրություններ չտալը, համոզիչ փաստարկներ բերելու փոխարեն ընդհանուր պարզունակ հարցադրումները կրկնելը, ոմանց, մասնավորապես պատանիների, երիտասարդների մոտ անցյալի կնճռոտ հարցերի շուրջ տեսողծում են անցանկալի խորհրդավորություն, անառողջ տրամադրություններ: Սրանց պետք է հակադրվի քաղաքական նպատակասլաց շախատանք, գործի պետք է կոչվի գիտապատմական պրոպագանդայի ողջ արսենալը՝ պատմական փաստաթղթեր, հուշեր, ականատեսների պատմածներ և այլն:

Մենք թարցնելու բան չունենք: Սովետական իշխանությունը, ԿԼԵՆինը, կոմունիստները արել են իրենցից կախված ամեն բան բուրքական տարածողական ծրագրերը խափանելու, հայ ժողովրդին վերջնական կործանումից փրկելու, նրան սոցիալիստական վերելք ապահովելու համար:

Պատմական բնթացքը բարդ բան է, և այն այսօրվա մտածելակերպով, այսօրվա ցանկություններով տեղի չի ունեցել: Միայն խելոք, ճշմարտացի խոսքով է հնարավոր պարզել այդ պրոցեսը, պատմական եղելությունները: Իսկ պատմության իմացությունն ինքնանպատակ բան չէ, այն անհրաժեշտ է այսօրվա, վաղվա մեր հաջողության համար:

ՀԿԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ, պրոֆեսոր Ջոն Մահալի Կիրակոսյան, պատմական գիտությունների դոկտոր
(ստորագրություն)

ՄԱՐԴԸ, ԳՈՐԾԻՉԸ, ԳԻՏՆԱԿԱՆԸ¹

Լրացավ ակադեմիկոս Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանի 90-ամյակը... Երևանում շատերն էին ճանաչում բարձրահասակ և հպարտ կեցվածքով, ակխառն մազերով ու ազդեցիկ հայացքով, խորիմաստ ժպիտը դեմքին պատկառազդու այդ մարդուն:

Հազվադեպ է կոչումը այսպես սազական լինում արտաքինին, և քչերին է վիճակված այսպես ներդաշնակել կեցվածքը՝ բովանդակությամբ, հայացքը՝ աշխարհայացքին, ակխառն մազերը՝ կենսափորձին:

...Դեռ երեկ Երևանի փողոցներով քայլում էր մարդը: Եվ երև տասնամյակների փորձառությամբ էր հարուստ, երև աշխատանքի, մաքառման ու պայքարի հիրավի հերոսական դրվագներ ուներ հիշողության մեջ ամբարած, նրա քայլքն էլ էր խորիմաստ: Սա արդեն հոգնած, բայց և եռանդաշատ մարդու ընթացք էր... Մեծահարուստ կենսագրություն ունեցող մարդն էր քայլում...

Կոմունիստական կուսակցության անդամ էր 1906 թվականից, քաղաքական և հասարակական ակնաավոր գործիչ, վաստակաշատ, բեղմնավոր գիտնական: Ապրած կյանքն անմնացորդ նվիրել էր ժողովրդի ազատագրության գաղափարին, նրա սոցիալիստական վերածննդին, հայ ականավոր մարքսիստ-պատմաբան կոչվելու պատիվն ու պատվարժան բեռն էր կրում ուսերին:

* * *

Աշոտ Հովհաննիսյանը ծնվել է 1887 թ. հունիսի 17-ին Շուշի քաղաքում: Արդեն ռեալական ուսումնարանում սովորելու տարիներին նա ծանոթանում է մարքսիստական գրականությանը, հաղորդակից դառնում հասարակական կյանքի բուռն ցնցումներին, զինվորագրվում Լենինի զինավորած բոլշևիկների կուսակցությանը, իրեն նվիրում աշխատավոր ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության մեծ գործին:

Ուսման տեմըը, բարձրագույն կրթություն ստանալու ձգտումը նրան ևս տարավ հեռավոր Եվրոպա: 1907-1913 թթ. սկզբում գերմանական Հալլե քաղաքի, ապա Մյունխենի համալսարաններում Աշոտ Հովհաննիսյանն ստացավ հիմնավոր կրթություն, խորապես ուսումնասիրեց փիլիսոփայություն, քաղաքատնտեսություն, պատմություն, ձեռք բերեց մարքսիստական լուրջ պատրաստություն:

1913 թ. Մյունխենում գերմաներեն լույս տեսած նրա դոկտորական դիսերտացիան՝ «Ժաբայել Օրին և հայերի ազատագրության գաղափարը», վկայությունն էր այն բանի, որ ասպարեզ էր իջնում արդեն ձևավորված պրոֆեհիոնալ հայագետ, մարքսիստ մի պատմաբան: Նա ուշադրությամբ հետևում

¹ Կիրակոսյան Ջ.Ս. Մարդը, գործիչը, գիտնականը // «Հայրենիքի ծայր» (Ե.), 1977, 22 հունիսի: Նույնը՝ «Կանյ» (Քեյրոս), 1977, 9 հուլիսի:

Էր հայ հասարակական-քաղաքական կյանքի անցքերին, արդեն ծանոթ էր և բազմաթիվ թվերով կապված հայ ականավոր մտավորականների, հեղափոխական գործիչների հետ: Ռալբես ուսուցիչ պաշտոնավարելով հայրենի Շուշիի հոգևոր սեմինարիայում, այնուհետև Էջմիածնի Գևորգյան ճեմարանում՝ Աշոտ Հովհաննիսյանն ընդհատակյա կուսակցական աշխատանք ծավալեց սովորող երիտասարդության շրջանում՝ իր մանկավարժական-հրապարակախոսական գործունեությամբ մեծ դեր խաղալով հեղափոխական նոր սերնդի դաստիարակության գործում: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նա տեսավ և ապրեց իր ժողովրդի մեծագույն ողբերգությունը՝ նրա փրկության միակ գրավակահանը տեսնելով Ռուսաստանի պրոլետարիատի հեղափոխական պայքարի հաղթանակի մեջ:

1917 թ. Շուշիում նա հիմնադրեց և խմբագրեց «Նեցուկ» թերթը՝ պրոպագանդելով ռուսական հեղափոխության և մեծ Լենինի գաղափարները: Հենց այստեղ դրսևորվեց նրա հրապարակախոսական տաղանդը, որ առժամանակ անց այնպես փայլեց բուլշևիկյան մամուլի էջերում:

...Անդրկովկասի հեղափոխության միջնաբերդ Բաքու: Աշոտ Հովհաննիսյանը Ս.Շահումյանի գլխավորած կոմունիստների շարքերում է, նախ՝ Բաքվի սովետի կուլտ-լուսավորական, այնուհետև Լուսավորության ժողովրդական կոմիտեի ակտիվիստի դպրոցական բաժնի վարիչ, «Բանվորի խոսք» թերթի խմբագիր: Կոմունայի անկումից հետո՝ 1918 թ. օգոստոսին, նա ձերբակալվում է, ապա անցնում Մոսկվա, ղեկավարում հայկական կոմիտարիատի կուլտ-լուսավորական բաժինը: 1920 թ. նա գլխավորում է Սովետական Ռուսաստանի Լուսավորության ժողովրդական կոմիտեի ակտիվիստի ազգային փոքրամասնությունների բաժինը, դասավանդում արևելյան լեզուների հռչակավոր Լազարյան ճեմարանում:

...Մեծ հոկտեմբերի գաղափարները փրկություն ավետեցին բազմաչարչար հայ ժողովրդին: Հայաստանի աշխատավորների պայքարը պսակվեց հաղթանակով: Հաստատվեց սովետական իշխանություն: Աշոտ Հովհաննիսյանը նոր կյանքի կառուցման առաջամարտիկների շարքերում էր, մեր հանրապետությունում սոցիալիստական շինարարության առաջին կազմակերպիչներից մեկը: Գործունեության նոր էջ քացվեց մի մարդու համար, ով մեծ տարեգրության նախորդ էջերն էր գրել: Լուսավորության առաջին ժողովմ Աշոտ Հովհաննիսյանն ակտիվորեն մասնակցում է միանգամայն նոր սկզբունքներով մշակույթի օջախները, լուսավորության, համալսարանական կրթության, առողջապահության հիմնադրմանն ու կազմակերպմանը: 1922 թ. փետրվարին՝ Վ.Լենինի կենդանության օրոք, Աշոտ Հովհաննիսյանն ընտրվում է Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար, գլխավորում հայ ժողովրդի նոր կյանքի կառուցման գործը, երկրի քայքայված տնտեսությունը վերականգնելու, սոցիալիստական շինարարության հիմքերը դնելու, աշխատավորների քաղաքական դաստիարակության ուղղությամբ հանրապետության կուսակցական կազմակերպությունների պայքարի գործը:

Նա հանդես էր գալիս կուսակցության Կենտկոմի հաշվետվություններով, գեկուցումներով, խմբագրում էր «Նորք» հանդեսը, հրատարակում քաղաքական, պատմագիտական բնույթի հոդվածներ, գրքեր ու գրքույկներ, դասախոսական աշխատանք վարում Երևանի պետական համալսարանում՝ իր հարուստ գիտելիքները հաղորդելով ուսումնաստենչ երիտասարդությանը:

1928-1937 թթ. Աշոտ Հովհաննիսյանն ապրում և աշխատում էր Մոսկվայում: Այստեղ նա իրեն դրսևորեց որպես գիտության հմուտ կազմակերպիչ, լեհնիյան գաղափարների անխոնջ պրոպագանդիստ: Նա աշխատում էր Մարքսի-Էնգելսի ինստիտուտում, դասախոսում ՍՍՀՄ ազգությունների ինստիտուտում: 1934 թ. նա ընտրվեց նյութական մշակույթի պետական ակադեմիայի իսկական անդամ, գլխավորեց այդ ակադեմիայի Մոսկվայի բաժանմունքը:

Որքան հարուստ և բեղմնավոր է Աշոտ Հովհաննիսյան հեղափոխականի, մարքսիզմ-լենինիզմի գաղափարների պրոպագանդիստի, կուսակցական և պետական գործչի, գիտության և մշակույթի կազմակերպիչ կյանքը, այնքան արգասավոր է նրա՝ որպես մարքսիստ-պատմաբանի, ակադեմիկոս գիտնականի գործունեությունը: Վաթսուն տարի շարունակ հայ մշակույթի անխոնջ մշակի գրիչը, պրպտող միտքը դադար չունեցան: Նա անմնացորդ ծառայեց գիտությանը, սեփական ժողովրդի հոգևոր մշակույթի զարգացմանը:

Հիրավի, մեծ է Աշոտ Հովհաննիսյան պատմաբանի վաստակը. մեծ է նրա ներդրումը հայագիտության մեջ: Չափազանց լայն էին Աշոտ Հովհաննիսյանի գիտաքաղաքական, պատմագիտական հետաքրքրությունների ընդգրկումներն ու շրջանակները: Նրա յոթանասուն գիտական աշխատությունները ժամանակագրական տեսակետից ընդգրկում են 5-րդ դարից մինչև մեր օրերը, իսկ թեմատիկայով՝ հայոց պատմություն, ընդհանուր պատմություն, քաղաքական, սոցիալ-տնտեսական հարաբերություններ, բանասիրություն, փիլիսոփայություն, միջազգային հարաբերություններ:

Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը քաջ տիրապետում էր գիտական հետազոտման քննական-վերլուծական, մարքսիստալենինյան մեթոդին: Խորն ու հիմնավոր էին նրա գիտելիքները: Նա սիրում էր պորելնեն ուսումնասիրել հիմնավորապես: Գիտական սկզբունքայնություն, ուսումնասիրվող նյութը բազմակողմանիորեն վերհանելու, բացահայտելու հմտություն, լայնախի ընդհանրացումներ, լուրջ, համոզիչ խոսք ասելու վարպետություն, լեզուների իմացություն՝ ահա մարքսիստ-պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի գիտական գործունեության բնորոշ գծերը: Նրա տարերքը աշխատանքն էր: Աշխատասիրությունը նրա բնավորության ամենաբնորոշ գիծն էր: Նա չէր խորշուսում բանավեճերից: Նա ուներ բանավիճելու բարձր կուլտուրա: Նրա խոսքը համոզիչ էր, փաստարկված և տրամաբանված: Գեղեցիկ էին նրա թե՛ գրելաոճը, թե՛ խոսելաճը: Նա հիրավի մեծ կուլտուրայի գիտնական էր, պատմագիտության մեջ նորարար:

Առանձնապես մեծ է մարքսիստ-պատմաբանի ներդրումը հայ ժողովրդի ազատագրական պայքարի, ռուս-հայկական պատմական առնչությունները, հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ակունքներն ուսումնասիրելու ու քացահայտելու գործում: Տակավին 1921 թ. Էջմիածնում հրատարակած հայերի ռուսական կողմնորոշման ծագմանը նվիրված աշխատության՝ «Գրվագներ հայ ազատագրական մարտի պատմության» երկհատոր հիմնավոր ուսումնասիրությանը, «Հայ-ռուսական հարաբերությունները 18-րդ դարի առաջին երեսնամյակում» վավերագրերի ժողովածուով և այլ հրատարակումներով Աշոտ Հովհաննիսյանն առաջինը գիտական հիմքերի վրա դրեց հայ ժողովրդի քաղաքական ճակատագրում, ազգային-ազատագրական ոգորումների մեջ Ռուսաստանի խաղացած որոշիչ դերի ուսումնասիրության և մեկնաբանման հույժ կարևոր գործը:

Պատմաբանի երկարամյա գիտական գործունեության առավել կարևոր, ուրույն մասն է կազմում հեղափոխական դեմոկրատ Միքայել Նալբանդյանի կյանքի ու գործի ուսումնասիրությունը: Մոսկվայում աշխատած տարիներին նա պատրաստեց, ծանոթագրեց և լույս ընծայեց Մ.Նալբանդյանի «Անտիպ երկերը», իսկ 1955-1956 թթ. Երևանում հրատարակած «Նալբանդյանը և նրա ժամանակը» երկհատոր խորագրի մեծագրությունը տեղի 19-րդ դարի 50-60-ական թթ. հայ հասարակական-քաղաքական մտքի համապարփակ պատկերը, որը հանդիսացավ Աշոտ Հովհաննիսյանի գիտական ստեղծագործության պսակը:

ՀՍՄՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում աշխատած տարիներին (1954-1972 թթ.) ակադեմիկոս պատմաբանը հսկայական գործ կատարեց գիտության կազմակերպման, հայ ժողովրդի պատմության քազմահատորյակը ստեղծելու, երիտասարդ պատմաբաններ պատրաստելու գործում: Խոստապահանջ, քայց և հոգատար ուսուցիչ է եղել նա շատերի համար: Նա իր գիտելիքները, ստեղծագործելու հմտությունները անմնացորդ պատվաստում էր, հաղորդում երիտասարդ պատմաբաններին, նրանց հմայում ու վարակում իր փորձով, գիտելիքների անհատում պաշարով, աշխատասիրությամբ և սկզբունքայնությամբ: Նրա պատրաստած ապիրանտներն այսօր գիտության թեկնածուներ, դոկտորներ են և հաջողությամբ շարունակում են իրենց հմուտ ուսուցչի գործը:

Կյանքի վերջին տարիներին նա ժրջանությամբ աշխատում էր «Ուրվագներ 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայերի հասարակական-քաղաքական մտքի պատմության» մեծագրության վրա, որի առանձին գլուխները հրատարակվեցին համրապետության պարբերականներում:

Մեր երկրի հասարակայնությունը երախտագիտությամբ նշեց քազմավաստակ գիտնականի, հասարակական և քաղաքական գործչի 80-ամյակը: Նա պարգևատրվեց Լենինի շքանշանով:

Մեծ է Աշոտ Հովհաննիսյանի վաստակը, մեծ է նրա բողած գործը: Նման մարդկանց ապրած կյանքը ուղեցույց կարող է լինել բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են ճշմարիտ ապրել և օգտակար լինել մայր ժողովրդին:

В БЮРО ЦК КП АРМЕНИИ¹

10 июня на пленуме ЦК КП Армении я вам предложил одобрить проект новой Конституции не «целиком и полностью», а «в основном». Я исходил из того, что пленум ЦК КПСС одобрил проект Конституции «в основном».

Первый секретарь ЦК КП Армении т. Демирчян², проявив неуважение к слову члена ЦК КП Армении, принципам демократического централизма, не поставил внесенное предложение на голосование.

Такое отношение я считаю несправедливым и неправильным. Мы собрались обсудить важный вопрос, и должно было быть проявлено максимум внимания к каждому слову, к каждому предложению. Мы совершили юридический акт – одобрили проект новой Конституции Союза ССР. В этом проекте есть статьи, которые являются положениями ныне действующей Конституции. Не секрет, что ныне действующий статус Карабаха и Нахичевана всегда считался спорным, в течение десятилетний вызывал споры, оспаривался как в самом Карабахе, так и в Советской Армении. Этот вопрос неоднократно поднимался на собраниях партийных организаций республики, многочисленные обращения и петиции посылались в союзные инстанции, доказывающие необходимость пересмотра существующего административного деления Карабаха и Нахичевана.

Непосредственно после Отечественной войны, а также в 1966 г., данный вопрос официально ставился ЦК КП Армении перед ЦК КПСС, Верховным Советом СССР и Союзным правительством, однако он не получал своего решения. Решение вопроса связывалось с трудностью пересмотра положений действующей Конституции, и многим заявителям отвечали, что их предложения будут переданы комиссии по разработке новой Конституции, будут рассмотрены и учтены.

Мне, как члену ЦК КП Армении, министру иностранных дел Армянской ССР, необходимо знать, какую позицию заняли представители ЦК КП Армении и Советской Армении на заседаниях комиссии по разработке новой Конституции, «целиком и полностью» одобрили статьи проекта Конституции Союза ССР о том, что «Карабахская автономная область» и «Нахичеванская автономная республика» состоят в Азербайджанской ССР, специально по этому вопросу встречались ли с председателем комиссии, Генеральным секретарем ЦК КПСС

¹ ՋԿԱԱ, Կիրակոսյան Ջ. ՀԿԿ ԿԿ բյուրոյին, 1977, ձեռագիր: Տն՝ նաև՝ *Голос Армении* (Е.) – 1991, 17 января.

² Կարեն Դեմիրճյան (1932-1999) - պետական և կուսակցական գործիչ, ՀԿԿ Երևանի քաղկոմի քարտուղար (1966-1972), ՀԿԿ ԿԿ քարտուղար (1972-1974), առաջին քարտուղար (1974-1988), «Հայէկեկուրամերենա» բաժնետիրական ընկերության նախագահ, գործադիր տնօրեն, Հայաստանի ժողովրդական կուսակցության նախագահ, ՀՀ ԱԺ նախագահ (1999), Հայաստանի Ազգային հերոս - Ա.Կ.:

т. Брежневым, пытались ли внести ясность в этот наболевший вопрос. Ведь новая Конституция принимается не на год и два, а на длительный период времени, и будут продолжаться не соответствующие интересам Союза ССР нездоровые явления вокруг этой серьезной проблемы.

Джон Киракосян
член ЦК КП Армении, депутат
Верховного Совета Армянской
ССР, министр иностранных дел Армении

1878 թ. ՍԱՆ ԱՏԵՖԱՆՈՅԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ¹

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների բուռն վերելքի և Արևելյան հարցում միջազգային հակասությունների սրման հետևանք էր:

Պատերազմն սկսվեց 1877 թ. ապրիլի 12-ին, տեղեց տասը ամիս, ծավալվեց բալկանյան և կովկասյան ռազմաճակատներում՝ ընդգրկելով հսկայական տարածություններ և հարյուր հազարավոր մարդկանց: Առաջին ամիսների փոփոխական հաջողություններից հետո ռուսական զորքերին հաջողվեց րեկոմ մտցնել թե՛ բալկանյան և թե՛ կովկասյան ռազմաճակատներում, պարտություն պարտության հետևից մատնելով թուրքական բանակներին:

Ռուս զինվորը Շիպլակայի և Պլեմայի համար մղված մարտերում անօրինակ խիզախության և արիության էջեր գրեց ռուսական զենքի հաղթանակների տարեգրության մեջ՝ իր արյան գնով ազատություն ավետելով բուլղար ժողովրդին: Գեներալ Գուրկոյի² զորախումբը դեկտեմբերին հաղթահարեց Բալկանյան լեռնաշղթան և հունվարի 4-ին գրավեց Սոֆիան: Իսկ 1878 թ. հունվարի 15-17-ին, Ֆիլիպպոլիսի տակ Սուլեյման-փաշայի³ թուրքական զորախմբի ծանր պարտությունից հետո, ռուսական բանակը գրավեց Ադրիանապոլիսը և ընդհուպ մոտեցավ Օսմանյան կայսրության մայրաքաղաքի մատույցներին:

Փոքրասիական կամ կովկասյան ռազմաճակատում մույնպես ռուսական բանակը հաջողության հասավ: Նոյեմբերի 18-ին Կարսը կապիտուլյացիայի ենթարկվեց, և ճանապարհը դեպի Էրզրում բաց էր ռուսական բանակի առջև: Ջինաղաղարի պայմաններով Էրզրումը ռուսներին հանձնվեց 1878 թ. փետրվարի 10-ին: Արևելյան ճակատի թուրքական բանակի հրամանատար Մուխթար-փաշան⁴, որ պատերազմի սկզբին պարծեցել էր մի քանի օրվա ընթացքում գրավել Երևանի մահանգը, հասնել Թիֆլիս, գլխավոր ջախջախվեց:

Պատերազմի ժամանակ անգլիական կառավարությունն ամեն ինչ անում էր սուլթանական Թուրքիային հաջողություն ապահովելու համար: Անգլիան ռազմական և ֆինանսական օգնություն էր ցույց տվել Օսմանյան

¹ Կիրակոսյան Ջ. 1878 թ. Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը և Հայաստանը // «Բանբեր Հայաստանի արխիվների» (Ե.), 1977, N 7, էջ 195-219: Տե՛ս մտև՝ Կիրակոսյան Ջ.Ս. Հայոց ռուսական կողմնորոշումը և արևմտաեվրոպական դիվանագիտությունը // «Լեհնիյան ուղիով» (Ե.), 1977, N 7, էջ 68-79:

² Յուսիֆ Գուրկո (Ռոմենյո-Գուրկո) (1828-1901) – ռուս գեներալ-ֆելդմարշալ – Ա.Կ.:

³ Սուլեյման Հունյու-փաշա (1838-1892) – թուրք ռազմական գործիչ, գեներալ – Ա.Կ.:

⁴ Ահմեդ Մուխթար-փաշա (1832-1919) – Օսմանյան կայսրության ռազմական և քաղաքական գործիչ, 1877-1878 թթ.՝ Կովկասյան ճակատում բանակի հրամանատար, 1885-ից՝ Եգիպտոսում Գեբազույն լիագոր, Օսմանյան կայսրության մեծ վեզիր (1912) – Ա.Կ.:

կայսրությանը. նրա բանակը զինել և հանդերձավորել նորագույն զենքով և ռազմական տեխնիկայով¹: Թուրքական բանակում ծառայում էին անգլիացի սպաներ²:

Կովկասը Ռուսաստանին միանալուց հետո անգլո-թուրքական կառավարող շրջանները երբեք չէին դադարեցրել իրենց քայքայիչ գործունեությունը, որի գլխավոր նպատակն էր վերացնել ռուսական իշխանությունը Կովկասում: Սովետական պատմաբան Ս.Բուշուևը նկատում է, որ ցարիզմի արտաքին քաղաքական հաշվարկների սխալականությունը 1876 թ. այն էր, որ բավարար ուշադրություն չէր նվիրել Արևելքում անգլիական մեքենայություններին: Դեռևս 1876 թ. սեպտեմբերին իր արտասանած ճառերից մեկում Մեծ Բրիտանիայի պրեմիեր մինիստր Դիզրայելին (Բիթոնսֆիլդ)³ խաչակրաց արշավանքի կոչ էր անում ընդդեմ Ռուսաստանի⁴:

Թուրքական բանակի հրամանատարությունը մշակել էր Թիֆլիսը, Վլադիկավկազը, Պետրովսկը գրավելու պլան: Այդ նպատակով էլ հակառուսական խռովություններ էին երահրվում Չչենիայում, Դադստանում, Աբխազիայում: Սակայն անգլո-թուրքական գործակալության բոլոր ջանքերն ասպարդյուն անցան: Անդրկովկասի ժողովուրդները կյանքի փորձով ըմբռնել էին Ռուսաստանի և արևելյան բռնակալությունների տարբերությունը, ռուսական իշխանության հովանու տակ էին փնտրում իրենց ապահով կյանքի երաշխիքը:

«Ոչ մի կարիլ անգլիական արյուն չէր թափվել արևելյան պատերազմի ժամանակ, իսկ Լոնդոնի կառավարության հոգացող միջամտությունը միայն երկարածոց պատերազմը և ավելացրեց զոհերի թիվը, Թուրքիային ոչ մի օգուտ չբերելով», - գրում է զերմանացի պատմաբան Վեբերը⁵: Անգլիական իմպերիալիստներին Օսմանյան կայսրության «ապահովությունը» հետաքրքրում էր այնքանով, որքանով դա համապատասխանում էր իրենց շահերին: Եղավ մի պահ, երբ Բիթոնսֆիլդն իր կառավարության անդամներին առաջարկեց պատերազմի մեջ մտնել Թուրքիայի կազմում⁶: Բիթոնսֆիլդը թագուհուն գրում էր, որ անգլիական կառավարության գործողությունների

¹ Война 1877-1878 гг. на Азиатском театре, СПб, 1892, с. 8.

² Мартенс Ф.Ф. Восточная война и Брюссельская конференция, 1874-1878, СПб, 1879, с. 567.

³ Բենջամին Դիզրայելի, լորդ Բիթոնսֆիլդ (1804-1881) – Մեծ Բրիտանիայի պետական և քաղաքական գործիչ, պահպանողական կուսակցության հիմնադիրներից, 1852, 1858-1859, 1866-1868 թթ.՝ ֆինանսների նախարար, 1868, 1874-1880 թթ.՝ վարչապետ - Ա.Կ.:

⁴ Бушув С.Б. Из истории внешнеполитических отношений в период присоединения Кавказа к России (20-70-е гг. XIX в.), М, 1955, с. 101-102.

⁵ Вевер Г. Всеобщая история, М, 1893, т. 15, ч. II, с. 623.

⁶ Seton-Watson R.W. Disraeli, Gladstone and the Eastern Question. A Study in Diplomacy and Party Politics, London, 1962, p. 131.

իմաստը պետք է մնա խիստ գաղտնի, քանի դեռ Ռուսաստանը չի պարտավորվել չգրավել Կ. Պոլիսը կամ Դարդանեղ¹:

Պլենայի անկումից հետո, երբ Լոնդոնում բուրք դեսպան Մուստրուսփաշան այցելեց Բիքոնսֆիլդին՝ նրան խնդրելով փոխառություն տալ Բ. Դռանը՝ ապահովելու վերջնական պարտության կանխումը, Բիքոնսֆիլդն այդ ֆինանսական օգնությունը պայմանավորեց տարածքային փոխհատուցումով, և Օսմանյան կայսրության արտաքին գործերի մինիստր Սերվերի և Կ. Պոլսում Անգլիայի դեսպան, հայտնի հնէաբան, Նինվլի ավերակները պեղող Լեյարդի² միջև բանակցություններ սկսվեցին Կրետե կղզու վրա բրիտանական կառավարման հաստատման հնարավորության շուրջ: Այնուհետև Լեյարդն իր ամսակներում տարբեր առաջարկություններ էր անում Բիքոնսֆիլդին՝ մեկ Կիպրոսի, մեկ Եփրատի գետաբերանում գտնվող Մոհամեդա կղզու գրավման մասին³:

Անգլիական գաղութարարները ռուս-թուրքական պատերազմից փորձում էին օգտվել իրենց երսպանսիան Առաջավոր Ասիայում ընդլայնելու, նոր տիրույթներ զավթելու համար, խոչընդոտելով թուրքական լուծը թոթափելու ծարավի ժողովուրդների ազատագրումը:

* * *

Պատերազմի ժամանակ արևմտահայ աշխատավորական գանգվածները նոր փորձությունների ու տառապանքների ենթարկվեցին: Թուրքական իշխանությունները վարչական վերաձևումների, Բալկաններից տեղահանված վերաբնակիչներից հայոց հողերի վրա բնակեցնելու և այլ միջոցներով ձգտում էին ջլատել հայ ժողովրդի ուժերը:

Քիչմիշելը⁴ գրում է թուրք կառավարողների հոգեբանության մեջ կատարված այն էական փոփոխության մասին, որ տեղի ունեցավ պատերազմի մալսօրյակին ու նրա ընթացքում: «Համոզվելով, որ իրենց տիրապետությունն ամուր չէ Բալկանյան թերակղզում, - գրում է նա, - նրանք (թուրքական կառավարողները) գիտակցում էին, որ իրենց վերջին ապաստանը մնալու է Ասիան և այս նպատակով իրենց ասիական տիրույթների պաշտպանության համար չէին խնայում ո՛չ փող, ո՛չ միջոցներ»⁵:

¹ Op. cit, p. 236-237.

² Օստին Հենրի Լեյարդ (1817-1894) - բրիտանացի ճանապարհորդ, հնագետ, պատմաբան, քաղաքական գործիչ և դիվանագետ, 1861-1866 թթ.՝ արտգործնախարարի տեղակալ, 1877-1880 թթ.՝ դեսպան Օսմանյան կայսրությունում - Ա.Կ.:

³ Op. cit, p. 243-244.

⁴ Մտևփան Քիչմիշել (1833-1897) – ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ - Ա.Կ.:

⁵ Киприанов С.О. Война в Турецкой Армении, 1877-1878, СПб, 1884, с. 6.

Գրիգոր Արծրունի¹ դժգոհում էր այն բանից, որ եվրոպական մի շարք հեղինակներ Արևելյան հարցի լուծումը տեսնում էին Եվրոպայից թուրքերին Փոքր Ասիա բշխելու մեջ: «Այսօր ապստամբվել են թուրքիայի եվրոպական հպատակները, հինգ, տասը տարի հետո կապստամբվեն թուրքիայի ասիական հպատակները»,- գրում էր նա: Նա Եվրոպայից պահանջում էր մեկընդմիջտ արմատական լուծում տալ արևելյան հարցին, այլապես Փոքր Ասիայում, նրա կարծիքով, կենաց-մահու կռիվը բռնկվելու էր շատ ավելի մեծ թափով²:

Պատերազմի հենց սկզբից թուրքական իշխանությունները հատկապես հրահերում էին քրդական վերնախավի հակահայկական մղեռանդությունը, կողոպուտի բնագոյնը: Դրա հետևանքով միայն Բայազետի և Ալաշկերտի գավառներում 30 հազար մարդ սպանվեց: Իր վաշտագություններով անուն հանեց հատկապես Խիզանի շեյխ Ջելալդղինը: Քրիստոնյաների դրությունը պատերազմի հետևանքով շատ ավելի վատացավ, քան նախօրյակին էր³:

1877-1878 թթ. պատերազմի ժամանակ Ադրակի, Ալաշկերտի, Մոկաց գավառներից 150-ից ավելի գյուղեր դատարկվեցին, 3000 ընտանիք Ալաշկերտից հեռացավ, սովից ու համաճարակից կիսով չափ ջարդվելով ճանապարհներից⁴: Մոխիր դարձան Ադրակի 24 հայկական գյուղեր, քահանաները ծողեքի վրա բարձրացան, կոտորվեցին հագարավոր աշխատավոր մարդիկ: Հագարավոր կանայք ու աղջիկներ Ջելալդղին ու շեյխ Իբադուլլայի զորքերի կողմից զերեկարվեցին: Ալաշկերտի, Բայազետի, Մուշի, Բաղեշի, Տիգրանակերտի հայությունն անհաշիվ վնասներ կրեց: Բայազետ քաղաքում թուրքերը կոտորեցին 165 հայ ընտանիք: Ռուսական զորքի նահանջից հետո այստեղ ոչնչացվեց 6 հազար մարդ⁵:

Ռուս պրոֆեսոր Ֆ.Մարտենը⁶ նկարագրում է թուրքական զորամասերի և բաշիրզուկների վաշտագությունները. «Փոքրերը ճեղքած հայ կանայք», «ցցերի վրա հանված ծծկեր երեխաներ», այրված ծերունիներ, պատվազուրկ արված աղջիկներ և այլն: «Ահա այսպես էին վարվում թուրքերն իրենց սեփա-

¹ Գրիգոր Արծրունի (1845-1892) – հրապարակախոս, զրարնադատ, հասարակական գործիչ, տնտեսագետ, հայ ազատագրական գաղափարախոսության ներկայացուցիչներից, «Մշակ» թերթի հիմնադիր-խմբագիր, «Թուրքաց հայերի տնտեսական դրությունը», «Արևելյան հարց» աշխատությունների, «Էվելինան» վեպի հեղինակ – Ա.Կ.:

² Ариуриш Г. Восточный вопрос, Т, 1876, с. 5.

³ Роллен-Жекмен М.Г. Армения, армяне и трактаты // Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, СПб, 1896, с. 58.

⁴ Մ.Ա. Թուրքիայի հայերն ու իրենց դրացիները, Մարսել, 1890, էջ 2, 207:

⁵ Schem A.J. The War in the East: An Illustrated History of the Conflict between Russia and Turkey with a Review of the Eastern Question, London, 1878, p. 441.

⁶ Ֆյոդոր Մարտենս (1833-1909) – ռուս իրավաբան-միջազգայնագետ, դիվանագետ – Ա.Կ.:

կան հպատակ քրիստոնյաների հետ», - եզրակացնում է նա¹: Հայերի հանդեպ կատարված բռնությունների համար նա բուրբակյան կառավարությանը համարում էր դարի «խայտառակությունը»: Հիրավի, հսկայական էին արևմտահայության վնասները, մեծ էին մարդկային կորուստները: Տնտեսապես քայքայված, թշվառության ճիւղաններում գալարվող մարդկանց խմբերը լքում էին իրենց բնակավայրերը, բռնում գաղթի ճանապարհը, անցնում Կովկաս: Սովամահության գոտի դարձան տասնյակ հազարավոր մարդիկ: «Քե՛ն ռուսանալ հարկ է հ՛ոսանանք, բայց փրկվենք, այս է մեր աղերս առ ձեզ և առ Աստված», - գրում էին Վանի շրջանի գյուղացիները:

«Ռուսական զինվորական իշխանությունները ձգտում էին բոլոր միջոցներով պաշտպանել Թուրքահայաստանի բնակչությանը պատերազմի սարսափելի աղետներից»²: Ռուս սպաները, մտավորական մարդիկ մեծագույն համակրանքով էին վերաբերվում հայ ժողովրդի զավակներին, դրականորեն էին արտահայտվում Ռուսաստանին հայ մարդկանց նվիրվածության մասին:

Դեպատաներձ շրջաններում կատարված հակահայկական խժիժությունները, խաղաղ բնակչության կոտորածներն ավելի ու ավելի էին ամրապնդում այն մտայնությունը, որ փրկության միակ հույսը Ռուսաստանն է, որ նրան ապավինելով է հնարավոր թոթափել թուրքական դժնի տիրապետությունը: Ոճանք արդեն հանգում էին չարին ակտիվ հակակայանելու, ժողովրդի ազատության համար զենքի դիմելու գաղափարին:

Երբ ռուսաց զորքերը մտան Արևմտահայաստան, ամբողջ հայությունը տոգորվեց եղբայրական համակրությամբ և հուսադրող ակնկալությամբ քրիստոնյա ազատարարների նկատմամբ: Չափազանց ոգեշնչող էր այն հանգամանքը, որ ռուսաց բանակի հրամանատարության կազմում գործում էին այնպիսի հայազգի զեներալներ, ինչպիսիք էին ռազմական գործողությունների ժամանակ անուն հանած Լորիս-Մելիքովը, Տեր-Ղուկասովը³, Լազարևը⁴, Շելկովնիկովը⁵ և այլ զինվորականներ: Հալածական ժողովուրդն արդեն համոզված էր, որ հեռու չէր փրկությունը: Ոգևորված եղբայրակիցների մոտալուտ ազատագրությամբ՝ կովկասահայերն օրհնում էին այն օրը, երբ պատմությունն իրենց կապեց հզոր Ռուսաստանի հետ: Իր բնույթով ռուս-թուրքական պատե-

¹ Мартенс Ф.Ф. Указ. соч., с. 383.

² Там же, с. 330-331:

³ Արշակ Տեր-Ղուկասով (1819-1881) - ռուսական բանակի զորավար, զեներալ-լեյտենանտ, 1877-1878 թթ.՝ Երևանյան զորաջոկատի, ապա՝ Ալաջիխայի ուղղության գործող զորքերի հրամանատար, Կովկասյան 2-րդ կորպուսի հրամանատար - Ա.Կ.:

⁴ Իվան Լազարև (1820-1879) - ռուսական բանակի զեներալ-լեյտենանտ, 1877-1878 թթ.՝ Բայրաքդարյան զորաջոկատի, Կարսը պաշարած կորպուսի, Կովկասյան առանձին կորպուսի, ապա՝ Կովկասյան 2-րդ կորպուսի հրամանատար - Ա.Կ.:

⁵ Քեհրուս Շելկովնիկով (1837-1878) - ռուսական բանակի զեներալ-մայոր, 1876-ից՝ ից՝ Սևծովյան ռազմական օկրուգի պետ, ապա՝ Էրզրումի ռազմական օկրուգի պետ - Ա.Կ.:

րագճը փաստորեն բուրժուադեմոկրատական հեղափոխության դեր էր կատարում ինչպես Բալկանյան թերակղզու ճնշված ժողովուրդների, այնպես և արևմտահայության հասարակական-քաղաքական կյանքում:

Թուրքահայաստանում իրենց առաջին քայլերից ռուսական զորամասերը հանդիպեցին հայ աշխատավոր մարդկանց ջերմ ու գրկաբաց վերաբերմունքին: Հայկական եկեղեցիներում աղոթում էին ազատարարների համար, խաչ ու խաչվառով դիմավորում իրենց պաշտպաններին¹:

Հայ բնակչությունն այնպիսի քայրացակամությամբ էր շրջապատում ռուս զինվորներին, որ նրանք կարծում էին, թե իրենց տանն են և ոչ թե հակառակորդի տարածքում²: Հայերն օգնում էին ռուս զինվորներին, մթերք մատակարարում³, ճանապարհները ցույց տալիս, ջերմությամբ վերաբերվում իրենց ազատարար եղբայրներին: Կրկնվում էր նույն բանը, ինչը 1829-ին էր կամ 1853-1856 թթ.: Հայ ժողովրդի ողջ համակրանքը Ռուսաստանի կողմն էր:

Հիշեցնելով ռուս-պարսկական, ռուս-թուրքական նախորդ պատերազմների ժամանակ հայ ժողովրդի ռուսասիրական դիրքորոշումը, ռուսական բանակի շարքերում նրանց կամավոր մասնակցությունը, Յուրի Վեսելովսկին⁴ նշում էր 1877-1878 թթ. պատերազմի ժամանակ «փոքրասիական վիլայեթների հայ բնակչության ուժեղ ոգևորությունը, որը նորից հավատացած էր թուրքական լծից ազատագրվելու հնարավորությանը և մեծ հույսեր էր կապում ռուսական առաջխաղացման հետ»⁵:

«Այս դարի ընթացքում, հայոց ազգն այս երրորդ անգամն է արդեն, որ հանդիպում է ռուսաց զորքերին Թուրքիայում, - գրում էր «*Գողոս*» թերթը: - ... - Թուրքական ստրկության լծի տակ ճնշվելով հայոց ազգը ռուսաց զորքերի Հայաստանի խորքերում նորերունս արած շարժությունների մեջ սպասում էր իր ազատության արշալույսը տեսնել»⁶:

Կռվելով ռուսական բանակի շարքերում՝ հայ զինվորները, կամավորները, հրամանատարները զիտակցում էին, որ պատերազմը մղվում էր իրենց ժողովրդի հողի վրա, ուստի ռուս զորքի հաջողությանը գուզընթաց նրանց սրտերում ծնվում և ամրապնդվում էին սեփական հայրենիքի ազատության հույսն ու հեռանկարները:

Բոլորին համակել էին վարդազույն սպասելիքները, երևակայական ծրագրերը: Կռվակալի հայ մամուլն աննախընթաց վերելքի շրջան էր ապրում,

¹ Диев Г.А. Армянский вопрос в Турции // Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, СПб, 1896, с.32.

² Кншмштев С.О. Указ. соч. с. 19.

³ Война 1877-1878 гг. На Азиатском театре..., с. 12.

⁴ Юрий Веселовский (1872-1919) – рուս րաճախող, քարզմանիչ, հայ գրականության մասնագետ - Ա.Վ.:

⁵ Веселовский Ю. Трагедия Турецкой Армении, М, 1917, с. 10.

⁶ «Մշակ» (Թ), 1878, N 113:

աշխուժորեն արժարժում բուրբահայ խնդիրը: Գամառ Քաթիպայի¹ բանաստեղծությունները զենքի ու բրբահայ ապստամբության մասին էին: Այդ ոտանավորները բերանացի գիտեին բոլորը՝ ուսուցիչն ու համալը, Թիֆլիսում հանգրվանած ալաշկերտցին ու վանեցին: Ռուսական բանակի կողմից նոր գրավված հայկական գավառների բնակչությունը շփման մեջ մտավ կովկասահայության հետ: Նրա ականջին հնչում էին «սագ», «սագասիրություն», «ազատություն» բառերը:

«Փորձը» ցույց էր տալիս, որ Անգլիան ու Ավստրիան իրենց շահերով ամուր «կապված են Օսմանյան կայսրության գոյության հետ», շեշտվում էր, որ Ռուսաստանի «զենքի դիմելու միակ նպատակն արևելյան քրիստոնյաների թշվառ վիճակի քարվորումն է»²:

Իսկ ազգի, ժողովրդի գործերը գլխավորելու հավակնած Կ.Պոլսի հայ մեծահարուստները, նրանց հետ համերաշխ պատրիարքարանն ու ազգային ժողովը չափազանց գոյուշ էին, չափավոր, դեկավարվում էին նախ և առաջ իրենց դասակարգային շահերով:

Պատերազմի ընթացքում բուրբական կառավարությունն իր հերթին Կ. Պոլսի հայկական վերնախավի նկատմամբ սիրաշահելու խորամանկ և զգուշավոր քաղաքականություն էր վարում:

Իսկ Կ.Յուրուճյանի «Մասիս» թերթը արևելյան մահաճգնեղում կատարված հրկիզումների, բռնաքարությունների և ավերածությունների պատասխանատվությունը փորձում էր հեռացնել կառավարությունից:

Փաստերը վկայում են, որ պատրիարք Ներսես Վարժապետյանը³ իր մանկերող գործելակերպով նպատակ ուներ վնասագրելու բուրբական մոլեռանդ շովինիզմը, որը պատրաստ էր հռչակելու ռուսական զենքին հաջողություն մաղթող հայությանը: Նա դեմ էր բուրբական իշխանության դեմ քացահայտ գործելուն, բեև հրապարակավ արտահայտվում էր Հայաստանի համար անհրաժեշտ բարենորոգումներ իրականացնելու օգտին:

Հետագայում, ամողջառնալով պատերազմի ժամանակ Ներսեսի զգուշավոր դիրքորոշմանը, Արփիար Արփիարյանը⁴ նկատում էր. «Կատա-

¹ Բանաստեղծ, արձակագիր, հասարակական գործիչ Ռաֆայել Պատկանյանի (1830-1892), Գ.Քանանյանի և Մ.Թիմուրյանի հիմնած գրականության ընկերություն, որի անվանումը կազմվել է հիմնադիրների անուն-ազգանունների սկզբնատառերից և առաջին վանկերից: Հետագայում Պատկանյանն այն դարձրել է իր կեղծանունը - Ա.Կ.:

² «Փորձ» (Թ), 1877-1878, N 1, էջ 354-355:

³ Ներսես (Պողոս) Վարժապետյան, Ներսես Բ Վարժապետյան Իսրահայելի (1837-1884) - եկեղեցական, հասարակական գործիչ, 1874-1884 թթ.՝ Կ.Պոլսի Հայոց պատրիարք, 1884-ին ընտրվել է Ամենայն հայոց կաթողիկոս, սակայն իրաժարվել է առողջական վիճակի պատճառով - Ա.Կ.:

⁴ Արփիար Արփիարյան (1851-1908) - գրող, հրապարակախոս, գրաքննադատ, հասարակական-քաղաքական գործիչ, «Արարատյան ընկերություն հայոցի» և «Արևելք» (Կ.Պոլիս) թերթի հիմնադիր, «Կատակ մը», «Ալպուշը», «Ոսկի ապարան-

ղեցնելով երկրին իշխանությանը, անոր պահանջումներուն ընդդիմադրությամբ, գրգռելով մահմեդական մոլեռանդությունը, Ներսես պատրիարքը պիտի կրնա՞ր ավելի օգտակար ըլլալ անգոր, քայլ, խեղճ ժողովրդի մը»¹:

Սուլթանական կառավարության գործադրած ջանքերի նպատակն էր կանխել սլավոնական ժողովուրդների օրինակով հայկական շրջաններում հասունացող ազատագրության և ինքնավարության տրամադրությունները: Սուլթանական կառավարողներն անգլիական դիվանագետների հետ ձեռք ձեռքի տված աշխատում էին Կ.Պոլսի հայ ազգային մարմինների, հարուստ վերնախավի համակրանքը շահելու միջոցով կանխել ռուսական հարածուն ազդեցության տարածումը Փոքր Ասիայում: Սակայն, պատերազմի ավարտին ռազմաքաղաքական իրադրությունն արմատապես փոխվել էր ի վնաս Օսմանյան կայսրության, և փոփոխություն պետք է առաջանար նաև Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի, ազգային վերնախավի երեկվա զուսպ, գզուշավոր դիրքորոշման մեջ: Այս ամենը հարուցեց նոր տրամադրություններ, նոր վարվելաձևեր, խորացրեց թուրքական պետականության նկատմամբ եղած անվստահությունը: Անհամեմատ համարձակ դարձան նաև երևելիները, ազգային ջոջերը, որոնք, հայկական դատը հետապնդելով, մի կողմից աշխատում էին սուլթանի սիրտը շահել, որպեսզի հայկական դիմումները մա ըմբոստացում չհամարեր, մյուս կողմից, սկսելու էին բախել դիվանագիտական դռները՝ ցամկալի բարենորոգումներ ստանալու, «ազգային ցավերը» հոգալու նպատակով:

* * *

Թուրքական բանակը պարտված էր: Օսմանյան պետականությունն օրհասական օրեր էր ապրում: Ռուսական բանակը հաղթական դիրք էր բռնել Կ.Պոլսի մատույցներում: Թվում էր, թե սուլթանների տիրապետության փլուզումն օրերի հարց է: Իրականում էր Կ.Սարքսի կանխատեսումն այն մասին, որ Օսմանյան կայսրության փլուզումն անխուսափելի է²:

Արդուլ Համիդը հաշտություն էր հայցում: Բայց դա անում էր խորամանկորեն, քաշքշուկով, արևմտանվորապական մայրաքաղաքներից, մասնավորապես Լոնդոնից միջամտություն ակնկալելով: Դա էր պատճառը, որ թե՛ զինադադարի, թե՛ խաղաղության պայմանագրի կնքումը ձգձգվեց, զինադադարը կնքվեց հունվարի 31-ին՝ Ադրիանապոլսում³, իսկ հաշտության նախնական պայմանագիրը՝ մարտի 3-ին, Սան Ստեֆանոյում⁴:

ջան», «Մինչև ե՞րբ», «Կարմիր ժամոց» գեղարվեստական երկերի հեղինակ - Ա.Կ.:

¹ «Նոր կյանք» (Լոնդոն), 1898, N 19, 1 հոկտեմբերի, էջ 291:

² Маркс К. и Энгельс Ф. Соч., I т. 21, М., с. 467.

³ Annuaire diplomatique de l'Empire de Russie, pour l'Anne 1878, S. Petersbourg, p. 213-220.

⁴ Հայաստանը միջազգային դիվանագիտության...:

Այս ժամանակամիջոցը հագեցած է դիվանագիտական նրբին պայքարով, անգլիական, ավստրո-հունգարական կառավարությունների ակտիվ գործողություններով, որոնց նպատակն էր բոլոր միջոցներով կանխել ռազմական հաղթանակին համապատասխան Ռուսաստանի քաղաքական և դիվանագիտական վերընթացը, ավելի շատ օգուտներ քաղել Օսմանյան կայսրության հոգեվարքից: Թուրքիայի ղեկավարները հակված էին համաեվրոպական քարոզացումների հնարավորության մեջ փնտրելու կայսրության փրկությունը¹:

Անգլիական դիվանագիտությունն ամեն ինչ անում էր, որպեսզի Լոնդոնին վճռական դեր ապահովեր խաղաղության պայմանների քննարկման ժամանակ: Անգլիայի միջամտությունը թուրքական գործերին մեծ դժվարություն էր հարուցում ռուսական քաղաքականությանը՝ արագ և վճռական արդյունքների հասնելու գործում: Լոնդոնը ծրագրում էր 40-հազարանոց բանակ ուղարկել Կ.Պոլսի մատույցները, դեսանտ իջեցնել Բաթումի և Սուխումի շրջանում, հնդկական զորամասեր ուղարկել Հերաթի վրայով Միջին Ասիա, եթե Թուրքիան մերժեր խաղաղության ռուսական պայմանները, և ռուսական բանակը շարունակեր առաջխաղացումը դեպի Կ.Պոլիս²:

Հունվարի 17-ին սուլթանի մոտ հավաքված արտակարգ ժողովը որոշեց զինադադար խնդրել Ռուսաստանից:

Լեյարդը սուլթանի և օսմանյան կառավարական անձանց հետ հանդիպումների ժամանակ, ինչպես ինքն էր խոստովանել, ձգտում էր «փույսեր առաջացնել» և «հասկացնել տալ», որ Անգլիան թույլ չէր տալու Օսմանյան կայսրության կործանումը³:

Թուրքիայի հետ հաշտության խնդիրը ցարի նախագահությամբ հատուկ քննարկման ենթարկվեց:

Ալեքսանդր II-ը⁴ հաստատեց Բ.Դռան հետ հաշտության նախնական պայմանագրի նախագիծը, որ կազմել էին ռուս դիվանագետներ Իզմատևը և Նելիդովը⁵: Դրանից հետո Իզմատևը ճանապարհվեց Ադրիանապոլիս, ուր արդեն հասել էր ռուսական բալկանյան բանակի գլխավոր հրամանատար, մեծ իշխան Նիկոլայ Նիկոլևսկի⁶ շտաբը: Վերջինս այդ օրերին Ալեքսանդր II-ին հեռագրով հարցում էր անում այն մասին, թե ինչպես վարվի Կ.Պոլսի

¹ Вевер Г. Всеобщая история..., с. 617, 619.

² Эсадзе С. Историческая записка об управлении Кавказом, т. 2, Т, 1907, с. 233.

³ Russes et fures. La Guerre d'Orient, Vol. 2, Paris, 1878, p. 748.

⁴ Ալեքսանդր II (1818-1881) – Ռուսաստանի կայսր (1855-1881) – Ա.Կ.:

⁵ Ալեքսանդր Նելիդով (1835-1910) – ռուս դիվանագետ, 1883-1896 թթ.՝ դեսպան Օսմանյան կայսրությունում, 1897-ից՝ Իտալիայում, 1903-1910 թթ.՝ Ֆրանսիայում – Ա.Կ.:

⁶ Նիկոլայ Նիկոլևսկի Ավագ (1831-1891) – ռուս ռազմական և պետական գործիչ, կայսր Նիկոլայ I-ի որդին, գեներալ-ֆելդմարշալ, 1877-1878 թթ.՝ Բալկաններում գործող բանակի հրամանատար – Ա.Կ.:

հետ: Նա հաղորդում էր, որ ճանապարհը դեպի Կ.Պոլիս ըստ էության բաց էր¹:

Հունվարի 8(21)-ին Բ.Դռան լիագործներ Սերվեր-փաշան և Նամիկ-փաշան Կազանիկում՝ ռուսական զորքերի գլխավոր հրամանատարի շտաբում, ծանոթանալով հաշտության պայմանագրի նախագծին, բացականշեցին. «Սա Թուրքիայի վերջն է»: «Ինքնուրույն Բուլղարիան նշանավորում է Թուրքիայի կործանումը, Եվրոպայում նրա տիրապետության վերջը, և դրանից հետո թուրքերին ոչինչ չի մնում, քան նորից ետ վերադառնալ Ասիա», - հայտարարում էր Նամիկ-փաշան²: Նրանք կատաղած հայիոյում էին Անգլիային, որը նրանց դրդել էր պատերազմի, իսկ հիմա թողել բախտի քմահաճույքին: Դրա համար էլ Սերվերին հեռագրին պաշտոնից, և նրան փոխարինեց Սավֆետը³:

Թուրքական լրագրողները ժամանակ խնդրեցին սուլթանի հետ համաձայնեցնելու հաշտության պայմանները: Իսկ սուլթանը չէր շտապում պատասխան տալ:

Նիկոլայ Նիկոլաևիչը տեղեկացնում էր Ալեքսանդր II-ին, որ կամա թե ակամա ռուսական զորքը շուտով կլինի Ցարգրադի պատերի տակ: Օրերն անցնում էին, բայց դրությունը չէր պարզվում:

Այդ միջոցին անգլիական դիվանագիտությունը, ինչպես վկայում է ռուս գեներալ Բորիիկովը⁴ իր հուշերում, ամեն ինչ անում էր «խառնելու» Ռուսաստանի «քարտերը»⁵: Կ.Պոլսի շուրջը խուլ պայքարը շարունակվում էր: Ցարը հատկապես շեշտում էր անգլիացիների հետ անմիջական ընդհարման մեջ մտնելուց խուսափելու անհրաժեշտությունը:

Փետրվարի 3-ին Ալեքսանդր II-ը նորից անգլիացիների հետ զգույշ վարվելու, Կ.Պոլսից ժամանակավորապես զորք մտցնելու, իսկ անհրաժեշտության դեպքում միայն քաղաքամերձ որոշ ամրություններ գրավելու մասին էր հեռագրում:

Փետրվարի 4-ի պատասխան հեռագրում գլխավոր հրամանատարն արդեն գրում էր այն դժվարությունների մասին, որ ստեղծվում էին մահաճաճ և Կ.Պոլսում կուտակված թուրքական զորքերի մեծ թվի պատճառով: Նա գրում էր, որ այլ էր բանը երկու շաբաթ առաջ, այլ էր դրությունն այժմ, երբ Կ.Պոլ-

¹ Бовриков Г.И. В Царьграде в 1878-1879 гг. // Русская старина (СПб), 1913, т. 153, с. 496.

² Татищев С.С. Император Александр II. Жизнь и царствование, т. 2, Т, 1907, с.433.

³ Մեհմեդ Սավֆետ-փաշա (1814-1883) – Օսմանյան կայսրության քաղաքական գործիչ, դիվանագետ, արտգործնախարար, մեծ վեզիր (1878), դեսպան Ֆրանսիայում – Ա.Ա.:

⁴ Газенкамф М. Мой дневник 1877-1878, СПб, 1892, с.347, 453.

⁵ Գեորգի Բորիիկով (1840-1924) – ռուս գեներալ, գրող – Ա.Ա.:

⁶ Бовриков Г.И. Указ. соч, с. 496-497.

սում լուրեր էին պատվում եվրոպական կոնֆերանս հրավիրելու մասին, առանց որի իբր խաղաղությունը վերջնական չէր համարվելու¹:

Փետրվարի 9-ին «Մասիս» թերթում Հակոբ Պարոնյանը² նկատում էր, որ «Ռուսիա իր հապաղումներովը մեծ սխալ կգործի»: Մյուսները նշել են, որ «Դավաճանեցին զվսավոր հրամանատարության նյարդերը»³:

Պետերբուրգում գրում ու խոսում էին անզլիական «ուխտադրության» ու «խարդավանքների» մասին⁴:

Պարզ է, որ ռուսական զորքերը շմտան Կ.Պոլիս այն վտանգից դրդված, որ սպառնում էին Մեծ Բրիտանիան և Ավստրո-Հունգարիան:

Ենչտ էր Կ.Մարքը, որ քանիցս նշում էր, թե Անգլիան երբեք չէր համաձայնվի, որ Ռուսաստանը տիրեր Կ.Պոլսին⁵:

1878 թ. հունվարի 24-ին քանակություններ սկսվեցին մասնաձևերով ռազմաբեմնում: Թուրքական լիազորները ռուսական հրամանատարությունից խնդրում էին դադարեցնել ռազմական գործողությունները: Այդ պահին ռուսական զորքերը կանգնած էին Էրզրումի մատույցներում:

Այն քանից հետո, երբ թուրքական լիազորներն իրենց ստորագրությունը դրեցին Ադրիանապոլսի զինադադարի պայմանների տակ, փետրվարի 2-ին կովկասյան-փոքրասիական ռազմաճակատում մույնպես ռազմական գործողությունները դադարեցվեցին: Փետրվարի 3-ին քանակություններ սկսվեցին Հասան Կալեում, ուր ժամանել էին երկու կողմերի հանձնաժողովները: Փետրվարի 21-ին, Ադրիանապոլսի զինադադարի պայմաններին համաձայն, ստորագրվեց Էրզրումը ռուսական քանակին հանձնելու ակտը: Սահմանի դեմարկացիայի շուրջը վիճարանությունների ժամանակ ռուսական կողմը պնդում էր Բայազետի և Վանի սանջակներից թուրքական զորքը հանելու վրա:

1877 թ. դեկտեմբերի 17(29)-ին Ալեքսանդր II-ը թեև հաստատեց Ա.Նեյի-դովի և Ն.Իզմատսի կազմած խաղաղության պայմանագրի նախագիծը, քայքայ դրանք չէին կարող վերջնական լինել, քանի որ տակավին պատասխան չէր ստացվել խաղաղության պայմանների մասին Վիլիելմ I-ին⁶ Բեռլին և Ֆրանց-Իոսիֆին⁷: Վիեննա հղված մամուլներին: Եվրոպայում և Փոքր Ասիա-

¹ Там же, с. 498:

² Հակոբ Պարոնյան (1843-1891) – գրող-երգիծարան, հրապարակախոս, լրագրող, 1872-ից՝ «Մեղրու» (Կ.Պոլիս) հանդեսի խմբագիր, «Պաղտասար աղբար», «Քաղաքավարության վնասները», «Ճոտակցությունը մեռելոց», «Սեմապատիվ մուրացկանները» երկերի հեղինակ - Ա.Կ.:

³ «Русская старина». (СПб.), т. 153, 1913, с. 495.

⁴ Покровский М. Внешняя политика. Сборник статей (1914-1917), М, 1918, с. 51.

⁵ Маркс К. и Энгельс Ф. Соч, I изд, т. 9, М, с. 397.

⁶ Վիլիելմ I (1797-1888) – 1861-1888 թթ.՝ Պրուսիայի քաղաք, 1871-1888 թթ.՝ Գերմանիայի կայսր - Ա.Կ.:

⁷ Ֆրանց-Իոսիֆ I (1830-1916) – 1848-1916 թթ.՝ Ավստրիայի կայսր - Ա.Կ.:

սիայում Ռուսաստանին անցնելիք տարածքների վերաբերյալ դեռևս չէին ստացվել Բալխանյան և Կովկասյան գլխավոր հրամանատարություններից կատարված հարցման պատասխանները:

Այդ էր պատճառը, որ 1878 թ. հունվարի 19(31)-ին Ադրիանապոլսում կնքված պայմանագրում վերջնականապես ձևակերպված չէին ռուսական պահանջները:

1878 թ. հունվարի վերջին Ալեքսանդր II-ը հաստատեց կովկասյան I-ին նախագիծը:

Սովետական պատմաբան Ս.Չեռնովը գրում է, որ «Փոքր Ասիայում տերիտորիալ գրավումների պորթլեմը ինքնանպատակ չէր և 1877-1878 թթ. պատերազմում ռուսական կառավարության հատուկ խնդիր չէր հանդիսանում»:¹ Չինվորական և տնտեսական խորհրդականների կազմած նախագծերի, առաջարկությունների հիմքում դրվում էր առաջին հերթին Ռուսաստանի գոտու ռազմաստրատեգիական, տնտեսական շահերի պահտնվություն սկզբունքը: Այդ նախագծերից մեկը կազմել էր գեներալ-մայոր Ի.Ստեբնիցկին: Ըստ նրա կազմած մի տարբերակի Ռուսաստանին էր անցնելու 32.186 քառ. վերստ տարածություն՝ 278.281 բնակչությամբ, մասնավորապես Բաբումը, Արդահանը, Արդանուշը, Արդվինը, Կարսը, Օլթին, Բայազետը, Կաղզվանը, Ալաշկերտը, Դիադինը, 1.491 գյուղով և Լազիստանի մի մասը: Այս գեկուցագիրն էլ դարձավ կովկասյան I-ին նախագիծը:

Ստեբնիցկին նախագծի մի այլ տարբերակում առաջարկել էր վերը նշվածին ավելացնել նաև Էրզրում քաղաքը և շրջանը՝ մոտ 10.067 քառ. վերստ տարածությամբ և 154.073 բնակչությամբ²:

«Գողոս» բերքը գրում էր, թե «փոխանակ տիրապետելու մեզ օտար ու բշնամի ազգություններին, ավելի լավ կանենք, եթե մեր սեփական ազգը կրթենք և մշակենք այն երկրների հարստությունները, որոնք արդեն մեզ են պատկանում»: «Սեբերի վեստնիկ» և «Գողոս» բերքերն ամենևին օգտակար չէին համարում Ռուսաստանի համար չափազանց տարածվել Ասիայում և իր, առանց այն էլ ընդարձակ սահմաններն ավելի ևս մեծացնել»³:

Ստեբնիցկու նախագծերում հիմնավորվում էին ապագա տարածքների առևտրատնտեսական օգուտները Ռուսաստանի համար, ընդգծվում էին այն ռազմաստրատեգիական դրական կողմերը, որ ձեռք էին բերվում այդ նվաճումներով: Ինչ խոսք, որ ռուս պաշտոնյա և զինվորական Ստեբնիցկու առաջարկությունների, նախագծերի հիմքում դրվում էին ոչ թե հայ և վրացի ժողովուրդների տարածքային միավորման, համախմբման խիստ դրական արդյունքները, այլ Ռուսաստանի համապետական շահերն ու ցանկալի լուծում-

¹ Чернов С.Л. К вопросу о Сан-Стефанском договоре, 1878 // История СССР (М.), 1975, N 6, с. 137.

² Мегрелидзе Ш.В. Вопросы Закавказья в истории русско-турецкой войны 1877-1878, Тбилиси, 1969, с. 85-86; Чернов С.Л. Указ.соч, с. 138-139.

³ «Փոքր» (Թ), 1877-1878, N 3, էջ 360-361:

մերը: Նա հարց էր դնում նոր տարածքները բնակեցնել Ռուսաստանից բերված բնակիչներով¹:

Տարածքային հարցերում առկա էին տարածայնություններ: Ոմանք ապացուցում էին ռազմաստրատեգիական տեսակետից Բարումի պակաս կարևորությունը Էրզրումի համեմատությամբ: «Բարումն այն ժամանակ մեզ համար կարևոր ստրատեգիական նշանակություն չուներ»: Այս տեսակետին էր նաև Լորիս-Մելիքովը, որը պնդում էր Էրզրումը պահելու անհրաժեշտության վրա, ապացուցում տնտեսական տեսակետից Կաղզվանի աղահանքերի և Սողամուղի անտառային հարստությունների օգտագործման կարևորությունը²:

1878 թ. սկզբին Անգլիան և Ավստրո-Հունգարիան հանդես եկան մի հայտարարությամբ, որտեղ չէին համաձայնվում Թուրքիայի հետ Ռուսաստանի խաղաղության պայմանագրերին: Ջինադադարի շուրջն առաջին բանակցությունների պահին Լեյպզիգը՝ «Դարդանելի նեղուցին ռուսաց պատերազմական նավերում բացվելու առաջարկությունը լսելով՝ բանակցություններն անհաջող հանելու մեծ ճիգ բափեց»³: Ադրիանապոլսի նախնական զինադադարի պայմաններում նեղուցների մասին հօգուտ Ռուսաստանի հողվածը չափազանց կատաղեցրել էր Բիբունաֆիդին: Փետրվարի 8-ին նա հրամայեց ծովակալ Հորնբրիին անգլիական նավատորմի միջերկրական էսկադրան տանել դեպի Մարմարա ծովը⁴:

Կ.Պոլսում դեսպան Լեյպզիգն անում էր ամեն ինչ, որպեսզի զինադադարը Թուրքիայի և Ռուսաստանի միջև կնքվեր տերությունների մասնակցությամբ: Երբ Գորչակովը⁵ մերժեց Ս.Պետերբուրգում անգլիական դեսպան Լոֆտուսին⁶ այդ բանում, Դերբին⁷ Լոնդոնում զայրացած հայտարարեց ռուսական դեսպանին. «Նշանակում է՝ դուք մտադիր եք խաղաղություն կնքել Եվրոպայի գլխի վրայով» (Over the Head)⁸:

Սա էր պատճառը, որ ցարի նախագահությամբ գումարված խորհրդակցությունը որոշեց Բ.Ղառն հետ կնքել միայն նախնական պայմանագիր, որի՝ Եվրոպային հետաքրքրող կետերը պետք է բնմարկվեին տերությունների մասնակցությամբ: Անգլիական կառավարությունը պահանջում էր, որպեսզի

¹ Мегрелидзе Ш.В., Указ. соч. с. 86-87.

² Чернов С.Л. Указ.соч. с. 143.

³ «Մասիս» (Կ.Պոլիս), 1878, N 2074:

⁴ Беляев М. Русско-турецкая война 1877-1878 гг., М, 1956, с. 421.

⁵ Ալեքսանդր Գորչակով (1798-1883) – ռուս դիվանագետ և պետական գործիչ, 1856-1882 թթ.՝ արտգործնախարար – Ա.Կ.:

⁶ Օգոստոս Լոֆտուս (1817-1904) – քրիտանացի դիվանագետ, 1865-1868 թթ.՝ դեսպան Պրուսիայում, 1871-1879 թթ.՝ դեսպան Ռուսաստանում – Ա.Կ.:

⁷ Էդուարդ Մմիթ-Մբենի, լորդ Դեբրի (1799-1869) – քրիտանացի պետական գործիչ, պալպանողական, 1840-1844 թթ.՝ գաղութների գործերի նախարար, 1852, 1858-1859, 1866-1868 թթ.՝ վարչապետ – Ա.Կ.:

⁸ Горяинов С. Босфор и Дарданеллы – СПб, 1907, с. 328.

իրենց երկրի համար ինքնավարություն՝ հավասար բուրքահպատակ մյուս քրիստոնյա ազգերին»¹:

1877 թ. դեկտեմբերի վերջերին Ներսես պատրիարքը, ստեղծված բարդ իրավիճակից դրդված, հայտարարեց հրաժարական տալու իր մտադրության մասին: Այնուհետև լռություն տիրեց, և ազգային ժողովի նիստեր տեղի չէին ունենում: Հետո հունվարի սկզբներին նա ընդհանուր քաղաքական ժողով հրավիրեց և մի ընդարձակ տեղեկագիր կարդաց, որտեղ օսմանյան կառավարության առջև Լիբանանի օրինակով Հայաստանի ինքնավարության հարց էր հարուցվում: Տեղի ունեցան վիճարանություններ: Այնուհետև որոշվեց մի շաբաթով հետաձգել խնդրի քննարկումը:

Մեծ վեգիրին ներկայացրած իր մի գրության մեջ Ներսեսը պարզել էր մշակված ծրագրի էությունը: Այն ընկել էր Պետերբուրգի «*Գողոս*» թերթի էջերը, այնտեղից արտատպվել «*Մշակ*»-ում: Այդ ծրագիրը հանգում էր հինգ գլխավոր կետերի. 1. աշխատանքի ազատություն և ապահովություն, 2. անձնական ապահովություն, 3. սեփականության ապահովություն, 4. ուսումնաբանների, եկեղեցու և ազգային սեփականությունների ապահովություն, 5. վերջապես Հայաստանի վարչական բարելավում՝ ժամանակի պահանջներին և հանգամանքներին համապատասխան²:

1878 թ. հուլիսի 21-ին՝ Բեռլինի կոնգրեսից հետո, Կ.Պոլսի Հայոց ազգային ժողովը նիստ գումարեց՝ լսելու Ներսես Վարժապետյանի հաշվետվությունը Հայոց հարցի շուրջ տեղի ունեցածի մասին: Անդրադառնալով Հայկական հարցի սկզբնավորման պատմությանը՝ նա ապացուցում էր, որ «հայկական խնդիրն իր արդի ձևի մեջ ինքնիրեն չծնվեց, այլ ընդհանուր արևելյան խնդրից ծագեց», որ հայոց խնդիրը տասը տարուց ավելի գոյություն ուներ, մինչդեռ Հերցեգովինան և Բոսնիան, Բուլղարիան դեռ խնդիր չէին արժարժել: Դա հայոց «ժարստահարությունների խնդիրն էր»: Բացատրագրում ընդգծվում էր, որ, ի տարբերություն բուլղարների, հայերն «օրինավորությունից դուրս չեկան», «ապստամբության դրոշ» չպարզեցին օսմանյան տերության դեմ³:

Ներսես պատրիարքի հարցադրումը Լիբանանի օրինակով Հայաստանի ինքնավարության մասին «խառն ժողովի մեջ հափշտակված կուսակիցներ ունեցել է, քայց տակավին չի ընդունվել», - Կ.Պոլսից հաղորդում էր «*Մշակ*»-ի թղթակիցը 1878 թ. հունվարի 13-ին⁴: Որոշվել էր նորից խորհել, թղթակիցն ավելացնում էր, որ «անգլիական կառավարությունը յուր Կ.Պոլսի դեսպան Լեյալարդի միջոցով կուզե խաղցնել հայերը...»: «Ինչպես կարող ենք մենք հավաստալ այն Լեյալարդին և այն անգլիական կառավարությանը, որ օսմանյան տե-

¹ «*Մշակ*» (Թ), 1878, N 28:

² Նույն տեղում, 1878, N 30:

³ Ատենագրությունը Ազգային ժողովու, Կ.Պոլիս, 1878, նիստ Ե, 21 հուլիսի, էջ 61-62:

⁴ «*Մշակ*» (Թ), 1878, N 15:

րությանն էլ այդպիսի սուտ հույսեր տալով խարեց և պատերազմի ամենադառն վտանգներին և մեծ կորուստների ենթարկվեց», - գրում էր նա¹:

Անորոշվածատմ ալ կերպ էին արձագանքում պոլսահայերի կրոնական ու քաղաքական ղեկավարների գործողություններին:

Բաֆֆին² «Մշակ»-ում գրում էր. «Կ.Պոլսի պատրիարքը շողորորթում է, կեղծավորում է և հայ եկեղեցականի հատուկ սովորությամբ ազգի շահերը իր փառքին է զոհում: Պատրիարքը ստիպված է այսպես վարվել, մտածում են կարճատեսները: Դիցուք թե, նա այնքան անձնագոհությամբ չունի, որ իր ժողովուրդի իրավունքները պաշտպանելու համար՝ հունաց Գրիգորի մնան իր պատրիարքարանի դռանը կախաղան հանվի, դիցուք թե, նրա լեզուն Կ.Պոլսում կապված է, բայց ո՞վ էր արգելում նրան թողնել Թուրքիայի մայրաքաղաքը, ընտրել մի եվրոպական քաղաք, թող այդ լիներ Լոնդոն, և այնտեղից իր ժողովուրդի բողոքներին թարգման լիներ...»³:

Շատերն այն կարծիքին էին, որ «թուրքական կառավարությունը, նկատելով, որ Հայաստանի մի մասը իր ձեռքից գնում է և վերջնականապես Ռուսաստանին է անցնում, ավելի լավ էր համարում, որ այդ երկիրը Լիբանանի մնան վարչական ձև ունենա և իր գերիշխանության տակ լինի»: Գրվում էր այն մասին, որ դա վնասակար ուղի էր. «Մենք ավելի հույս ունենք Ռուսիայի, քան այլ տերության վրա»⁴: Ֆրանսիական մի շարք թերթեր նյութեր էին տպագրել, ըստ որոնց սուլթանն էր խորհուրդ տվել Ներսեսին ինքնավարության խնդիրը հարուցել, որ Բ.Դոնը «մատ ունի այդ գործի մեջ»⁵: Ինչպես Կ.Պոլսից հաղորդել էր «Մշակ»-ի թղթակիցը, «ամեն մարդ զարմացավ Ներսես պատրիարքի այդ անսովոր արիության վրա»⁶: Զանի որ Ներսեսի ծրագիրը հավանություն չէր գտել ազգային ժողովում, տարածված կարծիք էր, որ նա այդ քայլն արել էր նաև ղեկավարներից ոմանց խորհրդով:

Գր.Օսյանը⁷, մի կողմից, պատրիարքի գաղտնի խորհրդակցանք էր իր խոսքով և գրչով, մյուս կողմից, իր տունը վերածել էր ժամադրավայրի Սերվի-

¹ Նույն տեղում:

² Բաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան) (1835-1888) - գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ, «Դժոխքի կապալատոր», «Արան պատերազմի դաշտում», «Սառա», «Սարի», «Հարեմ», «Ժաչագողի հիշատակարանը», «Ռսկի արաղաղ», «Խենթը», «Կայծեր», «Դավիթ-Քել», «Սամվել» երկերի հեղինակ - Ա.Կ.:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, 1878, N 42:

⁵ Նույն տեղում, 1878, N 42, 48:

⁶ Նույն տեղում, 1878, N 41:

⁷ Գրիգոր Օսյան (1834-1887) - հասարակական գործիչ, հրապարակախոս, լուսավոր-սահմանադրական շարժման ղեկավարներից, մասնակցել է արևմտահայերի ազգային սահմանադրության (1860), օսմանյան սահմանադրության (1878) մշակմանը, Բելոլիևի կոնգրեսի նախօրեին մշակել է Արևմտյան Հայաստանի բարենորոգումների ծրագրի նախագիծ, վտարանդվել է Փարիզ - Ա.Կ.:

չենի¹, Քյաթիայանի², Մ.Փորթրուզալի³, Հովհաննես Սազըզի⁴, Գևորգ Սամուն-մունճյանի և այլոց համար⁵: Սրանք համոզում էին Ներսեսին, թե ռուսական ծրագրերին չափից ավելի նվիրվածությունը կարող է հայերի կոտորած առաջացնել: Ներսեսը վախեցավ, ընկրկեց և նրանց խորհրդին հետևեց: Թուրքական կառավարությունը խորամանկորեն ոչ միայն չխամբարեց Ներսեսին իրականացնելու իր որդեգրած ուղեգիծը, Եվրոպա պատգամավորություն ուղարկելու նրա միտքը, այլև քաջալերեց նրան⁶:

Սուլթանը գիտակցում էր, որ Ռուսաստանը ռեալ ուժ ուներ իրեն ստիպելու, պարտադրելու, զիջումներ անելու՝ հօգուտ հայերի: Իսկ ինչ վերաբերում էր եվրոպական տերություններին, ապա հենց նրանց միջոցով էր նա ձգտում խանգարել Ռուսաստանի հետագա առաջխաղացմանը:

Ֆրանսիական «Թրան» օրաթերթի՝ Կովկասի քորակիցը դեռևս 1877 թ. նոյեմբերի 22-ին քաջորոշ գրել էր, թե Անգլիան րույլ չէր տա Հայաստանի կցումը Ռուսաստանին: Եվ քանի որ հայերը շարունակում էին բողոքել հարստահարությունների դեմ, անգլիական կառավարությունը մշտապես խոսք էր քացում ինքնօրինության մասին Հայաստանի համար, քայց միայն խոսքով: Իրականում Անգլիայի կառավարության համար կարևորը ռուսական պլանների ծախսողումն էր:

Դեպքերին ակնամտես ռուս լրագրող Ա.Մուլանովը նկատել էր, որ Անգլիան «դեմ չէր», որպեսզի ռուս թուրքական սահմանին ստեղծվեր հայկական «չեզոք իշխանություն», այսինքն՝ հայկական ինքնավար մի միավոր, որի օգ-

¹ Մերովքե Վիչենյան (Մերվիչեն) (1815-1897) - բժիշկ, հասարակական գործիչ, Կ.Պոլսի կայսերական բժշկական ընկերության հիմնադիրներից, Օսմանյան կայսրության քաղաքային բժիշկների բարձրագույն խորհրդի նախագահ, մասնակցել է Ազգային սահմանադրության նախագծերի մշակմանը - Ա.Կ.:

² Հովհաննես Զյաթիայան (1821-1882) - հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս, բժիշկ, 1862 թ. Ջնյթունի ապստամբության օրերին ղեկ է Կ.Պոլսի «Ինդեպոնդանտ» մարմնի» ղեկավար անդամներից, Հայոց բարեգործական ընկերության անդամներից, Ազգային ժողովի երեսփոխան, Կայսերական բժշկական ընկերության անդամ - Ա.Կ.:

³ Միքայել-փաշա Փորթուզալ (1842-1897) - հասարակական-քաղաքական գործիչ, օսմանյան պաշտոնյա, բանասեր-հայագետ, «Եղիշե վարդապետի վասն Վարդան և Հայոց պատերազմին» քննական ուսումնասիրության հեղինակ - Ա.Կ.:

⁴ Հովհաննես-փաշա Սազըզ (1836-1912) - օսմանյան պաշտոնյա, տնտեսագետ, մանկավարժ, առևտրի, կրթության փոխնախարար, 1879-1896 թթ.՝ սուլթան Աբդուլ Համիդ II-ի անձնական գործերի նախարար, իրագործել է Բաղդադ-Բասրա նավագնացության, Մալմեդիկ նավահանգստի, Գոնիայի դաշտի ոռոգման ծրագրերը - Ա.Կ.:

⁵ Օտյան Գ. Սահմանադրական խոսքեր ու ճառեր-դամբանականներ, մահերուն առիթով գրվածքներ, Կ.Պոլս, 1910, էջ ԺԵ:

⁶ Օզանյան Գ. Հայապատում, հայուն պատմական դերը, Մարզվան, 1912, էջ 211:

տագործումով սահման էր դրվելու Ռուսաստանի առաջխաղացմանը դեպի հարավ¹:

Ջ.Քրայսն այդ օրերին հրապարակած իր մի հոդվածում հիմնական մտահոգությունը համարում էր հայերի միջոցով «Ռուսիո դեպի Ասիա առաջ-խաղացումը արգելելը»: «Նրանց ազդեցությունը, որ արդեն հզոր է Փոքր Ասիայի մեջ, - գրում էր Քրայսը հայերի մասին, - հակառուս ազդեցություն պիտի լինի, և նրանց գոհացումը ռուսական միջամտության պատրվակները պիտի ջնջի»²:

Արևմտաեվրոպական դիվանագետների քոլոր գործողություններն ունեին հակառուսական նպատակներ: Նրանց կողմից հայերին տրված խոստումները ոչ մի գործնական իմաստ չէին պարունակում:

Կ.Պուլսում կային մարդիկ, որոնք զգուշանում էին անգլիական խարկանքներից: Նրանք խորհում էին, «թե Լեյարդի թելադրություններին անսալով երբ խարվենք և Ռուսիայի դեմ բողոքել ելնենք, Անգլիայի ինտրիզան կառավարությունը մեզ անպաշտպան կբողմի... և իզուր թուրքիայի ատելությունը հրավիրած կլինենք մեր խեղճ ազգի վրա»³: Նույն պոլսահայ հեղինակը անհրաժեշտ էր համարում «պաշտպանություն հուսալ» Ռուսաստանից, «որովհետև նա մեզ սահմանակից մի տերություն էր», «ժարկավոր եղած ժամանակ կարող է» «նյութական միջոցներով էլ պաշտպանեն», քանի որ «մեզ դրացի է և շատ անգամ դժգոհություններ է հանձն առած արևելյան քրիստոնյա ազգերի պաշտպանության համար»: «Անգլիան ոչ մեզ մոտ է, ոչ էլ քրիստոնյաների պաշտպան», - կարդում ենք նույն հեղինակի մոտ: Նա գտնում էր, որ չպետք է «անխտեն՝ շարժումներով» վնաս հասցնել ժողովրդին⁴:

1878 թ. փետրվարին Գր.Արծրունին գրում էր, որ արևմտահայության վիճակը բարվորելու «հույսը մենք միշտ դնում էինք և միշտ կդնենք Ռուսաստանի վրա»⁵:

Մյուսները տուրք էին տալիս այլ մտայնության. «Մի՞թե Եվրոպական դեսպանաժողովը զեյթունցիների... հայոց ազատության համար թափած արյունը պիտի մոռանա: Ո՛չ, այդ արդարություն չէ, այդ կերպով Եվրոպան մեղապարտ կմնա ապագա սերունդի առջև»⁶:

Հայկական շրջանները, ռուսական քանակի ներկայությունից ոգևորված, դիմեցին գործնական քայլերի: 1878 թ. հուլիսին Կ.Պուլսի ազգային ժողովում ընթերցված բացատրագրում Ներսես պատրիարքը գրել էր. օսմանյան

¹ Молчанов А. Между миром и конгрессом. Письма в «Новое время» корреспондента из Константинополя, СПб, 1878, с. 25-26.

² Մուշեղ արքեպիսկոպոս. Մանչեստրի հայ գաղութը, Բոստոն, 1911, էջ 86:

³ «Մշակ» (Թ), 1878, N 15:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, 1878, No. 23:

⁶ Նույն տեղում:

լիագոր մերկայացուցիչներն Ադրիանապոլիս դեռ չէին ուղևորվել, «ես ու իմ սրբազան եղբայրակիցներս գործել սկսեցինք»¹:

Կ.Պոլսի բերքերն ազատ գրում էին Թուրքահայաստանի ինքնավարության մասին: Օրբազյուղի հայոց թատրոնում Հ.Ադամյանցն արտասանում էր Ռ. Պատկանյանի «Հինմի՞ էլ լռենք» և Մ.Նալբանդյանի «Ազատություն» քանաստեղծությունները²: Հիրավի, Կ.Պոլսում մեծամասնության մոտ տիրապետող մտայնությունն այն էր, «թե շուտով հյուսիսային արծիվը պարտված և ընկճված մահիկին իր պայմանները պիտի առաջարկեր հաշտություն կնքելու համար, և առաջիկա խաղաղությունը Թուրքիայի քրիստոնյաներին քաղաքական ազատություն պիտի բերեր»³:

Երբ 1878 թ. հունվարին Բ.Դոան մերկայացուցիչները նախնական հանդիպումներ էին ունենում ռուսական բանակի հրամանատարության հետ հաշտություն կնքելու հարցի շուրջ, Ադրիանապոլսի առաջնորդական փոխանորդ Գևորգ վարդապետ Ռուսչուլյանը⁴ Ներսես պատրիարքի հրահանգներին համապատասխան նույնպես հանդիպումներ էր ունենում Ֆիլիպոպոլսում ռուսական նախկին հյուպատոս Մ.Կիրովի, Ն.Իզմատևի և ռուս այլ գործիչներին հետ⁵:

Տարիներ անց մահացած Գևորգ Ռուսչուլյանի անձնական արխիվում հայտնաբերվեցին և Ֆիլիպոպոլսում լույս տեսած «Ռազմիկ» թերթում տպագրվեցին նրա հուշերն այդ հանդիպումների մասին: Փաստաթուղթը վերնագրված էր՝ «Նոր դոկումենտ մը հայկական խնդրի ծագման մասին. ծագումն հայկական խնդրույն»:⁶ Նա գրում է, որ ինքն «աշխատել էր» «սիրելի ազգի ազատության համար...»: Ներսես սրբազանի հրահանգով, որն «ի վաղուց իր սրտին մեջ ազգին ազատության գաղափարն և հայկական խնդիրն հղացած էր, քայց ժամանակին անպատեհութենն և քաղաքական խնդիրներն կաշկանդյալ ըլլալով չէր կարող գործել ազատորեն և իրականացնել իր գաղափարներն»⁶:

Երբ Ռուսչուլյանն Իզմատևին հարցնում է, թե ինչ պետք է լինի հայերի ապագան, ռուս դիվանագետը պատասխանում է. «Ռուսական բանակը գրավել է մինչև Էրզրումը, Հայաստանի այդ մասն այժմ ազատություն է վայե-

¹ Ատենագրությունը Ազգային ժողովու..., էջ 63:

² «Մշակ» (Թ), 1878, N 43:

³ Տարութխան. Հայկական խնդիրն ու ազգային սահմանադրությունը Թուրքիայում, 1860-1910, Ա. հատոր, Թ, 1912, էջ 258:

⁴ Գևորգ վարդապետ Ռուսչուլյան (Թաղևու Պողոսյան) (1829-1893) - եկեղեցական, հասարակական գործիչ, բանակցություններ է վարել ռուս դիվանագետների հետ, կազմակերպել է մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչի ընդունելությունը Կ.Պոլսի հայկական եկեղեցում, կազմել և Ն.Իզմատևին է ներկայացրել «ազգային ինքնօրինության» ծրագիրը, որը Ման Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի նախնական տարբերակն էր, վարել է պատրիարքի փոխանորդությունը - Ա.Կ.:

⁵ Նույն տեղում, էջ 270:

⁶ «Ռազմիկ» (Ֆիլիպոպոլիս), 1907, N 152, 19 մայիսի:

լում», բայց հայ ժողովուրդն ազգովին կամ Հայաստանի մեծ մասն առայժմ չի կարողանա ստանալ այն ազատությունը, որ ստացան բուլղարները: Իզմատը դա պատճառաբանում էր այսպես. «Հայերը անպատրաստ գտնվեցին և Հայաստանի մեջ դարձել են «մեռյալ տարր»: Նա խորհուրդ էր տալիս չհուսահատվել, պատրաստվել ուսմամբ, դաստիարակությամբ, համերաշխությամբ, գաղտնապահությամբ, նյութապես ու բարոյապես, պատրաստ լինել այն օրվան, երբ քաղաքակաճությունը հայերին կառաջնորդի դեպի ազատություն, բոլ պատրիարքները ժամավաճառ շլինեն, բոլ սկսեն, գործելու ժամն է»¹:

Մ.Կիրովի օգնությամբ բրթատար է ուղարկվում Ներսեսին, որին Ռուս-չուլլյանը հաղորդում էր 1878 թ. հունվարի 20-ին Իզմատի հետ ունեցած իր գրույցի բովանդակությունը:

«Մեզ համար հայտնի չէ, թե ի՞նչ կերպ հաջողված է Ներսես պատրիարք կամ ի՞նչ զուգադիպություն եղած է, որ իմ մամակ ստանալն տասն օր վերջ վե՛սն. Ստեփան-փաշա Ասլանյան² և Նուրյան-էֆենդին Բ. Բռան կողմանե մասնավոր պաշտոնով մը Աղրիանապոլիս եկան Սավֆետ-փաշաներու տրամադրության տակ: Աղրիանապոլիս մեջ մնացած հիվանդ բուրք գորբերը ի Կ. Պոլիս փոխադրելու»: «Այս երկու անձինք, - շարունակում է Ռուսչուլլյանն իր հուշերում, - պատրիարքի հանձնարարեալ մի այլ պաշտոն ևս ունեին գաղտնի և որը 1878 թ. հունվարի 31-ի թվակիր պատրիարքին հանձնարարականով իբր խորհրդական հայկական խնդրոյն ինձ ներկայացան»³:

Սարովյանը⁴ գրում է, որ 1878 թ. հունվարի 31-ի թվակիր հանձնարարական նամակով Աղրիանապոլիս մեկնած ազգային ժողովի Ա. ատենապետ Ստեփան-փաշա Ասլանյանին և Բ. ատենապետ Հովհաննես-էֆենդի Նուրյանին ռուսական պաշտոնական ներկայացուցիչների հետ բանակցելու համար գաղտնի պատվիրակներ էր կարգել Ներսես պատրիարքը՝ նպատակ դնելով պարզել և ապահովել Հայաստանի ապագա կացության քարտեզավումը: Այս բանազնացնելից առաջինը թուրքական բանակի զինվորական թժկի, իսկ երկրորդը՝ կարմիր մահիկի ներկայացուցչի դերում էին: Իրականում նրանք

¹ Նույն տեղում:

² Ստեփան-փաշա Ասլանյան (1822-1901) - թիշկ, հասարակական գործիչ, աշխատել է Կ. Պոլսի թժկական քարձրագույն դպրոցում, Ազգային պատգամավորական ժողովի պատգամավոր, ժողովի ատենապետ - Ա.Կ.:

³ Նույն տեղում, 1907, No. 153, 27 մայիսի:

⁴ Առաքել Սարովյան (Սարովյանյան) (1863-1949) - պատմաբան, բանասեր, գրող, հասարակական գործիչ, 1894-1911 թթ.՝ Ա.Մանրաշյան նավթարդյունաբերական և առևտրական ընկերության լիազոր ներկայացուցիչ Բարսեղում, Բարսեղում, Թիֆլիսում, Ս. Պետերբուրգում, 1911-1917 թթ.՝ մի շարք նավթային ընկերությունների լիազոր վարիչ, «Հովհանյան և հայերը», «Բելգիա և հայերը», «Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում», «Ալեքսանդր Մանրաշյանց, մեծ վաճառական և քարեգործը» երկերի հեղինակ - Ա.Կ.:

օժտված էին պաշտոնական լիազորություններով և ռուսական հրամանատարի մոտ հանդես էին գալիս պատրիարքի և հայոյրյան անունից¹:

Իզմատևի գրառումներից մենք տեղեկանում ենք, որ պատրիարք Ներսեսը Արիիանապոլսի հովվապետի միջոցով անսրող շնորհավորական մամակ էր հղել ռուսաց գլխավոր հրամանատարին, որը նրան հանձնվեց հանդիսավոր կերպով: Սրանք, Իզմատևին մանրամասն պատմելով Փոքր Ասիայում և Անատոլիայում հայերի ողբերգական վիճակի մասին, հայտարարել էին, որ հայ լուսավորչական հոգևորականությունը պատրաստում է ցարի անունով մի խնդրագիր՝ հարց հարուցել ռուսական զորքերի կողմից գրավված մարզերին ինքնավարություն շնորհելու մասին:

Քանի որ այժմ Թուրքիայի՝ որպես մեծ տերության, գոյությունն անհնարին է դառնում, - հայտարարեցին նրանք, - ապա հայերին անհամեմատ ձեռնառու է հասնել Հայաստանի վերածնությանը Ռուսաստանի հովանու ներքո:

Իզմատևը, օգտվելով այդ գրույցներից, փորձեց ներշնչել իր հայ գրույցակիցներին «Բ.Դեան կողմից էջմիածնի պատրիարքի գլխավորությունը բոլոր հայ հոգևորականության և բնակչության վրա ճանաչելու անհրաժեշտությունը»:

Առաջ անցնելով ասենք, որ հանդիպելով Սավֆետ-փաշայի կատաղի դիմադրությանը՝ մա հրաժարվեց այդ մտքից: Հետագայում իր այդ քայլը մա բացատրում էր մաև ռուսական արքունիքի շահերով՝ գրելով, թե կաթողիկոսի միջազգային դերի մեծացումը վարչական դժվարություններ կհարուցեր Կովկասում:²

Փետրվարի 8-ին Նիկոլայ մեծ իշխանը, Իզմատևը, Նելիդովը, 16 գեներալներ և բարձրաստիճան պաշտոնյաներ այցելում են հայկական եկեղեցի, մասնակցում հանդիսավոր արարողությանը, հյուրասիրվում թեյով: Սկզբում նույնպես նկարագրում է այդ ներկայությունը պատարագին: Ըստ նրա հուշերի եպիսկոպոսը «քարեհաճ տպավորություն էր» թողել իր կրթությամբ և ֆրանսերենի իմացությամբ: Ողջունելով Նիկոլայ Նիկոլաևիչին՝ մա խնդրել էր հովանավորել հայերին ասելով, թե մինչ այդ միակ հովանավորը եղել էր աստվածը³:

Մեկնելու պահին սեղմելով Ռուսչուզյանի ձեռքը՝ Նիկոլայ Նիկոլաևիչն ասում է, որ «ոչ ես և ոչ եղբայրս կայսրը չենք մոռանա զձեզ»: Մի այլ առիթով մա ասել էր, թե «Պեր խնդիրն և հույսն ի դերև չպիտի ելնեն, անհոգ եղեք, եղորս հետ քանակցության մեջ ենք»⁴:

¹ Մարտիան. 6շվ աշխ, էջ 271:

² Игнатъев Н.П. Сан-Стефано // Исторический вестник (СПб), 1915, т. 140, N 4, с. 52, 53, 89.

³ Скалон Д.А. Мои воспоминания, 1877-1878, СПб, 1913, с. 247-248.

⁴ «Բազմիկ» (Ֆիլիպուպոլիս), 1907, N 152, 19 մայիսի:

Ռուսուզվյալները գրում է, որ «այս կես պաշտոնական հայտարարություններն ավելի հույս տվին մեզ. ուրախությամբ մեկնեցաք»: Հետո երկու օրից կոմս Իգնատևը նրան հրավիրում է իր մոտ և ուրախությամբ շնորհավորում. «Աչքդ լույս, գոչեց կոմսը, գործերնիդ հաջող է, կայսեր հավանությունն ստացանք, և Չեր խնդիրն պիտի անցնի ի կարգս հողվածոց ռուս-թուրք դաշնակցության մեջ»: Նա հանձնարարում է մեծ իշխանի համար մի ծրագիր պատրաստել, թե «ի՞նչ են հայոց իղձն ու փափագը»¹:

Թուրքական կառավարական շրջանները զարմացած էին, որ հայերը փորձում էին համագործակցել իրենց հաղթական բշնամու հետ: Երբ այս մասին Ռուսուզվյալները ստիպված էր քաղաքականություններ տալ թուրքական պաշտոնական մարմիններին, մա անգիտամում էր, ամեն ինչ վերագրում ռուսական նախաձեռնությանը, հավաստում թուրքական իշխողների հինգհարյուրամյա ստիպապետությունից հայերի «գոռուակությունը»²: Այլ հեղինակներ նույնպես մատնանշել են այդ հանգամանքը՝ գտնելով, որ Ներսես պատրիարքը չէր կարող իր նախաձեռնությամբ Սան Ստեֆանո գնալ. ռուսական հրամանատարության հետ կապի մեջ մտնել և որ «այդ հանդուզմ քայլն առած ըլլա առանց ռուսական թելադրության»³: Սակայն առկա աղբյուրները հակառակն են ապացուցում: Նախաձեռնությունը բխում էր հայերից: Իգնատևն ընդառաջեց այդ նախաձեռնությանը հաղթական վերընթացի պահին: Իսկ միջազգային իրադրության քարոզչություններին զուգընթաց ստիպված էր չափավորել իր նախնական մտադրությունները:

* * *

Թուրք կառավարողների համար խաղաղության բանակցություններում քաշքշուկն այլևս անհնարին էր դառնում: Կ.Պոլսում սպառնալից վիճակ էր ստեղծվել: Ականատեսները նկարագրել են այն քառասյին, խառնիճաղանջ դրությունը, որ ստեղծվել էր կայսրության մայրաքաղաքում: Բալկաններից փախած և այստեղ խոնված, գոյության միջոցներից զուրկ, տիֆով վարակված զաղթականների թիվը հասնում էր 300 հազարի⁴: «Հասարակաց օգնությունը գրեթե անբավական է անոնց բշվառությունը դարձանելու», - այդ օրերին գրում էր Կ.Պոլսի «Մասիս» թերթը⁵: Պետերբուրգի «Նովոյե վրեմյա» թերթի թղթակից Մուշանովը նկատում էր, որ այդպիսի պայմաններում նույնիսկ կենդանի մարդկանց, երեխաների առուծախը շարունակվում էր. տասնչորս տարեկան աղջկաներին վաճառում էին 300-400 ֆրանկով⁶:

¹ Նույն տեղում:

² Մարտիան. ճշվ աշխ, էջ 286:

³ Գարրիբեյյան Մ.Մ. Հայկական ճգնաժամն և վերածնություն, Բոստոն, 1909, էջ 21:

⁴ Анушин А.С. Указ. соч, с. 383-384.

⁵ «Մասիս» (Կ.Պոլիս), 1878, N 2074:

⁶ Молчанов А. Указ. соч, с. 6, 47, 58.

Երբ ռուսները մտան Սան Ստեֆանո, սուլթան Աբդուլ Համիդը մյուս օրն ուզում էր Բրուսա փախչել: Բոլոր կարգադրություններն արված էին, գանձերը տեղափոխելու համար պատրաստված: Շոգենավը կազմ ու պատրաստ սպասում էր գաղտնի վայրում: Սակայն անգլիական և ավստրիական դիվանագետները կանխեցին նրա այդ մտադրությունը:

Սուլթանն այլևս այլ ելք չէր տեսնում ստեղծված վիճակից, քան խաղաղություն կնքելը: «Ամեն մարդ հաշտություն կուզե, և միայն Անգլիա կհակառակի ասոր», - գրում էր Կ.Պոլսի «Մասիս»-ը¹:

Այլևս քանակ չկար պատերազմը շարունակելու: Բայց բուրբերը դեռ հույսեր էին փայփայում, որ Սան Ստեֆանոյի պայմանագիրը «մեռած տառ կմնար»², քանի որ անգլիական դիվանագետները շարունակում էին երաշխիքներ տալ, հակառուսական գործողությունների դիմել:

Վերջապես, 1878 թ. մարտի 3-ին Կ.Պոլսից ոչ հեռու, Մարմարա ծովի ափին գտնվող Սան Ստեֆանո ամառանոցային քաղաքում, ստորագրվեց ռուս-թուրքական հաշտության պայմանագիրը³: Այն անվանվեց նախնական, «պրելիմինար», քանի որ մյուս տերություններին կամ ամբողջ Եվրոպային վերաբերող բոլոր հարցերը ենթադրվում էր որոշել համատեղ, համաեվրոպական կոնֆերանսում⁴:

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրով Բարձր դուռը վերջնականապես ճանաչում էր Չեռնոգորիայի իշխանապետության անկախությունը: Սերբիան ճանաչվում էր անկախ: Բարձր դուռը ճանաչում էր Ռումինիայի անկախությունը: Ստեղծվում էր ինքնավար Բուլղարիա՝ քրիստոնյաների կառավարությամբ և զեմստոլյական գորքով: Օսմանյան գորքերը հեռանալու էին Բուլղարիայից, իսկ ամբոցները ենթակա էին քանդման: Սա ռուսական զենքի հաղթանակի ամենամեծ արդյունքն էր: Բուլղար ժողովրդի հերոսական ճիգերը, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ, պսակվում էին հաղթանակով:

«Իր ազգային ազատագրությունը Բուլղարիան ստացել է ռուս ժողովրդից», - գրել է բուլղար ժողովրդի մեծ գավակ Գեորգի Դիմիտրովը^{5,6}:

Պայմանագրի 16-րդ հոդվածում ասված էր. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրսերումը նրանց կողմից զրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ քախտման և քարդությունների, որոնք երկու պետությունների քարի հարաբերու-

¹ «Մասիս» (Կ.Պոլիս), 1878, N 2105:

² Покровский М. Указ. соч., с. 51.

³ Հայաստանը միջազգային դիվանագիտության...:

⁴ Татищев С.С. Указ. соч., с. 436:

⁵ Գեորգի Դիմիտրով (1882-1949) - բուլղար և միջազգային կոմունիստական շարժման գործիչ, 1946-1949 թթ.՝ Բուլղարիայի ՆԽ նախագահ, 1948-1949 թթ.՝ Բուլղարիայի կոմկուսի ԿԿ-ի գլխավոր քարտուղար - Ա.Կ.:

⁶ Улунян А.А. Болгарский народ и русско-турецкая война 1877-1878, М, 1971, с. 3.

յունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհասպաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարեկամներն և բարենորոգումներ, և գերծ պահել հայերի անվտանգությունը բողեքից և չեքեզներից»¹:

Այդ հողվածը էականորեն տարբերվում էր եվրոպական թուրքիայի երկրամասերին վերաբերող ձևակերպումներից: Այստեղ քառ անգամ չկար ինքնավարության, կոնկրետ անելիքների մասին: Մյուշդե Բալկաններին վերաբերող հողվածների բովանդակությունը կոնկրետ սահմանումներ էր պարունակում: 16-րդ հողվածն այն էքսպրոմտի արյունքն էր, երբ Հայկական հարցը դիվանագիտական մարզում հարուցվեց հանպատրաստից: Իզմատնը դա քավարար էր համարում՝ ասելով, թե հայերի համար չափազանց նշանակալից էր, որ Օսմանյան կայսրության գոյության ամբողջ ընթացքում առաջին անգամ հայերի մասին հիշատակվեց միջազգային դաշնագրի մեջ, իսկ Բ.դուռը հրապարակավ ճանաչեց հայ ազգի գոյությունը ասիական թուրքիայում²:

Սան Ստեֆանոյի պայմանագրով թուրքիան պարտավորվում էր Ռուսաստանին 1.410 մլն ռուբլու ռազմատուգանք վճարել: Սակայն պայմանագրի 19-րդ հողվածում ասված էր. «Նկատի առնելով թուրքիայի ֆինանսական դժվարությունները և համակերպվելով նորին մեծության սուլթանի ցանկությանը, ամենայն ռուսաց կայսրը համաձայնվում է... գումարների մեծ մասի վճարումը վոլխարինել... տեխնոլոգիալ վիջումներով»³: Այդ հողվածի հիման վրա 1.100 մլն ռուբլու դիմաց Ռուսաստանին էին անցնում Բեսարաբիայի մի մասը, Արդահանը, Կարսը, Բաթումը, Բայազետը և մինչև Սողանլուլ հասնող տարածքը՝ Օլթի, Արդանուշ, Արդվին, Խումար, Կաղզվան, Ալաշկերտ քաղաքներով ու վայրերով: Գումարի մնացած մասի վճարումը թողնվում էր երկու կողմերի միջև հետագա քանակցություններին և համաձայնությանը:

Կարսը «Հայաստանի ամենահարուստ և ամենակուտորական մասը»⁴, սը»⁴, թոթափում էր թուրքական լուծը, անցնում Ռուսաստանին, միաձուլվում Ռուսահայաստանի հետ: Իսկ Էրզրումը վեց ամիս պետք է մնար ռուսական քանակի ձեռքում, մինչև որ թուրքերը վճարեին ռազմատուգանքը:

Իզմատնն իր հուշերում նկարագրել է, թե ինչպիսի դժվարությամբ հաջողվեց Սան Ստեֆանոյի պայմանագրի մեջ մտնել Կարսը, Բաթումը և Բայազետը Ռուսաստանին հանձնելու մասին կետը⁵:

Հասել էր այն պահը, երբ հոջս էին ցնդում «թուրքիայի անբաժանելիության մասին» խոսակցությունները, որը Ֆրիդրիխ Էնգելսը համարում էր «ֆիլիստերական հին տխմարություն», «դիվանագիտական դատարկ քան»¹:

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 92:

² Լեո. թուրքահայ հեղափոխության գաղափարախոսությունը, Փարիզ, 1934, հ. Ա, էջ 76-77:

³ Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 93-95:

⁴ Маркс К. и Энгельс Ф. Соч, I изд, т. 9, М, с. 400.

⁵ Игнатьев Н.П. После Сан-Стефано, П-д, 1916, с. 228-229.

1878 թ. մարտի 3-ին Ն.Իգնատևը հեռագրեց Կովկասի փոխարքա Մյխայիլ Նիկոլայևիչին. «Պատիվ ունեն հայտնելու Չեղդ կայսերական մեծուքյանը, որ խաղաղության պայմանները հենց նոր ստորագրվեցին Սան Ստեֆանոյում, Կարսը, Բարսումը, Բայազետը, Արդահանը, Օլթին, Արդանուշը, Արդվինը, Ալաշկերտը, Կաղզվանը, Խումարը մնում են Ռուսաստանին: Սահմանը որոշված է առաջին նախագծով»²:

Սովետական պատմաբան Ս.Չեռնովը գտնում է, որ այդ պայմանագիրը Ռուսաստանի դիվանագիտական քրեղոն էր, Արևելյան հարցի լուծման նրա պաշտոնական քաղաքական ծրագիրը: Նեղուցների գրավումը չէր մտնում այդ ծրագրի մեջ: Գլխավոր շեշտը դրվում էր թուրքական տիրապետության տակ գտնվող քրիստոնյաների դրությունը բարելավելու վրա³:

Բալկաններում խորտակվում էր թուրքական հետադիմական տիրապետությունը, իսկ Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի բնակչության համար հնարավորություն էր ստեղծվում ավելի արագ առաջադիմելու ռուսական պետականության հովանու ներքո:

* * *

Սակայն ինչպե՞ս ծնվեց և ինչո՞ւ այդպես ձևակերպվեց պայմանագրի 16-րդ հոդվածը: Մի բան պարզ է, որ այն ամբողջապես չէր արտահայտում Իգնատևի նախնական մտադրությունն ու նախատեսածը:

Ռուսչուզյանը գրում է, որ պատրիարք Ներսեսից պահանջված ծրագիրն ու առաջարկություններն ուշացան: Մրանից անհանգստացած նա Ստ.Ճափազյանի և Նուրյանի հետ կազմում է մի խնդրագիր-ծրագիր, որով խնդրվում է «Ազգային ինքնություն մը Հայաստանի այն գավառներուն համար, ուր կզտնվին բազմաթիվ հայեր՝ ինչպես Վան, Մուշ, Կարին, Տիգրանակերտ ևն»: Պատրիարքից ստացած իր լիազորագրին համապատասխան՝ Ռուսչուզյանն այդ փաստաթղթերի մի օրինակը հանձնում է Իգնատևին, մյուսն ուղարկում Կ.Պոլիս, Ներսես Վարժապետյանին⁴:

Մի քանի օր հետո Իգնատևը Ռուսչուզյանին պարզաբանում է հաշտության պայմանագրում հայերի մասին նախատեսված հոդվածի բովանդակությունը. «Ահա այս հոդված կպարունակե հայուն ապագան, բայց տեսնելու էին, թե ի՞նչ բողոքներով և աղաղակներով Սավֆետ փաշան ընդունեց այս առաջարկությունը, պնդեց, թե հայ ժողովուրդը գոհ է յուր կառավարությունն... և 36 ժամ միջոց ուզեց սուլթանին հավանությունը ստանալու և դաշ-

¹ Маркс К. и Энгельс Ф. Соч. 1 изд. т. 21, М., с. 465.

² Чернов С.Л. Указ.соч., с. 146.

³ Там же, с. 136:

⁴ «Նազմիկ» (Ֆիլիպուպոլիս), 1907, N 154, 26 մայիսի:

նագիրը ստորագրելու համար...»¹: Նա հայտարարեց, որ առանց սուլթանի հրահանգների չի կարող բննարկել հայկական գործերը:² Սկայոնը հաստատում է, որ Իզմասունն ու Նեխիդովն իրենց նախնական ձևակերպումով Հայաստանի համար վարչական ինքնավարություն էին նախատեսել³:

Նիկոլայ Նիկոլաևիչի հետ անձամբ տեսակցելուց հետո պատրիարք Ներսեսը երկու ուղերձ հղեց Ալեքսանդր 2-ին և կանցյելը Գորչակովին: Այդ փաստարտուրը կազմվել էր Գ.Ր.Օսյանի մասնակցությամբ, բայց նրա տակ որվեցին ինը եպիսկոպոսների ստորագրություններ: Ըստ էության դա Ռուսաստանի ուշադրությունն ու հուզատարությունը հայցող մի աղերսագիր էր, որտեղ «կայսերական մեծության գորավոր պաշտպանությունն էին հայցում» «ժայց հասարակության» ինքնավարության համար:

Հիշենք, որ նույն պահին Գրիգոր Արծրունու նախաձեռնությամբ Թիֆլիսի հայերը նույնպես աղերսագիր էին հանձնել Կովկասի փոխարքային: Ինչպես նկատել է Միմաս Չերազը⁴, «Սան Ստեֆանոյի հողվածն աղաչանքներն ծնած էր»⁵:

Եթե ռուսական քանակը հասավ Սան Ստեֆանո, «սնտարակույս Ներսես պատրիարքը շէր կարող շարունակել իր բքրասեր քաղաքակաւնությունը...»: «Կացությունը փոխված էր, ու հանրային կարծիքը գրգռված»: Արփիար Արփիարյանը նշում է, որ «տարրական խոհեմությունը սակայն կպահանջեր Ներսեսի հրաժարումը, և ընտրությունը տեղապահի մը, որ կարենար անցյալի մը կաշկանդումներեն ազատ գործել Ռուսիո մեր դիմումեն անհաջողությամ ալ կարելի էր սպասել ու օր մը հայն ու թուրքը կրնային նորեն մեն մնակ իրարու հետ մնալ, ան ատեն շրջաբերականին պատրիարքը վերադարձնելով իր աթոռը, սուլթանին վստահելի հեղինակավոր միջնորդ մը կունենա-

¹ Նույն տեղում:

² Sarkissian A.O. History of the Armenian Question to 1885, Urbana, 1938, p. 64.

³ Сказан Д.А. Указ.соч, с. 283-284.

⁴ Միմաս Չերազ (1852-1929) - քանաստեղծ, հասարակական և մշակութային գործիչ, մանկավարժ, Հայոց պատվիրակության կազմում մասնակցել է Բեռլինի վեհաժողովին, ղեկավարել է Կ.Պոլսի «Միացյալ ընկերություն հայոց» կազմակերպությունը՝ որպես պատրիարք Ներսես վարժապետյանի մասնավոր պատվիրակ 1880, 1883 թթ. քանակություններ է վարել Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, 1886-1889 թթ., Կ.Պոլսի Կենտրոնական վարժարանի տնօրեն, հրատարակել է «Արմենի» գրական-քաղաքական րեքը, 1908-ին ընտրվել է Կ.Պոլսի Ազգային ժողովի նախագահ, Մատրեսո Բ Կոստանդնուպոլսեցու հետ Ս.Պետերբուրգում հանդիպել է ռուս կայսրի և վարչապետ Ստոլիպինի հետ, ընդգրկվել է Պողոս Նուբարի ղեկավարած ազգային պատվիրակության կազմում, «Գրական փորձեր», «Ազգային դաստիարակություն», «Թե ի՞նչ շահեցանք Բեռլինի վեհաժողովն», «Հայաստան և Իտալիա», «Գրիչ և սուր» երկերի հեղինակ - Ա.Կ.:

⁵ Թե ինչ շահեցանք Բեռլինի վեհաժողովն, Կ.Պոլս, 1878, էջ 79-80:

յինք թուրքերուն հետ մեր հարաբերությանց մեջ: Նահանջելու պատահակա-
նությունը երբեք մեր հաշիվներուն մեջ չենք մտցնելը»¹:

Երբ Խորեն Նար-Պեյին Ներսես պատրիարքն ուղարկում է Սան Ստե-
ֆանո՝ գեներալ Իգնատիի մոտ խնդրելու, որ վերջինս չնոռանա հայերի վիճա-
կի պապահովության խնդիրը ներառել զինադադարի համաձայնագրի մեջ, ու-
սաց դեսպանը նրան ասում է. «Օհ, թող անհոգ մնա *monseigneur* Ներսեսը.
հայերի հոգը անչափ քաշում եմ, որ արդեն մտցրել եմ ահա այս հոդվածը»՝
ցույց տալով իր ձևակերպած 16-րդ հոդվածը²:

Պարզ դարձավ, որ հոդվածի բովանդակությունն էականորեն տարբեր-
վում էր Ադրիանապոլսի զինադադարի պահին Իգնատիի արտահայտած
մտքերից:

Ադրիանապոլսում խմբագրված հաշտության պայմանների նախնական
տարբերակում Իգնատիը «վարչական ինքնօրինություն» էր նախատեսել
«Կուլվասի սահմանակից հայաբնակ գավառներին»: Սան Ստեֆանոյի 16-րդ
հոդվածից հանվեց վարչական ինքնավարության մասին ձևակերպումը, և այն
փոխարինվեց «տեղական կարիքներից հարուցվող բարելավումներն ու բարե-
նորոգումները» առաձգական իմաստով:

Սան Ստեֆանո այցելած Ներսեսը փորձել էր նրան համոզել Հայաս-
տանին ինքնավարություն շնորհելու խնդրում մտցնել որոշակի պարզություն:
Բայց նրա փորձերն ապարդյուն էին անցել: Իգնատիը բավարարվել էր ընդ-
հանուր կետ ձևակերպելով, չափավորել էր պահանջները՝ թե՛ թուրքական ընդ-
դիմությունը հաշիվ առնելով և թե՛ Պետերբուրգից որոշակի ցուցումներ չունե-
նալու հետևանքով: Յարական իշխանությունները մույնիսկ դեռ չէին որոշել և
հստակորեն չէին իրականացնում նվաճված հայկական տարածքներում
իրենց վարչական կառավարման ձևերը: Ի տարբերություն Բուլղարիայի՝
ասիական Թուրքիայում ռուսական բանակի հրամանատարության մեջ հա-
տուկ օղակներ չկային քաղաքացիական գործերը վարելու համար: Ֆ.Մար-
տենսը գրում է, որ «պորտֆելում պատրաստի նախագծեր չկային Հայաստա-
նում տեղական կարգուկանոնի լրիվ վերափոխման համար»: Նա նշում է, որ
մինչև պատերազմի ավարտն այստեղ ռուսական զինվորական իշխանու-
թյունների գործողությունները մնացին որպես ժամանակավոր կարգադրու-
թյուններ և ոչ ավելի: Միայն Կարսում և Արդահանում քաղաքական-զինվորա-
կան վարչության տարրեր ստեղծվեցին³:

Ներսես պատրիարքը Նիկոլայ Նիկոլաևիչին այցելեց պայմանագրի
ստորագրման նախորդ օրը: Երբ նա խնդրեց հոդվածում կետ արձանագրել
հայոց ինքնավարության համար, պատասխանը եղավ այն, թե չափազանց
ուշ է, պայմանագիրն արդեն ձևակերպված է և մյուս օրը ստորագրվելու է:

¹ «Նոր կյանք» (Լոնդոն), 1898, N 19, 1 հոկտեմբերի, էջ 291:

² «Մործ» (Թ), 1907, N 2, էջ 61:

³ Мартенс Ф. Ф. Указ. соч., с. 316-317.

Այս հանգամանքը վկայությունն է այն բանի, որ ամեն ինչ կատարվել էր հանպատրաստից, առանց նախնական հանգամանալի քննարկումների և ուսումնասիրության, առանց որոշակի ծրագրային մոտեցումների:

Երբ մյուս օրը բուրք լիագորներն իմացան 16-րդ հողվածի մասին, նրանք զարմացան, հետո բուռն բողոք հայտարարեցին¹: Ռուսական պատվիրակները մնացին անզիջում, և բուրքերը ստիպված էին նահանջել: Իսկ Գ.Արծրունին շտապում էր առաջնորդող նվիրել 16-րդ հողվածին՝ «Հայաստանի ինքնավարությունը» վերնագրով, որտեղ լավատեսորեն կարծելով, քե «Հայաստանը ունենալու է նահանգական ինքնավարություն», - գրում էր, որ Կ.Պոլսի Հայոց ազգային ժողովը կարող է տեղափոխվել «Էրզրում կամ Վան, դառնա Հայաստանի տեղական, նահանգական ինքնավարության գլխավոր, կենտրոնական վարչություն»²:

Այնուամենայնիվ, «Ներսես պատրիարք այդ հողվածին շնորհիվ ժողովրդական եղալ, հանրային կարծիքը իր հետն էր»: Հայտնի չէր, քե այդ հողվածի հետևանքներն ինչպիսին էին լինելու, բայց գտնում էին, քե «Հայաստան քիչ մը հանգիստ շունչ պիտի կրնար առնել» Ռուսիայի շնորհիվ³:

16-րդ հողվածի մասին Ներսեսը հետագայում ասում էր. «Ժրենց տաք տարին ի վեր արծակած աղաղակը վերջապես արծազանք կտաներ, ու մեր հանուն ազգին ներկայացած խնդրոյն մեկ մասը կլուծվեր ըստ սկզբան և համազգային իրավանց կարգին մեջ կմտներ»⁴:

Սան Ստեֆանոյի պայմանագրի ստորագրումից հետո մինչև Բեռլինի կոնգրեսի գումարումը ժամանակահատվածը սպասումների, ակնկալությունների, տարրերումների, նոր մոտեցումներ մշակելու, նոր հույսեր փայլական ուժերի համար: Սակայն իրողությունն այն է, որ դիվանագիտության գաղտնիքներին անտեղյակ, անզիջական կառավարության խորամանկ, հակառուսական խաղերին անիրագույն մարտիկ շարունակում էին վարդազույն հույսեր կապել իրենց շահը փնտրող գաղութատեր կառավարությունների հետ՝ հիմքում ունենալով նրանց «քրիստոնեասիրությունը», «խիղճը» և «մարդասիրությունը»: Մրանք չափանիշներ են, որոնցով երբեք չէին ղեկավարվում քնչաքաղց կապիտալիստների քե՝ այս, քե՝ այն խմբերը:

Շփոթ, հակասական մտքերի ու տրամադրությունների հորձանքի մեջ տարրերվում էր հայոց ազգային քաղաքականության նավը: Չարիքը հայկական դիվանագիտության այս կամ այն վրիպումի կամ սխալի մեջ չէր: Օսմանյան կայսրության ժառանգությանը տիրանալու մրցապայքարում բախ-

¹ Թումանյան Կ. Պատմություն արևելյան խնդրո և առաջնորդ հայկական հարցի, Լոնդոն, 1905, էջ 518:

² «Մշակ» (Թ), 1878, N 37:

³ «Նոր կյանք» (Լոնդոն), 1898, N 19, I հոկտեմբերի, էջ 291:

⁴ «Մասիս» (Կ.Պոլս), 1878, N 2156:

րով, նույն զենքով պաշտպանի իրեն, ինչ միջոց և զենք գործ են ածուս նրան շրջապատող վայրենի ավազակները այն ազգը ջնջելու համար»¹:

Շատերն արդեն տարակուսում էին, որ «հայերի վիճակը փոփոխություն չի կրելու, շատ-շատ տաճկական Հայաստանի ռուսաց զորքերով գրավված մասը կմիանա Կովկասի հետ, բայց մնացած մեծ մասը դարձյալ կմնա բուրքերի ձեռքում, գուցե մի քանի խոստումներով, որպես միշտ եղել է մինչև այսօր և միշտ մնացել են որպես մեռյալ տարր...»: Այսպիսի վիճակը բացատրվում էր նրանով, որ «իրենք հայերը անշարժ մնացին և իրենց համար չմտածեցին»: «Գերեզմանների վրա ոչ որ ուշադրություն չի դարձնում, որովհետև նրանք լուռ են, գոհ են իրենց վիճակից»²:

Ամիսներ անց Ներսես Վարժապետյանը, հիշեցնելով Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածի բովանդակությունը, ասում էր. «Արդյոք ճիշտ մեր ուզածին պես եղա՞վ հիշատակությունը. ոչ. այլ քաղաքակրթության մեջ «երբ չես կարող անել ինչ-որ ուզում ես, պետք է անես ինչ-որ կարող ես»: Նա գրում էր, որ «մեր ազգային խնդիրը արևելյան ընդհանուր խնդրի հետ նոր կերպարանք ու նշանակություն ստացավ»³:

Մյաժամանակ նշվում էր, որ 16-րդ հոդվածում որոշակիորեն ճշտված չէր հայկական խնդրի լուծման եղանակը: Այնուամենայնիվ, պատրիարքն ասում էր, թե «Սան Ստեֆանոյի դաշնագրության 16-րդ հոդվածը երբ ձեռք անցուցինք, ավելի եռանդությամբ սկսեցինք աշխատել: Մեր գործը չէր լսնցած, այլ սկսած էր»: Նա ասում էր, որ իմանալով Սան Ստեֆանոյի պայմանագրի առաջիկա վերանայման անխուսափելիության մասին, հարկ համարվեց եվրոպական շահագրգռության միջոցով ավելին ստանալ: Մասնավորապես ակնկալվում էր, որ Անգլիան փոխել տար այն՝ ապահովելու համար Եփրատի հովտի անձեռնմխելիությունը⁴:

Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածն աշխույժ քննարկումների առիթ տվեց: Հայկական մամուլն իր էջերը լայնորեն բացել էր հեղինակների կարծիքների տպագրության առջև՝ փորձելով պարզել հանելուկը, հասկանալ, թե 16-րդ հոդվածի տակ ինչ էր հասկացվում և ինչ էր ենթադրվում Հաստատանի համար:

Գր.Արծրունին հոդվածի բովանդակությունը հետևյալ կերպ էր բացատրում. քրիստոնյա մահանգապետ, սեփական քաղաքային ու գյուղական վարչություններ, գույքի և անձի ապահովություն, դատարանի առջև քրիստոնյաների և մահմեդականների հավասարություն, հարկահանության մեջ կամայականության բացառում և այլն: Զրդական, չերքեզական ավարառությունները կանխելու նպատակով Արծրունին չէր բացառում ինքնուրույն հայկական պահակազոր ունենալու իրավունքը: Մի խոսքով, լավատեսներն աներկաբայորեն

¹ Նույն տեղում, 1878, N 82:

² Նույն տեղում, 1878, N 41:

³ Ատենագրությունը Ազգային Ժողովու, Կ.Պոլիս, 1878, նիստ Ե, 21 հուլիսի, էջ 63:

⁴ Նույն տեղում, էջ 64:

16-րդ հոդվածն ըմբռնում էին (որովհետև այդպես էին ուզում) որպես «Հայաստանի ինքնավարություն»: Ուրիշները փորձում էին պարզել իրականությունը, պրպտել առաջիկայում տեղի ունենալիքը, ըմբռնել այդ հոդվածին համապատասխան քաղաքականության նպատակները:

Ռուսուզուզյանը գրում է, որ Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածն «ուղղակի մի բողոք էր սուլթանի կառավարության դեմ», որ հիմնված էր Ռուսաստանի ցարին ներկայացված ծրագիր-խնդրագրի վրա և ծանր «տպավորություն» բողոքն սուլթանի, Բ.Գռան և անգլիական կառավարության վրա:

«Ռուստի թե՛ սուլթանը և թե՛ Բ.Գռոջը մեծ խոստումներ տվեցին Ներսես պատրիարքին», խոստովանեցին, թե իրենք լավ գիտեն Հայաստանի կեղեքված և բշվառ վիճակը, որ հարստահարությունները կանխելու նպատակով տրամադիր են մի քանի գավառներում հայ կուսակալներ նշանակել և քարե-նորոգումներ մտցնելով՝ «քարվորել հայոց վիճակը»: Նրանք համոզեցին դիմել Եվրոպային և բողոքել ոչ թե օսմանյան կառավարության, այլ քրդերի դեմ: Նրանք համոզվում էին հայտնում, որ եվրոպական դիվանագետների առաջիկա կոնֆերանսը մի նպատակով կես կձևակերպի, և Բ.ղոռը «ավելի ուժով և սիրով պիտի գործադրի այդ քարե-նորոգումները»:

Անգլիան հայերին իր կողմը գրավելու համար «խոստացավ ամեն պաշտպանություն ընել Բեռլինի վեհաժողովին մեջ ի հաստատ հայկական խնդրին և մի ինքնօրինություն» շնորհել տերությունների հսկողության ներքո¹:

Գր.Արծրունին խմբագրական էր նվիրում այդ հարցին: Նա գրում է. «Մինչև այժմ եվրոպական բոլոր մեծ պետություններից Ռուսաստանը միակն էր, որ հոգում էր թե՛ խոսքով, թե՛ գործով բուրբահպատակ քրիստոնյաների բշվառ դրության վրա»: Իսկ այժմ նրանց մասին «սկսում է մտածել և հոգալ» մաս Անգլիան²: Նա կարծում էր, որ իբր ստեղծվում էր փոխըմբռնում Անգլիայի և Ռուսաստանի միջև Հայոց հարցում: Երկու օր անց նույն Արծրունին արդեն հարցականի տակ էր վերցնում Անգլիայի «քարի նպատակը». «Եթե Անգլիան խաբեց Թուրքիայի պես գորեղ պետության, որքան ուրեմն ավելի հեշտ է նրան խաբել հայերի պես մի փոքրիկ ազգության»³:

Ամեն ինչ անորոշ էր, մտավոր: Տեսակետները չէին բխում գործնական հնարավորություններից: Նրանց հեղինակներն ամտեղյակ էին տերությունների պլաններից, մտադրություններից: Պատահական չէր, որ Անգլիայից էին ակնկալում պաշտպանություն այն դեպքում, երբ հենց այդ տերությունն էր խափանելու թուրքական տիրապետությունից ազատագրվելու ճիգերը: Անգլիական դիվանագիտության այրերը չափազանց ճկուն էին գործում: Նրանց արված խոստումները խայծի դեր էին խաղացել պատրիարքարանի «արտաքին-քաղաքական» կողմնորոշումը բանաձևելու գործում: Որոշակի տեսակե-

¹ «Ռ-սզմիկ» (Ֆիլիպպոպոլիս), 1907, N 154, 26 մայիսի:

² «Մշակ» (Թ), 1878, N 12:

³ Նույն տեղում, 1878, No. 15:

տի բացակայությունն իրեն զգալ տվեց ամբողջ ժամանակ: Սան Ստեֆանոյից մինչև Բեռլին և շարունակվեց մշտապես տասնամյակներ շարունակ:

Սան Ստեֆանոյի պայմանագիրը քննարկման դրվեց և վերանայվեց Բեռլինի կոնգրեսում: Արևմտաեվրոպական դիվանագիտությունն ամեն ինչ արեց ռուսական զենքի հաղթանակի շնորհիվ թուրքական լծից ազատագրվող ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պրոցեսը խոչընդոտելու համար: Կոնգրեսում պարզ դարձավ, որ հայկական ինքնավարության մասին հարցադրումը լոկ խաբեություն էր, որ անգլո-թուրքական դիվանագիտությունը խրախուսեց Ռուսաստանի քաղաքականությունը շրջափակելու համար: Բեռլին ժամանած Խրիմյանի պատվիրակությունը միայն արհամարհանքի արժանացավ: «Բեռլինի տրակտատը հայ ժողովրդի զգալի մասը թողեց թուրքական լծի տակ: Պատմությունը ցույց տվեց, որ կապիտալիստական տերությունների այդ որոշումը ճակատագրական եղավ թուրքահայերի համար, այն նրանց մատնեց ֆիզիկական ոչնչացման»¹:

¹ История дипломатии, т. 2, М, 1963.

1878 թ. ՍԱՆ ԱՏԵՖԱՆՈՅԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ԱՆԳՆԻՎԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ¹

1875-1878 թթ. Բալկանյան ճգնաժամի, 1877-1878 թթ. ռուս-բուլղարական պատերազմի ժամանակ, երբ Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդները ռուսական զենքի օգնությամբ թոթափում էին բուլղարական դարավոր լուծը, Մեծ Բրիտանիայի ինգլերիպիստական կառավարությունն իր քաղաքականությանը խոչընդոտում էր սլավոնների, հայերի ազգային-ազատագրական շարժումների հաղթանակը:

Անգլիական կառավարողների հակառուսական քաղաքականությունն առանձնապես բացասական դեր խաղաց արևմտահայության քաղաքական ճակատագրում: Պատերազմի ժամանակ ռուսական բանակը գրավեց Ալաշկերտը, Բայազետը, Կարսը, Արդահանը, Խնուսը, Էրզրումը և այլ հայկական տարածքներ, նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հայ ժողովրդի համախմբման, միավորման, Ռուսաստանի հովանու տակ ազգովին գոյատևելու և զարգանալու համար: Սան Ստեփանոյի հաշտության պայմանագիրը շոշափելի հիմքեր էր տալիս՝ իրականացնելու այդ խնդիրները: Սակայն անգլիական ինգլերիպիստական կառավարողներն իրենց գաղութատիրական պլաններին համապատասխան, Օսմանյան կայսրության փլուզումից ափելի մեծ պատահունք փախցնելու, ռուսական առաջխաղացումը դեպի Առաջավոր Ասիա կանխելու նպատակով, քիմարեկյան Գերմանիայի, միապետական Ավստրո-Հունգարիայի, Ֆրանսիայի հետ համատեղ՝ ընթացան ռուսական զենքի հաջողությունը վերանայելու, նսեմացնելու ուղիով, զգալի վնաս հասցնելով ազատության ծարավի ժողովուրդների պայքարին ինչպես Բալկաններում, այնպես և ասիական թուրքիայում:

Ներկա հոդվածում փորձել ենք բացահայտել անգլիական քաղաքականության հետապնդված նպատակները, այն բացասական դերը, որ նա խաղաց հայ ժողովրդի համար բախտորոշ պահին:

Կ.Մարքսը գրում էր, որ սկսած 1815 թ.² Եվրոպայի մեծ տերությունները ոչ մի բանից այդքան խիստ չէին սարսափում, որքան Օսմանյան կայսրության ստատուս թվոյի խախտումից²: Իսկ ստատուս թվոյի քաղաքականությունն Օսմանյան կայսրության սուլթանական իշխանության կողմից քրիս-

¹ Կիրակոսյան Ջ. 1878 թ. Սան Ստեփանոյի հաշտության պայմանագիրը և անգլիական դիվանագիտությունը // «Բանբեր Երևանի համալսարանի» (Ե.), 1978, N 1 (34), էջ 83-106:

² Маркс К., Энгельс Ф. Соч, М, I изд, т. 9, с. 393.

տոնյա հպատակների ճնշման հավերժացումն էր¹: «Եվրոպական դիվանագիտության համար և նույնիսկ եվրոպական մամուլի համար ամբողջ Արևելյան հարցը հանգում է հետևյալ երկընտրանքին՝ կա՛մ ռուսների կողմից Կ.Պոլսի գավթում, կա՛մ ստատուս քվո: Երրորդ ելք նրանց համար գոյություն չունի»²: Այդպիսի քաղաքականությունը շրջալսում էր թուրքական տիրապետության դեմ ճնշված ժողովուրդների երկարամյա ազգային-ազատագրական պայքարը, երկարածգում Օսմանյան կայսրության՝ հետամնացության ու չարիքի այդ ամբողջ՝ ժողովուրդների բանտի խորտակումը:

Ֆ.Էնգելը գրում է, որ ինչպես Բալկանների քրիստոնյաները, այնպես էլ Կովկասյան լեռնաշղթայից հարավ թուրքական տիրապետության տակ գտնվող մանր քրիստոնեական պետությունները և քրիստոնեություն դավանող հայերը պատրաստակամությամբ էին արձագանքում ռուսական առաջխաղացմանը³:

Անգլիական կառավարողները, մամուլը քողարկում էին իրենց հետապնդած նպատակները, միակողմանիորեն մեկնաբանում Ռուսաստանի ակտիվությունն Արևելյան հարցում՝ շեշտելով նրա հետապնդած նվաճողական ծրագիրը:

Արևմուտքում անտեսվում էր այն հսկայական առաջադիմական առաքելությունը, որ կատարում էր Ռուսաստանը Օսմանյան կայսրության լուծը ճնշված ժողովուրդների կողմից թոթափելու գործում: Վերջին հաշվով, առանց Ռուսաստանի ռազմաքաղաքական և քարոչական օժանդակության բացառվում էր թուրքական բռնակալական տերության դեմ գոռ մարտերի ելած սերբերի ու չեռնոգորցիների, բուլղարների և մակեդոնացիների, հայերի և վրացիների երկարամյա կռիվների հաջողությունը: Ռուսաստանն էր հակաթուրքական պայքարի դրոշ պարզած ժողովուրդների հույսը:

1875-1876 թթ. բալկանյան ժողովուրդների հակաթուրքական պայքարի նոր պտղկումի պահին անգլիական կառավարությունը չափազանց նախանձախնդիր հետևում էր դեպքերի զարգացմանը: Օսմանյան կայսրության ավանդական «հովանավորները» ստատուս քվոյի քաղաքականության ասպետները նորից հանդես եկան սուլթանական ռազմաֆեոդալական ռեժիմի պաշտպանի դերում: Անգլիան հակասլավոնական քաղաքականության գլխավոր այուսներից մեկն էր: Նա ձգտում էր, որ Ռուսաստանը հաջողության չհասնելու ճնշված ժողովուրդների պայքարին օժանդակելու գործում: Իսկ Ռուսաստանին սևծովյան նեղուցներից հեռու պահելու խնդիրը ամբողջ 19-րդ դարում անգլիական պետական գործիչները համարում էին իրենց քաղաքականության կենսական հարցերից մեկը: Ահա թե ինչու Լոնդոնի թուրքաֆիլները ստահող լուրեր էին տարածում, չարախոսում այն մասին, թե իբր բոսնիական,

¹ Նույն տեղում, էջ 411:

² Նույն տեղում, էջ 389:

³ Նույն տեղում, հ. 16, մ. 2, էջ 9:

բուլղարական ապստամբությունները ռուսական գործակալների սարքած գործերն էին¹:

Տակավին հարյուր տարի առաջ հայկական մամուլի էջերում հերքվում էին անգլիական արքյուրների տարածած այն սուտ լուրերն ու հիմնագուրկ տեսակետները, քե հայկական հուզումներն իբր «ռուսական զրգռությունների արդյունք էին»²:

Երբ 1876 թ. մայիսի 13-ին Ռուսաստանի, Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի ներկայացուցիչներ Գորչակովը, Անդրաշին³ և Բիսմարկը⁴ իրապարակեցին Բեռլինի հուշագիրը, որով թուրքական կառավարությունից պահանջվում էր երկու ամսով զինադադար կնքել պավոն ապստամբների հետ և քանակցությունների միջոցով հասնել համաձայնության, Բիքոնսֆիլդի կառավարությունը մեծեց միանալ այդ պետությունների տեսակետին: Երբ Վիկտորիա թագուհին⁵ տարակուսանք է հայտնել այդ կապակցությամբ և տատանվել անգլիական նավատորմը թուրքական ջրերն ուղարկել, Բիքոնսֆիլդը պատասխանել է նրան. «Չերդ Գերազանցությունդ նավատորմը հրաման էլի ստացել Միջերկրական ծովում պաշտպանելու քրիստոնյաներին կամ թուրքերին, այլ՝ Չերդ պայծառության կայսրությունը: Եթե նորին գերազանցությունը հավանություն տա Բեռլինի հուշագրին, սպա Կ.Պոլիսը կօկուպացվի Ռուսաստանի կողմից, և թուրքական նավատորմը կանցնի Ռուսաստանի հովանավորության տակ»⁶:

1876 թ. դեկտեմբերին, Կ.Պոլիս խորհրդաժողովի առիթով Բիքոնսֆիլդն արտաքին գործերի մինիստր Դերբիին ուղղված մի նամակում բողոքում էր անգլիական պատվիրակ Մոլսերիից⁷, որն իբր քե ընկել էր Կ.Պոլսում ռուսա-

¹ Ситклер Т. Восточный вопрос, СПб, 1878, с. 20.

² Blue Book. Accounts and Papers. State Papers, London, 1877, N 1, p. 375.

³ Դյուլա Անդրաշի Ավագ (1823-1890) – հունգարացի պետական և քաղաքական գործիչ, դիվանագետ, 1867-1871 թթ.՝ Հունգարիայի վարչապետ և պաշտպանության նախարար, 1871-1879 թթ.՝ Ավստրո-Հունգարիայի արտգործնախարար - Ա.Կ.:

⁴ Օտտո Բիսմարկ (1815-1898) - գերմանացի պետական գործիչ և դիվանագետ, իշխան, 1851-1859 թթ.՝ Պրուսիայի ներկայացուցիչ Գերմանական Միության բունդեսպետ, 1859-1862 թթ.՝ Պրուսիայի դեսպան Ռուսաստանում, 1862 թ.՝ Ֆրանսիայում, 1862—1867 թթ.՝ Պրուսիայի վարչապետ և արտգործնախարար, 1867-1871 թթ.՝ Գերմանիայի բունդեսպետ, 1871-1890 թթ.՝ ռայխսկանցելր - Ա.Կ.:

⁵ Վիկտորիա (1819-1901) – 1837-ից՝ Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի Միացյալ թագավորության թագուհի - Ա.Կ.:

⁶ Seton-Watson R.W. Op. cit, p. 35.

⁷ Ուորներ Մոլսերի (1830-1903) - քրիստանացի քաղաքական և պետական գործիչ, պահպանողական կուսակցության ղեկավար, 1866-1867 թթ., 1874-1878 թթ.՝ Հնդկաստանի գործերի նախարար, 1878-1880 թթ.՝ արտգործնախարար, 1885-1886, 1886-1892, 1895-1902 թթ.՝ վարչապետ և մինչև 1900 թ.՝ միաժամանակ արտգործնախարար - Ա.Կ.:

կան դեպքեր Իզմատևի ազդեցության տակ և լրիվ չէր գիտակցել, որն իր խնդիրն էր ռուսներին հեռու պահել Թուրքիայից և իղևալական գոյություն չապահովել Թուրքիայի քրիստոնյաների համար¹:

Ուշադրություն դարձրեք՝ «չապահովել»: Իսկ հետո, տարիներ շարունակ, անգլիական դիվանագետները շաղակյատում էին քրիստոնյաների դրության բարելավման անհրաժեշտության մասին:

Իհարկե, Թուրքիայի նկատմամբ անգլիական քաղաքականությունը չափազանց մանվածապատ և զգուշավոր քայլերի մի միասնություն էր: Փաստերը վկայում են, որ թե՛ Բիքոնսֆիլդը, թե՛ նրա համախոհներն արևելյան ճգնաժամը սրվելու պահին արդեն ունեին գործողությունների իրենց տարբերակները: Նրանք ինչ-որ տեղ հակված էին մաս Օսմանյան կայսրությունը որպես պետություն վերացնելուն: Սակայն ի՞նչ գնով, ի՞նչ բաժին վերցնելով Անգլիային, ահա՛ խնդիրը: Վերջին տարիներս կատարված ուսումնասիրություններն այդ են վկայում: Օրինակ, 1876 թ. սեպտեմբերին Մուլսերին, հակառակ Կ.Պոլսում դեպքան էլիտի կարծիքի, գտնում էր, որ Անգլիան ոչինչ չի շահի Թուրքիային պաշտպանելուց, որ դաշինքը նրա հետ նույնիսկ խայտառակություն է, որ «թուրքական ատամը պետք է հեռացվի, եթե այն նույնիսկ պահելու բան է»: Բիքոնսֆիլդը չէր ամտեսում Օսմանյան կայսրության մոտալուտ փլուզման հնարավորությունը և դրա շուրջ «անկեղծ բանակցություններ» վարելու մասին էր խոսում: 1877 թ. փետրվարի 20-ին ևս Լոնդոնում ռուսական դեպքան Շուվալովին² ասել է, թե Օսմանյան կայսրության «օրերը հաշվված են. պետք չէ արագացնել նրա անկումը, բայց անհրաժեշտ է լքողներն մտածել այն բանի վրա, թե ինչ կկատարվի դրանից հետո, և մախապատրաստվեք»³: Իսկ հրապարակավ Բիքոնսֆիլդը թուրքաճակատ հայտարարություններ էր անում:

«Մեր դիրքորոշումն ամբողջապես տարբեր է մյուս կառավարությունների դիրքորոշումից», - ասում էր Բիքոնսֆիլդը⁴: Այդ քաղաքականությունը պայպայմանավորված էր ոչ թե թուրքական սուլթանի նկատմամբ Անգլիայի բարեկամությամբ, այլ Բալկաններում և նեղուցների շրջանում Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը սահմանափակելու ցանկությամբ:

Անգլիական կառավարությունը հակված էր դեպի թուրքերը այն պահին, երբ Բոսնիան ու Հերցեգովինան, Չեռնոգորիան Սերբիայի օգնությամբ ազատության պայքարի դրոշ պարզեցին՝ կռվի ելնելով թուրքական տիրապետության դեմ:

Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Ֆ.Մարտենսը գրել է, որ Արևելյան հարցում «ընտրություն կարելի էր անել միայն թուրքերի և քրիստոն-

¹ Նույն տեղում, էջ 13:

² Պյոտր Շուվալով (1827-1889) – ռուս պետական գործիչ, դիվանագետ, կոմս, 1874-1879 թթ.՝ Սեմ Բրիտանիայում Ռուսաստանի դեսպան - Ա.Կ.:

³ Штато О.Б. Захват Кипра Англичей, М, 1974, с. 35, 37, 105.

⁴ Seton-Watson R.W. Op. cit, p. 149, 154, 155.

յաների, բուրբական բռնակալության և քրիստոնյաների ապրելու իրավունքի միջև, բաշխբոզուկների նկատմամբ սիրո և դժբախտ ռայային ցավելու միջև»: Մարտենը ցույց էր տալիս, որ Անգլիան գործում է քաղաքակրթության և ճնշվածների դեմ, հանդես գալիս Օսմանյան կայսրության, «ասիական տգիտության», «կամայականության և հանցագործությունների պաշտպանության»:¹ «Եթե, այսպիսով, Անգլիան արևելյան հարցում բացահայտորեն գրավել է բաշխբոզուկների և բուրբերի կողմը, - գրում է Մարտենը, - ապա միայն ցանկություն ունենալով դժբախտ քրիստոնյաներին պաշտպանել Ռուսաստանից»: Մարտենսի հուժողը հասկանալի է¹:

Հիրավի, երբ անգլիական լիբերալ «Դեյլի Նյուս» թերթի թղթակից Մակգանն իր թղթակցություններով ցույց էր տալիս Բուլղարիայում բուրբական զազանությունները, Բիքոնսֆիլդը պառլամենտի ամբիոնից և թերթերի էջերում ոչ միայն տարակուսամբ էր հայտնում այդ սարսափելի լուրերի մասին, այլև փորձում էր հերքել ճշմարտացի փաստերը, դրանք անվանում «սենսացիոն, ուշադրության անբարժան բանբասանքներ»: Նույն ձևով է իրեն պահել Կ.Պոլսում անգլիական դեսպան Հենրի Էլիոտը: Անգլիացի ժողովախոսը գրել է, որ Ռուսաստանը հանդես էր գալիս հանուն մարդկության և քրիստոնեության, «փակ անգլիական քրիստոնյան» հանուն բարբարոսության և բռնակալության, հանուն չարի և զազանության»²:

Անգլիական դիվանագիտությունը «նոր օսմաններին» խրախուսելու և փայփայելու միջոցով ձգտում էր ընդդիմանալ Բալկաններում ազգային պետությունների ստեղծման, ռուսական քաղաքականության օգնությամբ Բալկաններում բուրբական տիրապետության վերացման պրոցեսին:

Դեռևս 1877 թ. մայիսի 6-ին Անգլիայի արտաքին գործերի մինիստր Դեբբին մի նոսա էր հղել Ռուսական կայսրության կառավարությանը, որտեղ, պարզելով Մեծ Բրիտանիայի դիրքորոշումը շեզոր մնալու մասին, միաժամանակ ընդգծում էր նրա «առանձնահատուկ շահերը» հարգելու անհրաժեշտությունը: Դեբբին պնդում էր Սուեզի ջրանցքի անձեռնմխելիության, Կ.Պոլիսը չգրավելու, Պարսից ծոցի շրջանում անգլիական շահերը հարգելու և այլնի մասին³:

Այն ժամանակ անգլիական կառավարությունը նախագծեր էր մշակում Գալիպոլիի բերակղզին, Կրետե կղզին օկուպացնելու, Եգիպտոսի վրա իր իշխանությունը տարածելու վերաբերյալ: Բիքոնսֆիլդը պնդում էր Դարդանելն օկուպացնելու անհրաժեշտության վրա՝ որպես «նյութական երաշխիք ընդդեմ Ռուսաստանի, որն իբր գրավելու էր Կ.Պոլիսը»: Նա ռեալ մտադրություն ուներ օգնել Թուրքիային՝ «պահպանելու Բուլղարիան»⁴: Անգլիական իմպե-

¹ Мартенс Ф.Ф. Указ. соч., с. 171-178.

² Зверства в Болгарии. Письма специального корреспондента "Daily News" Е.Д. Макгаана, СПб., 1877, с. 62, 210.

³ Seton-Watson R.W. Op. cit, p. 173.

⁴ Նույն տեղում, էջ 170-171:

րիալիզմի պարագլուխը երեսպաշտորեն հայտարարում էր, թե «սուբանը պետք է տեր լինի իր երկրում», և դիվանագիտական զինանոցի բոլոր լծակները շարժման մեջ էր դնում՝ խանգարելու պատագրության ծարավ ճնշված ժողովուրդների ձգտումներին:

Դեռևս 1877 թ. օգոստոսի 6-ին Բիքոնսֆիլդը, խիստ անհանգստացած ռուսական քանակի հաղթանակից, հարց էր տալիս. «՞նչ պետք է անել»: Նա չէր տարակուսում, որ Թուրքիան ավերակների կվերածվեր: «Ահա թե ինչու, ասում էր նա, - ես անհրաժեշտ եմ համարում մեր նավատորմը տեսնել նրա ամմիջական ջրերում և Գալիպոլին գրավել որպես նյութական երաշխիք»: «Այն ժամանակ մենք ի վիճակի կլինենք փրկելու Թուրքիան», - հայտարարում էր Մեծ Բրիտանիայի առաջին մինիստրը¹:

Մեծ Բրիտանիայում քաղաքական գրգռվածությունն իր զագաթնակետին հասավ 1878 թ. հունվարին, երբ անհոգ ջինգոիստները (ռուս-հայրենասերները, շովինիստները) հռչակեցին իրենց պատրաստակամությունը՝ կռվի էլնելու ամեն մի հնարավոր թշնամու դեմ²: Եվ հենց այդ պահին նրանք պատերազմի ճիչ արձակեցին.

Մենք չենք ուզում պատերազմել, բայց սատանան տանի, ստիպված ենք:

Մենք ունենք մարդիկ, մենք ունենք նավեր, մենք փող նույնպես ունենք³:

Մամուլում, մյուզիկ-հոլերի, եկեղեցիների բեմերից և բազմաթիվ միտինգների միջոցով Բիքոնսֆիլդն այնպիսի շովինիստական աղմուկ բարձրացրեց, ինչպիսին Անգլիան նույնիսկ Փալմերսթոնի⁴ ժամանակներում չէր իմացել⁵: Անգլիական թերթերը գրում էին Մեծ Բրիտանիայի համար Սան Ստեֆանոյի պայմանագրի անընդունելիության մասին⁶:

1878 թ. հունվարի 14-ին անգլիական կառավարությունը ռուսական կառավարությանը փաստորեն վերջնագիր հանձնեց: Նա հայտնեց Գորչակովին՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվելիք որևէ պայմանագիր, որը փոփոխություն կմտցնեք 1856 թ. Փարիզի և 1871 թ. Լոնդոնի համաձայնագրի մեջ, անվավեր կլինեք առանց այն տերությունների հավանության, որոնք ստորագրել էին իշխյալ համաձայնագրերը:

¹ Temperley H.W.V., Penson L.M. Foundations of British Foreign Policy from Pitt (1792) to Salisbury (1902), Cambridge, 1938, p. 361.

² Lord Newton. Lord Lyons: A Record of British Diplomacy, London, 1913, vol. 2, p. 141-142.

³ Sarkissian A.O. History of the Armenian Question to 1885, Urbana, 1938, p. 70.

⁴ Հենրի Ջոն Փալմերսթոն (1784-1865) - քրիստոնեացի պետական գործիչ, վիզերի կուսակցության ղեկավար, 1809-1828 թթ.՝ ռուսական նախարար, 1830-1834, 1835-1841, 1846-1851 թթ.՝ արտգործնախարար, 1852-1855 թթ.՝ ներքին գործերի նախարար, 1855-1858, 1859-1865 թթ.՝ վարչապետ - Ա.Կ.:

⁵ Ротштейн Ф.А. Международные отношения в конце XIX века, М.-Л.-Д., 1960, с. 29.

⁶ Seton-Watson R.W. Op. cit, p. 346.

հագրգոված է ոչ միայն սլավոնների, այլև բոլոր քրիստոնյաների վիճակի բարելավումով:

16-րդ հողվածի առավելությունն այն էր, որ թուրքական կողմը պաշտոնապես ճանաչում էր Օսմանյան կայսրության սահմաններում «Հայաստան» երկրի գոյությունը, Ռուսաստանը հանդես էր գալիս որպես հայ ժողովրդի պաշտոնական հովանավոր: Արձանագրելով ռուսական զորքերի հեռանալուց հետո հայերի համար ստեղծվելիք հնարավոր դժվարություններն ու բարդացումները՝ ռուսական կառավարությունը միջազգային իրավունքի ուժ էր հաղորդում Բ.Դռան կողմից «անհապաղ» բարելավումներ և բարենորոգություններ իրականացնելու անհրաժեշտությանը: Ռուսաստանի հարևանության, հզորության շնորհիվ, միջպետական ավտյանության բացակայության պայմաններում, ինչ խոսք, ռուսական կառավարության հովանավորությունը բարերար ազդեցություն կունենար արևմտահայության հետագա ճակատագրի վրա:

16-րդ հողվածի առթիվ «Մասիսը» 1878 թ. մարտի 7-ին գրում էր, որ այն «ամեն ազգասեր հայոց խնդակցությանն արժանի է: Կա՞ երկիր մը, որ այնչափ բշվառություն ու հարստահարություն կրած ըլլա, ինչպես Հայաստան և հետևաբար այնչափ հիմնական բարենորոգման կարոտի: Հայաստանի վիճակին բարվորումը կնշանակե արգավանդ երկիր մը վայրագ ցեղերու ավառառություններեն ու ավերմունքեն ազատել և աշխատասեր ժողովրդի կյանքն ու ինչքն ապահովելով՝ երկրագործությունը զարգացնել, որ կայսերական կառավարության համար ոչինչ նվազ շահավոր կենսական կետ մ'է»: Այնուհետև թերթն ընդգծում էր. «Այժմ, երբ ապստամբ գավառաց մեծամեծ արտոնություններ կշնորհվին, արդարություն չէր ըլլա հլու և հնազանդ ժողովուրդներ իրենց հին վիճակին մեջ թողուլ»¹:

1878 թ. փետրվարի սկզբին անգլիական պառլամենտի համայնքների պալատում իսկական ճակատամարտ էր կառավարության ղեկավարների և ընդդիմադիր Գլադստոնի ու նրա կուսակիցների միջև: Ռազմական միևնույն Հարող 6 միլիոն ստեղծվեց էր պահանջում՝ դիմագրավելու համար Օսմանյան կայսրության քայքայման հետևանքով իբր Եվրոպայի համար ստեղծվելիք դժվարություններին: Համայնքների պալատը քվեարկեց այդ գումարը հատկացնելու օգտին²: Ռազմածովային նավատորմը մարտական վիճակի մեջ դրվեց: Հնդկաստանից 7000 զինվոր տեղափոխվեց Մաթրա կղզի: Անգլիայում հրապարակվեցին հակառուսական փաստաթղթեր, նաև կեղծագրեր, որոնք տարածվում էին եվրոպական մայրաքաղաքներում:

Բիքոնսֆիլդը հակված էր մինչև վերջ պաշտպանելու թուրքիային: Բայց նա դա չէր կարող անել բացահայտորեն, քանի որ նրա հավատակորյունները՝ Գլադստոնն ու համախոհները, բուլղարական կուտորածը մերկացրել

¹ «Մասիս» (Կ. Պոլիս), 1878, հ. 2093:

² Аргайльский. Ответственность Англии в восточном вопросе. Факты и воспоминания за 40 лет, СПб, 1908, с. 69.

էին գայրույթի այնպիսի պարսով, Թուրքիան այնպես էր վարկազրկված, որ այդ պահին Բրիտանական թագավորությունում ոչ ոք չէր համարձակվում հանդես գալ օսմանների օգտին¹: Դա էր պատճառը, որ նրա գործողությունների մեջ նրբին և ճկուն քայլերը զուգակցվում էին սուր ճոճելու, սպառնալիքների դիմելու մերտդի հետ: Անգլիացի պատմաբան Մեդլիկոտն ընդգծում է, որ Բրիտանիայի Ռուսաստանին էր համարում Անգլիայի գլխավոր ախտյանը Մերձավոր Արևելքում: Բայց նա չափազանց ճկուն էր գործում: Նա հավասարապես պատրաստ էր սպառնալ պատերազմով կամ գործարքի մեջ մտնել ըստ հանգամանքների: Նա օժանդակություն էր ակնկալում Բիսմարկից, որը նույնպես ձգտում էր չափավորել Ռուսաստանի ազդեցության տարածումը²: Լոնդոնում Գերմանիայի դեսպանը արտաքին գործերի մինիստր Բյուլովին³ շարադրում էր իր տեսակետը՝ գտնելով, որ «եթե ռուսները հաստատվեն Կալաստանում, Պարսից ծոցն ու Սիրիան շարունակ սպառնալիքի տակ պիտի ընկնեն»: Այս բանը չափազանց մտահոգում էր անգլիական դիվանագետներին, որոնք արհեստականորեն ուռճացնում էին հայկական բարձրավանդակին տիրացած և Եփրատի ու Տիգրիսի վերին հոսանքներին, Միջերկրականի սկզբնական սպառնացող ռուսական վտանգը: Լեյարդը նշում էր, թե «Լայաստանի գրավումը տկարացնում է Անգլիայի վարկը մահմեդական աշխարհի վրա»⁴:

Անգլիական պրոպագանդան շինծու աղմուկ էր բարձրացրել Հնդկաստանի մատույցների ռուսական վտանգի հարցի շուրջ: Սան Ստեֆանոյի պայմանագրի վերանայման վրա պնդելով, անգլիական դիվանագետները երեք փաստարկ էին ընդգծում. դեմ էին, որ Բաթումը դառնար ռուսական ռազմածովային թագա. անբույստրելի էին համարում ռուսական ազդեցության տարածումը Եփրատի հովտի վրա. առարկում էին, որ Տրապիզոն-Պարսկաստան ավանդական առևտրական ճանապարհը անցներ ռուսական տիրապետության տակ⁵:

Անգլիական իմպերիալիստներից ամենևին չէին հետաքրքրում հայերի ծանր վիճակը, նրանց ձգտումները: Թող պահպանվեր թուրքական տիրապետությունը Փոքր Ասիայում, միայն չտուժեին անգլիական շահերը, սա էր նրանց հավատո հանգանակը: 1876 թ. տվյալներով, ինչ խոսք, զգալի էր Տրապիզոնի-Բայազետի վրայով անցնող անգլիական առևտրի ծավալը: Տրապիզոնի վրայով արտահանությունը Մեծ Բրիտանիա կազմել էր 95 560 ֆունտ ստեռլինգ, Պարսկաստանից արտահանումը Մեծ Բրիտանիա՝ 104 081 ֆունտ

¹ Девидур А. Дипломатическая история Европы, М, 1947, т. 2, с. 464-465.

² Medlicott W.N. Bismark and Beaconsfield. Studies in Diplomatic History and Historiography, New York, 1962, p. 232-233.

³ Բեյնհարդ Էրնստ ֆոն-Բյուլով (1815-1879) - 1873-ից՝ Պրուսիայի, ապա՝ Գերմանիայի արտգործնախարար - Ա.Կ.:

⁴ Blue Book. Accounts and Papers. State Papers, London, 1877, N 26.

⁵ Russes et Turcs. La Guerre d'orient, Vol. 2, Paris, 1878, p. 1124.

ստեղծվեց: Մեծ Բրիտանիայից ներմուծումը նույն ճանապարհով կազմել էր 83 526 ֆունտ ստեռլինգ, իսկ Պարսկաստան՝ 754 764 ֆունտ ստեռլինգ¹: Ահա քե ինչու անգլիական իմպերիալիստական քաղաքականության գլխավոր դեկլարաներից մեկը՝ Սոլսբերիմ աղմկում էր Տրայիզոն-Քայազեոն-Թավրիզ քարավանային ճանապարհը Ռուսաստանի հսկողությունից զերծ պահելու խնդրի շուրջ: «Հայաստանի ամրոցների ստանալը, - ասում էր նա, - պատճառ կդառնա, որ այդ մահաճգնների ժողովուրդը ենթարկվի ամրոցներին տեր դարձող իշխանության անմիջական ազդեցությանը»²:

Անգլիայում ձայներ էին լսվում Հայաստանը Ռուսաստանի կողմից գրավելու դիմաց Եզդիատոսն ու Կիպրոսը զավթելու մասին: Անգլիացի հեղինակ Անդերսոնը նույնպես գտնում է, որ 1878 թ. զարմանը անգլո-ռուսական պատերազմը ռեալ բան էր³:

1878 թ. մարտին՝ Դեբրիի անկման նախօրյակին, մի նախագիծ էր կազմվել, որ կոչվում էր «Միջերկրական լիգա»: Մարտի 13-ին Դեբրին ցուցում էր տվել Հռոմում անգլիական դեսպանին ներազդել կառավարության վրա, որ պեճվի նա միանար Ֆրանսիային, Անգլիային, Ավստրո-Հունգարիային և Հունաստանին՝ «պաշտպանելու համար» իրենց առևտրական և քաղաքական շահերը Միջերկրականում և նեղուցներում⁴: Այդ նախագիծը Բիքոնսֆիլդը քաղառույն գրած նամակում անվանում էր «Ղաղտնիքների գաղտնիքը»: Ըստ այդ պլանի Անգլիան նախատեսում էր շխանգարել Ավստրիային զավթելու Բոսնիան, Իտալիան գրավելու էր Ալբանիան, Ֆրանսիայի համար նախատեսվում էր Թունիսը, իհարկե Բիսմարկի համաձայնությամբ: Հունաստանը նույնպես մասնակից էր դառնում այդ լիգային⁵:

Իտալիայի արտաքին գործերի մինիստր Կոնտե Լուիջի Կորտին վախեցավ հակառուսական բրկի մեջ մտնելուց: Անգլիական դիվանագիտությունն իր նպատակին չհասավ⁶:

Ֆորին Օֆիսը Սան Ստեֆանոյի պայմանագրի պաշտոնական տեքստի օրինակը ստացավ մարտի 23-ին: Անգլիական կառավարության որոշմամբ ստեղծվեց մի հատուկ կոմիտե, որի մեջ մտնում էին Բիքոնսֆիլդը, Սոլսբերին և ուրիշներ: Կոմիտեն մշակեց և կառավարության քննարկմանը ներկայացրեց իր եզրակացություն-հուշագիրը Սան Ստեֆանոյի պայմանագրի նկատմամբ անգլիական դիրքորոշման մասին: Պայմանագրի 16-րդ հոդվածի մասին այնտեղ ասված էր. «Մենք կարծում ենք, որ այս հոդվածում նախա-

¹ Williams Ch. The Armenian Campaign. A Diary of the Campaign of 1878 in Armenia and Kurdistan, London, 1878. p. 361.

² «Մշակ» (Թ), 1878, N 62.

³ Anderson M.S. The Great Powers and the Near East, 1774-1923. Documents of Modern History, London, 1970, p. 5.

⁴ Temperley H.W.V., Penson L.M. Op. cit, p. 382:

⁵ Seton-Watson R.W. Op. cit, p. 326.

⁶ Temperley H.W.V., Penson L.M. Op. cit, p. 383:

տեսված քարեկավումներն ու ռեֆորմները պետք է երաշխավորվեն մի պարտավորությամբ, որ ստանձնելու են բոլոր տերությունները և ոչ թե միայն Ռուսաստանը, և որ դրանք պիտի հանդիսավոր կերպով դրվեն յուրաքանչյուր տերության նշանակած անդամներից կազմված հանձնաժողովի հսկողության տակ¹: Այնուհետև փաստադրում ավանդ էր. «Ինչ վերաբերում է Հայաստանում տեղիտորիալ կորուստների փոխհատուցմանը, մենք գտնում ենք, որ պետք է նշանդուռ ջանքեր գործադրվեն դեպի արևելք այնքան հեռու ետ մղելու նախատեսվող անբնական արևմտյան սահմանները, որքան թույլ է տալիս Տրապիզոնից Պարսկաստան ներկա առևտրական ճանապարհը թուրքիայի տեղիտորիայում պահելու համար»²:

Սան Ստեֆանոյի պայմանագրի կնքումից անմիջապես հետո «Թայմսը» գրեց, որ Հայաստանի տարածքների անցումը Ռուսաստանին հարկադրում էր Անգլիային «գրավել և պաշտպանել Եգիպտոսը»³: Մարտի 27-ին տեղի ունեցավ կառավարության կարևոր նիստը, որտեղ Բիքոնսֆիլդն առաջարկեց մի շրջաբերական հրապարակել՝ ցույց տալով զենքի դիմելու Մեծ Բրիտանիայի պատրաստակամությունը: Նա անհրաժեշտ էր համարում Հնդկաստանից բերված գործով Կիպրոսը և Ալեքսանդրետան օկուպացնել, որպեսզի «չեզոքացվեն ռուսական նվաճումները Հայաստանում»⁴: Այս առաջարկությունը չընդունվեց Ֆորին Օֆիսի կողմից. մինչև որ Մոլսբերին դարձավ արտաքին գործերի մինիստր՝ մարտի 31-ին հրաժարական տված Դերբիի փոխարեն: Անգլիական պաշտոնական դիրքորոշումը որոշակի դարձավ, երբ Մոլսբերին անցավ իր պաշտոնական պարտականությունների կատարմանը, ինչը նա սկսեց «դրամատիկ մաներայով»⁵: Գործի անցնելուց քսանչորս ժամ հետո արդեն պատրաստ էր նրա աղմուկ հանած շրջաբերականը:

Մոլսբերիի այդ անդրանիկ քայլը կտրուկ բողոքներ Սան Ստեֆանոյի պայմանագրի դեմ: Այս դեմարշը ծրագրված, որոշակի նպատակներ հետապնդող գործողություն էր: Չցանկանալով բանը հասցնել Ռուսաստանի հետ բացահայտ ռազմական ընդհարման՝ Մոլսբերին միևնույն ժամանակ սպառնալիքների միջոցով ձգտում էր ստիպել վերանայելու ռուս-թուրքական պայմանագիրը ի վնաս հարթանակած Ռուսաստանի:

Բիքոնսֆիլդ-Մոլսբերի-Լեյարդ եռյակի որդեգրած դիրքորոշումը «թուրքասիրական էր»: Անգլիան թուրքիային «պաշտպանում էր» իր համար: Մոլսբերիի ապրիլի 1-ի շրջաբերականն ուղարկվեց բրիտանական բոլոր դեսպաններին. դա մի սպառնալի մեղադրական ակտ էր Ռուսաստանի հասցեին⁶: Նա

¹ Ibid, p. 369:

² Ibid, p. 370:

³ «*Times*» (Կ.Պոլիս), 1878, h. 2098:

⁴ Monypenny W.F., Buckle G.E. *The Life of Disraeli, Earl of Beaconsfield*, London, 1920, Vol. 6, p. 266.

⁵ Sarkissian A.O. *Op. cit.*, p. 71.

⁶ Լրիվ տեքստը տե՛ս Temperley H.W.V., Penson L.M. *Op. cit.*, p. 372-380.

Նա հակառուսական դիրքերից խստագույնս քննադատում էր Սան Ստեֆանոյի համաձայնագիրը, այն զնահատում որպես «Մեծ Բրիտանիայի օրինական շահերին անհամատեղելի բան»¹: Ռուսաստանին ամբաստանելով Արևելքում տիրապետող դիրք հաստատելու մտադրությունների մեջ, վիճարկելով Մեծ Բուլղարիայի ստեղծումը, Բալկաններում կատարվող փոփոխությունները՝ Սուլթերին միաժամանակ շեշտում էր, որ Հայաստանի ամրոցները զրավելով և նրա բնակչությունն իրենից կախման մեջ դնելով՝ ռուսական կառավարությունը իրր խոչընդոտներ էր հարուցում եվրոպական առևտրին, որ իրականացվում էր Տրապիզոն-Պարսկաստան գծով: Նա պնդում էր, որ Ռուսաստանի իշխանությունը տարածվելու էր մի տերիտորիայի (իմա՝ Հայաստանի) վրա, որը «Մեծ Բրիտանիայի համար մեծագույն հետաքրքրություն էր ներկայացնում»:

Սուլթերին հատուցում էր պահանջում «Ռուսաստանի ազդեցությունը Հայաստանում չեզոքացնելու համար»: Լեյարդը գրում էր Սուլթերիին, որ Հայաստանի ինքնավարությունը «արտառոց բան է, ռուսների սաղրանք», «թե՛ Հայաստանի հայերը բոլորովին անպատրաստ են ինքնավարության և ինքնավար Հայաստանը չի կարող գոնե մեկ ամիս տոկալ քրդերի դեմ և պիտի դիմի ռուսների օգնության»²: Ահա թե ինչն էր մտահոգում Լոնդոնի վարիչներին, և նրանք դիմում էին տարբեր միջոցների՝ ձայնողելու համար Ռուսաստանի ռազմաքաղաքական հաջողությունը:

Այս տեսակետից ճիշտ չէ Ն.Բելյանը, երբ գրում է, թե Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի աչքում փոքրասիական հարցերին վերաբերող հողվածները «ինքնուրույն մեծ նշանակություն չունենին»³: Ավստրո-Հունգարիայի համար գուցե այդպես էր, բայց Անգլիան, ընդհակառակը, շատ ուժգին շեշտում էր Ասիայում Ռուսաստանի ազդեցությունը սահմանափակելու անհրաժեշտությունը: Բիքոնսֆիլդը և Սուլթերին իրենց հրապարակային ելույթներում այնպիսի էքստազի մեջ էին ընկնում, որ ժամանակին սրամտում էին, թե Անգլիան ուզում էր փրկել Օսմանյան կայսրության ամբողջականությունը, իսկ թուրքերը՝ ոչ: Այդ օրերին դեսպան Լեյարդը սիրում էր ասել, թե ինքը ոչ ռուսատյաց էր, ոչ էլ թրքասեր, բայց իրավունք չունեի մոռանալու իր երկրի շահերը: Իսկ այդ շահերը, ասում էր նա, թելադրում էին, որպեսզի ինքնավար փոքր պետություններ, օրինակ՝ Հայաստան, չկազմվեն, քանի որ նրանք ենթակա կդառնային ռուսական ազդեցությանը: 1878 թ. ապրիլին նա գրում էր Սուլթերիին, թե անգլիական շահերին համապատասխանում էին Թուրքիայի ընդհանուր բարենորոգումն ու ամրապնդումը՝ մի կողմ թողնելով զանազան ազգությունների «զգացական տեսությունները»: Նա գտնում էր, որ լավ կազմակերպված կառավարման սխտեմի դեպքում Թուրքիան սքանչելի բանակ

¹ Деви́дур А. Указ. соч., с. 485.

² Seton-Watson R.W. Russo-British Relations during the Eastern Crises // *Slavonic Review* (London), 1924, p. 410, 424.

³ Беляев М. Русско-турецкая война 1877-1878 гг., М, 1956, с. 423.

կունենար և կկարողանար դիմագրավել հայկական քարճրավանդակի վրայով դեպի հարավ ձգտող ռուսական տարածմանը¹: Իսկ Մինաս Չերազը միանուորեն կարծում էր, թե Անգլիայի շահերը պահանջում էին, որպեսզի Հայաստանի քրիստոնյաները գոհ լինեին: Բեռլինի կոնգրեսի մասխոթակից Սուլթերին Լոնդոնում հայ պատվիրակների մոտ շաղակրատում էր, թե թագուհին ուզում էր, որ «հայերը գոհացուցիչ վիճակ ստանան, վայելելով քարեկեցություն, խաղաղություն և ազատություն»: Եվ Մինաս Չերազը՝ հայ առաջին դիվանագետներից մեկը, այս հայտարարությունը համարում էր «անկեղծ»²:

Անգլիական դիվանագիտությունը, քաղաքական գործիչները Կ.Պոլսի հարուստ վերնախավի մեջ անգլիական առևտրի հետ կապված հայերի առկայությունն օգտագործում էին տակտիկական խնդիրների լուծման համար, իսկ ստրատեգիայում անգլիական գլոբալ շահերի տեսակետից նրանց առկայությունը գրոշի արժեք չունեին: Տվյալ դեպքում խնդրի առարկան բուն Հայաստանի հայությունն էր, որը «փաստորեն ռուսասեր էր», և այդ պատճառով Մեծ Բրիտանիան «չէր ճանաչում նույնիսկ Հայաստան անունով երկրի գոյությունը»³:

Պատահական չէր, որ Սուլթերին և Բիրքեսֆիլդը շուտով՝ Բեռլինում Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը խմբագրելիս, դուրս նետեցին Հայաստան անունը, իսկ Հայաստան ուղարկված հյուպատոսներին Քուրդիստանի հյուպատոսներ էին կոչելու պաշտոնապես:

Մայիսի 9-ին Սուլթերին Կ.Պոլիս՝ Լեյարդին հաղորդում էր ասիական Թուրքիայի վերաբերյալ անգլիական կառավարության դիրքորոշումը: Այս փաստաթուղթը հրապարակված է Թեմփերլիի և Պենսոնի գրքում⁴: Այնտեղ սաված է. «Մեծ խնդիրը, որ թուրքերը պետք է լուծեն իրենց հողից ռուսական քանակի հեռանալուց հետո, այն է, թե ինչպես պահպանել ասիական կայսրության ամբողջականությունը»: Ինչպես տեսնում ենք, անգլիական մինիստրի գլխավոր մտահոգությունը սուլթանի իշխանության պահպանումն էր ասիական տերիտորիաների վրա, քանի որ «ասիական զինվորների» միջոցով էր հնարավոր պահպանել թուրքերին Կ.Պոլսում: Սակայն «խնդիրն այն էր, թե ինչպես սուլթանը պահպանի իրեն Ասիայում, ռուսների ներկայությունը Կարսում, առաջիկա այս փոփոխությունը կտարածվի ամբողջ Փոքր Ասիայի, Միջագետքի և Սիրիայի վրա»: Նա խոսում էր Բոմբեյին, Հնդկաստանին սպառնացող վտանգի մասին:

«...Թուրքերի միակ փրկությունը դաշինքն է որևէ մեծ տերության հետ, և միակ առկա տերությունը Անգլիան է»: «...Հանուն քրիստոնյաների փրկու-

¹ Lee E.D. Great Britain and the Cyprus Convention Policy of 1878, Cambridge, 1934, p. 201.

² Չերազ Մ. Թե ինչ շահեցանք Բեռլինի վեհաժողովն, Կ.Պոլիս, 1878, էջ 18-19:

³ Իզմիրլյան Կ. Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալն և ներկայն, Բեյրութ, 1964, էջ 111:

⁴ Temperley H.W.V., Penson L.M. Op. cit, p. 384-385:

բյան, - անսրող ցինիկությամբ գրում էր Սոլսբերին, - հումանիզմի որևէ նկատառումներով իմ ձեռքը զուսպ չի դառնա ռուսների հետագա առաջխաղացումը կանխելու համար: Ասիական թուրքիայի բնակչության մեծամասնությունը մահմեդականներ են, որոնց համար թուրքական կառավարությունը հարազատ բան է և այնքան լավ, որքան այլ մահմեդականներ կրացառնին մեր սփական կառավարման ձևը»¹:

Նույն ժամանակ էլ Սոլսբերին Լեյարդին տեղյակ էր պահում Կիպրոսի վերաբերյալ կառավարության մշակած ծրագրին՝ մատնանշելով, որ եթե Ռուսաստանը «պահպանի իր նվաճումները Հայաստանում, Սեծ Բրիտանիան պաշտպանողական դաշինքի մեջ կմտնի թուրքիայի հետ՝ Բ.Ղոնից երաշխիքներ պահանջելով ասիական թուրքիայում կառավարման բարելավման համար»²:

1878 թ. մայիսին Լեյարդը, պատասխանելով Բիրքոնֆիլդի հանձնարարականին թուրքիայի հետ պայմանագիր կնքելու մասին, գրում էր, որ «ինքնավարությունը հայերի համար արտուրդ է, հիմնականում ռուսական բանասարկություն: Հայաստանի հայերն անընդունակ են իրենց կառավարելու համար: Նրանք Կ.Պոլսի բանկիրները չեն... Ինքնավար Հայաստանը չի կարողանա իրեն պահել բրդերի ճշշումից թեկուզ մեկ ամիս և այնուհետև կղյճի ռուսական օգնության»: Նա վախ էր հարուցում, թե հայերի զարգացումը նույնպես անգլիացիներին կտոխպեր Հնդկաստանի հետ կապը պահպանել արդեն Հյուսիսային Սիրիայի, Տիգրիսի և Եփրատի դաշտավայրի վրայով»³:

Աստիճանաբար Պետերբուրգում համակերպվում էին Սան Ստեֆանոյի պայմանագիրն ամբողջությամբ միջազգային կոնգրեսում քննարկելու և վերանայելու եվրոպական դիվանագիտության պահանջի հետ: Երբ Շուվալովը Պետերբուրգում Ալեքսանդր II-ին պատմեց անգլիական կառավարության հետ իր վարած բանակցությունների մանրամասների մասին, վերջինս չէր հավատում, որ Անգլիան համաձայնվել էր Ռուսաստանին բողոնել Կարսն ու Բաբունը և հանդված էր, որ ընդհանուր պայմանագրի ստորագրման պահին Անգլիան անպայման կիրաժարվեր այդ բանից: Պատահական չէ, որ Բիսմարկն էլ զարմացավ, երբ Շուվալովը նրան հայտնեց Կարսն ու Բաբունը Ռուսաստանին հանձնելու վերաբերյալ անգլիական կառավարության համաձայնություն մասին⁴:

Շուվալովը Լոնդոն վերադարձավ նորից Բեռլինի վրայով՝ շարունակելով բանակցությունները Բիսմարկի հետ կոնգրեսը գումարելու և Գեորմանիայի դիրքը պարզելու խնդիրների շուրջ: 1878 թ. մայիսի 18(30)-ին հասնելով Լոնդոն՝ Շուվալովն իր ստացած լիազորություններին համապատասխան անգ-

¹ Ibid, p. 385:

² Medlicott W.N. The Congress of Berlin and After. A Diplomatic History of the Near Eastern Settlement, 1878-1880, London, 1938, p. 21.

³ Seton-Watson R.W. Disraeli, Gladstone and the Eastern Question..., p. 424.

⁴ «Красный архив» (М.), 1933, N 59, с. 96.

լիական կառավարության հետ կնքեց անգլո-ռուսական գաղտնի համաձայնագիր¹, որը կիսով չափ կրճատում էր Ռուսաստանին Սան Ստեֆանոյի պայմանագրի ընձեռած օգուտները:

Անգլո-ռուսական համաձայնագրով Ռուսաստանը հրաժարվում էր Ալաշկերտի հովտից և Բայազետ բերդաքաղաքից, համաձայնվում էր, որ հայերի նկատմամբ հովանավորությունն իրականացվեր ոչ թե միայն Ռուսաստանի, այլև եվրոպական տերությունների կողմից՝ միաժամանակ պարտավորվելով այլևս սահմանները չտարածել դեպի ասիական Թուրքիայի խորքը²:

Այսպիսով, մինչև համանկարողական կոնգրեսի հրավիրումը անգլիական դիվ անագիտությունը հասավ հաջողության. 1878 թ. մայիսի 30-ին կնքվեց «Համաձայնագիր Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև Սան Ստեֆանոյի պայմանագիրը փոփոխելու մասին» (Սուլթերի-Շուվալով համաձայնագիրը), որը նեմացնում էր պատերազմում Ռուսաստանի տարած հաղթանակը՝ ռուս-թուրքական խաղաղության հարցը վերածելով միջազգային խնդրի: Սան Ստեֆանոյի պայմանագրով նախատեսված Մեծ Բուլղարիան ջլատվում էր օգուտ Թուրքիայի: Յոթերորդ հողվածում ասված էր. «Սան Ստեֆանոյի նախնական պայմանագրի մեջ Հայաստանի վերաբերյալ պարունակող խոստումները պետք է տրվեն ոչ թե բացառապես Ռուսաստանի, այլ նաև Անգլիայի անունից»: Տասներորդ հողվածով անգլիական դիվանագիտությունը հասավ այն բանին, որպեսզի Ալաշկերտի հովտը և Բայազետ քաղաքը վերադարձվի սուլթանին՝ «քանի որ այդ հովտը հանդիսանում է դեպի Պարսկաստան տանող տրանզիտային մեծ ճանապարհը և թուրքերի աչքում ունի հսկայական նշանակություն»³:

Ըստ էության Բեռլինում գումարվելիք կոնգրեսը միայն Եվրոպայի համաձայնությամբ ձևակերպելու էր անգլո-ռուսական համաձայնագրի արդյունքները: Ռուսական հասարակական կարծիքն իրագրել չէր անգլո-ռուսական գաղտնի պայմանագրին և դրա համար մեծ հույսեր էր կապում կոնգրեսի հետ⁴:

Անգլիան մասնակից էր դառնում արևմտահայության քաղաքական դրության հարցերի արծարծմանը՝ դրա համար չունենալով ոչ մի հիմք, բացի Ռուսաստանին ընդդիմանալու և Թուրքիայի շահերը «պաշտպանելու» իր նեղ գաղութատիրական շահերից: «Անգլիան, - ասում էր Սուլթերին, - չի կարող Ռուսաստանին թույլ տալ Թուրքիան իջեցնել իրեն լրիվ ենթակայության աստիճանի»⁵:

¹ Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության... էջ 99-103:

² Татищев С.С. Из прошлого русской дипломатии, СПб, 1890, с. 486-489.

³ Հայաստանը միջազգային դիվանագիտության... էջ 100:

⁴ Покровский М. Внешняя политика. Сборник статей (1914-1917). Восточный вопрос от Парижского мира до Берлинского конгресса, М, 1918, с. 52.

⁵ Анушич А.С. Берлинский конгресс 1878 года, СПб, 1912, с. 48.

Կոնգրեսի բացման մախօրյակին Մոլսբերին հայտարարեց, թե Հայոց խնդիրը պետք է ներկայացվեր կոնգրեսի քննությանը, թե պետությունները ցանկանում էին արդար վերաբերվել այդ խնդրին, և Անգլիան էլ այդ էր կամենում: Այս խոսքերը տպագրվել էին անգլիական «*Գլոբ*» թերթի էջերում¹: Այնուհետև նույն բանը նա կրկնեց պառլամենտի լորդերի պալատում²:

Պատասխանելով հունիսի 6-ին լորդ Շաֆտսբյուրիի հարցապնդմանն այն մասին, որ հայերը բավարարված չեն Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով, որտեղ նրանց մասին «այնպես թեթև է սաված, որ այն նրանց համար օգտակար չի լինի», և արդյո՞ք Անգլիան ուշադրություն կհատկացնի կոնգրեսի նիստերում հայկական հարցին, Մոլսբերին պատասխանում էր. «Եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, Թուրքիայի այլ քրիստոնյաները մասնավորապես հիշված չեն պայմանագրի մեջ: Այդ պայմանագիրը շնորհում է օրենսդրություններ քրիստոնյա մահանգների: Այնտեղ, ուր բնակիչների մեծ մասը քրիստոնյա է, կարելի է մասնավոր օրենսդրություններ հաստատել և նոր կազմակերպություն տալ այս նախագծին, բայց այն մահանգներում, ուր ժողովուրդն ազգությունների և կրոնների մեկ ամբողջ խառնուրդ է կազմում, անկարելի կլիներ մասնավոր օրենքներ կիրառել ամեն մի ազգության համար. այդ էլ կլիներ մի անկանոն բան: Անս այն դժվարությունը, որի դեմ պարտավոր ենք կռվել, երբ մտնում ենք Հայաստանի խնդրին, որովհետև հայերը, թեև քրիստոնեական կրոն ունեն և առանձին ազգություն են, բայց այնպես են ցրված և թուրք ժողովրդի հետ խառնված, որ հարկավոր կլինի կան թուրքերի, քրդերի և հայերի համար հավասարապես գործադրելի կարգադրություններ անել և կան օրենքների զանազան կայծակողիաներ հաստատելով մի այնպիսի անկանոն բան շինել, որի մասին այժմ խոսեցի»:

Անգլո-ռուսական համաձայնագրի քննադատությամբ հանդես եկավ «*Թայմսը*»: Այդ թերթի Բեռլինի թղթակիցը 1878 թ. հունիսի 17-ին, շարադրելով հայերի պահանջներն ինքնավարության մասին (նոր մահանգ՝ Կարինի, Վանի կուսակալությունների, Դիարբեքիի մի մասի իրման վրա, հայ մահանգապետով, զինվորականության, ոստիկանության), շեշտում էր այն միտքը, որ այդպիսի Հայաստանը մի ուժեղ պատմեչ կծառայեր Ռուսաստանի առաջխաղացման ճանապարհին, և Անգլիայի պատվիրակներին կոչ էր անում պաշտպանել հայերի օրինավոր բաղձանքները: Այդպիսի հարցադրումն իրականում արտահայտությունն էր այն դժգոհության, որ Անգլիան իբր զիջումներ էր արել Ռուսաստանին, նրան թողնելով հայկական տերիտորիաները: Ըստ էության, անգլիական քաղաքականության մեջ շեղում էր դիտվում այն մախանական դիրքորոշումից, երբ Լոնդոնի ղեկավարները, Համիդի հետ միասին իրենց հովանու տակ ինքնավար Հայաստանի գաղափարը արծարծելով, ձգտում էին Ռուսաստանին՝ չթողնել ոչ միայն Էրզրումն ու Բայազետը, այլև Բաթումը, Կարսն ու Արդահանը:

¹ «*Աշակ*» (Թ), 1878, N 90:

² Նույն տեղում, No. 95:

1878 թ. մայիսից պայմանավորվածություն ունենալով ռուսական կառավարության հետ և հաստատ համոզված լինելով, որ նա նոր պատերազմ վարելու ոչ մի հնարավորություն ու մտադրություն չուներ, Բիքոնսֆիլդն ու Մոլսբերին խորամանկորեն խաբեցին սուլթանի կառավարությանը՝ նրան սպառնալով Ռուսաստանի կողմից նոր պատերազմով, և 1878 թ. հունիսի 4-ին կորզեցին Կիպրոսի մասին կոնվենցիան՝ Պաշտպանողական դաշնակցություն Անգլիայի և Թուրքիայի միջև¹: Սա անգլիական դիվանագիտության նոր հաջողությունն էր:

Անգլո-թուրքական այդ համաձայնագրի ստեղծման հանգամանքները վառ ապացույցն էին մաքիավելիական այն մեթոդների, որ գործադրում էր անգլիական դիվանագիտությունը Սեմ Բրիտանիայի իմպերիալիստական վերընթացի տարիներին: Դիվանագիտական այդ հաջողությունը խաբեության, խորամանկ կոմբինացիաների արգասիք էր և իր սուր ծայրով ուղղված էր նախ Ռուսաստանի, դրանով իսկ հայ ժողովրդի կենսական շահերի դեմ, ինչպես նաև Օսմանյան կայսրության ամբողջականության դեմ՝ հօգուտ անգլիական գաղութատիրության ընդարձակման:

Դիվանագիտական այդ ակտով անգլիական իմպերիալիստները զավթեցին Կիպրոսը՝ իրենց ազդեցությունը տարածելով Միջերկրական ավազանի արևելյան մասում: Ռուս հեղինակ Կ.Սկակոլովսկին նշում է, որ լորդ Բիքոնսֆիլդը՝ «այդ հանճարեղ մարդը», հեշտությամբ շրջանցել էր Լոնդոնում ռուսական դեսպան Շուվալովին, և վերջինս չէր էլ կասկածել, թե կնքված էր անգլո-թուրքական համաձայնագիր Կիպրոսը Անգլիային զիջելու և Փոքր Ասիայի վրա անգլիական պրոտեկտորատ հաստատելու մասին²:

1878 թ. հունիսի 4-ի անգլո-թուրքական կոնվենցիայի կնքումով Անգլիան հանդես էր գալիս Թուրքիայի դաշնակցի, սուլթանի ասիական տիրույթների պաշտպանի դերում: Փաստարթքում Հայաստանը որպես առանձին միավոր, երկրամաս, չէր հիշատակվում, իսկ բարենորոգումների խնդիրը արձարձված էր ընդհանրապես ասիական Թուրքիայի քրիստոնյաների առումով: Համաձայնագրի առաջին հոդվածում արձանագրված էր. «Եթե Ռուսաստանն իր ձեռքում պահելով Բաթումը, Արդահանը, Կարսը կամ նրանցից մեկն ու մեկը, այսուհետև երբևիցե փորձ անի տիրելու Ասիայում նորին կայսերական մեծություն սուլթանի ունեցած այն երկրներից որևէ մի մասին, որը խաղաղության վերջնական դաշնագրով պիտի որոշվի, այն ժամանակ Անգլիան պարտավորվում է միանալ նորին կայսերական մեծություն սուլթանի հետ՝ զենքի ուժով այդ երկրները պաշտպանելու համար: Ի փոխհատուցում՝ նորին կայսերական մեծություն սուլթանը խոստանում է Անգլիային՝ մտցնել անհրաժեշտ բարենորոգումներ, որոնք հետո պիտի մանրամասնաբար որոշվեն երկու պե-

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 104-105:

² Скалковский К. Внешняя политика России и политика иностранных держав, СПб, 1897, с. 226.

տությունների միջև, և որոնք նպատակ ունեն Բ.Դ-ռան քրիստոնյա և այլ հպատակների բարվոք կառավարումը և պաշտպանությունը խնդրի առարկա երկրներում, և որպեսզի Անգլիան իր պարտականությունը կատարելու համար հարկավոր եղած միջոցներն ապահովի, նորին կայսերական մեծություն սուլբանը հավանություն է տալիս մույնպես, որ Կիպրոս կղզին գրավվի և կառավարվի Անգլիայի կողմից»¹:

Բ.Դ-ռան հետ կայացված համաձայնությամբ Անգլիան իր վրա երկակի պարտականություն էր վերցնում. ռազմական, ըստ որի նա պետք է պաշտպաներ հայկական սահմանն ընդդեմ Ռուսաստանի և քաղաքացիական, որ նրան իրավունք էր տալիս և պարտավորեցնում էր հետևելու, որպեսզի այդ նահանգում ռեֆորմները Անգլիայի և Բ.Դ-ռան միջև հատուկ համաձայնության առարկա հանդիսանային:

Փաստորեն Անգլիան պարտավորվում էր զենքը ձեռքին պաշտպանել սուլթանի ասիական տիրույթները, եթե նրանց սպառնար Ռուսաստանը, կամ վերջինիս անցնեին Բաթումը, Արդահանը և Կարսը: Սրա դիմաց սուլթանը խոստանում էր բարեմորթություններ անցկացնել իր ասիական տիրույթներում Անգլիայի հովանու ներքո և վերջինիս զիջել Կիպրոսը²:

Ստացվում էր այսպես. եթե Ռուսաստանն իր գործերն ուղարկեր թուրքական տիրույթները՝ վերջ դնելու համար նոր թափվող շարունակվող անօրինականություններին, սուլթանն իրավասու էր անգլո-թուրքական կոնվենցիայի հիման վրա դիմելու «քրիստոնյա» Անգլիային՝ իր գործերն ուղարկելու այն բանի համար, որպեսզի «իրեն հնարավորություն ապահովվեր ամխոջնդոտ սպանելու և տանջելու քրիստոնյա հպատակներին»: «Մենք որոշեցինք, - գրում է Մակ-Քոլը, - պահել Կիպրոսը և պաշտպանել սուլթանի տիրույթները Փոքր Ասիայում, բանի դեռ Ռուսաստանը չէր վերադարձրել Կարսը և Բաթումը...»³:

Այժմ արդեն Անգլիան պատրաստ էր մասնակցելու համանվորպական կոնգրեսին: Դիվանագիտության պատմությանը միլիոնավոր արևմտաեվրոպական մասնագետների ուսումնասիրություններում քրիստոնյական դիվանագետների հաջողությունը գնահատվում է որպես «բոլոր ժամանակների գլխավոր-ծոց»: Ինչպես նկատում է ակադեմիկոս Ֆ.Ա.Ռոտշտեյնը⁴, Բիքոնսֆիլդի կա-

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 104:

² Татищев С.С. Император Александр II. Жизнь и царствование, СПб, 1903, т. 2, с. 509.

³ Армянская. Указ. соч, с. 194:

⁴ Ֆյոդոր Ռոտշտեյն (1871-1953) – խորհրդային դիվանագետ, պատմաբան-միջազգայնագետ, 1921-1922 թթ.՝ ՌՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Պարսկաստանում, «Միջազգային կյանք» (Մ.) պարբերականի խմբագիր, Համաշխարհային տնտեսության և միջազգային քաղաքականության ինստիտուտի տնօրեն, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, «Անգլիայի բանվորական շարժման պատմության ակնարկներ», «Պրուս-գերմանական կայսրության պատմությունից», «Միջազգային հարաբերությունները 19-րդ դարի վերջին» աշխատությունների հեղինակ - Ա.Կ.:

ռավարությանը հաջողվեց «ապահովել թուրքական կայսրության գոյությունը, որտեղ այնքան շատ անգլիական կապիտալներ էին ներդրված, ավելացրեց Բրիտանիայի տիրույթների թիվը, - այս ամենն առանց թեկուզ մեկ կրակոցի, ոչ այնքան բանկ մտած թատերական ցույցի միջոցով»¹:

Այսպիսով, դեռևս կոնգրեսի բացումից երկու շաբաթ առաջ անգլիական դիվանագիտությունը մեկը մյուսի հետևից հավաքում էր իր խորամանկ խաղի պտուղները՝ մայիսի 30-ի անգլո-ռուսական համաձայնագիրը, հունիսի 4-ի անգլո-թուրքական կոնվենցիան և հունիսի 6-ի անգլո-ավստրիական համաձայնագիրը: Անգլիական դիվանագիտության այս հաջողությունների համար է, որ արևմտաեվրոպական պատմության մեջ գովասանքներ են շռայլում Բիրոնաֆիլդի հասցեին, նրան նույնիսկ դասում «պատմության առասպելների» շարքը²:

Թե՛ անգլո-ռուսական համաձայնագիրը, թե՛ անգլո-թուրքական կոնվենցիան ուղղակիորեն վերաբերում էին մասն Հայկական հարցին: Ըստ էության առաջին փաստաթղթով Անգլիան արդեն իր մասնակցությունն էր ապահովել 16-րդ հողվածի իրագործմանը: Երկու պայմաններ, պարզ է, որ միատեսակ չէին մտածելու ու գործելու: Երկրորդ դիվանագիտական հաջողությամբ Անգլիան, առանց Ռուսաստանի մասնակցության, Փոքր Ասիայում միայնակ գործելու իրավունք էր ստանում:

* * *

Այն բանից հետո, երբ պարզ դարձավ, որ Սան Ստեֆանոյի համաձայնագիրը քննարկման էր դրվելու եվրոպական տերությունների կոնգրեսում, Կ.Պոլսի հայկական վերնախավի ղեկավար կորիզը նախաձեռնեց եվրոպական կառավարություններին դիմելու գործը:

Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հողվածի բովանդակությունն ու երաշխիքներն անբավարար էին նկատվում, հայկական ինքնավարության զաղափարը իրականանալի բան էր ներկայանում: Այս մտայնությանը խորասանկորեն նպաստում էին անգլիական դիվանագետները: «Հայ ազգության ապագամ անվթար պահպանել փափագող մեր քաղաքագետները բնականաբար պիտի ցանկանային բարեփոխված տեսնել Սան Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հողվածը»: Այդ նպատակով էլ «Օտյանի խումբն այդ ապագային փրկությանը համար ինքնավար Հայաստանի մը հիմնարկությունը ծրագրեց»: Այնուհետև, վերը նշված տողերի հեղինակ Արփ.Արփիայանը եզրակացնում է, որ այս միջոցով «միայն Անգլիան ջնջեց 16-րդ հողվածը»³: Այն օրերին Կ.Պոլսի հայկական վերնախավի ձայնավող «Մասիս» թերթը գրում էր, թե

¹ Ротшильд Ф.А. Указ. соч, 30:

² Seton-Watson R.W. Disraeli, Gladstone and the Eastern Question..., p. VIII.

³ «Նոր կյանք» (Լոնդոն), 1899, N 6, էջ 82:

16-րդ հողվածը «մի սկիզբ էր, և պետք էր նրա հետևանքն ընդարձակելու վրա աշխատել՝ որչափ կարելի էր»¹: Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանի կարծիքով, Ռուսաստանին երախտագետ լինելով, պետք էր ապահովել Անգլիայի բարյացակամությունը: Անտեսվում էր այն հանգամանքը, որ անգլիական դիվանագետները, գաղութատիրական շրջանները հայերին հիշում, նրանց մասին խոսում էին միմիայն Ռուսաստանի պլանները ձախողելու, նրա ակտիվությունը շրջափակելու համար: Հայ ժողովրդի վիճակը նրանց ամենևին չէր հետաքրքրում:

Անգլիական դիվանագիտությունը ճնշված ժողովուրդների ինքնավարության, թուրքական պետականությունից անջատվելու հարցադրումներին հակադրում էր Օսմանյան կայսրությունն ամբողջապես բարենորոգելու ծրագիրը, խոչընդոտում սլավոնների, հայերի ազատագրության գործը: Կ. Պոլսում անգլիական դեսպան Լեյարդը, թուրք սահմանադրականները հայոց դեկավարների վրա ճնշում էին գործադրում, պահանջում հրաժարվել Օսմանյան կայսրությունից բաժանվելու մտքից, Հայաստանի համար տեղական ինքնավարության խնդիր արժարծել: Դրա նպատակն էր Եվրոպային ցույց տալ, թե եվրոպական Թուրքիայի քրիստոնյաների համար բացառիկ վիճակ ստեղծելն աննպատակահարմար է, քանի որ նույն վիճակին ենթարկված են նաև քրիստոնյա այլ ազգություններ, որոնք նույնպես իրենց պահանջներն են առաջադրում. ուրեքն պետք է ընդհանուր բարենորոգումների միջոցով լուծել այդ խնդիրները: Սա մի մաքրավելիական մեթոդ էր, նեճգ դիվանագիտություն, որի միջոցով հայկական բարենորոգումների, ինքնավարության մասին հարցադրումները խեղդելու էին ընդհանուր, համակայսերական բարենորոգումների շուրջ սարքած խոստումնալից հարցադրումների մեջ, կամխելու էին 16-րդ հողվածով հայ ժողովրդի համար ստեղծվելիք նպաստավոր լուծումները: Անդրեյ Մանդելշտամը գրում է, թե Բ. Դուռը վախեցավ, որ Ռուսաստանը ցանկանում է Հայաստանը կցել իրեն, ինքը հայերին մղեց ինքնավարության պահանջին՝ թուրքական պետականության հովանու ներքո²: Լեյարդի քաղաքական ծրագիրն էր՝ «հայերի միջոցով Հայաստանը պահել Օսմանյան տիրապետության տակ»: Լեյարդը հորդորում էր Կ. Պոլսի Հայոց պատրիարքին, թե Անգլիան, իբր, ձգտում էր Հայաստանը մի բուժիչ պետություն դարձնել Ռուսաստանի և Թուրքիայի միջև³, ինչը կնպաստեր Անգլիայի և Ռուսաստանի «գրգռությունների վերացմանը»⁴:

¹ «Մասիս» (Կ. Պոլիս), 1878, N 2145:

² Mandelstam A. Le sort de l'Empire Ottoman, 1917, p. 193.

³ Լեո. Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, Փարիզ, 1934, հ. Ա, էջ 85:

⁴ Մերոքյան Մ. Նշվ. աշխ, էջ 55:

Խրիմյան Հայրիկի¹ գլխավորած հայոց պատվիրակությունն այցելեց Հոռն, Փարիզ, տեսնվեց իտալական, ֆրանսիական մինիստրների հետ, այնուհետև ժամանեց Լոնդոն: Այն տարիներին հայոց գաղութ Անգլիայում քնն փորթաթիվ էր, բայց ակտիվ դեր էր խաղում Հայոց հարցը հրահրելու, արձարծելու գործում: Լոնդոնահայերն ու մանչեստերահայերը գլխավորապես վաճառականներ էին՝ կապված Կ.Պոլսի հայկական ղեկավար շրջանների հետ: Ահավասիկ այս ուժերի միջոցով Խրիմյան Հայրիկը փորձում էր հաջողությամբ հասնել իր առաքելության մեջ: Նա Անգլիա էր ժամանում՝ իր ձեռքում ունենալով Ներսես պատրիարքի կոնդակը (1878 թ. մարտի 1-ի), որում դիմում էր արվում Անգլիային՝ աղերսելով նրա օգնությունը հօգուտ քրիստոնյա հայերի: Նա ասում էր, թե Անգլիա է եկել «արդարություն և պաշտպանություն խնդրելու, որովհետև Օսմանյան Հայաստանի քրիստոնեայք ոչ քրիստոնյա ցեղերու մղեռանդությունեն անխնա կչարչարվին»²:

Լոնդոնում ստեղծված «Արևելյան հարցի ընկերությունը» (Eastern Question Assosiation) իր նպատակն էր հռչակել ուսումնասիրել քրիստոնյաների դրությունը Մերձավոր Արևելքում և միջոցներ առաջարկել «արևելյան քրիստոնյաների» վիճակը բարելավելու համար: Ռոշալի աշխատանք էր կատարվում, որպեսզի եվրոպական մամուլը, հասարակական կարծիքը շահագրգռվեր, իմամար հայկական մահանգներում կատարված հարստահարությունների մասին: Այսպիսի գործունեության շնորհիվ էր, որ Լոնդոնում և Փարիզում լույս տեսան Հայաստանին նվիրված հատուկ տեղեկագրեր, որոնց նյութերը քաղված էին Կ.Պոլսի պատրիարքարանի թագիղներեից³:

Բազմաթիվ մամուլներ, խնդրագրեր են հղվում անգլիական պաշտոնական անձերի: Թերթերի խմբագրություններին մատակարարվում են նյութեր, տեղեկություններ: Իսկ անգլիական քաղաքականության ղեկավարները դեն չէին իրենց շահերին համապատասխան օգտագործելու այդ տրամադրությունները: Նրանց համար դժվար չէր ընդհանուր խոստումներ շռայլել, հայ մարդկանց հավաստիացնել, թե պաշտպանելու են հայոց խնդիրը⁴:

¹ Մկրտիչ Խրիմյան, Խրիմյան Հայրիկ, Մկրտիչ Ա Վանցի (1820-1907) – հասարակական-քաղաքական, եկեղեցական գործիչ, 1869-1873 թթ.² Կ.Պոլսի Հայոց պատրիարք, իբրև ազգային պատվիրակության ղեկավար այցելել է Իտալիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա՝ փորձելով ապահովել այդ երկրների աջակցությունը Հայկական հարցի լուծմանը, մասնակցել է Բեռլինի վեհաժողովին, 1879-ին ընտրվել է Վանի հոգևոր առաջնորդ, սատարել է Վանի «Սև խաչ» և Կարինի «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությունների ստեղծմանն ու գործունեությանը, 1892-ից՝ Աննայն հայոց կարողիկոս, 1895-ին Պետերբուրգում հանդիպել է Ռուսաստանի կայսր Նիկոլայ II-ին, աջակցություն հայցել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրագործման հարցում - Ա.Կ.:

² «Մասիս» (Կ.Պոլիս), 1878, N 2119:

³ Rappports sur l'oppression des Arméniens en Arménie. Londres, 1877, p. 197.

⁴ «Մշակ» (Թ), 1878, N 54:

Այդ օրերին Անգլիայում հայերի մասին առաջին հողվածագիրներից մեկը Ջեյմս Բրայսն էր, որը Սան Ստեֆանոյի պայմանագրի ստորագրումից քիչ անց «Չորսունյայրի Ռևյու» հանդեսում հրապարակած «Ասիական բուրբերի ապագան» հողվածում ըստ էության շարադրում էր անգլիական ազդեցիկ շրջանների տեսակետը Հայաստանի մասին: Ջեյմս Բրայսը ճանապարհորդել էր Հայաստանում, Անդրկովկասում, մի շարք հրապարակումների հեղինակ էր և արդեն ճանաչված էր որպես փոքրասիական խնդիրների գիտակ մարդ: Նրան նույնիսկ հիմնորով անգլիական պառլամենտի համայնքների պալատում Հայաստանի անդամ էին անվանում: Նա անգլիական քաղաքականության գլխավոր նպատակը համարում էր «Փպատակ ցեղերի վիճակի բարվորումը և Ռուսաստանի առաջխաղացման արգելակումը»: Նա դժվար խնդիր էր համարում հեռու գտնվող հայերին օգնելը, նշում էր նրանց խաղը բնակված լինելու փաստը՝ ասելով. «Թեև իրենց ամբողջական քիվը Թուրքիայում չորս միլիոն է, քայքայ քաղվական գորավոր չեն բուն Հայաստանի նեջ, որպեսզի անկախ իշխանություն դառնան»: Համենայնդեպս նա հնարավոր էր համարում մի նոր մեծ նահանգում ամփոփել նրանց եվրոպական կառավարչի իշխանության ներքո և խաղաղության ու անդորրության, ներգաղթի դեպքում պայմաններ հասունացնել ինքնավարության համար: Նա չէր բացքնում իր գլխավոր միտքը՝ գրելով. «Եթե ուզում եք Ռուսաստանի առաջխաղացումը դեպի Ասիա կասեցնել, ապա ... պետք է գոհացնել հայերին անգլիական օժանդակությամբ, ջնջելու համար ռուսական միջամտության պատրվակները»¹:

Ձ.Բրայսի հողվածին հետևեցին անգլիական այլ հրատարակություններ, որոնք լույս էին տեսնում կառավարական շրջանների գիտությամբ և հրահրումով: Մարտի 20-ին Լոնդոնի «Թայմսը» կոչ էր անում «ճանաչել և պաշտպանել հայերի պահանջները». այդպիսի մտտեցումը համապատասխանում էր Անգլիայի շահերին: Թերթը գտնում էր, որ հայերին պետք է ընձեռել նույնպիսի իրավունքներ, ինչպիսին նախատեսվում էին կայսրության մյուս քրիստոնյա հպատակների համար: Սա Ռուսաստանի ձեռքից նախաձեռնությունը խլելու անգլիական պաշտոնական քաղաքականության անսրող դրսևորում էր:

1878 թ. մարտին Լոնդոնում հրատարակված «Կոնֆերանսը և հայերը» գրքույկում² ասվում էր, որ հայերն «անհանգիստ տատանվում են հույսի և երկյուղի միջև իրենց ապագա վիճակի» հարցում, որ նրանք ավելի քիչ չեն տանջվել, քան բուլղարները և հարց են տալիս. «ինչու՞ հայերին ևս չպետք է տալ լիակատար ազատություն և ինքնավարություն»: Գրքույկի հեղինակները գրում էին, թե «ավա՞ղ, Հայաստանի լեռները խիստ բարձր են, և թշվառ գոհերի աղաղակների արձագանքը, Եվրոպային չհասած, խեղդվում է Եփրատի հովտի մեջ»:

¹ Գաբրիելյան Ս.Մ. նշվ. աշխ, էջ 106-109:

² The Conference and the Armenians, London, 1878.

Գրքույլը տալիս էր հայերի ներկա վիճակի պատկերը, ընդգծում, որ Օսմանյան կայսրությունում նրանց թիվը 3 միլիոնից ավելի էր, այնուհետև ցույց տալիս սուլթանների խոստացած բարենորոգումների խաբեական բնույթը: Դրան հակադրվում և զովաբանվում էր անգլիացիների «որակամ», «քաղաքակրթիչ» դերը Հնդկաստանում, ապա արվում հետևյալ եզրակացությունը. «Այս իրատարծությունները հիշելով, մեր նպատակն այն էր, որ հաստատենք, թե անտարակույս մի մեծ բարեբախտություն կլիներ Թուրքիայի համար, եթե Անգլիան համձն առներ այս երկիրը կառավարելու պաշտոնը, ինչպես որ արել է Հնդկաստանի վերաբերությամբ»: Գրքույլի հեղինակները փորձում էին ապացուցել, որ «լուսավորյալ թուրքերից շատերը» «նուսահատված են իրենց հայրենիքի ապագա բարօրության մասին և նույն մեր համոզմունքներն ունեն»¹:

Հիշատակելով Սան Ստեֆանոյի պայմանագիրը՝ գրքույլում ասվում էր, որ նրա ամենակարևոր պայմաններից մեկն այն էր, որ Ռուսաստանը միացներ իրեն Հայաստանի մի մասը: «Անգլիան կամ Եվրոպան չի կարող պատերազմի այս հետևանքին անտարբեր աչքով նայել... թե Ռուսաստանի տիրելը Հայաստանի վրա շատ վտանգավոր կլինի Բրիտանիայի շահերին», թե Անգլիան չէր կարող անտարբեր հայացքով նայել Ռուսաստանի հաստատմանը Եփրատի և Տիգրիսի հովիտներում: Ապա գրքույլի հեղինակներն առաջ էին քաշում հետևյալ միտքը. «Եթե այս պատերազմն սկսելու ժամանակ Ռուսաստանի գլխավոր նպատակը... Թուրքիայի բրիտոնյաների համար ազատագրություն ձեռք բերելն էր և ոչ թե իր երկիրը ընդարձակելը, ապա ինչո՞ւ չի ազատում հայերին էլ բուղարների պես, նրանց համար էլ ինքնավարություն ձեռք բերելով»:

«Ինքնավարության» մասին շատախոսելով՝ բրիտանական դիվանագետներն աշխատում էին ի չիք դարձնել Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածը, խոչընդոտել Ռուսաստանին՝ բարելավելու հայ ժողովրդի դրությունը: Այլապես ինչո՞վ բացատրել, որ Բեռլինի կոնգրեսում անգլիական կառավարության դեկլարները լսել անգամ չուզեցին այդ մասին: Լոնդոնի կառավարական օրգանների կողմից հրահանգավորված և թխված այդ գրքույլը եվրոպական հասարակական կարծիքը շփոթեցնելու, Կ.Պոլսի հայկական վերնախավին իր կողմը քաշելու պրոպագանդիստական, խաբեական նպատակ էր հետապնդում: Ի դեպ, գրքույլի ապրքեռը ներքոհիշյալ միտքն էր, որ դրվեց մակ թուրք-անգլիական համաձայնագրի (1878 թ. հունիսի 4-ի) հիմքում: Գրքույլում ասված էր. «Մենք վստահ ենք, որ Մեծ Բրիտանիան չի խնայի թե՛ հայերին և թե՛ Բ.Ղուսան այլ հպատակներին իր բարոյական օգնությունը ներկա հանգամանքներում հասցնել...», թե հայերը կարող էին իրենց ինքնավարությունը ստանալ «Անգլիայի հզոր օժանդակությամբ»: Անգլիական քաղաքագետները չէին խորշում փարիսեցիաբար հայտարարելու թե «Անգլիային օ-

¹ «Փորձ» (Թ), 1877-1878, No. 4, էջ 434-447:

գուտ է հայերի համար էլ այնպիսի առանձնաշնորհումներ ձեռք բերել, ինչպես Ռուսաստանը ձեռք բերեց բուլղարացիների համար»:

Գրքույկում հիշատակվում էր, որ հայերն «փրավամբ» կարող են հույս դնել Անգլիայի վրա, որը նրանց կապահովեր «առաջադիմություն և լուսավորություն»: Ասվում էր նաև այն մասին, որ տեղական ինքնավարության, Եվրոպայի մեծ պետությունների պաշտպանության միջոցով Հայաստանը «շուտով կկերպարանափոխվի»: «Ինչու՞ անգլիացին պետք է գնա Աֆրիկայի խորքերը՝ նոր գաղութատեղիներ որոնելու, մինչդեռ այստեղ Եվրոպային սահմանակից գտնվում էր Հայաստանը, այդ Արևելյան Եվրոպայի», - գրում էին գրքույկի հեղինակները: Նրանք հիշատակում էին Կ.Պոլսում Անգլիայի դեսպան Լեյարդի խոսքերը, որ նա գրել էր Նիմվեյին նվիրված իր ուսումնասիրության մեջ՝ Հայաստանը «աշխարհիս ամենապողաբեր երկրներից մեկն է»: Բրիտանական գաղութարարները մեկիկ-մեկիկ փվարկում էին Հայաստանի ընդերքի և բնության հարստությունները, շահագրգռում կապիտալիստներին՝ արտոնելու նրա վրա անգլիական պրոտեկտորատի հաստատումը:

Այս ամենը քրիտանական գաղութատիրական կառավարության մշակած լայն նվաճողական ծրագրի տակտիկական նրբերանգներն էին, որոնք իրենց հիմքում հակառուսական նպատակներ ունեին և քնակամարար վնասելու էին հայ ժողովրդի շահերին: Անգլիական պառլամենտի նիստերում նույնպես չափազանց մեծ չափեր էր ընդունել «հայասիրությունը»:

Անգլիական պառլամենտում հարցապնդումներ էին արվում Հայաստանի մասին¹: Հենց որ հայտնի է դառնում Սան Ստեֆանոյի պայմանագրի բովանդակությունը, հայկական խնդրին նվիրված մի ժողով է հրավիրվում Ջ.Բրայսի տանը, որին մասնակցում են ինչպես Լոնդոնի և Մանչեստրի հայերը, այնպես և անգլիացիներ, թվով 20 մարդ: 1878 թ. մարտի 19-ին գումարված այդ ժողովը չէր կարող անգլիական պաշտոնական շրջանների գիտությամբ շլիճել, քանի որ այնտեղ քննարկվելու էր առաջիկա կոնգրեսին Հայաստանի բարենորոգումների վերաբերյալ ծրագիր ներկայացնելու խնդիրը²: Ժողովի մասնակիցներն ուսումնասիրում էին Հայաստանի քարտեզը, քննարկում բնակչության թիվը, ինքնավարության տարբերակները և այլ հարցեր: Որոշվում է մի հուշագիր ներկայացնել լորդ Դեբբիին՝ խնդրելով նրա աջակցությամբ հայկական խնդրի լուծման գործում:

Փաստ է, որ Ջ.Բրայսը նրբորեն կատարում էր անգլիական դիվանագիտական վարիչների հրահանգները: Փաստ է, որ նրա տանը տեղի ունեցած այդ հավաքի որոշումները դրվեցին Բ.Դռանը Ներսես պատրիարքի ներկայացրած (1878 թ. մարտ) ծրագրի հիմքում: Այդ ծրագիրը Հայաստանի մեջ ինքնավար վարչության կազմում էր նախատեսում: Ըստ Մուշեղ արքեպիսկոպոսի՝ սույնան համար էր թեև դրոշմ Ներսեսին հայ պատգամավորների միջոցով հենց այդպիսի ծրագիր ներկայացնել կոնգրեսին: Համարը համոզված էր,

¹ «Մշակ» (Թ), 1878, N 13:

² Մուշեղ արքեպիսկոպոս. նշվ. աշխ., էջ 74:

որ նման ծրագիրը չպետք է ընդունվեր ռուսական դիվանագիտության կողմից և պիտի առաջացներ հայերի հուսախաբությունը քրիստոնյա տերություններին¹:

Խրիմյանը այցելում է Լոնդոնի պետական, պաշտոնական գործիչների, տեսակցություններ ունենում պառլամենտի անդամների, ժողովախոսների հետ: Նրա պատվին կազմակերպվում են ընդունելություններ: Սակայն փաստերը վկայում են, որ առկա էին ակնբախ սառնություն, հաշվեմկատություն, որոշակի բան չասելու, խոստումներ չտալու միտում: Աստիճանաբար լավատեսությունն ընկճվում էր՝ համդիպելով անգլիական շահախնդիր որոգայքներին:

Այս բանի ապացույցն էր այն խոսակցողական պատասխանը, որ Անգլիայի արտաքին գործերի մինիստր Սոլսբերին տվեց հայկական պատվիրակությանը 1878 թ. մայիսի 10-ին, երբ վերջինս Մեծ Բրիտանիայի օժանդակությունն էր խնդրում Հայաստանի երեք նահանգներին ինքնավարություն շնորհելու հարցում: Խրիմյանն ասել էր, թե «Բ.Ղոսան ղեմ թշնամական մտքով չէր խոսում», թե «իր ժողովուրդն Օսմանյան կայսրությունից բաժանվելու դիտավորություն չունի», այլ խնդրում է տերություններից «նկատի ունենալ հայոց շահերը ապագա կոնգրեսում»²: «Անկեղծ համակրանք արտահայտելով հայ պատվիրակին»³, Սոլսբերին ամեն ինչ պայմանավորեց առաջիկա կոնգրեսով, ընդհանուր խոսքերով վստահեցնելով, թե հայերի համար կապահովվի այնպիսի մի վարչություն, որը նրանց «կերաշխավորի բարեկամություն, ազատություն»: Շաղակրատություն, դատարկ ֆրագներ էին սրանք, դիվանագիտական խարկանքներ, առանձնապես հատուկ այն ժամանակվա քրիստոնական թրժված դիվանագետներին: Սոլսբերին շտապում էր հայտնել Կ.Պոլիս՝ իր դեսպան Լեյարդին, թե ինքը Խրիմյանին ընդհանուր օժանդակություն է խոստացել՝ «մեր բոլոր ջանքն ի գործ դնենք իրենց վիճակը բարվոքելու»: Բայց «հարկ չհամարեցի տերությունների խորհրդի կողմից գործադրվելիք մասնավոր միջոցների մասին խոստումներ տալ»⁴:

Անդրադառնալով Անգլիայում հայոց պատվիրակության գործունեությանը՝ Արշ.Չոպանյանը⁵ նկատում է, որ «անգլիացի դիվանագետները

¹ Նույն տեղում, էջ 78-79:

² Ատենագրությունը Ազգային ժողովո, 7-րդ նիստ, 1878, 6 հոկտեմբերի, Կ. Պոլիս, 1878, էջ 175:

³ «Մասիս» (Կ.Պոլիս), 1878, N 2130:

⁴ Ատենագրությունը Ազգային ժողովո, 7-րդ նիստ, 1878, 6 հոկտեմբերի, Կ. Պոլիս, 1878, էջ 175:

⁵ Արշակ Չոպանյան (1872-1954) - գրող, քննադատ, բանասեր, լրագրող, հասարակական գործիչ, հրապարակել է «Անահիտ» (Փարիզ) գրական-գեղարվեստական հանդեսը, «Արշալույսի ձայներ», «Տղու հոգիներ» ժողովածուների, «Թոսլքի փառք» վիպակի, «Մուր խավեր կամ բամբասանք», «Հրաշքը» դրամաների, «Նա-

ժպտալով մեր պատգամավորներուն ուր կշոյեին, և մեր պատգամավորներն ալ Պոլիս կծածկագրեին, թե «ամեն բան կարգին է»¹: Լոնդոնում լորդ Բիքոն-սֆիլդը հայկական պատվիրակությանը չընդունեց, իր քարտուղարի միջոցով հայտնելով, թե չափազանց զբաղված է, և որ պատվիրակության խնդիրը քաղաքական է և վերաբերում է արտաքին գործերի մինիստրին, որն արդեն ունկնդրել էր հայ պատվիրակներին²:

Խրիմյանցի ստացված հիշատակագրին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստրությունը պաշտոնական պատասխան չտվեց՝ բավարարվելով այն Բեռլին ուղարկելով: Միաժամանակ հասկացնալ տվին հայ պատվիրակությանը, որ հայերի ինքնավարությունը հնարավոր չէր, քանի որ մյուս ազգերն էլ այդպիսի իրավունքներ կպահանջեին: Արտաքին գործերի մինիստրության կարծիքով լավագույն լուծումը հայ կառավարիչի իշխանության ներքո Հայաստանի բոլոր բնակիչների ազգային ու կրոնական հավասարունն էր³:

Լորդ Մոլթսթրին շտապել էր հաղորդել Կ.Պոլիս Լեյադիին, թե ասիական Թուրքիայի ազգերն ու ժողովուրդներն ինքնավարություն ունենալու ընդունակ չեն և անկախության բաղձանք չունեն⁴: Իսկ Նուբար-փաշայի հետ հայկական բարենորոգումների մասին խորհրդակցելուց հետո Բիքոնսֆիլդը Լորդերի պալատում հայտարարեց, թե «Փոքր Ասիայի քրիստոնյաներին երջանկացնելու համար բավական է բարենորոգել թուրքական դատարանները»⁵:

Խուսափողական էր նաև Գլադստոնի կեցվածքը, թեև հայասերի անուն ուներ, և նրա հետ հուլյսեր էին կապում այն ժամանակվա հայ գործիչները: Նա Խրիմյանին հյուրասիրում էր իր տանը, ծանոթացնում իր կնոջ և դստեր հետ, երկար-բարակ խոսում հայոց լեզվի և գրականության մասին: Իսկ քաղաքական թեմային անդրադառնալով՝ նա ասում է. «Թեև համակրում է հայկական դատին, բայց աջակցություն չի խոստանում, քանզի իշխանությունից հեռու լինելով, այսօր ազդեցություն չունի»⁶: Այս մասին «Մասիսը» հետևյալն էր հաղորդում. «Խրիմյան սրբազան ի ճաշ հրավիրվեցավ լորդերուն խորհրդարանին գլխավոր անդամ Արգայի⁷ ղուքսեն, որու որդին թագուիվոյն փե-

հապետ Քուչակի դիվանը», «Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը», «Հայրեններու բուրաստանը» աշխատությունների հեղինակ - Ա.Կ.:

¹ «Անահիտ» (Փարիզ), 1899, N 3, էջ 90:

² Իգմիրյան Կ. Նշվ. աշխ., էջ 102:

³ «Մասիս» (Կ.Պոլիս), 1878, N 2147:

⁴ Նույն տեղում, N 2150:

⁵ «Դրոշակ» (Ժնև), 1899, N 2, 28 հոկտեմբերի:

⁶ Սարուխան. նշվ. աշխ., էջ 389:

⁷ Ջորջ Դուգլաս Քենսլեյ Արգայլ (1823-1900) - բրիտանացի քաղաքական և հասարակական գործիչ, դուքս, Կամադայի գեներալ-նահանգապետ, հիմնադրել և ղեկավարել է Շուդանոյա-հայկական ընկերակցությունը, զբաղվել է հայանպաստ գործունեությամբ, «Արևելյան հարց», «Փաստագրական և պատմագրական վկա-

սան է, վնմանապես ի ճաշտ հրավիրվեցավ պ. Գլադստոնեն, որ Արգայլի դուքսին պես հայոց խնդրի վրա յուր քերմ համակրությունը հայտնելն և հուսալից խոստումներ տալն ետքն, արեւելյան լեզվոց և գրականության վրա երկար խոսակցելով պ. Մինաս Չերազի հետ, և շատ գոհ ըլլալով՝ յուր լուսանկար պատկերն ընծայեց անոր՝ ստորագրությունը դնելով. մեծ պատիվ մը, որուն իրավամբ արժանի գտնված է պ. Մ. Չերազ»¹:

Մուշեղ եպիսկոպոսը նկատում է, որ անգլիական քաղաքականությունը «քարեկամ և դաշնակից էր» Թուրքիային, որ Անգլիայի «բոլոր ձեռնարկներն ուղղված էին խափանելու միմիայն Ռուսիո դեպի Փոքր Ասիա առաջխաղացումի և ընդլայնումի քաղաքականությունը»:

Դեռ Նորինյանն Անգլիա չէր հասել, երբ անգլիական թերթերը, հակառակ իրենց հայանպաստ պլատոնական համակրություններին, գրում էին, թե «Հայաստանի մեջ տարր չկա ինքնավարության համար», թե ինքնավարությունը հնարավոր չէ հայերի խիստ ցրվածության և այլ ցեղերի ու կրոնների մեջ խառնված լինելու պատճառով: Այն նույն ձևով քիչ անց, Բեռլինի կոնգրեսում խոսելու էր Սուլթերին: Որքան քիչ ժամանակ էր մնում կոնգրեսի քացմանը, այնքան որոշակի, ոչ հայանպաստ էր դառնում անգլիական պաշտոնական դիրքորոշումը:

«Թայմս»-ի էջերում հանդես եկած Տրապիզոնի նախկին անգլիական հյուպատոս Բակրավը գրում էր, թե «Հայաստան անուն երկիր կամ բավական թվով հայոց ազգ կամ ժողովուրդ չկա, որպեսզի վերոհիշյալ ձևով կառավարական դրություն մը կարելի ըլլա անոր»²:

«Գոլոս» թերթը քննադատել էր Ջեյմս Բրայսին, որը Հայաստանը համարում էր ոչ թե երկիր, այլ աշխարհագրական տեքմին, որ նա իբր չուներ բնական սահմաններ, ցեղական միություն և այլն: Քննադատվում էր նաև անգլիական մի այլ գործիչ՝ Հենրի Ռոուլինսոնը, որը ժխտում էր Հայաստանի ինքնավարության հնարավորությունը: Ռուսական թերթը ցույց էր տալիս, որ առաջարկվող հայկական նահանգապետության 2 մլն 862 հազար բնակչիչների ընդհանուր թվից 1 մլն 330-ը հայեր էին լինելու՝ 530 հազար բուլղարների, 120 հազար քրդերի և 82 հազար հույների, ասորիների, լազերի և եգիպտացիների կողքին էր գրում ի և՛ Լամի տարածքում: «Այսպիսի թվանշաններ նկատի ունենալով չի կարելի չընդունել հայոց ցեղը իբրև տիրապետող տարր մեծ Հայաստանի բուրբաջ մասում», - եզրակացնում էր թերթը³: Որոշ ժամանակ անց նույն թերթը մի առաջնորդող նվիրեց հայոց հարցին, որտեղ ապացուցում էր, որ 16-

յություններ հայ ժողովրդի նկատմամբ գործադրված սարսափների համար Անգլիայի պատասխանատվության մասին», «Մեր պատասխանատվությունը Թուրքիայի իրադրության համար» աշխատությունների հեղինակ - Ա. Կ.:

¹ «Մասիս» (Կ. Գոլիս), 1878, N 2130:

² Նույն տեղում, N 2148:

³ «Մշակ» (Թ), 1878, N 110:

րդ հողվածը շատ ավելի մեծ իրավունքներ էր խոստանում հայերին, քան այն, ինչ նախատեսել ու չէր կատարում Անգլիան¹:

Անգլիական պառլամենտի անդամ Ֆորստերը Խրիմյանին հորդորում էր «չվշտացնել» Ռուսաստանին, որը «ծեր դրացին է»։ «Մի դարձեք այստեղ գործիք ո՛չ պահպանողական կուսակցության և ո՛չ էլ մեր ազատանների ձեռքում»։ Նա գտնում էր, որ հայերն ուժ չունեն իրենց ինքնավարությունը պաշտպանելու համար, իսկ Անգլիայի օգնության վրա հույս չի կարելի դնել։ «Պժվար է Անգլիայի համար հսկել Հայաստանի վրա, որն այնչափ հեռու է մեզանից» և այլն²։ Իսկ հիմնական անգլիական պաշտոնատար անձինք արհամարհական դիրք էին բռնում հայոց պատվիրակության նկատմամբ։ Օրինակ, Ներսես պատրիարքն իր մի մամակում պաշտպանություն էր խնդրել հայոց համար մի քարձրաստիճան անգլիացուց։ Բայց վերջինս պատրիարքին էր վերադարձրել այդ բուրդը առանց որևէ պատասխանի։ Այս առթիվ Ներսեսը 1879 թ. մարտի 21-ին գրել էր Փափազյանին, թե «անգլիացիք անտառներու մեջ բնակած ատեն հայերը ավետարանի հույսով լուսավորյալ էին, պետք չունին բնավ նոր լուստ, և այն ալ Անգլիոյ մատախալպատ արևմուտքե»³։ Սակայն սա ուշացած խոստովանություն էր։ Այդ պահին արդեն սկսվել էր հիասթափության և արժեքների վերագնահատման շրջանը։

1878 թ. հունիսի սկզբին անգլիական պառլամենտի համայնքների պալատում առաջին անգամ արժարժվեց հայկական խնդիրը։ Երեք օր անց Լորդերի պալատում, պատասխանելով իրեն ուղղված հարցապնդմանը, Սոլսբերին անհնարին էր համարում հայերի համար առանձին բարենորոգումների իրագործումը, դա պատճառաբանելով Թուրքիայում հայ բնակչության ցրվածությամբ։ Միակ ելքն անգլիական մինիստրը տեսնում էր Օսմանյան կայսրությունում ընդհանուր բարենորոգումներ անցկացնելու մեջ։ Այս դիրքորոշումը նախօրյակին արդեն պարզ գծագրվում էր անգլիական մամուլի էջերում հրապարակված նյութերում։

Անգլիան ցանկանում էր «պահպանել Թուրքիան մուսուլմանք՝ իր պատվար ռուսին առջև, Թուրքիան պաշտպանելով՝ զայն Անգլիոյ ճորտը դարձնել և տիրապետել այնտեղ միահեծան»։ Անգլիական պահպանողականները ոչինչ այլ բան չէին խոստանում քրիստոնյաներին, «քայց եթե պարզ հանգստություն, հալածանքի դադարում, ընդհանուր բարեկարգություն, օրինապահության նպաստում»։ Սոլսբերին Խրիմյանին Լոնդոնում ասում էր, թե «Թուրքիան պիտի վերանորոգվի, և թե հայերն էլ պիտի ունենան բարօրություն, խաղաղություն և ազատություն, բառեր, առանց երաշխավորության, մնան ձեռն բուրբերու խոստումներուն»⁴։ Ֆրանսիական քերթերից մեկը նկա-

¹ Նույն տեղում, N 112:

² Մարտիան. նշվ. աշխ. էջ 391; Дебилур А. Указ. соч, с. 111-112.

³ Մուշեղ արքեպիսկոպոս. նշվ. աշխ. էջ 77:

⁴ «Անահիտ» (Փարիզ), 1907, N 10-12, էջ 162-163:

տել էր, որ Անգլիայում, «ուր ամիսներով կեցան հայոց պատվիրակները, անտարբեր աշխարհավարութենն մը գատ ուրիշ քան շեն տեսեր»:¹

Բեռլինի կոնգրեսում արևմտանվրուպական դիվանագիտության ընդհանուր հակառուսական գիծը չափազանց վնասաբեր եղավ մահ Հայաստանի համար: Անգլիական դիվանագետներն ամեն ինչ արեցին՝ խոչընդոտելու համար Ռուսաստանի հովանու տակ հայ ժողովրդի համախմբումը:

Տարիներ անց՝ 19-րդ դարի 90-ական թթ., 20-րդ դարի սկզբին և Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Եվրոպայի կողմից «պաշտպանյալ» այդ նահանգներն էին, որ դժնդակ հեզմությամբ կոտորածներով սրբվեցին: Արևմտանվրուպական դիվանագիտությունը, մասնավորապես անգլիական քաղաքականությունը բացի վնասից ոչ մի օգուտ չտվեց հայ ժողովրդին: Նրան սոցիալական և ազգային ազատություն բերեց, պետականություն ստեղծելու, սոցիալիստական հայրենիք կառուցելու իրավունք ընձեռեց Մովսեսական Ռուսաստանը:

¹ «Մասիս» (Կ.Պոլիս), 1878, N 2144:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ¹

Արևելյան հարցը հանգուցային դեր է խաղացել համաշխարհային քաղաքականության մեջ: Օսմանյան կայսրության հետ եվրոպական տերությունների, Ռուսաստանի փոխհարաբերությունները ամբողջ 18-19-րդ դարերի ընթացքում և 20-րդ դարի սկզբին մշտապես գտնվել են միջազգային հարաբերությունների կիզակետում: Դարերի ընթացքում մշակվեցին օսմանյան տերության նկատմամբ ընդհանուր քաղաքական դոկտրինաներ, պաշտոնական ծրագրեր, առաջացան մշտապես գործող հակասություններ, որոնք «Արևելյան հարց» անվանման տակ հաստատուն տեղ բռնեցին դիվանագիտական պրակտիկայում: Արևելյան հարցն օրգանապես միաձուլվեց անկում ապրող Օսմանյան կայսրության տիրապետության դեմ հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական մարտումների հետ:

Եվրոպական տերությունների և Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների շահերի միջև, ինչ խոսք, առկա էր բացահայտ հակադրություն: Սակայն սուլթանի տիրապետությունն ամենամեծ չարիքն էր, որ ինչ-որ մի պահ մոռացության էր տալիս եվրոպական տերություններից սպառնալի վտանգը, և թուրքական լուծը թորափել ձգտող ճնշված ժողովուրդները, նրանց հասարակական-քաղաքական ակտիվ ուժերը փարվում էին նույնիսկ դիվանագիտությանը, որը, ինչպես նկատել է Ռոզա Լյուրսենբուրգը², «կառվող տաշեղ էր նետում դարերի անդորրությունից և շահագործումից լեռան չափ դիվլամ բոցավառ նյութի մեջ»: «Ռուս-թուրքական պատերազմները ցարիզմն իրագործում էր տիրապետող դասակարգերի՝ ազնվականության և բուրժուազիայի շահերին համապատասխան: Իրենց օբյեկտիվ հետևանքներով, - կարդում ենք Արևելյան հարցի վերաբերյալ վերջերս Մոսկվայում լույս տեսած գրքի՝ ներածության մեջ, - դրանք կրում էին առաջադիմական բնույթ, բանի որ արագացնում էին սուլթանական ճնշումից բալկանյան և Թուրքիայի իշխանությանը ենթակա մյուս ժողովուրդների ազատագրման պրոցեսը» (էջ 6):

Բուրժուական դիվանագիտությունն օգտվում էր հակասությանակա շարժումներից՝ սուլթանի վրա ճնշում գործադրելու, նրա տերության վրա իր ազդեցությունը տարածելու, տնտեսական և քաղաքական օգուտներ քաղելու

¹ Կիրակոսյան Ջ. Արևելյան հարցը և Ռուսաստանը // «Սովետական Հայաստան» (Ե.), 1878, 17 օգոստոսի:

² Ռոզա Լյուրսենբուրգ (1871-1919) - գերմանական և միջազգային բանվորական շարժման գործիչ, Գերմանիայի կոմկուսի հիմնադիրներից, ռուսմանասիրել է ազգային հարցը, հետաքրքրվել Հայկական հարցով, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարով, դատապարտել երիտթուրքական կառավարության կազմակերպած հայերի տեղահանություններն ու կոտորածները - Ա. Կ.:

³ Георгиев В. А., Княгина Н. С., Панченкова М. Т. Восточный вопрос во внешней политике России. Конец XVIII – начало XX в, М, 1978.

համար: Ինչպես Կ.Մարքան է նկատել, խնդիրն այն էր, թե ինչպես վարվել Թուրքիայի հետ:

150 տարի առաջ մեր հայրենիքի՝ Հայաստանի մի հատվածին հաջողվեց ազատվել ասիական բռնակալության լծից: Արևելյան Հայաստանը մտավ Ռուսաստանի կազմի մեջ: Մակայն մեր ժողովրդի մեծագույն մասին՝ արևմտահայությանը, վիճակված էր դառնաղետ գոյավիճակ սուլթանական Թուրքիայի կրնկի տակ: 19-րդ դարի կեսերից, մասնավորապես 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից ու Բեռլինի կոնգրեսից (1878) հետո Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս դարձավ Հայկական հարցը՝ թուրքական լծից արևմտահայության ազատագրման, նրա կյանքի պայմանների բարելավման խնդիրը:

Արևելյան հարցի գոյության ամբողջ ընթացքում մեծ է եղել Ռուսաստանի արտաքին քաղաքականության դերը: Այս պորտլեմի լուսաբանմանը նվիրված ուսումնասիրության մեջ կոնկրետ, պատմական առումով լուսաբանված է Ռուսաստանի քաղաքականությունը Արևելյան հարցում:

Գլխորդ բաղկացած է երեք բաժիններից: Առաջինում («Արևելյան հարցը Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ XVIII դարի վերջին – XIX դարի առաջին կեսին») լուսաբանվում է ռուսական արտաքին քաղաքականությունը Մերձավոր Արևելքում, քննարկվում են XVIII դարի վերջի – XIX դարի սկզբի ռուս-թուրքական բոլոր պատերազմների հանգամանքներն ու արդյունքները, վերլուծվում կնքված պայմանագրերի էությունն ու նշանակությունը: Բաժինն ավարտվում է Ղրիմի պատերազմի և Փարիզի խաղաղության պայմանագրի բնութագրությամբ: Ընթերցողը հարուստ նյութերի և օգտակար մեկնաբանությունների է ծանոթանում գրքի հաջորդ բաժնում, որն ընդգրկում է XIX դարի երկրորդ կեսի ժամանակահատվածը: Մյստեղ մեկնաբանվում է Ռուսաստանի բաղկանյան քաղաքականությունը, ցույց է տրվում կապիտալիստական Եվրոպայի բացասական դերը սլավոնական ժողովուրդների հակաթուրքական պայքարում, ինչը պայմանավորված էր եվրոպական երկրների հեղ, շահադիտական ձգտումներով: Այս բաժնում ընթերցողը ծանոթանում է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքին ու արդյունքներին, Սան Մտեֆանոյի և Բեռլինի տրակտատների բովանդակությանն ու նշանակությանը: Երրորդ բաժինը նվիրված է Արևելյան հարցում Ռուսաստանի արտաքին քաղաքականությանը իմպերիալիզմի ժամանակաշրջանում՝ XIX դարի վերջից մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը:

Ինչպես 70-ական թթ. արևելյան ճգնաժամի, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի, Բեռլինի կոնգրեսի պահին, այնպես և 90-ական թթ. ճգնաժամի պահին Հայկական հարցը օրգանական մասը կազմեց Արևելյան հարցի, հանդիսացավ արևմտաեվրոպական դիվանագիտության քննարկման ոչ պակաս կարևոր օբյեկտ: Սնա թե ինչու գրքում բավականին մանրամասնորեն նկարագրված և վերլուծված է Հայկական հարցի շուրջ դիվանագիտական պայքարը ինչպես 90-ական թթ. («Հայկական հարցը և տերությունները»),

էջ 258-268), այնպես և 1912-1913 թթ. («Հայկական հարցը 1912-1913 թթ.», էջ 367-372):

Լուսաբանելով 90-ական թթ. Արևմտյան Հայաստանում ստեղծված վիճակը, երբ թուրքական կառավարությունը չէր կատարում իր իսկ ստանձնած պարտավորությունները հայկական մահաճգնեղանի քարեմորգություններ անցկացնելու գործում, հեղինակները ցույց են տալիս, որ սուլթան Աբդուլ Համիդ II-ը մշակել էր «Հայկական հարցը լուծելու իր ուրույն ծրագիրը՝ հայերին ոչնչացնելու միջոցով» (էջ 259): Սուլթանը բորբորում էր բշնամությունը մահմեդականների և քրիստոնյաների միջև և Բալկաններին արևելյան շրջաններ տեղափոխված վերաբնակիչների՝ «համիդիե» անկանոն հեծելազորի միջոցով իրականացնում իր դաժան քաղաքականությունը հայերի նկատմամբ (էջ 260): Գրքում տրված է 1894-1896 թթ. հայ բնակչության նկատմամբ իրականացված զանգվածային սպանությունների ստկումնալից պատկերը, համաշխարհային հասարակական կարծիքի հակասությանական զայրույթը:

Գրքում խոսվում է Հայկական հարցում անգլիական կառավարության, պառլամենտի, հասարակական կարծիքի ակտիվության դրդապատճառների մասին, ցույց է տրվում Լոնդոնի շահագրգռվածության զաղորատիքական շարժառիթների իսկական շուրջումը: Այնուհետև ցույց է տրվում, որ արևմտահայերը կողմնորոշված էին հոգուտ Ռուսաստանի, որը նրանց ներկայանում էր որպես օգնության միակ աղբյուր (էջ 261):

Պրոֆեսիոնալ բարձր մակարդակով գրքում ցույց է տրված, որ 90-ական թթ. կեսերի թուրքերը Հայաստանում կատարում էին միևնույն արյունահեղությունը, ինչ 1876-ին Բուլղարիայում, որ Հայկական հարցը որոշակիորեն չարաշահում էին Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան իրենց նվաճողական պլաններն իրականացնելու համար: Մասնավորապես քննադատվում են Անգլիայի խորամանկ մեքենայությունները: Գրքում ցույց է տրված, որ Ռուսաստանը 90-ական թթ. կեսերին խտապիում էր կոնֆլիկտներից աշխարհի այդ մասում՝ Ֆրանսիայի հետ միասին հանդես գալով պատերազմի բռնկումը կանխելու դիրքերից: Արևմտակարգական դիվանագիտության միջամտությունը ոչ մի ազդեցություն չունեցավ սուլթան Աբդուլ Համիդ II-րդի հայախալած քաղաքականության մեղմացման վրա: Ընդհակառակը, սուլթանն ամենայն հետևողականությամբ իրականացրեց իր կամիքալական ծրագիրը արևմտահայության նկատմամբ, ոչնչացրեց 300 հազար հայ բնակչություն եվրոպական կառավարությունների հանցագործ թողություն պայմաններում (էջ 267):

«Հայկական հարցը 1912-1913 թթ.» բաժնում լուսաբանված են XIX դարի 90-ական թթ. հայկական ճգնաժամից հետո խնդրի հետագա զարգացումները, ցույց է տրվում, որ «Թուրքիայի հայ բնակչությունը ապրում էր դաժան ճնշման պայմաններում, ֆիզիկական բնաջնջման մշտական սպառնալիքի ներքո: Հայերի նկատմամբ երիտթուրքական կառավարության խտրական քաղաքականությունը նպատակ ուներ խեղդել ազատագրական շարժման

ամենաչնչին դրսևորումները: Արևմտահայերը Ռուսաստանի մեջ տեսնում էին իրենց պաշտպանին» (էջ 368): Այստեղ հիշատակվում է Ադամայի հայերի 1909-ի ջարդը:

Այնուհետև, ցույց է տրվում 1912-1913 թթ. Հայկական հարցում Ռուսաստանի նախածնոող դերը, երբ խնդիր հարուցվեց Թուրքիայի արևելյան վեց վիլայեթներում (Էրզրում, Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Սըլվազ, Խարբեթ) քաղնորոգումների անցկացնելու, մեկ միասնական նահանգապետություն ստեղծելու, հայերից խլված հողերը նրանց վերադարձնելու մասին: «Քարենորոգումների ռուսական նոր նախագծի հաջող իրականացումը, - կարդում ենք գրքում, - կբարելավեր թուրքահայերի դրությունը և զգալիորեն կուժեղացներ Ռուսաստանի դիրքերը Արևմտյան Հայաստանում» (էջ 370): Հիրավի, դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի փրկարար նշանակություն կունենար Ռուսաստանի հովանավորությունը Արևմտահայաստանի համար:

Գրքում բացահայտված է կայզերական Գերմանիայի դիվանագիտության գործողությունների հակառուսական, հակահայկական բնույթը: Գերմանական դիվանագետներն իրենց ավստրո-հունգարական գործընկերների հետ միասին վճռականապես ընդդիմացան ռուսական երկու գլխավոր առաջարկություններին՝ միասնական հայկական նահանգի ստեղծման և եվրոպական տերությունների համաձայնությամբ նահանգապետ նշանակելու մասին (էջ 370): Անգլիան և Ֆրանսիան, չնպաստելով ռուսական նախագծի իրականացմանը, միաժամանակ փորձում էին ամբողջ մեղքը բարդել Գերմանիայի վրա: «Անգլիայի և Ֆրանսիայի դիրքը Հայկական հարցում արտացոլում էր նրանց հակասությունները Ռուսաստանի հետ Օսմանյան կայսրությունում: Արևմտյան Հայաստանի ինքնավարության սպառնալիքը նրանց մտա վախ էր առաջացնում Թուրքիայի ամբողջականության, մերձավորարևելյան ռեգիոնում իրենց ազդեցության թուլացման համար» (էջ 371):

Միջպետական ախտյանությունից, երկար-քարակ դեբատներից ծնված կոմպրոմիսային նախագծի հիմքում դրվեցին հիմնականում գերմանական մոտեցումները: Արևմտյան Հայաստանը պետք է բաժանվեր երկու սեկտորների, որտեղ գլխավոր ինսպեկտորների ղեկավարությամբ պետք է իրականացվեին բարենորոգումներ: Սակայն այս ծրագիրը նույնպես չէր իրականանալու Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով (էջ 372):

Գրքի վերջին գլուխները նվիրված են Առաջին համաշխարհային պատերազմի շրջանում Արևելյան հարցի շուրջ ծավալված դիվանագիտական պայքարի, Ռուսաստանի քաղաքականության լուսաբանությանը: Նախորդ քաժինների համեմատությամբ գրքի վերջին էջերը գրված են ընդհանուր դիրքերից, պակաս հանգամանալից: Հանրահայտ փաստ է, թե ինչպիսի էական դեր էր խաղում Օսմանյան կայսրության ժառանգության խնդիրը տերությունների դիվանագիտական պայքարում: Սակայն այդ պրոբլեմին նվիրված էջերը չեն ընդգրկում դիվանագիտական պայքարի բոլոր ասպեկտները և

նրբերանգնե՞րը: Լիովին բացահայտված չէ Սայրս-Պիկո համաձայնություների կոմպլեքսի ամբողջ իմաստը:

Երիտթուրքական մարդասպանների կատարած չարագործության, իմպերիալիստական տերությունների հակաժողովրդական քաղաքականության բացահայտումն ու բնութագրումը անհամեմատ կատարյալ և շահեկան կդարձնեին ընդհանուր առմամբ հաջողված աշխատության վերջին գլուխների բովանդակությունը:

Գրքում կան նաև այլ կարգի բացթողումներ և թերություններ: Սակայն դրանք չեն նսեմացնում գրքի արժեքն ու կարևորությունը, գիրք, որի հրատարակումը հայերեն օգտակար կլինե՞ր ընթերցող լայն շրջանների համար:

СЕВЕРНАЯ РАДУГА¹

Историческая судьба армянского народа сложилась трагически. Зеркало былой армянской истории отражает лица захватчиков-легионеров, сельджуки-ких всадников... Несть числа тем, кто впивал свой алчный взор в трудолюбивых обитателей горного края...

Век за веком Армению грабили и разоряли, предавали мечу и огню, ее население угоняли в полон и насильственно обращали в чужую веру. Этой печальной судьбе могла быть предложена лишь одна альтернатива: союз с Россией.

Эта ориентация сложилась исторически. Еще Энгельс пророчески указывал, что судьба армян неразрывно связана с русской революцией. Широкие народные массы, передовые сыны отечества видели спасение своей родины в единении с Русским государством.

И в 1828 г. эта мечта осуществилась – Восточная Армения вошла в состав России. Горные вершины органически слились с беспредельной ширью равнин.

Великий армянский просветитель, страстный поборник русско-армянской дружбы Хачатур Абовян назвал благословенным «тот час, когда русские вступили на нашу светлую землю...»

Войдя в состав России, армяне оврели в лице великого русского народа искреннего и верного друга, включились в исторический процесс, приведший их к социальному и национальному возрождению. «Армянский народ живет сегодня на земле великой матери России, как у нас дома», - писал друг Герцена и Огарева Микаел Налбандян.

Сравнительный анализ фактов приобретает поистине историческое красноречие. В Армянской области, образованной после присоединения к России в начале 19-го века, треть деревень была полностью опустошена, а в остальных население сократилось в два-три раза и составляло всего около 100 тысяч человек. За первые же годы после присоединения из Ирана и Турции переселилось на территорию новой Армянской области более 100 тысяч человек. В течение 1831-1914 гг. население Восточной Армении возросло более чем в шесть раз и перевалило за миллион.

У подножия Арарата сложилось национальное ядро армянского народа. На невосклоне, ранее затянута мрачными тучами, теперь сверкала северная радуга...

Вхождение Армении в состав России явилось важным историческим актом, жизненной необходимостью. Оно открыло возможности для национальной консолидации, способствовало социально-экономическому, культурному разви-

¹ Киракосян Дж. Северная радуга // Литературная газета (М.), 1978, 11 октября.

тию армянского народа. Огромное значение имело приобщение армян к великим духовным ценностям русского народа, к демократическим традициям общественно-политической мысли России. «Исторический опыт борьбы российского пролетариата против царского самодержавия указал трудящимся Армении единственно верный путь к свободе, к социальному прогрессу – путь революционной борьбы, путь социалистических преобразований», - подчеркнул в этой связи Л.И.Брежнев.

Плечом к плечу с российским пролетариатом трудящиеся Армении отстаивали свободу своей родины, свростили ярмо деспотизма и вступили на путь социалистических преобразований. В братской семье народов Страны Советов они построили новую жизнь. А когда пришла великая беда, армянский народ вместе с другими народами Советского Союза грудью встал на защиту Отчизны от коричневой чумы фашизма. Великая Отечественная война показала неушимость ленинской дружбы и братских народов СССР.

Параллели между жизнью граждан Советской Армении и судьбами разрозненных по всему свету армян красноречиво свидетельствуют о живительной преобразующей силе марксистско-ленинских идей, благодаря которым наша республика засияла яркой звездой в созвездии братских республик.

В единой семье народов, подчеркивается в постановлении ЦК Компартии Армянской ССР «О праздновании 150-летия вхождения Армении в состав России», трудящиеся республики добились замечательных преобразований на родной земле, превратили Армению в цветущий сад, республику высокоразвитой индустрии, сельского хозяйства, передовой науки и культуры.

Армянский народ стал составной частью исторически новой международной общности людей – советского народа. И он свято бережет ленинскую дружбу народов СССР.

Велики масштабы социально-экономических преобразований в Советской Армении. Построены сотни промышленных предприятий, выросли новые города и поселки. Продукция республики вывозится более чем в 70 государств мира.

Нузнаваемо изменился и облик сел. Щедро плодоносит армянская земля. Площадь орошаемых земель за годы Советской власти увеличилась почти в пять раз. На полях работают десятки тысяч тракторов и других сельскохозяйственных машин. В братской семье советских народов трудящиеся республики претворяют в жизнь великие предначертания, намеченные XXV партийным съездом, закрепленные в новой Конституции СССР и Конституции Армянской ССР.

Армения – на марше, и шаг ее тверд и уверен. Она благодарна северной радуге, озарившей ее горизонт полтора столетия назад.

ԻՍԿԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ԳԱՍ ԱՌՆԵԼ ՊԱՏՄՈՒԹԵՆՆԵ՛՛՛՛՛

Նոյեմբեր 20-ին Լուս Անջելես ժամանեց Մովետական Հայաստանի արտաքին գործոց նախարար Ջոն Կիրակոսյանը, որ ՄԱԿ-ի վերջին ընդհանուր նստաշրջանին մասնակցեցավ իբրև Մովետական Միության պատվիրակության անդամ: Հարգելի հյուրը այցելեց հայկական կարգ մը կրթական ու մշակութային օջախներ, իր ներկայությամբ խանդավառելով հայ հասարակությունը: Օգտվելով այս առիթեն, մենք տեսակցություն մը ունեցանք նախարարին հետ, որուն ընթացքին հայ դիվանագետին արտահայտած միտքերուն ամփոփումը կուտանք ստորև:

* * *

Առաջնահերթ խնդիրը, որ կողմի սփյուռքահայության առջև, այդ սեփական Հայրենիքի՝ Մովետական Հայաստանի անցած ուղին և այսօրվան իրականության մասին լավ տեղյակ ըլլալն է: Կարելի չէ, որ մեկը պատկանի այս ազգին և չհետաքրքրվի այդ ժողովրդին ճակատագիրով, անոր հաջողություններով և անհաջողություններով:

Ամեն ինչ մեկ անգամեն և միայն ներկա պայմաններով պետք չէ ուսումնասիրել: Այսօրը հասկնալու համար անհրաժեշտ է սերտել անցյալը, սակայն սերտել ոչ թե ատր-անոր պատմած հեքիաթներով, պատահական լրագրություններով կամ ձախ ու ծուռ գրված գիրքերու էջերեն, որտեղ ժամանակին բորբոքված են ընտանեկան կոիվներ, կուսակցական կիրքեր, փառասիրական վեճեր և այլն, այլ սերտել փաստագրական տվյալներու հիման վրա, պեղելով անոնց խորքը և պահանջված խորությամբ մտնենալով նյութին: Անցյալը ուսումնասիրել ետքն է, որ կրնանք կատարել ճիշտ հարցադրումներ և ապա հանգիլ օգտակար եզրակացություններու:

Ինչպե՞ս պատահած է, որ շատ ու շատ ազգեր, որոնք շատ ավելի հետամնաց եղած են ընկերային, տնտեսական, մշակութային և մտավոր տեսակետեն և եղած են մվազ քաղաքակիրթ, քան հայ ժողովուրդը, ստեղծած են իրենց սեփական պետականությունը:

Պետք է ուսումնասիրել և վեր հանել այն արհեստականորեն ստեղծված խանգարիչ պատճառները, որոնք ժամանակին քաժամ-քաժամ ըրած են մեր ժողովուրդը, տկարացուցած են անոր միասնականության ոգին, որուն հետևանքով փոխանակ մեկտեղվելու՝ աշխարհով մեկ ցրված է մեր ժողովուր-

¹ Կիրակոսյան Ջ. Իսկական հայրենասիրությունը կամ ինչպես դաս առնել պատմությունից // *Ասրիլ* (Լ.Ա.), 1978, N 8, էջ 16-17: «Արև» (Կահիրե), 1979, 16 հունվարի:

տարմորեն ծառայեցին նոր գաղափարին՝ ունենալով այն խոր հավատքը, որ միայն այդ միջոցով կրճատվեն փրկել մեր ժողովուրդը:

Տղենը ինչի՞ աղայունք էր: Ի՞նչը հասցուց մեր ժողովուրդը այդ անասելի ողբերգության: Խնդիրը արդյոք միայն կրոնական է՞ր: Ո՛չ: Ջուտ ազգայի՞ն: Ո՛չ: Այդտեղ կային նաև սոցիալական հարցեր: Հայ քաղաքներիության աշխույժ գործունեությունը ակնհայտ էր և կշարժեր նախանձը թուրք քաղաքներիության:

Հայ քաղաքներին ճարակորեն մտած էր եվրոպական շուկան, լավ առևտուր կընէր և մեծ հարստություններու տեղ կդառնար, իսկ թուրքը դրամ չունէր. ան պետք է հանգույցը կտրեր:

Այսօր Թուրքիան կմնա հետամնաց երկիր: Հակառակ, որ միլիարդներ կերած է օտար պետություններն, տակավին կմնա աղքատության երկիր: Միլիոնավոր թուրքեր դուրսի երկիրները կաշխատին: Թուրքիան հնարավորություն չունի ժողովրդին գործ հայթայթելու: Այս քերիները, որ այժմ գոյություն ունին, կային նաև այն ժամանակին: Նման թերություններ ունեցող քրքրական վերնախավը չէր կրնար մարսել հայ ժողովրդին աշխուժությունը: Ասոր համար ալ թույլ չէր տար, որ հայը իր հողին վրա ամրանար, ազգային դիմագիծ ստեղծեր, քաղաքական իրավունքներ նվաճեր: Ան ուզեց խանգարել այդ կացությունը, մինչև որ խնդիրը հասցուց ոչնչացման:

Օսմանյան կայսրութենն հետո կստեղծվեր Թուրքիան: Առաջվան հասկացողությունները չկային: Առաջ օսմաններն էին, իսլամությունն էր: Իսկ հետո արդեն թուրքական ազգայնականությունն էր, որ պիտի ճգներ բոլոր արգելքները: Խոսող ուժն էր: Եթե չէինք կրնար ուժով դիմադրել, պետք է գիտնայինք շրջանցել վտանգը: Պետք էր հարմար միջոցներու դիմելինք: Սակայն այդպես չեղավ. սխալ մտածեցինք և սխալեցանք: Խելացությունը կպահանջե, որ գիտնանք այդ սխալները, ուսումնասիրենք զանոնք առանց կիրքի, որպեսզի այսօր կամ վաղը նույն սխալները չկրկնենք, որպեսզի նույն ճակատագրին չենթարկվինք:

ՌԱՍԻԱՏՆԵՐԻ ՀԱՆՑԱԿԻՑՆԵՐԸ¹

Մովետական պատվիրակությունը գտնում է, որ գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն տալու դեկլարացիայի իրականացմանը խանգարող օտարերկրյա տնտեսական և այլ շրջանների գործունեության վերաբերյալ բնմարկվող հարցը չորրորդ կոմիտեի օրակարգի կարևորագույն հարցերից մեկն է:

Իմպերիալիստական մոնոպոլիաների և ռասիստական վարչակարգերի կողմից բնական և մարդկային ռեսուրսների թալանումն ու շահագործումը շարունակում են մնալ աշխարհում գաղութային-ռասիստական կարգերի օջախները պահպանելու գլխավոր պատճառներից մեկը, հիմնական խոչընդոտը արդարացի դեմոկրատական հիմքի վրա միջազգային տնտեսական հարաբերությունների արմատական վերակառուցման ճանապարհին: Հենց այդ ուժերն են կոնկրետ մեղավոր այն դժվարությունների համար, որ ներկայումս ապրում են ինչպես գաղութային ստրկության շրջանների մեջ գտնվող ժողովուրդները, այնպես էլ այն ժողովուրդները, որոնք, հասնելով քաղաքական անկախության, շարունակում են իրենց վրա զգալ նեոգաղութատիրական ճնշումն ու շահագործումը, չարիքն ու կողոպուտը:

Այս նստաշրջանում անհրաժեշտ է արդյունավետ ջանքեր գործադրել այն ուժերի դեմ, որոնք համառորեն կառչում են գաղութային և նեոգաղութատիրական կարգերից, խոչընդոտում առաջադիմության ուղիով ժողովուրդների զարգացումը:

Վերջին երեք տասնամյակում աշխարհում տեղի են ունեցել հսկայական փոփոխություններ: Կործանվել են գաղութային կայսրություններ, գործնական հիմքի վրա է դրվել գաղութատիրության և ռասիզմի վերջին օջախների վերացման հարցը: Աշխարհի քարտեզի վրա երևացել են մոտ հարյուր նոր անկախ պետություններ: Եվ այսօր մենք ջերմորեն ողջունում ենք Տուվալուի նոր անկախ պետության ծնունդը և նրա ժողովրդին մաղթում հաջողություններ և բարեկեցություն ինքնուրույն զարգացման ճանապարհին: Մենք մաս անկեղծորեն շնորհավորում ենք Մոդոմոնյան կղզիների պետությանը՝ ՄԱԿ-ի շարքերն ընդունվելու առթիվ:

Մովետական Միությունում խորին համակրանքի զգացումով են մոտենում այդ փոփոխություններին: ՄՍՀՄ-ը վճռականապես պաշտպանել է և պաշտպանում է ժողովուրդների արդար պայքարը՝ գաղութային անցյալից իրենց ժառանգած կախման բոլոր ձևերից լրիվ ազատագրվելու համար:

¹ Ռասիստների հանցակիցները: Ջ.Ս.Կիրակոսյանի ելույթը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի XXXIII նստաշրջանին // «Մովետական Հայաստան» (Ե.), 1978, 22 հիկտեմբերի: Пособники расистов. Выступление Дж.С.Киракосяна на XXXIII сессии генеральной ассамблеи ООН // Коммунист (Е.), 1978, 21 октября.

Ես՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության ներկայացուցիչս, որի լիիրավ անդամն է Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը, ուզում եմ ասել, որ անցյալում բազմաչարչար իմ ժողովրդին լավ հայտնի են այդ պորբեմները: Նրան ծանոթ են թե՛ ստրկացման չարիքը և թե՛ ազատ կյանքի, հավասարության, բարեկամության ու խաղաղության բերկրանքը:

Այսօր հայ ժողովուրդը, Սովետական Միության բոլոր եղբայր ժողովուրդները նշում են մի մեծ տոն՝ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակը: Ռուսաստանի, որս ժողովրդի հետ միավորումը մեր ժողովրդի մի մասին փրկեց ֆիզիկական ոչնչացման սպառնալիքից, շրջադարձային ուղեմիջ եղավ Հայաստանի հնադարյան ժողովրդի պատմության մեջ, բացեց բարու, ազատության ու անկախության նրա դարավոր երազանքի իրականացման միակ ճանապարհը: Սովետական Հայաստանը սոցիալիզմի պայմաններում ժողովրդի իսկական վերածննդի համոզիչ օրինակ է, այն բանի օրինակը, թե ինչպիսի մեծ նվաճումներ են հնարավոր դառնում բարեկամության, ինտերնացիոնալ եղբայրության օրենքներով սարդող ազատագրված աշխատանքի մարդկանց հասարակության մեջ: Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում Հայաստանը կես դարում անցել է դարերի հավասար ուղի, հիբրալի մեծ բարձունքների հասել էկոնոմիկայի, մշակույթի և գիտության բնագավառում:

Բայց չե՞ որ այսօր մենք 307 անգամ շատ արդյունաբերական արտադրանք ենք թողարկում, քան հեղափոխությունից առաջ: Հանրապետության արդյունաբերությունը բազմաճյուղ կոմպլեքս է, որը միավորում է մոտավորապես 700 ժամանակակից ձեռնարկություններ: Մեզ մոտ բուռն կերպով զարգանում են տեխնիկական առաջադիմությունը որոշող ճյուղերը՝ քիմիան, էլեկտրատեխնիկական մեքենաշինությունը, սարքաշինությունը, ոռոգիչ-էլեկտրոնային արդյունաբերությունը, հաստոցաշինությունը: Արդեն գործում է Հայաստանի ատոմային էլեկտրակայանը: Մինչև հեղափոխությունը մեզ մոտ գրագետ մարդկանց թիվը չէր անցնում տասը տոկոսից: Այժմ հանրապետությունը համատարած գրագիտության երկրամաս է: Ձեռք բերված հաջողությունների համար օրերս մեր հանրապետությունը պարգևատրվեց Լենինի շքանշանով: Սոցիալիզմի և հավասարության, խաղաղության և բարեկամության շնորհիվ մեր ժողովրդի կյանքում հիբրալի հրաշք կատարվեց:

Ահա իճշու ես կամեցա մի քանի խոսքով կոմիտեի անդամների հետ իմ մտքերը կիսել դառը անցյալ ունեցող և այսօր մեծ նվաճումների հասած մեր ժողովրդի բախտի մասին:

Աշխարհում կատարված դրական բոլոր փոփոխությունների հետ չեն ցանկանում հաշտվել իմպերիալիզմի, ռասիզմի և ռեակցիայի ուժերը: Նրանք ուզում են շարունակել ժողովուրդների շահագործումը, իրավունքով նրանց պատկանող բնական հարստությունները, առաջվա պես մտածում են գաղութատիրական չափանիշներով և «ազդեցության ոլորտների կատեգորիանե-

րով»: Նրանք մինչև օրս ազատագրված ժողովուրդներին չեն ուզում համարել իրավահավասար պարտնորդներ: Ընթացիկ տարվա իրադարձությունները կրկին պարզորոշ ցուցադրեցին Աֆրիկայում իմպերիալիստական քաղաքականության իսկական նպատակները: Առկա են մայրցամաքում իրենց ներկայությունն ամրապնդելու և ընդլայնելու, նրա պետությունների ներքին գործերին միջամտությունը ուժեղացնելու, նրանց՝ որպես իրենց հումքային կցորդ պահելու, նրանց քաղաքական ու սոցիալ-տնտեսական զարգացումը կասեցնելու և կաշկանդելու նեոգաղութարարների քացահայտ փորձերը:

Աֆրիկյան մայրցամաքի խաղաղության ու անվտանգության համար առավել մեծ սպառնալիքը ներկայացնում են Պրետորիայի Հարավային Ռոդեզիայի ռասիստական վարչակարգերը՝ Աֆրիկայում նեոգաղութատիրության գլխավոր հենակետերը: Աֆրիկայի հարավում գաղութատիրության և ռասիզմի այդ վերջին օջախների վերացումը շարունակում է մնալ միջազգային կարևորագույն խնդիրներից մեկը, որի լուծումը թեև դժվար է ժողովուրդների ազատության պայանով, միջազգային խաղաղության և անվտանգության ամրապնդման շահերով: «Գաղութատիրությունը և ռասիզմը, - վերջերս ՄԱԿ-ի ասամբլեայի ընթացիկ նստաշրջանում ընդգծեց ՄՍՀՄ արտաքին գործերի մինիստր Ա.Ա.Գրոմիկոն, - պետք է լիովին և ընդմիշտ վերացվեն մյակ աֆրիկյան մայրցամաքում: Նրանք, ովքեր ուզում են պահպանել աֆրիկյան ժողովուրդների համար ատելի ռասիստական վարչակարգերը, պետք է հասկանան, որ իրենց գործը տանուլ է տրված և անհուսալի է»: Գաղտնիք չէ, որ Աֆրիկայում գաղութային-ռասիստական վարչակարգերի կենսագործունեությունը մեծապես որոշվում է արևմտյան պետությունների հետ նրանց ունեցած կապերով, որոնց տնտեսական և ռազմական շրջանները կենսականորեն շահագրգռված են այդ կապերի ամրապնդմամբ: Ուստի Աֆրիկայի հարավում իմպերիալիստական ներկայությունը, անդրազգային կորպորացիաների և ռազմական շրջանների գործունեությունը հիմնական խոչընդոտ են գաղութային երկրների ժողովուրդներին անկախություն տալու դեկլարացիան կենսագործելու և մեքողջ աշխարհում գաղութատիրության վերացման պրոցեսն ավարտելու ամնապարհին:

Վերջին տարիներին գլխավոր ասամբլեան և ՄԱԿ-ի մյուս մարմինները ընդունել են մի ամբողջ շարք բանաձևեր, որոնք դատապարտում են գաղութային տերիտորիաներում օտարերկրյա տնտեսական և մյուս շրջանների գործունեությունը և կապիտալիստական երկրների կառավարություններին կոչ են անում տնտեսական, իրավաբանական, վարչական և այլ կարգի սանկցիաներ կիրառել այն կորպորացիաների նկատմամբ, որոնց գործողությունները խոչընդոտներ են հարուցում ապագաղութացման ճանապարհին և հակասում են տեղական քնակության շահերին: Ցավոք, ինչպես նշված է 24-ի կոմիտեի որոշման մեջ, որն այդ հարցը հանգամանորեն ուսումնասիրել է այս տարի, գաղութային տերությունները և որոշ պետություններ շարունակում են անտեսել ՄԱԿ-ի որոշումները և չեն կատարել համապատասխան բանաձևե-

րը: 24-ի կոմիտեի և ՄԱԿ-ի գանձազան մարմինների զեկույցներում հավաքված է փաստական հարուստ նյութ, որն ակնբախտրեն ցույց է տալիս, որ այդ զիջատչական գործունեությունը ոչ միայն պահպանվում, այլև ընդլայնվում է և խորանում: Ընդ որում, կոպտորեն խախտվում են տեղական բնակչության իրավունքները, ինչպես նաև ՄԱԿ-ի կանոնադրության և բոլոր համապատասխան քանաձևերի սկզբունքները:

Ապարտեիդի դեմ պայքարի կենտրոնի տվյալների համաձայն՝ Հարավային Աֆրիկայում գործող օտարերկրյա ընկերությունների թիվը առ այսօր կազմում է 1 883, այսինքն՝ 1974 թ. համեմատությամբ շատացել են ավելի քան 250 միավորով: Գործող ընկերությունների թվում կան մոտավորապես 700 անգլիական և ավելի քան 500 ամերիկյան ընկերություններ, որոնց բաժին է ընկնում Հարավային Աֆրիկայում օտարերկրյա ներդրումների համապատասխանաբար 60 տոկոսը և 17 տոկոսը:

Օտարերկրյա կապիտալի գործունեությունը նպաստում է տեղական մոնոպոլիստական տիրապետող օլիգարխիայի՝ ռասիստական վարչակարգի այդ հենարանի դիրքերի ամրապնդմանը, որն իր հերթին ռասայական պատմեշների սխառեմի միջոցով արևմտյան կորպորացիաներին հնարավորություն է ընձեռում բարձր շահույթներ ստանալու սևամորթ և գունամորթ բնակչության աշխատանքի դաժան շահագործման հաշվին:

Հարավաֆրիկյան Հանրապետությունում օտարերկրյա մոնոպոլիստների գլխավոր շահերը կենտրոնացված են տնտեսության առաջատար ճյուղերում՝ հանքանյութի և վերամշակող արդյունաբերության մեջ: Հարավաֆրիկյան Հանրապետությունը ՆԱՏՕ-ի երկրների պահանջմունքների բավարարման հիմնական աղբյուրներից մեկն է ստրատեգիական հումքի այնպիսի կարևոր տեսակների ասպարեզում, ինչպիսին են ուրանը, պլատինը, ալմաստը, ֆերոմանգանը, վանադիումը, ծարիրը և հազվագյուտ մետաղները: Արևմուտքում հազվագյուտ մետաղների պահանջարկը հատկապես արագորեն է աճում ատոմային և տիեզերական տեխնիկայի զարգացման կապակցությամբ:

Հարավաֆրիկյան Հանրապետությունում իրենց գործունեությունը խորացնում են օտարերկրյա ավտոմոբիլաշինական ընկերությունները և ամենից առաջ՝ ԱՄՆ մոնոպոլիաները:

Աֆրիկայում ազգային-ազատագրական շարժման քախտի համար, խաղաղության ու անվտանգության համար առանձնահատուկ սպառնալիք է ներկայացնում արևմտյան մոնոպոլիստների Հարավաֆրիկյան Հանրապետության հետադիմական վարչակարգի ռազմական ալյանսը: Համաշխարհային իմպերիալիզմը Հարավաֆրիկյան Հանրապետությանը հատկացնում է իմպերիալիզմի հիմնական հարվածային ուժի դերը՝ մայրցամաքում ազգային-ազատագրական և հեղափոխական շարժումների դեմ մղվող պայքարում: Որպես օրինակ բավական է հիշել Հարավաֆրիկյան Հանրապետության զինված միջամտությունը հարևան անկախ երկրների՝ Անգոլայի և Զամբիայի գործե-

րին: ՆԱՏՕ-ի ստրատեգիական պլանների մեջ Հարավաֆրիկյան Հանրապետությունը ռազմաբոլորումաբերական և տրանսպորտային մի խոշոր հանգույց է հարավային կիսագնդում: Անգլիական, ամերիկյան, ինչպես նաև անդրագային կորպորացիաների օգնությամբ Հարավաֆրիկյան Հանրապետությունում ստեղծված է այնպիսի ռազմական արդյունաբերություն, որն ապահովում է ռասիստների հարաճումն պահանջարկը զինամթերքի և հրաձգային սպառազինության նկատմամբ: Արևմտյան կորպորացիաների լիցենզիաներով մարտական մեքենաներ և ինքնաթիռներ են հավաքվում:

Համաշխարհային հասարակայնության մեջ տազմապ և մտահոգություն են առաջացնում միջուկային զենքի ստեղծման ուղղությամբ Հարավաֆրիկյան Հանրապետությունում շարունակվող ինտենսիվ աշխատանքները: Եվ կրկին այդ ասպարեզում նրան օգնություն են ցույց տալիս Արևմտաթի երկրների, ինչպես նաև Իսրայելի ընկերությունները:

Հայտնի է, որ Հարավաֆրիկյան Հանրապետությունը այն սակավաթիվ երկրներից մեկն է, որը հրաժարվել է ստորագրել միջուկային զենքը չտարածելու պայմանագիրը:

Ռասիստական վարչակարգի ձեռքին միջուկային զենքի հայտնվելը հսկայական սպառնալիք կստեղծեր աֆրիկյան պետությունների անվտանգության համար, կհանգեցներ մայրցամաքում անկայունության և լարվածության եսկալացմանը: Հարավաֆրիկյան Հանրապետության միջուկային պատրաստություններն աղաղակող հակասության մեջ են այն ջանքերի հետ, որ շատ երկրներ և ՄԱԿ-ը ձեռնարկում են՝ նպատակ ունենալով կանխել միջուկային զենքի տարածման վտանգը, աֆրիկյան երկրների այն ձգտման հետ, որը նպատակ ունի Աֆրիկայի մայրցամաքը վերածել միջուկազերծ գոտու: Հարավաֆրիկյան Հանրապետությունում միջուկային զենքի ստեղծման պլանները վճռականորեն դատապարտել են ՄԱԿ-ի սպազադությանցման հատուկ կոմիտեն, հակապարտիշյան հատուկ կոմիտեն և այլ մարմիններ:

Ռասիստների միջուկային սպառազինման դեմ շուտափույթ միջոցառումներ ձեռնարկելու կոչով ՄԱԿ-ին դիմում է միջազգային հասարակայնությունը: Այդ կապակցությամբ մասնավորապես հարկ է նշել ապարտիդից Հարավային Աֆրիկայի ազատագրման ս.թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Դե-լիում կայացած միջազգային կոնֆերանսի կոչը:

Հարավաֆրիկյան Հանրապետության բուրժուազիան միջազգային մոնոպոլիստների ակտիվ գործակիցն է Աֆրիկայի հարավի ժողովուրդների մարդկային և բնական ռեսուրսների շահագործման ասպարեզում: Հարավաֆրիկյան կապիտալի էքսպանսիայի օրյեկտներ են դարձել Հարավ-Աֆրիկյան Հանրապետության հարևան շատ երկրներ, որտեղ արևմտյան ընկերությունների համագործակցությամբ գործում են Հարավաֆրիկյան Հանրապետության յոթ վիթխարի մոնոպոլիստական միավորումների մասնաճյուղեր:

Արևմտաթի կողմից Պրետորիայի մոնոպոլիստներին ցույց տրվող ուշադրությունն ու օգնությունը, սևանոթ և գունամոթեք բնակչության աշխա-

տանքի գիշատչական շահագործումը հսկայական շահույթներ են բերում մոնոպոլիստներին: Թեթքերում անպակաս են հաղորդումները Հարավաֆրիկյան Հանրապետության խոշորագույն ընկերությունների՝ «Դե Բիլիթս», «Հայվել-դի», «Բալտուի» և մյուսների շահույթների աճի մասին: Այսպես, օրինակ, անգլիական «Նայմենշըլ քայմա» բերրի հաղորդման համաձայն, «Դե Բիլիթս» ընկերության շահույթները ընթացիկ տարվա առաջին կիսամյակում 1977 թ. նույն ժամանակամիջոցի համեմատությամբ աճել են գրեթե 30 տոկոսով:

Հարավաֆրիկյան Հանրապետության ռասիստների մոնոպոլիաները, արևմտյան մի շարք երկրների տնտեսական շրջանների հետ դաշնակցած, անհամար վնաս են հասցնում նաև Պրետորիայի կողմից ապօրինաբար օկուպացված Նամիբիայի էկոնոմիկային: Այստեղ գործում են 88 օտարերկրյա ընկերություններ, որոնցից երեք խոշորագույններն էլ պատկանում երկրում արտադրվող արդյունքների առյուծի բաժինը: Ուրանի, պղնձի, բազմամետաղների շահագործումը կատարում են ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Անգլիայի, Գ.ՖՀ-ի, Կանադայի ընկերությունները՝ Հարավաֆրիկյան Հանրապետության մոնոպոլիաների հետ սերտորեն համագործակցած: Տարբեր գնահատումների համաձայն՝ Նամիբիայի ներքին համախառն պրոդուկտի մեկ երրորդից մինչև երկու երրորդը աճեն տարի արտահանում են արևմտյան երկրների ընկերությունները և Հարավաֆրիկյան Հանրապետության մոնոպոլիաները, որոնց համար Նամիբիան հումքի և եկամտների կարևոր աղբյուր է ծառայում: Արևմուտքի համար առանձնահատուկ շահերի ոլորտ են ներկայացնում Նամիբիայի ուրանի շատ հարուստ հանքավայրերը: Ընկնելով ատոմային հումքի հետևից, իրար հետ միավորվել են անգլիական «Ռիո-ֆինթր» խոշորագույն մոնոպոլիստական խմբերից մեկը «Տոտալ կոնզամի մինիեր է նյուլեեր» և «Էլչ Ակիտեի» կորպորացիաները, ինչպես նաև Գ.ՖՀ-ի, ԱՄՆ-ի, Կանադայի և Հարավաֆրիկյան Հանրապետության մոնոպոլիաները:

Օտարերկրյա կապիտալը և կորպորացիաները առաջվա պես կարևոր դեր են խաղում նաև Ռոդեզիայի էկոնոմիկայում: Ռոդեզիայում գործող խոշորագույն ընկերությունների թվին են պատկանում անգլիական «Լոնրո», ամերիկյան «Յունիոն քարբայդ» ընկերությունները, Հարավաֆրիկյան Հանրապետության մի շարք ընկերություններ: Այդ ընկերությունները, որոնք վաղուց ի վեր շահագործում էին երկրի հանքային հարստությունները, շարունակում են իրենց գործունեությունը ապօրինի վարչակարգի պայմաններում հաշվի չհստելով ՄԱԿ-ի որոշումների հետ, որոնք երկրում նրանց ներկայությունը որակում են որպես ուղղակի հանցակցություն ռասիստներին: Ավելին, ԱՄՆ-ում և Անգլիայում կամպագնիա է ծավալվել՝ Անվտանգության խորհրդի սահմանած պարտադիր սանկցիաները վերացնելու համար: Անվտանգության խորհրդի որոշումների կոպիտ խախտում է Հարավային Ռոդեզիայի ապօրինի ռասիստական վարչակազմի ղեկավարի՝ ԱՄՆ մուտք գործելու թույլտվությունը:

Համաշխարհային հասարակայնության մեջ մեծ վրդովմունք են առաջացնում Արևմուտքի նավթային կորպորացիաների կողմից նավթի ու նավթամթերքների սխտեմատիկ մատակարարումները ռասիստական վարչակարգերին: Սմիթի ապօրինի ինքնակոչ կառավարության գոյության առաջին իսկ օրերից նրան օգնության եկան Հարավաֆրիկյան Հանրապետության մոնոպոլիստները և նավթային ընկերությունները, կազմակերպելով նավթի մատակարարումը Ռոդեզիային Հարավաֆրիկյան Հանրապետության տերիտորիայից: Ռուտի նավթի վրա արգելք մտցնելը պետք է դառնա Հարավաֆրիկյան Հանրապետության դեմ տնտեսական սանկցիաներ կիրառելու գլխավոր ուղղություններից մեկը:

Վերջին ժամանակներս իմպերիալիստական կորպորացիաները դիմում են պրոպագանդիստական միջոցների զինանոցին՝ նպատակ ունենալով սքոդել և կոծկել մայրցամաքի հարավում իրենց հանցավոր գործունեության բացասական կողմերը: Մասնավորապես հաճախակի պրոպագանդվում է այն կարծիքը, որ մոնոպոլիաների հեռանալը վնաս կհասցնի առաջին հերթին բնիկներին: Արդարացվում է մի շարք ձեռնարկություններում աֆրիկացիների աշխատավարձի աճը, ընդ որում՝ «մոռացվում է» այն փաստը, որ սպիտակամորթ և սևամորթ բանվորների աշխատավարձի մակարդակների միջև եղած համեմատական անդունդը պահպանվում է և հասնում 6-8-նպատակ տարբերության:

Վերջին ժամանակներս լայնորեն ազդարարվում են Աֆրիկայի հարավի երկրներում կորպորացիաների, այսպես կոչված, «վարքագծի կոդեքսները»: Կոդեքս է մշակվել եվրոպական տնտեսական միավորման ընկերությունների համար, 1977 թ. ԱՄՆ-ի ավելի քան 100 կորպորացիաներ ստորագրել են Մալիվանի սկզբունքները: Պրոպագանդիստական նպատակներից բացի, այդ սկզբունքներն ունեն նաև գործնական նպատակներ՝ կոծկել ռասայական կոնֆլիկտները, մեղմացնել ապարտեյդի առավել մոդկալի և քարքարոսական դրսևորումները, փորձել իջեցնել գործադուլային շարժման մակարդակը: Այս ամենը, վերջին հաշվով, պետք է անդրադառնա աշխատանքի արտադրողականության և կորպորացիաների եկամուտների բարձրացման վրա: Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ կոդեքսներից ոչ մեկը ոչ մի չափով չի շոշափում ռասիստական վարչակարգերի հիմքերը, այլ փորձում է լոկ վերացնել ապարտեյդի բացասական կողմերն ու դրսևորումները, որոնք ներկայումս արգելակում են կորպորացիաների շահույթների աճը:

Հատուկ կոմիտեի նյութերը պերճախոս կերպով վկայում են օտարերկրյա տնտեսական և այլ շրջանների շարունակվող, բնիկների համար կործանարար գործունեությունը նաև բազմաթիվ մանր ու կղզկղան գաղութային տերիտորիաներում: Գաղութարարների կողոպտչական քաղաքականության հետևանքով այդ տերիտորիաների բնակչությունը հնարավորություն չունի իրականացնելու ՄԱԿ-ի կանոնադրության մեջ վավերագրված ինքնորոշման և անկախության իր անկապտելի իրավունքը: Տերիտորիաների ժողովուրդներ-

րի տնտեսական ու սոցիալական դրությունը ոչ միայն չի բարելավվում, այլ շատ տեսակետներից նաև վատթարանում է:

Կանոնադրության, գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու դեկլարացիայի հետ աղաղակող հակասության մեջ են տնտեսական և ռազմական շրջանների գործողությունները Միկրոնեզիայում, որի նկատմամբ խնամակալությունն իրականացվում է ԱՄՆ-ի կողմից արդեն ավելի քան երեսուն տարի շարունակ: Լայնորեն հայտնի են փաստեր, որ ԱՄՆ-ը Միկրոնեզիայի տերիտորիան օգտագործում է որպես պոլիզոն ատոմային և ջրածնային զենքի փորձարկումների համար, որի հետևանքով եղել են զոհեր, և որը անուղղելի վնաս է հասցրել բնիկների առողջությանը, ինչպես նաև շրջակա միջավայրին: Սովետական պատվիրակությունը քազմիցս ուշադրություն է հրավիրել այն բանի վրա, որ այդ տերիտորիայում ռազմական շրջանների գործունեությունը սպառնալիք է ներկայացնում Օվկիանիայի և Հարավարևելյան Ասիայի ժողովուրդների խաղաղության և միջազգային անվտանգության համար:

Խնամարկյալ տերիտորիայում ԱՄՆ-ի տնտեսական շրջանների գործունեությունը օգուտ չի բերում բնիկներին, միկրոնեզիական էկոնոմիկան եղել և մնում է լճացման վիճակում: Էկոնոմիկայի զարգացումը խթանող արդյունավետ միջոցների փոխարեն ԱՄՆ-ի ընկերությունները նախատեսում են սուպերնավահանգստի կառուցում, որն, անտարակույս, կարող է հսկայական շահույթներ բերել անորոշագլանի կորպորացիաներին: Այդ նավահանգստի գործարկումը կուժեղացնի այդ տերիտորիայի քաղաքական և տնտեսական կախումը օտարերկրյա կապիտալից, որ էլ ավելի կդժվարացնի Միկրոնեզիայի ժողովուրդների կողմից ազատության և անկախության իրենց օրինական իրավունքների իրականացումը: Բնիկ ժողովուրդների շահերին զգալի վնաս է հասցնում գաղութային տերությունների և նրանց դասակարգային դաշնակցների տնտեսական ու մյուս շրջանների գործունեությունը նաև Պուերտո-Ռիկոյում, Բեռմուդյան կղզիներում, Գուամում և այլն:

Ընկ. նախագահ, Աֆրիկայի հարավում և գաղութային փոքր տերիտորիաներում ինպերիալիստական շրջանների շղաղարող կողոպտչական գործունեությունը միջազգային հասարակայնությունից և ՄԱԿ-ից պահանջում է լրացուցիչ և ամենավճռական ջանքեր դրա դադարեցման նպատակով:

Դրանում մոբիլիզացնող և ուղղություն տվող դեր կարող է խաղալ շորորող կոմիտեն, որը պետք է ոչ միայն մերկացնի օտարերկրյա տնտեսական շրջանների գործունեության շահագործողական ելությունը, այլև պայքարի, ռեալիստական և արդյունավետ միջոցներ նախատեսի դրա իսպառ վերացման ուղղությամբ: Սովետական պատվիրակության կարծիքով առաջին հերթին անհրաժեշտ է ՄԱԿ-ի անդամ բոլոր պետություններից ՊԱՀԱՆՋԵԼ անհապաղ դադարեցնելու ամեն մի տնտեսական ու ֆինանսական օգնություն ռախիստական վարչակարգերին՝ պահպանելու պարտադիր սանկցիաներն ու արգելքները սպառազինության բոլոր տեսակների վաճառքի ու մատակարար-

րումների նկատմամբ: Անհրաժեշտ է նորից Անվտանգության խորհրդին կոչ անել՝ ընդլայնելու Հարավային Աֆրիկայի դեմ ուղղված սանկցիաների ոլորտը, ինչպես նաև շտապ միջոցներ ձեռնարկել նրա միջուկային սպառազինության դեմ:

Անհրաժեշտ է խստորեն դատապարտել օտարերկրյա տնտեսական ու մյուս շրջանների հարաճում ակտիվացումը կղզիական գաղութային փոքր տերիտորիաներում, որտեղ դրանց գործունեությունը խոչընդոտում է այդ ժողովուրդների կողմից իսկական անկախություն ձեռք բերելը:

Տարակույս չկա, որ մեծ առաջարկներն ու պահանջները պաշտպանություն և հավանություն կգտնեն բոլոր առաջադեմ երկրների կողմից, առաջին հերթին Մովետական Միության կողմից:

Զե՞ որ, ինչպես որ դա ակնհայտ է բոլորին, Մովետական Միությունը անշեղորեն և հետևողականորեն հանդես է գալիս ի պաշտպանություն ժողովուրդների բոլոր արդարացի պահանջների: Ինչպես վերջերս նշեց ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ՄՄՀՄ գերագույն սովետի նախագահության նախագահ Լ.Ի.Բերեժնևը. «...մեր երկիրը հաստատորեն պաշտպանում է ժողովուրդների պայքարը ընդհանուր խաղաղության և անվտանգության համար, միջազգային լարվածության թուլացման, զինաթափման, զարգացող երկրների քաղաքական անկախության և նրանց տնտեսական ինքնուրույնության ամրապնդման համար, միջազգային տնտեսական հարաբերությունները արդարացի, իրավահավասար հիմքի վրա վերակառուցելու համար»: «Մովետական ժողովուրդը, - այնուհետև նշել է նա, - հետևողականորեն հանդես է գալիս Աֆրիկայի հարավում ռասիզմի և գաղութատիրության վերջին օջախները վերացնելու օգտին, պահանջում է ամբողջ իշխանությունը հանձնել զիմբաբվե ժողովրդին, ի դեմս նրա հայրենասիրական ճակատի, Նամիբիայից հանել Հարավաֆրիկյան Հանրապետության զինված ուժերը և այդ երկրին տալ իսկական անկախություն, վերացնել սպարտեիդի սիստեմը Հարավաֆրիկյան Հանրապետությունում»:

Այս ազնիվ նպատակների իրականացումը, անտարակույս, ծանրակշիռ ավանդ կլինեն միջազգային լարվածության թուլացման և աշխարհի կայուն խաղաղության համար աշխարհի բոլոր ժողովուրդների պայքարում:

Համատեղ ջանքերով մոտեցնել այդ օրը և ժամը. այս է միջազգային հասարակայնության և ՄԱԿ-ի պարտքը:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՄԻ ԹԵԼԱԴՐՎԱԾ¹

Դարեր շարունակ ենթարկվելով նվաճողների ասպատակություններին, կրելով արևելյան բռնակալների անտանելի լուծը, հայ ժողովրդի ոգին երբեք չէր խամրում: Հայ ժողովուրդը մարտնչում էր զենքով ու ոգով, գրչով ու մագաղաբով: Նրա ազատամիտ զավակները միջնադարի խավարում ուղիներ էին փնտրում ժողովրդի ազատագրության, ինքնուրույնության համար: Թուրքական ու պարսից տիրապետության դեմ մղած պայքարի քառուղիներում նրանք հայացքը հասում էին ժամանակի հզոր տերություններին, հավատի ընդհանրության հիման վրա օժանդակություն ակնկալում քրիստոնյա տիրակալներին: Սակայն այդ հույսերը քանիցս ի դերև ելան: Աստիճանաբար միջազգային կյանքում ավելի ու ավելի ուրվագծվեցին Ռուսաստանի դերը, նրա ապագա դերն ու նշանակությունը համաշխարհային ասպարեզում: Հայ ժողովրդի ռեալիստ գործիչները սեփական ժողովրդի ապագան տեսան սերտորեն առնչված մեծ Ռուսաստանի, նրա ժողովրդի հետ: Մեր ժողովուրդը կամուփյն ընտրեց ռուսական կողմնորոշումը՝ որպես իր գոյատևման ու զարգացման միակ երաշխիք: Կյանքն ինքը թելադրեց Իսրայել Օրում² հրաժարվել պֆայցյան ծրագրից, և նա հակվեց Մոսկվայի օգնությանը դիմելու մտքին:

1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին: Ըստ էության նույն պահին՝ 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, Արևմտյան Հայաստանի՝ Անդրկովկասին հարող տարածքների հայ բնակչության ներկայացուցիչները քանակցություններ վարեցին ռուսական զինվորական իշխանությունների հետ, խնդիր հարուցելով ռուսական տիրապետությունը թուրքաց Հայաստանի վրա տարածելու մասին³:

Հարյուր հիսուն տարի առաջ Ռուսաստանի հովանու տակ անցավ Հայաստանի միայն մի վտոր մասը: Ռուսաստանին միանալու դրուշը ծածանվեց

¹ Կիրակոսյան Ջ.Ս. Պատմության իմաստությամբ թելադրված // «Լենինյան ուղիով» (Ե.), 1978, N 10, էջ 36-44:

² Իսրայել Օրի (1659-1711), հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, դիվանագետ, օտարերկրյա տերությունների օգնությամբ Հայաստանն ազատագրելու քաղաքականության, ռուսական կողմնորոշման հիմնադիրներից, քանակցություններ է վարել պֆայցյան կորֆյուրստ Յոհան Կլիխելմի (1698), ավստրիական կայսր Լեոպոլդ I-ի (1700), ռուսական կայսր Պետրոս I-ի (1701) հետ, Անգեղակոթ ավանում գտնաբեր է Սյունիքի 11 մելիքների խորհրդատուով, որտեղ կազմվել են եվրոպական տերություններին ուղղված նամակներ, մշակվել է ծրագիր, որում Հայաստանի ազատագրության գործում գլխավոր դերը հատկացվում էր Ռուսաստանին - Ա.Կ.:

³ Լեռ. Հայոց հարցի վավերագրերը, Թ, 1915:

Երևանի բերդի վրա: Մեր ժողովրդի մի հատվածին հաջողվեց թոքափել խավարամիտ տիրապետողների լուծը: Տասնյակ ու տասնյակ տարիների ընթացքում սերունդների փայփայած հույսերն իրականացան էին: Արևելահայության համար ստեղծվում էին կյանքի ու աշխատանքի անհամեմատ խաղաղ պայմաններ: Բոլոր ողջամիտ մարդիկ ողջունեցին պատմական այդ ակտը:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելով, ամբողջ հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրն այդուհետև սերտորեն աղերսվեց Ռուսաստանին, ռուս մեծ ժողովրդի կյանքին ու պայքարին: Ցարիզմը ժողովուրդներին բարիք չէր բաժանում: Ցարիզմը մնում էր ժողովուրդների թշնամի: Բայց նրա կողքին կար ռուս ժողովուրդը, ռուս դեմոկրատիան, այն Ռուսաստանը, որը ոչ միայն ռուս, այլև տասնյակ ու տասնյակ ժողովուրդների տանելու էր ազատության ու առաջադիմության ուղիներով: Ինչ խոսք, որ իր մղած պատերազմներում ցարիզմը ռեալ շահեր ուներ: Բայց ցարիզմի, ռուսական շահագործող, պորտաբույծ վերնախավի կողքին կար մյուս Ռուսաստանը՝ Գեղեցնի և Չերնիշևսկու, մեծ Լենինի Ռուսաստանը, աշխատավոր ռուս մարդու Ռուսաստանը:

Հայ ժողովրդի համար ասպարեզում չկար մի այլ հենարան, մի այլ կուլան: Միակ ռեալ ու հուսալի ուժը Ռուսաստանն էր: Հարյուր հիսուն տարվա քաղաքական ու դիվանագիտական պատմությունը վկայությունն է այն ճշմարտության, որ առանց Ռուսաստանի օգնության մեր ժողովուրդը եմքարկվել է անհաջողության: Եթե արևմտաեվրոպական դիվանագիտությունը չխանգարեր Ռուսաստանին՝ 19-րդ դարի առաջին տասնամյակներին, 70-ական, ապա՝ 1912-1914 թթ. հայ ժողովրդի երկու հատվածների միավորմանը, Ռուսաստանի հովանու տակ համախմբման խնդիրը միանգամայն այլ լուծում կստանար:

* * *

Արևելյան հարցի գոյության ամբողջ ընթացքում որոշիչ էր Ռուսաստանի դերը: 18-րդ դարի վերջին, ինչպես և 19-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության նկատմամբ ռուսաց բանակի տարած յուրաքանչյուր հաղթանակ, ստորագրված յուրաքանչյուր միջազգային պայմանագիր մոտեցնում էր պատմության, կովկասցիների ու թուրքական դարավոր լծի տակ մեծված մյուս ժողովուրդների ազատության օրը: Հույները, սերբերը, ռումիները, բուլղարները, չեռնոգորցիները, մոլդովացիները, վրացիները, հայերը, մյուս ճնշված ազգերը թոքափեցին թուրքական ու պարսից լուծը, նախընտրեցին առաջադիմության ուղին՝ շնորհիվ Արևելյան հարցում Ռուսաստանի խաղացած որոշիչ դերի, չնայած ցարիզմը հետապնդել է նվաճողական նպատակներ:

Ռուսաստանի հովանու տակ անցած արևելահայությունը կարճ ժամանակում հսկայական առաջընթաց ունեցավ: Մեծ տեղաշարժեր կատարվեցին սոցիալ-մշակութային բոլոր ասպարեզներում: Բարձրագույն գրագիտության

մակարդակը: Աստիճանաբար առաջացան հանքարդյունաբերական օջախներ, զարկ տրվեց ճանապարհաշինարարությանը: Անհամեմատ բարձր հիմքերի վրա դրվեց երկրագործությունը: Հայ երիտասարդներն ուսման մեկնեցին ուսական կրթական կենտրոններ:

Ստեփանոս Նազարյանցն¹ արձանագրում էր իսկությունը, երբ գրում էր, թե «Հայերը ճշմարտապես և իրավացի շնորհակալ են Ռուսաստանին, որ ազատել է նորանց մի անտանելի, անարգական ստրկությունից և բացել է նուցա առջև մի նոր քաղաքական կյանքի ասպարեզ»:

Եվ, այնուհետև, ամբողջ 19-րդ դարի ընթացքում Եվրոպայի ճանապարհորդներն ու ուսումնասիրողները չէին կարող չխոստովանել այն ահռելի տարբերությունը, որ ստեղծվել էր Արևելյան Հայաստանի և թուրքական լծի տակ հեծող Արևմտյան Հայաստանի կյանքի պայմանների միջև: Ամենակարևորն այն էր, որ ուսական «տարը» խաղաղություն էր բերել: Այս բանը հատկապես շեշտում էր Խաչատուր Աբովյանը:

Ավետիք Իսահակյանը² «պատմական անկյունադարձը» գնահատել է «չատ բարենպաստ» կովկասահայերի համար: Ինչո՞ւ: Ռոտվիետև նրանք վախելեցին «կյանքի ու գույքի ապահովություն», իրենց վրա կրեցին «ոռու մեծ կոպտության և գրականության կենսատողջ ազդեցությունը, ամրացավ հայ ժողովրդի կապը և բարեկամությունը ոռու մեծ ժողովրդի հետ»:

Արևելահայաստանը դարձավ հայ ժողովրդի ազգային հավաքականության կորիզը: 150 տարվա պատմությունը չափազանց ուսանելի եզրակացությունների հիմք է տալիս: 19-րդ դարի սկզբին Արևմտյան Հայաստանում երեք միլիոն հայություն կար: Այժմ ընդամենը մի քանի տասնյակ հազար հայություն կա Ստամբուլում: Ռուսաստանի կազմի մեջ մտնելու պահին Արևելյան Հայաստանում կար հարյուր հազար մարդ, թուրքիայից ու Պարսկաստանից կատարված ներգաղթից հետո այն դարձավ 200 հազար, իսկ 1913 թ. արդեն մեկ միլիոն 200 հազար: Այսօր Մովսեսական Հայաստանի բնակչությունը երեք միլիոն է:

¹ Ստեփանոս Նազարյանց (1812-1879), հրապարակախոս, լուսավորիչ, մանկավարժ, փլյիստոխա, արևելագետ, գրականագետ, հիմնադրել է խմբագրել է «Հյուսիսափայլ» (Մ.) ամսագիրը, «Առաջին հոգեղեն կերակուր հայազգի երեխաների համար», «Վարդապետարան կրոնի», «Հանդես նոր. հայախոսության», «Տեսական և գործնական առաջնորդ ոռու լեզվի ի պետս հայկազյան մանուկների» աշխատությունների հեղինակ - Ա.Կ.:

² Ավետիք Իսահակյան (1875-1957) - բանաստեղծ, արձակագիր, հասարակական գործիչ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, «Հայրենի աղբյուրից», «Ալագյազի մանկներ», «Հայդուկի երգեր» բանաստեղծական ժողովածուների, «Աբու-Լալա Մահարի» պոեմի, «Շիդհարը», «Հավերժական սերը», «Լիլիթ» լեգենդների և հեքիաթների, «Համբերանքի չիբուխը», «Ուստա Կարո» արձակ էջերի հեղինակ - Ա.Կ.:

Այս թվերն ակնբախ հաստատում են ժողովրդի ընտրած կողմնորոշման պատմաքաղաքական ճշմարտացիությունը, նրա դրական արդյունքները առաջադիմության ու զարգացման երկարամյա պրոցեսում:

Հովհաննես Թումանյանը գրում էր, թե «Հզոր Ռուսաստանի արևելյան քաղաքականությունն ու տանջվող հայ ժողովրդի հույսերը բռնում էին իրար»: 1913-ին, երբ միջազգային դիվանագիտությունը նորից քննարկում էր Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու խնդիրը, մշակում, հետաձգում նախագծերի տարբերակները, Թումանյանը Թիֆլիսի հայ մամուլում հանդես եկավ մի հողվածաշարով՝ Հայկական հարցն ու իր լուծումը: Այս գրվածքում կարմիր թելի պես անցնում էր մեծ բանաստեղծի սերը մեծ Ռուսիայի, նրա ժողովրդի նկատմամբ: Իսկ բանաստեղծի խոսքերով արտահայտվում էր հայ ժողովուրդը:

– «Մի շարք ռուս-պարսկական պատերազմներից հետո, գրել է Հ.Թումանյանը,– վերջնականապես 1828 թ. Ռուսաստանը տիրեց հին Սյունիքը, Գուգարքն ու Արարատյան երկիրը և մի անգամ ընդմիջտ վերջ տվեց ողբ ու կոծով հայտնի Հայկական հարցին: Մնաց տաճկահայկական հարցը¹:

Նա շեշտում էր, որ «ռուսներն են առաջին անգամ Հայկական հարցը մտցրել միջազգային խնդիրների շարքը», նկատի ունենալով Սան Ստեֆանոյի պայմանագիրը: Մեծ բանաստեղծը ցույց էր տալիս հայերի կապվածությունն ու նվիրվածությունը Ռուսաստանին: «Հայ ժողովուրդը միշտ նայել է Ռուսաստանի վրա որպես իր խնդրի ավանդական պաշտպանի վրա»: Նույնիսկ մշտապես արևմտաեվրոպական դիվանագիտության հետ հույս կապող մարդիկ չէին մոռանում Ռուսաստանի դերը Հայկական հարցի դրական լուծման հեռանկարում: 19-րդ դարի 80-90-ական թթ. Լոնդոնում լույս տեսնող «Հայաստան» թերթի տնօրեններ Հակոբյանը², Պրուսայանը, Սվազյանը³, որոնք Հայկական հարցն արևմտաեվրոպական դիվանագիտության միջոցով լուծելու ջերմեռանդ կողմնակիցներն էին, մշտապես շեշտում էին, որ Ռուսիան «մեզ համար բարեկամ և պաշտպան է», որ «Ռուսիո մեծանձն մախաձեռնության կպարտիմք 1878-ի Բեռլին դաշնագրի մեջ 61-րդ հոդվածի գետեղումը»⁴:

¹ «Հորիզոն» (Թ.), 1913, 11 հունվարի:

² Նույն տեղում:

³ Կարապետ Հակոբյան (1849-1926), հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս, 1885 թ. Լոնդոնում ստեղծել է «Հայրենասիրաց ընկերություն հայոց Եվրոպայի» կազմակերպությունը - Ա.Կ.:

⁴ Միքիան Սվազյան (1863-1935), հրապարակախոս, գրող, հասարակական-քաղաքական գործիչ, իրավաբան, հրատարակել է «Հայաստան» (Լոնդոն), «Արմինին Հերալդ» (Բոստոն) պարբերականները, ԱՄՆ-ի առաջին լրքիստական կազմակերպության՝ Ամերիկայի հայ ազգային միության հիմնադիր-նախագահ, եղել է ԱՄՆ-ի նախագահ Վ.Վիլսոնի խորհրդատուն ամերիկյան մանդատի հաստատման աշխատանքներում - Ա.Կ.:

⁵ «Հայաստան» (Լոնդոն), 1888, 15 նոյեմբերի:

Գարեթը շարունակ Կ.Պոլսում ծվարած հայոց վերնախավը կտրված էր բուն երկրից, նրա դարդ ու ցավից, քիչ էր մտահոգվում բուն ժողովրդի առաջադիմությամբ: Կ.Պոլսի պայմաններն այլ էին, Արևմտյան Հայաստանինը՝ բոլորովին այլ, և ամենևին ճիշտ չէ, երբ պոլսահայ կոմսյադորների ասածներով կամ վարքագծով փորձում են դատողություններ անել կամ պատկերացում կազմել արևմտահայության կենսական շահերի ու ձգտումների մասին: Այնուամենայնիվ, նույնիսկ նրանց մոտ հաղթանակեց այն տեսակետը, որ միայն Ռուսաստանը կարող է ռեալ հենարան լինել հայ ժողովրդի բաղձանքներին:

Գրիգոր Օտյանը, որ համախոհն էր թուրքական սահմանադրության հայր Միդիատ-փաշայի և որոշակի դեր էր խաղում 19-րդ դարի 70-ական թթ. Կ.Պոլսի հայոց քաղաքական կյանքում, 1880-ին գրում էր. «Կարելի է ըսել առանց հերքվելու երկուտի, թե ռուս իշխանության տակ գտնվող հայերն այնպիսի վիճակ մը կվայելեն, որուն իրավամբ կրնան նախանձել իրենց փոքրասիական եղբայրները»: Նա ապացուցում էր, որ «թուրք կառավարությունը երդում ըրած է ջնջել հայերը և թե եթե այս բանս ի գլուխ չէ ելած, թերևս Ռուսիո շնորհիվ»¹:

Սկրտիչ Փոքրուզայանի² «Արմենիա»-ն արձանագրում էր, որ «Ռուսիո Հայաստանի մեջ հայ լրագիրներ ունինք, Տաճկահայաստանի մեջ որ միայն կարելի եղած չէ լրագրի մը համար արտոնություն ստանալ, այլ եկեղեցական գրեաց տպագրության հատկացյալ տպարան մը անգամ կվակվի...»: Թերթը գրում էր, որ Ռուսաստանում «ազգային պատմության վերաբերյալ գրությունը ազատորեն կրնան հրատարակել», «Տաճկաստանի մեջ այժմ Հայաստան քառը պարունակող եկեղեցական գիրք մը անգամ կարգելի առաջին մաքսատան մեջ»³:

1888-ին զուգահեռ անցկացնելով հայ ժողովրդի շահերի տեսակետից Ռուսաստանի ու Օսմանյան կայսրության միջև, Մ.Փոքրուզայանը նշում էր. «Բայց մի՞թե քավական չէ մեզ մտածել տալու համար սա կետ, թե Տաճկահայաստանն անդադար կաղաթեն Ռուսահայաստան, իսկ Ռուսահայաստանն ոչ որ կզաղթե դեպի Տաճկահայաստան»⁴:

Երբ «Արմենիա»-ի թղթակիցը 1890-ի աշնանը այցելեց Վանից ոչ հեռու

¹ Նույն տեղում, 1891, հունիս:

² Սկրտիչ Փոքրուզայան (1848-1921), հասարակական-քաղաքական գործիչ, հրատարակախոս, Արմենական կազմակերպության հիմնադիր, խմբագրել է «Արխա» (Կ.Պոլիս) լրագիրը, Հայաստանում լուսավորություն տարածելու նպատակով ստեղծել և ղեկավարել է «Արարատյան ընկերություն հայոց» կազմակերպությունը, 1881 թ. Վանում հիմնել է Հայկազյան կենտրոնական վարժարանը, 1885 թ.՝ «Հայրենասիրաց ընկերությունը», հրատարակել է «Արմենիա» (Մարսել) թերթը - Ա.Կ.:

³ «Արմենիա» (Մարսել), 1886, 27 փետրվարի:

⁴ Նույն տեղում, 1888, 6 հունիսի:

գտնվող Նորգեղ, նրան շրջապատող գյուղացիներն ասում էին. «Եղբայր, ոռու են՞րք պիտի գա, որ մեզ ազատեն»¹:

Ամեն անգամ միջազգային դիվանագիտությունը, համաշխարհային քաղաքականության տնօրենները Ռուսաստանի հաջողությունը խոչընդոտելու համար ստիպում էին ռուսական բանակներին նորից թուրքական դժնի կառավարմանը թողնել հայոց հողերը: Քանի անգամ ռուսաց բանակը հաղթական դրոշ է պարզել Կարսի ու Էրզրումի, հայաշատ Ալաշկերտի ու Բայազետի, Վանի ու Արևմտյան Հայաստանի մյուս մասերի վրա: 1829-ին և 1855-ին, 1878-ին ու 1916-ին: Իսկ ամեն անգամ եվրոպական քաղաքականության մեծերն իրենց ընչաքաղցությանը հագուրդ են տվել՝ զոհաբերելով մի ամբողջ ժողովրդի կենսական շահերը:

1878-ի Սան Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը հիմք էր տալիս մտածելու, որ «Հայաստան քիչ մը հանգիստ շունչ պիտի կրնա առնել Ռուսիայի շնորհիվ»: Սակայն անգլիական ու ֆրանսիական, ավստրո-հունգարական ու գերմանական դիվանագետները միավորվեցին՝ խանգարելու ռուսական ծրագրերի կատարմանը: Ռուսաստանը Բեռլինի տրակտատով Օսմանյան կայսրությանը վերադարձրեց Էրզրումը, Ալաշկերտի դաշտավայրն ու Բայազետը և այլ տարածքներ արևմտաեվրոպական դիվանագիտության խարդավամքների հետևանքով:

«Բեռլինի տրակտատը հայ ժողովրդի զգալի մասը թողեց թուրքերի լծի տակ: Պատմությունը ցույց տվեց, որ կապիտալիստական տերությունների այդ որոշումը ճակատագրական եղավ արևմտահայերի համար. այն նրանց մատուցեց ֆիզիկական ունչացման»²:

* * *

Ինչպես նախկինում, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ևս Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ճակատագրում հաստատուն գաղափար էր: Համաշխարհային քաղաքականության մեջ եղանակ ստեղծող մեծ տերությունների շարքում առանց Ռուսաստանի մասնակցության հնարավոր չէր վճռական խոսք ասել Առաջավոր Ասիայի, նաև Հայկական հարցի շուրջ: Միա թե ինչու հայ մարդիկ հույսները դրել էին Ռուսաստանի վրա, որը 1913-1914 թթ. պնդում էր արևմտահայկական վեց մահանգների (Էրզրում, Վան, Բիթլիս, Դիարբեքլի, Սրվազ, Խարբեքոլ) հիման վրա հայկական գեներալ-մահանգապետություն ստեղծելու մասին: Սակայն գերմանական, նաև անգլո-ֆրանսիական դիվանագիտությունը խոչընդոտեց այդ ծրագրի իրագործումը, լուրջ հարված հասցնելով հայոց ազգային կենսական շահերին³:

1913-ին «Նովոյն վրեմյա» թերթը գրում էր. «Էրզրումի մահանգի հայ ժո-

¹ Նոյն տեղում, 1890, 22 նոյեմբերի:

² История дипломатии, М, 1963, т. 2, с. 333.

³ Восточный вопрос во внешней политике России... – с. 367-372.

դովրդի փրկությունը և նրա ուժեղացումը դառնում է ռուսաց արտաքին քաղաքականության խնդիրներից մեկը, որովհետև այդ ճանապարհով միայն մենք կարող ենք ապահովել կովկասյան մեր երկրները հարավից սպառնացող հարձակումներից»¹:

Արևմտագիտական դիվանագիտությունը խոչընդոտեց Ռուսաստանի հովանու ներքո արևելահայերի և արևմտահայերի վերամիավորումը: Ռուսական դիվանագիտությունը միայնակ մնաց այդ հարցում, ի վիճակի չեղավ մինչև վերջ հասցնելու հաջողությամբ սկսված գործը: Բուրժուական Եվրոպայի հակահայկական դիրքորոշումը խիստ բացասական դեր խաղաց մեր ժողովրդի քաղաքական ճակատագրում:

Տասնամյակների ընթացքում արևմտյան դիվանագիտությունը ոչ մի ռեալ երաշխիք չտվեց մեր ժողովրդին: Իսկ զանգվածային եղեռնագործությունը կատարվեց այն տարածքների վրա, որոնք Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածով, 19-րդ դարի 90-ական, այնուհետև 1912-1914 թթ. միջազգային դիվանագիտական ակտերով իբր օգտվում էին միջազգային ֆորումների ու քանակների խնամակալությունից ու պաշտպանությունից:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին պանիսլավիզմի և պանթուրքիզմի պրոպագանդան ուղղված էր գլխավորապես Ռուսաստանի դեմ: Երխտորական գործակալները գործում էին Բուխարայում և Կրիմում, Բաքվում և Թուրքմենստանում: 1912-1914 թթ. Ծպտյալ թուրքական սպաներ էին ուղարկվում Բաքու, Բաթում, Դաղստան և Կովկասի այլ մասերը՝ Ռուսաստանի դեմ զինված ելույթներ կազմակերպելու համար²:

Պատերազմի նախօրյակին երխտորական պարագլուխներից մեկը հայտարարել է. «Թուրքիայի քաղաքականությունը պետք է կայանա նրանում, որպեսզի Փոքր Ասիայում ստեղծվի հզոր տերություն... Թուրքիան կարող է երազել ոչ միայն Անդրկովկասին, այլև Կովկասյան լեռնաշղթայից շատ հեռու ընկած և Դոնի ու Կուրայի հետ սահմանակից վայրերին ֆեդերատիվ և ինքնավար կառավարում շնորհելու մասին... Այդ բնական սահմանից այն կողմ պետք է շարտել ռուսներին»³:

Երխտորական պարագլուխներից Խալիլ-բեյը համոզված էր, որ «Գերմանիան, որպես Թուրքիայի դաշնակից, նպաստում է պանթուրքիզմի գաղափարի իրագործմանը և թուրքական պետության ստեղծմանը, որը տալիս է Լյուսիային ծովից մինչև Լնդկական օվկիանոսը...»⁴:

Թալեաթը թուրքական ազգային ժողովի հայ երեսփոխաններին թելադրում էր հայերի միջոցով «Կովկասի մեջ խռովություններ հարուցել»՝ դուրացնելու համար թուրքական բանակի «առաջխաղացումը ռուսական սահմաննե-

¹ «Новое время» (СПб), 1913, N 13368.

² Марунов Ю.В. Пантюркизм и панисламизм младотурок // В кн.: Краткие сообщения института народов Азии, т. XLV, М, 1961, с. 46, 49.

³ Там же, с. 48:

⁴ Цовикян Х. Младотурецкая революция и национальный вопрос, Л.-д, 1937, с. 11.

րեն ներս»։ Հայ մարդիկ երբեք ձեռք չեն բարձրացրել Ռուսաստանի դեմ, և մրանք «ժխտեցին այդքան վտանգավոր ու ապօրինի թելադրանքը»¹։

Հայ ժողովուրդն ակտիվ մասնակցեց պատերազմին, իր կամավորական ջոկատներով քաջաբար կռվելով ռուս զինվորի կողքին։ Կ. Պոլսում աշխատած գերմանական ժուռնալիստ Հարրի Շտոեբոնը 1917-ին Նյու Յորքում հրատարակած իր գրքում խոստովանում էր, թե Անդրկովկասը Ռուսաստանի դեմ հանելու Էմմերի պլանը ձախողվեց հենց սկզբից։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի մեծագույն ողբերգությունը կատարվեց թուրքական պետության ձեռքով, իմպերիալիստական տերությունների կառավարությունների, առաջին հերթին, կայզերական Գերմանիայի մեղսակցությամբ։

Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Ֆոն Վանգենհայմը² ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուին հայտարարում էր, թե իր կառավարությունը չի կարող միջամտել Թուրքիայի ներքին գործերին։ Վաշինգտոնում Գերմանիայի դեսպան Բերնսդորֆը զգալով, թե ինչպիսի ծանր տպավորություն են թողնում ամերիկացիների վրա մամուլի լուրերը հայերի նկատմամբ թուրքական զազանությունների մասին, սկզբում փորձում էր ուղղակի ժխտել կոտորածի փաստերը, բայց երբ բոլոր փաստերը հաստատվեցին վկաների ցուցմունքներով, և դրանք քաջասելը դարձավ անհնարին, նա հայտարարեց, որ Թուրքիայում ամբողջ տեղի ունեցածը պետք է դիտել որպես հայկական ապստամբությունը ճնշելու միանգամայն օրինական գործողություն։³ Իսկ Թալեթը ցինիկաբար հայտարարում էր ամերիկյան դեսպանին, թե «ես ձեռք եմ առնում ամերիածեշտ քայլեր հայերի համար անհնարին դարձնելու ինքնավարություն բառի արտասանումը հետագա հիսուն տարիների ընթացքում»։

Ովքեր ընթացան արևմտաեվրոպական դիվանագիտության հետևից, չարաչար սխալվեցին, ոչինչ չստացան, բացի հուսախաբությունից։ Սվյուտչևը նույնպես սխալվեց, որովհետև իրապարակված տասնյակ ու տասնյակ գրքերի հեղինակները, դեսպերի մասնակիցներն ու ակամատեսները, որոնք երեկ դեռ հավատ էին ընծայում 1895-ի մայիսյան ռեֆորմների, Սևրի պայմանագրի հեղինակներին, Լոզանի թղթերը բանաձևողներին, քննադատության, դատապարտումի խոսք են ուղղում Լոնդոնի ու Փարիզի տերերի, կայզերական Գերմանիայի ու Վաշինգտոնի տնօրենների հասցեին։

Կ. Պոլսում նախկին ռուսական դեսպանության աշխատակից Ա. Մանդելշտամը, խոսելով Սևրի պայմանագրի մասին, ճշում է, որ Անտանտի տերությունները «շուտով, քաղաքական հանգամանքների ստիպումով, արմա-

¹ Հակոբյան Հ. Գերման դավը Կովկասի մեջ։ Համագերմանականությունը և Վրաստանը, Թ, 1917, էջ 88։

² Հանս Վանգենհայմ (1859-1915) - գերմանացի դիվանագետ, 1912-1915 թթ.՝ Գերմանիայի դեսպանը Օսմանյան կայսրությունում - Ա.Կ.։

³ Гевонс Г.А. Самая черная страница новейшей истории, последние извинения в Армени, П-д, 1916, с. 27.

տապես փոխեցին իրենց ընթացքը: Ուժասպառ մեծ պատերազմից և հանկարծ իրենց մեջ գտնելով մի օջախ, դաշնակիցները շիամաձայնվեցին արյան կամ ոսկու նոր գողողություններ անել: Նրանք մերժեցին մախազահ Վիլսոնի վճիռը, որով ընդարձակ հողեր էին տրվում Հայաստանին, և քախտի քմահաճույթին բողեցին Հայաստանը: Ազգերի լիգան իր հերթին մերժեց իր գլխին ընդունել նորածին պետությունը¹: Դիշտ է ասված, լրեցին: Դիշտ է ասված, որ Ազգերի լիգան մույնպես մերժեց Հայաստանի Հանրապետության տնօրեններին մուտքի իրավունք շնորհել:

1920 թ. հունվարի 5-ին ժովակալ Բրիտտոլը ԱՄՆ-ի պետական քարտուղարի տեղակալ, Փարիզի խաղաղության կոնֆերանսում ամերիկյան պատվիրակության ղեկավար Ֆրանկ-Ֆոլկլին ուղղած նամակում գրում էր. «Ես ուզում եմ հուսալ, որ ոչ մի դեպքում մեր կառավարությունը չի ճանաչի Հայաստանը, մույնիսկ որպես դե ֆակտո կառավարություն»:

Իսկ «Լոզանի կոնֆերանսը մեծ խաչ մը դրավ ոչ թե հայկական դատին վրա, այլ այն միամիտ ու ցնդամիտ ազգային մուրացկան քաղաքականության վրա, որուն սկիզբը դրվեցավ Բեռլինի վեհաժողովի ատեն և որ իր այնքան տխուր ու, հուսով եմք, վերջնական վախճանին հանգեցավ Լոզանի մեջ»: Հետագայում այսպես էին խոստովանում դաշնակ «տեսաբանները»²:

Այս ամենից հետո, ինչ խոսք, որ Լլոյդ Ջորջի համար հեշտ էր խոստովանել, թե «Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-1897, 1909 թթ. սոսկալի ջարդերին և 1915 թ. ամենասարսափելի կոտորածին»³:

* * *

Արևելյան Հայաստանի միացումից հետո Ռուսաստանն իր ընթացքով տարավ հայ ժողովրդի զավակներին, նրանց հաղորդակից դարձրեց սոցիալական ու քաղաքական գոռ մարտերին՝ համուն աշխատավոր մարդու ազատության ու առաջադիմության, անկախ նրա ազգային պատկանելությունից: Ռուսաստանը մի դարբնոց էր հայ մարդկանց համար, որտեղ նրանց կրում էին հեղափոխական ոգով, ազատության ու լույսի գաղափարներին անմնացորդ ծառայելու ոգով: Իսկ քանի, քանի սերունդներ Ռուսաստանում կրթվեցին ու թրծվեցին Գեբրեյնի ու Չերնիշևսկու, Պլեխանովի⁴ ու Լենինի գաղափարներով: Ռուս մարդովորականների և առաջին մարքսիստական խմբերի գործունեությանն ակտիվ մասնակցում էին հայ ժողովրդի զավակները: Լալա-

¹ «ՎԵՍ», ԺԱ, Փ, էջ 75:

² «Հայրենիք» (Բոստոն), 1923, N 5, մարտ, էջ 3:

³ Ллойд Джордж. Правда о мирных договорах, т. 2, М, 1957, с. 390.

⁴ Գեորգի Պլեխանով (1856-1918), ռուս փիլիսոփա, մարքսիզմի տեսաբան, ռուս և միջազգային սոցիալիստական շարժման գործիչ - Ա.Կ.:

յանցը¹, Կնունյանցը, Ջուրաբյանը, Շահումյանը, Սպանդարյանը, Կամոն², Մյասնիկյանը և շատ ուրիշներ մաս կազմեցին Վ.Լենինի գլխավորած հեղափոխական առաջին ջոկատների, կռվի գնացին ընդդեմ միապետության, խավարի ու բռնության, որովհետև ազատության ասպետ Միքայել Նաբանդյանը նրանց ավանդել էր. «Ռուսիո ազատությունը, ընդհանուր մարդկության ազատության վերաբերմամբ, հեն խորհուրդ ունի»:

Այո՛, ռուսական հեղափոխությունը փրկություն էր բերում բազմաչարչար հայ ժողովրդին: Միայն ռուս պրոլետարիատի հաղթանակը կարող էր նրան տալ հայրենիք, ազատություն, ապրելու, գոյատևելու, վերածնվելու հնարավորություն և իրավունք: Պատմությունը հաստատեց Ֆ.Էնգելսի այն կանխատեսումը, որ հայ ժողովրդի փրկությունն աղերսվում էր ռուսական հեղափոխության հաղթանակի, ցարիզմի խորտակման հետ: Բուրժուական դիվանագիտության խաղախախտողը հայ ժողովրդի քաղաքական պայքարի բոլոր փուլերում ոչ մի դրական բան չտվեցին մեր հայրենիքին: «Մեր ապագան, - ասում էր Հովհ.Թումանյանը, - ...կապված է Ռուսաստանի հետ, իսկ Ռուսաստանն ինչքան ազատ - էնքան լավ, թե մեզ համար, թե աշխարհի»:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը նոր դարագլուխ քայնք մեր երկրի ժողովուրդների համար: Վ.Լենինի գլխավորած կոմունիստների փառապանծ կուսակցությունը կյանքի կոչեց նոր սկզբունքներ, նոր գաղափարներ, ձեռնամուխ եղավ հին աշխարհը վերակառուցելու հիրավի պատմական առաքելությանը:

Առաջինը Մովսեսական Ռուսաստանի կառավարությունն էր, որ ամբողջապես ճանաչեց Արևմտյան Հայաստանի ազատ ինքնորոշվելու, անկախություն ստանալու իրավունքը: «Թուրքահայաստանի մասին» դեկրետը միջազգային դիվանագիտության պրակտիկայում մինչ Հայաստանի մասին ընդունված բոլոր որոշումներից տարբերվում էր իր նոր սկզբունքային մտտեցումներով: Սակայն երկրամասում ստեղծված իրադրությունը և Անտանտի ու թուրքական կառավարողների հակահայկական դիրքորոշումը խանգարեցին այդ դեկրետի իրագործմանը:

«Ռուսական զորքերի անակնկալ ետ քաշվելը, - գրում էր Ստ.Շահումյանը 1917-ի դեկտեմբերի 20-ին, - չափազանց ծանր դրություն է ստեղծում Թուրքահայաստանում: Մենք արդեն գիտենք այս անիծյալ պատերազմի ժա-

¹ Իսահակ Լալայանց (1870-1933), քաղաքական գործիչ, ՌՍԴԲԿ անդամ, Ժնևում ղեկավարել է «Իսկրա» թերթի տպագրությունը, 1922-1929 թթ. աշխատել է ՌԽՖՍՀ լուսժողկոմում - Ա.Կ.:

² Կամո (Միսոն Տեր-Պետրոսյան) (1882-1922), հեղափոխական գործիչ, ՌՍԴԲԿ անդամ, 1905-1907 թթ. կազմակերպել է ցարական զանձարանից մի շարք բռնագրավումներ կուսակցության համար, խորհրդային իշխանության հաստատումից հետո աշխատել է առևտրի բնագավառում և Կրաստանի ֆինանսների ժողկոմատում - Ա.Կ.:

մանակ հայերի կրած հարյուր հազարավոր զոհերի մասին»¹: Նա կոչ էր անում գործի մի մասը պահել ռազմաճակատում, կանխել թուրքական ներխուժումը:

Հիշենք մաև, որ 1918-ի հուլիսի 23-ին Մոսկվայում բացված թուրք ճախ սոցիալիստների կոնֆերանսը, որտեղ գլխավոր դեմքը Մուստաֆա Մուքիսին² էր, դատապարտեց սուլթանական կառավարության արտաքին քաղաքականությունը, արտահայտվեց թուրքական կայսրության տերիտորիայի վրա ապօրոհ բոլոր ժողովուրդների, այդ թվում և հայերի ինքնորոշման օգտին³:

Սակայն թե՛ սուլթանական կառավարությունը, թե՛ հանրապետական Թուրքիան ռոմահարեցին հայ ժողովրդի օրինական իրավունքը, ամեն ինչ լուծեցին ուժի ու բռնության, արյան ու կոտորածի միջոցով: Իսկ Մուքիսին ու նրա համախոհները սուլթավին թույլ էին, մեծ ազդեցություն չունեին իրենց երկրում և զուկեցին թուրքական սև ուժերի ձեռքով:

Օգտվելով անդրկովկասյան հակահեղափոխության հակասովետական դիրքորոշումից, ազգայնական կուսակցությունների դավաճանական վարքագծից, երխոթուրքական արկածախնդիրները պահը հարմար համարեցին Անդրկովկաս ներխուժելու, իրենց պանթուրքիստական ծրագրերը գործի կոչելու համար: Թուրքերն իրենց հետ բերեցին մահ, արյուն, ավերածություն: Չկար Ռուսաստանը, նորից գործի էր դրված յաթաղանը, մոլեգնում էր թուրքական կողուպուտը, «կոչման բարձրության վրա էր» թուրք ասքայրը:

1918-ին Հայաստանում քաոս էր, անարխիա, սով... որովհետև խախտվել էր ավանդական կողմնորոշումը. չկար Ռուսաստանը, սոցիոլիզմը և Թուրքիան, սպառնալով ոչնչացնել մաև ռուսահայերին: Պանթուրքիզմը մտել էր գործնական հունի մեջ, պատրաստ կլանելու իր ավանդական խոչընդոտին՝ հայությանը: Գերմանական կայսրն այդ պահին էնվերին ատում էր. «Դուք միանգամայն ազատ եք յուրովի կարգադրելու հայկական հարցը»⁴:

1918 թ. հունվարի 11-ին գրված մի թուղիկում, որն ուղղված էր կովկասյան ճակատի ռուս զինվորներին, ասված էր. «Ընկեր ռազմիկներ. Հեռանալով ռազմաճակատից և Չերի հետ տանելով զենքը, Դուք մեզ դնում եք անելանելի դրության մեջ...: Մեր ընդհանուր ջանքերով նվաճված ազատությունը կիսավանվի անվերադարձ կերպով օտարերկրյա հարձակման արյան ծովում և սարափների մեջ: Մեր ընդհանուր հայրենիքը՝ Ռուսաստանը, կկորցնի հարստագույն երկրամաս Կովկասը, իսկ ի դեմս հայ ժողովրդի ռուսական հանրապետության հավատարիմ և նվիրված բարեկամին»⁵:

¹ Շահումյան Ստ. ԵԼՇ, հ. 4, Երևան, 1978, էջ 61:

² Մուստաֆա Մուքիսի (1882-1921), Թուրքիայի կոմկուսի հիմնադիրներից և դեկավարներից, սպանվել է Տրապիզոնում մի խումբ թուրք համախոհների հետ - Ա.Կ.:

³ «Известия» (М.), 1918, 15 августа: Бутаев И. Проблемы Турции, Л.-д. 1925, с. 19.

⁴ «Հայրենիք» (Բոստոն), 1919, 29 նոյեմբերի:

⁵ ՀՍՍՀ ՊԿՊԱ (ՀԱԱ), ֆ. 121, ց. 1, գ. 1, ք. 32:

1918-ի ապրիլին սոցիալ-դեմոկրատ Արշ. Ջուրաբյանն ասում էր. «Տաճկաստանի նպատակն է բաժանել մեզ Ռուսաստանից և ենթարկել իրեն: Բայց մենք կարող ենք թողնել Ռուսաստանը, հյուսիսի օրիենտացիան, կարող ենք դադարել մեր աչքերը դեպի հյուսիս հառելուց: Ոչ»: Նա գտնում էր, որ խզումը Ռուսաստանից «մատնում է մեզ մեկուսացման», որ անհնարին է հեռանալ Ռուսաստանից, որի «դեմոկրատիան և քաղաքակրթությունը մի դարից ավելի սնում է տեղական ժողովուրդներին»:

Հայաստանի պառլամենտի ամբիոնից բուշևիկ Արշավիր Մելիքյանը¹ հայտարարում էր, թե հայ ժողովրդի փրկության միակ երաշխիքը Սովետական Ռուսաստանի հետ սերտ կապն է:

1918-ի աշնանը Կ.Պոլսի ցեղասպանների պարագլուխներին դիմող հայկական պատվիրակությունը ոչնչի չհասավ, բացի արհամարհանքից, մվաստացումից... Թախեթը պատվիրակությանն ասում էր. «Մեր մեծ նպատակն է միավորվել Թուրքեստանի և Հնդկաստանի մահմեդական աշխարհի հետ: Եթե Դուք, հայերդ, կփորձեք խանգարել մեր ծրագրի հաջողությանը, ապա մենք կանցնենք ձեզ տրոյերով»²: Իսկ մուսավաթական Խան Խոյսլիկն Ելիզավետպոլի մզկիթում հատուկ աղոթք էր անում թուրքական բանակի կողմից Բաքուն գրավելու առիթով և հայտարարում էր «ամբողջ իսլամի աշխարհի վրա»՝ Կովկաս, Թուրքեստան, Սիբիր, Աֆղանստան և Չինաստան թուրքական իշխանության հաստատման մասին... Թուրքական հովանու տակ պետք է ստեղծվեր պանթուրքական տերությունը՝ Միջերկրականից մինչև Սև ծով ու Անդրկովկաս, Միջին Ասիայի հետ միասին: Իսկ պանթուրքիզմի մի այլ ջատագով՝ Ռասուլ-գադեն, իր նողկալի հողվածներում շարունակ մշում էր Կասպից ծովը թուրքական «ներքին լիճ» դարձնելու մասին³:

1918-1920 թթ. Հայաստանը ծանր օրեր էր ապրում. երկիրը կտրված էր Ռուսաստանից, զրկված նրա հետ ունեցած ավանդական կենսատու կապերից: Սովը, համաճարակը, ավերածությունը համակել էին բոլորին, կյանքի բոլոր ասպարեզները: Հայաստանում տիրող դրությունը պատկերավոր է նկարագրել Սարգիս Կասյանը. «Մի հսկայական մուրճ տխրություն և մոայլություն, տանջանքի ու մրմունջի կմիք է գամել այդ դժբախտ երկրի արյունամերկ ճակատին: Հայաստանում գոյությունը դարձել է անեծք, կյանքը՝ դժոխք»⁴:

Դաշնակցական կառավարությունը վարում էր հակաժողովրդական, հակասովետական քաղաքականություն: Նրա դիվանագիտությունն ու դիվա-

¹ Արշավիր Մելիքյան (1879-1937), հեղափոխական գործիչ, ՌՄԳԲԿ անդամ, հիմնադրել և իրատարակել է «ժոռոպ» (Երևան) շաբաթաթերթը, ղեկավարել է ՀՀ խորհրդարանի անդամ, «Սպարտակ» երիտասարդական կազմակերպության անդամներից, Արմենկոմի անդամ - Ա.Կ.:

² «Вперед» (Баку), 1919, 16 апреля.

³ ՀՄՄՀ ՊԿՊԱ (ՀԱԱ), ֆ. 121, ց. 1, գ. 33, ք. 8-25:

⁴ Ատենյան (Կասյան) Ս. Ռ՛ր է ելքը, 1919, էջ 3:

նագետները Հայաստան երկրին միայն ճախորդության մատնեցին: Մերժելով Սովետական Ռուսաստանի փրկարար կողմնորոշումը՝ հայ դիվանագետները փարվեցին Լոնդոնի, Փարիզի, Վաշինգտոնի իմպերիալիստական կառավարողներին, հավատացին նրանց խոստումներին, երկիրը տարան անկման, կորուստների ու խայտառակ պարտությունների ճանապարհով: 1920 թ. ընթացքում սխալին հետևեց արկածախնդրությունը, դավաճանությանը՝ քալլագյուզությունը: Որոշ իշխանավորներ իրենց անձի փառքը վեր դասեցին ժողովրդի ու ազգի կենսական շահերից, նորից Հայաստանը թողեցին առանց Ռուսաստանի հովանավորության, կրելով թուրքական ռազմաշունչ նացիոնալիստների մահաբեր հարվածները:

1920-ի աշնանը Թուրքիան մեր երկրից խլեց Կարսի մարզը, Մուրմալուն ու Իգդիրը...

* * *

Պատմությունը մեզ ավանդում է, որ հայ ժողովրդի ապահով գոյության ու առաջադիմության երաշխիքը Ռուսաստանի, ռուս ժողովրդի, Սովետական Միության ժողովուրդների եղբայրական ընտանիքի հետ կուտ դաշինքն է: Սովետական իշխանության վաթսուն տարիների ընթացքում մեր ժողովուրդն իսկապես վերածնվեց, առնականացավ մտքով ու հոգով, ունեցավ այնպիսի նվաճումներ, որոնք հնարավոր էր ձեռք բերել միայն սոցիալիզմի շնորհիվ, լեւնինյան ազգային քաղաքականության հաղթանակի շնորհիվ: Մեր պարտքն է աչքի լույսի պես պահպանել հավատարմությունը սովետական ժողովուրդների բարեկամությանը, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի գաղափարներին, սերունդներին դաստիարակել հայ ժողովրդի քաղաքական ճակատագրում մեծ Ռուսիայի, ռուս ժողովրդի, Լեւնինի ու նրա փառապանծ կուսակցության գործի նկատմամբ հարգանքի ու նվիրվածության ոգով:

ԵՆՈՒՅԹ ԲՈՍՏՈՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՈՋԵՎ¹

Բարև Չեզ, սիրելի՛ հայրենակիցներ, հայրեր, եղբայրներ, քույրեր:

Ողջույններ Չեզ Հայաստանից, Սովետական Հայաստանից, Երևանից, քե՛ն ես երկուսուկես ամիս է, շուտով երեք ամիս, Երևանից դուրս եմ եկել և ինչ-պես ես աաց մեր պատվարժան նախագահը, հանդիսանում եմ Սովետական Միության պատվիրակության անդամ Նյու Յորքում, Միավորված ազգերի կազմակերպության այս տարվա՝ 33-րդ նստաշրջանում: Սովետական Միության պատվիրակության անդամ եմ, մասնակցել եմ նիստերին, ունեցել եմ մի քանի ելույթներ: Այնքան գովեց ինձ հարգարժան նախագահը՝ Ալիսա Օտյանը, որ ես ամաչեցի, մի փոքր հուզվեցի, և եթե հուզմունքս չխոյանա, ուրեմն լան պիտի խոսեմ Չեզ համար: Ողջույններ Չեզ բոլորիդ: Շատ մեծ պատիվ է ինձ համար և հիանալի առիթ հանդիպելու Չեզ հետ, որովհետև պատմությունից ինձ հայտնի է Բոստոնի հայ գաղութի դերը, նշանակությունը ամերիկահայության կյանքում:

Սովետական Հայաստանի 58-րդ տարելիցն ենք մենք նշում: Հեքթական տոնակատարություն, որը կարծես թե դարձել է սովորական բան, բայց, ըստ իս, և կարծում եմ, Չեր կարծիքով նույնպես, չի կորցրել իր իմաստն ու նշանակությունը և տարեցտարի ավելի նոր բովանդակություն և իմաստ է ստանում:

Ինչո՞ւ: Որովհետև քանի գնում է, Հայաստանի կամ Սովետական Հայաստանի պետականության գաղափարը, այդ պետականությունը հարգելու, սիրելու գաղափարը, նշանակությունը շատ ավելի իմաստալից է դառնում, շատ ավելի կողմնակիցներ է ձեռք բերում, շատ ավելի անհրաժեշտ է դառնում այդ պետականությունը սիրելու հանգամանքը:

Ինչո՞ւ: Որովհետև, ինչպես նշեց նաև նախորդ հոետորը, սփյուռքահայության տարբեր օջախներում վերջին տասնամյակներում տեղի ունեցած անցուդարձը գալիս է հաստատելու դարերի ընթացքում հաստատված այն իրողությունը, այն ճշմարտությունը, որը ուրիշ ժողովուրդներ վաղուց են ըմբռնել, որ յուրաքանչյուր ազգ, յուրաքանչյուր ժողովուրդ ուժեղ է, երբ գտնվում է իր հողի վրա, իր սեփական հայրենիքում: Չեր դժբախտությունը չէ, ոչ էլ մեր դժբախտությունն է, որ դուք այստեղ եք, այդ դարերի դժբախտությունն է, որը փաթաթվել է մեր ժողովրդի վզին, և շատ ու շատ հայեր գտնվում են տարբեր ժողովուրդների պատկանող հողի վրա, այլ երկրներում, աշխարհի տարբեր ծագերում: Այդ փաստը իր հետ բերում է այնպիսի երևույթներ, այնպիսի գծեր է առաջացնում, որոնք, ինչ խոսք, որ խաթարում են մեր ժողովրդի դիմագիծը, նրա ազգային քաղաքական կերպարանքը: Չէ՞ որ վերջին ժամանակներում այնպիսի մի շեն գաղութ, ինչպիսին Լիբանանն է, դրվեց նորից վտանգի տակ: Միայն այն պատճառով, որ նա գտնվում է մայր Հայաստանից հեռու: Շեն

¹ ԶԿԱԱ, Ջոն Կիրակոսյանի ելույթը Բոստոնի հայ համայնքի առջև, 1978, ձայնագրություն:

գաղութ, որը ունի հայկական գեղեցիկ ավանդույթներ, ավանդույթներ, որոնք ստեղծվեցին վերջին 50-60 տարիների ընթացքում այն բանից հետո, երբ արևմտահայության սովոր գանգվածներ շարդվեցին, տեղահանվեցին իրենց հայրենի շենքերից, բշխեցին Դեր-Չորի և Միջագետքի անապատները, ոչնչացվեցին այդ անապատներում ծարավից, քաղցից, և մազապուրծ եղած զավակներ, առանձին մարդիկ նորից ոտքի ելան, դրսևորեցին հայ ժողովրդին հատուկ աշխատասիրություն, շինելու, կառուցելու ունակություններ և կարողացան հաստատել աշխարհի առջև, որ նրանք կարող են ապրել ոչ մյուսներից ավելի վատ, որ նրանք կարող են լինել լավ քաղաքացիներ այս հողագնդի վրա, եթե նրանց համար ստեղծվում են խաղաղ պայմաններ:

Բայց, այնուամենայնիվ, դա հայրենիք չէ, և այսօր հայերի մեղքը չէ, որ Լիբանանում առճակատվող հսկայական ուժերի հարվածները վնաս են բերում մաս հայերին: Եվ այստեղ նշվեց, որ սովետական կառավարությունը մեծ օգնություն է առանձնացրել, որպեսզի հայ գաղութը, Լիբանանը, կարողանա ինչ-որ չափով բեթև շունչ առնել և կարողանա գոյատևել, պաշտպանել իր իրավունքները, իր շենքը, որպեսզի այդ գաղութը քայքայման չենթարկվի: Շատ ու շատ այդպիսի ավերածություններ ենք մենք տեսել, և այդ բանը եղել է ոչ թե մի քանի տարվա ընթացքում, տասնյակ տարիների ընթացքում, այլ դարերի ընթացքում: Ապա վերհիշեք պատմությունը, հինգ հարյուր տարվա, վեց հարյուր տարվա, ութ հարյուր տարվա: Սփռված հսկայական տարածքների վրա հայ ժողովուրդը՝ մի մասը Իզմիրում, մի մասը Կոստանդնուպոլսում, մյուս մասը Բալկաններում, մյուս մասը Կիլիկիայի տարբեր վայրերում, արաբական այլ քաղաքներում: Պարսկահայեր, թուրքահայեր, ռուսահայեր: Հիշենք Լեհաստանի կամ Գալիցիայի հայերին, Ուկրաինայի հայերին: Իսկապես ո՞ր են նրանք: Թողել են քարե հուշարձաններ, բողիկ են մեր անջնջելի տառերը իրենց այդ շիրիմների վրա և իրենք անեացել են:

Ինչո՞ւ, որովհետև գտնվել են հեռավոր երկրներում, իրենց հայրենիքից դուրս: Այս ցավը ես վերստին արժաբերելու, արյուն հանելու մտադրություն չունեմ: Ես հիշատակեցի այս բաները, որպեսզի մեկ անգամ ևս ընդգծած լինեմ սեփական հայրենիքը սիրելու անհրաժեշտությունը: Նմանվելու շատ ու շատ այլ ժողովուրդների, որոնք շատ ամուր են բռնում հայրենիքի օձիքը և փաթափվում են նրան, ջերմացնում այդ հայրենիքը, և հայրենիքն էլ ջերմացնում է նրանց: Իհարկե, մենք ունեցել ենք երկարամյա պայքար, ունեցել ենք կռիվ, ունեցել ենք ազգային-ազատագրական մարտումներ, այդ մարտումների ճանապարհին տվել ենք հազարավոր ու հազարավոր զոհեր: Փորձել են հայերը ազատագրվելու բոլոր ուղիները, փորձել են բոլոր մեթոդներն ու միջոցները, երբեմն այդ մեթոդներն ու միջոցները ընտրելիս ավելի շատ միայնաց հետ են կռվել, ավելի շատ իրենց կոկորդն են կրծել, քան կարողացել են հավաքական ուժ ստեղծել՝ դիմագրավելու համար վերին աստիճանի սարսափելի բշխմուն, որը կարծես հայաճնվել էր Հայաստանի հարևանությամբ՝ ոչնչացնելու կամ չբացնելու նրան երկրագնդի երեսից: Բայց բոլոր այդ ուղիները փորձե-

լուց հետո ստացվեց այնպես, որ մենք տուժեցինք, որ ամեն ինչ վերջացավ 1915 թվականին և ընդհանրապես Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ մի հսկայական զանգվածի կորստով:

Ապա հիշեցեք 19-րդ դարի սկիզբը: Հայաստանը տակավին բաժանված էր երկու հզոր արևելյան բռնակալությունների միջև: Կար Պարսկահայաստան՝ ենթակա պարսից շահերի դինաստիաներին: Այս դինաստիաները հայտնի էին նրանով, մանավանդ 18-րդ դարում, որ միմյանց հակառակորդների, խեղճ ու կրակ աշխատավոր ժողովրդի մարդկանց զանգեթից բուրգեր էին կառուցում, սարեր, որպեսզի ցույց տային յուրաքանչյուրի հզորությունը: Ով ինչքան քարձր զանգեթից բուրգեր կստեղծեր: Այսպիսին է եղել մեզ համար 13-րդ դարը, 14-րդ դարը, 15-ը, 16-ը, 17-ը: Եվ հետաքրքրականն այն է, որ պարսկա-բուրքական պատերազմները, ինչպես կանոն, ընթանում էին Հայաստանի տարածքների վրա, շենքերը ոչնչանում էին ամենուրեք, հայերին քաշքշում էին, մեկ տանում էին Պարսկաստան, Սպահան, ստեղծում Նոր Ջուղան: Ալավերդի խան կար՝ պարսից շահի՝ Աբբասի զորքերի հրամանատարը, որը իր ձեռքով կառուցեց Ալավերդի կամուրջը, Նոր Ջուղան կապող Սպահանի հետ, որպեսզի հայությունը կապվի Սպահանի հետ: Արևեստավորությունը տարան: Հետևաբար անհացավ երկիրը: Բազմաթիվ ճանապարհորդներ գրել են, թե 17-րդ դարում հայերին հաջողվում էր երկար ժամանակով ոտքի կանգնել, ստեղծել իրենց գյուղերը, շենքերը, նորից հողագործությամբ զբաղվել, հարստություն կուտակել, շենքեր, եկեղեցիներ կառուցել, հետո նորից գալիս էին քանդելու, թափելու, ջարդելու: Եվ այսպես շարունակ: 19-րդ դարի սկզբներին կարծես թե ռեալ բան դարձավ, շոշափելի դարձավ հյուսիսից օգնություն ստանալու հանգամանքը: Այդ ցանկությունը ստեղծվել էր դեռևս վաղուց, տարիներ փորձեր էին արվել, սակայն անհաջողությամբ էր վերջացել ամեն մի փորձ, թե՛ Պետրոս 1-ի օրոք, թե՛ Եկատերինա II-րդ կայսրուհու ժամանակ, երբ բավականին ռեալ հիմքերի վրա էր դրված հայոց պետությունը վերստեղծելու, վերականգնելու հնարավորությունը:

Եվ ռուս-պարսկական պատերազմի ժամանակ հաջողվեց մի փոքր տարածք, ըստ էության այսօրվա տարածքը, այսօրվա Հայաստանի տեղիտողիան, ինչ-ինչ տարբերություններով, ես մանրամասների մեջ չեմ ուզում մտնել, այդ մասը անցավ Ռուսաստանի հովանու տակ: Այն ժամանակ մենք այդ տարածքի վրա ունեինք սկզբից 100 հազար բնակչություն, հետո 150, 200 հազար և 20-րդ դարասկզբից այս տարածքի վրա հետո կար մեկ միլիոն 100 հազար մարդ: Այն դեպքում, երբ թուրքահայաստանում սկզբում, իհարկե միշտ վիճակագրություն, մարդահամար երբեք չի եղել Օսմանյան կայսրությունում, և եթե ճշմարիտը չի ասվել, թե ինչքան հայ է եղել: Հայերը թաքցնում էին իրենց թիվը, պակասեցնում էին, որպեսզի հարկ չտային, որովհետև քրիստոնյա հայերին բանակ չէին տանում, հասկանալի է՞, իսկ թուրքական պետականությունն էլ շահագրգռված էր, մեկ կողմից, հարկ շատ վերցնելու հա-

մար, երբ որ հարկ էին հավարում, շատ հայեր ունենալ, շատ քրիստոնյաներ, որպեսզի հարկ շատ հավաքեին, իսկ քաղաքական առումով Եվրոպային ներկայացնելու դեպքում ցույց տալ, թե ոչ մի հայ չկա, շատ քիչ հայ կա, փոքր տոկոս են նրանք այդ հողերի վրա: Ովքե՞ր են նրանք: Այնուամենայնիվ, որոշ տվյալներ ասում են, որ 18-րդ դարի վերջին հինգ միլիոն հայ կար, 19-րդ դարի սկզբին երեք միլիոն հայ կար, ինչևիցե, 19-րդ դարի ամբողջ ընթացքում և 20-րդ դարի սկզբին ամենապակասը երկուսուկես միլիոն հայություն կար Օսմանյան կայսրության մեջ, որից կեսը կամ մի փոքր պակաս գտնվում էին բուն Արևմտյան Հայաստանի տարածքի վրա: Շիշտ է, հայության ամենաբացասական բանն էր, որ ցրված էին: Ահավասիկ իմ հարևանուհի նախագահը գիրք է գրել Անկարայի հայության մասին: Ի՞նչ գործ ունեին հայերը Անկարայում, ի՞նչ գործ ունեին: Բայց նրանք կամովին այնտեղ չէին հայտնվել: Նրանք գնացել էին, փախել էին սելջուկներից, թուրքերից, որոնք արևելքից անընդհատ հայրձակումներ էին գործում՝ նոր տարածություններ գրավելու համար: Հայության մի մասը Ադրիանապոլսում էր, մի մասը, ասացի, Իզմիրում, Բուրսայում: Հազար ու մի տեղ: Շիշտ է, բուն Հայաստանում նույնպես բավականին հայություն կար, քայց նրա ուժերը ջլատված էին, նրա հողին կտորված էր, նրա հողին կտորված էր այն բանով, որ նա հարմարվել էր սեփական պետականությունը չտեսնելու, չհարգելու հանգամանքին, և որիչին ծառայելու հոգեբանությունը խորը արմատներ էր ձգել դարեր շարունակ, սերնդից սերունդ, ժառանգից ժառանգ: Մի բան, որ շարունակվում է շատ-շատերի մոտ մինչև օրս: Այս հանգամանքը կատարել է իր ամենաբացասական դերը հայ ժողովրդի համար: Ինչևիցե, չհեռանամ իմ հիմնական մտքից, Թուրքիայում, կամ Օսմանյան կայսրության իշխանության նեղքո կար երկուս ու կես միլիոն հայություն:

Ահավասիկ Ռուսահայաստանը, որն անցավ Ռուսաստանի հսկողության տակ, մաս կազմեց այդ պետության, այնտեղ այսօր հայությունը բուն Հայաստանում երկուս ու կես միլիոն է, Անդրկովկասի հայությունը երե հաշվներ և մեկ միլիոն, երեք ու կես միլիոն, մեկ միլիոն էլ ունենք Սովետական Միության մյուս տարբեր մասերում, չորս միլիոնից ավելի մենք հայություն ունենք Սովետական Միությունում: Այսօր այդ հարևան պետության մեջ, որի ամունը ես տվեցի, մենք, ըստ էության, հայություն չունենք և մատների վրա կարելի է հաշվել՝ մի քանի տասնյակ հազար մարդ է: Սա ճշմարտություն է, որը պետք է իմանաք: Սա պատմության դասն է, որը մենք պետք է լավ իմանանք: Եվ այդ կողմնորոշմանը միշտ հավատանք, և այդ կողմնորոշումը համարենք այն փրկարար ուղին, որը, ըստ էության, հայությանը փրկության ավ դուրս բերեց և նրա համար ստեղծեց ապրելու, գոյատևելու հնարավորություններ: Ապա վերհիշենք 19-րդ դարի մեր անցած ուղին: Հայությունը Ռուսաստանի միջոցով հարեց ժամանակի գիտությանը, մշակույթին, քաղաքական հոսանքներին, ասպարեզ իջավ՝ պայքարելու իր անկախության և ազատության համար:

Նույնը կատարվում էր Օսմանյան կայսրությունում: Սակայն Օսմանյան կայսրությունում հայ շարժումը հանդիպեց թուրքական պետության յարգազան, պիճներին և զոհվեց, ըստ էության, հայ պայքարի ճանապարհին: Հայկական հարցը հատկապես սրվեց սրանից հայրուր տարի առաջ: Երբ ռուսական բանակը ազատագրեց Բալկանները, ստեղծվեցին սլավոնական պետություններ՝ Բուլղարիան, ամրապնդվեց Սերբիայի անկախությունը, մյուս երկրների անկախությունը: Հայերը նույնպես ասացին, թե մենք էլ ժողովուրդ ենք, ազգ ենք, մենք էլ իրավունք ունենք ինքնուրույն լինելու, մենք էլ դիմենք, որպեսզի ստանանք այնպիսի իրավունքներ ինքնավարության, ինչպիսին վաշելեցին սլավոնները Բալկաններում: Եվ հետաքրքրական այն է, որ հայերին շատ մոտ էր թվում այն ժամանակ այդ գաղափարի իրականացումը, մոտ էր թվում, որովհետև ռեալ ուժ կար կանգնած Թուրքիայի դեմ. դա ռուսական քանակն է: Հենց որ արևմտանվորպական դիվանագիտությանը հաջողվեց ստեղծել դավադրական մթնոլորտ այդ հաղթանակի շուրջ, որին զոհվել էր 200 հազար ռուս զինվոր, այն ժամանակ էլ սկսեցին կատարվել ամենավատ իրողությունները, որոնք հետագայում մեծ վնաս հասցրին մեզ: Նախ՝ Անգլիան պահանջեց, որ Տրապիզոն-Բայազետ-Թավրիզ առևտրական ավանդական գիծը չմնա Ռուսաստանի տիրապետության ներքո: Դա նշանակում էր, որ Ալաշկերտի դաշտը, խիտ բնակեցված հայությամբ, պետք է անցներ նորից Թուրքիայի տիրապետությանը: Դա նշանակում էր, որ հետագայում հենց այդ տարածքների վրա հայ ժողովուրդը պետք է մորթվեր, թեև իր ձեռքում ուներ Բեռլինի կոնգրեսի երաշխիքը կամ զարանտիան: Չէ՞ որ մեր ժողովուրդը կործանվեց հենց այն վայրերում, որոնք կարծես թե պաշտպանված էին միջազգային իրավունքով, միջազգային դիվանագիտության փաստաթղթերով: Հիշում եք չէ՞, չմտնեմ չէ՞ այդ մանրամասների մեջ: Հասկանալի՞ եմ խոսում ես:

Ասեիքս այն է, որ հեռում մայելը, հեռվից ակնկալություն ստանալը, շատ ու շատ ռոմանտիկ ծրագրեր ունենալը միշտ չէ, որ օգտակար է լինում, երբ որ մի կողմ են բողոքում իրականը, մյուսականը: Այսօր իրականը այն է, որ մենք ունենք Մովսեսյան Հայաստան պետությունը: Մենք դա ստեղծել ենք վերջին 60 տարում: Դրսում գտնվողները իմացել են գրականությունից, թերթերից, լրագրերից և ճիշտ պատկերացում միշտ չէ, որ ունենում են, թե ինչ հող էր սա, ինչ երկիր էր և ինչ է դարձել: Այսօր գրոսաշրջիկները մտնում են Երևան, ծանոթանում նրա տեսարժան վայրերին, տեսնում նրա շինությունները, նրա քաղաքները, նրա համալսարանները, դպրոցները, նրանց թվում է, թե այդպիսին էլ եղել է Հայաստանը: Եվ գիտե՞ք ինչ: Դա պատահական չէ: Ես էլ, որ մտել եմ Բոստոն, ինձ թվում է, թե այս երկնաքեր շենքերը միշտ են եղել, որովհետև ես նախկին Բոստոնը չեմ տեսել: Այդպես էլ խարոսիկ է Հայաստան եկողների համար: Ես էլ դե մեծ չեմ տարիքով, քայց պատերազմից առաջ եղած Երևանը, Հայաստանը, նրա մարդկանց լավ հիշում եմ: Իսկ գրականությունից և մեր մեծերի պատմածներից էլ լավ գիտեմ, թե ինչ է եղել քսանական թվականների սկզբին: Ջարդված, փշրված մի հողակտոր, որի վրա

հավարված էին դրսից եկած արևմտահայության բեկորները, նրանց զավակները, բոլորը հիվանդ, փորեբը ուսած խոտ ուտելուց, բոլորը տրախտնա, հիվանդ աչքերով: Հիշո՞ւմ եք, ժամանակին Ռոդ Ալլենդ Չեզ չէին թողնում կամ Չեր ծնողներին, ստուգում էին աչքերը, եթե տրախտնա էր, որովհետև Թուրքիան այսօր էլ ունի մեկ ու կես միլիոն տրախտնաով հիվանդ: Հիվանդներ, մալախա, առաջին հերթին հատուկ էր Հայաստանին, դեղնած մարդիկ, դեղնած երեխաներ: Հայրուր հազարավոր որբեր, անտուն, անտեր: Մեր իշխանությունը սկսել էր իր առաջին քայլերը նրանից, որ փրկել է այդ հարյուր հազարավոր երեխաների կյանքը: Փրկել է ճիզերով, փրկել է շատ մեծ դժվարություններով: Դա հեշտ չի եղել: Դա հրաշքով չի կատարվել: Մեզ մոտ այն բաները չեն կատարվում հանգանակությամբ, մեկ-մեկ ուրբի հավաքելով, ինճգ-ինճգ ուրբի: Ոչ: Այդ գործը մեզ մոտ դրված է պետական ընդհանուր հիմքերի վրա: Մենք հուշարձաններն էլ ենք կառուցում պետականորեն և որոշում ենք, թե որ մարդու ինչատակը հարգենք, որի՞նը չհարգենք: Դպրոցներն էլ են կառուցվում պետական միջոցներով, և որոշում ենք, թե այս տարի ինչուն դպրոց պետք է կառուցենք, թե վաթսուն դպրոց պետք է կառուցենք: Հանգանակություն չկա, ուզում եմ ասել, որ հասարակությունը քսանական թվականների սկզբից ամեն ինչ արել է կազմակերպված, մոժավանցից, մեռնող այդ վիճակից դուրս բերելու համար մեր ժողովրդին: Այլ, այլ բարձր ոռոմանտիկ բաների մասին մտածելը մի կողմ են թողնվել, որովհետև շատ ու շատ քայլեր էլ մեր ժողովրդի ժամանակի, այսպես ասած, քաղաքական առաջնորդությանը, քաղաքական ղեկավարությանը հավակնած մարդկանց սխալների հետևանքով ենք մենք ուռնեքս քարին խփել: Մենք էլ ենք շատ սխալներ արել: Գիտեք, իհարկե, սխալ է եղել, երբ սխալը վերագրվել է միայն մեզ, այսպիսի սխալներ էլ են արվել, ճիշտ եմ ասո՞ւմ ես: Չէ՞:

Բայց միաժամանակ ճիշտ չի փնի տեսնել, որ մենք ունեցել ենք մեր դեմ հզոր ուժեր, բայց մեր չափով ոտքը չենք գցել, քարին ոտքը չխփելու համար պետք է քարի կողքից անցնել իմանալ, փուլ եկող պատի տակ պետք չէ կանգնել: Մենք կանգնեցինք այդ փուլ եկող հսկայական կայսրության պատերի տակ, կարծես թե գիտակցաբար էլ գնացինք այդ պատը իրեցիցը, կյանք, որ անպայման շուտ տայինք մեզ վրա: Տարբեր մոտեցումներ կան մեր քաղաքական պատմության հարցերին: Այսօր էլ կան, Չեր հոգեբանությունը շատ է տարբերվում Հայաստանի մարդկանց հոգեբանությունից: Չեր մեջ էլ կան քաղաքական տարբեր հայացքներ ունեցող մարդիկ: Բայց այդ քաղաքական համոզմունքները չեն ստեղծվել նաև այս վերջին հիսուն կամ վաթսուն տարում: Դա միայն պայմանավորված չէ գաղափարախոսությամբ: Թեև մենք համոզված ենք, որ մեր գաղափարախոսությունը ամենահայտնի է հայ ժողովրդի համար, մենք համոզված ենք նրանում, որ լավագույն պայմանները մենք ենք ստեղծել, բայց ես ուզում եմ Չեզ հիշեցնել, որ հայերի մոտ տարբեր մոտեցումները ստեղծվել են ոչ այդ գաղափարախոսության տարբերությունների հողի վրա: Դարեր շարունակ իզմիրցին չի մտածել այնպես, ինչպես

երգրումցին է մտածել, իզմիրցին եթե հաջող առևտուր է արել, նրա համար արդեն ամեն ինչ է եղել, նա երբեք չի մտածել, գուցե խոսքով մտածել է, ինչ-որ մի տեղ էլ ներվը շարժվել է, որ Հայաստանում մարդ սպանեցին: Բայց նա կաշվի վրա չի զգացել, հասկանալի է: Ես ոչ թե սա ասում եմ դատապարտելու համար, թե ինչու է եղել Իզմիրյուն, կամ մյուսները ինչու՞ են եղել Կոստանդնուպոլսում: Ո՛չ: Այդպիսին է եղել ճակատագիրը, նրանք եղել են այնտեղ: Բայց այն պայմանների համապատասխան էլ փոխվել է իրենց հոգեբանությունը: Ես կամ ապրում եմ, Բոսֆորի ափին սուրճս խմում եմ, մառաններ էլ ունեմ, զինի էլ կա, կանանց թիվն էլ չի պակասում, բայց դե ի՞նչ արած, ես պոլսեցի եմ: Նորից եմ ասում, ճիշտ հասկացեք ինձ, ես չեմ դատապարտում, ես արձանագրում եմ իրողությունը, թե ինչպես էր բաժանվում ժողովրդի իղեղոգիան, քաղաքականության գաղափարը, խաթարվում էր, փշրվում էր դարերի ընթացքում, ամեն մի հայ Օսմանյան կայսրության մեջ, սա ճշմարտություն է, գոհ էր լինում, որ այդ պետության մեջ մի պաշտոն էր ունենում կամ սուլթանին ինչ-որ մի լավություն էր անում, ստրկամիտ հոգեբանություն, ստեղծված դարերի ընթացքում, այժմ էլ գոյություն է, թե այսինչ մարդը թուրքական կառավարության անդամ է եղել: Հետո: Կարող ենք հիշել կամ պարծենա՞լ դրանով: Պարծեցեք նրանով, որ ունեք պետականություն: Եսու-շատերը կարող է չեն հավանում մեր պետականությունը, բայց ուրիշ ազգեր երբ որ ունեն պետականություն, նրանք գուրգուրում են իրենց պետականությունը: Քար չեն նետում հեռվից: Ճիշտ չէ դա: Դատապարտելի է, հաճախ միայն ուցեք մեզ հատուկ, բայց նո ուրիշներին:

Ես շատ հեռուները գնացի, մի քիչ մոտենամ: Քսանական թվականներին մեր ժողովուրդը, մեր հայրերը, մայրերը, պապերը, տատերը իրենց քրտինքով, իրենց բազուկներով քանդեցին այդ ապառաժները, ճղրտեցին սուրբերի փորերը, ջրանցքներ հանեցին՝ հողազուրկ, ապառաժոտ դաշտերը ոռոգելու, խաղողի այգիները ընդարձակելու և, ընդհանրապես, երկրի մեծան դարձնելու այդ հողակտորը: Մենք մեծ թոխչք չենք կատարել, 17 անգամ է ավելացել գյուղատնտեսական մթերքի արտադրությունը: 17 անգամ, շատ չէ: Քիչ է մույնիսկ: Բայց այդքան է հողը մեր: Ավելի շատ միջոցներ է հարկավոր դնել, պետք է մեկ միլիոն ռուբլի դնես, մի տասը հեկտար հող վերցնես քնուքնուկից: Մի մասը աղակալած հողեր են, պիտի աղից ազատես, մի մասը պիտի քարից ազատես, պիտի հարյուր հազարավոր տոննայով մավթ վառես, բենզին վառես, որպեսզի տրակտորների միջոցով քարերը հանես, որպեսզի այդտեղ քան ցանես: Հասկանալի է՞: Մենք այդ փողերը չենք ունեցել և այսօր էլ չունենք: Այս երկրի վրա ստեղծվեց նոր քաղաքակրթություն: Նորից դառնամ հիշատակածս խնդրին: Երբ որ կապիտալիստական հարաբերությունները զարգացան տարբեր երկրներում, հայերը, լիներվով առաջին, այսպես ասած, քաղաքացիներ, քաղաքի բնակիչներ են չէ՞ եղել հայերը, որովհետև կորցնելով իրավունքը հողի վրա, սելջուկների, թուրքերի ձեռքով քշելով սեփական հողերից, նրանք մահմեդական տիրապետության տակ կորցնում էին որևիցե իրա-

վունք իրենց հողի վրա: Չէ՞ որ մահմեդական օրենքով հողը պատկանում է ալլահին, ալլահի ներկայացուցիչը սուլթանն է, ուրեմն նա է տնօրինում հողերը, հողի սեփականությունը, նա այդ ձևով տալիս է վարձակալման: Չէ՞: Հայը կորցրել էր իր իրավունքը: Հին ազնվականությունը հայության, որ հեռացավ իր երկրից, վերնախիցի, հատկապես կենտրոնացավ Կոստանդնուպոլսում կամ հեռացավ Տրանսիլվանիա, Գալիցիա և այլն, նա իր հետ տարավ հարըստություն, տարավ ոսկի, և դարեր շարունակ ոսկու առևտուր և այլն, և այլն, և այլն: Եվ հետո, կապիտալիստական հարաբերությունների զարգացման ժամանակ, առևտրական, այսպես ասած, վերելքի ժամանակ այդ փողը դարձավ կապիտալ, ստեղծեց շենքեր, կազմակերպություններ, նաև նավեր: Հայերը նավատորմ էլ ունեին: Հայերը իսլամացիների հետ Մեքսիկայի արծաթն էին տեղափոխում Ֆիլիպինների վրայով, հայերը մասնակցում էին Ինդոնեզիայի գործերին, հայերը մասնակցում էին Հնդկաստանի գործերին, հայկական նավազնացություն կար Բասրայի և Բոմբեյի միջև, լսած կլիմեր հավանաբար, և այլն, և այլն: Բայց այդ կապիտալը, այդ ակտիվությունը, գործիմացությունը, ինչպես դուք եք ասում, բիզնեսը, չէր կատարվում հայկական հողի վրա: Շենքերը սարքվում էին Թիֆլիսում, շենքերը սարքվում էին Բաքում, շենքերը սարքվում էին շատ ու շատ տեղերում: Բայց ոչ բուն Հայաստանի վրա: Դրա համար մենք բուն այս Հայաստան տերիտորիայի վրա ժառանգություն չստացանք մեր նախորդ հայ հարուստ մարդկանցից, կապիտալիստներից, փողատերերից: Մենք ի՞նչ ենք ստացել: Մատների վրա կարելի էր հաշվել երկու-երեք հարկանի տները Երևան քաղաքում: Երևանն ի՞նչ էր: Մի գյուղաքաղաք, խեղճ ու կրակ, հողի, փոշու մեջ կորած: Ո՞վ էր գալիս այնտեղ:

Ահավասիկ, նա այս փոքր էքսկուրսը արեցի, հեռացա, ձեզ ցույց տալու համար, որ մենք ոչինչ չէինք ժառանգել, և այն արդյունաբերությունը, ինդուստրիան, որ ստեղծվեց այդ հողի վրա, կատարվել է վերջին տասնամյակների ընթացքում, կատարվեց այն բանի շնորհիվ, որ այն կապիտալը, որ հայերը մեզ չէին բողել, որովհետև իրենք դրսում են եղել: Նուրբար փաշան Եգիպտոսում էր, Դադյանները Պոլսում էին, մեծահարուստ Ժամկոչյանը Մոսկվայի մեջ էր, Մանթաշևը Բաքու, Թիֆլիս էր, Արզումանյանը չգիտեմ որտե՞ր էր: Ահավասիկ, սա էր պատկերը: Եվ մենք այդ կապիտալը ստացանք Ռուսաստանից, ռուս ժողովրդից: Սկսած 1921-1922 թվականներից, այդ փողը, որը սկիզբը դրեց մեր գործունեությանը և գործարաններ, ֆաբրիկաներ կառուցելու գործում, և ուսումնական հաստատություններ, համալսարան կառուցելու: Ո՞ր ժողովուրդն ունի մշտական գործող օպերային թատրոն, դերասանների այդպիսի առատություն, այդ ամբողջը ստեղծվեց քաճակաճակով թվականներից սկսած և շնորհիվ ժողովրդի տաղանդի և այն պայմանների, որ կան մեր համար, կարողացանք ստեղծել այսօրվա Հայաստանի այս կյանքը:

Չունե՞նք թերություններ: Չունե՞նք բացեր: Ինչո՞ւ չէ: Մենք էլ ենք սխալական, մեր մեծերն էլ են սխալներ արել, թերություններ ենք ունեցել, երկկ այսպես ենք մտածել, այսօր փոխվել է: Որովհետև պայմաններն այլ են դար-

ծել: Շատ սխալներ ճշտվում են, շատ սխալներ ուղղվում են, քայքայ հիմնական գիծը մնում է անփոփոխ, այդ գիծը այն է՝ ծառայել սեփական ժողովրդին, սեփական ժողովրդի համար ստեղծել ամեն ինչ: Մի ժամանակ ասում էին Ի՞նչ Հայաստան, հայ չի մնացել: Հայերեն չենք խոսում, չենք գրում, չենք կառուցում և այլն, և այլն: Ասացեք խնդրեմ, որտեղ է մշակվել այդպիսի հայոց լեզու, եթե ոչ Հայաստանում (ծափահարություններ): Եվ ես պետք է ասեմ, որ լեզվի նկատմամբ նույնպես պետք է ունենալ մեծահոգի և ճիշտ մտտեցում: Մենք էլ սիրում ենք և հարգում ենք և ավելի շատ ենք կարդում, քան որևիցե տեղ և՛ Ղևոնդ Ալիշանին¹, և՛ Պեշկեպաշյանին², և՛ Մեծարենցին³, և՛ Գանիել Վարուժանին, և՛ Պետրոս Դուրյանին⁴, և՛ Երվանդ Օտյանին, և՛ Հակոբ Պարոնյանին և՛ բոլոր արևմտահայ մեր մեծերին (ծափահարություններ): Բայց չպետք է կառչել հինգ միայն, նայեք Հայաստանում ինչ ձևով են գրում, ինչ ձևով են խոսում, մի ժողովուրդ պետք է ունենա մի լեզու: Չմոռանաք մեկը, քայքայ հարգենք մյուսը: Տառադարձությունը, գրելածոը ինչո՞ւ չվերցնել հիմքում: Դա, իհարկե, իմ ցանկությանը չէ: Ես որ ասացի, շատերը հիմի քննադատաբար մտածում են: Ի՞նչ գեղեցիկ արտասանեց օրիորդը նոր այստեղ Հովհաննես Թումանյան: Հովհաննես Թումանյանը ինչպե՞ս դարձնենք արևմտահայերեն: Չենք կարող, չէ՞: Ուրեմն յուրաքանչյուր կուլտուրական հայ, յուրաքանչյուր հայրենասեր հայ պետք է իմանա և՛ մեկ լեզուն և՛ մյուս լեզուն: Ես արտասահ-

¹ Ղևոնդ Ալիշան (1820-1901), պատմաբան, բանաստեղծ, բանասեր, աշխարհագրագետ, բարձրամիջ, Վենետիկի Մսիքարյան միաբանության անդամ, դասավանդել է Վենետիկի Ռափայելյան, Փարիզի Մուրատյան վարժարաններում, «Բազմավեսի» (Վենետիկ) խմբագիր, «Յուշիկը հայրենաց հայոց», «Հայոց երգը ուսմակական», «Քաղաքական աշխարհագրություն...», «Տեղագիր Հայոց Մեծաց», «Նշմարք հայկականը», «Սիտանը», «Արարտը», «Շիրակը», «Հայ բուսակ կամ Հայկական Բուսաբանություն» երկերի հեղինակ - Ա.Կ.:

² Մկրտիչ Պեշկեպաշյան (1828-1868), բանաստեղծ, մանկավարժ, բատերական գործիչ, դասավանդել է Կ.Պոլսի Թարգմանչաց, Լուսավորչյան և Հոփսիմյանց վարժարաններում, արևմտահայ կանոնավոր մշտական թատրոնի հիմնադիր, եական դեր է կատարել Ազգային սահմանադրության ստեղծման գործում, գրել է սիրային, բնության, օրորցային, հայրենասիրական, մանկական բանաստեղծություններ - Ա.Կ.:

³ Միսաք Մեծարենց (Մեծատուրյան) (1886-1908) - բանաստեղծ, աշխատակցել է Կ.Պոլսի «Մասիս», «Համրագիտակ», «Արևելյան մամուլ» պարբերականներին, դասական ռոմանտիզմի և սիմվոլիզմի ներկայացուցիչ, ստեղծագործությունների հիմնական թեման անհատի ներաշխարհն է կյանքի քարդ ու հակասական պայմաններում - Ա.Կ.:

⁴ Պետրոս Դուրյան (Ջըմպայան) (1851- 1872) - բանաստեղծ, դրամատուրգ, «Տարագիր ի Սիպերիայ» ողբերգության, «Լարդ եւ Շուշան կամ Հովիթ Մասնաց» մելոդրամայի, «Սև հողեր կամ Յետին գիշեր Արարտյան» «Արտաշես աշխարհակար», «Անկումն Արշակունի հարստության», «Ասպատակությունը պարսկացի Հայս կամ աւերումն Անի մայրաքաղաքին» պատմական ողբերգությունների, «Թատրոն կամ Թշուտներ» դրամայի հեղինակ - Ա.Կ.:

մանում երբ որ զարմացա, որ մի կին, ինքը լինելով թիֆլիսահայ, ավարտել էր Գայանյան դպրոցը, քայց իսպաներենի էր թարգմանել մեր արևմտահայ բանաստեղծների գործերը, զարմացական հարց տվեցի, թե տիկին այս ինչպե՞ս էր թարգմանել, չէ՞ որ դուք արևմտահայերենը ժամանակին չէր ուսումնասիրել: Նա ասաց, թե ինչո՞ւ եր ինձ վիրավորում, չէ՞ որ ես հայ եմ և պարտավոր եմ իմանալ երկու ուղղությունները, երկու քարքառը կարելի է ասել, կամ երկու լեզուն ասենք: Հասկանալի է: Ուրեմն յուրաքանչյուր հայ կին, մարդ դրսում պետք է հարգի իր պետական լեզուն: Այդ լեզուն ստեղծվել է Երևանում, Քանաքեռում, Խաչատուր Աբովյանի կողմից, զարգացել է, դարձել է պետական լեզու, յուրաքանչյուր որ պետք է և՛ կարդա, և՛ հասկանա: Դրա համար էլ ես կոչ եմ անում ձեզ բոլորիդ: Ես կարող եմ ձեզ ասել, թե բոլորդ կարող եք դառնալ Սովետական Հայաստան, վերադառնալ, ո՛չ, այդպիսի բան հնարավոր չէ ասել: Մեր հիմնական խնդիրն է, ձեր հիմնական խնդիրն է՝ պահպանել ազգի պատկանելությունը սեփական, լինել Սովետական Հայաստանի քարտեզ: Գրպանի համեմատ, հնարավորությունների համեմատ, շուտ-շուտ այցելել Սովետական Հայաստան, երեխաների մեջ վառ պահել Սովետական Հայաստանի նկատմամբ սերը, հարգանքը: Եվ ամենակարևորը, կարողանալ լինել լավատես, որ Սովետական Հայաստանի ապագան շատ ավելի վառ է լինելու, շատ ավելի գեղեցիկ է լինելու, որ լինելու եմ նոր հնարավորություններ, նոր միջոցներ, որովհետև դարերի պատմությունը, դարերի փորձը ցույց է տալիս, որ մեր ժողովուրդը իրավունք ունի լինելու ավելի լավ պայմանների մեջ, ունենալու ավելի լավ, ավելի գեղեցիկ հայրենիք, որին պետք է նպաստեք բոլորդ: Բայց, միաժամանակ, սրան զուգընթաց ես ուզում եմ ասել, հույս հայտնել, որ Դուք այդ կապը պետք է ուժեղացնեք, յուրաքանչյուր ընտանիք գոնե մի ամսագիր, մի թերթ պետք է ստանա հայրենիքից: Գլխեք, մենք այդքան շատ թուրք չունենք, չկարծեք՝ մեր ամսագրերը չեն վաճառվում, թերթերը: Մեր յուրաքանչյուր ամսագիր 100 հազար տպաքանակով է, 150-300 հազարով է լույս տեսնում, մեք հաճախ գրքի սով ենք ունենում, սպում ենք գիրքը 100-150 հազարով, քայց չեք կարող ճարել: Դրա անհրաժեշտությունը չունեք: Բայց ես գիտեմ աներիկյան պայմանները, իրականությունը, զբաղված մարդիկ եք, գործի մարդիկ եք, կարողալու քիչ ժամանակ է մնում, քայց տան մեջ թող լինի, երեխայի աչքի առաջ պետք է լինի գիրքը, մեր ավանդական սովորությունը, որ հայը իր գիր, գրականությունը պետք է սիրի: Որովհետև լեզվի միջոցով, մենք կարծում ենք, որ ավելի մոտ կպահենք ձեզ, արևմտահայության քեկորներին, սփյուռքահայության մարդկանց մայր հայրենիքին, Սովետական Հայաստանին: Ի՞նչ ասեմ ձեզ: Ես շատ խոսեցի, ձեզ ծանոթացրի: Նորից ասեմ, որ հաճույք էք, մեծ պատիվ էր իրավիրվել Բոստոն, ծանոթանալ ձեր քաղաքին, տեսնել հայ մարդկանց դեմքեր, շատ դեմքեր ինձ հիշեցնում են մանկության տարիներին տեսած դեմքեր, քարություն կա դեմքերի վրա, մի տեսակ մահ անտարբերություն: Կյանքի տարբեր պայմանները տարբեր դեմքեր են ստեղծում, տարբեր քնավորություններ: Այստեղ շատ-շատերին ես ծանոթ էի

նախապես, հաճելի էր, որ տեսա երկրորդ անգամ, ինձ համար անակնկալ էր, որ այստեղ է պարոն Բեքբերյանը, Համբարձումը, որին հանդիպել եմ մի անգամ Մոնրեալում կարծես: Հիմա էլ այստեղ անակնկալ հանդիպեցինք: Գիտեի Արիս Փափազյանին, նախապես: Լսել էի երգչուհու մասին, բայց չէի տեսել, տեսա: Ի՞նչ ասեմ ձեզ: Գիրքը ժամանակին հայերեն կարդացել եմ, որոշ բաներ օգտագործել եմ, Ալիսայի: Շատ հաճելի, պատվարժան նախագահ ունեցա ես, դա ինձ համար մեծ պատիվ է: Ողջունում եմ ձեզ բոլորիդ: Կրկին շեշտեմ, որ Սովետական Հայաստանը հնարավորություն է տվել հայ ժողովրդին լինելու խաղաղ պայմաններում: Սովետական մեծ Միության ժողովուրդների բարեկամությունը այն հզոր վահանն է, որը հայ ժողովրդի համար ստեղծել է առաջխաղացման, զարգացման լայն ուղիներ, լայն պողոտա, որով ընթանում է մեր ժողովուրդը: Ապագան մեր ժողովրդինն է: Դրանում համոզված եղեք և սիրեք Սովետական Հայաստանը, նրա պետականությունը, նրա կառավարությունը (ծափահարություններ): Մնաք բարով, ցտեսություն, դեկտեմբերի 17-20-ին կկարողանամ լինել Երևանում և այնտեղ կկիսվեմ տարբեր լսարաններում, հողվածներում իմ տպավորությունների մասին, ձեր զաղուքի, ձեզ հետ ունեցած իմ լավ հանդիպումների մասին: Շնորհակալություն կազմկոմիտեին, շնորհակալություն այդ ճաշը պատրաստողներին, շնորհակալություն մեզ հյուրասիրողներին: Շնորհակալություն:

ԵՆՈՒՅՑ ԶԻԿԱԳՈՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԴՈՒՅՑՆԵՐ

Բարև Ձեզ, Չիկագո մեծ քաղաքի հայկական ժամի ուղիղունկնդիրներ: Ձեզ հետ խոսում է, Ձեզ համար խոսում է Ջոն (Հովհաննես) Կիրակոսյանը: Ես՝ Սովետական Միության պատվիրակության անդամ, Նյու Յորքում եմ գտնվում արդեն երեք ամիս: Շատ լավ առիթ ինձ ներկայացավ ծանոթանալու Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ համայնքների կյանքին, մարդկանց, նրանց գործերին: Կերջին օրերին ինձ պատեհություն եղավ այցելելու Կալիֆոռնիա, լինելու Լոս Անջելես, Սան Ֆրանցիսկո, Ֆրեզնո քաղաքներում: Եղա Բոստոն քաղաքում, ունեցա հանդիպումներ հայ մարդկանց հետ, նրանց պատմեցի հայ կյանքի մասին, Հայաստանի մասին, հայ մարդկանց գործերի, հաջողությունների մասին: Շնորհիվ Հայաստանի լավ բարեկամների հրավերի, այժմ եկել եմ Չիկագո: Հյուր եմ եկել և այսօր, 1978 թ. դեկտեմբերի 8-ին, երեկոյան, ունենալու եմ երջանիկ պահեր՝ հանդիպելու Չիկագոյի հայ մարդկանց, լսելու նրանց, ունկնդրելու նրանց խոսքը, տեսնելու նրանց հայկական դեմքերը, խոսելու նրանց հետ, պատմելու նրանց այն բոլոր հարցերի ու խնդիրների մասին, որոնք հուզում են յուրաքանչյուր հայրենասեր հայ մարդու, հայրենիքից հեռու, աշխարհի տարբեր ծագերում, տվյալ դեպքում Ամերիկայի Միացյալ Նահանգների Չիկագո, մեծ, արդյունաբերական, ինդուստրիալ հզոր քաղաքում:

Ի՞նչը ինձ զարմացրեց Միացյալ Նահանգներում, հայերի հետ ունեցած հանդիպումների ժամանակ: Նրանց հայ լինելու հանգամանքը, նրանց՝ հայ ժողովրդին սիրելու, հարգելու հանգամանքը ուրախացուցիչ է, հուզիչ է: Երբ յուրաքանչյուր տան մեջ տեսնում ես Եղիշե Չարենցի² գործերը, Հովհաննես Շիրազի³ բանաստեղծությունների գործերը, յուրաքանչյուր տան մեջ տեսնում

¹ ԶԿԱԱ, Ջոն Կիրակոսյանի ելույթը Չիկագոյի հայկական ուղիղույթով, 1978, 8 դեկտեմբերի, (ժայնագրություն):

² Եղիշե Չարենց (Մողոմոնյան) (1897-1937) - բանաստեղծ, արձակագիր, քաղաքական, աշխատել է «Ժողովրդային Հայաստան» թերթի, «Նորք» ամսագրի խմբագրություններում, Հայպետհրատում, «Հրո երկիր», «Տեսիլածամեր», «Ծիածան», «Կապուտաչյա հայրենիք», «Իանթեական առասպել», «Վահագն», «Ազգային երագ», «Ամբոխները խելագարված», «Նաիրի երկրից», «Չարենց-մամբ» բանաստեղծական շարքերի, «Պատմության քառույթներով», «Դեպի լյառ Մասիս», «Նորք», «Կոմիտասի հիշատակին», «Իմ լեռան արոքը» պոեմների, «Դոֆին մաիրյան» սոնետների շարքի հեղինակ, անհիմն բռնադատվել է - Ա.Կ.:

³ Հովհաննես Շիրազ (Օնիկ Կարապետյան) (1914-1984) - բանաստեղծ, «Գարնամատուտ», «Երգ Հայաստանի», «Երգերի գիրքը», «Լիրիկա», «Քնար Հայաստանի», «Հուշարձան մայրիկիս», «Համամարդկային» ժողովածուների, «Արևի երկիր», «Բիրիակական», «Հայոց դանթեականը», «ժաղաղություն անննցուն» պոեմների հեղինակ - Ա.Կ.:

ես հայրենիքի պատմաբանների գործերը, գրքերը, տեսնում ես ամսագրեր, լրագրեր, տեսնում ես մարդկանց, որոնք օրավոր հետևում են սեփական ժողովրդի մշակույթի տեղաշարժերին, նրա անվանի ներկայացուցիչների հաջողություններին, խոյանքներին, երբ լսում եմ յուրաքանչյուր տան մեջ հայ երաժշտության դիսկեր, հայ երգիչ, երգչուհիների ձայնը, որը բաղդը է ևնչում հատկապես հայրենիքից հեռու գտնվող մարդկանց համար: Չէ՞ որ նրանք հայեր են, չէ՞ որ նրանք դարեր շարունակ նվաճվել են, հետապնդվել են ոստիաների կողմից, նրանց հալածել են, զրկել հայրենիքից, խփել են, ոչնչացրել, տարել են անապատների գեհեմի միջով, տարել են հեռուները, բայց նրանք շարունակում են մնալ հայ, շարունակում են սիրել իրենց մայր ժողովրդին, շարունակում են սիրել իրենց հայրենիքը, ապրում են նրա հաջողություններով, երազում են նրա նոր հաջողությունների մասին, երազում են հայ մնալու, միավորվելու, բուռնցք կազմելու, սատար լինելու իրենց հայրենիքի բարգավաճմանը, իրենց հայրենիքի ամրապնդմանը, սիրում են իրենց հայրենի Հայաստանի պետականությունը, որը այսօր միակ պատվարն է, միակ հուստ հանգրվանը: Հայերը կան, ապրում են, մնում են ժողովուրդ, որովհետև մշտապես աչքերը հառում են սեփական հայրենիքին, սեփական պետականությանը: Այս պետականությունը հայ ժողովրդի համար հուստ աղբյուր է:

Ինչ ունեի՞նք մենք սրանից մի վեց, յոթ տասնամյակ առաջ: Մենք կանգնած էինք կործանման եզրին, մեր ժողովուրդը բնաջնջվեց իր հողերի վրա, մեր ժողովուրդը կորցրեց իր հայրենի շեները, կորցրեց հարյուրամյակների ու հազարամյակների քաղաքակրթությունը, և գտնվեցին մարդիկ, որոնք արդեն կարծում էին, թե հայ ժողովուրդը պատկանալու է անհետացող ազգերի շարքին, այն ժողովուրդների շարքին, որոնք չկարողացան մարաթոնյան, հազարամյակների այս քայլքի մեջ մրցել մեզ հետ: Բայց հայ ժողովուրդը վերապրեց, հայ ժողովուրդը վերապրեց, որովհետև ունի չափազանց մեծ մշակույթ, որովհետև նրա գիրը, գրականությունը, նրա ոգին գալիս է դարերի խորքից, նա չի սարսպել, չի երկնչել ոչ մի դժվարությունից: Նա կարողացել է ոտքի կանգնել, նա կարողացել է դիմագրավել բոլոր դժվարություններին, նա հանդես է բերել ապառաժին, գրանիտին հատուկ հատկություններ, և այժմ հայ ժողովուրդը աշխարհին զարմացնում է իր զավակների մեծ ինտելեկտով, մտավոր մեծ կարողություններով: Չկա կուլտուրայի ասպարեզում որևիցե բնագավառ, լինի դա բժշկությունը, լինի նկարչությունը, լինի երաժշտագիտությունը կամ երաժշտությունը, լինի ճարտարապետությունը, լինի գինվորական գործը, որտեղ հայ ժողովրդի զավակները իրենց չդրստորեն որպես 20-րդ դարին արժանի մարդիկ: Վերցրեք հաշվողական մեքենաների բնագավառը: Հայաստանը այսօր ստեղծում է լավ մեքենաներ, որոնք արդեն ճանաչվում են ինչպես Սովետական Միության, այնպես և Եվրոպայի շատ երկրների գիտական հասարակության, արդյունաբերական, տեխնիկական հասարակության կողմից: Վերցրեք նկարչությունը, մեր նկարիչները հայտնի են և՛ Հայաստանում, և՛ Հայաստանի սահմաններից դուրս: Ո՞վ չի պարծեցել Մարտիրոս

Սայլասնի անունով, բայց չէ՞ որ մենք ունենք նոր նկարիչներ, որոնք արդեն գալիս են ավելի մեծ համբավ բերելու հայ նկարչության ավանդույթներին: Ո՞վ չզիտի աշխարհում Արամ Խաչատրյանի¹ անունը, որը մեծ փառք բերեց հայ ժողովրդին իր հանրամատչելի, ճանաչված ու ընդունված գեղեցիկ երաժշտությանը, որի հիմքում դրված են հայ ժողովրդի ազգային մեղեդիները, որի մեջ դրված են հայ ժողովրդի կողովը, ոգին, նրա երաժշտական ունակությունները, նրա մեղեդիների ամբողջ հմայքը: Չէ՞ որ հայ ժողովուրդը դարերի միջով անցել է, տեսել է ամեն ինչ, բայց կարողացել է միշտ ստեղծագործել, նման չի եղել այլ ու այլ ժողովուրդների կամ ցեղերի, որոնք սովոր են եղել ճնշել ուրիշներին, տիրապետել ուրիշներին, գրկել նրանց ապրելու իրավունքից, խորտակել նրանց շենքերը, ճարտարապետական կոթողները, ոչինչ չդնելով դրա տեղը: Այդպես էլ պատահեց մեզ հետ, մեր հարևանների կողմից: Ով չզիտի մշակույթի տարբեր ու տարբեր ներկայացուցիչներին: Վերցնենք շախմատի ասպարեզը: Երեկ մենք պարծենում էինք Տիգրան Պետրոսյանի հաջողություններով: Ծիշտ է, այսօր էլ մա դեռ պահպանում է իր հեղինակությունը շախմատային գործի մեջ, բայց տեսեք արդեն նոր անուն է ավելացել նրա կողքին: Վահանյանը այսօր հանդիսանում է միջազգային գրոսմաստեր և պատվով պաշտպանում է հայրենի շախմատային ամրոցները, կարողանում է գեղեցիկ օգտագործել շախմատային և՛ զինվորները, և՛ մյուս քարերը՝ հանուն հայ ժողովրդի մշակութային փառքի: Ինչ բնագավառ որ վերցնենք: Վերցնենք գիտության բոլոր ճյուղերը՝ քիմիա, կենսաբանություն, ֆիզիկա, մաթեմատիկա: Ապա տեսեք, 19-րդ դարից սկսած՝ հայերը ինչքան մարդիկ էին ուղարկում դուրս, դեպի Ռուսաստան՝ Պետերբուրգ ու Մոսկվա, Գերմանիա՝ Լայպցիգ ու Բեռլին, Հալլե, այլ քաղաքներ ուսանելու, դառնալու ինժեներներ, դառնալու պիտանի մտավորականներ հասարակության համար: Բայց այսօր Երևանի համալսարան են գալիս Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունից ուսանողներ՝ սովորելու հայ պրոֆեսորների մոտ մաթեմատիկա, ֆիզիկա:

Չէ՞ որ սա մեր ժողովրդի հաջողության արդյունքն է, չէ՞ որ քաղցած, փորները ուսած մանուկների փոխարեն այսօր մենք ունենք զվարթ երիտասարդություն, մատաղ սերունդ, երջանիկ և ապահովված բոլոր այն պայման-

¹ Արամ Խաչատրյան (1903-1978), կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ, ԽՍՀՄ, ՀԽՍՀ, ՎԽՍՀ, ԱԽՍՀ ժողովրդական արտիստ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, արվեստագիտության դոկտոր, ԽՍՀՄ կոմպոզիտորների միության քարտուղար, դասավանդել է Մոսկվայի կոմսերվատորիայում և Գեռնիմենի անվ. երաժշտական մանկավարժական ինստիտուտում, XX դ. մեծագույն կոմպոզիտորներից, «Գասանն», «Սպարտակ» քալեոնների, «Առաջին», «Երկրորդ», «Երրորդ» սիմֆոնիաների, «Ջուրակի», «Թավջութակի», «Դաշնամուրի» կոնցերտ ուսպողիաների, «Պեպո», «Ջանգելով», «Մտայինգրադյան ճակատամարտ» ֆիլմերի, «Լալենսիայի այրին», «Իմնակահանդես» դրամատիկական ներկայացումների երաժշտության, ՀԽՍՀ օրինաբախ հեղինակ - Ա.Կ.:

ներով, որոնք կարող են հնարավորություն տալ, որպեսզի տաղանդավոր ժողովուրդը իր խոսքը ասի բարձրաձայն, իր խոսքը հնչեցնի ամբողջ աշխարհով մեկ: Ժողովուրդները սիրում են միմյանց, եթե նրանց չեն խանգարում, ժողովուրդները սիրում են խաղաղություն, որպեսզի կարողանան ստեղծագործել: Եվ ահա վերջին տասնյակ տարիներին, երբ հայ ժողովրդի մի հատվածի համար ստեղծվեց բիչ թե շատ խաղաղ պայման, կյանքի պայմանները լավացան, ստեղծվեցին բարենպաստ այնպիսի պայմաններ, երբ մարդը կարող է խոսք ասել, ստեղծագործել: Մեր ժողովուրդը ցույց տվեց, թե ինչի է արժանի նա: Եվ մեր ժողովուրդը ոչ միայն առաջ է նայում՝ ստեղծելու համար նոր քարտիքներ, նոր կոորդներ, նա կարողանում է նաև հետ նայել, կարողանում է անցյալի կրակի մոխիրների միջից վերցնել կրակը և այդ կրակը օգտագործել իր այսօրվա գործերը ավելի հեշտությամբ, ավելի հաջողությամբ առաջ մղելու համար: Հայ ժողովուրդը սիրում է իր անցյալը, հայ ժողովուրդը պահպանում է իր պատմական հուշարձանները, հայ ժողովուրդը չի մոռանում բոլոր իր այն գավակներին, որոնք իրենց ոգով, գործով, գրչով, վրձինով, իրենց երաժշտական թե այլ ունակություններով փառք են բերել հայ մշակույթին, հայ ժողովրդի գիտությանը, հայ ժողովրդի գրչին, հայ ժողովրդի գրին ու գրականությանը: Այսօր հայ ժողովուրդը կարող է հպարտանալ իր գրքերով, հպարտանալ այն բանով, որ երբեք հայ ժողովուրդը այդքան զիջք չի տպագրել, այսքան գրագետ մարդիկ չի ունեցել, այսքան խելոք դեմքեր չի ունեցել, ինչպես այժմ: Խնդիրն այն է, որ հայերը կարողանան իրար հասկանալ ավելի լավ, իմանան ազգի ու ժողովրդի այսօրվա հրատապ խնդիրները, կարողանան միավորվել, սիրել հայրենիքը, ըմբռնել նրա անցած ողորդ դժվարությունները, այդ դժվարությունները հաղթահարելու ճանապարհները ճիշտ ընտրեն, զգան, թե պատմության բառտղիներում որոնք են եղել մեր ժողովրդին խանգարող հանգամանքները, և որոնք են այն դրական կողմերը, որ այսօր խաղաղություն բերեցին մեր ժողովրդին, և նա կարողացավ այդ փոքր հողակտորի վրա ստեղծել նոր քաղաքակրթություն, ստեղծել խաղաղ, ապահով կյանք, որը ինչ-որ տեղ փարոս է հանդիսանում մյուս հայերի համար, որոնք ոգեշնչվում են մայր հայրենիքի հաջողություններից, որոնք դրսից հաջողություն են մաղթում մեր ժողովրդին:

Ես չեմ ուզում ձեզ ծանծաղեցնել, Չիկագոյի հարգելի քաղաքացիներ, ես շատ ուրախ եմ, որ դուք Ամերիկայի Միացյալ Նահանգների լավ քաղաքացիներ եք, և ես համոզված եմ, որ դուք բոլորը ուզում եք, որ խաղաղություն լինի աշխարհում, նպաստում եք այն բանին, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների և Սովետական Միության միջև լինի փոխըմբռնում, լինեն զեղեցիկ հարաբերություններ, խաղաղություն, և դրանից կշահի նաև հայ ժողովուրդը: Ես ցանկանում եմ ձեզ ամենայն բարիք, ցանկանում եմ երջանկություն ձեր գավակներին, ցանկանում եմ, որ յուրաքանչյուր հայ օջախ իսկապես հայ մեծ, այդ օջախի մեջ լինի հայկական լրագիր, հայկական ամսաթերթ, հայկական զիբը, լինի հայ լեզուն: Եվ այդ միջոցով մենք կարող ենք ավելի հաջողությամբ

նայել ապագային, լինել ավելի օպտիմիստ կամ ինչպես ասում են լավատես վաղվա հայ ժողովրդի գործերի նկատմամբ: Բարին ընդ Չեզ, հարգելի հայրենակիցներ, մնաք բարով, հաջողություններ եմ Չեզ ցանկանում, շոտ-շոտ այցելեցեք Հայաստան: Տոնտոբյուն:

ՀԱՋՈՂՎԱՏ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ¹

Հարևան թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքի, ներքին ու արտաքին քաղաքականության, սոցիալ-տնտեսական տեղաշարժերի մշտական ու հանգամանալի ուսումնասիրությունը սովետական արևելագիտության կարևոր խնդիրներից մեկն է: Այստեղ լուրջ անելիքներ ունեն և՛ պատմաբանները, և՛ տնտեսագետները, և՛ միջազգայնագետները, և՛ լեզվաբաններն ու գրականագետները: Թուրքիայի այսօրը կապված է Օսմանյան կայսրության՝ այդ թաղմազգ պետության պատմության հետ: Իսկ այդ պետության մեջ, քացի թուրքերից, բնակվում էին տասնյակ ժողովուրդներ ու ազգություններ, որոնց պատմության ուսումնասիրությունն առնչվում է Թուրքիայի իրականության անցյալի հետազոտման հետ:

Արևմտահայության քաղաքական, սոցիալ-տնտեսական պատմությունը, նրա մշակույթի ուսումնասիրությունը նույնպես սերտորեն առնչվում են բուրքազիտության հետ, այն պետականության պատմության հետ, որի շրջանակներում դարեր շարունակ ճնշվել, հարստահարվել և, ի վերջո, բնաջնջվել է մեր ժողովրդի արևմտյան հատվածի գերակշիռ մասը:

Թուրքազիտությունը մեզ հետաքրքրում է ո՛չ միայն անցյալի առումով, այլև ներկա քաղաքական իրադրությամբ: Հանրապետական Թուրքիան նախկին տարածքը չունի, Օսմանյան կայսրության մնաց վտված չէ երեք աշխարհամասերի վրա, սակայն պահպանում է իր առանձնահատուկ աշխարհագրական, ռազմաստրատեգիական դիրքը: Միջին ու Մերձավոր Արևելքի ազդեցիկ պետություն է այն՝ սովաբ բնակչությամբ: Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է: Իսկ ռազմական կազմակերպության գլխավոր թիրախը սոցիալիստական երկրներն են: Թուրքիան ՍՄՀՄ-ի անմիջական դրացին է Անդրկովկասի սովետական հանրապետությունների միջոցով, և մենք չպետք է անգիտակցի մենք սահմանից այն կողմ տեղի ունեցող իրադարձություններից, քաղաքական կոնյունկտուրային: Անցյալ տարի «Պրակչան» հոդված հրապարակեց Չինաստանի արտաքին գործերի մինիստրի Անկարա կատարած այցի, հակասովետական հայտարարությունների, այն դերի ու տեղի մասին, որ չինական հեգեմոնիստները հատկացնում են Թուրքիային իրենց հակասովետական ընդհանուր քաղաքականության մեջ: Մեզ անհրաժեշտ է ճիշտ ըմբռնել բուրքական քաղաքականության էական միտումները: Ուշագրավ է, որ բուրքական քաղաքական գաղափարախոսությունն այսօր վերստին բորբոքում է պանթուրքական պրոպագանդան: Հարևան երկրների ներքին վիճակը, դասակարգային հարաբերությունները, միջկուսակցական և ներկուսակցական խնդիրների պարզաբանումն ունեն գիտաքաղաքական կարևոր նշանակու-

¹ Կիրակոսյան Ջ. Հաջողված հրապարակումներ // «Լենինյան ուղիով» (Ե.), 1979, N 6, էջ 93-96: Նույնը՝ «Ալիք» (Թեհրան), 6, 7 հոկտեմբերի: «Զարթոնք» (Բեյրութ), 26 հոկտեմբերի:

բյուն: Հարկավոր է գիտենալ այդ երկրների հասարակական-քաղաքական կյանքի ու մտքի ընթացքը, ժողովրդական զանգվածների և խշխող դասակարգերի հոգեբանությունն ու տրամադրությունները: Այստեղ անհրաժեշտ են ճշմարիտ չափանիշներ: Ոչ գիտությունը, ոչ քաղաքականությունը չեն հանդուրժում ինքնախաբեություն, աչքակապություն: Պետք է իմանալ ամեն ինչ, պարզ և հստակ պատկերացում ունենալ սահմանակից երկրներում կատարվող հասարակական-քաղաքական իրադարձությունների մասին:

Ժամանակակից գիտական մակարդակով կատարվող սխտեմատիկ ուսումնասիրությունների միջոցով է հնարավոր ճիշտ գաղափար կազմել թուրքական իրականության, պետական քաղաքականության հանգամանքների վերաբերյալ: Երբեմնի չափանիշները, հնացած պատկերացումները, կենսապարզ փաստարկներն այլևս գործին օգնել չեն կարող: Հարկավոր է քացառել զգացմունքայինը, անցյալի իրադարձությունների պլիզման ու եզրակացությունները խարսխել միայն փաստական ճյուղի, կոնկրետ իրավիճակի վրա: Չեն կարող լինել լրջմիտ քաղաքական-գիտական ընկալումներ ու մտեցումներ առանց բազմակողմանի վերլուծությունների, առանց փաստական իրավիճակի խորագնին իմացության: Պետք է իմանալ երկրի պատմությունը, թուրք-հայկական քաղաքական ու մշակութային առնչությունները, պետք է իմանալ նրա ներկան ու անցյալը:

Վերջին տարիներին Անկարայում ու Ստամբուլում հրապարակված են բազմաթիվ գրքեր Հայաստանի, նրա պատմության, Հայկական հարցի վերաբերյալ: Մշակում են երկրի հասարակական կարծիքը, այն դուրս բերում սեփական երկրի սահմաններից: Ինչ խոսք, որ պատմությունը կեղծելու միտումով շատ քան է արվում այնտեղ: Սակայն այստեղ խոսքն այն ակտիվության մասին է, որ դրսևորվում է այնտեղ հայ ժողովրդի ազգային դրամայի պրոբլեմները «յուրովի» մեկնաբանելիս: Այդ հրապարակումների նպատակն է ոչ միայն մթազնել թուրք աշխատավոր զանգվածների գիտակցությունը, նրանց տոգորել ազգայնական առեղծայնությամբ և կրոնական մոլեռանդությամբ սահմանակից ժողովուրդների նկատմամբ, այլև շեղել նրանց սոցիալ-դասակարգային պայքարի, տիրող կարգերի դեմ մարտելու ուղուց: Անկարայի պատմաբանները ճգնում են կեղծագրերի միջոցով մշակել թուրք քաղաքացիների գիտակցությունը: Նրանք միայն ողորմ են, որ չկա այլևս օսմանյան հանրաբանող և փորձում են գտնել, հայիոյել դրա քայքայմանը մեղսակից ուժերին:

Վերջին տարիներս էական առաջընթաց կա մեր հանրապետության թուրքագիտության մարզում: Թուրքագիտության զլխավոր կենտրոնը ՀՄՍՀ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի համապատասխան բաժինն է: Թուրքագիտության բնագավառում որոշակի գործ է կատարվում նաև Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի համապատասխան ամբիոններում: Մեր հանրապետությունում լույս են տեսել մի շարք գրքեր, գրքույկներ, հոդվածներ՝ նվիրված թուրքագիտության տարբեր բնագավառներին ու ժամանակաշրջաններին: Միջմադարի

ու նոր ժամանակների պրոբլեմներին զուգահեռ որոշակի են հաջողությունները թուրքիայի պատմության նորագույն շրջանի, քաղաքական ու տնտեսական արդի պրոբլեմների ուսումնասիրության բնագավառում:

Այսօր ունենք որոշակի վաստակ ունեցող թուրքագետներ՝ Ե.Մարգայան և Ռ.Սահակյան, Մ.Քոչար¹, Հովհ.Ինճեկյան, Բ.Կոնդակյան², Հ.Կոլխմազյան³ և ուրիշներ, որոնց վերջին շրջանում հրատարակված աշխատությունները, սենսացիոնները⁴ ծանրակշիռ ներդրում են սովետական թուրքագիտության մեջ: Ինչպես նկատում է ընթերցողը, այս գրքերը նվիրված են թե՛ Օսմանյան կայսրության, թե՛ ժամանակակից թուրքիայի պատմության ներքին ու արտաքին քաղաքականության հարցերին և լրացնում են ժամանակակից թուրքագիտության չգրված բազում էջեր:

Երվանդ Սարգսյանի աշխատությունը գիտական երկարամյա պրոբլեմների արդյունք է: Հեղինակին հաջողվել է քննական պատշաճ մակարդակով լուսաբանել 19-րդ դարի վերջի թուրքական իրականության բազմաթիվ կնճռոտ ծալքերը՝ հերքելով թուրք և արևմտաեվրոպական հեղինակների անհիմն պնդումները:

Առաջին հայացքից թվում է, թե շատ է գրվել այդ շրջանում Արևմտյան Հայաստանում տեղի ունեցածի մասին: Սակայն որքան ավելի ընդիույ է գրադվում հայոց հարցի միջազգային առումներով, սուլթանական թուրքիայի ներքին խնդիրներով, այնքան ավելի պարզ է դառնում այդ պրոբլեմների ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Օսմանյան կայսրության շրջանակներում արևմտահայության քաղաքական ճակատագիրը բազմակողմանի ուսումնասիրելու համար ժամանակն է ավելի ընդհույ գրադվել սկզբնաղբյուրների, փաստաթղթերի, վկայությունների թարգմանությամբ, սխտեմավորմամբ ու հրատարակմամբ: Ընթերցող և գիտական հասարակայնությունը ժամանակին ողջունեց «Генюиа армян в

¹ Մերի Քոչար (1936-1994) - բանասեր, թուրքագետ, արարագետ, պատմ. գիտ. դ., պրոֆ., ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան (1978-1993), «Հայ-թուրքական հարաբերությունները և հայկական հարցը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին» աշխատության հեղինակ - Ա.Կ.:

² Բաֆֆի Կոնդակյան (1927-1992), թուրքագետ, պատմ. գիտ. թեկնածու, աշխատել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում, հիմնական աշխատությունները՝ «Թուրքիայի ներքին քաղաքականությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին», «Թուրքիա. ներքին քաղաքականությունը և խլանը» - Ա.Կ.:

³ Հովհաննես Կոլխմազյան (1940-2009), թուրքագետ, պատմ. գիտ. թեկնածու, աշխատել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում, հիմնական աշխատությունը՝ «Թուրք-գերմանական հարաբերությունները Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին» - Ա.Կ.:

⁴ Саркисян Е. Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв, Е, 1973: Инджикян О. Буржуазия Османской империи, Е, 1977: Корхмазьян Р. Турецко-германские отношения в годы второй мировой войны, Е, 1977: Кондакчян Р. Внутренняя политика Турции в годы второй мировой войны, Е, 1978 и др.

Османской империи» և «Հայաստանը միջազգային դիվանագիտության ու սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» ժողովածուները: Սակայն այդ ժողովածուների հրատարակումով չի սպառվում խնդիրը: Հարկավոր է դրանք լրացնել նոր փաստաթղթերով ու նյութերով, ժողովել, ի մի բերել, դասակարգել ու մեկնաբանել Հայոց հարցին վերաբերող ռուսական, գերմանական, ֆրանսիական, անգլիական, բուլղարական, բուլղարական, հունական, արաբական և քաղցամարտի այլ երկրների դիվանագիտական վավերագրերն ու նյութերը: Այդ կլինի լուրջ գիտական և պետական մտտեցում մեր ժողովրդի մտավոր անցյալի քաղաքական ողբերգության հանգամանքները լուսաբանելու գործին: Այդ իրականացնելու համար ունենք կարող ուժեր, լավ հնարավորություններ: Միայն անհրաժեշտ է, որ գիտությունների ակադեմիայի համապատասխան օղակները, պետական համալսարանի պատմագիտական, արևելագիտական ամբիոնները հանդես բերեն նախաձեռնություն, գործիանցություն այդ խնդիրը լուծելու հույժ կարևոր գործում:

Հովհաննես Ինճիկյանին հաջողվել է հիմնավոր խոսք ասել Օսմանյան կայսրությունում կապիտալիստական արտադրաեղանակի զարգացման, այլազգի և բուրք բուրժուազիայի կազմավորման ներքին ու արտաքին ազդակների մասին: Թուրք ազգային բուրժուազիան վեր էր բարձրացել ո՛չ միայն կոլի տալով իմպերիալիստական տերությունների զավթողական ձգտումների դեմ, այլև հայկական, հունական բուրժուազիայի մրցակցությունը բիրտ ուժով ճգմելով, պետական մեքենայի վարչական միջամտությամբ, շովինիստական գաղափարախոսության սպառնալիքներով, արյուն ռթելով, միայն թե իր քաղաքական իշխանությունն ապահովեր տնտեսական գերիշխանությամբ: Գլխի էջերում մի անգամ ևս արտացոլվում է այն ճշմարտությունը, որ բուրքական բուրժուազիան, ճնշվելով եվրոպական իմպերիալիզմի կողմից, միաժամանակ ինքն էր վայրագաբար հաշվեհարդար տեսնում երկրի ներսում եղած իր այլազգի մրցակիցների՝ հույների, հայերի, հրեաների հետ:

Գլխից հարկ է հրատարակել նաև հայերեն, սակայն հասելի առնելով մի ցանկություն. պետք է փորձել լուրջ հարցերի մասին գրել ո՛չ միայն սույլ մասնագետների, այլև բոլորի համար: Այս խնաստով հարկ կլինի գիրքը բեռնաթափել փաստական որոշ նյութերից:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին մի շարք երկրների կառավարություններ հանդես եկան իրենց չեզոքության մասին հայտարարություններով: Այդպիսիներից մեկն էր Իսմեթ Ինենյուի գլխավորած Թուրքիայի ժողովրդահանրապետական կառավարությունը: Խոսքով հանդես գալով չեզոքություն պահպանելու դիրքերից, Մուստաֆա Քեմալի հետևորդները գործով խախտում էին չեզոքությունը, վարում հակասովետական քաղաքականություն: Այս խնդրի մասին հետպատերազմյան տարիներին հրատարակված է հարուստ գրականություն: Երիտասարդ բուրքագետ Հ. Կորխմազյանի ուսումնասիրությունը, միլիոնավ լինելով այս պլուրեժմին, նախորդ հրատարակումների կրկնությունը չէ, այլ պատշաճ մակարդակով գրված ուսումնասի-

րություն: Նրան հաջողվել է ցույց տալ թուրքական կառավարողների արտաքին քաղաքական կուրսի էությունը, դրա հակասովետական նկրտումը, միաժամանակ զգուշավորությունն ու հաշվենկատությունը: Հեղինակը խորամուխ է եղել պորբեմի բոլոր նրբերանգներում, ուսումնասիրել գերմանական ու թուրքական սկզբնաղբյուրները, Գերմանիայի արտաքին գործերի մինիստրության փաստաթղթերը, անգլիական, ֆրանսիական, ամերիկյան, գերմանական հեղինակների վերջին հրապարակումները: Հեղինակի գրեթե 60 էջ համառոտ և պատասխանատու է այսօրվա պահանջներին ու չափանիշներին: Մեր կարծիքով, նպատակավորեալ չի լինի աշխատության հայերեն լույսընծայումը:

Հայտնի է, որ ցայսօր սովետական (և ո՛չ միայն սովետական) պատմաբաններն իրենց հետազոտությունները նվիրում էին Նրկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին թուրքիայի արտաքին քաղաքականության ու միջազգային դրուրյան հարցերի ուսումնասիրությանը: Նրանք անդրադառնում էին նաև այդ երկրի ներքին քաղաքականությանը: Բայց ներքին դրության հանգուցային խնդիրների մասին հատուկ ուսումնասիրություն չկար: Այս բացը լրացնում է Բ.Կոնդակչյանի գիրքը: Հեղինակը նոր փաստերով ցույց է տալիս, որ մինչև Նրկրորդ համաշխարհային պատերազմը թուրք կառավարողները հեռացել էին սովետա-թուրքական նորմալ բարեկամական հարաբերություններից՝ աստիճանաբար մերժեցնելով մերթ Անգլիային ու Ֆրանսիային, մերթ ֆաշիստական Գերմանիային: Վերջին հաշվով թուրքիայի ներքին զարգացումն ընթանում էր հակասոցիալիստական հունով. արտաքին քաղաքականությունը ևս պետք է համապատասխաներ այդ զարգացման ընթացքին:

Պատահական չէ, որ ժողովրդահանրապետական կուսակցության վերանախավը բոլորովին չէր թաքցնում իր ուրախությունը սովետական երկրի վրա գերմանական ուխտադրոժ հարձակման առաջին շրջանի հաջողությունների առիթով: Նա տեղեղազին պատրաստվում էր պատերազմի՝ ընդդեմ Սովետական Միության, զարկ տալով երկրի ռազմականացմանը, զինելով մոտ մեկ ու կես միլիոնանոց բանակ: Մյայն սովետական սահմանի երկայնքով կենտրոնացված էին 26 դիվիզիաներ՝ հարմար առիթի սպասելով Անդրկովկասի վրա հարձակվելու: Այդպիսի արկածախնդրության համար ազդանշան էր հանդիսանալու Ստալինգրադի անկումը: Հեղինակը ցույց է տվել, թե ինչպիսի պատերազմական պլիխոզ էր արմատավորվել թուրքիայում: Այստեղ շեշտվում են պանթուրքական ծրագրերի աշխուժացման փաստը, թուրքական հսկայածավալ պետություն վերստեղծելու միտումների աշխուժացումը:

Բ.Կոնդակչյանը լույս է սփռել պանթուրքիզմի դրսևորումների վրա, մերկացրել դրա հետադիմական էությունը:

Ռազմականացման ծանր լուծը դրված էր աշխատավոր զանգվածների ուսերին: Ռազմականացումը հարվածեց ժողովրդի կենսամակարդակին, ավելի խորացրեց երկրի ֆինանսատնտեսական ճգնաժամը: Ընթերցողը վերստին

ականատես է թուրքական իրականությանը հատուկ այն երևույթներին, երբ պետական իշխանությունները բռնի միջոցներով ճանապարհ էին հարթում թուրք ազգային բուրժուազիայի տնտեսական զերիշխանությունը հաստատելու համար, ունենալով ազգային փոքրամասնությունների՝ հույն, հայ, հրեա բուրժուազիայի և աշխատավորների իրավունքները: Ըստ էության, շարունակվում էր երկտրորբերի նախաձեռնած՝ երկրի տնտեսական թուրքացման քաղաքականությունը, սակայն այլ ձևերով, քողարկված մեթոդներով, «ունեցվածքի մասին» օրենքներ հրապարակելով: Բ.Կոնդակչյանին հաջողվել է համոզիչ կերպով ցույց տալ թուրքական ռեակցիայի դիրքերի ամրապնդումը պատերազմի ժամանակ և դրա ավարտին, այդ կատարվում էր դեմոկրատական ուժերի շահերի ունենահարման, ժողովրդի ստրկացման հետագա խորացման հաշվին:

Գրքում բացահայտված է թուրքական ոստիկանական ռեժիմի պատկերը: Ճիշտ է, հեղինակը փորձում է ցույց տալ երկրում սրված դասակարգային ու ազգային հակասությունների հետագա խորացումը, բայց թուրքական առաջադիմական ուժերի սահմանափակ հնարավորությունները թույլ չեն տալիս ծավալվել նրան: Հարուստ է Բ.Կոնդակչյանի օգտագործած նյութերի, աղբյուրների հենքը: Մեծ թվով նյութեր գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ: Կարծում ենք, այս աշխատության հայերեն հրատարակումն անհրաժեշտ է:

Չենք տարակուսում, որ այս քայլերին, հաջողված հրապարակումներին կհաջորդեն նորերը, և մեր թուրքագետները հանդես կգան ո՛չ միայն հետազոտական ուսումնասիրություններով, այլև հրապարակախոսական հանրամատչելի հոդվածներով: Մեր արևելագետները մշտապես պետք է հետևեն թուրքական պատմագիտական, քաղաքագիտական ու միջազգային թեմաներով լույս տեսնող գրքերին, անդրադառնան դրանց մեր մամուլի էջերում:

Արդեն կատարվածը հիմք է տալիս՝ լավատեսորեն սպասելու նոր հրապարակումների, նոր ուսումնասիրությունների ու գրքերի:

ՀԱՋՈՂՎԱԾ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ¹

Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը լույս ընծայեց ՍՄՀՄ պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկ Ղազարյանի «Հայ հասարակական-քաղաքական շարժումները 1850-60-ական թվականներին և Ռուսաստանը» մենագրությունը², որը հեղինակի շուրջ երկու տասնամյակի հետազոտության արդյունք է: Այս մենագրությանը նախորդել են նրա գրչին պատկանող «Գրիգոր Չիլինկիյան»³, «Մաթևոս Մամուրյան»⁴, «Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ.» աշխատությունները, ՀՍՄՀ Գ-Ա Մամուկ Աբեղյանի⁵ անվան գրականության ինստիտուտի հրատարակած «Հայ նոր գրականության պատմության» երկրորդ և երրորդ հատորներում զետեղված երեք բաժինները, ՀՍՄՀ Գ-Ա պատմության ինստիտուտի հրատարակած «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի չորրորդ, այնուհետև ինճեբրդ հատորի արևմտահայ հատվածի պատմության շարադրանքը:

Հեղինակի վերոհիշյալ աշխատությունների մասին մամուլում լույս են տեսել բազմաթիվ գրախոսականներ, որտեղ ըստ արժանվույն գնահատելով կատարվածը, հայտնվել են նաև կարծիքներ, արվել դիտողություններ, որոնք հաշվի են առնվել գրախոսվող մենագրությունը ստեղծելիս: Անհրաժեշտ է ար-

¹ Կիրակոսյան Ջ. Հաջողված մենագրություն // «Սովետական Հայաստան» (Ե.), 1980, 11 մարտի:

² Казарян Г.М. Армянское общественно-политическое движение в 50-60-х годах XIX в. в Россия, Е, 1979, 384 с.

³ Գրիգոր Չիլինկիյան (1839-1923), հրապարակախոս, խմբագիր, թարգմանիչ, հասարակական գործիչ, հրատարակել է «Ճաղիկ» (Ջմյուռնիա) հանդեսը, «Ջմյուռնիական մամուլակնի», «Ռուդեոթյուն ի Կոստանդնուպոլիս» երկերի, «Լիպակներ և ցան ու ցիր գրվածներ» ժողովածուի հեղինակ - Ա.Վ.:

⁴ Մաթևոս Մամուրյան (1830-1910), հրապարակախոս, գրող, թարգմանիչ, բանասեր, պատմաբան, մանկավարժ, հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսներից, 1871-1901 թթ. հրապարակել է «Արևելյան մամուլ» (Ջմյուռնիա) հանդեսը, «Սև լեռին մարդը» վեպի, «Հայկական մամուլակնի», «Անգլիական մամուլակնի կամ հայու մը ճակատագիրը», ժողովածուների, «Համառոտ ընդհանուր պատմություն դպրոցաց համար», «Համառոտ պատմություն Հայոց մինչև մեր օրերին» դասագրքերի հեղինակ - Ա.Վ.:

⁵ Մամուկ Աբեղյան (1865-1944) - բանասեր, բանագետ, լեզվաբան, գրականագետ, փիլ. և բան. գիտ. դ-ր, ՀԽՍՀ Գ-Ա ակադեմիկոս, ԵՊՀ իմնադիր դասախոսներից, հայ նոր բանագիտության իմնադիրներից, վերականգնել է հայ հին առասպելաբանության և ժողովրդական հավատալիքների ամբողջական համակարգը, «Ազգային վեպ», «Հայ ժողովրդական վեպը», «Հայ ժողովրդական հավատալիքը», «Հայ վիպական բանահյուսություն», «Հայոց հին գրականության պատմություն», «Հայոց լեզվի տաղաչափություն», «Աշխարհաբարի շարահյուսություն», «Հայոց լեզվի տեսություն» ուսումնասիրությունների հեղինակ - Ա.Վ.:

ժանագրել նաև, որ գրախոսվող մեծագրությունը հեղինակի ռուսերենով իրատարակած առաջին զիրքն է և, ընդհանրապես, պտորելնը բազմակողմանիորեն քննող ռուսերեն առաջին աշխատությունը, որը սովետական լայն շրջաններին բազմակողմանի պատկերացում է տալիս հայ ժողովրդի պատմության մի շատ կարևոր ժամանակահատվածի՝ 19-րդ դարի 50-60-ական թթ. վերաբերյալ:

Աշխատությունը քաղկացած է ներածականից, երկու բաժիններից, որոնք ընդգրկում են շարադրանքի հինգ գլուխները: Մեծագրության մեջ զետեղված են շուրջ քառասուն նկարներ, անգլերենով գրված ծավալուն ամփոփում, որը գրքի բովանդակությանը ծանոթացնում է օտար ընթերցողին:

Ընդարձակ ներածականում պրոֆ. Հ.Ղազարյանը հետադարձ հայացքով անդրադառնում է հայ-ռուսական հարաբերությունների վաղեմի անցյալին, ցույց տալիս Ռուսաստանի կատարած դերը հայ ժողովրդի ճակատագրում, բարձր գնահատում Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման ակտի բախտորոշ նշանակությունը: Նա Հայաստանի արևելյան հատվածի զարգացման հետագա ընթացքը հակադրում է Արևմտյան Հայաստանի ճակատագրին և համզում գիտական ու քաղաքական ճիշտ եզրահանգման, որն է՝ եթե արևելահայությունն այնուհետև Ռուսաստանի հովանու ներքո քունց զարգացման ճանապարհ, երկիրը դարձրեց համայն հայության հանգրվանը, ապա սուլթանական Թուրքիան իր վարած ջարդարաբական քաղաքականությանը աստիճանաբար մաշեց հայ բնակչությունը, ոչնչացրեց արևմտահայությունը: Գրքում իրավացի ու դիպուկ քննադատություն կա ժամանակակից բուրժուականացումն այն պատմաբանների հասցեին, որոնք կեղծում են հայ ժողովրդի նոր պատմությունը և փորձում արդարացնել իրենց նախորդների մարդասոց տեսություններն ու գործողությունները:

Աշխատության առաջին բաժնում շարադրված է հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքի պատմությունը 1830-1860-ական թթ.: Հեղինակն օգտագործելով սովետական պատմաբանների աշխատությունները, հիմնականում արխիվային նորահայտ վավերագրերի ընձեռած փաստերի հիման վրա կարողացել է ցույց տալ Ռուսաստանին միանալուց հետո Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքում կատարված տեղաշարժերը:

Արևմտահայերի տնտեսական կյանքի և քաղաքական իրավագուրի վիճակի պատմությունն ավելի հանգամանորեն է ներկայացվում ընթերցողին: Մեծագրության մեջ ցույց է տրվում, որ 19-րդ դարի 30-40-ական թթ. սուլթանական Թուրքիան կարողացավ հպատակեցնել կամ ոչնչացնել կենտրոնախույս ուժերին, վերացրեց քրդական դերբեյությունները, երկիրը վարչական նոր բաժանման ենթարկեց, փոփոխություններ մտրեց ագրարային հարաբերությունների մեջ, սակայն ժողովրդի, հատկապես քրիստոնյա ազգերի սոցիալ-քաղաքական կացությունը մնաց անփոփոխ ու դժոխային:

Սկզբնաղբյուրների, հատկապես Մովսեսական Միության բազմաթիվ արխիվներից քաղված նոր վավերագրերի հիման վրա շարադրված է

արևմտահայերի վճարած հարկերի պատմությունը, ցույց են տրված հայ ժողովրդի կրած ազգային ճնշումները, միաժամանակ ներկայացված են հայկական ու հայաբնակ քաղաքներն իրենց առևտրական, արհեստագործական ու արդյունաբերական կյանքով: Փորձ է արվել ճշգրտելու արևմտահայ բնակչության թվաքանակն անցյալ դարակեսին, որից առավել ուշագրավ են քաղաքային հայ բնակչությանը վերաբերող տվյալները: Այս բաժնում ավելի արժեքավոր և հետաքրքիր են Թուրքիայի հայ գաղութներին, մասնավորապես Կ.Պոլսին ու Ջնյուտնիային նվիրված էջերը, որոնք կարող են հետաքրքրել արևելագետներին մասնավորապես: Հատուկ ենթավերնագրով, սեղմ շարադրանքով տրված է արևմտահայերի «Ազգային սահմանադրության» պատմությունը: Աշխատության արժանիքներից մեկն էլ այն է, որ հեղինակը շարադրում է հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական կյանքի պատմությունն ընդհանրապես՝ ընդգրկելով Հայաստանի երկու հատվածները, ինչպես նաև գրեթե հայկական բոլոր գաղթօջախները:

Մեծագրության երկրորդ ընդարձակ բաժինը նվիրված է 1850-1860-ական թթ. հայ ազգային-ազատագրական շարժումներին, ինչպես նաև հասարակական-քաղաքական հոսանքների պատմությանը:

Գրքի այս բաժնից ընթերցողը լիակատար պատկերացում է ստանում քաջարի Չելթումի դարավոր պայքարի, հատկապես 1862 թ. ապստամբության մասին: Հեղինակը մանրամասնորեն նկարագրել է հերոսական այդ դրվագի հանգամանքները, խնդրի լուսաբանման մեջ կատարել որոշ ճշգրտումներ, ամոքադարձել ապստամբության համազգային և միջազգային արձագանքներին: Աշխատության մեջ առաջին անգամ ռուս ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում Վանի 1862 թ., Մուշի 1863 թ., Չարսանջակի 1865 թ. և Քղիի 1863-1872 թթ. ժողովրդական շարժումների պատմությունը, շարժումներ, որոնք ուղղված էին ոչ միայն սուլթանական բռնապետության, այլև քուրդ և թուրք վերնախավի դեմ: Հեղինակի իրավացի եզրահանգումն այն է, որ Արևմտյան Հայաստանում ծավալված այդ շարժումները Չելթումի ապստամբության արձագանքներն էին և վերջինիս օրգանական շարունակությունը: Պրոֆ. Հ.Ղազարյանն արևմտահայ և արևելահայ հատվածների ազատագրական մաքառումները տեսնում է միասնության մեջ, քացահայտում նրանց հատուկ բնորոշ կողմերը, բնութագրում ժամանակի հայ հասարակական-քաղաքական հոսանքներն ու նրանց գլխավոր ներկայացուցիչներին: Անտարակույս, ռուս ընթերցողի համար հետաքրքիր կլինի ծանոթանալ արևմտահայ դեմոկրատներ Ստեփան Օսկանյանի, Մատթևոս Մամուրյանի, Հարություն Սվաճյանի¹, Գրիգոր Չլիինկիրյանի, Սեբուլբե Թազվոռյա-

¹ Հարություն Սվաճյան (1831-1874), հասարակական-քաղաքական գործիչ, գրող, հրապարակախոս, երգիծաբան, հիմնադրել և խմբագրել է «Մեղու» (Կ.Պոլիս) համոեցը, մասնակցել է Ազգային սահմանադրության մշակմանը, Կ.Պոլսի Հայոց բարեգործական ընկերության հիմնադիրներից, նրա «Արիք Հայկազունք» քանաստեղծությունը դարձել է Ազգային սահմանադրության հիմնը, «Հայաստան Մայր»

նի¹ և այլոց քաղաքական-տնտեսագիտական, փիլիսոփայական հայացքներին, Մ.Նալբանդյանի միջոցով ռուս հեղափոխական ղեմնկրատներին և արևմտահայ առաջադեմ գործիչների գաղափարական առնչություններին:

Հեղինակը ցույց է տալիս հայ ժողովրդի կյանքում առաջադիմական Ռուսաստանի, ռուս ժողովրդի խաղաղամտ քախտորոշ դերի, երկու Ռուսաստանի, ռուսական երկու կուլտուրայի, ապագա ռուսական հեղափոխության միջազգային նշանակության ընկալումներն արևմտահայ գործիչների կողմից:

Գրքում բազմաթիվ նոր փաստեր են բերվում այն մասին, թե ինչպիսի դրվատական խոսքեր է գրել Կ.Մարքսի անձի ու գործի մասին Մ.Մամուրյանը «Արևելյան մամուլ» ամսագրում, ինչպես է նա ընթերցել Առաջին ինտերնացիոնալի դերը Եվրոպայի և Ասիայի ժողովուրդների քաղաքական կյանքում: Մ.Մամուրյանը համակրական հոդվածներ է գրել Ավգուստ Բեքեի², Լասալի³ ու սոցիալիստական շարժման այլ գործիչների մասին: Մ.Մամուրյանն անողորք էր Օսմանյան կայսրության խոցերի քննադատության մեջ:

Մ.Մամուրյանն անգլիական գաղութային քաղաքականության հետևողական քննադատն էր: Նա քաջատեղյակ էր Լոնդոնի խորամանկ խաղերին, նրա պրոտրոքրական դիվանագիտությանը, հակահայկական գործողություններին: Մասնավորապես ուշագրավ է 1878 թ. Բեռլինի կոնգրեսում մեծ տերությունների հետապնդած շահախնդիր նպատակների բացահայտումն ու դատապարտումը Մ.Մամուրյանի կողմից:

Գրքում հետաքրքրական փաստեր են հիշատակվում արևմտահայ գործիչների կողմից ռուս գրողներ Պուշկինի, Լերմոնտովի, Տուրգենևի և այլոց ստեղծագործությունների հայերեն առաջին թարգմանությունների մասին:

Մենագրության մեջ բազմաթիվ էջեր են նվիրված Մ.Նալբանդյանի հեղափոխական գործունեության պատմությանը: Իհարկե, Մ.Նալբանդյանի մասին շատ է գրվել, սակայն այստեղ Հ.Ղազարյանը ռուս ընթերցողին ներկայացրել է նրա կապերը Լոնդոնի և Պետերբուրգի ռուս հեղափոխական ղեմնկրատների հետ, հատկապես բացահայտել է արևմտահայ ղեմնկրատների գաղտնագիր կապերն իտալական ազգային-ազատագրական շարժման ղե-

պոնմի, «Ջարինքա» վիպակի, «Առանձար Ամատունի» ողբերգության, «Մարմնություն» քաղաքական պամֆլետի հեղինակ - Ա.Կ.:

¹ Մերովրե Թագվորյան (1829-1883), հրապարակախոս, լեզվաբան, հասարակական գործիչ, 1862-ին կազմակերպել է «Հայկ» ընկերությունը, որը նյութական և բարոյական աջակցություն է ցուցաբերել Ջեյրումի ապստամբներին, մշակել է զինված ապստամբության ծրագիր, մասնակցել է «Մեր» մատնական օրյակի հիմնադրմանը, որը Արևմտյան Հայաստանի ազատագրության համար պայքարող գաղտնի կազմակերպություն էր - Ա.Կ.:

² Ֆերդինանդ Ավգուստ Բեքեի (1840-1913) - գերմանական և միջազգային քանվորական շարժման գործիչ, սոցիալ-դեմոկրատ - Ա.Կ.:

³ Ֆերդինանդ Լասալ (1825-1864) - գերմանացի փիլիսոփա, իրավաբան, տնտեսագետ և քաղաքական գործիչ, գերմանական սոցիալ-դեմոկրատիայի հիմնադիրներից - Ա.Կ.:

կավարների, մաս Լոնդոնի ռուս պրոպագանդիստների հետ: Նոր և արժեքավոր են աշխատության այն հատվածները, որոնք նվիրված են Մ.Նալբանդյանի և արևմտահայ առաջավոր գործիչների ունեցած հանդիպումներին: Ճիշտ է նկատվում, որ այդ գործիչները գաղափարական առաջնորդի անձն ու գործը հետադեմ հակառակորդներից պաշտպանեցին ոչ միայն նրա կենդանության օրոք, այլև մահվանից հետո:

Ընդհանուր առմամբ հաջողված աշխատության մեջ տեղ են գտել որոշ անճիշտ ձևակերպումներ, մաս կրկնություններ ու թերասացություններ:

Գրքում հիշատակվում են հայ ընթերցողին ծանոթ բազմաթիվ գործիչներ, դեմքեր, դեպքեր: Բայց դրանց մասին ռուս ընթերցողին ավելի սպառնիչ պատկերացում տալու համար գործը շատ ավելի կշահեր, եթե արվեին համապատասխան ծանոթագրություններ: Բացատրությունների կարիք են գզում մաս մասնագիտական որոշ տերմիններ:

Նշված թերությունները սակայն բոլորովին ստվեր չեն ձգում գրքի անվիճելի արժանիքների վրա:

**ՆԵՇԻՂԵ ՔԵՐԵՄ ԴԵՄԻՐ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԹՈՒՐԻԱՅՈՒՄՄ.
ՍՊԱՆՎԱԾԻ ՊԱՏԱՄՆՆԵՐԸ ԻՐ ՄՈՐԸ¹**

1977 թ. մենք անդրադարձանք թուրք հեղինակներ Դեվլիորմանի, Յալընի և ուրիշների Հայկական հարցի պատմությանը նվիրված գրվածքներին՝ ցույց տալով պատմությունը կեղծելու նրանց հետևողական միտումը²:

Ինչպես այդ, այնպես էլ այս նոր հրատարակությունում իշխողը անբարեխղճությունն է, հակազիտականությունը:

Հայկական գրգռիչ կեղծագրերի հրատարակումը Թուրքիայում դրված է պետական հիմքի վրա: Մեկը մյուսի հետևից լույս են տեսնում պատմության իրադարձությունները, դեպքերը կեղծ հայելու մեջ ներկայացնող գրքեր, որոնք թուրք երիտասարդությանը մացիոնալիզմի, հակակոմունիզմի ոգով դաստիարակելու նպատակ են հետապնդում:

1976 թ. Անկարայում լույս է տեսել գրող, ուսուցչուհի Նեշիղե Քերեմ Դեմիրի «Հայկական հարցը Թուրքիայում. սպանվածի պատմածները իր մորը» գիրքը:

Ինչպես տեսնում ենք վերնագրից, հեղինակը ընտրել է իր ասելիքը մատուցելու մի ուրույն ձև: Գրքի շարադրանքից պարզվում է, որ 1974 թ. Կալիֆոռնիայում, Մանտա Բարբարա փողոցի Գուրգեն Յանիկյանի³ ձեռքով սպանված երկու թուրք դիվանագետներից մեկը իր մորը անդրշիրիմյան աշխարհից պատմում է իր սպանության պատճառների, հայ ժողովրդի «ամնարդկային, զգվելի» գծերի մասին:

Գրքի առաջաբանը գրված է Լուս Անջելեսի թուրքական հյուպատոսարանի սպանված հյուպատոս Մուսավիհի Բահայր Դեմիրի մոր անունից: Ինչպես երևում է գրքի հետագա շարադրանքից, հակահայկական կեղծագրեր պատրաստելու տարիների փորձ ունեցող մի որոշակի կազմակերպություն - կարող էր միայն թիսել մի այսպիսի նողկալի գրվածք:

¹ Կիրակոսյան Ջ., Քոչար Մ. Neside Kerem Demir. Türkiye'de Ermeni meselesi: bir sehîit anasina tarihîni sôyledikleri, Ankara, 1976 // «Բանքեր Երևանի համալսարանի» (Ե.), 1980, N 2, էջ 189-191:

² Տե՛ս Կիրակոսյան Ջ., Քոչար Մ. Ժամանակակից թուրք հեղինակները հայերի և հայկական հարցի մասին: Ե.: ՀՍՍՀ ԳԱ Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոն, N 3, 33 էջ: Նույնը՝ «Զարթոնք» (Բեյրութ) - 17, 18 նոյեմբերի - Ա.Կ.:

³ Գուրգեն Յանիկյան (1895-1984), ծնվել է Կարինում, սովորել է Ժնևում, Նոր Նախիջևանում, Թիֆլիսում, հայկական կամավորական 2-րդ ջոկատի կազմում մասնակցել է Կովկասյան ռազմաճակատի մարտերին, 1929-1930 թթ. Հյուսիսային Կովկասում աշխատանք է կատարել հոգուտ սովյակների, ապրել է Իրանում, այնուհետև՝ ԱՄՆ-ում, 1973 թ. Կալիֆոռնիայի Մանտա Բարբարա քաղաքում սպանել է Թուրքիայի հյուպատոսին և նրա օգնականին, դատապարտվել է ցմահ բանտարկության - Ա.Կ.:

Նախ՝ քրքրուի հեղինակը ճշմարտախոս լինելու, խաղաղասեր մնալու, հայերի արյունը չոթելու խոստում է տալիս, որպեսզի հետո ամեն քայլափոխի դրժի իր խոսքը, ատելություն ու թշնամանք սերմանի երկու ժողովուրդների միջև:

Նա կատաղի չարությամբ է խոսում Մայր Առյուծի՝ «Ճանապարհորդություն դեպի Արարատ» գրքի մասին: Նրան դուր չի գալիս, որ Մայր Առյուծը այցելել է Մովսեսական Հայաստան, ուսումնասիրել պատմական ճշմարտությունները և դրանց մասին պատմել աշխարհին: Թրքոսի հեղինակը այս գրքից կարծես թե ավելի շատ է նյարդայնացել, քան որդու կորստից և հայտարարում է. «Ժամանակը եկել է, որ բացենք աշխարհի ակամջները և խոսենք թուրքի բերանով»:

Գիրք-կեղծազիրը բաղկացած է երեք մասից:

Առաջին մասում հեղինակը նպատակ է հետապնդում սևացնել հայոց պատմությունը, հայ ժողովրդին վերագրել վատ գծեր, թուրքերին օժտել բարեմասնություններով ու առաքինություններով: Նա առանձնակի կրքոտությամբ հիշատակում ու դավատում է այն տիրակալներին, որոնք վերացրել են հայոց թագավորությունները, հայերին ցրել հեռավոր երկրներ: Այս նպատակով նա խորատուվում է պատմության խորքերը՝ հռոմեական, բյուզանդական ու պարսկական տիրապետության ժամանակները, սելջուկյան ու օսմանյան ասպատակությունների դժնի դարերը: Հեղինակը հայերին մեղադրում է և՛ Քաղկեդոնի ժողովի համար, և՛ այն բանի համար, որ 20-րդ դարի սկզբին Ստամբուլի հայկական մի թաղամասում ծագած հրդեհի ժամանակ հայոց տներից 40 դաշնամուր էին փողոց դուրս բերել: Թրքոսին հենվում է Էսադ Ռյրասի, Ռուքիչինիի, Էլիզե Ռեվկուի² և այլ հեղինակների ասույթների վրա և փորձում ցույց տալ հայերի համար «Օսմանյան կայսրությունում եղած կրոնի ազատությունը», «կյանքի ապահով պայմանները»: Նա թվարկում է թուրքական պետական ծառայության մեջ բարձր պաշտոնների հասած հայազգի մարդկանց անուններ, խոսում նրանց նկատմամբ թուրքական մեծահոգության մասին, հայտարարում, թե «աղայությունը և թույլերի պաշտպանությունը թուրք ազգի բնավորությունն էր», Կ.Պոլիսը շփոթում գավառի կիսավայրենի կացության հետ և, ընդհանրապես, օսմանյան դժոխային իրակամությունը ներկայացնում որպես մի դրախտ հայ ժողովրդի համար: Նա Թուրքիան հռչակում է «փրկարար երկիր»՝ հպատակ ժողովուրդների համար, թուրքերին՝ «բարձրաստիճան, մեծահոգի ժողովուրդ», իսկ հպատակ սլավոնների ու արաբների, հայերի ու մյուսների հասցեին ցեխ չլարում: Գրքում կարդում ենք, թե իբր սուլ-

¹ Մայր Առյուծ Կրոսեր (ծնվ. 1930), հայ գրող, գրում է անգլերեն, «Պատե-րագնական ընդհանուր սենյակ», «Աբսորականներ», «Հայկական մի դատավճիռ», «Ուղևորություն դեպի Արարատ», «Երեսուն վայրկյան», «Լուսանկարչական ապարատի ժամանակաշրջանը» երկերի հեղինակ - Ա.Կ.:

² Ժակ Էլիզե Ռեվկու (1830-1905), ֆրանսիացի աշխարհագրագետ և պատմաբան - Ա.Կ.:

քանները հայերին շնորհել էին «սոցիալական բոլոր ազատությունները», թե վերջիններս օգտվում էին «հանգիստ ու խաղաղ կյանքի պայմաններից»։ Ահավասիկ թուրք գրողի ու ուսուցչուհու խոստացած ճշմարտախոսության գոհարները։ Պատմության իրողությունների փաստաբանի ու մեկնաբանի դերն ստանձնած թուրք ուսուցչուհին առանձին թշնամաբով է խոստում հայոց ազատագրական քաղաքների, նրանց առաջին մարտումների, Խրիմյան Հայրիկի գործունեության մասին։ Նա դժգոհում է, որ հայոց թեթեթեր հիմնադրվեցին, որ նրանց էջերում «հեղափոխություն ու անկախություն էին քարոզում», որ քատրոնների բեմերից ինքնուրույնության ու ազատության սեր էին արթնացնում հայ մարդկանց հոգում։

Գրքի երկրորդ մասն ամբողջապես ներծծված է ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը սև գույներով ներկայացնելու, ամենաթունդ հակառուսականության ոգով։ Ռուսաստանի օգնությունը սլավոններին ու հայերին պատկերացվում է իբրև չարիք։ Նա փորձում է Հայկական հարցը ներկայացնել որպես ռուսական կրեատուրա, որը ծառայելու էր Ստամբուլին տիրելու, Միջերկրական ծով դուրս գալու ցարիզի պլաններին։ Թրքուսին շփոթում է եվրոպական տերությունների իմպերիալիստական քաղաքականությունը և ճնշված ժողովուրդների հակաթուրքական ազգային-ազատագրական պայքարը։ Այդպիսի դիրքերից է նա քննարկում 1878 թ. Սան Ստեֆանոյի ու Բեռլինի պայմանագրերը, նրանցում Հայաստանին նվիրված հոդվածները։ «Հայկական հարցը մեջտեղ բերելով, նրանց միակ նպատակն էր կործանել օսմանյան Թուրքիան» - հայտարարում է Նեշիդե Դեմիրը։

Այնուհետև նա անդրադառնում է հայկական կոմիտեների գործունեությանը, ազգային կուսակցություններին վերագրում ռուսական պետականության քաղաքականությանը ծառայելու առաքելություն, հետո ավելացնում, թե «ռուսները հայերի հավատարմությանը երբեք չեն հավատացել և ամեն կերպ ի շահ իրենց օգտագործել են նրանց, ենթարկելով բնաջնջման»։ Ահա թե ինչպիսի հրեշավոր ձև է ընդունում պատմության աղավաղումը։ Եվ հետո, գրքի մյուս էջերում հեքիաթաման պատմությունների միջոցով թուրք ընթերցողին առատությամբ սուտ ու պատիր քաներ են հրամցվում, նրան տոգորում մարտաշունչ ազգայնականությամբ, անսահակալ թշնամանքով հայերի նկատմամբ։ Գրքում կարդում ենք. «Հայերի նպատակն էր աշխարհի վրայից ջնջել թուրքերին և ստեղծել հայկական պետություն»։ Ահավասիկ նման մարզանքներից մի տիպիկ օրինակ։ Մյուս կողմից, գրքի էջերում այն միտքն է անցկացվում, այն էլ հետևողականորեն, թե իբր Ռուսաստանում հայերի վիճակն ավելի վատ է եղել, քան արդուկամայան Թուրքիայում։ «Հայերը չէին գիտակցում, որ Թուրքիայի տիրապետությունն իրենց համար ավելի շահավետ էր, քան Ռուսաստանինը»։ Ըստ հեղինակի, հայերը Թուրքիայում մշտապես «պատվի ու հարգանքի են արժանացել», «մուսուլմանական կրոնը միշտ էլ հենու է մնացել շովինիստական քաղաքականությունից»։ Այս դեպքում ապա ու՞ր անհետացան մտտ երեք միլիոն հայերն այն երկրից։ Այս մասին հեղինակ

կը լրում է: Նրա լկտիությունը հասնում է այնտեղ, որ 1909 թ. Աղանայի հայերի կոտորածը վերագրում է Ռուսաստանի քայքայիչ գործունեությանը: «Ռուսները, - գրում է հեղինակը, - վաղուց ի վեր փայփայում էին հայերի ապստամբությունը Աղանայում»: Նա ժխտում է հայերի զանգվածային կոտորածի փաստը, փորձում ապացուցել, թե ավելի շատ իբր տուժել են թուրքերը:

Գրքի էջերում ամբողջապես ծուռ հայելու մեջ է ներկայացված Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմտահայության նկատմամբ կատարված համապարփակ ոճրագործությունը:

Հեղինակը դժգոհ է, որ Ստ.Շահումյանի ամունով մավ կա Սև ծովում և, անդրադառնալով 1918 թ. դեպքերին, Շահումյանին վերագրում է անզվիացիների հետ համագործակցելու սուտը, թուրքերին կոտորելու գործը գլխավորելու հրեշավոր կեղծիքը:

Խոսելով Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած արյունոտ դեպքերի մասին՝ հեղինակը լրիվ շուռ է տալիս դեպքերի պատկերը, մեղավորների ու անմեղների դերերը: «Հայերի կատարած չարագործությունները Արևելյան Անատոլիայում աշխարհի պատմության մեջ պետք է մնան որպես սև էջեր», - անամոթաբար հայտարարում է թուրք ուսուցչուհին: Անդրադառնալով 1917 թ. Հոկտեմբերին հեղափոխությանը, Սովետական Ռուսաստանի արտաքին քաղաքականության հարցերին՝ հեղինակը փորձում է խճողել հանրահայտ ճշմարտությունները, սովետական իշխանությունը վերագրում է էքսպանսիոնիզմ, Թուրքիան նվաճելու ձգտումներ, թուրքական պետականությունը վերացնելու նպատակներ: Նա առանձնակի շարությամբ է խոսում Չիչերինի հասցեին, նրան վերագրում է Թուրքիայից արևելյան վիլայեթները խլելու ցանկություն: Այս կեղծիքների համար հեղինակին որպես աղբյուր են ծառայել հակասովետական հայացքներով հայտնի ազգայնական Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Բեքիր Սամիլ-բեյի հայտարարությունները, Մոսկվայում թուրքական նախկին դեսպան Ֆուադ Ալի-փաշա Ջեքետայի հուշերը և այլ տեղեկեցիոզ գրվածքներ: Թուրք ուսուցչուհին պաշտպանության տակ է առնում հայ ժողովրդի դափն Թալեաթին:

Գրքի երրորդ մասը վերնագրված է՝ «Հայերի կողմից կատարված կեղեքումները Երզրումում և նրա շրջաններում»: Այս բաժինը մախրոդների օրգանական շարունակությունն է. առարկայագուրկ պնդումներ, պատմական փաստերի աղավաղումներ, հայատյաց հայտարարություններ: Օրինակ՝ 1918թ. դեպքերը, թուրքական ինտերվենցիան այնպիսի գույներով են նկարագրված, որ կարծես մեղավոր են բոլորը, բացի թուրքական մարդասպան ագրեսորներից: Լրջության և ոչ մի հետք: Ամբողջ կեղծիք է:

«Վերջին խոսքում» բրբռուի հեղինակը ցեղասպանություն կազմակերպելու մեջ մեղադրում է հայերին, փորձում է պաթետիկ հայտարարությունների միջոցով նվաճել պատմությանն անժանոթ թուրք ընթերցողների համակրանքը: Նա եզրակացնում է. «Շն կարող են զենք վերցնել ձեռքս, սպանել եր-

կու հայ և ձեռք բերել «Փաջ մայր» մականունը: Բայց ես դիմեցի այլ ուղու, օբյեկտիվորեն նկարագրեցի ամբողջ պատմությունը՝ մարդկությանը ցույց տալով իրողությունը: Եվ եթե մենք կուլ տանք մեր ազգի նկատմամբ կատարված բոլոր կեղեքումները և լույս աշխարհի չհանենք դրանք, ապա մեզ սպասում է դառը ճակատագիր: Չարթնեցե՛ք»:

Հիրավի, հարկավոր է թուրք ընթերցողին զարթնեցնել ճշմարիտ գրվածքներով, ժողովուրդների միջև բարեկամություն հաստատելու անհրաժեշտության մասին ճշմարիտ խոսքով: Իսկ այսօրվա թուրքիայում հրատարակվող գրքերով ցանկանում են բորբոքել ազգամիջյան ատելությունը, հայերի դեմ տրամադրել թուրք ժողովրդի նոր սերունդին:

**ПИСЬМО
ЗАМЕСТИТЕЛЮ МИНИСТРА ИНОСТРАННЫХ ДЕЛ СОЮЗА ССР
ТОВ. В.Ф.СТУКАЛИНУ¹**

Глувокоуважаемый Виктор Федорович!

В 1977 г. из внутренних провинций Турции одновременно в город Стамбул прибыло 500 армян-крестьян. Патриарх армян Турции, архиепископ Галустян, в начале 1979 г. обратился к нам с просьбой репатринировать этих армян в Армянскую ССР на постоянное жительство.

По поручению Совета Министров республики 12 апреля 1979 г. за №. 46 с письмом я обратился к первому заместителю министра иностранных дел СССР тов. В.Ф.Мальцеву² с просьбой дать указание послу СССР в Турции сообщить свое мнение о возможности репатриации вышеуказанных армян в Армянскую ССР.

12 мая 1979 г. за №. 302/осв генеральный секретарь МИД СССР тов. И.Ежов³ на наш запрос письменно сообщил, что по мнению посольства СССР в Турции, лица армянской национальности, желающие выехать из Турции на постоянное жительство в СССР, могут оформить свои ходатайства в полном соответствии с существующими правилами репатриации, включая получения ими разрешения турецких властей на отъезд из страны.

Очувтившись в тяжелом материальном положении и не находя другого пути, часть этих армян переехала в Сирийскую Аравскую Республику и оттуда по каналу туризма прибыла в Армянскую ССР с целью принять гражданство СССР и остаться в СССР на постоянное жительство. К настоящему времени из САР прибыло 242 человека. Они обратились в республиканские органы с ходатайством о приеме в гражданство СССР и об оставлении их в Армянской ССР на постоянное жительство. Им предоставлено жилье, все они уже трудоустроены. Решается вопрос об их приеме в гражданство СССР. По имеющимся у нас данным, в настоящее время в САР прибыла из Турции другая группа армян, которая также желает переселиться в Армянскую ССР на постоянное жительство.

¹ ՋԿԱԱ, Ջոն Կիրակոսյանի նամակը ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարի տեղակալ Վ.Ֆ.Ստուկալինին, 1980, հոկտեմբեր, մեքենագիր: Վիկտոր Ստուկալին (ծնվ. 1927), խորհրդային դիվանագետ, ԽՍՀՄ գլխավոր հյուպատոս Կարաչիում (1966-1969), արտգործնախարարի տեղակալ (1980-1985), դեսպան Հունաստանում (1986-1988), Ա.Կ.:

² Վիկտոր Մալցև (1917-2003), խորհրդային դիվանագետ, ԽՍՀՄ դեսպան Եվրոպայում (1967-1971), Ֆինլանդիայում (1971-1973), Հնդկաստանում (1974-1977), ՅՍՖՀ-ում (1986-1988), արտգործնախարարի 1-ին տեղակալ (1977-1986) - Ա.Կ.:

³ Իգոր Եժով (1953-2011), խորհրդային և ռուս դիվանագետ, Պարագվայում Ռուսաստանի դեսպան (2008-2011) - Ա.Կ.:

Как известно, постановлением Совета Министров СССР от 9 августа 1966 г. No. 624-119 Советской Армении предоставлено право ежегодно из зарубежных стран принимать на постоянное жительство до 1000 армян. До последнего времени основная масса армян в порядке репатриации прибывала из Ирана. В связи с событиями в Иране почти прекратилась репатриация из этой страны.

С учетом вышензложенного, прошу Вас дать указание посольству СССР в САР и генеральному консулу СССР в Алеппо оказать содействие в организации переселения в СССР на постоянное жительство семей-армян из-за границы, предусмотренной постановлением Совета Министров СССР от 9 августа 1966 г. No. 624-119.

При необходимости, в помощь посольству СССР, правительство республики может временно направить в САР своего представителя.

Дж.С.Киракосян

ԵՆՈՒՅԹ ՓԱՐԻԶՈՒՄ՝ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 60-ՐԴ ՏԱՐԵՂԱՐԶԻ ԱՌԻՅՈՎ՝

Մենք եկել ենք բարեկամական Ֆրանսիա, այստեղ՝ Փարիզում, ֆրանսիացի մեր բարեկամների հետ միասին տոնելու Սովետական Հայաստանի 60-ամյակը, մեր ժողովրդի վերածնության մեծ տոնը: Տասնամյակներ, հարյուրամյակներ շարունակ մեր ժողովուրդը, հայ մարտիկները կռվել և պայքարել են մեր ժողովրդի ազատության, ինքնուրույնության, անկախության համար: Այդ պայքարը եղել է շատ դժվարին ու դաժան, ունեցել ենք մեծագույն զոհեր, հսկայական կորուստներ մեր նախորդների մաքառումների ճանապարհին:

Սրանից մոտ 150 տարի առաջ մեր հայրենիքի մի մասին, մեր ժողովրդի մի հատվածին հաջողվեց ձեռք բերել կյանքի անհամեմատ նորմալ պայմաններ, խաղաղ պայմաններ, երբ Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին: Մնացյալ ժողովրդին մեր վիճակված էր ծանր ժամանակներ ապրելու ձեզ հայտնի արևելյան բռնապետության կրկնի տակ: Հայ մարդիկ դեռ արդեն այն ժամանակ ամենուրեք փնտրում էին ձևեր, փնտրում էին կռվի մեթոդներ՝ փրկելու համար իրենց հայրենիքը: Հիշեցնեմ ձեզ, որ հայ մարդիկ պաշտպանություն և օժանդակություն էին գտնում, արդեն 19-րդ դարում, ֆրանսիական ասպնջական ժողովրդի մոտ: Այստեղ էր, Ֆրանսիայի հողի վրա, որ հիմք դրվեց հայտնի «*Արմենիա*» բերքին, որը կոչ էր անում կռվել հայրենիքի ազատության համար: Այստեղ էին, Փարիզից ոչ հեռու, Մոնպելեի քաղաքում սովորած առաջին ուսանողների ելույթները սեփական հայրենիքի ազատության համար: Այդ ուսանողներն էին, որ երևակայական ազգային դրոշ ստեղծեցին՝ մասնակցելու իրավունք ձեռք բերելու համար մեծ Հյուզդյի քաղմանը, որպեսզի իրենք նույնպես հաստատեին իրենց ժողովրդի լինելիությունը, իրենց ժողովրդի գոյությունը քաղաքակիրթ աշխարհի մյուս ժողովուրդների շարքում: Երկար տևեց այդ պայքարը, այդ պայքարը համակրում էին այն ժամանակվա աշխարհի բոլոր առաջադեմ դեմոկրատ, հումանիստ մարդիկ, այդ պայքարը համակրում էին նաև ֆրանսիացի առաջադեմ հումանիստ մարդիկ, այնպիսի անուններ, ինչպիսիք են Ժան Ժորեսը¹, Անատոլ Ֆրանսը և շատ ուրիշ անուններ, մշտապես հարգանքի են արժանանում հայ ժողովրդի բոլոր ներկայացուցիչների մոտ, քանզի այդ գործիչները մշտապես խրախուսում էին, կորով էին ուսանում հայ մարդկանց՝ հանուն իրենց հայրենիքի մղված պայքարի: Երբ 19-րդ դարի ավարտին տեղի ունեցան շատ դաժան, ողբերգական դեպքեր հայ ժողովրդի համար, ահա այս մարդիկ աշխարհի քաղաքակիրթ մյուս դեմ-

¹ ՋԿԱԱ, Ջոն Կիրակոսյանի ելույթը Փարիզում (Salle Pleyel) 1980 թ. նոյեմբերի 30-ին՝ Սովետական Հայաստանի 60-րդ տարեդարձի առիթով (ճայնագրություն):

² Ժան Ժորես (1859-1914), ֆրանսիական և միջազգային սոցիալիստական շարժման գործիչ, փիլիսոփա, պատմաբան - Ա.Կ.:

քերի շարքում իրենց ձայնը բարձրացրին մեր ժողովրդի պաշտպանության համար:

Մակայն 20-րդ դարը նույնպես եղավ աղետալի մեր ժողովրդի հսկայական հատվածի՝ արևմտահայության համար: Այդ աղետին զոհ գնացին հարյուր հազարավոր և միլիոնավոր մարդիկ, և այդ զոհերի, կամ այդ գեներացի, կամ այդ ողբերգության զոհերի մի մասի ժառանգներն ու շառավիղներն են, որ նստած են այժմ սրահում և իրենց փրկությունն են գտել ֆրանսիական հողում, ֆրանսիական ափին: 1915-ի չարագործությունը դատապարտեցին աշխարհի բոլոր առաջադեմ մարդիկ, մեծ Լենինը սոցիալիստների Յիմերվալդյան կոնֆերանսում ստորագրեց այն բանաձևը, որը դատապարտում ու խառնազանում էր հայ ժողովրդի նկատմամբ կիրառված հալածանքները, հետապնդումները, գեներացիը: Եվ միայն շնորհիվ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի, շնորհիվ հաղթանակի այն սկզբունքների, որոնք ժողովուրդներին Ռուսաստանի, այդ թվում և հայ ժողովրդին, տվեցին փրկության հնարավորություն: Հայ ժողովրդին հաջողվեց դուրս գալ այն անելանելի վիճակից, որը շարունակվել էր դարեր շարունակ, ավելի խորացել և ավելի կարծես թե անհնարին էր դարձել մեր ժողովրդի համար 19-ը կամ 20-րդ դարի վերջերին: Վերջապես մեր ժողովուրդը հնարավորություն ունեցավ շնչելու, ապրելու, գոյատևելու: Ահա այս քաղաքականության հաղթանակի արդյունքն է, որ այսօր գոյություն ունի Սովետական Հայաստանը, մեր սիրելի հայրենիքը: Մենք սիրում ենք Սովետական Հայաստանը բոլոր հայրենասեր հայերի հետ միասին այն բանի համար, որ նա դժվարին ճանապարհ է անցել, որ նա հառնել է մոխրից, որ նա հառնել է ոչնչից, և ոչնչից գոյացել է այն Հայաստանը, որի վրա այսօր մենք ունենք երեք միլիոնից ավելի բնակչություն (ծափահարություններ):

Թեև 60 տարի առաջ այս հողատարածքի վրա մենք ունեինք միայն կիսամեռ մարդիկ, ունեինք ուսած փորերով երեխաներ, ունեինք քարցած մարդիկ: 1919 թ. Երևանի փողոցներում հազարավոր դիակներ էին հավաքում, 1920 թ. այս բանը կարող էր շարունակվել և ավելի խորանալ, եթե չլիներ մեր այսօրվա հաղթանակած սկզբունքների այն ժամանակվա հաղթանակը: Հայ ժողովուրդը ընթացավ Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ բարեկամության, ինտերնացիոնալիզմի սկզբունքներին հավատարմության ուղիով, ապավինեց Սովետական մեծ Միությանը, ապավինեց ռուս մեծ ժողովրդի օգնությանը և կարողացավ վերածնվել, կարողացավ ընթանալ քաղաքակրթության ուղիով, առաջադիմության ուղիով, կարողացավ օգտագործել իրեն ընձեռված խաղաղության հնարավորությունը՝ ցույց տալու համար մարդկությանը, աշխարհին, որ ինքը մեռած չէ, որ ինքը կարող ժողովուրդ է, որ ինքը ունի իր ընդերքում բարձրված մեծագույն տաղանդներ, որ նա կարող է ստեղծել ուրանոր բարիքներ և՛ իր համար, և՛ ընդհանրապես մարդկության համար (ծափահարություններ):

Հայ ժողովրդին այսօր չեն վնասում քամիները, չեն կարող վնասել մրրիկները, չեն կարող վնասել նաև ապագայում, որովհետև նրա ապահովությունը երաշխավորված է մեծ դաշինքով, ժողովուրդների մեծ բարեկամությամբ, ոռոս ժողովրդի հզոր թիկունքով: Դրա համար մենք միշտ ստան ենք. փառք մեր հավատարիմ բարեկամներին: Մեր ժողովուրդը ապահով է, որովհետև վայելում է խաղաղությունը, նա լավ է ըմբռնում խաղաղության նշանակությունը, այն պայքարը, որ այսօր մեր մեծ Մյուրությունը, աշխարհի բոլոր խաղաղասեր ուժերը մղում են պատերազմի, սպառազինությունների մրցավազքի դեմ: Մենք հպարտ ենք մեր հայրենիքով, Սովետական Հայաստանով: Հպարտ ենք այն քանի համար, որ նա ունի հսկայական հաջողություններ, ինչպես էկոնոմիկայի, այնպես էլ մշակույթի, գիտության, մարդկային ինտելեկտի բոլոր բնագավառներում: Հայաստանն այսօր փոքր, քարաշատ, բարձր հողակտորների, բարձր բյուրների ու լեռների, ժայռերի երկրամաս է: Այստեղ հնարավոր չէր որևիցե արդյունքի հասնել առանց դրսի օգնության: Անպտուղ հողամասեր են բաժին հասել մեր ժողովրդին: Հնարավոր չէր որևէ բնական արդյունքի հասնել առանց Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների տնտեսական համագործակցության, առանց բարի ու մեծահոգի մեր մյուս բարեկամ ժողովուրդների հսկայական աջակցության: Այդ օգնությունն էր, որ հիմք տվեց մեր հանրապետությանը հսկայական թռիչք կատարելու, կառուցելու մեքիաթային բաներ այս փոքր հողակտորի վրա՝ սկսած էներգետիկայից ու մեքենաշինությունից, հաշվիչ մեքենաներից ու արտադրության մյուս բնագավառներից, վերջացրած գիտության տարբեր բնագավառներով, մշակույթի հսկայական հաջողություններով: Այսօր մեր նկարիչները, մեր կոմպոզիտորները, մեր մտավորական ջոկատների մյուս ներկայացուցիչները մեծ երկրին, մեզ և Սովետական Հայաստանին ամենուրեք բերում են հպարտություն, ուրախություն, որովհետև նրանց համար ստեղծված են աշխատանքի ամենալավ պայմանները:

Այսօր Սովետական Հայաստանը մեծ առաքելություն ունի կատարելու Միությունի իր եղբայրներին ու բույրերի նկատմամբ: Մենք մոր ենք ոտքի կանգնել: Նախորդ տասնամյակները մեզ հնարավորություններ չեն տվել անելու այն, ինչ կարող ենք անել այժմ: Չեզ հայտնի են արդեն փաստերը: Մենք հիմա կարողանում ենք և՛ դասագիրք հրատարակել արտասահմանյան դպրոցների համար, և՛ որոշ թվով պիոներական ճամբարներում ընդունել սփյուռքահայ մեր եղբայրների ու բույրերի զավակներին, և մեզ հյուր են գալիս, ես ստան եմ հյուր, որովհետև դեռ նրանք մեր քաղաքացիները չեն, այլ բնակվում են աշխարհի տարբեր պետություններում, գալիս են փորձի փոխանակության՝ ծանոթանալու մեր դպրոցական գործին, ծանոթանալու մեր հաջողություններին ու ուսուցչության, դպրոցի բնագավառում: Ժամանակ առ ժամանակ մեր երգիչներն ու երաժիշտները մեկնում են հայաշատ վայրեր՝ իրենց երգն ու պարը տանելով մեր եղբայրներին ու բույրերին, հաղորդակցվելու նրանց հետ, նրանց հետ բաժանելու իրենց ուրախությունը, իրենց արվեստի քաղցրու-

բյունը, որը սիրելի է, որը սրտալի է ամբողջ հայության համար, որ երկրում էլ որ նրանք ապրելու լինեն: Մրանից մի քանի օր առաջ Երևանում գումարվեց մի շատ ներկայացուցչական ժողով, որին մասնակցելու համար եկել էին աշխարհի տարբեր մասերում բնակվող հայության ներկայացուցիչները: Խնդիրը մեկն էր. ինչպե՞ս անել ավելի ընդհուպ համախմբվելու սեփական հայրենիքի, Մովեսական Հայաստանի շուրջը, ինչպե՞ս անել, որ ավելի գորանան կոնտակտները, որպեսզի ավելի մտերմանան մեր ջանքերը, ավելի համախմբվեն մեր ջանքերը հանուն մեր հայրենիքի հետագա հաջողության: Ես մասնակցեցի այդ ժողովին, որը տեեց երկու օր, լսեցինք շատ հորդորներ, ականջ դրեցինք շատ առաջարկությունների, և ես հայտարարում եմ այստեղ ամենայն պատասխանատվությամբ, որ մեր էքսպերտ ընկերները, կարող ընկերները կամվովին այդ բոլոր առաջարկությունները, և մենք առաջիկայում՝ վաղը, մյուս օրը, մյուս տարի, կանենք ավելի նոր միջոցառումներ, կստեղծենք այնպիսի հնարավորություններ, որպեսզի Սփյուռք-Մովեսական Հայաստան կոնտակտները, առնչությունները ավելի սերտանան, ավելի դառնան ընդհուպ, և մենք ավելի մոտենանք միմյանց:

Վերջում ես ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլոր այն ընկերներին, այն տիկնանց, այն պարոններին, որոնք մասնակցություն են բերել այս ժողովի հրավիրմանը, նշելու համար Մովեսական Հայաստանի մեծ տոնի 60-ամյակը: Ես ուզում եմ կեցցե հռչակել Մովեսական Հայաստանին: Կեցցե Մովեսական Հայաստանը, թող կեցցե Մովեսական Միության և Ֆրանսիայի ժողովուրդների շատ կարևոր քարեկամությունը: Եվ ուզում եմ շնորհակալություն հայտնել, որ ինձ ունկնդրելու քաջությունը ցույց տվեցիք դուք բոլորդ:

ԿԱՐԾԻՔ-ԳՐԱՆՈՍԱԿԱՆ ՍԵՐՈՒ ԽԱՆՁԱՂՅԱՆԻ «ԱՆՂՐԱՆԻԿ» ՎԵՊԻ ՄԱՍԻՆ՝

Մովեստահայ արձակի ճանաչված վարպետ Սերո Խանձաղյանի² «Անդրանիկ» վեպը նվիրված է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մարտիկ, զորավար, իսկական ժողովրդական հերոսի հռչակի արժանացած Անդրանիկ Օզանյանի կյանքին ու գործին: Վեպի հիմնական գործողությունները ծավալվում են Առաջին համաշխարհային պատերազմի դաժան օրերին, երբ մի կողմից հայ ժողովրդի հայրենասեր զավակները հայոց ավանդական ռուսասիրական կողմնորոշմանը հավատարիմ, ռուսաց բանակին կոթնած մարտի էին ելել սեփական հայրենիքը վերամիավորելու, թուրքական լծի տակ տառապած իրենց եղբայրներին ու քույրերին ազատելու նպատակադրությամբ, մյուս կողմից, երիտթուրքական ճիվաղները գործի էին անցել ոչնչացնելու արևմտահայությանը: Գրքում պատկերները հաջորդում են մեկը մյուսին. «Թիֆլիս» փոխաբքա Վորոնցով-Դաշկով ու ցարական վերնախավ. կամավորական գնդեր. առաջին ընդհարումները թուրքական զորամասերի հետ, առաջին հաղթանակների բերկրանքն ու առաջին կորուստների դառնությունը: Վեպում դեպքերի կենտրոնում Անդրանիկ Օզանյանն է՝ հին ու քրժված հայդուկը, թուրքաց իշխանության դեմ կռվի ու տառապանքի հարուստ փորձառությամբ՝ Առաքելոց վանքի կռվից մինչև 1912-1913 թթ. բալկանյան պատերազմները: Հեղինակը Անդրանիկի հուշերի, մտապատկերների միջոցով ընթերցողին տանում է 19-րդ դարի 90-ական թթ. դեպքերը, հայ քաջարի վրիժառուների կատարած պաշտպանական մարտերի մանրամասները, ապա նրա հայեցակետով քննարկում հայ ժողովրդի հավատարիմ դաշնակից Ռուսիայի անփոխարինելի ու փրկարար դերը մահմեդական, բռնապետական ինքնակալությունների ճիրաններից հայ ժողովրդին պոկելու, ազատելու գործում: Անդրանիկը չի հավատում երիտթուրքերին, մեթոմ է նրանց հետ որոշ հայ դաշնակցական ղեկավար գործիչների անսկզբունք «դաշինքը» 1907-ին ու 1908-ին, միակ փրկությունը տեսնում ժողովրդի պայքարի, Ռուսաստանի օգնության մեջ:

Տասնյակ տարիների ընթացքում համիրավի մոռացության էին տրվում արևմտահայության քաղաքական պատմության, սուրբան Համիդ II-ի, երիտթուրքերի դեմ հայոց արդարացի մարտունների մանրամասները: Անդրանի-

¹ ՋԿԱԱ, Կարծիք-գրախոսական Սերո Խանձաղյանի «Անդրանիկ» վեպի մասին, 1981, 2 փետրվարի, (մեքենագիր):

² Սերո Խանձաղյան (1915-1998) - գրող, 1990-1994 թթ.՝ ՀԳՄ նախագահ, «Մեր գնդի մարդիկ», «Հողը», «Քարանձավի բնակիչները», «Մխիթար Սպարապետ», «Լյըրված տունը», «Ռոստեք, Հայաստանի լեռներ», «Թագուհին հայոց», «Անդրանիկ», «Գարեգին Նժդեհ» վեպերի հեղինակ - Ա.Կ.:

կը ժողովրդական հերոս էր: Այդպիսին էին նաև նրա ավագ ու կրտսեր ընկերները՝ կտրիճ հայդուկները, ժողովրդի ինքնապաշտպանական գործի խիզախ կազմակերպիչները: Իճն խոսք, սրանք միշտ չէ, որ ըմբռնում էին սոցիալ-դասակարգային պայքարի բոլոր խնդիրները, տակավին չէին բարձրացել սոցիալիզմի տեսության դիրքերից երևույթների ելույթումն ըմբռնելու մակարդակին: Սակայն թուրքական մահաշունչ իրականությունը գարծնական խնդիրներ էր առաջադրում, ժողովրդին պաշտպանելու, իրական կործանումից փրկելու առաջնահերթ առաքելություն, արմատական շատ հարցերի լուծումը մղելով երկրորդ պլան: 19-րդ դարի 90-ական թթ. Համիդը 300 հազար հայ կոտորեց ըստ էության առանց դասակարգի, սոցիալական պատկանելության, սեռի ու հասակի խտրության:

Ռուսաստանի կազմի մեջ մտած Արևելյան Հայաստանի և Անդրկովկասի հայությունն անհամեմատ խաղաղ կյանք ուներ: Այստեղ ժողովրդին ֆիզիկական կործանում չէր սպառնում: Այստեղ, սակայն, սոցիալ-դասակարգային շատ ավելի հասուն մարտեր էին ծավալվել աշխատավել մարդու իրավունքների համար: Այստեղ մարքսիզմը ծուլվել էր բանվորական շարժման հետ: Ասպարեզ էր իջել լեմինյան կուսակցությունը իր աշխարհաշեն տեսությամբ ու գործերով: Կուսակցությանը զինվորագրվել էին նաև հայ ժողովրդի լավագույն զավակները: Սահմանից այն կողմ՝ օսմանյան բռնաախրական ռեժիմի հարվածներից նվազող, պաշտպանական, արդարացի, մշտապես մարքսիստ-լեմինյանների համակրանքին արժանացած մարտեր, ժողովրդական հերոսներ... Սահմանից այս կողմ, Ռուսաստանի հողում, ռուսաստանյան պրոլետարիատի հետ թև թևի տված հայ մարդիկ, բուշևիկ-լեմինյաններ, դասակարգային-սոցիալական գոռ մարտեր:

Արևմտահայ ժողովրդի ազատագրական շարժումն օգտվում էր արևելահայ ժողովրդի, ամբողջ հայության համակրանքից, պաշտպանությունից: Արևմտահայ ազատագրական մաքառումները շրջանցել են, չեն նկատել, երբեմն անհիմն բաներ են գրել բոլոր նրանք, ովքեր չեն ըմբռնել թուրքական իրականությունը, նրա սոցիալ-տնտեսական, ազգային ու քաղաքական պայմանները, ովքեր Ռուսաստանի, զարգացած արդյունաբերական կենտրոնների չափանիշները տարածել են թուրքական հետամնաց իրականության վրա, անտեսելով տարրական ճշմարտություններ: Փոխանակ նշմարելին մի ժողովրդի երկու հատվածների ձգտումների ու ծրագրերի ներդաշնակությունը, ընդհակառակը, դեպքերն ու իրադարձություններն արհեստականորեն մեկնաբանվում էին հակադրության միտումով, ցեխ էին շարտում ժողովրդական վրիժառուների, թուրքական զենեռնի դեմ ահավոր մարտի բռնված ու զոհված հերոսների հիշատակին:

Մերո Խանգաղյանի վեպը կառուցված է արևմտահայության հերոսական, բայց և ողբերգական պատմության իրական դեպքերի, դեմքերի ու իրադարձությունների վրա: Վիպասանն իր առջև դրել և լուծում է չափազանց բարդ խնդիրներ, փորձում է վերականգնել ժամանակի մթնոլորտը, շունչը,

տրամադրությունները: Այս խնդիրը նրան հիմնականում հաջողվել է: Առանձին դեպքերում թույլ լուծումները ոչ թե վիպասանի վարպետության հետևանքն են, այլ դեպքերի, խնդիրների, հակասությունների, ազգային, քաղաքական բարդ հանգույցների ու կծիկների չափից ավելի խճողվածության արդյունք: Այսպես հիշենք 1918 թվականը. թուրքական արշավանք, գերմանական քաղաքականություն. անգլիական սրիկայություններ. մենջևիկ վրացիներ. մուսավաթ թաթարներ. ինտերվենտ օսմանյան թուրքեր. Շահումյանի խոսքերով ասած կուրդերն սրանց հետևած դաշնակցության ազգավճատ քաղաքականություն. հեղափոխական Ռուսաստան. սովետական իշխանություն. թուրքական շարագործությունից մազապուրծ գաղթականություն. մաղձամահ Հայաստան... այլ խնդիրներ, և այս ամենի առնչությամբ, այս ամենի հետ կապված Անդրանիկ՝ իր պարզ փիլիսոփայությամբ, ժողովրդին անսահման նվիրվածությամբ, բարության, առաքինությամբ, սեփական ազգի նավը վարելուն հավակնած անհեռատես դաշնակցական պոլիտիկաներին չներելու հետևողական համառությամբ:

Մերո Խանգաղյանի «Անդրանիկ» վեպի գրական-գեղարվեստական արժանիքների գնահատումը թողնելով բանասեր մասնագետներին, անհրաժեշտ ենք համարում հեղինակի ուշադրությունը հրավիրել պատմաքաղաքական խնդիրների վրա, որոնց առանձին մեկնաբանումների շտկումից, բարելավումից, անտարակույս, կշահի գործը:

1. Խանասոյի դեպքը, մագրիկ ցեղի «ոչնչացման» մասին առասպելը դրական հիշատակության արժանի բաներ չեն: Ընդհանրապես կոտորածների, դաշույնի գործողության, փորը թափելու, արյուն ուտելու պատկերները, մատուրալիստական նկարագրությունները պետք է կրճատվեն (էջ 12, 15, 38, 42, 90, 116, 120, 128, 169, 189, 339, շեյխի ձեռքով կտրված մանկան գլուխ, 348, 352, «այլան բշմամի», 605 և այլն): Այսպիսի տեղեր շատ կան, որոնք ենթակա են սրբագրման: Մանավանդ ընթերցողը շարադրանքից երբեմն այնպիսի տպավորություն է ստանում, որ հայերը մույնպես անխնա կոտորել են շարագործներին: Պատմականորեն սա ճիշտ չէ:

2. Մեր կարծիքով ճիշտ չէ, որ արդարացնում է իրեն պատմական էքսկուրսների, հետադարձ հայացքների հեղինակի մեթոդը: Մեր կարծիքով 19-րդ դարի կեսերի Հաթթը Շերիֆի կամ Հաթթը Հումայունի սուլթանական հրովարտակների, բարենորոգումների մասին մանրամասն խոսքի կարիք չկա (էջ 185, 195-199): Պետք չէ, որ Մուստաֆա Քեմալը մեջտեղ բերվի որպես սուլթան Համիդի գարնիկ (էջ 211):

3. «Այո, պարոն դաշնակ ջոջեր...» (էջ 244) խոսելածը, որ վերագրվում է Անդրանիկին, մեր կարծիքով հեռացում է պատմականությունից: Կուսպատմության արխիվում պահպանվում են Հայոց Ազգային խորհրդի նիստերում Անդրանիկի կենդանի ելույթների ճշմարիտ արձանագրությունները: Ընդ

որում դրանք կազմել է անվանի լեզվաբան Ստ.Մալխասյանը¹: Դրանցից օգտվելու դեպքում կարելի է ոչ միայն Անդրանիկի ուղղակի խոսքը մեջբերել, այլև ավելի ճշգրիտ պատկերացում տալ Ազգային Խորհրդի կազմի, դիրքորոշման և հարակից հարցերի մասին (օրինակ՝ Ազգային խորհուրդը շատ է է-ժանանում բամբերի պատմությանը, էջ 253):

4. 1918 թ. սկզբի թուրքական հարձակման, Թուրքիա-Անդրկովկասյան սեյմ, վրաց վերնախավ և մենշևիկներ, մուսավաթական քեյեր ու թուրքաց դաշնակիցներ, հայոց դաշնակցություն, կաղետներ և մյուսներ՝ այս առնչությունների, ստեղծված քառսի խստության ու լրջության ֆոնի վրա, գործած ավելի մեծ պաշտոնատար անձանց, զինվորականների, դեպքերի, դավաճանությունների, նացիոնալիստական էգոիզմի և այլնի առնչությամբ պետք է ավելի նրբորեն ճշտել Անդրանիկի տեղը ու դերը: Պետք է տալ Կարինի քառսի մեղավորների պատկերը (էջ 344): Միայն չափավոր միջոցներով է հնարավոր վերականգնել, ներկայացնել Անդրանիկի դերի հավաստիությունը: Ռազմա-ճակատում նա ամենագոր չէր, օժտված չէր բացառիկ լիազորություններով, քեև ուներ փորձառություն, անցուղարձի իմաստը ըմբռնելու իմաստություն:

5. 1918-ին դեպի Բաքու թուրքական արշավանքը և Գեորգանիայի դիրքորոշումը պետք է ճշտել (էջ 398-399): Բաքվի նավթի շուրջ հակասություններ էին ծագել երկու դաշնակիցների միջև:

Վեպը մեծածավալ է: Այն կրճատման կարիք ունի: Մեր կարծիքով պետք է այդ կրճատումներն անել նախ բազմաթիվ իրար մման ռազմական գործողությունների, բախումների պատկերները մինիմումի հասցնելու միջոցով: Պետք է մանրամասներից բեռնաթափել Զանգեզուրում Անդրանիկի ռազմական գործողությունների, անգլիացիների հետ նրա ունեցած բազմաթիվ հանդիպումների ու գրույցների (էջ 635-654), Շուշվա հետ կապված մանրամասների շարադրանքը (էջ 557, 582, Շուշվա կառավարությունից փախել էին ոչ քե կոմունիստները, այլ սոցիալ-դեմոկրատները): Դիշտ է, լավ է տրված Բրեստ-Լիտովսկի քանակցությունների նկարագրությունը, քայց այստեղ նույնպես կրճատման ենթակա շատ քան կա: Կարելի է կրճատել 90-ական թթ. Ռուսաստանի քաղաքականությանը վերաբերող էջերը (էջ 434 և այլն), մանավանդ, որ ամբողջ գրքի միջով կարմիր թելի պես անցնում է ռուսասիրության, ռուսական կողմնորոշման, Ռուսաստանի բարեբար դերի գիծը:

Կրճատման, շտկման, նրբին բարելավման կարիք ունի բազմաթիվ էջերում հանդիպող Ղարաբաղի, Նախիջևանի խնդիրների հետ կապված շարադ-

¹ Ստեփան Մալխասյանց (1857-1947) - քանասեր, լեզվաբան քառարանագիր, ՀՍՍՀ ԳԱ հիմնադիր կազմի ակադեմիկոս, հիմնական աշխատությունները՝ «Ռուսամասիրություն Փավստոս Բյուզանդի պատմության», «Մովսես Խորենացի. Հայոց պատմություն», «Վորենացու ստեղծվածի շուրջ», «Գարարի հուլովումը, խոնարհումը և նախդիրները», «Գարարի համաձայնությունը», «Հայ բացատրական քառարան» - Ա.Կ.:

րանքը: Հիրավի, թուրք վայրենաբարո նվաճողները Նախիջևանի, Ղարաբաղի վրայով համաթուրանականության ծրագիրն էին իրականացնում, այդ ճանապարհին փորձելով վերացնել հայությանը (դրա ապացույցը Շուշվա, Ագուլիսի ավերակներն են, հայերից դատարկված Նախիջևանի տասնյակ ու տասնյակ շեն գյուղերը): Ե՛հիշտ է հեղինակը, երբ երիտթուրքական պետության խորտակումից հետո անգլիական գաղութարարների զիրկը շարտված մուսավաթականների հակահայկական նոր գործողություններն է նկարագրում: Սակայն, չափից ավելի ձգձգված են կրկնություններ պարունակող, միևնույն ճշմարտությունները պարունակող էջերը: Դրանք պետք է շտկվեն, խմբագրվեն: Այս շտկումները, կրճատումները կպահպանեն նյութի, շարադրանքի չափերի ճիշտ հարաբերակցությունը, ելնելով այն ճշմարտությունից, որ Անդրամիկը արևմտահայության ազգային-ազատագրական շարժման հերոսն էր, բայց ոչ թե Անդրկովկասի բարդ կացության խնդիրները լուծողը:

6. Հանել հետևյալ տողերը. Անդրամիկը «սափովեց, նույնիսկ լողացավ քաղնիքում, մի բան, որից խորշում էր» (էջ 174): Իսկ ինչ¹ էր խորշում, հարց կտա ընթերցողը: Իսկ լա՞վ էր, որ ժողովրդական հերոսը չէր լողանում: Անդրամիկի կոմար վարկաբեկիչ են մաս հետևյալ տողերը. «Ջարտեզ չէր սիրում Անդրամիկը, քիչ բան էր հասկանում դրանից» (էջ 607): Եթե այդպես էր, ապա ինչպես էր կոմիտե՞ն: Գո՞նե Ձանգեզուրում մա պետք է թթի օղի խմեր, բայց ոչ կոմեյակ (էջ 606):

Սեր կարծիքով Սարդարապատի և, ընդհանրապես, 1918-ի մայիսին թուրքերի դեմ հայ ժողովրդի սղած օրհասական կռիվներին Անդրամիկի չմասնակցելու խնդրին ավելի հանգամանալի պատճառաբանություն պետք է տրվի:

...Պատմական որոշ անձերի, դեմքերի իրական անուններով մեջտեղ բերելը ոչ միշտ է, որ ճիշտ է, մանավանդ որ նրանց ո՞վ և ի՞նչ լինելը պատմագրության մեջ լավ ուսումնասիրված չէ (օրինակ՝ Երո Խարազյան, Վահան Խաչիկյան և ուրիշներ):

7. Էջ 717-ում Ներսես պատրիարքի հայտնի խոսքերը հնչում են Անդրամիկի շուրթերից: Կամսարականը¹ Վանում ռուսաց փոխխույպատոս է կարգվել 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո (էջ 709):

Հայաստանում ԱՄՆ-ի դեսպան չկար (էջ 756), որովհետև ամերիկյան կառավարությունը Հայաստանը չէր ճանաչել:

Այս դիտողություններին համապատասխան շտկումները, կրճատումները, որոշ խմբագրական բարելավումները կնպաստեն այն բանին, որ վեպը լինի ավելի կոտ ու ավելի անթերի:

¹ Կոտսանդին Կամսարական (1840-1922), ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ, դիվանագետ, Էրզրումի զինվորական մահանգապետի օգնական, 1877-ին՝ Ռուսաստանի փոխխույպատոս Էրզրումում, 1878 թ.՝ Վանում, սերո կապեր է պահպանել «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպության հետ - Ա.Կ.:

Սերո Խանգաղյանի «Անդրանիկ» վեպը հաջողված գիրք է: Այն կգտնի իր բազմահազար ընթերցողներին, նրանց կղաստիարակի հայրենասիրության, ժողովուրդների բարեկամության, Ռուսաստանի նկատմամբ սիրո ու հավատարմության, մեր մեծ Հայրենիքի նկատմամբ նվիրվածության ոգով:

2.2.1981 թ.

Պրոֆ. Ջոն Կիրակոսյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԵՐԵՎԵՒԻ ԴԻՎԱՆԱԳԵՏՈՒ

Այս տարվա հոկտեմբերին լրանում է սովետական ակադավոր դիվանագետ Համազասպ Հովակիմի Հարությունյանի ծննդյան 80-ամյակը: Նա հասարակական-քաղաքական կյանքի ասպարեզ մտավ Անդրկովկասում սովետական կարգերի հաստատման համար մղված գործարարների տարիներին, կոփվեց կոմերիտական ու կուսակցական աշխատանքում, հասակ առավ սոցիալիզմի առաջին երկրի հետ, ընթացավ կոմունիստների կուսակցության քաղաքականության ավանգարդում, դարձավ գիտնական-տնտեսագետ, այնուհետև մոտ երեսուն տարի գործեց ու փայլեց սովետական դիվանագիտության ամենապատասխանատու ճակատներում:

Համազասպ Հարությունյանը, կամ ինչպես նրան սովորաբար անվանում էին, Համո Ալիմովիչը, ծնվել է 1902-ի հոկտեմբերի 14-ին Բաքվում: Արդեն պատանի տարիներից նա աչքի էր ընկնում հասարակական-քաղաքական կյանքին մասնակցելու իր ակտիվությամբ: 1916-ին պատանի Համոն աշակերտական անլեզավ խմբակի անդամ էր, որի նախագահը բաքվեցի հայտնի բոլշևիկ որդի Ստեփան Վարդանյանն էր: 1917-ի փետրվարյան հեղափոխությունից հետո նա մասնակցում է համաքաղաքային աշակերտական գործադուլին, որը ղեկավարում էին Սուրեն Աղամալովը, Օլգա Շատունովսկայան, Շուրա Բրեյտմանը, Սուրեն Շահումյանը² և ուրիշներ: Պատանի Համոն իր դասարանի ներկայացուցիչն էր աշակերտ ղեկուսատուների խորհրդում: Հեղափոխական գործունեության համար մուսավաթիստական իշխանությունները նրան հեռացնում են Բաքվի առևտրական ուսումնարանից՝ գրկելով նրան պետական ուսումնարան ընդունվելու իրավունքից: Նա միջնակարգ կրթություն ստանում է 1920-ին, Բաքվում սովետական իշխանության հաստատումից հետո:

1920-ի ամռանը նա ղեկավարում էր Գանձակի (Կիրովաբադ) կոմերիտական կազմակերպությունը: Ավելի ուշ կոմերիտական ղեկավար աշխատանք էր կատարում Ղազախի գավառում, ակտիվորեն մասնակցում տեղերում սովետական իշխանության հաստատման, նրա մարմինների ստեղծման ու ամրապնդման գործերին:

Այնուհետև Համազասպ Հարությունյանը Թիֆլիսի կոմերիտական շրջկոմի երրորդ քարտուղարն էր, քաղկոմի բյուրոյի անդամ և ազիտպրոպագանդայի բաժնի վարիչ, Վրաստանի կոմկուսի Կենտկոմի գործերի կառավար

¹ Կիրակոսյան Ջ., Սովետական երևելի դիվանագետը, Ե.: ՀՍՍՀ «Գիտելիք» ընկերություն, 1982, 21 էջ:

² Սուրեն Շահումյան (1902-1936), խորհրդային կուսակցական և ռազմական գործիչ, Ստեփան Շահումյանի որդին, Օրյոլի գրահատանկային դպրոցի, Բելոռուսիայի, Լենինգրադյան ռազմական օկրուգների գրահատանկային գործերի պետ - Ա.Կ.:

րիչ: Կուսակցությունը նրան 1922-ին մի խումբ ընկերների հետ գործուղում է Հայաստան՝ ամրապնդելու կոմերիտական կազմակերպությունը: Նա նշանակվում է ՀԼԿԵՄ Կենտկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ, աշխատում Ալեքսանդր Մյասնիկյանի ղեկավարությամբ, մասնակցում մի շարք կարևոր միջոցառումների իրականացմանը:

1923-ի աշնանը Համազասպ Հարությունյանը մի խումբ կոմերիտական պատասխանատու աշխատողների և միասին՝ Վրաստանի կոմկուսի Կենտկոմի գործուղմամբ և հատուկ թռչակավորումով ուսման է մեկնում Մոսկվա: Մոսկվայի համալսարանում սովորելու տարիներին նա ակտիվ կուսակցական աշխատանք էր կատարում Մոսկվայի Բաումանի և Ֆրունզելի շրջաններում, եռամսյակ մասնակցություն ցուցաբերում մայրաքաղաքի հասարակական-քաղաքական կյանքին, հակակուսակցական օպոզիցիաների դեմ մղված պայքարին:

Մոսկվայի պետական համալսարանն ավարտելուց հետո տնտեսագետ Հ.Հարությունյանը գիտական աշխատանքի է անցնում կոմունիստական ակադեմիայի համաշխարհային տնտեսության և քաղաքականության ինստիտուտում: Այն հետագայում միացավ ՍՍՀՄ ԳԱ-ին: Նա սկսեց կրթներ գիտաշխատողից և իր գործունեությունն այնտեղ ավարտեց 1935-ին՝ կոնյունկտուրայի բաժնի վարիչի պաշտոնում: Այն ժամանակ էլ նրան շնորհվեց տնտեսագիտության թեկնածուի աստիճան: Նա դարձավ սովետական տնտեսագիտության հմուտ և բանիմաց մշակներից մեկը: 1932-1937 թթ. Հարությունյանը Արևելյի ժողովուրդների Մոսկվայի կոմունիստական համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնի վարիչն էր: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը չափազանց լայն էր: Նա զբաղվում էր համաշխարհային էկոնոմիկայով, կապիտալիստական երկրներում բանվոր դասակարգի դրության հարցերով, տնտեսական ճգնաժամերով, ժամանակակից բուրժուական քաղաքատնտեսության քննադատությամբ: 1935-ին նա տեղափոխվեց ՍՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտ, աշխատելով որպես «Պրոբլեմի էկոնոմիկա» ամսագրի պատասխանատու քարտուղար, դիրեկտորի տեղակալ, իսկ 1941-1944 թթ.՝ նաև ի տեղի դիրեկտոր: Այդ տարիներին ինստիտուտի գործունեության մեջ որոշակի ուշադրություն հատկացվեց ռազմատնտեսական խնդիրների մշակմանն ու ուսումնասիրությանը: 1942-ի գարնանը նրան շնորհվեց տնտեսագիտության դոկտորի աստիճան, իսկ քիչ անց՝ քաղաքատնտեսության պրոֆեսորի կոչում: Նրա դոկտորական դիսերտացիան նվիրված էր բուրժուական կոնյունկտուրաբանության և տնտեսական ցիկլերի ամերիկյան տեսությունների քննադատությանը: Համազասպ Հարությունյանը ամերիկացետ էր: Լուսժողկոմատի գործուղմամբ որպես ազատ ունկնդիր սովորել էր ԱՄՆ-ի Մինեսոտայի համալսարանում: Նա խորությամբ ուսումնասիրել էր ԱՄՆ-ի ինդուստրացման պրոբլեմները, հատուկ աշխատություն նվիրել ԱՄՆ-ի նեգր բանվորներին (1933): 1929-1933 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի հարցերին նվիրված նրա հրապարակումները գի-

տական լուրջ ուսումնասիրություն են, որոնք այսօր էլ պահպանում են իրենց նշանակությունը:

1940-ին հրապարակված «Մովետական էկոնոմիկայի զարգացումը» կոլեկտիվ աշխատանքի կազմակերպիչը, հեղինակներից ու խմբագիրներից մեկը Համազասպ Հարությունյանն էր: Գլխական աշխատանքին զուգընթաց նա մանկավարժական աշխատանք է կատարել Մոսկվայի տարբեր բուհերում, ամնիջական մասնակցություն է ունեցել Մոսկվայի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի, այնուհետև Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի հիմնադրման և ամրապնդման գործին:

Երբ Համազասպ Հարությունյանը 1943-ի սկզբին դիվանագիտական աշխատանքի անցավ ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրությունում, նա համատեղությամբ աշխատեց նաև միջազգային հարաբերությունների ինստիտուտում որպես քաղաքատնտեսության ամբիոնի վարիչ, ապա մինչև 1955-ը՝ մույն ամբիոնի պրոֆեսոր: Նա պարապում էր գլխավորապես դիպլոմաիկների ու ասպիրանտների հետ, հաճոյես գալիս որպես թեկնածուական ու դոկտորական դիսերտացիաների ընդդիմախոս:

ՀՄՍՀ ԳԱ իսկական անդամ, տնտեսագիտության դոկտոր Արտաշես Առաքելյանը¹ իր գործընկերոջ ու բարեկամի մասին հիշում է. «Հարկ եմ համարում նշել Համո Ալիմովիչի անշահախնդիր օգնությունը հայ տնտեսագետներին: Ընդհանրապես, Մոսկվայում նրա օգնությանն էին դիմում տարբեր խավերի ու տարիքի մարդիկ, նրա հյուրընկալ տան դռները բաց էին բոլորի և հատկապես ուսանողության առջև: Ես չեմ կարող չիշել նրա օգնությունը մեր ընտանիքին: Մայրս խոստովանում էր, որ եթե Համո Ալիմովիչի մասնակները չլինեին, դժվար թե ինքը դիմամար պատերազմի ծանր օրերին: Մեծ էր նա որպես գիտնական և դիվանագետ, բայց էլ ավելի մեծ էր որպես մարդ, հայրենասեր...»:

Անա թե ինչ է պատմում տնտեսագետ Համազասպ Հարությունյանի մասին ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Անատոլի Իզմատևիչ Պաշկովը². «Համո Ալիմովիչը շատ լայն ընդգրկումի տնտեսագետ էր: Նա հիանալի գիտեր տվեռական էկոնոմիկան և այդ մասին հրատարակել է մի շարք աշխատություններ»: Մասնավորապես հիշատակելի է 1939-ին հրատարակված «Սոցիալիզմի երկրի մեծ հաղթանակների գիրքը», որտեղ հանրագումարի էին բերված սոցիալիզմ կառուցող երկրի տնտեսական զարգացման հանրագումարները: «Մովետական էկոնոմիկայի զարգացումը» (1940 թ.) կոլեկտիվ ֆունդամենտալ աշխատության հեղինակներից ու խմբագիրներից մեկը Համազասպ Հարությունյանն էր: Նրա դոկտորական դիսերտացիան կոչվում էր

¹ Արտաշես Առաքելյան (1909-1993), տնտեսագետ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, 1960-1987 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն - Ա.Կ.:

² Անատոլի Պաշկով (1900-1988), խորհրդային տնտեսագետ, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ - Ա.Կ.:

այսպես՝ «Հարվարդի տնտեսագետները և բուրժուական կոնյունկտուրաբանությունը ԱՄՆ-ում»:

Նրա տնտեսագիտական խոր գիտելիքները հիմք հանդիսացան, որպեսզի նա, արդեն 1944-ին, իր դիվանագիտական կարիերայի սկզբնական քայլերն անելիս հաջողությամբ պաշտպաներ Մովսեսական Միության շահերը Բրետոն «Վոլտսում» վալյուտայի ու ֆինանսների հարցերին նվիրված ՄԱԿ-ի կոնֆերանսում, որին մասնակցում էին 40 երկրներ:

* * *

1943-ին ՄԱԿԿ Կենտկոմը Համազասպ Հարությունյանին աշխատանքի գործուղեց ՄՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատ: 1943-1944 թթ. նա ամերիկյան երկրների բաժնի էքսպերտ-կոնսուլտանտ էր:

Ռազմի դաշտում ֆաշիստական հորդանների նկատմամբ սովետական բանակի ու ամբողջ ժողովրդի մղած կենսազ-մահու կռիվն զուգընթաց սոցիալիզմի առաջին երկիրն իրականացնում էր հակաֆաշիստական կռալիցիան ամերայնդելու, սոցիալ-քաղաքական տարբեր կարգեր ունեցող պետությունների գոյակցության ու համագործակցության քաղաքականություն: Դիվանագիտական կոնֆերանսները, խորհրդակցությունները, բանակցությունները հետևում էին մեկը մյուսին: Երիտասարդ դիվանագետ Համազասպ Հարությունյանը միանգամից մտավ դիվանագիտական բուռն աշխատանքի հորձանուտը՝ ընկերանալով սովետական դիվանագիտության լենինյան գվարդիայի ավագ սերնդի հեղինակավոր դիվանագետներին:

Հետպատերազմյան դժվարին տարիներին Մովսեսական Միության խաղաղասիրական արտաքին քաղաքականությանը իմպերիալիզմի լազերը հակադրում էր սառը պատերազմի հակաժողովրդական ուղեվեժը: Մովսեսական դիվանագետները ջանք ու եռանդ չէին խնայում ապահովելու աշխարհի խաղաղությունը:

1943-ին նա մասնակցեց երեք տերությունների՝ ՄՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների Յալթայի կոնֆերանսին՝ որպես ՄՍՀՄ պատվիրակության անդամ, խորհրդական: Այդ պահից սկսած՝ նա մասնակցեց միջազգային բազմաթիվ կոնֆերանսների, խորհրդակցությունների, բանակցությունների, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի, տնտեսական ու սոցիալական խորհրդի և համաաշխարհային այլ կազմակերպությունների ֆորումների: Հիշենք դրանցից մի քանիսը:

1943-ի մայիս-հունիսին նա որպես ՄՍՀՄ պատվիրակության խորհրդական մասնակցել է Միավորված ազգերի կոնֆերանսին Հոբ Սփրինգսում (ԱՄՆ), որտեղ քննարկվում էին հետպատերազմյան գյուղատնտեսության զարգացման խնդիրները: Որպես ՄՍՀՄ արտաքին գործերի մինիստրության պատվիրակության անդամ՝ նա իր մասնակցությունը բերեց վերականգնման

ու օգնության հարցերի գծով ՄԱԿ-ի ասոցիացիայի խորհրդի սեսիաներին Մոնրեալում (Կանադա) 1944-ին, Լոնդոնում՝ 1945-ի օգոստոսին: 1944-ին Համազասպ Հարությունյանին տեսնում ենք վալյուտային և ֆինանսական հարցերով ՄԱԿ-ի կոնֆերանսում (Բրետոն Վուդս, ԱՄՆ)¹ որպես Սովետական Միության պատվիրակ:

Նա՝ որպես աշխարհի հետպատերազմյան տնտեսական գործերի խորհրդական, 1945-ի փետրվարին մասնակցեց մեծ տերությունների՝ ՄՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի ղեկավարների կոնֆերանսին, իսկ հուլիս-օգոստոսին՝ Պոտսդամի կոնֆերանսին, որպես ՄՍՀՄ պատվիրակության խաղաղության պայմանագրերի նախագծերի տնտեսական ու սոցիալական հարցերի գծով խորհրդական:

ՄՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրների սեսիաներում (1945-1947 թթ., Լոնդոն, Փարիզ, Նյու Յորք, Մոսկվա) Համազասպ Հարությունյանը նորից ՄՍՀՄ պատվիրակության խորհրդական էր: Սովետական պատվիրակության կազմում նա 1945-ի ապրիլ-հունիսին մասնակցեց Սան Ֆրանցիսկոյում գումարված ՄԱԿ-ի հիմնադիր կոնֆերանսին, իսկ 1946-ի հուլիս-հոկտեմբերին՝ Փարիզի խաղաղության կոնֆերանսին: Միջազգային այս խորհրդաժողովներում նա հսկայական փորձ կուտակեց, հմուտացավ դիվանագիտական եռուն աշխատանքի բուրայում, ճանաչվեց ու սիրվեց իր գործընկերների շրջանում: Առանձնապես հիշատակելի է նրա ակտիվ մասնակցությունը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի սեսիաներին 1946-1952 թթ.: Նա 1946-1953 թթ. ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդում համարյա մշտապես ներկայացրել է ՄՍՀՄ-ը, հանդիսանալով սովետական պատվիրակության ղեկավարը: Նույն տարիներին նա գլխավորել է սովետական պատվիրակությունը Եվրոպայի գործերով ՄԱԿ-ի տնտեսական հանձնաժողովի ամենամյա սեսիաներում: Երբ 1954-ին ՄՍՀՄ-ը դարձավ աշխատանքի միջազգային կազմակերպության անդամ, Համազասպ Հարությունյանը Սովետական Միության կառավարության ներկայացուցիչն էր նրա ղեկավար մարմիններում՝ մինչև 1958 թվականը:

ՄՍՀՄ արտաքին գործերի մինիստրության դիվանագիտական ակադեմիայի ռեկտոր, ակադեմիկոս Ս.Լ.Տիխվինսկին¹ հիշում է. «Նա մասնակցեց պատերազմի վերջերին հրավիրված այնպիսի խոշոր միջազգային կոնֆերանսների, ինչպիսիք են վալյուտային հարցերին Գլխավոր Բրետոն Վուդսի, գյուղատնտեսական հարցերին Գլխավոր Հոբ Սփրինգսի կոնֆերանսները: Սան Ֆրանցիսկոյի կոնֆերանսում նա սովետական պատվիրակության մասնագետ խորհրդատու էր... Եվ, վերջապես, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի առաջին սեսիայում սովետական պատվիրակության կազմում էր: ...Համո

¹ Մերգեյ Տիխվինսկի (ծնվ. 1918) - պատմաբան, դիվանագետ, ՌԴ ԳԱ անդամ, արտակարգ և լիազոր դեսպան, ԽՍՀՄ ԳԱ չինագիտության ինստիտուտի տնօրեն (1960-1961), ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի տեղակալ (1961-1965), ԱԳՆ դիվանագիտական ակադեմիայի ռեկտոր (1980-1986), Ա. Կ.:

Ակյնովիչը ղեկավարում էր մինիստրության էկոնոմիկական բաժինը, այսինքն՝ կանգնած էր դիվանագիտական աշխատանքի խիստ պատասխանատու մի ստորաբաժանման գլուխ»¹:

1948-ի մայիսին Համազասպ Հարությունյանը ժնուում եվրոպական տնտեսական հանձնաժողովի նիստերի մասնակից ՍՍՀՄ պատվիրակության ղեկավարն էր: Բուռն քննարկումները շարունակվում էին օրերով: Հետպատերազմյան Եվրոպայի տնտեսական զարգացման, պետությունների առևտրատնտեսական հարաբերությունների նորմալ զարգացման խնդիրների շուրջ ծավալված վեճերի ժամանակ սկզբունքային և համոզիչ էր հնչում սովետական ներկայացուցչի ձայնը:

Համազասպ Հարությունյանի դիվանագիտական գործունեությունն առանձնապես ակտիվ էր ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի նիստերում ժնուում, 1949-ի ամռանը:

Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողներս 1948-1951 թթ. հատկապես ուշադրությամբ էինք հետևում «Պրավդայի», «Ժզվեստիայի» էջերում տպագրվող մեր հայրենակցի ելույթներին: Դրանք այդքա էլ չէին ընկնում իրենց խորությամբ, Սովետական Միության շահերը պաշտպանելու կրքոտությամբ, քննարկվող հարցերի կատարյալ իմացությամբ: 1949-ի հուլիսի 11-ի նրա ելույթում միջեվրոպական առևտրի զարգացման խնդիրների մասին առաջ քաշված հարցերն այսօր էլ չեն կորցրել իրենց հրատապությունը²: Մարքսիստական քաղաքատնտեսության փորձված մասնագետի յուրաքանչյուր ելույթը, խոսքը այդքա էլ չէին ընկնում համաշխարհային կապիտալիստական տնտեսության պրոբլեմների, խոցերի անքերի իմացությամբ: Նրա ելույթները խարսխված էին դիպուկ օրինակների, տրամաբանական համեմատությունների վրա:

«Սովետական Միությունը հանդես է գալիս հետամնաց երկրներին ու տերիտորիաներին լայն տնտեսական օգնություն ցույց տալու օգտին, - ասում էր Հ.Հարությունյանը ՄԱԿ-ի տնտեսական ու սոցիալական խորհրդի 1949-ի հուլիսի 26-ի նիստում, - նկատի ունենալով, որ այդ օգնությունը պետք է ուղղվի այդ երկրների ու տերիտորիաների ներքին ռեսուրսները, նրանց ազգային արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը զարգացնելուն: Դրա հետ մեկտեղ այն պետք է նպաստի այդ երկրներին ու տերիտորիաներին ազգային զարգացմանն ու տնտեսական անկախության ամրապնդմանը»:

1949-ի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Համազասպ Հարությունյանն արդեն ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 4-րդ սեսիայում ելույթներ էր ունենում տնտեսապես չզարգացած երկրներին տեխնիկական օգնություն տրամադրե-

¹ Հարությունյան Մ. Իր երկրի և ժողովրդի ղեսպանը, «Գարուն» (Ե.), 1981, N 3, էջ 78:

² «Правда» (М.), 1949, 4 июля.

լու, կապիտալիստական երկրներում գործազրկության և այլ հանգուցային հարցերի շուրջ:

ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 5-րդ սեսիայի օրերին (1950-ի հոկտեմբեր) նա նորից ամբիոնի մոտ էր, կրթոտությամբ պաշտպանում էր Սովետական Միության արտաքին քաղաքականության շահերը: Մասնավորապես հիշատակելի է հոկտեմբերի 5-ի նրա ելույթը, որտեղ նա բացահայտում էր արևմտյան տերությունների իրականացրած գծի հետևանքով տնտեսական և սոցիալական խորհրդում առաջացած ոչ գործարար վիճակը, հոկտեմբերի և նոյեմբերի մյուս ելույթները, ելք նա դատապարտում էր Լիբիան, Էրիտրեան բաժանելու գաղութատեր տերությունների քաղաքականությունը: Նա պահանջում էր ստեղծել մի միասնական անկախ և սուվերեն Լիբիա, միավորել նրա երեք մասերը (Կիրենայիկա, Տրիպոլիտանիա և Ֆեղան): Նա գտնում էր, որ Էրիտրեայի հարցը լուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել Եթովպիայի օրինական պահանջները: Հաղթեցին Սովետական Միության արդարացի հարցադրումները: Այսօր առկա է անկախ և հակաիմպերիալիստական Լիբիան: Այսօր Էրիտրեան Եթովպիայի անքակտելի մասն է:

1951-ի մայիս-հունիսին Հ.Հարությունյանը նորից ԺՆԼՈՒ էր, եվրոպական տնտեսական համճառությունի 6-րդ սեսիայում, սառը պատերազմի դժվարին պայմաններում հետևողականորեն պաշտպանում էր ՄՍՀՄ արտաքին քաղաքականության դիրքերը:

Թուրք դիվանագետ Յակուբ Կադրի Կարասունանօղլին հատկապես շեշտում է սովետական դիվանագետների, այդ թվում, մասնավորապես Հարությունյանի համոզիչ, կրակոտ ճառերը ԺՆԼՈՒ, ՄԱԿ-ի համճառությունի նիստերում: Նա հիշում է, թե ինչպես «անզուսաքս քաղաքագետները», պետական գործիչները կորցնում էին խոսելու ունակությունը, վիճարանությունը համոզիչ փաստերով վարած սովետական դիվանագետների գերազանցության հետևանքով: «Երբ ռուսներից որևէ մեկը ելույթ էր ունենում, դահլիճում հիացմունքով ու հարգանքով լի լռություն էր տարածվում, թարգմանիչները ոգևորվում էին, թարգմանում էին կրթոտությամբ ու ուրախությամբ, իսկ նախագահը, որ սովորաբար նայում էր անտարբեր, աչքերը չէր հեռացնում հռետորից»: «Նույնիսկ ամենատարբալակ, պրոցեդուրային հարցերում հարձակվում էին ռուսները և նրանց կողմնակիցները, իսկ անզուսաքսերն ու նրանց դաշնակիցները մշտապես պաշտպանվում էին: Երբ ռուսն ամբիոն էր բարձրանում, դահլիճը, որտեղ տեղի էին ունենում բանակցությունները, ամմիջապես հեղավոխական դատարանի էր վերածվում: Ո՞ւմ պետք է այս անգամ հարցաքննեն, ո՞ւմ պետք է մեղադրեն: Ֆրանսիական պատվիրակության ղեկավարը հայացք էր փոխանակում իր անզվիացի գործընկերոջ հետ, անզվիացին նայում էր աչքերը սառեցրած ամերիկացուն, կարծես թե հարցնելով. հետաքրքիր է,

ո՞նք վրա են հիմա հարձակվելու, Չե՞ր, քե՞ ինձ վրա: Գրա հետ մեկտեղ ո՞չ Ջարութինը¹, ո՞չ Հարությունյանը վախեցնող տեսք չունեին»²:

Հիշատակության արժանի է 1953-ի ապրիլի 20-ի Նյու Յորքում տնտեսական և սոցիալական խորհրդի 15-րդ սեսիայում Սովետական Միության ներկայացուցիչ Համազասպ Հարությունյանի հիմնավոր ելույթը աշխարհի տնտեսական դրության մասին: Ելույթը խարսխված էր հարուստ փաստական նյութի և դիպուկ եզրակացությունների վրա, որտեղ ցուցադրված էին տարբեր երկրների տնտեսական զարգացման ընդհանուր արդյունքները: Հոետորը քուղագեծել էր կապիտալիստական երկրների էկոնոմիկայի ռազմականացման հետևանքները: «Ճնդիրն այն է, որպեսզի նպաստել սպառազինությունների մրցակազմի դադարեցմանը, խաղաղ էկոնոմիկայի զարգացմանը, երկրների միջև գործարար, առևտրական հարաբերությունների զարգացմանը՝ կողմնակի փոխադարձ օգուտի և հավասարության հիմքի վրա: Մենք դրան ենք կոչ անում, ինչպես տնտեսական և սոցիալական խորհուրդը, այնպես էլ Միավորված ազգերի կազմակերպությունը», - վերջում հայտարարել էր սովետական ներկայացուցիչը:

Բեղուն էր Հ.Հարությունյանի գործունեությունը աշխատանքի միջազգային կազմակերպությունում: Որպես ՄՍՀՄ պատվիրակության ղեկավար՝ նա ակտիվորեն մասնակցեց այդ կազմակերպության գլխավոր կոնֆերանսի 40-րդ սեսիային (1957-ի հուլիս): Օրակարգի հարցերի բննարկմանը գուզընթաց, սովետական պատվիրակությունը կոնֆերանսի ամբիոնն օգտագործեց հասարակական կարծիքը զինաթափման, առանձնապես ատոմային ու ջրածնային զենքի փորձարկումները դադարեցնելու կարևորագույն խնդիրների վրա կենտրոնացնելու համար:

Նորից դիմենք փորձառու դիվանագետ, ճանաչված շինագետ-պատմաբան, ակադեմիկոս Ս.Լ.Տիխվինսկու հեղինակավոր բնորոշումներին. «Անձամբ ինձ բախտ է վիճակվել Համո Ալիմովիչի հետ լինել ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 5-րդ և 7-րդ նստաշրջաններում՝ Նյու Յորքում: Այդ տարիներին ինձ, մյուս երիտասարդ դիվանագետներին, հիացնում էին Համո Ալիմովիչի գիտելիքները, փորձը, մեր հակառակորդների դեմ նրա մղած փայլուն բանավեճերը, որոնք աչքի էին ընկնում իրենց կոտ փաստարկումներով: Այսինքն, ինձ հիացմունք էին պատճառում այն հատկությունները, որոնցով այնպես շուտորեն ու կատարյալ ձևով օժտված էր Համո Ալիմովիչը. անզրեքն և ֆրանսերեն լեզուների փայլուն իմացություն, բանավիճելու շնորհիք, առարկայի իմացություն. այստեղ իրեն, իհարկե, դրականորեն զգալ էր տալիս գիտական և դասախոսական գործունեության բազմամյա փորձը»: Մերգեյ Լեոնի-

¹ Գեորգի Ջարութին (1900-1958), խորհրդային դիվանագետ, ԽՍՀՄ դեսպան Կանադայում (1944-1946), Մեծ Բրիտանիայում (1946-1952), ԱՄՆ-ում (1952-1958), արտգործնախարարի տեղակալ (1958) - Ա.Կ.:

² Караосманоглу Якув Кадрн. Дипломат поневоле, М, 1978 - с. 289-290.

դովիչ Տիխվինսկին շեշտում է, որ նա «բացառիկ տաղանդի տեր պղծմիստ էր»։ «դիվանագիտական դժվարագույն մարտերից նա բազմիցս դուրս է եկել հաղթանակով, շնորհիվ իր գործիմացության, մեծ կոլլեկտորայի և մանավանդ հայ և այլ ժողովուրդների բանահյուսության իմացության և, իհարկե, անձնական հմայքի: Նրան միշտ զարդարում էր թեթև հումորը»: «Նա բացառիկ հոգատար անձնավորություն էր, մեր արտաքին քաղաքականության հմուտ մասնաշաղկանացողը», «եռիտասարդ դիվանագետներից էր հաղորդում իր փորձը», - հավաստում է Տիխվինսկին:

Համազասպ Հարությունյանի հետ երկար տարիներ աշխատած Դմիտրի Միխայլովիչ Ալեքսևիև ասում է. «Նա շատ զգայուն և ուշադիր էր ընկերների հանդեպ: ... Շատ սրտամուտ մարդ էր»:

1955-1958 թթ. նա գլխավորում էր ՄՍՀՄ արտաքին գործերի նախարարության եվրոպական բաժինը: 1958-ի հոկտեմբերից մինչև 1963-ի մարտը Հ.Հարությունյանը ՄՍՀՄ արտակարգ և լիազոր դեսպանն էր Կանադայում: Նա մեծ ակտիվություն դրսևորեց սովետա-կանադական հարաբերությունների զարգացման գործում՝ անձնական կապեր հաստատելով այդ երկրի պետական ու հասարակական գործիչների, գիտնականների, համալսարանների պրոֆեսորադասախոսական շրջանների հետ: Բացի իր պաշտոնական դիվանագիտական գործունեությունից, Համազասպ Հարությունյանը անգլերեն, ֆրանսերեն լեզուներով դասախոսություններով ու զեկուցումներով հանդես էր գալիս կանադական համալսարաններում, գիտական ընկերություններում, գործարարական ակումբներում, պառլամենտի դեպուտատների ժողովներում, ինչպես նաև ուկրաինացիների, ռուսների, բելոռուսների և հայերի հավաքներում, մրանց պատմում ՄՍՀՄ արտաքին ֆալդադասիրական քաղաքականության, սովետական ժողովուրդների կյանքի ու ձեռք բերած նվաճումների մասին: Առանձին զեկուցումներ ժամանակին հրատարակվել են կանադական գիտական ամսագրերի էջերում:

Ահա թե ինչպես է արտահայտվել Հ.Հարությունյանի մասին Կանադայում Չեխոսլովակիայի նախկին դեսպան Յարոսլավ Տաուերը. «Չորս տարի Դուք համբերատարորեն մի շարք դասախոսություններում, ելույթներում և մամուլի կոնֆերանսներում կանադացիներից շարադրում էիք Մովսեսյան Միության խաղաղասիրական քաղաքականությունը և երբեմն ոչ բարեկամական հարցերին պատասխանում էիք Չեզ հատուկ հումորով: Այդ միջոցով աստիճանաբար ջարդվում էին անջրպետներն ու նախապաշարմունքները, որ ներշնչում էին ժողովրդին Սովետական Միության նկատմամբ: Շնորհիվ կուլտուրական և գիտական կապերի բնագավառում Չեք աշխատանքի, շատերն ըմբռնեցին, թե զարգացման ինչպիսի հնարավորություններ ունեն արվեստն ու գիտությունը Սովետական Միությունում: Մարդիկ հարցում են Չեզ՝ տոնեսագիտության մարզում Չեք գիտելիքների համար»: Նա նշում է նաև, որ ԱՄՆ-ի դեսպանը Կանադայից հեռացել էր համարյա աննկատ, մինչդեռ Հ.Հարությունյանը, ժամանակի պակասության պատճառով, նույնիսկ չէր կարողացել

մասնակցել այն բոլոր հանդիպումներին, որ կազմակերպվել էին իր մեկնելու պատվին»: Սա շարադրված է Չեխոսլովակիայի դեսպան Յարոսլավ Տաուե-րի՝ 1963 թ. փետրվարի 2-ին գրված նամակում:

Ահա թե ինչ էր գրել նույն օրերին կանադական թերթերից մեկը ՄՍՀՄ դեսպանի մասին. «Նորին գերազանցություն Համազասպ Հարությունյանը շաբաթվա վերջին մեկնում է Մոսկվա, Օտտավայում անցկացնելով չորս տա-րի որպես ՄՍՀՄ դեսպան: Նա ակամավոր դեսպան էր: Բազմաթիվ կանադա-ցիներ, որոնք նույնիսկ դագաղի մեջ չէին պաշտպանի այն, ինչի օգտին հան-դես էր գալիս այ-ն Հարությունյանը, ցավում են, որ նա հեռանում է երկրից, որովհետև նա իր հետ Օտտավա էր բերել հումորի կենդանի զգացում և ամեն-օրյա կանադական կյանքին մեկնաբանություններ տալու հիանալի ընդունա-կություն...»:

Մինչև հիմա էլ Կանադայի հայոց համայնքի մարդիկ առիթը չեն կորց-նում սիրով ու խորին հարգանքով հիշատակելու նրա անունը, հիշելու նրա հայրենասիրական գործունեությունը: Կանադայի Տորոնտո քաղաքի կենտրո-նում է գտնվում գունավոր լուսանկարչության մեծ վարպետ Արթին Գաուկի (Գաուկյանի) արվեստանոցը: 1969-ի մարտին, երբ սովետական ռադիոյի և հեռուստատեսության ղեկավարության պատվիրակության կազմում ես նույն-պես գտնվում էի Կանադայում, հստակ երևում էին սովետական դեսպանի հայրենամոլեր գործունեության արդյունքները: Վարպետ Արթինը և Լյուսին հպարտությամբ էին մատնացույց անում իրենց արվեստանոցի աչքի ընկնող տեղում կախված Համազասպ Հարությունյանի մեծադիր դիմանկարը, վերիի-շում նրա հետ ունեցած իրենց բարեկամությունը: Սովետական Հայաստանի ջերմեռանդ պրտպագանդիստ, դիվանագետ Համազասպ Հարությունյանը Կանադայում շատ ու շատ հայերի ցույց տվեց հայրենի երկրի, Երևանի, նրա մարդկանց հետ կապերը սերտացնելու, հայրենիքը գուրգուրելու, սիրելու ուղին: Սովետական Հայաստանին նվիրված բարեկամներ, մոմբեայցի տեր և տիկին Մուրեն և Էլջա Աբիբիդյաններն այսօր էլ խանդավառամբով են հի-շում անվանի դիվանագետի հայրենամոլական գործունեությունը, հանում Սո-վետական Հայաստանի նրա կրակոտ խոսքը:

1963-1964 թթ. Համազասպ Հարությունյանը որպես ՄՍՀՄ ներկայա-ցուցիչ մասնակցում էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի (լուսավորության, գիտության և կուլ-տուրայի հարցերի գծով ՄԱԿ-ի կազմակերպություն) գործունեությունն ու մե-թոդները հետազոտող միջազգային համձնաժողովի աշխատանքներին (1963-1964 թթ.՝ Փարիզ, Բրազիլիա, Ռուրդվայ, Չիլի, Կոլումբիա, Պերու, Մեքսիկա, Կուբա): Ամիսներ շարունակ այդ երկրներում աշխատելուց հետո նա նորից վերադարձավ ՄՍՀՄ արտաքին գործերի մինիստրության կենտրոնական ա-պարատ, սկզբում որպես միջազգային տնտեսական կազմակերպությունների քաժնի վարիչ, իսկ ավելի ուշ՝ արտաքին քաղաքական միջոցառումների պլա-նավորման վարչության գլխավոր խորհրդական:

Համազասպ Հարությունյանը պարզևստրել էր Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի երկու, Պատվո ճշան շքանշաններով, բազմաթիվ մեդալներով ու պատվոգրերով:

* * *

Համազասպ Հարությունյանն ամսաինան սիրով էր համակված հարազատ Սովետական Հայաստանի, նրա նվաճումների, նրա աշխատավոր և մտավորական մարդկանց նկատմամբ: Նա բյուրավոր թելերով, հետաքրքրվածությամբ երկու կապված էր այն ամենի հետ, ինչ կատարվում էր Երևանում, մշակույթի, կերպարվեստի, գրականության, պատմագիտության և բազմաթիվ այլ ապարեզներում:

Անվանի դիվանագետը առանձնակի հարգանք էր տածում մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանի¹ անձի ու արվեստի նկատմամբ, նրա կտավների նվիրյալ երկրպագուն էր: Մարտիրոս Սարյանի և Համազասպ Հարությունյանի միջև 1950-ական թթ. նամակագրությունից ակնբախ են երևելի դիվանագետի գեղագիտական նրբին ճաշակը, կերպարվեստի նկատմամբ ունեցած բազմազան հետաքրքրությունները: Նկարների նրա հավաքածուում Մարտիրոս Սարյանը ներկայացված է մեկուկես տասնյակից ավելի կտավներով, այդ թվում՝ «Կարմիր ձին», «Ֆելախ կինը», «Ջրիորի մոտ» և այլ գլուխգործոցներ:

Արվեստի, գրականության, բատրոնի վարպետները սիրում ու հարգում էին անվանի դիվանագետին, որը նրանց շրջանում սիրված բարեկամ գրուցակից էր, բանիմաց գեղագետ ընդդիմախոս:

«Ես ուղղակի ապշած եմ, թե Դուք որքան նրբորեն եք ընկալում ոչ միայն ներկայացումը, այլև լրագրային հասարակ գրախոսականը: Դուք այնքան լավ եք ինձ գրել, որ մեր թատերական քննադատները կարող են նախանձել և՛ Ձեր մտքերն արտահայտելու ունակությանը, և՛ Ձեր դիտողականությանը»: Այսպես է գրել թատերական արվեստի նրա ընկալումների մասին ՄՍՀՄ ժողովրդական արտիստ Եվգենի Սիմոնովը²: 1970-ի փետրվարի 15-ին գրած իր մի նամակում նա հիշեցնում էր, թե ինչպես է հարգել Համո Ալիմովիչ «մարդուն, անձնավորությանը, դիվանագետին» իր հայրը՝ Ռուբեն Սիմոնովը³: «Ձեր սերը կերպարվեստի, քնարերգության, երաժշտության, բատրոնի նկատմամբ իր տեսակի մեջ եզակի է: Եվ դրա համար Ձեր բարեկամները միշտ այդպիսի ուշադրությամբ, հնայված լսում են Ձեզ: Մեր դերասանները

¹ Մարտիրոս Սարյան (1880-1972), նկարիչ, ԽՍՀՄ գեղարվեստական ակադեմիայի, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, 1945-1951 թթ.՝ ՀՆՄ նախագահ - Ա.Կ.:

² Եվգենի Սիմոնով (1925-1994), խորհրդահայ թատերական ռեժիսոր, մանկավարժ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր - Ա.Կ.:

³ Ռուբեն Սիմոնով (1899-1968), խորհրդահայ ռեժիսոր, Վլադիմիր Կուկոլնիկի թատրոնի ղեկավար, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Եվգենի Սիմոնովի հայրը - Ա.Կ.:

արդեն վաղուց Չեզ համարում են իսկական վախճանագրվական, և հանդիսասրահում Չեր հայտնվելը միշտ ուղեկցում են ամենաբարձր կոմպլիմենտներով Չեր հասցեյին», - գրում է էվգենի Սիմոնովը:

Իր մի նամակում Մարտիրոս Մարյանը Համազասպին անվանում էր «իդեալական», «մազվագյուտ մարդ»: «Տնտեսագետ՝ սա կապված է բանականությամբ, չոր հաշվարկի հետ, բայց և մեծ սեր արվեստի նկատմամբ, որ կապված է սրտի, զգացմունքի հետ», - նրա մասին գրել է վրձնի վարպետը: Մարտիրոս Մարյանը սիրով է կերտել սովետական երևելի դիվանագետի դիմանկարը:

«Նա իսկական արվեստ սիրող մարդ էր, - հիշում է մոսկվացի անվանի քանդակագործ, ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ Ն.Նիկողոսյանը¹: - Նրանց տանը միշտ հավարվում էին և՛ ոռու, և՛ հայ արվեստագետներ. մի անգամ վեճ բացվեց Այվազովսկու² կտավների մասին: Եվ Հարությունյանն այնքան զեղեցիկ, վարպետորեն ներկայացրեց տաղանդավոր նկարչի մեծությունը, որ այդ օրվանից Այվազովսկին ինձ համար դարձավ մեր ժողովրդի ամենամեծ զավակներից մեկը»:

Համազասպ Հարությունյանն ուշադրությամբ հետևում էր Սովետական Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի նորություններին, նոր հրատարակություններին, նոր անուններին: Նա մեծագույն հետաքրքրություն հանդես բերեց արևմտահայության պատմության շուրջ այն նոր ուսումնասիրությունների, պատմագիտական աշխատությունների նկատմամբ, որոնք, սկսած 60-ական թթ. կեսերից, նոր լույս սփռեցին երիտօրրակական շարագործության, արևմտահայ ժողովրդի ողբերգության հանգամանքների վրա:

1965-ի ամռանը ես ստացա մի նամակ-գրախոսական նույն թվականին լույս տեսած իմ «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» մենագրության մասին³: Հեղինակը Համազասպ Հարությունյանն էր: Նամակ-գրախոսականը նա գրել էր Կունցևոյի իվանդանոցում, 1965-ի հուլիսի 28-ին, պառկած վիճակում: Գոհ էր գրքից: Նա խորությամբ և բանիմացությամբ վերլուծում էր արևմտահայության ողբերգության ռազմաքաղաքական

¹ Նիկողայոս Նիկողոսյան (ծնվ. 1918), քանդակագործ, ՀԽՍՀ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ - Ա.Կ.:

² Հովհաննես (Իվան) Այվազովսկի (1817-1900), ծովանկարիչ, ռուսական և հայկական արվեստի դասական, Ռուսաստանի գեղարվեստական ակադեմիայի ակադեմիկոս, ծովային գլխավոր շտաբի գեղանկարիչ, 1869-ին Թիֆլիսում բացել է հայ իրականության մեջ առաջին գեղանկարչական ցուցահանդեսը, օգնել է հայկական ազգային կազմակերպություններին, նկարել է «Ալեքի ջարդը Տրապիզոնում 1895 թվին», «Նավերի բեռումը», «Թուրքական նավերը Մարմարա ծովն են բափում հայերին», ապաստան է տվել և նյութապես օգնել Արիմ փախած հայ փախստականներին, ստեղծել է շուրջ 6 հազ. կտավ, այդ թվում Աստվածաշնչին և հայոց պատմության կարևոր իրադարձություններին նվիրված գործեր - Ա.Կ.:

³ Տե՛ս Ջոն Կիրակոսյան. Անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում», էջ 46-51:

հանգամանքները, քացահայտում թուրքական վայրենաբարո բռնապետության շարագործության դրդապատճառները, մերկացնում գերմանական միլիտարիզմի հանցագործ դերը: Հայոց հարցի դիվանագիտական պատմության քաջատեղյակ Համո Ալիմովիչը շեշտում էր, որ «Հայ ժողովրդի պատմության այդ ողբերգական էջը չի կարելի ոչ ջնջել, ոչ մատնել մոռացության, ինչպես և չի կարելի այդպես վարվել Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ֆաշիստների կատարած նմանօրինակ շարագործությունների հետ»: Նա գրում էր հիվանդանոցի իր բախտակից ընկերներ Վարդգես Թևերեյանի¹, Հակոբ Սալախյանի², Գևորգ Էմինի³, Գուրգեն Չոլախյանի⁴, այնուհետև բժիշկներ Արմենակ Խրիմյանի⁵, Արամ Աբրահամյանի⁶ և այլոց հետ իր գրույցների մասին: Նա հաղորդում էր, որ կարդացել է Արամայիս Մնացականյանի⁷ «Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ», Ռուբեն Սահակյանի «Մովեստա-թուրքական

¹ Վարդգես Թևերեյան (1902-1969) - գրող, «Կյանքը սկսվում է նորից», «Երբ հորդում են գետերը», «Մտևիկ գետից այն կողմ», «Երկու ճակատագիր», «Գրասխոյը չի հավում» վեպերի հեղինակ - Ա.Կ.:

² Հակոբ Սալախյան (1922-1969) - գրականագետ-քննադատ, մշակութային գործիչ, հիմնական աշխատությունները՝ «Ն.Վ.Գոգոլ. քննադատական-կենսագրական ակնարկ», «Եղիշե Չարենց», «Զինված մարզարեն» - Ա.Կ.:

³ Գևորգ Էմին (1919-1998) - բանաստեղծ, քարզմանիչ, «Հիտերատուրնայա Արմենիա» (Ե.) ամսագրի խմբագիր, «Նախաշավիղը», «Խաղաղության ծխամորճը», «Նորքը», «Նոր ճանապարհ», «Ռոբոտներ», «Մինչև այսօր», «Այս տարիում», «Բասներորդ դար», «Բար, հոգեք», «Ախ, այս Մասիսը» ժողովածուների հեղինակ - Ա.Կ.:

⁴ Գուրգեն Չոլախյան (1909-1992) - ճարտարագետ, արդյունաբերության կազմակերպիչ, 1939-1941 թթ.՝ ՀԽՍՀ տեղական արդյունաբերության ժողկոմ, 1941-1945 թթ.՝ Ժողկոմխորհի փոխնախագահ, 1945-1947 թթ.՝ Մոսկվայում ՀԽՍՀ ՆԽ մշտական ներկայացուցիչ, 1948-1955 թթ.՝ Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանի տնօրեն, 1955-1957 թթ.՝ Երբաղիտրիդի նախագահ, 1961-1966 թթ.՝ ՀԽՍՀ Ժողտնտխորհի փոխնախագահ, նախագահ - Ա.Կ.:

⁵ Արմենակ Խրիմյան (1906-1992) - ատոլջապահության կազմակերպիչ, թժկ. գիտ. դ-ր, 1940-1949 թթ.՝ ՀԽՍՀ ատոլջապահության փոխնախարար, 1949-1960 թթ.՝ նախարար - Ա.Կ.:

⁶ Արամ Աբրահամյան (1898-1990) - բժիշկ-ուրոլոգ, թժկ. գիտ. դ-ր, պրոֆ., ղեկավարել է Երևանի զինվորական հոսպիտալների ուրոլոգիական բաժանմունքները (1941-1945), Մոսկվայի մարզային կլինիկայի գիտահետազոտական ինստիտուտի ուրոլոգիական կենտրոնի տնօրեն (1950-1975), ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, 1984-ին Երևանում հիմնադրել է Ռուսական արվեստի բանգարանը - Ա.Կ.:

⁷ Արամայիս Մնացականյան (1911-1984), պատմաբան, պատմ. գիտ. դ-ր, պրոֆ., 1954-1958 թթ.՝ ԽՄԿԿ ԿԿ-ին առընթեր ՍԼԻ-ի հայկական մասնաճյուղի տնօրեն, հիմնական աշխատությունները՝ «Ալեքսանդր Մյասնիկյան», «Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ», «Միասնական շարքերում», «Մարշալ Բաղդամյան» - Ա.Կ.:

հարաբերությունների պատմության հակազիտական լուսաբանումը ժամանակակից բուրբ պատմագրության մեջ» գրքերը:

Հիրավի, Համազասպ Հարությունյանը համակ ուշադրություն էր այն ամենի նկատմամբ, ինչ կապված էր Սովետական Հայաստանի, նրա մարդկանց ու նորությունների հետ:

1969-ի աշնանը հայ ժողովուրդը Սովետական Միության մյուս ազգերի հետ միասին հանդիսավորությամբ տոնում էր իր մեծ զավակի՝ հանճարեղ Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակը: Համազասպ Հարությունյանը թեև ծանր հիվանդ էր, բայց ոտքի էր ելել, Երևան ու Ռ-սեղ էր ելել՝ մասնակցելու բանաստեղծի պատվին կազմակերպված հիրավի աննախադեպ ժողովրդական տոնախմբություններին: Սովետական Հայաստան էին ժամանել սովետական գրական ժիածանի ամենահարգված, ամենահեղինակավոր մեծերը: Հանո Ալիմովիչը հյուրընկալող տան տերերի շարքում էր: Նա ուզում էր ամեն տեղ լինել, ամեն ինչ տեսնել, բոլորի հետ միտք փոխանակել... Հիշում եմ, թե որքան կենսախիճ էր նա, եռանդաշատ Թումանյանի տուն-քանդաքանում, քանաստեղծի այրու՝ Օլգայի, դուստրերի, թոռների կողքին, որտեղ նրա ակտիվ մասնակցությամբ կազմակերպվել էր ճաշկերույթ-ընդունելություն, որի թամադան քանաստեղծ Հրաչյա Հովհաննիսյանն¹ էր:

Մա նրա վերջին այցելությունն էր Սովետական Հայաստան: Այլևս նա զամված մնաց անկողնում: Համազասպ Հարությունյանը մահացավ 1971-ի ապրիլի 2-ին Մոսկվայում 69 տարեկան հասակում:

Ալեքսեյ Կոսիգինի², Անաստաս Միկոյանի, Անդրեյ Գլոմիկոյի, Վասիլի Կուզնեցովի³, Հովհաննես Բաղրամյանի և այլոց ստորագրած մահախոսականում Համազասպ Հարությունյանը բնորոշվում էր որպես սկզբունքային կոնունիստ, լենինյան դպրոցի դիվանագետ, պարտաճանաչ ու զգայուն մարդ:

...1957-ին ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրության սխտեմում դիվանագիտական աշխատանքում ազգային կադրերի ներգրավման կապակցությամբ հատուկ համձնամտողովի եզրակացությամբ Սովետական Հայաստանից Մոսկվա հրավիրվեցինք երեք ընկերներ: Ես պետք է ընտրություն կատա-

¹ Հրաչյա Հովհաննիսյան (1919-1997) - քանաստեղծ, արձակագիր, քարզմանիչ, հրապարակախոս, հասարակական գործիչ, 1955-1959, 1978-1982 թթ.՝ «Գրական թերթի» (Ե.) գլխավոր խմբագիր, 1982-1986 թթ.՝ «Սովետական գրականություն» (Ե.) ամսագրի գլխավոր խմբագիր, «Իմ կյանքի երգը», «Շովի լուրությունը», «Վայրի վարդ», «Մուրը դափնու վրա», «Հայրական երգ», «Իրիկնային դողանք», «Պատան դրախտավայր», «Մեծության օրեր» ժողովածուների, «Մսկե ամպ», «Պատերազմի դեմքը», «Կապույտ լուսն շուրջ» եռագրության հեղինակ - Ա.Կ.:

² Ալեքսեյ Կոսիգին (1904-1980), խորհրդային պետական գործիչ, ԽՍՀՄ ՆՍ նախագահ (1964-1980), Ա.Կ.:

³ Վասիլի Կուզնեցով (1901-1990), խորհրդային պետական գործիչ, ԽՍՀՄ արտգործնախարարի 1-ին տեղակալ (1955-1977), Գ-Ն նախագահության 1-ին տեղակալ - Ա.Կ.:

րնի Մադրասի, Դամասկոսի և Բեյրութի միջև: ՄՍՀՄ արտաքին գործերի մինիստրության եվրոպական առաջին բաժնի վարիչ Համազասպ Հարությունյանը չափազանց ուշադիր էր, հոգատար բոլորիս նկատմամբ: Հիշում եմ Կոտուզովի պողոտայի վրա գտնվող Համազասպ և Անահիտ ամուսինների հյուրընկալ բնակարանը, որտեղ ճաշի էինք հրավիրված մենք՝ ապագա դիվանագետներս: Տիկին Անահիտը մեզ հյուրասիրեց իսկական երևանյան տոլմայով: Տակավին հինգամյա Հովհաննեսը հայերեն խոսելու առաջին փորձերն էր անում, հատկապես քանիցս կրկնելով իրեն դուր եկած «խայտառակ» բառը:

Վերջերս այցելեցի Անահիտ Մուշեղովնային: Բնակարանում ամեն ինչ հիշեցնում է անվանի դիվանագետի, հայրենասեր գործչի հիշատակը: Հյուրընկալ հարկի տակ ավանդույթները շարունակվում են:

Այսօր կրտսեր Հարությունյան Հովհաննեսն արդեն հասուն դիվանագետ է, եվրոպական մի քանի լեզուների իմացությամբ: Նա աշխատում է ՄՍՀՄ արտաքին գործերի մինիստրության Սերժավոր Արևելքի բաժնում: Համազասպ Հարությունյանի գործի շարունակությունը հուսալի ձեռքերում է:

ՄՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՆՔԸ¹

Վերջերս թուրքական մամուլը շատ է գրում թուրք-աֆղանական համեմառախոսության, աֆղան անօրեն-փախստականների մուրթիայի հյուսիսարևելյան նահանգները փոխադրելու և նրանց այնտեղ բնակություն հաստատելու իրավունք ընձեռելու մասին: Թուրքական կառավարության փոխնախագահ Օզալն² այդ նպատակով այցելել է Պակիստան, հանդիպել աֆղանցի թուրքախոս իր արյունակիցների հետ, արել զրգոչ հայտարարություններ: Այժմ արդեն թուրքական թերթերը գրում են էրզրումի նահանգում վեց հազար աֆղան վերաբնակիչներ ընդունելու և նրանց մշտական բնակության իրավունք շնորհելու մասին:

Արևմտահայության բեկորները, ցարուցրիվ լինելով աշխարհի տարբեր մասերում, զրկվել են սեփական հողի վրա ապրելու իրավունքից, իսկ նրանց հայրենի վայրերը այսօր տրամադրում են սեփական կառավարության դեմ խռովություն բարձրացրած, հետամնաց, մոլեռանդ ու խավարամոլ մարդկանց խմբերին: Սա հրեշավոր ու հակամարդկային միջոցատում է, որ իրականացնում են այսօրվա Թուրքիայի զինվորական վարիչները՝ ոտնահարելով միջազգային իրավունքի տարրական կանոնները:

Ամբողջ աշխարհը գիտի թուրքական պետականության հետ հայոց կոնֆլիկտի էության մասին, գիտի, որ սփյուռքահայությունը պայքարում է իր ոտնահարված իրավունքները ետ մվաճելու համար: Իսկ թուրքական կառավարությունը փորձում է անտեսել արդարությունը, ձեռնոց է նետում հայությանը, միջազգային հասարակական կարծիքին, փորձելով անտեսել, ոտնահարել հայրենիք ունենալու նրա սուրբ իրավունքը: Այսօրվա թուրք վարիչները կրկնում են իրենց նախորդներին՝ սուլթաններին, երիտթուրքերին, քենապականներին: Նրանք ձգտում են հայ ժողովրդին զրկել իր կրոնատենքը վերականգնելու, հայրենիք վերադառնալու հնարավորությունից:

Թուրքական պետականությունը կոպիտ կերպով խախտում է փոքրամասնությունների իրավունքների մասին Լոզանի պայմանագրի դրույթները, որոնց տակ դրված են Թուրքիայի ներկայացուցիչների ստորագրությունները:

Աֆղանստանից տեղավորվող թուրքալեզու, թուրքախոս վերաբնակիչների փոխարեն նա պետք է իրավունք տա հայրենի հողերը վերադառնալ գաղթական հայերի սերունդներին:

¹ Սահակյան Ջ. Սփյուռքահայության պատմական իրավունքը // «Չարքունիք» (Բյուրուք), 1982, 25, 26 օգոստոսի: «Հորիզոն» (Զվերկ), 1982, 30 օգոստոսի: «Լրաբեր» (Լ.Ա.), 1982, 11 սեպտեմբերի: «Աշխարհ» (Փ.), 1982, 25 սեպտեմբերի, 2 հոկտեմբերի:

² Թուրքուտ Օզալ (1927-1993), թուրք քաղաքական և պետական գործիչ, 1982-1983 թթ.՝ ԹՀ փոխվարչապետ, 1983-1989 թթ.՝ վարչապետ, 1989-1993 թթ.՝ նախագահ - Ա.Կ.:

Ամեն մի ժողովուրդ իրավունք ունի ապրելու իր պապերի հողերի վրա:

* * *

Օսմանյան կայսրության պատմությունը ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ՝ դարերի ընթացքում կիրառված զանգվածային ահաբեկչության պատմությունն է: Թուրք զավթիչները Անատոլիա հասան արդեն զուխ կարելու հարուստ փորձով: Ապա վերհիշենք թուրք-սելջուկների և քարա-քոյունլու թուրքական կիսավայրենի ցեղերի վարքագիծը, երբ սրանց առաջնորդները մրցում էին միմյանց հետ կտրված գլուխներից բլուրներ գոյացնելու ասպարեզում: Հետո սրանք զբաղվեցին մարդկանց աչքերը հանելու, կուրացնելու գործով: Միջին դարերում, նաև 18-19-րդ դարերում, թուրքալեզու կիսավայրենի ցեղերի ասպատակություններից, զանգվածային ահաբեկչությունից ժողովուրդները տնքում էին Պարսկաստանից մինչև Բալկաններ, Միջագետքից մինչև Հյուսիսային Աֆրիկայի արաբական Մադրիբի երկրները: Տղամարդկանց ամորձատում էին, աղջիկներին գերեվարում, հարեմներում լլկում, ստրկավաճառության հանում: Թուրքական տիրապետություն կամ զանգվածային ահաբեկչություն՝ հավասարաթեք հասկացություններ էին այն ժամանակների քաղաքակիրթ մարդկության համար:

Թուրքսահպատակ ժողովուրդների, ազգությունների, անհատների համար դարերի ընթացքում չի եղել և ոչ մի անվտանգություն կամ ապահովություն. մարդը Օսմանյան կայսրությունում գերի էր սանձարձակ ահաբեկչության համաճարակին: Քրիստոնյա ազգություններից հետ մնալով ընկերային-տնտեսական, մշակութային մակարդակի առումով, ազգային ինքնագիտակցության, ինքնաճանաչման գաղափարի զարգացման տեսակետից, թուրքերը չարությանբ ու նախանձով էին վերաբերվում նրանց նկատմամբ, քանակաճանաչության փոխարեն ասպարեզ կոչելով բիրտ ուժը, յարադանը, թուրքական սուլթանները մյուս մեծ ու փոքր ազգությունները, հակընդեմ ընթանալով պատմական հողվտյթի զարգացման առարկայական օրենքներին, փորձում էին կամխել օսմանյան պետությունից հույների, սլավոնների, հայերի, արաբների և մյուս ազգությունների անջատվելու ձգտումը:

Ժողովուրդները մերժում էին թուրքական պետականությունը, ձգտում էին խաղաղ թե բռնի ճանապարհով տարանջատվել նրանից, սեփական բախտը տնօրինել սեփական ձեռքերով, սեփական խղճով ու քանակաճանաչությամբ: Մակայն նրանք իրենց ճանապարհին հանդիպում էին թուրքական յաթաղանի անվերջ շարունակվող տեռորին, արյունահեղությանը: Ապա հիշենք, թե ինչքան արյուն են կորցրել սեքթերն ու բուլղարները, շեռնոզորցիները, մակեդոնացիները, հայերն ու հույները, արաբներն ու մյուս ճնշված ժողովուրդները: Նրանց մշտապես հարվածել են թուրքական ահաբեկչությունը, բռնի տեղահանությունները, զանգվածային սպանությունները: Սեփական գիր ու գրականությունից զրկելը, բռնի դավանափոխությունները նույնպես ահաբեկչու-

յուն են: Իսկ ազգային փոքրամասնությունները, ոչ թուրք ժողովուրդները մշտապես գտնվում էին թուրքական պետականության հիրավի տեռորիստական գործողությունների հարվածների տակ:

Ամբողջ 19-րդ դարի ընթացքում, հետո 20-րդ դարի առաջին տասնամյակներին շարունակվում էր թուրք պետականության և նրա կողմից ճնշված ժողովուրդների միջև կենաց ու մահու կռիվը: Դճնշվածներն ազատագրվում էին, տեր դատում իրենց հայրենիքին, առաջ ընթանում զարգացման անհամեմատ քարձր տեմպերով, բայց թուրքական էր: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտումով ավարտվեց Օսմանյան կայսրության պատմությունը. այն դադարեց գոյություն ունենալուց: Նրա փլատակների վրա գոյացան նոր պետություններ: Մակայն հայոց քաղաքական ճակատագիրն անհամեմատ քարդ ընթացք ունեցավ: Հայաստանի խորհրդային Հանրապետության հետ միասին, հայրենի երկրից հեռու գոյացավ հայոց Սփյուռքը: Արևմտյան Հայաստանը դատարկվեց հայերից: Թուրքերն այսօր նոր քայլերի են դիմում՝ յուրացնելու, սեփականացնելու հայոց հայրենիքը:

Առաջին անգամը չէ, որ հայոց հողերի վրա թուրքական պետականությունը զուտ կրոնացեղային, ռասայական միտումներով քնակեցնում է մուսուլման գաղթականների: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում պարտվելով, Բալկաններում սլավոնների հարվածներից խեղճանալով, թուրք ցեղապաշտները մահմեդական գաղթականներին մուխաջիրներ վերաբնակեցնում էին Անատոլիա, հետո նաև Արևմտյան Հայաստան, հայոց հողերի վրա: Այս գործընթացը շարունակվեց նաև 1914-1918 թթ. պատերազմից հետո, Մուստաֆա Քեմալի իշխանության տարիներին: Արդյունքը սակայն գոհացուցիչ չէր: Արևմտյան Հայաստանը շարունակեց մնալ նուր քնակեցված:

Մակայն այդ հողերի իրական տերերի հետ ինչպես երեկ, այնպես էլ այսօր փորձում է հաշվի չնստել թուրքական պետականությունը: Առավել բանական թուրքերը հավանաբար քնազորեն զգում են, որ ուրիշի հողի վրա հաստատվելն այնքան էլ անվտանգ բան չէ, և տասնյակ տարիների ընթացքում թուրքերը խուսափում են երկրի հյուսիսարևելյան մասերում հաստատվելուց, չեն ենթարկվում կառավարության հորդորներին: Հայաստանի տարածքը շարունակում է մնալ թուրքական պետության իշխանության տակ գտնվող երկրներից ամենանոր քնակեցված երկրամասը: Սփյուռքահայը զրկված էր իր հայրենիք վերադառնալու իրավունքից: Միայն ճախկին Ռուսահայաստանի մի փոքր տարածքի՝ մոտ 30 հազար քառ. կիլոմետրի վրա հաջողվեց ստեղծել հայոց նոր հայրենիքը: Արևմտյան Հայաստանը, Կարսի մարզը, Իզդիլն ու Մուրճալուն, հայոց սուրբ լեռը՝ Արարատը, մնացին թուրքերի տիրապետության տակ:

Այսօր հայկական Սփյուռքի երիտասարդ ուժերն այլ աչքերով, այլ չափանիշներով են մոտենում չլուծված խնդիրներին: Նրանք կորսված հողերը, հայրենիքը վերստանալու գաղափարը համարում են գործնական խնդիր: Վերադարձ դեպի Արարատյան երկիրը այսօր դարձել է շատերի կարգախոսը:

Թուրքիան պետք է հարգի միջազգային իրավունքը, իր իսկ ստանճնած պարտավորությունները, հայերին չարգելակի վերադառնալու և ապրելու իրենց պապենական հողերի վրա, իրենց սեփական տանը:

Յուրաքանչյուր ազգության իրավունքն է մնալ իր պապենական հողերի վրա, ընդդիմանալ բռնագաղթին, պայքարել իր կորցրած հողերը հետ ստանալու համար: Պլատոնական հայրենիքի գաղափարով ազգությունը հեռու չի գնում: Նա չորսնում է, ամլանում: Միայն հայրենի, միայն սեփական հողի վրա կարող է ազգը ծլարձակել, համարձակ ու արդյունավետ ապրել ու ճնշել հանուն առաջադիմության, հանուն մարդկային զարգացման:

Դեպի Խորհրդային Հայաստան հայերի վերադարձի, հայրենադարձության խնդիրը արդեն 60 տարի է՝ շարունակվում է: Հայ մարդը Խ.Հայաստանում գտել է խաղաղ և ստեղծագործ կյանքով ապրելու անհրաժեշտ պայմաններ: Նրա ապահովությունը երաշխավորված է երկրի հզորությամբ, ժողովուրդների եղբայրական համագործակցությամբ:

Հայը սկզբում փնտրում էր, գտնում ապահով անկյուն իր համար: Առաջին համաշխարհային պատերազմի արհավիրքներից մազապուրծ, թուրքական մահաբեր հարվածներից ազատված հայ մարդկանց սովալյուկ խմբերը անցան Ռուսաստան, Անդրկովկաս, հետո մաս կազմեցին Խ.Հայաստանի բնակչությանը, մասնակցեցին նրա վերածննդի իրականացմանը: Թուրքական գանգվածային անաբեկության մյուս զոհերը անցան Միջագետքի, Սիրիայի անապատներով, շնորհիվ արաբ ժողովրդի ասպնջականության, հյուրընկալվեցին Լիբանանում ու Սիրիայում, Իրաքում ու Եգիպտոսում, փրկվեցին, գոյատևեցին ֆիզիկապես:

...Անցել են տասնամյակներ այն դժվարին օրերից: Փոխվել են ժամանակները, փոխվել են սերունդները, փոխվել է նրանց հոգեբանությունը: Այժմ նրանք այլ ակնոցներով են նայում կատարվածին: Նրանք տեսնում են նոր մեթոդներ, չափանիշներ կիրառելու անհրաժեշտությունը: Այժմ ժամանակն է թուրքական պետականությանը հիշեցնելու, որ նա պարտավոր է վճարել իր պարտքը, փոխհատուցել հայ ժողովրդի կորուստները: Այդ ինչպես է պատահել, որ հայերը պարտաճանաչ, ընդունելի քաղաքացիներ են ամենուրեք՝ Ավստրալիայում, թե Արգենտինայում, Միացյալ Նահանգներում, թե Ֆրանսիայում, Լիբանանում, թե Սիրիայում, շինարար են, ստեղծագործ, իսկ իրենց հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, թուրքական իշխանության տակ գտնվող իրենց հայրենի հողի վրա ապրելու իրավունք չունեն: Սա կատարվել է լոկ թուրքական պետականության հակահայկական ազգայնամոլական քաղաքականության հետևանքով:

Մարդկային իրավունքների պաշտպանության դիրքերից այդքան բարձրաձայն ճառող պետական ղեկավար գործիչները պետք է գործնական քայլերի դիմեն, ներագոյն ՆԱՏՕ-ի գծով իրենց դաշնակից Թուրքիայի վրա՝ աշխարհի բոլոր ժայրերում հաստատված հայերին իրենց կորսված երկիրը վերադառնալու արտոնություն շնորհելու համար:

Այս խնդիրը նոր չէ: Այն լավ հայտնի է Արևմտադարի դիվանագետներին: 1920-ի օգոստոսի 10-ի Սևրի պայմանագրի տապալումից հետո, որով հայոց պետությունը իր մեջ պետք է ներառեր նաև Արևմտյան Հայաստանը: Այն բազմակողմանիորեն քննարկվեց 1922-1923-ի Լոզանի համաժողովում:

Լոզանի համաժողովում շատ տեղից հարց էր դրվում, թե «այդ ո՞ր իրավունքի գորույթյամբ որևէ ազգ կարող է ընդմիջտ արտաքսել հարյուր հազարավոր սեփական հպատակներին»: Այստեղ նշվում էր, որ «միջազգային իրավունքի տեկան կանոններից մեկը պահանջում է, որ այդպիսի գաղթականները, եթե նրանք չեն կատարել ոչ մի հանցանք, ստանան իրենց տները վերադառնալու իրավունք»: Արդեն այն ժամանակ Իսմեթ-փաշան հանդես էր գալիս Օսմանյան կայսրության, սուլթանների կատարած բոլոր շարագործությունների փաստաբանի դերում, արդարացնում նրանց գործողություններն ընդդեմ «հեղափոխական» և «խռովարար» հայերի:

Լոզանի համաժողովի ռազմահողային հանձնաժողովի տասնչորսերորդ նիստում (1928-ի դեկտեմբերի 13-ին) Իսմեթ Ինենյուն հայտարարում էր. «Ինչ վերաբերում է ներկայումս Թուրքիայում գտնվող հայերին, նրանց ոչինչ չի խանգարում իրենց հայրենակից թուրքերի հետ լիակատար փոքրամասնությամբ շարունակելու ապրել աշխատանքային ու բարեկեցիկ կյանքով, ինչպես դա եղել է առաջներում, մինչև պատերազմը»: Այս կապակցությամբ լորդ Քերզոնը ծաղրում էր Իսմեթ-փաշային, ասելով. «Եթե երկու ժողովուրդների միջև գոյություն են ունեցել երջանիկ հարաբերություններ, ապա ինչպե՞ս պատահեց, որ Փոքր Ասիայում ապրող երեք միլիոն հայերի թիվը նվազելով հասել է 130 հազարի»:

Այնուհետև նա ասում էր. «Ինչո՞ւ տեղահանության պատճառով այժմ հարյուր հազարավոր հայեր ցրված են բոլոր աշխարհամասերում, այն ժամանակ, երբ նրանք պետք է հետևեն թուրքական կառավարության սիրալիր հրավերներին: Վերջապես, ինչո՞ւ է Հայկական հարցը հանդիսանում աշխարհի ամենամեծ խայտառակություններից մեկը»:

Հանրապետական Թուրքիայում թուրքերի քացառիկությունն ապահովելու, մյուս ազգություններին ճնշելու սովորությունը հայտնի է բոլորին: Հայերը շարունակեցին հեռանալ Պոլսից, Իզմիրից և այլ վայրերից: «Հայրենակից թուրքերի հետ» «եղբայրաբար ապրելու», «Թուրքիայում մնալ ցանկացող» հայերին այդպես էլ ապրելու, շնչելու պայմաններ չտվեցին:

Լոզանի համաժողովում թեև Իսմեթ-փաշան փորձում էր խեղաթյուրել Հայկական հարցի իմաստը, նա պատմությունը մեկնաբանում էր միանգամայն հակապատմական, հակագիտական դիրքերից, այնուամենայնիվ ստիպված էր խոստովանել, որ «Փոքր Ասիայի արևելյան մարզերում» հայ ժողովուրդը «միշտ էլ եղել է խիստ մեծաթիվ»:

Այն ժամանակ որոշակի տրամադրվածություն կար հայերին խրախուսելու, որպեսզի նրանք վերադառնային Անատոլիա և նորից հաստատվեին այնտեղ:

Լոզանի համաժողովի մասնակից արևմտաեվրոպական տերությունների ներկայացուցիչները նշում էին, որ «Երևանյան հանրապետություն» հողամասը աղբատ է և գերբնակեցված, ուստի հանդես էին գալիս առաջարկությամբ, որպեսզի Թուրքիան «իր ասիական հողամասի որևէ մասում, հյուսիսարևելյան մահանգներում, կամ Կիլիկիայի ու Սիլիկիայի հարավարևելյան սահմանագծի վրա հայերի համար գտնի նրանց ցանկացած համախմբման կենտրոնը»: Նրանք գտնում էին, որ «ժայերը արժանի են հատուկ ուշադրության՝ աչքի առաջ ունենալով ոչ միայն սերունդների կյանքի ընթացքում նրանց կրած դժբախտ տառապանքները, որոնք հարուցել են քաղաքակիրթ աշխարհի համակրանքն ու զարհուրանքը, այլև նկատի առնելով ապագայի վերաբերյալ նրանց տրված հատուկ հավաստիացումները»:

Լոզանի համաժողովում թուրքական պատվիրակությունն ինքն էր խստովանում, որ «Թուրքիայի ծաղկման համար Թուրքիան ունի հայերի խելքի, առևտրական ընդունակությունների և ձեռներեցության կարիքը»: Սակայն, երբ նրան 1923-ի հունվարի 7-ին առաջարկվեց «Ազգերի Լիգայի գիտությամբ և բուն թուրքական կառավարության ընտրությամբ թուրքական հողամասերի որևէ տեղում հայերին (ինչպես դեռևս Թուրքիայում ապրող, նույնպես և արտասահմանում սփռված հայերին) տրվել կենտրոնացալու և համախմբվելու հնարավորություն», թուրքական պատվիրակությունը պատասխանեց «կտրուկ ու քացարձակ մերժումով»:

Սակայն 1923-ի հունիսի 4-ին Իսմեթ-փաշան հայերի մասին հայտարարում էր, որ «խաղաղ անձինք կարող են ազատ վերադառնալ Թուրքիա», քեև նա հրաժարվեց որևէ պարտականություն ստանձնել «Թուրքիան լրած անձանց գանգվածային վերադարձի հարցում»:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ թուրքերն զգացին համաշխարհային հասարակական կարծիքի ուժը, երբ Անտանտայի երկրների ներկայացուցիչները հայաստան երիտթուրքերից հաշիվ պահանջելու խնդիր հարուցեցին, նրանք փորձում էին ապացուցել «թուրք ազգի ամենդուրյունը»: Բայց երբ նրանք նկատեցին, որ Արևմուտքը խճողված է հակասությունների մեջ, որ կատարված ոճրագործությունը հետևողականորեն չի դատապարտվում, մեղավորները չեն պատժվում, թուրքերն սկսեցին ամենուրեք ասել. «Մենք ավելի քան մեկ միլիոն հայ ենք կոտորել, և Եվրոպան ոչինչ չի ասում մեզ պատժելու համար, և հենց որ մի նոր առիթը ունենանք, մենք վերջ կտանք մնացյալ հայերին, և երկիրը մեզ կմնա» (Գրիգորյան Հ.Գ. Դի Մեղեդեյ ֆոր Արմինիա, Կ.Պոլիս, 1919, էջ 11): Ուրեմն դեռևս 1919-ին կային մարդիկ, որոնք ճշտորեն կռահում էին թուրքական պետական մեքենայի շարժումների հետագա ուղղությունը:

Այժմ ժամանակն է թուրքական իշխանություններին իլիջեցնելու այդ մասին: Նրանցից պահանջել հայերի մարդկային, տարրական իրավունքները, նրանց իրավունք տալ ապրելու իրենց պապենական հողերի վրա: Աֆղանստանից Պակիստան անցած թուրքալեզու խռովարար-փախստականներին

Արևմտյան Հայաստան տեղափոխելը, նրանց Էրզրումի վիլայեթում տեղափոխելը հակամարդկային գործողություն է, որի համար համաշխարհային հասարակական կարծիքը պետք է դատապարտի Էվրենին¹, Օզալին, Թյուրքմենին², այսօրվա Թուրքիայի մյուս զինվորական կառավարիչներին: Նրանց պետք է դատապարտել այն բանի համար, որ նրանք հետապնդում են սեփական ազգությունը, ինքնությունը հարգող ժողովրդին, ոչնչացնում քուրդ առաջադեմ երիտասարդներին:

Թուրքական կառավարիչներին պետք է դատապարտել, բանի որ նրանք հայ հոգևորականներին բանտ են նետում, դատական պրոցեսներ սարքում հայ մանուկներին հայերեն սովորեցնելու, հայ դաստիարակելու ամբաստանությամբ: Նրանց պետք է դատապարտել, որովհետև թուրքական իշխանությունները կեղծում են արևմտահայության պատմությունը, կեղծագրեր տարածում, չբնդացնում իրենց մարդասպան ահաբեկիչ նախորդներին: Եվրոպական ու ամերիկյան գրադարաններից նույնիսկ անհետանում են Հայոց ցեղասպանությանը նվիրված գրքերը:

Թուրքական կեղծարարները փորձում են ապացուցել, թե Անին հայկական չէ, այլ «խեթական», Վանը հայկական չէ, այլ «ուրարտական»: Նրանք փոխում են տեղանունները, քանդում հայոց եկեղեցիները, նեցգափոխում պատմական իսկությունը: Թուրքական իշխանություններն անմիջապես ձերբակալեցին «Զյուրո տեխնիկ» հաստատության տիրոջը (ոմն Ն.Պուլսփի) այն բանի համար, որ նա շինարարական տեղեկատուի մեջ տեղադրել է Թուրքիայի քարտեզը, որի վրա Արևելյան Անատոլիայում ցույց էին տրված Հայաստան և Քուրդիստան երկրները: Անկարայի զինվորական դատախազությունն անմիջապես դատական գործ հարուցեց այդ ճշմարտության դեմ: Իսկ երբ անգլիացի հոշակավոր պատմաբան, հայագետ և կովկասագետ Դեյվիդ Մարշալ Լենգը³ հրատարակեց իր գիրքը (*The Armenians. A People in Exile.* – London. – 1981), որտեղ հարուստ փաստերի հիման վրա ներկայացնում էր հայոց ցեղասպանության պատկերները, թուրք հեղինակները բշտամական հարձակումների հեղեղ կազմակերպեցին նրա դեմ:

Լուս Անջելեսի «Ապարիզ»-ը (26.12.1981) հրապարակեց կիսրացի թուրք պատմաբան, դոկտոր Ս.Ռ.Սոնիելի նամակը՝ ուղղված Լենգի գրքի դեմ: Սոնիելը փորձում է ժխտել պատմական փաստերը, Օսմանյան կայսրության

¹ Քենան Էվրեն (ծնվ. 1917), թուրք զինվորական և պետական գործիչ, 1978-1983 թթ.՝ ԹՀ սպայակույտի պետ, 1980 թ. զինվորական հեղաշրջման կազմակերպիչ, 1980-1989 թթ.՝ միսիսգահ - Ա.Ա.:

² Իլտեր Թյուրքմեն (ծնվ. 1928), թուրք քաղաքական գործիչ, դիվանագետ, ԹՀ մշտական ներկայացուցիչ ՍՍՀ-ում, դեսպան Ֆրանսիայում, Հունաստանում և ԽՍՀՄ-ում, 1980-1983 թթ.՝ արտգործնախարար - Ա.Ա.:

³ Դեյվիդ Մարշալ Լենգ (1924-1991) - անգլիացի պատմաբան, կովկասյան հետազոտությունների պրոֆեսոր Լոնդոնի համալսարանում, Հայաստանի, Վրաստանի և Բուլղարիայի պատմության մասնագետ - Ա.Ա.:

հայ բնակչության բիլը 2,6 միլիոնից իջեցնում է 1,3 միլիոնի, պնդում է, թե ցեղասպանություն չի եղել, Լենգին մեղադրում է ձգտումնարության մեջ:

«Մարմարա»-ի մեջ կարդում ենք (07.04.1982). «Ծովակալ Սեզայի Օրբանք, որ Հայկական հարցը աշխարհի ծանոթացնելու պաշտոնը ստանձնած է, Թուրքիո ծանոթացման վաքըֆի կողմն հետևյալ հայտարարությունը ըրած է. «...Իրականության մեջ թուրքական պատմության ընթացքին հայկական ջարդ տեղի չէ ունեցած: Բրավո, «ծովակալ»: Թուրք լրագրող Մհմետ Հապաքլն էլ «Եսանը» շարաթաթեթթում չարամոն է, որ «մոլեռանդ հայեր ներդրություն խնդրելն գատ, հողային պահանջ ալ կներկայացնեն» («Հատաջ», 1982, 27-28 փետրվարի):

Թուրքիայի վարչապետ Ուլուսուն¹ նույն բանն է երգում. «Հայկական պնդումները իրականության մեջ պարզապես պատմական դեպքերը կխեղաթյուրեն» («Մարմարա» 1982, 5 մարտի):

Թուրքիայում այսօր 100 հազար քաղաքական բանտարկյալ կա: Բայց Ուլուսունները այն դրախտավայր են ներկայացնում: Ամեն 1000 երեխայից հարյուր հիսունը այս երկրում մեռնում են կիսաքաղց գոյության հետևանքով: Թուրք բանվորների 40 տոկոսն անգրագետ է: Բայց թուրքական մամուլը թուրքական իրականության գովքն է անում: Ավելի զգուշավորները ավելի շքահայաց են հայոց հարցում: «Երև կջանանք անտեսել հարց մը, որուն մասին ամբողջ աշխարհի կխոսի արդեն, ինքնադատապարտության երևույթ մը ստեղծելն գատ ոչ մեկ իմաստ ունի», - «Միլլիեթ» թերթում գրել է ոչ անհայտ իրապարակաստ Սեհմեդ Ալի Բիրանը² (Մարմարա. - 1982. - 27 փետրվարի): Սա առաջարկում է չընդդիմանալ հայերին «ժայնապատ հաղորդումներ» կազմակերպելու «օտար հեռատեսիլի, ծայնասփյուռի կամ մամուլի մեջ», քանի որ այլապես «այն համոզումը կստեղծվի, որ իբրև թե Թուրքիա կջանա իրականությունը սրողը»: Նույն ձևով մա պահանջում է արգելք հարուցել, եթե օտար երկրներում հայերի հուշարձաններ են կառուցում:

Սա էլ մի ուրիշ տակտիկա է, նույնպես թուրքական: Թուրքական չարագործ ձեռքը գործում է ամենուրեք: «Միլլիեթ»-ի մի այլ աշխատակից, քաղաքական գիտությունների դոկտոր Մյումբազ Մոյսալ³ էլ Ասիայի երկրների մի ժողովում, որ տեղի ունեցավ 1982-ի հուլիսին Երևանում, փորձում էր հանդես գալ թուրքական պետականության «ամմեղունակության» փաստաբանի, հայոց ասարեկչական գործունեության դատապարտողի դերում: Երբ նրան տրվեց պատմաքաղաքական հիմնավոր հակահարված, ժողովի մասնակիցները ծափահարեցին: Իսկ Մոյսալը, համենայն դեպս, ատերես զոջաց՝ հանդի-

¹ Մաիմ Բյուլենտ Ուլուսուն (ծնվ. 1923), թուրք զինվորական և պետական գործիչ, ծովակալ, 1980-1983 թթ.՝ ԹՀ վարչապետ - Ա.Կ.:

² Սեհմեդ Ալի Բիրանը (1941-2013), թուրք լրագրող, գրող, քաղաքական մեկնարան - Ա.Կ.:

³ Մյումբազ Մոյսալ (ծնվ. 1929), թուրք քաղաքական գործիչ, իրավաբան, քաղաքագետ, ԹՀ արտգործնախարար (1994) - Ա.Կ.:

պելով համոզիչ փաստարկների, ճշմարտության օգտին Ասիայի երկրների ներկայացուցիչների բուռն արձագանքին:

Ամենուրեք հայ ժողովրդի զավակները պետք է փաստերի իմացության, մեր ժողովրդի խնդրի արդարության գիտակցության ըմբռնումով գործուն կերպով հանդես գան հայրենիքի շահերի պաշտպանությամբ: Խ.Հայաստանը սիրելուն գուզընթաց պայքարել, որպեսզի Թուրքիան ճանաչի արևմտահայության՝ այսօրվա Սփյուռքի շահերն ու իրավունքները: Հայ ժողովուրդն իրավունք ունի ապրելու իր պապենական հողերի վրա: Հայոց հողերը պատկանում են հայերին:

**ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՑ ՄԻ... «ԱՆՏԻՊ» ՄԱՍՈՒՆԸ
ԱՆՑՅԱԼ... ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ¹**

Առնելով մեր պաշտոնակից «Հնչակ Հայաստան»-են, հաճույքով տեղ կուտանք Խորհրդային Հայաստանի այդ օրերու, 80-ական թթ. առաջին տարիներու, արտաքին գործերու նախարար, պատմաբան և գրող Ջոն Կիրակոսյանի այս շահեկան հարցազրույցին, որ տեղի ունեցած էր իր՝ Մարսել այցելութեան առիթով:

Ինչպես ըմբերողները պետք է նշաբեն, հակառակ որ անցնող տասնամյակին հայութեան գլխուն բազմաթիվ փորձանքներ եկան, հիմնական մեծ փորձանքը 1915-ի Եղեռնն էր, որուն մասին այնքան պերճախոս է հայրենի վաղամեռիկ քաղաքագետ-պատմաբանը:

* * *

Հարցում. – Խորհրդային Հայաստանի 62-րդ տարեդարձի և մեր շրջանում կազմակերպված հանդիսությունների կապակցությամբ մենք հանդիպեցինք Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության արտաքին գործերի նախարար, պարոն Ջոն Կիրակոսյանի հետ և նրան տվեցինք մի քանի հարցեր:

Նախ և առաջ մի հարց՝ իր անվան վերաբերյալ. ինչո՞ւ եք դուք կոչվել Ջոն:

Պատասխան. – Շնորհակալություն եմ հայտնում, որ ինձ հրավիրել եք ձեր ռադիոյով մի քանի խոսք ասելու մարտելահայերին և պատասխանելու այն հարցերին, որոնք հետաքրքրում են ձեզ: Շնորհակալություն հրավերի համար:

Թե ինչո՞ւ եմ ինձ Ջոն կոչում, ճշտորեն չեմ կարող ասել, որովհետև հայրս է ինձ անվանակոչել: Ինձ թվում է այս թեմայի շուրջ, կարող եմ ասել, որ առ այսօր խոսակցություն չեմ ունեցել: Բայց մենք ունենք մի շատ անվանի լեզվաբան՝ Հ. Աճառյան² (ես ասում եմ ունենք, հոգ չէ թե նա վաղուց մահացել է, որովհետև նա, ըստ իս, հավերժ է): Նա գիտեր աշխարհի շատ լեզուներ և գրել էր հայոց լեզվի համեմատական քերականությունը, որը նաև աշխարհի շատ ու շատ լեզուների համեմատական քերականությունն է: Նա Սորբոն

¹ Ջոն Կիրակոսյանից մի... «անտիպ» մատուց // «Մասիս» (Լ.Ա.), 1992, 25 ապրիլի:

² Հրայր Աճառյան (1876-1953), լեզվաբան, քանասեր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, «Հայ բարբառների դասակարգումը», «Հայ բարբառագիտությունը», «Հայերեն գավառական քառաբան», «Հայերեն արժատական քառաբան», «Հայոց անձնանունների քառաբան», «Հայոց լեզվի սյուսմություն», «Ս.Մեսրոպի և գրերու գյուտի պատմության աղբյուրներն ու անոցն քննությունը», «Հայոց գրերը» աշխատությունների հեղինակ - Ա.Կ.:

ավարտած հոշակավոր գիտնական էր: Նա կազմել է նաև հայոց անձնանունների բառարանը, բազմահատոր: 6-7-րդ դարերում Ջոն իշխաններ են եղել Հայաստանում: Հիմա դժվարանում են ասել, սակայն հայրս հազիվ թե անունը այդ ժամանակից վերցրած լինի: Ավելի շատ կխորհիմ այն մասին, որ 1920-ական թթ. Ջոն Ռիդլի¹ գիրքը բավականին ժողովրդական էր: Ջոն Ռիդլը այն ամերիկացին էր, որ 1917 թ. մի լավ գիրք էր գրել ռուսական կամ Հոկտեմբերյան հեղափոխության մասին: Նա ազնիվ մարդ էր և շատ էր սիրված երկրի հատկապես հեղափոխական մարդկանց կողմից: Հայրս էլ հեղափոխական էր եղել. Մանվել-Սահակ էր նրա անունը և կխորհիմ, թե հեղափոխական հովերով տարված է ինձ անվանել Ջոն: Համեմայն դեպս, անվանումիցս դժգոհ չեմ: Է՛, եթե արժատներին անդրադառնանք, ապա կտեսնենք, որ սա նույնպես Աստվածաշնչից վերցրած անուն է՝ Հովիաննես, Ժամ, Ջոն, Յոհան և այլն: Այնպես որ ոչ մի տարօրինակ բան չկա: Ինքս էլ ինտերնացիոնալիստ եմ. այնպես որ անունը կրում եմ հպարտությամբ:

Հարցում. – Պարոն նախարար, մի քանի ամիս է, որ ականատես եմք լինում թուրքական մի հարձակողականի՝ պատմությունը խեղաթյուրելու, 1915-ի գեղասպանությունն ուրանալու և խաբելու համաշխարհային հասարակական կարծիքը: Կարո՞ղ էիք, արդո՞ր, մի փոքր պարզաբանում կատարել:

Պատասխան. – Պետք է ասեն, որ հայ ժողովրդի դեմ կատարված մեծ ոճրագործության կեղծարարությունը սկսել են հենց այդ ոճրագործության հեղինակներն արդեն 1915 թ.: Երբ 1915-ին երիտթուրքական պարագլուխները ձեռնամուխ եղան այդ հրեշավոր հանցագործությանը, նրանք մախօրոք արդեն պատրաստել էին իրենց քարոզական մեքենան՝ քաջ գիտակցելով, որ իրենց կատարածը երբեք չի ներվելու աշխարհի ու մարդկության կողմից, մասնավոր՝ որ գիտեին, թե իրենք ձեռք են բարձրացնելու մի ամբողջ ժողովրդի վրա: Պատմությունից մեզ ծանոթ է, թե ինչպես էր երիտթուրքական կառավարությունը պատասխանում Անտանտի տերությունների՝ 1915 թ. մայիսի 24-ի այն նոտային, որտեղ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները մեղադրում էին երիտթուրքերին՝ հայ ժողովրդի նկատմամբ կատարված չարագործության կապակցությամբ: Այդ նոտայի մեջ այսպիսի մի նախադասություն էին օգտագործում. «Դուք պատերազմից հետո պատասխան կտար ձեր կատարած հանցագործությունների համար»: Բնական է, որինքն, որ 1915 թ. ամռանը երիտթուրքական ոճրագործները, մի կողմից, շարունակում էին խորանալ իրենց հանցագործության մեջ, իսկ մյուս կողմից՝ արդարացումներ որոնել: Նախ արգելում էին ելրուպացի ակամաստեներին նկարահանելու կամ նամակագրական միջոցներով աշխարհին իրազեկ պա-

¹ Ջոն Ռիդլ (1887-1920) - ամերիկացի լրագրող, քաղաքական գործիչ, ԱՄՆ-ի կոնոմիստական բանվորական կուսակցության հիմնադիրներից, «Տաս օր, որ ցնցեցին աշխարհը» գրքի հեղինակ - Ա.Կ.:

հելու այն ամենի մասին, ինչ կատարվում էր Օսմանյան կայսրության ներսում: Սակայն կային որոշ կանգալներ (եթե կարելի է այդպես ասել), հնարավորություններ: Դրանցից մեկը ամերիկյան կանալն էր. ամերիկյան դեսպանությունը գործում էր Կոստանդնուպոլսում և ուներ մեծ թվով աշխատակիցներ, որոնք շատ բան էին տեսնում և շատ բան հաղորդում: Մյուսը հենց գերմանական դեսպանությունն էր Վանգեճհայնի գլխավորությամբ, որը թեև դաշնակիցն էր Թուրքիայի, սակայն հետաքրքրասեր գերմանացի սպաները շատ բան տեսնում էին, շատ բան արձանագրում, հաղորդում: Սկանդինավյան երկրներից ևս կային բազմաթիվ ակամատեսներ, որոնք հսկայական նյութ էին ամբարել և հետագայում աշխարհին համձնեցին իրենց վկայություններն այս չարագործությունների մասին: Սակայն ինչ խոսք, որ երիտթուրքական պետականությունը ինքը պատրաստվել էր համապատասխան կեղծարարության: Եվ ահա 1916 թ. լույս աշխարհ եկավ առաջին պաշտոնական կեղծագիրը: Այն սպագրված է ֆրանսերենով: Կոչվում է «Ճշմարտություններ հայ ժողովրդի տեղահանության մասին»: Իհարկե, ճիշտ կլիներ այն վերնագրել ոչ թե «Ճշմարտություններ», այլ՝ «կեղծագրեր», որովհետև դրանով համաշխարհային հասարակական կարծիքից բացցվում էր իսկությունը, որը մի ամբողջ ժողովրդի բնաջնջումն էր: Բայց բանն այն է, որ ինչպես ներքին գործերի նախարար Թալեաթի (որ հետագայում դարձավ մեծ վեզիր կամ վարչապետ) թողած հեռագրերի կրկնօրինակները, այնպես էլ այլ բազմաթիվ թղթեր այնուամենայնիվ դարձան համաշխարհային հասարակական կարծիքի սեփականությունը: Լեճինն իր ընկերներով արդեն 1915 թ. սեպտեմբերին Ցիմներվալդի կոնֆերանսում դատապարտեց երիտթուրքերին: Հետո լույս տեսավ Լեուպոլդ Ֆավրի երկհատուրյակը Եվեյցարիայում: Մյնուհետև՝ Թոյնբիլի և Բրայսի կազմած ժողովածուն՝ ակամատեսների պատմածները հայ ժողովրդի նկատմամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ: Հետո Լեփսիուսը¹ տպագրեց իր հիստորի գիրքը, որը նույնպես ցույց էր տալիս իրեշավոր հանցագործությունը հայ ժողովրդի նկատմամբ: Եվ այն, և այլն: Բայց, նորից եմ կրկնում, թուրքերը պատրաստված էին կեղծարարության: Այն, ինչ որ հիմա արվում է թուրքերի կողմից, կրկնություն է անցյալ փորձի, և բնականաբար նրանք նաև հին կեղծարարության ծառայություններին են դիմում, ուղղակի պատճենահանում, բազմացնում են իրենց վարկածը և տարածում

¹ Յոհաննես Լեփսիուս (1858-1926) - գերմանացի հասարակական գործիչ, միսիոներ, աստվածաբանության դ-ր, մասնակցել է 1894-1896 թթ. հայերի կոտորածների դեմ բողոքի ցույցերին, հայ փախստականների համար միջոցներ հավաքելու կազմակերպմանը, 1914 թ. ստեղծել և ղեկավարել է Գերմանա-հայկական ընկերությունը, Սողոմոն Թեփլիյանի դատավարության (1921) ժամանակ հանդես է եկել երիտթուրքերին մերկացնող ելույթով, «Հայաստանը և Եվրոպան», «Տեղեկագիր հայ ժողովրդի կացության մասին Թուրքիայում», «Հայ ժողովրդի մահը» գրքերի, «Գերմանիան և Հայաստանը 1914-1918 թթ.» փաստաթղթերի ժողովածուի հեղինակ - Ա.Կ.:

աշխարհով մեկ: Բայց, դե գիտեր ինչ, նրանց գրածների հետ լրջորեն վիճելը ամենևին էլ անհրաժեշտություն չէ, քանի որ ամենակարևորը՝ փաստը, ակնհայտ է: Մենք ունեցել ենք երկու միլիոնից ավելի (երկու միլիոն հարյուր հազար՝ մի տվյալով, մյուս տվյալով՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար) բնակչություն Արևմտյան Հայաստանում: Այս բնակչությունը կործանվել է, ոչնչացվել. նրանից բան չի մնացել: Արևմտյան Հայաստանը՝ հայերի ճննդավայրը, նրանց բնօրանքն ըստ էության բնակազրկվել է հայերից: Հայերս մեծ կորուստներ ունեցանք. միլիոնուկես հայ մարդ ուղղակի ոչնչացվեց, մի մասը բշտեց անապատները, մյուս մասը փրկվեց Ռուսաստան և եվրոպական այլ երկրներ անցնելու շնորհիվ: Վերջին տարիներս թուրքական պատմագրությունն ու քաղաքագիտությունը, նաև պաշտոնական ամձինք ավելի, այսպես ասած, ցինիկ են դարձել պատմական փաստերը քննարկելիս: Տպագրում են տասնյակ ու հարյուրավոր գրքեր, որոնցում ամեն ինչ ներկայացվում է ծուռ հայելու մեջ: Ասելիքս այն է, որ 1918 թ. հոկտեմբերի 30-ին, երբ երիտթուրքերը պարտվելուց հետո փախան իրենց երկրից, նրանց դեմ պաշտոնական դատ հրավիրվեց: 1919 թ. հունվարին նրանց դատեցին: Դատեցին հենց թուրքական զինվորական դատարանի միջոցով: Դատեցին, դատապարտեցին, ապացուցեցին, որ նրանք կատարել են մեծագույն հանցագործություն: Եվ հետո այդ շրջանին (1919 թ. սկզբից մինչև 1921 թ. սկիզբը) Կոստանդնուպոլսի և ընդհանրապես թուրքական քերթերի էջերում կարելի է գտնել բազմաթիվ ճշմարտացի խոստովանություններ այն ամենի մասին, ինչ որ կատարվել էր արևմտահայության նկատմամբ: Ես սկզբում մի հողված գրեցի (1982 թ. ապրիլին) այն մասին, որ նույնիսկ թուրք բժիշկներն էին խոստովանել, թե ինչպիսի հանցագործություններ էին կատարել հայ երեխաների նկատմամբ՝ թուրք բժիշկների իսկ կողմից: Թուրք բժիշկներն իրենք ասել էին. մենք չենք կարող թաքցնել այդ հանցանքը, երբ տիֆուսի բացիլը, վիրուսը ներարկել են երեխաներին՝ առանց ապահովական միջոցների, նրանք փաստորեն զանգվածայնորեն ոչնչացնելով: Այլ խոսքով նրանց ասել էին. մենք չենք կարող այս բանը այսօր չխոստովանել, այլայես խարանդ հավերժ կամա թուրք ժողովրդի ճակատին: 1918թ. նոյեմբերի վերջին թուրքական նոր սուլթանը՝ նախկին Վահիդեդդին իշխանը՝ այժմ Մեմնեդ VI-րդ՝ դարձած, ասում էր, թե ես կարգ ու կանոն պիտի հաստատեմ և ցույց տամ, որ հայ ժողովրդի նկատմամբ իրեշագործությունը կատարել են մի խումբ մարդիկ և ամբողջ թուրք ժողովրդին պետք չէ մեղադրել, և մենք մեղավորներին կպատժենք: Եվ այլև, և այլև: Այսպիսի փաստեր շատ կարելի է բերել, ավելի ճիշտ՝ այսպիսի խոստովանություններ: Բայց ժամանակի ընթացքում թուրքերն անպատիժ մնացին: Այդ ժամանակ, ի միջի այլոց, աշխարհն այդքան կազմակերպված չէր, ինչպես 1945 թ. Նյուրնբերգի դատավարության օրերին, երբ ֆաշիստներին դատեցին թողո, այսպես ասած, իրա-

¹ Մեմնեդ VI Վահիդեդդին (1861-1922), Օսմանյան կայսրության վերջին սուլթանը (1918-1922) - Ա.Կ.:

վազիտական նորմերին համապատասխան և նրանց զանեցին անարգանքի - այրուհին, երբ աշխարհը միավորվեց ընդդեմ ֆաշիզմի: Այդ բանը Առաջին համաշխարհային պատերազմից հետո չկար: Եվ դրա համար էլ ամեն ինչ կիսատ-պրատ մնաց, ոճիրը չդատապարտվեց խորությամբ, չդատապարտվեց ամբողջ էությամբ: Բացի դրանից, թուրքիայում այնպիսի մի շարժում տեղի ունեցավ, երբ ինչ-որ մի պահ թուրքերն արդեն հանդես եկան, քանակական շարժման ժամանակ, խեղճացածի կամ պաշտպանվողի դերում, շահագործվողի և ճնշվողի դերում, և սա, կարծես թե, մի տեսակ ստվեր գցեց այն անհրաժեշտության վրա, ինչ պետք էր կիրառել ցեղասպանության դատապարտման ուղղությամբ: Իհարկե, 1963-1965 թթ. եղան բազմաթիվ թուրք գործիչներ, որոնք ասացին, թե չարագործությունն, ինչ խոսք, կատարվել է, սակայն կատարվել է... Օսմանյան կայսրության ժամանակ և ոչ թե հանրապետական թուրքիայի օրոք: Բայց բանն այն է, որ հանրապետական թուրքիան ոճիրը չդատապարտեց այնպես, ինչպես պահանջվում է, կամ ինչպես կատարվել է այլ դեպքերում: Այսօր, իհարկե, պատմության կեղծարարության կապակցությամբ բոլոր մտավորական մարդկանց, ոչ միայն հայերի, այլև այլ ժողովուրդների զավակների, առաջնահերթ խնդիրն է պայքարել ճշմարտության համար: Որովհետև ժողովուրդներին մոլորեցնել, խաբել և հիմարացնել կեղծ ու պատիր փաստերով ու զրվածքներով նույնպես հանցագործություն է: Ոչ պակաս հանցագործություն, քան այն հանցագործությունը, որ կատարվել է մեր ժողովրդի նկատմամբ: Այնպես որ թուրքական կեղծարարությունը սիստեմատիկ բնույթ ունի, առանձնահատուկ «ծրագրերով» ստեղծված: Ամբողջ աշխարհի տարբեր քաղաքներում հսկայական նյութեր կան: Ես այդ նյութերը տեսել եմ Կոպենհագենի գրադարաններում՝ թուրքերի կատարած չարագործությունները դատապարտող, տեսել եմ Փարիզի գրադարաններում, տեսել եմ Լոնդոնում, տեսել եմ Միացյալ Նահանգներում: Ել չեմ ասում Խորհրդային Միության մասին, որտեղ մենք ունենք հարուստ նյութեր: Մենք ունենք հազարավոր մարդկանց, սկանառեսների վկայություններ, որոնք շուտով հանձնելու ենք հանրությանը: Նորից ու նորից ենք հանձնելու, որովհետև ակնհայտորեն դրա անհրաժեշտությունը կա: Պետք է պայքարը շարունակել ճշմարտության համար: Եվ ստախոսությունը, ինչ խոսք, պետք է դատապարտել, որովհետև ստախոսությունը շատ վատ բան է: Հիտլերը, ֆաշիստներն իրենց ամեն մի քայլն անում էին նախապես ստախոսությամբ մարդկանց շփոթեցնելու միջոցով: Եվ հիմա մենք ունենք ընդդիմախոսներ, ձեզ հայտնի այդ պետության մտավորականների շարքում, որոնք սուտը գերադասում են ճշմարտությունից: Ինձ թվում է, որ մարդիկ հիմար չեն: Հայ ժողովուրդն ունեցել է մեծ հայրենիք, հսկայական հողատարածություններ, հազարամյակներ ապրել է հայրենիքում, և թուրքական պետականությունը ամեն ինչ արել է՝ խանգարելու համար հայ ժողովրդին՝ ունենալու իր կանոնավոր, իր որոշակի հայրենիքը՝ իր համապատասխան սահմաններով:

Հարցում. – Պարոն նախարար, ձեր Ֆրանսիա այցելության առթիվ

հանդիպել՝ էր, արդյոք, ֆրանսիական քաղաքական անձնավորությունների, որոնք արտահայտվեին Հայկական հարցի շուրջ:

Պատասխան. - Այո՛, այդպիսի առիթներ ունեցել եմ: Վերջինը՝ հոկտեմբեր ամսին, երբ Մոսկվայում Ֆրանսիայի դեսպան Կլոդ Անոն Երևան ժամանեց, և մենք հաղիք ունեցանք խոսելու բազմաթիվ հարցերի, այդ թվում և խնդրառարկա հարցերի մասին: Ծանոթացրի նրան որոշ գրքերի, որոշ հարցադրանքների: Եվ, ինձ թվում է, նա հասկացողություն դրսևորեց: Ես համոզված եմ, որ այդպիսի ծանոթացումներն անհրաժեշտ են, որովհետև աշխարհը մեծ է, պրոբլեմները՝ շատ: Պարտադիր չէ, որ բոլորը մանրամասնորեն, հանգամանալիորեն իմանան մեր հարցի էությունը: Մեզանից յուրաքանչյուրի առաքելությունը, խնդիրը պետք է հանդիսանա այն, որ մենք լավ զինվենք փաստերի իմացությամբ, ունենանք գիտելիքների որոշակի պաշար, պատմագիտական-քաղաքագիտական որոշակի մակարդակ, որպեսզի կարողանանք ազդեցություն ունենալ ուրիշների վրա: Զգացմունքային մոտեցումները, պատահական, դիպվածային նորություններն ու գիտելիքները, որ սովորաբար շրջանառության մեջ են դրվում շատ-շատերի կողմից, ըստ իս չեն նպաստում խնդրի լավ իմացությանը: Կա հսկայական ժառանգություն Հայկական հարցի շուրջ ստեղծված, նաև ֆրանսերեն հարուստ գրականություն: Կան հեղինակներ՝ Ռենե Պինոն¹, Հանրի Բարբի, Պրեսանսե², Ժան Ժակ Ժորես, նաև Կլեմանտ, նաև Անատոլ Ֆրանս ու բազմաթիվ այլ գործիչներ: Ֆրանսիայի գիտությունների ակադեմիայի բազմաթիվ նախագահներ, որոնք հարցին ծանոթ են եղել, որոնք գիտեն, թե ինչ է կատարվել, և ժամանակին անդրադարձել են այդ խնդիրներին: Երբեմն անհրաժեշտություն չկա հրապարակավ նոր խոսք ասելու: Կարելի է միմիայն մեջտեղ բերել հին գրքերը, հին կարծիքները, և դա միանգամայն բավարարություն կտա այսօրվա հետաքրքրասեր երիտասարդ սերունդներին: Այնպես որ ֆրանսիացի պաշտոնատար անձանց հետ գրուցելիս և պարտադիր չէ այսօրվա մամուլի հատուկ ձևերով հարցեր ուղղել: Ավելի լավ կլինի որևիցե մի փաստաթղթի կամ գրքի կրկնօրինակ ուղղակի նրանց մվեր ուղարկել: Սա, ինձ թվում է, շատ ավելի լավ կլինի, քան թե նրանց զբաղեցնել բազմաթիվ հարցադրումներով և նրանց ժամանակը խլել ընդհանուր խոսակցություններով:

¹ Ռենե Պինոն (1870-1958), ֆրանսիացի պատմաբան, հրապարակախոս, հանդես է եկել հայ ժողովրդի դեմ ոճրագործություն կատարած երիտորդրբերին պատասխանատվությամբ ենթարկելու պահանջով, «Եվրոպան և Օսմանյան կայսրությունը», «Եվրոպան և երիտասարդ Թուրքիան», «Հայերի ոչնչացումը. եղանակը գերմանական, գործը՝ քուրդական» գրքերի հեղինակ - Ա.Ա.:

² Ֆրանսիս դը Պրեսանսե (1853-1914), ֆրանսիացի հասարակական և քաղաքական գործիչ, Ֆրանսիայի խորհրդարանի պատգամավոր, «Պրո Արմենիա» (Փ.) ամսագրի խմբագրական կոմիտեի անդամ, «Հաղորդագրություն Հայաստանի իրադարձությունների մասին», «Ի պաշտպանություն Հայաստանի և Մակեդոնիայի» գրքերի հեղինակ - Ա.Ա.:

Հարցում. – Մտածո՞ւմ եք զարգացնել գոյություն ունեցող կապերը Հայաստանի և Սփյուռքի միջև: Եվ ի՞նչ միջոցներով:

Պատասխան. – Սփյուռքի գոյությունը հայ ժողովրդի այսօրվա ամենաբնորոշ կողմերից մեկն է: 1920-ին, երբ ծնունդ առավ Խորհրդային Հայաստանը, այնտեղ մենք ունեինք շուրջ 700 հազար բնակչություն: Կոտորված, ջարդված-թափված էր մեր ժողովուրդը: Ուսած փոքրերով, ուսիսիսիկ կենդանեցրով, մալարիայով և այլ առարափոխիկ հիվանդություններով տառապող, կեղտոտված երեխաների խմբեր: Նույնիսկ մինչև երեսնական թվականները նրանց հետքերը կտեսնեիք. ոտաբորիկ երեխաների երամներ, պատառուտված ոտքերով, ավազները լցված մսերի մեջ, ո՛չ կոշիկ ունեին, ո՛չ հագուստ և դեռ թերսնված: Երբ մեկ-երկու սերունդ է անցնում, և մարդ արարածը լավ լավ չի սնվում, ապա նրա ժառանգն ի՞նչ պետք է լինի: Էլ չեմ ասում, որ մարդիկ գուրկ էին տաք, երբեմն սովորական ջրից, մարդկային ամենամահաբաժնետ «բարիքներից»: Ահա այդպիսի վիճակով մեկնարկ վերցրեց Խորհրդային Հայաստանը: Շնորհիվ Խորհրդային Միության, եղբայրական ժողովուրդների օգնությամբ ու փոխանագործակցության, ջանքերի միավորման, հայ ժողովուրդը կարողացավ հայրենիքում ոտքի կանգնել և ձգողական, մագնիսի դեր խաղալ ամբողջ հայության համար: 1920-ական ու 1930-ական, մաև 1940-ական թթ. իրականացվեց հայրենադարձություն, հայությունը տուն եկավ, բայց ընդհանուր առմամբ Սփյուռքը պահպանվեց: Թե ինչու. բոլոր հարցերին չէ, որ կարելի է այսօր պատասխան տալ: Բայց ես ձեզ ասեմ հետևյալը. Սփյուռքի գոյությունը հավանաբար դեռ երկար կշարունակվի, ինչպես ցույց են տալիս պատմությունը և այսօրվա վիճակը: Սփյուռքը շարունակում է գոյություն ունենալ, բայց և միաժամանակ աճում է նրա հետաքրքրությունը Խորհրդային Հայաստանի նկատմամբ: Սերունդների մեջ ուժեղանում է սերը մայր հայրենիքի նկատմամբ: Խորհրդային Հայաստանը մնում է հայության կենտրոնը: Նրա հոգևոր, նրա ազգային բոլոր իդոների, նրա վաղվա օրվա նկատմամբ ունեցած հեռանկարների աստիավառչյան: Խորհրդային Հայաստանը այժմ հայ մշակույթի ամենագործող կենտրոնն է. երգը, պարը, գրականությունը, գիրը, լեզուն, դպրոցը, գիտությունը, համալսարանը մախ և առաջ Խորհրդային Հայաստանի հողի վրա են: Այն ժողովուրդն է ուժեղ, որը կապված է սեփական հողին, որը հողից է վերցնում իր ուժը, զգում է, որ ոտքի տակի հողը իրենն է, իր սեփականությունն է: Եվ ուրեմն նա հոգեպես ուժեղ է, արի: Նա չի թաքցնում իր ազգային պատկանելությունը, նա չի հարմարվում: Նա, ընդհակառակը, հպարտությամբ ու քարժրածայն ասում է՝ ես հայ եմ, ես նույնպես պատկանում եմ արժանավոր ժողովուրդների շարքին, քաղաքակրթությանմբ, իմ ունակություններով, մարդկային կարողություններով, ընթանում եմ մարդկային առաջադիմության ճանապարհով և .արձանագրում եմ մեծագույն հաջողություններ:

Հարցում. – Պարոն նախարար, ունե՞ք արդյոք առանձնահատուկ պատգամ՝ ուղղված մարսելահայության, Խորհրդային Հայաստանի 62-րդ - տարեդարձի առիթով:

Պատասխան. - Ասում են, թե Առաջին համաշխարհային պատերազմից հետո առանձին անհատներ են ոտք դրել Մարսել՝ ազատվելով կոտորածից, գաղթից: Ինչքան ուրախալի է, որ Մարսել ոտք դրած մարդկանց մեջ եղել են այնպիսիները, որոնք կարճ ժամանակում մեծ հաջողություններ են արձանագրել և ուշագրավ դեր խաղացել արդի ֆրանսիական իրականության մեջ: Այդպիսի մի մարդու հանդիպեցի Լիոնում. դա Նապոլեոն Բուլլոքյանն¹ է: Ասում են, թե նա որք է եղել, երբ ոտք է դրել ֆրանսիական հողի վրա: Բայց իր աշխատանքի, իր քրտնաջան ջանքերի շնորհիվ կարողացել է ոտքի կանգնել ու պիտանի դառնալ և Ֆրանսիային իր ճարտարագիտական կարողություններով: Այդպիսիները թվով հազարավոր են: Այսօրվա Մարսելի գաղթօջախը եական դեր է խաղում ֆրանսահայ կյանքում և ընդհանրապես Սփյուռքում՝ իր հայրենասիրությամբ, իր ազգային ոգով, նաև, չեմ տարակուսում, Խորհրդային Հայաստանի նկատմամբ տածած իր ամենարճողոված, ամենաշեշտված ազնիվ սիրով ու համակրանքով: Կան մարդիկ, ովքեր ոչ էական խնդիրներ են մեջտեղ բերում և դրանով իսկ խաթարում հայ ժողովրդի միասնությունը: Նրանք չեն տեսնում, որ այնքան ենք այսօր գործիացել, որ կարող ենք Սփյուռքին էլ ինչ-որ ծառայություն մատուցել: Մեր այսօրվա իրավիճակի արտահայտություններից մեկը. մենք այստեղ ենք, եկել ենք Խորհրդային Հայաստանի տոնին մասնակցելու Փարիզում, հայաշատ այլ վայրերում: Եկել ենք այստեղ և մենակ չենք եկել: Եկել ենք ոչ թե մերկ-տկլոր: Եկել ենք յոթանասուն հոգանոց մի համույթով, որը պատիվ կրեի յուրաքանչյուր ժողովրդի: Այս հինգ օրը կլսեք ու կտեսնեք պարզ, ինչպես կքնդա հայոց գոտնան, այն գոտնան, որը վերածվել էր մենակ լավան դոտուկի և լաց էր մենակ արմատավորում հայ ժողովրդի մեջ: Ուխյան Սարոյանին² հարցրել են, թե ինչն է ամենարճողը իր հայ մարդկանց համար: Նա պատասխանել է. հայոց տխուր աչքերը: Հիմա մենք ականատես ենք լինում այն բանին, թե ինչպես է տխուր-

¹ Նապոլեոն Բուլլոքյան (1905-1984) - գործարար, արդյունաբերող, բարեգործ, Ֆրանսիայի հայ համայնքի գործիչ, Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ֆրանսիական դիմադրության շարժման մասնակից, «Աստրա պլաստիկ» ընկերության հիմնադիր - Ա.Կ.:

² Վիլյամ Սարոյան (1908-1981) - ամերիկահայ գրող, «Ֆիզիկալ պատանին քոչող ճոճածողի վրա և այլ պատմվածքներ», «Փոքրիկ երեխաներ», «Ողջույն քեզ սեր», «Անուն Արամ է», «Միքելիս» պատմվածքների ժողովածուների, «Իմ սիրտը լեռներում է», «Կյանքիդ ժամանակը», «Քարանձավի մարդը», «Կոտորածն ամենակնց», «Խաղողի այգին» դրամաների, «Մարդկային կատակերգություն», «Վեսլի Ջեկսոնի արկածները», «Ինչ-որ ծիծաղելի բան», «Հայրիկ, դու խենք ես», «Մայրիկ, ես սիրում եմ քեզ», «Տղաներ և աղջիկներ» վեպերի և վիպակների հեղինակ - Ա.Կ.:

բյուռը վերանում հայ մարդկանց աչքերից և հայ մարդկու աչքերը դառնում են ուրախ, նմանվում են այն բոլոր ժողովուրդների աչքերին, որոնք հպարտ են իրենց գոյությամբ, իրենց մասնակցությամբ համաշխարհային քաղաքակա-
նությանը: Ես ուզում եմ, որ Մարսել քաղաքն անձի ու զարգանա: Մեզ հայտնի է Մարսելի պաշտոնական անձանց համակրական վերաբերմունքը հայ ժո-
ղովրդի նկատմամբ, նրա գործերի ու իղծերի նկատմամբ, նրա դեմ կատար-
ված ու կատարվող անարդարությունների նկատմամբ: Նրանք ճիշտ դիրք են
գրավում, հասկանում են մեզ ճշմարտացիորեն: Դրա համար էլ ես ողջունում
եմ և՛ Մարսելի պաշտոնատար անձանց, և՛ Մարսելի ֆրանսիացիներին, և՛
Մարսելի և շրջակա մյուս քաղաքների հայերին, մաղթելով նրանց 1982 տա-
րին փակել երջանկությամբ: Ընդհավորում եմ 1983 Նոր տարին, մաղթում եմ,
որ 1983-ին լինեն միայն հաջողություններ հայ ժողովրդի համար, հաջողու-
թյուններ լինեն մեր մեծ պետության՝ Խորհրդային Միության և Ֆրանսիայի
հարաբերությունների հողի վրա, ինչը թույլ կտա, որ այստեղի հայրենակա-
րոտ հայերը շուտ-շուտ գնան-գան Հայաստան, մենք էլ շուտ-շուտ գնանք-
գանք Ֆրանսիա և դրանով էլ նպաստենք այն բանին, որ ֆրանսահայերը
մնան հայ, իրենց լեզուն չկորցնեն, զավակներին դաստիարակեն հայեցի:
Դրանով իսկ կապրենք-կտեսնենք, թե վաղվա օրը, հեռանկարը ինչպիսին պի-
տի լինի հայ ժողովրդի համար: Ընդհակալություն եմ հայտնում այս հան-
դիպման համար: Ցտեսություն:

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՃԱՌԸ¹

Երկու տարի անց ես նորից Ֆրանսիայում եմ, Ֆրանսահայ Մշակութային միության, Սովետական Հայաստանի լավ քարեկամների հյուրը: Ինձ համար դա մեծ պատիվ է: Նախ ասեմ, որ ջերմ բարևներ եմ բերել ձեզ բոլորիդ մայր Հայրենիքից: Սովետական Հայաստանի կառավարության ղեկավարներից, Սփյուռքահայության հետ մշակութային կապի մախագահությունից:

Ուրախ եմ մաս, չեմ բացքնում, որ չորրորդ անգամ գալիս եմ Ֆրանսիա, Փարիզ: Մենք՝ հայերս, մեծ հարգանք ենք տաժում ֆրանսիական մեծ ժողովրդի պատմության, նրա հեղափոխական ավանդույթների, նրա մեծ կուլտուրայի նկատմամբ: Մենք ուրախ ենք, որ ֆրանսահայ համայնքը օգտվում է ֆրանսիական հողի ու պետականության հյուրընկալությունից, օրինապահ է, ունի լավ քաղաքացիների, ստեղծագործ ժողովրդի համբավ: Մենք համոզված ենք, որ սովետա-ֆրանսիական հարաբերություններն այսուհետև կընթանան բարեավման ուղիով, երկու երկրների՝ ՄՍՀՄ-ի ու Ֆրանսիայի միջև կհաստատվեն բարեկամության ու համագործակցության նոր կամուրջներ՝ ի բարօրություն սովետական ու ֆրանսիական ժողովուրդների, ի բարօրություն ֆրանսահայ համայնքի: Ես ողջունում եմ մեր հանդեսին մերկա ֆրանսիական պաշտոնական ներկայացուցիչներին:

Սովետական Հայաստանի 62-րդ տարեդարձի այս տարվա տոնակատարությունը մեծ խորհուրդ ունի այն առումով, որ այն տեղի է ունենում Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության 60-րդ տարում:

1922-ից մաս կազմելով սովետական ժողովուրդների մեծագործ դաշինքին, մեր ժողովուրդն ընթացավ առաջադիմության, ազգային ապահովության ուղիով, խաղաղ ու նպաստավոր պայմաններում կառուցեց իր նոր հայրենիքը, իր նոր կյանքը, նոր սկզբունքներով, նոր չափանիշներով:

Սովետական Հայաստանը 62 տարի է, ինչ ընթացում է վերելքի ուղիով, շնորհիվ լեճինյան ազգային քաղաքականության պարզևս հնարավորությունների, շնորհիվ ռուս մեծ ժողովրդի օգնության ու հովանավորության կենարար քաղաքականության:

Սովետական Միությունը՝ հզորության ու խաղաղության մեծ պատվարը, հայ ժողովրդին ընձեռել է կառուցելու, ստեղծագործելու անսահման մեծ հնարավորություններ:

Այսօր Հայաստանը տնտեսական, սոցիալական, կուլտուրական մեծ վերելք է ապրում: 62 տարի առաջ Հայաստանը կանգնած էր կործանման եզրին: Օգտվելով Հայաստանի մեկուսացման վիճակից՝ ավանդական յաթաղա-

¹ Ջոն Կիրակոսյանի ճառը (1982 թ. 29 նոյեմբերի) // «Աշխարհ» (Փարիզ), 1982, 4 դեկտեմբերի *Notre voix* (Paris), 1983, հունվար-փետրվար, էջ 9-10:

նը փորձում էր վերջին մահացու հարվածը հասցնել մեր բազմաչարչար ժողովրդին:

Որքեր, աղքատություն, ավերակներ, սով, գաղթականություն. ահա թե ինչ ժառանգեց անցյալից սովետական իշխանությունը: 20-ական թվականները դաժան, միաժամանակ հերոսական ժամանակներ էին մեր հայրերի ու պապերի համար:

Սովետական Հայաստանն իր գոյության առաջին իսկ օրերից զգաց Սովետական Ռուսաստանի, մեծ Լենինի հոգատար ու բարերար քաղաքականության ջերմությունը:

Ժողովուրդների բարեկամության սկզբունքների վրա խարսխված Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, որ հիմնադրվեց 1922-ին, դարձավ հայ ժողովրդի հուսալի վահանը, նրա քարգավաճման անխորտակելի երաշխիքը: Մենք այսօր ուժեղ ենք, որովհետև մենակ չենք: Մենք միաձուլվ ենք ամբողջ Սովետական Միության հետ:

Այսօր մեկ օրում Հայաստանում արտադրվում է էլեկտրաէներգիա՝ մոտ 40 միլիոն կիլովատ-ժամ, 40 հազար զույգ կոշիկ, 14 հազարից ավելի ժամացույց: Յուրաքանչյուր օր Սովետական Հայաստանում ծնվում է 202 երեխա, կնքվում է 89 ամուսնություն, 301 մարդ բարելավում է իր բնակարանային պայմանները:

Հայաստանում կառուցվում են նոր ավտոճանապարհներ: Շուտով շարք կմտնի Հրազդան-Իջևան երկաթգիծը, որն ամեն տեսակետից կարևոր դեր կխաղա հանրապետության կյանքում: Երևանը օդային երթուղիներով կապված է բազմաթիվ քաղաքների ու երկրների հետ: Հայաստանում կառուցվում են նոր ջրամբարներ, գյուղատնտեսության համար իրացվում են քարոտ և դժվարամատչելի նոր հողատարածություններ: Նոր թափ են ստանում պտղաբուծությունը, խաղողագործությունը, շաքարի ճակնդեղի և ծխախոտի արդյունաբերությունը, բանջարաբուծությունը, ամանապահությունը: Վերջին երկու տարում հանրապետությունում խաղողի բարձր բերք է ստացվում, այլ նշանակում է, որ մենք վաճառքի համար կունենանք լավ և շատ զինիներ, կոնյակ: Գյուղատնտեսության մեջ աշխատում են 13 հազար տրակտոր, 2,2 հազար հացահատիկային և այլ կոմբայններ, 16 հազար ապրանքատար ավտոմեքենա:

Ներկայումս հանրապետությունում գործում է 1520 հանրակրթական դպրոց, 98 պրոֆեսիոնալ տեխնիկական ուսումնարան, 65 տեխնիկում, 13 բարձրագույն ուսումնական հաստատություն: Այստեղ մասնագետներ են պատրաստվում ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համար: Առաջ մեր քաղաքներում բարձրագույն, համալսարանական կրթություն ունեցող մարդկանց մատուլ էին ցույց տալիս: Այժմ ժողովրդական տնտեսության մեջ զբաղված յուրաքանչյուր 1000 մարդուց 136-ը ունի բարձրագույն կրթություն:

Հանրապետությունում այսօր գիտության մեջ զբաղված կանանց թիվը ութ հազար է, այսինքն՝ գիտությանը զբաղվողների քառասուն տոկոսը:

Ոստցիչների 65 տոկոսը՝ 27 հազար 400 հոգի, կանայք են: Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների 48,2 տոկոսը աղջիկներ են: Այսօր մեր հանրապետությունում ուսում են ստանում 700 արտասահմանյան քաղաքացիներ, որոնցից մեծամասնությունը սփյուռքահայ պատանիներ ու աղջիկներ են:

Սակայն աշխարհում բոլորին չէ, որ հաճելի է Սովետական Հայաստանի վերելքը, հայ ժողովրդի բարգավաճումը, նրա կոտ դաշինքը սովետական ժողովուրդների մեծ ընտանիքի հետ: Ոմանք առաջվա մնամ շարունակում են չարախոսել, ուրանալ իրական հայրենիքի փաստը, Սովետական Հայաստան ունենալու բախտավորությունը: Այդպիսի մարդիկ գուրկ են խղճից, փաստերն իրենց իրականության մեջ տեսնելու ու գնահատելու ունակությունից: Սովետական Հայաստանը վատաբանողները ջուր են լցնում աշխարհում գործող ձեզ հայտնի այն ուժերի ջրաղացին, որոնք հասկապես վերջին շրջանում սաստկացրել են իրենց ոստնձությունները մեր ժողովրդի հասցեին, կեղծում, աղավաղում են նրա պատմությունը, փորձում արդարացնել երեկվա դահիճներից, արևմտահայության ողբերգության հեղինակներին: Ստում են ու չեն ամաչում:

Մեք ուզում ենք նորից հայտարարել, որ մայր հայրենիք Սովետական Հայաստանը, նրա դեկավարությունը մշտապես համակված են ուշադրությամբ ու հոգատարությամբ Սփյուռքի, մեր քույրերի ու եղբայրների նկատմամբ:

Արտասահմանի մեր հայրենասեր ուժերի, մեր քույրերի ու եղբայրների համար ամենից բանկն ու նվիրականը մայր հայրենիքի կենդանի գոյությունն է, նրա վերընթացը, նրա բարգավաճումը, նրա ապահով ու ամվտանգ կացությունը:

Ամեն մի գիտակից ու հայրենասեր մարդու համար այսօրվա ուժեղ, զարգացած, լուսավոր Հայաստանը սփյուռքահայ ժողովրդի ապագա երազների ու իրագործումների միակ խարխիւն է: «Դուք, սիրելի հայրենակիցներ, կերտեցիք ոչ միայն ձեզի համար, այլ նաև մեզի համար, սփյուռքահայերու համար», - վերջերս Երևանում ասում էր ամերիկահայ մի հարգարժան գործիչ: «Արդեն հայրենիքի բարերար ձեռքը կհասնի ամեն տեղ, հայրենիքի շունչը կերաշխավորե Սփյուռքի գոյատևումը: Ան կհասնի մեզի իր արվեստագետներով, իր դասագրքերով, իր երգերով ու պարերով»:

Սփյուռքի հետ մայր հայրենիքի կապերի ամրապնդումը, Սովետական Հայաստանի շուրջը համախմբվելը Սփյուռքի պայմաններում ազգային կյանքի, լեզվի, ազգային յիմագծի պահպանման, հայրենասիրական ու առաջադիմական կազմակերպությունների գործունեության որոշիչ պայմանն է: Ահա թե ինչու Սովետական Հայաստանի կառավարությունն ամեն ինչ անում է սփյուռքահայության հետ մշակութային ու մյուս կապերն առավել չափով զարգացնելու համար:

1981-ի նոյեմբերի 29-ին հայտնի դարձան առաջին մրցանակակիրները, որոնց շարքում են ֆրանսահայ բյուզանդագետ, հայագետ, մեր ակադեմիայի արտասահմանյան անդամ Սիրարփի Տեր-Ներսիսյանը¹, Ֆրանսիայի Արվեստների ակադեմիայի անդամ, մեծատաղանդ նկարիչ Գառզուե²:

Այս տարվա միայն հունվար-հունիս ամիսներին Սփյուռք է առաքվել 17,059 կտոր գիրք, 7000 դպրոցական դասագիրք:

Սովետական Միությունը իր առաջարկներով մշտապես հետամուտ է խաղաղության սկզբունքների հաղթանակին, ժողովուրդների միջև համագործակցության հետևողական կողմնակից է:

Եվրոպայում և աշխարհում խաղաղության, ժողովուրդների ամվտանգության ապահովման գործում մեծ է սովետա-ֆրանսիական փոխըմբռնման նշանակությունը:

Ինչպես ամբողջ Սովետական Միությունը, այնպես և Սովետական Հայաստանը, հայ ժողովուրդը ցանկանում են Ֆրանսիայի հետ ունենալ լավ հարաբերություններ, համագործակցել մարդկային գործունեության բոլոր բնագավառներում՝ հանուն երկու պետությունների բարօրության, նրանց ժողովուրդների բարգավաճման, հանուն խաղաղության ամբողջ աշխարհում:

Կեցցե սովետա-ֆրանսիական բարեկամությունը:

Կեցցե Սովետական Միությունը, ժողովուրդների կոտ ընտանիքը, որի իրավահավասար անդամն է Սովետական Հայաստանը:

Կեցցե հայ ժողովուրդը:

¹ Սիրարփի Տեր-Ներսիսյան (1896-1989) - արվեստաբան, բյուզանդագետ, հայագետ, ՀԽՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ, Ֆրանսիայի Արժանագրությունների և գեղարվեստական գրականության ակադեմիայի, Հնագետների ազգային միության, Բրիտանիայի ակադեմիայի թղթակից անդամ, 1937-1967 թթ.՝ ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգի բոլեջների դասախոս, Դոմբարթոն Օքս հաստատության բյուզանդական արվեստի և հնագիտության պրոֆ., Բյուզանդագիտական հետազոտությունների գործող տնօրեն, Հարվարդի համալսարանի բյուզանդական արվեստի պրոֆ., «Բարեդամի և Հովասափի վեպի նկարագրողումները», «Հայկական նկարագրող սաղմոսարան», «Էջմիածնի Ավետարանը», «Հայաստանը և Բյուզանդական կայսրությունը», «Հայաստանի արվեստը», «12-14-րդ դարերի Կիլիկիայի Հայկական թագավորության մանրանկարչությունը» աշխատությունների հեղինակ - Ա.Կ.:

² Գառզու (Գառնիկ Ջուլյույան) (1907-2000), ֆրանսահայ նկարիչ, բեմանկարիչ, Ֆրանսիայի Գեղարվեստական ակադեմիայի անդամ - Ա.Կ.:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԵՐԸ «A La Turc»¹

«Պատմության կեղծարարներին պետք է
կախել ինչպես կեղծ դրամ կարողներին»

ՄԵՐՎԱՆՏԵՍ

Վերջին տարիներին թուրքական պետականությունը, նրա պրոպագանդիստական մեքենան ջանք ու եռանդ չեն խնայում պատմական փաստերը կեղծելու, բողաբելու ճանապարհով հերքելու Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմտահայության նկատմամբ երիտթուրքերի կատարած ոճրագործությունները, մի ամբողջ ժողովրդի բնաջնջման փաստը և բյուրիմացության մեջ գցել միջազգային հասարակական կարծիքը:

1981 թ. նոյեմբերի 14-ին Ստրասբուրգում Եվրոպական խորհրդի 21 երկրների մինիստրների ժողովի ժամանակ Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Իքթեր Թյուրքմենը հայտարարեց. «Հայկական ցեղասպանության մասին գրույցները պատմության աղավաղումն ու խեղաթյուրումն են»: Նա փորձում էր ներկաներին համոզել, որ 1915 թ. հայկական ջարդեր տեղի չեն ունեցել, որ հայերի նկատմամբ կիրառվել են լոկ պաշտպանական միջոցներ՝ նրանց տեղահանելով և քաշտրելով Սիրիա ու Լիբանան: «Բնական է, որ պատերազմական կացության ու սովի պատճառով հայեր մեռնեին, սակայն այդ շրջանում զոհվել են նաև երկու միլիոն թուրքեր», - եզրափակեց թուրք մինիստրը:

Այսպիսի կեղծված փաստերն ու «փիմնավորումները» արևմտահայության ցեղասպանության մեկնաբանման թուրքական բնորոշ ձևերն են:

Այն ժամանակ, երբ աշխարհի բոլոր երկրները վերջին տարիներին շրջանառության մեջ են դրել մեծ քանակությամբ արխիվային նյութեր, որոնք նոր լույս են սփռում 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի միջազգային հարաբերությունների, իրենց երկրների ներքին ու արտաքին քաղաքականության մինչ այդ անհայտ հանգամանքների վրա, թուրքական արխիվները մնում են փականքի տակ, նրանց պարունակությունը մեր կողմից քննարկվող պորթլեմների լուսաբանման տեսակետից շարունակում է մնալ անհայտ:

¹ Կիրակոսյան Ջ. Պատմության փաստերը «à la turc» // *Սովետական Հայաստան* (Ե.), 1982, N 4, էջ 14-17: Նույնը՝ «Կամչ» (Բեյրութ), 1982, 8 մայիսի: *Ասպարեզ* (Լ.Ա.), 1982, 28 մայիսի: «*Լրաբեր*» (Լ.Ա.), 1982, 29 մայիսի: *Notre voix* (Paris), 1982, մայիս-հունիս, էջ 16-17: «*Արարատ*» (Բեյրութ), 1982, 27 մայիսի: «*Հայրենիք*» (Բոստոն), 1982, 2 հունիսի: «*Սևան*» (Բ.Ա.), 1982, 19 հուլիսի, 4, 27 օգոստոսի: «*Աշխարհ*» (Փ.), 1982, 2 հոկտեմբերի: «*Էրբերուհի*» (Լոնդոն), 1982, հոկտեմբեր: «*Հայաստան*», 1982, նոյեմբեր-դեկտեմբեր:

Երիտթուրքական պետականության այսօրվա ժառանգորդները խնամքով թաքցնում են իրենց նախորդների չարագործությունները բացահայտող փաստաթղթերը:

Այնուամենայնիվ, ինչ էլիս գրում իրենք՝ թուրք հեղինակները, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և նրանից հետո, ինչպիսի՞ն էին նրանց գնահատականներն ու քննազգրումները հայոց բնաջնջման երիտթուրքական քաղաքականության մասին:

1918 թ. նոյեմբերի սկզբին՝ երիտթուրքական կառավարության անկումից հետո, օսմանյան կառավարության նոր վարչապետ Դամադ Ֆերիդ-փաշան¹ «քողագեղծեց հայերի դեմ իթթիհադական կուսակցության մշակած ու կազմակերպած ցեղասպանության գաղտնի ծալքերը»: Նա հայտարարեց, թե երիտթուրքական կառավարության հրապարակած պաշտոնական «Կարմիր գրքի» մեջ հայերի անհավատարմության մասին ասված բառերը շինծու են, ճշմարտությանը չեն համապատասխանում: Իշխանությունից զրկված երիտթուրքական ղեկավարներն արժանացան հասարակական կարծիքի համընդհանուր պարսավանքի:

1919 թ. հունվարի 28-ին Ալի Բենալ-բեյը² (1920-ին դարձավ Թուրքիայի ներքին գործերի մինիստր) «Մարաշ» թերթում գրում էր. «Արդեն ապացուցված իրողություն է, որ եղեռնը ծրագրվել էր Իթթիհադի ընդհանուր կենտրոնի որոշումներով ու կարգադրություններով»: Նա հայկական ջարդերը գնահատում էր որպես «պատմության մեջ եզակի, աշխարհասպան մի ոճիր»:

1918-ի ավարտին Իթթիհադ կուսակցությունը, երիտթուրքերը Թուրքիայում հայտարարվեցին օրենքից դուրս:

Եվրոպական հասարակական կարծիքը խիստ հակաերիտթուրքական էր: Ականավոր արևելագետներ՝ գերմանացի Յոզեֆ Մարկվարտը և ֆրանսիացի Ժակ դե Մորգանը³ հրապարակավ պահանջեցին միջազգային տրիբունալի դասիկն հանձնել հայասպան քաղաքականության գլխավոր հանցագործներին: Գերմանացի գիտնական Յոզեֆ Մարկվարտը 1919-ի հունվարին

¹ Դամադ Մեհմեդ Ֆերիդ-փաշա (1853-1923), թուրք քաղաքական գործիչ, ազգությամբ սեբք, 1919, 1920 թթ. Օսմանյան կայսրության վարչապետ (մեծ վեզիր), ստորագրել է Սերի դաշնագիրը, քեմալականների բռնամական վերաբերմունքի պատճառով փախել է երկրից, ապրել է Ֆրանսիայում - Ա.Կ.:

² Ալի Բենալ-բեյ (1867-1922), թուրք լրագրող, քաղաքական գործիչ, «Ժկղամ» թերթի խմբագիր, երիտթուրքերին ընդդիմադիր «Ազատական միություն» կուսակցության անդամ, ներքին գործերի նախարար (1920), մեղադրել է երիտթուրքերին հայերի կոտորածի համար, սպանվել է որպես դավաճան քեմալականների կողմից - Ա.Կ.:

³ Ժակ դե Մորգան (1857-1924), ֆրանսիացի հնագետ և պատմաբան, հանքային ճարտարագետ, պեղումներ է իրականացրել Իրանում, Անդրկովկասում (այդ թվում՝ Ախարալայում և Ալավերդիում), Եգիպտոսում, Հնդկաստանում, 1880-ական թթ.՝ Ախարալայի պղնձի արդյունահանման գործարանի տնօրեն, «Հայ ժողովրդի պատմությունը հեռագույն ժամանակներից մինչև մեր օրերը» աշխատության հեղինակ - Ա.Կ.:

արտասանած ճառում իր կառավարությունից պահանջեց ջանքեր գործադրել, գտնել Էնվերին, Թալեաթին և մյուս չարագործներին, նրանց հանձնել Անտանոյին՝ միջազգային դատարանի միջոցով նրանց դատելու համար: 1919-ի սկզբին թուրքաց կառավարությունն անգլերեն հրապարակեց մի գրություն, որը վերնագրված էր «Թուրք-հայկական հարց, թուրքաց տեսակետը»: Այստեղ խոսվում էր երիտթուրքական պարագլուխների բարբարոսական մեթոդների մասին, նրանց գործողություններն անվանում էին «անխիղճ», «ղաժամ», խոստովանում էին, որ պետության շահերը պաշտպանելու համար այդպիսի քաղաքականություն վարելու անհրաժեշտություն չկար, որ «նրա պարագլուխներն ընկնում են մարդկության ամենամեծ հանցագործների շարքը»:

Գրության հեղինակները համապատասխան փոխհատուցում էին խոստանում երիտթուրքական քաղաքականությունից տուժած հայերին, խոսում էին անհրաժեշտ ժամանակի մասին՝ այդ խնդիրը իրականացնելու համար: Եվ, վերջապես, ապացուցվում էր, որ «այդ ամենի համար բոլոր պաշտոնական անձինք, ովքեր գործել են որպես միության կազմակերպության գործակալներ, հայերին ոտնահարելու և կողոպտելու կամպանիայում, արդեն ձերբակալված են և տրված են դատի»: «Մյ խոսքով, արդարությունը լրիվ գործողության մեջ է դրված», - ասված էր այնտեղ: «Տեղահանված բնակչությունը վերադառնում է իր տները», կողոպուտից տուժած մարդկանց տրվում են նպաստներ, «ատանձնացվում են նշանակալի ֆոնդեր»՝ տուժածների «վիշտը ամոքելու» համար: Կ. Պոլսի տնօրենները գրում էին, որ «թուրք ժողովուրդն իր զլուխը խոնարհում է» հայ ժողովրդի ողբերգության առաջ: «Դա նա անում է տխրությանը՝ հայ ժողովրդի և ամբողջ՝ իր համար»:

1919-1921 թթ. Կ. Պոլսում քարգմանաբար հայերեն լույս ընծայվեցին երիտթուրքական քաղաքականության մերկացմանը նվիրված եվրոպական ու ամերիկյան հեղինակների տասնյակ գրքեր, ժողովածուներ:

Թուրքական թեթերն ու ամսագրերն էլ ամմասն չմնացին դատապարտման խոսք ասելուց: Թուրքիայի ներքին դժվարին վիճակը, սովը, թշվառությունը, գյուղատնտեսական արտադրության անկումը՝ այս ամենը վերագրվում էր պատերազմին մասնակցելու երիտթուրքական քաղաքականությանը:

1919-ի հունվարին Ստամբուլում սկսվեց «Իքթիսադ վե թերաքքի» կուսակցության ղեկավարության հանցագործությունները քննող դատական պրոցեսը: Այն տեղի էր ունենում Անտանոյի և, առաջին հերթին, Անգլիայի օկուպացիոն գործերի հսկողության տակ:

«Ձիմնադադարից հետո, - իր հուշերում գրել է Ռվինսոն Չերչիլը¹, - թուրքերն ասում էին՝ մենք արժանի ենք պատժվելու, բայց թող մեզ պատժի մեր հին բարեկամ Անգլիան»:

¹ Ռվինսոն Չերչիլ (1874-1965) - բրիտանացի պետական և քաղաքական գործիչ, պահպանողական, լրագրող, գրող, 1910-1911 թթ.՝ Մեծ Բրիտանիայի ներքին գոր-

Դատարանի նիստերը շարունակվեցին ամիսներ շարունակ: Ջինվորական տրիբունալի անդամների թիվը 5-ն էր. բոլորն էլ թուրքեր (կորպուսի հրամանատար, պատերազմի մասնակից երեք զեներալ և մի մայոր): Հենց սկզբից ասեմբ, որ երիտրուրը ղեկավարներին ներկայացվել էր երկու մեղադրանք՝ Թուրքիայի ներքաշումը պատերազմի մեջ և հայ ժողովրդի բնաջնջումը: Սա արդեն պաշտոնական ճանաչումն էր հրեշավոր ոճրագործության, որ կատարել էին երիտրուրական պետական մարմինները: Այդ դատավարությունը, իհարկե, կիսատ-պտտա բան էր 1945-1946 թթ. Նյուրնբերգի միջազգային դատարանի համեմատությամբ, բայց էական գործողություն, որի հանգամանքների իմացությունը անհրաժեշտ է այսօրվա թուրքական ազավադումներն ըմբռնելու և դատապարտելու համար:

Դատարանի առջև ցուցմունքներ էին տալիս ոչ միայն հանցագործություններին մասնակից պետական և զինվորական բարձրաստիճան գործիչներ, այլև վկաներ, ակամատեսներ: Չնայած իսլամի, շարիաթի ավանդական կաշկանդող դերին, այնուամենայնիվ, հրապարակ էին հանվում վանդակզմի քազմաթիվ օրինակներ:

Պատերազմից հետո Կ.Պոլսի թուրքական կառավարությունը, որի զուլս կանգնած էր Թևֆիկ-փաշան, ձեռքակալեց Իթքիհալի 63 բարձրաստիճան գործիչների, այդ թվում՝ Մաիդ Հալիմ-փաշային¹, Վեհիբ-փաշային, Միդհաթ Շյուքրի², Էյուչուկ Թալեաթ³, Ջևադ-բեյերին և այլոց: Էնվերը, Թալեաթը, Ջեմալը և մի շարք ուրիշ ղեկավար գործիչներ կարողացել էին գաղտնի, ոմանք առազպատանավով, ոմանք գերմանական սուզանավով ճողոպրել Կ.Պոլսից:

Գեներալ Մուստաֆա Բեմալը 1919-ի հունվարի 27-ին Կ.Պոլսի զինվորական գերագույն դատարանի առջև կանգնեց որպես վկա: Նրա վկայությունները խիստ մեղադրական փաստեր էին պարունակում երիտրուրական կառավարողների հասցեին: Նա դատապարտում էր Իթքիհալ կուսակցության պարագլուխներին, նրանց կատարած հանցագործությունները:

Անավախիկ հատված Մուստաֆա Բեմալի ելույթից Կոստանդնուպոլսի գերագույն ատյանի առաջ. «Փաշաները, որոնք իրագործեցին անասելի և աներևակայելի ոճիրներ և որոնք այդպիսով երկիրը հասցրեցին ներկա վիճակին, իրենց անձնական շահերն ապահովելու համար նորից հրահրում են խոռ-

ծերի նախարար, 1921-1922 թթ.՝ գաղութների հարցերով նախարար, 1940-1945, 1951-1955 թթ.՝ վարչապետ, 1940-1945 թթ.՝ միաժամանակ պաշտպանության նախարար, Բրիտանական ակադեմիայի պատվավոր անդամ, գրականությունից՝ Նորեյան մրցանակի դափնեկիր (1953) - Ա.Կ.:

¹ Մաիդ Հալիմ-փաշա (1863-1921), 1913-1917 թթ.՝ Օսմանյան կայսրության վարչապետ (մեծ վեզիր), 1919 թ. դաշնակիցների կողմից արսորվել է Մալթա կղզի, սպանվել է Հռոմում հայ վրիժառուների կողմից:

² Միդհաթ Շյուքրի - Իթքիհալ կուսակցության գլխավոր քարտուղար, հայ բնակչության տեղահանությունն ու կոտորածը կազմակերպելու համար ստեղծված երեքի գործադիր կոմիտեի անդամ - Ա.Կ.:

³ Էյուչուկ Թալեաթ - Իթքիհալ կուսակցության ԿԿ անդամ - Ա.Կ.:

վություններ: Նրանք հիմք դրեցին ամեն տեսակի բռնակալության, կազմակերպեցին տեղահանություններ և ջարդեր, մավթով այրեցին ծծկեր երեխաներին, ծնողների ներկայությամբ բռնաբարեցին կանանց և երիտասարդ աղջիկներին, կապկպեցին, վիրավորեցին և բաժանեցին երիտասարդ աղջիկներին իրենց հայրերից և մայրերից, բռնագրավեցին նրանց շարժական և անշարժ գույքը, ողբալի վիճակով արսորեցին կանանց մինչև Մոսուլ՝ կատարելով ամեն տեսակի բռնություններ: Նրանք մավերի վրա քարծեցին հազարավոր ամենեղների և ծովը նետեցին: Մունեսիկների միջոցով նրանք հռչակել տվեցին, որ օսմանյան կառավարությանը հավատարիմ ոչ մահմեդականները պարտավոր են հրաժարվել իրենց հավատից և ընդունել իսլամը: Նրանք պարտադրեցին դավանափոխությունը, ամբողջ ամիսներով սոված քայլել տվեցին ծերերին և ստիպեցին կատարել տաժանակիր աշխատանքներ: Նրանք կանանց նետել տվեցին անտանելի պայմաններում գտնվող հասարակաց տներ: Դեպք, որ անմախաղեպ է որևէ այլ ազգի պատմության մեջ»:

Ավելի ուշ՝ 1926 թ. (օգոստոսի 1-ին - Ա.Կ.), երբ բացահայտվեց արդեն պրեզիդենտ դարձած Մուստաֆա Քեմալի դեմ երիտթուրքերի կազմակերպած դավադրությունը, «*Լուս Անջելես Էքզամիներ*» թերթին տված հարցազրույցի մեջ Քեմալ-փաշան սպառնում էր կախել և զնդակահարել այն բոլոր մեծ ու փոքր պաշտոնյաներին, որոնք մասնակցել էին իր դեմ կատարված մահափորձին: Նա հայտարարել էր. «Պիտի կոտորեմ բոլորին և պիտի ջնջեմ Իթթի-հադի բոլոր անդամներին: Այս կուսակցություն էր, որն իր տխուր քաղաքականությամբ կոտորել տվեց և տեղահան արեց մեկ միլիոն քրիստոնյաների»:

Քեմալը հայոց կոտորածը հիշում էր, որովհետև այդ պահին դա իրեն ձեռնառու էր:

Թուրքական զինվորական դատարանի նյութերը՝ դատական պրոցեսի արձանագրությունները, ակամատեսների վկայությունները, դատավճիռները 1919-1920 թթ. սպագրվեցին «*Թաքվիմ-ի Վերայի*» («*Դեպքերի օրացույց*») թուրքական պաշտոնաթերթում: Նյութերի մի մասը հրապարակվեց Կ.Պոլսի «*Ռենեսանս*» իրանսերեն թերթում:

Դատական պրոցեսի ընթացքում Թուրքիայի ներքին գործերի մինիստրությունը, փոստի և հեռագրի մինիստրությունը պաշտոնապես օգնում էին զինվորական դատարանին՝ մահանգային իշխանություններից ստանալու հայերի տեղահանությանը և ոչնչացմանը վերաբերող փաստաթղթերի՝ հրամանների, հեռագրերի պատճենները: Ցեղասպանությանը վերաբերող հարուստ վավերագրերը դատարանին օգնեցին վերականգնելու իրողությունների ճիշտ պատկերը, դատապարտելու ոճրագործներին:

Հայտնի է, որ զինվորական դատարանի վճռով երիտթուրքական պարզուխները դատապարտվեցին մահվան ու քանտարկության: Նրանցից ոմանք փախուստի էին դիմել երկրից և հետագայում սպանվեցին հայ վրիժառուների զնդակներից:

1921 թ. հունիսի 2-3-ին Բեռլինի օկրուգային դատարանը դատում էր Թալեաթին սպանող Սողոմոն Թեհլիրյանին¹: Վերջինս իր խոսքում ցույց էր տալիս, որ Թալեաթին մահվան դատավճիռ հետևակ կարգով կայացրել էր Ստամբուլի զինվորական տրիբունալը: Այս առիթով ամբաստանյալի պաշտպաններից Յոհաննես Վերթաուերը դատարանում հայտարարեց հետևյալը. «Դուք այստեղ իմացաք այն մասին, որ Թալեաթը դատապարտվել էր մահվան: Դատավճիռները կան ճանաչվում են, կան չեն ճանաչվում: Եթե մենք չճանաչենք դատավճիռները, որ կայացրել են մյուս դատարանները, ապա մենք չենք կարող պահանջել, որպեսզի ուրիշներն էլ ճանաչեն մեր դատավճիռները: Թալեաթի դատավճիռը կայացրել է զինվորական դատարանը: Ես ընդհանրապես զինվորական հետաքննությունների կողմնակից չեմ: Ես գտնում եմ, որ սովորական դատարանը, եթե այն լավ է, բավական է և կարիք չկա այլ կարգի դատական հիմնարկների: Բայց այնտեղ, որտեղ կան զինվորական տրիբունալներ, անպայման կան և կարգին դատավորներ, որոնք ճշտությամբ դատել են Ստամբուլի հանցագործներին և կայացրել են նրանց արդար դատավճիռը»:

Թուրքական պաշտոնաթերթ *«Թարվիմ-ի Վերայի»* քերթը (Կ.Պոլիս, N 3771, 1920 թ.) տպագրել է հաղորդագրություն Իթթիհադի ղեկավար գործիչներից Բեհաեդդին Շաքիր-բեյի² (հայ ահաբեկչի ձեռքով սպանվեց 1922-ին Բեռլինում) և նրա գործակիցների դատավարության մանրամասները: Բեհաեդդին Շաքիրը միաժամանակ «Թեշքիլաթ-ը մահսուսե» գաղտնի կազմակերպության ղեկավարն էր: Նա և Մամուրեթ ու Ազիզի երիտրուրական կուսակցության պատասխանատու Ռեսնի Նազիմ-բեյը դատվում էին հետևյալ կարգով, իսկ Դերսիմի երեսփոխան Հաջի Բալուջ Չաղե Մեհմեդ Նազի-բեյը, Մամուրեթ ու Ազիզի հանրային կրթության ղեկավարներից Ֆերիդ-բեյը՝ հենց տեղում:

Դատավարության ընթացքում լսել էին տարբեր վկաների, համադրել նրանց ցուցմունքները, ընթերցել բազմաթիվ փաստաթղթեր, որից հետո դատարանը եկել էր այն եզրակացության, որ դոկտոր Բեհաեդդին Շաքիրը ուղարկվել էր Տրապիզոն ու Էրզրում՝ հանցագործների բանդաներ կազմակերպելու, տարագրվող հայերի քարավանների վրա հարձակումներ կազմակերպելու՝ կողոպտելու ու սպանությունների համար: Կազմվել էին գաղտնի հրահանգներ և շրջաբերականներ, որոնցով երիտրուրական ոճրագործը ուղ-

¹ Սողոմոն Թեհլիրյան (1896-1960) - ազգային-ազատագրական շարժման գործիչ, ժողովրդական վրիժառու, 1921 թ. մարտի 15-ին Բեռլինում սպանել է Թալեաթ-փաշային, արդարացվել է դատարանի կողմից - Ա.Կ.:

² Բեհաեդդին Շաքիր-բեյ (1874-1922), բուրք քաղաքական գործիչ, հայերի ցեղասպանության զլխավոր հանցագործներից, Իթթիհադ կուսակցության 2-րդ քարտուղար, Երեքի գործադիր կոմիտեի անդամ, ղեկավարել է «Թեշքիլաթ-ը մահսուսե» կազմակերպությունը, ոչնչացրել է հայերի ցեղասպանությանը վերաբերող կուսակցության արխիվի մեծ մասը, սպանվել է Բեռլինում հայ վրիժառուներ Արամ Երկանյանի և Արշավիր Շիրակյանի կողմից - Ա.Կ.:

ղություն էր տալիս կողոպուտին ու արյունահեղությանը: Ոչ անհայտ գեներալ Վեիլիք-փաշան (թուրքական երրորդ քանակի հրամանատարը, ծանոթ 1918-ից, կովկասյան ճակատից) տվեց հետևյալ վկայությունը. «Հայերի կոտորածը և արմատախիլ անելը, նրանց ունեցվածքից զրկելը երրորդ քանակի իրավասության տակ գտնվող տարածքի վրա որոշվում էր «Միություն և առաջադիմություն» կոմիտեի կողմից: Դն տարածվում էր Էրզրումի, Վանի, Տրապիզոնի, Բիթլիսի, Մամուրեթ ու Ազիզի, Դիարբեքիրի և Սըվազի վրա: Այս քանակի շտաբը գտնվում էր Թորթոման (Էրզրումի նահանգ): Երրորդ քանակի նախկին հրամանատար Մուհամեդ Քյամիլ-փաշան Թորթոմից շրջաբերական հեռագրեր էր հղում բոլոր զինվորական հրամանատարներին՝ նրանց հրամայելով արմատախիլ անել հայ ժողովրդին»: Դատարանն արձանագրում էր, որ այդ բոլոր փաստերը հաստատվեցին վկաների ցուցմունքներով: Հաստատվեց, որ ղուկտոր Բեհաեդդին Շաքիր-բեյը գլխավոր մեղավորն էր կատարված հանցագործությունների մեջ:

Դատարանը արձանագրեց, որ ղուկտոր Բեհաեդդին Շաքիրի հետ առանձնապես սերտ կապերի մեջ է գործել Ռեսնի Նազիմ-բեյը: Վերջինս 1915 թ. ապրիլի 21-ին Բեհաեդդին Շաքիրից ստացել է գաղտնագրված հեռագիր՝ հայերին ոչնչացնելու վերաբերյալ: Նազիմ-բեյը հայերին ոչնչացնելու հանցավոր գործերում համագործակցել էր Մամուրեթ ու Ազիզի գեներալ-նահանգապետ Սաքիր-բեյի և Իթքիհադի կենտրոնի քարտուղար Մյուհաթ Շյուրքիլի հետ: Թե՛ ղուկտոր Բեհաեդդին Շաքիրը և թե՛ Ռեսնի Նազիմ-բեյը, տեղեկանալով իրենց սպավող դատաստանի մասին, խույս էին տվել դատարանից: Ջաղաբացիական օրենսդրության 181 և 171 հոդվածներով ղուկտոր Բեհաեդդինը դատապարտվում էր մահվան: Ռեսնի Նազիմ-բեյը դատապարտվում էր 15 տարվա տաժանակիր աշխատանքի:

Դատական պրոցեսը, նրա արձակած վճիռները ժամանակին լայն արձագանք գտան մամուլի էջերում, որտեղ տպագրվեցին նոր վկայություններ. նոր հաստատումներ կատարված չարագործությունների մասին: Գտնվեցին թուրք մարդիկ, որոնք արեցին ճշմարիտ խոստովանություններ, ընդունեցին երիտթուրքական հայահալած քաղաքականության ողջ զազրելիությունը: Հայ ժողովրդի դեմ կիրառված վայրագ մեթոդների շարքում առանձնահատուկ տեղ էին գրավում հայ որբ երեխաների վրա կատարված բժշկական փորձերը: Մյուսնք Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ֆաշիստների կատարած չարագործությունների նախօրինակներն էին, որ իրականացվում էին թուրքավարի, բուրբ «քծիչկների» ձեռքերով: Այս բանը հաստատող վկայություններին՝ «ցուցակագրված վավերական փաստերով», մենք հանդիպել ենք ինչպես արխիվային գործերում (ՀՄՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 1, գ. 273, մ. 2), այնպես և Կ.Պոլսի թուրքական ու հայկական մամուլի էջերում:

Հիշատակենք դրանցից մի քանիսը.

«Տրապիզոնի առողջապահական տեսուչ Ալի Սախլ՝ 1914-1915-ի ջարդերու ատեն գործակցելով Ջեմալ Ազմիի՝ քիմիական բույներով թունավորած

է հայ մանուկներ, որոնց ծնողքներն արդեն սպանված էին, ինչպես նաև հիվանդանոցներ տեղափոխված հայ հիվանդները: Վկա են ամբողջ Տրապիզոնի ջարդեն ազատվող հայերը և տեղին հույն ժողովուրդը: Մնաց որ առողջապահական տեսուչ Ատնան-պեյ թուրք թերթերու մեջ քննիչ հանձնաժողովի տեղեկություններուն վրա հիմնվելով, հաստատած է այս մարդուն ռճրապարտ արարքները:

...Այս առթիվ մեջ կերերնք թուրք բժիշկներու վկայությունները, որոնք մանուկի մեջ արտահայտված են:

Ա. Ներքին գործոց նախարարության.

Վեսմաշուք Տէր,

Երբ հայոց խնդիրը կը քննվի, կը տեսնեմ, որ ամբողջ պատասխանատվությունը միշտ կուսակալներուն և հրամանատարներուն կը վերագրվի: Հայոց վրա ի գործ դրված խժոժությունները կրնան կարճատես քաղաքական ըմբռումներու գեշ հետևանքներն ըլլալ:

...Նվաստիս Չեզի հաղորդվելիքը հայոց վրա գիտականորեն ի գործ դրված վարչազոթություններն են:

...Պատասխանատուներուն հանդէպ պետք եղածը տնօրինելը, «վըժդոթությանց քննիչ հանձնաժողովին» պատվոյն և խղճին կը հանձնեմ: 1915-ի դեկտեմբերին Երզնկայի մեջ Գ-րդ բանակի բժշկապետ Թևֆիք Սալիմի հրամանով թիֆուսե վարակված հիվանդներեն առնված արյունը առանց «inactive» ընելու և բժշկականորեն միայն փորձի կենդանիներուն վրա ներելի եղող գիտական փորձերը՝ գաղթեցնելու սահմանված անմեղ հայերուն կը ներարկվին, և այս պատճառով շատ մը խեղճ հայեր հիվանդանալով կը մեռնին: Ներարկումները կատարված ատեն՝ զոհերը խաբած են, հավաստելով, որ հիվանդութենէ գերծ կացուցացնելու համար է: Այս փորձը կատարողը՝ օսմ. բժիշկ, վարժարանի ուսուցիչ Համտի Մուստ՝ «Չինվորական բժիշկ» թերթին մեջ իր փորձերը հրապարակած պահուն՝ փորձերը սպանվելու դատապարտվածներու վրա կատարված են կըսեր, իսկ նվաստս՝ հիշյալ ուսուցչին սպանիչ փորձերուն ենթակայներուն հայ ըլլալեն զատ ուրիշ հանցանք չունենալուն մտնէ վկան են: Աս խնդրին մտնէն տեղյակ են՝ այն ժամանակ Երզնկայի կեդրոնական հիվանդանոցի բժշկապետ դր. Ռէֆէթ-պեյ և իրեն մոտ աշխատող երկու հայ բժիշկներ, նույնպես Երզնկայի Կարմիր Մահիկի բժշկապետը, դր. Սէլեետտիմ- պեյ:

Ահալասիկ նվաստս, ոչ միայն քաղաքական, այլև գիտականորեն հայերուն վրա ռճիրներ կատարված ըլլալը հայտնելով, այս մասին պետք եղած բացատրություններ տալու պատրաստ են»:

Նման փաստերի և վկայությունների շարքը կարելի է շարունակել, սակայն բավարարվենք այսքանով: Ասենք միայն, որ երիտթուրքերի կառավարության անկումից հետո թուրքական պետական իշխանությունները իրենք են ընդունել հայոց նկատմամբ կատարված ցեղասպանությունը, իրենք են դատել և դատապարտել նրանց անմարդկային գործողությունները: Ինչ խոսք, որ

դատական պրոցեսը չի եղել կատարյալ, երիտթուրքերի նկատմամբ չի իրականացվել հետևողական հետապնդումների և պատժիչ քաղաքականություն, ինչը կատարվեց 1945-1946 թթ. Նյուրնբերգի դատարանում ֆաշիստական հանցագործների նկատմամբ:

Այդպիսիք են փաստերը: Սակայն այսօր թուրքական պետականությունը, նրան ծառայագրված հետադիմական վայ-պատմաբաններն ու գրչակները կեղծում ու աղավաղում են փաստերը, նոր սերունդներից թաքցնում պատմական իրողությունները: Թուրք պատմաբաններ Քարալն ու Դե-լիորմանը, Յամանն ու Յալչընը և բազմաթիվ ուրիշներ թուրքական գրքի շուկան ողողել են կեղծագրերով՝ արդարացնելու համար երիտթուրքական չարագործությունը:

1981-ի գարնանը Ստամբուլի համալսարանում Հայոց հարցին նվիրված սիմպոզիումի ամբիոնից թուրք պատմաբանների արտասանած ճառերը ՆԱՏՕ-ին անդամագրված թուրքական պետության շահերին ծառայելու միտում ունեին, իսկ աշխարհի բոլոր համալսարաններին Ստամբուլի համալսարանի հղած «դեկլարացիան» գերազանցեց ստի ու կեղծիքի բոլոր ռեկորդները: Թուրքական պետականության այրերն առայժմ կառչած են մնում ստից:

Համաշխարհային հասարակական կարծիքը տարբերում է կեղծիքը իսկությունից և մշտապես հակահարված է տալիս պատմության կեղծարարներին:

ԽՈՍՈՒՄ ԵՆ ԱՄԵՐԻԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՓԱՍՏԵՐԸ¹

Վերջին տարիներին Թուրքիայում արտակարգ աշխուժացել է հակահայկական ավանդական արշավանքը: Այդ արշավանքի գլխավոր նպատակը բուրբակամ պատմագրության և պաշտոնական շրջանակների կողմից Առաջին համաշխարհային պատերազմի, Հայկական հարցի պատմության, հայբուրբակամ հարաբերությունների, ինչպես նաև 1915 թ. արյունալի իրադարձությունների իսկական էության կեղծումն է:

Թուրք պատմաբանների (եթե միայն կարելի է նրանց այդպես անվանել) կեղծարարությունը հասել է նույնիսկ այնտեղ, որ նրանք ամբարտավանորեն ժխտում են հենց արևմտահայության դեմ կատարված եղեռնի փաստը: Այդ նպատակով մեկը մյուսի հետևից լույս են տեսնում գրքեր, որոնցում փաստերի աղավաղման չափն ու բուն էությունն աննախադեպ է համաշխարհային պատմագիտության մեջ: Այս ոչ շնորհակալ նպատակին են մվիրված նաև բուրբակամ մամուլում տպագրվող բազմաթիվ հոդվածները, ինչպես նաև Հայկական հարցի վերաբերյալ հատուկ գումարվող խորհրդակցություններն ու կոնֆերանսները, որոնց մասնակցում են պատմաբաններ, հրապարակախոսներ ու քաղաքական գործիչներ:

Վերջին ժամանակները բուրբ կեղծարարներին օգնության են շտապում Արևմուտքի որոշ երկրների քաղաքագետներ ու տարբեր տիպի գրչակներ, որոնք շահագրգռված են Թուրքիայի հակատվետական դերի ուժեղացման և նրան ՆԱՏՕ-ի հարվածող ուժի դերում պահելու գործում: Հանուն իմպերիալիստական երկրների ռազմաքաղաքական հետաքրքրությունների, նրանք հանգիստ խղճով զոհում են պատմական ճշմարտությունը, գիտական անկողմնակալության սկզբունքները, որոնք այնքան սիրում են իրենց երևակայել նրանց իրական հետևորդներ:

Հակահայկական նման պրոպագանդայի ուժեղացման պայմաններում հատուկ ուշադրության է արժանի Ռիչարդ Քլոյանի² կազմած «Հայկական եղեռնը» ժողովածուի հրատարակումը,³ որն իրենից ներկայացնում է 1913-ից մինչև 1922 թվականներն ընկած ժամանակաշրջանում ԱՄՆ-ի տարբեր թերթերում ու ամսագրերում 1915 թ. հայկական եղեռնի մասին տպագրված մի

¹ Կիրակոսյան Ջ., Մելքոնյան Է. Խոսում են ամերիկյան մամուլի փաստերը // «Սովետական Հայաստան» (Ե.), 1982, N 12, էջ 20-23: Նույնը՝ «Вестник общественных наук АН Арм. ССР» (Ե.), 1982, N 9, с. 87-93: «Հորիզոն» (Ջվերկ), 1984, 27 փետրվարի:

² Ռիչարդ Քլոյան (1937-2010) - ամերիկահայ ցեղասպանագետ, Հայկական ցեղասպանության ռետրոսային կենտրոնի հիմնադիր և ղեկավար - Ա.Կ.:

³ Kloian R.D. The Armenian Genocide - First 20th Century Holocaust, Berkeley, California, 1981, 304 p.

քանի հարյուր հաղորդագրությունների ու հողվածների պատճենների հավաքածու:

Այս հրատարակությունը գնահատելի և արդիական է շատ առումներով և առաջին հերթին նրանով, որ երիտթուրքերի զագանությունների մասին այնտեղ բերված ամերիկյան մամուլի սպացույցներն ամբողջությամբ հերքում են բուլք պատմաբանների ու պաշտոնական անձանց այն հոդիկվածքները, որ, իբր, 1915 թ. հայկական ջարդերը սոսկ հայերի ու նրանց կարեկցողների երևակայության արդյունքն են:

Ժողովածուի նյութերը վկայում են, որ Արևմտյան Հայաստանի սարսափների, երիտթուրքերի ու նրանց զերմնացի գործընկերների կատարած շարագործությունների մասին ամերիկյան մամուլում հաղորդագրություններ էին տրվում համարյա ամեն օր: Հենց միայն այդ հաղորդագրությունների վերնագրերը պարզ վկայում են Թուրքիայում կատարվող իրադարձությունների իսկական էության մասին. «Թուրքերը գնդակահարում են կանանց ու երեխաներին», «Ժնը հազար հայ սպանված է ու զգված Տիգրիսը», «Ջարդերը Հայաստանում», «Հայերի ողբերգությունն աճում է», «Հայերը մահվան են ուղարկվում անապատները», «Թուրքերը անմարդաբնակ են դարձրել հայկական քաղաքները», «Հայաստանի կործանումը», «800.000 հայ սպանված է», «Մասսայական կոտորածները Հայաստանում», «Հայերի ողբերգական վախճանը» և այլն, և այլն...

Ժողովածուում պարունակվող այս բնույթի բազմաթիվ հաղորդագրություններից այստեղ բերենք միայն մի քանիսը:

«Ջարդ ըստ դեկրետի». այսպես է վերնագրված «*The New Republic*» (1917, 27 հունվարի) ամսագրից բերված հողվածը, որտեղ նկարագրված են հայկական եղեռնի քաղաքականության սարսափները. «Կանանց ու երեխաներին ըշում են խորդանոցներն ու այրում, մյուսներից վաճառում են աճուրդով, հարյուրավոր երեխաների կապկպում են իրար ու ջրիսեղոյ անում գետում»: Ինչպես վկայում է հողվածի հեղինակը, 1915-1916 թթ. ընթացքում կես միլիոն հայ սպանված էր և կես միլիոնն էլ սովամահ ու արևահար էր եղել անապատում արտոյի ժամանակ: Հողվածում նշվում է, որ հայերի սպանությունները, նրանց մոտ զենք փնտրելու ժամանակ գործադրված բռնությունները սկսվել էին դեռևս 1915 թ. փետրվարից: «Երիտթուրքերը որոշել են օսմանացնել Հայաստանը», - եզրափակում է հողվածագիրը:

«*Current History*»-ն (1917. - փետրվար) «Հայկական ճամբարների սարսափները» խորագրի տակ տեղադրել է «Մի ականատեսի պատմությունը» հողվածը: Դրանում նկարագրված են Եփրատի հովտի, Հյուսիսային Արաբիայի և Միջինայի թուրքական բանտային ճամբարների անմարդկային պայմանները: Միայն Մեակինոն քաղվել են սովից ու համաճարակից մեռած 60.000 հայեր: Հետաքրքրություն են ներկայացնում հողվածում բերված բուրբ մի պաշտոնյայի պատմությունները, որ Կամախ քաղաքի բանտում հանդիպել է քուրդ ավազակապետ Մուրսա-բեյին: Նրա հարցին, թե ինչու է նա բանտ ըն-

կել, Մուրաս-բեյը պատասխանել է. «Ես 70 հազար հայ եմ սպանել, բայց հիմա ինձ բանտարկել են այն պատճառով, որ ես խփել եմ ոստիկանին»: Ինչ սանել, բավականին խոսուն վկայություն է այն մասին, որ հայերի սպանություններն անպատիժ էին մնում պաշտոնական թույլտվությամբ:

«Թուրքերը հայերին սպանում էին կացիններով»։ այսպես է վերնագրված հոդվածը, որում բերված են Ամատոլիայի կոլեջի պրեզիդենտ Ջորջ Ուայթի վկայությունները (*Current History*, 1917, նոյեմբեր): Այստեղ հիմնականում նկարագրված են Փոքր Ասիայի հյուսիսում կատարվող իրադարձությունները: Թուրքերը, նշում է Ջորջ Ուայթը, որոշել էին վերջ տալ Հայկական հարցին, բնաջնջելով բոլոր հայերին, և հենց երիտթուրքական կառավարության վրա է ընկնում այս բոլոր հակահայկական գործողությունների պատասխանատվությունը:

«Մեկ միլիոնից ավելի հայեր սպանված կան մեռած էին թուրքական կառավարության հրեշավոր քաղաքականության հետևանքով»։ այս բառերով է սկսվում «*Missionary Review of the World*» (1917, նոյեմբեր) ամսագրի առաջնորդող հոդվածը: Հոդվածում ցույց է տրվում, որ կենդանի մնացածներից 400 հազարը որք է և կարիք ունի շտապ օգնության: Ամսագիրը ամերիկյան հասարակությանը կոչ է անում համաշխարհային օգնություն ցույց տալ նրանց: Նման կոչով հանդես է եկել նաև «*Literary Digest*» (1917, 29 սեպտեմբերի) ամսագիրը՝ «Հայերի փրկության կոչ» հոդվածում:

Ռիչյան Ռ. Ռոքֆելը «Սպանված հայերի ու սիրիացիների ընդհանուր թիվը» հոդվածում (*Current History*, 1916, նոյեմբեր) հաստատում է, որ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Թուրքիայում սպրել են երկու միլիոնից ավելի հայեր: «Նրանցից քանի՞սն են այսօր կենդանի», հարց է տալիս նա: Հեղինակը չի տարակուսում, որ հայ բնակչության 50 տոկոսը, այսինքն՝ մեկ միլիոնը սպանվել է: Հարկավոր է հիշել, որ հոդվածը գրվել է 1916 թ. նոյեմբերին, իսկ հայերի ողբերգությունը շարունակվում էր նաև հետագա մի քանի տարիների ընթացքում:

Նմանատիպ նյութեր տպագրվել են նաև «*New York Times*»-ի էջերում: «Ջոնեթը կապկպված են իրար», «Ֆրանսիացի գրողը խոսում է 80 հազար հայերի մասին, որոնք սպանվել են միևնույն տեղում» և մնան այլ վերնագրեր չէին իջնում այդ թերթի 1918-1919 թթ. համարների էջերից: Ամերիկացի եպիսկոպոս Ֆուտը հայտարարել է, որ օսմանյան պետությունում սպլոդ 3 մլն հայերից 1 մլն-ը ոչնչացվել է («*New York Times*», 1919, 7 հունիսի): Անհրաժեշտ է հատուկ նշել, որ համարյա բոլոր հոդվածներում հեղինակները արդարացիորեն նշում էին երիտթուրքերի վերջնական նպատակը՝ Հայկական հարցը ամբողջությամբ և վերջնականապես լուծել հայ ազգի բնաջնջմամբ: Այս մասով վստահորեն գրում է մասնավորապես Ֆրեդ Պ. Հազարդը իր «Պե՛տք է արդյոք մեռնի Հայաստանը» հոդվածում (*The Independent*, 1917, 23 հունիսի): Նա մատնանշում է, որ «Թուրքիան թուրքերի համար» կարգախոսի հեղինակները հաշվարկել էին, որ քանի դեռ կայարությունները գրավ-

ված են պատերազմելով, իրենք կարող են իրագործել իրենց մարդակեր նպատակները: Դրա համար նրանք առաջին հերթին կազմակերպեցին թուրքական բանակում ծառայող հայ և սիրիացի զինվորների սպանությունները: «Ոչ Բելգիան, ոչ Սերբիան, կամ Լեհաստանը այն աստիճան չեն տուժել, որքան Հայաստանն ու Սիրիան», - եզրափակում է Հազգարը:

Թուրքիայում Ամերիկայի թղթակից Ռիչարդ Ս. Էլլիսը (*The Outlook*, 1916, 20 դեկտեմբերի) «Պանթուրքիզմի քաղաքականության առթիվ» հոդվածում գրում է բոլոր թուրքերին «մի միության» մեջ համախմբելու երիտթուրքերի բացահայտ ու ներշնչված ճիգերի մասին, հանում որի նրանք ձգտում էին կրոնական կապերը փոխարինել ռասայականով և այդ հիմքի վրա ստեղծել իրենց նոր պետությունը: Հեղինակի կարծիքով այդ նպատակի համար նոր խթան հանդիսացավ արաբների սպանությունը Մեքքայի կառավարչի գլխավորությամբ: Իր ընդարձակ հարցազրույցում Էլլիսը բերում է մի շարք հետաքրքրական վկայություններ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի ներքին իրադրության մասին: Այսպես, պատմելով երիտթուրքերի հայատալաց քաղաքականության մասին, նա նշում է, որ թուրքական կառավարությունները խոչընդոտում էին հայկական ջարդերի մասին ամեն մի ինֆորմացիայի հոսքը: Գործը հասել էր նրան, որ նույնիսկ ԱՄՆ-ի հյուպատոսները ազատորեն չէին կարողանում հաղորդագրություններ ուղարկել իրենց դեսպանությունը: Էլլիսը լրացուցիչ սպացույցներ է բերում այն մասին, որ թուրքերը արգելում էին Սիրիայի քրիստոնյաներին որևէ օգնություն ցույց տալ այնտեղ հասած տարագիր հայերին:

«*The Atlantic Monthly*» (1916, նոյեմբեր) ամսագրում անանուն հեղինակը իր հոդվածը վերնագրել է այսպես. «Մի ազգի Գողգոթան»: Այն հայ ժողովրդի դիվանագիտական ու քաղաքական հարցի պատմության մասին հանգամանալի ակնարկ է՝ շատ նուրբ դատողություններով ու հետևություններով: «Ջարդերը Թուրքիայի պատմության համար սովորական երևույթներ են համարվում: Բոլորին ջարդելով թուրքը Կենտրոնական Ասիայից եկավ ու բնակություն հաստատեց բռնագրաված հողերի վրա»: Այս արյունալի փաստեր է բերում 1821-1827 թթ. հունական հեղափոխության անկման, 1860 թ. սիրիական ջարդերի, սերբերի, բուլղարացիների 1875-1876 թթ. բնաջնջման մասին:

1918 թ. դեկտեմբերի 7-ի «*New York Times*»-ը հայտարարում է, որ Թուրքիայի նոր սուլթան Մեհմեդ VI-ը 1918 թ. դեկտեմբերին Կոստանդուպոլսում բրիտանական մի թղթակցի հետ ունեցած գրույցի ժամանակ դատապարտել է երիտթուրքերի կառավարության քաղաքականությունը հայերի նկատմամբ և այդ առիթով իր ավստսանքն արտահայտել: Նա հայտարարել է, որ եթե ինքն այն ժամանակ սուլթան լինեք, նման բան երբեք չէր պատահի: «Նման հանցագործություններն ու միևնույն հայրենիքի զավակների փոխադարձ ոչնչացումները ցնցեցին ինձ»: Նրա խոսքերով, սուլթան դառնալուց հետո, իբր, ինքը հոգ տարավ հետաքննության անցկացնելու և դատիճներին խստորեն պատժելու մասին: «Բայց մի շարք փաստեր խանգարեցին ինձ լրիվ

իրականացնելու իմ հրամանները: Գործն այժմ մանրամասնորեն քննվում է: Արդարադատությունը շուտով կսաի իր խոսքը, և մենք այլևս այդպիսի սարսափելի դեպքերի կրկնություն չենք տեսնի»: Սուրբանը բողոսկյին խնդրեց իր անունից անպայման հրատարակել հետևյալը. «Ազգի ճնշող մեծամասնությունը ամենակն մեղք չունի իրեն վերագրվող հանցագործության մեջ: Միայն սահմանափակ թվով մարդիկ են պատասխանատու դրա համար»:

1919 թ. փետրվարի 12-ի «New York Times»-ը հաղորդում է, որ սկսվել է երիտրուրբական դատը. «Եղեռնի համար Դիարբեքիի մահանգապետը առաջինը կենթարկվի դատական պատասխանատվության»: Բացելով դատը՝ գլխավոր մեղադրողը խոսում է ամբողջ աշխարհը սարսափահար արած եղեռնի հեղինակներին պատժելու անհրաժեշտության մասին:

Նախկին մեծ վեզիր Թևֆիկ-փաշան¹ խառական թերթերից մեկին տված իր հարցազրույցում («New York Times», 1919, 13 մարտի) պահանջում էր ստեղծել միջազգային հանձնաժողով՝ հայերի բնաջնջման փաստերը վերանայելու համար: «Միայն այս ճանապարհով Եվրոպան կարող է իմանալ ճշմարտությունը: Մենք ոչ միայն չենք ժխտում Հայաստանում կատարված ծանր փաստը, այլև խորապես ափսոսում ենք դրա համար: Մենք հիմա դատում ենք նրանց, ովքեր կրում են դրա պատասխանատվությունը»:

1919 թ. ապրիլի 14-ի «New York Times»-ը հաղորդում է, որ ապրիլի 12-ին Ստամբուլի Բայազետի հրապարակում, ի տես ժողովրդի, կախաղան է քարծրացվել նախկին մահանգապետ (նա մահ պարենի նախկին մինիստրն էր) Ջեմալ-բեյը: Գատարանը որոշել է, որ նա Յոզղաթի շրջանում հայերի բնաջնջման ու արտոման գլխավոր մեղավորներից մեկն է:

1919 թ. հուլիսի 13-ին «New York Times»-ը հաղորդում է, որ «Թուրքիան դատապարտում է ռազմական շրջանի իր պարագլուխներին», որ ռազմական տրիբունալը մահվան է դատապարտել Էնվեր-փաշային, Թալաթ-փաշային և Ջեմալ փաշային: «Երեքն էլ փախել են»: «Ջավիթ-բեյը և նախկին շեյխ ուլիսամը դատապարտված են 15 տարվա տաժանակիր արտրի»:

Կարդալով այս հաղորդագրությունները՝ կարող է տպավորություն ստեղծվել, թե թուրքական նոր իշխանություններն ամբողջությամբ զիտակցում էին եղեռնի հրեշավոր քաղաքականությունը, որի հետևանքով էլ դատապարտում էին երիտրուրբական շարժման պարագլուխներին: Գժբախտաբար, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, դրանք միայն թուրքական նոր իշխանությունների ստիպողական միջոցառումներն էին՝ շատ քանով պայմանավորված Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի կրած պարտությամբ և Անտանտի երկրների առջև արդարացման ձգտումով: Հօգուտ դրան է խոսում մասնավորապես հետևյալ փաստը. Կարմիր խաչի ներկայացուցիչ, ամերիկացի Ջոն Ֆենլիի հայտարարության համաձայն, զինադադարը ոչ մի փոփոխություն չմտցրեց թուրքական մեթոդներին:

¹ Անեղ Թևֆիկ-փաշա (1845-1936), Օսմանյան կայսրության մեծ վեզիր (1909, 1918-1919, 1920-1922) - Ա.Կ.:

րում: Նա բերում է օրինակներ այն փաստի, թե ինչպես ներքին մարզերում բուրբերը շարունակում էին կազմակերպված սպանել հայերին («New York Times», 1919, 19 ապրիլի):

Կարդալով «Հայկական եղեռնը» ժողովածուի բերած նյութերը, համոզվելով դրանց բավարար անկողմնակալության ու անկանխակալության մեջ, ակամա ցնցվում ես այն կերպարանափոխությունից, որ կրել է ամերիկյան մամուլն այսօր՝ Թուրքիայում կատարվող իրադարձությունների նկատմամբ: Ինչպես հայտնի է, այդ երկրում 1980 թ. սեպտեմբերին ռազմական վարչակարգ հաստատվելուց հետո մոռացության են տրվել հասարակության դեկավարման դեմոկրատական բոլոր սկզբունքները, արգելվել են ամեն տեսակի քաղաքական, արհմիութենական, հասարակական և այլ կազմակերպություններ, իսկ դրանց գործիչները դատի են տրվել: Ավելի է դաժանացել ազգային փոքրամասնությունների նկատմամբ վերաբերմունքը: Այս պայմաններում, ինչպես ԱՄՆ-ի պաշտոնական շրջանակները, քնականաբար, այնպես էլ մամուլը, ոչ միայն հանդես չեն գալիս բուրբական կառավարության դատապարտմամբ, այլև հակառակը, ամեն կերպ խուսափում են նրանց հասցեյին արվող որևէ քննադատական ելույթից: Ավելի խիստ հատկանշական է այն փաստը, որ «Newsweek» ազդեցիկ պարբերականի այս տարվա համարներից մեկը (5 ապրիլի, 1982 թ.) համարյա ամբողջությամբ նվիրվել է ժամանակակից Թուրքիայի գովաբանությանն ու ռեկլամին: Այս ամենի քացատրությունը երկար փնտրելու կարիք չկա. այսօր Թուրքիան ԱՄՆ-ի հավատարիմ դաշնակիցն է: Մարդասիրության և դեմոկրատիայի բարձր սկզբունքները ԱՄՆ-ի ինչպե՞րիալիստների համար ոչինչ են ՆԱՏՕ-ի ագրեսիվ պլանների իրագործման մեջ Թուրքիայի ակտիվ մասնակցությունն ապահովելու համեմատ:

Д-р САЛАХИ Р. СОНИЕЛЬ. ПЕРЕСЕЛЕНИЕ АРМЯН. ДОКУМЕНТЫ¹

«Истина сама себя защитит без труда»

Щицерон

Эта необъемистая фальшивка принадлежит перу турка-киприота С.Сонниеля. На страницах турецких газет, как Туршин, так и западных стран, доктор Сонниель известен нам предпринимаемыми им публичными извращениями истории Армянского вопроса, армяно-турецких отношений. Он поставил перед собою цель – показать, что младотурецкие главари не только не уничтожали армян, но и, будто, проявляли заботу об их безопасности.

Брошюра состоит из нескольких бессистемно, но тенденциозно подобранных документов, оригиналы которых, якобы, находятся в архивах МИД Великобритании. Одни и те же документы приводятся на английском, французском и турецком языках. В конце приовщены факсимиле этих же бумаг на старо-турецком языке. Включены в брошюру некоторые телеграммы-распоряжения (за подписью Талаата, министра финансов Тахсина-паша, министра Али Февзи и др.), которые содержат технические и организационные поручения местным властям по вопросам депортации, транспортировки и размещения армянского населения.

В своем вводном слове Сонниель остается верен себе. Он пишет о хороших условиях жизни, обеспеченных армянам в рамках Османской империи, о том, что армяне занимали высокие посты в государстве и что все это теперь отрицается, более того, он говорит «о несправедливой и лишеной основания пропаганде, которая интенсивно ведется определенными фанатичными кругами в последние годы». Далее новоиспеченный эксперт по делам армянского геноцида творит свой вариант понимания и интерпретации младотурецкой политики уничтожения армянского народа. Он пишет о том, что граждане армянской национальности восстали против властей (несмотря на «уговоры»), а турецкое государство спланировало переселение «некоторых» (обратим внимание на это слово!) армянских граждан в другие районы страны, «принимая самые гуманные меры». Все это Сонниель преподносит как «исторический факт» в противо-

¹ Киракосян Дж., Кармиршальян В. Dr. Salahi R. Sonyel. Displacement of the Armenians: Documents, Ankara, 1978, 80 p. (Д-р Салахи Р. Сонниель. Переселение армян: Документы, Анкара, 1978, 80 с.) // *Вестник Ереванского университета* (Е.), 1982, N 3, с. 210-216: Տե՛ս նաև՝ «Հայերի վերաբնակեցումը» // «*Աշխարհ*» (Փ.), 1982, 13, 20, 27 նոյեմբերի, 4 դեկտեմբերի: «*Լրաբեր*» (Լ.Ա.), 1982, 20 նոյեմբերի: «*Կանյ*» (Բեյրութ), 1982, 12 դեկտեմբերի: Տե՛ս նաև՝ «Պատմության փաստերը ծոռ հայելու մեջ» // «*Սովետական գրականություն*» (Ե.), 1983, N 1, էջ 116-122:

вес тем людям, которые называют это «геноцидом» и «угрожают миру на земле, пытаясь инспирировать конфликт на Среднем Востоке». Он же, якобы, хочет ответить этим людям языком документов.

Что за документы? Это тенденциозно подовранные бумагаи, под различными номерами, имеющие целью показать «гуманность» младотурецких палачей. В одном из этих документов министр финансов Тахсин-паша (22.07.1915) предписывает местным властям отложить взимание налогов с депортированных армян на более позднее время. В другом документе (23.07.1915) Талаат требует «исключить католиков из процедуры перемещения» (с. 1), а в телеграмме от 02.08.1915 г. он предписывает не трогать армян-протестантов (с. 5). Действительно, после ноты протеста правительств государств Антанты, которая была направлена младотурецкому триумvirату по инициативе Петрограда в конце мая 1915 г., в Стамбуле вынуждены были повеспокоиться. Ведь в этом коллективном демарше союзников вся ответственность за резню армян возлагалась на правительство младотурок. Но, во-первых, в августе 1915 г. депортация в основном уже завершилась, во-вторых, если по получении ноты что-то и было предпринято, то лишь формально, ради успокоения европейского овщественного мнения, в том числе и церковных кругов союзных держав – Германии и Австро-Венгрии. Соннель это преподносит как гуманность.

В телеграмме от 30.08.1915 г., подписанной Али Февзи, говорится о трудностях в транспортировке турецких войск по железной дороге из-за скоплений депортированных армян. Февзи распоряжается принять меры по преодолению препятствий для нормального продвижения турецких войск по железной дороге. Неужели Соннелю кажется, что от этой телеграммы легче становилось депортированным женщинам, детям, старикам, подвергшимся всем унижениям и ужасам младотурецкого насилия?

2 августа 1915 г. министр внутренних дел Талаат телеграфно распорядился (документ No. 170), чтобы армян-членов парламента и их семьи не переселяли в другие места. Овратите внимание на дату. Но ведь 24 апреля уже были высланы из Константинополя видные представители армянской общины – политики, врачи, юристы, писатели. В Ване, Эрзеруме, в других местах были арестованы, убиты или сосланы армяне-депутаты и не депутаты, молодые и старики. В той же телеграмме Талаат требует оставления армян офицеров-врачей в тех местах, где они находились в тот момент. Это овьясняется тем, что турки просто очень нуждались во врачах-армянах.

4 августа 1915 г. Талаат требовал приостановить депортацию тех армянских служащих и рабочих железных дорог, у которых имеются официальные служебные документы (с.5). И такими вот бумагами г-н Соннель хочет проиллюстрировать доврожелательность, внимание и заовту младотурецких оввиц в отношении депортированных армян. В другом документе овбеспооенность турецких властей сводится к тому, как бы не повлияла отрицательно депортация

армян – железнодорожных работников, станционных мастеров, на нормальное функционирование турецких железных дорог. Предписывается постоянно следить по телеграфу за положением дел в этой области. Здесь забота не об армянах, как твердит во вступительном слове г-н Соннель, а обеспокоенность карателей тем, как бы своими действиями не повредить государственным интересам.

Среди бумаг есть такие, которые свидетельствуют о мелких хозяйственных расчетах, стремлении к экономическим выгодам. Например, богатым армянам разрешалось добираться до места назначения депортации с правом на приобретение билетов за свой счет (с. 9), по 40 курушей платили в день тем железнодорожным чиновникам, на которых возлагалась задача обеспечения своевременного отправления поездов с депортированными армянами с железнодорожных станций. Или другой документ, свидетельствующий об обеспокоенности властей тем, что из-за слухов о возможности возвращения депортированных армян и греков на прежние места, не исключены случаи самовольных действий, которые могут привести к нежелательным последствиям: прекращению строительных, сельскохозяйственных работ в новых местах и т.д.. Эта телеграмма за номером 404 министерства внутренних дел была передана правительству города Муданья 2 сентября 1918 г..

Как мы уже отметили, брошюра составлена бессистемно, тенденциозно, с единственным желанием – с помощью приведенных документов реавилитировать младотурок.

Неужели г-н Соннель верит в то, что подбором нескольких выборочных материалов можно показать истину? Неужели он не знаком с многочисленными документами, книгами, статьями, показывающими подлинную действительность времен младотурок. Напомним, что еще в 1918 г. английский автор Эмили Робинсон¹, говоря о традиционной античеловеческой сущности турецкой государственности, отмечала: «Снова и снова турецкое правительство обращалось к истреблению, пока весной 1915 г. оно не добилось своей ужасной цели – полного искоренения армянской нации в Турции. Нечеловеческая жестокость, которой сопровождалась резня и депортация в пустынные районы более чем миллиона беспомощных христиан турками, хороша известна всем тем, кто читает газеты».²

Но видно, г-н Соннель не любит читать газет и не хочет считаться с богатыми архивными материалами. Однако, раз уж он взялся за освещение Армянского вопроса и армяно-турецких отношений, ему полезно было бы ознакомиться

¹ Էմիլի Ռոբինսոն - քրիստոնացի լրագրող, հրապարակախոս, քարեգործ, Հայ դատի պաշտպան, 1914 թ. Լոնդոնում հիմնել է Հայկական ընկերություն և Հայ Կարմիր խաչի և փախստականների ընկերություն կամ Օրիորդ Ռոբինսոնի կոմիտե կազմակերպությունները, «ԵՃարտությունը Հայաստանի մասին», «Հայաստանը և հայերը», «Հայերը» գրքերի հեղինակ - Ա.Գ.:

² Robinson Emily J. The Armenians, London, 1918.

ся с воспоминаниями очевидца этих событий Фанза эль Хосейна¹, с трудами известных историков Ж. Де Моргана², Р. Пинона³, А. Тойнби⁴, с воспоминаниями бывшего в то время послом США в Турции Г. Моргентау⁵ и многих других авторов.

В 1918 г. французский историк с мировым именем Жак де Морган издал в Париже книгу под заглавием «Против варварства на Востоке». Глава 5 этой монографии озаглавлена «Внутри Турции (1915-1917)». Там мы читаем: «Младотурки тщательно скрывают свои преступления, которые они совершают ежедневно. Сведения об этих преступлениях доходят к нам с большим трудом и чаще всего они не полные.»⁶ Морган обстоятельно, на основании изучения многочисленных документов, рассказов очевидцев, газетной информации приходит к заключению, что младотурки проводили в жизнь свою политику следующими фазами:

«1. Мобилизация молодежи с тем, чтобы устранить из христианских центров все элементы, способные к сопротивлению, использование этих людей на дорожных и земляных работах, затем их массовое уничтожение.

2. Ликвидация христианских центров и резня части населения, распределение или продажа молодых девушек и женщин на публичных базарах (чаще всего по цене 5 франков за человека), разграбление движимого и недвижимого имущества «неверных».

3. Депортация остатков населения с продолжением резни в пути, уничтожение стариков и детей мужского пола, распределение оставшихся еще женщин и молодых девушек среди местных мусульман.

4. Концентрация лиц, которые еще остались живы, в лагерях Месопотамии, в таких условиях и в таком климате, чтобы вольшая часть депортированных погибла.»⁷

«История никогда еще не знала резни в таких масштабах и такой форме.»⁸

В статье, опубликованной в западногерманском журнале «*Emuna*» (номер 3, 1978) и озаглавленной «Дела Генри Моргентау-старшего», Роберт Кемпнер, бывший во время Нюрнбергского процесса заместителем главного обвинителя от США, пишет: «Убийство 1.4 млн. армян по приказу турецкого правительства было первой программой геноцида нашего столетия. Идея всеобщей депорта-

¹ El-Ghassen Faiz. La domination Ottomane. L'Armenie Martire, Geneva, 1917.

² Morgan J. de. Contre les Barbares de l'Orient, Paris, 1918.

³ Pinon R. Le suppression des Armeniens. Methode-allemande, travail-turk, Paris, 1916.

⁴ Toynbee A.J. Armenian Atrocities. The murder of the Nation, New York, 1915.

⁵ Morgenthau H. Ambassador Morgenthau's story, New York, 1918.

⁶ Morgan J. de. Op. cit, p. 176.

⁷ Ibid, p. 178-179.

⁸ Armenia and Settlement. Report of the Public Meeting, London, 1919, p. 15.

ции армян, задуманная младотурецким комитетом во время Первой мировой войны, привела к массовому уничтожению более 2/3 армянского народа.

Конечно, не в интересах фальсификаторов истории обращаться к этим источникам. Но истина и справедливость требуют этого.

Факты упорно свидетельствуют, что еще задолго до начала Первой мировой войны руководством младотурок был разработан чудовищный план массовой резни и депортации армянского народа.¹ Один из главарей младотурок Джавид говорил тогда: «...Уничтожение армян, всех до единого, настолько необходимо для нашей национальной политики, настолько же важно для создания экономического господства турок».²

Первым мероприятием правительства в осуществлении этого варварского плана было разоружение и вероломное истребление находящихся на военной службе армянских солдат и офицеров. 27 февраля 1915 г. всем армейским командирам был разослан приказ военного министра Энвера, предписывающий им арестовать и задержать в казармах своих полков всех офицеров-армян, а также увести в уединенные места, «подальше от посторонних глаз» и там расстрелять всех армян, служащих в имперских армиях».³

Накануне взятия Эрзерума русскими, обращаясь к консулу США, Шакир говорил: «Передайте командиру русскими войсками, что если хоть один волос упадет с головы турок Эрзерума, то все, что уцелело от армянского населения, будет уничтожено. Нам нужно, чтобы от Константинополя до Индии и Китая было только мусульманское население. Сирия будет связывающим звеном между мусульманами Азии и Африки. Ученость и организаторский талант немцев и доблестная рука турок осуществят этот обширный проект».⁴

15 апреля 1915 г. Энвер, Талаат и Назым подписали приказ о всеобщей депортации и уничтожении армян всех вилайетов Анатолии и Киликии. В нем говорилось: «...В целях предотвращения постановки где-либо и в какой-либо форме Армянского вопроса, пользуясь независимостью, предоставленной нам войной, решили окончательно покончить с ним, истребив этот чуждый элемент – армян, выслав их в пустыни Аравии».⁵

Все указанные выше источники переведены на многие языки мира и хорошо известны настоящим, честным историкам. Не лучше ли г-ну Сониелю

¹ Morgenthau H. The Tragedy of Armenia, London, 1918.

² Ibid.

³ The Memoirs of Naim Bey. Turkish official Documents relating to the Massacres of Armenians, Pennsylvania, 1964, p. 66.

⁴ Morgan J. de. Op. cit, p. 188.

⁵ Bryce Viscount. The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915 – 1916. Documents presented to Viscount Croy of Falloden, Secretary of State for Foreign Affairs, London, 1916.

вместо компановки и подтасовки фактов заняться честным изучением истории, в частности, Армянского вопроса?

29 мая 1922 г. дипломатический корреспондент английской газеты *«Дейли Телеграф»*, тщательно изучив все аспекты случившегося, так описывал последствия турецкой политики геноцида христиан: «Если у кого возникнут сомнения относительно зверств, совершенных турками в Малой Азии, им достаточно будет ознакомиться с турецкими официальными телеграммами 1915-1916 гг. о депортации и резне армян, чтобы убедиться в этом... Я сомневаюсь, что в анналах мировой истории можно было бы найти более ужасный пример преследований и убийств или более отвратительное доказательство зловещего и безжалостного способа мышления, чем у турок».

Вот некоторые выдержки из приказов¹ министра внутренних дел Талаата-паша губернатору Алеппо:

9 сентября 1915 г. – «Право армян жить и трудиться на территории Турции повсеместно упраздняется. Правительство полностью берет на себя ответственность за это и приказывает, чтобы даже грудным детям не было разрешено оставаться».

15 сентября 1915 г. – «Как мы Вас уже информировали, правительство по приказу Союза («Единение и прогресс») приняло решение о полном истреблении армянского населения Турции... Не жалеть ни женщин, ни детей, ни инвалидов. Какими трагическими ни были бы методы искоренения, должен быть положен конец их существованию».

Талаат-паша и его приспешники, конечно, старались быть осторожными в выполнении своих чудовищных замыслов. Они делали все, чтобы скрыть от союзных держав, мирового общественного мнения истинные цели своей античеловеческой политики.

18 ноября 1916 г. Талаат приказывал: Должны быть приняты все меры, чтобы когда депортированные армяне проходили через города, поселки или другие центры, по отношению к ним не было учинено никаких инцидентов, привлекающих внимание. С точки зрения сегодняшней нашей политики крайне важно, чтобы иностранцы, проезжающие по этим местностям убедились, что единственной целью депортации является смена их жительства.

29 декабря 1915 г. – «Нам стало известно, что иностранные офицеры подходят к трупам, лежащим вдоль дорог, и фотографируют их. Я предупреждаю вас о необходимости того, чтобы эти трупы были немедленно собраны и удалены с дорог».

¹ Документы приводятся по книге: Ward Mark H. The Deportations in Asia Minor, London, 1922, p. 16.

В 1919 г. турецкие официальные круги открыто писали о варварских методах младотурецких главарей, их антиармянские действия называли «безжалостными», «беспощадными», признавались в отсутствии необходимости для защиты интересов государства проведения такой политики. «Вина юнионистской организации, которая разработала и обдуманно проводила эту внутреннюю политику истребления и грабежа, очевидна. Ее лидеры попадают в один ряд с самыми вольными преступниками человечества».¹

В то же время, уже тогда делались попытки отвести от турецкого народа какую-либо моральную ответственность, говорилось о неправомерности младотурок вершить судьбами всего народа. В том же турецкие авторы пытаются показать вредность политики младотурецкого правительства как для армянского населения, так и для мусульман. «Все слои, все национальности были жертвами их тиранни»,² - пишут они.

Авторы турецкого официального издания обещали соответствующую компенсацию пострадавшим от политики младотурок армянам, просили дать-необходимое время для осуществления этого. Здесь мы читаем: «За все это все официальные лица, которые действовали как агенты юнионистской организации в кампании уничтожения и грабежа армян, уже арестованы и находятся под судом».³

Одним словом, справедливость в своем полном действии», - писали авторы турецкого официального издания. «Депортированное население возвращается в свои дома, пострадавшим от грабежей выдают пособия, выделяются значительные фонды для облегчения горя пострадавших».⁴

И, наконец, говорилось, что «турецкий народ склоняет свою голову перед трагедией армянского народа. Он это делает в печали за армянский народ и в стыде за себя. Он признается в этом и осуществляет обязательства, которые возникли в результате этой ситуации. Но турецкий народ отвергает какую-либо моральную ответственность, связанную с действиями своих недостойных лидеров, которых не признает».⁵

В конце авторы патетически восклицали: «Да, турки убивали армян, резали и грабили их, разоряли их дома».

Находятся и сейчас среди турок авторы, которые признают злодеяния, совершенные их предками против армян. Турецкий журналист Ахмед Фуад на страницах органа французских социалистов, газеты «Либерасьон» признавался: «Энвер-паша и Талаат-паша, которые вовлекли Османскую империю в авантюру Первой мировой войны, не могли и представить себе, что их внукам, однаж-

¹ The Turko-Armenian question. The Turkish point of view, Constantinople, 1919, p. 83.

² Ibid.

³ Ibid, p. 83-84.

⁴ Ibid, p. 84.

⁵ Ibid, p. 85.

ды отомстится за совершенную ими в 1915 г. резню армянского народа. Эта резня была организована мастерски, с использованием курдских разбойников, которым в награду за убийства армяны были обещаны очищенные от армян земли. Эта националистическая идея турецких главарей находила полную поддержку их германских покровителей. Не надо забывать, что эти же курды впоследствии, в 1937 г., были сами вырезаны турками».¹

Фактов, подобных этим, свидетельствующих о преднамеренности и жестокости уничтожения армян турками в годы Первой мировой войны, можно привести сотни.

Страницы зарубежной буржуазной прессы то и дело пестрят разного рода «сенсационными» псевдонаучными, наскоро состряпанными фальшивками - об Армянском вопросе, армяно-турецких отношениях. В ответ на многочисленные документальные, научно обоснованные исследования по этой проблеме, в последнее время на книжных и газетных прилавках ряда зарубежных стран, особенно Турции, появились новые «писания», отрицающие факт геноцида и «свидетельствующие» о «гуманном» отношении правителей младотурецкой Турции к армянам - «соотечественникам». «Творцы» этих исторических измышлений очевидны. Это реакционные турецкие власти и их местные и зарубежные прислужники пера.

Пользуясь нехитрыми методами «кривого зеркала», они переставляют все с ног на голову и посредством подтасовки фактов пытаются показать, что не армяне, а турки были жертвами истребления. Метод не новый, не умный, но зато может повлиять на сознание хоть небольшой неискушенной части молодых читателей и в их глазах «реабилитировать» младотурок, в частности, и турецкую государственность, в целом. А если кто-либо в Европе, в Америке чем-то, в какой-либо форме напоминает об истинных фактах младотурецких злодеяний, тут же турецкая официальная пропаганда, государственные лица поднимают немалый шум.

Имя Дейвида Маршалла Лэнга общезвестно. Он английский историк, кавказовед, востоковед, арменовед. Его перу принадлежит ряд ценных монографий, публикаций по истории армянского народа.² В последнее время, как и все добросовестные честные авторы по армянской тематике, Лэнг, его английский молодой коллега Кристофер Уокер³ оказались под огнем критики турецких псевдоученых-шантажистов.

¹ «Հայաստան» (Փ.), 1982, 10 օգոստոսի:

² Lang D.M. The Armenians // Minority Rights Group Publication, N 32: Armenia. Cradle of Civilisation, London, 1978: The Armenians. A People in Exile, London, 1981.

³ Walker Christopher J. Armenia. The Survival of a Nation, New York, 1980. Հրիստոֆոր Ջոզեֆ Ուոլքեր (ծնվ. 1942) - անգլիացի պատմաբան, հայ ժողովրդի նոր և նորագույն պատմության մասնագետ, «Հայաստան. Ազգի վերապրումը»,

Американская армянская газета «*Аспарез*» перепечатала письма того же Сонниеля, в которых он обращается то к Лэнгу,¹ то к руководству Лондонского университета² (где Лэнг заведует кафедрой кавказоведения). Выражая свое негодование по поводу последней книги английского историка,³ используя ложь и клевету, он пытается опорочить, очернить имя честного ученого, обвиняет его в недобросовестности и симпатиях к армянскому народу. Выступая, якобы, с миролюбивых позиций, он заявляет, что труды Лэнга не только не способствуют установлению мирных, добрососедских отношений между турками и армянами, но и провоцируют армянских террористов к новым атакам на турецких деятелей. Что же, однако, важнее – истина или ложь? Турецкий псевдонисторик выбирает, конечно же, сторону лжи, во вред истине и обосновывает это своей псевдоозабоченностью судьбами мира.

Всем, кто пытается фальсифицировать историю армянского народа, следует уяснить себе: трагедию армян нельзя ни стереть, ни предать забвению. Так же, как и нельзя забыть злодеяния фашистов в годы Второй мировой войны, или же геноцид собственного народа, учиненный реакционной кликой Пол Пота⁴ в Кампучии.

Нет сомнения, что такие низкопробные публикации, какова брошюра С. Сонниеля, могут иметь успех лишь у несведущих обывателей. Они антинаучны, антиисторичны, их цель – извратить историческую истину, оправдать антиармянские злодеяния младотурецких палачей. Долг каждого честного историка дать отпор современным турецким фальсификаторам истории.

«Հայաստանը և Ղարաբաղը. Պայքար միավորման համար» աշխատությունների հեղինակ - Ա.Կ.:

¹ «*Ասպարեզ*» (Լ.Ա.), 1981, 26 դեկտեմբերի:

² «*Ասպարեզ*» (Լ.Ա.), 1982, 5 հունիսի:

³ Lang D. M. *The Armenians. A People in Exile*, London, 1981.

⁴ Պոլ Պոտ (Մալոտ Մար) (1925-1998) - կամբոջացի քաղաքական գործիչ, Կամբոջայի կոմկուսի գլխավոր քարտուղար, ղեկավարել է «կարմիր կլամերների» ծայրահեղ ճախավորման ռեժիմը, որի ժամանակ կոտորվել է շուրջ մեկ և կես միլիոն մարդ - Ա.Կ.:

ՏԱՆՈՐ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ¹

Հայկական ՍՄՀ արտաքին գործերի մինիստր Ջ.Կիրակոսյանը և Հայկական ՍՄՀ գիտությունների ակադեմիայի բոլբակից անդամ Ռ.Ստամբոլցյանը² վերջերս տասն օր հյուրընկալվեցին Հնդկաստանում: Արմենպրեսի բոլբակիցը գրույց ունեցավ Ջ.Կիրակոսյանի հետ, խնդրեց նրան պատմել բարեկամական երկիր կատարած այցի, ստացած տպավորությունների մասին:

Ո՞րն էր այցելության նպատակը:

Մեր առաքելությունը, որը կազմակերպել էր Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերությունը՝ «Սովետական Միության բարեկամներ» հնդկական նորաստեղծ կազմակերպության միջոցով, բարեկամությունն էր: Նպատակն էր ծանոթանալ երկրի, հատկապես Անդիրա Պրադեշ նահանգի կյանքին, որը Սովետական Հայաստանի հետ կապված է գիտամշակութային կապերով:

Օրերս լրացավ ՍՄՀ-ի և Հնդկաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 35 տարին: Սովետների երկրի հետ Հնդկաստանի բարեկամությունը մեծ նշանակություն ունեցավ երկրի անկախության ամրապնդման, միջազգային իմպերիալիզմի և ռեակցիայի ոտնձգությունների դեմ նրա պաշտպանումակալության հզորացման գործում:

Ուզբեկական ՍՄՀ-ին Լենինի շքանշանի հանձնմանը նվիրված հանդիսավոր նիստում ունեցած իր ելույթում ընկեր Լ.Ի.Բրեժնևը մեկ անգամ ևս անդրադարձավ Հնդկաստանի նկատմամբ ՍՄՀ-ի դիրքորոշմանը: Ավելի քան քառորդ դար, ասաց նա, Սովետական Միությունը և Հնդկաստանը ակտիվորեն և անխոց կերպով զարգացնում են իրենց բարեկամական համագործակցությունը, և այդ տարիների ընթացքում մեր ժողովուրդները կարողացել են ոչ միայն ավելի լավ ճանաչել միմյանց, այլև սովորել են հարգել ու գնահատել միմյանց: Հնդկաստան կատարած մեր այցելության, տարբեր բնագավառների մարդկանց հետ հանդիպումների ժամանակ մենք՝ Սովետական Հայաստանի պատվիրակներս, մեկ անգամ ևս համազվեցինք նաև այն բանում, թե հնդիկները որքան բարձր են գնահատում բարեկամությունն ու համագործակցությունը սովետների երկրի հետ: Պետք է ասել, որ 1980 թ. դեկտեմբերին ընկեր Լ.Ի.Բրեժնևի՝ Հնդկաստան կատարած այցելության ժամանակ ձեռք բերված պայմանավորվածությունները հզոր խթան են սովետա-հնդկական համագործակցության համար՝ տնտեսության, գիտության ու մշակույթի բոլոր ասպարեզներում: Մենք ակամատես եղանք այդ համագործակցության փայլուն դրսևորումներին: Եվ այդ ամենը, չնայած սոցիալ-տնտեսական կարգերի

¹ Կիրակոսյան Ջ. Տասն օր Հնդկաստանում // «Երեկոյան Երևան» (Ե.), 1982, 17 ապրիլի: «Սովետական Հայաստան» (Ե.), 1982, 20 ապրիլի:

² Ռաֆայել Ստամբոլցյան (1922-2012), քերական-սրտաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս - Ա.Կ.:

տարբերությանը, իրականացվում է միմյանց գործերին չմիջամտելու սկզբունքի պահպանման, երկու երկրների արտաքին քաղաքականության առանձնահատկությունների փոխադարձ հարգանքի հիման վրա: Մեր անձնական բազմաթիվ հանդիպումների ժամանակ այդ բանը նշում էին իրենք՝ հնդիկ գիտնականները, մասնագետները: Նրանք շնորհակալությամբ էին ընդգծում այն մեծ օգնությունը, որ ցույց է տալիս Սովետական Միությունը իրենց երկրին:

Հնդկաստանը՝ աշխարհի հնագույն քաղաքակրթության օրրաններից մեկը, բոթափելով օտարերկրյա գաղութարարների լուծը, արդեն ավելի քան երեք տասնամյակ բռնել է ազգային զարթոնքի, նոր կյանքի կառուցման ճանապարհը: Ի՞նչն է այսօր բնորոշը Հնդկաստանի համար:

Մեր հյուրընկալները մեզ մեծ հպարտությամբ էին ներկայացնում անցիլա-տմստեսական այն կարևոր վերափոխումները, որոնք իրականացվել են երկրում՝ անցյալի հետամնացության վերացման, էկոնոմիկայի պետական սեկտորի ընդլայնման, գյուղատնտեսական արտադրանքի վերելքի, երկրի ինքնուրույն քաղաքականության ամրապնդման ուղղությամբ: Հնդկաստանի էկոնոմիկայի զարգացման համար մեծ նշանակություն ունի պետական սեկտորի ընդլայնումը, որին արդեն բաժին է ընկնում երկրի էկոնոմիկայի 20 տոկոսը, արդյունաբերական մի շարք կարևոր ճյուղերի գծով նրան է պատկանում առաջատարի տեղը: Իսկ գյուղատնտեսության մեջ իրականացվել է ազրոտեխնիկական միջոցառումների կոմպլեքս, որը հայտնի է «Կանաչ հեղափոխություն» անունով:

Մենք այցելեցինք երկրի խոշորագույն իրիզացիոն կառույցները, որոնք նույնպես ծնվել են համագործակցությամբ: Դիտեցինք Կրիշնան գետի վրա կառուցված Նազարջումասագոր հիդրոէլեկտրակայանը, իսկ նրա 120 մետր բարձրություն ունեցող պատնեշի հետևում ստեղծված է իր մեծությամբ աշխարհի երրորդ արհեստական լիճը, որը ռոռզում է 830 հազար հեկտար հող: Այնուամենայնիվ, բնակչության թվով աշխարհի երկրորդ, իսկ տարածքով՝ յոթերորդ երկրին վիճակված է դեռևս լուծելու շատ և շատ բարդ պրոբլեմներ: Տակավիճ մեծ թիվ են կազմում նրանք, որոնց կյանքն անցնում է բաց երկնքի տակ՝ ճյուղակների կամ խրճիթների ստվերում: Մյուս կողմից ճոխ հարստություն, շքեղություն... Մենք Հնդկաստանի կյանքի մաս այդ կողմի ականատեսը եղանք:

Եվս մեկ հարց. 1967 թվականից Արտասահմանյան երկրների հետ բերեկամության և մշակութային կապի հայկական ընկերությունը սերտ հարաբերությունների մեջ է հնդկա-սովետական մշակութային կապերի ընկերության Անդիդա Պրադեշի բաժանմունքի հետ: Այդ մահանգի պատվիրակությունները եղել են Հայաստանում, հայկական պատվիրակությունները՝ Հնդկաստանում: Ի՞նչպե՞ս եք գնահատում այդ կապերը, դրանք որքանով են նպաստում սովետա-հնդկական համագործակցության ամրապնդմանը:

Երկրների կուլտուրական կապերի ամրապնդման գործում, անշուշտ, կարևոր դեր են խաղում հասարակական և մշակութային գործիչների պատվի-

րակությունների փոխադարձ այցելությունները, անձնական շփումները: Այդ իմաստով կարելի է ասել, որ վերջին տարիներին սովետա-հնդկական կապերը էլ ավելի են զարգացել և շուշափելի դարձել: Աշխուժացել են նաև Սովետական Հայաստան և Անդհրա Պրադեշ նահանգի գիտական և մշակութային կապերը: Փոխադարձ այցելությունները, հրապարակային ելույթները օգնում են ավելի լավ ծանոթանալու երկրի կյանքին, ձեռք բերած հաջողություններին: Այդ տեսակետից արդյունավետ էր նաև մեր ուղևորությունը Հնդկաստան:

Կլոր սեղանների շուրջը տեղի ունեցած գրույցների, հանդիպումների, մամուլի կոնֆերանսների ժամանակ ընդգծվում էր մեր հյուրընկալների շեշտված հետաքրքրությունը Սովետական Միության, նաև հայ ժողովրդի ու նրա պատմության, Սովետական Հայաստանի ներկայի նկատմամբ: Հնդիկ մտավորականները, պետական գործիչները ակնածանքով էին արտահայտվում Կալկաթայում և Մադրասում, նաև Բոմբեյում առաջներում հայերի խաղաղածակտիվ ու նպատակոր դերի մասին: 18-19-րդ դարերում հայերը ակտիվ մասնակցություն են ունեցել երկրի կուլտուրական և քաղաքական կյանքին:

Մենք այցելեցինք Մադրաս, այն քաղաքը, որտեղ 18-րդ դարի վերջերին հայերը հիմնադրել են իրենց տպարանը, լույս են ընծայել հայկական առաջին պարբերականը՝ «Ազդարարը»: Որպես պատմական հուշարձան՝ այսօր էլ Մադրասում պահպանվել է հայկական փողոցը, որտեղ գտնվում է նաև հայկական եկեղեցին:

Հայ-հնդկական կապերը մեր օրերում ստացել են նոր բովանդակություն: Մենք եղանք Վիշակապատնամ քաղաքում, որտեղ Սովետական Միության տեխնիկական օժանդակությամբ Բճիլախի և Բոկլարոյի մետալուրգիական ձեռնարկությունների օրինակով կառուցվում է մի նոր մեծ կոմբինատ, իսկ կառույցի գլխավոր ինժեները սովետահայ մասնագետ Ղազանչյանն է: Մեր բարեկամական հանդիպումներում, ժողովներում ամբիոններից նրա և հայագի ուրիշ անուններ հաճախ էին հնչում, հետորոնքը նշում էին նոր Հնդկաստանի կառուցման գործին նաև հայ ժողովրդի զավակների ակտիվ մասնակցությունը:

Կուզենայի պատմել մի շարք հետաքրքրական հանդիպումների մասին, որոնց ժամանակ մեկ անգամ ևս ընդգծվեց, թե հնդիկ ժողովուրդը, Հնդկաստանի առաջավոր ուժերը, կոմունիստական կուսակցությունը որքան բարձր են գնահատում բարեկամությունն ու համագործակցությունը մեր երկրի հետ, մեծ տեղ տալիս համակողմանի կապերի հետագա զարգացմանն ու ամրապնդմանը:

Անդհրա Պրադեշի նահանգային պառլամենտում՝ օրենսդիր ասամբլեայում, մեզ ընդունեցին ծափահարություններով ու ծաղկեփնջերով: Ասամբլեայի սպիկեր Կ. Գ. Բաթիսակրը, դեպուտատ, խաղաղության ու համերաշխության համահնդկական կազմակերպության նահանգային բաժանմունքի պրեզիդենտ Գ. Նարասա Ռեդդին և ուրիշներ սրտանց ողջունեցին մեզ՝ Սովետական Հայաստանի ներկայացուցիչներին, խոսեցին սովետա-հնդկական բարե-

կամության ու համագործակցության արգասիքների մասին: Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ դուրսող Ռ.Ստամբուլյանը և ես մեր ելույթները նվիրեցինք աշխարհի խաղաղությունը պահպանելու գործում երկու պետությունների համագործակցության ու բարեկամության որոշիչ դերին, անդրադարձանք հայ-ինդիական պատմական առնչություններին:

Հնդկաստանի անկախության 32-րդ տարեդարձին և սովետա-ինդիական տնտեսական համագործակցության 27-րդ տարեդարձին էր նվիրված Հնդկական ազգային կոնգրես կուսակցության և «Սովետական Միության բարեկամներ» ընկերության կազմակերպած հանդիսավոր ժողովը, որին մենք հրավիրված էինք իբրև պատգամավոր հյուրեր: Հավաքվել էին նահանգի գործարար շրջանների և մտավորականության ներկայացուցիչներ: Ժողովի նախագահը՝ նահանգի գլխավոր դատավոր Սլագի Կուպոսվամին, իր ելույթում խոսեց այսօրվա Հնդկաստանի համար Սովետական Միության հետ համագործակցելու օգտակարության, նաև հայ և հնդիկ ժողովուրդների դարավոր բարեկամության փաստերի մասին:

Դելիի հասարակայնության ներկայացուցիչների հետ մեր հանդիպումները տեղի ունեցան սովետական մշակույթի ու գիտության նորակառույց պալատում: Մա իսկապես որ պալատ է՝ մեծ կինոսրահ, շախմատի ակումբ, գրադարան-ընթերցասրահ, բալետի ուսուցման սրահ և բազմաթիվ այլ հարմարություններ, որտեղ հնդիկ աղջիկներն ու պատանիները նաև սովորում են ռուսերեն: Այստեղ են կազմակերպվում հանդիպումները սովետական անվանի գիտնականների ու մշակույթի գործիչների հետ: Մենք ներկա գտվեցինք մնամ մի միջոցառման. Դելիի բանգարանների, պատկերասրահի տնօրենները, արվեստագետները գործարար հանդիպում ունեցան Լենինգրադի Էրմիտաժի տնօրեն, ակադեմիկոս Բորիս Պիտորովսկու¹ և նրա գլխավորած պատվիրակության հետ:

Այդ պալատում տեղի ունեցավ նաև հնդիկ հասարակական գործիչների, ժտնախիստների հետ մեր հանդիպումը, որը նախապատրաստել էր Դելիում արտասահմանի հետ սովետական բարեկամության ընկերությունների միության ներկայացուցիչ Յու.Կատոնը «Սովետական Միության բարեկամներ» հնդկական կազմակերպության հետ: Մեզ հարկ եղավ պատասխանել միջազգային կյանքին, սովետա-ինդիական հարաբերություններին վերաբերող բազմաթիվ հարցերին:

Անտարակույս, այս հանդիպումները, զրույցները, ելույթները սովետա-ինդիական բարեկամության և համագործակցության շրջանակներում իրենց համեստ դերը կխաղան Սովետական Հայաստանի և Անդիա Պրադեշ նահանգի միջև մշակութային կապերի ամրապնդման գործում:

¹ Բորիս Պիտորովսկի (1908-1990), խորհրդային հնագետ, եգիպտագետ, ուրարտագետ, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, 1964-ից՝ Էրմիտաժի տնօրեն, գիտական արշավանքների մասնակից Հայաստանում, «Ռուսարտոնի պատմությունը և մշակույթը», «Անդրկովկասի հնագիտությունը» աշխատությունների հեղինակ - Ա. Կ.:

ԵՆՈՒՅՑ ՀԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ՝

Մեծարգո պրեզիդենտ,
Խորին շնորհակալություն ինձ ընձեռված հնարավորության համար ելույթ ունենալու այս բարձր ամբիոնից:

Աշխատանքի քերումով ՀՄՍՀ արտաքին գործերի մինիստրությունում մենք ընդհուպ զբաղվում ենք, հետևում, թե ինչ է կատարվում հայոց շուրջն ամբողջ աշխարհում, ինչ են գրում ամերիկյան, թուրքական թերթերի էջերում, եվրոպական թե արաբական պատմագիտական հանդեսներում:

Գաղտնիք չէ, որ վերջին տարիներս մեծ չափով ավելացել է հետաքրքրությունը Սովետական Հայաստանի, նրա հաջողությունների ու նվաճումների նկատմամբ, վերաբացվել է ուշադրությունը Հայկական հարցի, նրա զարգացումների, արևմտահայության ողբերգական ճակատագրի, թուրք-հայկական հակամարտության նորագույն դրսևորումների շուրջ:

Ինչ խոսք, որ այս ամենը չի կարող չհետաքրքրել, չզբաղեցնել մեզ՝ Սովետական Հայաստանի կոմունիստներին, մասնավոր որ այս խնդիրներն արժարժվում են, քննարկվում թուրքական պետական, քաղաքական պրոպագանդայի, կեղծիքների, պատմական փաստերի աղավաղումների, աղմկարարության պայմաններում: Պատմության կեղծարարությունն ունի բացահայտ հակառուսական, հակահայկական, հակասովետական ու հակակոմունիստական գունավորում:

Թուրքիան ԱՄՆ-ին, ՆԱՏՕ-ին պետք է հակասովետական պլանների համար: Ուրեմն լավն է և այսօր, լավն է եղել և երկը ըստ ամերիկյան «պատմաբանների»: Կան ամերիկյան հեղինակներ, որոնց տեսակետով թուրքերը միշտ էլ լավ կառավարիչներ են եղել: Առանձնակի տեղ է տրվում ռուսատյացությանը: Այստեղ շատ ակտիվ են պանթուրքիստները, որոնք արյունակից թուրքերին ռուսական տիրապետությունից ազատագրելու ցնդարանությունն են խնկարկում:

Ո՛չ սուլթան Աբդուլ Համիդի օրոք, ո՛չ երիտուրքական կարճատև, բայց արյունոտ տիրապետության տարիներին, ո՛չ էլ քեմալական ազգայնականների իշխանության պայմաններում հակահայկական թշնամական պրոպագանդան ռադիոյի, հեռուստատեսության, զրբերի թե թերթերի միջոցով այնպիսի հրեշավոր ծավալներ չի ընդունել, ինչպես այսօր: Այսօրվա թուրքական դեկավարությունը հսկայական գումարներ է ծախսում հակասովետիզմի, դեզինֆորմացիայի նպատակներով: Եվրոպական թե ամերիկյան զրբի շուկա են քերվում կեղծագրեր այն մասին, թե հայոց զենոցիդ չի եղել Օսմանյան կայսրությունում, թե մեղավորներն ինչպես Բալկաններում, այնպես էլ Հայաստանում ռուսներն էին: Վերջերս Թուրքիայում լույս է ընձայվել, եվրոպական լե-

¹ ՁԿԱԱ, Ջոն Կիրակոսյանի ելույթը ՀԽՍՀ ԳԱ-ում, 1982, աշուն, մերենագիր:

գուներով տարածվում և պաշտոնապես դրվատվում է մի հրապարակում, ըստ որի Թալեսթը հրեշտակից քիչ է տարբերվել, թե իբր արևմտահայության զանգվածային բնաջնջման վերաբերյալ նրա արձակած հրամանները հայկական հորինվածք են: Սրան կրկնում է «Washington Times» թերթը՝ պնդելով, թե Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայոց կորուստն ընդամենը 15 հազար է եղել, բայց հայոց ջանքերով դարձել է 1,5 միլիոն: Վերջերս էլ մի սանձարձակ պանթոպրիստ ավիստանք է հայտնում, թե ինչու թուրքական պետականությունը էստոնական թե լիտվական էմիգրանտական կառավարությունների օրինակով չի օգնել, չի պահպանել հայկական էմիգրանտական կառավարության գաղափարը, ինչը կնպաստեր հակասովետական պայքարին:

Հարգելի՛ ընկերներ, ես հարկ համարեցի խոսք վերցնել այս հեղինակավոր լսարանի առջև, քանի որ այստեղ հավաքված են մեր գտված մտավորականները, գրագետները, գիտնականները: Խոսք վերցրեցի հիշեցնելու, որ ամերիկյան թե թուրքական կեղծարարության, հակասովետիզմի դեմ պայքարը խիստ անհրաժեշտ է: Այդ եմ պահանջում ՄԱԿ կենտրոնը, նրա հունիսյան պլենումը: Թուրքական հակասովետիզմը ամերիկյան հակասովետիզմից ոչնչով քաղցր չէ: Երկուսն էլ դառն են, երկուսն էլ վնասակար, և նրանց դեմ մշտական պայքարն անհրաժեշտություն է: Հոտսենի թշնամու չարությունները, չկռվել նրանց դեմ հանուն մեր սովետական հասարակության, հանուն ժողովրդի արժանապատվության, նշանակում է ապրել փակ աչքերով, խցանված ականջներով: Խաղաղ գոյակցություն պետական հարաբերություններում, խաղաղ գոյակցության բացառում գաղափարական պայքարում:

Թշնամական քաղաքական պրոպագանդայի դեմ նպատակասլաց, հարձակողական հակապրոպագանդա կազմակերպելու համար անհրաժեշտ է քարելավել, կատարելագործել ինֆորմացիայի գործը: Հասունացել է «Հայագիտությունն արտասահմանում» տարեգրքի ստեղծման անհրաժեշտությունը: Այն կարող է ստեղծվել պրոֆ. Խ.Քարսեղյանի¹ գլխավորած ինֆորմացիայի կենտրոնի միջոցով, 20-25 մամուլ ծավալով: Այն կարող է լինել աշխատանքային օգտագործման համար: Այդպիսի հրապարակումը կօգնի մեր գիտնականներին, հրապարակախոս պոլիտոլոգներին՝ ավելի դիպուկ հարվածելու մեր քաղաքական հակառակորդներին:

¹ Խիկար Քարսեղյան (1918-1996), պատմաբան, պատմ. գիտ. դ-ր, պրոֆ., «Քանկոր» (Լենինական) թերթի խմբագիր, ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր, ՄԼԽ հայկական մասնաճյուղի, «Հայաստան» հրատարակչության, ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնի, հրատարակչության տնօրեն, աշխատությունները վերաբերում են Անդրկովկասում հեղափոխական շարժումների, բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմությանը - Ա.Կ.:

ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆ, ԽՈՒՇԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՖՐԱՆՍԻԱ, ԱՆԳՈՒԱ, ՇԿԵՅՑԱՐԻԱ ԿԱՏԱՐԱԾ
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԻՑ ՀԵՏՈՒՄ՝

Գաղտնի

Ֆրանսահայ մշակութային միության հրավերով 1982-ի նոյեմբերի 21-ին մեկնեցի Ֆրանսիա՝ մասնակցելու Սովետական Հայաստանի 62-րդ տարեդարձին և ՄՍՀԿ կազմավորման 60-ամյակին նվիրված համադիտություններին: Ֆրանսիայի բազմաթիվ քաղաքներում (Փարիզ, Լիոն, Մարսել, Վալանս, Ավինյոն, Նիցցա, Մոնպելիե և այլն) տեղի ունեցան ժողովներ, ընդունելություններ, ՀՄՍՀ պարի պետական անամբրի համերգներ:

Սովետական Միության արտաքին քաղաքականության, Սովետական Հայաստանի նվաճումներ, հայ ժողովրդի պատմության հարցերի շուրջ ունեցա բազմաթիվ զեկուցումներ, ելույթներ (Մշակութային միություն, Բարեգործական միություն, Ցանցերի ակումբ, Նախկին ռազմիկների մոտ և այլն), մամուլին, ռադիոյին-հեռուստատեսությանը տվեցի ինտերվյուներ:

Ֆրանսահայ մշակութային միությունը, տոնակատարությունն ու պարի պետական անամբրի ելույթները կազմակերպած բոլոր կազմակերպությունները պատասխանատվության բարձր զգացումով էին նախապատրաստել բոլոր միջոցառումները, որոնք անցան քաղաքական բարձր մակարդակով, ֆրանսահայությանը Սովետական Հայաստանի շուրջը համախմբելու նպատակով:

Ֆրանսիական իշխանություններն, ընդհանուր առմամբ, հանդես էին բերում պատշաճ վերաբերմունք: Անձիս՝ ՀՄՍՀ արտաքին գործերի մինիստրի պատվին ընդունելություններ կազմակերպվեցին Փարիզի, Մարսելի, Վալանսի, Ավինյոնի քաղաքապետարաններում: Ֆրանսիայի պաշտոնատար անձինք գովեստներով էին արտահայտում հայ ժողովրդի հասցեին, շեշտում Սովետական Միության կազմում նրա համար ստեղծված խաղաղ և ապահով պայմանների մասին: Այդ ոգով խոսեցին Ֆրանսիայի ազգային ժողովի դեպուտատ, նախկին մինիստր, Դը Գոլի՝ զինակից Ժորժ Գորսը («Լյուտեցիա»

¹ ՋԿԱԱ, Կիրակոսյան Ջ.Ս. Հաշվետվություն, խոհեր, առաջարկություններ Ֆրանսիա, Անգլիա, Շվեյցարիա կատարած այցելությունից հետո, ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանին ուղղված գաղտնի նամակ, 1983 թ. հունվար, մեքենագիր:

² Շառլ դը Գոլ (1890-1970), ֆրանսիացի պետական և ռազմական գործիչ, գեներալ, Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում դարձավ ֆրանսիական դիմադրության շարժման խորհրդանիշը, Ֆրանսիայի ժամանակավոր կառավարության նախագահ (1944-1946), վարչապետ և ազգային պաշտպանության նախարար (1958-1959), նախագահ (1959-1969) - Ա.Կ.:

հյուրանոցի ընդունելության և «Պլեյել» սրահի համերգի ժամանակ), Փարիզի քաղաքագլխի տեղակալը և այլն: Մարսելի «Սոֆիտել» հյուրանոցի առջևի ֆլագշտոկի վրա ծածանվում էր Սովետական Հայաստանի պետական դրոշը՝ ի պատիվ Սովետական Հայաստանի մինիստրի: Լոնդոնահայ, շվեյցարահայ համայնքների խնդրանքը Լոնդոնում, Բեռնում ՍՍՀՄ դեսպանությունների միջոցով կարճատև այցելություններ կատարեցի Անգլիա և Շվեյցարիա:

Ամենուրեք ՍՍՀՄ դեսպանությունների աշխատակիցները մեծազույն ուշադրություն և հոգատար մասնակցություն հանդես բերեցին Սովետական Հայաստանի 62-րդ ամյակի տոնակատարության միջոցառումների, պարի պետական անսամբլի ելույթների նկատմամբ: Պարի պետական անսամբլի համերգներն ամենուրեք անցան բարձր մակարդակով, ևն մեկ անգամ ցուցադրելով հայ պարարվեստի հզորությունն ու գեղեցկությունը, սովետական մշակույթի նվաճումները: Ամտարակույս հայոց պարերն ու մեղեդիները ոգեղեն գորեղ իմպուլսներ հաղորդեցին հայրենիքի ջերմությանը կարոտ սփյուռքահայ զանգվածներին:

ՍՍՀՄ դեսպանությունների Չեզ արդեն հղված են համապատասխան հաղորդումներ, որոնք, կարծում ենք, պատկերացում են տալիս ինչպես համերգների, այնպես և մյուս միջոցառումների մասին:

Մենք կցանկանալինք Ձեր ուշադրությանը հանձնել մեր նկատաճներն ու առաջարկությունները, որոնք գուցե օգտակար համարվեն սփյուռքահայության հետ տարվելիք մեր հետագա աշխատանքները կազմակերպելիս:

Ֆրանսահայ մշակութային միության մասին

Անժխտելի է Ֆրանսահայ մշակութային միության խաղացած դրական դերը Սովետական Հայաստանի շուրջը Ֆրանսահայ առաջադիմական խավերին համախմբելու ազնիվ ու շնորհակալ գործում: Այսօր էլ մեր աչքի առջև առկա են այդ միության հայրենասիրական, ազգօգուտ գործունեության պտուղները: Սակայն փոխվել է կյանքը, առաջացել են նոր պայմաններ, և ասպարեզ են իջել նոր խնդիրներ: Մեծացել է ֆրանսահայ համայնքը (այն այսօր հաշվվում է 300 հազար), փոխվել է նրա կազմը, շատ ավելի շեշտված է դարձել հետաքրքրությունն ազգային կյանքի, Սովետական Հայաստանի, քաղաքական խնդիրների նկատմամբ: Ֆրանսահայ երիտասարդությունը, Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներից այստեղ հավաքված հայ ընտանիքների նոր խմբերն իրենց հետ բերել են նոր տրամադրություններ, նոր հոգսեր:

Հայկական հարցի վերաբացման հետ կապված արժարժումները, թուրքական մանուկի հակահայկական ոտնձգությունները, եվրոպական թերթերի ու ամսագրերի էջերում մշտապես տպագրվող նյութերը, թուրքական ռազմաստիկական ռեժիմի դեմ եվրոպական կոմկուսների և դեմոկրատական, առաջադիմական մյուս ուժերի քննադատական կեցվածքը խռովում են հայ երիտասարդության միտքը, նրան բազմաթիվ ինչպիսիք առաջադրում: Ինչ խոսք, որ այս խնդիրների շուրջ հայկական շրջանակները փորձում են մշակել իրենց տեսակետը, հրապարակում են նյութեր, կազմակերպում հրապարակա-

յին ելույթներ: Սակայն այդ միջոցառումները չունեն պահանջվող մակարդակը: Ֆրանսահայ առաջադեմ մտավորականներին պետք է օգնության հասնեն Մովսեսական Հայաստանի այն պատմաբանները, միջազգայնագետները, քաղաքականագետները, որոնք տիրապետում են *քաղաքական հայագիտություն* առարկային, կարող են միջազգային դիվանագիտության, հայ-քուրքական քաղաքական առնչությունների, Հայոց հարցի պատմության շուրջ ճշմարիտ, ճկուն և համոզիչ խոսք ասել (քանավոր թե գրավոր) այդ խնդիրներին պարզաբանմանը կարոտ նոր սերնդին:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի մամուլի բաժինը պետք է շատ ավելի բազմազան դարձնի առաքվող նյութերի թեմատիկան, բայց դրա մեջ պետք է տիրապետի *քաղաքական հայագիտությունը*, որովհետև դրան է գամված սփյուռքահայության գլխավոր ուշադրությունը: Մեծ խնդիրների լրագործումը հնարավոր կլինի միայն այն դեպքում, որ մշակութային միությունը դառնա ավելի գործող, ավելի մասսայական կազմակերպություն: Վերջապես պետք է լուծել մշակութային միության նոր ճախագահ ընտրելու, նշանակելու հարցը: Տարիներ շարունակ կազմակերպությունն աշխատում է առանց առաջին դեմքի:

Ֆրանսահայ մշակութային միությունը և ԺԱՅ-ը նպատակահարմար են համարում ֆրանսահայ երիտասարդներից կազմված շինարարական ջոկատ ուղարկել Մովսեսական Հայաստան:

Ամիրաժեշտ է որոշակիություն մտցնել այս խնդրում:

«Աշխարհ» թերթի մասին: Թերթի կատարած դրական դերն ամփոփելի է, խմբագիր Ավետիս Ալեքսանյանի վաստակը՝ անուրանալի: Բայց այսօրվա խնդիրները նոր պահանջներ են առաջադրում: Ֆրանսահայ երիտասարդության (նաև Ֆրանսիայում ժամանակավորապես գտնվող պարսկահայերի, լիբանանահայերի, ստամբուլահայերի) քաղաքական հետաքրքրությունները, մայր հայրենիքի՝ Մովսեսական Հայաստանի տնտեսության, մշակույթի, հասարակական-քաղաքական կյանքի նկատմամբ առկա մեծ հետաքրքրասիրությունը, Հայոց հարցի պատմության հետ կապված սուր խնդիրների նոր արժարժումները «Աշխարհ» թերթին բնականաբար առաջադրում են նոր ընդգրկումներ, նոր որակ, օպերատիվություն և արագաշարժություն: Ըստ էության նոր տպարանի ստեղծումն ավարտված է: «Աշխարհ»-ը կարող է և պետք է դառնա ամենօրյա թերթ, ունենա գրագետ, բանիմաց, քաղաքական հայագիտությանը քաջատեղյակ եռանդաշատ աշխատակիցներ:

Լայնախոսություն, բարի կամեցողություն հանդես բերելու դեպքում սրանց կարելի է ընտրել ինչպես ֆրանսահայերից, այնպես և Մերձավոր և Միջին Արևելքից՝ ժամանակավորապես Ֆրանսիայում հաստատված երիտասարդներից: Պետք է աշխուժացնել ԺԱՅ-ի «Նոստր փուս» ամսագրի գործունեությունը, մեծացնել նրա տպարանակը: Այսօրվա պայմաններում միայն այդ ճանապարհով է հնարավոր առարկայական ներգործություն ունենալ ֆրանսահայության վրա:

Հայկական ռադիոժամերի մասին: Ռադիոկայանների միջոցով հայկական հաղորդումներ են կազմակերպված Փարիզում (ռադիո «Ազգ»), Մարսելում, Լիոնում: Փարիզի հայկական շրջանակներում «Ազգ»-ն ու նրա հաղորդումները լայն ժողովրդականություն են վայելում: Որոշակի կազմակերպվածության հիմքի վրա են դրված Մարսելի հայոց ռադիոժամի հաղորդումները: Հանդիպումներ ունեցա դրանց ղեկավարների հետ, ունկնդրեցի նրանց հաղորդումները, նրանց խնդրանքով պատասխանեցի առաջարկված հարցերին: Ռադիոժամի կազմակերպիչները վառվորն երիտասարդներ են, հայրենասեր ու եռանդալատ, բայց և քաղաքական, հասարակական առումով երբեմն հեղհեղուկ, երբեմն անկազմակերպ ու մակերեսային տրամադրություններով, հակումներով ու հայացքներով: Մրանց հետ է, որ ֆրանսահայ առաջադիմական կազմակերպությունները, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն պետք է որոշակի աշխատանք տանեն, հանրապետության հեռուստատեսության ու ռադիոկոմիտեի միջոցով նրանց մատակարարեն ինչպես տեքստային, այնպես և երաժշտական հաղորդումներ: Ստիպված են նորից հիշեցնել երաժշտական ձայնագրությունների, ձայնապնակների մասին: Արտասահմանում հայոց միջավայրում նորից իշխում են հայոց՝ աղավաղված, անշնորհք տեքստերով ու արաբա-թուրքական ուղիներով կատարվող պարզունակ քաղաքային երգերն ու մեղեդիները: Հատկապես տարածված են ԱՄՆ-ում հայոց տարբեր գաղթօջախներում հաստատված հայ երիտասարդական խմբերի կատարումները: Եթե մենք տակավին ի վիճակի չենք տուրիստներին վայրուտայով վաճառելու երաժշտական կասետներ, դիսկեր, ապա Երևանի ռադիոն զոնե պետք է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի միջոցով արտասահմանի հայության համար առատորեն հնչեցնի հայոց երգն ու նվագը, տեքստային ու դրամատիկ հաղորդումները, պրոպագանդի Մովետական Հայաստանի այսօրը:

Փարիզի Նուրբայան մատենադարանի մասին: Այստեղ պատմագիտական արժեք ունեցող հսկայական հարստություն է կուտակված: Հայոց հարցի դիվանագիտական արժարժումների բազմաթիվ օրիգինալ փաստաթղթեր, վկայություններ, նամակներ պարունակող թղթապանակները սպասում են իրենց ուսումնասիրողներին: Դրանք չպետք է ընկնեն մեր քաղաքական հակառակորդների և, առհասարակ, անբարեխիղճ մարդկանց ձեռքը: Այդ հարստությունը պատկանում է մեր ժողովրդին, նրա պետականությանը, ասել է թե Մովետական Հայաստանին: Մատենադարանն ունի մեկ աշխատող տնօրեն (Արտաշես Գարդաշյան, արդեն ծերունագարդ, մոտ 75-ամյա), որը թեև բարեխիղճ է, այդ հարստության նշանակությունն ըմբռնող, սակայն արդեն ի վիճակի չէ լիովին իրականացնելու իր վրա դրված պարտականությունները: Նա ինքը միտք արտահայտեց Մովետական Հայաստանի պատմագետներից տարեկան երկու հոգու մատենադարան գործողելու, Հայոց հարցի վերաբերյալ նյութերն ուսումնասիրելու ու նրանց պատճենները Հայաստան տեղափոխելու մասին:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն համրապետության համապատասխան հիմնարկների հետ միասին պետք է կազմակերպի այդ հույժ կարևոր գործը:

Լոնդոնահայության մասին: Անգլիայում հայության թիվը թեև համարում են 50 հազար, բայց ոչ որ չի կարող հաստատել դյա ստույգությունը: Բանն այն է, որ մշտական բնակություն հաստատածներից բացի, այստեղ խոնկված են մեծաթիվ իրանահայություն, լիբանանահայություն և այլն, որոնց դրությունը հարավուփոխ է: Իրանի այսօրվա ռեժիմից խույս տված հայերից (հիմնականում ունևոր խավերից) շատերը դեռևս որոշակիորեն չեն ճշտել իրենց անելիքները, զբաղմունքը:

«Ռոյալ Ալբերտ Հոլը» 7 հազար տեղանոց աշխարհահռչակ սրահը բնդաց հայոց պարից ու մեղեդիներից: ՄՍՀՄ դեսպանորդ ընկ. Դուզովի խոսքերով ասած վերջին երեք տարում Սովետական Միության օգտին այսպիսի հաջողված ցույց չէր եղել:

Հայկական բարեգործական միության Մեծ Բրիտանիո բաժանմունքի (տնօրեն՝ Հարություն Մուտաֆյան) և մյուս կազմակերպությունների ջանքերով կազմակերպված մեծ ընդունելությունը մույնպես անցավ Սովետական Հայաստանի շուրջը համախմբվելու նշանաբանով:

Ծանոթացա թեքեյան մշակութային միության ջանքերով լույս ընծայվող «*Էրեբունի*» ամսաթերթի մի շարք համարների բովանդակությանը: Ընդհանուր առմամբ հաջողված հրատարակություն է: Տնօրեններն ասացին, որ այն շուտով կդառնա շաբաթաթերթ:

Արտասահմանի հայության համար պլանավորվող կուլտուրական ծրագրերի շարքում մշտապես պետք է հաշվի առնել Լոնդոնի հայության գործունը: Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն պետք է ընդլայնի գրականության և այլ անհրաժեշտ նյութերի առարքումը Լոնդոնի գաղթօջախի համար՝ հաշվի առնելով դրսից այնտեղ հավաքված հայության հանգամանքը:

Շվեյցարիայի հայկական համայնքի մասին: Ժնևում կայացած պարի պետական ամսամբլի համերգը, Սովետական Հայաստանի 62-րդ տարեդարձին նվիրված մյուս միջոցառումները որոշակի երևույթ էին շվեյցարահայության կյանքում: Այդ մասին Չեզ ինֆորմացիա տվել է Շվեյցարիայում ՄՍՀՄ դեսպան ընկ. Լավրովը¹:

Բանն այն է, որ չնայած իր փոքրաթվությանը (մոտ 5 հազար մարդ)՝ շվեյցարահայությունը որոշակի ակտիվ դեր է խաղում արտասահմանի, մասնավորապես Եվրոպայի հայության կյանքում: Այստեղ կենտրոնացած հայերն իրենց ճնշող մեծամասնությամբ ապահովված, ունևոր մարդիկ են (պոլ-

¹ Վլադիմիր Լավրով (1919-2011), խորհրդային դիվանագետ, ԽՍՀՄ դեսպան Բենիախյում (1964-1967), Նիդեռլանդներում (1967-1973), Շվեյցարիայում (1977-1983), Թուրքիայում (1983-1987) - Ա.Կ.:

սահայեր, եզիպտահայեր, քեյրուքահայեր): Առանձին մասնագետ շվեյցարահայեր իրենց պատրաստակամությունն էին հայտնում մասնակցություն ցույց տալ Սովետական Հայաստանում դեղագործության, ժամագործության և այլ ճյուղերի զարգացմանը: Հայոց քաղաքական կյանքում սրանցից շատերի ակտիվ մասնակցությունը (գրքերի տպագրություն, հողվածների հրապարակում, հայ երիտասարդների դատական պրոցեսներում ելույթներ և այլն) փաստ է: Հայ պարաօլիետի փայլուն ցուցադրությունը, մեր կարծիքով, հետք թողեց շվեյցարական իշխանությունների, հասարակական կարծիքի վրա, որոնք որոշակի դեպքերի ու միջադեպերի ազդեցության տակ մշտապես վերապահ և զգաստ կեցվածք ունեն շվեյցարահայության նկատմամբ: Ցանկալի է ուժեղացնել Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի, կուլտուրայի մինիստրության և այլ կազմակերպությունների ուշադրությունը շվեյցարահայության նկատմամբ, մշակել նրա հետ աշխատելու ներգործուն ուղիներ: ՄԱՀՄ դեսպան Լավրովը հատկապես խնդրեց կազմակերպել Սովետական Հայաստանի օրեր Եվեյցարիայում:

Քաղաքական հայագիտություն: Սփյուռքը ծարավի է Սովետական Հայաստանից ասված քաղաքական խոսքին: Տասնյակ տարիների ընթացքում Հայկական հարցի, նրա դիվանագիտական պատմության, հայ-թուրքական բնօրուկի և այլ խնդիրների շուրջ ասպարեզը զբաղեցրել են արևմտաեվրոպական, ամերիկյան, նաև հայ, քայց մեր գաղափարական հակառակորդների գործերը: Այժմ եվրոպական գրական շուկան մեծ չափով ողողված է թուրք կեղծարարների գրքերով ու հողվածներով: Այս գրվածքներում խոսքը Օսմանյան կայսրության տիրապետության կրնկի տակ արևմտահայության վիճակի, սուլթանների քաղաքականության, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմտահայության ողբերգության և այլ խնդիրների մասին է: Թուրք հեղինակները, իսկ վերջին տարիներս հատկապես պետական մարմինները, կեղծում ու աղավաղում են պատմությունը: Թուրքական այսօրվա պատմաքաղաքական գրականությունն ամբողջապես հակառուսական է, հակակոմունիստական ու հակասովետական: Անկարայի ու Մոսկովի հրատարակած գրքերի ու թերթերի էջերում, ռադիո ու հեռուստատեսային հաղորդումներում *ամբողջապես* արդարացվում է սուլթանների քաղաքականությունը, Օսմանյան կայսրությունը ներկայացվում է մի դրախտակար, երիտթուրքերի կանխարական գործեակերպ արժամանում է լուս օվսաննաների, գովասանքների ու արդարացումների: Այս խնդիրներին թուրքական պետական մոտեցման խիստ բնորոշ օրինակ էր Թուրքիայի ներկայիս արտաքին գործերի մինիստր Թյուրքմենի «ծրագրային» հակահայկական ելույթը Նյու Յորքում 1982-ի հոկտեմբերի 4-ին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ամբիոնից: Դա մի սանձարժակ մարտահրավեր է համաշխարհային հասարակական կարծիքին, պատմական իրողությունները ծուռ հայելու մեջ ներկայացնելու մի փոփոխություն: Ըստ Թյուրքմենի՝ ոչ թե թուրքական պետականությունն է ոչնչացրել արևմտահայությանը, այլ հայերն են երկու միլիոն թուրք ոչնչացրել Օսման-

ջին համաշխարհային պատերազմի տարիներին: Ֆրանսահայությունը զայրույթով արձագանքեց թուրք մինիստրի ոտնձգությանը: Ամենուրեք՝ Ֆրանսիայում թե Ըվեյցարիայում, եմբարկվեցինք բանիմաց, հետաքրքրասեր ունկնդիրների սկզբունքային հարցապնդումների: Նյուրեք, հաղորդագրություններ քաղելով թուրքական և արևմտաեվրոպական մամուլից՝ սփյուռքահայության ներկայացուցիչներն ընդդիմախոսում էին իմ մեկնաբանություններին, զարմանք ու զայրույթ արտահայտելով ՆԱՏՕ-ի անդամ պետության՝ Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Թյուրքմենի պատվին Բաքվում արված ջերմ ընդունելության, բոսնի ծափահարությունների առթիվ:

Մեր կարծիքով Սովետական Հայաստանը չպետք է անպատասխան բողմի թուրք մինիստրի ոտնձգությունները ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ամբիոնից: Սփյուռքահայությունն այդ և բազմաթիվ այլ թուրքական հակահայկական գոեհկարանություններին պատասխան է սպասում Երևանից, Սովետական Հայաստանից: Ինչ խոսք, որ պահեք կան, երբ արհամարհելն ավելի լավ է, քան պատասխանելը: Բայց ոչ միշտ: Սովետական Հայաստանում մենք (ՀԿԿ կենտկոմի միջազգային կյանքի ու պրոպագանդայի բաժինները, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն, արտաքին գործերի մինիստրության քաղաքական ինֆորմացիայի բաժինը, ՀՍՄՀ ԳԱ-ի համապատասխան հիմնարկները) պետք է *ամենայն խորությամբ ուսումնասիրենք, իմանանք* սփյուռքահայության հետ կատարվող քաղաքական պրոցեսները, ուշադիր հետևենք հայության շուրջը թուրքական պետականության գործողություններին և կարողանանք խոսքով ու գործով օպերատիվ ներգործություն ունենալ այդ ամենի վրա: Այս ամենը չանել նշանակում է պետական մոտեցում չունենալ, հանդես բերել ոչնչով չարդարացված քաղաքական ամհողություն, անտարբերություն:

Առայժմ մեր ազդեցությունը թույլ է: Քաղաքական հայագիտական-պրոպագանդիստական, թե խոր գիտական նյութերի ստեղծումն ու առաքումը Սովետական Հայաստանից մեծ ընդունելություն են գտնում սփյուռքահայ ընթերցողների շրջանում: Սակայն այդ նյութերը փոքրաթիվ են: Հայ ժողովրդի նոր և նորագույն պատմության ամենաայրող խնդիրների գծով մեր քաղաքական հրապարակախոսությունը ոչ մի րոպե դադար չպետք է ունենա: Այն պետք է պատմության հարցերի ճշմարիտ լուսաբանմամբ ներագլի սփյուռքահայ ընթերցողների վրա, չեզոքացնի, թուլացնի նրանց վրա արևմտաեվրոպական, ամերիկյան, թուրքական գովածքների, նաև սփյուռքահայ միջավայրում մեր հակառակորդների անընդունելի տեսակետների գաղափարաքաղաքական ազդեցությունը:

Մեր դիրքորոշումը պետք է լինի պարզ ու հստակ. սովետական իշխանությունն անցյալից ժառանգել է խորտակված նավ. հայոց ազգային կյանքն ավերված էր, ժողովուրդը՝ ջարդված, հայոց երկրի հիմնական մասերը՝ բզկտված, խլված: Սովետական իշխանության ժառանգած Արևելյան Հայաստանի այս հողակտորի վրա վաթսուն տարիների ընթացքում կատարված

հրաշագործությունը փաստ է, տեսանելի նույնիսկ երեկվա կույրերի համար: Պետք է բանիմաց դիրքերից սփյուռքահայությանը լուսաբանել Սովետական Միության ներքին ու արտաքին քաղաքականության հարցերը, սովետական հանրապետությունների համագործակցության ելությունը:

Սփյուռքահայության վրա օտար, վնասակար ազդեցությունները չեզոքացնելու նպատակով մենք չպետք է խորշենք Հայկական հարցի բոլոր ասպեկտները լուսաբանելուց, թուրքական պետական հակահայկական քաղաքականությունը բացահայտելուց ու մերկացնելուց: Գաղափարական, պատմաքաղաքական վեճերի հարցերում ոչ մի զիջում չպետք է լինի. ինչպես որ Սովետական Միությունում հետևողականորեն հակահարված է տրվում ամերիկյան թե արևմտաեվրոպական հակասովետիզմին, այնպես էլ պետք է հակահարված տրվի թուրքական հակառուսականությանը, հակասովետիզմին ու հակակոմունիզմին: Քաղաքական ոչ մի զիջում թափաքսին և մյուս ճիվղներին արդարացնողներին:

Այս ամենը զգաստ և հետևողական գծի իրականացում է պահանջում:

Անհրաժեշտ կլինի միջոցառումների մի հստակ պլան մշակել համապատասխան հիմնարկների միջոցով հայագիտական քաղաքական հրապարակախոսությունն աշխուժացնելու ուղղությամբ:

Հանրապետության կուսակցական կազմակերպության և պետական մարմինների ղեկավար կորիզին սխտեմատիկ ինֆորմացիա, կողմնորոշում տալու նպատակով ժամանակ է ձեռնարկել «Հայագիտությունն արտասահմանում» տարեգրքի ստեղծմանն ու հրատարակմանը: Նրանում շեշտը պետք է դրվի քաղաքական հայագիտության խնդիրների լուսաբանման վրա: Ռուսաց լեզվով մեծան տարեգրքի հրատարակությունը կնպաստի կենտրոնական մարմիններում սփյուռքահայ քաղաքական կյանքի կարևոր խնդիրների շուրջ ճիշտ պատկերացում ունենալուն: Միայն Սովետական Հայաստանում պետք է ամբողջապես, ամենայն խորությամբ ուսումնասիրվի սփյուռքահայ քաղաքական կյանքը, և այդ ուսումնասիրությունների հիմքի վրա պետք է կառուցվի այս կամ այն տակտիկական թե ստրատեգիական քայլը:

ՀՄՍՀ արտաքին գործերի մինիստրությունը 1982-ի աշնանը նման տարեգրքերի ստեղծման մասին համապատասխան առաջարկություն արել է ՀՄՍՀ ԳԱ-ին:

ՀՄՍՀ արտաքին գործերի մինիստր,
պրոֆ. Ջ.Ս.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

(ստորագրություն)

Հունվար 1983
Երևան

ՔԱԳՐԱՏ ՈՒՈՒԲԱԲՅԱՆԻ «ՍԱՐԴԱՐԱԿԱՏ» ՎԵՊՈՂ¹

...1918-ի առաջին ամիսների ռազմաքաղաքական ...չափազանց բարդ իրավիճակի, անցողորձի վրա է խարսխված Բագրատ Ուլուքարյանի² «Սարդարապատ» վեպի հենքը:

Կար մի ժամանակ, երբ Սարդարապատի կռիվը հանիրավի մոռացության էր տրված: Չէր գնահատվում նրա հիքավի էական դերը երիտթուրքական դահիճների ժողովրդասպան քաղաքականության դեմ մեր ժողովրդի պայքարի պատմության մեջ: 1918-ին կերկնվել 1915-ը, այս անգամ Ռուսահայաստանում, եթե չլիներ դիմադրելու, մարտնչելու ոգին: «Հանուն հայ ժողովրդի գոյատևության ու ազատության, հերոսաբար դիմադրելով թուրք ջարդարարներից, - գրել է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, - Սարդարապատի մարտիկները փաստորեն պատերազմում էին այն ուժերի դեմ, որոնք պատրաստվում էին հայ ժողովրդի կրճաժանդակի վրայով նետվել Անդրկովկաս՝ նպատակ ունենալով այդան մեջ խեղդել Բարձի կոմունան, տիրանալով նաև Բարձի նավիքին, որի կարիքն օդի ու ջրի պես զգում էր թուրք-զերմանական կռալիցիան»³:

Հետո՝ 1960-ական թթ., լույս տեսավ Հարություն Թուրչյանի մենագրությունը: Հրապարակվեցին մի շարք հոդվածներ⁴: 1968-ի մայիսին պետականորեն նշվեց Սարդարապատի հերոսամարտի 50-ամյակը: Կառուցվեց Սարդարապատի հուշահամալիրը՝ հուշարձաններով ու թանգարանով: Այն այսօր դարձել է մեր ժողովրդի կողմից սիրված ամենամիլիարական անկյուններից մեկը:

Հիմա արդեն սովորություն է Սարդարապատի հերոսամարտը համեմատել ազգային-հերոսական լեգենդների շարքն անցած Ավարայրի այն ճակատամարտի հետ, որը տեղի է ունեցել 451 թ.: Երկու ճակատագրական բախում-

¹ ՋԿԱԱ, Բագրատ Ուլուքարյանի «Սարդարապատ» վեպը, 1983, հունվար-փետրվար, մերենագիր: Տպագրվում է կրճատումներով:

² Բագրատ Ուլուքարյան (1925-2001) - գրող, պատմաբան, պատմ. գիտ. դ-ր, 1949-1967 թթ.՝ ԼՂԽՄ-ի գրողների միության նախագահ, «Մովեսական Ղարաբաղ» թերթի խմբագիր, ԼՂԽՄ-ի մարզխորհրդի գործկոմի փոխնախագահ, «Երգեր աշխատանքի և խաղաղության», «Այս առավոտ» թանաստեղծությունների, «Այգեստան», «Թարթատ», «Կանթեղ» պատմվածքների ու վիպակների ժողովածուների, «Հայրենի հող», «Մարդը», «Սարդարապատ» վեպերի, «Խաչենի իշխանությունը X-XVI դարերում», «Գանձասար», «Ջրուցարան», «Արցախի պատմություն», «Արցախյան գոյապայքարի տարեգրություն» պատմագիտական ուսումնասիրությունների հեղինակ - Ա.Կ.:

³ Հովհաննիսյան Ա. Առաջաբան // Թուրչյան Հ. Սարդարապատի հերոսամարտը, Ե, էջ 7:

⁴ Կիրակոսյան Ջ. Հիսուն տարի առաջ (Սարդարապատի հերոսամարտի առիթով) // «Բանբեր Երևանի համալսարանի» (Ե.), 1968, N 2:

ներում մանուկայան եզրեր շատ կան: Ինչպես 5-րդ դարում, այնպես էլ 20-րդ դարի սկզբին հայության ազատագրական պայքարը եղել է համաժողովրդական, պատերազմի դաշտ են դուրս եկել հասարակական բոլոր խավերն ու շերտերը: Մակայն ակնբախ է մահ մի տարբերություն, որ չի կարելի ուշադրությունից փախցնել, առաջին դեպքում հայ ազգը պաշտպանում էր իր ինքնության գոյությունը, երբ երկրորդ ազատամարտը մղվելու էր ազգի վերջին րեկորները ֆիզիկական ոչնչացումից փրկելու համար: Վաղմիջնադարյան մնայլ իրականության մեջ իր հավատի ու ինքնության համար ոտքի կանգնած հայ ժողովուրդը Տղմուտ գետի ափին թափած արյամբ ու մահատակություններով ապացուցեց, որ ինքը կենդանի, սակայն չի հրաժարվի ազգային ու հոգևոր ինքնությունից: 20-րդ դարի սկզբին երիտթուրքական կառավարող շրջանները, գործի դնելով իրենց քաղաքական ու ռազմական մեքենայի բոլոր օղակները, ոչնչացրել էին հայ ժողովրդի արևմտյան հատվածը և Արաքսն անցնելով՝ սպառնում էին նույն սպանդն իրականացնել մահ Արարատյան երկրում, Երևանյան մահաճգում ծվարած հայության վերջին մնացորդների հետ: Մարդարապատ գյուղն ու կայարանը գրաված թուրքերը շարժվում էին Էջմիածնի ու Երևանի վրա: Պարտվողականությանը՝ համակված Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը (ԹԻՖլիս), հայկական զորքերի ընդհանուր հրամանատար, զեներալ Նազարբեկովը և Երևանյան ռազմաճակատի հրամանատար Մովսես Սիլիկյանը որոշել էին Երևանն ու Էջմիածինը հանձնել թուրքերին և բնակչությունը քաշել Սևանի ափերը՝ իբր թե այնտեղ պաշտպանվելու համար: Սակայն Երևանը իր հին երևանցիներով ու նոր արևմտահայ գաղթական բնակիչներով խռովահույզ ոտքի է կանգնում՝ ընդդիմանալու կապիտուլյանտական որոշմանը: Նրանց հետ էր Վանի հերոսամարտից ծանոթ, այժմ Երևանյան խորհրդի նախագահ Արամ Մամուկյանը¹:

Ահա հենց այս ժամանակ Երևանյան ռազմաճակատի հրամանատարի տեղակալ Դանիել-բեկ Փիրումյանը նույնպես կանգնում է ամենատվական որոշման դեմ և, Արարատյան դաշտում մնացած զորամիավորումներն ու կամավորական ուժերն ի մի գումարելով, Մարդարապատում նոր ճակատ է հարդարում մախորդ հաղթանակներով ու հայկական ջարդերով հղիացած բշմամու դեմ: Հայտնի է մահ արդյունքը. իր գոյությունը պաշտպանելու համար ոտքի ելած ժողովրդի զինական ուժերը (Պողոս-բեկ Փիրումյանի 5-րդ գումրը, պարտիզանական ու կամավորական զորամիավորումները և Պանդուխտի

¹ Արամ Մամուկյան (Մարգիս Հովհաննիսյան), Արամ-փաշա (1879-1919), ազգային-ազատագրական շարժման մասնակից, պետական գործիչ, ՀՀԴ կուսակցության անդամ, կազմակերպիչ և ղեկավարել է 1915 թ. Վանի հերոսամարտը, գլխավորել է Վանի մահաճգապետությունը, որպես ՀԱԽ-ի ներկայացուցիչ՝ 1917 թ. ժամանել է Երևան, 1918 թ. մարտին ընտրվել է դիկտատոր, Մարդարապատի և Բաշ Ապարանի ճակատամարտերի ժամանակ ապահովել է հայկական բանակի բիկուրը, Հայաստանի անկախության հռչակումից հետո ղեկավարել է երկիրը մինչև 1918 թ. հուլիսի 23-ը, ՀՀ ներքին գործերի նախարար (1918-1919) - Ա. Կ.:

հեծյալների երկու հարյուրյակը) հաղթում են թվով ու սպառազինությանը գերազանց բուրքական զորքերին, հալածում են մինչև Ալեքսանդրապոլի բարձունքները: Երբ որոշել էին շարունակել հերոսական պատերազմը, ազատագրել Ալեքսանդրապոլն ու Կարսը, վրա է հասնում արդեն նոր կազմակերպված դաշնակցական կառավարության հրահանգը պատերազմը դադարեցնելու և խաղաղություն կնքելու մասին: Այդ հրահանգի հետ էին մաս Բաթումում թուրքերի հետ խղիղիդաժողովի ցատած հայկական պատվիրակության ղեկավար Ալեքսանդր Խատիսովի հորդորները, արդեն կնքված ստորագուցիչ պայմանագրի մանրամասները, Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի և Հայկական կորպուսի հրամանատար Թոմաս Նազարբեկովի կարգադրությունները, հաղթող հայ զորքը պարտավոր էր զենքը ցած դնել, հետ քաշվել նվաճած դիրքերից և համձնվել թշնամու ողորմածությանը (չէ՞ որ, ըստ Բաթումի 1918-ի հուլիսի 4-ի պայմանագրի, նրաստեղծ հայկական՝ այսպես կոչված անկախ պետությունն իրավունք չպետք է ունենար զորք պահելու):

Մեր պատմագիտության մեջ տարածված է այն կարծիքը, թե Բաթումի խորհրդաժողովի հայ պատվիրակները պետական ծառայության չզոյության, կապի բացակայության հետևանքով տեղյակ չեն եղել Մարդաբաբայատի ճակատում ժողովրդի մղած հերոսական կռիվն ու հաղթանակին, և այդ է պատճառը, որ նրանք համաձայնել են ստորագուցիչ դաշնագրի պայմաններին: Այս «անտեղյակության» մասին քանիցս խոսվում է նաև Հ.Թորչյանի գրքում: Բ.Ուլուբաբյանը փորձում է փաստաթղթերով ու փաստերով ապացուցել, որ իրականությանը չի համապատասխանում նման կարծիքը: Պատվիրակներն ու նրանց թիֆլիսյան ղեկավարներն այնուամենայնիվ տեղեկացել էին ճակատամարտի հանգամանքներին: Հեղինակը մի շարք համոզիչ մանրամասների հետ միասին հիշում է նաև հայ պատվիրակության խորհրդական Սիմոն Վրացյանի հողվածն իր խմբագրած «Հորիզոն» թերթում (1918-ի մայիսի 29-ին) Բաթումի դաշնագրի կնքումից մի քանի օր առաջ, նա գրել էր, թե «ժայկական ճակատից ստացված վերջին օրերի պաշտոնական հաղորդագրություններն ու մասնավոր տեղեկությունները պատերազմական գործողությունների մասին աներկայելի կերպով ասում են, որ լիակատար հաջողությունը մեր կողմն է: Երևանի գորաքանակի հաջողությունը միանգամայն հեղաշրջել է դրությունը...»: Պատվիրակներն ու Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի ղեկավարները շատ լավ գիտեին Երևանյան-Մարդաբաբայատյան ճակատի հեղաշրջող հաղթանակի մասին, սակայն դրանից հետո էլ չէին հավատում հայ ժողովրդի ազատասիրական ոգուն ու նրանից ծնված անեխեր ուժին: Ղեկավարները կամազուրկ գտնվեցին: Նրանք ի վիճակի չգտնվեցին շարունակելու հաղթական ճակատամարտը դիվանագիտական մարզում և ստորագրեցին խայտառակ դաշնագրի տակ՝ հայ ժողովրդին մատնելով երիտթուրք մարդակերների քմահաճույքին:

Վեպն ընդգրկում է Կարսի անկումից մինչև զինադադարի ու հաշտության պայմանագրի կնքումը, շուրջ ամիս ու կեսի մի ժամանակահատված,

որը լի է հայ ժողովրդի պատմության այն օրերի համար շատ բնորոշ դեպքերի և իրողությունների ցնցող պատկերներով: Թուրքերի առաջադրածումն ու վայրագությունները, հայերի տեղահանությունն ու գաղթը, Անդրկովկասյան միացյալ կոչված կառավարության տարամետ ձգտումներից ու հակասական գործողություններից խարխլված ճակատը, Ալեքսանդրապոլի անկման ու հայության նոր տառապանքների տխուր պատկերները, Արարատյան մահանգը լցված, ինչպես նաև կովկասյան ու հարավորաստանյան երկրամասի ճամփաներին տարտղմված հայ գաղթականության ցավատանջ կյանքը, համաժողովրդական հուսահատ վիճակից ծնված մեծ ընդվզումն ու ազատագրական պոռթկումը, որ վերածվեց սարդարապատյան հրաշքի. այս բոլորը վեպում ցույց է տրված կուռ միասնության, փոխպայմանավորվածության մեջ: Հեղինակը ճիշտ է քնուրպզում պատմական փորձը, նրանից բխած դառնությունները: Ռուսական բանակները հաղթում էին, ազատում հայոց հողերը, եվրոպական տերությունները խռչընդոտում էին Հայոց հարցի լուծումը: Նա լավ է ուսումնասիրել Հայոց հարցի քաղաքական պատմությունը և այդ իսկ պատճառով մշտապես շեշտում է ռուսաց կողմնորոշման դրական, փրկարար դերի նշանակությունը:

Վեպը գրված է հայրենասիրական շնչով: Հավատում են հեղինակի խոսքին, համոզվե՞ն են նրա ներկայացրած պատմական մանրամասներն ու գեղարվեստական մարմնավորումները, որովհետև, նախ և առաջ, հմտորեն օգտագործված են առկա աղբյուրագիտական նյութերը, արխիվային քազմաթիվ ու քազմապիսի փաստաթղթեր, ժամանակակիցների ու դեպքերի մասնակիցների հուշերը, գրառումները, վկայությունները, քննական-պատմագիտական առողջ մտտեցում է ցուցաբերվում հրապարակված գրականության ու հետազոտությունների նկատմամբ: Եվ պատահական չէ, որ այս բոլորի շնորհիվ վերականգնված է ժամանակաշրջանի իրականությունը: Վեպի գործողությունները, դեպքերը, հերոսների ամեն տեսակի շարժումները պատմականորեն իրական են, պատճառաբանված ու համոզիչ:

Գալով «Մարդարապատի» հերոսներին՝ պիտի ասեմ, որ նրանք ևս հիմնականում համապատասխանում են իրենց իրական կենսագրությանն ու պատմական ժամանակաշրջանի տրամաբանությանը: Եվ սրա պատճառը ևս այն է, որ Բ.Ուլուբաջյանը համառ փնտրտուքով գտել ու վեպի հյուսվածքի մեջ է մտցրել իր հերոսների կենսագրության կարևորագույն տվյալները, խոսեցրել դրանք ժամանակի համայնապատկերի մեջ: Ռազմաճակատի հրամանատար Դանիել Բեկ-Փիրումյանը, նրա հորեղբորորդի Պողոս Բեկ-Փիրումյանը, եպիսկոպոս Գարեգին Հովսեփյանը¹ և շատ ուրիշներ իրականությունից

¹ Գարեգին Հովսեփյան, Գարեգին Ա Հովսեփյան (1867-1952), ծնեագրագետ, հնագետ, պատմաբան, բանասեր, մշակութաբան, աստվածաբանության դ-ր, կրոնական գործիչ, արքեպիսկոպոս, Սարդարապատի հերոսամարտի ոգեշնչողներից ու կազմակերպիչներից, 1943-ից՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս, «Չազա-վանից ժողովը», «Տարսայիճ Օրբելյանի և Միմա Խարունի սերունդը», «ԺԳ դարի

են մտել վեպի մեջ և եթե բերել են իրենց կենսագրությունների ճշմարիտ ու հավաստի հատկանիշները, ապա ստացել են մաս գեղարվեստական երանգներ: Վերջիցնեքս ոչ մի չափով չեն հակասում նրանց պատմականորեն իրական դեմքերին ու կենսագրություններին:

Վերջին տասնամյակներում հրապարակված վեպերում ու պատմական ուսումնասիրություններում հակասական գծերով է ներկայացվել հայկական կորպուսի հրամանատար (կոչված մաս հայոց սպարապետ) Թոմաս Նազարբեկովի կերպարը: Կան մարդիկ, որոնք նրան ներկայացրել են որպես մի նոր Քաջ Նազարի, որը մարդկային բոլոր արժանավորություններից պարզված՝ հայ ժողովրդին տանում էր դեպի կործանում ու խայտառակություն: Հակասակ տեսակի մասնագետներն էլ, նրա արժանավորություններն ուսճացնելով, բերություններն ու բերացումները բաժին են հանում լոկ դեպքերի ընթացքին և Անդրկովկասյան խաղախ դեկավարներին: Դուրս է գալիս, որ Նազարբեկովը մի անբերի գորահրամանատար է եղել, դեռևս «չզինակցված հերոսին» ցույց է տալիս Ալեքսանդրապոլը բուրբերին հանձնելու ետուգելի մեջ (որ ամբողջովին համապատասխանում է իրական դեպքերին), ապա Համամլուից, Ալեքսանդրապոլից, Դիլիջանից՝ խուճապահար մահանջող իր շտաբից Թիֆլիսի ազգային խորհրդին հղած հեռագրերով: Այս հեռագրերն իրար կզվելով՝ ամբողջացրել են կերպարը մի գորավարի, որը չունի այդ պահի համար անհրաժեշտ հայրենասիրական, ոգեղեն տվյալներ: Նա չէր հավատում հաջողությանը, համոզված էր չունի: «Իսկ որտեղ համոզված ելակ, - ասում է Շիլլերը¹, - այնտեղ ամեն ինչ խաբխու է»: Նրան օտար էր այն ճշմարտությունը, որ միշտ էլ փախուստի ժամանակ ավելի շատ զինվոր է կործանվում, քան մարտի ժամանակ: Ինչ խոսք, որ ավելի մեղավոր էին նրան այդ գործի գլուխ կանգնեցնողները:

Վեպի հեղինակը, նորօրյա սպարապետին համեմատելով հին հայոց սպարապետների հետ, խոսում է այն մասին, որ վերջիններիս չէին ճանաչում ուրիշ որևէ փառք, քան ազգի ազատագրության համար պատերազմի դաշտում զոհվելը, հիշում է Մանվել Մամիկոնյանին, որը սեփական տանը տար անկողնում վերջին շունչը տալիս իրեն համարում էր անենադժբախտ ու վարկաբեկված մարդը, որովհետև մեռնում էր քնական մահով: Հին սպարապետներն իրենք էին քանակն առաջնորդում պատերազմի և գնում էին գործի առջևից: Նազարբեկովն էլ էր գնում առջևից, սակայն մահանջող, թուրքի դեմ գլխապատտո փախչող գործի առջևից: Իսկ Դամիել Բեկ-Փիլոմյանը և Սարգիսապատտի մարտերի մասնակից մյուս հրամանատարները թուրքերի հետ-

քաղաքական և հոգևոր վերելք Արևելյան Հայաստանում», «Խաղապանք կուՊոռչյանք հայոց պատմության մեջ», «Փշուանքներ ժողովրդական բանահյուսությունից», «Գրությունք արվեստը հին հայոց մեջ», «Մանրանկարչության արվեստը հայոց մեջ», «Քարտեզ հայ մանրանկարչության» և այլ երկերի հեղինակ - Ա.Կ.:

¹ Ֆրիդրիխ Շիլլեր (1759-1805) - գերմանացի բանաստեղծ, փիլիսոփա, արվեստի տեսաբան և դրամատուրգ - Ա.Կ.:

վում էին ճակատի ամենավճռական հատվածներին մեջ՝ իրենց հետևից տանելով նաև հայրենամովեր զինվորներին:

Ռազմաճակատի իրադարձությունները վեպում տրվել են քայլ առ քայլ, հետևողական մի մանրախնդրությամբ, որով բացահայտվում է կովող հայ զինվորության, նրան օգնության եկած աշխարհագորայինների, քիկունքից անվերջ ռազմամթերք ու պարեն բերող աշխատավորության անձնագոհությունը: Այս հյուսվածքի արանքներում Ուլուբայանը հաճախ է թռչում Բաբում՝ անդրադարձնալով այնտեղ տեղի ունեցող դիվանագիտական խաղերին: Եվ հարկ է մշել, որ այստեղ ևս ամբողջ պատումն ստեղծվել է հավաստի նյութերի հիման վրա: Բանակցությունների մասնակիցների հուշերն են, գրագրությունները, օրագրերը, բանակցությունների արձանագրությունները, ընդունված որոշումները և այլն: Առանձնապես հարուստ են Թիֆլիսի հայ ազգային խորհրդի արձանագրությունները, որոնք օգնում են վերականգնելու Ժողովրդի գործը վարելուն հավակնած մարդկանց մտածելակերպը, գործողությունները... Եվ որքան անօգնական, որքան խղճալի վիճակի մեջ էին նրանք: Այս նյութերից էլ ծնվել են մի շարք հետաքրքիր կերպարներ, որոնցից ես կառանձնացնեի երկուսին՝ Ալ.Խատիսովին ու Հովհ.Քաջագունուն: Բ.Ուլուբայանը չի հայհոյում Ալ.Խատիսովին, նրան պիտակներ չի կպցնում: Ցույց է տալիս նրա մեքենայություններն ու ձեռնածությունները, թուրք ծավալապաշտների հետ կատարած նրա գործարքներն է մերկացնում, և արդյունքում ընթերցողի առաջ կանգնում է քաղաքական մի «գործիչ», որը պատրաստ է ամեն տեսակ շաղախանությունների՝ ի շահ իր գործի, իր պաշտոնական վերելքի:

Հետաքրքիր է Քաջագունու կերպարը՝ քննող, իր սկզբունքներն ունեցող, Ժողովրդի ճակատագրի դարձոյարձումներին քաջածանոթ, յուրայինների քաղաքական շաղախանությունները մեծ մասամբ չբաժանող մի անհատականություն, որը հաճախ էր բախվում իր կուսակցական կենտրոնի հետ, թեև չլուներ հստակ դիրքորոշում: Նրա օրագրերից հմտորեն քաղված հատվածներն իրար բերվելով՝ ստեղծել են այն հոգեկան ու հոգեբանական ծանր մթնոլորտը, որի մեջ միայն հնարավոր էր այդ մարդու վերջնական խզումը խստիտով-վրացյանական գործելակերպից:

Տասնյակ մեծ ու վոքր կերպարներ էլ կան, որոնք առավել կամ պակաս հաջողությամբ ներկայացված են, ունեն իրենց անհատական նկարագիրը և օգնում են ճակատագրական օրերի ընդհանուր պատկերը տալուն: Կարևորն այն է, որ հեղինակի երևակայությամբ ստեղծված այս մարդիկ ևս իրական-պատմական անձերի տպավորություն են թողնում և չեն խճողում ընդհանրական հավաստի իրականությունը:

Գեղարվեստական ուրիշ առանձնահատկությունների ու թերությունների մասին չեմ խոսում մասնագիտությանս բերումով: Կարծում եմ՝ այդ առումով վեպի վրա առավել հանգամանակից ուշադրություն կդարձնեն գեղարվեստական խոսքի մասնագետները:

Իմ հաճելի պարտականությունն են համարում վերստին նշելու, որ Բ.Ուլուբաբյանի «Մարդարավատ» վեպը հարազատորեն վերականգնում է ժամանակաշրջանի պատմական ու գեղարվեստական պատկերը: Ես այն կարդացել եմ բավականությամբ և համոզված եմ, որ հրատարակվելով ընթերցող հասարակայնությանն անպայման պետք է տոգորի անխառն սիրով ու երախտագիտությամբ հայրենանվեր այն մարդկանց նկատմամբ, որոնք պատմական ամենաճակատագրական պահին կանգնեցին թուրք ջարդարարների դեմ և հայ ժողովրդին փրկեցին վերահաս կործանումից:

Պրոֆ. Ջ.Վիրակոսյան
պատմական գիտությունների դոկտոր

(ստորագրություն)
1983 թ., հունվար-փետրվար

ՋՐՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՀԵՏ¹

Մեր նախորդ թիվով արձագանք հանդիսացած էինք «Ռեզյուտսիոն» շաբաթաթերթի (հուլիս 29) անդրադարձին հայկական ահաբեկչության և այդ առթիվ թերթին հրատարակած հարցազրույցին Հայաստանի արտաքին գործոց նախարար Ջոն Կիրակոսյանի հետ: Թերթին խմբագրությունը կճշտեր, սակայն, թե տեսակցությունը տեղի ունեցած էր քանի մը ամիս առաջ և, չվերաբերելով հանդերձ «տաք» այժմեականության, օգտակար կթվեր: Հարցազրույցը կատարած է Պերմար Ումպրեխտ:

* * *

Պ.Ու. – Կուզեի որ քանի մը բառով պատմականն ընեք Խորհրդային Հայաստանի ստեղծման: Կխորհի՞ք, որ հայերուն «ժայռենիքն» է: Դի՞շտ է, որ ստեղծին կնախատեսվեր անկախ Հանրապետություն մը ստեղծել:

Ջ.Կ. – Խորհրդային Հայաստան, ստեղծված 1920-ին, հայ ժողովրդի միակ պետությունը կկազմե: Իր ստեղծումը դյուրին գործ չեղավ: Ա աշխարհամարտի ընթացքին հայ ժողովուրդը ֆիզիկական իր անհետացման եզրին էր: Իրողություն է, որ Արևմտյան Հայաստանը, որ Օսմանյան կայսրության մեջ կգտնվեր, և Արևելյան Հայաստանը, միաձուլված Ռուսաստանի, հասարակաց կամքն ունեին միանալու և հայկական պետություն մը ստեղծելու: Հայ ժողովուրդը կփափագեր իր ճակատագրին տերն ըլլալ, ազգային օջախ մը ունենալ, որ համապատասխանե իր կարիքներուն: Հարկ է, սակայն, հաստատել, թե մարդկությունը միշտ թույլ չի տար յուրաքանչյուր փափագի իրականացումը:

Երիտասարդ թուրքերը, որոնք թուրք պետության գլուխը, պան-թուրքական քաղաքականություն մը կվարեին, վճռած էին, միահամուռ, այն ատենվան գերման ռազմապաշտության հետ, զինու զորությամբ լուծել Հայկական հարցը, արգելք հանդիսանալու համար այդ ժողովրդին տենչերուն իրականացումը:

¹ Ֆրանսիական "Revolution" շաբաթաթերթի հարցազրույցը Հայաստանի արտաքին նախարար Ջոն Կիրակոսյանի հետ // «Հատագ» (Փ.), 1983, 6, 7, 9 օգոստոսի: «Չարքունք» (Բեյրութ), 1983, 27 օգոստոսի: «Պայքար» (Բոստոն), 1983, 27 օգոստոսի: «Արարատ» (Բեյրութ), 1983, 6 սեպտեմբերի: «Ասպարեզ» (Լ.Ա.), 1983, 21 սեպտեմբերի, 8 հոկտեմբերի: «Արև» (Կաիիր), 1983, 23 սեպտեմբերի: «Սևան» (Բ.Ա.), 1983, 27 հոկտեմբերի: «Ալիք» (Թեհրան), 27 նոյեմբերի: Թարգմանված է ֆրանսերենից՝ L'Arménie Soviétique: Entretien avec John Kirakossian // *Revolution* (Paris), 1983, 29 juillet, p. 16.

մացման հայկական հայրենիքին ընծայած լավագույն պայմաններում մեջ, որս պետության ազդեցության տակ:

Վերջավորության այդ դժվար պահերում, որոնք հայ ժողովրդին մեծամասնության քնաջնջումը տեսան և հողային ու նյութական հսկա վնասներ, ավելի դյուրին եղավ հայկական պետություն մը ստեղծել իր հողամասին միայն մեկ մասին վրա: Այդ նոր պետությունը՝ Խորհրդային Հայաստանը, որ ճակատագիրը կապեց Խորհրդային Միության մյուս ժողովուրդներու և համրապետությանն ճակատագրին:

Հայ ժողովուրդը արդիական պետություն մը հիմնեց, ինքն իրեն շնորհեց զարգացած ճարտարարվեստ մը և հողագործություն մը: Ամենն կարևորը, սակայն, մշակութային և գիտական գեղեցի վրա կատարված է: Խորհրդային Հայաստանը տարբեր ձևով կզմահատվի արտասահմանի հայերուն կողմն: Եթե մեծ թվով բարեկամներ ունինք, կան նաև կիներ ու ալքեր, որոնց համար ընկերային և քաղաքական մեր օրենքները ընդունելի չեն: Բայց նույնիսկ անոնց մեջ, քազմաթիվ են անոնք, որոնք բարեկամական կապեր ունին Խորհրդային Հայաստանի հետ: Դեռ ուրիշներ կառչած կմնան հին դիրքորոշումներու, խնդրո առարկա կընեն Խորհրդային Հայաստանը, ըսելով. «Ինչո՞ւ Հայաստանը ավելի մեծ չէ, ինչո՞ւ մեր փափագած աշխարհագրական տարածությունը, օրենքներն ու քաղաքական դիրքերը չունի»: Պատասխանը պարզ է: Նախ Խորհրդային Հայաստանը իրենց կամքին համեմատ չկազմվեցավ: Ապա շատ են անոնք, որոնք կուզեն, որ Խորհրդային Հայաստանը ավելի մեծ հողամաս մը ունենա, բայց ատիկա կրնա միայն իրատես մոտեցումի մը վրա հիմնվիլ: Կարելի չէ լուրջի առնել ավանտյուրիզմը և մշտական կրկնումը այն փափագին, որ Հայաստան սապես ըլլա կամ նապես ըլլա: Մեր մոտ հայերը իրենց մայրենի լեզվով կխոսին, կգրեն, կարտահայտվին: Խոր հարգանքի զգացում մը ունինք արտասահմանի հայերուն նկատմամբ: Մեր պետությունն ու կառավարությունը իրենց կարելիությանց սահմաններում մեջ կաշխատին օգնելու համար Սփյուռքի մեր եղբայրներուն և քույրերուն, որպեսզի իրենց հայրենիքը չմոռնան:

Պ.Ու. – Հայրենիք մը կա ուրեմն հայ ժողովրդին մեկ մասին համար: Եվ այն քոլոր անոնց համար, որոնք ցրված են աշխարհի մեջ, ինչպե՞ս կտեսներ Հայկական հարցին լուծումը:

Ջ.Կ. – Կարելի չէ հակիրճ կերպով վերլուծել այդքան կարևոր և բարդ հարց մը: Բնավ փորք հարց չէ, ինչպես կկարծվի արևմտյան քազմաթիվ շրջանակներու մեջ: Հայ ժողովրդի մեկ մասը ցրված է արտասահման, զրկված իր հայրենիքին, իրեն կողոպտված հողերեն: Կասպի դառնությունը սրտին, միջոցներ որոնելով, որոնք թույլ տան վերագտնելու իր ունեցածը. Միջազգային ներկա կացությանց մեջ դյուրին չէ լուծում մը գտնել մնան հարցի մը: Խորհրդային Հայաստանը ոչ մեկ պատասխանատվություն ունի, գալով այն զանազան ճամբաներուն և ձևերուն, որոնք կերկին: Պարզվող մեթոդները անընդունելի են մեզի համար: Կխորհինք, ապահովված խաղաղության մը պայմաններ

րուն մեջ է, որ ժողովուրդները, ի միջի այլոց, կարելիությունը կունենան հասարակաց լեզու մը գտնելու, հանգելու համար հասկացողության մը և ընդունելի լուծումի մը, որ զանազան ձևեր կրնա առնել: Ներկայիս այս հարցերը առանց լուծումի մը կմնան: Արձագանքը ջարդերու, որ ճանչված է որպես մեր դարուն առաջին ցեղասպանությունը, կինչե աշխարհի զանազան երկիրներու մեջ: Կխորհիմք, որ բոլոր պայմանները պետք է ձեռք առնվին մեջտեղ հանելու համար զանազան տարրերը, որոնք կնպաստեն հարցին հասկացողության: Այդ հասկացողությունը չի կրնար ձեռք բերվիլ, եթե նյութը չի ծեծված հարկ եղած քձախնդրությամբ: Ապա՞ծանոթացումը շատ վնասներ կպատճառե:

Պ.Ու. – Ի՞նչ կընե ձեռ կառավարությունը՝ արժեցնելու և ընդունել տալու համար ցեղասպանության իրականությունը միջազգային գետնի վրա:

Ջ.Կ. – Մեծ ուշադրությամբ կհետևի Սփյուռքի մշակութային, ընկերային և քաղաքական կյանքին: Կփափագիմ, որ ան գտնե իր միության ճամբան, իր իսկ հայրենիքի հարգանքին ու սիրվույն մեջ: Կգործենք խաղաղության պահպանման ռազմավարության մը շրջագծին մեջ: Սահմանային և ուրիշ հարցեր լուծելը դյուրին չէ: Արևմուտքի մեջ ո՞մանք կխորհին, որ շատախոսությունը և բիրտության արկածախնդիր արարքները կրնան հանգիլ տալ իրենց հեռանկարները: Վերադառնալով հայ ժողովրդին, երբ հայրենիք մը ուզեց ունենալ, և մինչ արևմտյան երկիրները հավակնեցան իրեն օգնել, պետք է հաստատել, թե ոչինչ կատարվեցավ այդ ուղղությամբ, մեջք ըլլալով ամենեւ տագնապալի շրջաններուն: Հայրենիք մը հայերուն համար չէր համապատասխաներ թուրք պետության շահերուն: Անընդունելի խոչընդոտ մը պիտի կազմեր թրքախոս հսկա պետության մը ստեղծման համար, թրքածին բոլոր ժողովուրդներուն հետ տարածելու համար Մերձավոր Արևելքի և Փոքր Ասիո սահմանները: Այդ պատճառով է, որ թուրք պետությունը ուզեց քնաջնջել հայ ժողովուրդը: Հաջողվեցավ որոշ չափով, բայց ոչ ամբողջությամբ: Այսօր, փրկված ռուս պետությամբ և իր իսկ ուժերով, հայ ժողովուրդը կապրի և կաճի Խորհրդային Հայաստանի մեջ: Իր ծնունդեն ի վեր, եվրոպական պետությանց և Միացյալ Նահանգներու ներկայացուցիչները, այդ պատճառով «մոռցած» են հայ ժողովրդի պատմությունը: Եվ այսօր կշարունակեն հայ և թուրք հարաբերությունները նախատեսել հակախորհրդային դիրքերու ընդմեջեն: Իրենց համար Հայկական հարցին վերաբերող իրականությունները բոլորովին երկրորդական նշանակություն մը ունին, չըսելու համար ավելի:

* * *

Խմբ. «Հասոց»-ի

Այլապես շահեկան է այս տեսակցությունը, երբ նկատի առնենք, մանավանդ թե հաճախ չէ, որ Հայաստանի արտաքին նախարար մը մնան հարցեր կշռչափե օտար մանուլի մեկ ներկայացուցչին հետ: Ավելորդ կնկատենք, անշուշտ, անդրադառնալ բոլոր ըսվածներուն: Ով որ քիչ մը պատմություն գիտե,

ծանոթ է այն իրողության, որ հողային մեր հարցերուն չլուծվելուն պատասխանատուները միայն արևմտյան պետությունները չեն: Խորհրդային Հայաստանի արտաքին գործոց նախարարն ալ, սակայն, ասկե ավելին չէր կրնար ըսել:

* * *

Հիշենք նաև, թե այս տեսակցության առթիվ, հուլիս 30-ին, «Հյուրիերը» հողված մը հրատարակած էր, խորագրված. «Երևանեն ճաթած ձայն մը»...

ՊԱՏՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԵՂՇԱՐԱՐՆԵՐԻ ՈԱՂԻՈՍՏԵՐԸ¹

...Վերջին շրջանում Անկարայի ռաղիոն ամեն կիրակի հատուկ հակասովետական, հակահայկական հաղորդումներ է ձայնասփռում արաբական ունկնդիրների համար, արաբերեն լեզվով: Այս հաղորդումներում ճշմարտության հետք անգամ չկա: Ամեն ինչ կառուցված է կանխակալ հայկական մտայն, հակառուսականության հիմքի վրա: Պատմության փաստերը մեկնաբանվում են այնպիսի քնահանությամբ, որ ռաղիոստղը նույնիսկ մոտավոր պատկերացում չի կարող կազմել ոչ վաղ անցյալի իրադարձությունների մասին: Նման պատմաշինությունը մեզ արդեն հայտնի է թուրքական ժամանակակից բազմաթիվ կեղծագիր-գրվածքներից: Դրանց էջերում թուրք հեղինակները փորձում են ամտեսել ազատ ապրելու, հայրենիք ունենալու հայ ժողովրդի նվիրական իրավունքը:

Արևելյան բռնակալների լծից ազատագրության համար հայ ժողովրդի դարավոր պայքարը թուրք պրոպագանդիստները մատուցում են որպես օտար ուժերի, գլխավորապես Ռուսաստանի քաղաքականության արգասիք: Հակառուսականությունը նրանց համար հաց ու ջուր է դարձել իրենց պրոպագանդիստական աղմկարարության մեջ: ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի դաշնակից Թուրքիան այսօր ամեն օր, ամեն ժամ տուրք է տալիս հակակոմունիզմի, հակասովետիզմի ամերիկյան խնկարկունքին:

Աշխարհի տարբեր երկրներում տպագրվել են ճշմարիտ փաստաթղթերի, վկայությունների բազմաթիվ ժողովածուներ: Երևանում արդեն երկրորդ անգամ հրատարակվում է Հայոց զենոցիդին նվիրված վավերագրերի ժողովածու: ԱՄՆ-ում 1981-ին լույս տեսավ Քլոյանի կազմած նույնպիսի մի արժեքավոր հավաքածու, որը ցույց է տալիս, թե Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ամերիկյան մամուլը ինչպես է արձագանքել արևմտահայության ողբերգությանը:

Վերջերս Փարիզում լույս տեսավ ֆրանսահայ պատմաբան Արթուր Բեյլերյանի² կազմած 800 էջանոց ֆրանսերեն ժողովածուն՝ «Անժ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը» վերնագրով, որի մեջ ամփոփված են ֆրանսիական պետական արխիվների 1914-1918 թթ. համապատասխան նյութերը:

¹ ՋԿԱԱ, Միջազգային ասպարեզում գաղափարական պայքարի ակտուալ հարցերը շարքից լսեցեք պրոֆ. Ջ.Ս.Կիրակոսյանի գրույցը «Պատմության թուրքական կեղծարարների ռաղիոստերը» վերնագրով, 1983, 23 օգոստոսի, մեքենագիր:

² Արթուր Բեյլերյան (ծնվ. 1925), ֆրանսահայ պատմաբան, Հայաստանի նոր պատմության, միջազգային հարաբերությունների մասնագետ, «Անժ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918)» փաստաթղթերի ժողովածուի կազմող - Ա.Կ.:

Սակայն թուրքական կողմին պատմության ճշմարտությունները չեն հետաքրքրում: Դաճաչել անցյալը, նշանակում է ճանաչել ժողովրդի օրինական իրավունքները: Իսկ թուրքական պետականությունը դարերի ընթացքում երբեք չի ճանաչել, չի հարգել ճնշված ժողովուրդների իրավունքը: Բուլղարներն ու սերբերը, ռումիններն ու արաբները՝ բոլորն էլ իրենց ազատությունը նվաճել են երկարատև, արյունալի մարտերից հետո:

Այժմ ավելի ընդլուս պնդարկենք, թե ինչ է մատուցում Անկարայի ռադիոն ամեն կիրակի, իր երկժամյա արաբերեն հաղորդումներում:

* * *

ԶՐՈՒՅՑ ԱՌԱՋԻՆ. Թուրքական ռադիոն 1983-ի մայիսի 22-ին իր արաբ ունկնդիրներին հավատացնում էր, թե հայերը Օսմանյան կայսրությունում «ճոխ կյանք վայելող փոքրամասնություն են եղել»: Պատկերացնում եք սուլթանների, փաշաների ու բեկերի իշխանության կրնկի տակ դարեր շարունակ ճնշված հայ ժողովուրդը «ճոխ կյանք է վայելել»: Ինչպես ասում են, մե՛սն ստերը ծիծաղ կշարժեն մույնիսկ եվի՛ս հավերի մոտ: Բանն այն է, որ թուրքական ժամանակակից պատմաբանները, քաղաքագետները չեն խզում կապը Օսմանյան կայսրությունը գովաբանելու իրենց ավանդական պրակտիկայից: Հանրահայտ փաստ է, որ թուրքական տերությունը մի հանրաբանտ էր այնտեղ ապրող ժողովուրդների համար: Սակայն այսօր թուրքական պրոպագանդան փորձում է այն ներկայացնել որպես մի դրախտավայր: Հակազիտականությունը, կեղծարարությունը այստեղից էլ սկսում են: Ֆեռդյալական, բռնապետական թուրքական տիրապետությունը մութ գիշեր էր ոչ միայն հայ ժողովրդի, այլև արաբների, բուլղարների, սերբերի, ռումինների, վրացիների ու քաղվածախիվ ուրիշ ազգերի համար: Սուլթանական իշխանությունը չարիք էր իր իսկ՝ թուրք աշխատավոր ժողովրդի համար: Սակայն պատմության թուրք կեղծարարներն այսօր ամեն ինչ ներկայացնում են վարդագույն ու պարզունակ, թուրքական հրեշավոր բռնապետությունը պատմությունից անտեղյակ մարդկանց մատուցելով այնպես, ինչպես իրենք են ցանկանում: Որպեսզի ցույց տան, թե հայ ժողովրդի համար թուրքական իրականությունը մի դրախտավայր է եղել, Անկարայի ռադիոխոսնակը 1983-ի մայիսի 22-ին լրջորեն ազդարարում էր. ճոխ կյանք վայելած հայոց փոքրամասնությունը «Օսմանյան կայսրությանը տվել է արտաքին գործերի մեկ մինիստր, 7 այլ մինիստրներ, շատ քաղաքագետներ, պառլամենտի անդամ, դեսպան, դատավոր և մի քանի վարչական աշխատողներ»: Ամենավորք իսկ ուշադրության դեպքում յուրաքանչյուր արաբ ռադիոլսող կկռահի, որ Անկարայի ռադիոն իրեն տարրական բաներ չհասկացողի տեղ է դնում: Իսկ ո՞վ ասաց, որ հայ տարրը չի մասնակցել Օսմանյան պետության հասարակական-քաղաքական կյանքին: Իսկ ո՞վ է ժխտում, որ հայ մարդկանցից շատերը դարերի ընթացքում ամենամանիջական մասնակցություն չեն ունեցել երկրի պետական-հասարակական գործե-

րին, ճարտարապետական-շինարարական գործերին, արդյունագործությամբ, առևտրին և այլն: Ի՞նչ զարմանալու բան կա այս խնդրում, որ թուրքական պրոպագանդան փորձում է ապացուցել Օսմանյան պետականության կարծեցյալ բարեկոչությունը հայոց նկատմամբ այն բանից հետո, երբ ոչնչացրել է հայությանը իր երկրում:

Մեր մոտեցումը դասակարգային է, ճշմարտացի ու հստակ: Իրապես Օսմանյան կայսրության մայրաքաղաքի հայ բնակչության մեջ փոքր չէր մեծահարուստների թիվը, այն մարդկանց թիվը, ովքեր համագործակցում էին սուլթանի արքունիքի, Բարձր դրան հետ, նրանց հետ ձեռք ձեռքի տված շահագործում աշխատավոր մարդուն, անկախ նրա ազգային պատկանելությունից: Բայց մի՞թե կարելի է մուլանացնել Կ.Պոլսի հայ մեծահարուստներին Մշո դաշտի, Ալաշկերտի, Վանի շրջանի հայ աշխատավոր գյուղացիության հետ, որը նվազում էր ինչպես սոցիալ-դասակարգային կեղերիչների, այնպես և մահմեդական վերնախավի, երիտթուրքական շովինիստական պաշտոնեության մազիլներում: Թուրքական պրոպագանդան գտեհկաբանում է, երբ Օսմանյան կայսրությունն ընդհանրապես հրաշալիքների մի օազիս է նկարագրում, որտեղ բոլորը գոհ էին, գոհ էին մաս հայերը, Բայց նրանք ապետախառ չարածնի դուրս եկան, չըմբռնեցին բարիքը, ակամաջ դրին Ռուսաստանին, եվրոպական տերություններին և դիմեցին խռովությունների:

Ռադիկալներին հիշեցնենք, որ թուրքական պրոպագանդիստական-քաղաքական գրականության մեջ տակավին չենք հանդիպի գոնե մի եզակի փաստի, որը վկայեր ճշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի օրինաչափությունը, նրա արդարացի բնույթը: Ընդհակառակը, թուրքական պրոպագանդան այսօր նորից ողորմ է, որ ճշված ժողովուրդների ազատագրական մաքսառումների հարվածներից խորտակվել է Օսմանյան կայսրությունը:

Մայիսի 22-ի արաբերեն ռադիոհաղորդման մեջ նկարագրվում է Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Արևմտյան Հայաստանում ծավալված քաղաքական պայքարը՝ հանուն արևմտահայության ինքնավարության: Հայտնի է, որ 1913-1914 թթ. Ռուսաստանի, արևմտաեվրոպական պետությունների, Օսմանյան կայսրության դիվանագիտական ներկայացուցիչները երկար բանակցություններ վարեցին Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու խնդրի շուրջ: Չնայած Գերմանիայի խանգարիչ դերին՝ 1914-ի փետրվարին Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված համաձայնագրով երիտթուրքական կառավարությունը որոշակի պարտավորություններ ստանձնեց հայոց բարենորոգումները իրականացնելու խնդրում: Այսօր, հեռանալով պատմական ճշմարտությունները հիշատակելուց, թուրքական ռադիոպրոպագանդան այն տարիների հայ հասարակական քաղաքական ուժերին մեղադրամբ է ներկայացնում այն առումով, թե ինչու նրանք ոգևորվել էին հայոց ինքնավարության ուղղությամբ կատարվելիք բարենորոգումների շուրջ ռուսական դիվանագիտության հաջողությունից:

Այս նպատակով թուրքական պրոպագանդիստները դիմում են գաղութարար Մեծ Բրիտանիայի դիվանագիտական ներկայացուցիչների թողած արխիվային ժառանգությանը՝ սրա վրա կառուցելով իրենց այսօրվա խեղաբյուրումները:

Անգլիական դիվանագետներին երբեք էլ չի հետաքրքրել ճնշվածների ճակատագիրը: Նրանք միշտ էլ հանդես են եկել որպես բրիտանական գաղութատիրության շահերի ջերմեռանդ պաշտպաններ: Նրանց երբեք չի հետաքրքրել արևմտահայության անագորայն վիճակը: Նրանք իրենց եղափանգումներն այս խնդրում միշտ էլ կառուցել են հակառուսականության հիմքի վրա՝ րաջ գիտակցելով, որ հայ ժողովրդի միակ իսկական պաշտպանը Ռուսաստանն է: Անգլիական հյուպատոսներին դուր չէր գալիս արևմտահայության ուսասիրությունը: Նրանք այդ ոգով զեկուցագրեր են հղել Լոնդոն: Իսկ այսօր թուրքական պրոպագանդան այդ թղթերը մեջտեղ է բերել՝ ցույց տալու համար, թե հայերի «ազատ պետություն ստեղծելու իրավունքը» «հիմնականում համապատասխանում էր գաղութարարական պետությունների շահերին»:

Անկարայի ռադիոն փորձում է չքմեղացնել մեծ ոճրագործ Թալեաթին, հարցականի տակ է դնում նրա հղած հակահայկական հեռագրերի տեքստերի իսկությունը: 1920-ին Լոնդոնում հրապարակված Նախմ-բեյի¹ հանրածանոթ հուշերի գիրքը, որի մեջ ամփոփված է երիտթուրքական պարագլուխների հակահայկական դահճային կարգադրությունների մի զգալի մասը, թուրք պրոպագանդիստները փորձում են անտեսել ուղղակի հենց այնպես, քմահաճորեն: Թուրքական պրոպագանդայի այսօրվա պատկերացումներում երիտթուրքական կառավարությունը նույնիսկ հայերի բարերարն էր: «Հայերի տարածած ոչնչացման լուրերը ամբողջապես սուտ են: Օսմանյան պետության պատմության մեջ երբևիցե ոչնչացում կամ եղեռն չի եղել», - հռչակում է Անկարայի ռադիոն (1983-ի հունիսի 26-ին), և ինքն էլ հավատում է, որ ինքը ճիշտ է: Ռադիոկեղծարարներին հիշեցնենք, որ թուրքական թերթերի էջերում այսօր էլ ամենասանձարձակ պանթուրքիստները միշտ հպարտանում են Թալեաթի հայասպան ջաղաքականությանը, նրա ծրագրերով ու հեռագրերով՝ դրանց մեջ տեսնելով թուրքական պետականության փրկության բանալին: Այնպես որ մի ձեռքը չգիտի, թե մյուսն ինչ է անում: Արտասահմանցի մի մեկնաբան վերջերս շատ դիպուկ ասաց. «Գեոցիոլի վերջին գոհը ճշմարտությունն է»:

¹ Նախմ-բեյ – թուրք պաշտոնյա, 1915-1917 թթ. Հայեպոլում եղել է հայերին տեղահանող տեսչության գլխավոր քարտուղար, որին հանձնարարված էր Դեյր էզ-Ջորի անապատ արտաքսել Օսմանյան կայսրության տարբեր վայրերից Հայեպ արտաքսված հայերին, խուսափել է կատարել հրամանները, փրկել է շատ հայերի և պաշտոնանկ արվել, 1918 թ. Արամ Անտոնյանին է համձնել իր մոտ գտնվող գաղափի փաստաթղթերը և իր հիշողությունները, որոնք 1920 թ. հրատարակվել են անգլերեն և ֆրանսերեն լեզուներով - Ա.Կ.:

Սակայն թուրքական պրոպագանդան այս գործում չի կարող հաջողել: Ճշմարտությունը կկարողանա իրեն պաշտպանել ստիջ:

ԶՐՈՒՅՑ ԵՐԿՐՈՐԴ. Հունիսի 5-ի հաղորդման մեջ Անկարայի ռադիոն ահա թե ինչպես էր արար ունկնդիրներին նկարագրում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմտահայության ոչնչացման փաստը: «Օսմանյան կառավարությունը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ստիպված եղավ մի ժամանակավոր հրաման արձակել, որը պահանջում էր հայերին պատերազմական շրջաններից տեղափոխել այլ շրջաններ»: Պատմության փաստերը հիմնովին կեղծելու, պատմագիտության տարրական նորմերը չհարգելու չափազանց բնորոշ օրինակ է սա, որը կոչված է արար նոր սերունդներին ծուռ հայելու մեջ ներկայացնել երիտթուրքերի ձեռքով կազմակերպված արևմտահայության ողբերգությունը:

Վերջին տարիներս պատմության կեղծարարության անպատիվ գործն իրենց ձեռքն են առել թուրքական պետական մարմինները: Ստամբուլի համալսարանը մի կոչ էր ուղղել աշխարհի տարբեր համալսարաններին, որտեղ առանց այլևայլության 20-րդ դարի առաջին զենցոցիղի կազմակերպիչներ էր հռչակում... հայերին: Մամուլի ասուլիսներում, այսպես կոչված գիտաժողովներում թուրքական «պատմագիտության» այրերը կեղծիքի ու ստախոսության իսկական ռեկորդներ են սահմանում:

Ո՞ւմ հայտնի չէ վաղուց ապացուցված այն ճշմարտությունը, որ արևմտահայության ոչնչման ծրագիրը երիտթուրքական շովինիստները մշակել էին տակավին 1910-ին: Պատերազմը մի պատեն առիթ էր այն իրականացնելու և պատերազմական դժնի պայմաններով արդարացնելու համար: Բեհետեղին Շաքիրի գլխավորած «Թեշքիլաթ-ը մահսուս» հատուկ կազմակերպությունը, ստեղծվել էր հայ անմեղ մարդկանց տեղահան անելու, անմարդաբանակ վայրերում նրանց խոշտանգելու և ոչնչացնելու համար: Այս խնդիրների մասին նոր ապացույցներ բերել, քննարկումներ անել ավելորդ է: Ապացուցված բանը նորից ապացուցել նշանակում է ջուր ծեծել: Իսկ Անկարայի ռադիոն 1983-ի հունիսի 19-ին ոճրագործ Թալեաթի հղած հայաստան գաղտնի հեռագրերի մասին խոսելիս ասում էր, թե նրա մտահոգությունն է եղել «պատժել այն մարդկանց, որոնք հանցանքներ էին գործել հայերի տեղափոխման ժամանակ»:

Այստեղ են ասում ստիբ, բայց չափի իմացիր:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրության տարածքի վրա 2,6 միլիոն հայություն կար: Միայն Արևմտյան Հայաստանի նահանգներում՝ Վանում, Էրզրումում, Մուշում, նաև Տրապիզոնում, Բիթլիսում, Սղերդում, Տիգրանակերտում, Մալաթիայում և այլուր մեկ ու կես միլիոն հայություն կար: Այդ ո՞ւր անհետացան հայոց հին քաղաքակրթության քնակիչները: Չէ՞ որ այսօր հայագրված են այդ շրջանները: Կ.Պոլսի 200-250 հազար հայության փոխարեն այսօր միայն 40 հազար հայ է մնացել Ստամբուլում:

Խոսելով հայոց տեղահանման մասին՝ ռադիոհաղորդման հեղինակները փորձում են արդարացնել կատարվածն այն պատճառաբանությամբ, թե «վիաստարիներն ապացուցում են, որ այդ շրջաններից հեռացվող հայերն աշխատանք չունեին և նյութապես էլ լավ վիճակում չէին»։ Ուրեմն, չժխտելով կատարվածը, այսօր թուրքական պրոպագանդան փորձում է բարերարի դերում տեսնել երիտթուրքական ճիվաղներին, որոնք իբր մտահոգ էին նյութապես վատ վիճակում գտնվող հայերի նկատմամբ։ Բայց չէ՞ որ նույն հաղորդման սկզբում կյանքի ճոխ պայմաններ էին վերագրվում Օսմանյան կայսրությունում ապրած հայերին։ Պատմության թուրքական մեկնաբանությունները հակազիտական են, հակապատմական։ Տրամաբանության հետք անգամ չկա նրանցում։ Այդ նույն հաղորդման մեջ, վկայակոչելով 1919-ի հոկտեմբերին անգլիական մի պաշտոնյայի պատասխանը թուրքական բարբարոսությունները դատապարտող մի գրքի հեղինակ Էմիլի Ռոբինսոնին, առանց այլախոյոքանք ավելում են այսպիսի խոսքեր. «Ճեղք մարդուն սազական չէ, որ մտածի, թե հայերը ենթարկվել են սպանդի ու ոչնչացման»։ Այդ դեպքում ինչո՞ւ և ինչպե՞ս անհետացան հայերը Արևմտյան Հայաստանից։ Այդ ո՞ւմից ծնունդ առան հայոց Մվիյուտքի այսօրվա սերունդները։ Չէ՞ որ դրանք շատավիզներ են իրենց տնից, հողից, հայրենիքից արտաքսված, հրաշքով փրկված ու վերապրած հայերի։ Ուրեմն սո՞ւտ են գրել Հենրի Մորգենթաուն ու Յոնանեն Լեփսիտաը, Շտուբերը և Պինոնը, Գիբբոնսը, Թոյնբին ու Մարկվարտը, Անատոլ Ֆրանսը և Մարսիւմ Գորկին։ Իհարկե ոչ։ Մուտն սկսվում է այսօրվա թուրք կեղծարարների ջանքերով։ 1915-ի դեպքերի վրայով հեշտությամբ սահելով՝ հաղորդման հեղինակները ունկնդիրների մոտ շփոթ են առաջացնում արդեն 1918-ի Բաքվի դեպքերի մասին։ Իսկույն տեսանելի է դառնում, որ թուրքական ռադիոպրոպագանդան իր համար լսաբան է փնտրում պատմությունից անտեղյակ մարդկանց մոտ՝ փորձելով նրանց մոտ ատելություն սերմանել հայերի նկատմամբ։ Փաստերն այնպես են աղավաղվում, որ կարծես թուրքական բանակը չէր, որ ինտերվենցիա էր կատարել Անդրկովկաս, հասել Բաքու, իր ճանապարհին մահ ու արյուն սփռելով։ Ռադիոունկնդիրներին հիշեցնենք, որ երիտթուրքական կառավարությունը, խախտելով 1917-ի դեկտեմբերի Էրզինջանի հաշտությունը, իր բանակները շարժեց Անդրկովկասի վրա, իր ճանապարհին կողոպտեց, ոչնչացրեց հայկական գյուղեր, հասավ մինչև Բաքու՝ անենասև դերը կատարելով սովետական իշխանության դեմ։ Իսկ այսօր թուրքական պրոպագանդան կեղծում է ու ստում, արավարում պատմական ճշմարտությունները։ Ստեփան Շահումյանը՝ Լենինի անվեներ գլխակիցը, Անդրկովկասում սովետական իշխանության արտակարգ և լիազոր կոմիսարը, որը մարտնչեց ու զոհվեց աշխատավոր ժողովրդի համար, թուրքական գրվածքներում բնութագրվում է որպես...տեռորիստ։ Թուրքական մամուլը դժգոհում է, որ Բաքվում նրան արձան է կանգնեցված, որ նրա անունով սովետական մալ կա, որը անցնում է Բոսֆորով ու Դարդանեղով։

Թուրքական պատմաշինության աղավաղումների մեջ խեղդվում են ամենատարրական ճշմարտությունները:

1983-ի հունիսի 26-ին ռադիո Անկարան նորից եփերը աղտոտում էր ստերով: «Հայերի տեղափոխվելու հրամանը չընդգրկեց Ստամբուլը, Թրակիայում և մույնիսկ Անատոլիայի կենտրոնում բնակվող հայերին, ուրեմն՝ ամբողջական տեղափոխում տեղի չի ունեցել, ինչպես կարելի է խոսել ամբողջական ղյնչացման մասին»: Նախ, միանգամից մի քանի սուտ: 1915-ի ապրիլի 24-ին առաջին հարվածը հասցվեց հենց Կ.Պոլսի հայ մտավորականությանը: Կ.Պոլսում զանգվածային կոտորած չսարքվեց միմիայն արտասահմանյան դեսպանատների առկայության պատճառով: Ինչ վերաբերում է Ադրիանապոլսին, Ռոդոստոյին, նաև Անկարային ու կենտրոնական Անատոլիայի մնացյալ կենտրոններին, նրանք տեղահանվեցին, քարտվեցին, կոտորվեցին մույնպիսի դաժանությամբ, ինչպես Արևմտյան Հայաստանի հայ բնակիչները: Թուրքական ռադիոն հայտարարում է, թե «Օսմանյան պետության մարդկային զոհերը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ավելի շատ էին, քան հայերի զոհերը: Նա արևելյան շրջաններում ցրտի և հիվանդության պատճառով կորցրեց մի ամբողջ բանակ, որի թիվը հասնում էր 90 հազարի»: Այո՛, Սարիղամիշի ճակատամարտում երիտթուրքական արկածախնդիր էնվերի թթին ռուսաց բանակը գորեղ հարված հասցրեց: Բայց չէ՞ որ նա պարծենում էր, թե ռուսներին քշելու է Անդրկովկասից:

Հիշեցնե՞ք թուրքական ռադիոյի պարոնայք տեօրեններին, որ Թուրքիան ինքը հարձակվեց Ռուսաստանի վրա: Նա անբետո էր: Թուրքական պատմաբանները հասարակությունից թաքցնում են 1918-ի ավարտին, 1919-ի սկզբին թուրքական հասարակական-քաղաքական կյանքի փաստերը, մամուլի նյութերի բնույթն ու բովանդակությունը: Չէ՞ որ այն օրերին թուրքական բազմաթիվ թերթեր, պառլամենտի հռետորներ գրեցին ու խոսեցին երիտթուրքերի կատարած հակահայկական շարագործությունների մասին, դատապարտեցին կոնկրետ ռճրագործության հեղինակներին, պահանջեցին և հասան այն քանին, որ հատուկ զինվորական դատարան ստեղծվեց, որը և դատեց ժողովրդասպանության հեղինակներին: Այս մասին այսօր թուրքական ռադիոն ոչ միայն լռում է, այլև ամբողջապես գլխի վրա է շուտ տալիս փաստերը: 1983-ի հունիսի 19-ին արաբ ռադիոլստոների համար ծայնապիտված միևնույն հաղորդաշարում երիտթուրքական պարագլուխներին արդարացնելու նպատակով ամբողջապես կեղծվում են թուրքական ռազմական դատարանի գործունեությունը, նրա ընդունած դատավճիռները հայ ժողովրդի դահիճների նկատմամբ: 1919-ի Կ.Պոլսի թերթերի էջերը լի են երիտթուրքերի շարագործություններն ապացուցող, նրանց անարգանքի սյունին զամող բազմաթիվ նյութերով:

Թուրքական ստահող պրոպագանդան գերադասում է իր ունկնդիրներին տանել ստախոսության արահետներով: Բայց չէ՞ որ արաբ ժողովրդի հիշողությունից չի անհետացել այն ճշմարտությունը, որ այսօրվա սերունդների

հայերն ու պապերը ականատես էին կատարված ոճրագործությանը: Այդ նրանք էին, արաք ռամիկ, աշխատավոր մարդիկ, որ սրտաբաց ընդունեցին գողգոթայի ճանապարհներով անցած և հրաշքով փրկված հայ մարդկանց խմբերի քեկորներին:

Հայ մարդիկ սնվեցին, ապաքինվեցին, ոտքի կանգնեցին, հետո, շնորհիվ իրենց երկաթյա կամրի ու աշխատասիրության, ամրացան ու ծարձակեցին արաքական հյուրընկալ հողի վրա: Արաք Ֆայեզ էլ Ղոտեյնը¹ ժամանակին շատ լավ է նկարագրել թուրքական շարագործության ողջ զարեփությունը: Այդ գիրքը լույս է տեսել աշխարհի շատ լեզուներով, նաև արաբերեն: Այն ընթերցելով՝ ամեն ոք գաղափար կկազմի այսօրվա թուրքական ստերի ու կեղծարարության մասին:

Իսկ 1983-ի հունիսի 12-ին Անկարայի ռադիոն փորձում էր հավատացնել իր ունկնդիրներին, թե «խեղաթյուրելով 1915-ի հայտնի պատճառներով հայերին պատերազմական շրջաններից տեղափոխելու Օսմանյան կայսրության որոշումը՝ այն ներկայացնում են որպես հայերին ոչնչացնելու նպատակ հետապնդող որոշում»:

Այո՛, թուրքական պրոպագանդան շարունակում է ստել ու կեղծել պատմության փաստերը: Հաղորդաշարից պարզ է դառնում, որ այսօր նույնպես, ինչպես երեկ, թուրքական քաղաքական կյանքը տնօրինողները, որոնք իր իսկ՝ թուրք ժողովրդի թշնամիներն են, չեն հանդուրժում հայրենիք ունենալու հայ ժողովրդի իրավունքը: Մյանով են պատճառաբանված թուրքական պրոպագանդայի կողմից Սովետական Սոցիալիստական Հայաստանի պետականության անտեսումը, նրա հասցեին վիրավորական ոտնձգությունները, այն պատճառով, որ անդամն է հզոր Սովետական Միության, եղբայրական դաշինքով զոդված է ռուս և մյուս ժողովուրդների հետ:

Սովետական թուրք մարդիկ խաղաղություն ու քարեկամություն են ուզում աշխարհի բոլոր ժողովուրդների, այդ թվում՝ թուրք ժողովրդի հետ: Թուրք ժողովրդի ներկա սերունդները պետք է խմանան պատմական ճշմարտությունը: Դա է փոխըմբռնման հասնելու միակ հուսալի ուղին:

23.08.1983 թ.

Պրոֆ. Ջոն Կիրակոսյան

¹ Ֆայեզ էլ Ղոտեյն – Խարբերդի գավառի մայրաքաղաքի, ազգությամբ արաք, 1915-ին, ծառայելով Դիարբեքիում, ականատես է եղել երիտթուրքական իշխանությունների հակահայկական գործողություններին, 1917-1918 թթ. ֆրանսերեն, անգլերեն և գերմաներեն լեզուներով հրատարակել է «Սի արաք մահմեդականի վկայությունը հայերի անմեղության և կոտորածների վերաբերյալ» գրքույկը - Ա.Ա.:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ ՆՈՐ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ¹

Սովետական Միության գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտը լույս է ընծայել «Թուրքիայի պատմության ուրվագծեր» ուսումնասիրությունը², որն ստեղծվել է սովետական անվանի թուրքագետներ Սվետլանա Օրեշկովայի, Մանվել Հասարաթյանի և Յուրի Պետրոսյանի համատեղ ջանքերով:

Սվետլանա Օրեշկովան միջնադարյան Թուրքիայի ճանաչված մասնագետ է: Նրա գրչին է պատկանում ներկա գրքի առաջին բաժինը, որն ընդգրկում է 9-18-րդ դարերը:

Մանվել Հասարաթյանը և Յուրի Պետրոսյանը սովետական թուրքագիտության ճանաչված ու անվանի դեմքերից են: Նրանց գրչին են պատկանում բազմաթիվ թուրքագիտական աշխատություններ՝ գրքեր, հոդվածներ: Յուրի Պետրոսյանը գլխավորում է ՍՍՀՄ ԳԱ-ի Մոսկվայի արևելագիտության ինստիտուտի Լեհինգրադի մասնաճյուղը: Հատկապես հայտնի է նրա «Երիտթուրքական շարժում» (ռուսերեն) աշխատությունը: Մանվել Հասարաթյանն աշխատում է Մոսկվայի նույն ինստիտուտում՝ որպես բաժնի վարիչ: Առանձնապես հետաքրքրություն են ներկայացնում Թուրքիայում ազգային հարցին նվիրված նրա ուսումնասիրությունները: Ընթերցողներն ուշադրությամբ են հետևում քրդական հարցի շուրջ նրա կատարած հրապարակումներին: Յու. Պետրոսյանը գրել է գրքի երկրորդ բաժինը՝ նոր շրջանին նվիրված մասը (18-րդ դարի ավարտ – 1917 թ.), իսկ Մ. Հասարաթյանը՝ նորագույն շրջանի պատմությունը (1918-1980 թթ.):

Գիրքը նախատեսված է ինչպես մասնագետների, այնպես էլ ընթերցող լայն շրջանների համար: Հեղինակներն օգտագործել են Թուրքիայի պատմությանը վերաբերող բազմաթիվ նոր աղբյուրներ և հրապարակումներ:

Ս. Օրեշկովան հանգամանորեն անդրադարձել է թյուրք թղչկորական ցեղերի տեղաշարժերին, Փոքր Ասիայում նրանց հաստատվելու մանրամասներին: Ըստ հեղինակի թյուրք ցեղերն առաջին անգամ Փոքր Ասիայում և

¹ Կիրակոսյան Ջ. Սովետական արևելագետների նոր հրապարակումը // «Սովետական Հայաստան» (Ե.), 1983, N 10, էջ 29-30: Նույնը՝ «Արարատ» (Բեյրութ), 25, 28 սեպտեմբերի: «Չարրոնք» (Բեյրութ), 13 նոյեմբերի: «Ազգային մշակույթ» (Բեյրութ), 20 նոյեմբերի: «Լրարեր» (Լ.Ա.), 10 դեկտեմբերի: «Աշխարհ» (Փ.), 1984, 7 հունվարի, 4, 11, 18 փետրվարի: «Սևան» (Բ.Ա.), 1984, 1 հունվարի: «Հասար» (Փ.), 1984, 3 հունվարի: «Ալիք» (Թեհրան), 1984, 25 մարտի: «Ասպարեզ» (Լ.Ա.), 1984, 2 հունիսի: «Երիտասարդ Հայաստան» (Ջեռսի Սիթի).- 1984, օգոստոս: «Պայլար» (Բուսոն), 1984, 27 օգոստոսի: «Ազդակ» (Բեյրութ), 1984, 24, 25 օգոստոսի: Տե՛ս նաև՝ Киракосян Дж., Кондакчян Р. Очерки истории Турции, М.: Наука, 1982, 294 с. // Вестник Ереванского университета (Е.), 1983, N 2, с. 263-266:

² Гасратян М.А., Орешкова С.Ф., Петросян Ю.А. Очерки истории Турции, М.: Наука, 1982, 294 с.

Բալկաններում երևացել են ժողովուրդների մեծ վերաբնակեցման ժամանակ (մեր թվարկության առաջին դարերում): Սակայն մինչև 7-րդ դարը այս շրջանները թափանցած թյուրք ցեղերի զանգվածները, որոնք կապված էին հույների, քուլդարների, սուվարիների, խազարների և այլ տոհմային միավորումների հետ, արագորեն խառնվում և կուլ էին գնում տեղական էթնոսին և քիչ քե շատ հետք չեն բողել ռեգիոնի էթնիկական պատմության մեջ: 8-10-րդ դդ. Միջին Ասիայից և Նորասանյից սկսվում է թյուրքական ավելի նկատելի հոսք դեպի Փոքր Ասիա: Արքապետների խալիֆայությունն արդեն նրանց օգտագործում էր որպես զինվորական ուժ իր սահմանների պաշտպանության գործում: 11-12-րդ դդ. նրանք արդեն բյուզանդական տիրույթների վրա բնակություն հաստատելու փորձեր էին անում: 11-րդ դարում Միջին Ասիայում ասպարեզ են իջնում օգուզական ցեղերը (սրանց նաև թուրքմեններ էին անվանում), որոնցից սերվեցին սելջուկները: 10-11-րդ դդ., դառնալով մուսուլմաններ, սրանք կոխվ տվեցին օգուզների հեթանոս առաջնորդների դեմ և ստեղծեցին «Մեծ սելջուկներին» տերությունը, որը տարածվեց Միջին Ասիայից մինչև Միջերկրական ծով:

Հնդիակը հանգամանորեն ցույց է տալիս, որ թյուրքական ցեղերը եկվորներ էին, որ նրանց քոչվորական մակարդակն անհասնեմա տ ցածր էր Փոքր Ասիայի և Հայաստանի մուսուլյաց բնակիչների մակարդակից: 13-րդ դարում «քաղաքներում և գյուղացիության շրջանում թյուրքերը դեռևս բնակչության փոքրամասնությունն էին կազմում»:

Թուրքական էթնիկական ընդհանրությունը կազմավորվել սկսեց 11-13-րդ դդ.: Գրքում պատկերված է առաջին օսմանների իշխանության հաստատումը, մեկնաբանված են Եվրոպայում և Ասիայում նրանց զավթողական քաղաքականության մանրամասները: Երկար ժամանակ ցեղը չուներ ինքնանվանում, միասնական էթնոնիմ:

«Թուրք» (թյուրք) բառը նշանակում էր լոկ հասարակ մարդ: «Օսմանը» (օսմանցի, օսման) տերմինը էթնոնիմ չէր դարձել, այն նշանակում էր լոկ հպատակությունը կամ պատկանելությունը կառավարող դասակարգին: Փոքր Ասիայում եկվոր թուրքերը նվաճողներ էին: Կ.Մարքսը նշել է, որ նրանք օկուպանտներ էին: Օսմանյան կայսրության իշխանությունն իրեն ենթարկեց հին ու քաղաքակիրթ բազմաթիվ ժողովուրդների՝ նրանց նկատմամբ կիրառելով խտրականության դաժան քաղաքականություն: 18-րդ դարի ավարտին, պարտություն կրելով եվրոպական տերությունների միացյալ ճակատի հետ բախվելուց, «թուրքերի հարձակողական ուժը կուտրվեց» (Ֆ.Է.Նգելս):

Գրքում բացահայտված են Արևելյան հարցի էությունը, եվրոպական տերությունների մրցապայքարի դրսևորումները Օսմանյան կայսրության ժառանգության համար՝ 18-րդ դարի ընթացքում: Օսմանյան կայսրության ոչ թուրքական շրջանների ճակատագիրը դառնում էր ոչ միայն ներքին թուրքական, այլև միջազգային քաղաքականության հարց:

Օսմանյան կայսրության սուլթաններն անվերջ նվաճողական պատերազմներ էին մղում աշխարհի տարբեր կողմերում, տարբեր ժողովուրդների ու երկրների դեմ: Հենց որ սպառվեց արտաքին քաղաքականության նվաճումների ուժը, սկսվեց ներքին կողուպուտի, ջարդերի ու կոտորածների շրջանը: Բալկաններում քե Արևելքում ազատագրական կռիվի այլը քարծրացավ բուրջական տիրապետության դեմ:

Պատմական ճակատագրի քերումով հայ ժողովրդի ամենասուվար հատվածի բազմադարյան կյանքն ընթացել է բուրջական պետականության իշխանության ներքո: Թուրքական իրականության դառնադետ իրադարձությունները, հետամնացությունը, կառավարական բռնակալական ձևերն ու մեթոդներն իրենց բացասական կնիքն են դրել արևմտահայության կյանքի բոլոր կողմերի վրա: Թուրքիայի պատմությանը ծանոթանալով՝ մենք գաղափար ենք կազմում մաս հայ ժողովրդի հետ կատարվածի մասին:

19-րդ դարում Օսմանյան կայսրությունը ոչ թուրք ժողովուրդների ազատագրական պայքարի մշտական ասպարեզ էր: Գրքում շեշտված է, որ Աբդուլ Համիդ II-ը և նրա շրջապատի վերնախավն այս խնդիրը լուծելու համար բազմազգ երկիրը վերածեց բանտի: Նրանք իրենց տիրապետությունն ապահովում էին կրոնական և ազգային բռնությունն հրահրելու միջոցով: Գրքում հիշատակվում է «համիդիե» անկանոն հեծելազորը, նրա կատարած սև դերը: «Անգուսպ տեռորից առանճնապես տուժեցին հայ բնակչությունն ունեցող շրջանները, - ասված է գրքում: - Աբդուլ Համիդ II-ն ու նրա մերձավորագույն շրջապատն են պատասխանատու 1894-1896 թթ. կազմակերպված հայերի սարսափելի կոտորածի համար, որը ցնցեց աշխարհը»: Հեղինակներն այն կարծիքին են, որ արդեն 80-ական թթ. սուլթանը հայերին ֆիզիկապես ոչնչացնելու քաղաքականություն էր իրականացնում, բայց դա վտանգավոր չափեր ընդունեց Սասունի 1894-ի սարսափելի կոտորածից հետո: Այստեղ մատնացույց է արվում համիդականության գաղափարաբանության խաղաղացած սև դերը, քաղաքական մի ուղղություն, որ խրախուսում էր ինքը՝ «ճարպիկ և ննեզ քաղաքագետ» Աբդուլ Համիդ II-ը: Գրքում բացահայտված է արևմտյան տերությունների խաղաղացած դերը: Բուրժուական դիվանագիտությունն օգտագործում էր Կրետեի հույների ապստամբության փաստը, Մակեդոնիայի ազատագրական պայքարը, մաս Հայկական հարցը կապիտալիստական հզոր տերությունների շահերին համապատասխան: Գրքում որոշակի տեղ է հատկացված Օսմանյան կայսրությունում բարենորոգումներ անցկացնելու անհաջող փորձերին, ցույց են տրված միջազգային դիվանագիտության գործողությունների, տերությունների քաղաքականության նպատակները:

Որոշակի հետաքրքրությամբ են կարդացվում երիտթուրքական շարժմանը նվիրված էջերը: Հեղինակներից Յ.Պետրոսյանը գրում է, որ «երիտթուրքերի գաղափարաբանության մեջ «օսմանիզմի» դուկտրինայի տեղ աստիճանաբար բռնեցին «հակաթուրքականության» և «համիդականության» հետադիմական կոնցեպցիաները: Երիտթուրքերը փաստորեն կոխի հայտարար-

րեցին ազգային-ազատագրական շարժումներին՝ արաբների, հայերի, քրդերի, արբանացիների արդարացի պայքարին: «Ժնչ վերաբերում է Հայկական հարցին, ապա կարելի է որոշակիորեն ասել, որ հեղափոխությունից հետո երիտթուրքերի ամբողջ քաղաքականությունը հանգում էր այն բանին, որպեսզի բույլ չտային Օսմանյան կայսրությունում ապրող հայերի վարչական, տնտեսական և կուլտուրական խնդիրներին կարգավորմանն ուղղված բարենորոգումների իրականացում: Երիտթուրքական կառավարողները, շարունակելով Աբդուլ Համիդ II-ի քաղաքականությունը, ստում էին ազգամիջյան հարաբերություններն Արևելյան Անատոլիայում, հասկապես թշնամություն սերմանելով քրդերի և հայերի միջև: Համենայնդեպս, այդ տարիներին երիտթուրքերը շատ բան նախապատրաստեցին հայերի ողբերգական ջարդի համար, որը տեղի ունեցավ Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումից անմիջապես հետո»:

Օսմանյան կայսրության արաբական վիլայեթներում երիտթուրքական իշխանությունները դաժանորեն ճնշում էին ազգային-ազատագրական ոգորումները, դատական պրոցեսներ կազմակերպում արաբ հայրենասեր-ազգային գործիչների նկատմամբ: Հարյուրավոր մարդիկ մահապատժի ենթարկվեցին, արաբ ժողովրդի արդարացի գործի բազմաթիվ ռաիվիրաներ բանտերը նետվեցին, արարվեցին կամ արտաքսվեցին: Թուրքական տիրապետության վերջին տարիներն իսկական չարիք դարձան արաբ աշխատավորության համար: Գրքի էջերում համազօլ կերպով ցույց է տրված ազգային հարցում երիտթուրքական կառավարության մեծապետական շովինիզմի հակամարդկային, հակաժողովրդական էությունը: Երիտթուրքերի պարագլուխներն ազգամիջյան երկպառակությունները հրահրում էին նաև սոցիալական սուր պրոբլեմներին ժողովրդի ուշադրությունը շեղելու համար:

Գրքում ճշմարտացիորեն է քացահայտված Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի նկատմամբ երիտթուրքական ազգայնամոլների կատարած շարագործության ողջ զարեխությունը: «Ձեռնամուխ լինելով հայերի կազմակերպված ոչնչացմանը, - կարդում ենք գրքում, - երիտթուրքական կառավարությունը թխեց մի վարկած այն մասին, թե հայկական բնակչությունը «տեղահանվում է իր մշտական բնակության վայրերից դեպի երկրի խորքերը» «ազմական նկատառումներով»: Իրականում «տրիումֆիստները», որ դարձավ հայ ժողովրդի դահիճը, մշակեց և իրականացրեց հայերի զանգվածային ցեղասպանությունը: Շատ քաղաքներում ու գյուղերում բնակչությունն անձնվիրաբար դիմադրում էր դահիճներին, քայց ուժերը խիստ անհավասար էին: Մեկուկես միլիոն հայ սպանվեց, մոտ 800 հազար հայ գաղթական հանգրվանեց այլ երկրներում»: Հեղինակները հիշատակում են ֆրանսիացի հրապարակախոս Ռենե Պիոնի բնութագրողը: Նա գրել է. «Հայերի՝ կանգնեց, երեխաների և ծերերի տեղահանությունը լոկ նենգորեն քողարկված մահավճիռ էր»: Հատկապես մատնացույց են արված Իթքիիաղի և զինվորական իշխանությունների կողմից ստեղծված «Հատուկ կազմակեր-

պության» սև գործերը կոտորածի կազմակերպման, լրտեսության, ոստիկանական պրոֆուկացիաների կազմակերպման ասպարեզում:

Հեղինակները դատապարտում են երիտթուրքական 1918-ի ինտերվենցիան Անդրկովկաս: Գրքում կարդում ենք. «1918-ի ապրիլին թուրքական զորքերը գրավեցին Կարսը և Բաթումը, մայիսի 15-ին՝ Ալեքսանդրապոլը (այժմ՝ Գյումրի), հետո սկսվեց հարձակումը Բաքվի վրա, որը գրավեց սեպտեմբերի 15-ին և կողոպուտեց թուրքական զորքերի կողմից: Բաքվում օկուպանտները բնակչության իսկական կոտորած սարքեցին: Անտանտի տերությունները հովանավորեցին երիտթուրքերի այդ զավթողական գործողությունը՝ եմքաղբեով, որ թուրքական ինտերվենցիան կխեղդի հեղափոխական շարժումն Անդրկովկասում և կբուլացնի թուրքական զինված ուժերը Միջագետքում: Էնվեր-փաշայի անդրկովկասյան արկածախնդրությունը հեշտացրեց անգլիական գաղութարարների մուտքը Մոսուլ, Միջագետք»:

Գրքի ընթերցողը որոշակի գաղափար է կազմում ժամանակակից Թուրքիայի վերջին տասնամյակների պատմության մասին: Վերջին գլուխներում քննարկված են երկրի տնտեսական ու քաղաքական խնդիրները, ցույց է տրված Թուրքիայի արտաքին քաղաքականության էությունը: Բանվոր դասակարգի պայքարի հարցերը, արտագնացությունը, արհմիութենական գործունեությունը, ագրարային հարցի բնույթը և այլ խնդիրներ պարզաբանված են համոզիչ գծերով: Գրքում որոշակի տեղ է հատկացված միջկուսակցական պայքարին, Ժողովրդահանրապետական կուսակցության (Էջևիթ¹) և Արդարության կուսակցության (Դեմիրեշ²) հակամարտության լուսաբանմանը, Էրբականի³ կրոնամոլական քարոզների ու Թյուրքեշի համաթուրքականության գաղափարախոսության հակաժողովրդական, հետադիմականության էության քննադատությանը:

Թուրքիայի մասնակցությունը Հյուսիսատլանտյան պակտին, նրա համագործակցությունը ԱՄՆ-ի ռազմամոլական ծրագրերին բացահայտված են խնդրի բազմակողմանի իմացությամբ: Թուրքական պետական գործիչները մշտապես շեշտում են Թուրքիայի հավատարմությունը Հյուսիսատլանտյան պակտին, ԱՄՆ-ի հետ նրա ռազմաքաղաքական դաշինքին: 1982-ի նոյեմբերի 29-ին Բյուրսելում Թուրքիայի ներկայացուցիչներն ստորագրեցին «Վստահության հուշագիր», ըստ որի Արևելյան Անատոլիայում (Արևմտյան Հայաս-

¹ Բյուլենտ Էջևիթ (1925-2006), թուրք քաղաքական գործիչ, բանաստեղծ, գրող, քարզանհիչ, 1972-1980 թթ.՝ Ժողովրդահանրապետական կուսակցության, ապա 1989-2004 թթ.՝ Դեմոկրատական ժախ կուսակցության ղեկավար, 1977, 1978-1979, 1999-2002 թթ.՝ ԹՀ վարչապետ - Ա.Կ.:

² Սուլեյման Դեմիրեշ (ծնվ. 1924 թ.), թուրք քաղաքական գործիչ, 1987-ից՝ «Դողրու Յուլ» կուսակցության ղեկավար, 1965-1971, 1975-1977, 1977-1978, 1979-1980, 1991-1993 թթ.՝ ԹՀ վարչապետ, 1993-2000 թթ.՝ նախագահ - Ա.Կ.:

³ Նեջմետտին Էրբական (1926-2011), թուրք քաղաքական գործիչ, «քաղաքական իսլամի» հիմնադիրներից, 1996-1997 թթ.՝ ԹՀ վարչապետ - Ա.Կ.:

տանում) կառուցվում կամ վերակառուցվում են մի շարք ռազմական օդանավակայաններ, որոնք պետք է ծառայեն իմպերիալիզմի հակասովետական պլաններին:

Գիրքը գրված է մատչելի, կարդացվում է հետաքրքրությամբ:

ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԸԱՐՈՒՆԱԿՈՒՄ Ե ...¹

Պատմությունը կեղծելու թուրքական արշավանքը շարունակվում է: Վերջերս այն ընդունել է աննկարագրելի ծավալներ, այլանդակ ձևեր: Թուրքական մամուլը լի է հակատվեռական, հակահայկական հեյդուրամքներով: Թուրքական պետական շրջանակները փորձում են 1915-ի Հայոց ցեղասպանության ու կոտորածի մասին իրենց կեղծիքները լայնորեն տարածել աշխարհով մեկ, իրենց «տեսակետները» պարտադրել ամերիկյան, արևմտաեվրոպական մամուլին: Առանձնապես ակտիվացել են թուրքական դիվանագետները, որոնք չեն խորշում մեծ գումարներ ծախսելով գնել քուրժուակաճ մամուլի ազդեցիկ օրգանները՝ դրանց մեջ հրապարակելու բանիցս մեջտեղ բերված ու ծիծաղ շարժած ստախտության տարբերակները: Ըստ այդ «տեսակետների» հայերը ոչ թե գոհեր էին, այլ «ագրեստրներ»: Կա ստախտների մի նեցգ տեսակ, որ սուսն անընդհատ կրկնելով կարծում է, թե իրեն կհավատան: Եվ այսպես շարունակ մեծ աչքի առաջ ստույգ ծնում է մի այլ, ավելի այլանդակ ստու: Բայց ստին հավատացողները քիչ են: 1983-ի մարտի 15-ին «*Լոս Անջելես Թայմսի*» մեջ ոմն Նիկոլս Լուտինկտոն գրեց, թե «թուրքական պաշտոնական անձինք վախենում են, որ որևէ հանրային անկեղծ ու ճիշտ հաստատում կարող է հատուցման առաջարկների տեղիք տալ»:

1983-ի ապրիլի 23-ին «*Նյու Յորք Թայմսը*» տպագրել էր Կ.Մեյերի փորձիկ հողվածը արևմտահայության ողբերգության մասին: Նրա ձևակերպումներն ընդհանուր առմամբ ճիշտ պատկերացում են տալիս կատարվածի մասին. Թուրքիայի հայկական մեծ համայնքը 1915-ին դարձավ 20-րդ դարի առաջին գեոցիդի գոհը: Դա մի սարսափելի միջոցառում էր, որի հետևանքով ոչնչացվեց կան աքսորվեց 1,5 միլիոն արևմտահայ, գրում է նա, դատապարտելով ներկայիս թուրքական կառավարությանն այն բանի համար, որ նա հրաժարվում է ընդունել կատարվածը: Այս երևույթը շատ դիպուկ գնահատված է որպես «հիշողության կորուստ»:

Մայիսի 5-ին «*Նյու Յորք Թայմսը*» տպագրեց Վաշինգտոնում Թուրքիայի դեսպան Շուքրու Էլեգդադի² նամակը, որի մասին կարելի է ասել, թե

¹ Կիրակոսյան Ջ. Կեղծարարությունը շարունակվում է ... // «Մովեսական Հայաստան» (Ե.), 1983, N 11, էջ 23-25: Նույնը՝ «Ման» (Բ.Ա.), 1984, 22 հունիսի, 6 հուլիսի: «Արմենիա» – 1984, 2 հուլիսի: Տե՛ս նաև 1915-ի հայոց կոտորածի մասին թուրքական պատմական խեղաթյուրումները // «Ասպարեզ» (Լ.Ա.), 1983, 17 դեկտեմբերի: Տես նաև՝ Ամենավտանգավոր սուսն աղավաղված ճշմարտությունն է // «Կանչ» (Բնյուրթ). – 1983, 31 հուլիսի: «Լրաբեր» (Լ.Ա.), 1983, 13, 20 օգոստոսի, 3 սեպտեմբերի: «Աշխարհ» (Փ.), 1983, 3, 10, 17, 24 սեպտեմբերի: «Չափորոն» (Բնյուրթ), 1983, 17-19 օգոստոսի: «Արև» (Կահիրե), 1983, 1, 2, 4, 5, 7 նոյեմբերի:

² Շուքրու Էլեգդադ (ծնվ. 1924), թուրք դիվանագետ, քաղաքական գործիչ, քաղաքագետ, ԹՀ դեսպան Գապոնիայում (1970-1974), ԱՄՆ-ում (1979-1989), փոխ-

այնտեղ հին են սուտ պնդումները կամ սուտ են հին պնդումները: Դեպքում է, որ ժամանակին (1919-ին) թուրքական զինվորական դատարանը (որին նա «ցուցադրական է անվանում») դատել է երիտթուրք հանցագործներին: Ըստ դեպքանի՝ հայ ապստամբների մեղքն այն էր, որ ուզում էին Ռուսաստանի օգնությամբ ստեղծել «Հայկական պետություն թուրքական տերիտորիայի վրա»: Նա փորձում է հեղքել արևմտահայ բնակչության վերաբերյալ Կ.Սեյերի հիշատակած թիվը՝ 2 միլիոն 3 հարյուր հազար և ցույց է տալիս մեկ այլ թիվ՝ 1 միլիոն 3 հարյուր հազար: Որ ճիշտ չէ դեպքում, գիտեն բոլոր նրանք, ովքեր ծանոթ են պատմությանը, ծանոթ են ամենատարրական աղբյուրներին: Բայց, այնուամենայնիվ, հարց տանք թուրք դիվանագետին, իսկ ո՞ր անհետացան թեկուզ այդ 1,3 միլիոնը: Չէ՞ որ այդ թիվը վեց տասնամյակի ընթացքում պետք է եռապատկված, նույնիսկ քառապատկված լիներ: Թուրք դեպքում ծաղրում է Վերֆելի՝ «Մուսա լեռան 40 օրը» վեպը՝ նրանում հիշատակված եղելությունները համարելով ոչ արժանահավատ քաներ: Դեպքան Էլեգդադի բնութագրությամբ, հայերի «վերաբնակեցման» մասին կառավարության որոշումն «իրականացվել էր հայերի համար լավագույն պայմաններում»: Անավասիկ հայ ժողովրդի ոչնչացման ժամանակակից թուրքական մեկնաբանման ակնհայտ կտի դրսևորման մի բնորոշ օրինակ: Դեպքանն այսօրվա ամերիկյան հակասովետիզմի, հակառուսակառույցյան ակտիվ խնկարկումներից է: Նա հիշատակում է «Նյու Ռիպաբլիկ» թերթում տպագրված մի ոմն Ջոն Դեուվիի հոդվածն այն մասին, թե «հայերը դավաճանորեն թուրքական քաղաքները հանձնում էին ռուս զավթիչներին»: Թե՛ ամերիկացին, թե՛ թուրք դեպքանը պատմության անցքերը տեսնում են ամերիկյան իմպերիալիզմի, ՆԱՏՕ-ի այսօրվա հակասովետական պրիզմայի միջով: Նրանց պետք է խորհուրդ տալ՝ դիմելու Վաշինգտոնի ազգային արխիվին, որտեղ հազարավոր փաստաթղթեր կան, ուր պատմական իրողությունն է:

Մայիսի 2-ին Փարիզի «Մոնդո»-ը մի ամբողջ էջ նվիրեց արևմտահայության գեներոլի խնդրին: Բուրժուական այս ազդեցիկ թերթը նախ հիշատակում է Ֆրանսիայի արտաքին հարաբերությունների մինիստր Կլոդ Շեյտանի² տեսակետն այն մասին, թե «Օսմանյան կայսրության բնակիչ հայերը գեներոլի դի գոհ դարձան, ինչը Ֆրանսիան դատապարտում է. փաստերը մնում են փաստեր, և ոչ ոք իրավունք չունի դրանք փոխելու կամ ստիպելու՝ մոռանալ:

արտգործնախարար (1974-1979), խորհրդարանի անդամ Ժողովրդահանրապետական կուսակցությունից (2002-2011) - Ա.Կ.:

¹ Ֆրանց Վիկտոր Վերֆել (1890-1945) - ավստրիացի գրող, քանաստեղծ, հումանիստ, Մուսա լեռան հայերի ինքնապաշտպանությանը նվիրված «Մուսա լեռան 40 օրը» (1934) վեպի հեղինակ - Ա.Կ.:

² Կլոդ Շեյտան (1920-2012), ֆրանսիացի քաղաքական գործիչ, սոցիալիստ, դիվանագետ, Ֆրանսիայի դեպքան Ինդոնեզիայում (1966-1969), արտգործնախարար (1981-1984), եվրոպական կոմիսար (1985-1989), Եվրախորհրդարանի անդամ (1989-1994) - Ա.Կ.:

Ֆրանսիական կառավարությունը ցավ է հայտնում թուրքական կառավարության բռնած դիրքի առթիվ, որը համառոտ է՝ այդ իրադարձությունները դիտելով որպես ռուսական բանակի հարձակման հետևանքով առաջացած ապստամբության ճնշում»։ Մինիստրը միաժամանակ այն կարծիքն է հայտնել, թե այսօրվա թուրքական կառավարությունը չպետք է պատասխանատվություն կրի այն ողբերգության համար, որին հայ ժողովուրդը ենթարկվել է ավելի քան 60 տարի առաջ։

Նույն էջի վրա «Մոնո»-ը տեղադրել է Փարիզում Թուրքիայի դեսպան Ադնան Բուլաղի «հոդվածը՝ «Անկարայի տեսակետը» վերտառությամբ, «Օտարերկրյա շահերի ծառայության մեջ» վերնագրով։ Թուրք դեսպանը երիտասարդ թուրքերի մարդակերական գործողություններն արդարացնող պաշտպան-փաստաբանի դերում է։ Նա խոսում է ռազմաճակատամերձ շրջաններից հայերին տեղահանելու և նրանց Մյուխ տեղափոխելու անիրաժեշտության մասին, բայց փորձում «մոռանալ», ֆրանսիական ընթերցողից թաքցնել, որ Աղաբազարն ու Բրուսան, Անկարան ու Մալաթիան, Խարբերդն ու Կայսերին, Արաբկիրն ու Վանը ճակատամերձ չէին, բայց ենթարկվեցին միևնույն ջարդարարական հարվածներին։ Ավելորդ է անդրադառնալ նրա բոլոր հիմնագուրկ պնդումներին։ Այսօրվա Թուրքիայի զինվորական խումտայի գաղափարախոսներից այլ բան սպասել չի կարելի։ Չէ՞ որ այսօր «եպարե-սիաները թուրք ժողովուրդի դեմ որոշ շրջաններում ընդունում են գենոցիդի մասշտաբներ» (ֆրանսիական ամսագիր «Վի Ուլիքիերի», 1983, մայիս)։

Դեսպաններին, նրանց հայրենակիցներին հիշեցնենք նաև 1918, 1919 թթ. ինչպես թուրքական, այնպես էլ արևմտաեվրոպական ու ամերիկյան թերթերի էջերում տպագրված խոստովանություններ, փաստեր, որոնք ճշմարտության լույս են սփռում անցյալի դառն իրողությունների վրա։

Տակավին 1916-ի սեպտեմբերի ավարտին Կ.Պոլսում տեղի ունեցած իրթիհարական համազումարում ոմանք ստիպված եղան անդրադառնալ հայերի տեղահանման և դրա հետ կապված որոշ պաշտոնական անձանց կողմից կատարված չարաշահումների հարցին։ Թալեաթը և մյուսները փորձում էին ամեն ինչ բացատրել հայերի ռուսական կողմնորոշման, նրանց ապստամբական ելույթներով, ռուսական բանակի հետ համագործակցելու փաստով։ Չնայած դրան, կատարված չարագործությունն այնքան ահեղի էր, այնքան մեծ էր արտասահմանում ծայր առած արձագանքը, որ համագումարն ստիպված արձանագրեց հայերի նկատմամբ տեղ գտած չարաշահումները, որոշում ընդունեց անհապաղ հանձնաժողովներ ուղարկել տեղերը՝ կատարվածը «հետարձնելու» նպատակով (Раздел Азиатской Турции по секретным документам министерства иностранных дел, под редакцией Е.А.Адамова. - М. - 1924. - с. 203-204, 246)։ Դրան անմիջապես հետևեց Թալեաթի հանձնարարությամբ թխված մի ստահող գրքույկի հրապարակում (Vérité sur le mouvement révolutionnaire Arménien et les mesures gouvernementales. - Constantinople. - 1916), որի նպատակն էր չքնեղանալը։ Սակայն 1918-ի ավարտին պատերազ-

մում Օսմանյան կայսրության պարտությունից անմիջապես հետո, բուն Կ.Պոլսում հրապարակ հանվեցին, մինչ այդ երիտթուրքական զինվորական կրնկի տակ ծվարած օսմանյան պառլամենտի ամբիոնից ու թուրքական մամուլի էջերում հրապարակվեցին այնպիսի փաստեր, որոնք լույս սփռեցին կատարված հանցագործության մութ ծալքերի վրա: Հետո երիտթուրքական պարագլուխներին դատեցին զինվորական դատարանի միջոցով: Արդեն 1918-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Կ.Պոլսի մամուլի էջերը լի էին ճշմարտությունը պարզելուն նպաստող հարուստ վկայություններով: Թեթերի էջերում հրապարակվեցին Թալեաթի, Բեհաեդդին Շաքիրի, Նազիմի հակահայկական հրամանների, շրջաբերականների պատճենները: Դրանցից մեկում ասված էր. «Կես առ կես գործադրեցեք հայերը սպանելու մասին Ձեզի տրված հրամանները» («Տամանակ», 11.12.1918): Այդ բերթի նույն համարում տպագրված էր Բեհաեդդին Շաքիրի մի ծածկագիր շրջաբերականը՝ գրված չափածո և իղված նահանգապետներին՝ որպես ազդանշան: Ահավասիկ քարգմանությունը.

Թող զենք չպայթի,

Թող զինվորը չընէ,

Թող հայ չմնա:

Մեծերը մորթոտել,

Գեղուհիներին ընտրել,

Մյուսները տարագրել:

1980-ին Նյու Յորքում լույս տեսավ «Յոզգատի հայասպանության վերագրական պատմությունը» նյութերի ժողովածուն, որը պատրաստել է Գրիկերը¹: Այս գրքում չափազանց արժեքավոր փաստաթղթեր, վկայություններ են հրապարակված (թուրքերեն և հայերեն), քաղված 1918-1919 թթ. թուրքական պաշտոնական աղբյուրներից, մամուլի էջերից: Այս գրքից տեղեկանում ենք, որ տակավին 1918-ին Կ.Պոլսում սուլթանական հրովարտակով թուրքական կառավարությանը կից ստեղծվել էր մի հարցաքննիչ հանձնախումբ, որը հանձնարարություն էր ստացել հավաքել հայասպանության վերաբերյալ բոլոր պաշտոնական վավերագրերը: Այս հանձնախմբի զլուխ կանգնած էր Մազհար-բեյը (Անկարայի նախկին կուսակալը, որը 1915-ի հունիսին պաշտոնաձև էր արվել հայերի տեղահանության վերաբերյալ Թալեաթի հրամանները չկատարելու համար): Մազհար-բեյը երկրի տարբեր կենտրոնները հղած հատուկ հարցաբերթիկների միջոցով հսկայական պաշտոնական և մասնավոր գրավոր վկայություններ հավաքեց, որոնք դրվեցին զինվորական դատարանի տրամադրության տակ:

¹ Գրիկեր (Գրիգոր վարդապետ Կերեկեյան) (1911-1988), կրոնական գործիչ, պատմաբան, ուսումնասիրել է թարգմանել է հայերի ցեղասպանությանը վերաբերող թուրքական պաշտոնական փաստաթղթեր - Ա.Կ.:

1918-ի դեկտեմբերի 12-ին Յոզզատի մյութեսարիխի Ջեմալ-բեյը հարցաքննիչ հանձնախմբին պաշտոնական վկայություն տվեց՝ կարևոր տեղեկություններ հայտնելով առանձին պաշտոնական դեմբերի հանցավոր արարքների մասին: Այսպես օրինակ, նա պատմեց ոստիկանապետ Թևֆիկ-բեյի կազմակերպած հրոսակների, նրանց կողմից հայերի սպանությունների մասին: Երբ Ջեմալ-բեյին պաշտոնաձև անելուց հետո Յոզզատ եկավ Քեմալ-բեյը, նա անմիջապես ձեռնամուխ եղավ Յոզզատի ու նրա շրջակա գյուղերի 35 հազար հայության կոտորածի իրականացմանը:

Թրքոսի Խալիդե Էղիպ խանումը (բանաստեղծուհի, գրական, հասարակական-քաղաքական ակտիվ գործիչ) 1918-ի հոկտեմբերի 21-ին մի հայտարարություն հրատարակեց թուրքական «*Աարք*» թերթում, ուր ասված է. «Այն օրերին, երբ մենք գործ էինք, աշխատեցինք քրիստոնյաներին, մասնավորապես հայերին միջնադարյան մեթոդներով բնաջնջել...»: «Այսօր մեր ազգային կյանքի ամենից տխուր և սև օրերն ենք ապրում: Ամերիկան և Անգլիան մեզ նկատում են մի պետություն, որն իր ամեն ինչը հպատակներին և զավակներին է կոտորել: Այժմյան կառավարությունը հայտարարում է, թե հայերին պետք է իրենց տեղը վերադարձնենք»: Նա հավատ չէր ընձայում նման խնդրի հաջող իրականացման հնարավորությանը, նահանգների գործադիր իշխանության կարողությանը և արդարադատ թուրքերից, հայերից ու ամերիկացիներից խառը հանձնաժողով կազմելու խնդիր էր հարուցում: Երկու ամիս անց «*Ենի Գյուն*» թերթում Էղիպը դատապարտում էր երկխոսությունների կուսակցությանն ու կառավարությանը՝ հայերի դեմ կատարված ճորխների համար՝ եզրակացնելով, թե «թուրքերն ապացույց տվին, որ իրենք անկարող են քաղաքակրթված կառավարություն կազմելու»:

Չինադադարից հետո օսմանյան պառլամենտի քննարկման ամենակարևոր նյութը դարձավ հայերի կոտորածի խնդիրը: Հոետորների ելույթների արձանագրությունները տպագրված են ինչպես զինվորական ատյանի պաշտոնաթերթ «*Թարվիմ-ի վերայի*», այնպես և այլ թերթերի էջերում: «*Թարվիմ-ի վերային*» 1919-1920 թթ. նույնությամբ տպագրում էր զինվորական դատարանի նիստի արձանագրությունները, մյուս թերթերն անդրադառնում էին առանձին փաստերի, ատենադրությունների կարևոր կետերին:

Տրապիզոնի երեսփոխան Հաֆեզ Մեհմեդ-բեյը պառլամենտի նիստում փաստերով հաստատել էր, թե հայերի կոտորածը հանգամանորեն կազմակերպված էր երիտթուրքական կառավարության կողմից և գործադրվել էր «Թեշվիպ-ը մահուսեի» հրոսակապետերի և հրոսակների միջոցով: Թուրքական պառլամենտում խոսք էր գնում այն մասին, թե պետք է դատվեն ոչ միայն կոտորածի կազմակերպիչները, այլև նրա շարքային մասնակիցները: «Այս դատակարգի հանցավորները պետք է դատվեն հասարակ դատարանների միջոցով, արձանագրվում է պառլամենտի որոշման մեջ: Խճնդիր էր դրվում դատապարտել այն ճորխները, որ գործել էր ամբոխը՝ պաշտոնյաների հավանությամբ ու մեղսակցությամբ»: Ոմանք մեղադրում էին թուրքական ազգային

ժողովը՝ այն հռչակելով մեղսակից կատարված շարագործություններին: Մի քանի խոսքով ընթերցողին հիշեցնենք Թալեաթի կառավարության անկումից հետո (7 հոկտեմբերի, 1918 թ.) բուրքական պետության վերնահարկում տեղի ունեցած կարևոր անցումային մասին: Ընդհանրապես, սկսած 1918-ի հոկտեմբերից, այն քանից հետո, երբ նույն ամսի 7-ին Թալեաթի երիտթուրքական կառավարությունը հրաժարական տվեց, քննադատությունը, վերագնահատումները, դատապարտումները դարձան բուրքական մամուլի գլխավոր զբաղմունքը: Հայկական թեման՝ արևմտահայության տեղահանման ու ոչնչացման խնդիրները, Օսմանյան պետության ներսում հայոց խաղացած դերի տարբեր կողմերը քննարկվում էին ամենուրեք: Նախապես Հալեայի, ապա Կոնիայի կուսակալ Ջելալ-բեյը «*Լաքըք*» թերթում պատմել էր հայոց տեղահանության չափազանց կարևոր մանրամասներին, իր բռնած դիրքի մասին: Նա գրել է. «Եթե աշխարհի վրա մեր բոլոր բշտամիները իրար միանային մեր յեմ և ուզեին այսպիսի մեծագույն կորուստ պատճառել մեզ, պիտի չկարողանային հաջողել»: «Հանրային հարստության գրեթե քառորդը հայերի ձեռքին էր, - գրում է նա: - Հայերն իրենց ձեռքում ունեին երկրի վաճառակա՞նության և արդյունագործության գրեթե կեսը: Բնաջնջել հայերին, հասնա՞րդ է կայսրության քանդումին, մի կորուստ, որը կարելի պիտի չլինի վերագտնել դարերի ընթացքում»: Ջելալ-բեյը իր տեսակետները չէր թաքցրել ո՛չ կուսակցությունից, ո՛չ երեսփոխաններից: Բայց ոչ ոք ականջ չէր դրել նրա խորհուրդներին:

«*Ռենեսանս*» թերթը 1918-ի դեկտեմբերի 18-ին տպագրեց «*Մորմինգ պոստ*» անգլիական թերթին թագաժառանգ իշխան Աբդուլ Մեջիդի տված հարցազրույցի տեքստը: Թագաժառանգը չէր թաքցնում, որ «կոտորածը Թալեաթի և Էնվերի գործն էր», որ «եթե Գեյրմանիան ուզեր, կարող էր սպանո՞ղ արգելել» և այլն և այլն: Էնվերը թագաժառանգից չէր թաքցրել, որ նրանք բնաջնջման վերաբերյալ «վճռական որոշումներ» էին ունեցել: Թագաժառանգը պատմում էր, թե իբր ինքը սուլթանին աղաչել էր միջամտել, բայց ոչինչ չէր ստացվել:

Մամուլի էջերում բացահայտվում էին նոր փաստեր, հրապարակ էին հանվում նոր հանցավորներ: Թուրքական «*Սարահ*» թերթը մի քան ցամակ էր հղել արդարադատության նախկին միմիստր Փիրիզադի Իբրահիմ-բեյին՝ նրան ուղղելով բազմաթիվ մերկացնող հարցապնդումներ. «Երիտասարդ թուրքերի կուսակցության հրոսակետերի ժողովատեղի մեջ ընդունված որոշման համաձայն չէի՞ր, որ բանտերից ազատ արձակել տվիր ամենից սարսափելի ոճրագործներին, միակ նպատակով՝ հայերին իրենց բնակարաններից արտաքսելու համար և, հակառակ նրանց քաջարձակ անմեղության, նրանք բնաջնջել տվիր վայրագությամբ»: «Մի՞թե դու չէիր, որ հրճվում էիր հայ ժողովրդի սպանդի տեսարանի առջև, որ գործադրվում էր կացնի, ուրազի ու բրիչի հարվածներով»:

Մրանք փաստեր են, որոնք շրջանցել նշանակում է փախուստ տալ ճշմարտությունից: Հենց այդպես են վարվում այսօրվա պատմության թուրք կեղծարարները:

Հայասպանության պատասխանատուներին դատելու համար սուլթան Մեհմեդ VI Վահիդեդդինի կայսերական հրովարտակով 1918-ի դեկտեմբերին նշանակված թուրքական արտակարգ զինվորական դատարանի նիստերում արծարծված բոլոր փաստագրությունները հիմնված էին նախ երիտթուրքական կառավարության պաշտոնական վավերագրերի բովանդակության, գանազան պաշտոնական և մասնավոր վկայությունների վրա: Այդ վավերագրերը հրապարակվեցին ինչպես զինվորական առյուծանի «*Մարվին-ի վերայի*» պաշտոնաթերթի էջերում, այնպես և բազմաթիվ այլ թերթերի էջերում: Այդ նյութերի հրապարակմանը հատկապես մեծ տեղ էր հատկանցնում «*Ռենեսանս*» ֆրանսերեն թերթը, որը լույս էր տեսնում Կ.Պոլսում:

Թուրք դիվանագետներ, դեսպաններ Էլեգդադը, Բուլադը և նրանց մյուս գործընկերները ցանկության դեպքում կարող են ծանոթանալ «*Ռենեսանսի*» նյութերին:

Երբ 1918-ի դեկտեմբերի 21-ին օսմանյան պառլամենտում քննարկում էին երիտթուրք պարագլուխների հանցանքների հետ կապված խնդիրներ, Թուրքիայի ներքին գործերի մինիստր Մուստաֆա Արիֆ-բեյը, ակնարկելով հայ ժողովրդի քնաջնջումը, հայտաբարեց. «Լույս է սփռվում հայերի դեմ գործված վարագոթությունների վրա, վարագոթություններ, որոնք ամբողջ մարդկության զգվանքն առաջացրին. մեր երկիրը մեզ հանձնվեց վերածված մի հսկայական սպանդանոցի»:

1918-ի ավարտին՝ 1919-ի սկզբին, Կ.Պոլսի «*Մարահ*» թերթի խմբագրապետ Ալի Քեմալը և «*Ենի Գյուն*» թերթի խմբագրապետ Յուհուս Նադին մի շարք խմբագրականների մեջ վիճարարություն էին բացել հայասպանության պատասխանատուներին բացահայտելու, նրանց մեղքը հաստատելու խնդիրների շուրջ: «*Մարահի*» խմբագրապետը գրեց. «Աշխարհը զիտի և այս ճշմարտությունը, որ հայերի կոտորածները կազմակերպվեցին կենտրոնական կոմիտեի (խոսքը իթթիհադական ղեկավարության մասին է - Ջ.Կ.) հրամաններով: Այս հրամանները հաղորդվեցին մասնավոր պատվիրակների միջոցով և գործադրվեցին իր իսկ հսկողության տակ, ավագակների միջոցով: Այս բանը երևան հանել մի՞թե թուրքերին և բրքության դատին ծառայել չէ, հարց էր տալիս խմբագիր Ալի Քեմալը: - Ուզո՞ւմ ես, որ հետ կանգնենք այս բանն անելուց և մե՞նք էլ նույն ամբաստանության տակ ընկնենք»:

Թուրքական «*Ժափրիթալ*» թերթը խստովանում էր, որ Համաշխարհային առաջին պատերազմը մեր մեջ առաջացրեց անասունության և անբարոյակամության ոգի: Ուրամալ դառն ճշմարտությունը, նշանակում է ուրանալ արևի լույսը («*Ռենեսանս*», 1919, N 173, 22 հունիսի):

Երբ 1918-ի նոյեմբերի 4-ին օսմանյան պառլամենտը քննարկում էր հայերի տեղահանության և կոտորածի հարցերը, դեպուսատ Ֆուադ-բեյն իր

ելոյքուն բազմաթիվ մեղադրանքներ առաջադրեց երիտօրրքերի իշխանությանը՝ սպաջոցեցելով, որ նրանք «երկիրը ոճիրների թատերավայր դարձրին»:

Չենք տարակուսում, որ ցանկության դեպքում Ստամբուլի թե Անկարայի գրադարաններից թուրքական պետական գործիչներին խլելու կտրամադրեն «Ռենեսանս», «Թասվիրե Էվբյար» ու մյուս թերթերի հավաքածուները: Թող կարդան, ուսումնասիրեն իրենց իսկ երկրի պատմությունը... ու չստեն այլա:

Թուրքական զինվորական դատարանը երիտօրրքական հանցագործներին ներկայացրեց երկու մեղադրանք. ա) Թուրքիայի ներքաշումը պատերազմի մեջ և բ) հայ ժողովրդի բնաջնջումը: Դատարանը մահվան դատապարտեց մահանգապետերի, մինիստրների: 1919-ի ապրիլի 8-ին մահապատիժ տրվեց Յոզգատի կառավարիչ Քեմալ-բեյին, մայիսի 22-ին՝ Տրապիզոնի կուսակալ Ջեմալ Ազմիլ-բեյին և նույն քաղաքի իթթիհադական կազմակերպության պատասխանատու քարտուղար Նայիլ-բեյին (ի բացակայություն): 1919-ի հուլիսի 5-ին մահավճիռ արձակվեց փախստական Էնվերի, Թալեաթի, Ջեմալի և մյուսների դեմ:

Երբ թուրքական զինվորական դատարանն արձակեց առաջին մահապատիժի վճիռը, Բ.Դռան և սուլթանի պալատի բանբեր, կիսապաշտոնական «Ալեմդար» օրաթերթը հետևյալ կերպ ձևակերպեց հայոց նկատմամբ կատարվածի իր բնութագրումները. «Չփորձենք հայերին վերագրել հանցանքը, չկարծենք, թե աշխարհը ապուշ է»: Այս ճշմարիտ գնահատականը կարծես թե մոտ 65 տարի առաջ ասվել է այսօրվա թուրք կեղծարարների համար:

«Ալեմդար» թերթը Ալի Քեմալ-բեյի դատապարտումը բաղդատում էր թուրք ազգի դատապարտության հետ, գտնում էր, որ «մեզ համար փրկության միակ միջոցն է... բարձր աղաղակել քաղաքակրթված աշխարհին, թե իսկապես և փաստացի արդարություն պետք է կիրառենք բոլոր նրանց նկատմամբ, ովքեր հանցավոր են: Եթե Բայազետի հրապարակը մեր ոճրագործների կախաղանները չտեսնի, Փարիզը (նկատի ունի 1919-ի խաղաղության կոնֆերանսը – Ջ.Կ.) մեր պետության և ազգային դատապարտության վայրը պետք է դառնա»: «Ալեմդար»-ը գրեց. «Մենք՝ թուրքերս, ամբաստված ենք մի ոճիրով և վարակված ենք մի անբուժելի հիվանդությամբ, որ ժամտախտից ավելի սուկալի է... Դրա համար հաստատեցի՞րք մի արտակարգ զինվորական առյան, պատժելու համար հանցավորներին հանուն արդարության» («Ռենեսանս», 1919, 128, 1 մայիսի):

Պատահական չէ, որ 1919-ի Փարիզի կոնֆերանսին հղած իր պաշտոնական հուշագրի մեջ թուրքական կառավարության վարչապետ Դամադ Ֆերիդ-փաշան ստիպված հայտարարում էր. «Պատերազմի ընթացքում քաղաքակրթված աշխարհը հուզումով ցնցվեց այն ոճիրների մասին տեղեկանալով, որոնք կատարվեցին թուրքերի կողմից: Ինձնից շատ հեռու է այդ ոճիրները խեղաթյուրելու գաղափարը, ոճիրներ, որոնք մարդկային խիղճը ստպումով ընդմիշտ ցնցելու բնույթ ունեն: Դեռ ավելին, ես չեմ կարող մեղմացնել այս մեծ

ողրերգության հեղինակների հանցավորության աստիճանը: Նպատակ ունեմ փաստական տվյալներով աշխարհի առաջ պարզելու, թե որոնք են այս սարսափելի ոճիրների իսկական պատասխանատու հեղինակները»:

Այսպիսին են պատմության փաստերը: Նրանք հարգանք են պահանջում: Կարծես թե այդ փաստերը չհարգող այսօրվա թուրքական պաշտոնական դեմքերի ու մյուս թուրք հեղինակների մասին էր գրել *«Թյուրքըն Ստամբուլ»* թերթը 1919-ին. «Մեր՝ թուրքերիս կողմից առաջ քաշված պատճառարանությունները, ըստ որոնց Վանի մեջ հայերը մեզ վրա նախահարձակ եղան, և հետո մենք Անատոլիայում փոխվրեժի դիմեցինք, գոհացում կարող են տալ միայն նրանց, ովքեր «զգացումներով» են ղեկավարվում և ոչ թե գիտական ու իրական պատճառներով: Այդպիսի մոտեցումը չի կարող մեր դատը պաշտպանել Եվրոպայի և Ամերիկայի հանրային կարծիքի առջև»:

Այո՛, այսպիսին են պատմության փաստերը, պարոմա՛յք քաղաքագետ-դիվանագետներ: Իսկ նրանք, ովքեր այսօր աշխատում են խեղաթյուրել այդ փաստերը և արդարացնել ցեղասպաններին, կրկնակի հանցագործներ են և արժանի են նույն քախտին, ինչ նրանց նախորդները:

ՆԱՅԻՈՆԱԼԻԶՄԻ ԱԳՐԵՄԻՎ ԴՈԿՏՐԻՆԱՆ՝

Վերջին տարիներս թուրքական իրականության մեջ զգալի դեր է խաղում թուրքական նեոֆաշիզմը: Այն ներառում է ինչպես դասական ֆաշիզմը, այնպես և ավանդական թուրքական մացիոնալիզմին բնորոշ գծեր: Թուրքական մացիոնալիզմը վերջին հաշվով հանգում է պանթյուրքիզմին՝ ագրեսիվ ազգային-շովինիստական դոկտրինային, որը երբեմն հասնում է բացահայտ ռասիզմի բարոզի: Ըստ պանթյուրքիստների՝ Մեծ Թուրանը իրագործելի գաղափար է: Այն պետք է տարածվի Բալկանյան թերակղզուց մինչև Մանջուրիա:

Պանթյուրքիզմի արմատները հասնում են 19-րդ դարի ավարտին: 1931-ին Մոսկվայում լույս տեսավ Արշարունու² և Գաբիդուլինի համատեղ գրված մի գիրք («Ռուսաստանում պանթյուրքիզմի և պանիսլամիզմի ուրվագծեր»), որտեղ տրված են թուրքական այդ մարտաշունչ վարդապետության ծագման հանգամանքները: Ռուսաստանի պանթյուրքիստները՝ Իսմայիլ Գասպիրինսկին (Գասպարայի)³, Յուսուֆ Աբշուրինը (Աբշուրա), Հուսեյն Ջադե Ալին, Ահմեդ Ադաևը, Ալիմարդան Թոփչիբաշևը՝ և ուրիշներ Թուրքիայի գոլթըն էին անում, խանգարում հանուն սոցիալիզմի ռուսաստանյան բանվոր դասակարգի պայքարի գործին, ազգային և կրոնական սկզբունքներով սուլթանի իշխանությանը ծառայելու կոչեր էին անում:

Օսմանյան կայսրության պանթյուրքիստները մշտական կապի մեջ էին Անդրկովկասի, Սիջին Ասիայի, Դրիմի ու Կազանի իրենց համախոհների հետ, գաղտնի աշխատանք էին տանում ի նպաստ երիտթուրքերի զավթողական քաղաքականության: Այս ուղեգիծը հատկապես աշխուժացավ Առաջին հա-

¹ Կիրակոսյան Ջ. Նացիոնալիզմի ագրեսիվ դոկտրինան // «Կուսակցական խոսք» (Ե.), 1984, N 3, էջ 28-32:

² Արշարուն Արշարունի (1896-1985) - գրականագետ, բանասեր, քատերագետ, իսլամագետ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, «Հայ քատերագիտական մտքի պատմությունից», «Հայ ժողովրդական քատերախաղեր», «Մոսկվայի հայ մամուլը», «Մոսկվայի համալսարանը և հայ առաջավոր մտավորականությունը» գրքերի, Արևելքի ժողովուրդների գրականության, բանահյուսության, կրոնական շարժումների մասին ուսումնասիրությունների հեղինակ - Ա.Կ.:

³ Իսմայիլ Գասպիրինսկի (1851-1914), Դրիմի քաքար մտավորական, հրատարակիչ և քաղաքական գործիչ, հայտնի էր որպես Ռուսական կայսրության թյուրքական և մահմեդական բնակչության շրջանում կրոնական ու մշակութային բարեփոխումների իրականացման կողմնակից, պանթյուրքիզմի հիմնադիրներից - Ա.Կ.:

⁴ Ալիմարդան-բեկ Թոփչիբաշև (1862-1934) - աղբյեջանցի հասարակական և պետական գործիչ, իրավաբան, քրագրող, Ռուսաստանի Պետական դոմայի պատգամավոր (1906), ԱԴՀ լիազոր ներկայացուցիչ Վրաստանում, Հայաստանում և Օսմանյան կայսրությունում, արտգործնախարար (1918), խորհրդարանի նախագահ (1918-1920) - Ա.Կ.:

մաշխարհային պատերազմի մախօրյակին, երբ բուրքական լրտեսները ողորդեցին Ռուսաստանի տարբեր շրջանները՝ բացահայտ քայքայիչ աշխատանք տանելով հոգուտ Օսմանյան կայսրության: Նրանք մեծ հույսեր էին կապում Ջիհադի հետ:

Մովետական արևելագետ Յուրի Պետրոսյանը գրում է, որ «երիտթուրքերի գաղափարաբանության մեջ «օսմանիզմի» դոկտրինայի տեղ աստիճանաբար բռնեցին «ժամաբուրքականության» հետադիմական կոնցեպցիաները»: Փաստորեն կոիվ հայտարարեցին ազգային-ազատագրական շարժումների՝ արաբների, հայերի, բրդերի, ալբանացիների արդարացի պայքարին: «Ինչ վերաբերում է Հայկական հարցին, ապա կարելի է որոշակիորեն ասել, որ հեղափոխությունից հետո երիտթուրքերի ամբողջ բաղաբանականությունը հանգում էր այն բանին, որպեսզի թույլ չտային Օսմանյան կայսրությունում ապրող հայերի վարչական, տնտեսական և կուլտուրական պրոբլեմների կարգավորմանն ուղղված բարենորոգումների իրականացում: Երիտթուրքական կառավարողները, շարունակելով Աբդուլ Համիդ II-ի քաղաքականությունը, սրում էին ազգամիջյան հարաբերություններն Արևելյան Անատոլիայում, հատկապես թշնամություն սերմանելով բրդերի և հայերի միջև: Համեմայն դեպս այդ տարիներին երիտթուրքերը շատ բան մախապատրաստեցին հայերի ողբերգական ջարդի համար, որը տեղի ունեցավ անմիջապես Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումից հետո»:

Օսմանյան կայսրության արաբական վիլայեթներում երիտթուրքական իշխանությունները դաժանորեն ճնշում էին ազգային-ազատագրական ոգորումները, դատական պրոցեսներ կազմակերպում արաբ հայրենասեր-ազգային գործիչների նկատմամբ: Հարյուրավոր մարդիկ մահապատժի ենթարկվեցին, արաբ ժողովրդի արդարացի գործի բազմաթիվ ռաիվիրաներ բանտեր նետվեցին, արստրվեցին կամ արտաքսվեցին: Թուրքական տիրապետության վերջին տարիներին իսկական չարիք դարձան արաբ աշխատավորության համար: Երիտթուրքական կառավարության մեծապետական շովինիզմը հակամարդկային էր, հակաժողովրդական: Երիտթուրքերի պարագլուխներն ազգամիջյան երկպառակությունները հրահրում էին մահ սոցիալական սուր պրոբլեմներից ժողովրդի ուշադրությունը շեղելու համար: Վերջին հաշվով նրանք անկարող գտնվեցին թուրքական հասարակությանը հուզող որևէ լուրջ խնդիր լուծելու, երկիրն առաջադիմական զարգացման ուղիով առաջնորդելու առումով:

1982 թ. մայիսին Քուվեյթում հրատարակվող «Ալ-Արաբի» հանդեսը հրապարակեց Մուհամեդ Խարրի հոդվածը՝ նվիրված պանթուրքիզմի ծագման ակունքներին, նրա հիմնադիր գործիչներին: Հոդվածն ունի ինչպես պատմագիտական արժեք, այնպես էլ հրատապ քաղաքական նշանակություն: Խնդիրն այն է, որ մեր օրերում մեռֆաշիզմի երանգավորում ստացած ժամանակակից պանթուրքիզմը պակաս վնասակար չէ, քան սրանից մի

քանի տասնամյակ առաջ: Նրա վտանգավորությունն այսօր շեշտում են խնդրին բազմամանր բազմաթիվ քաղաքագետ պատմաբաններ:

Մուհամեդ Խարթը ընթերցողին առաջնորդում է դեպի 19-րդ դարի ավարտը, 20-րդ դարի սկիզբը, երբ ներքին հակասությունների ճիրաններում և արտաքին ինֆերիալիտետական ուժերի մագիլներում հեղձամահ լինող Օսմանյան կայսրության հասարակական, քաղաքական տարբեր ուժերը ճգնաժամից ելք փնտրելու տարբեր ուղիներ էին առաջարկում: Պանիսլամիզմն արդեն անկարող էր փառլիզահի շուրջը համախմբված պահել երկրի բոլոր մահմեդական ժողովուրդներին: Արաբները թուրքական զազրելի իշխանությունից անջատվելու իրենց պայքարով արդեն ապացուցել էին պանիսլամիզմի անկարողությունն այդ մարզում: Քրիստոնյա ժողովուրդների ազատագրական մարշալումները չէին դադարում: 1912-1913 թթ. բալկանյան պատերազմների օրերին Վ.Լենինը մատնացույց էր անում թուրքական միջնադարյան հետամնացությունը Եվրոպայից վերջնականապես վտարելու փաստը: Օսմանյան հսկայածավալ կայսրության փլուզման պրոցեսը կանխելու, բոլոր հպատակ ժողովուրդներին թուրքականությանը ենթարկելու, թուրքալեզու ժողովուրդներին Ստամբուլին ենթարկելու արկածախնդրական մարմաջը քաղաքական կյանքի ասպարեզ նետեց բյուրքիզմի և պանթյուրքիզմի տեսությունն ու պրակտիկան:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Ստամբուլում և այլուր սնկի մման ծնցին տասնյակ շաքաթաթեթեր ու ամսագրեր, որոնց էջերի վրա թուրքերի բացառիկության քարոզն էր արվում: Գրվում էր այն մասին, որ թուրքերը պետք է միշտ իշխող լինեն, որ նրանք պետք է թուրք սուլթանի իշխանության տակ միավորեն Կովկասի, Ռուսաստանի, Միջին Ասիայի, Իրանի թուրքալեզու ժողովուրդներին, ստեղծեն մի հսկայածավալ թուրքական հայրենիք՝ Թուրանից մինչև Միջերկրական ծով: Պանթյուրքիզմի առաջին տեսարաններից մեկը հանդիսացավ Մոիզ Քոհենը (Մյունիս Թեքինալիը): Սա Իթթիհադի քաղաքական կարևոր դեմքերից էր արդեն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին: 1914-ին լույս տեսավ նրա առաջին գիրքը՝ նվիրված բյուրքիզմին և պանթյուրքիզմին: Այն քարզմանվեց ռուսերեն և 1915-ին հրատարակվեց Պետրոգրադում: Ուլիմստոն Չերչիլը ծանոթ էր գրքի բովանդակությանը և Առաջին համաշխարհային պատերազմի մասին իր հուշերում գրել է, թե այն պանթյուրքիզմի էությունն ըմբռնելու համար կարևոր աղբյուր է:

Մոիզ Քոհենը Սալոնիկի ծնունդ էր, դեռնեմ, կրթությանը իրավագետ: 1908-ից հետո, երբ իշխանության գլուխ էին անցել երիտթուրքերը, Քոհենը քաղաքական թեմաներով հողվածներ էր սպագրում Յունիս Նադիի խմբագրած «Ռոմնեյի» թերթի էջերում: Այն իթթիհադականների խոսափողն էր: Ինքը՝ Քոհենը, իթթիհադական էր 1905-ից: Շատ ժամանակ չպահանջվեց, որպեսզի ծայրահեղ ազգայնական, բյուրքիստական հայեցակետեր զարգացնող այս սալոնիկցին դառնար «Ամենուրեք թուրքերեն լեզուն մտցնելու» կոմի-

տեխնախազահ, իթքիհաղականների ճանաչված գաղափարախոսը: Շուտով նրան ընտրեցին թուրքական «Թուրքը և դարաշրջանը» ազդեցիկ ընկերության (կամ կոմիտեի) անդամ: Բացի երբայերենից ու թուրքերենից, նա գիտեր մի շարք եվրոպական լեզուներ: Թուրք պատմաբան Նիսալի Բերկետը, որ կանադական համալսարաններից մեկի պրոֆեսոր է, իր «Թուրքիան և արդիականությունը» գրքում վկայում է եվրոպական մի շարք պատմաբանների, հրապարակագիրների դերը պանթյուրքիստական ազգայնական գաղափարախոսության ձևավորման գործում: Նա հիշատակում է հրեական ծագում ունեցող Լույի Դավիդին, Լեոն Կահունին և Արմինիուս Վանբերիին, որոնց արտահայտած մտքերը, հարցադրումները փոխանցվում էին բուն թուրք իրականության ներկայացուցիչներին՝ Կարուտին, Քոհեին, Աբրահամ Գալանտիին և այլոց: Մրանցից ոմանք սուլթան Համիդի միջոցով էին ուզում ապահովել Պաղեստինի վերածումը հրեական ազգային օջախի, մյուսները խնդրի լուծման հնարավորությունը կապեցին իթքիհաղական կոմիտեի գործունեության հետ:

Դեռևս 1912-ին Քոհենը ֆրանսերենով («Մերկուր դե ֆրանս» հանդեսում) հրապարակեց իր ծրագրային հոդվածը՝ «Թուրքերը ազգային ոգի են փնտրում»:

1914-1918 թթ. Քոհենը (որ արդեն Թեքինալի էր դարձել) դասախոսում էր Ստամբուլի համալսարանում: Այս տարիներին նա առանձնապես երիտթուրքերի սանձարձակ պանթյուրքիստական, ռասիստական քաղաքականության սյուններից մեկն էր: Արաբները Սիրիայում ծառս եղան այդ բարոզների դեմ, բողոքեցին իթքիհաղական Ջեմալ-փաշայի մահանգապետության դեմ, քանի որ նա նման քաղաքականության իրականացնողներից մեկն էր:

Իթքիհաղի քաղաքական տեսության առաջամարտիկ Քոհեն-Թեքինալփը երեք գիրք նվիրեց այս խնդիրներին. «Ի՞նչ կարող են թուրքերը շահել այս պատերազմում», «Թուրքան», «Թուրքացման քաղաքականությունը»: Նա համոզված էր, որ Առաջին համաշխարհային պատերազմից Օսմանյան կայսրությունը պետք է հաղթանակով ու օգուտով դուրս գար թուրքերի միասնության ու համախմբման շնորհիվ: Գրքի բնաբան նա դարձրել էր թուրք հասարակական-քաղաքական կին գործիչ Խալիդե Էլիաի խոսքերը. «Ամենից շատես ցանկանում եմ, որպեսզի աշխարհի բոլոր թուրքերը միավորվեն և լինեն անկախ՝ ոգու և քաղաքական առումով»: Նա խոսում էր թուրք ազգի ինքնագիտակցման ու ազգային զարթոնքի, ազգ դառնալու մասին: Նա համոզն էր գալիս Ադրբեջանի և Կովկասի թուրքերին Ստամբուլի շուրջը համախմբելու անհրաժեշտությունն ընդունելու պահանջով:

Քոհենը ձգտում էր իր գաղափարները տարածել թուրք երիտասարդության շրջանում, ապացուցել թուրքական մացիոնալիզմի և պանթյուրքիզմի առավելությունները պանիսլամիզմի գաղափարների համեմատությամբ: 1912-1913 թթ. քաղկանյան պատերազմում օսմանցիների պարտությունը նա քաջատրում էր ազգայնական զգացումները կորցնելու փաստով, համախմբ-

ման կոչ էր անում, քանզի դրա մեջ էր տեսնում «թուրք ազգի վեհության» ապահովումը: «Եթե այս գաղափարը հետագա զարգացում չստանա, ապա օսմանյան թուրքերին չափազանց դժվար կլինի ստեղծել նոր քաղաքակրթություն», - գրում էր նա: - «Զանի որ այդ քաղաքակրթությունը (կամ պետությունը) չեն կարող ստեղծել 12-15 միլիոն թուրքերը, ապա հարկավոր է այդ գործի մեջ ներառել նաև Թուրքիայի սահմաններից դուրս ապրող թուրքերին, որոնց թիվը հասնում է 40-50 միլիոն մարդու», - շարունակում էր պանթյուրքիզմի տեսաբանը: Նա համոզված էր, որ Առաջին համաշխարհային պատերազմն ավարտվելու էր Ռուսաստանի պարտությամբ, և պանթյուրքիստները Օսմանյան կայսրությանն էին միացնելու նրա լայնարձակ տարածքները:

Պանթյուրքիզմին նվիրված իր աշխատության մեջ Քոհեն-Թեքինավիլը ընթերցողներին բացատրում էր. «Թուրանը քաղաքական հասկացություն չէ, այլ աշխարհագրական, օրինակ, ինչպես Իտալիան: Այն կարող է դառնալ ապագա թուրքական պետության ամունը, որն իր մեջ կմիավորի աշխարհի բոլոր թուրքերին»: Նա համոզված էր, որ հեռու չէ այն օրը, երբ Ռուսաստանը, որտեղ թուրքեր են բնակվում, կփլուզվի, և նրա փոխարեն վեր կբարձրանա Չինգիզ խանի «սուկե բազը»: Նա գրում էր, թե Թուրանը ոչ թե պատմական, այլ ռասայական հասկացություն է, որովհետև ազգայնական Թուրքիան լի է կենսական ուժերով: «Թուրանը մեծ է Անատոլիայից տասն անգամ»: «Թուրանը կենդանի է, այն չինական ճանկերում չէ և ոչ էլ ռուսական Սասյոզի տակ: Թուրանը դժբախտ գերի է: Թուրանը նվաճված է, ճնշված: Սա հենց թուրք ազգի նվաստացումն է: Յուրաքանչյուր թուրքի առաջնային և սուրբ պարտքն է գիտակցել իր ազգային պարտքը ... Թուրանն ազատել ռուսաց երկզվախանի արծվի ճանկերից»:

«Ալ-Արաբի» հանդեսի հոդվածագիր Մուհամեդ Խարբը հավաստում է, որ այդ գրքի էջերում շարադրված պանթյուրքիզմի գաղափարներն ունեցան անենախոր ազդեցությունը «Իթթիհադ վե Թերաքքի» պարագլուխների՝ Ջեմալի, Էնվերի և մյուսների վրա: Ըստ արաբ հեղինակի՝ 1914-ի աշնանը Էնվերի փորձը՝ իր բանակով մխրճել Անդրկովկասի խորքերը և իրականացնել համաթուրանական ծրագիրը, հենց այդ գաղափարախոսության գործնական դրսևորումն էր: Տարիդամիշի ճակատամարտում 80 հազար թուրք զինվորների կորուստը համաթուրանականության ցնդաբանության վկայությունն էր նաև:

1916 թ. Կովկասյան ճակատում օսմանյան քանակի վերջնական պարտությունն արդեն փաստ էր: Սակայն 1918-ին երիտթուրքական արկածախնդի պարագլուխները օսմանյան պետականության ժանգոտած ժանիքը խրեցին Անդրկովկասի մարմնի մեջ՝ նպատակ ունենալով օգտվել հեղափոխական Ռուսաստանի դժվարություններից, իրականացնել համաթուրանականության գաղափարները: Էնվերը Միջին Ասիա հասավ միևնույն պլանն իրականացնելու մարմաջով տարված:

Ազգայնական Թուրքիան ստիպված էր հետ քաշել իր քաթերը, թեև հա-

ջողվեց Հայաստանի նկատմամբ իրականացնել պանթյուրքիզմի ծրագիրը, գավթել հայոց հողերը: Այսօր թուրք պրոպագանդիստները փորձում են ամեն ինչ կեղծելու միջոցով (փոխում են աշխարհագրական քարտեզները, տերմինները, տեղանունները, գլխի վրա շուռ տալիս պատմագիտության ամենատարակաճ ճշմարտությունները) մարսել պանթյուրքիստների կատարած սև գործերը:

Թեքինալիը հետո տեղափոխվեց (1922-ից) Անկարա, դարձավ թուրք լրագրողների միության գլխավոր քարտուղար: Նա իր պանթյուրքիստական հողավճանները հրատարակում էր «*Կարան*» («*Հայրենիք*») թերթում, որի խմբագիրը Ահմեդ Ալի Յավմանն էր: Քոհենը ակտիվ դեր էր խաղում Ժողովրդահանրապետական կուսակցության Ստամբուլի կոմիտեում:

1928-ին Քոհեն-Թեքինալիը Ստամբուլում հրատարակեց իր նոր գիրքը, որը վերնագրված էր «Թուրքացման քաղաքականություն»: Ոչ թուրք տարրի թուրքացման խնդիրն այդ գրվածքի առանցքն է: Նա «ապացուցում է» թուրքացման անհրաժեշտությունը, թուրքացման մեթոդները, թուրքացման վերջնական նպատակն ու օգուտները: Գրքի էջերում քննարկված են բազմաթիվ հարցեր, որոնք բխում են գլխավոր պրոբլեմից. «թուրք» հասկացությունն ի՞նչ է, ինքնագիտակցությունը՝ որպես ազգի էություն, ամուսնների թուրքացման անհրաժեշտությունը: Հատկանշական է, որ Քոհենը գրքի շարադրանքն սկսում է «Իթքիհալ վե Թերաքքի» հանդեպ իր ծառայությունները շեշտելով: Նա հավանություն էր տալիս երիտթուրքերի կատարած շարագործություններին և հանրապետական իշխանություններին խորհուրդ էր տալիս շարունակել նույն գիծը: Նա հեռու էր գնում՝ առաջարկելով նույնիսկ հրեական սինագոգներում կրոնական ծիսակատարությունները, աղոթքը կատարել թուրքերեն:

1936-ին Ստամբուլում լույս տեսավ Քոհեն-Թեքինալիի «Քենալիզմ» գիրքը: Շուտով այն թարգմանվեց ֆրանսերեն և հրատարակվեց Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահ Էրիոյի առաջաբանով: Չեխերեն հրատարակության առաջաբանն էլ գրել է Պրահայի համալսարանի ռեկտորը՝ անելով համապատասխան մեկնաբանություններ: Այս գրքում պանթյուրքիզմի գաղափարախոսը սևով սպիտակի վրա գրում էր. «Թուրք ազգը կտրվել է իր արևելյան արմատներից, որպեսզի ընթանա արևմտյան քաղաքակրթության ուղիով»: Մակայն Արևելքից հրաժարումը համարելով ժամանակավոր երևույթ՝ նա չէր տարակուսում, որ թուրք ազգի մեծապետական տենչերը հաջողությամբ էին պսակվելու, քանզի Մուստաֆա Քեմալը «ժասարակ մարդ չէր, այլ գեբմարդ»: Սա հենց թուրքական ֆաշիզմի գաղափարախոսությունն էր: Քոհենը պաշտպանում էր Մուստաֆա Քեմալի ուղեգիծը, մահմեդական կրոնը երկրորդ պլան մղելու և ազգայնականությանը առաջնություն տալու քաղաքականությունը:

1944-ին Ստամբուլում լույս ընծայվեց նույն պանթյուրքիստի «Թուրքական ոգի» գիրքը, որը մեծ Թուրանը նվաճելու բացահայտ կոչ էր: Նրանում ամեն ինչ սկսվում է մոնոլոգների դարաշրջանից, Միջին Ասիայից, փառաբան-

վում բուրբական ամեն ինչ: Նա գովասանքներ էր շտայլում երիտթուրքերի հասցեին, որոնք օսմանացման միջոցով զարթոնք ապահովեցին թուրքերի ազգային ոգուն: Չիճգիզ խանին նա ներկայացնում էր որպես թուրքերի գլխավոր նախնի, որը «չլքեց տափաստանը, ամբողջ երկրագնդով մեկ տարածեց տափաստանների ոգին»: Նրա կարծիքով, նույն միտքն էր հետապնդվում, երբ Թուրքիայի մայրաքաղաքը Ստամբուլից տեղափոխվում էր Անկարա: 1942-1944 թթ. այն տարիներն էին, երբ բուրբական նացիոնալիզմը դարձել էր սանձարձակ, վերածվել էր ֆաշիզմի և հարմար պահ էր փնտրում հարվածելու Սովետական Միությանը, իրականացնելու պանթյուրքիզմի գաղափարները:

Թուրքիայի վարչապետ Սարաջօղլուն¹ 1942-ի օգոստոսին Անկարայում Գերմանիայի դեսպան Ֆոն Պապենին² հայտարարում էր. «Որպես թուրք, ես ցանկանում եմ Ռուսաստանի կործանումը: Ռուսաստանի ոչնչացումը ֆյուրբերի հերոսությունն է, որին հավասարը կարող է կատարել հարյուր տարին մեկ: Այն թուրք ժողովրդի դարավոր իղձն է»:

Այդ շրջանում Թուրքիայում սնկի պես աճեցին պանթյուրքիստական գաղտնի կազմակերպությունները: Տոզանը, Կարադաղլին, Թյուրքեշը, Ատսըզը և ուրիշներ պանթյուրքիզմին հաղորդեցին իսկական ֆաշիստական բովանդակություն:

Մեր օրերում պանթյուրքիզմը միլիոնավոր չէ: Ժամանակակից Թուրքիայում պանթյուրքիստական դոկտրինայի քարոզն ամբողջապես կապված է Ալֆարալան Թյուրքեշի անվան հետ, որը հիմնաբանում է, դատվում է: Բայց թուրք զենեթալները չափազանց ուշադիր են, զգայուն և հոգատար նրա նկատմամբ: 1960-ի թուրքական հեղաշրջմանը ղեկավար մասնակցություն ունեցած Թյուրքեշը, այնուհետև, քսան տարի կազմակերպեց մի իսկական ֆաշիստական շարժում, «Ժնը ճառագայթ» վերնագրված նրա գրքույկը պանթյուրքիզմի գաղափարախոսության գովարանությունն է: Տեռորիստ Ալի Աղջան³ Թյուրքեշի կուսակցության ակտիվ անդամն էր, թրծված ֆաշիստ:

Տասնամյակներ են անցել պանթյուրքիզմի առաջին քայլերից, փոփոխությունների է ենթարկվել այն, պարտություններ է կրել, բայց նրա վերականգնացման փորձերը չեն դադարում:

1980-ի սեպտեմբերի զինվորական հեղաշրջումից հետո Թուրքիայի քաղաքական կյանքում հաստատված է վրենի դոկտրինան, որ ներքեմալիզմ են անվանում, ներառում է ինչպես սանձարձակ նացիոնալիզմի, այնպես և զանգվածային, ֆաշիստական տեռորիզմի տարրեր:

¹ Եուրթյու Սարաջօղլու (1887-1953), թուրք քաղաքական գործիչ, 1942-1946 թթ.՝ ԹՀ վարչապետ - Ա.Կ.:

² Ֆրանց Ֆոն Պապեն (1879-1969) - գերմանացի ռազմական և քաղաքական գործիչ, դիվանագետ, Գերմանիայի դեսպան Ավստրիայում (1934-1938), Թուրքիայում (1939-1944) - Ա.Կ.:

³ Ալի Աղջա (ծնվ. 1958), թուրք տեռորիստ, 1981 թ. մահափորձ է կատարել Հոմնի պապ Հովհաննես Պողոս II-ի վրա - Ա.Կ.:

1983-ի հոկտեմբերի 19-ին «Նյու Յորք Թայմսը» տպագրեց Հելսինկիի համաձայնագրերի կատարմանը հետևող հանճաժողովի գործադիր դիրեկտոր Ջերի Լեյբերի հողվածը այսօրվա Թուրքիայի իրականության մասին: Հողվածագիրը ցույց է տվել այն նախանձախնդիր շահագրգռվածությունը, որ դրսևորում է Ռեյգանի¹ վարչակազմը Թուրքիայի զինվորական դիկտատորների իշխանությունը պահպանելու խնդրում: «ԱՄՆ-ը չի ցանկանում խոստովանել, որ տեռորիզմը և անարխիստիկ մոտիվ իրավիճակը, որ գոյություն ունեին 1980-ին, փոխարինված են նոր տեռորիզմով, որ սանձազերծել է կառավարությունը վախեցած ժողովրդի դեմ»: Հողվածագիրը ցույց է տալիս, որ Թուրքիայի կարևոր ստրատեգիական դիրքը, նրա դերը ՆԱՏՕ-ի հանկատվետական ռազմական պլաններում ապահովում են ամերիկյան տարեկան մեկ միլիարդ դոլարի ռազմատնտեսական օգնությունը զինվորական խումուսային: Նա անամոթ պարողիս է հռչակում ընտրական կամպանիան, որ թուրքական իշխանություններն իրականացրին 1983 թ. նոյեմբերի 6-ի ընտրությունների նախօրյակին: Չէ՞ որ քաղաքական բանտարկյալների թիվը հասնում է 55 հազարի, որոնց մեծամասնությունը երիտասարդներ են, նույնիսկ 20 տարեկանը դեռ չբողորած: Տուժում է մտավորականությունը: Իրավաբանների ասոցիացիան, գործների միությունը, խաղաղության կողմնակիցների ընկերությունը և արհմիութենական գործիչները հետապնդվում են, ենթարկվում դատական պատասխանատվության: Հարյուրավոր պրոֆեսորներ հեռացվել են համալսարաններից: Լրագրողները մշտապես սարսափում են բանտարկությունից: Նրանք ինքնագրաբեմնության միջոցով փորձում են խորամանկել, շրջանցել իշխանություններին: «Որպեսզի խմանալ ինչ գրել, մենք պետք է մտածենք նրանց նման, - հայտարարել է մի լրագրող: - Դա հակամարդկային է, ստորացուցիչ և անպատվաբեր»: Թուրք քաղաքացիներից շատ-շատերի կարծիքով այդ ռեպրեսիաների համար պատասխանատվությունը հավասարապես ընկնում է ինչպես թուրք գեներալների, այնպես էլ ԱՄՆ-ի վրա:

Թուրքական կառավարության քաղաքականությունը մարդկային իրավունքների բնագավառում ենթարկվում է դատապարտման Եվրոպական պառլամենտում և Եվրոպական խորհրդում, մինչդեռ ԱՄՆ-ը այն եզակի պետություններից է, որ պաշտպանում է Թուրքիային, իսկ ԱՄՆ-ի մամուլը լրության է մատնում թուրքական կառավարության չարագործությունները:

Այս ամենից հետո բողորվին էլ պատահական չէ, որ այսօր արաբական թերթերի էջերում ժամանակ առ ժամանակ հիշեցնում են թուրքական ժամանակները, չեն բացառում, որ հարմար պահին պանթյուրքիստները նորից կձգտեն տարածել Անկարայի իշխանությունը արաբական հողերի վրա: Թուրքական պետականությունը ուչի ուշով հետևում է իրաք-իրանյան պատերազմի ելևէջներին՝ երբեք չիրաժարվելով նրանից օգուտ քաղելու մտքից:

¹ Ռոնալդ Ռեյգան (1911-2004) - ամերիկացի դերասան և քաղաքական գործիչ, հանրապետական, 1967-1975 թթ.՝ Կալիֆոռնիայի նահանգապետ, 1981-1989 թթ.՝ ԱՄՆ նախագահ - Ա.Կ.:

Կիպրոսի հարցում Անկարայի բռնած դիրքը, Կիպրոսի Հանրապետության տարածքի մեկ երրորդի թուրքական օկուպացիան, որ շարունակվում է 1974-ից սկսած, նույնպես պանթյուրքիզմի դրսևորումներից մեկն է: Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհուրդը դատապարտեց և հակահարված տվեց «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» հռչակման լկտի փորձին: Ամբողջ աշխարհը (փոքր բացառությամբ) ոչ ասաց պանթյուրքիզմի այդ բացորոշ դրսևորմանը: Այն գնահատվեց որպես ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևերի և չմիանալու շարժման դեկլարացիաների բացահայտ խախտում: Ֆրանսիական «*Լիբերասիոն*» թերթը թուրքական այդ գործողությունը գնահատեց որպես պրովոկացիա Հունաստանի հանդեպ: Կողմ տրոհումն արդարացնելու փորձով ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում հանդես եկած Թուրքիայի ներկայացուցիչը, Կիպրոսի թուրք համայնքի պարագլուխը դատապարտվեցին բոլորի կողմից:

Մեր խնդիրն է մշտապես բացահայտել պանթյուրքիզմի վնասակար էությունը, մերկացնել նրա ինչպես երեկվա, այնպես և այսօրվա հետապնդած տարածողական պլանները: Երբեք չպետք է մոռանալ, որ հակասովետիզմի, հակակոմունիզմի ամերիկյան զինանոցում կարևոր տեղ է հատկացվում համաթուրանականության հետադիմական տեսությանն ու պրակտիկային, որ պանթյուրքիստների հակասովետական պրոպագանդան խրախուսվում է ամերիկյան ռազմամուլների կողմից:

ՊԱՆԹՈՒՔԻԶՄԻ ԱԳՐԵՍԻՎ ԴՈՎՏՐԻՆԱՆ ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՕՐ¹

Պանթուրքիզմն ագրեսիվ շովինիստական, բուրժուական գաղափարախոսություն է: Այն թշնամի է աշխատավորների ինտերնացիոնալ միասնությանը, ատելություն է սերմանում ժողովուրդների միջև: Պանթուրքիզմն ագրեսիայի դոկտրինա է. դա հաստատված է պատմական փորձով: Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ այն ծառայեց բուրժուական ագրեսիվ ուժերին, գերմանական իմպերիալիզմին: Ներկայումս պանթուրքիզմը խրախուսվում է թուրքական արկածախնդիր ուժերի, ՆԱՏՕ-ի, ամերիկյան և մյուս իմպերիալիստական շրջանների կողմից: Պանթուրքիզմի գաղափարախոսները սովետա-թուրքական բարեկամության կատաղի թշնամիներն են:

Սովետական Ադրբեջանի անվանի բուրքագետ Է.Հասանովան գտնում է, որ գաղափարապես ֆաշիզմին անենամոտ կանգնած են եղել պանթուրքիստները, որ նրանց միավորում են ռասիզմը, շովինիզմը, հակասովետիզմը²:

Հիրավի, վերջին տարիներս թուրքական իրականության մեջ զգալի դեր է խաղում թուրքական նեոֆաշիզմը: Այն ներառում է ինչպես դասական ֆաշիզմը, այնպես և ավանդական թուրքական մացիոնալիզմին բնորոշ գծեր: Թուրքական մացիոնալիզմը վերջին հաշվով հանգում է պանթուրքիզմին՝ ագրեսիվ ազգային-շովինիստական դոկտրինային, որը երբեմն հասնում է բացահայտ ռասիզմի քարոզի: Ըստ պանթուրքական արկածախնդրության՝ «Մեծ Թուրանը» իրագործելի գաղափար է: Պանթուրքիստական քաղաքական աշխարհագրության համաձայն՝ այն պետք է տարածվի Բալկանյան թերակղզուց մինչև Մանջուրիա: Այն ագրեսիվ, գավթողական պլաններ է փայփայում Սովետական Միության նկատմամբ: Այսօր միջազգային քաղաքականությանը հետաքրքրվող յուրաքանչյուր ոք պետք է ճանաչի իմպերիալիզմի սև ուժերը, միշտ զգաստ լինի՝ պայքարելու Սովետական Միության խաղաղասիրական քաղաքականության հաղթանակի համար:

Կար մի ժամանակ, երբ սուլթան Աբդուլ Համիդ II-ը փորձում էր պանիսլամիզմի միջոցով իր իշխանության տիրապետության տակ պահպանել մահմեդական ժողովուրդներին, Օսմանյան կայսրությունն ընդարձակել այլ պետությունների տարածքների հաշվին՝ օգտագործելով իր խալիֆ, փաղիշահի (այսինքն՝ բոլոր մուսուլմանների առաջնորդ) լինելու հանգամանքը: Պանիս-

¹ Կիրակոսյան Ջ. Պանթուրքիզմի ագրեսիվ դոկտրինան երեկ և այսօր // «Գարուն» (Ե.), 1984, N 3, էջ 62-69: «Ազգային մշակույթ» (Բեյրութ), 1984, N 3 – 26 փետրվարի, 4, 11 մարտի: «Չարքոնք» (Բեյրութ), 1984, 22-24 մարտի: «Լյարսեթ» (Լ.Ա.), 1984, 7, 14, 21 ապրիլի: «Աշխարհ» (Փ.), 7, 14, 21 ապրիլի: Տպագրվում է կրճատումներով:

² Гасанова Э.Ю. Антисоциализм в Турши // Национально-освободительное движение и современная идеологическая борьба, Баку, 1973, с. 102.

լամիզմի մեջ տեղ էին գտել սրբազան պատերազմի (ջիհադ, գազավաթ), մահ-մեղեկանների քաղաքական և կրոնական բացառիկություն, խալիֆի, որպես առաջին կրոնավարի և պետական գլխավորի մասին մոսուլմանական ուսմունքները: Պանիսլամիզմը երբեմն հանդիսանում էր ցարական Ռուսաստանում բուրժուազայանական բազմաթիվ կազմակերպությունների և կուսակցությունների (Իրքիվագ-ուլ-մուսլիմին, Մուսավաթ, Բուխարայի ջադիդներ) ծրագրերի էական մասը:

19-րդ դարում դեպի Արևելք եվրոպական կապիտալի թափանցման ուժեղացմանը զուգահեռ, մոսուլմանական պետությունների շահագործողական դասակարգերը պանիսլամիզմի գաղափարներն օգտագործում էին իրենց շահերին համապատասխան ժողովրդական զանգվածների վրա ազդեցություն պահպանելու համար: Ազգային-ազատագրական շարժումներն Ասիայի երկրներում տեղի էին ունենում իսլամի դրոշի ներքո (Մայսորի պատերազմները Հնդկաստանում, վահաբիտների շարժումներն Արաբիայում, Մախդիի շարժումը Մուղանում և այլն): Հիշենք նաև Կովկասի լեռնականների ազատագրական և հակաֆեոդալական շարժումների ժամանակ Շամիլի¹ կողմից հետադիմական պանիսլամիզմի օգտագործման փաստը: 19-րդ դարի ավարտին՝ 20-րդ դարի սկզբին, սուլթան Համիդը պանիսլամիզմն օգտագործում էր ինչպես երկրի ներքին կյանքում իր իշխանությունն ամրապնդելու, այնպես և արտաքին-քաղաքական խնդիրների լուծումն առաջ մղելու համար: Օսմանյան լծի տակ ճնշված արաբների ու մյուս մոսուլման ժողովուրդների ազգային գարթոնքին զուգընթաց առաջին պլան էր մղվում ազգային և ոչ թե կրոնական պատկանելությունը:

Թուրք բուրժուական ազգի կազմավորման խանձարուղը տեղի էր ունենում Օսմանյան կայսրության ժողովուրդների ու ազգությունների այդ կոնգլոմերատի խառնարանում: Հենց սկզբից նրանց բնորոշ էին դառնում մեծապետականության, այլամերձության գծերը: Թուրքականությունն ի սկզբանե միախառնվում էր համաթուրքականությանը կամ պանթուրքիզմին՝ իր առաջ միպատակ դնելով թուրքական պետականության շուրջը համախմբել բոլոր քրքալեզու ժողովուրդներին: Այս մոտեցումը լայն տարածում գտավ երիտթուրքերի պետական կառավարման տարիներին, երբ թուրքիզմը հռչակվեց որպես պետական գաղափարախոսություն:

Թուրքիզմի գաղափարախոսությունը գործնականում թուրքական իրականության թուրքացումն էր, Օսմանյան կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդներին թուրքականությանը ենթարկելու քաղաքականությունը: Այս տենդենցն ուժեղացավ 1908-ի երիտթուրքական հեղաշրջումից հետո: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին թուրքիզմի տեսությունն արդեն

¹ Շամիլ (1797-1871), Հյուսիսային Կովկասի մահմեդական ազգությունների քաղաքական և կրոնական առաջնորդ, Ռուսաստանի դեմ պայքարի ղեկավար, Կովկասյան իմամատի երրորդ իմամ - Ա.Կ.:

հանդես եկավ սանձարձակ պանթոփրքիզմի շաղխյով: Երիտթուրքերը ձգտում էին թուրքիան ներքաշել Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ հենց համաթուրքական, համաթուրքամական խնդիրներ լուծելու մարմաջով տարված: Այստեղ դեր էր վերապահված նաև պանիսլամիզմին:

Պանթուրքիզմն ազդեսիվ ռախիստական դոկտրինա է, ըստ որի քրքալեզու բոլոր ժողովուրդներն իբր մի ազգ են և պետք է միավորվեն թուրքիայի իշխանության ներքո մեկ միասնական, Բալկաններինց մինչև Սիբիր տարածվող թուրքան պետության մեջ: Ահա թե ինչու երբեմն պանթուրքիզմն անվանում են նաև պանթուրանիզմ: Ծագել է 19-20-րդ դարերի սահմանագլխին թուրքիայի և Ռուսաստանի բուրքական ժողովուրդներով բնակեցված շրջանների բուրժուակավածատիրական շրջաններում: Պանթուրքիստները միշտ էլ ազգայնական պրոպագանդա էին մղում Միջին Ասիայում և Անդրկովկասում ձգտելով աշխատավորներին հեռու պահել ռուսաստանյան պրոլետարիատի հեղափոխական պայքարից և Ռուսաստանից կտրել նրա ազգային ծայրամասերը:

Սովետական թուրքագետները (Վ.Կրիմսկի, Ա.Տվերիտիմովա, Յու.Մաթունով, Գ.Երեմեն և ուրիշներ) իրենց աշխատություններում ցույց են տվել պանթուրքիզմի հետադիմական, հակասոցիալիստական էությունը: Սովետական արևելագետ Յուրի Պետրոսյանը գրում է, որ «երիտթուրքերի գաղափարաբանության մեջ «օսմանիզմի» դոկտրինայի տեղ աստիճանաբար բռնեցին «համաթուրքականության» հետադիմական կոնցեպցիաները: Երիտթուրքերը փաստորեն կոչիվ հայտարարեցին ազգային-ազատագրական շարժումների՝ արաբների, հայերի, քրդերի, ալբանացիների արդարացի պայքարին: «Ինչ վերաբերում է Հայկական հարցին, ապա կարելի է որոշակիորեն ասել, որ հեղափոխությունից հետո երիտթուրքերի ամբողջ քաղաքականությունը հանդու էր այն բանին, որպեսզի թույլ չտային Օսմանյան կայսրությունում ապրող հայերի վարչական, տնտեսական և կուլտուրական պրոբլեմների կարգավորման ուղղված բարենորոգումների իրականացում: Երիտթուրքական կառավարողները, շարունակելով Աբդուլ Համիդ II-ի քաղաքականությունը, սրում էին ազգամիջյան հարաբերություններն Արևմտյան Անատոլիայում, հատկապես քնճամություն սերմանելով քրդերի և հայերի միջև: Համենայն դեպս այդ տարիներին երիտթուրքերը շատ բան նախապատրաստեցին հայերի դրերգական ջարդի համար, որը տեղի ունեցավ ամմիջապես Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումից հետո»¹:

...1920-ի սեպտեմբերին թուրքական թերթերը գրում էին, թե «Ադրբեջանը թուրքիայի օրգանիզմի անբաժանելի անդամն է», թե այն կընկնի նրա մայրական գիրկը»: 1919-ի Մրվազի քեմալական կոնգրեսին մասնակցում էին նաև մուսավաթական Ադրբեջանի զինվորական ներկայացուցիչները, որոնք հայտարարել էին, թե իրենց բանակը «մասն է թուրքական ընդհանուր բանակի»: Նախկին երիտթուրքական սպաներ Սաիդ Համիլը, Յուսուֆ Ջեմալ-բեյը

¹ Орешкова С.Ф., Петросян Ю.А., Гасратян М.А. Указ. соч. с. 154.

և ուրիշներ 1920-ի սկզբին հակասովետական խռովություններ էին հրահրում սովետական իշխանության դեմ Հյուսիսային Կովկասում: Բարձրից Դադստան էր անցել տխրահռչակ Նուրի-փաշան: Բեքիր Սամին, որ նախկին երիտօրր էր, Լլոյդ Ջորջին խոստումներ էր տալիս հակասովետական պայքարի մեջ ներքաշել Հյուսիսային Կովկասի լեռնականներին: 1920-ի աշնանը Վ.Լենինը մատնացույց էր անում Թուրքիայի կողմից Հայաստանը, Բարսունը, Բարսուն գավաթելու գործնական նպատակները:

Հանրապետական կարգերի հաստատումից հետո Թուրքիայում նախ և առաջ զբաղվեցին ներքին կյանքի թուրքացումով: Օսմանյան կայսրության փլատակները թուրք նացիոնալիստներին չափավորել էին, հեռացրել պանթուրքիզմն իրականացնելու գործնականից: Թուրքիզմն էլ փոխարինվել էր «նացիոնալիզմ» տերմինով. Քենալ Աթաթուրքն ստիպված էր ոչ միայն մերժել պանթուրքիզմը, այլ նաև դատապարտել այն՝ որպես հակազգային հոսանք: Այդպիսին էր պահիր... Սակայն պանթուրքիզմի արմատները խորն են: Նրանք ծլարձակում են, երբ բարենպաստ պայմաններ են ստեղծվում:

Շուտով պանթուրքիստները սերտ կապեր հաստատեցին գերմանական ֆաշիստների հետ, կատաղի հակասովետական կամպանիա սանձագերծեցին՝ կոչ անելով զավթել, Թուրքիային միացնել Սովետական Միության մի շարք երկրամասեր:

...Մեր օրերում պանթուրքիզմը նիքիած չէ: Այն հարմարվում է միջազգային իրադրությանը, նոր դրսևորումներ է ասպարեզ հանում: Պատահական չէ, որ այդ խնդրին մեծ ուշադրություն են նվիրում թուրքական իրականությանը բաջաձանոթ մասնագետները:

Պատմագիտական հետաքրքրությունը պանթուրքիզմի նկատմամբ ուժեղացել է: Աշխարհի տարբեր մասերում մեկը մյուսի հետևից գրքեր, հոդվածներ են հրատարակվում պանթուրքիզմի, պանթուրքիստների, նրանց հին ու նոր հարցադրումների մասին: Ուշադրության արժանի է Երուսաղեմի Հիբրուի համալսարանի պրոֆեսոր Ջեկոբ Լանդաուի գիրքը՝ «Պանթուրքիզմը Թուրքիայում. Իռեդենտիզմի ուսումնասիրություն»¹: Իռեդենտիզմ (խտալեռն՝ irredento – չազատագրված)՝ ազգայնական շարժում Իտալիայում 19-րդ դարի վերջին՝ 20-րդ դարի սկզբին: Այդ շարժման լոզունգն էր իտալական թագավորությանը միացնել հարևան իտալախոս հողերը, ավարտել Իտալիայի վերամիավորումը: Իռեդենտիստներն ակտիվ մասնակցություն ունեցան Իտալիայում ազգայնական շարժման ստեղծման գործում, ինչը նախորդեց ֆաշիզմին: Նրանք պաշտպանեցին Իտալիայի գաղութային պատերազմն Ալբիկայում (1911-1912), հանդես եկան Առաջին համաշխարհային պատերազմին Իտալիայի ակտիվ մասնակցության դիրքերից: 1914-ի նախօրյակին իտալացի-

¹ Landau M. Jacob. Pan-Turkism in Turkey: A Study of Irredentism, London, 1981, p. 219.

ներն ուզում էին անբրսիայի ենթարկել բոլոր ավստրիական այն տարածքները, որտեղ խալացիներ էին ապրում:

Պրոֆ. Լանդաուն մինչ այդ անդրադարձել էր պանթոքրիզմի խնդիրներին, հատկապես լուսարանելով և քննութագրելով թուրքական ֆաշիզմի պատգամի Ալիաթայան Թյուրքեշի ու նրա գլխավորած Ազգային գործողության կուսակցության գործերը:

Սակայն այդ վերջին հրապարակումն ավելի ընդհուպ է բացահայտում պանթոքրիզմի գաղափարախոսությունը 19-րդ դարի վերջերից սկսած մինչև երիտթուրքերը՝ Յուսուֆ Աբդուրա, Ջիա Գյուրալի, մինչև «Թյուրք Յուրդու» և «Թյուրք օջախ» կազմակերպությունները: Լանդաուն նշում է, թե Թուրքիան հանրապետություն հռչակելով, պանթոքրիզմը պաշտոնապես չէր խրախուսվում, բայց այդ չի նշանակում, թե այն անհետացավ: «Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, - գրում է նա, - պանթոքրիստական մանր խմբերը շատ ավելի պարարտ հող գտան, առանձնապես, երբ Գերմանիան հարձակվեց Ռուսաստանի վրա և նրանց համար բացեց կոմունիստական կառավարումից թուրքերին ազատագրելու հեռանկարը»: Այդ պահին «Բողկուրտ» ամսագիրը բացահայտ ոստիզմ էր քարոզում, բոլոր թուրքերի միասնություն էր պրոպագանդում:

...Դեռևս 1935-ին պանթոքրիստ Նիխալ Ատսըզը¹ հրապարակեց մի սանձարձակ հակակոմունիստական գրքույկ, որը վերնագրված էր այսպես. «Կոմունիստական Դոն Կիխոտին՝ պրոլետարական-բուրժուական ընկեր Նազիմ Հիքմեթին»², որտեղ ամենակուպիտ կերպով հարձակումներ էր գործում Թուրքիայի կոմունիստների և բոլոր դեմոկրատական ուժերի վրա, զրպարտում Սովետական Միությանը: Հենց այդ ժամանակ էր, որ Ջեմալ Աթաթուրքն ասել էր, թե «չպետք է մոռանալ, որ թուրքական աշխարհի ամենակատաղի թշնամին կոմունիզմն է»: Այժմ ոճանք փորձում են ապացուցել, թե նրան վերագրված են այդ խոսքերը, որ նա այդպիսի բան չի ասել³:

1941-ի հուլիսին թուրքական «Բողկուրտ» («Գորշ գայլ») ամսագրի No. 11-ում տպագրվել էր «Թուրքիզմն սպասում է» հոդվածը, սպագա «մեծ Թուրքի» քարտեզով, որի կազմի մեջ էին մտցված Սովետական Անդրկովկասը և Միջին Ասիան: «Չինարարի» ամսագրում պանթոքրիստական բանաստեղծները գոչում էին. «Թուրքերը կնվաճեն Կովկասը և Դրիմը և կվոնդեն թշնամիներին», «Կգա օրը, երբ թուրք ազգը կբանդի Կովկասի, Դրիմի և Բուխարայի ամրոցները»:

¹ Նիխալ Ատսըզ (1905-1975), թուրք ազգայնամուլ գրող, բանաստեղծ և փիլիսոփա, պանթոքրիզմի և պանթուրանիզմի գաղափարների ջատագով - Ա.Կ.:

² Նազիմ Հիքմեթ (1902-1963), թուրք բանաստեղծ, արձակագիր, սցենարիստ, դրամատուրգ և հասարակական գործիչ, համայնավար, ընդհանուր առմամբ 17 տարի անց է կացրել թուրքական բանտերում, 1951-ից ապրել է Մոսկվայում - Ա.Կ.:

³ Гасанова Э.Ю. Указ. соч.

«Նովի միր» ամսագրի (1983, N 11) էջերում վերջերս հրատարակած իր վավերագրական վիպակում Մովեսական Մխուրյան հերոս Վ.Կարպովը ցույց է տալիս պանթուրքիստների ագրեսիվ, թշնամական կեցվածքն այն պահին, երբ գերմանա-ֆաշիստական հորդաները հասել էին կովկասյան մախալեռ-մային շրջանները, մահացու վտանգ ստեղծելով Անդրկովկասի ժողովուրդների համար:

Անգլիացի պատմաբան Քրիստոֆեր Ռոկերը նկարագրում է թուրքական վերնախավի հակատվետական մտնտուրները 1941-ի ամռանը: Օգոստոսի 5-ին Անկարայում ֆաշիստական Գերմանիայի դեսպան Յոն Պասկենը հաղորդում է Բեռլին, թե թուրքական կառավարությունը չափազանց մեծ հետաքրքրություն է դրսևորում արյունակիցների, մասնավորապես Ադրբեջանի թուրքերի նկատմամբ: Դեսպանը գրում էր, թե թուրքերը հիշել ու վերլուծում էին 1918-ի դեպքերը, մտածում էին նորից Ադրբեջանը, Բարվի մավթահանքերը զավթելու մասին: Նա հաղորդում էր, որ այդ նպատակով մի հատուկ կոմիտե էր ստեղծվել, որը մշակում էր Ադրբեջանը, Իրանի և Կասպից ծովի ափերի բրբալեզու շրջանները Թուրքիային կցելու հանգամանալի պլանները¹:

Այդ շրջանում Թուրքիայում սնկի պես աճեցին պանթուրքիստական գաղտնի կազմակերպությունները: Տոզանը, Կարադաղլին, Թուրքբշը, Ատսազը և ուրիշներ պանթուրքիզմին հաղորդեցին իսկական ֆաշիստական բովանդակությամբ: 1942-ի նոյեմբերին պանթուրքիստ Իսմաիլ Ջյուխտյուն «Գեկ Բերյու» ամսագրում բարբաջում էր. «Մեր մայրը մեկն է, հայրը՝ մեկը: Ադրբեջանը մեզ համար հարազատ եղբայր է: Հիմնականում մենք միասնական ենք, բայց վաղը մենք վերջնականապես կձուլվենք»:² 1943-ին պանթուրքիստները լույս ընծայեցին «Իսլամա-թուրքական հանրագիտարանը», որը բազմահատորանոց ռասիստական-ազգայնական ցնդարանությունների մի հավաքածու է:

Մեր օրերում պանթուրքիզմը միրհած չէ: Տասնամյակներ են անցել նրա խանձարուրից: Պանթուրքիստները մեկ անգամ չէ, որ ձախողվել են, պարտություններ կրել: Պանթուրքիզմի դոկտրինան փոփոխությունների է ենթարկվել: Իմպերիալիզմի հետ գործակցող թուրքական սև ուժերը փորձում են վերակենդանացնել նրա ագրեսիվ էությունը:

Ըստ Լանդաուի՝ պանթուրքիզմը Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտով չմահացավ: Այն 1965-ին դարձավ թուրքական շաղաքականության գլխավոր առանցքը, մասնավոր ֆաշիստ Թուրքբշի Ազգայնական հետադեմ կուսակցության համար: Նա մատնացույց է անում 70-ական թթ. մի շարք պանթուրքիստական հրատարակումներ: Նրանցում սովորական հարցադրում է. «Ո՞վ ենք մենք: Մենք մարդիկ ենք, որ գալիս ենք Ալթայից»: Դիշտ է, պանթուրքիզմը ո՛չ զանգվածային շարժում է, ո՛չ էլ ունիվերսալ գաղափար

¹ Walker Ch. Op. cit, p. 358.

² *Большевик*, 1944, N 10-11, с. 84.

քախտություն: Այնուամենայնիվ այն արդեն 100 տարի գոյություն ունի: Լանդաուն այն համարում է քաղաքական խեղճնությունից տիպիկ դրսևորում:

1966-ի սեպտեմբերի 9-ին Դեմիրելի «Արդարություն» կառավարող կուսակցությունը «Ենի Ստամբուլ» թերթում Սեհնեղ Սադիկ Արանը (նախկին հայտնի մոսավաթական) հրապարակեց մի հոդված, որը վերնագրված էր. «Երկրորդ թուրքական պետությունը, ստեղծված 20-րդ դարում. Աղյբեջանական հանրապետություն»: Վերնագիրն ինքնըստինքյան վկայությունն է պանթուրքիստական մույն մտայնության, որին խնկարկում էին երեկ և խնկարկում են այսօր Թուրքիայում: Հեղինակը կատարած է, որ կա Սովետական Սոցիալիստական Հայաստան, որ կա Երևան (ըստ հեղինակի՝ առանձնահատուկ խնամքով կառուցված Անաստաս Միկոյանի ջանքերով), որ Հայաստանը խանգարում է Աղյբեջանի անմիջական սահմանային շփմանը եղբայր Թուրքիայի հետ: Նա ոռնում է, որ Բարվում հուշարձան է կառուցված «չեթըջի» (պարտիզան, հայդուկ) Ս.Շահումյանի հիշատակին, նա ողբում է, որ Բարվում չկա այնտեղ գոհված անատոլիական թուրքերի (տեսքը 1918-ի երիտթուրքական ինտերվենտների ու մարդասպանների մասին է) հիշատակը հավերժացնող որևէ հուշարձան: Սեհնեղ Սադիկ Արանը պանթուրքիստ է, սանձարձակ հակառուս: Նա չի խորշում ոռս մեծ ժողովրդի հասցեին ամենափողոցային հայտնայնքներից:

«Թուրք կուլտուրա» ամսագրի հարձակումների գլխավոր թիրախը մեր երկրի թրքալեզու ժողովուրդների սոցիալ-քաղաքական կյանքն է, գիտությունն ու կուլտուրան: Պարզունակ ու ծիծաղաշարժ հարցադրումներով ու փաստարկներով պանթուրքիստ հակակոմունիստները փորձում են սովեթ ձգել Սովետական Արևելքի ժողովուրդների հիրավի պատմական նվաճումների վրա: Հակակոմունիստական, հակատվետական ոռնձգություններով աչքի են ընկնում «Աղյբեջանական կուլտուրայի խմբակ», «Աղյբեջան», «Մյուլջահիդ» («Մարտիկ», Անկարա) ամսագրերը, «Պայքար կոմունիզմի դեմ» (Իզմիր) թերթը¹:

Ժամանակակից Թուրքիայում պանթուրքիստական դոկտրինայի քարոզն անմիջապես կապված է Ալփարսլան Թյուրքեշի անվան հետ, որը հիմա բանտում է, դատվում է: Բայց թուրք գեներալները չափազանց ուշադիր են, զգայուն և հոգատար նրա նկատմամբ: 1980-ի թուրքական հեղաշրջմանը ղեկավար մասնակցություն ունեցած Թյուրքեշը այնուհետև քսան տարի կազմակերպեց մի իսկական ֆաշիստական շարժում: «Ինը ճառագայթ» վերնագրված նրա գրքով պանթուրքիզմի գաղափարախոսության գովաբանությունն է: Տեռորիստ Ալի Աղջան Թյուրքեշի կուսակցության ակտիվ անդամն էր, թրձված ֆաշիստ: Գեոլպետ Թյուրքեշի գլխավորած ֆաշիստական շարժման (րոզքյուրթեր - գորշ գայլեր) գաղափարախոս Ն.Ատսըզը հայտա-

¹ Заманова Э.Э. Идеология антикоммунизма в современной турецкой буржуазной эстетике // Национально-освободительное движение и современная идеологическая борьба, Баку, 1973.

րարեց՝ դիմելով Թուրքիայի քրդերին. «Եթե դուք՝ քրդերդ, պետք է շարունակեք խոսել ձեր պարզունակ լեզվով, ապա բուրբերը կկոտորեն ձեզ, ինչպես իր ժամանակին ոչնչացրին հայերին, վրացիներին ու հույներին: Դուք կարող եք դիմել ՄԱԿ, որպեսզի ձեզ տրամադրեն հայրենիք Աֆրիկայի ինչ-որ մի վայրում, այլապես բուրբական ոսասն կվերածվի կատաղած առյուծի, որին ոչ ոք չի կարող կանգնեցնել»:

Թյուրքեշի նեոֆաշիստական կազմակերպությունը կոչվում է «Ազգայնական շարժման կուսակցություն»: Նա դեռևս Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ծայրահեղ աջ ազգայնական գաղափարներ էր քարոզում, ակտիվորեն համագործակցում մացիստական հատուկ ծառայությունների և առաջին հերթին գեստապոյի հետ: 1944-ի հոկտեմբերի 9-ին Բեռլինի գեստապոյի պետը գրում էր արտաքին գործերի մինիստրություն. «Բոլոր պանթուրքիստական խմբավորումների հետ կապ պահպանելը համապատասխանում է ուսյի շահերին: Առայժմ այդպիսի կապ կա լուկ Թյուրքեշի հետ, որը սպայական ուսումնարան է ավարտել և պանթուրքիստական շարժման պարագլուխներից մեկն է»¹:

Թյուրքեշի կազմակերպությունը ֆինանսական օժանդակություն է ստանում Ստամբուլի առևտրական և արդյունաբերական պալատներից, խոշոր մոնոպոլիստական «Սաբունջի» տրեստից, ԱՄՆ-ի, Արևմտյան Գերմանիայի և այլ երկրների նեոնացիստական կազմակերպություններից²: 1944-ին Թյուրքեշը ձեռքակալվեց հեղաշրջման փորձ կազմակերպելու համար, որի նպատակն էր Թուրքիայի մուսոլը պատերազմի մեջ Գերմանիայի կազմում: 1945-ի ապրիլին նա արդեն ազատ էր արձակված ու շարունակում էր պրոֆաշիստական կազմակերպության շարքերի համախմբման գործը:

1960-ին Թյուրքեշն ասպարեզ իջավ որպես պետական հեղաշրջման ակտիվ մասնակից: Մեղդերեսի կառավարությունը տասպալած 32 սպաներից մեկը նա էր: Մինչ այդ նա աշխատում էր Վաշինգտոնի բուրբական զինվորական միսիայում, հետո միջուկային տեխնիկայի բարձր դպրոցի սան էր Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում: 1968-ից սկսած՝ նա ստեղծեց իր «կոմանդոսներին» կազմակերպությունը: Ստեղծվեցին մի քանի տասնյակ ճամբարներ Անկարայում, Բզմիրում, Ստամբուլի արվարձանում և այլուր, որտեղ գլուխ կտրողներ էին պատրաստում իսկական ֆաշիստական, մարդատյաց մեթոդներով: Շուտով «կոմանդոսներին» «քոզբյուրթեր» անվանումը տվեցին: 1967-ին Ա.Թյուրքեշը հայտարարում էր. «Վաղ թե ուշ Թուրքեստանը կդառնա բուրբական»³: Նրա և կրոնականների մախաձեռնությամբ 1968-ից սկսած ամբողջ Թուրքիան պատվեց հիսուկերյուզեմդի մեան «կոմանդոսներով», որոնք Թյուրքեշին հուշակեցին իրենց ֆյուրեր (բաշբուկ): Այդ կոմանդոս-

¹ «Комсомольская правда» (М.), 1981, 2 июня.

² «Правда» (М.), 1981, 2 января.

³ Старченко Г. Терроризм в Турции // *Азия и Африка сегодня* (М.), 1981, N 11.

ները ռազմական ուսուցում էին ստանում հատուկ զինվորական ճամբարներում և օգտագործում էին դեմոկրատական ուժերի միախնգները ջախջախելու, Թուրքիայի առաջադեմ գործիչներին ծեծելու ու սպանելու համար¹:

Արդեն 1970-ական թթ. սկզբին Թյուրքեշի «մահվան էսկադրոնները» լավ կազմակերպված զինվորական բանդաներ էին, որոնք սպանություններ կազմակերպելու, արյուն ռթելու վարպետներ էին դարձել: Մյուսնք տեղոր էին անում Գերմանիայում ու Ավստրիայում թուրք առաջադեմ բանվորների դեմ²: Այն ժամանակ Թյուրքեշի տղերքը ձախերի դեմ կռվում էին դանակներով, փայտերով ու շղթաներով: Իսկ հետո զինվեցին ատրճաճակներով ու նոճակներով: Նրանք խցկվել էին պետական ապարատի՝ ոստիկանության, մինիստրությունների տարբեր օղակները և այդ միջոցով հեշտությամբ մեծ քանակությամբ զենք ու զինամթերք էին հայթայթում³: Նրանք կապված էին հատկապես ամերիկյան հատուկ ծառայությունների հետ, օգտվում էին նրանց հովանավորությունից ու օգնությունից: Խաղաղության ու դեմոկրատիայի կողմնակիցների, կոմունիստների ու բրդական ազատագրական պայքարի մարտիկների ոչնչացումը մեռֆաշիստների առաջնահերթ խնդիրն էր: 587 կոֆաշիստների դատավարությունն Անկարայում ցույց տվեց, որ թուրքական ֆաշիզմը խոր արմատներ է ձգել երկրում, որ ֆաշիստ-թուրքիստների դեմ պայքարի հաջողության համար անհրաժեշտ է հենվել երկրի դեմոկրատական-առաջադիմական ուժերի լայն ճակատի վրա:

Հռոմի պապի վրա կրակած թուրք աչ տեռորիստ Սեհմեդ Ալի Աղջան 1979-ի աշնանը «Միլլիթթ» թերթի խմբագիր Իփեկչիին (քիչ ժամանակ անց սպանված նույն Աղջանի ձեռքով) գրած սպառնալից նամակում պահանջում էր միջազգային դրության հարցերը մեկնաբանել այնպես, ինչպես ինքն էր ուզում: Նա հորջորջում էր. «Ռուս իմպերիալիստները վախենում են, որ Թուրքիայի մի նոր պետություն կկազմակերպվի Միջին Արևելքում երբայրական իսլամական երկրներից»: Այն ժամանակ արդեն մա պապ Հովհաննես Պողոս II-ին համարում էր «խաչակիրների հոգևոր առաջնորդը և պարագլուխը», որին սպանելը համարում էր իր առաջնահերթ խնդիրը⁴:

Ֆրանսիական «Մոնդո» թերթը հատկապես նշել էր Ա.Թյուրքեշի ծրագրին ու գործողություններին հատուկ արմատական նացիոնալիզմը և պանիսլամիզմը: Վերջինս ավելի շատ քաղաքական բնույթի էր, քան կրոնական, ցույց էր տալիս «Մոնդո»:

Թուրք մեկնաբաններ Ալի Բիրանդը և Տ.Էրելը հանգամանորեն քացահայտեցին Հռոմի պապի վրա կրակած թուրք տեռորիստ Մ.Աղջանի կապը

¹ Караваев Б.М. Паитюркизм как часть идеологии антикоммунизма в Турции // Национально-освободительное движение и современная идеологическая борьба, Баку, 1973, с. 133.

² Гасанова Э.Ю. Указ. соч. с. 108.

³ «Комсомольская правда» (М.), 1981, 2 июня.

⁴ «Time» (New York), 1981, May 25, p. 17.

Թյուրքեշի գլխավորած «Ազգայնական շարժման կուսակցության» հետ: Նրանք Աղջային որակեցին որպես բուրբական ֆաշիստ: Աղջան հարցաքննությունների ժամանակ շքարքեց, որ «Միլլիեթ» բերքի խմբագիր Ա.Իփեկչիին սպանել էր Սովետական Միության նկատմամբ նպաստավոր դիրքորոշում ունենալու համար: Որոշ բերքեր գրեցին, թե ֆաշիստ Աղջայի ոճրագործությունը միջազգային տեղորիզմի պարագլուխները կազմակերպեցին «ժայկական ահաբեկչների հանցագործություններն արդարացնելու» և «ալկալշոնելու» համար:

Լոնդոնի «Չայնենշըլ քայմս» բերքը Թյուրքեշի մասին հետևյալը գրեց. «Նրա վերաբերմունքը բուրբերի ազգային ժառանգությանը և նրանց նախկին մեծ կայսրություններին գործնականում հանգեցրեց մի այնպիսի ռասիզմի հրահրման, ինչպիսին չէր եղել հայերի և քրդերի կոտորածներից ի վեր»:

1980-ի սեպտեմբերի գլխավորական հեղաշրջումից հետո Թյուրքիայի քաղաքական կյանքում հաստատված էվրենի դոկտրինան ներառում է ինչպես նաեցիոնալիզմի, այնպես և զանգվածային, ֆաշիստական տեղորի տարրեր:

1983-ի հուլիսի 16-ին Փարիզում լույս տեսնող «Ալ Մուստալքա» («Ապագա») արաբերեն բերքը տպագրել էր Ռ-ախդ Նեջիս ալ Ջեյնի հողվածը, որը վերնագրված էր «Ծանր ժամանակներ, նոր խաղացողը արաբական ծոցում. Թյուրքերը գալիս են...»: Հողվածագիրը վերլուծում է Մերձավոր Արևելքի իրադրությունը. համոզիչ վաստերով ցույց է տալիս, որ պանթուրքիզմը նիրհած չէ, որ այն ագրեսիվ ծրագրեր ունի և՛ Սիրիայի, և՛ Իրաքի Կիրկուկի, Մուսուլի շրջանների նկատմամբ: Հեղինակը մատնացույց է անում այն հանգամանքը, որ բուրբացված Թյուրքիան թեև արդեն կես դարից ավելի է, ինչ վտարված է արաբական հողից, բայց հնարավոր չի եղել միանգամից ջնջել հինգ դար շարունակված բուրբական տիրապետության, օսմանյան սուլթանության և իսլամական խալիֆայության ազդեցությունը: «Օսմանյան իսլամի հանդեպ բուրբերի բերնի ջրերն է հոսեցնում», - գրում է նա:

Մերձավոր Արևելքի գործերի մեջ թե՛ Իսրայելին, թե՛ Թյուրքիային իր շահերին համապատասխան օգտագործելու ամերիկյան քաղաքականությունը շատ հեռու է գնացել: Երբ 1983-ի հունիսի 2-ին Բրյուսելում Իսրայելի արտաքին գործերի մինիստր Իցիակ Շամիրը¹ Հյուսիսային Իրաք ներխուժած բուրբական զորքերն անվանեց օկուպացիոն քանակ, հանդես եկավ քրդական ինքնավարության «պաշտպանի» դերում, բուրբ-խարայելական հարաբերությունները լարվեցին: ԱՄՆ-ի պետական շրջանակներն անմիջապես ջանքեր գործադրեցին երկու կողմերին հաշտեցնելու համար: Արաք հողվածագիրը նշում է, որ ամերիկացիները, այնուամենայնիվ, այս շրջանի գործերի մեջ ավելի հաստատում և հուսալի գործոն են համարում Թյուրքիային, քան Իսրա-

¹ Իցիակ Շամիր (1915-2012), իսրայելցի քաղաքական գործիչ, Իսրայելի արտգործնախարար (1980-1986), պաշտպանության նախարար (1990), վարչապետ (1983-1984, 1986-1992) - Ա.Վ.:

յելին: Նրա կարծիքով ամերիկացիք չեն խորշում մտածել «Օսմանյան սուլթանի երկար թուրը» իրենց նպատակներին ծառայեցնելու մասին: «Թուրքերը գալիս են», - բացականչում է արաբ հողվածագիրը:

...Թուրք քաղաքացիներից շատ շատերի կարծիքով, այդ ռեպրեսիաների համար պատասխանատվությունը հավասարապես ընկնում է ինչպես թուրք զեներալների, այնպես և ԱՄՆ-ի վրա: Այն պահին, երբ թուրք կառավարության քաղաքականությունը մարդկային իրավունքների բնագավառում ենթարկվում է դատապարտման Եվրոպական պառլամենտում և Եվրոպական խորհրդում, ԱՄՆ-ը այն փոքրաթիվ պետություններից է, որ պաշտպանում է Թուրքիային, իսկ ԱՄՆ-ի մամուլը լոռայան է մատնում թուրքական հետադիմության չարագործությունները:

Միայն Վաշինգտոնի վարչակարգի օժանդակությամբ էր հնարավոր այնպիսի չարագործություններ անել, ինչպիսիք կատարվեցին Կիպրոսի անկախ, սուվերեն հանրապետության տարածքի վրա թուրքական զինվորականության կողմից: Աշխարհի բոլոր խաղաղասեր ուժերը պահանջում են թուրքական գործերը հանել Կիպրոսից:

ԱԼԵՔՍԵՅ ՋԻՎԵԼԵԳՈՎ¹

Ինչպես Ռուսաստանի հասարակական-քաղաքական կյանքին, մշակույթին, այնպես և հայ իրականությանը մեծ գործիչներ, մեծ անուններ է նվիրել Նոր Նախիջևանը: Գրանց շարքում իր ուրույն տեղն ունի Ալեքսեյ Կարապետի Ջիվելեգովը:

Սկսած ընդհանուր առմամբ մշակույթի ու գիտության ավազանում, դառնալով անվանի գիտնական ու պատմաբան, արվեստագետ ու թատերագետ՝ նա երբեք մեջբով չկանգնեց դեպի իր ժողովրդի ճակատագիրը, միշտ մաս կազմեց նրա հասարակական-քաղաքական կյանքին՝ ընթանալով նրա հետ համարայլ:

Նրա բազմաթիվ տաղանդավոր աշակերտներից մեկը՝ Ա.Անիկստը², հավաստում է Ջիվելեգովի բարձր մարդկային գծերը. «Նա լույս և ջերմություն էր արձակում»: «Նրա հեղինակությունն անասան էր, էրուդիցիան՝ անհասանելի, վարպետությունը՝ առաջին կարգի», - վկայում է Գրիգոր Բոյաջիևը³՝ մեծ գիտնականի մեկ այլ աշակերտն ու գործի շարունակողը:

Նրա հետ շփված մարդիկ առանձնապես շեշտել են մեծ գիտնականի նրբին կուլտուրան, մտավորական բարձր առաքինությունները, բնական կեցվածքը՝ առանց վերամբարձության և ձևամոլության: Նա մատչելի էր բոլորին, գեղեցիկ էր իր ջիվելեգովյան ուղղամտությամբ:

* * *

Ալեքսեյ Ջիվելեգովը ծնվել է Նոր Նախիջևանում 1875-ի մարտի 14-ին: Նա սովորեց ծխական դպրոցում, ապա հայկական ճեմարանում, իսկ 1887-ին ընդունվեց և 1893-ին ավարտեց Ստավրոպոլի գիմնազիան: Նա շտառվ դարձավ Մոսկվայի համալսարանի ուսանող: Համալսարանը փայլում էր իր պրոֆեսոր պատմաբաններով, այստեղ էր միջնադարյան պատմության մեծա-

¹ Կիրակոսյան Ջ. Ալեքսեյ Ջիվելեգով // «Սովետական գրականություն» (Ե.), 1984, N 4, էջ 129-137: Տես նաև՝ Կիրակոսյան Ա. Страницы из жизни А. Дживелегова // *Коммунист* (Ե.), 1985, 23 июля: Կիրակոսյան Ա. Подвижник // *Литературная Армения* (Ե.), 1986, N 11: Կիրակոսյան Ա. Алексей Дживелегов и политическая арменистика // *Дживелеговские чтения*, Выпуск 1, Часть I, Ե, 2009, с. 91-113:

² Ալեքսանդր Անիկստ (1910-1988), խորհրդային գրականագետ, արվեստաբանության դ-ր, աշխատությունները նվիրված են արևմտաեվրոպական գրականության, քատրոնի և արվեստի տեսությանն ու պատմությանը - Ա.Վ.:

³ Գրիգոր Բոյաջիև (1909-1974), թատերագետ, արվեստագիտության դ-ր, պրոֆ., դասավանդել է Մոսկվայի թատերական ինստիտուտում, հիմնական աշխատությունները՝ «Արևմտաեվրոպական քատրոնի պատմություն», «Թատրոնի պոեզիան», «Մոլիեր», «Գրիգոր Բոյաջիևը պատմում է թատրոնի մասին» - Ա.Վ.:

գույն մասնագետ Պավել Վինոգրադովը¹, որի ուսումնասիրությունները Արևմտյան Եվրոպայի միջնադարի, Անգլիայի իրավագիտության պատմության վերաբերյալ նրան բերել էին մեծ փառք, քարգմանվել ու հրատարակվել արտասահմանյան մայրաքաղաքներում: Այստեղ էր հռչակավոր Վլադիմիր Գեյլեն², որն ավելի քան 40 տարի դասախոսել էր Հեգելի փիլիսոփայության, Ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխության ու ժողովրդապետության և բազմաթիվ այլ խնդիրների մասին: Մոսկվայի համալսարանի պատմագիտության գաղափարներից մեկն էր Վասիլի Կյուլենսկի³, որի գրչին է պատկանում ռուսաց պատմությանը նվիրված բազմահատոր աշխատությունը:

Ահա այսպիսի հեղինակությունների աշակերտեց, գիտելիքներ ամբարեց և 1897-ին գերագանց գնահատականներով ավարտեց Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետի պատմագիտական բաժանմունքը Ալեքսեյ Ջիվելեզովը:

Մինչև 1917-ի Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը նա դասավանդեց Նիժնի Նովգորոդի համալսարանում, աշխատեց ռուսական ազդեցիկ թեթերի խմբագրություններում, տպագրեց բազմաթիվ հոդվածներ, այդ թվում՝ ցարական ինքնակալության դեմ, ձերբակալվեց, դատապարտվեց բանտարկության: Նա գիտափրապարակախոսական լայն գործունեություն ծավալեց «Գրանատ» հանրագիտաբանում, որի հատորներում հրատարակեց մի քանի հարյուր հոդված ամենաբազմապիսի թեմաներով: Ալեքսեյ Ջիվելեզովի ակտիվ մասնակցությամբ կազմակերպվեց Կարլ Մարքսին նվիրված Վ.Լ.Նինիի հոդվածի տպագրությունն այդ հանրագիտաբանի 28-րդ հատորում, 1914-ին:

Մեծ է Ալեքսեյ Ջիվելեզովի հիսնամյա գործունեության ծավալը, ծանրակշիռ է նրա ստեղծագործական վաստակը: Մոսկ նրա մեծագրությունների, հոդվածների վերնագրերի թվարկումը պատկերացում կտա նրա գիտատեղծագործական հոյակապ ժառանգության հարստության մասին. «Միջնադարյան քաղաքները Արևմտյան Եվրոպայում», «Մոտուրն Արևմուտքում միջին դարերում», «Փոտալական վերածնության սկիզբը», «Ժամանակակից Գերմանիայի պատմություն», «Ալեքսանդր 1-ին և Նապոլեոն», «Գյոտլացիական շարժումներն Արևմուտքում», «Դանթե Ալիգիերի», «Ռաբլե», «Մերվանտես», «Օթբլլո», «Կարլո Գոլդոնին և նրա կատակերգությունները», «Լեոնարդո դա Վինչի», «Ֆրանսիական քաղաքների ժողովրդական հիմքերը», «Բուկաչո Ջովաննի», «Միքելանջելո», «Անգլիական վերածնության պոեզիան», «Նիկոլո Մաքիավելի» և այլ ուսումնասիրություններ, ուրվագծեր, հոդվածներ:

¹ Պավել Վինոգրադով (1854-1925), ռուս պատմաբան, միջնադարագետ, իրավագետ - Ա.Կ.:

² Վլադիմիր Գեյլեն (1837-1919), ռուս պատմաբան, Պետերբուրգի Գ-Ա թղթակից սովորան, Մոսկվայի համալսարանի ընդհանուր պատմության պրոֆեսոր (1868-1904) - Ա.Կ.:

³ Վասիլի Կյուլենսկի (1841-1911), ռուս պատմաբան, Պետերբուրգի Գ-Ա ակադեմիկոս, Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր - Ա.Կ.:

Մինչ արվեստների, քատրոնի պատմության հռչակված հեղինակությունը համալրել է Ա.Ջիվելեզովի արդեն ծանրակշիռ ուսումնասիրություններ էր կատարել ընդլիանուր պատմության բնագավառում: Նրա առաջին հրատարակումները նվիրված էին միջնադարյան Եվրոպայի քաղաքների կյանքի ուսումնասիրությանն ու լուսաբանմանը: Նա քննադատորեն քննարկում է միջնադարյան քաղաքների ծագման տեսությունները, անդրադառնում այդ բնագավառում գերմանացիներ Ջոմի, Կեյտզենի, ֆրանսիացի Ֆլակի հայացքներին: Երիտասարդ հետազոտողն արդեն փայլում էր իր խոր գիտելիքներով, եվրոպական լեզուների իմացությամբ: Նա պատմագիտության ասպարեզ իջավ որպես լիովին ձևավորված հետազոտող պատմաբան: Պրոքլեմների լայն ընդգրկումը, Եվրոպայի քաղաքների սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր կողմերի խոր հետազոտելու հմտությունը զարմացրին այն տարիների հմուտ և քաղաքական պատմաբաններին: Նա քաջատեղյակ էր հոռմեական քաղաքների կյանքին, նկարագրում էր բարբարոսների հարձակումները քաղաքների վրա, սպառիչ պատկերացում էր տալիս Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Անգլիայի քաղաքների վերաբերյալ: Նա գերազանց գիտեր քաղաքների սոցիալական և քաղաքական կյանքի հասարակական հարաբերությունների գլխավոր գծերը, քաղաքային հիմնարկների զործունեության բովանդակությունը, քաղաքացիական իրավունքը, ֆինանսները, ուսումնական սիստեմը, կրոնական հաստատությունները և այլն:

1904-ին Պետերբուրգում լույս տեսավ Ա.Ջիվելեզովի նոր ծանրակշիռ մենագրությունը Եվրոպայի միջնադարյան առևտրի մասին: Նա նկարագրում է Հռոմեական կայսրության և Բյուզանդիայի առևտուրը, պատկերացում տալիս Սկանդինավիայի և Վոլգայի առևտրական ուղիների նշանակության մասին, ընթերցողին ներկայացնում Վենետիկի, Ջենովայի, Իլորենցիայի, Եվրոպայի հարավի ու արևմուտքի մյուս առևտրական կենտրոններն ու նրանց նշանակությունը:

1915-ի գարնանը Մոսկվայում լույս տեսավ նրա «Ալեքսանդր 1-ին և Նապոլեոն» գիրքը: Դա հռչակմաների ժողովածու էր՝ կազմված ամսագրերի էջերում նրա կատարած բազմաթիվ հրատարակումներից. «Ֆրանսիան և Եվրոպան հեղափոխության և կայսրության օրոք», «Հեղափոխությունը և Բոնապարտը», «1812-ի պատերազմը», «Նապոլեոնի անկումը», «Վաթերլոո», «Մետերնիխ» և այլն: Ա.Ջիվելեզովը Ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխության պրոքլեմների խոշոր գիտակ էր, գերազանց գիտեր Նապոլեոնի¹ շրջանի միջազգային հարաբերությունների պատմությունը: Նրա գրչի տակ

¹ Նապոլեոն I Բոնապարտ (1769-1821), 1804-1815 թթ.՝ Ֆրանսիայի կայսր - Ա.Կ.:

վերակենդանացել են Թալեյրանը¹, Դանտոնն² ու Կարնոն³, Պիշեգրյուն⁴ և մադամ Ստալ⁵: «Անգլիայի և Ֆրանսիայի մրցակցությունը տնտեսական հողի վրա որոշում էր հեղափոխության և կայսրության ամբողջ արտաքին քաղաքականությունը»: Ջիվելեգովը վարպետորեն էր նկարագրում ֆրանսիական իրականությունը: Նա քաջ գիտեր ինչպես ֆրանսիական արքունիքի պարսպաքանդակը, այնպես և աղբատ խավերի կյանքի պայմանները: Նա ամեն ինչ ուսումնասիրում էր բազմակողմանիորեն: Ջիվելեգովի կարծիքով Ալեքսանդր I-ն⁶ «փր բռնակալությունը հասցրեց մինչև տրամաբանական վերջին սահմանագիծը», իսկ «Նապոլեոնի երջանկությունը պատմության հանդեպ այն էր, որ նա չհասցրեց տրամաբանական վախճանին հասցնել բռնակալության մեքենայությունները»: Ջիվելեգովի գրեթե անկախ արվեստն այն էր, որ նրան հաջողվում էր առավել ճշմարտացիորեն բնութագրել և նկարագրել պատմական դեմքերի խոսքի ու գործի էությունը: Նրա գրիչը մեկ առ մեկ ընթերցողի առջև վերակենդանացնում է Մյուրատին⁷, Նեյին⁸, Մակդոնալդին⁹, Դավուին¹⁰, Բերտյեին¹¹:

* * *

Ալեքսեյ Ջիվելեգովի բազմաձայն գիտամանկավարժական գործունեության մեջ առանձնահատուկ տեղ ունի նրա հայագիտական վաստակը: Քաղաքական հայագիտության բնագավառում նրա հրապարակումներն իրենց վրա են կրում գիտականության, ճշմարտացիության կնիքը: Ընդհանրապես նրա գրելաձևին հատուկ են շարադրանքի լեզվաճանաչական մատչե-

¹ Շարլ Մորիս դե Թալեյրան-Պերիգոր (1754-1838), ֆրանսիացի քաղաքական գործիչ և դիվանագետ, Ֆրանսիայի արտգործնախարար (1797-1799, 1799-1807, 1814-1815, 1815), վարչապետ (1815) - Ա.Կ.:

² Շարլ Ժակ Դանտոն (1759-1794), ֆրանսիացի հեղափոխական, Առաջին Ֆրանսիական Հանրապետության հիմնադիր - Ա.Կ.:

³ Լազար Կարնո (1753-1823), ֆրանսիացի պետական և զինվորական գործիչ, ինժեներ, գիտնական - Ա.Կ.:

⁴ Շարլ Պիշեգրյու (1761-1804), ֆրանսիացի զինվորական և քաղաքական գործիչ, զենեղալ ամերիկյան հեղափոխության մասնակից - Ա.Կ.:

⁵ Աննա դե Ստալ (1766-1817), ֆրանսուհի գրող, Ֆրանսիական հեղափոխության պատմաբան - Ա.Կ.:

⁶ Ալեքսանդր I (1777-1825), 1801-ից՝ Ռուսաստանի կայսր - Ա.Կ.:

⁷ Իոսիփ Մյուրատ (1767-1815), Նապոլեոնի մարշալներից, Բերզի մեծ դուքս, Նեապոլիտանական բազալիոնյան բազալիոն (1808-1815) - Ա.Կ.:

⁸ Միշել Նեյ (1769-1815), Նապոլեոնի մարշալներից, Էլիսիեգերի դուքս, Մոսկվայի իշխան - Ա.Կ.:

⁹ Ժակ Մակդոնալդ (1765-1840), Նապոլեոնի մարշալներից, Տարենտի դուքս - Ա.Կ.:

¹⁰ Լուի Նիկոլա Դավու (1770-1823), Նապոլեոնի մարշալներից, Աուերշտադտի դուքս - Ա.Կ.:

¹¹ Լուի Ալեքսանդր Բերտյե (1753-1815), Նապոլեոնի մարշալներից, 1799-1807 թթ.՝ Ֆրանսիայի ռազմական նախարար և գլխավոր սպայակույտի պետ - Ա.Կ.:

լիտրյունը, նյութը մատուցելու, ասելիքը տեղ հասցնելու յուրահատուկ շնորհը: Նա տաղանդավոր հրապարակախոս էր: Նրա այդ բարեմասնությունը հատկապես տեսանելի էր Հայկական հարցի շուրջ նրա ստեղծած գրական հարուստ ժառանգությունից:

Երբ 1907-ին Պետերբուրգում հրապարակվեց Գրիգոր Ավետի Ջանջևի («Դիևի»)՝ «Մեծ ռեֆորմների դարաշրջանը» գիրքը, Ջիվելեզովը գրեց առաջաբանը, որտեղ քաղաքակրթամանրյուն բնութագրեց մեծ հայրենասերին՝ շեշտելով նրա ծառայությունները սուլթանի գուլումին ենթարկված արևմտահայերի իրավունքների պաշտպանության կարևոր գործում:

Հայ ժողովրդի նոր պատմության սուր խնդիրները, ռուս-հայկական հարաբերությունների անցյալն ու ներկան, Հայկական հարցի շուրջ դիվանագիտական պայքարը, բուրբակաճ պետականության, առանձնապես երիտթուրքական իշխանության հայասպան քաղաքականությունը մշտապես զոնվել են վաստակաշատ գիտնական-պատմաբանի, լրագրող-հրապարակախոսի տեսադաշտում: Ցավոք, այս բնագավառում Ջիվելեզովի ներդրած նկայական ավանդը համարյա ուսումնասիրված չէ և անհայտ է մեր ընթերցող լայն շրջաններին: Մինչդեռ քաղաքական հայագիտության մարզում Ալեքսեյ Ջիվելեզովի երախտիքը պետք է իմանան մեր նոր սերունդները, տեսնեն, թե ինչպես համաշխարհային պատմագիտության ու արվեստի պատմության մուր էջերը լուսաբանած, մշտապես քաղաքացիայի այդ եռանդաշատ մարդը ժամանակ էր գտնում հետևելու հայոց քաղաքական կյանքի խնդիրներին, փորձում միշտ օգտակար լինել հարազատ ժողովրդին: Նա երբեք երես չթեքեց քաղաքականությունից: Արևմտահայության ողբերգության ամենակրիտիկական պահին նա ասալարեզ էր իջել իր գրչով ու կազմակերպչական ունակություններով՝ հօգուտ հայության կազմակերպելու Ռուսաստանի ազնիվ մտավորականներին, զգաստացնելու, կյանքի ու պայքարի կոչելու անհոգ քաղթենիներին ու ապագայնացած տարրերին:

Ջիվելեզովն օժտված էր քաղաքացիական վսեմ առաքինություններով: Նա հրապարակախոսությունը համարում էր իր հարազատ գործը, ծառայում էր նրան և այն ծառայեցնում հարազատ ժողովրդի իրավունքների պաշտպանությանը: Նա պատկանում էր այն պատմաբանների, գիտնականների, հրապարակախոսների թվին, որոնք մշտապես հետևում էին, ուսումնասիրում բուրբակաճ պետականության հակահայկական գործողությունները, երիտթուրքե-

¹ Ջանջևի (Դիև) Գ.Ա. (1851-1900), հրապարակախոս, իրավաբան, Մոսկվայի համալսարանի հայագի սյուններից: 19-րդ դարի 60-ական թթ. ռուսաց բարեփոքումների մասնագետ և ջատագով: Սասունի կոտորածի օրերին (1894), երբ սուլթան Աբդուլ Համիդ II-րդը ձեռնամուխ եղավ իր հայաստանի մրազրի իրակամացմանը, Ջանջևիը համղես եկավ Արևմտյան Հայաստանի գոհերին օգնություն կազմակերպելու նախաձեռնությամբ: 1897-1898 թթ. խմբագրեց «Врагская помощь пострадавшим в Турции армянам» գիրքը: Ջանջևիը մի շարք մեծագործությունների և ռուսաց մամուլի էջերում սփռված հարյուրավոր հոդվածների հեղինակ է:

րի հակաժողովրդական տեսությունները և սև գործերը: Նա նաև միջազգայնագետ էր, լավ գիտեր Հայկական հարցի դիվանագիտական պատմությունը: Նա բուրքագետ էր, լավ էր ըմբռնել ինչպես սուլթան Համիդի հայասպան քաղաքականության էությունը, այնպես և բուրբիզմի և պանթուրքիզմի հետապնդած նպատակները:

Ալեքսեյ Ջիվելեզովը ռուս ժողովրդի հետ հայ ժողովրդի անբախտելի բարեկամությամբ, հայոց ռուսական կողմնորոշման մեծագույն ջատագով էր: Դեռևս 1906-ին Մոսկվայում լույս ընծայած իր «Հայերը Ռուսաստանում» գրքուկի մեջ նա ռուս ընթերցողին ծանոթացնում էր հայ ժողովրդի պատմությանը, Ռուսաստանի հետ նրա պատմական կապերին: Ռուսական առաջին հեղափոխության (1905-1907) տարիներին Անդրկովկասում ազգային հարցի սրման պայմաններում, երբ ցարական իշխանությունները չէին խորշում ազգամիջյան ներհակությունները հրահրելու քստմենլի մեթոդից, Ջիվելեզովը չէր կարող անտարբեր դիտորդի դերում լինել: Նա հասարակությանը հիշեցնում էր 19-րդ դարի սկզբի իրադարձությունները, երբ արևելյան բռնակալական տերությունների հետ Ռուսաստանի պատերազմներում հայերը ռուսների ամենագործուն դաշնակիցներն էին: Թուրքմենչայի (1828) և Ալքիանապոլի (1829) հաշտության պայմանագրերի կնքումով տասնյակ հազար հայեր կյանքի նոր պայմաններ ունեցան ռուսաց իշխանության հովանու տակ: Սուրբ Էջմիածինը թոթափեց մահնեղական իշխանությունը: Այս ամենի մասին Ջիվելեզովը պատմում էր ռուս ընթերցողներին, հիշեցնում նրան 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմների հանգամանքները, Սան Ստեֆանոյի և Բեռլինի կոնգրեսի պայմանագրերը Բիրյունովի և Բիսմարկի ռուսաստացությունը, որից տուժեց և Հայկական հարցը: Նա ռուսական հասարակությանը պարզում էր 19-րդ դարի 90-ական թթ. թուրքահայ իրականության դժոխքը, 300 հազար հայության կործանումը սուլթանի, քրդական ավազակաբար բեկերի ձեռքով, միջազգային ինպերիալիզմի բողոչություն պայմաններում: 1915-ին Ջիվելեզովը Մոսկվայում հրապարակեց իր «Թուրքահայաստանի ապագան» մենագրությունը: Սա խնդրին քաջատեղյակ և հմուտ հեղինակի ձեռքով գրված Հայկական հարցի դիվանագիտական պատմության ուրվագիծ է: Գիրքն սկսվում է Սկրտիչ Խրիմյանի գործունեությունից, Հայկական հարցի շուրջ եվրոպական դիվանագիտության առաջին քայլերից, լուսաբանում խնդրի կարևոր կողմերը մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը: Խոհուն գիտնականը ճշգրիտ և դիպուկ ձևակերպումներով բացահայտում է եվրոպական գաղութատիրության հետապնդած նպատակները, բացատրում կապիտալի արտահանման ինպերիալիստական քաղաքականության էությունը: Համակրոնակից հայ ժողովրդի նկատմամբ քրիստոնեասիրությունը, խղճմտանքը չէին, որ ուղղություն էին տալիս եվրոպական տերությունների քաղաքականությանը, այլ կապիտալը, շահը, գրում էր նա: Միևնույն ժամանակ նա ուզում էր հավատալ, որ Եվրոպային ձեռնտու չէր թույլ տալ թուրքական պետականությանը՝ շարունակելու 19-րդ դարի 90-ական թթ. հայասպան

ուղեգիրը: Այս անգամ Ջիվելեզովն էր ընկնում ոչնչով չիմնավորված լավատեսական տրամադրության մեջ՝ կարծելով, թե կապիտալիստական տեղափոխումների տնօրենները կանխելու էին երիտթուրքական չարագործությունները: Ջիվելեզովը քննարկում է Հայաստանի հետ կապված քաղաքական, տնտեսական, ազգագրական, աշխարհագրական հարցեր, բերում քվական տվյալներ, սպացուցում Օսմանյան կայսրության տնտեսական, առևտրական կյանքում հայոց կարևոր դերը: Նա նկարագրում էր Հայաստան երկրի աշխարհագրական պայմանները, վերհանում իր սեփական երկրից հայերի հեռանալու, բնակչության թվի փոփոխության պատճառները: Նա անդրադառնում էր հայկական բարեփոխումների խնդրին (1912-1914), ցույց տալիս կազմերթվական Գերմանիայի խաղացած քացասական դերը:

Այս գրքում Ջիվելեզովն առանձնապես շեշտում է Ռուսաստանի դերը Հայաստանի ճակատագրում: Նա հայ ժողովրդի սպառնալուծությունը տեսնում էր ուսման հովանավորության մեջ: Նա գտնում էր, որ ոչ մի տեղություն չի վիճակի չէ Հայաստանին տալ պետական գոյության այն երաշխիքը, ինչ կարող էր անել Ռուսաստանը: Նրա կարծիքով ապագա ինքնավար Հայաստանի ռուսական կողմնորոշումը ենթադրում էր Ռուսաստանին վերապահել առավել քարենպաստող տեղության իրավունք:

Մեծ է Ալեքսեյ Ջիվելեզովի ավանդը «Արմյանսկի վեստնիկ» պարբերականի ստեղծման, դրա էջերում ռուս-հայ քարեկանությունը զարգացնելու, հայ ժողովրդի պատմությունը, մշակույթը ռուս ընթերցողին ներկայացնելու գործում: «Արմյանսկի վեստնիկ»-ը լույս էր տեսնում 1916-1918 թթ. Մոսկվայում, Իվան Թոլմաչի Ամիրովի կողմից, Ա.Ջիվելեզովի ակտիվ համագործակցությամբ: Ենթիվ Ա.Ջիվելեզովի ջանքերի, ռուս ընթերցողների շրջանում արմատավորվում էր ճշմարտությունը հայ ժողովրդի պատմության, կուլտուրայի մասին, թուրքական դժնի իրականության, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նրա ողբերգության հանգամանքների մասին: Ա.Ջիվելեզովի «Արմյանսկի վեստնիկ» շարաբաթերթի շուրջը համախմբված գրողների, հրատարակախոսների շարքում կային ինչպես հայ, այնպես էլ ռուս անվանի մտավորականներ: Հանդեսի առավել եռանդուն հեղինակներից էր Յուրի Վեսելովսկին: Նա տպագրում էր ինչպես չափածո գործեր, քարզամտություններ, այնպես էլ պատմագիտական, գրականագիտական ուսումնասիրություններ: Այստեղ է՝ լույս տեսել նրա «Հայ քանադակալի խոհերը» պոեմից մի հատված, Ալեքսանդր Ծատուրյանի¹ «Հայրենիք» բանաստեղծության քարզամտությունը, նկարիչ Նոյիշե Թադևոսյանին² նվիրված բանաստեղծությունը, «Ռու-

¹ Ալեքսանդր Ծատուրյան (1865-1917) - բանաստեղծ, քարզամանչ, «Մորացկան», «Թշվառին», «Արատի երգ մահից առաջ», «Տուր մեղր», «Ձիվորի երգը», «Սերմացան», «Այ սև անպեր», «Գիր» բանաստեղծությունների, «Գրչի համարներ» երգիծական ժողովածուի հեղինակ - Ա.Կ.:

² Նոյիշե Թադևոսյան (1870-1936), նկարիչ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ,

սակն հայասիրության արշալույսին», «Ռուս գրականությունը և հայ կյանքը», Բաֆֆուն նվիրված հոդվածներն ու այլ նյութեր:

«*Վեստնիկ*»-ի մշտական հեղինակներից էր Վալերի Բրյուսովը, որը հանդես էր գալիս հայ պոեզիայից կատարած իր թարգմանություններով: Պարբերականի էջերում մենք տեսնում ենք հայ ժողովրդի կյանքին իրենց ստեղծագործությունները, գրվածքները նվիրած բազմաթիվ հայասեր մարդկանց անուններ: Ալ.Կամարինը տպագրում է «Հայեր» հուշագրությունը, Ֆ.Սիբիրսկին՝ Վնասպորականին նվիրված իր հուշապատումը, Յու.Վերխովսկին¹՝ Հովի. Թումանյանի, Ավ.Իսահակյանի բանաստեղծությունների, Ե.Սիբելիևի կողման՝ Պեշիկբաշյանի ռուսնավորների թարգմանությունները, Սերգեյ Գորոդեցկին², Ս.Կրոտովը՝ Հայաստանին նվիրված բանաստեղծությունները, Սերգեյ Ջարովը՝ «Մի՛ լացիր, աշուղ» բանաստեղծությունը:

Չափազանց լայն էին Ալեքսեյ Ջիվելեզովի գրական, թատերագիտական-արվեստաբանական և հասարակական-քաղաքական հետաքրքրությունների և զբաղմունքների շրջանակները: Ընդհանուր պատմության, իտալական վերածնության խնդիրների հետազոտմանը զուգընթաց նա երբեք չի դադարել հետևելու, ռուսմասփրելու հայկական հասարակական-քաղաքական կյանքի երևույթները: Այդ են վկայում նրա բազմաթիվ հրապարակումները՝ նվիրված հայոց պատմության, հայ-ռուսական հարաբերությունների, հայթորական առնչությունների հարցերին:

Ալեքսեյ Ջիվելեզովը խորապես ըմբռնել էր հայ ժողովրդի ճակատագրում Ռուսաստանի վճռական դերն ու նշանակությունը: Նա ամուր թելերով կապված էր ռուս մտավորականության հետ, ռուսական մշակույթի հորդառատ ակունքից սեփական ժողովրդի զավակներին սնելու եռանդուն ջատագով էր:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նա իր գիտական, հրապարակախոսական ջանքերը կենտրոնացրել էր ռուս հասարակությանը Հայաստանի մասին պատկերացում տալու խնդրի վրա: Ջիվելեզովը գոհունակություն էր հայտնում, որ ռուսական հասարակական կարծիքը քաջատեղյակ է հայ ժողովրդի տանջանքներին, համակրում և օժանդակության ձեռք է մեկնում նրան: «*Արմյանսկի վեստնիկ*»-ի էջերում նա գրում էր. «Հայ ժողովրդին ռուսական հասարակության համակրանքը անհրաժեշտ է ինչպես օղբ. Հայաստանի հետագա ճակատագիրն ուղղակիորեն աղերսվելու է ռուսական հասարակական կարծիքի հետ»: Նա ուրախ էր, որ «կովկասյան բանակի հաջողությունները մոտեցնում են նպատակին, բանի որ նրանք մարքում են պատմական Հայաստանի տարածքը»: Նա հայտարարում էր, որ «հայ ժողո-

Հայ արվեստագետների միության (1916), Վրաստանի Գեղարվեստական ակադեմիայի (1923) հիմնադիրներից - Ա.Կ.:

¹ Յուրի Վերխովսկի (1878-1956), ռուս խորհրդային բանաստեղծ, թարգմանիչ, գրականության պատմաբան - Ա.Կ.:

² Սերգեյ Գորոդեցկի (1884-1967), ռուս խորհրդային բանաստեղծ - Ա.Կ.:

վորդը լի է Ռուսաստանի նկատմամբ ամենախոր երախտագիտությամբ, այն օգնության համար, որ նա ցույց է տալիս հայ գաղթականներին»: Նա լավատես էր, համոզված էր, որ հայ բնակչությունը ռուսաց պետական հովանու ներքո կկարողանա ոտքի կանգնել, նորից շինել իր բույնը: Նա գտնում էր, որ հայրենիքի վերաշինությանն իրենց մասնակցությունը պետք է բերեն աշխարհի բոլոր կողմերի հայերը՝ ռուսահայերը, պարսկահայերը, հնդկահայերը և մյուսները: Ձիվելեզովը մտովի անցնում էր առաջ, պատկերացնում Հայաստան երկրի վաղվա օրը, «նոր հայրենիքի կառուցումը», որը պետք է իր գիրկն առնե՝ շատերին, թուրքական ստրկությունից ազատվածներին: Նա գտնում էր, որ անթույլատրելի է մոռանալ «հեռու եղբայրներին, որոնք հոգում այդքան լավ հայկական զգացումներն են պահպանել և երբեք առիթը բաց չեն թողել դրանք արտահայտելու»:

Ավարովում էր 1915 թվականը: Հայ բնակչության ոչնչացման երիտ-թուրքական քաղաքականության ահավոր մանրամասները դառնում էին համաշխարհային հասարակական լայն շրջանակների սեփականությունը: Արդեն պարզ էր դառնում հրեշավոր չարագործության ահասարստ պատկերը: Ա.Ձիվելեզովը «*Արմյանսկի վեստնիկ*»-ի էջերում հանգամանորեն քննարկում էր արևմտահայության ողբերգության դրդապատճառները՝ գործողության մեջ դնելով իր ակադեմիական պատմագիտական, ազգագրական ու քաղաքական գիտելիքները: Նա ցույց էր տալիս, որ ջարդի ծրագիրն ընդգրկել էր Տրապիզոնի, Սըլվազի, Էրզրումի, Խարբերդի, Բիթլիսի, Դիարբեքի, Ադանայի նահանգների ընդարձակ տարածությունը: «Տեղահանությունն իրականացվում էր այն հաշվով, որպեսզի որքան հնարավոր է ավելի շատ ժողովուրդ սպանվեր քաղցից, ծարավից և գրկանքներից», - եզրակացնում էր նա: «Այս անգամ ոչ ոքի չէին խնայում, - շարունակում է նա, - ոչ հարուստ վաճառականության ներկայացուցիչներին, ոչ հոգևորականության բարձր դեմքերին»: Նա ցույց էր տալիս, որ Կ.Պոլսում տեղ գտած չափավորությունը պայմանավորված էր «չեզոք պետությունների դեսպանների աչքի առաջ կոտորած չարքելու զգացողությամբ»: Արևմտահայության հետ այն տարիներին կատարված դառնահետ իրադարձությունների ճշմարիտ պատկերը տրված է «*Արմյանսկի վեստնիկ*»-ի էջերում: Դրանք և՛ ռուս մարդկանց գրածներն են, և՛ եվրոպական մամուլի էջերում տեղ գտած հավաստի փաստերի բովանդակությունը: Այս ամենը մի-մի պատյակ են այսօրվա թուրքական չարամիտ կեղծարարներին և նրանց ամբերիկյան ու մյուս հովանավորներին: Ա.Ձիվելեզովն ամենայն քաջամտությամբ հետևում էր իրադարձությունների զարգացմանը: «*Վեստնիկ*»-ի էջերում նա անդրադառնում էր ինչպես թուրքագիտության զուտ քաղաքական ասպեկտներին, այնպես և միջազգային հարաբերությունների այն խնդիրներին, որոնք աղերսվում էին Հայկական հարցին, հայ ժողովրդի քաղաքական ճակատագրին: Նա հետևում էր համաշխարհային մամուլին, գրում գերմանական կառավարության պատասխանատվության մասին, միաժամանակ դրվատում Իոհանես Լեփսիուսի հայանպաստ գործերը: Նա քննարկում

էր, մեկնաբանում 1910 թ. Սալոնիկի երիտրոպրակաւ համագումարում Թալեաթի արտասանած մարդակերական ճառը, ցույց տալիս երկրի բուրքացման տեսութեան ու գործնականի թունավոր ակունքները:

Մեկնաբանելով գերմանացի ժողովախոսի հետ Թալեաթի գրույցը՝ Ջիվելեզովը բացահայտում էր արևմտահայոյթյան դահճի երեսպաշտութեան և ստախոսութեան ողջ քստմենլիությունը: Նա ցույց էր տալիս պատասխանատւութեան խուսափելու երիտրոպր ավագակապետի օժային գալարումները և եզրակացնում. «Հայերի կոտորածը իրականացվել է նախապէս մշակված պլանի համաձայն: Այդ ծրագրի գլխավոր կեան այն էր, որ որքան կարելի է ավելի շատ հայ կոտորվէր»: Նա ցույց էր տալիս գերմանական պետականութեան մեղսակցութիւնը:

Արդեն 1916-ին Ա.Ջիվելեզովը չէր տարակուսում, որ հանցագործները կանգնելու էին դատարանի առջև հարյուր-հազարավոր անմեղ մարդկանց կոտորելու, կանանց ու աղջիկներին լլկելու, մանուկներին ու ձերերին տանջելու մեղադրանքով: Այս փաստերն են այսօր փորձում աղակաղել, հասարակական կարծիքից, նոր սերունդներից թաքցնել պատմութեան թուրք կեղծարարները: Թուրքական պետականութեան ճակատին դաջված այդ խարանը ունանք փորձում են վերացնել ծիծաղաշարժ թերևտլիկութեամբ: Մեր օրերի թուրքական մամուլը, ամսագրերը, պատմագիտական գրականութիւնը թխում է, կեղծիքից հունցում ստախոսութեան նորանոր վարկածներ՝ օրինականացնելու հայ ժողովրդին պատճառված տերիտորիալ, նյութական ու բարոյական վնասները: 1916-ին Ա.Ջիվելեզովը երիտրոպրերի հակահայկական քաղաքականութեան մեջ արդեն տեսնում էր «սխտեմ», «մեթոդայնություն»: Հայերի ոչնչացումն «առաջ կատարվում էր բռնկումներով»: «Այժմ դրան դիմում են պլանայնորեն», - եզրակացնում էր նա: Նույն մեթոդներով, պլանավորված ու որոշակի սխտեմով ոճրագործների շառավիղները թաքցնում են հանցագործների հետքերը:

Ա.Ջիվելեզովը 1916, 1917 թթ. հանդես էր գալիս հայ գաղթականութեանը շտապօգնություն կազմակերպելու կոչով, ծրագրեր էր առաջադրում. «Գաղթականական զանգվածը մեծ է. կառավարական օգնությունը չի բավարարում: Մթերքը բիշ է: Բժշկական օգնությունը՝ սահմանափակ: Հիվանդությունները շատանում են: Միջոցներ են հարկավոր»:

1916-ի ամռանը հայ հասարակական շրջանների ուշադրությունը գամված էր Արևմտյան Հայաստանի ազատագրված հողերի վրա նորմալ կյանքը վերականգնելու, ջարդված ժողովրդի բեկորներին այդ տարածքների վրա հավաքելու, ջերմացնելու, օժանդակելու խնդիրներին: Ա.Ջիվելեզովն իր գլխավոր խոսքն ի նպաստ էր բերել այդ գործին: Նա հայկական կազմակերպություններին գործողությունների դիմելու, գործիմացութեան կոչ էր անում: Նա իշխանություններից պահանջում էր յիստընդոտե, այլ խրախուսել ժողովրդի վերադարձը Վանի, Էրզրումի շրջանները: 1916-ի հուլիսին նա գրում էր. «Թուրքերը ոչնչացրել են ամեն ինչ. սկսած մարդկանցից, վերջացրած բեր-

քով: Ռուսաստանը կօգնի հայերին՝ երկրի բնակիչներին՝ վերականգնելու կորցրածը: Քանի որ դա համապատասխանում է ոչ միայն հայերի, այլև Ռուսաստանի շահերին»: Նա կոչ էր անում վերականգնել հայոց դպրոցները, հիշեցնում էր, որ դպրոցական գործին արևմտահայությունը հիմք էր դրել, գարգացրել իր ուժերով, առանց թուրքական գանձարանից դրամական օգնություն ստանալու: Նա հավատում էր հայ ուսուցիչներին, բարձր գնահատում նրանց դերը հայ հոգևոր կյանքում:

1916-ի օգոստոսին Ջիվելեզովը լավատես էր: Նա համոզված էր, որ «թուրքական ուժերի ճնշումը հայկական ճակատում պետք է անպայման բուլանա»՝ «թուրքական բանակն ամբողջ ընդարձակ արևելյան ճակատում պետք է անցնի պաշտպանության»: Դրանում նա տեսնում էր հայ ժողովրդի վիճակի բարելավում: Խոսելով վաղվա օրվա մասին՝ նա հույս էր տածում Եվրոպայի նկատմամբ, որը պետք է հաշվի առներ հայոց զոհերը, ստեղծեր ազատ և ինքնուրույն զարգացման պայմաններ Հայաստանի համար: «Արմյանսկի վեստնիկ»-ի 1916-ի ամռան և աշնան համարներում նա մի շարք հոդվածներ նվիրեց այս խնդիրներին՝ ռուսաց հասարակությանը բացատրելով հայ ժողովրդի քաղաքական ձգտումների իմաստը: Նա հանդես էր գալիս ռուս հետադիմականների դեմ, համերաշխություն արտահայտում դեմոկրատական, առաջադիմական շրջաններին: Ջիվելեզովը բննարկում էր Արևմտյան Հայաստանի ազատագրված տարածքների վրա հայ բնակչության իրավունքները հարգելու, հողային հարցն արդարացիորեն լուծելու, գաղթականներին ընդառաջելու, նաև Հայաստանի հանրային հարստությունները շահագործելու և բազմաթիվ խնդիրներ:

Դատելով Ա.Ջիվելեզովի մի շարք հրապարակումների քվանդակությունից, նրա հարցադրումներից՝ գալիս ես այն հետևության, որ նա քաջաձանոթ էր Թուրքիայի նոր պատմության քաղաքական խնդիրներին, ռուսմտասիրել էր այդ պետության ներքին կյանքի առանձնահատկությունները: Նա հանգամանալի պատկերացում ուներ թուրքական իշխանությունների տիրապետության ներքո արևմտահայության ծանր դրության մասին և վերոմում էր հասու լինել հայ-թուրքական հարաբերությունների բոլոր կարևոր խնդիրներին: Այս առումով ամբողջությամբ պահպանում է իր արդիականությունը Ա.Ջիվելեզովի հրապարակած Բագրատ Ավագյանի «Նեոթուրանիզմը և Հայաստանը» («Արմյանսկի վեստնիկ», 1916, N 41) հոդվածը: «Նեոթուրանիզմ» ասելով հեղինակը նկատի ունի «պանթուրքիզմ» կամ «համաթուրքականության» քաղաքական վարդապետությունը: Նա գրում է. «Նեոթուրանիզմը, որպես քաղաքական գաղափար, իր առջև նպատակ է դնում սերտ դաշինք ստեղծել բոլոր թուրանական ցեղերի միջև՝ առանց հավատի ու լեզվի տարբերության, իսկ որպես ազգային գաղափար, ձգտելու է թուրանական ծագում ունեցող բոլոր թուրքական ցեղերի ազգային-կուլտուրական սերտ միության: Դա լինելու է ապագայում այս կամ այն ձևով քաղաքական միավորման առաջին պայմանը»: Նա մատնացույց էր անում այն հանգամանքը, որ հայերը և

Հայաստանը միայնակ են մուսուլմանական աշխարհում: Հեղինակը հիշեցնում էր 19-րդ դարի 90-ական թթ. Կ.Պոլսում Ֆրանսիայի դեսպանի մի հաղորդագրությունն իր կառավարությանն այն մասին, թե «Թուրքիան նպատակ ունի արմատախիլ անել Հայաստանը Կիլիկիայի հետ միասին, դրոնք սեպի նման խրված են մուսուլմանական Արևելքի սրտի մեջ»: Նա հանգում է այն եզրակացության, որ «ժայ ժողովրդի վերաբերմամբ Բարձր դուռն վերաբերմունքը, Փոքր Ասիայի հայկական նահանգներում նրա միջոցառումները 19-րդ դարի սկզբից մինչև ներկա պահը հանգում են մեկ նպատակի. Թուրքիան սխտեմատիկորեն կենսագործում է ...հայ ժողովրդին ոչնչացնելու մտածված պլան: Ռոտվիետև Հայաստանը, Կիլիկիան իրենց աշխարհագրական դիրքով քուրքական Անատոլիան տարանջատում են մուսուլմանական Միջագետքից, Իրանից և Թուրքիայից»:

Այս գրվածքը պատասխան է այսօրվա թուրքական կեղծարարներին ու նրանց ամերիկյան ու մյուս հովանավորներին: Արդեն այն ժամանակ բոլորին հայտնի էր թուրքական պետականության ոճրագործ էությունը: Իսկ այսօր դահիճների նորելուկ փաստաբանները, սոնիելները, սոյսալները, աբաևները, բիրտդները, հաուններն ու շունները, թուրքական ու ամերիկյան ուրիշ ստատուսներ փորձում են չքմեղացնել թալաաթներին ու էնվերներին, բոլոր մեծ ու փոքր մարդասպաններին:

Պանթուրքիզմի դեմ գրված հոդվածը լրացնում է ռուս հրապարակախոս Ն.Նիկոլսկի հրապարակումը՝ «Երիտթուրքերի քաղաքականության ճգնաժամը և նեոթուրանիզմը» հոդվածը (*«Արմյանսկի վեստնիկ»*, 1917 N 3): «Էնվերը և Թալեաթը, - գրում է Նիկոլսկը, - վկայակոչելով հայերի «քնածին սեպարատիզմը», որոնք իբր մշտապես երազել են քանդել Օսմանյան կայսրությունը, ձգտում էին արդարացնել հայ ժողովրդին ոչնչացնելու քաղաքականությունը, այն ներկայացնել որպես Թուրքիայի կողմից պետական ինքնապահպանման բնագոյի բնական դրսևորում»: Ն.Նիկոլսկը վկայակոչում է երիտթուրքական համագումարի նյութերը (Մալոնիկ, 1910 թ.), *«Ժե»* թերթի հրապարակումները, ցույց է տալիս երիտթուրքերի հակահայկական, հակաքրիստոնեական ծրագրի ազդեցիկությունը: Ռուս հրապարակախոսը բացահայտում էր օսմանիզմի ձախողման պրոցեսը: «Օսմանիզմը չհաջողվեց, - գրում է նա: - Դա խոստովանել են իրենք՝ երիտթուրքերը»: Դրա համար էլ նրանք ձեռնամուխ եղան կայսրության թուրքացմանը, «թուրքական տարրի ուժեղացմանը» ուրիշ ժողովուրդների՝ քրիստոնյաների և մուսուլմանների հաշվին: Վերջում Նիկոլսկը անում է ճշմարիտ եզրահանգում. Մալոնիկի համագումարը նորություն չէր: Այդ հավաքը «րև ձևակերպեց և կոնկրետացրեց այն, ինչ վաղուց արդեն բուն էր դրել իթթիհադականների գլխում»:

Տպագրելով Ն.Նիկոլսկի այս հոդվածը՝ Ա.Ջիվելեզովը օգնում էր ռուս ըմբերդողին՝ զաղափար կազմելու երիտթուրքական շարժման էության մասին:

* * *

Ալեքսեյ Ջիվելեզովը բացառիկ տաղանդավոր մանկավարժ էր: Տասնյակ տարիներ նա դասախոսեց Մոսկվայի, Նիժնի Նովգորոդի, Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում, դաստիարակեց արվեստագետ-քատերագետների, գրականագետների ու պատմաբանների մի քանի սերունդ: Նա հնայիչ էր, մարդկային ամենամուրբ բարեմասնություններով օժտված մի անձնավորություն: Նրան սիրում էին, հարգում ինչպես ուսանողները, այնպես և գործընկերները:

«...Ջիվելեզովն ապրում էր երկրի հետ, ժողովրդի հետ, մտավորականության կոչումը տեսնում էր այն բանում, որ հոգեպես հարստացնի հասարակությանը, ստեղծի նրա գաղափարական և հուզական մթնոլորտը... Ծնվելով և աճելով հին աշխարհում, նա օրգանապես մտավ նորը: Նա իրականացրեց ժամանակների կենդանի կապը, բայց ոչ որպես մասունքների պահապան, այլ որպես մի մարդ, որն իր մեջ գործնականորեն ամփոփել էր անցյալի այն ամեն լավագույնը, ինչ պետք է ապագայի զարգացման համար՝ հոգևոր բարձր կուլտուրա, իսկական մտավորականություն, անդադար առաջ շարժվելու ընդունակություն, ամենախոր առումով հումանիզմ»¹:

Նա ուսանողության կողմից ամենից շատ սիրված մանկավարժն էր, հավաստում է Բոյաշիկը՝ Ա.Ջիվելեզովի տաղանդավոր աշակերտը, որը հետագայում գլխավորեց Լուինաչարսկու անվան թատերական արվեստի ինստիտուտի արտասահմանյան թատրոնի պատմության ամբիոնը՝ շարունակելով իր ուսուցչի գործը: Ժամանակակիցները բարձր են գնահատում Ալեքսեյ Ջիվելեզովի բնավորության մարդկային առաքինի գծերը՝ ինտելիգենտությունը, բարիությունը, բանաստեղծական հոգին: Նա կենսասեր էր, եռանդաշատ: Նույնիսկ կյանքի մայրամուտին նրան երբեք չլրեց երիտասարդական ակունը:

Ա.Ջիվելեզովը որդիական սեր էր տաժում Սովետական Հայաստանի, նրա մարդկանց սոցիալիստական շինարարության հաջողությունների հանդեպ: Նա հետևում էր հայոց արվեստի ու թատրոնի գործերին, մասնակցում ՀՄՍՀ գիտությունների ակադեմիայի գործերին, որի թղթակից անդամն էր կյանքի վերջին տարիներին:

Պրոֆ. Հ.Ղանալանյանը² իր հուշերում պատմում է, թե ինչպիսի անհագ հետաքրքրությամբ էր Ջիվելեզովը վերաբերվում Երևանին, նրա փողոցներին, մարդկանց: Գառնիի տաճարը դիտելիս նա անզիր արտասանում էր Պեշիկ-բաշյանի հայրենասիրական բանաստեղծությունները: Հուշագիրը հավասար

¹ Аникст А. Алексеев Карпович Джигелегов. К 100-летию со дня рождения // Театр (М.), 1975, N 3, с. 107-111.

² Հովհաննես Ղանալանյան (1911-1994) - գրականագետ, բան. գիտ. դ-ր, պրոֆ., հիմնական աշխատությունները՝ «Ավետիք Իսահակյան», «Թումանյանի լիրիկան», «Պետրոս Ռուբյան», «Ահան Տերյան», «Դանիել Վարուժան» - Ա.Ա.:

տում է այն մեծ հարգանքը, որ տաժում էին մեծ գիտնականի նկատմամբ Սովետական Հայաստանի մտավորականները¹:

Պրոֆ. Ա.Արշարունին նկարագրում է 1945-ին Երևանում Սովետական Հայաստանի 25-ամյակի հանդիսություններին Ա.Ջիվելեզովի մասնակցության մանրամասները, շեշտում նրա հայրենասիրությունը: Վերադառնալով Մոսկվա՝ նա Հայաստանի մշակույթի տանը տեղի ունեցած հանդիսավոր ժողովում պատմում էր. «Սովետական Հայաստանի 25-ամյակի հանդիսության շատ ժողովուրդ կար: Հանրապետությունը ցնծում էր: Շատ հյուրեր կային: Շատ և շատ շոգ էր, արևոտ, ուրախալի... Միայն մի բարեկամ էր մոռացված: Նրան չէին հրավիրել: Եվ նա մոայլ էր, տխրությամբ էր նայում ցնծող ժողովրդին: Արաքսից այն կողմ, մյուս ափին, կանգնած էր նա, այդ չիրավիրվածը: Դա Արարատն էր...»²: Ալեքսեյ Ջիվելեզովը կյանքից հեռացավ 1952-ի դեկտեմբերի 14-ին: Նա սերունդներին թողեց գրական ու գիտական հարուստ ժառանգություն, թողեց հայրենասերի ու քաղաքացու բարի անուն:

¹ Դանալանյան Հ. Գիտության երախտավորները, հուշ-դիմանկարներ, Ե, 1982, էջ 43-56:

² Аршарун А. Встречи с прошлым, М, 1971, с. 147.

ԴՌՔ ՍՏՈՒՄ ԵՔ, ՊՐՈՖԵՍՈՐ¹

Ստամբուլի «Մարմարա» թերթից (18.01.1984 թ.) տեղեկացանք, որ Թուրքիայում լույս է տեսել հայոց դեմ ուղղված, Թալեաթին պաշտպանության տակ վերցնող ևս մի գիրք (Շիմասի Օրել և Սյուրեյա Յուճա, «Հայերի կողմից Թալեաթ փաշային վերագրված մի հեռագրի իրական դիմագիծը»): Մատնացույց անելով այս գրքի հեղինակների «ծառայությունը» Թուրքիային և բուրք ժողովրդին՝ Անկարայի համալսարանի պատմաբան, պրոֆեսոր Թյուրքբայա Աբայովը² «Նորոս» շաբաթաթերթի թղթակցի հետ ունեցած իր հարցազրույցում հայտարարում է, թե «բուրք գիտությունը սնանկացուցած է կեղծարարությունը»: «Ակադեմիական չափանիշով պատրաստված, ճշմարտությունները երևան հանելու ճիգն մը առաջնորդված աշխատասիրություն մըն է», - շտապում է շաղատանությանը գովեստներ պարզել թուրք պրոֆեսորը: Աբայովը մեզ հայտնի է իր մի շարք հրապարակումներից: Նա հավակնում է մեկնաբանել Հայոց հարցը, հայ-թուրքական հարաբերությունները: Այսօր արդեն աներկբա ճշմարտություն է, որ Աբայովը պատմության կեղծարար է, ժողովուրդների բարեկամության թշնամի, թալեաթների և մյուս մարդակերների ոճրագործությունների փաստարան և պաշտպան:

Այս բանում ընթերցողն ամմիջապես համոզվում է, երբ ծանոթանում է հարցազրույցի բովանդակությանը, նրա հեղինակի սնամեջ պնդումներին:

«Եթե օսմանյան պետությունը ցեղասպանության որոշում մը չէ տված, առիկա ոչ միայն թուրքերուն, այլև հայերուն համար ուրախառիթ իրողություն մըն է», - բացականչում է Աբայովը, իր իսկ ամհիմն, անտրամաբանական պնդումներից հրճված: «Կարգ մը հայեր, - շարունակում է նա, - որոնք անտեղի կերպով տեղահանված են, վերադարձված են իրենց տեղերը (՞), պատժի ենթարկված են այն անձերը, որոնք այդ սխալները գործած են կամ գեշ վերաբերում ցույց տված են տեղահանված հայերուն, այս կարգին ալ 1397 հոգի հանճնված են զինվորական դատարաններ, ոմանք մինչև իսկ պատժված են մահապատիժով»:

Աբայովը համերաշխ է Շիմասի Օրելին և Սյուրեյա Յուճային, որոնք թուրք ընթերցողին փորձում են համոզել, թե իբր Արամ Անտոնյանը³ 1921 թ.

¹ Կիրակոսյան Ջ. Դուր ստում եք, պրոֆեսոր // «Սովետական Հայաստան» (Ե.), 1984, N 9, էջ 10-13.

² Թյուրքբայա Աբայով (ծնվ. 1932), թուրք պատմաբան, Անկարայի համալսարանի քաղաքական գիտ. բաժանմունքի նախագահ, միջազգային հարաբերությունների պատմության, Հայկական հարցի մասնագետ - Ա.Կ.:

³ Արամ Անտոնյան (1875-1951), պատմաբան, հրապարակագիր, Կ.Պոլսում հրատարակել և խմբագրել է «Լույս», «Շաղիթ», «Խարազան» պարբերականները, «Պատմություն Բալկանյան պատերազմներու» ուսումնասիրության հեղինակ, 1914-ին նշանակվել է հայկական նամակների կայսերական գրաքննիչ, Հայոց

հրատարակված «Մեծ ոճիրը. հայկական վերջին կոտորածները և Թալեաք փաշա» գրքում կեղծել է Թալեաքի հեռագրերի բովանդակությունը, նրա ստորագրությունը, կնիքը և այլն: Աբայովը մատնացույց է անում Արամ Անտոնյանի հրատարակած հավաքածուի անգլերեն և ֆրանսերեն թարգմանություններին «տարբերությունները», ընթերցողին փորձում է համոզել, թե Ստամբուլի վարչապետական արխիվների, ներքին գործերի նախարարության և զանազան հաստատությունների արխիվների փաստաթղթերի վրա գտնված ստորագրություններն իբր չեն մտանվում «Անտոնյանի կողմն առաջ քաշված կեղծ փաստաթուղթերում վրայի ստորագրություններում»:

ՎաթսուՆչոբ տարի է անցել Արամ Անտոնյանի գրքի առաջին հրատարակությունից: Մի գիրք, որ լույս է տեսել աշխարհի շատ լեզուներով: Բայց ահա Հայոց դատը վատաբանելու, պատմության փաստերն աղավաղելու մոլուցքով բռնկված թուրք կեղծարարներն այսօր փորձում են համաշխարհային հասարակությանը համոզել, թե իբր Արամ Անտոնյանը կեղծագրեր է հավաքել, սուտ ու մուտ բաներ վերագրել «խեղճ» Թալեաքին: Միայն ճիվաղները կարող են թույլ տալ հայտարարելու, թե 1920-ին Լոնդոնում ու Փարիզում անգլերեն ու ֆրանսերեն, 1921-ին Բոստոնում հայերեն տպագրված այդ գրքերը կանխամտածված կեղծիք անելու միտումն ունեին: Հայտնի է, որ Արամ Անտոնյանը, լինելով դեպքերին ակնատես ու քաջատեղյակ, բծախնդիր կերպով հավաքել, մեկնաբանել և 1920-ին հրատարակել էր թուրք պաշտոնյա Նախմբեյի հուշերը, նրա տրամադրած փաստաթղթերը, որոնք կասկած անգամ չեն թողնում Թալեաքի և մյուսների կատարած ոճրագործության կազմակերպական, տեխնոլոգիական այլանդակ խոհանոցի մանրամասների մասին:

Ո՞վ էր Արամ Անտոնյանը: Որտե՞ղ և ինչպե՞ս էր նա հայթայթել Թալեաքի և երիտթուրքական մյուս պարագլուխների ժողովրդակործան կարգադրությունների հիմքերը:

Արամ Անտոնյանը գրող էր, հրապարակագիր, հասարակական գործիչ: Նրան ձերբակալեցին մյուս անվանի հայ մարդկանց հետ 1915-ի ապրիլի 24-ին և արտոբեցին Արևելք:

Ահա թե ինչպես է նկարագրում խնդիրն ուսումնասիրած բանասեր Վադինակ Բյուրատը. «Չթեչի Իսմայիլ Նայրին հնամաշ սայլ մը կրերն (1915-ի օգոստոսի 15-ին) և մեջը կնեստեցնե Վարուժանին, քծիչի Ռուրեն Սևակին,

պատրիարքարանին տեղեկություններ հաղորդելու պատճառով 1915-ին արտոբել է հայ մտավորականների հետ, Հալապում բռնագաղթի տնօրինության քարտուղար Նախմբեյից ձեռք է բերել հայերի տեղահանության մասին մի շարք պաշտոնական վավերագրեր, որոնք հրապարակել է «Այն սև օրերում...» (1919) և «Նախմբեյի հուշերը» (1920), «Մեծ ոճիր» գրքերում, այդ վավերագրերը օգտագործվել են նաև երիտթուրքերի և Ս.Թեյիթյանի դատավարությունների ժամանակ, «Աբտորի ճամբրում վրա» (1920) հուշագրությունների հեղինակ, 1920-ին ստանձնել է Հայոց ազգային պատվիրակության ղեկավարապետի պաշտոնը, 1928-ից՝ Փարիզի Նուբարյան մատենադարանի տնօրեն - Ա.Կ.:

գրող Արամ Անտոնյանին և գեղարվեստագետ կազմարար Հրանտ Մակա-գաճյանին, որպես թե Այաժ, Մարը Ղլչայի տանելու է, հազիվ թե մեկ ու կես ժամվա ճանփա զացած կըլլան, երբ կարոյի եզերքը նստած Արամ Անտոնյա-նը վայր կիյնա: Հրոտակը կտապանին կիրամայն. «Պարս շու բնոյեյի եղտա կեպերսին, սիվը արապայը (Ձգե այս շունը, թող ճամբուն սատկի, քշե կատրը)»:

Թյունեյ գյուղի մոտ, ձորի մեջ հրեշ ոստիկանը մորթում է մնացյալ երե-րին: Արամ Անտոնյանին հաջողվում է փրկվել, ապաքինվել և դեպի հարավ քշվող հայ տարագիրների հետ միասին անցնել սիրիական անապատներով, հասնել Հայեպ: Նա շատ բան է տեսնում, շատ բան է լսում: 1918-ի դեկտեմբե-րի 11-ին «Հայ ծայն» քերքը տպագրել էր «Կոչ Հայեպ գտնվող հայ գաղթա-կաններուն»: Այնտեղ ասված էր, որ Հայեպի ֆրանսիական և անգլիական զինվորական իշխանություններն ուզում էին ունենալ մանրամասն տվյալներ, տեղեկություններ գավառի ջարդերի մասին:

Կոչի հեղինակները խնդրում էին օգնել հայտնաբերելու իսլամների մոտ գտնվող հայ կանանց, աղջիկներին, տղաներին, նրանք խնդրում էին օգնել՝ պարզելու արտրված մտավորականներ Ալեոմու, Խաժակի¹, Ռուբեն Ջար-դարյանի², Մարգիս Մինասյանի³, Բարսեղ Շահբազի, դոկտոր Տաղավարյա-նի⁴, Ջեհանկյուլյանի սպանության, թաղման վայրը: Կոչի հեղինակները հայտնում էին, որ բոլոր ծանոթությունները «հիմք պիտի կազմեն մասնավոր տեղեկագրի մը, որ պիտի մատուցվի Փարիզի հաշտության կոնգրեսին»: «Ավելորդ է ըսել, թե այդ տեղեկագիրը մեծագույն զորավիզը պիտի ըլլա ամեն անոց, որոնք համաժողովին մեջ պիտի աշխատին հայկական դատին և մեր ազգապանջումներուն հաջողության»:

¹ Խաժակ (Գարեգին Չազալյան) (1867-1915), հասարակական-քաղաքական գործիչ, ՀՀԴ կուսակցության անդամ, 1906-ից հրատարակել է «Հատաջ» (Թ.) և «Այլք» (Թեհրան) քերքերը, 1912-ից՝ Մամարիայի ազգային վարժարանի տնօրեն - Ա.Կ.:

² Ռուբեն Ջարդարյան (1874-1915) - գրող, խմբագիր, հրապարակախոս, 1909-ին Կ.Պոլսում հիմնել է «Ազատամարտ» քերքը, կազմել և հրատարակել է «Մեղրա-գետ» ընթերցարանը, գրել է չափածո և արձակ բանաստեղծություններ, հեքիաթ-ներ, լեգենդներ, գրականագիտական հոդվածներ - Ա.Կ.:

³ Մարգիս Մինասյան, Արամ Աշոտ (1873-1915), խմբագիր, կրթական գործիչ, եղել է «Դրոշակ» (Ժնն) քերքի «Թուրքիո շուրջը» բաժնի հեղինակ, «Հայրենիք» (Բոստոն) օրաթերքի խմբագիր - Ա.Կ.:

⁴ Նազարեթ Տաղավարյան (Չատրճյան) (1862-1915), հասարակական գործիչ, գյուղատնտես, բնագետ, բժիշկ, 1885 թ. հիմնել է առաջին բնագիտական հանդեսը՝ «Գիտական շարժումը» (Կ.Պոլիս), 1908-ին ընտրվել է պատգամավոր օսմանյան խորհրդարանում Սեբաստիայից, խոշոր ավանդ ունի հայ իրականության մեջ բնագիտական, մարդաբանական, առողջապահական գիտելիքների տարածման գործում - Ա.Կ.:

Բոլոր տեղեկությունները պետք է ուղարկվեին Հալեպ, «Հոթել Պարոն», No. 5 սենյակ, պ. Արամ Անտոնյանին:

Արամ Անտոնյանը շփվում է շատ-շատերի հետ, տեղեկանում նորանոր փաստերի մասին: Նա ավելի մոտիկից է ծանոթանում թուրք պաշտոնյա Նախմ-բեյի հետ, որին քանիցս տեսել էր հայ տարագիրների խմբերի խնդիր-ներով զբաղվելու օգտին: Նախմ-բեյն է, որ նրան տրամադրում է թուրքական ճիվաղի հրամանների հիմքերը:

Արամ Անտոնյանը Նախմ-բեյին առաջին անգամ տեսել էր 1916-ի սկզբին Եփրատի ափերից ոչ հեռու՝ Մեսկինեի մեջ, Դեր-Չորի ջարդի մախթոբյակին: Նախմ-բեյը առաջադրանք էր ստացել արագացնելու արսուրյալ հայ զանգվածների ջարդը: Նա մի քանի ձևական առարկուններ արեց (սևկիաթ) դեպի Դեր-Չոր: Շուտով նրան պաշտոնանկ արին: Նրա փոխարեն նշանակվեց «Հազզը-բեյ անունը կրող զազանը, որը քիչ ատենում մեջ Եփրատի բովանդակ գիծը մարքեց Դեր-Չոր»: Թուրքերի հեռանալուց հետո, երբ Հալեպ մտան անգլիացիները, Արամ Անտոնյանը կազմակերպեց բազմաթիվ հարցազրույցներ՝ հազարավոր դժբախտ մարդկանց պատմությունը փրկելու համար: Արամ Անտոնյանին օգնում էր Հալեպի Ազգային միությունը: Յուզմունքներ էր տալիս նաև Նախմ-բեյը, որը շարաքներ շարունակ մեկիկ-մեկիկ ասպարեզ էր հանում այդ թղթերը: Անտոնյանը իր գրքում նշում է, որ «Նախմ անշուշտ շատ քան ալ ծածկեց, չտվավ ինչ որ կրճար տալ: Ինչ որ ալ ըլլա սակայն, ազուլին միշտ երախտապարտ պիտի մնանք իրեն, որ զոնե այդքանը ըրավ»: Նախմ-բեյն անհանգիստ էր, որ «փր ցեղին ընդհանուր շահում պիտի վնասե այդ թուղթերը, զորս ինձի կհանձնեք»: «Այդ դուկունենտներուն մեկ մասը իր հիշողությանց ընթացքին արտագրած է, և անոնցմե ամենեն կարևորներուն բնագիրները լուսանկարված են ներկա աշխատության մեջ», - շարունակում է Անտոնյանը: Նախմ-բեյը գաղթականների տառապանքը տեսել էր Ռեսուլ Այնուն, երբ դեռ նրանց առաքման գործով չէր զբաղված, այլ միայն՝ Ռեժիի ծխախոտի ֆրանսիական կազմակերպության քարտուղարն էր:

Նախմ-բեյը թուրք էր, Հալեպի դեպորտացիոն կոմիտեի գլխավոր քարտուղարը: Այս կոմիտեն էր գլխավորում տեղահանությունները: Երբ կոմիտեն տեսավ, որ մեծ թվով հայեր են կուտակված Մեսկինեում և Եփրատի ափերին, գործը արագացնելու համար ուղարկեց Նախմ-բեյին: Մա հայերին խնայում է մինչև անգլիացոց մուտքը Հալեպ: Երբ թուրքերը թողնում են քաղաքը, նա գերադասում է չմիանալ նրանց: Ականատեսները վկայում են, որ Նախմ-բեյը Իթթիհադի կոմիտեի, նահանգապետների հղած հեռագրերը, կարգադրությունները պահել էր՝ «վախենալով ասպագա պատասխանատվությունից»: Նախմ-բեյի հուշերը տալիս են ճշմարիտ նկարագրություններն այն ամենի, ինչ պատահել էր 1916-ից հետո: Ռեսուլ Այնուն կոտորվեց 70 հազար մարդ, Ինթիլիում՝ 50 հազար, Դեր-Չորում՝ 200 000: Մեծ թվով զոհեր եղան քաղցից ու հիվանդություններից: Մեկ միլիոն է հաշվվում զոհերի թիվը Ռեսուլ Այնուն և Դեր-Չորում:

Նախմ-բեյի հուշերի անգլերեն հրատարակության առաջաբանի հեղինակ Գլադստոնը իր խոսքը գրել էր 1919-ի դեկտեմբերի 24-ին: Նա գտնում էր, «որ տղամարդկանց, կանանց ու երեխաների ոչնչացման որոշումը ուղղակիորեն տրված էր թուրքական կառավարության կողմից»: «Մենք գիտենք սարսափելի փաստերը, - գրում է նա: - Լավ կլինի մաս իմանալ, թե ինչպես և ո՞նք կողմից են կոտորածները կազմակերպվել և իրականացվել»:

Ծածկագիրի հեռագրերի հայասպան բովանդակությունը ոչ մի կասկածի տեղիք չի տալիս: Դրանք իրական փաստաթղթերի պատճեններ են, ֆաբսիմիլիներ: Այդ թալեաթն էր, որ 1915-ի սեպտեմբերի 16-ին հեռագրում էր Հալեայի նահանգապետին. «Նախապես հաղորդված էր, թե կառավարությունը Ջեմիեթի (Իթթիհադի կոմիտեի) հրամանով որոշել է ամբողջովին ոչնչացնել Թուրքիայում բնակվող հայությանը»: Նա կոչ էր անում ոչ որի չիմայել, սպառնում էր պետական ծառայությունից հեռացնել բոլոր նրանց, ովքեր կբերանային այս գործում: Այլամ Անտոնյանը հրապարակել է իր ձեռքն անցած բոլոր հավաստի փաստաթղթերը, որ նրան տրամադրել էին Նախմ-բեյն ու մյուս ակամատեսները:

Նախմ-բեյի ինչատակած բոլոր պաշտոնյաներն իրական դեմքեր են, օրինակ՝ Հալեայի կուսակալ Ջելալ-բեյը, որը «ես նահանգիս կուսակալն եմ, նրա դահիճը չեմ կարող լինեք» ասելով հրաժարական տվեց պաշտոնից: Նրան հաջորդել էր Բեքիր Սամիլ-բեյը, որը 1920-ին դարձել էր Մուստաֆա Քեմալի արտաքին գործերի մինիստրը, Մուսկվա էր ժամանել ռուս-հայ-թուրքական բանակցություններին մասնակցելու համար: Սա ամեն ինչ արեց, որպեսզի իսամաձայնություն չկայանա, իսկ հետագայում դավեց Մովեսական Ռուսաստանի դեմ:

Հետո ասպարեզը բռնեցին Հալեայի նոր կուսակալ Մուստաֆա Աբդուլ Հալիզ-բեյը, նրա ենթակա մեծաթիվ պաշտոնյաները, որոնք նվիրվեցին արյունոտ գործի իրականացմանը: Այս բորենյին առաջ քաշվեց, Կ.Պոլսում նշանակվեց ներքին գործոց նախարարության խորհրդական՝ Թալեաթ-փաշայի ձեռքի տակ: 1916-ի փետրվարից Ռեսուլ Այնուն էր Ադանայում կուսակալ կարգված Էնվերի մոտերքայր, Վանի ջարդի կազմակերպիչ Ջեդեթ-բեյը: Այդ մա հրամայեց ջարդել վրանների տակ ծվարած հայությանը: Եվ, ընդհանրապես, ճշտորեն կատարեց Թալեաթի հղած բոլոր կարգադրությունները:

Մենք ոչ մի ստայնություն չունենք ընթերցողին ինչեցնելու հայոց կոտորածի ու տեղահանության յուրաքանչյուր կողմերը: Հանրահայտ է Թալեաթի հեռագիր-կարգադրությունների բովանդակությունը: Առանց երիտթուրքական պետական, վարչական, կազմակերպված միջոցառումների էին կարող պատահել տեղահանությունները, ջարդը, արյունահեղությունները:

Թուրքական պետականությունը թող հրապարակի Թալեաթի և մյուսների «իրական» ստորագրությունները, եթե այսօր կեղծիք են համարում 1920-ին հրապարակվածները: Տակավին 1919-ի հունվարին «Հայ ծայր» թերթի խմբագիր Սեդրակ Կեպեկյանը չէր տարակուսում, որ «թուրքեր սուրբերու, մարգա-

րեներու կարգը պիտի դասեն թալեաթներու, էնվերներու և գործակիցներու անունները»: Այսօր կատարվել է նրա կանխատեսումը:

Այսօր աթաններն ու սոյալները, բիրանդներն ու «Հյուրիներ»-ի ու «Միլիթեր»-ի մյուս գրչակները պաշտպանում են Արդուլ Համիդին ու նրա ռեժիմը, Թալեաթին, Էնվերին ու երիտթուրքական իշխանությանը, որովհետև քուրքական զինվորական իշխանությունները շարունակում են ավանդույթը. բանտերը լիքն են քաղաքական բանտարկյալներով. նրանց ծեծում են մահակներով, մրցում, թե ում գոհն ավելի ուժեղ և ախիողորմ կզնա: Իսկ թուրք պետական գործիչներն ու դիվանագետները ճառում են, աշխարհին հավատացնում, թե ընտրություններ են անցկացվել, Թուրքիան արդեն դեմոկրատական է, թե օգնեցեք մեզ Վաշինգտոնի ու Բոննի տնօրեններ. մենք պատվարն ենք ընդդեմ Ռուսաստանի, ընդդեմ կոմունիզմի:

Թուրք հեղինակներն իրենց հակասովետիզմը որպես կանոն շաղկապում են ավանդական ռուսատյացության հետ, ծուռ հայելու մեջ ներկայացնում ռուս-թուրքական հարաբերությունների, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմությունը: «Մովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանի մեջ ռուսները երեսուն տարին ի վեր հայերուն «Արարատի» գրգռություն ներարկել կջանան», - այսպես է քարքաջում «Թարջյուման» թերթի էջերում ոչ անձանոթ թուրք հեղինակ Ահմեդ Գապարլըն:

Մինչ Արամ Անտոնյանը 1920-ին Լոնդոնում կերտարակեր իր գիրքը, «Ստամբուլ» թերթն առաջին անգամ 1919-ի հունվարին հրատարակեց 1915-ի նոյեմբերի 10-ին հայերին կոտորելու մասին Թալեաթի հեռագրի պատճենը: Այնուհետև այն տպագրվեց հունական «Անթիսիսիսիսի» թերթում (No. 666), իսկ Լոնդոնի «Թայմս»-ը տպագրեց փաստաթղթի լուսանկարը և 1919-ի հունվարի 24-ին գրեց. «Բացահայտ կերպով հաստատվում է, որ կոմիտեի (Իթթիհատի) կառավարությունը սխտեմատիկ կերպով ծրագրել էր մի ամբողջ ազգի քնաջնջումը»:

Թալեաթի հեռագրերի բովանդակության քացահայտման ու լուսաբանման գործում առաջնությունը պատկանում է ոչ թե Արամ Անտոնյանին, ոչ թե հայերին, այլ Թուրքիայի ներքին գործերի նախարար Մուստաֆա Արիֆ-բեյին: Նրա հրամանով սկիզբ դրվեց Թալեաթի հակահայկական հրամանների քննությանը: «Ենի Ստամբուլ»-ը խնդիրը կարևոր էր գտնում և անհրաժեշտ համարում, որ «ընդի մարմինն անկողմնակալ ու չեզոք անձերեն կազմվի, որպեսզի այդ արյունալի մեղքին նողկալի հեղինակները պետք եղածին պես ցուցադրվին»:

Հետո Կ.Պոլսի և այլ քաղաքների թերթերի էջերում մեկը մյուսի հետևից տպագրվում էին Թալեաթի, Էնվերի, Նազիմի, Ջեմալի և մյուսների հանցանքները քացահայտող նյութեր: Փորձենք վերականգնել հայոց ողբերգության շուրջն այն օրերին Կ.Պոլսում տիրապետած հասարակական-քաղաքական մթնոլորտն ի գիտություն Աբայովի: Տեսնենք, թե ինչ էին գրում, ինչ էին խոսում իրենք իսկ՝ թուրք գործիչները հայոց ողբերգության մասին:

1918-ի նոյեմբերի 23-ին թուրքաց պառլամենտում տաք վիճաբանություններ տեղի ունեցան ջարդերի շուրջը: Թուրքական հասարակական-քաղաքական միտքը նույնպես պտտվում էր լոկ Իքբիհադի պարագլուխների վրա մեղքը բարդելու շուրջը: 1918-ի ավարտին՝ 1919-ի սկզբին, այս սխեման տիրապետող էր թուրքական մամուլի էջերում: Քանիցս այս ոգով էր արտահայտվում նոր սուլթանը՝ Վահաեդդինը: Եվ, ընդհակառակը, հայ քաղաքական գործիչները, թերթերը ապացուցում էին կատարված շարագործության ընդգրկված լայն ծավալները, ցույց էին տալիս հակահայկական քաղաքականության համապարփակ բնույթը, թուրքական հասարակության բոլոր խավերի մասնակցության փաստերը: Ինչ խոսք, ճշմարտության օգտին խոստովանություններ անող թուրք գործիչները, լրագրողները միաժամանակ փորձում էին սիրաշահել հայերին, միամտացնել, անհոգացնել իրենց քաղցրալեզու կեղծավորություններով: Մրանց շարքերում կային այնպիսիները, որոնք չէին խորշում սպառնալիքներից, թուրքական պետականության անունից, ուժի դիրքերից խոսեցին:

1918-ի նոյեմբերի 23-ին «Չիման» թերթն իր խմբագրականում ընդունում էր, որ «այսօր թրքությունն ու թուրքերը մեծ ամբաստանության տակ կգտնվին, ասիլա ամենքիս ծանոթ է այդեմ»: Միաժամանակ թերթի թուրք տնօրեններն անհանգստացած էին, որ «եթե մեր ուսերու վրայեն այս ամբաստանությունը թորափելու համար պատրաստություն մը չտեսած հաշտության ժողովին ներկայանանք, շատ մեծ վնասներու պիտի ենթարկվինք: ... Ուրեմն, եթե հիմնականն չպատրաստվինք, մեր բախտը վճեղու ժամանակ հանցավարտի պարտի վրա պիտի գտնանք ինքզինքնիս»:

Թերթը գտնում էր, որ «ոճիրը կա», բայց ոճիրների հեղինակը թուրք ազգը չէ, «այլ սակավաթիվ անձերն են ճճրագործները»:

Թյուրքքայա Աբայովն իրեն պատմաբան է համարում: Անկարայի համալսարանի պրոֆեսոր է: Ուզում ենք նրան խորհուրդ տալ ձեռքը վերցնի «*Uspush*» թերթի 1918-ի նոյեմբերի 27-ի համարը, կարդա թուրքական պառլամենտում հայոց կոտորածների առիթով Ահմեդ Ռիզայի բաջրիրի մասին գրված խմբագրականը: Հեղինակները մշտապես պահանջում են, թե արաբատառ կամ օսմանյան թուրքերենից օգտվելը դժվարությունների հետ է կապված, բառերի իմաստը փոխվել է, այդ լեզուն իմացողների թիվը սահմանափակ է դարձել: Այս նպատակով ուզում ենք խորհուրդ տալ՝ ընթերցի «*Արքարամարտ*» թերթի 1918-ի նոյեմբերի 28-ի թիվ 8 (1823)-ը: Խմբագրության հասցեն էր՝ Կ.Պոլիս, Բերա, Գապրիսթան փողոց (ամերիկյան դեսպանատան դիմաց), թիվ 37: Թերթի ճակատին, բացի արաբատառ թուրքերենից, ֆրանսերեն գրված էր՝ Artarmart, journal armenien quotidien: Հիշեցնենք, որ «*Uspush*»-ի խմբագիրն Ալի Քեմալ-բեյն էր: Նա, խոսքն ուղղելով այն երեսփոխաններին, որոնք փորձում էին հայերին նույնպես մեղադրել, ասում էր. «Ո՛չ, հայերը թուրքերուն այս տեսակ բռնություններ չըրին, հայ վարչապետներ, հայ նախարարներ, կուսակալներ ու պաշտոնյաներ պաշտոնապես և կանոնավորապես

թուրքերը նահանգն նահանգ չըջեցին և ճամբուն բարբարոսաբար չսպանեցին, հասկցաք: Դուք թուրքերը ապուշի տեղ դնելով կեղծ ազգասերի ձևեր մի առնեք, ձեր չհավատացած խոսքերը մի քսեք»:

Տակավին 1918-ի աշնանը, երբ որոշ թուրք հեղինակներ խոսք էին բացում նաև թուրք բնակչության տառապանքների, զրկանքների ու զոհերի մասին, նրանց պատասխանում էին.

«Թուրքերը զանգվածովին ո՞ր տարագրվեցան, ո՞ր շրջաններու մեջ կամոնավորաբար կազմակերպված իշխանությունները բնաջնջեցին թուրքերը: Որո՞նք օգտվեցան ամբողջ զավառներու թալանումեն:

Տղայական ու զզվելի է, ուրեմն, ըսել, թե թուրքերը ոչ իսլամներու չափ տառապած են: Ասանկ անբարո առասպելի մը ոչ որ կրնա հավատալ»:

«*Սեռոզ*» թերթի խմբագրապետ Ատաֆ Մուսամբերը «Ի՞նչ ընելու ենք կարենալ ազատվելու համար» խորագրի տակ գրում էր. «Պետք է նախ անմիջապես Իթթիհադ Թերազզը կուսակցության ամբողջ բեկորները պատժել ու բնաջինջ ընել, հետո այդ կուսակցության և իր մարտոց գողությանը հավաքված հարատուրթյունը բաժանելու է որքերուն: Հակառակ պարագային նույն կուսակցության երեսն տառապած տարրերը երբեք մեր օձիգը չպիտի ձգեն, և Եվրոպա ալ մեր բարեկամեցողության երբեք ականջ չպիտի դնի»:

Ահա թե ինչ էր գրում «*Սարահ*» թերթում 1919-ի հունվարի 28-ին ներքին գործերի մինիստր նույն Ալի Քեմալ-բեյը. «Չորս-հինգ տարի առաջ երկրին մեջ գործադրվեց պատմության մեջ եզակի, աշխարհասպան մի ոճիր: Նկատի ունենալով ոճրի հսկայական չափն ու ծավալը, պետք է ընդունել, որ նրա հեղինակները հինգ, տասը հոգի չեն, այլ հազարներ: Ջարդովոճները, եթե 600 000-ի փոխարեն 300 000, նույնիսկ 200 000 կամ 100 000 լինեին, հարյուր, հինգ հարյուր, հազար ոճրագործ անգամ չպիտի կարողանային բնաջնջել այսքան մարդ: Արդեն ապացուցված իրողություն է, որ այս եղեռնը ծրագրվեց Իթթիհադի ընդհանուր կենտրոնի որոշումներով ու կարգադրություններով»:

Մինչ Արամ Անտոնյանը Եվրոպայում հրապարակ կհաներ Նախմ-բեյի հուշերը, 1918-ի նոյեմբերի 26-ին «*Հայ ծայն*» թերթը (No. 5) Կ.Պոլսի «*Ճամանակ*» թերթից արտատպել էր Թալեաթ-փաշայի մի հրամանը, որն ուղղված էր Անկարայի կուսակալ Աթթիին, վերաբերում էր հայերի կոտորածը կազմակերպելուն: Հրամանի շարադրանքը տալիս ենք թուրքերեն, բայց հայերեն տառերով, ինչպես այն տպագրված է եղել 1918-ի նոյեմբերի վերջին. «Պիլա թերետտեվտ վե մեր համեթ պիր այլըզտան տոզան եաշըմաբատար իթլաֆը, շեհիր տերունիմտե, էհալի հազուրըմտա օլմա մասըմա, տիզգաթ»: Ահա հայերեն քարզմանությունը. «Առանց տատանումների և խղճահարության մեկ անսականից մինչև ինճսուն տարեկանի սպանությունը: Սակայն ոչ քաղաքում, ոչ էլ ժողովրդի ներկայությամբ, ուշադրություն»:

Գահաժառանգ իշխան Մեճիդ-էֆենդին հետևյալ հայտարարությունն էր արել «*Մորնինգ փոստ*»-ի Կ.Պոլսի թղթակցին. «Մարսափելի ջարդեր, որոնք հաջորդաբար տեղի ունեցան, նսեմացուցին մեր ազգն ու ցեղը: Այս ջարդերը

գործն են Թալեարի և Էնվերի: Այս կոտորածն սկսելն առաջ հարցուցած էի Էնվերն, թե սպանող ծրագրվա՞ծ էր: Շատ պարզ կերպով պատասխանեց, թե ջարդերը որոշված էին, իրենց ծրագիրն էր սպանողը: Սուլթանի մոտ զացի և խնդրեցի, որ միջանոս: Սակայն կայսերական գերդաստանն ու քուրք ժողովուրդը որևէ կերպ պատասխանատու չեն այս կոտորածներուն: Եթե արդի սուլթանը նախագահած ըլլար իշխանությանց, այս ջարդերին ոչ մեկը տեղի կրնար ունենալ»:

Միքայել Նաբանյանը «Կերպարողներուս պարտականությունը» հոդվածում գրում էր, որ պետք է մատնացույց անել «վայրագության ծնողներն ու գործիքները», չմոռանալ պահանջել սեփական իրավունքները:

«Ժողովրդի ծայն»-ը քուրքական իշխանություններից պահանջում էր հայ որբերին հանձնել «հայ ժողովրդին, օրինակոր տիրոջը», «մենք պետք ունինք մեր որբերուն»: Թերթը բննադատում էր «Թասսիլի-ի Էլշյարի»-ն, որը հայ որբերուն չեզոք տուն հանձնելու խնդիր էր հարուցել:

Թուրքական «Մինսկեր» («Ամբիոն») թերթը, անդրադառնալով իթքի-հադայական հայասպան քաղաքականությանը, գրում էր. «Պատմության հանդեպ մեր պետերուն մեծ ու անմերելի պատասխանատվություններուն մեկն ալ երևան եկավ հայ ազգին նկատմամբ իրենց հողի ընթացքի մեջ: Եթե մույնիսկ կարելի ըլլար հայությանը վերացնել աշխարհի վրայեն, արդյոք վնասն գատ ի՞նչ շահ կար»: «Մինսկեր» թերթի հողվածագիրը փաստեր ու քվեր էր արձանագրում, ցույց տալիս հայերի ոչնչացման տնտեսական ծանր հետևանքները երկրի համար: «Ժողովրդի ծայն» խմբագրությունն իր կողմից գրում էր. «Մինսկեր»-ի հողվածագիրը ուր էր այն բուպեին, երբ հայ ժողովուրդը բնաջինջ կըլար: Այսօրվան ողբը երեկվա գոհունակության ճիւղ չի խլացներ»:

Թուրքական «Հատիսաք» թերթի խմբագիրը Տիգրանակերտի կուսակալ, դոկտոր Ռեշիդ-բեյին ներկայացրել էր «հիսուն հազարն ավելի կին, այր, տղա, անմեղ ժողովուրդ», «երեք կայմական սպանելու, երեք հարյուր հազար ոսկի և գոհարդին կողպտելու մեղադրանք»:

«Փրքի Փարիզին» թերթը հաղորդում էր, որ Կ.Պոլսում հայկական ջարդերու մեղավորներու «քննություն մը քացված է», «հաստատված է, որ մեկ միլիոն հինգ հարյուր հազար գոհ կա և այս կոտորածներուն զլիավոր պատասխանատուներն են Էնվեր-փաշա, Թալեար-փաշա, Ջեմալ-փաշա և գորավար Լիման ֆոն Սանդդեյն»: Հայ ժողովրդին հարյուրեն հայո եղանակով միայն պիտի մաքրվի», - եզրակացնում էր թերթը: Թուրքական պատմությունը մաքրելու կողմնակիցները վաղուց պատմության գիրկն են անցել: Նրանց ժառանգներն այսօր այդ պատմությունն ավելի են աղոտտում իրենց ստախտություններով, կեղծագրերով ու վայրագ աղավաղումներով:

«Հատիսաք»-ի մեջ Մուլեյման Նազիֆ-բեյը չէր ժխտում, որ հայերը մի-լիոնավոր գոհեր տվին 1878-ի Բեռլինի կոնգրեսից հետո, «վազելով ցնորքի մը Եստեան» («Շողովրդի ծայն», 26.04.1919):

1919-ի ապրիլի 24-ին, 25-ին Կ.Պոլսի թերթերը նշում էին 1915-ի գոհերի հիշատակը: Տիգրան Չավենը¹ «Շողովրդի ծայն» թերթում գրեց. «Այդ գիշերն է, որ թուրք բռնակալությունը, բռնակալություններուն են վայրագն ու են ար-յունկզակը դավադրեց հայ ժողովրդի մտածող ու գործող ուժերուն դեմ»: Ապ-րիլի 24-ը հռչակված էր սգի օր: «Այսօր հինգերորդ տարեդարձն է այն չարա-շուք թվականին, երբ հայ մտավորականությունը մեկիկ-մեկիկ հավաքվելով դաժան լրտես-պաշտոնյաներու ձեռքով և հեռացվելով Պոլսեն, անգամ մըն ալ չվերադառնալու համար: Մեր չքնաղ մտավորականության խողխողման հի-շատակը հավերժացնելու նպատակով է, որ կազմակերպված են այսօր սգա-հանդեսներ...»:

1919-ի ապրիլին լույս տեսավ «Հուշարձան Ապրիլ տասը մեկի» (նոր տոմարով 24-ի) պատկերազարդ հատորը, որի մեջ հավաքված էին նահա-տակված մտավորականների անտիպ գրվածքները: «Հայ Տրամադիք ընկե-րությունը» «Բերա Օղեոն» քատրոնում կազմակերպեց ազգային մեծ սգա-հանդես:

Աթալվների կարծիքով Կ.Պոլսի 1919-ի սգահանդեսները նույնպես կեղծված բանե՞ր էին:

1919-ի մայիսի 2-ին Լոնդոնի «Թայմս»-ը գրեց. «Ինչ որ ըսվեցավ և կըս-վի հայկական սարսափներու մասին, երբեք չափազանցություններ չեն, հիմն-ված են անգլիական պաշտոնական տեղեկագիրներու վրա»:

«Սարսափ» թերթը դատապարտում էր այն ստահակներին, «որոնք քչե-ցին երկիրը դեպի փորձություններու զարհուրելի խորխորատը»: Այս մարդիկ ի՞նչ պիտի պատասխանեն արյոք այն ծածկագիր հեռագիրներուն և փաս-տերուն, որ կտանվին ամբաստանիչ մարմնի փաստացի որոշմնագրի մեջ, և որոնք անիերբիլորեն կհաստատեն, թե Իթքիհաղը ամենակարևոր կապ ունե-ցած է «Թեշքիլաք-ը մահտուսին» և ջարդերուն հետ: ... Իթքիհաղն ալ մեռած է քարոյապես ազգին համար:

Իթքիհաղը միանգամից անճանալի չեղավ: Նրա տնօրենները «երկիրը մահամերձ վիճակին հասցնելն ետքն անգամ չեն դադրած աշխատել, տա-կավին վերակենդանացնելու համար իրենց չարաշուք հաստատությունը», - այսպես էր գրում «Հատիսաք»-ի մեջ Մուլեյման Նազիֆ-բեյ հեղինակը:

Թերթերը գրում էին, որ «Միմակ էնվեր, Թալեաք և Ջեմալ մը չէր կարող ջարդել միլիոն մը, եթե իրենց հավատարիմ խնկարկուտները չհանդիսանայիք.

¹ Տիգրան Չավեն (Չուգասյան) (1874-1938), հասարակական գործիչ, խմբագիր, Կ.Պոլսի «Մուրհանդակ», «Շողովուրդ», «Շողովրդի ծայն», «Ջարրոնք» պարբե-րականների խմբագիր, 1933-ին ներգաղթել է Հայաստան, անհիմն բռնադատվել է, գնդակահարվել - Ա.Կ.:

բուրբերը թե բիկունք եղան անոնց հայաջիմջ կործանարար ծրագրին իրագործման և կույր գործիքը անլուր ջարդերու»:

Հասարակական կարծիքը նկատում էր, դժգոհում, որ բուրբական պետականությունը փորձում է կիսատ-պղատ խոստովանություններով, առանձին դեմքերին մեղադրելով բուրբական պետականությունից, բուրբականությունից հեռացնել մեղադրանքը: Մարդիկ չէին բավարարվում Իթքիհաղի տնօրենների հասցեին քննադատությամբ, առաջ էին անցնում, հարվածում բուրբ պետականությանը, հիշեցնում նրա արատները դարերից ի վեր:

Իթքիհաղի պարագլուխները իշխանությունից հրաժարվեցին 1918-ի հոկտեմբերի սկզբին: Հոկտեմբերի 30-ին կնքվեց Մուղոսի զինադադարը: Օսմանյան կայսրությունը ծնկի եկավ: Կառավարությունները փոխարինում էին մեկը մյուսին: Թուրքական պետականությունը գալարվում էր, հարմարվում ստեղծված իրադրությանը, ձգտում այն բանին, որպեսզի փրկեր իր անունը, հեղինակությունը, նվազագույնի հասցնեի երկրի տարածքային կորուստները:

Ինչ խոսք, որ բուրբական մամուլը մատնված էր «ձեռ իրարանցումի»՝ խնդիր ունենալով «ինչպես փրկել Թուրքիոն նավը, որ ջուր կառնե ամեն կողմն»: Դրան զուգընթաց թուրք լրագրողները, քաղաքական դեմքերը երեկվա ահռելի արյունահեղության շուրջն իրենց խոստովանություններով ձգտում էին շահել եվրոպական հասարակական կարծիքի համակրանքը, նպաստել բուրբական պետականությունը փրկելու գործին: Ունանք եղբայրության և համերաշխության հուզիչ կոչեր էին անում երեկվա անարգված, իրավագուրկ «գլավուրներին», մյուսները (օրինակ՝ Մուլեյման Նազիֆ-բեյը «Հատիսաթ» թերթի էջերում) սպառնում էին, յաթաղանը ցույց տալիս: Բաղդադի երբեմնի կուսակալը զավեշտական լրջությամբ պնդում էր, թե Հայաստանը «պատմականապես» բուրբական է՝ «Մամտնեն մինչև Վան, այդ ընդարձակ տարածության վրա կարելի չէ ցույց տալ քաղաքակիրթ ձեռակերտ մը, որ հատուկ շրջա օսմանյան պետությանը»: Ունանք մղեցնում էին, սպառնում, թե թույլ չեն տալու, որ այդ հողերի վրա Հայաստան ստեղծվի: Մյուսները, սպասելով Անտանտի դատաստանին, ամհանգստացած օսմանյան տերության վաղվա ճակատագրի համար, «ոյալ» դիրք էին բռնել:

Արդեն 1918-ի նոյեմբերին Կ.Պոլսի թերթերը գրում էին. «Հարյուր հազարավոր նահատակներու արյունը՝ սրակված Արարատի ստորոտեն մինչև Դեր-Ջորի անապատը, կբողոքե աշօր»:

«Մենք կպպասենք, այո՛», որ ներկա կառավարությունը իր խորունկ, իր անկեղծ ցավը հայտնի հրապարակավ, գործված ահռելի եղեռնին համար, ասով գոնե բովանդակ աշխարհի առջև նողկանքով խարամած պիտի ըլլար անիրավություններն ու ոճրագործությունները»:

1918-ի ավարտին այնքան շիկացած էր մթնոլորտը երիտթուրքական ոճրագործների շուրջը, այնքան ակնհայտ էր նրանց կատարած չարագործությունների սոսկալիությունը, որ սուլթանի հատուկ հրամանագրով զինվորական դատարան գումարելու խնդիր հարուցվեց: Աթայովը նույնպես հիշա-

տակում է այս փաստը: Նա գրում է, թե 1300 հոգի դատվել են, էլ ինչ եք ուզում: Հետո հեշտությամբ սահում է այդ փաստի վրայից: Եթե Թալեաթի «փրաման-ները չեն եղել», դրանք սոսկ «կեղծված», հնարավոր թղթեր են, ապա ինչո՞ւ էին դատում այդ ոճրագործներին:

Աթալվների խնդիրը հենց այն է, որ այսօրվա թուրքական հասարակությունից բացթված իրական փաստերը: Հիշեցնենք զինվորական դատարանի հետ կապված մի քանի փաստեր:

1918-ի ավարտին, 1919-ի սկզբին Կ.Պոլսի թերթերն ամեն օր հաղորդում էին իթքիհադական գործիչների ձերբակալությունների մասին:

«Թյուրքչի Ստամբուլ» թերթը գրում էր. «Իթքիհադական պարագլուխներու ձերբակալությունն ամեն կերպ արժանի է գնահատության: Արդարև, ինչ կա ավելի ուրախալի, քան տեսնել արդարության ձեռքը համձմված հայրենիքի այն դավաճանները, որոնք առաջնորդեցին երկիրը դեպի անկումի խորխորատը, ոտնակոխ ըրին երկրին արժանապատվությունը, բռնաբարեցին պատիվները, խոշտանգեցին, կողոպտեցին, մեկ խոսքով գործեցին ամեն տեսակի գազանություններ»:

«Ալեմդար»-ի մեջ Ռեֆե Ջիադ-բեյը մի խմբագրական էր գրել, որտեղ անդրադարձել էր Իթքիհադի կիրառած թյուրքիճուրյան ծանր հետևանքներին: «Այլևս փորձերս կշտացավ այս ազգային ճիսքեներն (ազգայնականություննից – Ջ.Կ.)», - գրում է թուրք հեղինակը: Նա եզրակացնում է, որ եթե իթքիհադականները պետք է շարունակեն իին ընթացքը, «թող իրենց էշերուն բեռցնեն իրենց մազի վրանները» ու «վայրկյան մը առաջ կորսվեն ու երթան ասկե..., կուզեն թող Թուրան երթան, կուզեն՝ Իրան»:

«Փըթի Փարիզինն» թերթի Կ.Պոլսի թղթակից Մորիս Պրաքը *«Թասաֆիրի Է-ֆիհաստ»* թերթին արել է հետևյալ արտահայտությունը. «Հայկական դեպքերն արտասահմանի մեջ շատ զեշ գաղափար մը կազմել տված են թուրքերուն նկատմամբ: Տարակույս չկա, որ հետապնդություններն ու պատիժները շատ լավ ազդեցություն պիտի գործեն: Թուրքերը պիտի աշխարհին ապացուցեն, թե իրենց հարաբերությունները խզած են Իթքիհադ պարագլուխներուն հետ..., ֆրանսիացիներն իրենց բնդանոթներով, գնդացիորներով և իրացաններով այնչափ գեղման սպանած են, որչափ թուրքերը՝ հայ»:

Փարիզի խաղաղության կոնֆերանսի օրերին *«Դեյլի Թեյեզրաֆ»*-ը հայ ժողովրդին համարում էր «գազանային ջարդերու գոհ դժբախտ ազգ»:

«Ժողովրդի ձայն» թերթի խմբագիր Տիգրան Չավենը առաջնորդող հոդվածը վերնագրել էր «Բռանկանության ձայներ»: Հոդվածը նվիրված էր թուրքական *«Ալեմդար»* թերթին, որը քննադատել էր թուրքական զինվորական դատարանի աշխատանքի դանդաղկոտ ոճը: «Ասոնք այն կարգի ոճիներ են, - կըսե *«Ալեմդար»*, - որ բնավ պետք չունին գատ-գատ քննություններու: Անոնք թե հայտնի են և թե հաստատված: Չիքանհներեն շատ քիչ մարդ կա, որ մեղսակից չըլլա տարագրության ու ջարդի: Հավասարապես ոճրագործ են անոնք, որ ձեռք ձեռքի Իթքիհադին հետ՝ մասնակցեցան տարրերուն դեմ կա-

տարված եղեռնին, անոնք, որ գործիք եղան ու անոնք, որ պարտականություն ունին խոսելու, քայքայ լռեցրին»:

«Ուճրագործ են ուրեմն ջարդարար մեծ ու փոքր պաշտոնյաներն ու այդ պաշտոնյաներուն հրամայող բորենիներն ու այդ արկածախնդիրներու գործունեությունը հակակշռելու պարտականություն ունեցող արկածախնդիր, անսիրտ պոլիտիկաները, ուրիշ խոսքով՝ նախարարության, պաշտոնեության, խորհրդարան և անոնց գերագույն ղեկավարը՝ Իթքիսիադ», - զեղակացնում էր թերթը:

Ահա թե ինչպես էր գնահատել «ընդհանուր դատախազը» երիտրուքը չարագործների կատարածը պաշտոնապես հրատարակված իր «ամբաստանագրի» մեջ. «Իթքիսիադ վե Թերաքքի»-ի կվերագրվին չարիքներու այն շղթայակցությունը, որ կսկսի սահմանադրության հայտարարութենեն հետո և որ կշարունակե ջարդի, ավերումի, հափշտակության և թալանի մեծան սև և արյունոտ իրողություններ:

Օսմանյան պետությունը շատ ավելի վնասվեցավ ընդհանուր պատերազմի ընթացքին կատարված ներքին ջարդերին և շահաղիստություններին, քան թե պատերազմին դաշտին վրա թափված օսմանցի քաջերու արյունեն: Ջարդի և շահաղիստության մեծան զազանային և ստոր ոճիրները կվերագրվին, դժբախտաբար, Իթքիսիադի ընդհանուր կենդրոնին և այդ կոսակցության բոլոր անդամներուն և «Թեշվիլաթը մահսուսեն» և այն անձերը, որոնք դասի ըշված են այսօր, կգտնվին ոչ թե իբրև նախարարներ ու պաշտոնյաներ, այլ իբրև Իթքիսիադի կենդրոնի և ընդհանուր ժողովներուն անդամներ: Արդարությունն է միայն, որ պիտի կարենա մաքրել արյունի այն թծերը, որոնք սև խաբան մը եղան օսմանյան ճակտին զարնված: Ահա այս բիծը մաքրելու համար է, որ կաշխատվի այժմ»:

Այդ բիծը մաքրելու ուղղությամբ կատարված քայլերին հակառակ, այսօր թուրքական իշխանությունները փորձում են ստել ի հեճուկս այն ժամանակվա դատախազների, պետական պաշտոնյաների, լրագրողների:

«Ժողովրդի ծայն» (01.04.1919) թերթը վկայակոչում էր «պատժական օրինագրքի» 56-րդ հոդվածը, ըստ որի մեղավոր էին ճանաչվում ոճրագործներ Քեմալը և Թևֆիկը: Միավասիկ այդ հոդվածը. «Մահապատիժով կպատժվի այն անձը, որը կհանդգնի զինելով օսմանյան երկրի ժողովուրդը, գրգռել գառնոնք իրարու դեմ և պատճառ ըլլալ անոնց գիտար ջարդելուն և կամ ինչ-ինչ տեղերու մեջ կողոպուտներ կընեն, անձեր կսպանեն և երկիրը կավերեն»:

Կ.Պոլսի բոլոր թուրքական, հայկական, անգլիական ու ֆրանսիական թերթերը հատուկ բաժիններ էին առանձնացրել դատավարությունը լուսարանելու համար:

Դատավորը մեղադրյալներ Ջևադի և մյուսների հարցաքննության ընթացքում մեջտեղ էր բերել հեռագրերի հիմքեր, որոնցով ցույց էր տալիս Միդհատ Շյուքրիի, Բեհաեդդին Շաքիրի և Թալեաթի կապերն ու համագործակցությունը:

Ահա թե ինչ ենք կարդում «ԺԸ դատավարություն Տրապիզոնի ջարդերում» հաղորդագրության մեջ: Ընդհանուր դատախազ Ֆերիդուն-բեյը ասաց. «Հայոց տարագրության մասին իթքիհադական կառավարության տված որոշումները Տրապիզոնի և շրջաններու մեջ գործադրված ատեն մախ այրերը և հետո կիներն ու տղաքները տարագրված և ատոնց այրերուն մեծ մասը Տեյիք-մենտերեի կողմերը անգութորեն ջարդված են: Ասկե գաստ՝ կիներն ու տղաքներն ալ նավակներով ծովուն բացերը տարված և ծով թափված են: Մեկ մասն ալ դարմանելու պատրվակով՝ Կարմիր մահիկի հիվանդանոցը տարված և հոն թունավորած են: Ասկե հետո տարագիրներուն գույքերն ու գոհարեղենը ավարի տրված են: Ամբողջ մարդկությունը անեծքով և զզվանքով պիտի հիշե վերոհիշյալ ոճիրները»:

Անգլիական պառլամենտում, պատասխանելով Օքրեյ Հերբերթի հարցապնդմանը, Հարմստրոֆը կառավարության անունից հավաստիացրեց, թե՛ դաշնակիցները որոշել են, որ «հայկական ջարդերուն համար պատասխանատու գերման և թուրք պաշտոնյաները չիտասափին պատժե»:

Իհարկե, ոճրագործներին փրկելու համար հայերի թուրք ընդդիմախոսներն արդեն այն ժամանակ փաստերը բացատրում էին այնպիսի ձևով, որ պեսզի նրանց արդարացնեին: Իրենց նպատակին հասնելու համար նրանք օգտագործում են «փաստարկներ»՝ սովորական ստեր: Ինչ խոսք, որ կարծեցյալ «հակաերիտթուրքերը» ոչ մի լուրջ մտադրություն չունեին մինչև վերջ մերկացնելու «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը:

Ճշմարտությունը հաստատող փաստերի ու փաստաթղթերի այնպիսի առատություն կա, որ աբաևների նման կեղծարարների չի հաջողվի մթագնել պատմական իրողությունների իրական պատկերը:

Ստո՞ւմ եք, պարոն Աբայով, ստո՞ւմ եք, բայց դուք, այնուամենայնիվ, չե՞ որ պրոֆեսոր եք:

ԹՈՒՐԹԻԱՅԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՆ՝¹

Թուրքիայի էկոնոմիկայի մասին ճշմարիտ պատկերացում կազմելու համար պետք է իմանալ, թե ընդհանրապես ինչ է իրենից ներկայացնում այդ երկիրը մայսօր: Հիշեցնենք, որ Թուրքիայի տեղիտորիան 781 հազար քառ. կմ (այդ թվում՝ Եվրոպայում Արևելյան Թրակիան 23,7 քառ. կմ), բնակչությունը՝ 45 մլն մարդ (56,1 տոկոսը գյուղական): Բնակչության միջին տարեկան աճը մոտ 2 տոկոս է: Երկրում, բացի թուրքերից (պաշտոնապես 90 տոկոս), ապրում են քրդեր, արաբներ, հույներ, հայեր, լազեր, հրեաներ, վրացիներ, չերքեզներ և ուրիշներ: Թուրքական պաշտոնական աղբյուրները ժխտում են քրդերի առկայությունը, նրանց համարում «լեռնային թուրքեր»: Այսօր Թուրքիայում հաշվվում է 8-ից 10 մլն քուրդ:

Պետական լեզուն թուրքերենն է: Ամենատարածված օտար լեզուն անգլերենն է, ավելի պակաս չափով գիտեն ֆրանսերեն և գերմաներեն: Տիրապետող կրոնը սյուննի աղանդի իսլամն է:

Երկիրը բաժանված է 67 վիլայեթի (նահանգի): Իրենց հերթին վիլայեթները բաժանվում են իլչեների (գավառների), իսկ իլչեները՝ քուջակների (գավառակների): 1980-ի մարդահամարով մեծ քաղաքների բնակչությունն ուներ հետևյալ պատկերը. Անկարա՝ 2,9 մլն, Ստամբուլ՝ 4,5 մլն, Իզմիր՝ 1,2 մլն:

«Ներկայումս Թուրքիայում գաղափարական և քաղաքական կյանքի ասպարեզում տեղի ունեցող պայքարում բյուրեղացել են երկու հակադիր ուղղություններ, - գրում է Թուրքիայի կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Հայդար Ջուտլուն: - Մի կողմից, ժողովրդի ազգային շահերին դավաճանող պրոսաներիկյան, ֆաշիստական, հետադիմական ուժերի ուղեգիծը, որոնք ստիպում են աշխատավորներին ավելի ձգել գոտիները, անդադար դիմում են ռեպրեսիաների և տեռորի, ընդառաջում Պենտագոնին: Մյուս կողմից, Թուրքիայի կոմունիստական կուսակցության ուղեգիծը՝ պայքար խաղաղության և ազգային դեմոկրատիայի համար, համոզում ազգային դեմոկրատական բոլոր ուժերի շահերի»²:

Թուրքիան ամբողջապես մերված է ՆԱՏՕ-ին, ամերիկյան իմպերիալիզմի հակասովետական պլաններին: Այն համարվում է Հյուսիսատլանտյան կազմակերպության հարավարևելյան թևի հոսանքի պատվարը: Թուրքական բանակը համարվում է այդ կազմակերպության անդամ-տերությունների ուժեղ բանակներից մեկը: Այսօրվա թուրքական իրականության ամենաբնորոշ կողմը ռազմականացումն է: Թուրքիան Հյուսիսատլանտյան ռազմական պակտի

¹ Կիրակոսյան Ջ.Ս. Թուրքիայի էկոնոմիկան // «Հայաստանի ժողովրդական տնտեսություն» (Ե.), 1984, N 5, էջ 58-65:

² Кутлу Х. Выразитель интересов масс // *Проблемы мира и социализма* (М.), 1984, N 3, с. 31.

անդամ է 1952-ի փետրվարից: ՆԱՏՕ-ին տրամադրված թուրքական ցամաքային զորքերը (17 դիվիզիա և 21 բրիգադ) ենթարկված են այդ կազմակերպության միացյալ ցամաքային զորքերի հարավ-եվրոպական իրամասնատարությանը, որի շտաբը գտնվում է Իզմիրում (Թուրքիա): Իզմիրում է գտնվում նաև ՆԱՏՕ-ի 6-րդ միացյալ տակտիկական ավիացիայի շտաբը: Նրան են ենթարկված Թուրքիայի ռազմաօդային ուժերի 350 մարտական ինքնաթիռներ կամ 17 էսկադրիլիա:

ԱՆ-ը շարունակում է թափանցել Թուրքիայի ռազմատնտեսական կյանքի բոլոր բնագավառները: Երկրի տարածքում գտնվող ռազմական հենակետերում և կայաններում վեց հազար ամերիկյան զինվոր կա: Հայտնի է, որ Թուրքիայի ամերիկյան պահեստներում միջուկային զենք է ամբարված: Անատոլիայում մշտապես կառուցվող զինավարժություններ են անում ՆԱՏՕ-ի զորքերը: Ամերիկյան ԱՎԱԿՄ սիստեմի ինքնաթիռներն իրենց լրեստական գործերը կատարելիս մշտապես օգտվում են թուրքական օդանավակայաններից:

1980-ի մարտի 29-ին Անկարայում Թուրքիայի և ԱՄՆ-ի միջև կնքված «Պաշտպանության և էկոնոմիկայի ասպարեզում համագործակցության մասին» համաձայնագրով նախատեսվում է հինգ տարով ԱՄՆ-ի տնօրինությանը հանձնել մի շարք թուրքական ռազմական օբյեկտներ: Այս համաձայնագիրը Թուրքիայի կառավարությունը հաստատեց 1981-ի փետրվարի 1-ին: Համաձայնագրի շրջանակներում 1981-ի դեկտեմբերին ստեղծվեց թուրք-ամերիկյան ռազմական համագործակցության մշտական կոնսուլտատիվ օրգան՝ համատեղ պաշտպանության խումբ:

1982-ի նոյեմբերի 29-ին Բրյուսելում կնքվեց ամերիկա-թուրքական «Հստահության հուշագիրը», որը նախատեսում է մի շարք ռազմական օդանավակայանների կառուցումն ու սողեռնացումը Թուրքիայում: Ստեղծվելու են ամերիկյան ռազմաօդային ուժերին ծառայող բազմաթիվ հենակետեր:

Թուրքիայի տարածքի վրա ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի ռազմական հենակետերի թիվը հասնում է 50-ի¹: Տարեցտարի ավելանում են ռազմական նպատակներով բյուջետային հատկացումները: Թուրքիան պաշտպանում է սպառազինությունների մրցակազմի ամերիկյան պլանները: 1984 թ. ապրիլի սկզբին թուրքական Չեչմե բաղաբում տեղի ունեցավ ՆԱՏՕ-ի միջուկային պլանավորման խմբի հերթական մատաշրջանը, որին մասնակցում էին այդ կազմակերպության 14 անդամ երկրների ներկայացուցիչները: Քննարկվում էին հրթրային հարցեր: Ուայմբերգերը² թուրքական ներկայացուցիչներին սերտ համագործակցության կոչ էր անում ընդդեմ «ատվետական միջուկային սպառ-

¹ Старченко Г. Турция: Противоречия развития // *Азия и Африка сегодня* (М.), 1983, N 10, с. 15.

² Կապար Ուայմբերգեր (1917-2006) - ամերիկացի քաղաքական գործիչ, հանրապետական, ԱՄՆ առողջապահության, կրթության և բարեկեցության բարոտոդար (1973-1975), պաշտպանության քարտուղար (1981-1987) - Ա.Կ.:

նախքի» («Պրակտա», 1984, 5 ապրիլի): Առաջիկա տասը տարում Թուրքիան ԱՄՆ-ից գնելու է 160 «Ֆանտոմ» ինքնաթիռներ՝ 4,1 միլիարդ դոլարի արժուողությամբ: Թրակիայում (Չորդու), Ստամբուլից արևմուտք, Բուլղարիայի սահմանից 130 կմ տարածության վրա կառուցվող նոր բազայի արժեքը 16,3 մլն դոլար է: Դրանը տրամադրում է Հյուսիսատլանտյան պակտի կազմակերպությունը:

Հրաժարական տալու նախօրյակին զինվորական կառավարության վարչապետ Բ.Ուլուսում ձևակերպեց F-16b ռազմական 160 ինքնաթիռների գնման համաձայնությունն ամերիկյան «Ջեներալ Դայնեմիկս կորպորեյշն» ընկերության հետ: Ըստ այդ համաձայնագրի՝ Թուրքիայում ստեղծվելու են այդ մարտական ինքնաթիռների հավաքման և առանձին մասերի արտադրության ձեռնարկություններ: Ամերիկյան ընկերությունը պարտավորություն է ստանձնել ապահովել թուրքական արտահանության ապրանքների իրացում՝ մեկ միլիարդ դոլար գումարով և կորալտի հանրավայրերի հետախուզական աշխատանքների կազմակերպում Թուրքիայի տարածքում: Նույն ընկերությունը 500 մլն դոլար ընդհանուր գումարով կապիտալ ներդրումներ է անելու թուրքական էլեոնմիկայի 16 տարբեր ճյուղերում: Թուրքական կառավարությունը նոր փոխառություններ է խնդրում: ԱՄՆ-ը և ՆԱՏՕ-ի մյուս անդամ երկրները պահանջում են ուժեղացնել զինվորական պատրաստությունները, թույլ տալ կառուցել նոր ռազմական բազաներ Թուրքիայի տերիտորիայում, Թուրքիան դարձնել Վաշինգտոնի ռազմաստրատեգիական պլանների իրականացման կցորդ: Երկրի վարչապետ Օզալն այսօր 1,5 մլրդ դոլարի օգնություն է պահանջում 1985-ի համար:

Թուրքիայի զինվորական և մյուս պարագլուխներն ուշիուշով հետևում են ԱՄՆ-ի կոնգրեսի ներսում տեղի ունեցող անցուղարձին: Ներկայացուցիչների պալատի դեմոկրատ անդամների մի ազդեցիկ խումբ պնդում է Թուրքիային արվելիք օգնության խնդիրը դրակաճորեն լուծել միայն Կիպրոսից թուրքական զորքերը դուրս բերելու դեպքում: Արդեն նախատեսված ռազմական օգնության գումարը 755 մլն դոլարից նվազեցված է 715 մլն դոլարի: 175 մլն դոլար նախատեսվում է տնտեսական օգնության նպատակով: Վերջին ամիսներին ամերիկյան օգնության խնդիրը ռճանք պայմանավորում են հայոց գեներալը Թուրքիայի կողմից ճանաչվելու անհրաժեշտությամբ: 1983-ի նոյեմբերի 18-ին «Միլիթեր» քերթում Բիլանդը խոստովանեց. «Հակաթուրքական ճակատը, որ ծագեց սկզբում Թուրքիայի ներսում քաղաքական իրադրության հետ, հետո՝ հայկական հարցի, ապա՝ Կիպրոսի պրոբլեմի հետ, ավելի կասստկացնի ԱՄՆ-ի դիրքը»:

Վերջերս ԱՄՆ-ի կոնգրեսի սենատը Թուրքիային տրվելիք ֆինանսական օգնության խնդիրը մերժեց Կիպրոսի Հանրապետության նկատմամբ թուրքական կառավարողների բռնած դիրքի պատճառով:

ԱՄՆ-ից հետո Թուրքիան ամենամեծ ռազմական և տնտեսական օգնությունն ստանում է Արևմտյան Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունից:

1981-1984 թթ. Թուրքիային Գ.ՖՀ-ի կողմից ցույց տրվելիք ռազմական օգնությունը կազմելու է 600 մլն մարկ: 1982-ին Գ.ՖՀ-ն Բունդեստագի սոցիալ-դեմոկրատական օպոզիցիան խանգարեց Թուրքիայում 460 մլն մարկի օգնություն տրամադրելուն:

Ակտիվանում են Թուրքիայի կապերը Պակիստանի, Սաուդյան Արաբիայի, նաև Չինական Ժողովրդական Հանրապետության և մի շարք այլ երկրների հետ:

* * *

Երկրների, ժողովուրդների կյանքից պատմության հին տրադիցիաների հետքերը դժվարությամբ են անհետանում: Օսմանյան կայսրության ժամանակների տնտեսական հետամնացության բազմաթիվ երևույթներ այսօր էլ իրենց զգալ են տալիս թուրքական քաղաքական և տնտեսական կյանքում:

Վ.Լենինը ժամանակին Թուրքիայի պատմական ուղին գնահատել է որպես «տևական տանջալից անկում և քայքայում, տանջալից մանավանդ ժողովրդի բոլոր աշխատավոր ու շահագործվող մասսաների համար»¹:

Չնայած հանրապետական Թուրքիայի գոյության տարիներին իրականացված «էթաթիզմի» (պետական կապիտալիզմի) քաղաքականությանը, առաջադիմական արդյունքներին, երկրի էկոնոմիկայի զարգացմանը հատուկ են խոր հակասական պրոցեսներ, ցնցումներ, դրոնք պայմանավորված են բազմաթիվ գործոններով: Այսօր Թուրքիայի պետական սեկտորի հարևանությամբ շատ ավելի ազդեցիկ է մոնոպոլիստական կապիտալիզմի դերը: Այնուամենայնիվ, պետական տնտեսական կազմակերպությունները կարևոր դեր են խաղում արդյունաբերության բնագավառում: Պետական սեկտորի ձեռնարկություններում զբաղված է ավելի քան 750 հազար մարդ: Երկու պետական բանկեր՝ Սումերբանկը և Էթիբանը (ստեղծվել են 1930-ական թթ. արդյունաբերությունը վարկավորելու նպատակով), իրենց ձեռքում են կենտրոնացրել լեռնահանքային արդյունաբերության և մետալուրգիայի զգալի մասի կառավարումը: Բանկային գործում տիրապետում են երեք բանկեր, դրոնք երկրում ունեն հարյուրավոր բաժանմունքներ և հսկում են երկրի բոլոր բանկերի ֆինանսական գործառնությունների 75 տոկոսը: Ավանդորեն բանկային տուգերը մշտապես հսկել են նաև քաղաքական կյանքի ասպարեզը: Օրինակ, գործարարական բանկի զուլա ժամանակին կանգնած էր Ջելալ Բայարը՝ Թուրքիայի նախկին պրեզիդենտը: Այսօր թուրքական բանկերը բաժանմունքներ ունեն Կիպրոսում, Ֆեդերատիվ Գերմանիայում, Սաուդյան Արաբիայում,

¹ Լենին Վ.Ի. ԵԼԺ, հ. 10, էջ 373:

Լիբիայում, Իրաքում, Պակիստանում, Շվեյցարիայում, Շվեդիայում, Անգլիայում, Ֆրանսիայում և այլուր:

Թուրքիան ինդոստրիալ-ագրարային երկիր է: Արդյունաբերությանը, շինարարությանը և տրանսպորտին բաժին է ընկնում համախառն ազգային արդյունքի 40 տոկոսը: Ազգային արդյունքի 21 տոկոսը տալիս է գյուղատնտեսությունը: Մնացածը բաժին է ընկնում առևտրին, բանկային գործին ու սպասարկման ոլորտին:

1979-ից Թուրքիայում իրագործվում է տնտեսական զարգացման 4-րդ հնգամյա պլանը (1979-1983):

Արդյունաբերության մեջ զբաղված է 2,3 մլն բանվոր (ինքնագործ քնակչության 12 տոկոսը): Ավանդական ճյուղերին (լեռնահանքային, սննդի, տեքստիլ և ծխախոտի) զուգընթաց զարգացում են ստացել նոր՝ մետալուրգիական, քիմիական և էներգետիկ ճյուղերը: Երկրում կա 175,3 հազար ձեռնարկություն, որից՝ 4,8 հազարը խոշոր (2,7 տոկոսը ամբողջի) և 170,5 հազարը մանր (յուրաքանչյուր ունի 10 կամ ավելի պակաս աշխատող): Ընդ որում, փոքր ձեռնարկությունների բանվորներն ավելի քան չորս անգամ պակաս են վարձատրվում, քան խոշոր ձեռնարկությունների բանվորները¹: Մեկ բնակչին ընկնող համախառն արտադրանքը 1976-ին կազմեց 1100 դոլար²: Այժմ այդ գումարն իջել է մինչև 850-900 դոլարի:

Թուրքիան համարվում է միջին մակարդակի զարգացման կապիտալիստական երկիր: Տնտեսության մի շարք ճյուղերում պահպանվում են ծայրահեղ տնտեսական հետամնացություն, կիսազաղութային անցյալի մնացուկներ: Հյուսիսատլանտյան պակտին մասնակցելու և ռազմական մեծ ծախսեր անելու դառն հետևանքները տեսանելի են տնտեսության բոլոր բնագավառներում: Չնայած առանձին ճյուղերի ոլորտակի զարգացմանը՝ երկրում պահպանվում է քնակչության զանգվածային թշվառություն, առաջին անհրաժեշտության ապարանքների օգտագործման ցածր մակարդակ:

Այսօր Թուրքիայում շատ են խոսում, շատ են գրում «խառն էկոնոմիկայի» մասին: Այդ տեսությունը «զարգացում են»՝ ազգային տնտեսության մեջ պետական և մասնավոր կապիտալի պարիտետային մասնակցության հնարավորությունը հիմնավորելու, թուրքական հասարակության զարգացման ինչ-որ «էրրորդ ուղու» առկայությունն ապացուցելու համար: Այս մարզանքները պետք են՝ հաղթահարելու համար ազգային բուրժուազիայի տարբեր խավերի միջև առկա սուր հակասությունները, պետական սեկտորը վերակառուցելու, Թուրքիան պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի երկիր դարձնելու շահերին համապատասխան³:

¹ Розалиев Ю.Н. Крупная буржуазия современной Турции // *Народы Азии и Африки* (М.), 1983, N 5, с. 83

² Там же, с. 82.

³ Киреев Н.Г. Развитие капитализма в Турции: к критике теории “смешанной экономики”, М, 1982.

Գեռես երեկ թուրքական պետականության տնտեսագետ ազդեցիկ դեմքերը չափազանց լավատես էին: Նրանք կարծում էին, որ Արևմուտքի գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները կներդնեն ազգային էկոնոմիկայի տարրեր ճյուղերում այնպիսի հաջողությանը, որ Թուրքիան Իտալիայի էկոնոմիկայի 1970-ի մակարդակին կհասնի 1995 թ.: Սովետական տնտեսագետ, թուրքագետ Գ.Ստարչենկովը գտնում է, որ այդ ժամկետները չափազանց մեծ լավատեսության արդյունք էին: Բանն այն է, որ 1980-ական թթ. աշխատանքի արտադրողականությունը (ինչպես և մեկ շնչին ընկնող եկամտի չափը) այստեղ դեռևս 2-3 անգամ ավելի ցածր է, քան Իտալիայում: Տնտեսական ճգնաժամը և նրան հետևած դեպրեսիայի տարիներն էլ ավելի են հեռացնում մոտիկ թվագրող ժամկետը¹:

Թուրքական կապիտալիստների վերնախավը խոշոր, գլխավորապես մոնոպոլիստական բուրժուազիայի փոքրաթիվ խումբն է (ոչ ավելի 1000 մարդուց), որն իր ձեռքում է կենտրոնացրել երկրի տնտեսական հզորության և քաղաքական իշխանության լծակները: Թուրքական բուրժուազիայի այս վերին ջոկատը լավ կազմակերպված, լավ կրթված (գլխավորապես ուսումն ԱՄՆ-ում և Եվրոպայում ստացած), եռանդուն, ձեռներեց, խորամանկ և շարժունակ, իմպերիալիստական Արևմուտքի հետ ամուր կապերով կապված ձեռնարկատերեր, բանկիրներ, առևտրական տների տերեր են: Եվրոպայի և ԱՄՆ-ի բարձր զարգացած կապիտալիստական արտադրության հետ հաջող մրցակցության համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով խոշոր բուրժուազիայի այդ ջոկատը չի խորշում մաքիոնալիզմի լոզունգներից, վկայակոչում է Զ.Աբաթյուրբի գաղափարները և լոզունգները²:

Երկրի տնտեսական կյանքի վրա իրենց տիրապետությունն են հաստատել «Վ. Կոչ Հոլդինգ ԱԸ», «Ֆ.Օ Մարունջի Հոլդինգ ԱԸ», «Օյուկ Հոլդինգ ԱԸ», «Տրանսթյուրք Հոլդինգ ԱԸ» և այլ խոշորագույն կորպորացիաները, մասնավոր և կիսապետական բազմաթիվ այլ ընկերություններ: Այսօրվա Թուրքիայի ազդեցիկ Կոչա, Մարունջի, Սափմազով, Կ.Տաշբեղ, Խ.Ալիսբախ, Ն.Ա.Կուլունջուկ և այլ գործարար ընտանիքներից յուրաքանչյուրի գուտ օգտուները տասնյակ միլիարդ փրայի են հասնում:

Տնտեսական և քաղաքական դաշինք կապելով իմպերիալիզմի հետ՝ թուրքական բուրժուազիայի վերին խավերը հեմվում են պետության լայն օգնության և պաշտպանության վրա, դրա հետ մեկտեղ ձգտելով փոխառնել զարգացած կապիտալիզմի ժամանակակից կազմակերպչական ձևերը: Պետական մոնոպոլիստական կապիտալիզմը Թուրքիայում ծագեց և զարգացավ ընդհանուր հետամնացության պայմաններում շնորհիվ այն բանի, որ ԱՄՆ-ը, արևմտաեվրոպական պետություններն իրենց ռազմաքաղաքական շահերին համապատասխան տնտեսական օգնության ձեռք մեկնեցին թուրքական պետականությանը: 60-ական, 70-ական թթ., երբ Թուրքիայի կապերն

¹ Старченков Г. Турция: Противоречия развития. ., с.18.

² Розаллев Ю. Указ. соч, с. 85.

ուժեղացան ընդհանուր շուկայի հետ, և թուլացավ կախումը ԱՄՆ-ից, երկրի ներսում հակասությունները հատկապես զգալի դարձան¹:

Սովետական թուրքացիները Մ.Մեյերը ցույց է տալիս, թե ինչպես թուրքիայի քերականացման պատճառները թուրք տնտեսագետները մշտապես փորձում են փնտրել արտաքին գործոնների մեջ՝ շրջանցելով բուն թուրքականությանը հատուկ խոցերը:

Թուրքիայի վերմախավի առանձնահատկություններից մեկն այն է, որ գործարար շրջաններում մեծ դեր են խաղում զինվորականները: Մրանք փաստորեն զնված են ֆինանսական կապիտալի կողմից: Այսօրվա թուրքական զինվորական տնօրենները ձեռք շարձրացրին պետական մոնոպոլիստական կապիտալի ամբողջ սիստեմի վրա: Թուրքիայում ձևավորվում է ռազմաքաղաքականության տիպի պետական-մոնոպոլիստական կապիտալիզմ: «Քամակին օգնող ընկերությունը» («Օրդու Յարդըմ Կորումու»), որի ակցիոներական կապիտալը նախապես ձևավորվեց թուրքական բանակի սպաների աշխատավարձի 10 տոկոս մասնահատմաններից, ամերիկյան որոշ ընկերություններից ստացված փոխառություններից, «համատեղ գործունեություն» ծավալեց մի շարք բանկերի և խոշոր մոնոպոլիստական միավորումների հետ («Կոշ Հոլդինգ», «Օ. Սաբունջի Հոլդինգ» և այլն): Ընկերությունը դարձել է Թուրքիայի խոշորագույն մոնոպոլիստներից մեկը՝ իր ձեռքում կենտրոնացնելով երկրի ռազմաարդյունաբերական կոմպլեքսի վրա հսկողությունը:

Չինվորականների իշխանության հակադեմոկրատիզմը, ներքին և արտաքին քաղաքականության աջակցումը, նրանց դաժան ռեպրեսիաները, էկոնոմիկան շտկելու, սոցիալական պրոբլեմները լուծելու անկարողությունը դժգոհություն առաջացրին թուրքական հասարակության բոլոր խավերում: Խոշոր բուրժուազիան գերադասեց իշխանությունը համձնել «Հայրենիքի կուսակցությանը», իրենց դրածոներին, թեև Էվրենի զինվորական խումտան 1983-ի նոյեմբերի 6-ի ընտրությունների համար այլ սցենար էր պատրաստել: Այդ կուսակցության պարագլուխ և երկրի այսօրվա վարչապետ Օզալը խոստանում է պայքարել գործազրկության դեմ, լուծել բնակարանային հարցը, նպաստել երկրի արևելյան հետամնաց շրջանների զարգացմանը: Նրա կառավարական ծրագրում հիմնական շեշտը դրված է տնտեսական և ֆինանսական խնդիրների լուծման ուղիների վրա, իհարկե, ի շահ թուրքական խոշոր քիզնեսի: Նա խոստանում է նոր արտոնություններ շնորհել արտահանողներին և օտարերկրյա կապիտալ ներդրողներին: Նա խոստանում է դուրսացնել ներմուծման հետ կապված բարդությունները: Նա արտահայտվեց թուրքական արյունաբերության սարուկտուրային փոփոխությունների օգտին՝ ելնելով այն բանից, որ պարտադիր չէ ամեն ինչ արտադրել երկրի ներսում, այլ զլխավոր ուշադրությունը նվիրել համաշխարհային շուկայում մրցությանը դի-

¹ Мейер М.С. Турция – модель зависимого развития // Критика концепции зависимого развития, М, 1983, с. 105.

մացող ապրանքների արտադրությանը, իսկ մնացածը՝ ներմուծել: Օգտվելով նաև թուրքական դարձնել «Ընդհանուր շուկայի» լիիրավ անդամ: Սակայն այս բանը խոչընդոտում են ինչպես տնտեսական զարգացման ցածր մակարդակը, այնպես և քաղաքական որոշ հանգամանքներ:

1983-ին Թուրքիայում արդյունահանվեց 3,6 մլն տոննա քարածուխ (1982-ին՝ 4 մլն) և 19,6 մլն տոննա գորշ ածուխ, 3,7 մլն տոննա երկաթահանք, 418 հազար տոննա բրոմի հանքաքար, ծուլվեց 2,9 տոննա չուգուն, 3,4 մլն տոննա պողպատ: Արտադրվել է 27,1 մլրդ կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա, 242 մլն մետր բամբակյա և 6,4 մլն մետր բրդյա գործվածք:

Ավտոհավաքման գործարանները 1982-ին տվեցին 36,7 հազար մարդատար և 18,5 հազար ապրանքատար ավտոմեքենա, 40,5 հազար տրակտոր:

Երկրի 1983-ի տնտեսական զարգացման պլանը չկատարվեց շատ ցուցանիշներով: 4,8 %-ի փոխարեն, որ նախատեսված էր տնտեսական զարգացման պլանով, ազգային համախառն արդյունքը 1983-ին աճեց 3,2 տոկոսով:

Ստեղծված դրությունից կառավարությունը ելք է փնտրում խառը էկոնոմիկայի մեջ մասնավոր ձեռներեցությունը խրախուսելու, կապիտալի կուտակման պրոցեսն արագացնելու, արտահանությունը քաջալերելու, երկրի տնտեսության մեջ օտար կապիտալի մուտքն ընդլայնելու, մասնավոր կապիտալին մի շարք ձեռնարկություններ հանձնելու մեջ:

1983-ի արդյունքներով ինֆլյացիայի և թանկության աճի տեմպերը կազմեցին 40 տոկոս («Կոմունիստ», 1984, 24 հունվարի), թեև այն սպասվում էր ավելի 25 տոկոսից: Արտադրության աճի տեմպերը 1982-ի 4,4 տոկոսից կրճատվեցին մինչև 3 տոկոս: Թեև նախատեսված էր 1983-ին արդյունաբերական արտադրանքի աճ 7,4 տոկոսով: Պետական բյուջեի դեֆիցիտը 1983-ին կազմեց 150 մլրդ լիրա: 1984-ին այն սպասվում է մինչև 500 մլրդ լիրա: 1983-ը Թուրքիան փակեց 21,5 մլրդ դոլարի ռեկորդային պարտքով: Միայն 1984-1988 թթ. Թուրքիան պետք է մարի 17,8 մլրդ դոլար արտաքին պարտք:

Բանն այն է, որ վերջին ժամանակներս Թուրքիայի սոցիալ-տնտեսական ղեկավարություններն այնքան են սրվել, որ ոչ մի հույս չկա, թե դրանք արդյունավետ կերպով կհաղթահարվեն: Արևմտյան տերություններից ու նրանց ֆինանսական կազմակերպություններից օգնություն ստանալուն զուգընթաց, մեծ չափով ավելացել է պետական արտաքին պարտքը: Չնայած այն բանին, որ Թուրքիան 1981-ին 3,5 մլրդ դոլար, 1982-ին 2,2 մլրդ դոլար պարտք վճարեց, այնուամենայնիվ, իր հանրապետության 60-ամյակը դիմավորեց 22 մլրդ դոլար պարտքով: Այս գումարը շատ ավելի մեծ է, քան տխրահռչակ Օսմանյան պարտքը, «Հյուրիներ» թերթը գրեց, թե արտաքին պարտքը Թուրքիան կկարողանա մարել միայն 2022 թ.:

* * *

Թուրքիան գյուղատնտեսական երկիր է, իրեն հատուկ հակասություններով ու պրոբլեմներով: Երկրի ագրարային հարաբերությունների համար բնորոշ է խոշոր կալվածատիրական և մանր գյուղատնտեսական հողօգտագործումը: Խոշոր հողատերերին (գյուղական բնակչության 1,4 տոկոս) և կուլակությանը (9,7 տոկոս) պատկանում է բոլոր մշակվող հողերի 60,7 տոկոսը, մինչդեռ սակավահող գյուղացիներին և միջակներին (76,2 տոկոս) բաժին է ընկնում հողի 39,3 տոկոսը: Գյուղի բնակչության 13 տոկոսը լրիվ հողագուրկ է: Տարեցտարի հողագուրկ գյուղացիների թիվն աճում է: Մեծ թիվ են կազմում հողագուրկ և գործազուրկ ագրարային գործավորները: Սովետական թուրքագետ Յու.Ռոզալիևի կարծիքով կապիտալիզմը բացարձակորեն տիրապետում է թուրքական գյուղում և ամբողջապես իրեն է ենթարկել հողատիրության և հողօգտագործման բոլոր ձևերը:

Թուրքիայի գյուղատնտեսության զարգացման արդյունքներն զգալի են: Գյուղատնտեսական արտադրության մեխանիզացիան, անցումը տնտեսվարման ժամանակակից մեթոդներին հնարավորություն ընձեռնեցին բարձրացնելու բերքատվությունը, ավելացնելու մթերքների քանակը: Մասնագետների կարծիքով մշակվող տարածքների յոնգացիան և մեխորացիան հեռանկարում կապահովեն տարեկան երեք բերքի ստացում, որի շնորհիվ Թուրքիան կարող է դառնալ գյուղատնտեսական բարձր արտադրանք ստացող առաջին տասը պետություններից մեկը:

Գյուղատնտեսության մեջ զբաղված է 10,5 մլն մարդ (19 մլն ինքնագործ բնակչությունից): Մշակվող հողի տարածությունը 25 մլն հեկտար է: Երկրում կա 450 հազար տրակտոր:

1983-ին գյուղատնտեսական հիմնական կուլտուրաների բերքը կազմեց. ցորեն՝ 16,5 մլն տոննա, գարի՝ 5,6 մլն տոննա, վարսակ՝ 365 հազար տոննա, բամբակ՝ 510 հազար տոննա, ծխախոտ՝ 230 հազար տոննա, կաղին՝ 392 հազար տոննա:

Երկրում հաշվվում է 19 մլն խոշոր և 70 մլն մանր (ոչխար և այծ) եղջերավոր անասուն:

* * *

Սոցիալական ապահովության դրվածքով, արհմիութենական կազմակերպությունների գործունեության առումով ժամանակակից Թուրքիան խղճալի պատկեր է ներկայացնում:

Արհմիություններն ըստ էության օրենքից դուրս են հայտարարված:

Չորս մլն գործազուրկներից ապահովագրություն ունեն միայն 18 հազարը: Աշխարհի 24 երկրների շարքում Թուրքիան առաջին տեղում է երիտասարդության (24-ից 25 տարեկան) գործազրկության տոկոսով: Գործազուրկ-

ների ընդհանուր թվի 54 տոկոսը կազմում են 25 տարեկան երիտասարդները: Գործազուրկների թիվը տարեկան ավելանում է 30 հազարով («Թերթուման», 17.10.1983):

Բնակչության շեշտակի աճը (1927-ի մարդահամարով 13,6 մլն, այժմ 45 մլն մարդ) իր հետ բերել է ազատ ձեռքերի մեծ կենտրոնացում գյուղական վայրերում (1980-ին մոտ 5 մլն մարդ): Գյուղի երիտասարդությունը թափանցում է քաղաք (տարեկան 500 հազար մարդ) աշխատանք և բնակարան գտնելու հույսով: Անգործների քանակը ոչ մի նպաստ չի ստանում: Ջրաղվածության խնդիրը դարձել է ամենակարևոր սոցիալական հարցը:

Չնայած սննդամթերքի առկայությանը, բժիշկների և տնտեսագետների կարծիքով, բնակչության մեծամասնության սնունդը չի համապատասխանում այսօրվա ստանդարտին: Ըստ «Ֆայնենշնլ թայմս»-ի (1982, 17 դեկտեմբերի)՝ քուրք բանվորը մեկ կիլոգրամ բրինձ ու պանիր գնելու վրա ծախսում էր 1963-ին 6-ժամյա աշխատանք, 1981-ին՝ 9-ժամյա, 1982-ին՝ 14-ժամյա աշխատանք:

1982-ի տարեմուտին կենսամթերքի գները Թուրքիայում աճեցին (ալյուր-մակարոն՝ 60 տոկոս, միս-կաթ՝ 75 տոկոս): Կոմունալ ծառայությունների վարձն ավելացավ 30 տոկոսով: Վերջին հինգ տարում աշխատավորների իրական աշխատավարձը նվազել է 51 տոկոսով: Ինֆլյացիան հատկապես հարվածեց բնակչության ցածր վարձատրվող խավերին («Պրավդա», 1983, 22 դեկտեմբերի):

Այսօրվա Թուրքիայի ամենալուրջ պրոբլեմներից մեկը բնակարանային հարցն է: Պետական միջոցներով բնակարանային շինարարությունը շատ դանդաղ է ընթանում: Նույնիսկ տասնյակ տարիների անց հնարավոր չի լինի լուծել բնակարանային խնդիրը: Մասնավոր ձեռնարկատերերը չափազանց քանկ գնով են վարձակալության տրամադրում բնակարանները (բանվորի աշխատավարձի 40 տոկոսը): Գլխերվա ընթացքում սովաբարքից ու թիթեղից կառուցվող հավաքների մեծան շինությունները «գեջեկոնդու» են կոչվում: Եթե 1955-ին նրանցում ապրում էր 50 հազար մարդ (քաղաքային բնակչության 4,8 տոկոսը), ապա 1983-ին՝ 7 մլն մարդ (25 տոկոսը)¹: Մինչև 1980-ի սեպտեմբերի զինվորական հեղաշրջումը պառլամենտը քանիցս անդրադարձել է բնակարանային խնդրին, բայց արմատական լուծման հետք անգամ չկա: Որոշումներից մեկով նույնիսկ օրինակահանգցվել է «գեջեկոնդուների» մի մասի ստատուսը, և որոշ աշխատանքներ են իրականացվում նրանց բարելավման ուղղությամբ:

Թուրք արտագնա բանվորների հոսքը Եվրոպական տնտեսական խորհրդի երկրներ ուժեղացավ հատկապես 1960-ական թթ. սկզբից: Այժմ այդ թիվը հասնում է մեկ միլիոնի: 1970-ական թթ. կեսերից Արևմուտքի պետություններն սկզբում սկսեցին սահմանափակել «գաստարբայտերների» (հյուր

¹ Старченко Г. Турция: Противоречия развития... - с.16.

բանվորների) մուտքը, իսկ հետո նաև ձեռք առան նրանց դուրս մղելու միջոցներ: Այս խնդիրն ունի բազմաթիվ ասպեկտներ: Թեև երկրում միլիոնավոր գործազուրկներ կան, բայց թուրքական իշխանությունները քաղաքական, հասկասովետական և անվտանգության մտաբերման արևելքում՝ Արևմտյան Հայաստանի հողերի վրա, տեղավորում են Աֆղանստանից փախած, Պակիստան անցած թուրքալեզու գաղթականների հետամնաց խմբերի» Արդեն այդպիսի ներգաղթողների թիվը հասնում է 6 հազարի: Հզալի է դարձել թուրք արտագնա բանվորների դերը նավթարդյունահանող երկրներում: Այդ բանվորների դուրսարևմտյան փոխանցումները հայրենիք 1980-ին կազմեցին 2 մլրդ դոլար, 1982-ին՝ 2,6 մլրդ դոլար:

* * *

Չնայած որոշ տեղաշարժերին՝ Թուրքիան այսօր էլ գրագետ, բանիմաց կադրերի պակաս է զգում: Թեև 1973-ից երկրում գործում է միջնակարգ (ութամյա) պարտադիր կրթության օրենք, այնուամենայնիվ, Թուրքիայի բնակչության 33,3 տոկոսն անգրագետ է: Անգրագետների տոկոսն առանձնապես բարձր է արևելյան և հյուսիսարևելյան նահանգներում: Քուրդ բնակչության ուսման խնդիրն անտեսվում է:

Թուրք ուսուցչությունը հասկապես պահվում է զինվորական ասպրզի կրնկի տակ: Ուսուցիչների մի մասը բացահայտ խավարանո, հակակոմունիստական, պանթյուրքիստական գաղափարներ է ներարկում աշակերտությանը: Նրանցից թաքցնում են ճշմարտությունը Սովետական Միության մասին: Թուրքիայում կա 46,6 հազար տարրական դպրոց՝ 200 հազար ուսուցչով և 5,6 մլն աշակերտով: 1980-ին կար 6 հազար միջնակարգ դպրոց, լիցեյ և պրոֆեսիոնալ ուսումնարան՝ 2,2 մլն սովորողով: Երկրի համալսարանների և մյուս բարձրագույն ուսումնական հաստատությունների թիվը 18 է, 350 հազար ուսանողով:

Վերջին տարիներս զգալի է դարձել թուրքական բուրժուազիայի այն խավը, որը բարձրագույն կրթություն է ստացել ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գ.ՖՀ-ում, Անգլիայում և այլ զարգացած կապիտալիստական երկրներում, զիտե արևմտյան լեզուներ: Թուրքական մեծաթիվ գործարար ինժեներներ, տնտեսագետներ ծանոթ են արևմտաեվրոպական, ամերիկյան տնտեսավարման մեթոդներին, վերապատրաստվել են անմիջականորեն զարգացած երկրների ձեռնարկություններում, համապատասխան ընկերություններում, փորձում են ընդօրինակել և կյանքում ներդնել նրանց աշխատանքը:

* * *

Արտաքին առևտրի ասպարեզում Թուրքիայի արտահանության հիմնական հողվածը մշակող արդյունաբերության (ներառյալ սննդի), գյուղատնտեսության և լեռնահանքային արդյունաբերության արտադրանքն է:

Ներմուծվում են նավթ և նավթամթերքներ, ինչպես նաև մեքենաներ և արքարավորումներ: Թուրքիան ներմուծում է նաև քիմիական ապրանքներ, պարարտանյութեր, տրանսպորտի միջոցներ:

Արտաքին առևտրի ծավալը 1982-ին կազմեց 14,7 մլրդ դոլար (արտահանություն՝ 5,9 մլրդ դոլար, ներմուծում՝ 8,5 մլրդ դոլար, դեֆիցիտ՝ 2,6 մլրդ դոլար):

Մի քանի տարի առաջ Թուրքիայի հիմնական պարտնյորներն էին Իրաքը, Գ-ՖՀ-ն, Լիբանանը, Շվեյցարիան, ԱՄՆ-ը: Այժմ պատկերը փոխվել է:

Տարիներ շարունակ Թուրքիան փորձում էր իր արդյունաբերական ապրանքների համար (գլխավորապես տեքստիլ արտադրանք) շուկա փնտրել «Հնդկահամր շուկայի» երկրներում: Կապիտալիստական Արևմուտքը նրան զարգացման ուղի էր ցույց տալիս ոչ թե արդյունաբերության, այլ գյուղատնտեսության ասպարեզում: Թուրքիան շահեց, երբ 1970-ական թթ. կեսերից սկսեց առևտրատնտեսական կապերը զարգացնել Արևելքի, առաջին հերթին նավթ արդյունահանող երկրների հետ: Թուրքական մթերքների ու ապրանքների հատկապես մեծ գնորդներ դարձան Իրաքը և Իրանը, որոնք այսօր Թուրքիայի արտաքին առևտրական գլխավոր պարտնյորներն են: Թուրքիան Իրանին վաճառում է զենք, սպառազինություն, կենսամթերք (առևտրի ծավալը կազմեց 2 մլրդ դոլար): Իրաքից մեծ քանակությամբ նավթ է գնում: Սերտսանում են առևտրատնտեսական կապերը Սաուդյան Արաբիայի, Քուվեյթի, Միացյալ Արաբական Էմիրությունների և արաբական այլ երկրների հետ:

Արտաքին առևտրի ծավալը 1983-ին կազմեց 14,5 մլրդ դոլար (արտահանություն՝ 5,5 մլրդ դոլար, ներմուծում՝ 9,0 մլրդ դոլար, դեֆիցիտ՝ 3,5 մլրդ դոլար): Առևտուրը գլխավորապես իրականացվում է Իրաքի, Իրանի, Գ-ՖՀ-ի, Լիբիայի, Շվեյցարիայի, ԱՄՆ-ի հետ:

Թուրքիայի ջանքերի շնորհիվ վերականգնվում է սերտ համագործակցությունը Իրանի և Պակիստանի հետ: Այս երեք պետությունների կառավարությունները պայմանավորվել են վերականգնել «Հանուն զարգացման ռեզիոնալ համագործակցության» կազմակերպությունը, որ գոյություն ուներ քսան տարի առաջ:

«Ատոշիեթդ պրես» գործակալությանը Օզալը հայտարարեց, որ Թուրքիան կարող է կամուրջ լինել Արևմուտքի և մուսուլմանական երկրների միջև՝ ակտիվ դեր խաղալով «աշխարհի երկու մասերի միջև պորթմենները կանոնավորելու մեջ»: Նրա կարծիքով իսլամի պետությունների և Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների տնտեսական կապերի զարգացումը նպաստում է այդ ռեզիոնում Թուրքիայի հեղինակության աճին և համապատասխանում է նրա ազգային շահերին:

1982-ին Թուրքիայի արտահանման մեջ արդյունաբերական արտադրանքի բաժինը կազմեց 59,7 տոկոս: Կարճ ժամանակում արտահանությունից ստացած շահույթը կրկնապատկվեց. 1980-ի 2,9 մլրդ դոլարից հասավ 5,7 մլրդ

դուարի 1982-ին: Արժույթի զգալի հոսքը հնարավորություն ընձեռեց բարձրացնելու երկրի վճարողականությունը:

Առևտուրը 1980-ին ազգային եկամտի մեջ կազմեց 14 տոկոս: 1975-1981 թթ. արտաքին առևտրական գործարքները կազմեցին ազգային արդյունքի 12-18 տոկոսը, կապիտալ ներդրումները՝ 17,8-22,3 տոկոսը, պետական բյուջեն՝ 18-25 տոկոսը:

1983-ի ավարտին կրճատվեց թուրքական արտահանության ծավալը, պակասեց արտասահմանյան արժույթի ներհոսքը: Արդյունաբերության մի շարք ճյուղեր ծանրաբեռնված էին իրենց հզորության լոկ 50 տոկոսով:

* * *

Զինվորական իշխանությունը դիմում է բոլոր միջոցներին՝ հաղթահարելու ճգնաժամային երևույթները, կայունացնելու երկրի էկոնոմիկան, հնազանդ պահելու ընդդիմադիր ուժերին: Սակայն այդ ամենին հասնելու ուղին այսօրվա թուրքական ղեկավարները տեսնում են ամերիկյան իմպերիալիզմի պլաններին փարվելու մեջ: Թուրքիան շարունակում է աճուրդի հանել իր ստրատեգիական-աշխարհագրական դիրքը՝ դրա դիմաց ստանալով տնտեսական, ռազմական օգնություն, մի պրակտիկա, որ տասնամյակներ շարունակ կիրառվում է՝ կանխելու համար տնտեսական քաոսն ու փլուզումը, քաղաքական անկայուն վիճակը:

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ¹

Հայոց պատմությանը հետաքրքրվող ամեն ոք ծանոթ է Լեոյի՝ Առաքել Գրիգորի Բաբախանյանի հարուստ վաստակին: Նա մեծ ժողովրդականություն վայելող պատմաբան է, որովհետև ծանրակշիռ է սերունդներին բողոքած նրա հայագիտական ժառանգությունը: Չափազանց բազմաթիվում է Լեոյի գրիչը, լայն են նրա հետաքրքրությունների, ընդգրկումների շրջանակները: Նրա պատմագիտական ուսումնասիրությունները, փաստաթղթերի ժողովածուները, գեղարվեստական երկերը, գրականագիտական ու հրապարակախոսական հրապարակումներն իրենց ուրույն տեղն ունեն հայ մշակույթի պատմության մեջ: Առանց Լեոյի չի կարելի պատկերացնել 19-րդ և 20-րդ դարերի հայոց պատմագիտությունը:

Լեոյի հասարակական-քաղաքական կյանքի ուղին եղել է քարոզ ու հակասական: Նա 19-րդ դարի ավարտի ու 20-րդ դարի առաջին տասնամյակների իրադարձությունների, հայ ժողովրդի քաղաքական ու հասարակական կյանքի բուռն պոռթկումների, հույսերի վերելքի ու գահավիժումների ականատեսն ու մասնակիցն էր: Լեոն իր ժամանակի ծնունդն էր: Նա գերազանց գիտեր Հայոց հարցի քաղաքական պատմության մանրամասները, եվրոպական քաղաքականության էությունը, նրա մեծերի գործելակերպի բնույթը: Սա է պատճառը, որ նա մասնակից էր դառնում հայոց ազգային գաղափարախոսության մշակմանը, ոչ միայն որպես պատմաբան, այլև քաղաքագետ՝ ասպարեզ իջնելով այս կամ այն գործման կանխիկ մշակելիս կամ լուծելիս: Նա խորությամբ գիտեր արևմտահայ ժողովրդի ազատագրման հարցի շուրջը քաղաքական պայքարի բոլոր նրբերանգները, սուբանիզմի հակաժողովրդական էությունը, միջազգային դիվանագիտության խաղերը: Նա քաջածանոթ էր ցարիզմի ներքին ու արտաքին քաղաքականությանը: Երբ Հայաստանի փոքր տարածքի վրա ջարդից ու կոտորածից փրկված մեծ ժողովրդի քեկորներին հաջողվեց հանգիստ առնել նորոգ Ռուսաստանի պաշտպանության ներքո, երբ սովետական իշխանությունը ջերմացրեց հայոց սառած մարմինը, և Վ.Լենինի գաղափարները նրան տարան ապաքինման ու վերելքի ուղիով, Լեոն ավելի ծանրակշիռ դիրքերից կշռադատեց հայոց պատմության հանգուցային խնդիրները:

Լեոյի «Հայոց պատմության» ներկա չորրորդ հատորը Երևանում 1966-1973 թթ. արդեն հրատարակված նրա երկերի ժողովածուի 1-3 հատորների շարունակությունն է: Այն ընդգրկում է 19-րդ դարի առաջին տասնամյակների իրադարձությունները:

Ցավոք, հատորը ստպագրվում է մեծ ուշացումով: Հեղինակն այն ավարտել է 1927-ին, գրել առաջաբանը: Բավականին ժամանակ է անցել: Այս մի-

¹ Կիրակոսյան Ջ. Խմբագրի կողմից // Լեո. Երկերի ժողովածու, հ. 4, Ե, 1984, էջ 557-558:

ջոցին սովետահայ պատմագիտությունը (Աբգ.Հովհաննիսյան¹, Աշ.Հովհաննիսյան, Մ.Ներսիսյան, Ջ.Գրիգորյան², Վ.Պարսամյան³, Վ.Դիլոյան⁴, Հ.Լազարյան, Վ.Ոսկանյան և ուրիշներ) ստեղծել է 19-րդ դարի առաջին տասնամյակների հայոց պատմության կարևորագույն խնդիրներին նվիրված քաղմաքիվ աշխատություններ: Մասնավորապես, քաղմակողմանիորեն լուսաբանված է Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման խնդիրը: Տարիների ընթացքում ասպարեզ են հանվել 19-րդ դարի առաջին տասնամյակներին վերաբերող քաղմաքիվ նոր փաստաթղթեր, պատմական դեպքերի ու դեմքերի վրա նոր լույս սփռող փաստեր ու դրանցով պայմանավորված նոր եզրահանգումներ: Ինչ խոսք, որ սովետահայ պատմաբանների քննախույզ պրպտումների շնորհիվ այսօր մենք շատ ավելի քան գիտենք 19-րդ դարի առաջին տասնամյակներին Անդրկովկասի շուրջը տերությունների մրցապայքարի, միջազգային հարաբերությունների, հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության, հարուստ հարաբերությունների, Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման հանգամանքների, Հայաստանում դեկաբրիստների գործունեության, Աբովյանի խոսքի ու գործի, հայ մշակույթի և քաղմաքիվ այլ խնդիրների ու քննազավառների վերաբերյալ: Հատորն ընդգրկում է ինչպես արդեն ավարտում ուսումնասիրություններ, այնպես և Երևանի պետական համալսարանում նրա կարդացած որոշ դասախոսություններ: Այն ամբողջական մի գործ չէ:

¹ Աբգար Հովհաննիսյան (1908-1991), պատմաբան, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, 1947-1953 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, 1949-1960 թթ.՝ ԳԱ հասարակական գիտ. բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, 1960-1991 թթ.՝ ԳԱ փոխնախագահ, հիմնական աշխատությունները՝ «Հովսեփ Էմին», «Անդրկովկասի միացումը Ռուսաստանին և միջազգային հարաբերությունները XIX դարի սկզբին», «Կոմունիստական գաղափարները Ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին» - Ա.Կ.:

² Ջավեն Գրիգորյան (1910-1992), պատմ. գիտ. դ-ր, պրոֆ., ՀԿԿ ԿԿ 2-րդ քարտուղար, «Լենինյան ուղիով» (Ե.) ամսագրի խմբագիր, ՀԽՍՀ մշակույթի նախարար, հիմնական աշխատությունները՝ «Ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցությունը XIX դ. սկզբին», «Հայ և ռուս ժողովուրդների դարավոր քարեկամությունը», «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը» - Ա.Կ.:

³ Վարդան Պարսամյան (1909-1990), պատմ. գիտ. դ-ր, պրոֆ., հիմնական աշխատությունները՝ «Հայ ազատագրական շարժումների պատմությունից», «Ա.Ս.Գրիբոեդովը և հայ-ռուսական հարաբերությունները», «Յարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում», «Դեկաբրիստները Հայաստանում» - Ա.Կ.:

⁴ Վալտեր Դիլոյան (1930-2005), պատմ. գիտ. դ-ր, պրոֆ., հիմնական աշխատությունները՝ «Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից», «Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին կիսամյակին և հայ-ռուսական հարաբերությունները» - Ա.Կ.:

Չնայած որոշակի քաղաքական պատմական պրոցեսի այս կամ այն խնդրի շուրջ Լեոյի ոչ միշտ համոզիչ մեկնաբանություններին, այնուամենայնիվ, ներկա հատորը հարուստ է փաստական նյութով, իսկ շարադրանքը մատչելի է ընթերցողին, քանզի գրկված է ավանդական լեռնական ոճով:

Լեոն ռուսական կողմնորոշման ջերմեռանդ պաշտպան է: Նա մատնացույց է անում թուրք-պարսկական պատերազմների ավերիչ հետևանքները Հայաստանի համար: Ռուսաստանին միանալու մախօրյակին Երևանի խառնությունում կար 521 շեն ու մարդաբնակ և 310 ավերակ գյուղ, այսինքն՝ 3 շեն գյուղի դիմաց 2 ավերակ գյուղ: «Այսպես էր մորթվել երկրի քարոտությունը բռնությունների ու վատ վարչության երեսից», - եզրակացնում է նա: «Համարելով ռուսներին ազատիչներ, հայ ժողովուրդը ձգտում էր դեպի նրանց իր բոլոր ուժերով, մոռանալով ամեն ինչ»: Լեոն վկայակոչում է ակամատեսին, որն արձանագրում էր. «Հայք միաբան ու համաձայն են ռուսաց»: Հայոց հավատարմությունը Ռուսաստանին նկարագրված է հարուստ փաստերով, վատ գույներով: Միաժամանակ նա շեշտում է Ռուսաստանի գրական-առաջադիմական դերը Անդրկովկասի, մասնավորապես վրաց և հայոց ժողովուրդների քաղաքական ճակատագրում: «Ռուսաստանը, - գրում է Լեոն, - իր նվաճած ասիական երկրները մտցնում էր քաղաքական և քաղաքակրթության մեծ շարժումների մեջ, այնպես որ Ասիայի շրջանների մեջ ծվարած և դիվանացած ազգերը հնարավորություն էին ստանում տաքացնելու իրենց ընդարմացած մարմիններն իբրև ռուսական ընդհանուր իրականության մասնակիցներ»: «Ռուսները բերում էին իրենց հետ ֆիզիկական գոյության ապահովություն, խաղաղ աշխատանքի, զարգացման, կարգ ու կանոնի և սեփականատիրական իրավունքի հաստատում երաշխիքներ», - գրում է Լեոն: Հայոց համար առանձնապես ծանր վիճակ գոյություն ունեւ, և «ռուսական հպատակությունը մի շնորհ էր, որին հայերը և միայն նրանք պիտի արժանանային իրենց մեծագույն ջանքերով, իրենց արյունը թափելով...»:

Պատմության մեջ ոչինչ հեշտ ու հանգիստ չի լինում: Պատմաբանը ընթերցողին չի տանում Նևակու պողոտայով, այլ առաջնորդում է կածաններով, պատմության խորդորորդություններով: Լեոն սուր անկյունները կտրացնելու, համահարթելու կողմնակից չէ: Նա պատմական եղելությունները կոչում է իրենց անուններով, հանդես է գալիս ճշմարիտ արձանագրողի, նկարագրողի և քննազորողի դերում: Դրական ու առաջադիմական տենդենցներն իրենց ճանապարհին հանդիպում են խղճնողունների, որոնք երբեմն հնարավոր չի լինում հաղթահարել: Լեոն համզամանորեն նկարագրում է դրամատիզմով առևեցում իրադարձությունները՝ ցույց տալով հակասություններն ու դժվարությունները Ռուսաստանին փարվելու պատմական պրոցեսում: Խորապես ըմբռնելով հայոց քաղաքական ճակատագրի էությունը, ակամատես լինելով հետագա տասնամյակների բոտն իրադարձությունների՝ նա մատնացույց է անում խնդրի այն կողմը, որ հայ ժողովուրդը, ձգտելով ազատվել արևելյան բռնակալությունների տիրապետությունից, «այրելով իր ետևից բոլոր նավերը,

անհաշտ բշնամության վիճի բաց արեց իր և իր հարևանների միջև: Լեոն թեև գրում է 19-րդ դարի առաջին տասնամյակների անցուդարձի մասին, մտովի Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերի կազմակերպած զենոցիոլի, արևմտահայության դառնաղետ ուղերգության ծանր հետևանքների ազդեցության տակ է: Նա փորձում է պատասխան գտնել բազմաթիվ ինչուների և այդ նպատակով սուզվում է տասնամյակների քաղաքական պատմության հատակը:

Լեոյի հարուստ գիտելիքները, լայն իմացությունները նրան հնարավորություն են ընձեռել հարցերը շարադրելու համաշխարհային պատմության լայն ֆոնի վրա, հայ ժողովրդի պատմության խնդիրները տեսնելու և լուսաբանելու Եվրոպայի և Արևելքի պատմության հետ սերտ կապակցության մեջ: Նա հանգամանակի պատկերացում է տալիս Ֆրանսիական մեծ հեղափոխության, Նապոլեոն Բոնապարտի արևելյան քաղաքականության մասին:

Լեոն բննարկում է Իրանի և Թուրքիայի քաղաքական պատմության խնդիրները, բացատրում Արևելյան հարցի էությունը, բուրքական ժառանգության բաժանման համար տերությունների մրցապայքարը, Եվրոպայից թուրքերին դուրս մղելու եվրոպական քաղաքականության ելևէջները: Հատուրում բավականին նյութ կա 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի Վրաստանի մասին: Պետք է ասել նաև, որ ոչ բոլոր խնդիրներն են բննարկված միանման խորությամբ: Մինչդեռ կաթողիկոսության համար Դանիել-Դավիթ եկեղեցականների մրցապայքարը բննարկված է չափից ավելի մանրակրկիտ, այնինչ հայոց մշակույթին նվիրված շարադրանքն աղքատիկ է, չի ընդգրկում ժողովրդի հոգևոր կյանքի հարուստ փաստերը:

Համոզված ենք, որ մեր ծանոթագրությունները կօգնեն ընթերցողին՝ ավելի հստակ ընկալելու և ճիշտ ըմբռնելու պատմական եղելությունների էությունը, ճանաչելու բազմաթիվ դեմքերի, իմանալու նրանց գործերը:

1983-ի մարտ

О НАШИХ ЗАДАЧАХ В ОБЛАСТИ КОНТРОПРОПАГАНДЫ¹

... сентября 1984 г.

ЦК КП АРМЕНИИ

СЕКРЕТАРЮ тов. К.Л.ДАЛЛАКЯНУ²

Секретно
Экз. No.

Министерство иностранных дел Армянской ССР систематически информирует инстанции о том, что делается на международной арене вокруг Армянского вопроса. С этой целью выпускаются пресс-бюллетени, в которых находят отражение некоторые из огромного числа материалов по этой проблеме, публикующиеся на страницах западноевропейских, американских, турецких изданий, а также в зарубежной армянской печати.

Июньский пленум ЦК КПСС выдвинул задачу усиления идеологической работы, активизации борьбы с нашими идеологическими противниками, усиления контрпропаганды.

Администрация США, открыв «крестовый поход» против СССР и социалистического содружества, использует все формы и методы идеологических диверсий, антисоветизм, антикоммунизм, русофобство. В арсенале антисоветской пропагандистской кампании особое место отводится фальсификации истории. Американская пропаганда ведется избирательно, целенаправленно, конкретно для того или иного региона.

В идеологическом наступлении американских средств массовой информации на армян и Советскую Армению, в научных и политических публикациях основное место занимают вопросы русофобства, армяно-турецких отношений и роли России в них, проблемы армяно-турецкого противоборства.

Американская пропаганда в этих вопросах становится на позиции защиты интересов Турции, пересматривает многие давно известные истины.

¹ ՋԿԱԱ, Կիրակոսյան Ջ. Մեր խնդիրների մասին հակաքարոզչության բնագավառում: Նամակ ՀԿԿ ԿԿ քարտուղար Կ.Լ.Դալլաքյանին, 1984, սեպտեմբեր, մերենագիր, ուսերեն:

² Կարեն Դալլաքյան (1929-2008) - բանասեր, գրականագետ, պետական գործիչ, բան. գիտ. դ-ր, 1963-1970 թթ.՝ ՀԽՍՀ ՆԽ-ին առընթեր Հայ եկեղեցու խորհրդի նախագահ, 1976-1985 թթ.՝ ՀԿԿ ԿԿ քարտուղար, 1985-1991 թթ.՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ, հիմնական աշխատությունները՝ «Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունից», «Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը», «Ակնարկներ սփյուռքահայ հասարակական մտքի պատմության», «Ռամկավար ազատական կուսակցության պատմություն» - Ա. Կ.:

Во многих американских публикациях Османская держава султанов преподносится как рай для подвластных народов.

В Турции проводится широкая антиармянская кампания, основная цель которой – фальсификация истории армянского народа, в частности, отрицание геноцида армянского населения Западной Армении, спланированного и осуществленного турецкими властями в годы I мировой войны.

Вся идеологическая, политическая жизнь сегодняшней Турции – активное членство в НАТО – насыщена антикоммунизмом, антисоветизмом. Весь пропагандистский, идеологический механизм – пресса, радио, телевидение, книгоиздательство – направлен на то, чтобы извратить принципы внешней политики нашего государства, фальсифицировать историю и в превратном свете представить жизнь многонациональной семьи советских народов. При этом, особый упор делается на извращение братской дружбы народов Закавказья с великим русским народом. Пересматриваются исторические ценности, истина преподносится читателям в кривом зеркале. Эти лживые, антинаучные утверждения распространяются в многочисленных книгах, брошюрах, статьях и т.д., которые переводятся на различные языки и распространяются по всему миру.

В этом плане особый размах приобретает антиармянская пропаганда турецких дипломатических, внешнеполитических служб и организаций. Турецкие публикации выделяются своим развязным русофобством, антисоветизмом, явной фальсификацией исторического процесса. Антисоветизм турецкой пропагандистской машины ничем не слаще американского, и борьба против него – наш первейший долг.

Пользуясь всеми правдами и неправдами, прибегая зачастую к недозванным методам и формам, турецкая пропаганда стремится не только исказить исторические факты недалекого прошлого, но также распространять лживые сведения об армянском народе, с целью вызвать к нему чувства вражды и ненависти со стороны других народов. Как правило, антиармянская шумиха сопровождается антисоветской, антирусской фразеологией.

На помощь турецким средствам «массовой фальсификации» спешат и влиятельные вашингтонские и ньюйоркские издания, которые, естественно за немалые деньги, предоставляют свои страницы турецким лжецам, в роли которых нередко выступают министры, чрезвычайные и полномочные послы Турецкой Республики в странах Запада и США.

Во многих документах английские и французские официальные лица оспаривают мнениями по поводу использования молодых трудоспособных армян, сидевших без занятий в Порт-Санде. Контр-адмирал Дарне, командующий 3-й эскадрой французского флота подтверждал, что армяне горы Муса «очень воинственны и горят желанием обрушиться на векового врага и отомстить за все грабежи, насилие и убийства» (с. 126). Первоначально военный министр Франции намечал создание рабочего батальона из армян Порт-Санда. Однако, идя навстречу предложению министра военно-морских сил, он согласился на создание довольческого отряда из числа армян – выходцев из Киликии (No. 127). Военные, военно-морские власти, дипломаты Великобритании войко обсуждали вопросы использования армян-беженцев, пребывавших на острове Мудрос в качестве чернорабочих (No. 133, 134, 142). В приложении к документу No. 135 речь идет уже об использовании всех антитурецких сил в борьбе против германо-турецкой коалиции. С этой целью обсуждался вопрос вооружения армян-беженцев, создания из их числа отряда, хотя постоянно проявлялось и недоверие к ним.

Во многих документах (No. 232-234, 237-241) говорится о вариантах возможного использования взятых в плен армян в рабочих батальонах или на

фронтах против турок. Это переписка П. Камбона¹, военного министра Жоффра², премьера Бриана, генерала Рока и других.

Включенные в сборник многочисленные документы подтверждают, что честные представители западноевропейской, американской общественности осуждали злодеяния младотурецких палачей, требовали от своих правительств осуществления действенных мер по спасению осколков подвергнувшегося геноциду армянского народа.

Один из основателей Коммунистической партии Франции, депутат от департамента Сены Марсель Кашен³ 19 декабря 1915 г. поднял свой голос протеста против младотурецкой политики уничтожения армян, выразил свою интернациональную солидарность с жертвами террора. В своем письме на имя председателя Совета Министров, министра иностранных дел Аристиды Бриана он писал (No. 153): «По рассказам достойных доверия свидетелей резня, превосходящая по ужасу резню 1894 и 1895 гг., снова залила кровью Армению в текущем 1915 г. Двадцать лет тому назад при Абула Гамиде, который был протеже Вильгельма 2-го, 300.000 армян – беззащитных мужчин, женщин, детей – были умерщвлены их соседями, оттоманцами, черкесами и курдами. Французская Палата единодушно заклеймила палачей после красноречивых выступлений г-на Дениса Кошена⁴ и покойного Жана Жореса. Утверждают, что в 1915 г. под руководством Энвер-паши, бывшего слушателя Берлинской военной академии, один миллион этих несчастных были уничтожены при явном пособничестве немецких консулов и офицеров... Никто не может остаться безразличным к страданиям этого народа, обреченного на уничтожение.

...Для всех этих несчастных жертв мы просим материальной помощи и эффективной поддержки правительства Республики. Армяне рассчитывают на Францию в их огромном бедствии, они связывают с ней большие надежды для того, чтобы развить вековые цепи и окончательно освободиться от ига угнетателей».

Посол Франции в Вашингтоне Юсеран (No. 126, 14 октября 1915 г.) писал премьер-министру и министру иностранных дел Вивьяни, что по призыву

¹ Փոլ Կամբոն - ֆրանսիացի դիվանագետ, 1886-1891 թթ.՝ դեսպան Իսպանիայում, 1891-1898 թթ.՝ Օսմանյան կայսրությունում, 1898-1920 թթ.՝ Սեփ Բրիտանիայում - Ա.Կ.:

² Ժոզեֆ Ժոֆֆր (1852-1931), ֆրանսիացի ռազմական գործիչ, մարշալ, ֆրանսիական բանակի գլխավոր սպայակազմի պետ (1911-1914), գլխավոր հրամանատար (1914-1916) - Ա.Կ.:

³ Մարսել Կաշեն (1869-1958), ֆրանսիացի քաղաքական գործիչ, համայնավար, «Յոմամիտե» (Փարիզ) թերթի խմբագիր (1918-1968), Սոցիալիստների և Կոմիստների գործիչ - Ա.Կ.:

⁴ Դենիս Կոշեն (1851-1922), ֆրանսիացի գրող, քաղաքական գործիչ, դիվանագետ, Ֆրանսիայի ԱԺ պատգամավոր Կարոլիկ կուսակցությունից (1893-1919) - Ա.Կ.:

Моргентау в Нью-Йорке создан комитет из числа известных американских общественно-политических деятелей, цель которого выступить в поддержку армянского народа. В докладной записке, опубликованной этим комитетом, говорилось об «однородности, принятых по отношению к армянам в течение нескольких месяцев мер, преследующих цель систематического уничтожения». Посол не сомневался в честности и правдивости информации, поступившей от этих лиц. В докладе дано описание преступлений и зверств, совершенных младотурками по отношению к армянскому народу.

29 марта 1917 г. под председательством социалиста Линдгадена в Стокгольме состоялся митинг в пользу армян. Социалист Брантинг выступил перед 2 тыс. собравшихся, в том числе всеми послами Антанты. Он разоблачил массовые истребления армян. Единогласно была принята резолюция протеста против систематического угнетения турками армян с призывом к шведскому правительству вмешаться, добиваясь права армян на защиту их жизни, имущества и религии (No. 345).

В защиту интересов армянского народа активно выступил известный французский социалист, ученник и сподвижник Жана Жореса Альвер Тома¹. В своих статьях, лекциях он выступал со справедливых принципиальных позиций и требовал от французских властей уважать право армян на жизнь и самостоятельность (No. 465).

В своем выступлении в Рейхстаге 19 марта 1918 г. социалист Герр Лебедур, касаясь передачи Турции районов Карса, Ардагана и Батума, заявил: «Большинство населения – армяне и грузины. Они и сейчас находятся под угрозой уничтожения турками, которые уже истребили более 1 млн. христианских армян в Турецкой Армении. Для германского правительства пресечение новой резни является вопросом чести» (No. 589).

В своем письме от 19 февраля 1916 г. на имя Погоса Нувара председатель Совета министров Аристид Бриан заверял армянский народ в глубокой симпатии и сочувствии правительства Франции. «Когда настанет час законного возмещения, оно не забудет тягчайшие нападения, которому были подвергнуты ваши соотечественники», - писал он (No. 179). В другом документе (No. 469) Погос Нувар благодарил Пишона за его выступление с трибуны французского парламента в защиту интересов Армении. В то же время в армянских кругах представления не имели о дипломатических хитростях и коварстве своих «союзников» и продолжали писать прошения, выражали благодарность по тем или другим поводам.

8 декабря 1917 г. консул Франции в Тифлисе Николь писал в Париж своему министру Пишону и послу в Петрограде Нулансу, что опубликование

¹ Ալբեր Թոմա (1878-1932), ֆրանսիացի քաղաքական գործիչ, սոցիալիստ, Ֆրանսիայի սպառազինուորյունների մախարար (1916), 1919-ից՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության գլխավոր տնօրեն - Ա.Կ.:

секретных документов вызвало волнение армян, по их мнению, «союзнники им изменили» (№. 441).

Содержание многих документов подтверждает тот огромный резонанс, который имел ленинский декрет «О Турецкой Армении» среди всех слоев армян. По мнению центрального комитета армян России, «Декрет большевиков, если он будет осуществлен во всех вилайетах Турецкой Армении, в том числе Киликии, полностью ответит нашим национальным чаяниям...». Об этом с тревогой сообщал министр иностранных дел Франции Пишон своему премьеру Клемансо (31 января 1918 г.).

Богат интересными материалами раздел сворника, который относится к 1918 г. В нем приводятся сведения о турецкой интервенции в Закавказье, пантюркистских экспансионистских амбициях младотурок, политике Германии и держав Антанты в этом регионе, а также попытке патриотических сил края организовать фронт против интервентов (№. 5, 37, 538-542, 549).

Документы французских архивов проливают свет на практические планы младотурок по осуществлению идей пантюркизма (№. 512, 525, 535, 591, 602). Уже 7 февраля 1918 г. французские власти отмечали большую активность пантюркистской пропаганды младотурецких главарей на предмет установления тюркско-татарской власти над Кавказом. То же самое отмечали английские военные власти. Французская армейская разведка сообщала (№. 535, 23 марта 1918 г.), что комитет «Единение и прогресс» с согласия Германии намеревается создать мусульманское государство на Кавказе, которое охватило бы огромную территорию, включительно Крым. Выдворение русских из этих мест турки считали практически осуществимым делом. По их планам, Кавказ должен был стать составной частью Турецкой империи. В те дни турецкие газеты демагогически писали, что турки не могут быть равнодушными к «просьбам» своих сограждан из Крыма (№. 602).

16 апреля 1918 г. Дютаста, посол Франции в Берне писал Стефану Пишону (№. 591): «Мы уже Вам сообщали о больших надеждах, которые питала Османская империя после распада России и о попытках присоединить к Константинополю тюркские народы, проживающие ранее под царским игом». «В России, - писала в номере от 20 февраля газета *«Терджуман-и Хакикат»*, - существует тюркский мир, который простирается до границ Китая и Афганистана, огибая Каспийское море, и население которого на 90% принадлежит к тюркской расе. Эти планы на данном этапе волее конкретно касаются Кавказа и Крыма. Уступка Турции районов Карса, Ардагана и Батума стала для Турции первым шагом на пути осуществления ее целей и этот реальный успех воодушевил ее на дальнейшее развитие своих честолюбивых планов...»

Вот уже два месяца турецкая пресса активно освещает этот вопрос... Во всех этих статьях ясно отмечается твердая решимость турецкого правительства доказать, что большинство народов Кавказа – мусульмане, что они, в основном,

принадлежат к тюркской расе и что в этих условиях Османская империя имеет все основания вмешаться в дела этих районов.

Большой интерес представляют сообщения турецкого посла в Берне. По заявлению Фуада Селим-бея, Османская империя желала бы, чтобы Кавказ стал буферным государством с Россией и одновременно служил бы связующим звеном с Крымом. Турецкому правительству импонировало бы и то, чтобы Кавказу была предоставлена широкая административная автономия, но все усилия были бы направлены на создание некоей конфедерации с Крымом и Османской империей, которая обеспечила бы превосходство на Черном море, превратив его в Туранское озеро».

И другие источники подтверждают, что план отделения Закавказья от России, его подчинение турецкой деспотической государственности в 1918 г. в Константинополе считался вполне осуществимым. В своем донесении государственному департаменту посол США в Париже Уильям Шарп ((No. 603, 25 апреля 1918 г.) сообщал, что турки решили завоевать Кавказ. Он описывал положение в крае как критическое. По мнению американского посла, армяне находились на грани полного уничтожения турками. Шарпиньи (военный представитель Франции на Кавказе) сообщал (No. 606, 29 апреля 1918 г.), что турки вместе с немцами готовят посылку войск в Краснодарск, Туркестан, Мерв для осуществления своих пантюркистских, панисламистских планов. 24 июля 1918 г. французская разведка сообщала (No. 658) об активных акциях Германии в Закавказье, панисламистских, пантюркистских планах младотурок не только на Кавказе, но и в Туркестане и Афганистане. Младотурецкие офицеры в Елизаветполе сразу приступили к организации военных частей из военнопленных турок. В своей телеграмме из Энзели французский военный представитель, подполковник Шарль Диньи сообщал (No. 697, 5 октября 1918 г.) президенту Клемансо, что после взятия Баку турки с армянским населением Закавказья поступают также, как в 1915 г. в Османской империи.

Некоторые документы содержат данные о героическом сопротивлении турецким интервентам под Сардаравадом, в Караглисе, в Баш-Апаране и других местах. В частности, отмечалось, что самую последовательную принципиальную позицию против турецкого нашествия занимали армяне. Хотя отмечалась малочисленность их военных отрядов (No. 568, 26 марта 1918 г.).

По своему содержанию определенный интерес представляет документ No. 705. Посол Франции в России Нуланс переслал министру иностранных дел Ст.Пиншону (из Архангельска, 13 октября 1918 г.) докладную записку полковника Торгома (глава армянской военной миссии в России). Второй раздел документа (5 июля 1918 г.) – это письмо Торгома на имя Варлама Аванесова (комиссар по делам Армении Наркомата национальностей Советской России), в котором дан всеобъемлющий политический анализ положения дел в Закавказье, Армении и вокруг нее. Характеризуя ситуацию в Армении, автор документа

подвергает суровой критике вредную позицию партии Дашнакцутюн, Армянского Национального Совета (Тифлис) по отношению к Советской России, ее полномочному представителю Ст.Шаумяну. В ноябре-декабре 1918 г. Национальный Совет отказался от советской помощи, которая предлагалась Ст.Шаумяном.

Автор документа доказывает, что Ав.Агаронян, возглавлявший делегацию Армянской республики на Парижской мирной конференции, не проявил должного внимания к интересам западных армян, понимая необходимость сплочения их рядов для создания Армении, восстановления армянского государства. Торгом считает Армению в границах Батумского договора якарманым платком». Он подвергает уничтожающей критике действия дашнакских руководителей. Они были выдвинуты на должности бездельники и посредственные теоретики партии Дашнакцутюн. В документе высмеиваются эти «испытанные» стратеги, писаксы пятого разряда, которые стали заниматься высшей политикой. И наоборот, лучшие военные специалисты отодвинуты на задний план. В документе указывается на предательский характер союза с мусаватистской партией и помещиками-аристократами Грузии, которые опирались на султана и кайзера Германии. Автор осуждает антирусское поведение мусаватистов, которые организовывали диверсии против русских.

По мнению Торгома, независимость Армении была эфемерной, она оставалась игрушкой в руках младотурецкого правительства. Торгом хорошо знал положение дел в Турецкой Армении. Он все видел своими глазами, уже несколько месяцев был очевидцем ее голгофы. Он говорит о сиротах, о 1,5 млн. жертв геноцида. «Армения мертва», - заключал он, протестуя против политики Германии и Турции по окончательному уничтожению Армении.

Сборник Артура Бейлеряна представляет большой интерес для историков нашей страны и для всех, кто интересуется политическими судьбами западных армян, вопросами истории Ближнего Востока, Первой мировой войны, политики держав, их дипломатической деятельности.

Сборник дает в руки исследователя многие ценные, оригинальные документы из архивов Франции, которые вводятся в научный оборот впервые и служат объективной оценки и изложению исторических фактов.

Сборник полностью опровергает лживые домыслы турецких фальсификаторов истории.

Думается, что было бы полезно издать сборник документов А.Бейлеряна на русском языке.

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ¹

Հայ շինարար ժողովուրդն արդեն վաթսուհինգերորդ տարին է, ինչ խաղաղ և ապահով պայմաններում, Մովետական Միության ժողովուրդների համերաշխ ընտանիքում, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ կառուցում է, ստեղծագործում... Մովետական Հայաստանն այսօր բարձր զարգացած սոցիալիստական երկիր է. նա ունի ժամանակակից անաջնակարգ արդյունաբերություն և գյուղատնտեսություն, գիտական խոշոր կենտրոններ, դպրոցական ու համալսարանական կրթության լայն ցանց: Ամեն տարի Հայաստանում ծնվում է 60 հազար մանուկ...

Հայ ժողովուրդը հպարտ է իր սոցիալիստական հայրենիքով, իր գավակների համար ստեղծված նորոգ և երջանիկ կյանքով: Մովետական Հայաստանով հպարտ են արտասահմանյան երկրներում ապրող մեր սփյուռքահայ եղբայրներն ու քույրերը: Նրանք, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմտահայությանը վիճակված ահավոր ողբերգության բեկորների շառավիղներն են, բազմաթիվ թելերով կապված են մայր Հայրենիքի հետ, ուրախանում են նրա յուրաքանչյուր առաջխաղացումով, նրա ամեն մի նոր նվաճումով:

Ժամանակը ոչինչ է անարդարությունը դատապարտելու, ճշմարտությունը ճանաչել տալու անհրաժեշտության նկատմամբ: Սփյուռքահայությունը պայքարում է հայրենիք ունենալու, իր իրավունքը հաստատելու համար:

Ոչինչ չի մոռացվել:

1915-ի ապրիլի 24...

Թուրքական պետականությունն օգտվեց Առաջին համաշխարհային պատերազմի նպաստավոր իրադրությունից՝ ոչնչացնելու համար արևմտահայությանը, հայ ժողովրդին զրկելու իր երկիրը, իր հայրենիքն ունենալու իրավունքից:

Հայ ժողովուրդը, նրա ազգային-ազատագրական ոգորումները երիտթուրքական ոճրագործներից ներկայանում էին մի խոչընդոտ պանթյուրքիզմի իրակամացման ճանապարհին: Արևմտահայության բնաջնջման քաղաքականությունն ուներ իր շարունակությունը. արշավանքը Անդրկովկաս, Բարու: Համաթուրանականության ցնդաբանական տեսության գործնական իրականացումը պետք է ընդգրկեր Անդրկովկասը, Ղրիմը, Միջին Ասիան... Արևմտահայությունը հանդիսացավ պանթյուրքիզմի առաջին զոհը:

Իսկ այսօր թուրքական պետականությունը փորձում է չքմեղացնել երիտթուրքական ոճրագործներին, ուրանալ Օսմանյան կայսրությունից հայ բնակչության անհետացման փաստը: Նրանք փորձում են ուրանալ, որ Հայաստան երկիրը պատկանել է հայերին, որոնք իրենց սեփական պապենա-

¹ ՋԿԱԱ, Ջոն Կիրակոսյանի կողմից ստորագրված անվերնագիր հոդված, որն առ այսօր մնացել էր անտիպ, 1985, 23 մարտի, մեքենագիր:

կան հողերի վրա ապրել են, պայքարել ու ստեղծագործել հազարամյակներ շարունակ:

Թուրքական պետական պրոպագանդան ձեռք ձեռքի տված պատմության կեղծարարների հետ փորձում է նոր սերունդներին համոզել, թե 1915-ին Օսմանյան կայսրության հայ բնակչության հետ ոչ մի վատ բան էլ չի կատարվել: Նրանց ուղղակի «ազնիվ ու բարի նպատակով» հեռացրել են պատերազմամերձ շրջաններից ավելի ապահով, ավելի տաք երկրամասեր: Նման շաղխատաճուրղունը ահռելի չափեր է ընդունել: Այն դուրս է եկել Թուրքիայի սահմաններից, տարածվել Արևմտյան Եվրոպայում, ԱՄՆ-ում, արաբական երկրներում և այլուր: Թուրքական բուրժուական ավազակապետության կառավարող շրջաններն անմիջականորեն մասնակցում են նման ստահող քաղաքական պրոպագանդայի արձատավորմանը, հսկայական միջոցներ են ծախսվում այս նպատակով: Այդ սև գործին մասնակցում են թուրքական ռադիոն և հեռուստատեսությունը, դեսպաններ, Ստամբուլի և Անկարայի համալսարանների պրոֆեսորներ: Կազմակերպվում են սիմպոզիումներ: Հրապարակ են հանվում ստահող գրքեր և կեղծագրեր: Նպատակն է ներագրել ամերիկյան և արևմտաեվրոպական հասարակական կարծիքի վրա, ապացուցել թուրքական պետականության նախորդ վարիչների՝ սուլթանների, էմիր-թալեաթների ու ազգայնականների «բարի» գործերը: Թուրքական պրոպագանդան այնքան է վտիպացել, որ փորձում է ապացուցել, թե հայերի ոչնչացման մասին Թալեաթի հեռագիր-հրամանները ուղիղ ոչինչ չեն, քան հայկական հորինվածք: 1984-ի հոկտեմբերի 8-ից 11-ը հայագիտական «սիմպոզիում» էր գումարվել Էրզրումում: Հոետորները ամբիոնի վրա փոխարինում էին մեկը մյուսին: «Աբաբյուրք» համալսարանի ռեկտոր, պրոֆ. Խուրշիդ Էրթոլուն թե դեկան Սևնեդ Չաքքը խոսում էին Հայկական հարցում «արտաքին գրգռությունների», «ժայցո պնդումների» անհիմնության մասին: Մեկ այլ ինետոր ներկաներին կոչ էր անում Հայկական հարցի «արձատները դուրսը փնտրել»՝ ձգտելով վարկաբեկել ռուս-հայ բարեկամությունը: Էրզրումի նահանգապետ Ֆեզլի Երքիեններն իր խոսքն սկսեց «ժայցո սարքած» զուլումի նկարագրությամբ: Իսկ քաղաքապետ Նեմաթի Կյուլոդուն ճամբարտակում էր, թե «պատմության ընթացքում թուրքերը փոքրամասնությունների հետ միշտ հասկացողությամբ և քաղաքավարությամբ են վարվել: Հայերը փորձած են թուրքերին կոնակեն զարնել և ջարդերու հետևանքով հարյուր հազարավոր թուրքեր սպանած են»: Ամբիոն բարձրացավ մահ հանգստի կոչված Քյամուրան Գյուրուն¹ դեսպանը, «Հայկական դոսյե» հակահայկական աղտոտ գրքի հեղինակը: Մրա սիրած խոսքն էլ Հայկական հարցը «երևակայական» կոչելն է:

¹ Քյամուրան Գյուրուն (ծնվ. 1924), բուրք դիվանագետ, Թուրքիայի պատմության ընկերության անդամ, 1983-ին հրատարակել է «Հայկական դոսյե» գիրքը, որտեղ փորձել է «հիմնավորել» Հայկական հարցի պատմության և հայերի ցեղասպանության կեղծ վարկածը - Ա.Կ.:

Երևույթների պատմության մասնագետ Ամենդ Բեդլի Քուրանի որդին՝ պրոֆ. Էրճյունք Քուրանը, հռչակեց, թե իբր Թուրքիայի դեմ «ժայերն են, որ Եվրոպայի և Ամերիկայի հանրային կարծիքին ուղղություն տված են»։ Մեկը հայերին մեղադրում է Բյուզանդիայի հետ համատեղ գործելու, մյուսը՝ Ռուսաստանին համակրելու մեջ։ Թուրք ժամանակակից պատմաբանների ընկերության նախագահ Բիլալ Շիմշիրն էլ փորձում էր ունկնդիրներին Լուսանկարներ և գրքեր ցուցադրելու միջոցով ապացուցել, թե «ժայերն են կազմակերպել ջարդերն ու գուլումները»։ Սրան հետևեց դոցենտ Ֆահրեդդին Քըր-զողուն՝ խոսելով «Կարսի և նրա շրջակայքի մեջ հայերի կատարած ջարդերի մասին»։ Միավասիկ թուրքական պետական «ժայագիտության» ամենավերջին նվաճումները։

Ըստ թուրքական ըմբռնման՝ չի եղել Հայկական հարցի ներքին ազդակ։ «Չուլումը» հայերի սարքած գործ էր։ Իսկ թուրքական սուլթանները չեն կոտորել թուղարներին ու սերբերին, հույներին ու հայերին, Օսմանյան պետության մյուս ոչ թուրք բնակիչներին։

Յոթանասուն տարի է անցել հայոց ոչնչացման դժնդակ ժամանակներից։ Բայց ահա Հայոց դատը վատարանելու, պատմության փաստերն աղավաղելու մոլոցքով բռնված թուրք կեղծարարներն այսօր փորձում են համաշխարհային հասարակությանը շշկլացնել իրենց աճապարարություններով։ Նրանք մոռացության են տալիս թուրք մարդկանց խոստովանությունները, իրենց իսկ հրապարակած փաստաթղթերը։ Տակավին 1930-ին թուրք հեղինակ Յալմանը ԱՄՆ-ում հրապարակած իր «Թուրքիան համաշխարհային պատերազմում» գրքում գրում էր. «Արտոթղ սկզբում նկատի էր առնվել իբրև ժամանակավոր միջոցառում։ Բայց մի շարք ազդեցիկ թուրք քաղաքագետների վկայությամբ այն նկատի էին ունեցել իբրև հայ փոքրամասնության բնաջնջում Թուրքիայում այն մտքով, թե դա պետք է հիմք ստեղծեր Փոքր Ասիայում միայն մի ցեղի գոյության համար»։

Թուրք Ջելալ Նուրի-բեյը, որ պատերազմի պահին Սայիդ Հալին, Թալեաթ փաշաների կառավարության քաղաքականության մոլի պաշտպանն ու երկրպագուն էր, թուրքական «Բողամ» թերթում 1918-ի նոյեմբերի 3-ին գրեց. «Հայերուն և հույներուն դեմ անխմաստ խիստ քաղաքականության մը հետևեցանք։ Խոհեմությանը չգործվեցավ»։ Իր ընթերցողներին թարգմանաբար հաղորդելով այս խոսքերը՝, Կ.Պոլսի «Շողուվորդ» թերթը հաջորդ օրը՝ 1918-ի նոյեմբերի 4-ին, նկատում էր, թե Ջելալ Նուրի-բեյը «վերջերս հաջողեցավ վաստղել հայագետի դասին»։

1918-ի նոյեմբերի սկզբին թուրքական «Հաբիսաթ» թերթում Դեմապ Շահաբեդդինը գրեց. «Չգալում թուրք և արաբ խլամներն իսկ չկրցան իրենց արտասուքը զսպել, երբ իրենց առջև պարզվեցան հսկողության տակ քաղաքներն անցնող հայերու խմբերուն եղերական տեսարանը» («Շողուվորդ», 1918, 7 նոյեմբերի)։

Ստորև հրապարակում ենք մի ճամակ, որի բովանդակությունը բնորոշ է հազարավոր և տասնյակ հազարավոր հայ ընտանիքների համար: 1926-ին, երբ հաջողվում է պարզել մորաքրոջ որդի Մովսեսի՝ Երևանում հաստատված լինելու փաստը, ջարդից հրաշքով ազատված և Բաղդադ ընկած Ջատիկն իր հարազատին պատմում է իրենց ընտանիքի գողգորայի մանրամասները.

«1926, 12 ապրիլի, Բաղդադ

Ամնոռանալի, սիրելի մորաքրոջ որդիս

պ. Մովսես Թորոսյան

ի Երևան

Ահա կուզամ գրիչովս ձեզի աչքերիս արցունքից գրիչս արյուն և մեկ կողմանից ուրախություն տիրեց մեր վրա այնքան, որ այսօր գրեթե 15 տարին ի վեր կորուստ մը գտնել: Այսքան տարին ի վեր, որ քեզ պտտտում էի, զի կա-
նողացա մեկ կողմանն լուր մը ստանալ. երբ որ 1920 թվականեն մեր երկրացի Չամասանենց Սարգիսը Պուկարիայեն դեպի երկիր վերադարձավ, զացի ամոնց քով, քու մասիդ հարցնելու: Իր տղան Պոտրոսը, աստված ողորմն անոր հոգին, պատասխանեց, որ երկու տարին ի վեր չեմ տեսած, բայց քովս ունիմ անոր նկարը, տամ քեզի, որ կարտոդ առնիս, ըսավ: Երբ որ նկարդ հաճձնեց ինձի, այնտեղից դուրս գալով աչքերս արցունք և վիսպ կտարած հետ վերադարձա մինչև միության սրճարանը: Այնտեղ տեսակցություն եղավ հորաքրոջ որդիդ պ. Մովսեսի հետ, ան ալ նկարդ տեսնելուն պես սկսավ աչքերն արցունք թափել, անկե հետո քու մասիդ տեսակցություն ունեցա Սաղմայենց Մարտիրոսին հետ, որ պատասխանեց՝ մեկ տարի է, որ բաժնված եմ իրձեն, չեմ գիտեր, թե ուր մնաց: Այն ժամանակ բոլորովին հույսս կտրեցի, որ չի պիտի կարենամ հաջողիլ գտնիլ քեզ, բայց ինչպես եղավ այսօր ապրիլի 10, 1926 թվականին ճամակ մը ստացա Սեւանիկեն Հովհաննես եղբար մասին: Նամակն առանց կարդալու վերևի ծայրը տեսա մեկ հասցե մը կարդալով Մովսես Թորոսյան մորաքրոջ որդին այսօր Երևանի մեջ կը գտնվի ըսած էր: Այդ կարդալուս պես օֆիսը վրաս դարձավ, և աչքերս մքնեց, ինքզինքս կորսունցուցի, ընկերս զիս ապտակով աչքերս բացի և սկսա լալ. ես կորուստ մը գտա ըսելով և իմնա ինչ պիտի պատասխանեն ըսելով հայրիմ ու մայրիմ, եղբայրներում ու քույրերում մասին: Բայց ի՞նչ ընենք, միմիայն մեզի չի պատահեցավ այդ դեպքերը, ընդհանուր հայերում ալ պատահեցավ ըսելով կը մխիթարվենք:

Սիրելիս, իմնա կուզամ քեզի ինչպես եղած էրձ, պարզեմ քեզի, երբ որ երկրեն գաղթվեցանք, եկանք հասանք Ռես-ուլ-այն ըսած տեղը. հոն չորս-հինգ ամիս մնալե հետո այնտեղից գաղթեցրին մեզի դեպի Մեսկիմն ըսած տեղը: Այդ ճամբորդության մեջ միմիայն հոգեվաքքի մեջ ձգեցիմք Մարտիրոսը: Իր գերեզմանը բացիմք, մեջը դրիմք, վրան առանց հողը ծածկելու, ուրվիներս դեռ հոգին վերջացած չէր, անոր այնպես թողուցիմք ու հեռացանք: Դեռ մեր մեջեն ուրիշ կորուստ չունեինք, այն տեղեն անցանք, երկու օրն վերջ եղբայրդ՝ Գևորգը, քույրդ՝ Մարիմ, հիվանդացան, չկարողացան քալել: Այնտեղ սկսանք լալ ու անոնց ալ այսպես թողուցիմք ու հեռացանք, իսկ եթե չի հեռանալիմք,

նստիկանները կգնդակահարեին մեզ: Չորս-հինգ օր քալել է հետո եղբայրդ՝ Հովհաննեսը, ոտքեր վիրավորվեցավ, գնդակով անկիա դեռ կը քալեր: Ասել մեկ քանի օր վերջ հայրիկը հիվանդացավ, ան ալ այնպես ձգեցինք, հաջորդ օրը պզտիկ քույրդ՝ Սրբուհին, ձգեցինք, իսկ հաջորդ օրը Հովհաննես եղբայրդ մնաց, չի կարողացավ քալել, միայն մնաց մայրիկդ, աստված ողորմե՛ն հոգին, երկու քույրը ձեռք ձեռքի բռնելով, այսինքն՝ մայրիկդ և մայրիկս մինչև Մոսուլ քեթիքը հասցուցինք: Մայրդ մշտական մտածելն չի կարողացավ դիմանալ, Մոսուլ գալեն մեկ մայս վերջ մահացավ և սուրբ գերեզմանի արժանացավ և անոր մարմինը համզեց: Երկու մմիս վերջ մայրս ալ գիշեր-ցերեկ լալեն չի կարողացավ դիմանալ իր քրոջ և զավակներուն ցավեն, ան ալ մտածելն հիվանդացավ ու մեռավ այդտեղ: Մնացինք մեր ազգականներն եղբայրս, քս և Խաչիկը, քեռին Օրբանճոց տղան՝ Մարտիրոսը, և մեծ քեռին աղջիկը, Թաֆուլիկը, մյուս մնացածներն ամբողջ մեռան, բացի Պարսամ քեռին դուրս, որովհետև ինքը զինվոր գացած էր, և իր ընտանիքը գոնե մնացած էր այդ Մոսուլ, նրանով ամենքը ողջ մնացած են: Մենք այդ բաղաբին մեջ երեք տարի մնալն հետո փախանք դեպի Հալեպ, գացինք և անտեղից անցանք Պոլիս»:

Ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են: Մովսեսի շատավիղներն այսօր ապրում են Երևանում: Սակայն որքան շատավիղներ անհետացան անապատների ավազների մեջ, ընկան յաթաղանից, ծարավից, քաղցից... Պաշտպանելով Թալեսթին ու նրա մարդասպան հանցակիցներին՝ այսօր թուրքական պետականությունը, կեղծարար լրագրողներն ու պատմաբանները պաշտպանում են մարդատյացությունը, կատարում են նոր հանցանք մարդկության դեմ, ժողովուրդների բարեկամության ու խաղաղ գոյակցության դեմ:

Միայն թալեսթներին, էնվերներին, հիտլերներին ու նրանց սև գործերը դատապարտելով է հնարավոր անարգանքի սյունին գամել Թուրքիայում առաջադիմության ու դեմոկրատիայի մարտիկներին, թուրք ժողովրդի իսկական հայրենասերներին գնդաններում ոչնչացնող դահիճներին: Ֆաշիզմի դեմ մարդկությունը պայքարում էր երեկ, պայքարում է այսօր, որովհետև այն մարդատյացություն է: Ֆաշիզմը կոպիտ ուժի պաշտամունք է: Ֆաշիզմը մի գաղափարախոսություն է, որի միջոցով մեկն ուզում է իր ոտքը դնել մյուսի վզին, նրան դարձնել իր ստրուկը, - ասում էր Կոնստանտին Սիմոնովը¹: Պատմության դասերը քելադրում են կանգուն պահել մարդկության հիշողությունը: Թուրքական հետադիմական ուժերն ուզում են, որ գեներցիոյ վերջին գոնը դառնա ճշմարտությունը: Այդ բանը նրանց չի հաջողվի: «Ժխտել գեներցիոյ փաստը, - ասում է ֆրանսիացի բժիշկ, պատմաբան Իվ Տերնոնը², - նշանակում է վիճարկել ընդհանրապես հայերի գոյությունը»:

¹ Կոնստանտին Սիմոնով (1915-1979), խորհրդային գրող, բանաստեղծ, հասարակական գործիչ - Ա.Կ.:

² Իվ Տերնոն (ծնվ. 1932), ֆրանսիացի բժիշկ, պատմաբան, հայերի ցեղասպանության մասնագետ, հիմնական աշխատությունները՝ «Հայեր. մի ցեղասպանության

Այլապես դժվար կլինի պայքարել չարիքի դեմ: Հիտլերին ձեռնտու էր, որ մարդկությունը չի չէր հայոց կոտորածները: Չէ՞ որ նա նոր շարագործությունների կոչ էր անում իր համախոհներին: Սովետական ժողովուրդն իր հերոսական կռիվով պատմության աղբակույտի մեջ նետեց Հիտլերին:

Մեր մոլորակի վրա պայքարը չար ուժերի դեմ շարունակվում է: Չարիքը հաղթահարելու համար պահանջվում է մշտական պայքար: Սովետական Միությունն այսօր գլխավորում է չարիքի, պատերազմի սպանդի, միջուկային աղետի դեմ աշխարհի ժողովուրդների պայքարը: Սոցիալիզմի առաջին երկիրը խաղաղության քաղաքականության իր ծրագրով ուղի է ցույց տալիս դեպի վաղվա օրը, դեպի մարդկության երջանիկ ապագան:

23.03.1985

Պրոֆ. Ջ.Կիրակոսյան
(ստորագրություն)

ԱՆԿԱՐԵԼԻ Է ՄԹԱԳՆԵԼ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ¹

Հազարամյակների իր պատմության ընթացքում հայ ժողովուրդն անցել է դաժան պայքարի ու ծանր փորձությունների բովոյ: Իր քաջարիության ու տոկունության, իր բարձր մշակույթի շնորհիվ նա դիմակայել է օտարերկրյա ազդիչների քազմաթիվ արշավանքներին, արևելյան բուհայնություններին: Դարեր շարունակ Հայաստանը հենել է շահական Պարսկաստանի և սուլթանական Թուրքիայի լծի տակ:

1828 թ. Արևելյան Հայաստանի վրա ծագեց ազատագրության արշալույսը: Ռուսաստանի հովանու ներքո հայ ժողովրդի առջև բացվեցին զարգացման ու առաջադիմության նոր հորիզոններ:

Ռուսաստանի՝ որպես մեծ պետության դերի ու միջազգային կյանքում նրա նշանակության աճի հետ, հայ ժողովրդի իրատեսությամբ մտածող ներկայացուցիչներն իրավացիորեն իրենց ժողովրդի ֆիզիկական ու հոգևոր ազատագրությունը տեսնում էին հենց Ռուսաստանի ուսուցիչի մեջ: Օսմանյան կայսրության նկատմամբ ռուսական զենքի յուրաքանչյուր հաղթանակ, ռուսական դիվանագիտության յուրաքանչյուր միջազգային պայմանագիր մոտեցնում էր հույների և սերբերի, բուլղարների ու չեռնոգորցիների, վրացիների ու հայերի ազատագրության օրը: Ամեն անգամ թուրքերի դեմ ռուսների մղած յուրաքանչյուր հաղթական պատերազմից հետո հայ ժողովուրդը ողջունում էր ռուսներին՝ լինի դա Կարսում կամ Էրզրումում, Վանում, Ալաշկերտում կամ Բայազետում, Արևմտահայաստանի մյուս մարզերում՝ նրանց համարելով իրենց ազատարարներ թուրքական ճնշումից:

Եվ, ընդհակառակը, եվրոպական տերությունների ամեն մի քաղաքական ու դիվանագիտական գործողությամբ, որն ուղղված էր Ռուսաստանի տարածքային ձեռքբերումները առավելագույնս սահմանափակելու նպատակին, զոհաբերվում էին հայ ժողովրդի կենսական շահերը: Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Մոլթրեյին 1878 թ. հազվադեպ անպատկառությամբ հայտարարում էր, որ «բրիտանյանների փրկության որևէ մարդասիրական նկատառումով իմ ձեռքը կանգ չի առնի՝ ռուսների հետագա առաջխաղացումը կանխելու համար»: Եվ սրանք դատարկ խոսքեր չէին: Այսպես, Ման Ստեֆանոյի՝ 1878 թ. պայմանագրի 16-րդ հոդվածի համաձայն՝ Արևմտահայաստանի նշանակալի մասը պետք է անցներ Ռուսաստանին: Սակայն անգլիական, գերմանական և այլ քաղաքագետներն ու դիվանագետները միասնական ճակատով հանդես եկան դրա դեմ, որի հետևանքով «Բեռ-

¹ Կիրակոսյան Ջ., Միքրանյան Ա. Անկարելի է մրագնել պատմության ճշմարտությունը // «Լեռնիցյան ուղիով» (Ե.), 1985, N 4, էջ 84-96: Տե՛ս նաև՝ 1915 թ. արևմտահայության ցեղասպանությունը արևմտյան քաղաքագիտության լուսարանում // «Լրաբեր» (Լ.Ա.), 1985, 24 օգոստոսի: «Արև» (Կահիրե), 1985, 9, 10, 14, 15, 17, 19, 29, 30 օգոստոսի, 2 սեպտեմբերի:

լինի տրակտատը հայ ժողովրդի մի նշանակալի մասին, - կարդում ենք «Գիվանագիտական պատմության» մեջ, - բողեց թուրքական լծի տակ: Պատմությունը ցույց տվեց, որ կապիտալիստական երկրների այդ որոշումը ճակատագրական եղավ թուրքահայերի համար, այն նրանց դատապարտեց ֆիզիկական բնաջնջման» (История дипломатии, М., 1963, Т. 2, с. 333):

Սովետական թուրքագետ Ա.Ս.Տվերխտինովան հետևյալ կերպ է բնութագրում Օսմանյան կայսրությանը ենթակա ժողովուրդների դրությունը. «Թուրքական արշավանքներն ուղեկցվում էին քաղաքների ու գյուղերի անողոր ավերածությամբ, նյութական և մշակութային արժեքների կողոպուտով, հարյուր հազարավոր խաղաղ բնակիչների զերեվարությամբ: Այդ արշավանքները թուրքական լծի տակ ընկած բալկանյան, կովկասյան, արաբ և այլ ժողովուրդների համար պատմական աղետ էին, որոնք երկար ժամանակով կասեցրին նրանց տնտեսական ու մշակութային զարգացման պրոցեսը» (Вестник истории, Т. 4, с. 544):

Օսմանյան կայսրության պատմությունը համոզիչ կերպով վկայում է, որ տիպիկ բռնակալական այդ պետության կառավարողները դարեր շարունակ իրենց արտաքին ու ներքին քաղաքականությունը կառուցում էին իրենց իշխանության տակ ընկած բոլոր ժողովուրդների անողոր ճնշման, ռասայական ու կրոնական հակամարտության, ազգային ինքնագիտակցության նվաստացման, ազգային-ազատագրական շարժումների քարքարոսական ճնշման վրա: Թուրքական կառավարող շրջանների ռասայականությունն արտահայտվում էր թուրք ազգի բացառիկության քարոզի մեջ, որն իբր կոչված էր կառավարելու և իշխելու մյուս ազգերի վրա: Գործնականորեն դա դառնում էր վայրենի հալածանքների ու բռնությունների քաղաքականություն բազմաթիվ ժողովուրդների՝ հույների, ալբանացիների, արաբների, բուլղարների, սերբերի, մակեդոնացիների, կիպրացիների, քրդերի և այլոց նկատմամբ:

Արևմտահայաստանի բնակչության համար խավար գիշերը շարունակվեց: Արևմտահայությունը դարձավ ավերիչ, մահաբեր քաղաքականության գոլը: Աբդուլ Համիդ II սուլթանի օրոք 19-րդ դարի 90-ական թթ. դրվեց հայերի զանգվածային բնաջնջման պլանավորված քաղաքականության իրականացման սկիզբը: Օսմանյան պետության ռազմաֆեոդալական վերնախավի այդ քաղաքականությունն առանձնապես դաժանորեն սկսեց իրականացվել 19-րդ դարի ավարտին և իր զագաթնակետին հասավ երիտթուրքերի հետադիմական դիկտատորայի ժամանակաշրջանում, երբ պանթյուրքիզմը հռչակվեց որպես պետական քաղաքականություն:

1908 թ. Օսմանյան կայսրությունում իշխանության գլուխ անցած երիտթուրքական կուսակցությունը («Միություն և առաջադիմություն»), ղեկավարվելով երկրի բռնի թուրքացման շովինիստական ծրագրով, մախապարաստեց և Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իրականացրեց Օսմանյան կայսրության հայ բնակչության բնաջնջման համապարփակ ծրագիր: Երիտթուրքական շարժումը մի ուշացած, կիսակատար բուրժուական

«հեղափոխություն» էր, որը իբրև ժառանգություն էր ստացել թուրքական ռազմաֆեոդալական բյուրոկրատիայի բոլոր հետադիմական գծերը: Ինչպես «Պրավդան» էր գրում, երիտթուրքերի ձգտումը՝ «թուրքացնելու Օսմանյան կայսրությունում ապրող սլավոններին, հայերին, հրեաներին և այլոց, էլ ավելի կոպիտ ու հետևողական բնույթ ստացավ, քան Աբդուլ Համիդի օրոք էր» (*Правда* (М.), 1912, N 76):

19-րդ և 20-րդ դարերի սահմանագծում Օսմանյան կայսրությունում ապրող հայերի դրությամբ օբյեկտիվ ուսումնասիրումը բացահայտում է ողբերգական այն իրադարձությունների իսկական պատճառները, որոնք կարճ ժամանակամիջոցում երեք անգամ՝ 1894-1896, 1909 և 1915-1916 թթ. եանգեցրին Արևմտահայաստանի բնակչության մեծ մասի՝ ոչնչով չարդարացված բնաջնջման: Ուշագրավ է, որ հայերի առաջին զանգվածային կոտորածը իրականացվել էր Թուրքիայի պատմության մեջ առաջին «սահմանադրական» միապետ Աբդուլ Համիդ II-ի ցուցումով: Ոչ պակաս ուշագրավ է նաև այն, որ երիտթուրքերը, որոնք իրենց դրոշին գրել էին Աբդուլ Համիդի դեմ պայքարի նշանաբանը և ազատության, հավասարության ու եղբայրության կոչ էին անում «օսմանցի հայրենակիցներին», որդեգրեցին թուրքերի ազգային բացառիկության ռասիստական գաղափարները և իրենց շովինիստական քաղաքականության մեջ հասան հայ ժողովրդի ցեղասպանության կազմակերպման:

«Турецкая республика» տեղեկագրում (Մոսկվա, 1975, էջ 32) ասված է. «Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Թուրքիայում ապրած 2 միլիոն հայերից 1965 թ., պաշտոնական տվյալներով, մնացել է 33 հազար»:

Աշխարհի վերաբաժանման համար Առաջին համաշխարհային պատերազմը սանձագերծել էին իմպերիալիստական տերությունները, առաջին հերթին՝ Գերմանիան: Օսմանյան կայսրության նվաճողական պլանները, որոնք պետք է իրականացվեին պամբյուրքիզմի և պամիլսամիզմի դրոշին ներքո, նույնպես կրում էին զավթողական բնույթ: Թուրքական «բոգբուրուրը» («գորշ գայլը») այդ պլանների խորհրդանշանն էր: Հենվելով Գերմանիայի հետ կնքած դաշինքի վրա՝ երիտթուրք կառավարողները մտալիք էին բացել Թուրանի ճանապարհը, տիրել Կովկասին, Թուրքեստանին...

«Հայկական սեպը», երիտթուրքերի պլաններին համապատասխան, պետք է մեջտեղից վերացվեր դեպի Թուրան տանող նրանց ճանապարհից: Համաշխարհային պատերազմը երիտթուրքերի համար քարենպաստ հնարավորություն եղավ այդ պորբլեմը փոքր աղմուկով և մեծ «հաջողությամբ» լուծելու համար:

Եվ արևմտահայերը ոչնչացվեցին վանդալներին հատուկ ամբողջ անմարդկայնությամբ: Թուրքիայի հայ բնակչության վերաբնակեցման անվան տակ երիտթուրքերը գերմանական իմպերիալիստների հետ միասին իրականացրին հայ ժողովրդի մի նշանակալի մասի մասսայական բնաջնջման պլանը: «...Տիրահողակ վերաբնակեցումը այլ բան չէր, քան հայերի զանգվածա-

յին սպանություն» (Новая история стран зарубежного Востока, М, 1952, т. 2, с. 399): Ալադեմիկոս Ե.Վ.Տադևն գրում էր, որ Թալեաթ-փաշան և Էնվեր-փաշան «որոշել էին ի կատար ածել հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման ընդարձակ պլանը... Յանկայի էր համարվել հայերին կոտորել հնարավորին չափ մինչև վերջին մարդը» (Тарле Е.В. Европа в эпоху империализма, 1871-1919, М, 1958, Соч., Т. 5, с. 398):

Ավերվեց հայկական օջախը: Հայերի պատմական հայրենիքը, որտեղ դարերով ստեղծվել էր մեծ քաղաքակրթություններից մեկը, ամայացավ:

Ամբողջ Հայկական լեռնաշխարհը, Վանից մինչև Կիլիկիա, Եփրատից մինչև Արաքս, այսօր էլ դեռ պահպանել է քաղաքների, ամրոցների, եկեղեցիների, վանքերի, կամուրջների, ջրանցքների ու խաչքարերի՝ հայ ժողովրդի ստեղծարար աշխատանքի այդ պերճախոս վկաների ավերակները:

Եվ այսօր արխիվային նորանոր նյութերը հաստատում են երիտթուրքական դահիճների կողմից հայ ժողովրդի բնաջնջման պլանաչափ, կանխատեսված ծրագրի այդ փաստը:

«Յեղասպանություն» («գեոցիդ») հասկացությունը դեռ չէր մտել ժամանակակից միջազգային լեքսիկոնի մեջ ու տխուր համբավ չէր ստացել աշխարհում, երիտթուրքական կլիկն այն արդեն կիրառել էր հայ ժողովրդի նկատմամբ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ կայգերական Գերմանիայի անմիջական մասնակցությամբ:

Ճշմարտացի ու հանգամանակից պատասխանն այն հարցի, թե Օսմանյան կայսրության բռնակալական լծի տակ հեծող ավելի քան երկուամիլիոնանոց արևմտահայությունը ինչու բռնի կերպով տեղահանվեց հարազատ երկրից, ու նրա մեծագույն մասը սրի քաշվեց կամ սովի ու համաճարակի գոհ դարձավ Մերձավոր Արևելքի անապատներում, այսօր էլ ունի ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական հրատապ նշանակություն:

Բանն այն է, որ ժամանակին ուսումնասիրված ու ապացուցված իրողություններն այսօր սկսել են վերանայվել ու կեղծվել: Բուրժուական քաղաքագիտությունը փակում է աչքերը շատ ճշմարտությունների հանդեպ և հրամցնում համաշխարհային այս կամ այն խնդրի «լուծման» իր մեկնաբանությունն ու գնահատականը:

Հայ ժողովրդի բնաջնջման օսմանյան պետական քաղաքականության հարցերը պատմաբանների, քաղաքագետների մի քանի սերունդների են գրադեցրել ինչպես մեր երկրում, այնպես էլ արտասահմանում: Գոյություն ունի 1915 թ. հայ ողբերգության պատմությանը նվիրված աղբյուրագիտական ու պատմագիտական ընդարձակամտավալ գրականություն:

Ցիմերվալդյան կոնֆերանսի փաստաթղթերում, որ ստորագրել է Վ.Լեւնինը, սոցիալիստներն ընթրումով վերաբերվեցին հայ ժողովրդին, որի դուրքունը կրիտիկական էր դարձել իմպերիալիստական պատերազմի հետևանքով: «Միջազգային սոցիալիստական կոնֆերանսը Ցիմերվալդում, - ասված է կոնֆերանսի մասնակիցների կողմից միահամուռ ընդունված քանաձևում, - իր

ամենախոր համակրանքն է հայտնում պատերազմի բազմաթիվ զոհերին, լեհ և բելգիական ժողովուրդներին, հալածանքների ենթարկվող հրեա և հայ ազգերին, բոլոր այն միլիոնավոր մարդկային էակներին, որոնք տառապում են անհամար աղետների ճնշման տակ, ստիպված են կրել անլուր սարսափներ» (Первая Шиммервальдская конференция. Официальные документы, II-д., 1915, с. 16):

Երկրորդ Ցիներվալդյան կոնֆերանսը, որը կայացավ Կինտալ գյուղում (Շվեյցարիա) 1916 թ. ապրիլի 24-30-ը, իր ընդունած բանաձևերից մեկում գրել էր. «Ինչպես ակնառու կերպով ցույց է տալիս Բալկանյան պետությունների օրինակը և հատկապես Սերբիայի ու Հայաստանի ողբերգական ճակատագիրը, փոքր պետություններն ու ճնշված ազգերը լոկ շախմատային ֆիգուրներ են մեծ տերությունների իմպերիալիստական խաղում» (Шиммервальдская II Кинталская конференция, Л.-М., 1924, с. 27):

Մերգեյ Կիրովը և Մաքսիմ Գորկին, Յուրի Կեսելովսկին և Վալերի Բրյուսովը, Նիկոլայ Մառը¹ և Ռուսաստանի առաջադեմ ուրիշ շատ գործիչներ իրենց բողոքի ձայնը բարձրացրին երիտթուրքերի հրեշավոր ոճրագործությունների դեմ: Ռուսաստանի հասարակայնությունը կոչ էր անում օգնության ձեռք մեկնել հայ ժողովրդին:

Արևիվկային շատ փաստաթղթեր հաստատում են ռուսական կառավարության ակտիվության հայտնի փաստը, որպեսզի դաշնակիցները համատեղ ելույթ կազմակերպեն Օսմանյան կայսրությունում հայերի բնաջնջման քաղաքականության դատապարտմամբ:

Ռուսական կառավարությունը դիմել էր Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին՝ առաջարկելով համատեղ հանդես գալ հայերի նկատմամբ թուրքերի կատարած ոճրագործությունների դեմ: Արդեն այն ժամանակ դրված էր երիտթուրքական կառավարության անդամների, քաղաքացիական և զինվորական իշխանությունների պատասխանատվության հարցը՝ հայերի նկատմամբ իրականացված ջարդերի համար նրանց դատապարտելու խնդիրը:

Մեծ Բրիտանիայի դեսպանությունը Փարիզում հավաստում էր, որ Պետրոգրադը համառորեն պահանջում է կոնկրետ թողոք հայտնել Արևմտահայաստանի շատ վայրերում հայերի զանգվածային կոտորածի առթիվ:

1915 թ. մայիսի 24-ին մամուլի Հավաստագրովությունը հրապարակել էր համատեղ բողոք-հայտարարության տեքստը Էրզրումում, Ալևում, Բիթլիսում, Մուշում, Մասունում, Ջեյրունում, Վանում և այլ վայրերում «մարդ-

¹ Նիկոլայ Մառ (1865-1936), վրացի խորհրդային արևելագետ, կովկասագետ, հայագետ, բանասեր, պատմաբան, հնագետ, ԽՄՍՀ ԳԱ ակադեմիկոս, փոխնախագահ, մեծ ներդրում ունի Վրաստանի և Հայաստանի պատմության, հնագիտության և ազգագրության մեջ, հայկական և վրացական ազգային արևելագիտական դպրոցների հիմնադիր, իրականացրել է Անի քաղաքի պեղումները - Ա.Կ.:

կության ու քաղաքակրթության դեմ» երիտթուրքերի կատարած ոճրագործությունների դեմ:

Պրոֆեսոր Մ.Մ.Կովալևսկին¹ նշում է, որ դեռ դարասկզբին Փարիզում երիտթուրքերը չէին քարցնում իրենց մտադրությունները. ենթակա ազգերը կամ պետք է կուլ գնան բոնի կերպով և կան, եթե իրան համաձայն չեն, ոչնչացվեն (տե՛ս Ковалевский М.М. Демократия и ее политическая доктрина, СПб., 1913, с. 90-91): Հայ ժողովրդի համար նրանք նախապատրաստել էին հենց երկրորդ ուղին:

«Թուրքերը փայփայում են թուրքիայի ողջ հայ բնակչության քնաջնջման հրեշավոր երազանքը, - 1916 թ. գրում էր Ս.Կիրովը, - ...գուցե հետագայում միայն, եթե կանգ կառնեն մարդկային արյան գետերը, մի նոր Գանթե կնկարագրի միլիոնավոր մարդկանց անասելի տառապանքների պատկերը» (Киров С.М. Народ страдающий // Терек (Владикавказ), 1916, 14 февраля):

«Նոր պատմության մեջ քիչ կան այնպիսի ժողովուրդներ, - գրում էր Գ.Օրջոնիկիձեն, - որոնք այնքան մեծ զոհեր տված լինեն, որքան հայերը, և քիչ կան այնպիսի երկրներ, որոնցում այնքան արյուն թափված լինի, որքան Հայաստանում» (Орджоникидзе Г.К. Статьи и речи, М., 1956, Т. 1, с. 412):

Կ.Լիբկեխտը դատապարտում էր կազմերական Գերմանիային, «Թուրքիայի դաշնակցին, որն այս պատերազմի ժամանակ և իր ձեռքերը ներկել է հայերի արյունով, անչափ մեծացնելով իր մեղքը, իրականացնելով տարաբախտ հայ ժողովրդի դժնդակ ջարդը...» (Либкнехт К. Мои процессы по документам, П-д, 1918, с. 5):

«Թուրքերը և հայերը» գրքում, որը լույս է տեսել 1919 թ. Փարիզում, կան այսպիսի տողեր. «Այլևս ոչ մի կասկած չի կարող լինել, որ խոսքը ամբողջ հայ ազգը ոչնչացնելու թուրքական կառավարության հաստատ արտահայտված կամքի մասին է» (Tahmazian K. Turcs et Arméniens. Plaidoyer et requisitoire, Paris, 1919, pp. 113-117):

Հայերին ոչնչացնելու քաղաքականությունը պլանավորված է եղել մերթոլիկորեն ու միանգամայն սառնարյուն կերպով, հավաստում է դեպքերի ակամատես, ամերիկացի դիվանագետ Լ.Էյնշտեյնը (Einstein L. Inside Constantinople. Former Minister Plenipotentiary of US Diplomatic Service, New York, 1918, p. VII):

Համաշխարհային համբավ վայելող ֆրանսիացի լեզվաբան Անտուան Մեյեն 1919 թ. սկզբին հայտարարել է, որ «հայերի դժբախտությունն անասելի է»: Գերմանացի հայտնի արևելագետ Յոզեֆ Մարկվարտը 1919 թ. հունվարին արտասանած մի ճառում իր կառավարությունից պահանջեց ջանքեր գործադրել՝ երիտթուրքերի պարագլուխներին գտնելու և նրանց միջազգային

¹ Մարսին Կովալևսկի (1851-1916), ռուս պատմաբան, իրավաբան, հասարակական գործիչ, ռուսական մատուցության ղեկավարներից, Ս.Պետերբուրգի Գ-Ա ակադեմիկոս, Ռուսաստանի Պետական խորհրդի անդամ - Ա.Կ.:

տրիքունալին համձնելու համար: Առնույ թոյնքին համոզված էր, որ հայկական կոտորածների ժամանակաշրջանում երիտթուրքերի քաղաքականությանն էին ծառայում ինչպես մոլեզին պանիսամիզը, այնպես էլ թուրքիզմն ու պանթուրքիզմը:

Ամերիկյան հեղինակ Կլեր Պասի կարծիքով, այն, ինչ հայերի հետ տեղի ունեցավ 1915 թ. Օսմանյան կայսրությունում, վերջին 25 տարիների ընթացքում նրանց դեմ իրագործված արյունահեղ ու ողբերգական դեպքերի տրամաբանական ավարտն էր: 1915 թ. ողբերգության գլխավոր մեղավորը նա համարում է Օսմանյան կայսրությանը:

Սովետական արևելագետները, թուրքագետները իրենց աշխատություններում ցույց են տվել պանթուրքիստական գաղափարախոսության ողջ հետադիմականությունը: Իրենց ուսիստական, շուլիմիստական և հակասովետական հայացքներով պանթուրքիստները ֆաշիստների գաղափարական ամենահարազատ դաշնակիցներն են (Гасанова Э.Ю. Антиккоммунизм в Турции // Национально-освободительное движение и современная идеологическая борьба, Баку, 1973, с. 102):

Չնայած այն բանին, որ թուրքական պետականությունն ու հասարակայնությունը ակնհայտորեն չէին ցանկանում ընդունել հայ ժողովրդի նկատմամբ կատարված ոճրագործությունը, 1918 թ. հոկտեմբերից սկսած (երիտթուրքական վարչակարգի անկումից հետո), Էնվերի, Թալեաթի, Ջեմալի և այլոց կործանարար գործունեության ըննադատությունը դարձել էր Կոստանդնուպոլսի մամուլի գլխավոր թեման:

1918 թ. վերջին և 1919 թ. սկզբին Կ.Պոլսի «*Uspush*» և «*Ենի գյուն*» թերթերի խմբագիրները բանավեճ էին սկսել հայկական կոտորածների մեղավորներին հայտնաբերելու հարցի շուրջ: «Ամբողջ աշխարհը գիտե, որ հայկական կոտորածը կազմակերպված է եղել Իթթիհատի կենտրոնական կոմիտեի հրամաններով», - հայտարարում էր «*Uspush*» թերթի խմբագիր Ալի Քեմալը (*La Renaissance* (Constantinople), 1918, 15 Decembre):

«*Uspush*» թերթը (27.11.1918) գրում էր. «Այսօր գոյություն ունի արևի մեծ պարզ մի իրողություն, աղետ, դժբախտություն, որն ուրանալ անհնարին է: Սաիդ Հալիմի և Թալեաթի կառավարություններն իրենց անիծյալ հոգում նյութում էին մի զարհուրելի պլան՝ պատերազմի պատրվակով քրիստոնյաներին, հատկապես հայերին, արտաքսել մի նահանգից մեկ ուրիշը, ընդհուպ մինչև արաբական անապատը, և այդ տեղահանության ընթացքում զազանաբար, միջնադարում և նոր ժամանակներում չտեսնված տմարդի մեթոդներով սպանել ոչ միայն տղամարդկանց ու երիտասարդներին, այլև ծծկեր երեխաներին, կանանց, ծեղումիներին, որպեսզի իսպառ կոտորեն, արմատախիլ անեն ողջ հայ ազգը»:

Այդ օրերին թուրք ժողովրդի շատ ներկայացուցիչներ հանդես եկան Թուրքիայի հայ բնակչության դեմ ուղղված տմարդի գործողությունների դատապարտմամբ: Այսպես, Ջեյալ Նուրի-բեյը, որը պատերազմի ժամանակ

Սաիդ Հալիմի և Թալեաթի կառավարությունների քաղաքականության մոլի երկրպագուն էր, «Ժողամ» թերթի 1918 թ. նոյեմբերի 3-ի համարում խոստովանում էր. «Անխիտ դաժան քաղաքականությունը հայերի և հույների նկատմամբ կիրառվել է անիմաստ կերպով»:

Թուրքիայի հասարակական մեկ այլ գործիչ՝ Շահաբեդդինը, «Հալիսաթ» թերթում (1918 թ. նոյեմբերի սկզբին) գրում էր. «Զգայուն թուրք և արաբ մուսուլմաններն անգամ չէին կարողանում զսպել արցունքները, երբ իրենց աչքերի առաջ տեսնում էին հայերի կոտորածի սահմոկեցուցիչ տեսարանը»:

Թուրք բանաստեղծուհի, այն ժամանակ հասարակական ակտիվ գործիչ Խալիդե Էդիպ խանումը «Լակիր» թերթում հրապարակել էր մի հայտարարություն: «Այն օրերին, երբ մենք գորեղ էինք, աշխատում էինք միջնադարյան մեթոդներով ոչնչացնել քրիստոնյաներին, մասնավորապես հայերին... Այսօր մենք ապրում ենք մեր կյանքի ամենատխուր ու ամենամռայլ օրերը: Ամերիկյան և Անգլիան մեր մեջ տեսնում են մի պետություն, որը ոչնչացրել է իր ամենդ հպատակներին ու զավակներին: Ներկայիս կառավարությունը հայտարարում է, որ հայերին հարկավոր է վերադարձնել նրանց քակության վայրերը...»: Էդիպը երիտթուրքերի դեկավարներին մեղադրում էր հայերի դեմ կատարած ոճրագործության համար (*La Renaissance (Constantinople)*, 1918, 22 Decembre):

Թուրքական զինվորական տրիբունալը, որի կազմի մեջ կային թուրքական բանակի զեներալներ ու սպաներ, իր նիստերում լիովին ընդունեց երիտթուրքական պարագլուխների մեղավորությունը և նրանց դատապարտեց մահվան:

Երիտթուրքական պարագլուխների դատավարության օրերին մախլիկն մեծ վեզիր Թեֆիկ-վաշան իտալական մի թերթի տված հարցազրույցում պահանջեց ստեղծել միջազգային հանձնաժողով՝ հայերի քննադատման փաստերը ուսումնասիրելու համար: «Այդ միջոցով միայն Եվրոպան կկարողանա իմանալ ճշմարտությունը: Մենք ոչ միայն չենք ժխտում Հայաստանում տեղի ունեցած դեպքերի ծանր փաստը, այլև խորապես ավստոսում ենք դրանց համար: Մենք այժմ դատում ենք նրանց, ովքեր պատասխանատվություն են կրում»:

Դեռ 1919 թ. թուրքական պառլամենտը Կոստանդնուպոլսում անգլիերեն լեզվով հրապարակել էր «Թուրք-հայկական հարցը» (թուրքական տեսակետը) գիրքը: Չճայած Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի «թուրքական տեսակետն» անկասկած ավելի մոտ էր պատմական ճշմարտությանը, քան այժմ ջանում են ներկայացնել թուրք պատմաբանները:

Թուրք աշխատավոր ժողովրդի ամենաճշմարտացի վերաբերմունքը իր բանաստեղծության մեջ արտահայտել է կոմունիստ, ինտերնացիոնալիստ բանաստեղծ Նազիմ Հիքմեթը.

«Լառվեցին լույսերը Սուրենի նպարեղենի խանութում:

Նա չի մոռացել կոտորածը հայկական:

Մինչև վերջ, մինչ մահ, գերեզման

Նա չի ների իր հոր սպանողներին:

Բայց նա սիրում է քեզ,

Քանզի դու ևս չես ներել նրանց, ովքեր օգնել են,

Որ Թուրքիայի ճակատին դրվի այդ խարանն ամորալի» (Назым Х. Изъ-ранное, М., 1953, с. 226-227):

Ժամանակի ընթացքում բուրբակյան բուրժուական քաղաքագիտությունը գրավեց խիստ շեշտված միտումնավոր դիրք, գնաց պատմական իրակա-նությունը կեղծելու ճանապարհով:

Չնայած հայերի ցեղասպանության վերաբերյալ պատմագիտական ըն-դարձակ գրականության և արդյուրագիտական հիմնարար հրատարակումնե-րի առկայությանը, ժամանակակից թուրք բուրժուական հեղինակները փոր-ձում են աշխարհին ներկայացնել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակների այդ դեպքերի իրենց նոր «մեկնաբանությունը»: Նրանց այն-պես է թվում, թե աշխարհում ոչ մի օրինակ չի մնացել այն վավերագրերից, որոնցում պահպանված լինեն իրենց ցեղակիցների ոճրագործությունների հետքերը: Կարճ ասած, այսօրվա թուրք հեղինակները հանդես են գալիս իրենց երեկվա նախորդների տեսակետի դեմ:

Թուրք հեղինակ Հասան Փուլուրը «Հյուրիչեք» քերթի էջերում դեռ վեր-ջերս գրում էր. «...Այսօր 50 տարին չլրացած և անգամ հիսնամյա մարդիկ բո-լորովին չգիտեն, թե 1915 թ. ինչ է տեղի ունեցել արևելյան և հարավարևելյան Անատոլիայում: Ջալլամի մնաց մեք մեր գլուխը քարցրել ենք ավազի մեջ, 50 տարի մի խոսք անգամ չենք ասել Հայկական հարցի մասին»:

Իսկ վերջին ժամանակներս Թուրքիայում մեկը մյուսի հետևից Հայկա-կան հարցի վերաբերյալ կազմակերպվում են սիմպոզիումներ, սեմինարներ, լուսանկարների ցուցահանդեսներ: Թուրքական պոլիտոլոգների հետ միասին որպես հայ-թուրքական հարաբերությունների պատմության «գիտակներ», որ-պես նման հանդիպումների «ամփոփոխ դերակատարներ» հանդես են գալիս ամերիկյան զեներալներ, լրտեսներ, դրանց թվում՝ ԱՄՆ-ի ազգային պաշտ-պանության խորհրդի նախկին անդամ Փ.Հենզեն, արագ ծավալման ուժերի օգտագործման ստրատեգիայի տեսաբաններից մեկը, պրոֆեսոր Ուոլտեր-թերը և ուրիշներ: Նման համաժողովներում քննարկվող գլխավոր թեման է ամերիկյան համընդհանուր հակասովետիզմի պաշտպանությունը, ավանդա-կան ռուսատյացության ու հակակոմունիզմի պրոպագանդան:

Թուրք պատմաբանների ու քաղաքագետների՝ 70-80-ական թթ. լույս ընծայած հրատարակությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թուրքական բուրժուական պատմագիտության «ստրուկտուրան» ընդհանուր առմամբ չի փոխվել: Այն դարձել է ավելի քաղաքականացված, ավելի միաս-նականացված: Ռուսատյացությունն ու հակասովետիզմը իրենց բնորոշ ար-տացոլումն են գտել թուրք հեղինակների աշխատությունների մեծ մասում: Այսպես, Ռեշիդ Իլչերին պնդում է. «Հայերին առաջին սաղոդող եղել է Պետրոս Մեծը: Նշանակում է Հայկական հարցը ծնվել է 1720 թ.»:

Թուրք հեղինակների աշխատություններում հայրենաբաղձության նուտաներ են լսվում Օսմանյան կայսրության կորուստների նկատմամբ: Այդ ուրբ ամբողջ Սերժավոր Արևելքում, Կովկասում, Բալկաններում թուրքական պետության կորցրած դիրքերի մասին է: Նրանք խեղաբարյուրված ձևով են մեկնաբանում սուլթանին հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների պրորբեմը, ծայրահեղ պահպանողականություն ցուցաբերում նոր և նորագույն ժամանակների պատմության բազմաթիվ կարևոր պրորբեմների լուսաբանման գործում:

Ներկայումս Թուրքիայում տեղի ունեցող զաղափարախտական և քաղաքական պայքարի բնագավառում գնալով հստակորեն զատվում է երկու հակադիր գիծ: Մի կողմից, ամերիկամետ, ֆաշիստական, հետադիմական ուժերի կուրսն է, որոնք դավաճանում են ժողովրդի ազգային շահերին, ստիպում են աշխատավորներին ավելի պինդ սեղմել գոտիները, շարունակ դիմում են ռեպրեսիաների ու տեռորի և աջակցում Պենտագոնին: Մյուս կողմից, Թուրքիայի կոմունիստական կուսակցության վարած գիծն է խաղաղության և ազգային դեմոկրատիայի համար, բոլոր ազգային դեմոկրատական ուժերի շահերի համար մղվող պայքարի գիծը (*Курту Х. Выразитель интересов масс // Проблемы мира и социализма* (М.), 1984, с. 31):

Բուրժուական թուրք հեղինակներն արդարացնում են սուլթանական կամ երիտթուրքական պետական քաղաքականությունը, որն ուղղված է երկրի ոչ թուրք ժողովուրդների շահերի դեմ: Նրանք որպես կանոն ժամանակակից թուրք ընթերցողից թարցնում են իրական փաստերը Օսմանյան կայսրության հայ բնակչության մասին: Նրանք մասնավորապես, մոռացության են մատնում այն փաստը, որ «պայծառափայլ իշխան Սաիդ Հալիմ-փաշան, Օսմանյան կայսրության մեծ վեզիրն ու արտաքին գործերի մինիստրը» 1914 թ. փետրվարի 8-ին իր ստորագրությունն է դրել հայկական բարենորոգումների մասին Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված համաձայնագրի տակ (*Свободни договорова Россия с другими государствами, 1856-1917*, М., 1917): Հետևաբար, հայեր եղել են և այն էլ մեծ քանակությամբ Արևելյան Անատոլիայի վիլայեթներում՝ Էրզրումում, Վանում, Տրապիզոնում, Խարբերդում և Դիարբեքլիում: Եթե համաձայնագրով մախատեմք էր երկու գլխավոր տեսակներ նշանակել օտարերկրացիներից՝ երկու սեկտորների համար, նախատեսվում էին ռեֆորմներ, նշանակում է եղել է՝ և պրորբեմը: Այսօր Թուրքիայում չեն ցանկանում հաշվի գտնել այդ փաստերի հետ:

Ներկայումս թուրք հեղինակները կուպիտ կերպով կեղծում են Առաջին համաշխարհային պատերազմի, հայ ժողովրդի, հայ-թուրքական հարաբերությունների պատմությունը, 1915 թ. դեպքերի էությունը: Կեղծարարական այդ կամպանիան հասել է այնտեղ, որ նրանք լկտիաբար ժխտում են արևմտահայության բնաջնջման բուն փաստն անգամ: Մեկը մյուսի հետևից լույս են տեսնում գրքեր, որոնցում փաստերի ու դրանց էության խեղաբարյուրման աստիճանը անմախաղեպ է համաշխարհային պատմագիտության մեջ:

Նույն այդ պարսավելի նպատակներին են նվիրված նաև թուրքական մամուլում լույս տեսնող բազմաթիվ հոդվածները:

Պրոֆեսիոնալ պատմաբանների աշխատություններից բացի, Թուրքիայի գրական շուկան ողողված է բուլվարային այնպիսի հրապարակումներով, որոնք լի են առարկայագուրկ, սանձարձակ ամեն կարգի պնդումներով: Եվ կեղծ հեյոտրանքներով ու կիսազիտական գրապատանքների այդ հեղեղն անընդհատ տեղում է ընթերցողի գլխին:

Փաստերի խեղաթյուրումների ու տարրական ճշմարտությունների կեղծիքների մի հավաքածու է Ջյամուրան Գյուրունի «Հայկական դոսյե» գիրքը: Նախկին դիվանագետը, դեսպանը, Թուրքիայի արտգործնախարարության գլխավոր քարտուղարը խնդիր է ստանձնել՝ արդարացնել օսմանյան պետության հակաժողովրդական քաղաքականությունը: Ընդ որում բնորոշ է այն, որ Գյուրունը ոչ միայն ինքն է աղճատում փաստերը, այլև հարձակվում է բոլոր այն հեղինակների վրա, որոնք թելուզ մի նվազագույն կշտամբանք են հղում Օսմանյան կայսրության հասցեին:

Թուրք հեղինակներն այսօր, աղճատելով փաստերը, ջանում են ընթերցողին համոզել, որ «ընդունելով տեղահանության որոշումը, թուրքական իշխանությունները ելնում էին ոչ թե էքսպանսիայի քաղաքականության շահերից, այլ նրանից, որ ռազմաճակատի գծից հեռացնեն օկուպանտների հետ համագործակցող էթնիկական խումբը»: Իր հրապարակումներում այդ նույն ղիկրքն է պաշտպանում նաև կիպրացի թուրք Սալահի Սոնիելը:

Ձանալով արդարացնել երիտթուրքերին ու նրանց գործողությունները՝ Սոնիելը ամբողջ պատասխանատվությունը իշխանությունների վրայից բարդում է այն մարդկանց վրա, որոնց վատահաված են եղել բնակչության վերաբերմանակեցումն ու նրանց պահպանությունը: Եվ քանի որ թուրքերը ռազմաճակատներում էին, ապա, իբր այդ պատճառով նրանց պահպանությունը հանձնարարել էին քրդերին, իհարկե միանգամայն անմեղորեն և առանց որևէ դիտավորության, իսկ վերջինները, ինչպես Սոնիելն է գրում, լինելով «հայերի ավանդական թշնամիները, դաժանորեն էին վարվում նրանց հետ»:

Հայերի անկախության ձգտումն անվանելով պատրանք, ռուսներին ու մյուսներին մեղադրելով հայերին ազատության սաղոթելու մեջ, կեղծելով հայերի թվաքանակը Արևմտահայաստանում և այդ հիման վրա նրանց մերժելով ինքնորոշման իրավունքը՝ թուրք պատմաբաններն ու հասարակական գործիչներն առանց այդ բանը ցանկանալու իրենց դնում են շատ անհարձար դրության մեջ: 1984 թ. սեպտեմբերին Լոնդոնի «Բմպլայտ» հանդեսը հրապարակել է Սոնիելի գրախոսությունը «Բրիտանական վավերագրերը օսմանյան հայերի մասին» երկհատոր ժողովածուի մասին: Գրախոսության հեղինակի կարծիքով գրքում իրավիճակն այնպես է ներկայացված, թե իբր «Թուրքիայում ոչ մուսուլման ժողովուրդներն ավելի լավ են ապրել, քան մուսուլմանները, եղել են ավելի հարուստ, ունեցել ավելի շատ իրավունքներ ու հնարավորություններ, և զարմանալ միայն կարելի է, թե ինչպես դրանք՝ բոլոր այդ հույներ-

րը, հայերն ու արաբները և մյուսները կարող էին մտածել անկախության և ազատության մասին»: Այստեղ ակնհայտորեն ծայրը ծայրին չի հասնում: Եթե դա իրոք այդպես լիներ, ապա, ինչպես պնդում են իրենք՝ բուրբերը, ինչպես էին անխուսափելի կործանման մատնում ժողովրդի մեծագույն մասին՝ հանուն այդ «ազատության պատրանքի»:

Օգտվելով «ծուռ հայելու» միամիտ մեթոդներից՝ նրանք ամեն ինչ գլխիվայր են շուռ տալիս և փաստերի նենգավիժման միջոցով ջանում են ցույց տալ, որ կոտորածի գոհ են դարձել ոչ թե հայերը, այլ բուրբերը: Մեթոդը մոր չէ, բայց դա կարող է ազդել երիտասարդ ընթերցողների թեկուզև ոչ մեծ ու անփորձ մասի գիտակցության վրա և նրանց աչքում արդարացնել երիտբուրբերին և մասնավորապես թուրքական ամբողջ պետականությունը: Իսկ եթե ինչ-որ մեկը Եվրոպայում, Ամերիկայում ինչ-որ բանով, ինչ-որ ձևով հիշեցնում է երիտբուրբերի չարագործությունների իսկական փաստերի մասին, ապա թուրքական պաշտոնական պրոպագանդան անմիջապես վիթխարի աղմուկ է բարձրացնում:

Բոլոր նրանք, ովքեր փորձում են կեղծել հայ ժողովրդի պատմությունը, պետք է իրենց համար պարզ պատկերացնեն՝ հայերի ողբերգությունը չի կարելի ո՛չ ջնջել, ո՛չ էլ մոռացության տալ, ճիշտ այնպես, ինչպես չի կարելի մոռանալ Ֆաշիստների ոճրագործությունները Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին:

Կասկած չկա, որ թուրքական հակազիտական, հակապատմական հրապարակումները կարող են հաջողություն ունենալ միայն անիրագվել քաղաքների մոտ: Դրանք նպատակ ունեն խեղաթյուրել պատմական ճշմարտությունը, արդարացնել երիտբուրքական դափնեների հակահայկական չարագործությունները:

Պատմության կեղծարարներին հակահարված են տալիս թուրք դեմոկրատները, կոմունիստները: Ն.Գյուրելը Թուրքիայի կոմկուսակցության Կենտկոմի «Աբրըլըմ» բերթում (No. 8, 1983) գրել է. «Գերմանամետ Իթթիհաղ կուսակցության պարագլուխների ցուցումով 1915 թ. Օսմանյան կայսրության տարածքում ապրող մեկ միլիոնից ավելի հայեր բարբարոսաբար ոչնչացվեցին, իսկ հարյուր հազարավոր հայեր ևս ստիպված եղան հեռանալ իրենց հարազատ հողերից և ցրվի զալ ամբողջ աշխարհով մեկ»: Հեղինակը 1915 թ. ցեղասպանությունը համարում է «Թուրքիայի պատմության ամենաստորալի էջերից մեկը»:

70-ական թթ. երկրորդ կեսից՝ 1915 թ. ողբերգական դեպքերից տասնամյակներ անց, Արևմտյան Եվրոպայի երկրների, ԱՄՆ-ի պատմաբանները, քաղաքագետները վերստին որոշակի հետաքրքրություն են ցուցաբերել հայ ժողովրդի մոր և նորագույն պատմության պրոբլեմների նկատմամբ: Բազմաթիվ մեծագրություններ, ժողովածուներ, ամսագրային ու լրագրական հոդվածներ են լույս տեսնում Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Անգլիայում, Գ-Ֆ-Ն-ում, Հունաստանում, Լիբանանում և ուրիշ շատ երկրներում: Խնդիրը լուսաբանելու գործում

որոշակի հետաքրքրություն են ներկայացնում արխիվային և այլ փաստաթղթերի նոր հրատարակումները Արևմտքի մի շարք երկրներում:

Հիշատակելի է Մորբոնի համալսարանի հրատարակությամբ ֆրանսերեն լույս տեսած «Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ըստ ֆրանսիական արխիվների (1914-1918)» ժողովածուն, որը 757 արխիվային արժեքավոր փաստաթուղթ է պարունակում: Ժողովածուի նյութերն ամբողջապես հերքում են ժամանակակից թուրք հեղինակների հիմնադրված պնդումները, հայ ժողովրդի դահիճների արյունոտ գործերն արդարացնելու նրանց ջանքերը:

Ամերիկյան ազգային արխիվների բազմաթիվ վավերագրերի բովանդակությունն ամբողջովին ու լիովին հաստատում է այն անհերքելի ճշմարտությունը, որ Օսմանյան կայսրության կառավարողները վարել են հայ ժողովրդի զանգվածային բնաջնջման քաղաքականություն, հերքում են թուրք հեղինակների ու նրանց օտարերկրյա փաստաբանների ամենայն հիմքերից զուրկ պնդումները: Այդ բանում կարող է համոզվել ամեն ոք, ով կցանկանա ծանոթանալ Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպանության այն հեռագրերին, որոնք 1915 թ. և հետագա տարիներին ուղարկված են եղել Վաշինգտոն՝ պետական դեսպարտամենտ (United States National Archives, General Records of the Department of State, Record Group 59, Decimal File, 1910-1929): Հայերի կոտորածի մասին իր առաջին հեռագիրը դեսպանությունն ուղարկել էր 1915 թ. ապրիլի 30-ին: 1915 թ. մայիսի 25-ին ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն պետական քարտուղարին հաղորդում էր հայերի նկատմամբ ստեղծված սարսափելի իրավիճակի մասին: 1915 թ. մայիսի 28-ի հեռագրում հաղորդվում էր այն մասսայական կոտորածի մասին, որին մասնակցել էին օսմանյան պետական իշխանությունները: Նույն թվականի հուլիսի 10-ին ամերիկյան դեսպանը գրում էր արդեն չտեսնված սարսափների, մասսայական ձերբակալությունների ու տեղահանությունների մասին: «Ինչպես երևում է, - գում է նա, առկա է հայ ազգի սխտեմատին ոչնչացման պլան» (նույն տեղում, էջ 77):

Այս վավերագրերից ամեն մեկի մեջ հաստատվում է երիտթուրքերի կողմից հայերի մասսայական ոչնչացման փաստը:

Ժամանակի ընթացքում երիտթուրքերի տմարդի ոճրագործությունների դատապարտումը, ցեղասպանության պաշտոնական ընդունումն ավելի ու ավելի էր դառնում Թուրքիային ներկայացվող պահանջ:

Բերնարդ Լևինը «Թրայմ» թերթի էջերում (1981 թ. մարտի 26-ին) «Ի՞նչ են հիշում հայերը» հոդվածում գրում է. «Անհմարին է ստույգ պարզել գոհերի թիվը, բայց կասկած չկա, որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և հետպատերազմյան Առաջին տարիներին սպանվել է 1,5 մլն հայ»: Նա նշում է, որ սկսած Աբդուլ Համիդի ժամանակներից՝ հայկական կոտորածները չեն դադարել մինչև մեր դարի 20-ական թթ.:

Ամերիկացի լրագրող Է.Մեյերը «Հայերի հիշողությունը և թուրքերի հիշողության մթագմումը» հոդվածում հիշեցնում է, որ 1915 թ. «Թուրքիայի մեծ

ու քարգավաճող հայ համայնքը դարձավ 20-րդ դարի առաջին ցեղասպանության գոհը» (*The New York Times*, 1983, April 23):

«Իսկական ցեղասպանություն»՝ այսպես է վերնագրված ժամ Գարգոլի գիրքը: Հեղինակը բանավեճի մեջ է մտնում այս կամ այն թուրք պատմաբանի հետ, քանի որ այդ հեղինակների կատարած նենգափոխությունները համարում է ոչ թե առանձին հեղինակների ձեռքի գործ, ոչ թե նրանց սուբյեկտիվիզմի կամ սխալների արդյունք, այլ մի պաշտոնական «տեսություն» և այդ տեսությունն ապացուցելու անբարետես գործով է զբաղված այժմ թուրքական գրեթե ամբողջ պատմագիտությունը:

Բելգիական մի թերթ մեծ հողված էր նվիրել պատմության թուրքական կեղծարարություններին՝ այն վերնագրելով՝ «Մահացածներ, որոնց նորից են սպանում»: Իսկ շվեդացի դիվանագետ Ռենն դե Ռեկը գտնում է, որ հայերի սպանությունները «ցնցեցին եվրոպացիների խիղճը» (*Humanité* (Paris), 09.01.1984):

Չարմանալի ոչինչ չկա, որ չնայած թուրքական պատմագրության հուսահատական փորձերին, պատմական ճշմարտությունը Թուրքիայի անցյալ դարի 90-ական թթ. և 1915 թ. դեպքերի մասին իր համար ուղի է հարթում դեպի Արևմուտքի միլիոնավոր մարդկանց մտքերը: Ավելի ու ավելի հաճախ են լսվում արևմտյան հրապարակախոսների ու քաղաքական գործիչների կոչերը թուրքական իշխանություններին և միջազգային հասարակայնությանը՝ ընդունելու Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության փաստը, ինչպես որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընդունվեց ու դատապարտվեց ֆաշիզմի կողմից հրեաների, սլավոնների և այլ ազգությունների զանգվածային բնաջնջման փաստը:

«Արջեբուս արևմտագերմանական *«Cuntnn»* հանդեսը մեծ հողված էր նվիրել հայկական պրոբլեմին: Հողվածի հեղինակներն անհերքելի են համարում թուրքական իշխանությունների մեղքը 1915 թ. ցեղասպանության համար և իրենց տարակուսանքն են հայտնում, որ ներկայիս թուրքական իշխանությունները չեն ընդունում ցեղասպանության փաստը: Նրանք նշում են, որ հայկական ազգային-ազատագրական շարժման հանդեպ թուրքական իշխանությունների ունեցած վախը հանգեցրեց այն բանին, որ «կառավարությունն Անկարայում գրավել է ժխտելու (ցեղասպանությունը – Ջ.Կ., Ա.Մ.) համառ ու անխոհեմ դիրք»: Ըստ հանդեսի, թուրքական պաշտոնական իշխանությունների մնաց վերաբերմունքը հայ ժողովուրդի ողբերգության ցուցադրում է «քաղաքար պեհանձմության բացակայությունը՝ ընդունելու պատմական հանցանքի պատասխանատվությունը և ձեռք մեկնելու հաշտության համար»: Այս խիստ բացասական դիրքը ներկայիս Թուրքիայի պրեզիդենտ, զեներալ Էլբինը արտահայտել է հետևյալ կերպ. «Մեզանում հայկական ոչ մի պրոբլեմ չկա, այն մեզ մոտ երբեք չի եղել, այն երբեք էլ չի լինի»:

Լուրջ հրապարակումների հետ միասին Արևմուտքի գրքերի շուկան որոգված է ամեն տեսակ քուլվարային հրատարակություններով: Թուրք կեղ-

ծարարներին օգնության են շտապում Արևմուտքի երկրների որոշ քաղաքագետներ ու ամեն կարգի գրչակներ, որոնք շահագրգռված են Թուրքիայի հակասովետական դիրքի ուժեղացմամբ:

Պատմության փաստերի վերլուծման ժամանակ արևմտյան հետազոտողների մեծ մասը, որպես կանոն, անընդունակ է անաչառ լինելու, քանի որ Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, և այդ հարցը նրանք ավտոմատ կերպով փոխադրում են ՍՍՀՄ-ԱՄՆ, Արևմուտք-Արևելք դիմակայության համատեքստի մեջ: Հաշվի առնելով ՆԱՏՕ-ին Թուրքիայի մասնակցության փաստը՝ շատ հետազոտողներ կանգնում են Թուրքիայի դիրքերի վրա, թեպետև ընդունում են ցեղասպանության փաստը: Տվյալ դեպքում անաչառությունն ու գիտական օբյեկտիվությունը տեղը զիջում են բրդկային համերաշխությանն ու այն անհանգստությանը, որ, ընդունելով օսմանական Թուրքիայի իշխանությունների հանցանքը և պաշտպանելով հայերի պահանջները, նրանք դրանով իբր կնպաստեն ՍՍՀՄ-ի դիրքերի ուժեղացման:

Ելնելով աշխարհում ստեղծված նոր իրավիճակից, գեոպոլիտիկական գործոններից՝ շատ հեղինակներ ընդգծում են Թուրքիայի կարևոր դերը ՆԱՏՕ-ի համար: Քանի որ մերձավորարևելյան նավթը «գնալով ավելի ու ավելի կենսականորեն անհրաժեշտ է դառնում Արևմուտքի երկրների համար և որ իբր մեծանում է ՍՍՀՄ-ի սպառնալիքը այդ ռեզիուսին, ապա այդ ամենը առանձնահատուկ դեր է հասկացնում Թուրքիայի՝ Եվրոպայի պաշտպանության գործում և զգալիորեն ուժեղացնում է նրա դերը Մերձավոր Արևելքի ու Պարսից ծոցի անվտանգության հարցում»: Այս տեսակետն է զարգացնում Բրյուսը «Օրբիս» հանդեսում (1983, ամառ, էջ 421):

Ոմանք խոստովանում են, որ ԱՄՆ-ի համար ձեռնտու չէ սահմանել դեպքերի պատմական ստույգ վավերականությունը. Թուրքիան նրան պետք է որպես դաշնակից: ԱՄՆ-ը անչափ մեծ միջոցներ է տվել Թուրքիային և, բնականաբար, պաշտպանում է թուրքական վարկածը 1915 թ. դեպքերի մասին: ԱՄՆ-ի վարչակազմը «մեծ պատկառանքով է» վերաբերվում Թուրքիայի պաշտոնական ներկայացուցիչներին, որոնց թույլատրվում է Բերկլիի համալսարանական գրադարանի ամբիոնից հայտարարելու, որ «հայերի ցեղասպանություն պատմության մեջ երբեք չի եղել»:

Թուրքական սուլթանների նորահայտ փաստաբանները միամիտ դիրքերից աշխատում են իրենց ընթերցողներին համոզել, որ «ռուսների աջակցությամբ, որոնք հույս ունեին տիրել թուրքական հողերին», հայերը «խաչակրաց արշավանք» ձեռնարկեցին իրենց թուրք կառավարիչների դեմ»: Այդպիսին է «Լաշինգտոն քայմս» թերթից ամերիկյան ոմն «փորձագետ» Ռասսել Ուորրեն Հաուի «կարծիքը» (02.08.1983):

Ամերիկյան և արևմտաեվրոպական շատ հեղինակներ քննադատաբար են վերաբերվում օտարերկրյա միջամտությանը հայ ժողովրդի գործերին: Ամերիկացի Ջեյմս Գլոյնը «ամօգուտ» է համարում «հայերի քարեկանությունը եվրոպացիների և ամերիկացիների հետ»: Էռնեստ Ռասսոլը

պնդում է, որ երիտրոպրերը Հայկական հարցը դիտում էին որպես Թուրքիայի նկատմամբ եվրոպական տերությունների անբարյացակամ վերաբերմունքի պատճառ: Մյուս կողմից, հայտնի պատմաբան Ռ.Անտոն-Վատսոնը գտնում էր, որ հենց Եվրոպայի անվճռականությունն էր, որ տառապանքներ բերեց հայերին: Ռոշը ամերիկացիներ պարզապես կրկնում են թուրքական կեղծ վարկածը հայ հեղափոխական կազմակերպությունների գործունեության «վնասակար» հետևանքների մասին:

Հայ ազգային-ազատագրական շարժումը, հակառակ Մոնիելի, Շոուի, Լանժերի ու դրանց նմանների պնդումներին, թե իբր այդ շարժումն ունեցել է «ֆանտաստիկ» ցանկություններ (ազգային-պետական ինքնուրույնություն ձեռք բերել իր նախնիների հազարամյա հայրենիքում), հենվում էր միջազգային հարաբերություններում արդեն արսիսմատիկ դարձած ազգի ինքնորոշման իրավունքի վրա: Վ.Լենինի և սովետական կառավարության դիրքորոշումը ելնում էր հենց այդ սկզբունքից, երբ սովետական իշխանության առաջին դեկրետների թվում Լենինը ստորագրեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետը: Այնպես որ Ն.Ռավիչը իր «Հայկական ողբերգություն» հոդվածում միանգամայն արդարացիորեն է պատասխանում Կադորիներին, Կարպատներին, Մոնիելներին ու դրանց նմաններին, որ «այսերը Օսմանյան կայսրության շրջանակներում ունեին «ազգային ազատագրության» նույնպիսի իրավունք, ինչպես և Թուրքիայի կամ եվրոպական երկրների ճնշման տակ գտնված ամեն մի այլ ժողովուրդ: Ազգային-ազատագրական պատերազմները լայն պաշտպանություն գտան Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Հայկական շարժումը ևս այն շարժումներից մեկն էր, որոնք համդես էին գալիս «ազգային ազատագրության համար» (*Encounter* (London), 1981, December, p. 77):

Անտանտի երկրները, որոնք տարված էին ավարի բաժանմամբ, որն անմիջապես բազմաթիվ բարդություններ առաջացրեց նրանց հարաբերություններում ինչպես Վերսալի հաշտության կոնֆերանսում, այնպես էլ հետագայում, և կուրացած էին Մովետական Ռուսաստանի նկատմամբ տաժաժատելու ցանկությունից, փորձեցին անել հնարավոր ամեն քան՝ Ռուսաստանը թուլացնելու, հարևան ժողովուրդների վրա Հոկտեմբերի գաղափարների ազդեցությունը սահմանափակելու համար: Այդ նպատակով նրանք փորձեցին օգտագործել նաև թուրքական ազգայնական շարժումը: Դավաճանելով հայկական դատին, մոռանալով բոլոր խոստումներն ու գոհեղին՝ Անգլիան և Ֆրանսիան, որոնք տարվել էին Ռուսաստանի հետ հարաբերությունները սրելու ցանկությամբ, երկուստեք մեծազույն ջանքեր գործադրեցին՝ վերանայելու Սևրի պայմանագիրը, և կնքեցին Լոզանի համաձայնագիրը Թուրքիայի հետ: Ինչպես գրում է Արեղիինի համալսարանի միջազգային հարաբերությունների անգլիացի պրոֆեսոր Պոլ Ուիլկինսոնը, «Լոզանում 1923 թ. Արևմուտքը ուրացավ իր նախնական խոստումները հայերի նկատմամբ և դավաճանեց նրանց՝

ճանաչելով Թուրքիայի վերահսկողությունը Արևմտահայաստանի նկատմամբ»:

Պատերազմից հոգնած, համաշխարհային պատերազմում տված կոնտատներից ցնցված, սոցիալական և ազգային հեղափոխությունների թավից սարսափած եվրոպական հասարակայնությունն ընկել էր կատարյալ շփոթության մեջ: Որպես միակ իրողություն և համաշխարհային պատերազմի արդյունք նա գիտակցել էր նոր, հեղափոխական Ռուսաստանի առաջացումը, որը կլանել իր վրա էր բեռնել համաշխարհային հասարակայնության ուշադրությունը ինչպես տեղի ունեցած բուն փաստի ու մասշտաբների վիթխարիությանը, այնպես էլ հետագա զարմանալի նվաճումներով:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը, ոտքի կանգնող ֆաշիզմը, Երկրորդ համաշխարհային պատերազմը, «սառը պատերազմը» մարդկությանը հնարավորություն չտվեցին հանգիստ իրադրության մեջ խորապես ըմբռնելու վերջին մեկ դարում տեղի ունեցածը: Այդ բոլոր տարիներին հայ ժողովրդի ողբերգությունը դուրս էր մնացել միջազգային քաղաքականության ոլորտից, իսկ պատմագիտական և սոցիալ-քաղաքական գրականության մեջ մոլվել էր հետին պլան:

Պ.Ուիլկինսոնը վճռականորեն առարկում է թուրքերի այն պնդումների դեմ, թե ոչ մի ցեղասպանություն չի եղել՝ նշելով, որ «պատմաբանների միջազգային ընկերակցությունը իր մեծամասնությամբ այն կարծիքին է, որ ցեղասպանություն եղել է»: Նրա կարծիքով, «եթե այսուհետ ևս ՄԱԿ-ում կասեցվի հայկական ցեղասպանության ճանաչման գործը, անիրաժեշտ է ՄԱԿ-ում *ad hoc* (հատկապես այդ դեպքի համար – Ջ.Կ. Ա.Մ.) ստեղծել կոմիտե՝ տվյալ հարցը հետաքննելու համար: Եթե դա տեղի չունենա, ապա հարկավոր է Հայկական հարցը բարձրացնել Հելսինկիի կոնֆերանսի որոշումների կատարումների ստուգման հեռքական հանդիպումներում...»:

1984-ի ապրիլի 13-16-ին Փարիզում տեղի ունեցավ Հայոց գենոցիդին նվիրված Ժողովուրդների մշտական դատարանի նստաշրջան: Տվյալ հարցում առավել բացասական մոմենտներից մեկը տրիբունալը համարում է այն փաստը, որ շատ պետություններ գեոպոլիտիկական նկատառումներով պաշտպանում են թուրքական կառավարությանը՝ տվյալ հարցի վերաբերյալ որևէ օբյեկտիվ հետազոտություն թույլ չտալու և պորբեմի իրավաբանական լուծումը խոչընդոտելու նրա ջանքերում:

Այն, որ ներկայիս թուրքական պոլիտոլոգիան կեղծում է փաստերը և անտեսում հայ ժողովրդի շահերը, աղաղակող անարդարացիության մի ակտ է երկու ժողովուրդների միջև եղած հարաբերություններում և խիստ դատապարտման է արժանի միջազգային ընկերակցության կողմից, որը փորձում է ՄԱԿ-ի շրջանակներում, առաջին հերթին ՄՄՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների ջանքերի շնորհիվ դնել արդարացի աշխարհակարգի հիմքերը: Այնպիսի գործոններ, ինչպիսին համաշխարհային պատերազմների ու համապարփակ ցնցումների բացակայությունն է Երկրորդ համաշխարհային պա-

տերազմը ավարտվելուց հետո, նախկինում ճնշված քաղաքախիվ պետությունների ազատագրումը զաղութային լծից, համաշխարհային քաղաքականության վրա ՄՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների ազդեցության ուժեղացումը բարենպաստ պայմաններ ստեղծեցին, որպեսզի միջազգային հարաբերություններում ուժի քաղաքականությանը փոխարինելու գա արդարության սկզբունքի վրա հիմնված քաղաքականությունը: Անկասկած է, որ դա կարող է որոշակի նախադրյալներ ստեղծել արդարացիորեն գնահատելու մաս հայկական զենոցիդի պրոբլեմը: Այդպիսով համաշխարհային ընկերակցությունը կհաստատի իր վճռականությունը պայքարելու այն բանի համար, որ Օսմանյան կայսրության՝ հայերի ցեղասպանության մեան ոչ մի հանցագործություն անպատիժ չմնա:

Սովետական Միության և Թուրքիայի միջև ներկայումս հաստատված հարաբերությունները խաբսխված են երկու երկրների շահերը փոխադարձորեն հարգելու, փոխշահավետ համագործակցությունը երկուստեք զարգացնելու հիմքի վրա: Հարևան երկրների ու ժողովուրդների և Թուրքիայի ու թուրք ժողովրդի միջև բարենպաստ, գործարար հարաբերությունների ողջ կոմպլեքսի հաստատման պրոցեսի հետագա խորացմանը կարող էին մեծապես նպաստել անցյալից եկող և մեր օրերում էլ դեռ այդ հարաբերությունների վրա ստվեր նետող պատմական անարդարությունների օբյեկտիվ գնահատումը, դրանից արվող ճշմարիտ և անկանխակալ հետևությունները:

Պատմության դասերը պետք է ծառայեն ժողովուրդների միջև բարեկամության ու համագործակցության զարգացմանը:

**ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐԻ 1915-1916 ԹԹ.
ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ
ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ՛**

ժողովուրդների խիղճը միշտ էլ ընդվզել է ցեղասպանության հանցագործությունների դեմ: Մյափուրված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան 1948 թ. հատուկ կոնվենցիա ընդունեց «Շեղասպանության հանցագործությունը կանխելու և այդ հանցագործությունը պատժելու մասին»: Փաստաթղթում ասված է, որ ցեղասպանությունը «որևէ ազգային, էթնիկական, ցեղային կամ կրոնական խումբ որպես այդպիսին ամբողջապես կամ մասնակիորեն ոչնչացնելու միտումով կատարված գործողություն է»²:

20-րդ դարի պատմության ամենամտալ էջերից մեկն է 1915-1916 թթ. Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչության զանգվածային տեղահանությունն ու կոտորածը: Ինչպես նշել է «*Պրավդա*» թերթը, «փմպերիալիզմի ծնած ցեղասպանության խոշորագույն գործողություն հանդիսացավ Օսմանյան Թուրքիայի կառավարիչների հաշվեհարդարը հայ ազգաբնակչության նկատմամբ, որ կազմակերպվեց յոթանասուն տարի առաջ»³:

Օսմանյան կայսրության կազմում գտնվող Արևմտյան Հայաստանի ազգաբնակչությունը օսմանյան դարավոր լծի տակ շարունակաբար ենթարկվել է բռնադատության ու հալածանքի, դրանք անցյալ դարի վերջին ստացան հայ ժողովրդի զանգվածային ոչնչացման քաղաքականության բնույթ: 1894-1896 թթ. հայերի զանգվածային ջարդերը տարան ավելի քան 300 հազար կյանք, 1909 թ. ավելացավ ևս մի քանի տասնյակ հազար գոհ:

Արևմտյան Հայաստանի տարածքում, որը հայերի պատմական հայրենիքն է, և որտեղ մրանք բնակվել են հազարամյակներ շարունակ, ինքնուրույն հայկական պետություն ստեղծելուն խանգարելու նպատակով, և օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած պայմաններից, երիտթուրքերն իրականացրին Օսմանյան կայսրության հետադիմական շրջաններում վաղուց ի վեր ծրագրված՝ հայ ժողովրդի ջարդը: Այդ հրեշավոր ծրագիրն իրականացվեց մեթոդիկ կերպով և չլսված դաժանությամբ: Հետևանքը եղավ այն, որ Օսմանյան կայսրության մեջ Առաջին համաշխարհային պատերազմի

¹ Կիրակոսյան Ջ., Սիբրանյան Ա., Կիրակոսյան Ա. Օսմանյան կայսրության հայերի 1915-1916 թթ. որբերությունը արևմտյան պատմագրության լույսի ներքո // «Սովետական Հայաստան» (Ե.), 1986, Հ. 11, էջ 27-30: Տե՛ս նաև՝ Կրակոսյան Ժ.Ս., Мигранян А.М., Киракосян А.Дж., Трагедия армян Османской империи в 1915-1916 гг. в освещении буржуазной историографии // *Вопросы истории* (М.), 1986. N 5, с. 147-154.

² Официальный отчет первой части третьей сессии Генеральной Ассамблеи. Резолюция 21 сентября – 12 декабря 1948 г, Париж, 1948, с. 90: «*Известия*» (М.), 17.11.1985.

³ «*Правда*» (М.), 24.04.1985.

տարիներին գանգվածաբար կոտորվեցին ավելի քան մեկուկես միլիոն հայեր, իսկ նախնիների հողից հարյուր հազարավոր տեղահանվածներ էլ դարձան փախստական ու սփռվեցին աշխարհով մեկ¹:

Օսմանյան կայսրությունում հայերի վիճակը և նրանց կոտորելու օսմանյան քաղաքականությունը գրավել է ինչպես մեր երկրի, այնպես էլ օտարերկրյա պատմաբանների ուշադրությունը: Այդ հարցերին նվիրված հարուստ և համապարփակ գրականություն գոյություն ունի: Հայերի ցեղասպանության խնդիրը լայնորեն լուսաբանվել է մեր երկրում հրատարակված փաստաթղթերի ժողովածուներում և հետազոտություններում²: Խորհրդային գիտնականները վերականգնել են Թուրքիայում 1915-1916 թթ. հայ ազգաբնակչության ողբերգության փաստականացված պատկերը: Արտասահմանում նույնպես գոյություն ունի այդ խնդրի ընդարձակ պատմագրություն: Սույն տեսության հեղինակները չհավակնելով Արևմուտքում լույս տեսած և այս հարցին նվիրված հրատարակությունների համապարփակ քննություն կատարելուն, իրենց առաջ խնդիր են դրել ստակ ընդհանուր պատկերացում տալ դրանց մասին, ինչպես նաև բնութագրել արտասահմանյան արխիվային և խնդրո առարկա այլ փաստաթղթերի նոր հրապարակումները³:

Ամերիկյան ազգային արխիվների բազմաթիվ փաստաթղթերի բովանդակությունը լիովին հաստատում է, որ Օսմանյան կայսրության կառավարողները վարել են հայերի զանգվածային քնաջնջման քաղաքականություն: Այդ

¹ Геноцид армян в Османской империи, Е, 1982, с. III

² Документы младотурецкого комитета о геноциде западных армян в 1915-1916 гг. // *Известия АН АрмССР* (Е.), 1965, N3: Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ե, 1972: Геноцид армян в Османской империи, Е, 1982: **Акопян С.М.** Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны, Е, 1967: **Киракосян Дж.** Западная Армения в годы первой мировой войны, Е, 1971: *его же.* Երխորրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ, 1914 թ.), Ե, 1982: Երխորրքերը պատմության դատաստանի առաջ (1915 թ. մինչև մեր օրերը), Ե, 1983.

³ *Les Grandes Puissances, L'Empire Ottoman et les Arméniens dans les Archives Françaises (1914-1918). Recueil de Documents, Paris, 1983: Boyajian D.H.* Armenia: The Case for a Forgotten Genocide. New Jersey, 1972: *The Armenian Genocide – First 20th Century Holocaust. The Events in Turkish Armenia (1914-1916) as reported in the New York Times and various Periodicals of the Time, Berkeley, CA, 1981: Documents: The State Department File: The United States Inquiry and the Armenian Question, 1917-1919 // The Armenian Review, 1984, vol. 37: Toriguian Sh.* The Armenian Question and International Law, Beirut, 1973: *Justicier du Génocide Arménien, Paris, 1981: An Anthology of Historical Writings on the Armenian Massacres of 1915 (Viscount J.Bryce, A.L.Toynbee, H.A.Gibbons, H.Morgenthau, F.Nansen), Beirut, 1971: Hovannisian R.G.* The Armenian Holocaust. A Bibliography Relating to the Deportations, Massacres, and Dispersion of the Armenian People, 1915-1923, Cambridge, 1980.

են վկայում մասնավորապես Կոստանդնուպոլսում ԱՄՆ դեսպանության զեկուցագրերը, որոնք հասցեագրված են պետական դեսպարտամենտին՝ 1915 և հետագա թվականներին¹: Հայկական ջարդերի մասին եղած տեղեկություններով այդպիսի առաջին փաստաթուղթն ամերիկյան դեսպանությունն ուղարկել է 1915 թ. ապրիլի 30-ին: ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն 1915 թ. մայիսի 25-ին պետական քարտուղարին հայտնել է Օսմանյան կայսրությունում հայերի շուրջ ստեղծված իրավիճակի մասին: Նույն թվականի մայիսի 28-ի հեռագրում հաղորդվում էր զանգվածային կոտորածների մասին, որոնց մասնակցում էին պետական իշխանությունները: Հուլիսի 10-ին դեսպանը գրում էր զանգվածային ձերբակալությունների և տեղահանությունների մասին: «Ակնհայտ է, որ գոյություն ունի հայկական ցեղը հետևողականորեն ոչնչացնելու ծրագիր», - նշել է նա²:

Կալիֆոռնիայի համալսարանի մարդասիրական և սոցիալական գիտությունների բաժնի ղեկան, պատմության պրոֆեսոր Ն.Ռավիչը նշում է, որ հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանության հանցագործությունն այսօր համարվում է մոռացված և խումբացած՝ համեմատաբար վերջերս տեղի ունեցած ավերածությունների և կոտորածների հետևանքով: Ումանք նույնիսկ կասկածի տակ են դնում ցեղասպանության պատմական իրողությունը: Ընդ որում, եթե հայերի ճակատագիրը «քաղցր» չի եղել, ապա շատ ավելի դառն է կատարված հանցագործության պատմական մեկնաբանությունը: Հեղինակի կարծիքով ժամանակակից ամերիկյան պատմագրության համար հայերի ցեղասպանությունը մնում է որպես երկրորդական նշանակություն ունեցող իրադարձություն: Ըստ Ն.Ռավիչի՝ արևմտյան պատմաբանների կողմից Հայկական հարցի թուրքասիական մեկնաբանությունը գլխավորապես սկզբնավորվում է Օսմանյան կայսրության մեջ գործած ամերիկյան միսիոներներից և նպատակ ունի թուրքիան օգտագործել ի շահ արևմտյան և ամերիկյան գլոբալ նկրտումների³:

1915-1916 թթ. իրադարձությունները լուսաբանելու միտումնավոր, հաճախ էլ պարզապես զեղծարարության օրինակներ կարող են ծառայել ամերիկացի քաղաքագետներ Մ.Գյունտերի և Ռ.Ու.Հաուի հողվածները: Մ.Գյունտերը գրում է, թե «19-րդ դարում Օսմանյան կայսրության մեջ ոչ մահմեդական ազգային փոքրամասնությունների ինքնավարության բացառիկ համակարգը հայերին այնքան էր գոհացնում, որ թուրքերը նրանց համարում էին «զլալ ազգ»: 19-րդ դարի կեսերին իրադրությունը սկսեց փոխվել ազգայնականության վերելքի և Օսմանյան բազմազգ կայսրության տրոհման հետևանքով: Քրիստոնյա տարբեր ազգեր Արևմուտքում մեկը մյուսի հետևից սկսեցին անջատվել կայսրությունից: Արևելքում Ռուսաստանը նվաճեց Կովկասը, և Թուր-

¹ United States National Archives, General Records of the Department of State, Record Group 59 (Decimal File, 1910-1929) // *The Armenian Review*, 1984, Spring, vol. 37.

² Ibid, p. 77.

³ Ravitch N. The Armenian Catastrophe // *Encounter* (London), 1981, December.

քիայի հետ ունեցած սահմանի վրա Ռուսահայաստանի գոյությունը հանդիսացավ ևս մի մղիչ ուժ... Թուրքերի համար հայերի անկախությունը տրամաբանական անհեթեթություն էր և սպառնալիք էր ներկայացնում կայսրության գոյությանը»: Գյումուտըը հենց սրանով էլ բացատրում է 1894-1896 թթ. հայկական ջարդերի պատճառները, այդպիսով մեղքը բարդելով հենց իրենց՝ հայերի և Ռուսաստանի վրա¹:

Փաստերն աղվազղելով՝ Արևմուտքի որոշ քաղաքագետներ ձգտում են կեղծել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի բնույթը, բորբոքել ռուսատյաց տրամադրություններ: Հանուն այս միտումի, ամերիկացի և արևմտանվորպացի պատմաբաններից ոմանք, որոնք համոզեա են զալիս ի պաշտպանություն երիտօրյութերի, սատարում են թուրք իշխանությունների պաշտոնական վարկածը, թե միայն ու միայն ռուսասեր կողմնորոշումն էր պատճառը, որ նրանք Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայտարարվեցին Ռուսաստանի գործակալներ և Օսմանյան կայսրության բշմամիներ: «Ռուսական կայսրությունը փոփոխական հաջողությամբ փորձում էր Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչությանն օգտագործել որպես հիմնգերբող շարայայուն», - գրում է Մ.Գյումուտըը: Նա պնդում է, թե հայերի ցեղասպանությունն իրականացվել է որպես պատասխան այն օգնության, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքահայերը դրսևորել են ռուսական բանակի ներխուժման համար: Այս պնդումով նա անտեսում է նույնիսկ ամերիկացի դիվանագետների՝ երիտօրյութական սև գործերի ակամատեսների վկայությունները: Հենց թեկուզ այն, որ Կոստանդնուպոլսում ԱՄՆ դեսպան Հ.Մորգենթաուն որևէ կասկած չի ունեցել, թե երիտօրյութական առաջնորդներ էնվերի ու Թալեաթի իրական նպատակը եղել է հայերին կոտորելը²:

«*Հաշինգտոն քայմս*» թերթը 1983 թ. երեք համարներում զետեղել է Ռ.Ռ.Հաուի հողվածաշարը՝ հետապնդելով Հայկական հարցի եույունը «բացահայտելու» նպատակ: Հեղինակը պնդում է, թե Արևելյան Անատոլիայում ստեղծվում էին հայկական մարտատենչ խմբավորումներ, որոնք ահաբեկում էին քուրդ և մահմեդական հարևաններին: Ռուսաստանն էլ, իբր, այդ խմբավորումներին զենք էր տալիս ու նաև ուղարկում էր զինվորական իրահանգիչներ՝ ամենայն կերպ գորավիզ կանգնելով հայ անջատողականներին: Հնուի ասելով, հայերը, որոնց սատարում էին թուրքական հողերը նվաճելու հույս փայվալող ռուսները, «խաշակրաց արշավանք» էին ձեռնարկել թուրքական կառավարողների դեմ: Հեղինակը ցուցաբերում է իր տարրական անգիտությունը պատմության մարզում: Նա 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը շփոթում է 1853-1856 թթ. Դրինի պատերազմի հետ, դաշնակցական

¹ Gunter M.M. The Armenian Terrorist Campaign against Turkey // *Orbis*, 1983, Summer.

² Ambassador Morgenthau's Story, New York, 1918, p. 318.

կուսակցության հիմնադիր Ք.Միքայելյանին¹ համարում է Կ.Մարքսի «ժավատարիմ աշակերտ»-ը, գրում է, թե Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայ ազգաբնակչությանը տեղահանելու մասին որոշումը կայացրել է սուլթան Աբդուլ Համիդը և ոչ թե երիտթուրքական կառավարությունը: Այնուհետև Հոուն պնդում է, թե իբր Ազգերի լիգայի սովյալների համաձայն՝ կոորդատները եղել են ընդամենը 15 հազար հոգի, բայց հիմա այդ թվին գրոներ ավելացնելով գոհերի թիվը հասցնում են մեկուկես միլիոնի, այսինքն՝ ամբողջ աշխարհում ապրող հայերի քանակությանը²:

Նույնիսկ Միացյալ Նահանգներում այսպիսի դիրքորոշումն արժանանում է դատապարտման: «Ուոլ Սթրիթ Ջորնլում» հրատարակվել է հայկական ծագումով ամերիկացի մի խումբ գիտնականների հայտարարությունը, որտեղ ասվում է. «ԱՄՆ-ում քնակվող հայերը երկու սերնդի կյանքի ընթացքում պահանջել են Թուրքիայի պատճառած վնասների համապատասխան փոխհատուցում, բայց չեն կարողացել նույնիսկ պատմական փաստերի խոստովանությանը պատասխան ստանալ Թուրքիայի կողմից: ԱՄՆ-ի կառավարությունը գորակալ չի եղել հայերի պահանջներից... Հայոց պատմությունը լուսաբանելու գործում ԱՄՆ-ի դերը կարելի է համարել եթե ոչ սև, ապա, լավագույն դեպքում, մուգ մոխրագույն»³:

Հայկական սփյուռքի տարբեր կենտրոններում այժմ որոշակի աշխատանք է կատարվում Օսմանյան կայսրության մեջ հայերի ցեղասպանության խնդիրը լուսաբանելու ուղղությամբ: Լույս են տեսնում փաստական նոր նյութերի կիրառումով հետազոտություններ, վերահիստարակվում են եվրոպական, ամերիկյան և այլ հեղինակների՝ իրադարձությունների ականատեսների աշխատությունները, որոնք վաղուց ի վեր համարվում են հազվագյուտ գրքեր: Առանձնակի ուշադրության են արժանի փաստաթղթերի ժողովածուների և արխիվային նյութերի հրատարակությունները: Քեմբրիջում լույս է տեսել Ռիչարդ Հովհաննիսյանի համապարփակ մատենագիտությունը, որի առաջին մասում թվարկված են տարբեր երկրների (Անգլիա, ԱՄՆ, Ֆրանսիա, Ավստրիա և այլն) արխիվները, ուր պահպանվում են համապատասխան նյութերը:

¹ Քրիստափոր Միքայելյան (1859-1905), հասարակական-քաղաքական գործիչ, ՀՀԴ կուսակցության հիմնադիր, առաջնորդ և տեսարան, մշակել է հայ հեղափոխական ուժերը մեկ միասնական կուսակցության մեջ միավորելու ծրագիր, 1890 թ. օգոստոսին՝ կուսակցության հիմնադիր ժողովի ժամանակ, կարողացել է հարթահարել գաղափարախոսական տարածայնությունները և միավորել տարբեր հայացքներ ունեցող գործիչների, Փարիզում հրատարակել է «Պրո Արմենիա» թերթը, նախապատրաստել է սուլթան Աբդուլ Համիդի մահափորձը, գոհվել է ումմի փորձարկման ժամանակ - Ա.Ա.:

² «Washington Times» (Washington DC), 1983, 1-3 August.

³ «Wall Street Journal» (New York), 1982, 1 November.

Երկրորդ մասը իրենից ներկայացնում է հայերի ցեղասպանության մասին արտասահմանյան հիմնական հրատարակությունների ցուցակը¹:

Գրանցից է «Հայերի ցեղասպանությունը» ժողովածուն, որն իրենից ներկայացնում է 1913-ից մինչև 1922 թվականը ԱՄՆ թերթերում և ամսագրերում հրատարակված մի քանի հարյուր հաղորդակցությունների ու հոդվածների հավաքածու: Ժողովածուն կազմող Ռիչարդ Քլոյանի ասելով՝ իր տրամադրության տակ գտնվող բնավ էլ ո՛չ բոլոր նյութերը: Երիտթուրքերի գազանությունների մասին ամերիկյան մամուլի վկայությունները լիովին հերքում են այն ստահող պնդումները, թե ցեղասպանությունն իբր հայ և հայերին կարեկցող հեղինակների երևակայության պտուղն է սոսկ: Ժողովածուի նյութերը վկայում են, որ Արևմտյան Հայաստանում ծայր առած սարսափների մասին ամերիկյան մամուլը հաղորդագրություններ է տպագրել գրեթե ամեն օր, և գրեթե բոլոր հոդվածներում էլ բացահայտվել է երիտթուրքերի վերջնական նպատակը՝ հայերի ջարդը որպես «Հայկական հարցի» լուծում:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի ժողովածուի մեջ գետեղված մի շարք նյութեր, որոնք հավելյալ լույս են սփռում 1915 թ. իրադարձությունների նկատմամբ կայգերական Գերմանիայի աշխույժ դերի վրա: «Գերմանիան և հայերի տառապանքը», «Գերմանիան և հայկական ջարդերը», «Գերմանիայի մեղքը հայկական արյունահեղության մեջ». այս և ուրիշ հոդվածներ վկայում են երիտթուրքերի հակահայկական քաղաքականության ծրագրման ու իրականացման գործում գերմանական իմպերիալիզմի ուղղակի մեղակցության մասին: «Գերմանիայի մեղքերը մի գերմանացու ներկայացրած մեղադրանքի համաձայն»՝ այսպես էր վերնագրված «*Լիթերարի Գայջեստ*» (հոկտեմբեր, 1917 թ.) հանդեսում գետեղված գրախոսությունը գերմանական բանակի սպա և թղթակից Գ.Շտուերմերի «Պատերազմական երկու տարի Կոստանդնուպոլսում» գրքի մասին: Գ.Շտուերմերի բնորոշմամբ, Հայաստանում կազմակերպված զանգվածային սպանությունների պատասխանատվությունն ընկնում է գերմանական իշխանությունների կողմից խրախուսվող «երիտթուրքերի հանցագործ բանդայի» վրա²:

Մեծ աշտնականություն ունեն ժողովածուի այն նյութերը, որոնք պատմում են 1918-1919 թթ. թուրքական իշխանությունների կողմից երիտթուրքերի հակահայկական քաղաքականությունը դատապարտելու փորձերի մասին: «Նյու Յորք Թայմս» թերթը 1918 թ. դեկտեմբերի 27-ին հաղորդել է, որ թուրքական խորհրդարանը արձակվել է, և ներքին գործերի նախարարը կառավարական հայտարարություն է հրապարակել հայերի կոտորածների համար պատասխանատու բարձրաստիճան պաշտոնատար անձանց պատժելու նպա-

¹ Hovannisian R.G. The Armenian Holocaust. A Bibliography Relating to the Deportations, Massacre, and Dispersion of the Armenian People, 1915-1923, Cambridge, 1980.

² The Armenian Genocide – First 20th Century Holocaust, Berkeley, CA, 1981, p. 181.

տակով Գերագույն ռազմական ատյան ստեղծելու մասին: Մուլթան Մոհամմեդը Կոստանդնուպոլսում բրիտանական թղթակցի հետ ունեցած գրույցի ժամանակ դատապարտել է երիտթուրքերի կաթինետի քաղաքականությունը հայերի նկատմամբ, միաժամանակ ցավակցություն հայտնել կատարվածի առիթով (*New York Times*, 1918, December 7): 1919 թ. հուլիսի 13-ին նույն թերթը հաղորդել է, որ Թուրքիան դատապարտում է պատերազմական ժամանակների իր առաջնորդներին, և որ ռազմական ատյանը մահապատժի է դատապարտել երիտթուրքական պարագլուխներին՝ Էնվերին, Թալեաթին, Ջեմալին և այլոց¹:

Իրդարձություններն անաչառ կերպով լուսաբանելու ձգտումը հատկանշական է անգլիացի պատմաբան Քրիստոֆեր Ջ. Ուոլկերին: Նա գրում է, թե 1910 թ. երիտթուրքական կուսակցության կենտրոնում տեղի ունեցան արմատական փոփոխություններ: Կենտկոմի կազմի մեջ մտան ծայրահեղ ազգայնական հայացքների տեր մարդիկ: Ջիա Գյոքալփը դրանցից մեկն էր: Հետագայում նա դարձավ կոմիտեի գլխավոր տեսաբանը, և քաղաքական փիլիսոփայությունը, որ նա զարգացնում էր, տխուր դեր ունեցավ հայերի կյանքում: Գյոքալփի գաղափարները 1910-1914 թթ. բացառում էին Թուրքիայի ազգային փոքրամասնությունների համախմբվածության հնարավորությունը երիտթուրքերի քաղաքական ծրագրի շուրջ: Նրա համոզմամբ «ապագայի թուրք ազգը» պետք է բաղկացած լիներ միայն ու միայն թուրքերեն խոսող մահմեդականներին: Հույները, հայերն ու մյուս փոքր ժողովուրդները կարող էին թուրք համարվել հպատակության առումով, բայց ո՛չ ազգությամբ: Գյոքալփը, Էդիպը և սրանց համախոհները երագում էին բոլոր թուրքերի միավորումը միասնական իշխանության ներքո, գրում է Ուոլկերը: Սակայն նույն քաղաքականությունն անհնարին էր կիրառել լեզվական ու կրոնական դարավոր ավանդություններ և շատ որոշակի ազգային ինքնություն ունեցող հայերի նկատմամբ²:

Համաթուրքական (պանթուրքական) ցեղապաշտական ծրագրի իրականացումը, նշում է նույն հեղինակը, պետք է անցներ մի քանի փուլ: Սկզբում օսմանցի թուրքերը պետք է իրենց դիրքերն ամրապնդեին երկրի ներսում, իսկ հետո Թուրքիայի կազմում պետք է ընդգրկեին Ասիայի բոլոր թրքախոս ժողովուրդներին: Մինչ այդ, 1914 թ., Ռուսաստանին հաջողվեց համաձայնության գալ երիտթուրքերի հետ Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու մասին, և ստորագրել բարենորոգումների մի ծրագիր: Այդ ծրագրի համաձայն, հայկական վեց վիլայեթները վերակազմվելու էին երկու վարչական մարզերի՝ եվրոպական երկրներից ժամանած գլխավոր տեսուչների գլխավորությամբ: Բայց սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, և բարենորոգումների ծրագիրը մնաց թափի վրա³: Ուրքերը գալիս է մի եզրակացության,

¹ Ibid, p. 258.

² Walker Ch. Op. cit, p. 190.

³ Ibid, p. 192-193.

թե հայերին ոչնչացնելու մասին վերջնական որոշումը բուրբակյան իշխանությունները կայացրել են 1915 թ. փետրվարի կեսերին: Այդ որոշումը նա համարում է նախորդ տարիների ընթացքում բուրբակյան ցեղապաշտության զարգացման ուղղակի հետևանք: 1914 թ. դեկտեմբերի սկզբին Մուշում, օսմանյան 34-րդ դիվիզիայի շտաբում գտնվում էր Բեհաեդդին Շաքիրը, որը երիտթուրքական կուսակցության կենտրոնի անդամ էր և գաղափարախոսներից մեկը: Նրա ներկայությամբ, ըստ Ուոքերի, վկայում է, թե հատկապես Շաքիրն է հանդիսացել ջարդերի գլխավոր կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկը¹:

Երիտթուրքական կառավարության համար պատերազմը ծառայեց որպես մի վարագույր, որի հետևում նա կարող էր գործել միանգամայն անպատիժ կերպով: Ուոքերը ժամանակավոր կարգով է շարադրում Էրզինջանի, Էրզրումի, Տրապիզոնի, Խարբերդի, Սվասի, Անգորայի, Դիարբեքի, Մուսս լեռան, Ջեյրուսի իրադարձությունները: Հեղինակն ընթերցողին տանում է Եփրատ գետի ափերով՝ ասես ստիպելով ակնատես լինել այն հրեշավոր պայմաններին, որոնց մեջ գտնվում էին տեղահանված հայերը: Նա մեջբերումներ է կատարում քաղաքական գործիչների, դիվանագետների, ակնատեսների խոսքերից, հայտարարություններից, հիշողություններից: Որոշակի փաստերի հիման վրա Ուոքերը քննադատության է ենթարկում ամերիկացիներ Ս.Շոուի և նրա կնոջ՝ Ե.Կ.Շոուի գրքում պարունակվող պնդումները, որոնց համաձայն հայերի տեղահանությունն իբր եղել է քրդերի և մյուս մահմեդական ավազակախմբերի կողմից դրսևորվող բռնություններից նրանց պաշտպանելու միջոց²:

Թուրքական իշխանությունների հակահայկական գործողությունները 1916 թ. վերջին հիմնականում արդեն ավարտված էին: Ուոքերի կարծիքով, մինչև պատերազմը Օսմանյան կայսրությունում ապրում էին երկու միլիոնից ավելի հայեր: Նրանցից 250 հազարին հաջողվեց փախչել, շուրջ մեկ միլիոնը սպանվեց, ընդ որում զոհերի կեսը եղել են կանայք ու երեխաներ: Մնացյալ 600 հազարից շուրջ 200 հազարը բռնի մահմեդականացվել են, իսկ 400 հազարը սոված ու թշվառ թափառել են երկրով մեկ: 50-100 հազար հայեր սպանվել են թուրքերի՝ Կովկաս ներխուժելու ժամանակ՝ 1918 թ. մայիս-սեպտեմբերին, շուրջ 250 հազար ոչնչացվել են 1919-1920 թթ., երբ ողջ մնացած հայ արտոյալները վերադարձան Արևմտյան Հայաստանում գտնվող իրենց տները, որտեղ, սակայն, կազմակերպվեց մի նոր եղեռն³:

Ֆրանսիայում լույս տեսած աշխատությունները մույնպես պարունակում են հայերի ցեղասպանության ընդարձակ և հաճախ նոր դրվագներով լցված պատմությունը: Ժամ Մարի Գարզուն իր հոդվածում գրում է, թե պա-

¹ Ibid, p. 200.

² Ibid, p. 229-331.

³ Ibid, p. 241-243.

տերազմի նախօրյակին Թուրքիայում հայերի թիվը եղել է 2 միլիոն 100 հազար մարդ: Այդ թիվն արդեն 100 հազար էր 1923 թ., երբ Լուզանի պայմանագիրը արհեստականորեն փակեց հարցը: Նախքան Թուրքիան կմտներ Առաջին համաշխարհային պատերազմի մեջ, նշում է Գարզուն, օտարերկրյա տեսուչները, որոնց վրա դրված էր հայկական մարզերում քարենորոգումների իրականացման հսկողությունը, երկրից արտաքսվեցին այն պատրվակով, թե թուրքական կառավարությունն «ի վիճակի չի լինի գրադվել ներքին բարենորոգչությանը՝ երկարատև ու ծանր պատերազմական տարիների ընթացքում»: Այսպես էր հայտարարել Ջեմալը, որը Թալեաթի ու Էնվերի հետ միասին հանդիսանում էր երիտթուրքական առաջնորդներից մեկը: 1915-ի մարտին դաշնակիցների՝ Դարդանեյան արշավանքի պարտությունը լիովին ազատ արձակեց թուրքական կառավարության ձեռքերը: Ապրիլի 24-ին սկսվեցին հայության մշակութային ու հասարակական նշանավոր գործիչների ձերբակալությունները¹:

Ժերար Շալիանի² և Իվ Տերնոնի գիրքը³ գրված է Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում և ուրիշ երկրներում հրատարակված փաստագրական ժողովածուների հիման վրա: Գրքի առաջին մասի հեղինակ, ճույն նյութին վերաբերող մեկ այլ աշխատությանը⁴ հայտնի Տերնոնը իրադարձությունների շարադրանքը սկսում է 1915 թ. մայիսից: Անտանտայի երկրների արտաքին գործոց նախարարների մեղադրական հեռագրին ի պատասխան թուրքական կառավարությունը պաշտոնապես հայտնեց այն միջոցառումների մասին, որպիսիք ձեռնարկել էր հայերի նկատմամբ, որոնք, իբր, «խախտել են հասարակական կարգը և վտանգի տակ դրել երկրի պաշտպանությունը»: Մայիսի 30-ին երիտթուրքական կառավարությունը հրապարակեց հայկական ազգաբնակչությանը տեղահանելու դեկրետը: Սակայն հյուպատոսների գեկուցագրերի, զինվորական թղթակիցների և ողջ մնացած հայերի պատմածների, թուրք ղեկավարների հետ դիվանագետների գրույցների շնորհիվ պարզվեց, որ խոսքը ոչ թե տեղահանության, այլ ոչնչացնելու մասին է: Արդյունքում՝ 1 միլիոն 500 հազար գոհ, քանի որ Թուրքիայում հայերի թիվը, վիճակագրության համաձայն, տատանվում էր 1 միլիոն 800 հազարից և 2 միլիոն 100 հազարի միջև: Այսպիսով, շարունակում է Տերնոնը, հայերն անհետացան Օսմանյան կայսրության տնտեսական ու քաղաքական կյանքից⁵:

¹ Carzou J.M. Premiere, 1915. Le Genocide des Arméniens // *Historia*, 1980, N 405, p. 94-96.

² Ժերար Շալիան (ծնվ. 1930), ֆրանսիացի հրապարակախոս, հրատարակության է պատրաստել Ժողովուրդների մշտական ատյանի՝ 1984 թ. ապրիլի 13-16-ին Փարիզում անցկացրած հայերի ցեղասպանությանը նվիրված հատուկ նստաընթացի նյութերը, Իվ Թերնոնի հետ գրել է «Հայերի ցեղասպանությունը» գիրքը - Ա.Ա.:

³ Chaliand G., Ternon Y. 1915-17. La mémoire du siècle. Le Genocide des Arméniens, Bruxelles, 1980.

⁴ Ternon Y. Les Arméniens, Histoire d'un Génocide, Paris, 1977.

⁵ Ibid, p. 5-14.

Գարգուն նույնպես բերում է ականատեսների՝ գերմանական սպաների, Կարմիր խաչի գրության քույրերի, ամերիկյան հյուպատոսների բազում վկայությունները հայերի տեղահանության ու ջարդերի մասին: Տեղական իշխանություններին հղված Թալեաթի հրամանները քացահատում են երիտթուրքերի մտադրությունները: Տեղահանության մասին ղեկյրետից հետո կառավարությունը 1915 թ. սեպտեմբերին հրապարակեց «Տեղահանվող մարդկանց ունեցվածքին, տներին ու վարկին վերաբերող» օրենքը, որն օրինականացնում էր արտրվող հայերին կողոպտելը: Բայց տեղահանված ոչ բոլոր հայերը կոտորվեցին: Չնայած չարչարանքներին ու զրկանքներին, ջրի ու ուտելիքի շարունակական պակասին՝ մարդկանց մի փոքր քանակությամբ այնուամենայնիվ հասավ Սյրիա: Եփրատի ափերով մեկ հողմացրիվ արված հայ ազգից մնացին հատուկներ ծերեր, կանայք ու մանուկներ¹:

Ըստ Գարգուլի՝ ցեղասպանության պատասխանատվությունն անկասկած կրում են Թալեաթը, Էնվերը և Ջեմալը: Բայց այդ մարդիկ, թեև նրանք միաժամանակ հանդիսանում էին թե՛ կառավարության և թե՛ երիտթուրքերի կուսակցության ղեկավարները, չէին կարող ոչինչ անել առանց տեղական կոմիտեների անդամների, պաշտոնական ու վարչական ներկայացուցիչների, քանակի ու հատուկ այդ նպատակով ստեղծված ժանդարմերիայի սպաների, կալանավարից այդ առիթով ազատ արձակված քրեական հանցագործների ընդհանուր համագործակցության: ԱՄՆ դեսպան Հ.Մորգենթաուի հետ ունեցած զրույցի ընթացքում Թալեաթը ասել էր. «Մեզ կտրականապես չեն անհանգստացնում տնտեսական վնասները, մենք խոստովանում ենք այդ վնասները և կարծում ենք, թե դրանք չեն անցնի 5 միլիոն լիրայից: Մեզ այդ չի անհանգստացնում: Ես Ձեզ հրավիրել եմ այստեղ, որպեսզի գիտենաք, որ այդ հարցի վերաբերյալ մեր վճիռը հաստատուն է և ոչինչ չի կարող այն փոխել: Մենք այլևս չենք ուզում հայ տեսնել Անատոլիայում, նրանք կարող են ապրել անապատում և ուրիշ ոչ մի տեղ»²:

Սորբոնի համալսարանի հայ բանասիրության ամբիոնի վարիչ Ժան Փիեր Մեյեն իր հողվածում ընդգծում է, որ պանթյուրքիստները քարոզում էին Թուրքիայից մինչև Սիրիա ձգվող տարածքի միավորման գաղափարը: Հայերը որպես արգելք էին դիտվում այդ ծրագրի իրականացման ճանապարհին: 1914 թ. ղեկտեմբերից ի վեր թուրքական կառավարությունն այն պատրվակով, որ ռուսական հպատակություն ունեցող հայ կամավորականները կտվում էին ռուսական բանակի կողմից, սկսեց մահմեդական բնակչությանը լարել հայերի դեմ՝ գործելու անսանձ բռնադատություններ: Սեկ ամիս անց իշխանությունները հրամայեցին զինաթափել բոլոր հայազգի զինվորներին և նրանց ուղարկել բանվորական գումարտակներ: Նրանց մեծ մասը հետագայում թշվառ հեռավոր վայրեր և 50-100 հոգանոց խմբերով կոտորածի ենթարկվեց:

¹ Carzou J.M. Op.cit, p. 97-102.

² Ibid, p. 105.

Այնուհետև իշխանությունները հարկադրեցին, որպեսզի քաղաքացիական ազգաբնակչությունը զենքերը հանձնի: Դրան հաջորդեցին ակամավոր հասարակական գործիչների, մտավորականների, հոգևորականների ձերբակալություններն ու սպանող, որից հետո արդեն հնարավոր եղավ անցնել գործողության եզրափակիչ փուլին՝ տեղահանությանը, որպես պաշտոնական նպատակ հրապարակելով ռազմական գործողությունների քատերաքենից հայերին «հեռացնել»:

Իրականում, գրում է Մեյեն, նախատեսված էր, որ տեղահանվածների աննշան մի խումբ միայն պետք է հասնի ճշված վայրը: «Ճանապարհորդությունն» ինքը պետք է վերացնեի ծերունիներին, կանանց ու մանուկներին, քանի որ տեղահանվածներին ուտելիք չէին տալիս: Նախատեսված էր նաև, որ ճանապարհին նրանց կոտորելու են ուղեկցող ժանդարմներն ու տեղի մահմեդական բնակչությունը: Տավրոսի լեռներում ծվարած Ջեյթունի ազգաբնակչությունը փորձեց դիմադրել, սակայն այդ դիմադրությունը ճնշվեց, և բնակչությանը արտքեցին Սիրիա: Սասունցիները նույնպես ունեցան այդ ճակատագիրը: Մուսա լեռան հայերը թուրքերի դեմ կռվեցին քառասուն օր շարունակ, այնուհետև փրկվեցին Ալեքսանդրիայի մոտեցած դաշնակիցների մավերով: Միակ դիմադրությունը, որի շնորհիվ հայ ազգաբնակչությանը հաջողվեց փրկել, Վանի և շրջակա շեների հերոսական պայքարն էր: Հողվածում ասվում է, որ այդ պայքարն էլ պարտությանը կավարտվեի, եթե չլիներ ռուսական զորքի առաջխաղացումը, որը և ամխուսափելի կոտորածից փրկեց շուրջ 300 հազար հոգու¹:

Սորբոնի համալսարանի հրատարակած փաստաթղթերի ժողովածուն² պարունակում է արխիվային 757 փաստաթուղթ: Դրանք ընդգրկում են 1914-ի սեպտեմբերից մինչև 1917-ի ապրիլն ընկած ժամանակաշրջանը: Ներածությունը գրել է Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Ժ.Բ.Դյուրոզելը: Արթուր Բեյլերյանը հեղինակն է առաջաբանի ու ծանոթագրությունների (Ֆրանսիայի արխիվներն ու ֆոնդերը), ինչպես նաև կազմված են «Հայերը և համաշխարհային պատերազմը» ժամանակագրական տախտակը, անվանական ու առարկայական ցանկերը: Այդ բաժինները նույնպես ներկայացնում են որոշակի հետաքրքրություն:

Ժողովածուն հերքում է բոլոր նրանց պնդումները, ովքեր ձգտում են ճերմակացնել երիտթուրքական կառավարության քաղաքականությունը: Վանի ֆրանսիական փոխիտուպատոսի՝ 1914 թ. սեպտեմբերին Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպանին ուղարկած զեկուցագրից հայտնի է դառնում, որ երիտթուրքական դեկավարները հատուկ ավագակախմբեր են ուղարկել ռուս-թուրքական սահման, կատարվել է կանոնավոր զորամասերի վերատեղաբաշ-

¹ *Spectacle du Monde*, 1979, Avril, N 206.

² *Les Grandes Puissances, L'Empire Ottoman et les Arméniens dans les Archives Françaises (1914-1918)*. Recueil de Documents, Paris, 1983.

